ՀԱՅԵՐԵՆ ՉԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

ԺԳ ԴԱՐ

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԳԻՐՔ ՔՍԱՆԵՐՈՐԴ



МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

ПАМЯТНЫЕ ЗАПИСИ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ

XIII ВЕК

Составил А. С. МАТЕВОСЯН

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1984

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌՆՏԹԵՐ
Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

ԺԳ ԴԱՐ

Կազմեց Ա. Ս. ՄԱՔԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1984

ԳՄԴ 63. 3 (2Հ)
Հ 249

Տպագրվում է Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս
Լ. Ս. ԽԱՉԻԿՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Ա. Շ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԸ և բանասիրական գիտությունների թեկնածու Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆԸ

Հ 249 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար /Մատենադարան, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մ. Մաշտոցի անվ. հին ձեռագրերի ին-տ; Կազմ. Ա. Ս. Մաթևոսյան; Պատ. խմբ. Լ. Ս. Խաչիկյան.—Եր. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984. 977 էջ.—(Նյութեր հայ ժող. պատմության; Գիրք 20).

Ժողովածուն ընդգրկում է 1201—1300 թվականներին գրված ձեռագրական հիշատակարանները։ 1201—1250 թթ. հիշատակարանների մի մասը հրատարակվել է 1951 թ. Գ. Հովսեփյանի «Ցիշատակարանք ձեռագրաց» ժողովածուի մեջ։ 1251—1300 թթ. հիշատակարանների գերակշռող մասը տպագրվում է առաջին անգամ և շրջանառության մեջ է դնում պատմագրական հսկայական նյութ։ Մասնավորապես հարուստ և բազմակողմանի են Կիլիկիայի հայկական պետության տահմաններում գրված ձեռագրերի հիշատակարանները։

Հասցեագրվում է պատմաբաններին։

05050400000 ԳՄԴ 63. 3 (2Հ)
Հ————————110—85
703 (02)—84

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984

Հայրենական պատերազմում զոհված
ՄԱԹԵՎՈՍ, ՎԱՐԴԳԵՍ, ԳՈՒՐԳԵՆ
եղբայրներիս անմոռաց հիշատակին

ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԸ

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում քաղաքական անցուդարձերն արտացոլող մասերը, որպես հավաստի սկզբնաղբյուրներ, վաղուց են օգտագործվել պատմագրական երկերում և պատմագիտական ուսումնասիրություններում, ինչպես նաև ԺԷ գարի պատմիչ Առաքել Դավրիժեցու Պատմություն Հայոց և ԺԸ գարի պատմաբան Միքայել Ջամչյանի Հայոց պատմության եռահատորյակի մեջ։ Հիշատակարանների առատ օգտագործմամբ Գ. Զարբհանալյանը ստեղծեց հայ մատենագրության պատմությանը նվիրված իր աշխատությունները, Ղ. Ալիշանը՝ հայագիտական ու հայրենագիտական համադրությունները, Գ. Հովսեփյանը՝ Պոլսյան իշխանական տան ու հոգևոր կենտրոնների պատմությունը, Հ. Ոսկյանը՝ Հայոց վանքերի պատմությունը։ Լ. Խաչիկյանը ԺԵ դարի ձեռագրերի հիշատակարանների հիման վրա գրեց այդ դարի «Հայ պատմագրության ամենաամուլ» շրջաններից մեկի պատմությունը։

Արդեն իր իրավունքները հաստատած հայ ձեռագրագիտությունը, որի ուսումնասիրության առարկան ձեռագիրն է որպես պատմական որոշակի հուշարձան, չի կարող զարգանալ առանց հիշատակարանների ըստ ամենայնի օգտագործման։

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում վիթխարի նյութ է ամբարված հայ գրչության արվեստի, հայ գրչության դպրոցների, կենտրոնների, գրի, գրանյութի, գրչության գործիքների, գրության եղանակավորումների մասին, ձեռագրի գրության մասնակիցների, նրանց զբաղմունքի, արհեստի, կենցաղի մասին[1]։ Հսկայական նյութ կա ոչ միայն պատմաբանի, բանասերի, աղբյուրագետի, մատենագետի ու ձեռագրագետի համար, այլև աշխարհագրագետի, հնագրագետի, ազգագրագետի, ճարտարապետի, լեզվաբանի, բանագետի, բարբառագետի և այլ բնագավառների մասնագետների և մանավանդ գրողների համար։

«Փոքրիկ հիշատակարանները իրենց բազմատեսակ մանր տեղեկություններով խճանկարի գույնզգույն քարեր են, որոնցից արվեստագետը ի մի բերելով և օգտագործելով հարկավոր յուր նպատակի համար, կազմում է գունազարդ, կենդանի և գեղարվեստական պատկեր»[2],— գրում է Գ. Հովսեփյանը։

---

1 *Այդ նյութերի հիման վրա ուսումնասիրություն ենք պատրաստել՝ նվիրված հայ գրչության արվեստին։*

2 *Գ. Հովսեփյան, Ցիշատակարանք ձեռագրաց, հ. Ա (Ե դարից մինչև 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ ԺԴ։*

Հայերեն ձեռագրերի հիշատակարանների հասարակական-քաղաքական-մշակութային կյանքի տարբեր ոլորտներ ընդգրկող բնույթն ստիպում էր, որ դրանց օգտագործման ավելի գործնական և առավել նպատակահարմար եղանակներ գտնվեն։ Եվ այն գտնվեց։ Դրանք ժողովածուներն էին, որոնցում ժամանակագրական կարգով հավաքվելու էին ձեռագրերի հիշատակարանները։ Այդ ժողովածուներում ձեռագրական առանձին հիշատակարանները, որոնք գրվել են տարբեր մարդկանց կողմից, տարբեր վայրերում, մերթ հպանցիկ, մերթ հիմնավոր արձագանքելով կյանքի այս կամ այն երևույթին, հավաքվում, դասավորվում են ըստ որոշակի ժամանակահատվածի տարիների։ Աղոտ արձագանքներն ու միակողմանի ակնարկները համադրվելով՝ լրացնում, ամբողջացնում են միմյանց, թանձրացնում են փաստերը և նրանց դարձնում վավերական և վստահելի։

Հայերեն ձեռագրերի ժողովածուների մեջ առանձին տարիներով հավաքված հիշատակարաններն ըստ գրչության վայրերի իրենց արտացոլումն են գտնում տեղանունների ցանկում, իսկ ըստ ձեռագրերը գրողների, ստացողների և այլ մասնակիցների՝ հավաքվում, դասդասվում են անձնանունների ցանկում։ Ուսումնասիրողը ձեռքի տակ է ունենում ձեռագրի հիշատակարանը՝ գրչության հանգամանքներով՝ որոշակի ժամանակի և տարածության մեջ։ Ձեռագրերի հիշատակարանների ժողովածուներն այսպիսով դառնում են ժամանակագրական որոշ սահմաններում պատմագրական հսկայական նյութ ամփոփող մատենագրական նոր, ամբողջական միավորներ, որոնց նշանակությունը անգնահատելի է հայ ժողովրդի և հարևան ժողովուրդների, ինչպես նաև այն երկրների պատմության համար, որտեղ գրվել են այդ հիշատակարանները։

Այդ է պատճառը, որ ոչ միայն հրապարակ են գալիս հիշատակարանների ժողովածուներ, այլև դրանք թարգմանվում են այլ լեզուներով։

Հայերեն ձեռագրերի հիշատակարանների առաջին ժողովածուները կազմել է Ղևոնդ Փիրղալեմյանը՝ «Ընշխարք պատմութեան Հայոց»[3] վերտառությամբ, որի երկու հատորները ընդգրկում են ավելի քան հաղար հիշատակարան։ Դրանցից մի փոքր և համառոտված մաս միայն լույս է տեսել «Նօտարք Հայոց»[4] վերնագրով։ Ղ. Փիրղալեմյանի ժողովածուները այժմ սկզբնաղբյուրի նշանակություն ունեն, քանի որ նրանց պարունակության մի մասի միակ աղբյուրը մնացել են այդ ձեռագրերը։

Տասնամյակներ հետո լույս տեսավ Գարեգին կաթողիկոսի «Յիշատակարանք ձեռագրաց» ժողովածուն, որը պարունակում է 6 դարից մինչև 1250 թվականների հիշատակարանները[5]։ Հիշատակարանների սույն ժողովածուն, ինչպես գրում է հեղինակը, «նախապես ծրագրված չի եղել հրատարակության համար, այլ այդ միտքը առաջ է եկել և ձևավորվել հետզհետե, բոլորովին տարբեր շարժառիթներով։ Մեր պատմական մատենագրական և մանրանկարչական ուսումնասիրությունների ժամանակ, ստիպողաբար հետամուտ ենք եղել

---

3 Մատենադարան, ձեռ. №№ 6332, 4515։ Հեղինակը սույն ժողովածուներից է կազմել Մատենադարանի №6273 ձեռագիրը։ Նրա գրչին է պատկանում նաև № 9027 ձեռագիրը, նույնպես հիշատակարանների և արձանագրությունների ժողովածու, քաղված նախորդներից։

4 Նօտարք Հայոց, հաւաքեալ եւ ի լոյս ածեալ ձեռամբ Ղևոնդ վարդապետի Փիրղալեմեանց։ Տոսպեցւոյ, Կ. Պոլիս (թվականը չի նշված, հավանաբար 1870-ական թվականներն են)։

5 Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա։

աղբյուրներ որոնել, նրանց մեջ գիտենալով, որ հիշատակարանները կարևոր տեղ պիտի բռնեն... ստիպված էինք ձեռագրերի մեջ անձամբ որոնել մեր նյութերը... հետզհետե հարստացավ մեր ժողովածուն, դառնալով հայ անցյալի և մշակույթի պատմության համար թանկագին գանձարան։ ...կամենալով ուրիշներին ևս մատչելի դարձնել դասավորեցինք ժամանակագրական կարգով և ճոխացրինք ծանոթագրություններով և ցուցումներով»[6]։

«Բայց սա լոկ հիշատակարանների ժողովածու չէ սովորական մտքով, գասավորված նույնիսկ ժամանակագրական կարգով,— գրում է նա,— այլև բանասիրական ընդարձակ աշխատանք. ջանք է գործադրված պատմականգրական լրացուցիչ տեղեկություններով և ծանոթագրություններով, թվականների և դեպքերի ճշտումով և համեմատություններով այլ աղբյուրների հետ, հիշատակարանների մեջ հիշված գրիչների, ստացողների, հովանավորողների կամ այլ անձերի և դեպքերի մասին ցուցումներով, ավելի պարզել և ընդարձակել նրանց արժեքը և դյուրացնել օգտագործողի աշխատանքը»[7]։ Հեղինակը այնուհետև ներկայացնում է այն սկզբունքները, որոնցով առաջնորդվել է ժողովածուն կազմելիս։

Գարեգին Հովսեփյանի սույն գործը իր նախնական ծավալով, ավարտված էր 1934 թ. և պարունակում էր 248 միավոր։ 1956 թվականից վերստին ձեռնամուխ է լինում հիշատակարանները հարստացնելու և հրատարակության պատրաստելու գործին և իր գիտական աշխատակցի համագործակցությամբ ժողովածուի ծավալը համարյա կրկնապատկում է, միավորների թիվը հասցնելով 472-ի։ 1951 թ. լույս աշխարհ եկավ «Հիշատակարանքի» առաջին հատորը 48 նմանահանություններով և հեղինակի ու գիտական աշխատակցի «Յառաջաբան»-ով (էջ ժգ—իթ)։ Նախատեսվում էր հրատարակել ևս երեք հատոր, որը, սակայն, չիրականացավ հեղինակի մահվան պատճառով։

Այնուամենայնիվ այս մի հատորն էլ բավական էր, որպեսզի նախ պարզ դառնային հայերեն ձեռագրերի հիշատակարանները հրատարակելու հեղինակի սկզբունքները, պատմաբանասիրական, ձեռագրագիտական, աղբյուրագիտական ու մատենագիտական այն վիթխարի աշխատանքն ու գիտելիքները, որ ներդրել ու ամբարել է ժողովածուի մեջ բազմավաստակ գիտնականը։

Մինչև սույն «Հիշատակարանքի» լույս աշխարհ գալը, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը, որպես «Նյութեր հայ ժողովրդի պատմության» մատենաշարի երկրորդ գիրք, 1950 թ. հրատարակում է Լ. Խաչիկյանի կազմած «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները» և սկիզբ դնում «Միջնադարյան հայերեն ձեռագրերի հիշատակարանների հավաքման ու գիտական սկզբունքներով հրատարակությանը, որը նպաստելու է հայ ժողովրդի պատմության մի շարք բնագավառների ուսումնասիրությունը խորացնելու գործին»[8]։ «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները» ժողովածուն պարունակում է 845 հիշատակարան-միավոր։ «Առաջաբան»-ում շարադրված են նաև ժողովածուի կազմման սկզբունքները։ Նույն սկզբունքներով Լ. Խաչիկյանը կազմեց նաև ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների ժողովածուն և հրատարակեց երեք ստվար մասերով,

---

6 Անդ, Յառաջաբան, էջ ԺԴ—ԺԴ։

7 Անդ, էջ ԺԷ։

8 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ V։

որոնք բոլորը միասին պարունակում են 2133 նյութ-միավոր[9]։ Այս ժողովածուի մեջ ավելի մշակվեցին և հղկվեցին Լ. Խաչիկյանի որդեդրած սկզբունքները։

Գ. Հովսեփյանի և Լ. Խաչիկյանի հայերեն ձեռագրերի հիշատակարանների ժողովածուների նպատակների նույնությունից բացի կան հավաքման ու հրատարակման, ներկայացման ու ծանոթագրության լուրջ տարբերություններ, որոնք պետք է բացատրել նախ ժամանակի հայագիտության առաջադրած պահանջների մակարդակով և կազմողների նպատակադրությամբ ու նախասիրությամբ։

Գ. Հովսեփյանը, ինչպես տեսանք, ձեռագրերի հիշատակարանները հավաքել է ոչ թե ժողովածուի մեջ հրատարակելու համար, այլ որպես սեփական ուսումնասիրությունների նյութ։ Սակայն հետագայում, երբ մտածում է այդ արժեքավոր հավաքածուն հրատարակելով դարձնել նաև ուրիշների սեփականություն, որոշում է ոչ միայն այն լրացնել տարբեր հավաքածուներում, տպագիր գրականության և պարբերական մամուլում եղած նյութերով, այլև տալ «նոր, մինչև այժմ բանասիրությանը մատչելի չեղած նյութեր»։ Այստեղ, ահա խախտվում է հայերեն ձեռագրերի հիշատակարանների ժողովածուների բնույթը, ձեռագրերի հիշատակարանների կողքին մենք տեսնում ենք տպագիր ու անտիպ վկայաբանություններ, ժամանակագրություններ, պատմագրական երկերից հատվածներ, գավազանագրքեր, կոնդակներ և այլն։ Երբեմն մի քանի տող տեղեկությունը ծանոթագրվում է իրենից մի քանի-տասնյակ անգամ ավելի ծավալուն ծանոթագրությամբ, որոշ վարքեր առաջ են բերվում մեկից ավելի բնագրերի համեմատությամբ, որոշ ժամանակագրություններ անցնում են «Հիշատակարանքի» Ա հատորի ընդգրկման սահմանները։

Հեղինակի մտահոգությունը հասկանալի էր. բանասիրությանը տալ ոչ միայն ձեռագրերի հիշատակարաններ, այլ նաև մինչև այդ մատչելի չեղած նյութեր, որոնք թաքնված են ձեռագրերի ծալքերում և տպագիր գրականության ու պարբերական մամուլի էջերում։ Եվ այն, ինչ մտածել էր երեսնական թվականներին, իրականացրեց հիսնական թվականների սկզբներին։

Լ. Խաչիկյանի «Հիշատակարանների ժողովածուներում», ինչպես նախորդի մոտ, հիշատակարանները տեղադասվում են ժամանակագրական կարգով, ըստ տարիների, եթե ամիսներն ու օրերն հայտնի են տարիների մեջ՝ ըստ ամիսների և օրերի։

Ժամանակի նշումից հետո, որը դրվում է էջի սկզբում և վերաբերում է այդ էջում տեղավորված բոլոր միավորներին, հերթական համարի տակ նըշվում է ձեռագրի վերնագիրը, որից քաղված է հիշատակարանը (և կից հիշատակագրությունները, որոնք իրար հաջորդում են այբբենական համակարգով)։ Վերնագրի տակ ձեռագրի հասցեն է. որտե՞ղ է գտնվում կամ որտեղից է քաղված հիշատակարանը։ Եթե հավաքածուներից կամ ձեռագրացուցակներից է, սկզբում դրվում է հավաքածուի գտնվելու վայրը և նրա մոտ այդ հավաքածուի մեջ ձեռագրի համարը (Վենետիկ, 10), ապա համառոտ այն ցուցակը, որում տպագրված և որից քաղված է միավորը (Վենետիկ 10, Ր. Սարգիսյան,

---

9 «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Մասն առաջին (1401—1450 թթ.), կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1955 (1—744 հիշատակարան), Մասն երկրորդ (1451—1480 թթ.), Երևան, 1953 (1—575 հիշատակարան), Մասն երրորդ (1481—1500 թթ.), Ժե դարի անթվական հիշատակարաններ, Երևան, 1967 (1—814 հիշատակարան)։

ցուցակ Բ, էջ 150), իսկ երբ այլ հրատարակությունից է՝ հեղինակը և երկը՝ հիշատակարանը գտնվելու էջով։

Շատ կարևոր հանգամանք է հիշատակարաններն իրենց հեղինակներով և դովելու վայրով հրատարակելու սկզբունքը։ Ձեռագիրը, որի մեջ նաև հիշատակարան է, պատկանում է որևէ գրչի (կամ գրիչների), ընդ որում այստեղ գրիչը երկու տիպի գործողություն է կատարել, ձեռագիրը գրել է արտագրելով, իսկ հիշատակարանը՝ գրել է հեղինակելով։

Այժմ, երբ հիշատակարանը անջատում ենք իր մայր ձեռագրից և մուծում հիշատակարանների ժողովածուի մեջ, այն պետք է հրատարակվի իր հորինողի, իր հեղինակի անունով՝ լինի այն գրիչը, ստացողը, ծաղկողը կամ մի այլ անձնավորություն։ Հիշատակարանը հեղինակով հրատարակելը որքան բնական, նույնքան էլ արդարացի է։ Ուստի որևէ հիշատակարան օգտագործելիս պետք է նշվի նրա հեղինակը և ապա՝ աղբյուրը. ինչպես Հովհաննես պատմիչի գործն է վկայակոչվում և հղվում նրա Պատմությունը, այնպես էլ Հովհաննես գրչի փաստը վկայակոչելիս պետք է հղել նրա հիշատակարանը (ժողովածուի մեջ)[10]։

Նույն իրավունքով տեղանունը հետևում է հեղինակի անվանը, տեղադրվելով նրանից ներքև, որպես հիշատակարանը ստեղծելու վայր։ Այս պարագայում հիշատակարանների ժողովածուն թերթելիս և միայն տեղանունները աչքի անցկացնելով, արդեն մտքով տեղափոխվում ես հայ մշակութային այն կենտրոնները, որտեղ ստեղծվել են հայերեն ձեռագրերը, գրվել այդ հիշատակարանները և, որպես այդ տեղերից շատերի գոյության միակ մասունք և վկայություն, հասել են մեզ։ Գ. Հովսեփյանի մոտ սույն սկզբունքները այդպիսի հետևողականությամբ և բծախնդրությամբ չեն կիրառվում։ Հաճախ բացակայում է այն ձեռագրի վերնադիրը, որից քաղված է հիշատակարանը և հիշվում է միայն հավաքածուն և համարը։ Հեղինակը և տեղը չեն հիշատակվում առանձին, այլ հիշվում են ձեռագրի մասին ընդհանուր տեղեկությունների հետ միասին, եթե բերվում են այդ տեղեկությունները[11]։

Հաջորդ գործողությունը հիշատակարանի բնագիրը ներկայացնելն է։ Ժողովածու կազմողի հիմնական խնդիրը հիշատակարանը ճիշտ, անսխալ, ձեռագրին հարազատ ներկայացնելն է, որքան հնարավոր է քիչ միջամտությամբ, որովհետև գործ ունենք ոչ միայն դարեր առաջ գրված, այլև մտածված խոսքի հետ, այսինքն դարավոր մտածողության գրավոր արտահայտության հետ, ընդ

---

10 Իհարկե, այդպես են վարվում օրինակելի ուսումնասիրողները։ Բայց կան նաև հոդվածագիրներ, որոնք փոխանակ գրելու «ներսես գրիչը նկեղեց գավառում հիշում է Բըքնո լեռը», հղելով «ԺԴ դարի հիշատակարաններ» 276-րդ էջը, քանի որ այստեղից են վերցրել տվյալները, անտեսելով գրչի հեղինակությունը, երկարաբանում են. «Օքսֆորդի համալսարանի գրադարանի հայերեն ձեռագրերից մեկում, որը կրում է 6 համարը, և նկարագրված է Տիրայր վարդապետի անտիպ ցուցակում (տե՛ս Մատենադարան, արխիվ, թղթ. 120, էջ 891—896) նկեղեց գավառում հիշվում է Բըքնո լեռը»։

11 Ժողովածուի մեջ վաստակաշատ գիտնականը հիշատակարանը մուծել է այնպես, ինչպես ունեցել է ձեռքի տակ։ Լրացնելու հնարավորություն չի ունեցել ձեռագրի կամ ցուցակի բացակայության պատճառով։ Իսկ որոշ հիշատակարաններ ծանրաբեռնված են այլևայլ տեղեկություններով։ Ականատես լինելով հայ ձեռագրական հսկայական կորուստներին, Գ. Հովսեփյանը աշխատել է որքան հնարավոր է ձեռագրերի մասին շատ տեղեկություններ գրանցել հիշատակարաններին կից։

որում դարերի տարբերությանը պետք է ավելացնել նաև տեղերի, նահանգների, աշխարհների տարբերությունը և սրանց գումարել գրիչների գրագիտության աստիճանը։

Լ. Խաչիկյանը ԺԴ դարերի հիշատակարաններում հրաժարվել է «Փառք»-երից, բայց հաջորդ հատորներում բերել է կարևոր համարվածները և փոքրածավալները։ Բնագրում ընդգծված են հատուկ անունները։ Ժամանակը նշանակելու համար հիմք է ընդունել Հայոց տոմարը (թվականը կոր փակագծերով գրել է արաբական թվանշաններով։ Նույնպես է վարվել բոլոր թվերի և թվանշանների հետ)։ Ծանոթագրությունները կատարված են տողատակում և ունեն բնագրական-աղբյուրագիտական բնույթ։ Ինչպես Գ. Հովսեփյանի ժողովածուն, սրանք ևս օժտված են տեղանունների, անձնանունների և առարկայական ցանկերով, որոնք, հատկապես երկրորդը ավելի շուտ բառարան է, քան ցանկ, որտեղ ամբողջականանում է տվյալ անձը՝ ժողովածուի մեջ զբաղեցրած իր գործունեությամբ։

Համարյա նույն սկզբունքներով, ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների հրապարակման աշխատանքներին ձեռնամուխ եղան Ա. Հովհաննիսյանը և Վ. Հակոբյանը։ Նյութի առատության պատճառով յուրաքանչյուր հատորում տեղավորված են քսան տարվա հիշատակարաններ։ Հրապարակի վրա են արդեն Ա և Բ հատորները[12]։

ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների ներկա ժողովածուն պատրաստելիս, որպես հիմք ընդունել ենք Լ. Խաչիկյանի մշակած սկզբունքները՝ մասնակի շեղումներով։ Հրապարակի վրա եղած և հայագիտական ուսումնասիրություններում լայնորեն օգտագործվող հիշատակարանների ժողովածուները մեզ ազատում են առանձին մանրամասներ ծանոթագրելու պարտականություններից։ Ժամանակը հիմնականում հաշվում ենք հայկական տոմարով։ Բացառություն են այն հիշատակարանները, որոնցում այլ տոմարների կողքին բացակայում է հայկականը։ Ժողովածուի մեջ հիշատակարանների զարգացման ընթացքն ավելի լիակատար ներկայացնելու համար անհրաժեշտ ենք համարել բերել «Փառքերը», որոնք շատ ընդարձակ չեն, ինչպես հետագա դարերում, այլ հաճախ մի քանի տող են զբաղեցնում, իսկ ընդարձակները քիչ են և օգտակար։ «Փառքերի» համադրությամբ երբեմն հնարավոր է լինում բացահայտել հիշատակարանների, ուրեմն նաև ձեռագրերի ազգակցությունը։ Նրանց մեջ պատահում են պատկերավոր մտածողություն, առակավոր խոսք, գեղեցիկ համեմատություններ, պարականոն մեկնություններ, հազվադեպ օգտագործվող բառեր և այլն։

Ձեռագրի հասցեի տակ, եթե քաղված հիշատակարանը գրչության ժամանակակից չէ, դնում ենք ձեռագրի գրչության թվականը, որպեսզի պարզ լինի, որ բերվող հիշատակարանը պատկանել է գաղափար օրինակին կամ էլ գովել է հետագայում։

Ժողովածուներից քաղված հիշատակարանները, եթե նրանք վերաբերվում են ոչ թե ամբողջ ձեռագրին, այլ միայն նյութերից մեկին, որպես հիշատակարանի խորագիր նշում ենք այդ նյութի վերնագիրը։

---

12 «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա (1601—1620), կազմեցին Վ. Հակոբյան և Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974 և հ. Բ (1621—1640), Երևան, 1978։

Լուսանցքներում գրված հիշատակագրությունները բերելիս, որպեսզի ամեն անգամ չծանոթագրվի թե՝ «գրված է լուսանցքում», էշանիշի կողքին աստղանիշ ենք գնում։

Որոշ անուններ և բառեր մեծատառ ենք գրում՝ ելնելով Մաշտոցի անվան Մատենադարանի Մայր ցուցակի ընդունած սկզբունքներից։ Անթվական հիշատակարանները գնում ենք համապատասխան դարերի վերջում, հիմք ընդունելով ցուցակների թվագրումը։ Ծանոթագրում ենք այն դեպքում, երբ տեղաշարժում ենք կամ տեղադրում որոշակի թվականի տակ։

Հիշատակարանների տպագրված կամ որևէ բանասերի կողմից օգտագործված լինելու մասին տեղեկություն չենք տալիս, քանի որ հրատարակում ենք բուն ձեռագրից, մանրաժապավենից կամ լուսանկարից և կամ էլ Ձեռագրացուցակից, որոնք տվյալ հիշատակարանի համար սկզբնաղբյուր են[13]։

Մեր խոսքն ավարտելուց առաջ խորին շնորհակալություն ենք հայտնում ակադեմիկոս Լևոն Խաչիկյանին և ԳԱ թղթակից անգամ Սեն Արևշատյանին, որոնք Երուսաղեմ գտնվելու ժամանակ Սրբոց Հակոբյանց մատենադարանից ընդօրինակած երկու տասնյակից ավելի անտիպ հիշատակարաններ հանձնեցին մեզ՝ սույն հատորում հրատարակելու, բանասեր Հասմիկ Սիմոնյանին, որ Լենինգրադի հավաքածուներում պահվող հայերեն ձեռագրերից սիրով մեզ համար քաղեց անհրաժեշտ հիշատակարանները և Ձեռագրատան երկարամյա գործընկեր Օնիկ Եգանյանին՝ որոշ հիշատակարաններ տրամադրելու համար։ Հարգանքով հիշում ենք ամերիկահայ հանգուցյալ բանասեր Հարություն Փյուրտյանին, որը տարիներ առաջ, սիրահոժար կերպով մեզ ուղարկեց իր հավաքածուի հիշատակարանները։

Երախտագիտության խորին հարգանք հիշատակարանների հայտնի և անհայտ հեղինակների հիշատակին, որոնք մեզ թողել են անհատնում հարստություն, իրենց պահելով հիշվելու կարոտը միայն։

Ավարտենք նրանց սիրած խնդրանքներից մեկով. «Ով եղբարք, ընդօրինակեցաւ յազնիւ և ստոյգ աւրինակաց։ Եթէ սխալանք ինչ իցէ, յիմում անհմտութենէ է, անմեղադիր լերուք»։

Ա. Ս. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

---

[13] *Այլապես ստիպված պետք է լիներ հարյուրավոր անգամ հրատարակել Մ. Տեր-Մովսիսյանի, Ղ. Փիրալեմյանի, Հ. Բարդամյանի, Ե. Լալայանի, Հ. Ոսկյանի, Գ. Զարբհանալյանի, Ղ. Ալիշանի, Հ. Աճառյանի և շատ այլոց այլևայլ աշխատությունները, որոնք հիշատակարանները օգտագործելու մակարդակին հասած բանասերին վաղուց ծանոթ պետք է լիներ։*

1

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 10359

Գրիչ՝ Ստեփաննոս
Վայր՝ Աւագ վանք

ա

305բ Փառք փառաւորեալ միաբուն զաւրութեանն, եռակի անձնաւորութեանն, աններհակ կամակցութեանն, համակամ սիրելութեանն, Հայր եւ Որգւոյ եւ Սուրբ Հոգւոյն այժմ, եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից, ամին:

Ի վեցհարիւրորդի չիսներորդի թուաբերութեանս Հայոց նոր տումարիս (1201), ի գաւառիս Դարանաղեաց, առ ստորոտով լերինս Սեպոնի, ի հրեշտակակրաւն անապատիս կոչեցելոյ Աւագ վանք, յորս բնակեն արք ամենայբարիք ճգնասէրք եւ անուանիք, ի հովանեաւ նախագահ եւ մեծափառ սրբոյ Աստուածածնի եւ Կարապետի եւ սրբոյ Առաքելոյ, յառաշնորդութեան սրբասնեալ և մաքրափայլ երկուց հարազատից՝ տեառն Սարգսի եւ Ամբակումա, զորս տէր Յիսուս պահեսցէ արտաքոյ ամենայն փորձութեանց, ամէն:

Արդ, ի հինգերորդ ամի թագաւորութեան Հա[յ]ոց Ղեւոնի յաղթող եւ
306ա բարեպաշտի‖եւ ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի որ եւ յայսմ ամի երկուս բաժանի եւ նստի Անանէէ ի Կեսարիա: Եւ արդ, ի յայսմ ժամանակի գրեցաւ ամենագովելի եւ հռչակելի գերակատար եւ գերապանծ, լուսալիզձ եւ աստուածապատում սուրբ Աւետարանս չորեքճառագայթեան ճշմարիտ աստուածախաւսութիւն, վսեմական աստուածաբանութիւն, անգիւտագործ եւ անհամեմատ ծայրածաւալ եւ ծայրագոյն վիպասանութեամբ, ի կայէ կատարոյն բարձրանուն յամենազաւր եւ յամենիմաստ տուչութենէ Հոգւոյն Սրբոյ առ լցեալ ի հայրաշարժ աղբիւրէն արբեալ զբղխումն շընորհաց չորիցն աւետարանչաց քառ[ա]բղխից, սրբոց աստուածակիր արանցն ընտրելոց՝ շարադասեալ բայցափայլ արտաճառութեամբ, բարձրաբառբաո աւետարանութեամբ, յաղագս բանին Աստուծոյ միածնին Հաւր մարմնաւոր ծննդեանն եւ մկրտութեան եւ ամենայն տնաւրինական տնտեսութեան, զոր յերկրի կատարեաց Աստուած բանն
306բ յաղ[ագս]‖* փրկութեան ազգի մարդկան ընդ չորեքծագեան աշխարհս

---

* Սուն էջի տառերը խիստ մաշված են:

տպաւորեալ յամենայն հաւատացելոց անձինս ճշմարիտ երկրպագուաց Սրբոյ Երրորդութեանն եւ յաղագս աստուածազարւ սքանչելեացն, զոր յերկրի հրաշագործեալ բանն Աստուծոյ իւրով միացեալ եւ անորիշ աստուածախառն մարմնովն զկուրաց տեսանել, կաղաց գնալ, բորոտաց սրբել, անդամալուծից հաստատիլ, մեռելոց յառնել, դիւաց հալածել, ի վերայ ծովու զգնալն, եւ որ այլեւս աստուածային զարուեսանն գործք յաշխարհ ամենայն յայտնապէս քարոզելով, եւ հալածելով զխաւար կռապաշտութեանն, գԵրրորդութեանն ծաւալեցին զլոյս յոգիս մարգկան, աղբիւր եդեմական չորիւք վտակեան յորդախաղացն գնացիւք ոռոգելով զբնաւ բնակիչս չորեքծագեան տիեզերաց զբոլոր բնութիւնս մարդկային սեռի, նմանել աստուածաբարբառ աւետա[րա]նչանցն չորեքկերպեան
307ա կենդանեացն ի բարձունս մարդոյ եւ առիւծու, եզին եւ արծուոյ։ Այսու ամենայնիւ հոգեւոր փարթամութեամբ եւ աստուածային ճոխութեամբ լի եւ պատարուն գոյ աստուածապատում սուրբ Աւետարանս եւ այլեւս բազմաւք, որ մեզ է անգիտելի, որով զուարճանան անզրաւ ուրախութեամբ երկնաւինքն եւ երկրաւորքս, փառաւորելով զհամագոյ Երրորդութիւնն այժմ եւ յաւիտեանս, ամէն։

Արդ, այսմ աստուածապատում եւ քրիստոսաւանդ տարփս ցանկացող եղեա ես, տառապեալ յոքունց եւ անարժանս յորդիս եկեղեցւոյ Սաեփանոսս մեծաւ փափաքանաւք եւ սրտաջան յաւժարութեամբ, բազում աշխատութեամբ եւ յոգնատարժան երկաւք, քաջահաւատ յուսով եւ քրիստոսասէր բաղձանաւք ետու գրել զսուրբ Աւետարանս զայս ի փրկութիւն կենաց իմոց եւ ի լուսաւորութիւն հոգւոյ իմոյ, գանձ յաւիտենական եւ անկապուտ ճոխութիւն, ի յիշատակ ինձ, եւ ծնողաց իմոց՝ հաւրն Կոստանդի եւ մաւր իմոյ բարեպաշտի, եւ քուերց, եղբարց իմոց Վարգիճ եւ
307բ Միխիթարու, եւ||Թորոսի, որ ի Քրիստոս փոխեցաւ, եւ ամենայն ազգականաց՝ կենդանեաց եւ մեռելոց, եւ ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ եւ յուրախութիւն մանկանց նազելի մաւր մերոյ Նոր Սիովնի։ Եւ գրեցաւ ձեռամբ Սաեփանոսի մեղապարտ եւ փցուն գրչի յ(ը)նտիր եւ ի ստոյգ աւրինակէ ամենայն արհեստիւք լի եւ պատարուն, որ էր Կաւզմաի հռետորի։

Արդ, աղաչեմ զսրբազան եւ զաստուածամերձ դասս քահանայիցդ եւ զամենայն ընթերցասէր մանկունս եկեղեցւոյ, որք ընթեռնուք եւ լուսաւորիք յայսմ հրաշապայծառ եւ հոգեւոր կտակարանացս՝ զյառաջ յիշատակեալս զստացողն Սաեփանոս, եւ զամենայն ազգինս իւր՝ զկենդանիս եւ զմեռեալսն, յիշեսջիք առաջի զենլոյն Քրիստոսի, որոյ ողորմեսցի Քրիստոս Աստուած եւ տացէ մասն յարքայութեան իւրում, ամէն։

Յիշեսջ[իք] եւ զբարի առաջնորդ սրբոյ ուխտիս զտէր Սարգիս ու
308ա զնորին հարազատ եղբայրն զԱմպակում, որք սգաս||տութեամբ եւ արդարութեամբ առաջնորդեն եւ քաղցրութեամբ գթան ի վերայ աւտարաց եւ աղքատաց, որոց տացէ Քրիստոս Աստուած բարի փոխարէն աստ եւ ի հանդերձեալսն, ամէն, զի յոյժ գթացեալ ի մեզ եւ հանգուցին ի վշտաց, նաեւ որք համաւրէն միաբանեալ են սրբոյ ուխտիս ճգնաւորք եւ միաձունք, ծերք եւ երիտասարդք՝ հանդերձ դասու քահանայից։ Եւ որք յայսմ

տեղւոջս ննջեցեալք իցեն, ամենեցուն ողորմեսցի Քրիստոս Աստուած, եւ զընտրեալ քահանայն Վարդան յիշեսջիք ի Տէր, զի բազում իրաւք աւգնական եղեւ մեզ, ընդ նմին զծերունի պատուական զԱւետիս քահանայ։ Յիշեսջիք զշնորհազարդեալ քահանայն զՍտեփանոս եւ զեպաշանէսն առ Քրիստոս փոխոցեալ, եւ զվերջինս ամենեցուն զգրոյս գծողս Սահփանոս, որ ցաւագին անձամբ աշխատ եղէ, եւ Տէր Յիսուս Քրիստոս առհասարակ յիշողացդ եւ յիշեցելւոյս ողորմեսցի իւրում գալստեանն, եւ նմա փառք յաւիտեանս, ամէն։

Բ

145ա Տէր Աստուած ողորմեայ աշխատողի գրոյս և ծնողաց իւրոց, ամէն։

Գ

Ջստացող սուրբ կտակիս զՍահփանոս յիշեցէք ի Տէր և զծնողս նորա,
237բ [ւ]որում ողորմեսցի Քրիստոս Աստուած, եւ աշխատողիս եւ յիշողաց, ամէն։

Դ

304բ. Կաշիս կա[ր]ծր է։

Ե

305ա Ո՛վ պատուականք, աղաչեմ զամենեսեան, ասասջիք Տէր Աստուած ողորմեա գծողին եւ ծնողաց իւրոց, ամէն։

Զ

Մաղկող՝ Յովճաննես

3բ ՋՅովանէս երէցս յիշեցէք որ սակաւ մի աշխատեցայ*։

2

ԱԻԵՏԱՐԱՆ

Թուական 3274

Գրիչ՝ Յովճաննէս
Վայր՝ Ասգ վանք

Ա

426ա Փառք փրկողին, զմեզ ազատողին, և յիշատակ գրչիս առաջի անմահին, յանմահ յաւիտեանին։

Աւրհնութիւն՝ որ կարդայ, գովութիւն՝ որ լսէ, փառք Սուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից, ամէն։

---

* Գրված է երկու հանդիպակաց էջերում նկարված լորս (ղուլդ-ղուլդ), ավետարանիչներից Մաթևոսի և Մարկոսի նկարների տակ, ստորին լուսանցքում, նկարները կատարված են գրչությունից բավականին հետո։

Յամի վեց հարիւրերորդի յիսներորդի թուականութեանս Հայոց (1201), ի գաւառիս Դարանաղեաց ի լեառն Սրբոյ Լուսաւորչին մերոյ՝
427 մեծն Գրիգորի,||մերձ ի յայրս Սրբոնուն Մանէ, ի ստորև ի խոնարհ առաջի հանգստարանաց նոցին, յանապատիս, որ կոչի Սրբոյն Գրիգորի, որ ինքն Սուրբ Լուսաւորչին մեր Գրիգորիոս կառուցեալ ձեռամբ իւրով ի յանապատիս յայս մատուռ մի յանուն Սուրբ Կարապետին, ընդ հովանեաւ այս Սուրբ Կարապետիս, գրեցաւ ամենագով և հռչակելի, գերակատար և գերապանծ, գերապաճոյճ և յոքնատենչ, լուսայեղց և աստուածապատում սուրբ Աւետարանս, չորեքճառագայթեան, ճշմարիտ աստուածախաւսութիւն, վսեմական աստուածաբանութիւն, անգիւտագործ և անհամեմատ, ծայրածաւալ և ծայրագոյն վիպասանութեամբ, ի կայէ կատարոյ բարձրագունէ, յամենայզաւր և յամենիմաստ տուչութենէ Հոգւոյն Սրբոյ առլցեալ ի հայրաշարժ աղբիւրէն, ի հրածորանն հոսմանէ արբեալ զբղխումն շնորհաց չորիցն աւետարանչաց քառաբղխիցն, սրբոց աստուածակիր արանցն ընտրելոց շարադասեալ բացափայլ արտաճառութեամբ, բարձրաբարբառ աւետարանութեամբ, յաղագս բանին Աս-
428 տուծոյ միածնին Հաւր մարմնաւոր ծննդեանն և մկր||տութեանն և ամենայն տնաւրինական տնտեսութեանն, զոր ի յերկրի կատարեաց Աստուածն բան յաղագս փրկութեան ազգի մարդկան ընդ չորեքծագեան տիեզերս տպաւորեալ յամենայն հաւատացելոց անձինս ճշմարիտ երկրպագուաց Սրբոյ Երրորդութեանն, որպէս որդին Որոտման Յոհաննէս յանստուերի լուսոյն ընկալաւ զծագումն շնորհաց և թեւաւք Հոգւոյն հասեալ յանիմանալիսն և բարձրաբարբառ որոտաց ի վերուստ, ասելով. Ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ Աստուած, և Աստուած էր բանն։ Ամենայն ինչ նովաւ եղեւ։ Յուցանելով բոլորից զՈրդի համագոյ, փառակից և արարչակից Հաւր, յառաջ քան զամենայն յաւիտեանս։

Եւ յաղագս աստուածազաւր սքանչելեացն, զոր յերկրի հրաշագործեալ բանն Աստուած՝ իւրով միացեալ և անորիշ աստուածախառն մարմնովն, զկուրաց տեսանել, կաղաց գնալ, բորոտից սրբիլ, անդամալուծից հաստատիլ, մեռելոց յառնել, դիւաց հալածել, ի վերայ ծովու զգնալն, և որ այլ եւս աստուածային զաւրութեանն գործք յաշխարհ ամենայն
429 յայտնապէս քարոզելով, հալածելով զխաւար||կռապաշտութեանն, զերորդութեանն ծաւալեցին զլոյս յոգիս մարդկան, որով պայծառացեալ բերկրի միշտ կաթուղիկէ եկեղեցի և մանկունքն նոր Սիովնի, ցնծացեալ հրճուին ի փառս և ի գովութիւն փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Որ է հրաշապատում տառ աստուածային մատենիս այս սկիզբն հաւատոյ, հիմն և խարիսխ անդրդուելի և սիւն հաստատութեան և ճշմարիտ ճանապարհ փրկութեան, և առաջնորդ կենացն յաւիտենից, աշտանակ պատուական, եւթնարփի լուսով Երրորդութեանն պայծառացեալ։ Դրախտ աստուածատունկ, լուսերանգ, անոյշահոտ ծաղկաւք և անթառամ կանաչութեամբ վարսաւորեալ անմահական և քաղցրաճաշակ պտղովք պարարելով զանձինս աստուածասիրաց։ Աղբիւր եդեմական, չորեքվտակեան, յորդախաղացն գնացիւք ոռոգելով զբնաւ բնակիչս չորեքծագեան եղեբաց տիեզերաց, զբոլոր բնութիւնս մարդկային սեռի։

Նմանեալ աստուածաբարբառ ասետարանչացս ե չորեքկերպեան
480 կենդանեացն ի բարձունս մարդոյ և||առեծու, եղին և արծուոյ։ Որ նշանակէ մարդն զՄատթէոս, վասն զի նա ի մարմնաւորութենէն Տեառն մերոյ արար սկիզբն, Գիրք Ննդեան ասելով, և Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս։ Եւ առեծն զՄարկոս, վասն զի նա առեծաբար պատմէ զելսն Յիսուսի ի Յորդանանէ։ Իսկ եղինն դէմբ ղՂուկաս, վասն զի նա որպէս զեզն վաստակասէր էր, և գործանեա եղեալ ի հոգ, և որ մշակութիւնն զամենայն խորհուրդն կարգաւ պատմէ։ Եւ դարձեալ որպէս զեզն պատարագի զենումն, ասէ, ածեալ զմիածինն; Իսկ արծուին զՅովհաննէս նշանակէ, վասն զի նա բարձրաթռիչ եղեալ ի վերուստ բարբառեցաւ ի հայրական ծննդենին։

Այսուամենայնիվ հոգեւոր փարթամութեամբ և աստուածային ճոխութեամբ լի և պատարուն գոյ աստուածապատում սուրբ Աւետարանս և այղ եւս բազմաւք, որ մեզ է անգիտելի, որով զուարճանան անդրաւ ուրախութեամբ երկայինք և երկրաւորքս, փառաւորելով զհամագոյ Երրորդութիւն այժմ և յաւիտեանս յաւիտ[ենից, ամէն]։

481 Արդ այսմ աստուածապատում և քրիստոսաւ||անդ կտակիս ցանկացաւղ եղէ ես, տառապեալ և անարժան որդիս եկեղեցւոյ Յովանէս և մեծաւ փափագանաւք և սրտաջան յաւժարութեամբ, բազում աշխատութեամբ և յոքնատանջ երկաւք, քաջահաւատ յուսով և քրիստոսասէր բաղձանաւք գրեցի զսուրբ Աւետարանս ի փրկութիւն կենաց ինձ և ծնաւղաց իմոց և եղբարց, և ի լուսաւորութիւն հոգւոց մերոց՝ գանձ յաւիտենական և անկապուտ ճոխութիւն, ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ և յուրախութիւն ուխտի մանկանց նազելի մաւր մերոյ Նոր Սիովնի։

Եւ գրեցաւ սա ի Տ[իգնիտո և ի ստոյգ յաւրին[ակէ] և ամենայն արհեստիւ լի և պատարուն՝ բան և տնհատ, հրաման և ստորատ, միշնակտուր և վերնակէտ։ Եւ արդ աղաչեմ զաստուածային դաս քահանայութեանցդ, որք ընթեռնոյք և լուսաւորիք և փարթամանայք անթափելի ճոխութեամբ յայսմ հրաշապայծառ և յաստուածային մատենէ, յիշեսջիք ի գերամաքուր և յերկնաթռիչ աղաւթս ձեր առաջի զենլոյն Քրիստոսի զամենամեղս զՅովանէս գրիչ և զծնաւղսն իմ և զեղբարսն։ Յիշեսջիք
482 ի Քրիստոս զգիտնական և զարդիւնական վարդապետս||զԿոստանդ, որ եղեւ մեզ վանատու և հանգուցիչ և պատճառ այսմ իրագործութեանս, զոր արժանի արասցէ Քրիստոս ընդ երջանիկ սուրբ վարդապետացն վերադասիլ ի խորանսն լուսոյ. ընդ նմին և զեղբայր իւր Աստուածատուր յիշեսջիք ի Քրիստոս։ Յիշեսջիք և զՅովանէս քահանայ, սպասաւոր սուրբ և գերահռչակ Սուրբ Կարապետիս, և զհայր իւր, և զեղբայրսն ի սուրբ աղաւթս ձեր։ Յիշեսջիք և զԲարսեղն և զՄարաքիոս մՀայնւակեացն յարժանաւոր աղաւթս ձեր։ Ընդ նմին յիշեսջիք և զՄխիթար քահանայ և զտէր Սիմէոն։ Յիշեսջիք և զտառապեալ գրիչս զՅովանէս, որ բազում աշխատութեամբ և տառապանաւք գրեցի զսուրբ Աւետարանս զայս։ Այլ և յիշնսջիք զյառաջասացեալ վարդապետն մեր զ[Կոստանդ], և զպարոն հայրն իւր Սարգիս, և զմայրն, որ զաւրինակն շնորհեաց մեզ՝ անխնայ և բազում յաւժարութեամբ։

Քրիստոս Աստուած, այն որ հատուցանողն բարեաց, հատուցանէ միոյն հարիւրապատիկ և զերկնային ողորմութիւնն, և ընդ սուրբս դասեսցէ զնմա հոգին։

Յիշեսջիք և զներսէս բազմամեղս, որ ըստ իմում կարի աչխատեցայ ի գրելս, նաեւ զծնաւղսն իմ, և զեղբա[յ]րն իմ։ Եւ ինքն Քրիստոս զյիշողդ հանդերձ յիշեցեալս արժանի արասցէ և իւրում արքայութեանն ընդ սուրբս իւր, և նմա փառք, իշխանութիւն և պատիւ այժմ, և միշտ, և յաւիտեանն յաւիտենից, ամէն։

Բ

118ա Քրիստոս Աստուած, զքո սուրբ զԱւետարանս առ քեզ միշնորդ եւ բարեխաւս ունիմ, ողորմեա Ղազար վարդապետի ի քեզ յուսացելոյ, եւ ինձ անպիտան ծառայիս քում Յովաճիսի, եւ ծնաւղաց իմոց եւ զարմից եւ ամենայն հաւատացելոցս ի քեզ, կենդանեաց եւ մեռելոց, ամէն։ Եւ քեզ ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյ եւ Սրբոյ փառք յաւիտեանս, ամէն։

Յայսմ վայրի աղաչեմ յիշեսջիք զխաչաղբայր, որ բազում սէր եցոյց առ մեզ։

Գ

Տէր իմ եւ Աստուած Յիսուս Քրիստոս, զքո աստուածային գթութիւն առ քեզ բարեխաւս ունիմք եւ ճշմարիտ մարդեղութիւն քո, եւ զկիրս անհասանելի եւ սոսկալի չարչարանաց քոց, եւ զաստուածախաւս եւ զկենեղուտ աւետագիր կտակս քո։ Վասն այր ամենայնի ողորմեա մեղապարտիս Յովաճիսի սուտանուն գրչի, եւ Ղազարու ծերացելոյ սուրբ վարդապետի աւրինակիս զարդարչի՝ ի քեզ յուսացելոցս, եւ եղբարց մերոց, եւ ծնաւղաց եւ զարմից մերոց, եւ ամենայն հաւատացելոցս։

Դ

Եւ որք կարդայք և ընդաւրինակէք անմոռաց յիշեսջիք, և զձեզ ողորմեսցի Քրիստոս, ամէն։

Ե

145ա Յայսմ վայրի եկն ծերունին միայնակեցն Մարտիւրոս և եբեր մեզ տաք բաղարջ ի պատճառս սիրոյ, հատուսցէ նմա Տէր։

Զ

325ա Քրիստոս Աստուած իմ, զաւրութիւն իմ և աւ<ր>գնութիւն, ապրեցուցիչ իմ և փրկիչ, յոյս իմ և ապաւէն, զքեզ աղաչեմ և ի քէն հայցեմ, եւ զքո ինքեան զաստուածախաւս և զաւետաքարոզ կտակս առ քո հեզութիւնդ միշնորդ և բարեխաւս ունիմ, ողորմեա եղկելի և բազմամեղ անձին իմոյ գրչի և ազատեա զիս ի յանցանաց մեղաց իմոց և զաշխատութիւն իմ համարեա ի փրկութիւն ոգւոյ անպիտանիս։

Յիշեա Տէր գթած և զսուրբ վարդապետն զՂազար՝ հանդերձ հարազատաւն Ասաուածասարիւ, հեզոց և խոնարհաց և Աստուծոյ հաճոյից և մարդասիրաց, ուգնեա և փրկեա ի փորձութենէ, ամէն։

Ընդ նմին և Յովանիսի հաւր ողորմեա, Տէր, և քեզ փառք յաւիտեանս, ամէն։

է

426ա Յովանիսի մեղապարտ գրչի ողորմեսցի Քրիստոս Աստուած, եւ ծնաւղաց իւրոց, եւ եղբաւր, եւ համաւրէն ամենայն հաւատացելոց՝ կենդանեաց եւ մեռելոց, ամէն։

ը

Պատկերագրիչ՝ Սարգիս

118ա Եւ զիս՝ զանարժան և զնուաստ և զվերշացեալ մեղաւք սարկաւարկս և պատկերագրիչս զՍարգիս, ո՛վ սուրբ կրօնաւորք և ընթերցող սուրբ Աւետարանիս, յիշեսցուք ի ձեր սուրբ աղաւթքս և դուք յիշել լիցիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, ամէն, և զոր///*

3

ԱԻԵՏԱՐԱՆ

Ծրուագրեմ 3349

Գրիչ՝ Ղազար
Վայր՝ Ս. Գրիգորի վանք

ա

610 Փառք փրկողին, զմեզ ազատողին, և յիշատակ գրչիս, առաշի անմահին, յանմահ յաւիտենին։

Աւրհնութիւն, որ կարդա, գովութիւն, որ լսէ, փառք Սուրբ Երրորդութեանն, յաւիտեանս յաւիտենից։

Յամի վեցհարիւրերորդի յիսներորդի թուականութեանս Հայոց (1201), [ի թագաւորութեան մերոյ ազինս բարեպաշտ արքային Լեւոնի, ի նահանգին Կիլիկիոյ]**, ի գաւառիս Դարանաղեաց, ի լեառն Սրբոյ Լուսավորչին մերոյ մեծին Գրիգորի, մերձ ի յայրս Սրբուհւոյն Մանեի, ի ստորեւ և խոնարհ առաջի հանգստարանաց նոցին, յանապատիս, որ կոչի Սրբոյն Գրիգորի, ընդ հովանեաւ նորին, գրեցաւ ամենագով և հըր-
615 չակելի, գերակատար և գերապանծ, գերապաճոյճ և յոքնատենչ, լուսաչեղծ և աստուածապատում սուրբ Աւետարանս...*** փառաւորելով զհամագոյ Երրորդութիւնն այժմ և յաւիտեանս։

Արդ, այսմ աստուածապատում և քրիստոսաւանդ կտակիս ցանկացող եղէ ես՝ տառապեալ և անարժան որդիս եկեղեցւոյ Ղազար, և մե-

* Մի բառ չի կարդացվում։
** Փակագծերի մեջ բերված հատվածը գրված է ստորին լուսանցքում, այլ գրչությամբ։
*** Բաց ենք թողնում մի հատված, որը նույնությամբ առկա է նախորդ հիշատակարանում։

ծաւ փափաքանաւք և սրտաջան յաւժարութեամբ, բազում աշխատութեամբ և յոքնատանջ երկաւք, քաջհաւատ յուսով և քրիստոսասէր բաղձանաւք գրեցի զսուրբ Աւետարանս զայս, ի փրկութիւն կենաց ինձ և եղբաւր իմոյ Աստուածատուոյ և ի լուսաւորութիւն հոգւոց մերոց՝ զանձ լաւիաենական և անկապուտ ճոխութիւն, յիշատակ մեզ և ծնաւղաց մերոց և ամենայն զարմից, ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ և յուրախութիւն ուխտի մանկանց նազելի զարմից Նոր Սիոնի։

616 Եւ գրեցաւ սա յընտիր և յստ||ոյգ աւրինակէ, ամենայն արհեստիւ լի և պատարուն, բան և տնհատ, հրաման և ստորատ, միջնակտուր և վերնակէտ։ Եւ գրեցաւ սա փոքրագոյն հասակաւ, վասն գիւրաբարձիկ լինելոյ ի շրջանապտոյտ և ի խոռվասէր ժամանակիս և դառն դիպող աւուրցս բերմանց։

Եւ արդ աղաչեմ զաստուածային դասս քահանայութեանդ, որք ընթեռնոյք և լուսաւորիք և փարթամանայք անթափելի ճոխութեամբ յայսմ հրաշապայծառ և յաստուածային մատենէ, յիշեսջիք ի գերամաքուր և յերկնաթռիչ աղաւթս ձեր՝ առաջի զենլոյն Քրիստոսի զամենամեղս Ղազար գրիչ և զեղբայր իմ զԱստուածատուր քահանայ, որ միշտ սպասաւորէ մերում տկարութեանս, և զծնաւղսն մեր։ Յիշեսջիք ի Քրիստոս զգիտնական և զարդիւնական վարդապետ մեր զԿոստանդ, որ եղեւ մեզ
617 վանատու և հանգուցիչ և պատճառ այսմ իր||ագործութեանս, զոր արժանի արասցէ Քրիստոս ընդ երջանիկ սուրբ վարդապետացն վերադասել ի խորանս լուսոյ։ Յիշեսջիք և զտէր Յակովբոս, և զհայր Արիստակէս և զՍահփանոս միաբանակեաց, և զԹորոս՝ նորին սպասաւոր, զհայր Աստուածատուր և զՊապաւնուն, որոց ողորմեսցի Քրիստոս Աստուած։ Յիշեսջիք և զվարդապետսն մեր՝ զԱռաքեալն, զԽաչատուր, զԿարապետն, զՅովհաննէս ծեր, զՎարդան, զՅուսիկն, և զհայրն իմ զՍարգիս, և զմայրն՝ Քրիստոսասէր, նաեւ զամենեսեան, որք հոգւով միաբանեալ են ընդ մեզ՝ զկենդանիս և զմեռեալս։

Այլ, որ Տէրդ ես ամենայնի, դու ողորմութեամբ յիշողքս յիշեցելովքն արժանաւորեա քոյին սուրբ արքայութեանդ, և քեզ փառք ընդ Հաւր և ընդ Հոգւոյդ Սրբոյ յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Այլ և որք ընդաւրինակէք, աղաչեմ յիշեսջիք միով Տէր ողորմեայիւ և զիմս անուն ի ձեր յիշատակի։

Բ

617* Գրեց[աւ սուրբ Աւետ]արանս յանապատիս ի Ծրի///ևիս, ի դուռն-Սուրբ Աստուածածնի, ի ՈՇԱ (1202) թուականիս։

Գ

179 Քրիստոս Աստուած, զքո սուրբ Աւետարանս առ քեզ միջնորդ և բարեխաւս ունիմ, ողորմեա ինձ՝ անպիտան ծառայիս քում Ղազարու՝ ի քեզ յուսացելոյ, և եղբաւր մերոյ Աստուածատուրոյ, և ծնաւղաց մերոց, և զարմից, և ամենայն հաւատացելոցս ի քեզ՝ կենդանեաց և մեռելոց, ամէն, և քեզ ընդ Հաւր և ընդ Հոգւոյդ Սրբոյ փառք յաւիտեանս, ամէն։

ղ

289 Տէր իմ և Աստուած Յիսուս Քրիստոս, զքո աստուածային գթութիւնդ առ քեզ բարեխաւս ունիմք և զճշմարիտ մարդեղութիւն քո և զկիրս անհասանելի և սո[ս]կալի չարչարանաց քոց, և զաստուածախաւս և զկենեղուտ աւետագիր կտակ քո։ Վասն այսր ամենայնի ողորմեա մեղապարտիս Ղազարու գրչի՝ ի քեզ յուսացելոյ, և եղբաւր իմոյ Աստուածատրոյ, և ծնաւղաց և զարմից մերոց, և ամենայն հաւատացելոց։ Եւ որ կարգ[ա]ք և ընդաւրինակէք՝ անմոռաց յիշեսջիք։

ե

475 Քրիստոս Աստուած իմ, զաւրութիւն իմ և աւգնութիւն, ապրեցուցիչ իմ և փրկիչ, յոյս իմ և ապաւէն, զքեզ աղաչեմ և ի քէն հայցեմ և զքո ինքեան զաստուածախաւս և զաւետաքարոզ կտակդ առ քո հեղութիւն միչնորդ և բարեխաւս ունիմ։ Ողորմեա եղկելի և բազմամեղ անձին իմոյ գրչի և ազատեա զիս ի յանցանաց մեղաց իմոց, և զաշխատութիւն իմ համարեա ի փրկութիւն ոգոյ անպիտանիս։ Յիշեա, Տէր գթած, և զեղբայր իմ զԱստուածատուր, աւգնեա և փրկեա ի փորձութենէ, նաեւ ամենից ողորմեա, Տէր, և քեզ փառք յաւիտեանս։

զ

609 Ղազարու մեղապարտ գրչի ողորմեսցի Քրիստոս Աստուած, և Աստուածատրու, հաւատացելոց՝ կենդանեաց և մեռելոց։

Սուրբ Աստուած Տէր Յիսուս Քրիստոս, վասն սուրբ եւ աստուածախաւս կտակի քո ողորմեա Ղազարու գրչի և չնչեա զպարտիս մեղաց նորա, ամէն։

4

ՃԱՌԸՆՏԻՐ

Երևան 1525

Գրիչ՝ Յովաննէս

ա

5 Զմեղսամակար[դ]ս եւ զաղկաղկս զՅովաննէս յիշեայ ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր։

բ

18ա Զստացողս եւ զգրողս զՅովաննէս յիշեա։

գ

Գրիչ՝ Գէորգ

97բ Յիշեսջիք ի սրբամատոյց յաղաւթս ձեր զՅովաննէս քահանայ զառաջի գիծն, որ սկսաւ կատարել և ոչ ժամանեաց, այլ փոխեցաւ ըստ աստուածային կամացն*։

* Հովհաննեսը գրել է Ա—Բ պրակները (տասական քերթից՝ 90 քերթ), որից պահպանվել է 48 քերթ։ Ձեռագիրն սկզբից քերի է։ Ժ պրակից (49 էջ), շարունակել է հայրը՝ Գէորգը։

Ես՝ Գէորգ, հայր Յովանիսի, յանձն առեալ խաւար աշուք, թերեւս կարացից կատարել զյիշատակս Յովանիսի՝ ինձ ծնողիս, եւ Յովանիսի և Մխիթարչին մեղաց թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ։

Դ

110բ Աղաչեմ զընթերցողսդ զԳէորգ մեղապարտ յիշեսջիք ի յաղաւթս ձեր։

Ե

142ա Աղաչեմ յասմ վայրի զՅովաննէս զառաջիգիծն, եւ զԳէորգ եւ զՄխիթարիչն, որ ձեռնատու եղեւ գրոցս, յիշեսջիք յաղաւթս ձեր, աղաչեմ։ Քրիստոս Աստուած սուրբ Սարգսի բարեխաւսութեամբ ողորմեսցի մեղուցեալ ծառայիս՝ սուտանուն քահանայի։

Զ

192ա Յիշեսջիք ի Քրիստոս զսուտանուն քահանայ զԳէորգ, եւ զառաջինգիծն զՅովաննէս, որ տարաշխարհ ելաւ ի յայս կենացս, եւ զծնողս մեր նաչատուր քահանայ, եւ զամենայն զեղբարս մեր, որք ի Քրիստոս փոխեցան։ Եւ զՄխիթարիչ, որ ակտակաբ եղեւ աւարտելոյ յառաջաղիր գրոցս եղբաւր իւրոյ, եւ զծնողս սոցա յիշեսջիք։

Եւ խոշորութեան գրոցս անմեղադիր լերուք։ Լուր վասն յիշատակութեան չկորուսի առ հասարակ։ Յիշեսջիք զմեղապարտ Գէորգ։

Է

220բ Ի թուիս ՈԸ (1201), ի ժամանակս բարեպաշտ ամիրսպասալարն Ջահարիայի, ի հրոտից ամսեան, բովանդակ ԻԲ (22) աւր թաթաւ եկն եւ գետ յարոյց եղեւ։

Ը

276բ ՁԳէորգ գրիչ զմեղուցեալ ծառս յիշեսջիք ի Քրիստոս, աղաչեմ զամենեսին, խոշորութեան գրոյս անմեղադիր լերուք։

Թ

303ա ՁԳէորգ մեղուցեալ գրիչ յիշեա, զի եմ յողորմելեացն եւ ոչ ի նախանձելեացն։

Ժ

319բ ՁԳէորգ գրիչ յիշեցէք։ Այլ աղաչեմ զընթերցողսդ ի յայս վայրի Ամբիծք ասել, զի պարտաւոր եմ*։

88բ-ի ստորին լուսանցքից սկսվում է «Գաւմուքիւն Մարխայի վաճառականի և սքանչելեացն Աստուծոյ, զոր եցոյց ի յաւգուտ ամենայն խոստովան[ողաց]» և շարունակվում է մինչև 121բ-ի լուսանցքը։ Ստորին լուսանցքը կտրելու հետևանքով, անհետացել է գրչի անունը։

* Գրված է «Սուրբ Յարութեան» ճառից առաջ։

ժա

445ա ՋԳէորգ մեղապարտ ղգծողս, եւ ղորդի իմ զՄխիթարիչ անուն, որ զնիւթս ետ անտրտունջ ի յիւր հալալ վաստակաց ի յիշատակ իւրն եւ ղիս՝ զսուտանուն գրողս յիշեսջիք ի սրբամատոյց յաղաւթս։ Եւ աղաչեմ զամենեսեան մի մեղադրէք, զի ոչ էի տեղեկ բայից եւ բառից, այլ բնաւ չունէի, վասն այնր յաւժարեցայ ի ժամ ծերութեանս, զի զառաջի զգիծն Յովանննէս սկսեալ, եւ տարաժամ փոխեցաւ յաշխարհէ։ Այս Յովանէս եւ Մխիթարիչս եղբարք էին։ Յիշեսջիք եւ զգրողս, որ հայրս եմ։

ժգ

452բ Սուրբ Աստուածածին Մարիամ
լեր բարեխաւս մեղոցելոյս
Առ որդիդ քո եւ Աստուած մեր,
զի ողորմեսցի ողորմելոյս։

5

ԱԻԾՏԱՐԱՆ

Երևան 3793 (1053 թ.)

Գրիչ՝ Բանեռգէս

310ա Կազմեցաւ Աւետարանս այս ի թուականիս ՈՄ (1201),
Ջեռամբ Յակովբոսի,
Հրամանաւ վարդայ քահանայի,
եւ որդւոցն իւր հարազատի՝
Կոստանդեա և Ջաւ[ր]ավարի*
եւ տիրուհեացն գովելի,
Նշի եւ Ռոմէն ինքն կոչի,
Շահարի եւ Խնձորի,
Եւ Մարեմի մաւրն ամենի։
Յիսուս Քրիստոս ողորմեսցի,
Յաւուրն աներեկի,
Ի դատաստանն յայն սոսկալի,
Ուր Որդի փառաւք գա հայրենի,
Իբր դատաւոր բազմեալ նըստի,
Ի դատաստանն յայն սոսկալի.
Երկոտասանքն հաւն բազմին,
Եւ զհատուցման տան ըստ արժանին։

---

* երկու բառ ջնջված է և այլ թանաքով նրանից վերև տողամիջում գրված է «Եւս և Հ///այի.. և դըստեր նորայ Մանանայի ողորմեա»։ Ջեռագիրը հետո անցնում է այս Մանանային, ինչպես երևում է հետագա հիշատակարանից (էջ 310բ)։

Եւ արդ յորժամ փողովլ անդ ժողովին,
Եւ արդարքն զեկայքն առնուն բաժի[ն],
Համ, ուր արդարքն պսակին։
Վարդեր քահանայ Հան[դերձ որ]ւդովք,
Հարազատաւք բարի բուսովք՝
Հանդերձ///
Սուրբ Գրիգորի սպասաւորաւք
Առց[ե]ն բաժին///*
Ընդ Մով[սիսի] եւ Ահարոնի,
Ընդ Պետրոսի և Պաւղոսի,
Ի Քրիստոս Յիսուս ի Տէր մ[եր] աւրհնեալ, յաւիտեանս, ամէն։
Միխայլի ոսկե[րիչի,
Աւ]ետարանս զայս շնորհողի,
Ջաւավարի քահան[այի,
Դստ]երն իւր անդրանկի՝
Որմենի՝ Հայք** ինքն կոչի,
Եւ [զնոցա]ն ամենայնի,
Յիսուս Քրիստոս ողորմեսցի։
Եւ որ յիշեա յիշեալ լից[ի
Յաւ]ուր մեծի յապագայի,
Զթաներգէս անպիտան[ի,
Որ] զայս գիծ գրեցի,
Յիշելոյս արժանասցի,
Եւ յայսմ Քրիստոս [թագաւ]որի
Եւ նմա փառք յամենայնի; ամէն։

6

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՍՈՂՈՄՈՆԻ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՅ

Երուսաղեմ 559 (1809 թ.), Ն. Պողարյան, Ցուցակ Բ, էջ 587

Գրեցաւ իմաստատիպ, հանճարունակ, աստուածախաւս մատենիս այս սրբոյ առն Աստուծոյ Սողոմոնի թարգմանութեանս, արարեալ քրիստոսակիր եւ հոգիընկալ անձին Ներսէսի սրբոյ և մաքրամիտ եպիսկոպոսի նշանաւորն Տարսոնի, ընդ բազմաշխատ բանից երկնային գանձուց կանխաւ ի վերջոյ եւ զայս, աննախանձ իմացող մտաց արդարև սխրացուցիչ, ի թուիս Հայոց ի ՈՆ (1201)։

Եւ զիարդ ոչ՝ որ ի մեղաց սառուցեալ գարուս լուսատու ոգւոց բանի առատ ի Հոգւոյն Սրբոյ բղխմամբ յեկեղեցիս Քրիստոսի պայծառ եւ արթուն սրտին յայտնեցաւ։ Որ ի տխուր եւ յանլոյս ոգւոց աւուրսս ի մարմնի

* Մի բառ չի կարդացվում։

** Որմեն հավանաբար Արմեն անունն է։

արութեան վաստակօք անազդ շահ հոգւոյն ճարպով յաստուածուստ փայլեալ ծագեցաւ։ Սա եւ նորին անսխալ առաքինութիւն բանիւ ընդ գրոյ տիրապէս ահա ոչ պարագրի, բայց թէ յինքնածագ անընթաց արեւուն յայտնութեան աշխարհի սպասողացն ստուգիւ սփռեալ ցուցանի, ընդ այլ բազմազան գաղտնի բարեաց մարդկան, զոր ունի անեղծ գծով Աստուած առ ինքեան։

Այս սուրբ քննեաց զերգարանս Դաւթի պարզ եւ մեկին բանիւ, խորին եւ ախորժ դիմօք, հաւանական եւ տուփելի անձին ունողի երկեղ եւ իմաստս։ Սա մեկնեաց եւ զխորին խորհուրդ սրբոյ եւ սուրսափելի խորհրդոյ Պատարագի մեղսաքաւիչ ապրեցուցչին մերոյ ամոքիչ եւ թռուցիչ բայիւ սրտի, որ յերկինս նայի։ Զոմանս յայլոց լեզուի արաւրոց (՞) եւ զկէսս ինքեամբ արարուածոյ եւ ձեռնին երկոց ի լոյս էած եւ յանդիման կացոյց զանյայտ խօսուն մարգարիտս իմաստից, եւ եթող Սիօնի նորոյ մանկանց ի հրճուանս ճաշակոց կենաց սեղանաւորեալ։

7

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վէնետիկ 22, Սարգիսյան, 8ուցակ Ա, էջ 167—168

Գրիչ՝ Բասիլ
Վայր՝ Հռոմկլա

ա

182բ Յամի Ո որդի յիսներորդի, թուաբերութեան Հայկազան տումարիս (1201), գրեցաւ աստուածախաւս և հոգելից Իմաստութիւն առակախաւս երգ մեծի իմաստնոյ և արքայի Սողոմոնի, ձեռամբ իմով Բասլի սարկաւագի՝ նորակերտ և դեռաբոյս, ոչ համարեալ ի գրչութեան, ի խնդրոյ և հրամանաւ քրիստոսասէր և ամենիմաստ, ամենագով և ամենաւրհնեալ և ամենաբարի և բարեպաշտ իշխանի և իշխողի մերոյ և///պարծանաց պարոնի Միխայլի՝ եղբաւր կաթողիկոսի Հայոց, որոյ յիշատակն նոցա եղիցի աւրհնութեամբ, ի վայելումն և ի վարժումն իւր, և յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց, զոր պահեսցէ զսա Տէր Աստուած խաղաղութեամբ և բազում ժամանակաւ։

Գրեցաւ սա յաթոռս սուրբ՝ ի Կլայս Հռովմեականս, ընդ հովանեաւ սրբոյ տաճարիս Սրբոյն Գրիգորի, և առաշի աստուածընգալ և համագումար սրբոցս, ի ստոյգ և յընդիր և ի լաւ աւրինակէ, աստուածապատիւ և քրիստոսալոյս, գերահռչակ վարդապետի և հայրապետի տեառն Ներսիսի՝ հաւրեղբաւր պարոնիս, դրեալ աստուածային և սուրբ մատամբ իւրով, և ի հայրապետութեան և յաթոռակալութեան աստուածապատիւ և տիեզերալոյս և գերահռչակ վարդապետին Գրիգորիսի եղբայր <եղբաւր> սմին, զոր պահեսցէ Քրիստոս Յիսուս ամրածածուկ աջով իւրով զհայրապետս և զվերակացուս մեր, և զհարազատ եղբայրս իւր զպարոն Միխայլն և զպարոն Վասիլն, և տացէ սոցա Տէր Աստուած կըր-

կին կենդանութիւն բաղում ամաւք և ժամանակաւք, և զծնողս սոցունց ըստ մարմնոյ, և զեղբարս սոցա՝ զտարաժամ գնացեալսն առ Քրիստոս՝ դասակից և պսակակից արասցէ Որդին Աստուծոյ ամենայն սրբոց և սիրողաց իւրոց։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք և լուսատրիք ի սմանէ կամ աւրինակէք, յիշեսջիք... և զանարժան գծողս զԲասիլ և զծնողս իմ, և խոշորութեան և սխալանաց անմեղ///

բ

84 Տէր Յիսուս Հաւր Միածին,
Տուր վայ[ել]ել զսա ստացողին,
Պարոն Միխայլի մեծի իշխանին,
Եղբաւր Հայոց հայրապետին։
Եւ տուր նմա զհանճար վերին,
Զանճառ իմաստ հոգևորին,
Վայելել զայժմու իշխանութիւն
Եւ զյաւիտեանցտ մեծութիւն։

գ

126ա Տէր Յիսուս վայելել տացէ զերգս Սողոմոնի
Բարեպաշտ պարոնին Միխայլի՝
Եղբաւր տեառն Գրիգորիսի,
Հայոց մեծաց հայրապետի,
Ազգաւ են մեծ և Պահլաւունի,
Եւ որդի մեծ սեաստաւսին Զաւրավարի։

դ

206բ Սերաստաւսն Հեթում յիշեսջիք ի Քրիստոս։

8

ՃԱՌՔ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

Տրուագրեմ 972 (1714 թ.), Ն. Պողարյան, Յուցակ Գ, էջ 549

Վայր՝ Սիս

ա

1ա Սկիզբն գրոցս, որ կոչի Անդրիանդեա, ասացեալ սրբոյն Յոհաննու Ոսկեբերանի, եւ տրամադրեալ գլուխս Լ Ա(31)ն, որում պարունակին ճառք եւ պատմութիւնք եւ ներբողեանք ոգեշահք, օգտակարք եւ պիտանացուք։ Թարգմանեցեալ յունականէն ի հայս յաւուրս հայրապետութեան տեառն

Գրիգորիսի կաթողիկոսի եւ քրիստոսապսակ արքային Հայոց Լէոնի, ըստ խնդրոյ երանելոյն Ներսէսի Լամբրոնեցւոյ, յամի Տեառն ՌՃՂԸ (1198) եւ Հայոց ՉՃԽԷ (1198), գաղափարեցեալ ՉՃՄ (1201) թվին Հայոց, ի Սիս:

Բ

244բ Ջտէր Ներսէս յիշեսջիք ի Քրիստոս, որ ի սոյն ամի հանգեցաւ ի Քրիստոս*,

* Գաղափար օրինակից է, վերաբերում է 1198 թվականին:

9

ՄՇՈ ՏԱՒՆԱԿԱՆ ՃԱՌԸՆՏԻՐ

Երևան 7729

Գրիչ՝ Վարդան
Վայր՝ [Աւագ վանք]*

ա

3ա Ո՛վ սուրբ անաւրինութիւն Աստուծոյ, ողորմեա ստացողի սուրբ կտակիս պատրոն Աստուածատրին, եւ ծնաւղաց իւրոց, եւ հարազատ եղբարցն պատուական քահանային Ափեռեաց եւ այղ եղբարցն, եւ ամենայն աշխարհի, եւ ետնեալ գծողի, եւ քեզ փառք, որ տաս զղաւրութիւնն, որ եւ կատարեսցի**։

բ

6բ Վարդան յիշեսցի ի Տէր***։

գ

27բ Քրիստոս Աստուած ողորմեա Բարսեղին, որ զաւրինակս պատրաստեաց, ամէն։

դ

55բ Ջստացողք եւ զաշխատողք յիշեցէք ի Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշեսցէ։

ե

65բ Ջստացող լուսափայլ կտակիս զպատրոն Աստուածատուր եւ զԱփեռիս, եւ զգծագիրս Վարդան, եւ զամենայն հաւատացեալս յիշեցէք ի Քրիստոս, աղաչեմ։

զ

73բ Ջստացող սուրբ կտակիս զպատրոն Աստուածատուր, և զծեր Յակոբ վարդապետ յիշեցէք ի Տէր։

Ջգծագիրս Վարդան յիշեցէք, եւ Աստուած զձեզ յիշէ ամէն****։

---

* Ձեռագրի մասին տե՛ս Ա. Մաթեոսյան, Ե՞րբ և որտե՞ղ է գրվել Մշո Տօնական Ճառընտիրը (Բանբեր Մատենադարանի, № 9, Երևան, 1969, էջ 137—162)։

** Գրված է զարդագրի մեջ։

*** Գրված է Սողոմոն Մաքենոցաց վարդապետի հիշատակարանից հետո։

**** Առաջին նախադասությունը գրված է գլխազարդի վերևում, երկրորդը՝ նրանից հետո վերնագրի վերջում։

Է

105ա Կատարեցաւ կարք ընթերցման գիշերային պաշտաման մեծի ծնընդեան եւ յայտնութեան մերոյ Յիսուս Քրիստոսի, ճառք ԿԴ (64), յորս հայցեմ յետնեալ գծագիրս յիշել յաղաւթս, զի ողորմեսցի Քրիստոս բարեխաւսութեամբ մաւր քո ինձ և ծնաւղաց իմոց եւ եղբարց իմոց։

Աստուած յաւիտենական, միածին Որդի և բան Հաւր, որ խոնարհեցաք ի հայրական ծոցոյ եւ յարգանդի կուսին, իննամսեա ժամանակ բովանդակեալ պարունակեցաք եւ միացուցեալ ի մի բնութիւն, զապականացուս եւ զմեռեալս ընդ անմահ և ընդ անապական աստուածային քոյս բնութեանդ, եւ ծնար անապական եւ անաղտ յանարատէն Մարիամայ սրբոյ կուսէն վասն ամենայն յանցուցեալ պարտաւորաց, աղաչեմք զքեզ Որդի միածին Աստուած եւ ծագումն անճառելի էութեան Հաւր, քոին սուրբ ծննդեամբդ եւ անապական սուրբ մաւր քո բարեխաւսութեամբ, եւ Սուրբ Կարապետին քո և Մկրտչին Յովաննու, եւ ամենայն սրբոյ գննգիցն որք եղեն խորհրդակից խորհրդածութեան անճառելի քոին ծննդեան, յիշեա զմեծ պատրոնն զԱստուածատուր՝ զծառային քո, եւ զբարի ծնաւղսն նորա՝ զծառայսն քո՝ զաստուածասէր պատրոն Վասուսն եւ զպատուեալ բարեպաշտուհին Հռիփսիմեա, եւ զպատուական որդիս իւրեանց զստա-
105բ ցող կտակիս զամենաւրհնեալն Աստուածատուր, եւ զընտրեալ||զարդ քահանայի Աւետեաց, եւ պատուականին Յովաննիսի, եւ այլ եղբարցն, որ մեծաւ յուսով զսա ի քեզ ստացաւ, եւ ողորմեա եւ ազատեա ի կապանաց մեղաց, ամէն։

Եւ զիս յիշեա, Քրիստոս Աստուած, զմեղաւոր գրողս Վարդան, եւ զծնաւղսն մեր բարի, եւ զեղբարսն զԲարսեղն եւ զայլսն, եւ զսպասաւոր քահանայս Գէորգ, որպէս զի արժանի լիցուք փառաւորել զՀայր եւ զՈրդիդ եւ զՍուրբ Հոգին յաւիտեանս, ամէն*։

Ը

130բ Ջստացող սուրբ կտակիս զպատուական պատրոնն զԱստուածատուր եւ զբարի ծնաւղս նորա յիշեցէք ի Քրիստոս Յիսուս, ամէն։ Եւ գծագիրս Վարդան եւ զծնաւղսն իմ, եւ Աստուած զձեզ յիշեսցէ, ամէն։

Ջ Քրիստոսատուր հայր, որ յայսմ ամի վախճանեցաւ, յիշեցէք ի Տէր։

Բ

157բ Աստուած ողորմի նմա, որ զձառս երեր, ամէն**։

ժա

213բ Ջստացող սուրբ կտակիս եւ փափագող յիշատակիս զամենաւրհնեալ պատրոն Աստուածատուրն եւ զբարի ծնաւղսն իւր յիշեցէք ի Քրիստոս

* Այս հիշատակարանի մի մասը 1870 թ. վերստին արտագրել է Մամբրե վարդապետը 93բ էջում։

** Գրված է Եփրեմ Ասորու ձի գալուստ աստուածորդոյն քառասնաւրեա ի տաճարն ճառի վերջում։

Յիսուս աղաչեմ, եւ զանպիտան գծագիրս Վարդան, և զամենայն աշխարհս հաւատացեալ, և Աստուած զձեզ յիշէ, ամէն։

ժգ

ՁԱռիւծ սպասաւոր նորա և մուտքախի և զծնաւղս իւր աւրհնութեամբ յիշեցեք ի Տէր Յիսուս։

ժդ

338ա Ջստացող հանրալոյս կտակիս՝ զաստուածասէր եւ զմեծապատիւ պատրոն Աստուածատուրն, եւ զհարազատ եղբարս նորա՝ զաստուածատրեալ քահանայն զԱւետիսն, որ բազում հոգաբարձութեամբ նպաստ եղեւ ի տառս յայս, եւ զՅովաննէս, եւ զՎարդան, զԿոստանդն, եւ զԴաւիթ, եւ զծնողս նոցա զՎասուսն եւ զՀռիփսիմէ յիշեսջիք ի Քրիստոս, և զմեղապարտ գրիչ մի մոռանայք, եւ Քրիստոս զձեզ յիշէ։

ժե

351ա Ջաստուածընտիր պատրոն Աստուածատուրն, եւ զեղբայր իւր զսրբասնունդ քահանայ զԱւետիսն, եւ ծնաւղսն նոցա յիշեցէք ի Քրիստոս, եւ զհայր Յովաննէս, եւ զանպիտան գրող սորա, եւ զծնողսն նոցա յիշեցէք։

ժզ

358ա Ջառաշնորդք սուրբ ուխտիս՝ զՅովհաննէս պատուական ծեր, և զՍարդիս, և զԱստուածատուր, որ ի գիրս աւժանդակեաց, յիշեցէք ի Քրիստոս։ Աստուած և փրկիչ Յիսուս Քրիստոս, քո սուրբ և նշանագործ տնաւրէնութեամբ ի ձեռն չարեքաւրեա սիրելոյն կենդանութեան և առաջիկա փրկաւէտ գալստեամբս ողորմեա քո աստուածախնամ գթութեամբդ՝ զպատրոն Աստուածատուրոյ և սիրով փափագողի՝ ստացողի, և աստուածասէր եղբաւր՝ պատուեալ քահանայի, որ առիթ և յաւժարեցուցիչ ի ստանալ գծագրութեամբ զսուրբ կտակս աւրհնութեան եղեւ՝ Աւետիս կոչեցեալ, արժանաւորիլ աւետաւոր լուսոյն, և աստուածասէր ծնաւղացն՝ պատուեալ ծերոյն Վասուսին և պատուական մաւրն, և հաւատարիմ եղբարցն՝ Յովաննիսի, Վարդին, Կոստանդէ, Դաւթի, և բարեպաշտ քուերց և քրիստոսասէր ընտանեաց և բարեկամ սիրելեաց՝ Գալկոյն, Խայտեռոյն, և Առիւծին, Աստուածատուրո, ալեւոր Առիւծին, և Վարդ[ա]նա, և տուր վարձս բարեաց ամենեցուն ի հասարակաց ատենին, ամէն։

Եւս առաւել յետնեալ գծագրիս ողորմեա, Քրիստոս Աստուած, և արժանաւորեա զմեզ տեսանել զքեզ, և գթա ի հոգիս ծնաւղաց իմոց և եղբարց և ամենայն հաւատացելոց՝ կենդանեաց, և մեռելոց, զի արժանաւորեալ տացուք փառս ամենասուրբ Երրորդութեանդ յաւիտեանս, ամէն։ Ողորմեա, Քրիստոս Աստուած, և դասեցոյ ընդ սուրբս քո, որ յայսմ ամի են վախճանեալ, և յիշեա, տէր, զԿորկոտակ և զԴաւիթ քահանայ։

ԺԷ

388բ Քրիստոս Աստուած, քո անճառ խոնարհութեամբդ մաքրեա ի մեղաց զմեծապատիւ պատրոն Աստուածատուրն, եւ զԱւետիս քահանայ՝ զեղբայր իւր, և զծնողսն նոցա: Եւ արժանի արա հաղորդութեան աշակերտացն քոց ի Վերինն Երուսաղէմ, ամէն: Եւ ողորմեա բազմամեղ գրողի սորա և ծնողաց եւ եղբարց նորա, եւ որք այսաւր տաւնախմբելով յիշէն, յիշեալ լիցին:

ԺԸ

406 Քրիստոս Աստուած, քո սուրբ չարչարանացդ բարեխաւսութեամբ ողորմեա մեծապատիվ պատրոնի Աստուածատրոյ՝ ստացաւղի մեծափառ կտակիս, եւ ծնաւղաց իւրոց, եւ եղբարց, եւ շնչեա զյանցանս նոցա, ամէն: Եւ զմեղապարտ գրիչ, եւ զծնողս նորա, եւ զեղբարս, եւ զամենայն հաւատացեալս յիշեա Քրիստոս յարքայութեան քում, եւ ողորմեա:

ԺԲ

415բ Ջստացող հանրալոյս եւ մեծափառ կտակիս՝ զաստուածասէր եւ զպատուական պատրոնն զԱստուածատուրն, եւ զծնողսն իւր զՎասուսն եւ զՀռիփսիմէ, եւ զեղբարսն իւր զԱւետիս քահանայ, եւ զՎարդան, եւ զՅովաննէս, զԿոստանդն եւ զԴաւիթ յիշեցէք ի Քրիստոս, որոց տացէ Քրիստոս ողորմութիւն գտանել յաւուրն յետնում: Եւ զիս զմեղապարտ գրիչ, եւ զծնաւղսն իմ, եւ զեղբարսն յիշեցէք ի Քրիստոս, որպէսզի ողորմեսցի մեզ Քրիստոս, ամէն:

Ի

446ա Քրիստոս Աստուած, բարեխաւսութեամբ Սրբոյն Մամասայ ողորմեա պատրոն Աստուածատուրին, եւ ծնողաց, եւ եղբարց, եւ քերց իրոց: Ողորմեա եւ հաւր Յովհաննիսի, եւ Սարգսի ե[ւ] գրագիր Վարդանայ, Գրիգոր[ի]սի, Մարգարէին. եւ Ռատակէս միայնակեցին, եւ որ զգիրս գրեաց, եւ ծնողաց նոցա, եւ եղբարց, եւ սուրբ յարութեամբդ նորոգեա զհոգիս նոցա ի կեանս:

ԻԱ

461բ Ջստացող և զաշխատողք յիշեցէք ի Քրիստոս Յիսուս, եւ զհա[ւատ]արիմ ծնաւղսն եւ զեղբարս նորա, եւ զամենայն հաւատացեալս: Եւ զյետնեալ գծագիրս, եւ զծնաւղսն մեր, եւ զեղբարսն, եւ Աստուած զձեզ յիշէ:

Ջ[Թ]աւրոս եղբայր, որ բարիւք սպասաւորէ, յիշեա Քրիստոս Աստուած:

ԻԲ

464ա Քրիստոս Աստուած, ողորմեա Գամոյնկու հաւատարիմ առաջնորդի, որ յայսմ ամի վախճանեցաւ:

իգ

484ա Տէր Յիսուս Քրիստոս, քո սուրբ եւ անարատ ծնաւղի բարեխաւսութեամբ ողորմեա աստուածասէր պատրոնի Աստուածատուոյ՝ ստացուղի սուրբ կտակիս, եւ ծնաւղաց իւրոց, եւ եղբարց, եւ գծագրիս Վարդանայ, եւ եղբարց իմոց, եւ ծնաւղաց, ամէն։

իդ

498բ Ջստացող սուրբ կտակիս՝ զպատրոն սիրեցեալ Աստուածատուր, եւ ծնաւղսն իւր, եւ զեղբարսն յիշեցէք ի Քրիստոս Յիսուս, եւ զգծագիրս Վարդան, եւ զամենայն աշխարհս։

իե

530բ Ջստացող եւ զաշխատողս յիշեցէք ի Տէր աղաչեմ։
Ի խաչին կարգն է, ուշիմք արա։

իզ

534ա Քառակուսի Սուրբ Նշանիս եւ արեամբ ներկեալ զենարանիս, բարեխաւսութեամբ Քրիստոս Աստուած յորժամ գաս հայրենի փառաւք եւ լուսաւոր, զառնազէն աստուածայինն նշանակս առաշի քո, ողորմեա ստացողի սուրբ կտակիս՝ պատրոն Աստուածատուոյ, եւ բարի ծնաւղաց իւրոց, եւ հաւատարիմ եղբարց, եւ աստուածահաճոյ սպա[սա]ւորաց ի յելս եւ ի մուտս, եւ ծագեա յամենեսեան երկիւղ մահու, եւ զխորհուրդ գալստեան քո, եւ ինձ ողորմեա գձուծ գրչի, եւ ծնաւղաց իմոց եւ զեղբարց, եւ քեզ փառք յաւիտեան, ամէն։

իէ

555բ Բարեխաւսութեամբ սուրբ առաքելոյս, Քրիստոս Աստուած ողորմեա ստացողի սուրբ կտակիս պատրոն Աստուածատուոյ, եւ ծնաւղաց իւրոց, եւ եղբարց, եւ յետնեալ գծողիս, եւ որ զաւրինակս ետ, ամէն։

իը

375ա Քրիստոս աստուած, բարեխաւսութեամբ Սրբոյ Նախավկայիս քո Ստեփաննոսի եւ ընկերաց իւրոց՝ նահատակելոց ընդ նմա, ողորմեա ստացողի սուրբ կտակիս պատրոն Աստուածատուոյ, եւ ծնաւղաց իւրոց, եւ եղբարց, ամէն։

իթ

Մաղկող՝ Ստեփաննոս

452ա Ստեփաննոս*

* Գրված է գլխազարդի մէջ հյուսածո տառերով և հյուսվածքի մէջ՝ ոսկէ խորքի վրա։ Որովհետև հայտնի են ձեռագրի գրիչը (Վարգան) և ստացողը (Աստուածատուր), Ստեփաննոսը մեծ հավանականությամբ եղել է ձեռագրերի բարձրարվեստ մանրանկարների և զարդագրերի հեղինակը։

լ

3ա *Աստուած վայելել տացէ պատրոն Աստուածատուր եւ Հաւատարիմ ազգի աստուածասէր անձանց, եւ ինձ ողորմեսցի եւ ստացողին, ամէն;*
Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, ագնեա Աստուածատուր *բարի պատրոնի, եւ ողորմեա նկարողի եւ* Աւե[տեաց]:

իէ

288բ Վարդան *եւ ծնաւղք իւր յիշեսցի, եւ պատրոն* Աստուածատուր *եւ* Աւետիս *եւ* Վասուան*՝ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր։*

10

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երուսաղեմ 326, Ն. Պողարյան, Ցուցակ Բ, էջ 198—199

Գրիչ՝ Սամուէլ
Վայր՝ Ընկուզեկ

ա

43բ *Ո՜վ եղբարք, աղաչեցէք վասն իմ զՏէր, զի մի ընդ այծիսն կացուսցէ զիս, այլ ընդ ուդիսն, եւ ընդ իմաստուն սուրբ կուսանսն։*

բ

72ա *Տէր Յիսուս Քրիստոս, ողորմեա եղբաւր իմում* Յոհաննիսի*՝ փոխեցելոցն առ քեզ, եւ հան նմա մասն յարքայութեան քո։*

գ

122ա *Աստանաւր յիշեսջիք* զՍամուէլ *գծող, եւ* զՅոհաննէս *զեղբայրն իմ զփոխեալն առ Քրիստոս։*

դ

154ա *Ո՜վ Սրբուհի Տիրամայր, անկեալ առաջի քո ես* Սամուէլ *մեղաւք մեռեալս աղաչեմ զքեզ բարեխաւսեա վասն եղկելոյս, զի թողցէ ինձ զմեղս իմ։*

ե

169ա *ՈԽԸ (1199) թու[ին]* յԸնկուզեկ *գրեցաւ։*

զ

Վայր՝ Դաւթա վանք

169բ *Պռոխորոս երեք ամովք յետոյ գրեցի, ի վանքս* Դաւթա *ՈԾԱ (1202) թու[ին]։*

է

202ա *Աղաչեմ յիշել* զՍամուէլ *գրիչ։*

Ը

209ր Աղաչեմ յիշեսջիք զՀայրն իմ զԽաչէվարդն, որ ի ծերութեան փոխեցաւ ի Քրիստոս։

11

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 10434 (1069 թ.)

Ստացող՝ Տիրացու

ա

288ա Աւետարանս այս փրկական
Որ զԱստուծոյն պատմէ մեզ բան,
Տիրացուիս է սեփական,
Եւ յիշատակ ինձ յետ մահուան։
Յիշելոյ վարկիք արժան,
Որք ընթեռնուք զայս անխափան։
Միթէ չածէ ի դատաստան,
Զիս ընդ գործոցս իմ թիւրութեան։
Այլ համարի լուր բաւական,
Միայն զհաւատս աներկիւան,
Զոր լինիմ միշտ խոստովան
Զմիութիւնն երրորդական*։

Բ

Հեղինակ՝ Տիրացու
Գրիչ՝ Կոզմա

288բ Ո՛վ աստուածայի[ն] Աւետարան եւ փառաւոր,
Լուսաւորիչ կենաց կտակ եւ երկնաւոր,
Կամիս լինել զիս մաքրութեամբ քեզ սպասաւոր,
Միշտ կատարեալ ամենայնիւ եւ հոգեւոր։
Այղ տառապեալս Տիրացու՝ յոյժ յանցաւոր,
Վերջին եւ տրուպ ամենեցունց՝ որ գիտնաւոր,
Անուն առանց արդեանց, միայն կեղծաւոր,
289ա Եւ անբարէվարժ կացեալ կրաւնա‖ւոր։
Թափուր եւ անվարձ վաստակաւոր,
Եւ միշտ ընդունայն ի բարի բեռանց ուղեւոր
Որ զայլս յորդորեմ լինելն լուսաւոր,

---

* Գրված է վարժ կանոնավոր բոլորդրով, բացառութեամբ վերջին երկու տողի, որ ուրիշ գրչից է։ Տիրացուին նույնացնում ենք Սահփանոս Տիրացու գիտնականի հետ, որը Վասպուրականի Սուրբ Խաչ վանքի առաջնորդ էր և մահացավ 1202 թ.։ Հիշատակարանը, որպես վերջին հնարավոր ամսկետ, դնում ենք այդ քվականի տակ։

Եւ ինձ զխաւարն առքեմ* կամաւոր,
Աւտարաց լինիմ քարոզ անխոտոր,
Եւ իմումս անձին թշնամի
Եւ յարակ յայտնեալ նենգաւոր,
Յաւժարեալ սիրով մեղաւոր,
Եւ առ Աստուած յուսով դարձեալ դաշնաւոր։

Գ

290ա Ընդ բազումս անցեր փոփոխմամբ փրկագործ եւ անփոփելիդ աստուածախաւս, հասեր եւ առ իմս անարժանութիւն, եւ ես տամ զքեզ՝ եկեղեցւոյ քում սրբոյ, արժանաւոր եւ իմաստուն վերծանողաց, յիշել զիս քով միջնորդութեամբ եւ բարի բարեխաւսութեամբ առ զքեզ բարբառեալ Տէր, արժանի առնել ողորմութեան իւրոյ։

Յիշեսջիք ի Քրիստոս զԿոզմաս։

---

* Գրված է «առեմ», «քս-ն հետագայում ավելացված է վերևում և նշանով ցույց է տրված նրա տեղը։ Հաջորդ թերթը պակասում է։ Կոզման, հավանաբար, հիշատակարանի գրիչն է, որ գրել է Տիրացուի պատվերով ի տարբերություն նախորդի, որ բոլորագրով էր գրված Տիրացուի ձեռքով։

12

ԱԻԵՏԱՐԱՆ

Երուսաղէմ 3273, «Սիոն» 1933 Բ., էջ 415

Գրիչ՝ Յովհաննէս
Վայր՝ Ալճոցի վանք

Շնորհօք Սուրբ Հոգւոյն սուրբ աւետարանիչքն Մաթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս լծակցեալ արաւրով խաչին, խլեցին զփուշ մեղաց և տնկեցին զխորհուրդ տնաւրէնութեան Որդւոյն Աստուծոյ. յառաջ՝ զիջումըն բանին Աստուծոյ առ սուրբ կոյսն և զիննամսեայ ժամանակաւ զծընունդն, եւ զկաթնասուն լինելն որպէս մարդ, եւ զայլ զանբաւելի զբանն, և ապա զերեսնամեայ զմկրտութիւնն, և զնշանսն զոր առնէր մի ըստ միոջէ՝ զկուրաց տեսանելն, զխլից լսելն, և զհամերց խաւսելն և լսելն, և զկաղաց գնալն, և զդիւահարաց բժշկելն... և զհամբարձումն առ Հայր, ե զիջումն Հոգւոյն Սրբոյ ի դասս առաքելոցն յաւուր պենդեկոստէին ե զայդ նշանսն եւ զսքանչելիսն, զոր ոչ կարեմք ի թիւ արկանել։

Արդ, ես ծառայս Աստուծոյ Յովճաննէս սկսայ զսուրբ Աւետարանս և կատարեցի ի ՈՄԲ (1203) թուականիս, ի կաթողիկոսութեան տէր Անանիայի, և յառաջնորդութեան տէր Մխիթարայ՝ երկրիս Խաղտեաց, ի փոքր մենաստանիս որ կոչի Ալճոցի վանք, ի գուռն Սուրբ Յովհաննիսի՝ ձեռնադրողին Փրկչին մերոյ։ Յայսմ ամի առ եղեալ ի վերայ երկրի։ Ոմն գնեալ զհացն և սովամահ լեալ եւ ոմն ծախեալ եւ յղրացեալ իբրեւ կարաւտ ոսկւոյ եւ արծաթոյ, ի նոյն յայսմ ամի կատարեցաւ բան/// եկեալ սոլտանն արևմտից և տիրեալ Թէոդոպատպսեայ, եւ մարտ եղեալ ընդ Վրացւոցն, յաղթել ի նմանէ, թողեալ զձիս և զզորիս եւ զգանձս բազումս, եւ ինքն փախստական գնացեալ յիւր գաւառն։ Ո՛վ սուրբ եղբարք, աղաւթս արարէք, որ ոչ ածէ Աստուած այնպիսի աւր ի վերայ երկրի, զոր տեսաք աչաւք մերովք։

Այղ ես՝ Յովճաննէս քահանայ, ստացայ զսուրբ կտակս զայս զաւակ ի Սիովն և ընտանի ի Վերին Երուսաղէմ, յիջատակ ինձ և ծնողաց իմոց, և եղբարւն իմոյ Ներսիսի ընտրեալ քահանայի և կրօնաւորի, և հանգանն իմոյ Գուրկանն և Վարդեթփին· եւ զստացող սուրբ կտակիս, և զծնողսն իւր, և զեղբարսն իւր զամենայն սիրելիս, զոր եւ ինքն կամի, եւ զքեռին իմ զԱստուածատուր, որ սնուցիչ իմ էր և վարդապետ, և որ զմեզ յիշեն առաջի ահեղ աթենին Քրիստոսի, յորժամ բանք սպառին և գործք սնոտիք թագաւորեն։ Ո՛վ սուրբ եղբարք աղաչեմ զձեզ, յորժամ

ընթեռնոյք զսուրբ Աւետարանս կամ ընդաւրինակէք, ի մաքրափայլ յաղաւթս ձեր յիշեսջիք զմեզ և յիշողացդ, և յիշեցելոցդ ողորմեսցի Քրիստոս, ամէն։

13

ԱԻԵՏԱՐԱՆ

Վենետիկ 93, Բ. Սարգիսյան, Ցուցակ Ա, էջ 419—420

Գրիչ՝ Առաքել
Վայր՝ Եղիվարդ

Փառք ամենասուրբ Երրորդութեանն յաւիտեանս, ամէն։

Գրեցաւ սուրբ Աւետարանս ի Թուականիս Հայոց Ի ՈՄԲ (1203), ի գաւառիս Կամիւա՝ մերձ ի գեաւղս Սիմա, ի յանապատս որ կոչի Եղիվանի, ընդ հովանեաւ Սուրբ Կարապետիս եւ Սրբոյ Աստուածածնիս, ի վայելումն Մովսէսի եւ Յովհաննիսի, որ ստացան զսա ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ, եւ յիշատակ կենդանեաց եւ մեռելոց։ Արդ՝ որք կարդայք կամ ականիք ի սմանէ եւ լուսաւորիք, ի սուրբ յաղաւթս ձեր յիշեսջիք զսրբամաքուր հայրապետս մեր՝ զտէր Բարսեղ, եւ զհայր Թորոս, եւ զԿարապետն՝ զհոգեւոր եղբայր մեր, եւ զսրբասէր քահանայն զԿար[ապ]ետն՝ որ զաւրինակս եհտ, եւ զծնողս իւր։ Յիշեա՛ Քրիստոս Աստուած զԴաւիթ, եւ զՂուկասն, եւ զՅովհաննէս, եւ զԱւետիքն, եւ զՂեւոնն, եւ զայլ եղբարքս, որ յանապատիս կան՝ զմեծ եւ զփոքր։

Եւ Առաքելի՝ անպիտան եւ անարժան գրչի, եւ ծնողաց իմոց, եւ եղբարց, եւ քեռն իմ վախճ[ան]ելոյ, եւ եղբարւն։ Ողորմ[ե՛]ա՛ Քրիստոս Աստուած Ստեփանոս երիցու եւ ծնողաց իւրոց բարեպաշտից։ Տէր Աստուած, ողորմեա Յոհան երիցու, եւ Թորոսի, եւ Առաքելին։ Յիշեա եւ զՊաւղոս՝ զհոգեւոր եղբայր մեր, եւ զԳրիգորէսն եւ զԽաչատուր; Յիշեա Տէր եւ աւրհնեա զԽաչատուր, որ զաւրինակս է գրել, եւ զԳորգ, եւ զԿոստանդին, եւ զՆերսէս երէց, եւ զԴաւիթ, եւ զծնունդս նոցա, եւ զորս միանգամ գրեցաք յառաջմէ մինչ ի վերջինս, զի տացէ նոցա Աստուած զթողութիւն եւ զմեծ զողորմութիւն, եւ մասն եւ բաժին ընդ ամենայն սուրբս, եւ յաւուր գալստեան իւրում փառաւք պսակեսցէ, ամէն։

Արդ դուք եղբարք յիշեցէք զմեզ յաղաւթս, եւ դուք յիշեալ եղիջիք ի մարդասիրէն Քրիստոսէ, ամէն։ Եւ ինձ տառապե[ա]լ գծողիս ողորմեա Քրիստոս, ամէն։

14

ԱԻԵՏԱՐԱՆ

Պալյան, Ցուցակ Կեսարիայի, էջ 28—29

Գրիչ՝ Վարդան
Վայր՝ Դրազարկ

292ա Փառք... Գրեցաւ սուրբ Աւետարանս, որ է հրամանք եւ աւրէնք փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ եւ Տեառն մերոյ, ի թուա-

կանութեանս Հայոց ի ՈՄԲ (1203), ի գերահռչակ անապատիս, որ կոչի Դրազարկ, ընդ հովանեաւ Սրբուհւոյ Աստուածածնիս, ձեռամբ անարժան եւ մեղաւոր քահանայիս եւ անպիտան կրաւնաւորիս Վարդանայ, *որ ստացա զսա յիշատակ ինձ, եւ ծնաւղաց իմոց, եւ քուեր որդւոց իմոց* Բասլի, *եւ շնորհեցի սուրբ ուխտին որ կոչի* Անդրէասանց, *ի սուրբ եւ ի մայր եկեղեցին Սիովն, յիշատակ ինձ եւ վերագոյն գրելոցն։ Եւ զի ձրի պարգեւեցի զսա այնմ սրբոյ եկեղեցւոյ, մի ոք յանդգնեսցի հանել զսա անտի, թէ առաջնորդ իցէ եւ թէ եղբայր, եւ թէ զինչ եւ իցէ մարդ, եւ որ յանդգնի եւ հանէ զսա ի յայնմ եկեղեցւոյ, որ է Սիովն մայր, հանցէ եւ զժառանգութիւն նորա Աստուած ի Վերին Սիովնէ, որ ժողովարանն է ամենայն հաւատացելոց սրբոց։*

Բայց թէ երկիւղ լինիցի յափշտակողաց զի զգուշացուցանիցեն, զի մի երթիցէ դերի, եւ ապա ընդ խաղաղանալն՝ փութով յեկեղեցին դարձուսցեն, եւ կամ վասն ուխտին կարեաց կամ առաջնորդին ի պէտս իրիք տարցի, եւ դարձեալ արագ ի տեղի իւր բերցեն։ Ապա աւտարեաց առ որս երկիւղ կայցէ կորստեան, մի՛ տացի։ Բայց եթէ աւրինակ ոք խընդրեսցէ, մի՛ արգելուք, զի յընտիր եւ յանհաս աւրինակէ է գրած։

Բայց աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք կամ գաղափար առնոյք զսա, յիշեսջիք զտառապեալ ստացողս, եւ գրողս Վարդան, *եւ զառաջասացեալ ծնաւղսն իմ, եւ զԲասիլն, եւ զսիրելի եղբայր իմ զԱրեփկ, եւ զձեզ ղյիշողսգ եւ զմեզ Տէր յիշեսցէ, եւ յեղբարց վանիցդ, որ ոք խնամ տարցի սմա, որ ոչ ելանէ յեկեղեցւոյդ՝ աւրհնեալ եղիցի յԱստուծոյ եւ ի մէնջ, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք։*

15

ԱԻԵՏԱՐԱՆ

Հ. Քյուրտյան, Հավաքածու 99

Գրիչ՝ Յոհաննէս

...Ի փոքու մատենիս եղէ ջանացող գծել մեղապարտ գրիչս Յոհաննէս, *հրամանաւ աստուածասէր կրաւնաւորաց քահանայից՝ երկուց եղբարց, որում առհասարակ* Կաւզմայ յորջորջի... *յորում փափաքեալ աստուածազարդ եւ ուղղափառ քահանա կրաւնաւորքն, ստացան զսա անգեղ գծիւ ի քարտիզի յեղեալ, վասն ախմարութեան գրողիս, նուաստ եւ մեղապարտ եւ անարժանիս* Յոհաննէս...

Գրեցաւ լուսազարդ Աւետարանս ի թուականին որ յաւիտենից ՅՉԺԱ (6711) ձեռամբ մեղապարտ* Յոհաննու։

---

* «ՅՉԺԱ արարչութեան «Հռոմեականն» թուականն է՝ հաւասար Քրիստոսի 1203-ին» (Օր. Հ. Քյուրտյանի)։

16

ԹՈՒՂԹ ՎԱՄՆ ՏՕՆԻ ԾՆՆԴԵԱՆ

Կյուլեոերյան, Ցուցակ Ղալաթիո, էջ 663—664

Թուղթ սրբազան արքեպիսկոպոսին Նիկիոյ, իմաստնոյն Յոհաննու, առ երանելի կաթողիկոսն Հայոց Զաքարիա, վասն տօնի Ծննդեան եւ Յայտնութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Ի թուականիս ՈՄԲ (1203) թարգմանեցաւ սա ի յունականէն ի մերս, ի ձեռն նուաստ սպասաւորաց բանի Գրիգարի *եւ* Բարսղի, *ի քաղաքէն կոչեցեալ* Սիս, *սատարութեամբ* Նիկիֆօռայ *եւ* Միխայէլի *քահանայից, որոց Տէր Յիսուս ողորմեսցի։*

17

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՍՈՒ ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Երուսաղեմ 334, Պողարյան, Ցուցակ Բ, էջ 211—212,
Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 698—700

Գրիչ՝ Գրիգոր դպիր
Վայր՝ Հռոմկլա

ա

535 *Յամի վեցհարիւրերորդի յիսներորդի երրորդի թուաբերութեանս Հայոց (1204), ի կաթողիկոսութեանն տեառն* Յովհաննիսի *և ի թագաւորութեանն քրիստոսապսակ և բարեյաղթ թագաւորին Հայոց* Լևոնի՝ *որդո* Ստեփանէի, *ի չար և ի դառն ժամանակի, յորում յամենայն տեղիս ամենայն ուրեք ազգք քրիստոնէից այրեցեալք եղեն որպէս փուշք յագարակի՝ յայլասեռիցս բազմադիմի նեղութեանց և ի զզուանաց, քան զի յոյժ զաւրացեալ եղեն կատաղի և անաւրէն ազգ ազախնազաւակ որդոցն Հագարու, և բռնակալեալ նուաճեցին զամենայն աշխարհս յինքեանս գրաւեալ, մնացեալ միայն ի միջի սոցա բարեպաշտ թագաւորն Հայոց* Լևոն *իբրև ճաճանչ լուսո ի մէջ արտմրամած խաւարի։ Որ ըստ բարեխնամ կամացն Աստուծոյ պսակեալ եղև յերկուց թագաւորացն Յունաց և Հռոմայեցւոց՝ եղեալ տէր նահանգին* Կիլիկեցւոց *և այլ բազում գաւառաց, և յարեւելս պէս տանն Վրաց թագուհին, որո* Թամար *անուն։ Սա բազում արութիւնս արարեալ և զբազում գաւառս քանդեալ աւարեաց և զայլազգիսն ծախեաց ի սուր սուսերի և զմնացեալսն ընդ հարկաւորութեամբ արարեալ հնազանդեցոյց ի ներքո ձեռին իւրո։ Եւ էին ի դրան նորա իշխանք երկու հայասեռք՝ եղբարք միմեանց. երիցագունին անուն՝* Զաքարէ Շահենշահ, *այր սուրբ և առաքինի և ամենեւին զարդարեալ երկեղիւն Աստուծոյ, մինչ գրեթէ գերագոյն լեալ քան զբազում ճգնաւորս, որ ի քարանձաւս։ Եւ կրսերոյն* Իւանէ *անուն։ Սոքա երկոքեան բարեքաստիկք լեալ ի թագուհոյն յայնմանէ և յոյժ սիրեցեալք յաչս նորա, մինչ զի նոսա կացուցեալ պետ ի վերա ամենայն զաւրաց և թագաւորութեան իւրո, որոց քաջամարտիկք և յաղթողք երևեալ ի վերա թշնամեաց խաչին՝ գովի անուն նոցա յամենայն տեղիս։ Իսկ եթէ Տեառն զաւրութեանց ոչ էր տուեալ մեզ զաւակք մխիթարութեան զբարեյաղթ թագաւորսս և զքրիստոսասէր իշխանսս զայսոսիկ, իբրև զՍոդոմ էաք եղեալ և Գոմորս նմանեաք ըստ մարգարէին ձայնի։ Իսկ անաւրէն ազգն Հագարու, որպէս նախասացաք, նեղեն զազգս քրիստոնէից անիրաւ հարկապահանջութեամբ մինչև անյոյս լինէաք ի փրկութենէ։*

Յայսմ ամպրոպամած և ի վրդովուտ ժամանակի՝ ի սոյն ամի, յորում կարգեցաք զթուականս, ի կամաց ողորմութեան բարերարին Աստուծոյ՝ շարժեալ եղեն զաւրք արիական ազգին Հռոմայեցիոց և եկեալ հասին ի Բիւզանդիոն, որ կոչի Կոստանդինուպաւլիս: Իսկ թագաւորն Կոսաանդինուպաւլսի ոչ կամեցեալ միաբանել ընդ նոսա սիրով ըստ աւրինի քրիստոնէից, այլ ներհակաբար զիներ ընդդէմ նոցա և մարտուցեալ պատերազմէր ընդ նոսա և չանայր խափանիչ լինել փրկութեանն ճանապարհին. ապա արիական զաւրացն ի թիկունս հասեալ աներեւոյթ զաւրութիւնն Աստուծոյ և պատերազմէր ընդ զաւրսն Յունաց, որպէս առ Իսրայելիս ընդ եգիպտացիսն: Վասն որո և Հռոմայեցիքն յաղթահարեալ զնոսա մաշեցին զանձինս նոցա ի սուր սուսերի: Այսոցիկ ապա այսպէս եղելոց՝ թագաւորն Յունաց պակուցեալ յերկեղէ Հռոմայեցիոցն, փախստական եղեւ ի գիշերի, և նոցա առեալ զանմատոյց ամուրս քաղաքին և լցան անպատմելի գանձիւ ոսկով և արծաթով և քարամբք պատուականաւք և մեծաքանիւք ոսկեթելւք, որ ոչ գոյր թիւ, զոր մինչեւ ցայսաւր ժամանակի ոչ ոք ետես այնպիսի բաղում գանձ առեալ ունէք յաւարի: Եւ եղեալ թագաւոր քաղաքին զկոմս ոմն՝ յազգէն իւրեանց, որոյ Պաղտոյն անուն, և բարձաւ թագաւորութիւն յազգէն Յունաց: Իսկ նորընծա թագաւորն հրովարտակ աւետաբեր առաքէր առ մեր ազգի թագաւոր Լեւոն, տեղեակ առնելով զնա եղելոցն:

Եւ մեր այսոցիկ տեղեկացեալ՝ յառաջին տրտմութեանցն սակաւիկ մի սթափեալ ուրախացաք և ըստ նախագուշակ մարգարէութեան սրբոյն Ներսէսի ակնկալեալ սպասեմք փրկութեան սուրբ և աստուածակոխ քաղաքին Երուսաղէմի, նաեւ ամենայն աշխարհիս: Այլ ղլինելոցն Տէր հոգասցէ:

Յայսմ ամի այր ոմն ի Մելիտենոյ Հայոց՝ Զաւրավար անուն, արհեստիւ ոսկեգործ, յոյժ ազնուական ի ճարտարաց և յ[ը]նտրելոց, այր իմաստուն և հանճարեղ բնութեամբ, բարեբարո և հեզ և ամենայն առաքինութեամբ զարդարեալ, գիտելով և դպրութիւն ընթերցողութեան, սորա հանդիպեալ յաստուածապահ դղեակս Հռոոմկլա՝ առնելով զգործ իւրո արուեստին, և տեսեալ զքաղցրաբան Մեկնութիւնս սրբո Աւետարանին Ղուկասու առաքելս և աւետարանչի, զոր արարեալ է սրբո եպիսկոպոսին Իգնատիոսն համանմանոյն աստուածաղեցին Րգնատիոսի. ի խնդրո տեառն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի՝ եղբաւր տեառն Ներսէսի կաթողիկոսի, և ճաշակեալ ի սմանէ վերծանութեամբ, վասն որո և քաղցր լեալ ի քիմս սորա բան սրբո վարդապետութեանս քան զխորիսխ մեղու՝ ըստ Դաւթա, և խնդրեալ ի մերմէ նուաստութենէս մակագրել զսա իւր և ըստ փափագման ըղձից սրտի իւրո ստացեալ զսա իբրեւ զգանձ պատուական, ի վայելումն անձին իւրո յաստիս և յիշատ[ակ] հոգոյ իւրո յապառնիսն: Իսկ ես տրուպս և կրսերս համանմանեաց իմոց՝ Գրիգորիս դպիր, յածին կալեալ ղբարիոք խնդիրս բարեխորհուրդ առնէս, լցի զբաղձանս սրտի սորա և յանգ ելեալ աւարտեցի զսա յամսեանս նոյեմբերի ի ԺԳ (13), յանառիկ և յանմատոյց դղեակս Հռոոմկլա՝ յաթոռս հայրապետական, ընդ հովանեաւ աստուածաբնակ սուրբ տաճարիս, որ

յանուն Սուրբ Լուսաւորչին մերոյ Գրիգորի, աւգնականութեամբ աստուածընգալ սուրբ նշանացս և առաքելական նշխարացս։ Արդ աղաչեմ...

Բ

322 Յիսուս Քրիստոս որդի և բան Հաւր, որ քոյին անբաւ մարդասիրութեամբդ խոնարհեցար ի բարձանց՝ այցելու լինել տիրական պատկերիդ, և գտեալ մաքրեցեր յաղտոյ ապականութեան, յիշեա ողորմութեամբ քո զստացող մատենիս զՋաւրավար պատուական ոսկեգործ, ընդ նմին ընգալ և զգրիչս անարժան, ըստ անառակին դարձի։

Գ

287 Ո՜հ դառն վիշտ եւ անըմբռնելի տրտմութիւնս, որ հեղձուցանէ զոգիս։

Դ

393 Ո՜հ վիշտս ի սուտ եղբարցս, յորս ուղղութիւն ոչ գոյ։

Ե

407 Ո՜հ միաշաբաթ կիւրակէի, որ կարի դառնագոյն հասէր ի վերա իմ, եւ սայրասուր սուսերու հատէր զհաստատութիւն սրտի իմոյ, ո՜հ դառն եւ մահաշունչ լուրս, որ եհաս ի լսելիս իմ։

ՈԾԴ 1205

18

ՄՇՈ ՏՕՆԱԿԱՆ-ՃԱՌԸՆՏԻՐ

Երևան 7629 (1200—1202 թ.)

Կազմող՝ [Ներսէս]*
Վայր՝ Մշո Առաքելոց վանք

ա

601ա Փառք ամենազաւր, ամէնիմաստ, ամէնառատ Հաւր բարերարի, որ
անեղական ծնելութեամբ զՈրդի ծնեալ յառաջ քան զամենայն ի կեր-
պարանս Հաւր, եւ Հոգւոյ համագո, աղբիւրաբար բղխմամբ, որ նոյն ինքն
ընդ Հաւր եւ ընդ Որդւոյ փառակից եւ զուգահաւասար, բացայայտական
երէքանձնական եւ մի իսկութեամբ հաւասարեալ, միահարթ եւ միա-
զաւր, միափառ եւ միաստուած Երրորդութիւն կատարեալ՝ անձամբ երիւք,
601բ մի բնութիւն, որ ըստ արփիական շնորհին յառաջ‖ացոյց գիտութեամբ
բարերարեալ զպարգեւս սքանչելապէս և հոգէպատումն գիտութեամբ
զմիտս բանականս եւ զձեւս իմաստականս պարգեւատրեալ առ ազգս
մարդկան՝ յառաջացոյց պատմութեամբ եւ նախախնամական խրատու
հասեալ առ նոյն արմատս ծննդեան։

Արդ, պատուիրանաւ անդեալ ի ձեռն հարց ցորդիս ըստ այնմ, զոր ասաց գիտողն, թէ Ցարիցեն եւ պատմեսցեն զայս որդւոց իւրեանց եւ անդստին յետ այսոցիկ սկսեալ եւ կատարեալ զաստուածագիծ տառիցն պատգամս, որում ի սմանէ առեալ բաժին շնորհաց յիւրաքանչիւր բարբառս արշաւել ի լեզուս բազմախաւսս եւ ձգել զսերմն չափաւոր յերկիր

---

* Հիշատակարանի գրիչը իր անունը չի հայտնում, բայց վերջին նախադասությունից երևում է, որ նա նաև կազմողն է. «Զկազմողս զեղկելի եւ զեղբայրիկն իմ զըՍտեփանոսն յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր», իսկ Ստեփանոսը, որը անշուշտ մասնակցություն է ունեցել ձեռագրի ձեռք-բերման և կազմելու աշխատանքներին, իր եղբայրն է։

Եթե նույնիսկ ընդունենք, որ «կազմող» բառը վերաբերում է Հիշատակարանը «կազմելուն», այսինքն հորինելուն, շարադրելուն, էությունը չի փոխվի։ Կազմողը նաև գրիչն է և մինչ այդ մասնակցել է Ճառընտրի «աղատագրմանը»։ «Յայնժամ Սարգիս վարդապետն Ե փիլիսոփայիւք... Յուսիկ եւ Ռստագէս, Աւետիս եւ Ստեփանոս եւ Ներսէս՝ յարուցեալ ուղեկից անուն զսուրբ առաքեալն Քրիստոսի և մեծաւ ցանգութեամբ հասին ուր գանձս աստուածային... եւ զաւրութեամբ Քրիստոսի առաք զըղձալիս մեր եւ դարձաք ըստ իմաստոն վաճառականի, որ եգիտ մի պատուական մարգարիտ։ Նոյն եւ մեք առեալ զըսա՝ դարձաք յերկնագումար յեղբայրանոցս մեր, որ յորջորջի Ղազարու վանք, եւ եդաք զըսա առ դրանս Սուրբ Առաքելոյս»։ Գրիչն ու կազմողը վերը հիշված հինգ միաբաններից մեկն է։ Նա իր անունը սկզբում չէր գրի, գրել է վերջում, իսկ նախավերջում՝ եղբոր՝ Ստեփանոսի անունն է։ Ուրեմն գրիչն ու կազմողը Ներսեսն է։

արդիւնարար մտաց, այսինքն ղտասնեկին պատգամսն Հրագոյն վտա-
կաւք մատռուակեալ ի սրբեցելոցն անաւթ, ոչ քարեղէն եւ ղտասնեկին
բանս առեալ յեղեղեալ յաղագս տասնեկին մտաւորութեանս, եւ յայսմ
սերմանէ տառք բազմացեալ մարգարէախաւս հիմամբք սկսեալ եւ հո-
գէտաւիղ նուագաւք սակս ղերկիր վայելչացեալ ծաղկապաճոյճ դունիւք՝
ղեղեալ եւ լցեալ զհովիտ լեռնականս, աստուածային վայելչութեամբն
լցեալ յիւրոցն հիւսեալ, բարձրացեալ եւ լայնացեալ սաղարթ, նորա-
փթիթ հրաթերթեան եւ բոցանշան յարաճաճեալ և միջնալցիկ, երկայնա-
հաս, լայնատարած բազկաւք առ բարձունս արձակեալ, լցեալ եւ խթա-
ցեալ, աճեցեալ ծայր, տակաւին եւ ի նմանէ արմատս անդստին ծաղ-
կաւք բոլորապճնող յարփից էից դիմանալի տեսութիւնս, շառաւեղեալ
եւ տալ ղանշաւշափելի պտղոյն տեսութիւնս, որ ոչ շաւշափի ձեռամբ,
այղ լեզուաւ, տակաւին և ոչ էրեւի աչաց, այղ մտաց։

Արդ ի սմանէ ստացեալ բազկաց բազմաց զաննիւթեղէնն եւ զանկեր-
պարանն իւրաքանչիւր ոք յիւրում բուրաստանի տարեալ անգեաց զպա-
տուաստաշէն ծաղիկս, սփռեալ այնր հաւասար լայնագոյն շուջանին՝
գաղափարեալ ի ծովական մթէրից նորա, արձակեալ վտակք գետախա-
ղաց՝ գետահոսեալ յանձնաւոր գաւառս, լցեալ և արկեալ վտակս յան-
դաստանս բաղումս, որով առոգանեն աստուածային ցողովն զանդս հո-
գեւորս և պարարեն զդալարացեալ պարտէզս աննիւթականս։

Արդ, սմին բազումք հետեւեցին հեծեալ յիւրաքանչիւր երիվարս և
հետեւեալ զկնի հետոցն այնոցիկ՝ զթակոյկ ստոմանեացն լցեալ յայնմ
ծաւալուտ աղբիւրէն ըստ իւրաքանչիւր կարի, եւ լցեալ բեռամբք զա-
նաւթս մտաւորականս, որ իմաստասիրեցին զբաժակն անապական, եւ
ոմանք թեւակոխեալ լեռնական հովտացն, որ առ բարձուն էր հասեալ,
եւ առեալ զծիրանատեսիլն եւ զկանաչագեղ գոյնս՝ ջան ի մտի եղեալ
սպիտակափայլ դեղնագունեան զծաղկաձեւեալ բուսուցեալ մեզ զբանս եւ
այլս յանդնդային պտուտիցն խորասոյզ եղեալ սողեալ եւ ստեալ ի
բազմութիւն ականց առ ի նմանէ ընչեղեալ զհրածին մարգարիտն, որ
յաղագս հրոյ և ջրոյ գոյանա, որ նման երեւեցան մարգարէք և առա-
քեալք և վարդապետս հոգէմատեանս, յիւրաքանչիւր ժամս և ի ժամա-
նակս և արս երեւելիս և իմաստասիրականս, որոյ հետամուտ եղեալ և
յայսմանէ եղելոց ոմանք տեղեկացեալք ի ծիրանատեսիլ ծաղիկն որպէս
երամք մեղուաց հաւաքեալ զառաջանիւթեան մանրագորն յառուամէջս
602ա սպիտակաթերթեան գումարտիցն և զԱուչոցական ճանապարհս լցեալ
քաղցրութեամբ մեղու երկնային աւդովն պարզ և յըստակ երեւեալ որ-
պէս զշիփոր բաժակի, որոյ առաջին զայս սկսեալ ըստ այսմ կանոնի։

Այր ոմն իմաստուն, որոյ անուն Սողովմովն, ոչինչ հարուստ ամաւք
նախագոյն եղեալ՝ աշխարհէ Արեւելից՝ դաշնաւոր անուանեալ Ծովքն
Գեղագունաց վանաց վանական Մաբենաեանից ուխտական, սրբազար-
դից արանց առաջնորդի, թէ ո՞րպէս տեղեկացեալ այսպիսի մեծ քննու-
թեանց եւ յորպիսի՞ հիմանց հաստատեալ զայսպիսի շինուած աստուա-
ծեղէն զհաստատեալ կանոն տամից ժողովոց եւ զվսեմական արտա-
դրութիւնս հոգէպատումն ճառից պատմութեանց եւ զժողովոց արդարոց

զզինուորական զովութիւնս, սակայն եւ ի նմանէ առեալ զթելադրելի աւրինակս ուխտաւորաց երջանկաց, յաւրինեցին ընդ միտ ածելով, ոչինչ նուազ ի նորացոցն դրելոց։

Վասն զի սա արմատ եղեալ ի հայրական աթոռոյն, որ նախ քան զդրախտն իմանի, տունդ երկնադոմակ, վասն զի ծովացեալ բանն Աստուծոյ և գերապանծեալ գիտութիւն նորա յորդահոս ելից զվայրս զայս, զոր վերագոյն երկնի նման։

Սա է ծովն տիեզերական, զոր ասաց նախագոյն մարգարէիցն Մովսէս, թէ Հոգի Աստուծոյ շրշէր ի վերայ ջրոյ, որում հովանացեալ Հոգի Աստուծոյ՝ գայր և երթայր ի վերայ ծովուս այսորիկ՝ ծնանելով ի սմա զկայտառունս վայելչատեսակս։

Սա է լեառն բարձու աստուածական ցաւղով պարարեալ, որով խրախանան ի սմանէ եւ ի ճարպոյ սորա հատք եւ հատապետք անդաստան հովուաց լերինն գեղեցկութեան ի բազմաց լսելիս եւ ի քիմս, եւ բարձրացեալ տեսութեամբ գետս աշխարհաքարոզս ղբանն հնչեցեալ ըստ այնմ, զոր Եսայեաս ձայնեաց, թէ՝ Ել ի վերայ լերինն բարձու։

Սա առակաւոր բանն Աստուծոյ, որ յԱւետարանս, թէ Հանէ ի գանձէ իւրմէ զնորն և զհինն, վասն զի սա շարագրեալ աւրինատուր մասամբք, հնախաւսեան վկայութեամբք զարմազան նորոգ պատմութեանս։

Սա էից անձանց Երրորդութեանն հրամանակատար և թարգման ի լեզուս լեզուս զպատգամս մեծին Աստուծոյ։

Սա զարդ եկեղեցւոյ աղբիւրաբար բխեալ երկահոսեան վտակաւք, զոր մարգարէն ասէ, թէ Ելցէ աղբիւր ի տանէ Տեառն եւ արբուսցէ զձորն վիճակաց, քան զի սովաւ կենդանեաց ցնծութիւն, տեսողաց բերկրումն եւ ընթերցողաց արբումն մատռուակութիւն, ոչ փոխատրաբար, այղ փոխարկաբար, ի բերանոյ ի լսելիս, տակաւին եւս մեռելոց աննուաղելի յիշատակ, միշնորդական սահման և կամուրջ առ Աստուած երթալոյ։

Արդ, զկա առցէ բանս, թէ զիա՞րդ եւ ու՞ստի զայս աստուածային գանձս ստացաւ։ Այր մի պատու[ա]որ՝ ռայիս Բայբեռդոյ, անուն յորջորջի Աստուածատուր, յոյժ աղքատասէր, մանաւանդ թէ և աստուածասէր, որ եւ սա իսկ ցանկացող եղեալ այսմ սուրբ մատենիս եւ պատուական մարգարտիս. ապա այնուհետև շաղկապեցաւ ի սէր այսմ սուրբ բուրաստանիս եւ ապա հոգ տանելով, թէ ո՞վ արդիւք կարող իցէ հասուցանել զիս ի փափագ բաղձանացս. զի Մովսէսն այն աստուածային պատգամաւքն արժանացաւ հպիլ առ Աստուած։ Եւ ապա խնդիր արարեալ յոգնահմաստ գրչի և գտեալ քահա[նա]յ մի ի գաւառէն Կար-
602բ նայ, որումն Վարդան կոչեցեալ, հմուտ եւ||վարժ ամենայն արհեստի գրչութեան, եւ նա յանձին կալեալ եւ ուգնականութեամբն Աստուծոյ սկիզբն արարեալ եւ ապա զկնի երից ամաց եհաս յաւարտ բանիս։

Եւ ի կատարման գրոցս՝ սուլտանն Սեւաստիոյ ժողով արարեալ անհուն բազմութեամբ՝ նմանեալ անրարշտին Յուլիանեայ, փքացեալ լեռնացեալ եհաս ի Թէոդուպատիս, և անդի կամէցեալ անցանել յաշխարհս Հայոց և Վրաց։ Եւ ամենևին մոռացաւ ղԱստուած և յուսացաւ ի նանրութիւն իւր, կամէր յաւարի առնուլ զաշխարհս ամենայն։

Իսկ աւգնականութեամբն Աստուծոյ եկին հասին զաւրքն Վրաց և մեծն Զաքարիէ հանդերձ Իւանեի հարազատաւն իւր եւ այլ աստուածասէր իշխանաւք եւ նախարարաւք եւ յոգնախումբ խառնիճաղանջ բազմութեամբ հասին ի վերայ անաւրէն զաւրացն Տաճկաց եւ յանխնա կոտորեցին զնոսա, ղոմանս ձերբակալ արարին, եւ ոմանք ի փախուստ դարձան, բայց սուլտանն անվրէպ մնաց, սակայն զաւարոյն զթիւ ո՞ կարէ գիտել զոսկւոյն և արծաթոյ եւ զմետաքսի, զերամակս ուղտուց, ձիոց եւ ջորւոց:

Եւ յայսմ ամի ի սադրելոյ չարին ըմբռնեցաւ այրս Աստուածատուր ի ձեռն ամիրային իւրոյ Ալաղին կոչեցեալ: Որ եւ ի ձեռն այնմ գազանի Աստուածատուրն այն ընկալաւ զվախճան, և յափշտակեցին զստացուածս նորա, եւ ոչ մնաց եւ ոչ մի ինչ, բայց այս գիրքս: Ապա դատաւոր քաղաքին ձեռն յառաջ տարեալ զուր պատճառանաւք բանս ի վերայ եդեալ, թէ հինգ հարիւր պատառ մնաց ինձ առ Աստուածատուրն: Եւ իբրեւ այս այսպէս եղեւ, ապա այնուհետև չու արարեալ դատաւորն, եկն բնակեցաւ ի հռչակաւոր քաղաքն Խլաթ. եւ Բ ամ կայր ի պահեստի և ոչ ոք գիտաց, և ապա կամեցաւ վաճառել, եւ ոչ ոք կարէր գամագիտ լինել, զի բազմագին կամէր վաճառել:

Ապա հարազատ եղբարք անձինք Գ քահանայք գեղջն Դանջան կոչեցեալ, որ է առ դուրս քաղաքին, եւ են անուանք նոցա միումն Ստեփանոս, իսկ միւսոյն Վարդապետ և երրորդին Յովաննէս, որ եւ նոքա ազգ արարին մեզ, զի էին միաբանք Սուրբ Առաքելոցս, նամակ արձակելով, թէ գանձ պատուական կայ ի քաղաքիս: Եւ մեր լուեալ զայս՝ եռափափագ սիրով շաղկապեցաք ի սէր սրմին: Ապա հոգելից եպիսկոպոսապետս մեր՝ տէր Եսայի, զմովսիսականն ստացեալ սէր, ելեալ Գ քահանայիւք՝ փոյթ ընդ փոյթ գնաց ի Խլաթ՝ յաղագս խնդրոյս այսորիկ, եւ ոչ կարաց հասանել ի փափ[աք] բաղձանացն, քանզի ժամանակն ձմեռային [էր]: Եւ այլ եւս սպաս[աւ]որք սուրբ ուխտին, որ կոչի Արծկէոյ վանք, և նոքա եւս քան զեւս վառեցան բորբոքեցան ի սէր սուրբ կտակիս: Իսկ Բոծորն այն, զոր յառաջագոյն կանխեցաք ասացաք, իբրեւ եւտես զչերմեռանդ սէր մեր, եւս առաւել զարծկեցի սուրբ քահանայիցն, ապա զգինն եւս առաւել աճեցոյց: Եւ իբրև այս այսպես եղեւ, յայնժամ սուրբ եպիսկոպոսս մեր թոյլ տուեալ վայր մի և եկն ի վանքս, ապա նոյնպես և արծկեցի քահանայքն դարձեալ գնացին, և մի ամ այլ մնաց գիրքս առ Բոծորն այն: Ապա ի գալ միւս ամին խնդիր արարեալ, թէ գիրքս Ղազարու վանիցն է, զի առաջի գնող այն մեծ եպիսկոպոսն է: Ապա յառաջ ասացեալքն՝ Գ (3) հարազատքն, որ ի Դանջան, դարձեալ գրով ազգ արարին մեզ:

Սակայն թէպէտ և սէր սմին ստիպէր զմեզ, բայց գնոյն անկարող
603a էաք: Ապա քահանայ ոմն՝ անուն նորա Յովաննէս, ի Միջնաղբերաց էր և միաբանեցաւ Սուրբ Առաքելոցս, եւ իբրեւ լուաւ զերկչոտ բարս մեր, ապա յառաջ կացեալ քաջալերեաց զմեզ և հաստատեաց ասելով, թէ ես աւգնական եմ որչափ իմ կարն է, ապա ըստ բանից նորա ոյժ առաք ի զաւրութենէն Աստուծոյ:

Յայնժամ Սարգիս վարդապետն ե (5) փիլիսոփայիւք, որոց անուանքն գրեալ են ի դպրութիւն կենաց, Յուսիկ, եւ Ռստագէս, Աւետիս, եւ Ստեփանոս, եւ Ներսէս՝ յարուցեալ ուղեկից առնուլ զսուրբ առաքեալսն Քրիստոսի և մեծաւ ցանկութեամբ հասին, ուր գանձս աստուածային, եւ յոյժ աշխատեցան, զի ժամանակն ձմեռային էր և աւդն՝ դառնաշունչ եւ ձիւն բաղում։ Եւ իբրեւ մերձեցան ի մեծահռչակն Խլաթ, եւ մտին կացին ի մէջ մեծահարկի տանուտէրացն և աստուածահարկի քահանայիցն Խլաթա և Դանիէլասյ, եւ նոքա մեծաւ ուրախութեամբ յանձին կալան եւ աւգնական եղեն բանիւք եւ արդեամբք, որոց անուանքն գրեալ են ի դպրութիւն կենաց։ Եւ զաւրութեամբն Քրիստոսի առաք զ[ը]ղձալիս մեր եւ դարձաք ըստ իմաստուն վաճառականին, որ եդիտ մի պատուական մարգարիտ։

Նոյն և մեք առեալ զրսա՝ դարձաք յերկնագումար յեղրայրանոցս մեր, որ յորջորջի Ղազարու վանս, և եդաք զրսա առ դրանս Սուրբ Առաքելոցս։ Եւ ոչ եւս կարէաք դնել, զի ե հազար դրամ խնդրէր Բոծորն այն, որ է տաճիկ, և դարձեալ մեծաւ [տառապանաւք] հազիւ կարացաք գնել ի Դ հազար դրամ, եւ փառք, փառ[ք] Քաւսւորին։

Արդ, նախ առաջին զամենագովելի եպիսկոպոսս մեր տէր Եսայի, եւ որ իւրն գեղեցիկ բարի արգասիւք երեւել համակք գովելիք, որոց անուանք Յակովր եւ Ստեփանոս եպիսկոպոսք՝ շնորհիւն Աստուծոյ և արդարապէս ուղիղք։ Յիշեսջիք զտէր Եսայի ի սուրբ աղաւթս եւ ընդ նմին զիւրսն։ Եւ որ յիւր հալալ արդեա[ն]ցն ընծատուր եղեւ մեծանունն տէր Բարսիղ, շնորհելով ընծա ի սուրբ պատուիրանս ժ(10) դահեկան, յիշեսցի ի Տէր։

Եւ զի թէպէտ և այս անուն կամացն ջատագով եղեն մեզ, սակայն հայր մեր Աբրահամ առաւել քան զառաւելս հնարէր փոյթ. և դաստիարակ նորին տէր Բարսղի, հեզն և անարատն և պարկեշտն Խաչատուր փիլիսոփայն, որ ըստ կարի և նա եւ Ծ (50) դրամ, յիշեսցի։ Եւ Յովաննէս Միջնասւղբեցի, որ աղբիւրացոյց առատապէս զընծայ ի սուրբ պատուիրանս Աստուծոյ, յիշեսցի։ Եւ որ սորայ քաջալերիչք և յորդորիչք են աստուածունակ անձինք՝ Սրապիոն եւ Խաչատուր, յիշեսցին, որ ոչ զրսա միայն յորդորեցին, այլ և զբազումս շնորհատու լինել ի գինս գրոյս։ Եւ որ ի մեր սուրբ ուխտէս յաւժարամիտք եղեն ի գիրս տալ պարգեւս, և նոքա յիշեսցին յողորմութիւնն Աստուծոյ և ի մաքուր աղաւթս քրիստոսասիրացդ, են անուանք՝ Ստեփանոս, որ յորջորջի Ճոնի, եւ միւս Աւետիս Ցրաւեցի. սոքա եւս ի սուրբ պատուիրանս Աստուծոյ դրամ Ն հարիւր (400), յիշեսցին։ Եւ որ այլ ըստ կարի, Պատրոս, դրամ Ճ (100), յիշեսցի։ Ներսէս՝ դրամ Ճ (100), յիշել։ Եւ Վարդան եւ իւր եղբայրն Ստեփանոս եւս և նոքա ընծա ի սուրբ պատուիրանն ե (5) դահեկան յիշեսցին եւ նոքա։ Հայրապետն և իւր եղբայրն Դալարն շատ աշխատեցան ի քաղաքաւանն Մուշ, եւ էր զոր անձամբ լիապէս շնորհեցին ընծա և գինն, յիշ[եսցին]։ Տիրատուր էրեց ընծայատրեց ի սուրբ պատուիրանս Աստուծոյ դրամ Ճ (100), յիշեսցի։ Եւ որ փակակալն էր Կիւրակոս՝ ի վեր քան զիւր կարն եցոյց զպնդութիւն։ Արդ են եւ այլք բազումք, որ մեծ յուսով աւգնական եղեն եւ զի յոլով են եւ անկար է դրոշմել զանունս նոցա։ Միայն դիտողին Աստուծոյ թողցուք, որ յառաջ քան զմեր աւգնականելն գրեաց զանունս նոցա ի գիրն կենաց։

Գիւղն անուանի Մոկկուեմ իւր քահանայիւքն ջերմն սիրով փափագողք եղեն, և ետուն լի սիրով ընծայ ի գինս։ Կին ոմն ետ դրամ ճ (100) ի նոյն գեղջէ. յիշեսցի։ Եւ այղ որ յաւանիս Մշո աստուածասէր քահանայքն և տանուտէրքն աւգնական եղեն, յիշեսցին։ Եւ որ ի մեծ քաղաքին Խլաթ պարոնայքն աւգնեցին առաւել Խոցադեղն եւ Աստուածատուր եւ Վարդիկ, Քրիստոս Աստուած յիշէ զնոսա յարքայութեան իւրում։ Եւ որ ի Դանջնայ Գ հարազատ եղբարքն եւ իւրեանց հաւրեղբայրն Խաչիկ կրաւնաւոր եւ աղաւթասէր. սայ շատ բաղձաց մինչեւ եհաս սուրբ պատուիրանս. յիշեսցին և սոքա ամենեքեան։

Յովհաննէս փիլիսոփա, որ անհաս խոնարհութեամբ սպասաւորեաց մեզ, եւ սա յիշեսցի եւ գրեսցի ի գիր կենաց։ Աթանաս, որ աշխատեցաւ ի գնալ ի Խլաթ, յիշեսցի ի Քրիստոս։ Պատուական տանուտէրն Ծամիկ անուն դրամ լ (30) ընծա ի գինն՝ յիշ[եսցի]։ Կին ոմն, Ուզիկ անուն, դրամ լ (30) ի սուրբ պատուիրանս ընծա՝ յիշեսցի։ Խապազ ոմն Արտավաս անուն, դրամ լ (30) ետ ընծա յաստուածուչին պատուիրանս, յիշեսցի և նա։

Շնորհիւն Աստուծոյ Հաւր եւ Աստուծոյ Որդւոյ եւ Աստուծոյ Սուրբ Հոգւոյն՝ ի թուաբերութեան արարչութեանն, որ լինի յիսկզբան լինելութեանն մինչեւ ցայժմ ամք վեցհազարերորդ վեցհարիւրերորդ երեսներորդ, և ի ծննդենէ բանին Աստուծոյ լինի ամք հազար երկերիւր և չորս, եւ ըստ Հայկազեան տոմարի, որ լինի վեցհարիւրերորդ չիաներորդ և չորրորդ (1205), սկսա կազմել զբազմերանեան շտեմարանս աստուածային գանձուց՝ ի նահանգիս, որ կոչի Ղազարու վանս, ընդ հովանեաւ Սուրբ Առաքելոցս, ի մէջ աստուածատես աստուածախաւս սրբեցելոց և մաքրազարդից արանց։

Որք վայելէք և զմայլիք ի սմանէ, զորս շարադասեցաք ընդ գրով, յիշեսջիք ի Քրիստոս, եւ զորս ոչ կարացաք գրով յիշատակել առ հ[ա]սարակ զմիեղէն եղբայրութիւնս, որք այժմ բնակեալ են առաջի դրան Սուրբ Առաքելոցս, առ հասարակ ողորմեսցի մարդասէրն Աստուած, որ ողորմածն է յամենայնի, եւ գրեսցի ի գիրս կենացն յաւիտենից։ Արդ ի գնացելումն ամին շինեցաւ ժամատունն. իսկ յայսմ ամի, որ գիրքս կազմեցաւ, կռւնեցաւ գումբեթն Աստուածածնի, եւ տէր Աստուած ողորմեսցի աշխատողացն, որք անդ և աստ աշխատեցան։

Վասիլ հիւրատեսն յիշեսցի ի Քրիստոս։

Արդ Յովաննէս Միջնաղբերցի ետ ի գին գրոցս Ռ (1000) և հարիւր դրամ, իսկ ի կատարման յայտնութեան ութաւրէիցն ի տնաւրինեցաւ աւուր գրեցաք երկրորդ պատարագ Յովաննիսի՝ հրամանաւ տէր Եսայեա եւ փիլիսոփայիցս եւ համաւրէն ուխտիս եւ գերապայծառ առաջնորդիս մերո Աբրահամա եւ սուրբ բեմբականաց՝ Բ պատարագ անխաբան ամ յամէ կատարել, իսկ որ անփոյթ առնէ, տացէ համարս յաւուրն դատաստանի։ Յուսեցի Ասեսեացն, մին մատուցանի պատարագ յաւուրն տաւնի սուրբ առաքելոցն Յոհանու և Յակոբա։

Չկազմողս զեղկելիս և զեղբայրիկն իմ զրՍաեփանեոսն յիշեսջիք ի սուրբ յաղաւթսդ ձեր։

Բ

12ա ԶՅովաննէս Միջնաղբերացի, որ լի հաւատով եւ հոգւով ձեռնտու եղեւ յաղագս սուրբ գրոյս եւ ժտելով ըստ կարի իւրում, արդ յիշեսջիք զՅովաննէս ի մարթափայլ յաղաւթս ձեր։

Գ

17բ ԶՅովաննէս Միջնաղբերցի, որ մեծաւ յուսով մասնակից եղեւ սուրբ և բարեճաշակ բուրաստանիս եւ փոխանակ երկրաւորիս՝ ստացաւ զանճառելին։ Արդ զՅովաննէս քահանայ յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր և զիս՝ ընդ նմին։

19

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՅ

Երևան 10509 (1618 թ.)

Հեղինակ՝ Ներսես՝ Եփեորդի
Ներսիսի Լամբրոնացւոյ
Վայր՝ Սկեւռա

Յիշատակարան մատենիս դրութեան

421բ Յամի վեց հարիւր[եր]որդի յիսներորդի չորրորդի թուականութեանս Հայոց (1205), ես նուաստ եւ անարժան ծառայ Աստուծոյ Ներսէս փափաքեալ աստուածայնոյ տառիս նորագոյն մեզ պարգեւեցելոյ ի Հոգւոյն Սրբոյ, ի յետին և յանբարի ժամանակիս, յորում ըստ նախագուշակ բանին Տէառն՝ կարասւեցաւ Նեռինն, այսինքն յանաւրինացն բազմանալոյ՝ սիրոյն ցամաքութիւն երեւեալ, և եւս զծագրել զսա առ ի մխիթարութիւն վշտադնեալ և թշուառական ոգւոյ իմոյ ոչ ի ղբաւսանս կատարման գործոյ սորայս խրատու, այլ առ ի գիտել ճշմարտութեամբ թէ հեռի եմք ի պատուիրանացն Աստուծոյ, աւտար իմն շաւիղ ունելով, և անծանաւթ թէ յումմէ առաջնորդեալք յայսոսիկ ածեալք եղեաք, բայց թէ ի ստութեանց հարչէն։ Եւ այսուիկ ծանուցեալ լինիմք, զի լուսոյ մերձ եղելոյ ոչ ուրուք ծածկին գործք, թէ չարք եւ թէ բարիք, վասն որոյ զճրագս զայս հանդէպ եղեալ գործոց մերոց՝ ծանիցուք զմեղ, մի խաւարեալք ի խաւարի բնակեսցուք։

Յաւ է ինձ յաղագս դիտաւորութեանս, այլ առաւել եւս ի հեշտութեանցն պակասել, մանաւանդ թէ հարկիցէ զլեզու սանձահարել, քանզի նախապատիւն է այս ի մեղս եւ առ մեզ արհամարհ, դիւրագթելի ունելով զինքն եւ ծանր զպատուհասն, զի թէ որ ոչ յինքեան միայն և կամ յաւտարացն աւգուտ խաւսեցեալ դատարկ բանն է պարտաւոր առնէ հրոյ,
422ա ապա որ առ ի զբազումսն բամբասել ոչ ունի պարապել‖և այն զարդարս եւս, զի՞նչ ունիցի կրել, զի զբազումս տեսի և տեսանեմ հակառակս ախտացեալ ինքեանց փրկութեանն, որպէս շուն առ քաղցի ասի զմարմինս բազկաց իւրոց ուտել, զի վնասակարացն ինքեանց ծարաւի

*ևն միշտ, դի դի՞նչ ունիցի ոք կոչել զայնպիսին, որ զինքեան առողջա-
րարն բժիշկ ռամբասէ, զախտացելոյն խստութեամբ հատումն առժա-
մայն զգացեալ, և առաջիկայ առողջութեանն յուսով ոչ մխիթարի։ Բայց
թէ եւս խուղեսցես, խորագոյն եւս չար գտցես։ Բժիշկ որ առանց վիրա-
վորելոյ բժշկէ, մանավանդ քան թէ պահանջէ, ինքն տաց վարձ բժշկե-
լոցն, ոչ ւատար ինչ վարձ, այլ զիւրն անձն, ուսեալ յասողէն. Հովիւ քաջ
զանձն իւր դնէ ի վերայ հաւոից։ Ինքնեանք հաւատացելոցն ոչ երկբա-
յութեան յուսով առաջի եդեալ զապաքինումն վիրացն, այլ վաղվաղակի
տայ քան թէ առնու։*

*Բայց և կամի վարձս զգիտ կորուսելոցն, իսկ զայսքանեաց բա-
րեաց ունաւղս և ղաննախանձ բաշխաւղս, որ միշտ ձայնէ անզգամաց և
պակասամտաց, Եկայք կերայք ի հացէ իմմէ, և արբէք ի գինւոյս ձրի,
թէ արծաթ ոչ ունիցիք զոր խառնեցի ձեզ, թողէք ղանըզգամութիւն՝ ղի
կեցջիք, խնդրեցէք զիմաստութիւն՝ զի ապրեսջիք։ Ո՞ զայնպիսին ար-
համարհէ, ո՞ զնովաւ զանց արասցէ։ Բայց եթե այն, որ ոչ կարաւտի
կենաց, որոց կուրացեալ իցէ աչքն, եւ ոչ կամիցին իմանալ սրտիւ, և
ականջաւք լսել, եւ աչաւք տեսանել, և դառնալ և բարեացն յաւիտենից
պատահել։ Այնպիսիք են երկիր կորդացեալ, անդաստան անկոխ, կրաւղք
422բ իժից և քարբից, անջուր անա‖պատ, և որ ինչ նոյնպիսիք կոչել պատ-
շաճ է։*

*Որք ծանաւթանալ ոչ կամեցան լուսոյ, խաւարին ունելով ընթացս,
զի մի յայտնեսցին, որք զսիրոյն Աստուծոյ լուծ յուսոց ի բաց սասանե-
ցուցին, սարտուցեալք իբր ի չարէ, և զի այս այսպէս է։ Որք քրիստո-
նեանքն էին՝ ի հալածանս յայնպիսեացն մատնէին, ընդ միոյ տրտմու-
թեամբ լինելն ոչինչ խափան առնէր այսմիկ իբր պաշտաւնակցաց,
այլ ընթացից կենացն և ճանապարհին անմիաբանութիւն, որպէս թէ
ումեմն զնեղն և զանկոխն ընտրել բազմաց, և այլ զընդարձակագոյնն և
զմշտակոխն բազումս զարթուցանէր վրեժխնդիր, որ ընդարձակագունին
էր գլխաւոր և հանդիսադիր, միւսոյ կողմանն ընտրողաց։ Այնպիսեացն
արդարև այս գործ՝ չար երկրի չար և պտուղ, զորումն ընդունակաց՝ ցա-
նողին զնոյն, կամաց բոյս, զի զիա՞րդ մարթէր ի փշոց խաղող, կամ ի
տատասկէ թուզ ընծիւղել։ Իմ են վերքս, ոչ այլոց և խարանքս; Որպէս
զի մի շզադէտ և զաւտարս դատաւղ դստէցայց, քան զի ի Քրիստոս Յի-
սուս ոչ ծառայ և ազատ, թլփաթութիւն և անթլփաթութիւն, և որքան մի
ըստ միոջէ, զի ամենեքեան մի եմք ի Քրիստոս՝ ըստ շնորհի որդեգրու-
թեանն, միոյ արգանդի երկունք, վասն այնորիկ և զիմոցն ինձ եդեալ
և զիմն իմոցն, դարձ յայսցանէ կամէի, և կամեցեալ եղէց։ Զի զորօրինակ
թէ ոք ինքեանք վէրս տալով զաչս իւր փորիցէ այսպիսի իմն ախտացաք։
Մի արդեօք եղբարք ազդիցէ՞ ինչ հատեալ անդամոյն, յորմէ հետէ խլե-
ցաւ, ոչ ապաքէն մնալո՞ցն է վէր, զի որ ի տեսանելեաց զրկի, այլոց
423ա կարօտանայ առաջնորդի‖և կամ հարկաւոր է բնակել յանկիւնս տանց՝
զրկեալ ի բնաւից վայելչութեանց, և կամ թե ի յանդգնել ուրեք, քար
ընդ ոտն եդեալ վիրաւորեալ։ Նա և եւս չար, եթէ ըստ առակին Տեառն,
ի համանմանւոյն առաջնորդեալ լինի, զնոյն ունի կրել, զոր առաջի եդ։*

վասն այնորիկ գնալի է, մինչ գեռ լուսով ոք իցէ, զի մի խաւար փոխանակեսցէ։

Այսպէս և զայսքանեաց լուսաւորագոյն ջահից լուցանաւզս որպէս որ տեսանիդ, յանգամս Քրիստոսի և եկեղեցւոջ նորա մեք մեզէն խաւարեցուցաք, ոչ որպէս թէ զնա, ի բաց տար զայգոսիկ, այլ զմերս աչք առ ի նա հայելոյ, քան զի լոյս եկն յաշխարհ և սիրեաց մարդիկ զխաւար առաւել, և տպա յայտնի է թէ զինչ կրէ ի լուսոյ փախուցեալն։ Քանզի թէ յորոց միջի գրաւիմքս անգիտանամք, ոչ ինչ այլ, բայց զստամոքսացաւացն ախտանամք, որոց թէև զառաւել փափկագոյն կերակուրն ընծիրեաս, այնպէս է որպէս զանարգն, և կամ կոյր ի ծնէ, թէև յոյժ իմաստասիրեսցի ի տեսողաց, ոչ ինչ գիտէ զվայելչութեանց աշխարհի, քանզի զոր ոչն ետես, զիարդ ոք գիտասցէ։ Ոչ ինչ ընդհատ յայսպիսիեացս ախտացաք, և կամ եւս վեհագոյն, զի որպէս որ ոչն է ծնեալ՝ ոչ ինչ գիտէ ցծնելոցն, կամ որպէս մեռեալ ցանգիտութիւն եկեալ ամենայնի, այսպիսի իմն աւտարացաք, թովչի ճարտարի հանդէպ խցաք զականջս, ոչ կամեցեալ առնուլ դեղ ի դեղատուէ իմաստնոյ։ Վա՛յ ինձ, զի անձամբ զանձն իմ ձաղեմ։

Իսկ արդ զինչ ասասցեն և կամ արասցեն քեզ հակառակորդքն, բայց
423բ թէ անցեալ տեսցեն ի վայր հոսեալ և խարխալեալ զերբեմն||անմատչելին ինքեանց աշտարակ։ Շչեսցեն և շարժեսցեն զգլուխս առաջնոյն մեր հասու եղեալքն դեղոյ, ծաղր և այպն կատականաց եղեաք թշնամեացն, ի պատճառս մեծաբանութեան և պարծանաց նոցա և յամօթ և ի նախատինս բարեկամացն, քանզի զբարի ծնունդս խորհրդոց մերոց առեալ զքարի հարին, աղուեսք նենգաժետք, աւար հարին զգեղեցկացեալ այգի Տեառն, կողոպտեցին զզարդ մեր, զանձանց մեռելութիւն կենդանիս արարին զմեզ աշխարհի՝ և մեռեալս ի Քրիստոս։

Առ ո՞ ձգեցիք զմեղադրութիւնս, կամ զո՞րս ասացիք ի վշտացս։

Ինձ այսպէս թուի, թէ առ որ ի սկզբանն դիս պատրեաց, և առ պատրեալսն ի նմանէ, և զհոգւոյս լացից զմահ, առ մին՝ թէ զիա՞րդ նախանձեցաւ կրկինս, ի վերայ առաջնոյն, ոչ ինչ գտեալ առ ի մէնջ զատ, նա զի և կարեաք իսկ ոչ։ Եւ առ միւսն՝ թէ զիարդ զբարեկամուն խրատու զանց արարեալ զԱստուածոյ և թշնամոյն հաւատաց։ Արդ, յորմէ և արդեամբք առ զիմեր, երանի թէ ոչ եւս էր հաւանեալ և կամ հաւանէր նմա։ Բայց ահա և ցարդ եւս, որպէս յայնժամ զԱստուածոյն, այսպէս և այժմ զառ ի յԱստուածոյ պատգամաւորացն արհամարհեալ, նմին հաւատամք թշնամւոյ, որոյ խրատովն վարեալ երբեմն, ի բազմաց զրկեցաք բարեաց, և ոչ իմանամք, այլ ըստ ամբաստանութեանն էսայեայ, որ զԻսրայելէ վարելով քան զանբանս անբանագոյն և քան զմեռեալ մեռելագոյն գտաք։ Քանզի Ծնեաւ, ասէ, եզն զտացիչ իւր, և էշ զդարմանիչ, և մեք՝ ոչ երբեք զբարերարն մեր, վասն այնորիկ յոտից մինչև ցգլուխ չիք առողջութիւն, այլ ամենևին վէրք խխայթելեալք, զոր ոչ
424 է այլոյ ուրուք բժշ||կել, բայց եթէ այնմ, որ զանձն ունայնացոյց զպատկեր ծառայի առնելով, որ ի կերպարանին Աստուածոյ Հաւր էր, և թափեաց զինքն մինչ ի ծառայի կերպանաս, որ վասն մեր հնազանդ եղև Հաւր,

իշխանաբար առանց բռնադատութեանն մահու չափ և մահու խաչի, որով երկինք հաստատեցան, որ ասացն և եղեն, հրամայեաց և հաստատեցան, որ կրէ զամենայն զօրութեամբ իւրով, որ սահմանադրեաց զամենայն եղեալ չափ և սահման ըստ ծորայ, և կառավարէ մինչ ի կատարած։ Նմա է զայս քան ի բաց բառնալ առ ի մէնջ զբեռն, որ խրախոյսն Նտ հաւատացելոց ասելով. Եկայք առ իս ամենայն աշխատեալք և ծանրաբեռինք և ես հանգուցից զձեզ։

Բայց և մեք մի յապաղեսցուք մաղթել նմա բառնալ յաչաց մերոց դպատրուակն, յառել անստուերաբար առ ճշմարտութիւն և մի յաւիտեան ի խաւարի դեգերել, այլ երկրորդել առ մեզ փրկութեանն առիթ, կրկին մահացելոց, և կամ թէ ասել մոլորելոցս ի վերայ առաջնոյն, քան զի կամելն նորա՝ գործ է կատարեալ, իմանալ մեղ և քաղել պտուղս քաղցրահամս յառաջիկայ մեզ բարեացս, և քաղցր լինել ի կոկորդի մերում քան զմեղր, զանց զառաջինն առնել չար ախտի տգիտութեան՝ զանհաւատութեանն թուակցաւ։ Քանզի ինձ ոչ անիրաւ դատել թուի, որ զուգաթուեաց զսոսա, որպէս ծնաւղ անհաւասարութեան ասելով, թէ մտանիցէ անդ տգէտ կամ անհաւատ։ Յայտնի է մտատրաց, զի որ ոչ տգիտացաւ՝ ճշմարիտ գիտութեանն հաւատարիմ մնաց։ Վասն որոյ և մեք մի զօտարացուցչացն յԱստուծոյ բուռն հարեալ ղճանապարհացն, և զընդանեցուցչօքն քամահարեսցուք։ Ու եթէ աւտարոտիք իմն այսոքիկ թուեսցին, և անբարիք և դառինք, այս վասն զի երկրորդովքդ ձեռովք հաստատեալ եք իբր բնութեամբ, զի այսպէս ի բազում ամաց կալեալն բնաւորեալ է լինել։

Նա զի և զհրեշտակական սպաս ահարկութեանն հանդէս, զիարդ ըստ որում էն գիտասցի մարմին, անչափ անջրպետութեամբ ունելով միջոց։ Բայց գործով զինքեանցն աւգտոց բուռն հարողաց ոչ ինչ եղիցի ծածուկ, որպէս որ փափկանայրն յայնոսիկ, ըստ որում մեք մարդիկ գոլով ստորնաքարշք ի մարմնոյս իրք, այսպէս և նա յայնս, զոր սովոր են մանկանց դեռածնաց առնել ծնօղք, այնպէս առնէր, թէպէտ ոչ զտիրապէս հասու եղեալսն ինքեան, որպէս ոչ կամեցեալ տալ զսրբութիւն շանց, կամ անկատարից զկատարելոցն կերակուր, այլ որպէս ի Քրիստոս տղայացելոց կաթն մեզ ջամբեաց, և զայն և զայնոսիկ առատ բանիւք, անպատրուակ յաւրինմամբ, անստուեր, առանց ծածկութիւ, բնաւից դիւրահաս, ի հետս արկեալ իւրն վարդապետի որ զարեգակն իւր ծագէ ի վերայ չարաց և բարեաց, և ածէ անձրև արդարոց և մեղաւորաց, առ ի բազմաց նախեղելոցն արանց սրբոցն անփոյթ եղելոցն<արանց սրբոցն անփուլթ եղելոցն> չան կալեալ լրման և մանաւանդ առ ի մէնջ բնաւ ծածկելոցն և ի մերս զարմէ, զայսոսիկ անջինջ յիշատակ արձանացուցեալ և առիթ փրկութեան ի ձեռնացեալս ժամանակի։

Ու երանելի հայրապետս Ներսէս, և զորաւրինակ սովոր են հարք առնել ի ժամանակս իւրեանց ամբարել կերակուրս, և կամ գին կերակրոյ
425ա զկնի մնացելոցն, որպէս զի մի միայն ի կեանս, այլ և||յետ մահու գըտցին դարմանիչք։ Այսպիսի իմն արար և սա, զի մի կենաւք միայն, այլ և ետ աստեացն աւգտեսցուցէ, այլ և ոչ ամենայնի համեմատք, քան զի

այնոքիկ մարմնոյ, իսկ այս հոգւոյ, և յայտնի է որչափ առաւել է հոգի, և այնժամանակեայ, իսկ այս ոչ, այն ոմանց, և այս բնաւից՝ ցայսմանէ որ կերակրի, ոչ քաղցիցէ, բայց այնու բաղում անգամ լնանիմք՝ Ո՛վ հոգւոյն զաւրութեան, որ շնչէ ուր կամի, առանց չափոյ իւրոցն ղիւրսն տալով, աննաւթանձ հաւասարիչ արժանի գտելոցն նոյնպէս փոփոխ և յորս լինի՝

Արդ, ո՞ ոք այնպէս մոլեգնեալ իցէ, մինչ ղի ունելով հնար, երկին ունելով երկրի, և ղերկնայնոցն բնիրել նմանութիւն, և ղանց արասցէ՝ Իսկ եթէ կամեցեալ ուրուք և անգիտասցի ղորպէսն թէ և նախ ունէին, որով կրթել մարթէր կամողաց, որպէս զերիցս երանեալ հայրն մեր Դիոնէսիոս, այլ յայտնագոյնս եկեալ ուսցին՝ յայսմանէ՝ Կարծեմ ոչ ունայն ձեռամբ ուրուք գնգեղողացն առ սա ելանել աստի, այլ դառնալով դարձցի զուարթադէմ, հնձեալ պտուղս քաղցրահամս և որ այս ամենալիս թեև ունայն գայցէն ի սերմանց, քան զի երիւք յերրեակսն ի պատիւ երրակի և եզակի լուսոյն բարդեալ դասքն աստանաւր տեսցին, և ոչ միայն, այլ և որ ի վերոյ աթոռոցն հանգչի, բազմեալ ի մէջ մեր, թողից ասել և զբարձրագոյնսն, որ և իմանալեացն անմատչելի, զի և վասն իմ մարմնացեալն Աստուած, զի իմէ որպէս բնաւից, զի մի նախանձ բերցի, աստ, ի մէնջ հաւր մատուցանի նուէր հաշտութեան,
425բ տուեալ իւրոյն ինձ, և զիմս առնելով յիւրն փոխարկէ՝||Քանզի վասն իմ ճոխն աղքատացաւ զի իմն լցցի իւրով նուաստութեամբ՝ Զայսոսիկ քաջ հասողութիւն, կարծեմ ոչ նուաղեսցիս գիտել թէ բուռն հարցես զառաջի արկելովդդ, քանզի որ ի գիտողացն հաստատեաց և փորձիւ ծանեանա զամենայն իմաստիւք յայտնէ, որ սիրեացն զԱստուած և մնաց ի պատուիրանս նորա՝ Այլ զի մի որպէս անկարգս իմն և աւելորդս թուեցայց խոսել, պարտիմ ի սկիզբն բանիս ընթանալով յաւարտն ժամանել, զայսոսիկ մեզ տուողին ընդ հոգին միջնորդութեամբ, և մրով և քարտիսիւ կրկին զնոյն ստացողիս մաղթել առ Աստուած, որպէս և մեք ձերն բացումն աշաց և զօգտելն հոգւով՝

Արդ ի սկզբանն ի զսոյն մեզ պարգեւողէ սրբոյն, գրեցաւ սա յերիտասարդականն հասակի, ի քսան և չորս ամացն լինել, որպէս զի քեզ հաստատեսցի բան իմաստնոյն, որ ալիս՝ զիմաստութիւնն և հասակ ծերութեան զանարատ կոչէ՝ Եւ եղեւ այս մինչ անձամբ անձին առեալ էր զլուծ խոնարհութեան խաչիւ խաչելոյն զհետ մտեալ, վարժեալ յորմէ լուաւ ասել. Բարի է մարդոյ որ էառ զլուծ խոնարհութեան ի մանկութենէ իւրմէ, նստելով լռիկ ի տան, և տալով հողոյ զբերան, յայտ արարեալ զմեծագունի իմն կալեալ յոյս՝ Մինչ էրն ի լռութեան և ի միայնութեան կրաւնս, ի Հայոց թուականութեանն ՈՒ և Զ (1177), իսկ առ ի մէնջ ի նախ դրեալդ՝ յամի եւթներորդի փոխման սրբոյս, եւ խաւար ածելոյ բազմաց, և յանգ ելանելոյ բանի մարգարէին որ ասէ. Ցերեսաց
426ա անիրաւութեան բառնի արդար, և մեր առ ի նմանէ որբ մնալոյ՝||Ի չորրորդումն ամի զրկելոյ եղբաւր սորա Հեթմոյ աստուածասէր և բարեպաշտ իշխանի, և մեր և բովանդակ զարմից մերոց, ի սեպհական բնակութենէ մերմէ, ի դղեկն Լամբ[ր]ոն կոչեցելոյ, և միաբանակեցաց և հրեշտա-

կաբնակ ուխտէ Սկեւռայ վերձայնելոյ, յորում տեղւոջ ծնունդ և սնունդ սրբոյս ի միշի և այժմ դամբարանն սորա։

Եւ դրեցաւ սկիզբն գրոցս, որպէս յայտնի է որքանութիւնն գրոյն այլայլութեամբ, ի ձեռն ուրումն եղբաւր Աւետեաց սրբասէր քահանայի ի միաբանակեցաց վանս Անապատ անուանելոյ, իսկ այլն ի Սկեւռայն վերասացեալ, ձեռամբ ուրումն ի կլերիկոսաց սուրբ եկեղեցւոյն Ջաւրվար անուանելոյ, ի յիշատակ Ներսէսի մեղապարտ ծառայի Աստուծոյ, ի դատապարտութիւն և միայն պիտակաբար քահանայ կոչելոյ, որդւոյ քուեր սոյն Տեառն աստուածայնոյ, որոց յիշատակ իւրաքանչիւրոցն աւրհնութեամբ եղիցի և աղաւթք նոցա ի վերայ մեր։

Յիշատակեսցին աղաչեմ առաջի Աստուծոյ ամենայն բարեկամք նորա և եղբայնիկ վարդապետքս մեր և տածիչք ոգւոց մերոց՝ Գրիգոր և Բասիլ, առ որովք այժմ դեգերինք ի վարժս, որովք լցեալ առ մեզ լինին թերութիւնն սրբոյն, յորմէ զրկեցաք, որք յաղաւտ և ի նսեմացեալ ժամանակս մեր, որպէս զաստեղս լուսապայծառս փայլեն ի գիշերի, բայց միայն զի խաւարաւ մեղաց կուրացեալ մեք ոչ կամիմք բանալով զաչս նայել։ Ընդ սոսին և սնուցիչ մեր և տախտակաւ վարժիչ զԲասիլ քահանայ եւ
426բ զայլ եւս ուսումնա||կից և զաշակերտակից անձինս զՅոհաննէս և զԲարդողէմէոս, նա և զամենայն զարմս մեր՝ զմեռեալս և զկենդանիս, զաշխարհականս և զեկեղեցականս, և որոց մի անգամ անուանքն գրեալ են ի դպրութեան կենաց, որպէս զի ընդ նոսին և անուանք ձեր յիշատակողացգ գրեալ լիցին յանմահ գիրն ի Քրիստոս ի Տէր մեր, որում ընդ Հաւր և Հոգւոյն Սրբոյ փառք, պատիւ և զաւրութիւն յաւիտեանս, ամէն։

Ընդօրինակեցաւ գիրքս այս ըստ առաջին գրեալսն ձեռամբ սրբոյ առնն Աստուծոյ և հաւատարիմ պաշտաւնէի Քրիստոսի Ներսիսի։ Վասն որոյ զգուշասցի իւրաքանչիւր ոք, թէ ո գիտէ, և առցի ի գաղափար բանի և գրոյ՝ հրամանի և ստորատի և տան*։

20

ԱԻԾՏԱՐԱՆ

Վենետիկ 88, Սարգիսյան, ծուցակ Ա, էջ 399—400

Գրիչ՝ Կոզմա
Վայր՝ Խարբերդ

ա

302 · Շնորհիւ Տեառն սկսա եւ ողորմութեամբ նորին կատարեցի զաստուածախաւս սուրբ Աւետարանս ի քաղաքիս Խարդբերդ, ընդ հովա-

---

* երուսաղեմի օրինակում (Պողարյան, ծուցակ Գ, էջ 72) պահպանվել է ստացողի հետևյալ հիշատակագրությունը (էջ 384). «Ջստացողիս կեանք, զստացօղն իւր յոգի, զստացօյս Ներսէս, յոյժ վերշացեալ յաշակերտութիւն եւ որդիութիւն համանուն սուրբ հօրս, որոյ փափաքմամբ տառիցս տարփանօք, հարեալ յոգի սիրով, յաւելի զսա ի մթերս աստուածային չտեմարանաց, ըստ կրկնակին եւս մաղթելով ամբարել։ Արդ եղիցի յիշատակ երիցն ի մի բան յօդաւորել մեզ զսոյն տուողին եւ ստացողին ընդ աշխատելումն»։

նեաւ Սրբոյ Կարապետին և Սուրբ Յակովբայ, ի թուիս ՈՄԴ (1205) ընդ ձեռամբ Կոզմայ մեղաւորի եւ անարժան գրչի, հրամանաւ աստուածահաճոյ հաւր Թորոսի եւ ընդրեալ երաժշտի։ Արդ, աղաչեմք զամենեսեան, որք կարդայք յիշեսջիք զիս ղմեղապարտ գրիչս զԿոզմա, եւ զծնողսն իմ, և զեղբարս իմ; եւ զԹորոս երաժիշտ՝ զստացաւղ սորա, զի ողորմեսցի մեզ Տէր Աստուած և փրկեսցէ յանշէջ գեհենի հրոյն. եւ յիշողացդ տացէ Տէր զանսպառ բարիսն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս, ամէն։

Եւս առաւել ղհոգևոր եղբարք իմ զաստուածահաճոյ քահանայքզՅոհաննէս եւ զՏիրացու, որ առաջնորդ եւ աւգնական են գործոյս՝ յիշեսջիք ի Տէր Քրիստոս, աղաչեմ։

Բ

92բ ԶԹաւրոս երաժիշտ՝ զստացաւղ սուրբ տառիս յիշեսջիք ի Տէր Քրիստոս՝ ամենայն որդիք լուսոյ. ամէն։

Այլ եւ զմեղուցեալ գրիչս զԿոզմա աղաչեմ։

Գ

146բ Զպատուական հայր Թորոս երաժիշտ եւ ընդրեալ սուրբ յիշեսջիք ի Տէր Քրիստոս ամենայն որդիք Սիոնի սրբոյ, որ նորոգել եւտ, ամէն։
Այլ եւ զանարժանս Կոզմա գրիչ, աղաչեմ,

Դ

304ա Զկին ումն տառապեալ մեղաւք, որոյ անուն Թագուհի, յիշեսջիք ի Քրիստոս, եւ Աստուած ձեզ ողորմեսցի, ամէն։

Ե

Ստացող՝ Թաւրոս

Ես նուաստ երաժիշտս Թաւրոս զփափագումն սրտի իմոյ եւ յիշատակ հոգւոյ իմոյ եւտու գրել զսուրբ Աւետարանս՝ իմով աշխատութեամբ եւ արդեամբք՝ ի յիշատակ հոգւոյ իմոյ. եւ ծնողաց իմոց, յուսալով յողորմածն եւ բարեգութն Աստուած որպէս խոստացաւ անսուտ խոստմամբ՝ թէ Բախեցէք, եւ բացցի ձեզ. եւ թէ Ոք եկեսցէ առ իս, ոչ հանից արտաքս։ Արդ ունելով իմ զսա բարեխաւս առ Քրիստոս, զի ողորմեսցի ինձ եւ ընկալցի զսակաւ նուէրս իմ, որպէս զխերևեղ այրւոյն, եւ հատուսցէ ինձ վարձս բարեաց յայսմ աշխարհիս եւ ի հանդերձեալսն՝ անբասպառ բարիսն ընդ սուրբս իւր։ Արդ աղաչեմ զամենեսեան որք լուսաւորիք ի սմանէ, յիշեսջիք զիս, զԹաւրոս երաժիշտ, եւ զծնողս իմ եւ, զեղբարս իմ եւ զամենայն ազգատոհմս իմ, զի ըստ բարերարութեանն իւրոյ ողորմեսցի մեզ Տէր Քրիստոս եւ փրկեսցէ ի սպառնալեաց հրոյն. եւ որ ոք յիշեն, առցեն զբարի հատուցումնն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որում փառք յաւիտեանս, ամէն։

21

ՆՈՆՈՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՔ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ԱՌԱՍՊԵԼԱՑՆ

Երևան 9663 (1830 թ.)

Գրիչ՝ Յովաննէս
Վայր՝ Սաճահին

109 *Փառք Քրիստոսի Աստուծոյ մերոյ յաւիտեանս յաւիտ[ենից]։ Գրեցաւ Առասպելս այս և Աղճատանք հեթանոսականք՝ զորս յիշէ Գրիգոր Աստուածաբան առ ի խաղ առնել զնոսա, Ի՝ (24) գլուխ, Ի (20) Դարձեալ իմ ցիսուս ճառին, և ԺԸ (18) ի Բասղի Արձանականն* և այլն, ի Յուլիանոսի և ի Կիպրիանոսի ճառսն, ընդ ամենայն ՃԿԷ (167) գլուխ, ձեռամբ Յովաննիսի յոգնամեղ կրօնաւորի, ի թվ[ին] Հ[այոց] ՈՄԵ (1206), ի հոչակեալս Սաճահին։*

*Արդ, որք կարդայք կամ ընդօրինակէք, զբազմամեղս գծող յաղաւտս յիշեցէք, ընդ նմին և զԽաչատուր վարդապետ**։*

22

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԵԱՑ ԹՂԹՈՑ

Վիեննա 1470, «Հանդէս ամսօրեայ», 1978 թ. էջ 432—434.

Գրիչ՝ Պետրոս
Վայր՝ Սկետա

ա

165ա *Փառք և գոհութիւն, աւրհնութիւն եւ բարեբանութիւն ամենասուրբ Երրորդութեանն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս։ Այս բազմալոյս եւ աս-*

---

* Գրչի ծանոթագրությունն է «Առաջին Ի գլուխքն պակասին յօրինակիս, զի յսկիզբնէ անեաւլ են բազում թուղթք, որպէս և թուղթ մի անընթեռնելի էր, զոր չկարացի ընդօրինակել»։ Սույն ծանոթագրությունը հետագայում մեկը պարզաբանել է. «Այդ Ի գլուխք գտանին ի ձեռագրին Ազգային Մատենադարանի Պարիս քաղաքի»։

Ձեռագրի առաջին էջի լուսանցքում գրված է. «Համեմատեցի Բարիղեան օրինակին, դրեալ ի ՉԼԱ (1282)»։

** Այս նույն հիշատակարանը աե՛ս նաև Մատենադարանի № 9654 ձեռագրի 51ա էջում՝ «Ծիշատակարանքում» (էջ 739) դրված է ՈՄԷ (1208) թվականի տակ։

տուածախաւս մատենի ցանկացայ նուաստ եւ տրուպս յորդիս եկեղեցւոյ Պետրոս եւ սկիզբն արարի տկար մարմնով, անպատկան նիւթով եւ անպատշաճ դեղով, անարհեստ դրչով։ Սակայն եկն ի կատարումն ողորմութեամբն Աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս։

Գրեցաւ մերձ ի դղեակս Լամբրուն ի գերահռչակ անապատս Սկեւրա ի մէջ քրիստոսազգեաց սուրբ ճգնաւոր եղբարց միաբանակեցած, որոց ձեռընտութեամբ յանգեալ աւարտեցաւ կտակս սիրոյ կամաւք, զորս զամենեսեան պահեսցէ Քրիստոս անարատս ի կամս ողորմութեան իւրոյ եւ արժանի արասցէ իւրոյ աստուածային փառաց ողորմութեանն։ Արդ, որք ընթեռնուք եւ աւրինակէք, թողութիւն մեղաց խնգրեցէք յԱստուծոյ մեղաւորիս Պետրոսի եւ ծնաւղաց իմոց սուրբ հաւրեղբաւր իմոյ Խաչատրոյ, որ ծեր եւ տկար կենաւք զնիւթս պատրաստեաց, որ եւ աշխատի վասն մեր յամենայն պէտս, հատուսցէ սմա Քրիստոս որ առատն է ի պարգեւս։

Եւ գրեցաւ ի թուիս Հայոց ՈՁԵ (1206) ի յիշատակ հարազատացն իմոց Եգնատիոսի քահանայի եւ Եղիայի սարկաւագի, որք յառաջ վախճանեցան ի Քրիստոս, եւ սուրբ հաւրեղբաւր իմոյ Յովհաննիսի, որ զմեղ զամենեսեան սնոյց։ Աղաչեմ սիրով յիշել, ո՛ բարի ընթերցողք։ Յայսմ ամի վախճանեցաւ ի Քրիստոս վարդապետն իմ Յովհաննէս տիկնաղգի որում ողորմեսցի Քրիստոս։ Արդ, որք սիրով յիշէք զվերոգրեալքս ի սմա ի թողութիւն մեղաց, յիշեսցէ եւ զձեզ Քրիստոս յողորմութիւնն իւր եւ նմա փառք յաւիտեանս։

բ

149բ Ջմեղաւոր գրողիկս, զտկար մարմնով եւ զ(հ)իւանդս հոգւով աղերսիս աղաչեմ յիշել ի Տէր, ո՛ աստուածասէր ընթերցողք։

գ

145բ Դաւթի քահանայի՝ հաւր իմոյ եւ Յոհաննիսի կրաւնաւոր քահանայի եւ Խաչատրոյ՝ հաւրեղբարց իմոց եւ Եգնատիոսի եղբաւր իմոյ յառաջ վախճանեալ ի Քրիստոս, ի գերեզմանս նոցա ցաւղ ողորմութեանն Աստուծոյ իջցէ։ Ընդ սոսին եւ մեղուցեալոյ գրողիս Պետրոսի Տէր իմ Քրիստոս ողորմեսցի։

դ

56ա Այսաւր ձեռս խիստ մսեցաւ, զի իմանալիս կրկին է սառեալ, վայ։

ե

44բ ՈՀ սորին կարաւտ ողորմելիս՝
յիս կուրացաւ յիմանալիս։

զ

147ա Աւաղ նաղելի բանիցս աստուածայնոց յանպատկանաւոր նիւթս*։

---

* Նյութը՝ «հին հաստկեկ, ողորկ թուղթ» է։

23

ԱԻԵՏԱՐԱՆ

Պալյան, Յուցակ Կեսարիայի, էջ 9

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Տումարծա

Փառք... դրեցաւ և ծաղկեցաւ աստուածաբուղխ սուրբ Աւետարանս Քրիստոսի ձեռամբ բազմամեղ փցուն, անիմաստ և յանցաւոր գրչի՝ Գրիգոր քահանայիս, ի Տումարծու, որ անուամբ գոլիմ եւ ոչ գործօք։ Ի թուականիս Հայոց ՈՄԵ (1206) յաւարտեցաւ, յունվար ամսոյ Գ, աւր շաբաթ, ի գաւառս Կեսարիոյ Կապադովկեցւոց, ի հռչակաւոր անապատիս Սրբոյն Կարապետի Յովհաննու եւ Սրբոյն Ստեփանոսի Նախավկային եւ Սրբոյն Թէոդորոսի եւ Սրբոյն Մեհկեհիոսի ղինաորի եւ այլ բազմահաւաք սրբութեանցս, ի յեպիսկոպոսութեան տէր Ազարիա վերայտեսչի։ Որոյ ցանկացող եղեալ այս փրկագործ սուրբ Աւետարանիս զհեզահոգի եւ զհաւատարիմ ծերունին՝ զԼորաբրպաշին, և զիւր կողակից՝ զԿուկասարն, որ փոխեալ է ի Քրիստոս, եւ ամենայն արեան մերձաւորքն իւր։ Յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զԼորպաշին, որ ստացաւ զսուրբ Աւետարանս, եւ յետ յիշատակ ի վանս Սրբոյն Գրի[գ]որի Նիւսացւոյն, որ է եղբայր սրբոյն Բարսեղայ հայրապետին։

Արդ մի ոք իշխեսցէ հանել զսա ի դըրանէ սորին. եթե (յ)անգգնի, զպատիժն Կայենի առցէ և զմասն Ուգայի, և զՔրիստոս խաչահանողացն, ամէն։ Եղիցի, եղիցի։ Հայր մեր, որ յերկինս, սուրբ եղիցի...։

24

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 194

Գրիչ՝ Առաբել
Վայր՝ Հաղբատ

ա

252բ Ամենասուրբ Երրորդութեանն փառք յանսպառ յաւիտեանս, ամէն։ Ամենայն դասք ընտրելոցս Քրիստոսի կոչեցելոց յառաքելական ընտրութիւնն ընկալան զիմաստս գիտութեան ի հոգւոյն Աստուծոյ, եւ եղեն քարոզք ճշմարտութեանն Բժ-անքն եւ Հ-ունքն ՃԻ-քն եւ Շ-իւրքն, եւ երեք հազարքն, եւ հինք հազարքն, եւ բիւրքն։ Բանիւ նոցա աւանդեցաւ ուսուցանել զհաւատս բարեպաշտութեան, որով եւ վիճակեցան հասարակ աւետաբերք եւ համաքարոզք յընթանուրս տիեզերաց։

Ուստի եւ մեծն յառաքեալս Պաւղոս աստուածային անաւթն ընտրութեան, որ յերկինս եւ առաջի խորհրդական Երրորդութեանն ընկ[ալ]աւ զմեծ շնորհս հոգւոյն սրբոյ, ուստի լուաւ բանս անճառս եւ անհա-
253ա սականս‖եւ փոեալ ընդարձակեաց եկեղեցւոյ զբանն ճշմարտութեան եւ ի շնորհս որդեգրութեան աւազանին լեզուս նորս ստացեալ բերան Քրիստոսի, եղեալ իբրեւ թէ ինքն Պաւղոս ընդ ամենայն ումեք խաւսի, եւ զբաժակ փրկութեան անապական այգւոյն, ի սրտին ամբարեալ շտեմարանս անտուստ մատռու[ա]կեալ ելից զամենայն տիեզերս։ Եւ չորեքտասամբք թղթովքս ի չորեսեան կող[մ]անս երկրի, հնչեաց զբանն կենաց, որ է գանձ անկողոպտելի, եւ տեւէ մինչև ի գալուստն Քրիստոսի։

Վասն որոյ եւ այսր շահաւետ գանձու ցանկացող եղեալ Յուանն քահանայ, սպասաւ[որ] տէրունեան խորհրդոյն, ստացաւ զսա յիշատակ անջնջելի առաջի Աստուծոյ, եւ խնդրէ յամենցունց, որ յետ իւր
253բ առ ոյ ոք եւ իցէ սա, հանապազ յիշեսցէ ի Քրիստոս‖յոյսն ամենեցուն։

Եւ ես Յուանն նուաստ քահանայ աղաչեմ զամենսեան, ոյք ընթեռնոյք եւ լուսաւորիք ի սուրբ պատուիրան[ա]ցս Քրիստոսի, եւ եթե ընդաւրինակէք, յիշել աղաչեմ յաղաւթս; եւ թողութիւն հայցել ի Քրիստոսէ յանցանաց իմոց, եւ ծնաւղաց, եւ եղբարց իմոց։ Եթէ ի հասարակաց եկեղեցիս, եւ եթէ առանձինն առ եղբաւր ումեք իցէ սուրբ առաքեալս, յիշել աղաչեմ ի Քրիստոս, որպէսզի բարեխաւսութեամբ սորին ողորմեսցի մեզ Քրիստոս՝ մեզ յիշելոցս, եւ ձեզ յիշողացդ ի հասարակացն յարութեան, ամէն։

Գրեցաւ խոշորագիր գրով գիրքս այս, ձեռամբ նուաստ եւ ամենամեղ քահանայի Առաքելոյ, ի սուրբ եւ ի հռչակաւոր ուխտս [Հաղբատ],
254ա ընդ հովանեաւ Սրբոյ Նշանիս եւ մաւրս լուսոյ Կաթողիկէի,‖յառաջնորդութեանն սուրբ հայրապետիս մերո տեառն Յոհաննիսի, ի թուիս Հայոց ՈՄԶ (1207), ընդ որս եւ ես աղաչեմ մասնաւորել զիս սուրբ աղաւթից ձերոց, եւ Քրիստոս Աստուած հասարակաց ողորմեսցի, եւ ինքն եղիցի աւրհնեալ յաւիտեանս։

Բ

Ի ստոյգ գիտողաց եւ յուղիղ աւրինակէ գրեցաւ, թէպէտ եւ ես ախմար էի, գի ոչ մտահաճութեամբ է ընտրեալ, այլ ի բազում աւրինակաց ընտրեալ եւ վկայել ի գիտ(ն)ականաց եկեղեցւոյ։

Գ

Փառք Սուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտեանից, ամէն։ Կա-
392ա տարեցաւ սուրբ մատեանս ամենանուաստ եւ յետին կրաւնաւորի ձեռ‖ամբ Առաքելի‖[անարժ]ան քահանայիս, խն///ոռ ի բարի յիշատակ ի///[հան]դերձելումն։

Ջսուրբ Առաք[եալքս եւ] զնսայիս ի մի տփի եդեալ///աղա[չ]եմք Յուևան ստացաւղ, ե[ւ]ս սուտ[անուն] գրիչս, որք աւգտիք ի սմանէ մեզ ա[ն]մոռաց յիշել ի սուրբ յաղա[ւթ]ս ձե[ր], ընդ նմին եւ ծնողսն մեր /// եւ Աստուած զձեղ յիշէ յիւրում գալստ[եանն ամէն]։

Դ

197ա Ջստացաւղ սուրբ առաքելոյս զՅուևան եւ զծնաւղսն իւր յիշեցէք ի Քրիստոս, որք ճարակէք յանմահական յաղբեւրէս։ Ընդ նմին եւ զանպիտան գրիչս զԱռաքել, աղաչեմ ի Տէր։

Ե

225ա ՋՅուևան ստացաւղ դրոցս յիշեցէք ի Քրիստոս, եւ զանպիտան գրիչս աղաչեմ։

25

ԱԻԵՏԱՐԱՆ

*«Պատմութիւն հայ Տոմարծայի», էջ 601—602**

Գրիչ՝ Կարապետ
Վայր՝ Ճիրակայ անապատ

Փառք... որ ետ կարողութիւն իմոյ տկարութեանս ժամանել ի կատարումն սուրբ եւ աստուածախաւս աւետարեր աւետեաց Աւետարանիս,

* Ձեռագիրն այժմ պատկանում է ԱՄՆ-ի Ռեյսին քաղաքարնակ, Տոմարծացի այրի տիկին Պայծառ Տեր-Կարապետյանին, որոնց ընտանիքում այն պահվել է 38 սերունդներ ի վեր, որոնց նախապապն է համարվում մագաղաթյա Ավետարանի գրիչ տեր Կարապետը։

որ քառավտակ գնացիւք զընդհանուրս ոռոզանելով պայծառացուցանէ զանձինս հաւատացելոց շնորհաւք Սուրբ Հոգւոյն։

Եւ ապա, դռեցաւ սա ի թվականիս մեր ՈՄՋ (1207) ի թագաւորութեանս Հայոց Մեծի Լեւովնի եւ բարեպաշտի, ի լեառնս Տարսովնի, յանապատիս Ճիրակայ, ընդ հովանեաւ սրբոյ Կարապետիս եւ այլ սրբոց, ի հայրապետութեան... Յովհաննու Հայոց կաթողիկոսին, հրամանաւ եւ արդեամբք վարդանայ կրաւնաւոր քահանայի, որ ստացաւ զսա յիշատակ իւր, եւ ծնաւղաց իւրոց, եւ ազգականաց՝ կենդանեաց եւ ննջեցելոց /// իւրոց յաշխարհէ։ Եւ գրեցաւ սա ձեռամբ Կարապետի մեղապարտի եւ խոշորագիծ գրչի, ի ծերութեան եւ ի տկարութեան ժամանակի՝ խաւարեալ աչաւք։

Եւ արդ, աղաչեմ զամենեսեան, ոյք աւգտիք ի սուրբ մատենիս, յիշատակի արժանի առնել զստացաւղ սորա զՎարդան, եւ զաէր Բարսեղ քուերորդի նորա, եւ զամենայն տոհմայինս նոցա՝ զմեռեալս եւ զկենդանիս, զի ողորմեսցի նոցա Քրիստոս Աստուած եւ ի հանդերձեալ գալըստեանն իւրոյ թողեալ զյանցանս նոցա, ամէն։ Ընդ նմին եւ զիս զտառապեալ գրչիս Կարապետ յիշեսշիք, եւ զամենայն վերոգրեալքս ի սմա։ Եւ որ առատն է ի տուրս, եւ աննախանձ ի հատուցումն Քրիստոս որդին Աստուծոյ ամենեցուն ողորմեսցի՝ յիշողացդ եւ յիշելոցս, եւ պարդեւեսցէ զարքայութիւնն իւր, եւ նմա փառք ընդ Հաւր եւ Հոգւոյն Սրբոյ եւ միշտ եւ յաւիտեանս, ամէն։

26

ԱԻԵՏԱՐԱՆ

Կոնիրիր, Յուցակ Լոնդոնի, էջ 7

Գրիչ՝ Գրիգոր

[ի թուականութեանս] Հայոց ՈՄՋ (1207), ի թագաւորութեան Լեւոնի Հայոց, ի կաթողիկոսութեանն տեառն Յոհաննիսի (գրեցաւ) սուրբ Աւետարան[ս]։ Ստացաւ զսա պատուական քահանայն և սրբասնեալն Կոստանդին՝ ի յիշատակ իւր և ծնողաց իւրոց, և որդոց իւրոց՝ ի վաեւլումն, որ Տէր Աստուած վայելել տացէ, ամէն, ամէն։ Եւ զիս զբազմամեղս Գրի[գոր]ի ///։

27

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՂԻՇԷԻ

Երևան 1888

Գրիչ՝

122բ [Գրեցաւ ի] թու[ին] ՈՄՋ (1207)։

28

ԱԻԵՏԱՐԱՆ ՄԼՔԷ ԹԱԳՈՒՀԻՈՅ

Վէննտիկ 86 (862 թ.) Սարգիսյան, ցուցակ Ա, էջ 387

Ստացող՝ Անդիաս
Վայր՝ Վարագ

ա

360բ *ի ՈՄԷ (1208) թուականիս Հայոց, ես* Անդիաս *քահանայ թափեցի զսուրբ Աւետարանս ի յանաւրինաց, եւ վերստին եռու զսա յընծայս Սրբոյ Նշանիս* Վարագայ՝ *յիշատակ ինձ և հայրաղատ եղբաւր իմոյ* Գէորգեայ *քահանայիւ։*

Արդ, որք լուսաւորիք ի լուսայճաճանչ տերունեան հրամանացս, յիշհնջիք[ք ի] Քրիստոս զիս՝ զԱնդիաս, *եւ զեղբայրն իմ* զԳէորգ, *եւ զՀայրապետ եւ զՍարգիս, եւ զծնողսն մեր, եւ Աստուած հասարակաց ողորմեսցի, ամէն։*

բ

137բ *Ջանդիաս եւ զԳէորգ քահանայր ստացաւղք սուրբ Աւետարանիս յիշհնջիք ի Քրիստոս, աղաչեմք։*

29

ՄԱՇՏՈՑ

Վէննտիկ 570, Սարգիսյան, ցուցակ Գ, էջ 68—70

Գրիչ՝ Վարդան
Վայր՝ Ասորեմայր

ա

149բ *Կատարեցաւ Քահանայաթաղս այս երկոտասան աւուրց, լի եւ թամամ, ի սերտ եւ յընդիր աւրինակէ, ձեռամբ* Վարդանայ *մեղաւոր և անպիտան գրչի, ի թուականիս Հայոց ի ՈՄԷ (1208), ի գաւառիս* Ծոփաց, *յանուպատս որ կոչի* Ասորեմայր, *ընդ հովանեաւ Սուրբ Կիրակոսի եւ առաջնորդի սորա սրբազան եպիսկոպոսի տէր* Վարդանա, *հրամանաւ եւ ծախիւք աստուածասէր եւ քրիստոսադաւան քահանայի* Կարապետ *երիցու, որ գրեալ ետ զսա ի յարդար վաստակոց իւրոց, ի յիշատակ իւր եւ զաւակաց իւրոց* Բանարգէս *երիցու եւ այլոցն, եւ ամուսնոյ իւրոյ։ Արդ,*

որք ընթեռնոյք զսա, յիշեսջիք անմոռաց յաղաւթս զստացող սորա, եւ զգծող, եւ զծնողքն մեր, եւ Աստուած զձեզ յիշէ, ամէն։

Բ

133 Կատարեցաւ կարգ թաղման քահանայից ի սերտ եւ յրնդիր աւրինակէ, ձեռամբ Վարդանա մեղաւոր եւ անպիտան քահանայի, հրամանաւ եւ ծախիւք աստուածընկալ և սրբասէր քահանայի Կարապետի, եւ երէց որգոց իւրոյ Յանաւրգէսի, որոց ողորմեսցի տէր Աստուած իւրեանց եւ ծնողաց իւրեանց...

Գ

170ա Տէր Աստուած ողորմեա ստացողի սորա Կարապետի պատուական քահանայի, եւ մեղաւոր եւ անպիտան գծողի սորա Վարդանա, ամէն։

30

ՀԱԽԱՏԱՐՄԱՍ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՅԳԵԿՑԻՈՅ

Հրատարակմ 2526 (ժէ դ.), Ն. Պողարյան, Յուցակ Ը, էջ 203—207

Հեղինակ՝ Վարդան Այգեկցի
Վայր՝ Պարսկաստան

ա

203 *Եւ ես ողորմելիս Վարդան, որ հաւաքեցի զայս աստուածային և լուսափայլ մարգարիտս հաւատոյ՝ մեծաւ ցանկութեամբ յուսոյ և սիրոյ, հետևելով աստուածաղան և բարեփառ հարցն ուղիղ դաւանութեան, հաւատով խոստովանիմ անթերի մտօք՝ զհամագոյ և զամենասուրբ Երրորդութիւնն...։*

Արդ, մեծաւ հոգաբարձութեամբ, և յղձալի սիրով հաւատոյ արարաք հաւաքումն բազում բանից, ամենայն ուղղափառ հայրապետացն խօսից և վարդապետաց եկեղեցւոյ՝ ի մերոց Հայ<ե>աստանեաց, և յամենայն ազգաց, առեալ միայն զվկայութիւնսն՝ սակաւ բանիւ վկա մերոյ ճշմարիտ և ուղղափառ հաւատոյս, ընդդէմ երկաբնակացն և արիանոսացն, և ընդդէմ նոցա, որք ապականացու ասացին զանապական մարմին բանին Աստուծոյ և անգոսնելի կիրք ետուն նմա։

Դարձեալ եկ բաղձալի, և բեր զմիտս քո զխընամակալութեամբ Հոգւոյն Աստուծոյ, հաւաքեսցուք և այլ վկայութիւնս, որ կարի ևս պիտանացու է մերս եկեղեցւոյ կարգաց և օրինաց, որք են խորհրդածութիւնք հաւատոյ յամենայն աղգաց սուրբ առաջնորդաց և ի մերոց Հայ<ե>աստանեայց, և լցցուք զայս աստուածաբնակ տառս իբրև զդրախտ մի՝ լցեալ զանազան ծաղկօք, աստուածային հոգէխառն, բանիւք, և իբրև զքաղաք մի լցեալ ամենայն մեծութեամբ, և աստուածական համեմատ գանձիւ, և արասցուք զսա պարիսպ եկեղեցւոյ ուղղափառաց յազգաց յազգըս, որով հերքեալ հալածեսցին ամենայն հերձուածողքն, և պապանձեսցին շատաբան և անդուռն բերանք նոցա։

Եւ արդ սկիզբն արասցուք, ուստի սկսանել արժան է։ Նախ վասն ծննդեան Տեառն և մկրտութեանն, և սուրբ պատարագին, և խաչելցարին, և զելի և մատաղի, զատկի, և նընջեցելոց. և վասն գառինն, զի եկեր Տէրն յերեկոյին ե-շաբաթին, վասն աղի։

Բ

260 ...Եւ է սա երկոտասան գիրք, գրեալ և փոխեալ յառաջին օրինակէն, ձեռամբ մեղապարտիս Վարդանայ, և առաքել զպսակ՝ ուղղահաւատ եկեղեցւոյ Հայաստանեայց, որպէս և այլք, որ յառաշ քան զսայ թողեալ յիշատակ բարի մեզ, և ծնօղաց, և եղբարց մերոց, և ազգի մերոյ։ Եւ արդ, առ ոտս ամենեցուն անկեալ պաղատիմ աղերսանօք և աղաչեմ՝ արարէք յիշելոյ արժանի զմեզ զամենեսեան, և խնդրեցէք թողութիւն մեղաց մերոց յողորմածէն Յիսուսէ Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, զի թերևս ապրեսցուք անսպառ տանջանացն, որ և զձեզ փրկեսցէ Տէր Աստուած ի նմանէ, եւ նմա փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ գրեցաւ սա ի Պարսսաս, ՈՄԸ (1209) մերոյ թուիս, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Սրբոյ Նշանիս, յառաջնորդութեան տեառն Մանուէլի սրբասնեալ եպիսկոպոսի։

Գ

Այս ինչ է կարգեալ այս աստուածաբնակ տառս. Սակաւ բան մեր յիշատակին, եւ պատուէր գրոցս առ ժառանգօղս իւր, եւ ուղիղ դաւանութիւն Սուրբ Երրորդութեանն, եւ բաղում վկայութիւնք ընդդէմ երկաբնակացն, եւ բանն զոր ասէ սուրբն Աթանաս Թէ դժոխք սգայեցան ասել մի բնութիւն բանին Հօր և մարմնոյն որ ի Մարիամայ, եւ զոր Աստուածաբանն ասէ բնութիւնք երկուք, եւ զոր Եփրեմ ասէ Թողլի գնա չարշարելի և Թէ ի մահու անդ ոչ էր նայ ընդ նմայ։ Քանզի այս երեք բանս, զոր այս երեք սուրբքս ասեն, բազումք տկարանան, և զուղիղն ոչ կարեն իմանալ. Իսկ դու գտցես զսոսա պարզս, մեկնեալս, և եդեալ յիւրաքանչիւր կարգն, շնորհօքն Աստուծոյ, որով իմանաս ճշմարտութիւնն, և յամօթ առնես զանոպայսն, որք անմիտք են։ Եւ ընդդէմ նոցա յոլով վկայութիւնք, որոք (յ)ապականացու ասացին զանապական մարմին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և անգոսնելի կիրք եւտուն նմա, այսինքն կերակրոց և ըմպելեաց ախտաբար հոսումն. արդարև վա՜յ է նոցա։ Եւ վասն դժուարալուր բաներոյ ոչ է իմ տալ. Եւ անցո զբաժակս. և որք այսպիսիք են։ Եւ վասն ճրագալուցին, զի երեկունն պարտ է ուտել։ Եւ վասնզի պարտ է ի Զ-ն յունվարի տօնել, ի միում աւուր, զծնունդ Տեառն և զմկրտութիւնն։ Եւ զի եկեր Տէր զդառն յերեկոյին հինգշաբաթին։ Եւ զի պարտ է զպատարագն անխմոր և անշուր մատուցանել։ Եւ զի պարտ է ասել զխաչեցարն՝ ամենայն աւուր, ի դէմս Որդւոյ։ Եւ զի սուտ է, որ ուրբաթաղել առնէ։ Եւ զի բարի է զատկի մատաղ, և այլ մատաղ զոր առնեն։ Եւ աղն զոր աւրհնեն և տան անասնոց։

Զայսոսիկ գտցես եդեալ վկայութեամբ բազմաւ ամրացեալ, որով խնուս զբերանս հակառակողաց։

Արդ է սա գանձարան Աստուծոյ կենդանւոյ, լցեալ անբաւ և անճառ, լուսափայլ հաւատոյ մարգարտովւ։ Եւ որ շատ աշխատի ընթերձումն նորա՝ նա ճաշակէ զմեծապանծ գեղեցկութիւն սորա։ Քանզի սայ լեառն է Սինէական, ուր բնակէ և ուստի խօսի Աստուած, և սայ է հալածօղ հեր-

ձուածօղաց քարամբք հոգոյն պարտելով զնոսա։ Սայ է լոյս հոգոյ խաւարին շաւիղսն յելսն մեր յերկինս։ Սայ է հիմն և մայր հաւատոյ, որ կամի ճաշակել զԱստուած։ Սայ է դուռն արքայութեան։ Սայ է, որ տեսանել տայ մեզ զԱստուած և շրշել համարձակ և անամօթ յահագին ատենին. և օրհնեալ է [զ] Քրիստոս դատաւորն արդար։

Գ

Գրիչ՝ Աստուածատուր

260 Աւրհնեալ է ամէնաւրհնեալ և ամենաբարի բնութիւն, համագոյ և ամէնասուրբ Երրորդութիւն, անբաժանելի ամենայն եղելոցս, յաւիտեանս յաւիտեանից, ամէն, որ զորացոյց զողորմելիս Աստուածատուր իբր քահանայս, տանել ի կատարումն զայս աստուածաբնակ տառս, և լցոյց զցանկութիւնս իմ ողորմութեամբն իւրով, որ և ցնծա հոգւովս ընդ աւարտումն սորա։

31

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, պատառիկ 1886

Կազմող՝ Մարգարէ
Վայր՝ Հառիճ

1ա Ամենասուրբ Երրո[րդ]ութեանն փառք, պատ[իւ] եւ գոհութիւն յաւիտե[անս, ամէն]։

Եւ մեղուցեալ եւ յետի[նս] ի կրաւնաւորս Ովասափ[ս], որ եի աղգաւ եւ տոհմիւ [ի] մեծ գեաւղաքաղաքէն Կո[ւ]միրոյ*, որ ի մանկութե[ան] կրաւնաւորեալ մինչեւ յալիս, եւ ոչ ինչ ունե[ի] քոշակ երկայն [ճա]նա[պար]հին, բայց միայն զո[ղոր]մութիւնն Աստուծոյ, ապա[ւ]ինե[ց]այ առ բարեգ[ութն, եւ]յիմ արդար ը[նչից, ստաց]այ զսուրբ Աւետ[արանս փր]կանք հոգւոյ, [ազատ]եցի ի գերող[ացս որ էր] կարի զեղծեա[լ] /// էր, եւ առ անձուկ /// եւ յուսոյն զոր[ութեամբ] սուրբ
1բ Աւետարանն [ետու||դարձ]եալ նշանագրել ծաղ[կեալ], եւ կազմել, եւ արծաթ[ով] փառազարդեալ առ ի [փ]ափադ զտե<ղ>սաւղսն [ա]զդելոյ, զի լիցի յիշատակ մեզ եւ ծնաւղաց մերոց եւ եղբարց, միշնորդ եւ բարեխաւս առ Քրիստոս, եւ մխիթար վշտագնեալ ոգւոյս։

[Ե]ւ արդ, աղաչեմ զձեզ [սուրբ] հարք եւ եղբարք եւ որդ[իք] սրբոյ Սիոնի, յորժամ վ[երագ]առնայք զսուրբ [Աւետարա]նս եւ կարդ[այք] /// այղիք ի քաղ[ցր /// [ճա]աշտկէս եւ /// առնոյք, [յիշեսջիք] ի սուրբ յաղաւթս [ձեր] առաջի զենմանն [գառին] զՈվասափս, եւ [զծնաւղսն] իմ՝ զհայրն իմ զՔրիստափոր, եւ զեղբայրն իմ զԱբրահամ կրաւնաւոր՝ փոխեալ առ Քրիստոս, եւ զմիւս եղբայրն իմ զԱղբեր անուն, եւ զորդեակս նորա զՍարգիս։ Նա եւ զհայր Վարդան Հառիճայոյ, եւ ըստ հոգ-

* Կումայրի-Գյումրի տեղանվան գրության հնագույն ձևն է։

ւոյ զեղբարս մեր զԲարսեղ կուսակրաւն քահանայ, եւ զՍարգիս, եւ զԽաչոտն, եւ զմեղաւոր կազմաւղս զՄարգարէս, եւ զամենայն միաբանեալսն մեր։ Եւ Աստուած, որ առատն է ի տուրս, տացէ վարձս բարեաց ստացաւղացն եւ աշխատողացն, եւ ամենայն հաւատացելոց, եւ Աստուծոյ Հաւր փառք յաւիտեանս, ամէն։

ՈՄԸ (1209) թուիս կազմեցաւ։

32

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 194 (1207 թ.)

Կազմող՝ Սուխիաս
Վայր՝ Հաղբատ

392ա Հ[ր]ամանաւ սրբազան քահանաի Յո[ւճ]ան[ու], ի թուիս ՈՄԸ (1209), կազմեցաւ գիր[ս] առաքելական և մարգարէական, ձեռամբ իմոյս ախմար հեստի Սուխիասի, աղաչեմ եւ զիս մ[ասն]աւորել աղաւթից, թերեւս ի ձեռն ձեր տաց[ի] ողորմութիւն ի Տեառն, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

33

ՃԱՌՔ ՅՈՎՀԱՆՈՒ ՄԱՅՐԱՎԱՆԵՑԻՈՑ

Երուսաղեմ 1999, Ն. Պողարյան, Ձուցակ Զ, էջ 594—595

Գրիչ՝ Սիոն
Վայր՝ Նոռսեսի անապատ

191 *Գոյացուցչին բոլորեցունց, անպատում եւ երկայնամիտ Սուրբ Երրորդութեանն, որ ներէ ամենայնի, որ վեհագոյն է քան զամենայն բարերարութիւնս իւր, նմա փառք յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից, որ ետ զաւրութիւն տկարութեանս մերում հասանել ի գիծ վերջին այսմ լուսազարդ եւ աստուածապատում մատենի, զոր ի Հոգոյն Սրբոյ ազդմանէ արարեալ է երիցս երանեալ սուրբ վարդապետն|||* ացն կամաց, որք զահ ահեղ ատենին զմտաւ ածին, ոմն վասն պահոց, ոմն վասն աղաւթից, ոմն վասն ողորմութեան, եւ որոց այլ ինչ պակասութիւն է գործոց։*

Արդ, ես նուաստ և վերջինս յորդիս եկեղեցոյ Սիոն, հանդերձ եղբարբ իմով Թաթիոսի, Կաւտատի, Հանիսին, Սիմաւոնի ցանգացող եղաք այսմ հրաշապայծառ եւ հոգեւոր կտակիս, լինել առ ի յիշատակ մեզ եւ ծնաւղաց մերոց։

Եւ գրեցաւ սա յորում էր թուական Հայոց ՈՄԹ, (1210)՝ ի լեառն որ կոչի Ակսակոմեր, *ի գեղն* Մուշեղկայ, *ի յանապատն* Նոռսեսի, *առ դրան աստուածաբնակ Սուրբ Աստուածածնին, յառաջադրութիւն հարւրն* Նոռսեսի *եւ երկրորդին* Թեոդոսի, *որք բարեմիտ կամաւք զտկարութիւնս իմ զաւրացուցանէին։*

*Վասն որոյ աղերս թախծանաց մատուցանեմ, ո՛վ աստուածարեալ հարք և եղբարք, յոր** եւ յերեսս անկեալ յուսալիր պաղատանաւք վարձս վաստակոց եւ պարգեւ ողորմութեան ի ձենջ այս շնորհեսցի ինձ աղաւթիւք յիշել զիս եւ զծնողսն իմ, եւ զհոգեւոր հայրն իմ զՍարգիս։ Տէր Յիսուս Քրիստոս ողորմեա Յուսեփայ եւ Գորգոյ և իւրաոցն, որ գաւր[ինակս շնորհեցին]։*

---

* Երկուակես տող քերված։

** Պետք է կարդալ «յոտս»։ Ձուցակում «սս»-ն դրված է փակագծի մեջ յոր(ս) ձևով։

34

ՀԱՂԲԱՏԻ ԱԻԵՏԱՐԱՆ

երևան 6288

Գրիչ՝ Յակովբ
վայր՝ Հաղբատ

ա

173ա Յակովբ գրիչ յիշեսցի ի Տէր*։

բ

250ա* Ո՛, հոր ցուրտս նեղեաց։

գ

356ա Փառք բոլորից հաստչի, համապատիւ Սուրբ Երրորդութեանն յաւիտեանս։

Աւրհնութիւն, որ կարդա,
Գովութիւն, որ լսէ,
Փառք շնորհաւղին՝
Եւ յիշատակ՝ գրչիսւ

Տէր Աստուած ամենակալ նորոգեա ի կեանս անծերանալիս զՍահակ՝ ստացաւղ սուրբ Աւետարանիս, ամէն**, ամէն։

դ

175ա Սահակայ է գիրքս ի փրկութիւն, ամէն***։

ե

Ուղղիչ՝ Մխիթար Քոբայրեցի

61ա ԶՄխիթար Քոյրայրեցի յիշեա ի Քրիստոս, աղաչեմ, ղուղղիչ****։

---

* Ձեռագրի գրիչը Յակովբն է, որը միայն Ա—Դ հիշատակագրութիւններն է թողել։ Ավելի ջատ հիշատակագրութիւններ գրել է Մարգարէ ծաղկողը (ներկերով՝ նկարների վրա և գրչով՝ ավետարանների վերջում և լուսանցքներում)։ Գլխավոր հիշատակարանը գրված է Սահակի ա-ռունից, բայց Հովհաննեսի ձեռքով։

Այս ձեռագրում կան երկաթագիր (Հակոբ), գրչագիր (Մարգարե), բոլորգիր (Հովհաննես) և շղագիր (Մխիթարի որոշ սրբագրութիւնները) գրութիւններ։

** Հունարեն է գրված։

*** Գրված է լուսանցքի երկարութեամբ՝ զարգանախշի մեջ՝ նախշագրերով։

**** Գրված է շղագրով, «Քոյրայրեցիի» ձևով, ճիշտը «Քոբայրեցի» է։ Նրա ձեռքով բազմաթիվ սրբագրութիւններ կան կատարված՝ բոլորգրով ու շղագրով (էջ 44, 63, 68, 139, 243)։

գ

94ա Աստի յառաջ յառաջեա դու, չորիկ*։

է

Մաղկող՝ Մարգարէ
Վայր՝ [Անիի Բեխենց վանք]

111բ Սուրբ առաքեալ եւ աւետարանիչ բանին Հաւր, ի քոյդ ապաւինեալ բարեխաւսութիւն աղքատս եւ մեղաւոր աբեղայս Մարգարէս՝ նկարող սո-
րին, որպեսզի ողորմեսցիս ինձ, նաեւ Սահակայ ստացողի եւ եղբաւր իւ-
րում Իպատոսին, որ կիսաւրեա ել յաշխարհէս։ Ով զմեզ աղաւթիւք յիշէ,
Աստուած զինքն յիշէ։

Տէր Աստուած ողորմեա Սարգսի կուսակրաւն քահանայի, եւ եղբաւր իւրում Շահերոյն, եւ ծնաւղաց իւրեանց, ամէն։

բ

173բ Տէր Աստուա՛ծ, ողորմեա Սահակայ ստացողի, եւ ծնաւղաց իւրոց, եւ եղբարց, եւ արայ զնոսա հաղորդս քո սրբոցն պսակի, ամէն։

բ

276բ Յիշեա Քրիստոս Աստուած յողորմութեան քում զՍահակ ստացող սուրբ Աւետարանիս, եւ զծնաւղսն իւր, զեղբարսն եւ զքուլրսն՝ զՌիմա-
նոսն եւ զԿատայն, զԻպատոսն եւ զԱռաքեալն, զՋարճայն եւ զՀոռոմակի-
կին, եւ արայ զնոսա քո սրբոցն դասակից եւ պսակակից, ամէն։

Նա(եւ) զՎարդն եւ զՅակովբոսն եւ զծնաւղսն նոցա եւ զամենայն ընդանիսն**։

ժ

8բ Շերաճիկ քանի գաս, ձուկն բեր։

ժա

9ա Հայր եղբայրիկ՝ առաջնորդ սուրբ ուխտիս յիշե[սջիք]։
Կազմիչ սորին հայր [Աբրահամ եւ մի]չ(ն)որդ ի սմին յիշեսջիք***։

ժբ

10բ [Քրիստոս] Աստուած ողորմեա Առաքել[ին, ա]մէն։

---

* Գրված է ստորին լուսանցքում։ Ձեռագիրն ունի մանրանկարչական բարձր արվեստ։ Տե՛ս Գ. Հովսեփյան, «Նիւթեր և ուսումնասիրութիւններ Հայ Արուեստի և մշակոյթի պատմութեան», պրակ Ա, Երուսաղեմ, 1935, էջ 15, 41—75։

** Վերջին տողերը գրված են նույն ժամանակ այլ գրչի ձեռքով։

*** Համմտ. Գ. Հովսեփյան, նշված աշխատությունը։

ժգ

Տէր Աստուած գթայ ի հոգի Ռիմանոսին ծառայի քո, ամէն։

ժդ

Հոգի սուրբ Աստուած գթայ ի հոգին Իպատոսին ծառայի [քո, ամէն]։

ժե

11ա *Տէր Յիսուս ողորմեա Սա[հա]կ[ա]յ, ա[մէն]։*

ժզ

Աստուած իմ Յիսուս, ողորմեա մեղուցեալ ոգւոյս, ամէն։

ժէ

15ա *Տէր Աստուած ողորմեա Մարգարէին՝ գրչի եւ նկարչի, եւ Սահակա ստացողի, եւ ծնաւղաց իւրեանց, ամէն։*

ժը

17ա *Քրիստոս որդի Աստուծոյ, ընկալ զքո սուրբ ղԱւետարանս ի սնապարուէս Սահակայ իբրեւ զխէրեւէշն այրոյն եւ ողորմեա ինձ[ձ]։*

ժթ

Առաքել *ծառայ Աստուծոյ**։

ժէ

Ստացող՝ Սահակ
Գրիչ՝ Յովաննէս
Վայր՝ (Արջուառճի վանք)

357ա *Աստուածեղէն եւ լուսաւոր մատենագրութիւն չորից աւետարանչաց համաբարբառ եւ զուգապէս միաւորութեամբ, զոր նկարագրեցին վասն տնաւրէնութեան բանին Աստուծոյ, ըստ քառահոլով վտակացն Ադինա՝ աղբեւրաբար գետահետեալ, ոռոգելով զանդաստանս մտաց հաւատացելոց ի Քրիստոս, որով համաբոլոր եւ բովանդակապէս որքան կամ եղեւ Հոգւոյն Սրբոյ զամենայնն խորհուրդ զծածուկսն եւ զյայտնիսն արձանացուցին, տալով եկեղեցւոյ աւանդ աստուածատուր զբարձրագոյնսն եւ զխոնարհսն տրնաւրինաբար խառնմամբ, զոր ընկալեալ ի վե-*

* *ժ—ժա հիշատակագրութիւնները գրված են համաբարբառի խորանների լուսանցքներում՝ համապատասխան անձանց կանգնած դիրքով նկարված պատկերների մոտ՝ թանաքով, ժր—ժղ հիշատակագրութիւնները՝ խորանների գերանների վրա, ներկով, ժէ-ն ստորին գերանից ցած՝ թանաքով, վերջին՝ ժը—ժթ-ն՝ հասակով մեկ կանգնած Քրիստոսի աջ և ահյակ կողմերում, Սահակի և Առաքելի նկարների վերևում։*

րուստ յայտնութենէն, գոեցին առանձնապէս եւ զուգաբարբառ, որպէս զի յանցնիւրսն ժամանակ անթեղի եւ աննիւզ, բազմապատիկ եւ զանազան երախտեացն Աստուծոյ լիցի առ մեզ յիշատակ մինչ ի վախճան։ Որում այսպիսւոյ յոքնապատիկ բարեաց բաղձացող եղեալ իմ ամենա-
357բ նուաստի եւ տրուպ սպասաւորի տան Աստուծոյ Սահակ կրաւնաւորի‖և յետին քահանայի, որ էի աշակերտ սուրբ ուխտիս Հաղբատայ, ազգաւ եւ տոհմիւ ի մեծ մայրաքաղաքէն յԱնւոյ, սնեալ ի սրբաբան ուխտիս ի Հաղբատ, ստացայ զսուրբ Աւետարանս իմովք արդեամբք, առ ի յիշատակ ապագայից ինձ՝ նուաստիս Սահակայ, և ծնողացն իմոց Ռովմանոսին և Կատայինն, և երկուց հարազատ եղբարցն իմոց Իպատոսին և Աւոաբելին, և իւրեանց զաւակաց, և քերցն մերոց, և զաւակացն նոցուն, և աղգայնւոցն ամենից՝ կենդանեաց և մեռելոց։

Եւ եւս գծագրել զսա և կազմել ներքոյ և արտաքոյ յաւրինուածով ըստ իմում կարի, մեծաւ յուսով և կատարեալ սիրով, որ և աղերսական մաղթանաւք հայցեմ ի սիրողացդ Աստուծոյ, որք ժառանգորդք եք սրբոյ եկեղեցւոյ և սպասաւորք տէրունեան խորհրդոյն, յորժամ առնուք զսա ի ձեռս ձեր, յիշման արժանի արասջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զիս՝ զՍահակ ստացող սորա, և զվերագրեալ ծնաւղսն իմ, և զեղբարսն, և զՍարգիս հոգևոր ծնաւղն իմ, զՅակովբոսն և զՎարդն, որպէս զի ձերոյին սուրբ աղաւթիւքդ արժանասցուք հանդիպել ի դէպ ժամանակի հանդերձելոցն բարեաց*, սլատրաստելոցն ի Քրիստոս սիրելւոյն անուանն իւրոյ։

Եւ արդ, գրեցաւ սա և ծաղկեալ կամեցաւ յամի յորում էր թիւ համարոյ թուականութեանս Հայոց հարիւրոց վեցից և նուիրքանեանց տասանց (1211), իսկ նորոյս շրջանի միոյ հարիւրոյ քսան և ութեակ թուով (1211)**, ի սուրբ ուխտս Հաղբատայ գծագրեցաւ ձեռամբ Յակովբայ, յառաջնորդութեան տեառն Յոհաննիսի սրբասիրի, ի թագաւորութեանն Հայոց արևմտային կողման Լեռնի քրիստոսասէր և յաղթող թագաւորի, և մերոց կողմանցս և վրաց՝ Գեորգեայ թագաւորի, և ի սպարապետութեան Զաքարիայի շահնշահի, յորոց յաւուրս ժամանակաց յոլովս կատարեաց Աստուած յաղթութիւն ի բազում տեղիս, զորմէ այլք պատմեցեն յայլ ինչ։

Եւ մեզ վասնզի խնդիր է առ սրբութիւնդ մատուցանել մաղթանս ոգեհեծ պաղատանաւք, ո՛վ լուսերամ բնակիչք սրբոյ ուխտիդ Արջուառնի, առ որ զլոյս հաւատոյ մեր եղեալ, զբովանդակ գոյք ծնողաց մերոց և եղբարց ծախեցաք և շինեցաք զաստուածաբնակ սուրբ եկեղեցիքս, և աւանդեցաք զսուրբ Աւետարանս յԱստուծոյ սուրբ եկեղեցիս, որ շինեցաւ ի մէնջ ի վանս Արջուառնի, որպէսզի սուրբ եկեղեցեաւս և սուրբ
360բ Աւետարանաւս մեք և ծնաւղքն մեր և եղբարք և ազգականք գտաք‖ողորմութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, ի մեծ և ի սոսկալի աւուրն դա-

---

* Կաղմելիս հիշատակարանի երկու թերթերի միջև երկու այլ թերթ է դրված՝ 1223 թ. ստացողների հիշատակարանից։

** Սարկավագի թվականով է հաշվված. 128+1083=1211։

տաստանի՝ եւ որք յիշէքդ զմեզ բարեմտաբար, գոչիք և դուք ողորմութիւն յամենեցունց արարչէն, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Հրամանաւ հաւր Միխթարայ կաղմեցաւ ի վանքս Հոռոմոսի, որոյ ողորմեսցի Քրիստոս Աստուած։ Ջկազմող սորին զԱբրահամ, և զնկարիչ սորին զՄարգարէն, և զողորմութեան խնդրողս զՅովանէս յիշեսչիք յաղաւթս վասն Տեառն աղաչեմք։

35

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 5554

Գրիչ՝
Վայր՝ [Անի] Բեհենց վանք

ա

278 Փառք անսկզբնական բանին Աստուծոյ ընդ Հաւր իւրում եւ Սրբոյ Հոգւոյն այժմ եւ յանսպառ յաւիտեանան, ամէն։

բ

85ա Այս կտակ աստուածախաւս սուրբ ուխտին է Ջաբեւնանի, Տէր Աստուած ողորմեսցի ստացողին, ամէն։

գ

143բ Աստուած Հայր, խնաեա յիս եղկելիս։

դ

Ծաղկող՝ Տիրացու

1բ [Ջեղ]բայրիկն...։

ե

4ա ՋՏիրացու [դ]րի[չ]։

զ

5ա Սիմէոն ք[ա]հ[անա||յիշեա]։

է

զի վերստին նորոգեց Աւետարանս ի ձե[ռ]ն Տ[ի]րաց[ուի]

ը

8բ Եղբա[յրիկ]

թ

Եղբայրիկ զհայր Բեհենց վանից յիշեցէք յաղաւթս։

ժ

[Խա]չ[այ]առ եղբայր մեր յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր, [աղ]աչեմ։

ժա

Գրիչ՝ Սիմէոն

7ա Զմիակեցն զՍիմէոն, որ բնակէր յանապատի, յողորմիս յիշեցէք, ամէն*։

ժբ

Վայր՝ Զաբեւեանի ուիւա

278ա Գրիգոր ստացող սուրբ Աւետարանիս,-և զամուսին նորին, և որդիս նոցին յիշեսջիք ի Քրիստոս։ Ընդ նմին և զՍիմէոն կրաւ[նա]ւոր պատճառ գործոյս, և զառաշնորդք Սուրբ ուխտիս Զար<է>ևեանէ՝ զնպիսէ հայր, և զվարդան փակակալ, և զեաչայաուր գործակից, զՍտեփաննոս, և զՂուկաս, զվարոս միայնաւոր, և զայլ համաւրէն միաբանք Սուրբ Նշանիս, որում սուրբ Աւետարանս է խայրի և ընծայ, աւանդեալ ի վերադրելոցս։

Եւ մի ոք իշխեսցէ դրժել զսա ի Կաթողիկէէս և ի Սուրբ||Նշանէս, զի մի պատժեսցի սոցունց, այլ և զզարդարիչք սորա զՍթալիկ աղախին Քրիստոսի և ղ** անմոռաց յիշման արժանի արասջիք, ընդ որս և դուք ընկալջիք մասն բարի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ են աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

ժգ

Նվիրող՝ Գրիգորէս

[Ե]ս Գրիգորէս և [ամուս]ին իմ [և///]նաւ տուաք ի հ[աչ]ալ արդեանց մե[ր]ոց ի գինս սուրբ Աւետարանիս դահեկան և որ[ք կ]արդայք մեղաց[թո]ղութիւն խնդր[եցէք ի]Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, [որ է աւրհնեալ]յա[ւիտեանս]||մեք խոստացայ[ք] /// առնել։

ժդ

Կազմող՝ Վանական

2ա Յիշեսջիք և զՎանական կազմող***։

ժե

2ր Յիշեա Քրիստոս Աստուած զբնակիչք սուրբ ուխտիս Զաբեւեանի, որ հանգուցին զկեանս իմ լի դառնութեամբ****։

---

* Դ—ժտ հիշատակագրությունները գրված են խորանների գերանների վրա և մեծ մասամբ լվացված-ջնջված կամ ներկը թափված է։ Զ և ը անունները գրված են գլխազարդերի վարդյակների մեջ։ ժա-ն գրված է խառը ծածկագիր-խծբծանքով, որի վերին գերանի վրա՝ հունատառ ծածկագրություն է. վերծանել չհաջողվեց։

** Անունը ջնջված է։

*** Գրված է խորանի ստորին գերանից ներքև։

**** Թվում է նույն անձնավորությունն է գրել խառը գրությամբ։

ժզ

Միաբանող՝ Գրիգոր*

3ա Ես՝ Վարդայշաճա որդի Գրիգոր ու ամուսին իմ՝ Բակուլ միաբանեցայ Սուրբ ուխտիս Զա[ր]ևաճու Սուրբ Նշանիս, և ետու ղանկակս ի հալա[լ] արդեանց իմոց, և ետ[ուն ս]պասաւորքս պատարագ ԺԵ (15) աւր ի տարին, Ե (5) աւր Աստուածածնին Թխիկն, Ե (5) աւր (Յ)այտնութեան Գրիգորու, Ե (5) աւր Զատկին Վարճամայ, ու ղկենդանիքն յիշեան յաղաւթս՝ Զթուրանն և Երանշան ու Սուլթան և զՄամաստին, և որշաք մեք կենդանի լինիք[շ]՝ ննջեցելոց ա[ր՞ր]հնենք /// յիշենք, մեզ /// որ /// խաբան ծնողից /// յիշողացն և յիշեցելոց առ հասարակ ողորմեսցի, և նմայ փառք յաւիտեանս, ամէն**։

36

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 784 (պահպանակ)

Նվիրող՝

Վայր՝ Հաղբատ

[Վա]րդապետս /// ընծայեցի [ղա]յս ի սուրբ Կաթ[ողիկէս Հ]աղբատա /// մեր ամենեց[ուն] /// դ ով ուսմն /// թու ՈԿ (1211)***։

37

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 987

Գրիչ՝ Հայրապետ

Վայր՝ Սաքաստիա

ա

Փառք ամենասուրբ Երրորդութեանն յաւիտեանս, ամէն։

Յամի վեցհարիւրորդի վաթսներորդի (1211) թուականիս եղեւ աւարտ աստուածեան մատենիս սուրբ Աւետարանիս, ի խնդրոյ հաւր Յովանիսի եւ Բարսղի վանաց վանականի՝ սուրբ եւ ընտրեալ կրաւնաւո-

---

* Գրել է շղագրով։

** Տարեթիվը հայտնի չէ. տեղադրում ենք Հազրատի Ավետարանի հիշատակարանին կից, որը նկարազարդված է նույն Բեխենց վանքում, Եղբայրիկի առաջնորդության ժամանակ։

*** Վարդապետի ով լինելը հայտնի չէ, բայց հայտնի է նրա նվիրած մատյանը։ Մագաղաթյա այս թերթը պարունակում է Աստուածաշնչի Թուոց գրքի, ԼԶ գլխի 3-րդ տան կես հատվածը («Ի վինակէ ժառանգութեան մերոյ բառնայցէ»)՝ մինչև վերջ։ Երկրորդ էջի ստորին մասում, մեծ գրերով, գրված է «Թիւք», իսկ նրա ձախ մասում՝ սույն հիշատակագրությունը։ Ուրեմն ձեռագիրը եղել է «Հնգամատեան», որի թերթերը 1641 թվին արդեն օգտագործվում էին որպես պահպանակ։ Մյուս պահպանակը այս թերթի զույգն է։ Պահպանակը VIII դ. հնության ունի։

րաց։ Սոքա ցանկացաւղ եղեալ սուրբ Աւետարանիս, պատրաստեցին
313ա զնիւթն եւ ոչ ժամանեցին մինչեւ գիծ,‖այլ փոխեցան մահուամբ ի
Քրիստոս, որոց յիշատակն նոցա կայ եւ մնա յաւիտեան։

Եւ ետ մահուան նոցա՝ կալեալ զաթոռ հայրապետութեան Ներսէս քոյրորդին նոցա, որ էր հրեշտակ ի մարմնի, եւ մարմնով ի տեսիլ սերովբէի, ըստ ընտրութեանն Երեմիայի, մաքուր յորովայնի եւ ճգնող յանապատի։ Սա մեծափափագ սիրով եւ յաւժարական մտաւք գտեալ զոմն աշխարհական Խաչտուր անուն, եւ տուեալ նորա յինչից իւրոց մասն ինչ՝ բաժին հոգւոյ իւրոյ վասն ողորմութեան Տեառն։

Եւ ետ բազմաց ժամանակի ինչ անցանելոց, եղեւ այր մի իմաստուն եւ բարի, շարժեալ ի Հոգւոյն Սրբոյ Յեվանենէս անուն*, եւ պարոն Ուհան, եւ Պապխան, այր‖իմաստունք, բարերարք եւ բարեմիտք, բարեսէրք առ ամենեսեան, բարի ծնաւղաց հարազատ որդիք, կամ եղեւ նոցա ամենայն հոգեւոր սիրով կատարել զոր ինչ պիտոյ է սուրբ Աւետարանիս։ Եւ տուեալ յոսկոյ եւ յարծաթոյ իւրեանց, կատարեցաւ մինչև ի վերջին գիծն, ի յիշատակ իւրեանց, եւ այնոցիկ ոյք աւգնական են լեալ սուրբ Աւետարանիս, զի սա է գանձ հոգեւոր. լաւ է զսա ստանալ, քան զմեծութիւն աշխարհի։

Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Հայրապետի նուաստի քահանաի ըստ աշխարհի, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Սուրբ Սարգսի զաւրավարին, որ յանուն սոցա կանգնեցաւ սուրբ եկեղեցիս ի քաղաքիս Սեբաստիա։

314ա Արդ, ի հայրապետութեանն ոչ գիտեմ ասել եթե զում գրեցից անուն, այլ ասեմ թե երից հակառակաց՝ տէր Յովհաննիսի, տէր Անանէի եւ տէր Դաւթի, իսկ ի մերում դիտապետութեանս՝ տէր Գրիգորի սուրբ եւ ընտրեալ եպիսկոպոսի, որ է հրեշտակ ի մարմնի, եւ զարմ մեծի եւ հռչակաւոր վարդապետի, որ յաւուրսն իւր իբրեւ զարեգակն ճառագայթեաց յաշխարհս մեր։

Արդ, գրեցաւ սա յանուն** Սուրբ Աստվածածնի եւ Սուրբ Գրիգորի լուսաւորչին, որ կոչի վանք Փուրընդայի, ի հայրապետութիւն Գրիգորի եւ եղբաւր իւրոյ Վրթանիսի*** սուրբ և ընտրեալ կրաւնաւորաց, ի վայելումն իւրեանց եւ միանձանց, եւ ի յիշատակ այնոցիկ, որք աշխատութեամբ եւ արդիւնաւորութեամբ աւգնական են լեալ։

314բ Եւս առաւել յիշեսջիք ի տէր զԽաչատուր քահանայն ըստ աշխարհի, եւ զԳրիգորէս քահանա, եւ զծնաւղսն նոցա՝ ղփոխեցեալսն ի Քրիստոս։ Արդ, որ միանգամ յայսպիսի յաստուածատուր եւ յաստուածահրաշ սեղանոյս վայելէք, եւ վայելելոց էք, նորածին մանկունք նազելի մաւրն Սիովնի, ըստ [յ]իւրաքանչիւր ախորժակացն պիտոյից՝ յընթեռնուլ ի բժշկութիւն, յուսանել, յաւրինակել, զի սկզբանէ զվերագրեալ աշխատաւորքդ ի սմա ղփոխեցեալսն ի Քրիստոս եւ զարդիս, եւ զմնացեալսն

---

* Այլ թանաքով և շղագրով շարունակել են «և Բախաես եղբայ[ր]», իսկ մյուս տողի սկզբում՝ «պատրոն Սարգիս»։

** Նախորդ գրութեամբ այստեղ ավելացված է «և Սուրբ Փո[կ]չինն»։

*** Անվան սկզբի մասը շնչված է գրչի ձեռքով և վերևում գրված «Վրթան[իսի]»։

ի մարմնի, յիշեսջիք ի Քրիստոս՝ արժանաւոր յիշատակաւք, եւ զսպասաւորս մեր, եւ զծնաւղսն իւր եւ զեղբարսն յիշեսջիք ի Տէր։ Իսկ Աստուած, որ մեծ եւ առատ է յամենայն ձիրս պարգեւաց, ողորմած եւ աննախանձ, ամենեցուն առհասարակ ողորմեսցի, ամէն։*

Բ

Տէր Աստուած ողորմեա Վասլին *հոգոյն* Ապլասթացոյն, *որ աւգնական եղեւ եւ աւարտեաց զսայ։*

118բ *Ո՛ գիր, որ մնաս,*
է ձեռն, որ հողանաս։

Գ

Նկարող՝ Յոհանէս

234բ *Զ[մեղաւ]որ* Մ[ա]ր[ի] *որդի* Յոհա[ն]է[ս]
*ն[կ]ա[ր]աւղս յիշեցէք**։*

38

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ ԻՆՔՆԱԿԱԼԱՑՆ ՀՌՈՎՄԱՅ

Զարբհանալյան, Թարգմանութիւնք նախնեաց, էջ 627—648

Թարգմանիչ՝ Հեդի
Վայր՝ ի վերայ ծովու, ի նաւարկութեան

ա

Ֆիլիպն՝ *եղբայր սորա և* Ատղ՝ *ընտանի և հակառակ սորա։*

Ի սոյն ամի սպանաւ Ֆիլիպն *յիշխանէ ումեմնէ և մնաց ինքնակալութիւն* Ատղին, *առ որ ճանապարհորդեմ ես՝ նուաստ* Հեդի՝ *հրեշտակութեամբ ի թագաւորէն մերմէ* Լեւոնէ, *առ վերոյգրեալ կայսրս* Ատղ: *Եւ ի վերայ ծովու՝ ի նաւարկութեանս մերոյ թարգմանեցի զսա ի հռովմէականէն ի մերս՝ ի թուին Հայոց ՈԾԹ (1210)։*

Իսկ արարեալ մեր առ ոտս նորա ամ մի և ամիս երեք, դարձոյց զմեզ հարկօք առ թագաւոր մեր, արձակելով ընդ մեզ և թագ արքայական բազմածախ և բազմագին՝ յականց պատուականաց և ի մեծագին մարգարտից ընդելուզեալ։

Զոր բերեալ մեր մեծաւ ուրախութեամբ՝ ընկալաւ թագաւորն մեր և պսակեաց ընդիր պսակաւն գեղեցիկ զՌոբին, որդի դստերն եղբօր իւրոյ

---

* *Այստեղից հետո մինչև վերջ, ստորին լուսանցքի երկարությամբ, գրված է Բ հիշատակարանը. նույն թանաքով, ինչ վերին ծանոթագրությունները։*

** *Գրված է երկաթագրով ազատ էջի ստորին լուսանցքում։ Ներկը թափվել է և առանձին տառահետքեր են մնացել։*

Այգ նույն գրով են գրված նաև ավետարանառաջներն ու ընթերցվածների առաջին տողերը, որոնք սկսվում են Հովհաննեսի գրած գեղեցիկ զարդագրերով։

և որդի բրինձին Անտիոխայ Ռէմդին՝ ի թուին Հայոց ՈԿ (1211), ի տօն Սուրբ Աստուածածնին, յաւդոստոսի ԺԵ (15)։

Եւ թագաւորէ ընդ իւր՝ Հայոց, ի կամս Աստուծոյ։

Բ

Շարադրութիւն հայրապետացն Հռովմայ

Ինունցունց Գ, որ այժմ հովուէ, առ որ յառաշեալ երթամք հրեշտակութեամբ ի թագաւորէն Հայոց ի Լեւոնէ, ես՝ նուաստ Հեղի, որ և թարգմանեցի զսա ի հռովմայականէն ի մերս, յորժամ էաք նաւարկեալ մերձ յաշխարհն Բոյլաց, որ կոչին Լունկուպարտ, յաւուր պէնդակոստէիս՝ ի յունիսոյ ի հինգն, և ի թուականիս Հայոց ՈՄԹ (1210), ի փառս Քրիստոսի Աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

39

ԱՂՕԹԱԳԻՐՔ

Երևան 7

Գրիչ՝ Քր[իստոսատուր]
Վայր՝ Միծոռանքար անապատ

ա

126բ Ի վեցից հարիւրից եւ յոթեղից մի եւ ի տասն համարուց (1211), ի սպառել գարուց եւ ի նուազել ժամանակաց, ի ժամանակի վերջին, գրեցաւ տառս աստուածաշունչ հոգեւոր վարդապետին մականուն Սարկաւագի՝ Յոճաննէս կոչելոյ, ի պատճառս աղաւթից կրաւնաւորաց, ձեռա[մբ] մեղապարտի եւ յոգնամեղ գրչի Քր[իստոսատուրի], ի գաւառս Առանի Պաղին, ի սրբափայլ լերինս Հայր Մակար կոչելոյ, յանապատս դժուարայրկ Միծոռանքար կոչելոյ, ի ծերպս եւ ի քարանձաւս վիմաց, առ ոտն սրբոց չորեց ի տրանաց*։

Արդ, որք կարդայք եւ շահիք, զմեզ յաղաւթից մի մոռանայք, եւ Տէր եղիցի ընդ մեզ։

Բ

28ա Ո՛վ սուրբ եղբայր առաքինի,
Յիշման արա զիս արժանի,
Երբ արտասուս քեզ հանդիպի։

Գ

65բ Ընթերցող եղբայր, յիշեա և մի առներ անփոյթ։

Դ

99ա Զվաստակեալս մեղաւք յիշեա, եղբայր,

* Գուցե՝ չորեց [ա]վե[տ]տրանա՞ց։

40

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, պատառիկ 907

Գրիչ՝

Փառք համագո Սուրբ Երրորդութեանն յաւիտեանս, ամէն։

1ր *Ի թուականութեանս Հայոց ի ՈԿ (1211) եղեւ աւարտումն սուրբ եւ լուսերանկ, սրբարար եւ մաքրազարդ, յորդահոս, ծայրածաւալ, հրահոսան չորեք վտակեան գետիս աստուածայնո, առ ի յարբուցանել ղոլորտս տիեզերաց։*

Այսմ քաղցրա<ա>համ վտակաց ցանկացող եղեալ պատուական կրաւ[նաւոր]...

41

ՋՈՐՔՔՏԱՍԱՆ ԹՂԹՈՑՆ ՊԱՒՂՈՍԻ ԳԷՈՐԳԱ ԿԱՂԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Երևան 1320

Գրիչ՝ Բարսեղ

ա

10ա Ո՛վ աստուածասէր ընթերցող և իմաստուն, մի հայիր ի խոշորութիւն գրոյս, այլ ի շահն, և ըստ այնմ չափոյ յիշեա ղաշխատող սորա։

բ

167բ Ջստացող սորին զՊետրոս վարդապետ յիշեա, ո՛վ ընթերցող։

գ

392ա Ողորմեա Աստուած Բարսղիւ գրողի սորա և ստացողի սորին, ամէն։

դ

Կազմող՝ Պետրոս

397ա ...ին Զաքարիայի և Իւանէի, որով փոխեցաւ ի Քրիստոս Զաքարիայ և սուգ մեծ եղեալ Հայաստան եկեղեցեացս։

Արդ ես յոքնամեղս Պետրոս արտասուալք եւ ոգեհեծ պաղատանալք անկանիմ առ ոտս ձեր, յիշել զմեզ ի սուրբ յաղաւթս ձեր, եւ խնդրել ի Քրիստոսէ զթողութիւն մեղաց մերոց, և ուր և վիճակեսցի կատարել զյիշատակս մեր պատարագալք անարատ գառինն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի, և առհասարակ յիշողացդ և յիշեցելոցս ի գիրս ողորմեսցի մարդասէրն Քրիստոս, որ է աւ[ր]հնեալ յաւիտեանս, ամէն, ամէն։

Կազմեցաւ ձե[ռամբ] իմով Պետր[ոսի ան]արժան կրաւն[աւոր] քս։հանայ[ի]*։

---

* Ձեռագիրը կազմվել է Զամարիա սպասալարի մահվան տարին՝ 1212 թ.։

42

ՔԱՐՈԶՔ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՅԳԵԿՑԻՈՅ

Երուսաղէմ 936, Ն. Պաղարյան, Ցուցակ Գ, էջ 478 (1703 թ.), Երևան 638 (1771 թ.)

Հեղինակ՝ Վարդան Այգեկցի
Վայր՝ Այգեկ անապատ

293բ Ես ողորմելիս Վարդան, տգէտս ի գիտնականաց եւ անմանս ի կարգաւորս, գրեցի զայս աստուածաբնակ տառս ի խնդրոյ աստուածասէր իշխանին պարոն Պաղտինին, որ է աղն թագաւորին, եւ աղաչեմ անմեղադիր լինել գրիս ախմարութեան, զի այս էր կարն մեր, եւ որչափ հասու եղեւ միտք մեր, ողորմութեամբն Աստուծոյ ժողովեցաք յօրինացն Աստուծոյ եւ եդաք ի սմա, եւ այս յոյժ ծանր եղեւ մեզ, զի երկու ամ է, որ ի զբաղումն աշխարհի էաք, եւ ոչ յընթերցումն գրոց. քանզի բուռն է կարիք մարմնոյ, յորժամ պակաս է, Զի հալածական եղաք ի բնիկ ժառանգութենէ մերմէ՝ յերկրէն Կիւրիսոյ եւ ի գաւառէն Տրլոյ* եւ եկաք յԱյդեկս: Եւ Աստուած ի բարի յաջողեաց զամենայն գործս մեր, եւ զպէտս մարմնոյ:

Իսկ ի հին ուսմանէ յիշեալ հաւաքեցի զսա, եւ յորժամ սկսայ ի սա, եւ կատարեցի զսա յաստուածաբնակ ցանկալի անապատս յԱյգեկս՝ ընդ հովանեաւ աստուածընկալ եւ հրաշազան սրբոցս՝ Սուրբ Սիոնի եւ Սուրբ Կարապետի, եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Կոստանդեայ սրբասնեալ եպիսկոպոսի, մատաղ հասակաւ նորընծայ գոլով յաստիճան ժամանեալ յառաքելական էր թոռական Հայոց ՈԿԱ (1212), էր թագաւոր Հայոց Լեւոն Ռուբինեանց ի Կիլիկիայ՝ քրիստոսապսակ եւ ահարկու ի վերայ անօրինաց:

Եւ էր ի վերին հայք անուանի**, եւ զօրավար հալածիչ անօրինաց:

Եւ է ԻԴ (24) ամ, որ գերեալ է յանօրինաց Երուսաղէմ, եւ բարձաւ թագաւորութիւն Յունաց, եւ ազգն արիական առին զԿոստանդնուպոլիս: Եւ յայսմ ամի փոխեցաւ տէր Դաւիթ, որ կալաւ զկաթողիկոսութիւն սակաւ ամօք յԱբրակաղնին:

Եւ արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք զսա, աղօթս արարէք աստուածասէր իշխանին պարոն Պաղտինին, որպէսզի Աստուած ի խաղաղութեան պահեսցէ զնաւ հարազատ եղբարքն իւրօք, եւ թողութիւն շնորհեցէք ամենայն ննջեցելոց նորա, զի թողցէ Աստուած զյանցանս նոցա:

Յիշեցէք եւ զողորմելիս Վարդան, որ յարմարեաց զսա, եւ զծնօղս իմ, եւ զեղբարս, եւ զազգականս: Եւ որք յիշէք զմեզ, որ աստ գրեցան, յիշեսցէ Աստուած զձեզ, եւ ղննջեցեալսն ձեր ի բարի, եւ նմա փառք անզրաւ յաւիտեանս, ամէն:

---

* Յիշատ՝ «Տլմոյ»

** Մատենադարանի № 638-ում «եւ էր ի վեր հայք անուանիք», միտքն այն է, թե վեր էր բոլոր անվանի հայերից:

43
ԳԻՐՔ ՍՈՂՈՄՈՆԻ

Կյուլեսերյան, Ցուցակ Անկյուրիոյ, էջ 686 **Գրիչ՝ Ջուֆիաս**

Ա

424—26 *Փառք եռակի, եզակի աստուածութեան յաւիտենս յաւիտենից, ամէն։ Որ ետ զաւրութիւն անարժանիս աւարտել զսուրբ և յաստուածախաւս գիրս և զտառս իմաստութեան արքայի Սողոմովնի, որդւոյ Դաւթի մեծի մարգարէի։*

Ի Հայկազնեայ թուաբերութեանս ի վեց հարիւրորդի վաթսներորդի առաջնորդի (1212), յամի յոր ելեալ թագաւորն Հայոց բազմութեամբ քրիստոնէական զաւրաւք ի վերայ անաւրինաց, և պաշարեալ զնոսա, ի մա[յ]րաքազաքն Կապոդոկեցւոց Կեսարի, *մինչեւ հնազանդեցոյց զնոսա, և բազում շահաւք դարձաւ ի* Կիլիկիա: *Գրեցաւ սա ընդ հովանեաւ Սրբոյ Յով[հ]աննու Կարապետիս։*

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնուք կամ գաղափար առնէք զսա, զի յազնիւ աւրինակէ է, բոլոր սրտիւ յիշեցէք զթագաւորն Հայոց Լեւոն *զԼեւոն, և զստացողք սորա՝ զհոգեւոր տիկնայք՝ զտիկին* Շուշան *թագուհի և զքարի շառաւեղն իւր՝ զտիկին* Աւիծ. *և զամենայն ազգատոհմ իւրեանց՝ զկենդանիս և զհանգուցեալն, նաեւ զքարի բողբոջ բոյս իւրեանՙ զպարոն* Մաքինն, *և զծնաւղ իւր՝ զփոխեցեալն ի Քրիստոս։*

Արդ, աղաչեմ զի և զանարժան դծաւղս յիշէք Ջուֆիաս՝ *և խոշորութեան և սխալանաց անմեղադիր լերուք։ Եւ Քրիստոս զձեզ և զամենայն հաւատացեալս արժանի արասցէ իւր արքայութեանն, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն, ամէն։*

Բ

466 *Տէր Աստուած, քո սրբոց բարեխաւսութեամբ արա զսա յորդորիչ բարի գործոց և խորհրդոց հոգևոր տիկնա(ն)ցն և մանկանց եկեղեցւոյ, ամէն։ Աղաչեմ զամենեսեան զընթերցողք և զլսողքդ, անմոռաց յիշեցէք զստացողս սորա՝ զմատաղ զաւրավարն* Մաքին, *և զփոխեցեալսն ի Քրիստոս զծնաւղս նոցա, և զամենայն նախնիս, զոր Քրիստոս ի փառաց փառս փոխեսցէ, ամէն։ Աղաչեմ սխալանաց և խոշորութեան անմեղադիր լինել և յիշել զեղկելի ողի գծողիս, և Քրիստոս զձեզ և զամենայն հաւատացեալս իւր յիշեսցէ, որ է աւրհնեալ յաւիտեան, ամէն։*

Գ

Տէր Յիսուս Քրիստոս, ողորմեայ /// այ Աւիծի, *ամէն**։*

---

* *Ձեռագրի 687—689 էջերում եղել է հետևյալ ժամանակագրությունը.* «Ժամ (անակա) գիր՜ բառանց պարոն [Վահրամայ] *Համուսցոյն:*

Յանուն Հաւր և Որդւոյ և ամենախնամ Սուրբ Հոգւոյն, ամէն։

Ի թուականիս Հայոց ՉԽԵ (1296) և ի Փոքր թվին ի Ժ, յամսեանն դեկտեմբերի [Ժ], յաւուր երկուշաբթի յիրիկունն, յայգ լուսանալ երեքշաբթի, ի կէս գիշեր մաւտ... ծնաւ աստուածապարգեւ և մխիթարիչ անդրանիկ որդին պարոն Վահր[ա]մայ *որդոյն* Վահրամ *անուն նորին։ Եւ ըկնի նորին, ի նոյն գիշերս, ծնաւ բարի ղպտուղն* Կոստանդին...

Ի թուականիս Հայոց ՉԽԷ (1298) և ի Փոքր թվին [ԺԲ] յամսեանն աւգոստոսի, որ աւր Ժ... ծնաւ աստուածապարգեւ քաղցրուկ և երրորդ որդին պարոն Աւշնին՝ *պարոն* Վահրամայ *որդոյն...*

Ի թուականիս Հայոց ՉԽԹ (1300) և ի Փոքր թվին ԺԴ, յամսեանն աւգոստոսի, որ աւր ԺԻ էր ամսոյն... ծնաւ աստուածատուր և գեղաքոյս և երջանիկ մանուկն պարոն Աւշնին՝ *պարոն* Վահր[ա]մայ *որդոյն՝* Արեւգոյնն, *որոյ յաւազանէն անուանեցաւ անուն սորին* Ստեփաննոս, *և մականուն* Արեւգոյն *և* Ճափրի...»:

44

ԺՈՂՈՎԱԾՈ

Երեան 9857

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Սաղմոսավանք

226բ *Ի թվականիս ՉՃԿԲ (1213), ես Գրիգոր պիտականուն վարդապետս, որ սպասաւորեցի շինութեան վանուցս՝ եկեղեցեացս և ժամատանս, հրամանաւ և ծախիւք քրիստոսասէր մեծ իշխանին Վաչէի, և կանգնեցի զխաչս ի հանգստարանի իմոյ, քանզի անդառնալի ուղղոյն յիշատակ յաստեացս պարտեացս զայս գիր թողի, և ոք ընթեռնու իմովս բանիւ առ Աստուած կարդասցէ հանապազ խոստովանութեամբ, զոր գիրս ընդ մտացս և բանս ընդ հոգւոյս ղողորմածն Աստուած միշտ թախանձեսցէ իբր յանեղծ մաղթողէ աղերս ընկալեալ Քրիստոսի իմոյս ձայնէ։ Արդ որք ընթեռնուք, աղօթիւք զիս յիշեցէք*։

---

* Վաչե Բ Վաչուտեանցը՝ Սարդիս Քուրդ Ա-ի որդին, Զաքարէ սպասալարի կողմից կարգված էր Արագածոտնի, Շիրակի և Անբերդի վերակացու։ Սա ի թիվս այլ կառուցումների, 1215 թ. ավարտում է Սաղմոսավանքի Սուրբ Սիոն եկեղեցին, որի մասին թողել է արձանագրություն (տե՛ս «Ալբարատ», էջ 162)։ Հիշված Գրիգոր վարդապետը երկու տարի առաջ (1213 թ.) գրել է այս հիշատակարանը, հայտնի չէ թե որտեղ, բայց այժմ այն գտնվում է 1674—1698 ԹԹ. ընդօրինակված սուլն Ծողովածուի մեջ, իրար հետ կապ չունեցող բազմաթիվ նյութերի շարքում։

45

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Վենետիկ 137, Սարգիսյան, Յուցակ Ա, էջ 392—394

Գրիչ՝ Իգնատիոս
Վայր՝ Հատու քաո

ա

351ա Փառք անսկզբնական բանին Աստուծոյ ընդ Հաւր իւրում եւ Սրբոյ Հոգւոյն, այժմ եւ անսպառ յաւիտեանսն, ամէն։ Յոքնապատիկ հրաշիւք եւ գերապայծառ զարդուք պսակեալ ճոխացոյց զսուրբ Կաթուղիկէ եկեզեցի անպարագիծն Աստուած, յաւէտ պայծառագոյն քան զերկին՝ լցեալ ամենայն բարեաց ճաշակաւք իբրեւ զդրախտ աստուածատունկ պայծառափայլ դունովք եւ անուշահամ գեղեցկատեսիլ տնկովք զարդարեալ։ Ուստի որք ճաշակենն իմաստութեամբ մանրախոյզ քննութեամբ, քաղցրանայ ի քիմս նոցա առաւել, քան զխորիսխ մեղու ըստ ասացուին ձայնի։ Եւ սոքաւք տեղեկացեալ ատեսցէ զամենայն ճանապարհս չարաց։ Յայսոցիկ յանմահական պտղոց է եւ այս հրամանք Փրկչին որ տայ աւետիս ամենեցուն եւ հրաւիրէ զարժանացեալսն Սրբոյ Երրորդութեան։

Սակս որոյ ցանկացող եղեալ այսմ լուսաւորական եւ մեծագին մարգարտի եւ գանձի աստուածայնւոյ՝ երկու հարազատ եղբարքս Թադեոս եւ Հայրապետս՝ ստացաք զսա մեծաւ յուսով ի մեր արդար վաստակոց՝ առ ի յիշատակ բարեաց մեզ եւ կտակ անջնջելի առ Աստուծոյ։ Տուաք գրել եւ նկարել Իգնատիոս գրչի՝ ոսկւով եւ երանգ երանգ խառնուածով զարդարեալ, ի վանքս որ կոչի Հատու քաո, ընդ հովանեաւ Սուրբ Կաթողիկէիս եւ մեծահռչակ Սուրբ Նշանիս՝ Ամենափրկիչ կոչեցեալ, յառաջնորդութեան սուրբ ուխտիս՝ հեզի եւ ամենաբարւոյ Պատրոս վարդապետի, եւ այլ սուրբ եւ ճգնազգեաց եւ համակամ եղբարց, որոց ողորմեսցի Քրիստոս Աստուած, ամէն։ Ի տերութեան տեղւոյս Իւանեի, եւ ի կաթողիկոսութեան Հայոց տեառն Յովհաննիսի։

Եւ արդ ես Թադեոս յոգնամեղ ստացիչ սորա, ընծայեցի զսա խայրի տան Տեառն՝ մեծափառ քաւարանի իմոյ կայարանի սրբոյ ուխտի Հատու Թառու կոչեցեալ վանք, փարթամացուցեալ զպակասութիւն սեփհական ուխտի։ Արդ աղաչեմ զամենեսեան եւ հայցեմ պաղատանաւք սիրոյ ի ժառանգաւորաց սորա, յընթերցողաց եւ ի լսաւղաց, յիշել ի սուրբ յաղաւթս ձեր զիս զԹադեոս, և զՀայրապետ եղբայր իմ՝ կուսակրաւն քա-

հանայ, եւ զծնողսն մեր, եւ զեղբարսն, եւ զամենայն ազգականսն մեր։ Նա եւ զփակակալ սրբոյ ուխտիս զՅակովբ ընտրեալ քահանայ, եւ զՄարկոս ամենագովելի նպաստաւորն մեր սուրբ աղաւթիքն իւրով, եւ զԵղիայ սրբասէր քահանայ, եւ զԳեորգ, եւ զՎարդիկ ծերունի կրաւնաւոր, որ աղերսիւ հայցէ յիշել ի Տէր։ Եւ որպէս յիշէք՝ յիշեալ լիջիք եւ դուք յանսպառ ուրախութիւնսն, որոց երանի որք վայելենն, ամէն։

Այլ դու, ո՛վ բան բանին անդամս առեալ գրի, ահա ի քեզ իսկ են հայցուածք մեր, յաւուրն յորում պսակաւորքն ճոխան, եւ եղկելիքն նուաղին, որք աղքատութեամբ զամենայն զգոյս մեր ծախեցաք ի քեզ՝ եւ ակն ունիմք զի մասին արժանացուսցես փրկութեան, զի մի անաւգնական եւ անայցելու զմեզ գտեալ չարին՝ գերի վարեալ վաճառեսցէ ի կորուստ անգտանելի, այլ տեսեալ զմեզ ի քէն պաշտպանեալ, նկուն եղեալ՝ ամաչեսցէ, եւ մեքենաւոր ղաւրութիւն նորա՝ տկարասցի ի պահպանական աջոյդ Յիսուսի։ Զի թէպէտ եւ մեք անարժան, սակայն դու քաղցր եւ յաճախագութ ես առ ամենեսեան, եւ չկամիս զկորուստ ումեք, որպէսզի եւ մեք ողորմութեամբ քո ապրեալ, արժանի եղէց անարատութեամբ գալ ի կոչումն քո սուրբ։ Եւ քեզ ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյն սրբոյ փառք յաւիտեանս, ամէն։

Եւ գրեցաւ ի թուիս Հայոց ՈԿԳ (1214), ձեռամբ Իգնատիոս մեղաւորի։ Աղաչեմ յիշել ի սուրբ յաղաւթս ձեր զիս եւ զծնաւղսն մեր, եւ զԵղիայ վարդապետն, եւ զՄխիթար վարդապետն, նաեւ զՆերսես պատանի՝ աշակերտ Թադեոսի: Եւ որպէս յիշէք՝ յիշեալ լիջիք եւ դուք ողորմութիւնն Աստուծոյ, ամէն։ Արդ, որչափ ի սա գիր ստացաւղի սորա, այնչափ աւրհնութիւն յԱստուծոյ եւ յամենայն սրբոց նորա, ամէն։ Հոռոմոսի վանացն ոսկետուփ Աւետարանն եւ այս՝ մին գրչի է գրած։

Բ

268ա Զաստուածապատիւ եւ զմեծայնուն զվարդապետն Եղիա յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր, աղաչեմ։

Գ

92ա Բարեխաւս Իգնաաիոսի*:

46

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 7570

Գրիչ՝ Յոճաննէս

228ա Ի վեցհարիրերրորդի վաթսներրորդի երրորդի (1214) շրջագաութեան տոմարի Հայոց, ի հայրապետութեան տեառն Յոճաննիսի կորովամիտ

* Գրված է մանրանկար խաչի պատվանդանի վրա։

և խոհեմ առաջնորդի, եւ ի թագաւորութեանն Լեռնի որդոյ Սաեֆանէի, եւ ի սուլտանութեան Մելէքըլեաեբե, որ տիրէր Եգիպտոսի, եւ սուրբ տեղեացն՝ մայրաքաղաքին ամենայն տիեզերաց Երուսաղէմի, եւ Դամասկոսի, եւ Եդեսեա, եւ Մոփաց երկրին, Ղաթթա մինչեւ ի սինաւն Վրաց, եւ ի թագավորութեան Վրաց Լաշու, որ տիրէր Տպխեաց եւ Աճուց եւ այլ բազում քաղաքաց առաջին տանուտերացն Հայոց, Ալանաց եւ Աղուանից, ի Կարնոյ մինչեւ ի Պարս, եւ ի բռնակալութեանն որդւոյ Խաւարովշանին, որ տիրէր երկրին Հոռոմոց, Կեսարիոյ, Սեբաստոյ եւ Կաւսին, եւ այլ բազում մայրաքաղ[աք]աց, եւ Սիճոպին, մինչև ի ծովն Իբլեացոց, եւ ի թագավորութեանն Հոռոմոց Լաշքարո, որ տիրէր ծովեզերացն Ովկիանոսի՝ ի Սիճոպէն մինչեւ թագաւորեալ քաղաքն Կոստանդիանուպաւլիս, եւ սմա տիրէ ազգն Փռանգաց, խլեալ ի Հոռոմէն, եւ ի 228բ թագաւորութեանն Ասորւոց Եհաննաի, որ է ի Հեդիկս:

Ես Գրիգոր եպիսկոպոս եւ Կոստանգին քահանա արեանառու մեր, ստացաք զպատուական եւ զերաշխարհիկ եւ զտիեզերալուր մատեան սուրբ Աւետարանի(ս) Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, թագաւորին անմահի, ի վայելումն [ման]կանց եկեղեցոյ [եւ ի] յիշատակ հոգոց [մեր]ոց՝ զկնի ելից յաշ[խա]րհէ, եւ ծնաւղաց մերոց՝ ուղղորելոցն առ Քրիստոս:

Արդ աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք կամ աւրնակէք, յիշեսջիք առաշի Քրիստոսի զտէր Գրիգոր եւ զԿոստանդին քահանա՝ զստացողք սուրբ Աւետարանիս, եւ զեղբարսն մեր զ[հա]նգուցեալսն ի Քրիստոս՝ զԿարապետեան եւ զԳէորգ, եւ զծնողսն մեր, եւ Քրիստոս զձեզ յիշէ յիւր ողորմութիւնն:

Գրեալ եղեւ ձեռամբ նուաստ գրչի Յոհաննիսի սարկաւագի [Հոռո]մկլայցո, սնեալ եւ վարժեալ յաստուածապահ դզեկիս՝ հայրապետանիստ քաղաքիս Հայոց, ընդ որում շնորհեացէ զսա Քրիստոս ընդ երկայն աւուրս պատուական առաջն ///

47

ՄԱՇՏՈՑ

Վիեննա 230, Տաշյան, Յուցակ, էջ 704—705

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Ուռեթիլ

222ա ...սկսա եւ ողորմութեամբ նորին կատարեցի զաստուածապատում տառ Մաշտոցիս, ի թուաբերութեանս Հայոց ի ՈԿԳ (1214) ...յոքնախումբ եւ բազմավայելուչ ծաղկաւք եւ <եւ> անուշութեամբ, զոր բազմերջանիկ եւ երանելի հայրն մեր մականուն սորին սուրբ կտակիս Մաշտոց, որ յիւր անուն կոչեմք զանուն սորայ, որ բազում աշխատութեամբ ընթերցեալ յոլորտս աստուածային պատուիրանաց... կազմեաց բուրաստան ցանկալի եւ ճեմարան սրբազանից եւ հանգիստ եւ յուղարկող վախճանելոց...:

Արդ, այսպիսի գանձի շահաւետութեան եւ ական պատուականի եւ մարգարտի գեղեցիկ հետընթացեալ իմաստուն եւ ճարտասան վաճառապետ արուեստիս Կիւրակոս ոմն անուն ցանկալի եւ սարկաւագ լցեալ բարի արգասիւք եւ գործաւք առաքինութեամբ, ստացաւ զսայ իւրոյ սըրբութեանն ճեմարան եւ վայելումն կենցաղավարութեան իւրութեան (այսպէս) իւրոյ, եւ յետ դարձի յաշխարհէս կտակ եւ յիշատակ անջինջ առաջի Աստուծոյ, իւր եւ սրբասնեալ քահանայի հաւր իւրոյ եւ բարեպաշտի մաւր իւրոյ եւ համաւր[էն] ազգականաց իւրոյ, եւ յուսապատ պատանեօք հայցէ յամենայն սրբազան ընթերցողացդ յիշել յաստուածունակ աղաւթս ձեր...։

Արդ գրեցաւ սայ ի զարդ եւ ի պայծառութիւն եկեղեցոյ եւ ի վարժ նորավարժ ուսումնասիրաց, ի նահանգս Ուռհայոյ, ի գաւառս Շպղթան, ի հոյակապ եւ յականաւոր գիւղս Ուռեթիլ կոչեցեալ, ընդ հովանեաւ Սրբոյ Աստուածածնիս՝ յստոյգ եւ յընտիր աւրինակէ, որոյ շնորհեսցէ Տէր Աստուած վարձս բարեաց շնորհողի աւրինակին Վասիլ քահանայինւ եւ գրեցաւ ձեռամբ ամենամեղ եւ գերին գրչի Գրիգորոյ, ի ժամանակս որում բռնակալ էր անաւրինաց ազգին մեծն սուլտանն Մելիք Աշրափն, եւ հայկական ազգիս մերոյ քրիստոսապսակ թագաւորին Լեւոնի, որ բարեպաշտութեամբ իւրով ընդ ամենայն տիեզերս պայծառացեալ լինին եկեղեցիք եւ կարգք քրիստոնէութեան. որոյ տացէ Տէր Աստուած յաղթութիւն նմայ եւ հզաւր արասցէ...։ Աղաչեմ... յիշել դարձեալ յանուանէ զայս պատուականքս զԿիւրակոս սարկաւագ եւ զծնողսն իւր եւ զամենայն ազգայինսն իւր, եւ սոցայ ամենեցուն խնդրեցէք զթողութիւն մեղաց...։ Եւ զամենամեղ գծողս եւ զվարդապետն յիշման արարէք արժանի աղաչեմ։

Կիւրակոս առաջի Աստուծոյ Բ աւր ժամոյ պարտական է Թէոփիլէի հոգոյն, եւ Աստուած զվճարելն տայ իւր արժանաւորիլ, ամէն։

48

ՄԱՇՏՈՑ

Երեան 8139

Գրիչ՝ Ղազար
Վայր՝ ի լերին Սուրբ Լուսաւորչի

ա

113ա Քրիստոս Աստուած, աղաւթիւք եւ բարեխաւսութեամբ ամենայն սրբոց ողորմեա ստացողաց և աշխատողաց գրոցս, Ղազարու և Ասաուածատուրու նուաստ եղբարց, և Գրիգորի վարդապետի, և ծնաւղաց և եղբարց և քերց նոցուն, և ամենեցուն հոգւով ընդ նոսին միաբանելոցն։ Ջնջեա Տէր զձեռագիր յանցանաց նոցուն և արժանաւորեա մեծի ողորմութեան քում յահաւոր գալստեան քում, որ ես աւրհնեալ ընդ Հաւր և Սուրբ Հոգւոյն այժմ, և միշտ և յաւիտեանս։

Գրեցաւ ի լերին Սուրբ Լուսաւորչիս, մերձ ի հանգստարան նորին
113ր երանելոյ՝ յանապատի Սուրբ Երից մանկանց, ի դուռն սրբոյ վր||կայարանիս։

Աղաչեմք, որք ընթեռնոյք կամ ընդաւրինակէք, զմեզ ի սուրբ յաղաւթս ձեր յիշեսջիք, եւ Աստուած, որ մեծն է ողորմութեամբ, զյիշողդ յիշեցելովքս հանդերձ արժանի արասցէ երկնից սուրբ արքայութեան իւրոյ ընդ ամենայն սուրբս, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս, ամէն։

Բ

113բ Տէր Աստուած ողորմեա Ղազարու գրչի և վարդապետի, և Ասաուածատուրու եղբաւր հարազատի, և Գրիգոր վարդապետի, և ամենայն հաւատացելոց, ամէն։

Գ

Ի թուականիս ՈԿԳ (1214) գրեցաւ ի փառս Աստուծոյ ամենակալի։

Դ

112բ Որ կարդա զյիշատակարանս Տէր Աստուած ողորմեցի նմա, ամէն*։

Ե

145ա Տէր ողորմեա Ղազարու։

49

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երուսաղեմ 417, Պողարյան, ցուցակ Բ, էջ 366—367

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Մեծմար անապատ

Փառք քեզ միայնոյ սկզբանդ, եւ անսկզբանդ ընդ սկզբանդ, եւ սկզբնաւորիդ սկզբանց, երիցդ ի մի եւ միումդ յերիս, համագոյ տէրութեանդ, այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Շնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին յաւարտումն ածեալ կատարեցի զմատեանս տառից աստուածախաւս մարգարէին Եսայեա, եւ զգիրս առաքելոյն սրբոյն Պաւղոսի տիեզերաց լուսաւորչի եւ եկեղեցեաց Քրիստոսի պայծառացուցանողի, որ ընթերցեալ լինի յեկեղեցիս Աստուծոյ ըստ որում եւ առաքեալ ասի։

Զայս երկու գիրս նորոգեալ գրչութեամբ նուաստս եւ տրուպս յորդիս եկեղեցւոյ Գրիգոր, ի խնդրոյ հարազատաց պատուական եւ ընտրեալ եղբարց քահանայից Աստուծոյ Յոհաննիսի եւ Սահփանոսի, որ մեծաւ ցանկութեամբ փափագաւղ եղեալ սոցա յոյժ հարկեալ զմեզ ստացան զսա ի

---

* Այսպիսի հիշատակագրություններ կան նաև 143ր, 145ա էջերում։

վայելս կենաց իւրեանց, եւ յիշատակ անջինջ ինքեանց եւ ծնաւղաց իւրեանց, որ փոխեալ են յաստեացս, մանաւանդ հաւր իւրեանց Գեւորսի սուրբ եւ ընտրեալ քահանայի ննջեցելոյ, որում ողորմեսցի Տէր։

Եւ արդ, եղեւ զրաւ գրչութեան սորա ի թուականիս ՈԿԳ (1214) ՝ի կաթողիկոսութեանն Հայոց տեառն Յոհաննիսի, եւ ի թագաւորութեանն Լեւոնի՝ որդւոյ Սաեվանէի՝ որդւոյն Լեւոնի՝ որդւոյ Կոստանդեա՝ որդւոյ Ռուբէնի, որ տիրեաց զաւրութեամբն Աստուծոյ եւ խաղաղացոյց զաշխարհս իւր յամենայն շուրջանակ թշնամեաց, որում տացէ Տէր յաղթութիւն իսպառ, եւ կեանս երկայնս՝ առողջութեամբ եւ բարեկարգութեամբ։

Բայց գրեցաւ սա յանապատիս որ կոչի Մեծամար, ընդ հովանեաւ սրբոյ եւ փառաւոր եկեղեցւոյս որ յանուն Տիրամաւրն, եւ գերահռչակ սրբոց վկայիցս Պրոբոսի, Տարագոսի, եւ Անդրոնիկոսի, յառաջնորդութեան ուխտիս տէր Աստուածատուոյ՝ սուրբ եւ ընտրեալ եպիսկոպոսի, ի գաւառիս որ Մանուփ կոչի, եւ բարեպաշտ իշխանիս մերոյ Գեորգեա՝ իշխեցողի անապատիս։

Բայց սակաւ բանիւք պատմեցից վասն իշխանիս այսմիկ։ Սա որդի էր իշխանաց իշխանին մեծին Մլեհի, հաւրեղբաւորորդի թագաւորին Լեւոնի, եւ էր սա քաջ եւ յաղթող ի պատերազմի, առատաձեռն, առատասիրտ, բաշխաւղ աղքատաց, պաղեւատու զինուորեալ մարդոց։ Ապա աստանաւր ամաչեմ ասել զազգիս մերոյ զննգութիւն և ղըշար կարծիս առ իրեարս, որ ի սկզբանէ նախանձոտք եւ ընկերատեացք լեալ են։ Եւ մարդիկ ոմանք չարք եւ քսմոսք մտեալ առ թագաւորն ասեն եթէ ազգային քո Գեորգ հակառակ է թագաւորութեան քո; Մինչ զի աստուածասէր եւ բարեպաշտ թագաւորն ի ցասումն չարժեալ կալաւ զազգայինն իւր զմեծն Գեորգ, յափշտակեաց զամենայն ինչս նորա եւ եգ զնա ի բանդի ի դղեակ եւ յանառիկ բերդին Սիսոյ թագաւորաբնակ քաղաքին, եւ ի նմին աւուր խաւարեցոյց զաչս նորա, ի թուականին Հայոց ի ՈՄԷ (1208)։ Իսկ նա եկեալ խաւարեալ աչաւք ի հայրենաշէն վանս իւր, զոր հայրն իւր բարեպաշտն մեծն Մլեհ շինեալ էր՝ զհռչակաւոր անապատս Մեծամար եւ զմեծ եկեղեցին յանուն Տիրամաւրն, որում ողորմեսցի նմա Տէր բարեխաւսութեամբ Սրբոյ Աստուածածնին եւ սրբոց վկայիցս։

Իսկ Գեորգ թէպէտ եւ զլոյս աշխարհիս կորոյս, բայց երկնաւոր լուսոյն արժանի եղեւ տեսանելոյ շնորհաւքն Քրիստոսի, բազում ճգնութիւնս եւ ծնրադրութիւնս յանձն առեալ կրէ, եւ աղաւթից ստէպ կայ հանապազ ի տուէ եւ ի գիշերի արիաբար, կալով յաղաւթս առաջի [գե]րհռչակ վկայիցն։ Եւ յայսմ ամի շինեաց եկեղեցի ի վերայ քնարանի սրբոց եւ շինեաց պռաւպիլս առաջի դրանց սրբոց եկեղեցեացն, մաւտ ի դիրս սրբոցն, որ ի յունական կոչի դրան սրահ, եւ անուանեաց զնա իւր տապանատուն, զի ի վախճանին իւրոյ անդ թաղեսցեն զնա։ Այլ մեք յառաջիկայսն երթիցուք։

Եւ արդ աղաչեմ զամենայն որդիս եկեղեցւոյ, որք կարդայք եւ կամ աւրինակէք, յիշման աղաւթից արժանի արասջիք զստացաւղք սորա եւ զծնաւղսն իւրեանց եւ զբաւանդակ ազգատոհմն իւրեանց։

Այլ եւ զբազմամեղ գծողս աղաչեմ յիշել մեղաց թողութիւն, եւ խոշորութեան գրոյս եւ սխալանաց անմեղադիր լերուք։ Միայն ի սիրոյ համարձակեցայ տալ զանձն յայս աշխատութիւն։ Մի ոք եպերեսցէ զմեզ անգոսնելով, այլ ուղղեսցէ եղբայրաբար, զի մարդ ընդ տկարութեամբ անկեալ, եւ զբազում զբաղմամբ աշխարհիս փա /// ոչ համակ ի բերան ունելով զը ///։

50

ԱԻԵՏԱՐԱՆ

Երուսաղեմ 3257

ա

250 Զմեղապարտ գրիչս Կարապետ աղաչեմ յիշել ի Տէր, որք լուսաւորիք ի սուրբ Աւետարանէս, ո՛վ դասք սրբոց։

բ

402 Զմեղապարտ գրիչս Կարապետ աղաչեմ, յիշել ի սրբամատոյց յաղաւթս ձեր, ո՛վ սուրբ մանկունք եկեղեցւոյ սրբոյ։

գ

521 Փառք ամենասուրբ Երրորդութեանն և մի աստուածութեանն Հաւր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և...

Ստացաւղ սուրբ աւետարանիս զԿարապետ շնորհազարդ սարկաւագ և զծնաւղսն իւր յիշեսջիք ի Քրիստոս, ամենայն որդիք լուսոյ։

Ի թուականութեանս ՈԿԳ (1214)։

51

ՀԱՒԱՔՄՈՒՆՔ ԳՈՐԾՈՅ

Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 771—772

Գրիչ՝ Սաեփաննոս

102 Սրբազան և պատուական քահանայի Վարդանի Աստուած վայելեալ տացէ զդրեալս զայս։ Ի թուականութեան Հայոց ՈՃԿԳ (1214) գրեցաւ գիրքս այս ձե[ռ]ամբ Սաեփաննոսի անպիտան գրչի։ Արդ, որք աւգտիք ի սմանէ կամ աւրինակ առնոյք, յիշեսջիք զմեզ ի Քրիստոս Յիսուս, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Ընդ նմին և զստացող նորա Վարդան։

Խոշորութեան գրոյս մի մեղադրէք, և Քրիստոսի փառք յաւիտ[եան]*։

---

* Ձեռագիրը գտնվում է Լորենցինա Մեդիչյան գրադարանում։ Այս թվականին արտագրվել է Արիստակես Լաստիվերցու «Հայոց պատմութեան» մի օրինակ, որից 1840 թ., Հաղբատում արտագրվել է Մատենադարանի № 6457 ձեռագիրը։ Հին օրինակը գտնվել է Ջառների քարայրից։

52

ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌՔ ԴՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

Երուսաղեմ 94, Ն. Պողարյան, Յուշակ Ա, էջ 283—289

Գրիչ՝ Պետրոս
Վայր՝ Ակներոյ վանք

168ա Փառք, պատիւ և գոհութիւն ամենասուրբ Երրորդութեանն։

Շնորհիւ բարերարին Աստուծոյ կատարեցաւ լուսաւոր վարդապետութիւնս Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի, գիրքս որ կոչի Յաճախապատում, ի թուականութեանս Հայոց ՈԿԴ (1215), ի հայրապետութեան տեառն Յոհաննիսի Հայոց կաթողիկոսի, և ի թագաւորութեան աստուածասէր և բարեպաշտի Լեւոնի։ Գրեցաւ հրամանաւ հաւր Թորոսի, և յաւժարութեամբ ամենայն եղբայրութեանս, ի մեծ և հռչակաւոր անապատիս որ կոչի Անգերոյ վանք, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Առաքելոցս և աստուածընկալ նշանացս։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնուք և լուսաւորիք ի սուրբ վարդապետութեանցս, յիշելոյ արժանի արարէք զմեղապարտ և անարժան գրողս Պետրոս, և զծնողսն իմ, և զեղբարս՝ զկենդանիս և զհանգուցեալսն, և Աստուած որ առատն է՝ ողորմութեամբ իւրով հատուսցէ ձեզ, և մեզ ընդ ձեզ, ամէն։

Դարձեալ աղաչեմ զընթերցողսդ, սխալանաց և խոշորութեան և անյարմար դրելոյս չլինել մեղադիր քանզի ախմար էի, և այլ ոչ էի արարեալ, և յայս վասն ստուգաբանութեան աւրինակին համարձակեցա, աղաչեմ անմեղադիր լինել, և որ այսչափ եղեւ ոչ իմ կարողութեամբ, այլ շնորհին Քրիստոս Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեան։

Ողորմեսցի Քրիստոս Աստուած առաշնորդաց սուրբ ուխտիս, և ամենայն եղբայրութեանս և միաբանաց սոցա՝ մեծի և փոքու, ամէն։

Ողորմեսցի Քրիստոս Աստուած Պետրոսի և ծնողաց իւրոց, որ զըսկիզբն գրոցս արար, և գրեսցէ զանուն նորա ի գիրն կենաց, ամէն։

Ողորմեսցի Քրիստոս Աստուած Կիրակոսի և ծնողաց իւրոց, որ միամիտ յաւժարութեամբ աշխատեցաւ ի սմա. տացէ նմա Քրիստոս վարձս բարերաց յառատապարգեւ ողորմութենէ իւրմէ, ամէն։

Ողորմեսցի Քրիստոս Աստուած և կազմողի սորա և ծնողաց իւրոց։

Ողորմեսցի Քրիստոս Աստուած եղկելի գրողի սորա և ծնողաց իւրոց, և ամենայն աշխատողաց ի սմա, որ շատ և որ սակաւ։

Ողորմեացի Քրիստոս ամենայն հաւատացելոց, կենդանեաց և ննջեցելոց, և նմա փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

53

ՀԱՒՈՔ ՍԵԲԵՐԻԱՆՈՍԻ ԵՒ ԵՓՐԵՄԻ

Երևան 947

Գրիչ՝ Պետրոս
Վայր՝ Ակներ

Փառք ամենասուրբ երրորդութեանն, Հաւր եւ Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամեն։

161ա Յամի Վեցհարիւրորդի վաթսներորդի չորրորդի (1215) թուականութեանս Հայոց, գրեցաւ գիրքս Յաճախապատում լուսաւոր վարդապետութիւն եւ խրատք ոգեշահք, ազգի ազգի բժշկարանք ախտացելոց հոգով, ասացեալ սուրբ եւ երջանիկ Լուսաւորչին Հայոց Գրիգորի, ընդ նմին և ուղղափառ վարդապետութիւն ընդդէմ հերձուածողաց ազգի ազգի աւրինաւք, վկայութեամբ սուրբ գրոց սրբոյն Սեբերիանոսի ուղղափառ վարդապետի*, ասացեալ յաւգուստ և ի շահ ուղղադաւան եկեղեցոյ և ի կործանումն և յամաւթ չարափառ հերձուածողաց, ի գերահռչակ անապատս որ կոչի Ակներ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Առաքելոցս, հրամանաւ երիցս արանեալ հաւրն Թորոսոյ, և այլ միականամ և միախորհուրդ եղբայրութեանս, ձեռամբ Պետրոսի փցուն և անպիտան գրչի, ի թագաւորութեանն Հայոց Լեւոնի յաղթողի եւ բարեպաշտի, եւ ի հայրապետութեանն տեառն Յոհաննիսի Հայոց կաթողիկոսի։

Արդ, որք աւգտիք ի սմանէ, յիշեսջիք աղաւթիւք զհայրն Թորոս, և զմիաբանեալ եղբարսն իւր՝ զմեծամեծս և զփոքունս, զյառաջեալսն առ
161բ Քրիստոս, և որ այժմ են, և որ զկնի մեր գալոց են, զի զամեն||եսեան արժանաւորս արասցէ խոստացելոց բարութեանցն, զոր ակն ոչ ետես և ունկըն ոչ լուաւ։

Յիշեսջիք և զանպիտան անձն Պետրոսի գրչի, և զհարազատ եղբայրն իմ զՍիմեոն, և զծնողսն մեր՝ զհոգևոր և զմարմնաւոր, եւ զամենայն երախտաւորսն մեր, եւ որք յիշէքդ, յիշեալ լիջիք և դուք յողորմութիւնն Աստուծոյ։ Եղբարք, ամենայն ինչ փոխարէնք է, թէ դուք զմեղ յիշէք հաւատով, Աստուած նովին չափովն ձեզ հատուցանէ։

Բ

Կազմող՝ Ղոռբին

Մեղապարտ անձն Ղոռբինս կազմողի սորա, աղաչէ զձեզ, ով սուրբ եղբարք, ասել ցաւակցութեամբ, թէ Աստուած ջնջեսա զյանցանս Ղոռբինս եւ ծնողաց իւրոց, և Աստուած զձերն ջնջէ, և նմա փառք յաւիտեանս**։

---

* Լուսանցքում հետագայում այլ գրչով և թանաքով ավելացված է «զանուն Քոմ»։

** «Ըստ այս հիշատակարանի,— գրում է Գ. Հովսեփյանը,— ձեռագիրս... նախ պարունակում է Դր. Լուսավորչի վերագրված «Յաճախապատումը» և ապա՝ Սեբերիանոսի ճառերը։ Բայց

54

ՃԱՌԸՆՏԻՐ

Վենետիկ 204, Ռ. Սարգիսյան, 8ուցակ Բ, էջ 144—145

Գրիչ՝ Յովան
Վայր՝ Երուսաղէմ

385բ *Յամի վեցհարիւրերորդի վաթսներորդի և չորրորդում ամի շրջաբերութեան Հայոց տումարի (1215), ի թագաւորութեանս Հայոց Լեւոնի, ի վերշացեալ և ի նուազեալ դառն ժամանակի, յաւուրս աստուածապատիւ և հոգևոր տեառն Յովաննէսի Հայոց կաթողիկոսի, յաշխարհս Պաղեստինի՝ ի մէջ գերութեանս Երուսաղէմի, ընդ հովանեաւ Սուրբ Յակովբայ առաքելական աթոռոյս՝ գրեցաւ գիրս գերահրաշ և ամենապայծառ, լուսալիղձ և բազմատենչ, յոքունց փափագելի հոգևոր մատեանքս՝ աստուածային տառիս, գերափայլեալ, գերազարդ, վիպասանապէս արտաճառեալս. բայցայայտ շարունակեալ անվրէպ շարակածութեամբ, գեղեցկադիր և ամենայարմար համանման բաղաձայնութեամբ, յոքնագունակ բայիւք և ճոխական իմաստիւք և խորիմաց բառիւք, ի լոյս ածեալ հեշտալուր և դիւրահաս մեկին մտաց իմացութեամբ ասացուածովք յառաջընդրեալ հոգեկից սրբոց արանց աստուածազգեստից ուղղադաւան և լուսաւոր վարդապետաց, և գերամաքուր առաշնորդաց՝ ներբողեանք՝ բազմատեսակս դրուատից, և յորդորական բանք գովեստից՝ վսեմական գովասանութեան.*

Արդ՝ ցանկացող եղեալ այսմ գեղեցիկ աստուածային տառիցս, ճրագնաւոր ոմն՝ անուն Յովաննէս, հանդերձ քեռբ իւրով կրաւնաւոր կարդաւ և բարիանուն, ստացեալ յանձինս՝ իւրեանց ունելո զվանս արտաքու Երուսաղէմի, հանդէպ Սուրբ Սիոնի՝ ի վերա ճանապարհին Բեդղէեմի, որ է լեալ հանկստարան Սուրբ Աստուածածնին, մինչ գայր յընծայումն ի տաճարն, աստուածացեալ մանկամբն Յիսուսիւ Քրիստոսիւ Վասն այսորիկ բարիանուն և ընդրեալ քահանայն Գէորգ կանկնեաց զտաճարն սուրբ և անուանեաց յանուն Սուրբ Աստուածածնի. յիշատակ նորա աւրհնութեամբ՝ Նմանապէս և եղբաւրորդի իւր Յովաննէս, զոր վերագոյն յիշեցաք՝ ընկալաւ զսայ բարեաց յիշատակ և բարեխաւս առ Աստուած՝

Ձեռագրիս մէջ չկա Յաճախապատումը, այլ միայն կան Սեբերիանոսի և Եփրեմ Խուրիի Ճառերը։ Եփրեմի Ճառերը չեն հիշվում այս հիշատակարանի մէջ. Ն. Մառը նկատել է այս պարագան («Բանասէր», 1901, պրակ Ա, էջ 41—43)։

Ինչպես բացատրել «Յաճախապատում»ի բացակայությունը Ձեռագրիս մէջ, հակառակ հիշատակարանիս բացահայտ վկայության... նախորդ հիշատակարանը մեզ հիմք և իրավունք է տալիս ենթադրելու, թե Պետրոս գրիչը Ակների վանահայր կամ «հայր Թորոսի հրամանաւ» 1215 թվին գրել է մի Յաճախապատում և Սերերիանոսի Ճառերը։ Առաջին Ձեռագիրը, որ պարունակում է Գր. Լուսավորչի վերագրված Յաճախապատումը, անցել է Երուսաղեմ, և այժմ սեփականությունն է Ս. Հակոբեանց Ձեռագրատան, իսկ Սերերիանոսի Ճառերը՝ էջմիածին (այժմ Մաշտոցի անվան Մատենադարան, № 947)։ Այդ պարագային մեր այս Հիշատակարանը, որ առաջ ենք բերել վերևում, պատկանում է թե Երուսաղեմի № 94 Ձեռագրին, և թե էջմիածնի Ձեռագրին («Հիշատակարանք», էջ 778—779)։

իւրեանց և ծնողաց իւրեանց, և աւանդեցին ի Սուրբ Աստուածածինն գանձ անկողոպտելի, ի վայելումն շնորհազարդ որդւոյ իւրեանց Գրիգորոյ սարկաւագի, և այլ կրաւնատրաց և քահանայից։

Արդ, աղաչեմք զամենեսեան՝ որք աւկտիք ի սմանէ ընթերցմամբ կամ գաղափար առնելով, սրտի մտաւք յիշատակեսջիք զստացողք սորա զՅովհաննէս և զքեռ իւր զՏիկեերես, և զժառանգաւորս նոցունց Գրիգոր սարկաւագ, և զԳէորգ՝ զգնացեալն առ Քրիստոս, և զվերշին աշխատողս և զգծողս և զկապողս զՅովան՝ զվերշեցեալս յամենայն բարեաց, և խոշորութեանս [գրոյս] անմեղադիր [լեր]ուք, եւ որք աւգնական եղեն ի գին սոր[ին] ի կանաց կամ յարանց կամ ի քահանայից, Քրիստոս Աստուած միոյն հաղարապատ[իկ հատուսցէ] ։։։

55

ԳԻՐՔ ՊԱՐԱՊՄԱՆՑ ԿԻՒՐԻ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅՈՅ

Երևան 3276 (ժէ դ.)

Գրիչ՝ Բասի՞լ

ա

50ա Հրամանաւ տեառն Ներսիսի և տիեզերական վարդապետի, կազմեցաւ գիրքս այս ձեռամբ ումեմն տառապեալ Գրիգորի Արևելցոյ։

Արդ, Տէր Յիսուս վայելել տացէ երկար ժամանակօք ի կամս իւր, ամէն։

բ

Ի ՈԿԴ (1215) թվականիս շարադրեցաւ բանս աստուածայինն ի ձեռն Ներսիսի։

Հետագա գրիչ՝ Բասիլ

ԶԲասիլս յիշեցէք ի Տէր զկնի աշխատողի սորին։

56

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6512

Գրիչ՝ Խաչատուր

72դ Ի թուին ՈԿԴ (1215)։

Քրիստոս Աստուած ողորմեայ Խաչատուր քահանային եւ Մարգ[ար]տայ, ամէն։

57

ԱԻԾՏԱՐԱՆ

Երևան 378

Գրիչ՝ Թորոս

ա

308ա Աստանաւր յանկ ելեալ կատարեցաւ հրաշապատում մատենիս այսորիկ սրբոյ Աւետարանիս, հրամանաւ և ծախիւք բարեսէր և աստուածահաճոյ առն Վախտանգա, որդւոյ Հասանա, որդւոյ Վախտանգա, եւ քրիստոսասէր ամուսնոյ նորա Խորիշահի՝ դուստր մեծ սպարապետին Սարգսի:

Արդ, ես Վախտանգ եւ լծակից իմ Խորիշահ ըստ կամացն Աստուծոյ քաղաքավարեալ ծնաք երիս ուստերս եւ երիս դստերս՝ ժառանգ մարմնաւոր եւ յիշատակ հոգեւոր: Այսմ առաւել նախանձախնդիր եղեալ, բազում փափագանաւք եւ յաւժարութեամբ սրտից մերոց, շինեցաք զեկեղեցիս եւ երեւելի սպասիւք զարդարեալ ներքս և արտաքս եւ հաստահեղուն յաւրինուածովք:

308բ Աստանաւոր հոգւոյ ակամբ նաեցեալ ի փառսն զոր խոստացեալ է սիրելեաց իւրոց անսուտն Աստուած նա[խ]ապէս եւ մեք կամեցաք գրել զանուանս մեր ի գիրն կենդանի, վստահ եղեալ ի մարդասիրութիւն Աստուծոյ: Զկենդանարար եւ զցանկալի ընդ զսուրբս զայս զԱւետարան ետաք գրել, բազում եւ զանազան դեղովք զարդարեալ զհամաբարբառս եւ ոսկէգրեղ գրով զառաջս աւետարանիցդ զարդարեալ, եւ յիշատակ յաւիտենից լինել ի տան Տեառն եւ ի գաւիթս Աստուծոյ մերոյ, զմտաւ ածեալ զբան մարգարէին, որ ասէ. Պատուիրանք Տեառն լոյս են եւ լոյս տան աչաց եւ երկիւղն Աստուծոյ մնա յաւիտեան:

Արդ ես Վախտանգ եւ զուգակից իմ Խորիշահ ցանկացող եղաք սրբո Աւետարանիս*:

---

* Գ. Հովսեփյանը հիշատակարանը դնում է 1212—1216 թվականների միջոցին, նկատի ունենալով, որ «Խորիշահ վերստին մի եկեղեցի է շինել ՈԿԱ—1212 թվին (Արցախ, էջ 171) որ ակնարկվում է այստեղ», իսկ «Խորիշահի ամուսին Վախտանգի մահը... 1216 թվից առաջ է պատահել, ըստ Գանձասարի վանքի արձանագրության (Արցախ, էջ 173)»: Ձեռագրի վերջին թերթերի մասին կարդում ենք. «Հետևեալ չորեքին մագաղաթեայ թերթքն (305—308), յորոց վերջինն է ծիշատակարան սուրբ Աւետարանիս, գտանի № 1497 ձայսմաւուրս, որք և եղեալ էին ի կողս նորին իբրև պահպանակք: Սահակ վարդապետ Ամատունի, 1897» (էջ 304բ): Ս. Ամատունին անջատել է թերթերը և միացրել ձեռագրին, ուր և գտնվում են այժմ:

Բ

2ա Ջ[Թ]որոս նուաստ գրիչ յիշեսջիք ի Քրիստոս*

Գ

3բ Թորոս նկարիչս յիշեցէք ի Տէր**։

Դ

6ա Տէր Աստուած զվախտանգ եւ գխոռիշ[ա]ն յիշեա ողորմութեամբ քո եւ ողորմեա***։

Ե

9բ Քրիստոս Աստուած յորժամ գաս հայրական փառաւք զխոռիշան և զվախտանգ ընդ սուրբս քո դասեա, ամէն։
Թորոս նկարիչ****։

Զ

258բ Քրիստոս Աստուած, ողորմեա Թորոս գրչի, ամէն, եւ ծնաւղաց իւրոց եւ աղգականաց։

58

ՄԱՍՈՒՆՔ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Երևան 155

Գրիչ՝ Որդի Սարգսի

106բ Ջբարի անուն և զԱստուծով մնծացեալ զմեծ պատրոնն զվա[խ]տանգն յիշեցէք ի Տէր, նաև զբազմամեղ գծողս և զծնողսն իմ զՍարգիս և զԹագուհի և Աստուած զձեզ յիշէ*****։

59

ՄԱՇՏՈՑ

Վենետիկ 323, Հ. Սարգիսյան, Գ. Սարգոյան, Ցուցակ Գ, էջ 91

Գրիչ՝ Ստեփանոս
Վայր՝ Պայաս գիւղ

Ա

323ա Փառք անսկզբին եւ անժամանակ, անք[ան]ակ եւ անորակ, անհրկն եւ անուստեք, անյաւդ եւ անշաղակապ, անջատելի եւ անպարոյր, անհաս եւ անքննին, համագոյ եւ համապատիւ, եռակի եւ զեզակի տէրու-

---

* Գրված է նվսկրիոսի նամակի վերջում։

** Գրված է խորանի միջին գերանի վրա։

*** Գրված է խորանի միջին և ստորին գերանների վրա։

**** Գրված է խորանի գլխամասում, ոսկե տառերով, կապույտ խորքի վրա։ Նկարիչն իր անունը գրել է նույն տեղում, նախավերջին և վերջին տողերի միջև, վարդագույն խորքի վրա՝ կարմիրով։

***** Ձեռագրի 49բ և 88ր չրջանակաձև լուսանցազարդերի մեջ համապատասխանաբար գրված է «Պարոն Վախ[տանգի] էն», և «Պարոն Վաղթանգ[ի է գ]իր[ս]»։

թեանն՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտենից, ամէն։

Խնամաւք բարերարին Աստուծոյ սկսա եւ ներելով նորին կատարեցի զաւրհնութիւնաբեր ցուցակս, որ է բուրաստան ամենալից կանաչացեալ բողբոշիւք, երփն-երփն երանգաւք, սաղարթափթիթ տերեւաւք, զանազան դունաւք եւ բազմապայծառ ծաղկաւք, զոր յաւրինեաց մեզ տուրք հայրն և երանելի ճգնաւորն Մաշդոց, ի թուականութեանս Հայոց ՈԿԲ (1216), ի կաթողիկոսութեանն տեառն Յոճաննիսի, եւ ի ժամանակիս քրիստոսասպսակ թագաւորին Հայոց Լեւոնի, ի ծովեզերս ովկիանոսի, ի գաւառս որ Ճկեր անուանի, ի զեաւղս որ Պայաս կոչի, ընդ հովանեաւ ամենաւրհնեալ մաւրն լուսոյ Աստուածածնիս եւ այլ սրբոցս, յամս յորում տէրամբ յաղթող թագաւորն Հայոց Լեւոն էառ զԱնտիոք՝ զմեծ մայրաքաղաքն Ասորւոց։

Ես արդ, ես Ստեփանոս դատապարտեալ մեղաւք, ցանկացող եղէ այսմ աւրհնութիւնաբեր տառիս, եւ ստացա ղսա ի վայելումն անձին իմոյ եւ յիշատակ մեղուցեալ՝ հոգւոյ իմոյ։

Արդ, աղաչեմ եւ երեսս անկեալ արտասուալից պաղատանաւք հայցեմ ի ձէնջ, ո՞վ աստուածասէր հարք իմ եւ եղբարք, եւ սիրելի մանկունք, որք ընթեռնոյք կամ ընդաւրինակէք եւ կամ ուսանիք, վշտակցաբար սիրով հայցեցէք ի Քրիստոսէ զթողութիւն մեղաց ինձ, եւ ծնաւղաց իմոց, եւ եղբարց, եւ քերց, եւ ամենայն ազգականաց իմոց, եւ Քրիստոս Աստուած զձեր յանցանսն թողցէ, եւ ինքն եղիցի աւրհնեալ յաւիտեանս, ամէն։ Խոշորութեան գրոյս եւ սխալանացս, եւ եթէ այլ ինչ պատճառ կայ, անմեղադիր լեւուրք աղաչեմ, զի աւրինակ ոչ ունէի ըստ կամաց, եւ գրչի մեղաւորիս թողութիւն խնդրեցէք, եւ դուք թողութիւն արարէք, եւ Աստուած զձեր յանցանս թողցէ, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Բ

Ձմեղաւոր գրողս զՍտեփանոս յիշեա, ո՞վ սուրբ ընթերցող, եւ Աստուած քեզ յիշեսցէ։

Գ

ԲՌ։ ԴՌ։ եւ ԸՌ։ ա։ ԴՃ։ ՁՃ։ ԲՌ։ ԲՃ։ է։ ԹԺ։ Ա։ ԷՌ։ ՁՃ։ ԵՌ։ ԵԺ։ ա. Ռ։ ա։ ԹՌ։ ԵՌ։ ԲԺ։ ԲՌ։ ԴՌ։ ՁՃ։ ԲՌ։ [ԲԺ]*։

Ո՞ր կարմրադեղովն է եւ թուագլուխն ունի զգիր համաբոյն գիտ, եւ որ սևադեղովն է, զնոյն գիր առ եւ անաշխատ ընթեռնուս**։

Դ

Ռ։ Ռ։ Ժ՝։ Ռ՝։ Ճ։ Ռ։ Ճ։ Ռ։ դ։ ժ։ ա։ Ռ։ Ռ։ Ե։ Ռ։ Ժ։ Ճ։ Ճ։ Ժ։ Ճ։ Ռ։ Ճ։ Ե։ ա։ Ճ։ Ժ։ Ճ։ Ե։ ժ։ ա։ Ռ։ Ճ։ Ռ։ Ժ։ Ռ։***

* Ընդգծված տառերը բոլորգիր են և կարմիրով գրված։

** Լուսանցքի վրա հետագայում մեկը գրել է. «Ես անարժան ԲՌ, ԴՌ, է, ԸՌ, ա, ԴՃ. ՁՃ։ ԲՌ (Ստեփանոս) եպիսկոպոս, կամաւքն Աստուծոյ եւ ողորմութեամբ սկսայ եւ գտայ զվրկ գիրս ղայս զթուխ գիրն եւ զկարմիրն. «Ստեփանոս մեղաւոր ծառա Քրիստոս[ի]»։

*** Ծածկագրի իմաստն է, «Քրիստոս որդի Աստուծոյ ողորմեա ինձ մեղաւորիս»։

Թէ ես զպիր գիտուն,
Դու կարդա գինքս սիրուն,
Ապա թէ չես այր խմաստուն,
Աշխատ առնես զանձիդ ի բուն,
Իբրեւ ի ծով անձինս յանհուն,
Վտանգիս յալեաց տարաբերուն,
[Շրշիս] հեղձիս, ալեկոծուն,
Բարեկամ մի լինիս նման բլուն,
Իրաւք ի քուն, աչաւքտ՝ արթուն,
/// նման գիշերհատուն։
Երգաւք զաւրաւոր բազմաբեղուն,
Կանուխ յառնէ մէշ գիշերոյն,
Զարթուցանէ զմարդ ի հեշտալից թմբիր քնուն,
Ձայն քաղցրիկ ածէ առաւաւտուն,
Գուշակէ զգալն լուսոյն,
Սիրել ի գնալ երանհոգի քուն,
Քան աշխատիս նման իշուն։
Աղաչեմ չլինել մեղադիր ։

60

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6273, էջ 32ա—32բ, Փիրղալեմյան, նշխարք Ա

Գրիչ

Փառք քեզ միայնոյ սկզբանդ, և անսկզբանդ ընդ սկզբանդ, և սկզբնաւորիդ սկզբանց, երից դիմի և միոյդ յերիս համագոյ տէրութեանդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Անունն սէր՝ է արմատ ամենայն բարեաց, բարի ծառ բարի պտուղ բերէ։ Այս բարի զաւակ Սմբատ բարի ծնողաց պտուղ էր, իսկ Սողոմոնի Իմաստունն եւս ճանապարհաց գովի։ Այս երանելի Սմբատս, որ ատեաց զաշխարհ և սիրեաց զՔրիստոս և սիրեցաւ ի նմանէ, որ ատեաց զքաղաք և զգեաւղ և զագարակ, և սիրեաց զեկեղեցի և զաղօթս և զանապատ, և եթող զմարմնաւոր թագաւորս և զիշխանսն և սիրեաց զերկնաւոր թագաւորն և զօրութիւնս երկնից, և եթող զգեղեցկազարդ և զվայելչազուարթ եղբարս իւր զԱսպետ և զԿոստանդին և զԼոյսն և փափագեաց յաւիտենական կենացն, և եթող զսրբասէր քոյր իւր զՎահանուհի, և զեղբօր որդի իւր զպարոն Վաւրդ և ցանկացաւ վերին ուրախութեան։ Այս երանելի Սմբատ, որ ատեաց զաշխարհի վայելուչին և սիրեաց զԱւետարանս և զայլ աստուածային կտակարանսն, մեծ յոյս ունէր զԱւետարանս, և էգ ի մեզ՝ ի նուաստ ծառայս Աստուծոյ ի Յակոբ, որ ղորդէի և զպականն լնուի և զպատկերս աւետարանչացն նկարէի և կազմէի։ Եւ նա ոչ ժամանեաց՝ ցվերջն, [այլ] փոխեցաւ առ փափագելին իւր Քրիստոս, ի թուին ՈԿԸ (1216), ի յուրբ զատկին ի յարութեան Տեառն, որ և Քրիստոս Աս-

տուած, որ սիրեաց զնա, յարութիւն կենաց շնորհեսցէ նմա, և բարի ծնողաց նորա, և եղբարց, և յիշատակաց եղբարց իւրոց տացէ հոգի իմաստութեան և հանճարոյ, և զբարեսէր իշխանն Առիւծ*, և զամենայն եղբարսն իւր՝ զպարոն Ասպետն, և զԿոստանդին, և զՀոյսն՝ անփորձ և անսասան պահեսցէ ամենայն տամբ իւրեանց, ամէն։

Դարձեալ անուանի Սմբատ-Ստեփաննոս՝ նախավկային անուանակից, որ և մասնակից արասցէ զնա Քրիստոս պսակի, զի գտաւ զնա Քրիստոս և յապաշխարանք, ի պահք և յաղօթս, և ի սէր եկեղեցւոյ և քահանայից։ Տէր Յիսուս Քրիստոս ողորմեա Ստեփաննոսի, ամէն**։

61

ԱԻԵՏԱՐԱՆ

Նոր Ջուղա 27, Տիր-Ավետիսյան, Ծուցակ, էջ 42

Գրիչ՝ Յովհաննէս
Վայր՝ Յիսվանց ուխտ

274ա Փառք... ի թուականութեանս Հայոց ՈԿԵ (1216), ի թագաւորութեանն բարեպաշտ աստուածասէր և քրիստոսապսակ թագաւորին Հայոց Լէոնի՝ մեծի և յաղթողի, և ի հայրապետութեանն Հայոց տեառն Յոհաննիսի աւարտեցաւ տէրունական աւետեաց կտակս, ձեռամբ ամենամեղ հոգւոյ Յովհաննիսի, ի սուրբ և ի հռչակաւոր և յաստուածաբնակ ուխտս, որ յորջորջի Յիսվանց, ընդ հովանեաւ սրբոյ մաւրս մերոյ Սիովնի և կենսակիր Սուրբ Նշանի, ի ձեռն որոյ բազում և պէսպէս սքանչելիք կատարեն, մերձ ի մեծ մայրաքաղաքն Անտիոք, յամի յորում մեծ արհիպիսկոպոսն և աշխարհալոյս վարդապետն Անտիոքու Յուսէփ փոխեցաւ ի Քրիստոս, որոյ յիշատակն աւրհնութեամբ կատարեսցի, և զկնի նորա յաջորդեաց յաթոռն Վարդան սրբազան եպիսկոպոս։

Արդ աղաչեմ զամէ[նե]սեանս, որք աւկտիք ի սմանէ, ընդաւրինակելով և կամ ընթերցմամբ վայելելով, յիշեսջիք առաջի զենլոյն՝ վասն մեր ամենամաքուր գառինն Քրիստոսի, զախմար և զանպիտան և զամենամեղ հոգիս Յովհաննէս և զպատճառս գալոյ մեր յաշխարհս, որք ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ, յիշել հայցեմ ի Տէր զհոգևոր եղբայր իմ զՎարդան սրբասէր քահանայ, որ աւժանդակ եղև և ծառայեաց զմեզ ի գրչութեանս, և յիշողացտ և յիշելոցս ողորմեսցի Քրիստոս, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն, ամէն***։

---

* Սմբատի հայրն է։

** Հիշատակարանը համառոտ բերված է «Ծիշատակարանքում» (էջ 789), որի աղբյուրը Գ. Զարբհանալյանի «Մատենադարան հայկական թարգմանութեանց» աշխատությունն է։

*** Վերջին կտրված թերթի վրա կարդացվում է «զԹորոս» անունը։

62

ԱԻԵՏԱՐԱՆ

Ն. Ջուղա 2ա, Տեր-Ավետիսյան, Յուցակ, էջ 37

Գրիչ՝ Գրիգոր Սկևռացի
Վայր՝ Սկևռա

ա

239ա ՁԳրիգոր գծողս յիշեա

բ

Գրիչ՝ Գրիգոր սարկաւագ
Վայր՝ Տարսոն

311ա Փառք... Արդ զայս քան կենսացուցիչ և բազում բարեաւք առ լցեալ և նորոգ ամուր յուսալիր կաթոգին ոգիով և խանդակաթ սիրով բանս լուեալ և ուսեալ երանելիս այս՝ պատուեալ աւծութեան քահանայական ջնորհիւ Ստեփանոս վերակարդացեալ անուն, սպասաւոր բանի բանին Աստուծոյ և բացայայտող խորհրդոց նորա։ Սա որպէս հուր բորբոքեալ ի սիրոյ անտի որ ի սուրբսն՝ խնդրբեաց կցորդել նոցին պսակացն, և մեծաւ աշխատութեամբ ջանաց ստանալ զկենսաբեր սուրբ Աւետարանս։ Զոր և հայեցեալ Աստուած ի յաւժարութիւն ոգւոյ նորա որ ի բարիս՝ ոչ անտես արար զտարփումն մտաց նորա, այլ փութապէս կատարեաց, թէպէտ եւ նուաղ գոլով սորա ի մարմնական փարթամութեանց, սակայն ջանիւ ջանացեալ կատարեաց զսա ըստ իւրում կարողութեանն այսչափ։

Արդ, եղև ղկիզբն գրչութեան սորա ի թուաբերութեանս Հայկազնեան ազգիս ՈԿԴ (1215), ի հայրապետութեան տեառն Յոճանիսի որդւոյ Կոստանտայ, և ի թագաւորութեան մեծապսակ արքայիս Հայոց Մեծաց Լեվոնի որդւոյ Ստեփանէի՝ որդւոյ Լևոնի, որդւոյ Կոստանտեայ յԱռովբիենաց, և ճշմարիտ և հաւատարիմ ծառայից Աստուծոյ և յուղղափառ դաւանողաց զհամագոյ Սուրբ Երրորդութիւնն, ձեռամբ Գրիգորի մեծահռչակ գրչի, ի սուրբ ուխտին Սկետայ կոչեցեալ, զոր և հասեալ ի վերջ սորա ոչ կարաց կատարել, զի հասարակաց բնութիւնս ղիւրն պահանջեաց, մեռաւ ի բարւոք ծերութիւն, զոր և Տէր Յիսուս հանգուսցէ զնա ընդ սուրբս իւր։

Իսկ սա մնացեալ թերակատար՝ ի տարակուսանս ընկէց զառաջասացեալ ստացաւոս սորա. իսկ իմ, տեսանեալ զնա յայնպիսի տարակուսանս, կամեցայ լնուլ զպակասն, և առեալ, թէպէտ և ոչ կատարեալ յարհեստըս, սակայն ապաւրինեալ յԱստուած եւ յաղաւթս՝ ձեռս եդեալ կատարեցի զսա ||| * և բարեխաւսութիւն հսգւո ստացաւղի սորա։

Եղեւ կատարումն սորա ի թուին ՈԿԸ (1216), ի քաղաքիս Տարսոն, ընդ հովանեաւ Սուրբ Նախավկային Ստեփանոսի ||| ** սիրոյ պտուղ զսա վարկցի և ոչ յանդգնութեան կամ ընչից յաւելուածոյ, վասնզի գի-

* Մի տող ջնջված է։
** Մի տող ջնջված է։

տող եւ իրաւարար այսմ բանիցս Աստուած է, և ստացաւ զսա հոգւոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց յիշատակ։ Եւ դուք յիշատակի արժանի արարէք զընտացաւզս սորա զՍտեփանոս վարդապետ և զհայր սորա՝ զպատուական քահանայն Յովաննէս, որդի Յովսեփայ քահանայի։ Զսոսա զամենեսեան յիշել ի Քրիստոս աղաչեմ, և զեղբարք սորա ըստ մարմնոյ, և զորդիս սոցա, և զամենայն մերձաւորք սորա առհասարակ, աղաչեմ յիշել ի Տէր։

Ժտիմ դարձեալ և ես՝ մեղապարտ գրիչս Գրիգոր սարկաւագ, յիշել զամենայն վերայկարդացեալ անուանս, որ ի սմա, և զիս զմեղապարտ գրիչս Գրիգոր սարկաւագ, և զծնաւղսն իմ, և զամենայն մերձաւորս իմ՝ աղաչեմ յիշել ի Տէր և Աստուած որ առատն է ///*։

գ

Ստացող՝ Ստեփանոս

315բ Այս իմ գիր է Ստեփաննոսի անարժան քահանայի և անպիտան ծառայ ի Քրիստոս և իմ եղբարն Յովաննէս քահանայի, որդոյ մեծ Կարապետ քահանայի, որ ստացայ զսուրբ զԱւետարանս զայս, յիմ արդար արդեանց ըստ վերագրելոյդ, ի յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց։ Եւ ետու զսա սրտի յաւժարութեամբ և աւրհնութեամբ իմով եղբօր որդոյ Յովսէփայ քահանայի, զոր Աստուած վայելել տացէ իւր և որդւոց իւրոց։ Արդ, չունի ոք հրաման յԱստուծոյ եւ յինէն հակառակ կալ այս գրոյս, ո՛չ յիմոց և ո՛չ յաւտարաց, և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։

դ

Կազմող

316ա Զվերջին ստացող սուրբ Աւետարանիս զերանուէի կրաննաւորն Հոիփսիմի՝ ըզքոյր թագաւորին Հայոց Հեթմոյ, յիշեսջիք ի սոսկալի ժամու մեղսաքաւիչ սրբոյ պատարագին, ով դասք սրբազանից, որ ստացաւ զսա ի վայելումն անձին իւրոյ և յետ ելից աստեացս յիշատակ հոգւոյ իւրոյ և բարեպաշտ ծնողաց իւրոց և ամենայն զարմից։ Եւ որ առատն է ի ձիրս բարեացապարտն Յիսուս, տացէ վարձս բարեաց ձեզ յիշողացտ և մեզ յիշեցելոցս, և նմա փառք ընդ Հաւր և Սուրբ Հոգւոյն, յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Չեղկելի կազմաւզ սորա աղաչեմ յիշել ի Տէր**։

---

* Երկու տող չնչված է։

** Կազմվել է մի քանի տասնամյակ հետո, բայց քանի որ թվականը որոշ չէ՝ թողնում ենք գրչությանը կից։

63

ԱԻԾՏԱՐԱՆ

Տեր-Մովսիսյան, Համահավաք ցուցակ, Աւետարանք, էջ 143

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Տարսոն

Գրիչ Գրիգոր, եղբայր Համազասպ քահանայի, յօրինակէն Ներսէս քահանայնի քորեպիսկոպոսի քաղաքին Տարսոնի, հրամանաւ Բասիլ քահանայի։

Ի թուի Հայոց ՈԿԸ (1216), յառաջնորդութեան տեառն Յոհաննիսի եւ ի թագաւորութիւն աստուածապսակ արքային Լեւոնի, ի քաղաքիս Տարսոն, ընդ հովանեաւ Նախավկայիս Սուրբ Ստեփաննոսի... յորում ժամանակի զարմացողով եղեալ անաւրինաց ազգն Հագարու առ դղեկաւն որ Կապան կոչի, իսկ աստուածասէր թագաւորն մեր ժողովեալ զամենայն քրիստոնեայս, որ ընդ իշխանութեամբ նորին էին, այլ եւ զռամիկս քաղաքաց եւ գեղջկաց, իսկ եւ զկրաւնաւորս եւ զքահանայս՝ գալ ի մի վայր, աղաչել զԱստուած, զի մի արասցէ ըստ մեղաց մերոց։

Իսկ յանաւրէն զարացն գունդ հասեալ, ասպատակեալ աւերէին զսահմանսն՝ ուր եւ կարէին։ Իսկ քրիստոսասէր թագաւորն մեր առաքեալ զքեռորդին իւր զԿոստանդին գունդստապլ զարաւք սակաւուք ընդդէմ, առ ի չթողացուցանել զաւերումն սահմանաց մերոց։ Զայն գիտացեալ անաւրինացն, դիմեցին ի վերայ նոցա. եւ սոցա, բազում յանաւրինացն սրակոտոր արարեալ, կամեցան դառնալ անդրէն ի բանակս իւրեանց։ Իսկ ապա գիտացեալ զայս անաւրէնն ամիրապետին իւրեանց, առաքէ բազում զարս ի վերայ սոցա. եկեալ գաղտագողի կալան զելս ճանապարհին զարացն, որք ի մէնջ էին, եւ սուր եղեալ կոտորեցին զնոսա. եւ զբազումս ձեռբակալ արարեալ տարան ի գերութիւն յաշխարհ իւրեանց. կալան զԿոստանդին գունդստապլ եւ գերկու իշխանսն ընդ նմին՝ զԿեռսակ եւ զմիւս Կոստանդին՝ ղորդի Հեթմոյ սեւաստոսի...

64

ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌՔ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

Երեան 5528

Գրիչ՝ Բարսեղ
Վայր՝ Սկեւռա

ա

258բ Փառք ամենասուրբ Երրորդութեանն յափտեանս յափտենից, ամէն։ ամէն։

Ի բազում տեսակս զանազանին աւրինակք ուրախութեամբ հանգըստից, և աւելորդ է մեզ ի պիտուքիւն առաջի եղելոյս՝ զամենայն մի ըստ միոջէ թուել, բայց որքան ի մրրկեալ և ի կուտակադէզ ալեաց ծովու նաւ

ի խաղաղն ժամանէ նաւահանգիստ, նոյնպէս և գրիչ ի տարժանելի ճգանցըն ի վերջին գիծն ղկայ առեալ՝ զգոհացողականն մատուցած Աստուծոյ աւրհնութիւն։

Արդ, սմին այսորիկ հոգէլից և առատաշնորհ մատենի սուրբ Լուսաւորիչին երանելւոյն Գրիգորի ցանկացող եղեալ ըղձալից և փափագ
259ա ||մամբ սուրբ սիրով արժանապատիւ քահանայ ոմն Կարապետ անուն, ստացաւ զսա յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց և եղբարց, ձեռամբ իմով՝ Բաւրենի քահանայի, զի ես թէպէտ և անտեղեակ էի արհեստի գրչութեան, բայց զաւժարութիւնն տեսի զայնմ լուսակիր առն, և ձեռն ի գործ արկեալ յանգեցի ի մեծ և հռչակաւոր սուրբ ուխտս Սկևռայ, յամի վեցհարիւրորդի վատսներորդի հինգերորդի (1216) թուականիս Հայոց, ի դիտապետութեանն տէառն Յոհաննիսի, և ի թագաւորութեանն Հայոց Մեծաց քրիստոսապսակն Լևոնի, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչիս և մաւր իւրոյ Սրբահտոյ Աստուածածնի և կենսակիր Նշանիս, որ է մերձ անմատոյց դղեկին Լամբ(ր)ու յորջորջելոյ։ Իսկ բարեացապարտ Տէրն մեր Յիսուս Քրիստոս յիշեսցէ ողորմութեամբ իւրով և աղաւթեաւք ձերովք զվերոյգրեալն Կարապետ և զծնաւղսն նորա և զեղբարս։

Աղաչեմ յիշել և զանարժան ծառայս ձեր, և զքեռին իմ Բարսեղ քահանայ, և զբնաւս զորս յիշատակեցաք, և Աստուած ամենեցուն ողորմեսցի, որ աւրհնեալն է յաւիտեանս, ամէն։

Բ

84ա Ձկարապետ քրիստոսասէր քահանայ յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս, ընդ նմին և զանարժան ծառայս Աստուծոյ զվասլուկ։

Գ

128ա Ձտառապեալ աշխատողս Բարսեղ յիշել աղաչեմ, ընդ նմին և զԿարապետ քրիստոսասէր քահանայ։

Դ

146ա Յայսմ աւուր փոխեցաւ ի Քրիստոս պատուական և սուրբ հայրն իմ Գրիգոր քահանայ։ Արդ աղաչեմ զամենեսեան յիշել զնախասացեալս Գրիգոր յաղաւթս ձեր և Աստուած ձեզ ողորմեսցի, ամէն։

Ե

154ա Ձկարապետ աստուածարեալ քահանա յիշեսջիք, և զանարժան ծառայ Աստուծոյ Բարսիլ, և զՍտ[եփանոս] քահանայ։

Զ

169բ Ձկարապետ աստուածահաճոյ քահանա յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս, և զիս զանարժան ծառայս Աստուծոյ, որ բազում վշտաւք գրեցի զսա։

Է

187ա *ԶԿտրապետ աստուածահաճոյ քահանայ յիշեսջիք ի Քրիստոս, և պտառապեալ խոշորագիծս* Բասիլ:

Ը

189բ *Զ*Կարապետ *աստուածարեալ քահանայ և զծնաւղսն իւր յիշեսջիք, և զմեզ արժանի համարեսջիք բարի յիշատակի զ*Բարսեղ *և զ*Ստեփանոս *քահանա։*

Թ

189ա *Ոչ է պակաս պաղութիւն աւդայս, քան քառասնիցն։ Տէր Յիսուս ողորմեա ինձ և* Կարապետին, *ամէն։*

Ժ

31ա *Տեառհամարս սխալ է, միտ դիր**։

65

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Երուսաղեմ 354, Ն. Պողարյան, Ցուցակ Բ, էջ 253

Գրիչ՝ Վարդան

307 *Փառք ամենասուրբ Երրորդութեան անզրաւ յաւիտեանս յաւիտենից։*

Շնորհիւն Աստուծոյ սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զԳործս Սուրբ Առաքելոցն ես մեղաւորս Վարդան, *ի թուիս ՈԿԵ (1216). ի թագաւորութեան Հայոց* Մեծաց Լեւոնի, *յամին յորում էառ զ*Անաւոր *թագաւորն Հայոց* Լեւոն:

*Արդ, որք աւկտիք ի սմանէ ուսմամբ կամ զինչ եւ իցէ, թողութիւն մեղաց հայցեցէք, եւ Աստուած ձեզ շնորհեսցէ զիւր ողորմութիւնն։ Զստացող գրոցս զ*Ստեփանոս *սրբասէր քահանա եւ զծնաւղս իւր յիշեսջիք ի Քրիստոս, զի ստացաւ զսա յիւր արդար վաստակոց ի ժառանգութիւն որդոյ իւրոյ* Յոհաննիսի, *որում վայելել տացէ Աստուած։ Եւ խոշորութեան գրոյս անմեղադիր լերուք, զի [այսչափ էր կարն իմ]։*

---

* *Նկատի ունի պրականիշերը, որոնք ինքն ուղղել է։*

66

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4509

Գրիչ՝ Աբել
Վայր՝ Այրիվանք

ա

211ա Աստուածային իրաց դիտաւորութիւն, անպատում գոյատրութիւն ամենայնքն անասելիք են, մանաւանդ յեղական անճառ մարդեղութեան բանին Աստուծոյ, որ երևեցաւ մարմնով անբովանդակելի բնութեամբ կեցուցանել կամ՛ցեալ նմանեաւն գնմանս, ի ձեռն առաքելոցն կեն[ս]-
ահրաւէր քարոզութեան, ըստ այնմ, թե Երթայք, աշակերտեցէք զամե-
311բ նայն հեթա՛նոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, որով լցին զտիեզերս աւետեաւք սուրբ և կենսաբեր յարութեանն, որում ականատես եղեալ քարոզեցին ընդհանուր զբան հաւատոյ, լուսաւորելով ղհաւատեալս մեղաւք յիւրաքանչիւր վիճակս ընտրութեան, ա և ընդ քառահոլով տիեզերս վկայ ճշմարտութեան աւանդիցն գտանելով, ճշմարտիմաց դաւանմամբ զմիածին Աստուծոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի տնաւրինութիւն ներմարդութեան գրով և անգիր յայտապատում բանիւք հաւատարմացուցանելով, իմանալի լուսոյն զամենեսեան մերձ կացուցանելով։ Այլ վասնզի կամք հոգւոյն կենաց զնորոգումն անճառ շնորհացն զպարգև, ոչ բանիւ միայն, այլ և գրով մշտըն-
312ա ջենաւոր այսմ յաւիտենի արձանացուցանել հա||ճեցաւ, զորս մաքրազատեաց իշմամբ ի սուրբ վերնատանն երկրորդելով ի հոգիս նոցա, ըստ Տեառն, թէ Յիշեցուցանէ ձեզ զամենայն զոր ինչ ասացի ձեզ, յորում զտարակոյս տրտմութեանն փարատեալ մխիթարեաց։ Զորս և հրազինեալ քարոզս ընդ տիեզերս տարածանէր ի ձեռն մկրտութեան աւազանին, յորդէգրութիւն կենաց զամենեսեան հրաւիրէր։

Իսկ չորից աւ[ե]տարանչացն խո[ր]հուրդ բազմատրի՛նակ իմն ցուցմամբ տեսանի, զի ոմանք ասեն, թե չորից աւետարանչացն են չորք անկիւնք արարածոց, պարտ էր համաստիւռ քարոզել զԱւետարանն։ Իսկ ոմանց հաճոյ թուեցաւ ըստ չորից մշտահոս գետոցն յադենական աղբերէ
312բ յառաշխաղացեալ առ ի տիեզերաց ոռոգումն, և սոցա գոլով||նմանապէս թուով ուռճացեալք ի կենդանական աղբերէն ոռոգանել սպասքեալ միտս մարդկային բնութեանս։ Նոյնպէսինակ ըստ տեսութեանն Եզեկիէլի քառակերպն աթոռոյ զանմարմնոցն, Տէր տեսանելով բազմեալ ի փառացն

աթոռ իմանալի ցուցմամբ, զխնամս բոլոր [ր]նութեանս զակնարկումն, որ աստուածապէս և տիրաբար բերմամբ նշանակէ զինեալն առ ի հողածինս հոգեղինացն անմահից, զմահկանացուս առնել հաղորդս, եւս և ի դերակատար հանել ի փառս, վասն զի փառաց թագաւորն Քրիստոս, փառակիցն Հաւր և Հոգւոյն, զմերս առնլով բնութիւն, ինքեան միացոյց աստուածութեան, ուսուցանելով մի՛ դաւանել որդի, որ յԱստուծոյ Հաւրէ, և որ ի Մարիամայ կուսէ, անճառ միութեամբ, զոր աւետարանականն
313ա ուսուցանեն բանք||մինչ ի կատարած անպակաս և անյաւելուած հաւանութեամբ, հաւատահաստատ կարգաւք· ի նոյն յարելով յառաքելասանդն քարոզութիւն, որ զաստուածախաւսն վարդապետութիւն դրոշմեալ, զսակաւս ի բազմացն առ ի հաւատալ, թե Յիսուս Քրիստոս է՝ որդի Աստուծոյ ըստ վերին Յովհաննու, հաւատալ և զկեանսն յաւիտենականս ընգծնել յանուն նորա։

Ուստի և տեսեալ զսորայս ա[ն]ճառ փրկագործութեան խորհուրդ, ոմն ի յընտրեալո[ց] քահանայից Աստուծոյ, որ էր մի ի ժառանգաւորաց սուրբ ուխտին Այրիվանից, սնեալ և ուսեալ ի նմին մենաստանի, Խաչատուր անուն կոչեցեալ, եռափափագ սրտիւ ցանկացեալ այսմ ներգործական բանից փրկչին Յիսուսի, ստանալ զսա յարդարապէս գոյից
313բ իւրոց, հանդերձ երեք եղբարբք իւրովք || և քերս՝ յաշ[խ]արհական դասուէ ամուսնացելոց, և ոչ ունելով արու որդի զսա ստացեալ զաւակ՝ զսուրբ գիրսս, և առ Աստուած զյոյս իւրեանց եդեալ, զդրեալսն կատարելո[վ], թէ՝ Բարի է յուսալ ի Տէր, քան յուսալ ի մարդիկ։

Եւ գեղեցիկ խորհրդածութեամբ տան ի բնիկն իւրեանց ի գերա[պ]անձ արքայանիստն Գեղամի, որ Գառնի, յորում հրաշակերտ հովանոցն է զարդարեալ հաստահեղոյս քարամբք ի սրաւանս թագաւորաց և թագուհեաց, եւ աւանդէն զսա մեծափառ Կաթողիկէին, տալով ի ձեռս սպասաւորաց նորին սրբասէր քահանայիցն, որ ի նմա տաղաւարին, և զմայլին ուրախարար բաժակաւն և զենմամբն Քրիստոսի։

Արդ աղերսիւ հայցեմ զարժանապատիւ քահանայդ և զխուռներամ
314ա ժողովդ քրիստոնէից, որք գումարիք ի դուռն յայդմ քաւա||րանի, յագաղս քաւութեան մեղաց, իբրև պարտականաւրէն և տրիտուր փոխարէն վճռի, յիշեսջիք զստացողք սորա զԽաչատուր կուսակրաւն քահանայ և զծնաւղսն իւր, զմահացեալսն, և զլերդակից հարազատսն իւր՝ զՎարդագէղն, և զԱպստամբն, և զՍահփանոս, որք աւժիտք եղէն այսմ աստուածախաւս տաճի, և յիշողքդ և յիշեցեալքս յիշեալ եղիցին ի Քրիստոսէ յաւուրն համառաւտի և մեծի, ուր բանք սպառ[ին] և գործք թագ[աւ]որեն, և նմա փառ[ք] յաւիտեանս, ամ[էն]։

Եւ յանցելում եռի[ց] ամաց թագաւորացն՝ մեծն և աջողակն և ըմբջամարտիկն քաջ Զաքարայ, որդին Սարգսի սպարապետին վրաց արքային, աւաղական մահուամբ բարձաւ յաստեացս, վճարելով զկէտ կենաց իւրոց, ի տիս միջահասակի, և յաջորդէ զաթոռ նորա գեղեցկաբոյզ պատանին՝ շառաւէղ նորին Շահնշահ, որ բացայայտի՝ թագաւոր թագաւորաց։

314բ ||[Ը]նդ որս և ես աղա[չե]մ աղերսալի բազ[մա]վիշտս Աբել յի-
[շե]լ և զիմ նորատու[ն]կսն զերեսին եղբարսն, որ ի վայրկենի միում
խամրացան և հատան իբրև զուռի բարունակէ, և կիսաւրեա ելին յ[ա]աշ-
խարհէ՝ երթալով առ յոյսն իւրեանց Քրիստոս։

Ի մերումս ժամանակի երկուք հովուապետք հան[գ]իպեցան բա-
րիոքք և ճշմարիտք՝ տեառն Վրթանիս ի կողմն Վարաժնունեաց, որ առ
Հրազգան գետով՝ և այսր և անդր պարփակեալ են շինանի[ս]տք լայնք
ը ընդարձակք, ունելով զվայրս բերրի յոյժ, եւ տեառն Դաւիթ ի կողմն
Խոսրովակերտի, առ որս իշանէ Ագատ գետ և հասանէ ի մեծն Եռասխ
և շինանիստք, որ առ նովաւ, և Ռուբար դաշտ արգաւանդ և ամենալի
ողկուզաբեր, որ ճմլի արիւն խաղողոյ, որ ուրախ առնէ զստացողսն։

Բ

Նկարող՝ Սարգիս
Վայր՝ Դեղձանոյ մենաստան

97ա Զկուսակրաւն քահանայ Աստուծոյ զԽաչաւուրն, զստացող սուրբ
Աւետարանիս յիշեսջիք ի Քրիստոս, ընդ նմին զգրիչս Աբել։

Գ

151ա Զստացող սուրբ Աւետարանիս զկուսակրաւն քահանայ զԽաչաւու-
րըն, և զհարազատսն իւր՝ զԱպրստամբն և զՎարդագելն և զՍտեփանոս
յիշեցէք ի Տէր։

Դ

211ա ԶՍարգիս նկարիչն եւ զՍիբեոս շարայարողն, որ աշխատեցան ի
յերանգ սորա և ի կազմն, յիշեցէք ի Քրիստոս։

Ե

Այսմ գործառնութեան բարւոյ սկիզբն եղև ի գերագրական սուրբ
ուխտին, որ կոչի Այրից վանք, որ է բանակեցող լուսակիր արանց և կա-
98բ ցորդ լուսաւորչացն նախնեաց,||եւ յանգեցաւ ի պարկեշտաժողով մենաս-
տանիս Դեղձանոյ, ընդ հովանեաւ Սուրբ Կարապետիս Յովաննու, և առ
ոտս մեծ հեղինակիս Կարապետիս և այլ սրբոց միանձանցս, յիշատակ
նոցա աւրհնութեամբ։

Դարձեալ աղաչեմ յիշել զԽաչաւուրն և սիրելի հարազատսն իւր,
զՎարդագելն և զկենակից նորին զԽաթունիկն, որ բազում գթով և խնա-
մոտ սիրով սպասաւորեաց մերում նուաստութեանս։ Աւրհնութիւնն Քրիս-
տոսի ի վերայ նորայ և զփոխարէնն հատուսցէ բազմապատիկ աստ և
հանդերձելումն, ամէն։

Թուին ՈԿՉ (1217)։

Գ

Կազմող՝ Սէֆեոս

241ա Զաստուածարեալ և սրբասէր և զհաճոյակատար հրամանի Տեառն
զԽաչաւուր քահանայ՝ զարեան մերձաւորն մեր լիաբերան և սրտի մտաւք

յիշեցէք ի Քրիստոս, և Տէր զձեզ յիշեսցէ յիւրում գալստեանն, ամէն։

Ընդ նմին և զՍէբեոս կազ(մ)ի<ն>չ, որ բազում աշխատեցաւ ի ծադիս և ի կազմս սորա, և նայ յիշեցէք և ծնաւղսն իւր ի մաքրայփա(ւ)լ յաղաւթսդ ձեր, և Աստուած զձեզ յիշէ, ամէն։

է

241ա Զկուսակրան քահանայ և ղձեռասուն աշակերտ մեր զԿարապետ ճշմարիտ պատարագող մեղսաքաւիչ մարմնոյ և արեանն Տեառն, որ զբազում աշխատեցաւ ի սուրբ Աւետարանս, յիշեսջիք ի սուրբ և յաստուածահաճոյ աղաւթսգ ձեր, և Աստուած զձեզ յիշեսցէ, ամէն։

67

ԱԻԵՏԱՐԱՆ

Վեներիկ 136, Սարգիսյան, Յուցակ Ա, էջ 600—602

Վայր՝ Դրազարկ

Փառք ամենասուրբ Երրորդութեանն յաւիտեանս, ամէն։ Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զկենսունակ սուրբ Աւետարանս, հրամանաւ Թորոս միայնակեցի, մականուն՝ Գորգացի կոչեցելոյ, որ և ըստ բազմամեայ ծերութեան իւրում անկեալ կայր ի մահիճս և յարգելանոցի խցկան, և զի թէպէտ և մարմնով ծերացեալ էր և անցեալ զաւուրքք բազմաւք, սակայն տեսչութեամբ և նախախնամութեամբ մեծին Աստուծոյ արիագոյն և քաջամարտիկ էր ի պատուիրանս սուրբս, և յընթերցմունս աստուածային գրոց։ Վասն այնորիկ ստացաւ զսա ի սփոփանս ծերութեան իւրոյ և գանձ անկապուտ կողոպուտ և մարգարիտ անգին՝ հոգւոյ իւրոյ վշտագնելոյ ի յունայնութեանց չար կենցաղոյս այսորիկ. իսկ զկնի ելից կենաց իւրոց և յաշխարհէ փոխելոյ առ քրիստոս յոյսն ամենեցուն, ետ զսա մանկահասակ եղբաւրորդւոյ իւրոյ Պետրոսի և բեմական քահանայի՝ ստացուած նմին սեպհական և յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց, զոր Տէր Աստուած վայելել տացէ նախասացեալ քահանայիս Պետրոսի և եղբարց իւրոց ընդ երկայն աւուրս։

Բայց կատարեցաւ սա ի թուականութեանն Հայկազնեան տումարի՝ ՈԿԶ (1217), ի հայրապետութեան տեառն Յովհաննիսի Հայոց հեղինակի և իմաստուն դիտապետի, և ի թագաւորութեան քրիստոսապսակ արքայիս մերոյ Ղեւովնի որ է որդի Ստեփաննէի՝ եղբայր մեծին Ռուբէնայ, որ միապետեալ ունի թագաւորական իշխանութեամբ զամենայն նահանգս Կիղիկեցւոց և զմեծն Անտոք, որոյ յիշատակ նոր[ին] աւրհնութեամբ եղիցի և անուն նորա՝ ազգաց յազգս։

Իսկ կատարեցաւ սա ի հռչակաւոր և յականաւոր վանս Դրազարկ կոչեցեալ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի և բնակարան փրկչին մերոյ Յիսուսի։

Արդ աղաչեմք զամենեսեան զընթերցողսդ և զլսաւղսդ զի յիշեսիք բարի յիշմամբ առ ի Քրիստոս զայսոսիկ, զորս յառաջն ասացաք, և զտէր Գրիգոր որ աւգնական եղև ի գինա սորա, և զեղկելի գրիչս և զծնաւղսն իմ, զի և Քրիստոս Աստուած զձեզ յիշէ յիւր մեծ ողորմութիւնն, ամէն։

68

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Երևան 1813 և 1797 պահպանակներ

Գրիչ՝ Մարգարէ

(Աւրինութիւն երից մանկանց)

Ի թվիս Հայոց ՈԿԶ (1217)։ Գրեցաւ շնորհալի տառս մարգարէական նուագացս՝ ի զարդ տաւնից տէրունականաց, հրամանաւ և յաւժարական փափ||ագմամբ ի խնդրոյ եղբաւր մերոյ ըստ հոգւոյ՝ Գրիգորոյ, զոր Տէր Յիսուս վայելել տացէ սրբութեամբ հանդերձ, ամէն։ Արդ որք երգէք սովաւ, յիշեսիք զստաց||աւղ սորին, նա եւ զիս չուառական ոմն գծաւղ սորին՝ զՄարգարէ մեղաւոր, եւ Տէր Յիսուս զձեզ զամենէսին յիշեսցէ եւ ողորմեսցի, ամէն։

69

ԱԽԵՏԱՐԱՆ

Երևան 2877 (ժ դար)

ա

219ա *Քրիստոս Աստուած ողորմի Վրացաիկնի Մելաե, որ եղև միաբան Սուրբ Աստուածածնի և իւր սպասաւորացն, և զինչ որ իւր կարողութիւն է՝ յամենայն տարի հատուցանէ զնուէրսն, և մասնակից ե յամենայն բարոյ մասն ի պատարագ եւ յաղաւթք։*

բ

Յանուն Աստուծոյ, որ եկին Գուգիկն և իւր քուրադուստրն Գոհարագիգն, և միաբան եղեն Սուրբ Աստուածածնին և իւր սպասաւորացն։ Քրիստոս Աստուած, Սուրբ Աստուածամաւրն բարեխաւսութեամբ, իւր արքայութիւն հանգուսցէ զնոցա հոգիսն, և ինքն Քրիստոս աւրհնեալ եղիցի յաւիտեան։

գ

Քրիստոս Աստուած, բարեխաւսութեամբ Սուրբ Աստուածածնին, ողորմեա պատրոն Մանիլիհ, և իւր կենակցին Ոսկիաիկնա, և իւրեանց ծնողացն։ Թվին ՈԿԶ (1217)։*

---

* Այս հիշատակագրութիւնները գրված են հաջորդականութեամբ, որից հետևում է, որ ա և բ գրվել են 1217-ից առաջ։ Իսկ գ—է՝ հետո։ Գրելաձևից երևում է, որ սրանք ժամանակով իրարից շատ հեռու չեն, ուստի դնում ենք նույն թվաշարքում։

դ

Աւրհնեալ Քրիստոս Աստուած՝ Թադոս խապազն որ եղև միաբան Սուրբ Աստուածամաւրն, յամեն տարի Ո(600) մ[ոթ] հաց վանիցն պտղի է:

ե

218բ *Քրիստոս Աստուած աւրհնէ զպարոն Սիրե Աստուածամաւրն բարեխաւսութեամբ, որ եկ հայրն||*

Դ հիշատակագրությունը Դ. Հովսեփյանի «Ձիշատակարանքում» (էջ 751—752) գրված է 1211 թվականի տակ։ Վերծանելիս բաց է թողնված վերջի միավորը՝ Ջ (6)-ն։ Նույնպես է նաև «Գրչութեան արուեստի» մեջ (էջ 46 և 71, տախտ. ԼԴ)։

70

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Ն. Յուղա 26, Տեր-Ավետիսյան, 8ուցակ, էջ 39

Գրիչ՝ Գրիգոր սարկաւագ
Վայր՝ Սկևռա

Էութիւն բնութեանս կրկին գոյութեամբ էացեալս, այսպէս տար, որ ի չունել բաղձանս ի ցգալի եւ յիմանալի, եւ որ մի անգամ ի բարւոյ եղելում մասին արտակայիլ ի կականաչուք շուայտութեան կենցաղոյս իբր ի հիացմուն մշտընջենաւորել ներդրամագրեցելոյ աղդմունք զաւրութեանց անփոխանորգապէս վեր առաքին. նկատելով զէապէս եւ զանզուգականն բարի ընմանեալն մեզ յայնց որք գերակատար արփիւովն պայծառացեալ անդուստ որոտային զբանն կենաց զկենսաբեր քարոզութիւն սուրբ Աւետարանին։

Արդ, ամենայն իմաստութեան պատճառք յաստուածային երկիւղն զբաւրեմտացն գոլ իմանամք բարձունք, որպէս եւ զպատուեալս աւծութեամբ քահանայական շնորհիւ Սարգիս վերաձայնեալ ի ծնաւղաց, որոց խորհուրդ բարի յինքեան բերեալ, մտաբերեաց սկիզբն առնել ամենայն առաքինութեամբ ղինքն կարգաւորել՝ հանդերձ որդւովքն իւրովք Դաւթիւ քահանայիւ, եւ Վարդանաւ սարկաւագիւ, եւ միւս եւ դեռաբոյս պատուհեական Յովհաննիւիւ, սովիմք, որպէս ձիթենի պտղալից վարսաւորեալ ի տուն Տեառն, աւր ըստ աւրէ խորհէր պայծառապէս յաւելուլ ի սպաս սրբութեան տաճարին Տեառն, խորհեցաւ զկնի այլ առաքինութեան մասանցն ձեռն արկանել՝ ստանալ զկենսունակ սուրբ Աւետարանս ոչ ի ծանրութիւն նիւթիցն նայելով, այլ ի յառատաձիր պարգեւս հատուցան փոխարինին, եւ աղաչեաց թախանձանաւք զմեծանուն գրիչն զԳրիգոր յանձն առնուլ դրել զսա ըստ տենչման սրտին իւրոյ։ Իսկ նա թէպէտ եւ յոյժ ծերացեալ էր եւ վատեալ ի տեսանելոյ, սակայն հարկեալ յանձն առ սկիզբն արար գրչութեան սորա եւ հասեալ ի վերջ գործոյս գրին, եւ այլ ոչինչ կարացեալ առնել, վասն զի աւրհասն ճեպեալ փոխեցաւ յաշխարհէ։ Եւ ապա իմ տեսեալ զթերութիւն սորա՝ Գրիգոր սարկաւագ, ձեռն արկեալ լըցի զթերին ծաղկաւ՝ հանդերձ համ[ա]բարբառաւքն, ոչ ի տկարութիւն անկարութեանն նայելով, այլ ապաւինելով յԱստուած եւ յաղաւթ սրբոյ իմոյ ստացողի սուրբ գրոյս, եւ ըստ իմում կարի ջանացեալ լըցի զպակասն որպէս եւ Աստուած պատահեաց։

Եւ գրեցաւ սա գրիւ ի մեծանուն անապատն Սկևռայ, որ մերձ յամուր դղեակ Լամբրու կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ եկեղեցւոյ որոյ անուն Սուրբ Փրկիչ կոչի, եւ մաւրն նորին Աստուածածնի, եւ գերահռչակ կենսամատակ Սուրբ Նշանին, ի հայրապետութեան աստուածապատիւ տեառն Յովհաննիսի, եւ ի թագաւորութեանս աստուածապսակ արքային Լեռնի, յորում էր թուական Հայոց ՈԿԷ (1218), ի դառն եւ ի նեղ ժամանակի, յորում ասի ազգք քրիստոնէից որ ի Սպանիա, որ եւ Ալամանիք և Ունկռք, եւ այդ բազում ազգք քրիստոնեայք, ձայն տուեալ միմեանց ժողովեցան անհամար հազարք, եւ ամենեցուն զխաչն տէրունական ի միջի եդեալ, երդմամբ հաստատեցին ի սիրտս իւրեանց՝ մեռանել յաղագս Քրիստոսի և սրբոյ գերեզմանի նորա։ Եւ որպէս սկսան նոյնպէս ի նոյն կատարեցան, թէպէտ և ոչ ամենայնքն, սակայն բազումք և մեծ մասն ի նոցանէ. քանզի դէմ եդեալ եկին հասին միաբանութեամբ ի քաղաքն Ադաիա, և մարտ եդեալ կռուէին ընդ հոյլս անաւրինաց. իսկ վասն բազմութեան յանցանաց մերոց, անգործ եղեալ մերայինքն, բազումք ցան եւ ցիր ցրուեցան եւ եղեալ հասին մինչեւ ի մեզ յերկրիս Կիղիկեցաց, եւ բազումք մոլորեալ ի ճանապարհի՝ մատնեցան ի բանդս եւ ի սուր սուսերի, եւ այս վասն բազմութեան յանցանաց մերոց գործեցաւ։ Իսկ թագաւորն Ունկռաց եկեալ եհաս ի քաղաքս կիւղիկեցւոց ի Տարսոն առ թագաւորս մեր եւ երդմամբ սիրոյ և խնամութեան ուխտ հաստատեալ ի միջի իւրեանց՝ նա զառաջի եդեալ ճանապարհն ուղևորեալ յաշխարհ իւր։ Զայս փոքր ի շատէ ծանուցի։

Եւ վասն որոյ սկիզբն արարի յիշատակի գրոյս, ի նոյն դարձեալ վերստին, զամենայն դասս սրբազանից աղաչեմ՝ որք ընթեռնուք զսա եւ կամ աւրինակ առեալ աւգտիք սմանէ, զստացաւղ սորա զՍարգիս աստուածապատիւ քահանայ, ևս զեղբայր սորա զՅովհաննէս քահանայ՝ զգնացեալն առ Քրիստոս, աղաւթից մասին արժանի արարէք։ Եւ զըստ մարմնոյ ծնաւղ սորա զԴաւիթ քահանայ, եւ զՎարդան եղբայր նորին, եւ զմայրն Հատաւրի՝ զհանգուցեալսն առ Քրիստոս, յիշատակի արժանի արարէք։ Այղ եւ զբարեպաշտուհի մայր որդւոց ստացաւղի սուրբ գրոյս՝ Իշխանաւրի անուն, աղաչեմ եւ զսա յիշել ի Տէր։ Իսկ եւ զեղբայր ստացաւղիս Ստեփանոս քահանայ՝ գնացեալն առ Քրիստոս, աղաչեմ յիշել ի Տէր, եւ առ հասարակ զամենեսեան՝ զկենդանիսս եւ զհանգուցեալսն, յիշել աղաւթիւք ի Տէր ամենայն ազգատոհմիւք իւրեանց։

Աղաչեմ եւ ես մեղապարտ գրիչս և յետին աշխատողս Գրիգոր, յիշել ողորմութեամբ զմեղուցեալ հոգի իմ, եւ զծնաւղսն իմ ըստ մարմնոյ, եւ զամենայն ազգատոհմս, եւ որ ճշմարիտ սիրով եւ հեզութեամբ զիմս նուաստութիւն արժանի արարեալ խրատու ներկրթութեան արհեստիս՝ զսկզբնագրող սուրբ Աւետարանիս զյառաջասացեալ գերահռչակ գրիչն Գրիգոր՝ տրամախոհ եւ անհամեմատ յարուեստս յիշատակի արժանի արարէք, եւ դուք յիշեալ լիջիք յողորմութիւնն Աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

71

ՏԱԻՆԱՊԱՏՃԱՌ

«Բազմավէպ», 1887 թ., էջ 107—108

Գրիչ՝ Ստեփաննոս
Վայր՝ Հաղբատ

Ի թուականութեան Հայոց ՈԿԷ (1218), և ի հայրապետութեան սուրբ ուխտիս Հաղբատայ տեառն Յովհաննիսի՝ հեզի և առաքինւոյ... եւ [ի] սպարապետութեանս Հայոց և Վրաց Իւանէի և մանկանն Շահնշահի, ես նուաստ Ստեփաննոս, *հանդերձ եղբարս իմով* Սուրգսի, *և յետին աշակերտք հոգեւոր վարդապետին* Իգնատիոսի, *որոյ յիշատակն աւրհնութեամբ, սնեալ և վարժեալ առ ոտս Սրբոյ Նշանիս Հաղբատայ: Արդ ցանկացող եղեալ իմ այս Տաւնամակացս՝ լցեալ հոգևոր գանձիւք և յերկնային մանանայիւն, զոր շարայարեալ սրբոց վարդապետաց,*

ՌԿԸ 1219

72

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՓԵՍԱՑԻՈՑ ԹՂԹԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

Երևան 1382

Գրիչ՝ Յոհաննէս
Վայր՝ Հառին

ա

304բ Ամենասուրբ Երրորդութեանն փառք, եւ երկրպագութիւն և մեծ գո-
հութիւն յամենայն յարարածոց՝ յերկնաւորաց և յերկրաւորաց, և ի մերմէ
յանարժան բերանոցս աւրհնութիւն և փառաբանութիւն՝ այժմ և յաւի-
տեանս յաւիտենից, ամէն։
Յանսպառ և ի կեն[սատ]ու աղբերէ Հոգւոյն Ս[րբո որ]պէս ար-
բեալ սքանչելի այրս* [սուրբ] հայրապետս Յոհան Ոսկե[բերան զ]մայ-
լեալ անմահական պարգև[աւք] նորա քարոզեալն ի սրբ[ամիտ և աս-
տուած]ազան առաքելոյն ի Պաւղոսէ զբանն կենաց, առեալ ի միտ մեծ ի-
մաստութեամբ և քաղցր բարբառով և բարձր ձայնիւ, մեկնէ և յայտ առնէ
զքաղցր և զամենողորմ կամքն Աստուծոյ, զոր ունի առ ազգս մարդկան։
Քանզի միածին որդին Աստուծոյ, Տէր մեր և փրկիչն Յիսուս Քրիստոս,
305ա կամաւ Հաւր և հաճ||ութեամբ Հոգւոյն Սրբոյ խոնարհեալ յանճառ փա-
ռաց՝ առ մարմին յամենասուրբ կուսէն Մարիամայ, և կրեալ զամենայն
կիրս մարդկային, բայց ի մեղաց, եւ նոր արարչագործութիւն ստեղծա-
գործեաւ՝ կանգնեաց զեկեղեցի՝ յերկինք երկրի, և տուեալ զկենսագոր-
ծող մարմին և զարիւն իւր կերակուր հաւատացելոց///զմարմին և զա-
րիւն ի մ///և Հայր և Հոգին Սուրբ ի նմա։//զեզրական պարգևքս///տեան
տեսեալ սուրբ հայրապ[ետն]///համեղ և քաղցր խրատիւ պատուիրէ
զգուշանալ ի մեղաց, որ է պատճառ կորստեան, և կալ հաստատուն ի
կոչմանն յոր կոչեցարաւք, սպասել և ակն ունել մեծի և աներևակ
աւուրն, յորում գայ Որդին Աստուծոյ՝ դատաւորն ամենայն հոգւոց, հա-
տուցանել ըստ իւրաքանչիւր գործոց անսպառ հատուցմամբ։
305բ Այսմ աստուածային և կենսունակ կտակիս, որ ի ձեռն սրբոյն Յո-
հաննու աւանդեցաւ եկեղեցւոյ սրբոյ, ես անպիտան յորդիս եկեղեցւոյ
Յոհանէս ցանկացայ փափագմամբ սրտիւ, և գծագրեցի զսա դիւրընթերց
գրով և ուղիղ բանիւք, յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց, եղբարց և քերց
իմոց։

* Այս և հաջորդ էջերի միջին մասը խոնավությունից քայքայվել է և չի ընթերցվում։

Եւ դրեցաւ ի ՈԿԸ (1219) թ[ուիս] Հայոց, ի հրեշակաբնակ ուխտիս Հառիճ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Գրիդորոյ և ի հրաշակերտ նոր կաթողիկէիս, յառաջնորդութեան հաւր Պետրոսի և Քրիստափորի և Սոսթենիսի և այլ միաբան սուրբ եղբարցս, որք կ[ա]մակ[ի]ց եղեն և աւգնական աղաւթիւք, և ընծայեցի ղսայ ի սուրբ ուխտս Հառիճայ, յառաջնորդութիւն Գրիգորոյ վարդապետիս, որդւոյ Աբասայ, որ եկն ի սուրբ ուխտէն Սանահնէն՝ առաջնորդ մաւրս լուսւոյ և սպասաւոր, որ է հեղ և խաղաղարար և բարեսէր։

306ա [Ար]դ, աղ[ա]չեմ զամենեսեան, որք կարդայք և լսէք և աւկտիք ի սուրբ գրոցս, կամ գաղաբար առնոյք, զիս՝ զանարհեստ և ղողորմելի գրողս և զստացիչս զՅոհաննէս, և զծնաւղսն իմ, և զեղբարս, և զքեռնս, և զՎարդերեսն յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր, և զվերայգրեալս՝ զհայր Պետրոս, և զՔրիստափոր, և զ[Ս]ոսթենես, և առաւել զնոր հայրս [մ]եր՝ զԳր[գ]որ վարդապետս ղորդի Ա[բա]սայ՝ զա[ր]դարեա[լն ամ]ե[ն]այն ա[ո]աքին[ու]թե[ամ]բ, և զայլ միաբան ե[ղ]բարքսս՝ զքահանայսս և զկրաւն[աւ] որսս, և զծ[երսս] և զերիտասարդսս [յիշե]ցէք յա[ղաւթս ձ]եր։ Եւ [ո]րք յայսմ [սուրբ] ուխտս հա[ն]գու[սցէ] ///ատ և այլ///աբան յա///այժմ, և որ զկնի [մ]եր հանգուսցէ, Քրիստոս Աստուած [զհ]ոգիս նոցա ընդ ամենայն [սու]րբս իւ[ր ամ]էն։

Եւ զմեծ իշխանն մեր ղ[բա]րեպաշտ Վարհւամ, որ զժամատունս չինեաց ի դրան կաթողիկէիս, և զորդիսս իւր՝ զԻշխանն և զՍարգիս պահեսցէ խաղաղութեամբ մեզ ի խորին ծերութիւնն Քրիստոս, և յետ աստի ելանելոյ հանգուսցէ զհոգիս նոցա յարքայութեանն ըստ սիրելիսս իւր, ամէն։

306բ Եւ զՂազար տանուտէր տարոյս, որ է հոգաբարձու եղբարցս, յիշեսջիք յաղաւթս, և որք յիշեքդ զմեզ՝ զպարգևատուն ամենեցուն Յիսուս Քրիստոս հատուսցէ պարգևս բարեաց մեզ և ձեզ և ամենայն հաւատացելոց, աստ և ի հանդերձելումն, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս յաւ[իտե]նից, ամէն։

Բ

45ա Զտառաւտպող գրոցա զՅոհաննէս ստացիչ յիշեցէք, աղաչեմ, յաղաւթսդ ձեր։

Գ

89ա ԶՅոհաննէս գրիչ յիշեցէք յաղաւթս։

Դ

138բ Ո՛վ աստուածարեալ հարք և եղբարք, աղաւթից մասին արժանի արարէք զստացող և զգծող գրոցս, զանարժանս և զեղկելիս զՅոհաննէս և զծնաւղսն իմ, և որք յիշէքդ, յիշեալ լիջիք Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, ամէն*։

* Այս կարգի հիշատակագրութիւններ կան նաև 176ա, 194բ, 224բ, 304ա էջերում։

73

ԱԽՏԱՐԱՆ

Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 803—804

Գրիչ՝ Բարսեղ

Փառք ամենասուրբ Երրորդութեանն յաւիտենաս, ամէն։

Ես՝ տառապեալ գրաւղս Բարսեղ՝ զտիւն ամենայն տքնեալ ի վերայ փայտեղէն տախտակի, եղեգնակոխ արաւրով և խաւսուն ակաւսաւք՝ հինգաշար կենդանի ամլաւք, եռահիւսակ, միահեծան ընդ միմեանս շաբաւյարեցի զբանս կենսաբեր սրբոյ Աւետարանիս, ի թուականիս Հայոց ՈԿՀ (1219), ի թագաւորութեանս Հայոց Մեծաց Լէւոնի, և ի հայրապետութեան տեառն Յոհաննիսի Հայոց կաթողիկոսի, և յիշխանութեանս մերոյ վահր(ա)մա՝ որդոյ Աւեւգունի, որում Տէր Յիսուս ողորմեսցի։

Եւ աղաչեմ ամենիսեան հայցել ի Քրիստոս զթողութիւն մեղաց ինձ Բարսեղի՝ գրչի դրոյս։

Ստացող՝ Յոհաննէս

Ես՝ Յոհաննէս *աւագ սարկաւագ* Այտուցի, Մովսէս *իրիցու որդի, որ ստացայ զդա յարդար վաստակոց իմոց՝ ի յիշատակ ինձ և ծնաւղաց և եղբարց իմոց, ի վայելումն եղբաւրորդոյն իմոյ* Նոսիսի՝ *ճշմարիտ քահանայի, և մատաղ մանգան իւրոյ՝ համանուն հաւսն իւրոյ* Մովսիսի, *որում Քրիստոս ողորմեսցի ա[յ]ժմ և ի յ[ա]պագայն, յաւուրս աներեւկին՝ առաջի արդար դատաւորին անմահ փեսային, և լսել զձայն նորա որ ասէ. եկայք, աւրհնեալք Հաւր իմոյ, մտէք յուրախութիւն Տեառն ձեր։ Ընդ նոսին և մեք մտցուք ի յառագաստս նորա։*

Ծաղկող՝ Յովհաննէս

Ես՝ Յովհաննէս, *որ լցի զպակասութիւն սորա բանիւք, ծաղկաւք և ցանդաւք և համաբարբառաւք, աղաչեմ զամենիսեան, որք ընթեռնոյք զյիշատակարան սուրբ Աւետարանիս, յիշեցէք ղիս և զծնողսն իմ և զուսուցիչս իմ։ Եւ որ զմեզ յիշէ, յիշեալ եղիցի, ամեն, ամեն, ամեն։*

74

ԱԽՏԱՐԱՆ

Երևան 7734

Գրիչ՝ Կոգմա
Վայր՝ Բարջաճ

ա

Փառք ամենասուրբ Երրորդութեանն եւ մի աստուածութեանն յաւիտեանս յաւիտենից, ամէն։

354ա Շնորհիվ Տեառն սկսա եւ ողջ[որ]մութեամբ նորին կատարեցի զկեանսաբեր սուրբ Աւետարանս ի փառաւոր տուրինակէ, որոյ Մուրգա-
նեցի կոչիցի, ի թուիս ՈԿԸ (1219), ի նուաստ անարպատիկս Բարջանենա, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, ի հայրապետութեանս տեառն Յոհաննիսի և յեպիսկոպոսութեանն տէր Առաքելի, ընդ ձեռամբ Կոզմայի մեղաւորի եւ անարժան գրչի։

Արդ, ո՛վ աստուածասէր հարք եւ եղբարք, յորժամ լուսաւորիք սո-
վաւ յիշեսջ[իք] ղիս՝ զԿոզմա, եւ զծնաւղս իմ, եւ զեղբարս, ղի ողորմեսցի մեզ Տէր Քրիստոս, եւ զտառապեալ կին ոմն Թագուճի, եւ յիշողացտ տացէ Տէր զանսպառ բարիսն ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որում փառք յաւիտե[անս]։

355ա Ես Խաչեր մեղապարտ ծառա Աստուծոյ, եւ նուաստ ի քահանայս, զփափաքումն սրտի իմոյ եւ զյիշատակ հոգւոյ իմոյ ստացա զսուրբ Աւե-
տարանս՝ իմով աշխատութեամբ եւ արդեամբք, ի յիշատակ հոգւոյ իմոյ եւ ծնողաց իմոց, եւ ի վաելումն աստուածատուր հարազատ որդեկի իմոյ Մարզարէի, ունելով իմ զսա բարեխաւս առ Քրիստոս Աստուած, զի թերեւս ընկալցի զնուէրս իմ ողորմութեամբն իւրով։

Արդ աղաչեմք զամենեսեան, որք լուսաւորիք սովաւ եւ ընթեռնոյք, յիշեսջիք զիս, զԽաչեր նուաստ քահանա, եւ զծնաւղսն իմ, եւ զկենակից իմ զԵմէն, եւ զհարազատ որդեակքս իմ զՄարզարէ եւ զՎանթին, զի
355բ ողորմեսցի մեզ Տէր Քրիստոս, եւ տացէ մեզ վար||ձս բարեաց յիւր առատ պարգեացն, եւ փրկեսցէ ի սպառնալեաց գեհենի հրոյն։

Եւ յիշողացտ տացէ Տէր զանսպառ բարիսն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից, ամեն։

Բ

108բ Զանարժան գրիչս զԿոզմա յիշեսջիք ի Տէր*։

75

ԱՒԵՏԱՐԱՆ

«Ծուցակ ձեռագրաց որ ի Հանդէս ամսօրեայ», էջ 48—49

Գրիչ՝ Կոզմա

ա

141ա Ստացաւզ սորա՝ զաստուածաբնակ սուրբ եպիսկոպոս վերադիտող տանն Ռափեա զտէր Կոստանդին եւ զշնորհազարդ կրաւնաւորն զեղբայր նորա տէր զԵպիփան յիշեսջիք ի Քրիստոս ամենայն որդիք լուսոյ, որ հետուն գծել զկենսաբեր սուրբ Աւետարանս յիշատակ ինքեանցն եւ ծնողաց իւրեանց, ամէն։ Այլ եւ զանարժան գրիչս զԿոզմա աղաչեմ յիշման արժանի արարէք եւ Աստուած ձեզ ողորմեսցի ամէն։

* Եվսեբիոսի նամակի խորանների գլխազարդ կամարների մեջ նույնպես ոսկեգույն ներկով գրված է «Կոզմա անարժան գրիչ» (էջ 1բ—2ա)։

Բ

237 *Զսրբազան եպիսկոպոսն զտէր* Կոստանդին՝ *զստացաւղ սորա յիշեսջիք ի Քրիստոս, ամէն։ Այլ եւ զմեղապարտ գրիչս* զԿոզմա։

Գ

501ա *Զաստուածապատիւ եպիսկոպոս զտէր* Գրիգոր *վերագիտող տանն* Փեւազմեայ (՞) *եւ զհրաշալի* ծերունի եղբայր նորա* զՂազարէ *կրաւնաւոր յիշեսջիք ի Քրիստոս՝ ամենայն ընթերցողք, ամէն։ Այլ եւ զմեղապարտ գրիչս* զԿոզմա *աղաչեմ յիշել, եւ Աստուած զձեզ յիշելոյ արժանի արասցէ, ամէն։*

Դ

Ո՜վ տէր Պետրոս *աբեղայ, մի մոռանար աղաւթից, մեղայ Տեառն Աստուծոյ իմոյ, մեղայ՝ մեղայ թշուառացեալս մեղաւ։*

76

ԱՒԵՏԱՐԱՆ

Գուշակյան, Ցուցակ Սեբաստիայի, էջ 25

Գրիչ՝ Կոզմա

ա

156 *Զմեղապարտ գրիչս* զԿազմա *աղաչեմ յիշել։*

Բ

543 *Ես Նուաստ քահանայ եւ կրաւնաւորս* Վարգան *զփափագումն սրտի իմոյ եւ զյիշատակ հոգւոյ իմոյ՝ ետու գրել զսուրբ Աւետարանս իմով աշխատութեամբ եւ արդեամբք, ծաղկի նկարով եւ ոսկով զարդեալ, ի յիշատակ հոգւոյ իմոյ, եւ ծնողաց իմոց՝ հաւր իմոյ* Դաւթի *եւ մաւր իմոյ* Թագուհիի, *եւս առաւել հաւրեղբաւր իմոյ* Գրիգորի, *որոց ողորմեսցի Տէր Քրիստոս եւ հանգուսցէ զհոգիս նոցա ի դասս արդարոց։ Եւ ես ակն ունելով յողորմածն Աստուած, զի ընկալցի զսակաւ նուէրս իմ որպէս զլումայս որրդի աղքատին, եւ բարեխաւսութեամբ սուրբ Աւետարանս հաստուսցէ ինձ եւ իմոցն յիւր առատ պարգեւացն զտուրս եւ զողորմութիւն, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս։ Եւ որ կարդայք, աղաչեմ զամենեսեան յիշեսջիք զմեզ առաջի Քրիստոսի, զի եւ դուք ընկալջիք ի նմանէ զվարձս բարեաց, զ*Պետրոս *չնորհալից պատանեակ եւ հարազատ որդեակ իմ յիշեսջիք ի Քրիստոս։...*

Շնորհիւ Աստուածոյ սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զկենսաբեր սուրբ Աւետարանս ի ճշմարիտ եւ փառաւոր աւրինակէ, որոյ մականուն Կոզռան ///**։

---

* *Տպագրված է «զհիրշալի»։*

** *Հաջորդ թերթը չի պահպանվել։*

գ

Գրիչ՝ Սերունի Խաչանա

156 Քրիստոս Աստուած, անսասանելի պահեա յաւիտեան զպարոն Սըմբատ եւ զտիկին իւր Անիգա, որ եւ ստացաւ զսուրբ Աւետարանս յարդար վաստակոց իւրեանց, ի յիշատակ հոգւոյ իւրեանց, աղաչեմ յիշեսջիք առաջի Քրիստոսի Աստուծոյ մերոյ ամէն։

Ձմեղապարտ քահանայ զՍերունի աղաչեմ յիշել ի Տէր/// ։

77

ԱԻԵՏԱՐԱՆ

Հ. Քյուրդյանի Հավաքածու, 20

Գրիչ՝ Կոզմա

ա

1ա Տէր Աստուած ողորմեա Կոզմայի մեղապարտ կրաւնաւորի եւ անպիտան գրչի, ի յաւուր քո դատաստանի, եւ իւր ծնողացն Պետրոսի եւ Մարիայի, ամէն, ամէն։

բ

33ա Քրիստոս Աստուած ողորմեա Կոզմայի մեղապարտ կրաւնաւորի եւ գծողի կենսատու տաճի քո, եւ ծնողաց իւրոց յաւուր դատաստանի քո, ամէն, ամէն։ Ընդ նոսին եւ Պապա Սիմեոնն Ուռհայեցոյ, եւ ծնողաց իւրոց Կիրակոս քահանայի, ամէն, ամէն։

78

ՃԱՌՔ ԵՓՐԵՄԻ ԱՍՈՐԻՈՅ

Երևան 947 (1215 թ.)

Թարգմանիչ՝ Գէորգ
Վայր՝ Քեսուն Խաղաճ

ա

160բ ՁԳէորգ մեղապարտ յիշեսջիք մեղաց թողութեամբ ի Քրիստոս, որ զայս հանդիսաւոր ճառս թարգմանեցի ի քաղաքս Քեսուն վասն սիրոյն և խաղաղութեան։

բ

Գրիչ՝ Վահրամ
Վայր՝ Ակներ

160բ Եւ Վահր[ա]մ ողորմեսցի Տէր Աստուած և ծնողաց նորա։ Յիշեսջ Քրիստոս Աստուած զՅակոբ, որ փափագանաւք ստացաւ զսա ի յիշատակ իւր և ծնողաց իւրոց։

161բ Ի թուիս ՈԿՀ (1219) մեռաւ թագաւորն Հայոց Լեւոն, որում ողորմեսցի Քրիստոս Աստուած և սուրբ թագաւորացն պսակակից արասցէ։

Եւ յայսմ ամի տապալեցին անիծեալ տաճիկքն զԵրուսաղէմ ի հիմանց՝ զբովանդակ եկեղեցիսն, և զպարիսպն շուրջանակի, և զամենայն շինուիքն քաղաքին։ Ճշմարտապէս աստ կատարեցաւ ասացեալն ի Տեառնէ, թէ ոչ մնասցէ այդր քար ի քարի վերա, որ ոչ քակտեսցի, այլ յառաջիկայն Աստուծոյ է գիտելի։

79

ԱՌԱԿՔ ՍՈՂՈՎՄՈՆԻ, ԵՐԳ ԵՐԳՈՑ

Երևան 5979

128ա Ջստացաւղ գրոյս, զաշխատեալս գրիչ աղաչեմ յիշել ի Տէր և Աստուած զձեզ յիշեսցէ ի միւս անգամ գալստեանն իւրոյ, ամէն։
Ի թու[իս] ՈԿՀ (1219) գրեցաւ գիրս։

80

ԱՒԵՏԱՐԱՆ

Ն. Ջուղա 29, Տեր Ավետիսյան, Ցուցակ, էջ 43

Գրիչ՝ Վարդան
Վայր՝ Արճակաղին

ա

201բ Փառք Սուրբ Երրորդութեանն Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից։

Ի Թուականիս Հայոց ՈԿԹ (1220) եղեւ աւարտումն աստուածախաւս մատենիս աւետարանութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զորս տնաւրենութեամբն իւրով կատարեաց վասն փրկութեան ազգին մարդկան։ Որում ցանկացող եղեալ եղբայր ումն Սուքիաս սրբասէր քահանայ, ստանալ զսա յաղագս անձին իւրոյ, ձեռնարկեաց գրել եւ ոչ ժամանեաց, զի չոգաւ առ Տէրն իւր։ Եւ յետ այնր այլ ումն աստուածասէր քահանայ ստացեալ զսա, ետ աւարտել զսա վասն յիշատակի իւրոյ և ծնաւղաց իւրոց։ Եւ հանդիպեալ իմոյ անարժանութեանս Վարդանա գրչի, վերջացելոյ յամենայն բարեաց, կատարեցաւ ղսա ի վանս սուրբ եւ հռչակաւոր ուխտիս Արճակաղնոյ, ընդ հովանեաւ Սրբոց Զօրավարաց և Սրբոյ Նշանիս Կոստանդեա:

Յայսմ ամի, ի մուտ տարոյս, հանգեաւ Թագաւորն Լևոն: Ողորմեսցի նմա Տէր Քրիստոս։

Արդ որք աւկտիք ի սմանէ, արժանի արասջիք յիշատակի զաշխատողքս ի սմա զՍուքիասն և զԻգնատիոս, որ ստացաւ զսա յարդար ընչից իւրոց, ընդ նմին և զմեղապարտ գրիչս. եւ Քրիստոս պարգևատուն բարեաց ողորմեսցի ձեզ յիշողացդ և մեզ յիշելեացս, և նմա փառք այժմ և յանըսպառ յաւիտեննին։

//:/:///: : /· ////: ://:///: : :////://:/: : :· /· ////: : :· /: :·
////: : /· ////: :· /· ///: : ////:
ԲԱ, ՌՏ, ԳԲ, Ա, ԺԻ, ՌՍ, Ա, ՌՏ, ԲԲ, Ա, ՄՄ, Ա, ԲԱ, ՍՎ, ՆՑ, ԺԺ*

բ

200ա Տէր Աստուած ողորմեայ Իգնատիոսի քահանայի՝ ստացողի սորա;
Ընդ նմին և մեղապարտ գրչիս, ամմէն։

---

* Սյունագիր ծածկագրով գրված է. «Իգնատիոսի է Աւետարանս», իսկ գումարագիր ծածկագրով՝ «Գրեալ Վարդանա գրիչի»։

81

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 275 (1077 թ.)

Կազմող՝ Գրիգոր

ա

Քրիստոս Աստուած ի միւս անգամ քո գալստեանդ ողորմեա մեղու-
ցեալ քո ծառայի Գրիգորի, ամէն։
265ա Արդ, որոց լուսաւորեալ են մտացն առաջարկութիւնսն, եւ ըղփոյթ
եւ զյաւժարութիւն առ վերին աշխարհն ունիցին, պմենայն ինչ դիւրաւ
հանդիպի հաճոյ Տեառն և մարդկան, որպէս եւ այժմ է տեսանել առ
այր ոմն մեծ եւ երեւլի՝ ընդ իմաստունս համեմատեալ, եւ քան զբա-
զումս խոհեմ գտեալ, որբոց եւ այրեաց, անիրաւելոց եւ զրկելոց անվե-
հեր աւգնական եւ բարեխաւս ի դրունս արքունեաց, քրիստոսասէր եւ
265բ ազատ || ծընաւղաց զաւակ, որոյ անուն Խայտեր ճանաչիւր, ստացաւ
զլուսաւոր աւետարանութիւնս Աստուծոյ բանին Յիսուսի Քրիստոսի
Տեառն մերոյ, որք առա[տա]հոս վտակաւք արբուցանէ զամենայն հա-
ւատացելոց անձինս, ըստ նախանկար գետոյն յաստուածատունկ դրախ-
տէ անտի բղխեալ ոռոգանել զամենայն երկիր, որ աւրինակէր զլուսա-
ւոր վտակս սըրբոյ Աւետարանիս։
Արդ, այս նախասացեալ պատրոն Խայտերս ստացաւ զսուրբ Աւետա-
[րա]նս զաւակ ի Սիովնի եւ ընտանի յԾրուսաղէմն վերին։
266ա Արդ, հայցէ յամենեցունց, որք լուսաւորիք ի սուրբ պատուիրանէս,
յիշել յարժանախումբ ձեր սուրբ հանդէսս զպատրոն Խայտերն՝ ըստա-
ցաւղ սորա, եւ զծնաւղսն իւր, զաստուածասէր ամուսին իւր զԵմենիկն,
զհարազատ զաւակ նորա զՍտեփանն, եւ զդուստերսն իւր զՆասերն եւ
զԱնըլներն, զի ողորմեսցի սոցա Քրիստոս իւրում փառաւոր եւ ի հրա-
շազարդ առաւաւտուն, եւ գրեսցէ զանուանս սոցա ի դպրութիւն կենաց,
266բ եւ շնչեսցէ զամենայն պարտիս սոցա, եւ ընդ միոյ ընծայա||բերութեամբս
այսորիկ հատուսցէ զանվախճան բարիսն, ամէն։

բ

Բայց նորոգեցաւ սուրբ Աւետարանս ի Թուականիս Հայոց ՌԿԹ
(1220), հրամանաւ պատուական եւ աստուածասէր պատրոնին Ալէքսին,
որ բազում փափագանաւք սրտի իւրոյ ետ նորոգել զսուրբ կտակս, եւ
զարդարեաց ծաղկազարդ երանկաւք, ոսկովք պատուականաւ, եւ գոյնս-
գունեան վայելչական դեղովք, ի յիշատակ ոգւոյ իւրոյ, եւ ծընաւղաց
167ա իւրոց՝ հաւր իւրոյ||Վարդանայ եւ մաւր իւրոյ զԸմբաղին, եւ գեղեցիկ եւ
անդրանիկ պատանեկի իւրոյ Մըխիթ[ա]ր[ի]շին, որ է յիշատակ եւ
ժառանգ ամենայնի, զոր Տէր Յիսուս աղաւթիւք սրբոցն ընդ երկայն
աւուրս պահեսցէ, ամէն։
Արդ, աղերս մաղթանաց արկանեմք առաջի մանկանց Նոր Սիովնի՝
յիշել ի միագումար եւ ի սրաթռիչ աղաւթս ձեր զվերագրեալսդ ամենայն,

որոց ողորմեսցի սոցա Քրիստոս յաւուր մեծի ծագման իւրոյ, յորժամ բանք սպառին եւ գործք թագաւորեն։

167բ Եւ որ տէրն է մահու եւ կենաց՝ Յիսուս Քրիստոս, զյիշողդ հանդերձ յիշելովքս, յիշեսցէ իւր ամենամեծ ողորմութեամբն, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ընդ նոսին եւ զկաղմող սորա զԳրիգոր կրաւնաւոր եւ զծնաւղսն իւր յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս, ամէն*։

82

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 1912

Գրիչ՝ **Մխիթար**
վայր [Հաղբատ]

ա

46ա Աղաչեմ վասն սիրոյն Քրիստոսի եւ սուրբ հաւրս ասասջիք Տէր Աստուած սուրբ հաւրս բարեխաւսութեամբ և ամենայն սրբոց քոց, ողորմեայ **Մխիթարա** գրչի և ծնաւղաց իւրոց, և դուք յիշեալ լիշիք յԱստուծոյ, ամէն։

բ

85բ Ո՛վ Քրիստոսի արեամբն փրկեալ նոր ժողովուրդք, մեծ հաւատով հայցեմ՝ ասասջիք՝ Տէր Յիսուս սուրբ հաւրս բարեխաւսութեամբ ողորմեա աջխատողի և գրողի սորա ի քում գալստեանդ, եւ նոյն Տէրն ձեզ ողորմեսցի, որ և զմեզ յիշէքդ, ամէն։

գ

100ա Ով ասասցէ սրտի մտաւք՝ Տէր աստուած սուրբ հաւրս բարեխաւսութեամբ ողորմեա գրողի սորա եւ իւրայոց ննջեցելոցն, Քրիստոս Աստուած զինքն Սուրբ Գրիգորոյ մասնակից արասցէ, ամէն։

դ

131ա Սուրբ հայր, խնայեա յիս։

---

* Ջնայած երկու ստացողների Հիշատակարաններ են, բայց գրիչը նույն կազմող Գրիգորն է, որը Հիշատակարանների առաջին տողերը և վերջին պարբերությունը գրել է երկաթագրով, իսկ մնացածը՝ գրչագրով։

Վերջում, ստորին լուսանցքում, պահպանվել է նաև մի այլ ստացողի բոլորգիր հիշատակագրությունը, որը, հավանաբար, ԺԹ դարից է. «Ո՛վ ընդրեալ սուրբ մա(ն)կու(ն)ք Սիոնի, [զ]Սարգիս յիշեցիք ներկարար և զամուսին իւր, և զաւակն իւր, որ հալալ վաստակոց գնեաց սուրբ Աւետարանս և եթող յիշատակ հոգոյ և մարմ(ն)ոց...»։ Իսկ ժէ դարի հիշատակագրություններից երևում է, որ, Խպէս և Գրիգոր եղբայրները գնել և նվիրել են զայս սուրբ Աւետարանս Ոճուեու վանացն», հավանաբար Արագածոտնի։

Ե

133ա Սղբարք, աղաչեմ վասն սիրոյն Քրիստոսի, ասասջիք՝ Տէր Աստուած սուրբ հաւրս բարեխաւսութեամբ եւ ամենայն սրբոց ի քում գալստեանն ողորմեա Մխիթարայ գրաւղի սորայ, Աստուած ղինքն իւր սուրբ առաքելոցն մասնակից արասցէ։

Զ

138բ Ո՛վ նոր ժողովուրդք Քրիստոսի, աղաչեմ յիշեսջիք զՍարգիս քահանայ, եւ զՄկրտիչն, եւ զԲռնաւորն ի Քրիստոս, քանզի մեծ հաւատով յիշել հայցեմ, որ Աստուած զձեզ յիշէ իւրում գալստեանն։

Է

Որք ընթեռնուք յիշելոյ արժանի համարեսջիք զտառապեալ եւ զտարակուսեալս մեղաւք զանպիտան գրիչս, զի աստի եւ անդի գրեցի յաղագս սիրոյ սրբոցս, որ Աստուած զձեզ յիշե։

Կատարեցաւ պատմութիւն եւ գովասանութիւն եւ սքանչելիք եւ վարք
178 սուրբ հաւրն մերոյ եւ Լուսաւորչի Արեւելեան աշխարհիս Սրբոյն Գրիգորի յամի վեցհարիւրորդի վաթսներորդի իններորդի (1220), ձեռամբ անպիտան եւ տխմար գրչի, որոյ զանունն գրեսցէ Քրիստոս ի գիրն կենդանի՝ աղաւթիւք եւ բարեխաւսութեամբ Սուրբ Լուսաւորչիս, եւ Սրբոց Հռիփսեմեանց, եւ աղաւթիւք ձերովք, որք կարդայք եւ յիշելոցդ արժանի առնէք։

Սղբա՛րք, մեծ հաւատով հայցեմ, յիշեսջիք զանպիտան գրիչս եւ զծնաւղսն իմ, որ Աստուած զձեզ յիշէ, ամէն։

Ը

198ա Սքանչելագործ Աստուած, բարէխաւսութեամբ սրբոց քառասունիցն, զգիր յանցանաց մեր եւ ծնաւղաց մերոց ջնջեայ եւ պատառեա, եւ զայնոցիկ, որք լի բերանով ամէն ասեն, քանզի ամենեքեան կարաւտ եմք ողորմութեան քո, յորժամ գաս ի նորոգել զերկիր։

Թ

Գրիչ՝ Մարտիրոս

228ա Զտէր Յովաննէս արհեպիսկոպոս եւ զԿիրակոս անյաղթ փիլիսոփայ եւ զհաւրեղբարն իմ զՍահակ յիշեսջիք յաղաւթս ձեր։

Ժ

235բ ...[զՅովա]ննէս ատացաւղ...

ԺԱ

240բ Քրիստոս Աստուած, ողորմեա տեառն Յովաննէսի՝ սրբոյ ուխտին առաջնորդի եւ բարիոք հովուապետի, ամէն։ Ընդ նմին սորին տրուպ եւ անհեդեդ գրչի Մարտիրոսի, ամէն։

ժբ

Գրիչ՝ Կիրակոս փիլիսոփա

276բ Ջ*Կիրակոս փիլիսոփայն* յիշեսջիք ի յաղաւթս ձեր։

ժգ

277բ Քրիստոս Աստուած, ողորմեա տէր Յովաննէսի եւ եղբարն իւրոյ Վարդայպետին ամէն, ամէն։

ժդ

320ա Քրիստոս Աստուած ողորմի Կէրիոյնի եւ ծնողաց իւրոյ, ամէն։

83

ՄԱՇՏՈՑ

Սրվանձտյան, Թորոս Ագբար, Բ, էջ 384

Վայր՝ Կիլիկիա

Գրեալ ի թվին ՈԿԲ (1220), ի Կիլիկիա։

---

* Գ. Հովսեփյանը այս երեք գրիչներին համարում է իրար ժամանակակիցներ, իսկ գրչության վայրը՝ ենթադրաբար՝ Հաղբատը (էջ 810)։

84

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Հովսէփյան, Յիշատակարանք, էջ 813—814

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Տարսոն

Փառք ամենասուրբ Երրորդութեանն, ամէն։

Ըստ յաճախման աստուածային բանին և զՀոգոյն Սրբոյ, որով լուսաւորէ զհոգիս աստուածասիրաց անձանց, և տպաւորէ ի նոսա զլոյս աստուածագիտութեան իւրոյ, և մերձաւորս առնէ աստուածային երանութեանն, որ և զհուր սիրոյ իւրոյ արկեալ ի սիրտ աստուածասէր և ամենարարի տիկնոջ Աւիծի և փափաքաւոր եղեալ աստուածային և կենսաբեր սուրբ Աւետարանիս՝ ի յիշատակ իւր, և ծնաւղաց իւրոց, և ամենայն զարմից, ի զուարճումն և ի պայծառութիւն Նորոյ Սիոնի։ Զի յետ ստացելոյ բազում տառից Հին և Նոր կտակարանաց՝ յաւել զսա ի գանձս աստուածային։

Արդ, գրեցաւ լաւսաւոր և կենսունակ սուրբ Աւետարանս ի թուականութեանս Հայոց ի ՈՀ (1221), ի մայրաքաղաքս Տարսոն, յորում ամենայն ոք տատանէր, և մեղքն բազմանայր, և բարին ի յետկոյս ուղղէր։ Յետ մահուան աստուածասէր թագաւորին մերոյ Լեւոնի՝ վշտատէս ազդրս Հայոց վշտանայր և չարն տեղի տայր. որոշեցան ոմանք ի սուրբ ուխտէս և ի միմեանց միաբանութենէ, և որպէս է ազգիս սովորութիւն՝ ամենայն ոք զինքն յառաջ կոչէր, և չհաւանեալ միմեանց՝ լինէր արեան ճապախիս ի բազում տեղիս, և գաւառք և գեա[ւ]ղք քանդէին և եկեղեցիք աւերէին։ Ի յայսմ դառն և ի շփոթման ժամանակի աւարտեցի զգիրս սուրբ։

Աղաչեմ զամենեսեան, որք կարդայք և լուսաւորիք յաստուածային բանիցս, յիշեսջիք սրտի մտաւք առաջի Քրիստոսի զնախասացեալ տիկին Աւիծ և զբարի ծնաւղն իւր՝ զՇուշան թագուհի, զոր պահեսցէ Քրիստոս խաղաղութեամբ և առանց վրդովմանց՝ ի մխիթարութիւն որոց և այրեաց և առաւել կրանաւորաց դասուց, և յետ աստեացս՝ անպատում ուրախութեանցն ժառանգորդս արասցէ։ Զքրիստոսասէր և զքաջարին՝ զհայր սորա՝ զսիր Պաղտայն՝ զգնացեալն առ Քրիստոս յիշեսջիք ի Տէր, ընդ սմին և զբոյր երանուհոյս՝ զտիկին Ակաց զփոխեալն առ Քրիստոս, և զամենայն ազգատոհմն, և զբարի շառաւեղն ի բարի արմատոյն՝

զքրիստոսատուր պատանին՝ զսիր Մանու[ե]լ՝ զգունդստապլ Աստուծոյ քաղաքին Անտիոքայ, զքուերորդի աստուածասէր տիկնոջս յիշեսջիք ի Տէր, և զմեղապարտ գրիչս զԳրի[գոր] սարկաւագ։ Եւ որք յիշէք բարի յիշմամբ և աներկբայ հաւատով, յիշեսցէ և ղձեզ Քրիստոս ի գալստեանն իւրում, յորժամ բանք սպառին և դործք թագաւորեն, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

85

ՄԱՇՏՈՑ

Վենետիկ 325, Ր. Սարգիսյան, Գ. Սարկսյան, Ցուցակ Գ, էջ 104—106

Գրիչ՝ Տիմաւր

ա

207 Փառք երից անբաւից, անհասից, անիմանալե[ից], միանուոյ ամենակալին Աստուծոյ։ Փառք ամենասյսուրբ Երրորդութեան ի բարձունս, Հոր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ, այժմ եւ միշտ, եւ յաւիտենից։

Ի թուականութեանս Հայոց ՈՀ (1221), ի յամսեանն մեհեկի, որ է աւգաւստոս, որ աւր [Աստուա]ծածնին պահոցն, գրեցաւ ցուցակս այս քահանայ[ա]թ[ա]ղու, ի յընտիր եւ ի լաւ աւրինակէ, եւ Աստուած ողորմի աւրինակիս գրողի Անտոնի եւ ստացողին Բենկանն։ Եւ գրեցաւ սայ ձեռամբ Տիմաւրի անարժան քահանայի, ի վայելումն Ըոստագիսի եւ որդոց իւրոց։ Արդ աղաչեմ ամենիսեան, որք աւկտիք, ուր անկանի սայ եւ ոյր լինիցի, յիշեսցէ յաղաւթս ասելով այսպէս. Տէր Աստուած ողորմեայ գրողի սորայ Տիմաւրի, եւ ծնողաց իւրոց ամէն։ Եւ ողորմեայ ստացողի սորայ Ըոսսւագիսի եւ ծնողաց իւրոց, եւ ննջեցելոց իւրոց, ամէն։ Եւ որք յիշեն զմեզ եւ խնդրեն մեղաց զթողութիւն ի Տեառնէ վասն մեր եւ վասն ննջեցելոց մերոց, երախտահատոյցն Աստուած, բարերարն Քրիստոս ողորմեսցի մեզ եւ նոցայ, եւ թողցէ զյանցանս նոցա, եւ ըստ մեծի ողորմութեանն իւրում առ հաս[ար]ակ ողորմեսցի մեզ եւ ննջեցելոց մերոց, եւ յիշողացն եւ ննջեցելոց իւրեանց։ Եւ ինքն բարերան Քրիստոս որդին Աստուծոյ, աւրհնեալ է յաւիտեանս, յայսմ ժամանակի եւ յիւրում գալստեանն, այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն, ամէն։

բ

Գրիչ՝ Ճարակ

104բ Քրիստոս Աստուած ողորմեայ գրողի սորա Ճարակի, եւ ստացողի սորա Ռրսագիսի քահանայի*։

գ

Ստացող՝ Թորոս

133ա Ես Թորոս, որ առի յոյ ուսայ զգիրքս զայս, Տէր Աստուած ողորմի գրոցս գրաւղիս հոգոյն, ամէն, ամէն, եղիցին։

Բաճարգես շատ ապրես Ռ (1000) տարի, ամէն։

* Այս և հաջորդ հիշատակագրությունները հնատ են գրված, բայց նույն ղարում։

դ

Յիշ[է]այ Տէր, որ անցք անցին ընդ մեզ։ Ջսա Թոռոս գրեց. Տէր Աստուած ողորմի սորայ ամէն, ոյ զԹանաւրգեսն։*

86

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 285

Գրիչ՝ Կոստանդին

ա

Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից։

278բ *Շնորհիւ Աստուծոյ սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ և ղցանկալի Աւետարանս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, զոր աւետարանեցին մեզ առաքեալքն ծարաւելոցս յարբուցումն։*

բ

Կազմող՝ Յոհաննէս

74ա *Ի խնդրոյ սրբասէր և ընտրեալ եղբաւր մերոյ* Յոհաննիսի *պատուական ծերունւոյ, ի յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց և եղբարց և ամենայն ազգատոհմի, ի յարդար արդեանց իւրոց, ի վայելումն անձին իւրոյ յաստիս և ի հանդերձելումն։*

Արդ, գրեցաւ ցանկալի Աւետարանս ի թուին ՈՀ (1221), ձեռամբ Կոստանտեա *մեղապարտ գրչի։ Արդ, որք աւգտիք ի սմանէ կարդալով և գաղափար առնլով, յիշեսջիք զստացող սորա զյառաջասացեալ ծերունին* Յոհաննէս, *և զծնաւղս իւր և զեղբարս, և զքոյրս, և որ ոք յիշեսցէ սրտի մտաւք, ինքն յիշեալ եղիցի յաներեկ աւուրն, ուր բանք սպառին և գործք թագաւորեն, և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։*

Եւ զանպիտան կազմողս Յոհաննէս *յիշեսջիք յաղաւթս ձեր, մանկունք նազելի մաւր Սիովնի։*

գ

*Հբ Ո՛ եղբայր, գիտեա, զի զանուն աւետարանչացն այլ ի վայր պիտէր, որ ղորդ գայր**։*

87

ԱԻԵՏԱՐԱՆ

Մանչյան, Յուցակ Ամերիկայի, էջ 272

Ստացող՝ Սմբատ

314բ *Յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյ Սրբոյ; Ես* Սմբատ *մեղապարտ ծառայ Աստուծոյ, որ խնդրեցի զսուրբ Աւետարանս ի Հ<աւղ>աւրեզ-*

* *Այստեղ, ինչպես նաև վերևում «ոյ»-ը «ուն շաղկապի նշանակությունն ունի։*

** *Գրված է խորանի մեջ։*

բաւրէն իմմէ եւ ի հոգեւոր տեառնէն տէր Ոհաննիսէ Հայոց կաթողիկոսէ։ Եւ նմա շնորհեալ զսա ինձ ի վայելումն կենաց իմոց, եւ ի յիշատակ հոգւոյ իմոյ եւ ծնաւղաց եւ եղբաւր։

Արդ, որք կարդայք զսուրբ Աւետարանս կամ աւրինակէք, զմեղապարտ ծառայս Աստուծոյ զՍմբատ եւ զծնողս իմ եւ զեղբայրն յաղաւթս ձեր անմոռաց յիշեսջիք, եւ Աստուած ձեզ եւ մեզ ողորմեսցի իւրում գալստեանն, ամէն, ամէն։ ՈՀ (1221)։

88

ԱԻԵՏԱՐԱՆ

Երեան 3795

Գրիչ՝ Գրիգորիս

Փառք անեղ, անհաս, անքննին, միշտ և համագոյ Երրորդութեանն անբաւելի Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ, յաւիտեանս յաւիտենից։

Գրեցաւ սուրբ և աստուածային ցանկալի տառս [Նու]աստ քահանայիս ձեռամբ Գրիգորիսի։ Արդ, որք կարդայք կամ աւրինակէք, մեղաց թողութիւն խնդրեցէք ինձ և ծնաւղաց իմոց, և ազգականաց, և Աստուած ձեզ ամենցուն ողորմ[եսցի] այժմ և հանապազ։

[Գր]եցաւ ի թուիս ՈՀ (1221)։

89

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Քյուրտյան, Ցուցակ Հարդիտոդի, «Սիոն», 1975 թ., էջ 82—33

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Փոս անապատ

ա

Շնորհիւ Տեառն սկսայ և ոգորմութեամբ նորին կատարեցի զյղձալիս յոքունց, որով փրկեցան համաւրէն ծնունդ[ք] Ագամա՝ ազատեալք ի մեղաց և զերծեալք ի խաւարէ կռապաշտութեամբ, գալստեամբ Տեառն մեր Յիսուսի Քրիստոսի յաշխարհս, որպէս ծանեաք զՀայրն և զՍուրբ Հոգին լուսաւորեալ և նորոգեալ և նորափետուր զարդարեալ աւազանաւն մաքուր, յորում որդեգրիմք երկնաւոր Հաւրն առհաւատչեա առեալ պարգև զՀոգին Սուրբ, վարդապետութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Արդ, չորեքվտակեան անծայրածաւալ ծովս չորեքեզերեան տիեզերս բոլոր սեռից, ենթակայացեալ բաղկացութեամբ ի մի առ ոգեալ արբուցանել իբր զմի դրախտ։ Վասն զի և զհեղեալ բանն ի ծոցոյ Հաւր ամենայն արարածք անոյշութեամբ լցան ըստ ճշգրիտ և անհաս պատմութեան, առընթեր վկայիւ մերձ կացելոյ անկելոյ զանջաւք տէրունական, տեղեկացեալ և հասու լեալ անհաս խորին խորհրդոց մեծին Աստուծոյ, ծանուցանէ տիեզերաց զաստուածութիւնն Որդւոյ, հանդերձ իրիւք ընկերիւք աստուածաբանեալ Մաթէոս, Մարկոս, Ղուկաս, Յոհաննէս։ Սմա բաղձացեալ միայնացեալ Աստուածատուր անուն յորջորջի, ի մխիթարութիւն հոգւոյ և մարմնոյ յար ընդ նմա խաւսակցելոյ, և յետ մահու յիշատակ իւր և ազգատոհմի իւրոյ։

Արդ, ես ողբալիս և հոգով մեռեալս Գրիգոր կոչեցեալ փցուն մտաւք և գրչաւ, աղաչեմք զամենեսեան չլինել մեղադիր խոշորութեան գրոյս, զի թեպետ և[[[բայց տառիս դառն. զի անաւրէնք յամենայն կողմանց գերեցին զաշխարհս Կիլիկեցւոց. զի թագաւոր ոչ գոյր, և իշխանսն անհրնաղանդ իւրեանց, մինչ Աստուած կամեցաւ և թագաւոր եւս, և սակաւ մի խաղաղացաւ յայս դառն ամքս։ Ես անհանգիստ, ի տեղիս տեղիս փոփոխելով, աւարտեցի զգիրս յընտիր աւրինակէ՝ յանապատս Փոս կոչեցեալ, ընդ հովանեաւ Սրբոյ Աստուածածնին և այլ սքանչելագործ սրբոց ի մէջ[[[որ եղբարց, և ընտիր առաջնորդի, որ զպէտս մարմնականս

անթերի պահէր և յորդորէր ի գիրս, և զայն որ զառաջի զգիրն և զծաղիկն զարդարեաց, և զամենեսեան որ զաւգնական են լեալ, և որ հակառակ լեալ են, ինքն գիտէ, զի խիստ(յ)ոյժ ինձ հատոյց, և այն ի չարէն էր ամենայն; Որ առատն է ի տուրս, տացէ* ամենեցուն յանպակաս պարգևացն մասն բարեաց՝ յիշողացս և յիշեցելեացդ առ հասարկ, և նմա փառք յաւիտեանս և յապառանին, այժմ և միշտ, յամէն, ամէն։ Եւ ի թուականս ՈՀԱ (1222), և կաթողիկոս Հայոց Կոստանդին, և թագաւոր Փիլիպպոս, յայսմ ամի հաստատեցան յաթոռս, Քրիստոս Աստուած քստ կամաց իւրոց հաստատուն պահեսցէ...

բ

Աւետեաց բաշխող Քրիստոս առատապարգև, պարգևեալ մեղսասէր անձին գրչի թողութիւն մեղաց, և ստացողի սորա, [և] ամենայն մեղաւորաց, զի կարող ես յամենայնի և ընդ քեզ, Հաւր և Սուրբ Հոգւոյն փառք յաւիտեանս, ամէն, ամէն։

գ

Հետագա լրացնող Մարգարէ

Ո՛վ սուրբ եղբայրք, որք հանդիպիք այսմ սուրբ Աւետարանիս, կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մեղսաքաւիչ աղաւթս ձեր զՍիմէոն քահանայ վանից, որ ստացաւ զսա յարդար ընչից իւրոց յիշատակ իւր և ծնողաց իւրոց, և ամենայն ազգայտոհմից՝ կենդանեաց և ննջեցելոցն։ Ընդ նոսին և զիս զմեղաւոր լցեալ ոգիս զՄարգարէ, որ սակաւ մի աշխատեցա ի սայ, ի համարքն գրել, և թուխթս որ պակաս էր և կտրեց** ու գրեցի, և Աստուած ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս ողորմեսցի ի յարդար դատաստանին, և նման փառք, ամէն։

90

ԳԻՐ ՀԱՒԱՏՈՅ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ

Երուսաղէմ 354, Պողարյան, Ցուցակ Բ, էջ 253

Գրիչ՝ Յոհաննէս

ա

463 Փառք Սուրբ Երրորդութեանն յաւիտեանս ամէն, որ ետ զաւրութիւն տկարութեանս իմոյ հասանել յաւարտումն մատենի տառիս եւ խոստովանութեան Հայաստանեաց գրոյս, զոր սուրբն՝ Ներսէս /// ազգս Հայաստանեաց զի առեալ նմա /// Հոգւոյն Սրբոյ թելադրեալ ի շրթունս /// անից, յայտնապէս ցուցեալ զպատասխանատուութիւն հերձուածողաց, եւ այլասեռ ազգաց, եւ այս սովորութիւն Յունաց եւ բարբարոսաց անմտից եւ տգիտաց, որք ոչ խաւսեցին զուղեղս, այլ հակառակ նորին։ Սովաւ

* Տպագրված է «որ առատն է ես ուր ստացէ»։
** Այսինքն՝ «կտրուածս»։

ազգս մեր ափ ի բերան առնեն զայնոսիկ, որ հակառակին ճշմարտութեանն։

Եւ ես տրուպս եւ յետինս, բազմամեղս եւ անիմաստս, եւ նուաստս ի քահանայն ի գործ առեալ գրեցի զսա ի խնդրոյ սրբասնեալ քահանային Ստեփանոսի, *ի վայելումն անդրանիկ որդոյ իւրոյ* Յոհաննիսի<սի> *դեռաբոյս սարկաւագի, եւ յիշատակ ննջեցելոց իւրոց։*

Արդ, որք ակտիք ի սմանէ կամ աւրինակէք, յիշեսջիք ի Քրիստոս զսրբասնեալ քահա[նա]յն զՍտեփանոս *եւ* զՅոհաննէս *որդին նորին։*

Եւ ես մեղաւք լցեալս անարժանս յիշելոյ, յերեսս անգեալ լալով աղաչեմ զսուրբ քահանայսդ եւ զսուրբ մանկունս եկեղեցւոյ որք ակտիք ի սմանէ, յիշեսջիք զիմ անարժանութիւնս, եւ թողութիւն հայցեցէք յԱստուծոյ բազմամեղ անձին իմոյ եւ Աստուած ձեզ եւ մեզ ողորմեսցի։ ՌՀԱ (1222)։

Բ

368 *Ո՜վ սրբասնեալ քահան[ա]յք եւ աստուածասէր ժողովուրդք, յերեսս անկեալ աղաչեմ զձեզ, խնդրեցէք յԱստուծոյ զթողութիւն յանցանաց բազմամեղիս* Յոհանիսի, *եւ Աստուած [ձեզ եւ մեզ] ողորմեսցի։*

Գ

Քրիստոս որդի Աստուծոյ, յորժամ գաս քո հայրենական փառաւքդ հատուցանել ըստ գործոց, դու ողորմեա մեղուցեալ ծառայիս քո Յոհանենիսի, *եւ շնորհ[ե]ա թողութիւն բազում եւ դժընդակ յանցանաց նորա, եւ քեզ փառք յաւիտեան, ամէն։*

91

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 695 (1681 թ.)

186ա *Երազահանս այս* խալաֆ *սուլթանն* Սիսիանու *և* խորասանու *և* Յարախու *տէր էր, զիւր յաշխարհին գիտնականքն ժողովեաց ի Ա տեղ և հրամայեաց թէ ի վեր ձգեցէք զինչ փեղամպարքն երազ են տեսեր։ Եւ մեկնեցին Աստուծոյ հրամանաւն...*

188ա *Զայս Երազահանս ի տաճիկ յարապ գրէ ի հայ գիր մեկնեալ* Առաքել *իմաստասէր աբեղայն, որ մականուն* Վառ *ասեն, և* Մխիթար Կլեկանց *և* Շերանն, *ի յ*Անի *քաղաքին դռան ի վերա բերդ և անունն* Մաղասբերդ|| *և բերդին անունն* Ծարfար: *Ի յայն բերդին զընտանն մեծ մարդ մի կայր տաճկաց, և այս գիրս ի հետ յայն զընտանին և յայս Գ հոգիս փոխել են ՌՀԱ (1222) թվին ի հայ լեզու, ի սահմի ամսոյ Գ աւուրն, որ է աւրհնեալ անզրաւ յաւիտեանս, ամէն**։*

---

* *Վիեննայի Մխիթարյանների № 88 ձեռագրում (էջ 6բ) հիշատակարանն այլ խմբագրությամբ է. «Այս Երազահան գիրքս խալաւ խանին եւ սուլթանին է. նովաւ յաբեզան յԱնեցի, որ անուամբ Առաքել ասեն, ու Մխիթարիշ Եկչկանց, եւ Շիրակվաննցի, ի յԱնի քաղաքի մաւտն։ Եւ*

92

ԱԻՏԱՐԱՆ

Վիեննա 218, Տաչյան, Ցուցակ, էջ 558—559

Գրիչ՝ **Նարուգէս**
Վայր՝ **Սեբաստիա**

ա

260բ *Յամի վեցհարիւրորդի* [եւ] թանասներորդի** եւ միերրորդի թուա-*
բերի յաբեթական սեռի եւ ազքանազեան տոհմի։

Գրեցաւ աւետարեր սուրբ մատեանս ի քաղաքիս **Սեբաստիոյ**, *ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի եւ նախախնամողին Աստուծոյ զամէնեսեան, որով եւ մեք խնամեալք նորին ողորմութեամբ աւարտեցաք զսա ի փառս Քրիստոսի Աստուծոյ...։ Արդ, որք աւգտիք ի սմանէ ընթերցմամբ կամ գաղափարաւ, յիշեսջիք զստացող գրոցս* **զՆարուգէս**, *զսուտ եւ զախմար գրիչ, զի ոչ եթէ հռիտոր էի գրչութեանն արհեստի, այլ ի յաւժարութենէ մտաց եւ ի կարաստութենէ ձեռնամուխ եղէ գրոյս։ Տէր Յիսուս ի միւսանգամ գալստեան քո ողորմեա* **Ներսէսի** *սուտանուն քահանայի եւ ծնողաց իմոց* **Բարսեղ** *երիցոյ եւ մաւր իմոյ* **Մարիամէ**. *եւ եղբարց իմոց* **Բանարգէս** *էրիցոյ եւ* **Յովաննէսի** *եւ* **Նահապետի** *եւ ընդ նոսին քեռն իմոց* **Տիրանցի** *եւ* **Տալիթի** *եւ այլ ազգացն՝ կենդանեաց եւ առ Քրիստոս փոխեցելոցն եւ Դշխուին եւ Պոծաոին, զի դեռաբոյս էին եւ ոչ ժամանեցին յապաշխարանս մինչ հասարակաց ննջումն եհաս ի վերայ նոցա. եւ Հայրապետ երիցոյ եւ Գրիգորոյ եւ ընդանեաց նոցա ողորմեա Տէր, զի ծնողաբար ընկալան ի յարկս իւրեանց մինչեւ յաւարտումն գրոյս։ Եւ Սիմէոնի գրակապի եւ որ շատ եւ որ սակաւ աւգնական եղեւ տալով կամ խաւսաւք կամ բարիոք հայելով, ընդ միոյ հարիւրապ-[ատ]իկ առցէ ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, ամէն, ամէն։*

բ

261բ *Ով արարիչ իմ Տէր եւ յոյս,*
Եւ լուսատու խաւարելոյս,
Ճեպել ի ճար անճարելոյս,
Կարեկցելով ինձ նեղելոյս
Զեռնատու լեր ծփելոյս.
Ծովակենցաղ ընկլուզելոյս,
Գովեալ փրկիչ յուսացելոյս։

ի թվականութեան Թորգոմեան ՈՀԱ (1222) էր, ես անարժան առաքել աբեղայս թարգմանեցի ի յարապ լեզուէ ի հայոց բառ, եւ ի յամսեանն Հայոց Մեծաց սահմի Գ.։

Իսկ Երուսաղեմի № 1605 ձեռագրում (Ն. Պողարյան, Ցուցակ Ե, էջ 400) այսպես է. 177 «Այս Նրազահան գիրքս խալօ սուլթանին է, նովաւ աբեղան Անեցի, որ անուն առաքել ասէին ու Մխիթարիչ Ձեղկանց, ի Շիրակունի, ի յԱնի քաղաքն ի մաւտ, ՈՀԱ (1222) էր թիւն, թարգմանեցին ի յարապ լեզուէն ի հայ լեզու, ի յամսեանն սահմի Գ»։

Այս երեք հիշատակարանների միահամուռ վկայությամբ Նրազահանը թարգմանվել է 1222 թ. սահմի 3-ին, Անիի միջավայրում, երեք անձանց համագործակցությամբ։

** Մի տող քերված է։*

*** Կարող է լինել նաև «ութհանասներորդի» (1232)։*

գ

Ե՛ւ Աստուած յիշողացն եւ յիշելոցն ողորմեսցի եւ նմայ փառք յաւիտեանս ամէն՝ խոշորութիւն եւ պակասութեան գրոյս մի մեղադրէք աղաչեմ աղաչեմ՝

դ

121ա *Տէր Յիսուս քո սուրբ ծնողիդ բարեխաւսութեամբս... ողորմեա Դժխուին, եւ Պոծառին, եւ ընդ նմին եւ գծողի սորա բազմամեղի ի քո միւսանգամ գալստեանն, ամէն՝*

ե

201բ *Տէր Յիսուս Քրիստոս... ողորմեա Դժխուին եւ Պոծառին տարաժամ եւ անապաշխար վախճանելոցն՝*

93

ԱԻԵՏԱՐԱՆ

Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 819—820

Գրիչ՝ Յովհաննէս
Վայր՝ Սիս

Ի թուականութեանս Հայոց ՈՀԱ (1222), ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ եւ ի թագաւորութեան Փիլիպպոսի նորընծայ արքայի, որ յայսմ ամի պսակեցաւ եւ ընկալաւ զաթոռ թագաւորութեան տանս Հայոց, գրեցաւ սուրբ եւ կենսագիր Աւետարանս, ձեռամբ Յովհաննիսի բազմամեղի, ի քաղաքն Սիս, ընդ հովանեաւ սուրբ տաճարիս, որ յանուն Սրբուհւոյն Մարինէի՝

94

ՀԱՂԲԱՏԻ ԱԻԵՏԱՐԱՆ [1]

6288 (1211 թ.)

Վայր՝ Մեծ Կողմանց
Ս. Գրիգոր եկեղեցի

358ա Սիրոյ ղաւրութիւն գերեղ[ա]նց է քան զբնութիւն, եւ բարեխորհ արանց անյագալպէս ունի առ ի բարին զ[ը]նթացս որ առ Աստուած, մանաւանդ առ որ աստուածայինն զ:ւրանայ գիտութիւն, եւ բաց եւ սրահաց ունի զհոգոյն տեսութիւն, արհամարհելով զանցաւոր եւ զապականացու կեանս, որպէս աստանաւր տեսաք, յորս աստուածայնոյն գտաւ բարոյն տեսութիւն առանց դանդաղանաց, որպէս սիրեցեալս յԱստուծոյ եւ յաստուածայնոցս Սարգիս քահանայ սնեալ սրբութեամբ ի մէջ եկե-
358բ ղեցոյ, եւ զպրգացեալ ի մէջ իմաստ||[ու]ն եւ հոգեւոր արանց, ըստացաւ զկենսաբեր Աւետարանս, զոր քառայհոլով վտակաւքն արբուցանէ զտիեզերս, գանձ անպակաս յերկինս, եւ յիշատակ յաւիտենից, ըստ գրեցեալումն, թէ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընտանիք իցեն նորայ յԵրուսաղէմ։

Արդ երանելիս Սարգիս իբրեւ զիմաստուն վաճառական ի խնդիր եղեալ պատուական մարգարտին, եւ գտեալ զսա ի գաւառին Անոյ, մեծայծախ, ոսկեգիր եւ ոսկեճաճանչ ծաղկաւք զարդարեալ, ըստացաւ զսա
359ա ի հալալ [ըն]չից իւրոց, ի բարեխա||ւս հոգոյ իւր առ Քրիստոս, եւ յիշամ[ա]տակ յաւ[յ]իտենական ծնաւղաց իւրոց, եւ ընծայեաց զսա Մեծկողմանց եպիսկոպոսարանիս, որ է իւր տեղի սնընդեան, եւ ի տարոջն Բ աւր ժամ նմայ յիշատակ կատարեն սրբոյ Սարգսի տաւնին։ Որ խափանէ, նորա ազգի յանցանացն պարտական եղիցի, եւ որ զայս Աւետարանս ի եպիսկոպոսարանէս հանել ջանայ, ի յառաջնորդաց եւ կամ յիշխանաց, հանե[ա]լ եղիցի նա յարքայութենէն Աստուծոյ, եւ որոշեալ հոգով եւ մարմնով ի Սուրբ Երրորդութենէն, եւ նզովեալ եղիցի ՅԺՀ հայրապետէն։

359բ Ընծայեցաւ կենսա||[բե]ր Աւետարանս Սուրբ Գրիգորիս, ի թուականութեանս ՈՀԲ (1223), ի յիշխանութեանս հղաւրին Հասանայ որդոյ Վախաանգա, եւ ի հայրապետութեանս տեառն Յոհաննիսի։ Արդ, որք ընթեռնոյք եւ լուսաւորէք, կամ գաղափար առնոյք, զՍարգիս եւ զՄխիթար, որ գնեաց եւ երեր զԱւետարանս, յիշեցէք ի սրբայփայլ եւ ընդու-

նակ յաղաւթս ձեր, եւ Քրիստոս Աստուած յիշաւղացդ եւ յիշեցեալոցդ ողորմեսցի իւրում գալստեանն եւ յապագայի աւուրն, ամէն։
Զսակաւ աշխատողս յիշեցէք ի Տէր աղաչեմ։

95

ԱԻԵՏԱՐԱՆ

Ղազիկյան, Համառօտ ցուցակ Ղալաթիոյ, էջ 13

Վայր՝ **Թագուրի վանք**

Արդ եղեւ ղրաւ գրութեան սորա ի թուականիս Հայոց ի ՈՀԲ (1223), ընդ հովանեաւ սուրբ տաճարիս Տիրամաւրն, յանապատիս **Թագուրի վանք**. ընդ հովանեաւ Մամեսդիոյ...

96

ԱԻԵՏԱՐԱՆ

Վենետիկ 94 (1543), Սարգիսյան, Ցուցակ Ա, էջ 422—423

Գրիչ՝ **Պետրոս**
Վայր՝ **Խաւմ խաղաք**

237բ Փառք կենարարին եւ յիշատակ գրչի։

Փառք անբաւժանելի եւ անպատումն Սուրբ Երրորդութեան եւ մի աստուածութեան՝ Հաւր և Որդոյ և Սուրբ Հոգւոյն, որ արժանի արար զոկարութիւնս իմ հասանել ի կատարումն այսմ աստուածապատում և կենեղուտ սուրբ Աւետարանիս։ Որ [է] սայ ծաղիկ անթառամ և անուշահոտութիւն խնկոց, լոյս խորհրդոց և առ Աստուած ընթացք, և դաստիարակ մանկանց առագաստի։ Եւ այժմ աւարտեալ յանկեցաւ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Արդ, աղաչեմք զամենիսեան սիրովն Աստուծոյ յիշել աղաւթիւք զգծողս սուրբ Աւետարանիս՝ զ**Պետրոս** երեց, և զհայրն իմ զ**Ղոնիշէ** քահանայ, և զմայրն իմ զ**Շուշան**, և խոշորութեան գծիս անմեղադիր լերուք, և Տէր Յիսուս Քրիստոս մեզ և ձեզ ողորմեսցի յաւուր գալստեանն իւրում, ամէն։

Տէր աստուած ողորմի **Վահանադրէի**, և հաւրն իւրոյ **Յովճաննէս** քահանաի, և մաւր նորայ որ անուն **Տիկին** յորջորջի, զի և սայ շատ աշխատեցաւ զկնի մերում և շանս դնէր վասն գծելոյ սուրբ Աւետարանիս, և սմայ ողորմեսցի Տէր Յիսուս, ամէն։

Տէր ողորմեսցի հոյսանն **Աստուածատրոս** և ամուսնոյ իւրոյ **Ռամիճ**, որ ստացաւ զսայ յարդար վաստակոց իւրոց որգեկին իւրոյ **Հազրպետ** քահանայի, վասն զի շատ ցանկութիւն ունէր հոգեւորական և բարեպաշտութիւն գործու, և ջանս շատ եղեալ զաւակին իւր քահանայութեան՝ մինչև ժամանեաց ի կատարումն խորհրդոցն և տեսաւ զորդեակն իւր

քահանայ, և ստացաւ զսայ յիշատակ հոգւոյ իւրոյ և ի վայելումն պատանեկի իւրոյ Հազրպետի: Եւ Տէր Աստուած վայելել տացէ մինչև ի խորին ծերութիւն, և ողորմեսցի Աստուածատրին հոգւոյն, ամէն:

Տէր Աստուած ողորմեսցի գաւառապետին՝ Մրվան դարբնի, որ սաբուծիկն մեր զուգէր, և այլ զինչ և տանս պէտք էր՝ անտրտում աշխատէր և ոչ յապաղէր, այլ սրտով, խորհրդով գործէր, և փափաքանաւք ցանկայր յիշել զանուն նորա ի սուրբ յԱւետարանս. Տէր Աստուած ողորմի սմա և թողցէ զբազմութիւն մեղաց իւրոց, ամէն:

Գրեցաւ տուրբ Աւետարանս ի թուիս ՈՀԲ (1223), ի գաւառիս Հայոց Նիկոպաւլիս, որ և Ախշար յորջորջի, և մականուն Մելիսոյ, ի քաղաքս որ կոչի Խաւմ, ընդ հովանեաւ Սրբոյն Ստեփաննոսի, ձեռամբ Պետրոսի մեղապարտ քահանայի, ի վայելումն պատանեկին Հազրպետի և զաւակի իւրոյ Մարտիրոսի: Արդ աղաչեմք զամենիսեն վասն սիրոյն Քրիստոսի թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ՝ վասն մեղաց մեր և ննջեցելոց մերոց, և Քրիստոս Աստուած ձեզ ողորմեսցի, ամէն:

Քրիստոս Աստուած, աւգնեա Յովանիս քահանայի և ողորմ[ե]ա ծնողաց իւրոց, որ գնամակն կոկէր և ձեռնատու լինէր մեզ:

97

ԺՈՂՈՎԱԾՈ

Երևան 2101

Գրիչ՝ Ստեփաննոս Աղթամարցի
Վայր՝ Խորանաշատ

ա

85բ Ի ՈՀԲ (1223) թուականիս Հայոց գրեցաւ Առասպելախաւս տետ[ր]ակս այս ի ձեռն Ստեփաննոսի Աղթամարեցոյ, ի վանքս Խորանաշատու, ի գաւառիս Գարդմանայ, առ ոտս աղփաճեմ<ա> և աստուածար-
86ա դիմական վարդապետիս Վանականի, որ փայլէ ի ժամանակիս որպէս|| զաստղ առաւաւտու և ի կողմանց հիւս[ի]սոյ, նահանգիս Թորգոմա՝ ամպ հոգեցաւղ, հանապազ հոսելով զաստուածահնսն և զբանաւորաց ոռոգանէ երկիր: Եւ թեպէտ կրսեր էաք ի լսարան համահանդիսիս և անարուեստ գոլով գծոյ գրոյ, այլ յաւժարութեամբ սրտիւ, միայն յուսացեալ յԱստուած, ի ձեռնային յաւուրս գրեցաւ: Այլ աղաչեմ չլինել մեղադիր թիւրութեանն, զի զյոլովն ճրագով գրեցի: Եւ զայս միայն խընդրեմ՝ յիշել զիս, և զհայրն իմ տէր Սարգիս, և զծնաւղսն իմ ըստ մարմնոյ, և զեղբարսն, և զսիրելին իմ զԻզնատիոս քահանայ, և Քրիստոս հասարակաց ողորմեսցիս՝ յիշողացդ և յիշեցելոցս, և նա եղիցի աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

բ

190ա Աւրհնեալ է Աստուած յաւիտեանս, որ հասին ի վերջին գիծս նախանամական գրոցս, ի թուիս ՈՀԲ (1223), ի տաւնի Աստուածածնիս, ի վանք Խորանաշատու, շինեալ Վանականի իմ վարդապետիս, որոյ ի

հանգէտն չհասի, այլ ի վերջ անկեալ անպիտանիս, որպէս զանաս ի յասողէ։

Գ

204ա Աւրհնեալ Սուրբ Երրորդութիւն Աստուած յաւիտեանս, ամէն։

Գրեցաւ Իմաստացոյց բանքս առաջնոց գրաւղաց բնութեան իրաց, որ ըստ գովի և պարսաւի, ի ՈՀԲ (1223) թուաբերութեանս մերաին ազանց, ի վանքս Խորանաշատ կոչեցեալ, ի նահանգիս Աղուանից, ընդ[հով]անեաւ մաւրս լուսոյ Աստուածածնիս, ձեռամբ Ստ[եփ]անոս Աղթամարեցոյ, կրթեալ առ Վանական վ[ար]դապետիս։

Արդ, աղաչեմ զհանդիպեալսդ յի[շել] միով Տէր ողորմեաւ զվարդապետն իմ զտէր Սարգիս հաւրեղբայր և զծնաւղսն իմ զՅոհաննէ[ս և] զիմսն ամենայն. և հասարակաց ողորմեսցի Աստուած՝ յիշողացդ և յիշեցելոցս, և ինքն եղիցի աւրհ[նեալ] յաւիտեանս։

98

ՃԱՇՈՑ

Վիեննա 5, Տաշյան, Ցուցակ, էջ 20—21

Գրիչ՝ Յոհաննէս Բաբերդացի
Վայր՝ Բաբերդ

ա

134բ Ով սուրբ դասք քահանայից… արդ ի յայնմ ատենի յիշեսջիք զստացաւղ սուրբ տառիս աստուածապատում զՄկրտիչ քահանայն, եւ զծընաւղք սորին զպարոն Տիրացոյն եւ զՄամխան տիկինն, եւ զեղբայրն զՄելիքշահն, զհանգուցեալսն առ Քրիստոս։ Եւ զքարեսէր եւ զհեզահոգի ամուսինն զՄկրտիչ քահանային, զԿիրա խաթունն եւ զնորաբողբոջ եւ ղդեռահաս զաւակք սոցին, զՄխիթարն, եւ զՄելքիսեդեկն, եւ զԱբդլմըսեհն, զոր Տէր Աստուած պահեսցէ զսոսա…

Արդ, ստացաւ զսա Մկրտիչ քահանայն ի հալալ արդեանց իւրոց յիշատակ բարի ինքեան եւ ծնաւղաց իւրոց, եւ ամենայն արեան մերձակայից եւ ազգականաց իւրոց, եւ ի վայելումն անձին իւրոյ եւ զաւակացն իւրոց վերոյգրելոցն ի սմա՝ Մխիթարին եւ Մելքիսեդեկին եւ Աբդլմսեհին, զոր Տէր Աստուած վայելեալ տացէ զսա սոցին ընդ երկայն աւուրս, ամէն։ Արդ աղաչեմ զամենեսեան զարժանաւոր եւ զառաքինասէր դասս ընթերցողաց սուրբ գրոցս, արժանի առնել յիշատակի…։ Եւ զիս զառածեալս մեղաւք եւ զանարժանս ի գրչաց զՅովաննէս երէց եւ զծնաւղսն իմ յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր եւ զԵրկայն քահանայն՝ զփոխեցեալն ի Քրիստոս։

Բ

333բ Քրիստոս Աստուած մեր…
Ողորմեա ստացողի սուրբ բուրաստանիս
Եւ ծաղկաւետ լցեալ տնկիս,

Որ նորոգաւզ է աշխարհիս,
Յաւէտատող տամնափմբիս։
...Յերես անկեալ կամ ի յերկրիս
Եւ աղաչեմ զձեզ ողբալիս,
Յիշման առնել զիս արժանիս
ԶՄեղաւք լցեալս եւ զզազրալիս,
ԶՅովան Բաբերդացիս:

գ

34բ Ո՜հ, որ թանաքս է մածուցեալ եւ գծագիրս է յիմարեալ։

դ

75բ ...Ի հասանել ընթացիս
Յիշեա եւ զիս զողորմելիս
ԶՅովանէս Բաբերդացիս:

ե

Ծաղկող՝ **Մկրտիչ**

134բ Նուաստ եւ ներգեւեալ ոգի **Մկրտիչ** եպիսկոպոս եւ սպասաւոր բանի գրեցի, ով որ զյիշատակարանն չնչէ՝ Աստուած զինքն ջնջէ ի դպրութենէն կենաց, ամէն*։

զ

Հետագա գրիչ

1ա Թվին ՌՄԺԷ (1768)-ին գիրքս այս եղեւ ՇԽԵ (545) տարեկան**։

99

ԱՒԵՏԱՐԱՆ

Սանջյան, Ցուցակ Ամերիկայի, էջ 389—390

Գրիչ՝ **Գրիգոր**
Վայր՝ **Առոյծ Մարգ**

ա

264բ Փառք եւ պատիւ եւ գոհութիւն ամենասուրբ Երրորդութեանն, Հաւր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգւոյն, յաւիտեանս յաւիտենից, ամեն։ Որ ետ զաւրութիւն ծառայի իւրոյ **Գրիգորի** կատարել զսուրբ տառս քառաած աւետարեր սուրբ նամակս, որ յորդառատ բղխեալ լցուցանէ զտիեզերս ամենայն աստուածայհրաման կանոնագրութեամբ; Եւ է սա սահման եւ կնիք երկնագնաց ճանապարհին, եւ դուռն մտից կենաց սովաւ վարժելոյն, որում ցանկացող եղեալ բարեսէր քահանայի ուրումն **Մարտի**–

* Գրված է լուսանցազարդի մոտ, զարդերի թանաքով։

** Նույնը կրկնված է նաև էջի մեջտեղը։ Հիշատակարանի թվականը ունեցող մասը, որ 1768 թվին դեռ կար, այժմ կորած է։ 1768 թվին ձեռագիրը ՇԽԵ (545) տարեկան էր, նշանակում է գրված է եղել 1768—545=1223 թ.։

ոս կոչեցեալոյ, որ բազմաբաղձիկ տարփմամբ եւ կենաղատ տենջմամբ եւ սիրայորդոր փութով ստացաւ զսա գանձ աստուածային եւ մարգարիտ պատուական եւ վերին պայծառութեանն առիթ։ Որոյ եւ ես հլու եւ հպատակ եղէ աստուածահաճոյ կամաց նորա, յանձն առի գրել վասն իմ հոգւոյս, քանզի ես հաւատացի ի ձեռն այս գծագրութեան ողորմութիւն ընդունել ի Քրիստոսէ աւգնականութեամբ աղաւթից ձերոց։

Բայց գրեցաւ ի թուականիս Հայոց ՈՀԲ (1223), յերրորդում ամի հայրապետութեան տէր Անանի Հայոց կաթողիկոսի, ի գաւառիս Մրնձոոյ Մարգ, ի գեղս որ կոչի Առոյծ Մարգ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սրբոյն Գրիգոր եւ Սրբոյն Յակոբայ։ Վասն որոյ աղաչեմ զամենեսեան՝ որք ընթեռնոյք զսուրբ պատուիրանս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ստացող սորա զՄարտիրոս քահանայ, եւ զիւր տղայքըն, եւ զիւր երիցակին, եւ զիւր աներն՝ զԹաւրոս, եւ զՀերիէ՝ որ հանդերձիկն երեսս, եւ զԹաւրոս ի Յաւձ գեղա՝ որ զգտակն երեսս, եւ զմեղատր խոշորագիծս, եւ զծնողան իմ, եւ զեղբարսն իմ, եւ զքոյրսն իմ, յիշման արժանի արարէք ի Տէր Քրիստոս, զի ողորմեսցի մեզ ի վերջնում աւուրն, եւ ի հրացայթ շարժմանն սրբովք աղաւթիւք ձերովք ապրեսցուք /// Մարտի[րոս] եւ [Յո]ճանէսն, եւ սպասաւոր սուրբ խորհրդոյն, անմոռաց յիշեսջիր զիս եւ զծնողան իմ ի կառավարեան. եւ գու յիշեալ լիշիր ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Բ

205ա Զմեղաւոր ծառաս Քրիստոսի Աստուծոյ զԳրիգոր՝ որ եւ զսիրեցեալ որդի իմ զՄարտիրոս, եւ զկենակիցն իւր, եւ զծնողան իմ, եւ զեղբարսն իմ, եւ զքոյրսն իմ, եւ զերիցակին իմ, եւ զԹորոս ի Յաւձ գեղա՝ որ զգտակն երեսս, անմոռաց յիշեցէք ի Տէր, եւ Աստուած յիշողաց Տէր ողորմեսցի՝ որ է աւրհնեալ յաւիտեան։

Գ

31 Քրիստոս Աստուած ողորմի Վարթաիկնա հոգոյն։

100

ԱԻԾՏԱՐԱՆ

Սրվանձտյան, Թորոս Աղբար, Բ, էջ 388

Գրեալ ի լեառն Կարմիր, ի մենաստանն ուխտիս, որ է [յ]անուն Աստուածամաւր, ի կաթողիկոսութեան տեառն Կոստանդեայ, ած ի ժամանակս մեծի արքային Փիլիպպոսի, ի թուականութեանս ՈՀԲ (1223)։

101

ԽՈՐԱՆԱՇԱՏՈՑ ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4823

Նվիրող՝ Վանէնի, դուստր
Ջաջոոյ Խաղբակեանց

Փառք ամենասուրբ Երրորդութեանն, որ արժանի արար զեղկելի գրիչս տեսանել զվերջին գիծս ամէն, ամէն։

317ա *Ես Վանէնի՝ աղախին Քրիստոսի, դուստր Ջաջոոյ Խաղբակեանց, ամոսին Կուկին՝ որդւոյ Աբասա Սեւադեանց իշխանածեացն, միաբանեցա ի Խորանշատոյ Սուրբ Աստուածածնիս, յիշելով զբանն Եսայա մարգարէի. Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն, եւ տուն զծախս սուրբ Աւետարանիս, ատանալ զսա ինձ զաւակ հոգեւոր յեկեղեցի յիմանալիս՝ Երուսազէմ, ի ժամանակս թագաւորութեան դատեր Թամարիւ՝ թոռին Գէորգեայ, եւ ի տերութեան Այրարատեան նահանգին եւ Խաչենոյ, մինչ մի կողմանս Զարեհիւ աթաբակ Իւանէի։*

Յայսմ ժամանակի ինքնակալ տանս Ռանա Վարհամ եւ Ասադն եղբայր իւր, ի հայրապետութեան տեառն Յովանիսի, ի ՈՀԳ (1224) թվականիս եւ շինող և առաջնորդ վանիցս Վանական վարդապետն հաստատեաց ինձ աւուր մահուանն իմոյ Ա քառասունք, Ը աւր անբիծք, եւ յամէն տարի Ա աւր ժամ՝ յիշատակ ինձ Յինանցն աւուր տանի աւետեաց Աստուածածնին։

Արդ թէ ոք զայս Աւետարանս զայս եկեղեցւոյս հանէ ի մերոց կամ յատարաց, նզովս առցէ, եւ իմ խղճոյս տէր էւ Կատարիչիք հրամանի գրոցս աւրհնեալ եղիցին յԱստուծոյ, ամէն։

102

ԱԻԵՏԱՐԱՆ

Ասֆալդ, Յուցակ Դերմանիայի, էջ 5—6

Գրիչ՝ Օարդիս

ա

103 *Ո՛վ սուրբ ընթերցող բարի, զՍարգիս գրիչ, և զԱբգանաս եղբայր հոգևոր և զՍահեփանեոս վարդապետն մեր, որ ղպատ[ու]ական աւրինակս շնորհեաց, եւ զՎաճառամ ստացող, եւ զՎարդան եւ զԴաւիթ ղընկերակիցք նորին, յիշեա ի սուրբ ա[զաւ]թս քո։*

Բ

168 Արդ աղաչեմ զընթերցող սուրբ Աւետարանիս անմոռաց յիշել զըստացող սորա զՎահրամ կրամաւոր, և զգրող սորա զՍարգիս, եւ որ զաւրինակն շնորհեաց զվարդապետն մեր զՍտեփանոս, եւ նմա հայցէք ներումն եւ թողութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։

Գ

200 ...Որ թէ գրեալ էին ՌՀԴ (1224)։

Դ

200 Յաւրինակն հայնց էր գրած, թէ այս սքանչելի գթութեան շնորհ ի Քրիստոսէ ի հերրաեցի Աւետարանէն։

Ե

220 Ի թւին հայոց ՉՀԳ (924)*

103

ՃԱՌԸՆՏԻՐ

Վենետիկ 200. Սարգիսյան, Ցուցակ Բ, էջ 33—35

Գրիչ՝ Թադէոս
Վայր՝ Սուրբ Գրիգորի գերեզման

ա

511ա Քրիստոս Աստուած ողորմեա ստացողաց գրոցս՝ հայր Կոստանդեա, և Թադէոսի գրչի, և որք ի ծաղկելն աւժանդակեցին՝ Վարդան ի Կապտոյն վանիցն, և Ղազար գրիչ, որոց ամենեցուն սոցա ողորմեսցի մարդասէրն Քրիստոս բարեխաւսութեամբ Սրբոց Քառասնիցս, նա և ամենայն հաւ[ատ]ով միաբանաց Սուրբ Լուսաւորչիս գերեզմանիս։ Եւ զյիշողսդ յիշեսցէ Քրիստոս Աստուած, և աւրհնեսցէ կրկնապատիկ, ամէն։ Որ այսմ սուրբ կտակի խնամ տանի, ընկալցի և նա ողորմութիւն յամենառատ պարգևացն Աստուծոյ, ամէն։

Բ

476բ Արդ աղաչեմք զամենեսեան, որք լուսաւորիք ի սուրբ կտակէս, զՎարդան քահանայ Կապտոյի, և զՂազար գրագիր յիշեսջիք յաղաւթս ձեր ի տաւնի սուրբ քահանայիցս, որ բազում ջանիւ և աշխատութեամբ զգիրքս ծաղկերանկ և գունակ գունակ դեղաւք զարդարեցին, և պայծառազգեաց արարեալ փայլեցուցին ի տես աչաց և յուրախութիւն սրտից։

* Տպագրված է ԳՃՀԴ (373+551=924), շտկում ենք ըստ վերը բերված թվականի՝ ՉՃՀԴ։

Արդ, որպէս սոքա զսա պայծառացուցին ծաղկաւք իբրև զծաղկաւէտ երկիր Քրիստոս Աստուած բարեխաւսութեամբ սուրբ վկայիցս, զիւրեանց հոգին, և զիւրեանց ննջեցեալոցն, եւթնկրկին առաւել պայծառացուսցէ յիւր յարքայութիւնն, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

գ

Ալլ և հայր Կոստանդին, որ զայս յիշատակարանս գրեաց՝ գրեսցի և ինքն ի գիրն կենաց՝ հանդերձ ի սմա գրեցելովք, ամէն։

դ

Ընդ նոսին և զՅովաննէս տառապեալ յիշեցէք յաղաւթս, ամէն*։

ե

365ա Բարեխաւսութեամբ ամենայն սրբոց, և սուրբ վկայիս Յուլիանէ, ողորմութիւն շնորհեսցէ Քրիստոս Ասառւածառոյ՝ հաւր անապատիս, և ամենայն ննջեցելոց իւրոց. ղի առ մեզ սէր բաղում եցոյց և խնամածութիւն, հատուսցէ Քրիստոս նմա յառատատուր պարգևացն։

զ

Ընդ նմին և Ղազարա գրչի՝ բնակչի Սուրբ Գրիգոր անապատի, որ զանուանս սուրբ վկայիցս նշանագրեցի ի լուսանցոյց պատմագրիս՝ առ ի դիւրագիւտ լինելոյ խնդրողին, Քրիստոս Աստուած գրեսցէ զանուն նորա ի գիր կենաց ընդ սուրբս իւր, ամէն։

է

332բ Ո՛վ ամենագով սուրբ վկայուհէ, ըստ քումդ խնդրոյ աղաչեա զՔրիստոս ողորմութիւն շնորհել վասն սուրբ չարչարանաց քոց Կոստանեաս՝ հաւր և սպասաւորի Սուրբ Լուսաւորչին գերեզմանի, և Մեսրոպայ պատուական քահանայի, որ ի սպասաւորութիւն մեր և կոկել նիւթոյս աւգնական է, և համբակին Վարդանայ, որ սպասաւորէ կենաց մերոյ հրամանաւ Կոստանդէ։ Ընդ նոսին և մեղապարտ գրչի Թադէոսի, և հոգւով միաբանելոցն մեր ուր և իցեն, մանաւանդ Պետրոսի, և ծնողաց մերոց, և ամենայն ննջեցելոց, և հաւատացելոց Քրիստոսի, և ընթերցողաց, և լսողաց, ամէն։

---

* Ձեռագրաց ծուցակում թվականը նշանակված է 1224։

104

ՀԱՅԵՐԷՆ ՀՆԱԳՈՅՆ ԹՂԹԵԱՅ ՁԵՌԱԳԻՐ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 2679 (981 թ.)

Գնող՝ Յովհաննէս որդի Գիշի

ա

164ա Տէր Յիսուս Քրիստոս՝ միածին որդի Աստուծոյ, ողորմեա Գիշին և Ազիզմամին, եւ զաւակաց նոցա՝ տէր Սարգսի, Կարապետին եւ Մելքիսեդեկա, եւ մեղաւոր աւագերէց Յովաննիսի՝ որդոյ Գիշի, որ զգրկումս գնեցի, եւ յետ ՄԾԴ* (254) ամի զցանկս յաւրինեցի, ի ՈՀԴ (1225) թուականիս։

բ

41ա Աստ պակաս է Ներուաս, և Տրաիանոս, և Ադրիանոս, և Տիտոս-Անտոնինոս, որ թէ ընդաւրինակէս և զնոսա գրէս և զԳիշին որդին ի բարի յիշէս։

գ

159բ Քրիստոս Աստուած ողորմեա Յովաննիսի որդւոյ Գիշի:

105

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 5537

Գրիչ՝ Գրիգոր

Վայր՝ Տարսոն քաղաք

ա

Փառք ամենասուրբ Երրորդութեանն, ամէն

293ա Յամի վեցհարիւրորդի եւթանասներորդի և չորրոդի (1225) թուաբերութեանս Հայոց, գրեցաւ կենսաբեր սուրբ Աւետարանս այս, ձեռամբ Գրիգորի մեղապարտ գրչի, ի քաղաքիս Տարսոն Կ[ի]լիկեա, ընդ հովանեաւ սուրբ տաճարիս, որոյ անուն Սրբուհւոյ Աստուածածնին կանգ-

* Ծ-ի վրա գրիչը նշան է դրել, ցույց տալու համար, որ այն սխալ է, և գրել է նորոգման թվականը, որովհետև եթե 981 թ. գումարենք 254-ը կստանանք 1235 և ոչ 1225 թվականը։ Ուրեմն Ծ-ի փոխարեն պետք է կարդալ «Խ», այսպես. «Եւ յետ ՄԽԴ (244) ամի»։

նեալ է, որ և մակնանուամր յորջորջի Սուրբ Սոփեայ, ի յիշխանութեանս աստուածասէր և բարեպաշտ իշխանաց իշխանիս մերոյ և սպարապետիս Հայւոց Կոստանդեայ քեռորդւոյ թագաւորին Հայոց Լեոնի:

Իսկ ի խնդրոյ գրեցաւ սա բարեպաշտ տանուտեառն միոյ Կոստանդեայ և որդւոյ նորին Ստեփաննոսի քահանայի, ի վայելումն կենաց իւրեանց, և զկնի ելից՝ յիշատակ հոգւոց իւրեանց։

Արդ, որ ոք ւգտեսցի ընթերցմամբ ի սմանէ, յիշել աղաչեմ յաղաւթս զստացող սորա զպատուական ք[ա]հան[ա]յն Ստեփանոս և զհայր նորին Կոստան[դ]ին, և զմայր Ստեփանոսի զԱննց, իսկ և
293բ զհայրն Կոստան||դեաց՝ ստացողի սուրբ Աւետարանիս Գրիգոր, և զմայրն Տալիթայ, և զամենայն ազգատոհմն սոցա առհասարակ աղաչեմ յիշել աղաւթիւք ի Տէր։ Իսկ և զեղկելի գրիչս Գրիգոր և ծնաւղսն [զ]իմ աղաչեմ յիշել ի Տէր, և Աստուած ամենեցուն առ հասարակ՝ մեզ և յիշելոցս և ձեզ յիշողացդ ողորմեսցի, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Բ

140բ Ստացաւղ սրբոյ Աւետարանիս Կոստանդին հանդերձ մանկանբն իւրով Ստեփաննոսիւ քահանայիւ յիշեսչիք ի Տէր*։

106

ՀԱԻԱՔԱԾՈԻ

Ջմմառ, 204 (1123 թ.) Քեչիչյան, Ցուցակ, էջ 494

Ոչ սայ մնայ եւ մատունքս հողանայ,
Ջեռս երթայ, գիրս մնայ,
Որ զայս գիրս գա[ր]դայ
Տէր ողորմեց ինձ եւ նմայ։
Ի թվականիս Հայոց ՈՀԴ (1225)։

---

* Ձեռագրի վերջում հետաքրքիր հիշատակարան է թողել Դավիթ երեցը. 198ա. «Եւ դարձեալ Աի սրտիւ Է բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք մեղսաթաթախ Դաւիթ իրիցուն, որ զիմ կայ ու ղկէն զամէն (ղ)ոչխար թէ մէկ է թէ հարիւր է, զտաւար՝ թէ մէկ է թէ հիսուն, թէ ջուլ է Թէ ջվալ է, թէ առն է թէ տէղ է, թէ դուռ է թէ դուրս է, թէ խոփ է թէ ձևիշ է, թէ բախ է թէ փայտատ է, թէ զինչ և իցէ ի հազար ոխք եմ արեր ի դուռն Կոբեկեց Սուրբ Աստուածածնին, երկու գիւղի։ ի վկայութեամբ մեծի և փոքրի՝ յԱրտամետու և Զվբառանայ. որ ոք հակառակէ յետ իմ անցման կամ դաւէ անէ կամ (տալապ անէ), մազիմ ի չաք... յեկեղեցոյ քարզհանէն հանէ և ցրւէ, նա զանէծքն օծին և զԿայենին... (198բ) Որ անհաւատ և անօրէն մարդ շատ կան, որ յԱստուծոյ չեն երկնչեր, վասն որոյ պատճառ անեն և այլ և այլ չար սերմանե զկապած և զփակած ոխք, վասն որոյ զայս ես իմ ձեռօքս եմ գրեր ու զիմ մօհր ի վերայ եմ զարկեր (իսկապես 298ա էջի վերին և ստորին անկյուններում կնիքն է «Ցս. Քս. ծռ. Այ. Դաւիթ երէցս»), որ այլ և այլ չի անեն։ Վասն որոյ թէ անօրենութիւն լինի ու զսրաղութիւն դաւէ, նայ Բ գիւղ, թէ քահանայ թէ տանուտէր, թէ ռամիկ, թէ ժողովուրդ ամենեքեն որ չգան ի միատեղ ու միաբանէն ու զեկեղեցու ապրանքն թողուն որ անհաւատ մարդիկ տանեն։ Դարձեալ գիտասջիք ժողովուրդք, վկայ լինիք, որ զիմ գրքեր՝ Սաղմոսարան, Շարակնոց, Տօնացոյց, Աղօթմատոյց, Խրատգիրք, մի Տօմար ու Տաղգիրք մի՝ ծախեր եմ Բաբկէն իմ սարկաւագուն, ինձ այլ գիրք չկայ, որ այլ մարդ դաւէ անէ»։

107

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն (յունարէն)

«Հանդէս ամսօրեայ» 1908 թ., էջ 220—221

Գրիչ՝ Վասիլ ռաբունապետ
Վայր՝ Կեսարիա

ա

166ա Փառք Աստուծոյ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Գրեցաւ եւ կատարեցաւ Աւետարանս ձեռամբ իմով Վասլի դպրապետիս ի Մելիտինոյ որդոյ Առեսայի քահանայի, թվին ՈՀԸ (1226), յամսեան մայիս, ի պէտս անձին իմոյ եւ յիշատակ հոգւոյ, ի կամս Քրիստոսի։

բ

165բ Ջվասիլ գրիչ յիշեսջիք առ Քրիստոս, զի եւ դուք յիշեալ լիշիք։

գ

(Թարգմանութիւն յունարէն յիշատակարանի)

166ա Աւարտեցաւ չորք Աւետարանք քարոզոզացն Աստուծոյ, մեծացն չորից աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի., Ղուկասու եւ Յովհաննու, ձեռամբ իմով Վասլի դպրապետի Մելիտինեցւոյ, որդւոյ Ովրեսաէսի քահանայի, ի ժամանակին յորժամ նուաճեաց մեծն սուլթան Քեյկաւադ, որդին Ղիաթեդինի Քեյ Խոսրովու զՅունաստան, զՀայաստան, զԱսորիս եւ զամենայն տեղիս եւ զգաւառս Թուրքեստանի եւ զծովու, մինչեւ ի մեծն Կեսարիա: Եւ որք հանդիպիք այսմ Աւետարանիս կամ օրինակէք կամ ընթեռնուք, յիշեսջիք զիս զբազմամեղս զՎասիլ, եւ զծնողս իմ ի Տէր հանգուցեալ՝ զՈվրեսաէս քահանայ եւ զմայրն իմ զՍոփիա, եւ ընդ այսր ողորմեսցի ձեզ ամենեցուն ամենասուրբն Աստուած, պահեսցէ անվնաս իւրով մարդասիրութեամբն. այժմ եւ միշտ, և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Գրեցաւ ի թուին աշխարհի ՅՀԼԴ (1226) եւ յինդիկտիոնի ԺԴ, յամսեանն մայիսի Ա (1)։

108

Ճ Ա Ռ Ր Ն Տ Ի Ր

Երևան 6196

Գրիչ՝ Ներսէս
Վայր՝ Աւագ վանք

ա

46ա Քրիստոս Աստուած բարեխաւսութեամբ սուրբ վկային ողորմեա Վարդան վարդապետի, որ յառաջարկու եղեւ ձեռնամուխ լինել ի գիր գրոցս։ Ողորմեա Տէր նմա և ծնաւղաց նորա՝ կենդանեաց և մեռելոց, և քեզ փառք յաւիտեանս, յաւիտեանս, ամէն։

բ

58ա Սուրբդ Աստուծոյ, աւգնեա Սոսթենէս քահանայի, որ զպաստեղս եբեր մեզ։

գ

91ա Քրիստոս Աստուած, բարեխաւսութեամբ սրբոց քոց վկայիցն ողորմեա Ղազարու վարդապետին յաւուր ծագման միւս անգամ գալստեանն քոյ յայնմ ահեղ ատենին, ուր բանք սպառին և գործք թագաւորեն։ Տէր աղաչեմ ողորմեա նմա և ծնողաց նորա, ամէն։

Ողորմեա Տէր և Վարդան վարդապետի, ստացողի սուրբ գրոցս, և յառաջարկողի ի գործ աստուածային մատենի, և ձեռնասուն մանկանց Փիլիպոսի և Աստուածատրի մանկանց սուրբ եկեղեցւոյ, ամէն։

դ

103բ ԶՓիլիպպոս սուրբ և ընտրեալ քահանայ յաղաւթս ձեր յիշեսջիք, որ զտաք զգոնս եբեր։ Տացէ նմա Տէր Աստուած զհանդերձեալ փառսն ընդ ամենայն սուրբս և ընդ սիրելիս անուանն իւրոյ, ամէն։

120ա Քրիստոս Աստուած բարեխաւսութեամբ սուրբ Ճգնաւորին Բարսամոյի և ամենայն սրբոց քոց, թողութիւն շնորհեա Վարդան վարդապետի, ընդ նմին և Ղազարու սրբոյ վարդապետի և ծնողաց նորա, ամէն*։

---

* Այսպիսի հիշատակագրություններ կան նաև 105բ, 127բ, 245բ էջերում։

ե

172ա Աղաւթիւք սորա ողորմեա Քրիստոս Աստուած Վարդան վարդապետի ստացողի գրոցս, ընդ նմին և Ղազարու վարդապետի և Աստուածատուր եղբաւր նորին և ծնաւղաց նոցա ողորմեա Քրիստոս աստուած, ամէն։

զ

187բ Զարմանամ ընդ սքանչելիս, բայց Աստուծոյ ամենայն ինչ կարելի է, որ ի ձեռն սրբոց իւրոց ներգործէ, նմա փառք յաւիտեան*։

է

188բ Սկացեալ նիւթիս անմեղադիր լերուք ըստ հանդիպման ժամանակիս, ո՛վ եղբարք**։

ը

189ա Քրիստոս Աստուած բարեխաւսութեամբ սրբոյն Գէորգեա և ամենայն սրբոց քոց ողորմեա Վարդան վարդապետի և եղբաւր նորա Դաւթի և ծնողաց նոցա՝ աստ և ի հանդերձեալ ապագային, որ բանք սպառին և գործք թագաւորին։ Յայնմ աւուր ողորմեա նոցա մարդասէր Քրիստոս, այլ և աշխատողացն ամենեցուն, ամէն։

թ

196ա Տէր Աստուած ողորմեա Գրիգորի կտաւագործի և ծնողաց նորա, ամէն։

ժ

202ա Աղաչեմ զընթերցողսդ և զլսողսդ զՎարդան վարդապետ՝ նմանեալ Զաւրաբաբելի և Յովսեդեկա քահանայի, յաղաւթս ձեր յիշել, և Աստուած զձեզ յիշեսցէ յիւրում արքայութեանն, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

ժա

273բ Քրիստոս Աստուած սուրբ բարեխաւսութեամբ սրբոց մարտիրոսացս, որք վասն անուանդ քո հեղին զպատուական սուրբ զարիւնս իւրեանց, ողորմեա Վարդան վարդապետին ստացողի սուրբ գրոցս, ընդ նմին և Ղազարու՝ իմոյ վարդապետի, և ծնողաց նոցա։

ժբ

277բ Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, աղաւթիւք սրբոցն Երմոնի ողորմեա Յովաննէս քահանայի և գրչի և ծնողաց նորա, այլ և Եփրեմի մանկագոյն քահանայի, որ հայցեցին գրիւ ի Քէրքս։ Տէր փրկեա զնոսա և ողորմեա նոցա։

---

* Գրված է «Սքանչելիք Գէորգեա» ճառի տակ։

** Թանաք է թափել։

ժգ

285բ ԶԱտոմ պատուական քահանայ և զծնողսն նորա յաղաւթս ձեր յիշեսջիք, ո՜վ մանկունք Նոր Սիոնի, որ ի կոկելն աւժնտակեաց բազում աշխատութեամբ։

ժդ

308բ Քրիստոս Աստուած, աղաւթիւք և բարեխաւսութեամբ սրբոյ քահանայապետին Թեոդորիտեա, ողորմեա Վարդան վարդապետի և Գրիգորի կտաւագործի, որ ագնական եղև ի գիրքս ըստ չափու կարեաց, ամէն։

ժե

328ա Աւգնեա ինձ, անբարբառ բարեխաւս*։

ժզ

329բ Քրիստո՛ս աւգնեա Ատոմ քահանայի և ծնողաց նորա, և փրկեա յաւիտնական հրոյն, որ զթուղթս կոկեաց, ամէն։

ժէ

334բ Զպատուական քահանայն Վարդան մեծ և անուանի, էրեց լինել համաշխարհական կաթողիկէ եկեղեցւոյ, և զբարեպաշտ երիցակինն իւր յաղաւթս ձեր յիշեսջիք։

Այլ և զպարոն Սանփանեոս պատուեալ և մեծարեալ յԱստուծոյ և ի մարդկանէ, հանդերձ ամուսնաւն իւրով, յիշեցէք ի Քրիստոս։ Տէր Աստուած ողորմի նոցա և ծնողացն նոցա, յաւր մեծի գալստեանն իւրոյ։

Զտառապեալ գրողս յիշեցէք։

ժը

371բ Քրիստոս Աստուած, աւգնեա Տիմոթեա քահանայի, որ զթուղթս լաւ է կոկեալ, և փրկեա զնա ի սատանայէ, ամէն։

ժթ

387բ Ո՜վ ամենագով երջանիկ սուրբ վկայուհի Մարիանէ, ըստ քումդ խնդրոյ աղաչեա զՔրիստոս ողորմութիւն շնորհել վասն սուրբ չարչարանաց քոց Վարդան վարդապետի, ընդ նմին և Ղազարու վարդապետի իմոյ, ընդ նմին Աստուածատրու և Փիլիպպոսի և Տիմոթի, և տնտեսին Խաչատրոյ և Գինէպետ միայնակեցին, ընդ նոսին Ներսէսի սուտանուն գրչի և ծնողաց ամէն, ամէն։

ի

404ա Քրիստոս Աստուած, բարեխաւսութեամբ սրբոյ վկային Մինասի ողորմեա Վարդան վարդապետի ստացողի գրոցս, ընդ նմին և հայր Կա-

* Սուրբ խաչին է դիմում։

rապեաին՝ սուրբ և ընտրեալ և պատուեալ կրանաւորին և հմուտ և յառաջադէմ յարհեստ գրչութեան։ Ընդ նմին յիշեա Քրիստոս զԹադեոս հայր խաւծի անապատին, թող Տէր զյանցանս նոցա, և ողորմեա յամենայնի մեծի գալստեան քո, ամէն։

իա

407ա *Ի յիշատակի սուրբ հայրապետացս յիշեցէք աղաչիւք բարեխաւս ունելով զսուրբսն, զամենայն առաքինութեամբ և բարի վարուք զարդարեալ զՂազար վարդապետն իմ և զնորին ծնողսն, ո՛վ պատուական եղբարք։*

իբ

465բ *Արդ աղաչեմ զամենեսեան, որք կարդայք զսուրբ և զգերահռչակ կտակս, վարդապետն Վարդան յաղաւթս ձեր յիշեսջիք, ո՛վ պատուական հարք և եղբարք, և Աստուած զձեզ յիշէ։*

իգ

498բ *Զխաչատառ տնտեսն յիշեցէք [ի] Քրիստոս, զի և նմա ողորմեսցի Քրիստոս, ամէն։*

իդ

548ա *Զստացող սուրբ գրոցս զՎարդան սուրբ, գերահռչակ վարդապետ յաղաւթս ձեր յիշեսջիք, ընդ նմին և զՂազար վարդապետն իմ և զծնաւղս նորա աղաչեմ։*

իե

571բ *ԶԱստմ քահանայ յիշեսջիք յաղաւթս ձեր, որ բազում շանիւ և աշխատութեամբ կոկեաց զքարտէզս։ Քրիստոս Աստուած ողորմեա նմա և ծնողաց նորա, ամէն։*

իզ

574 *Զմանկունք եկեղեցւոյ սրբոյ զԱստուածատուր և զՓիլիպպոս և զՏիմոթ, որ ի կոկել քարտիզին աւժանդակեցին, յաղաւթս ձեր յիշեցէք։ Տէր Աստուած աւգնեսցէ նոցա և փրկեսցէ զնոսա ի հաղթից թշնա(մ)ոցն, ամէն։*

109

ՃԱՌԸՆՏԻՐ

Երեան 3779

Ստացող՝ Տուրէ
Վայր՝ Աւագ վանք

ա

Փառք քեզ անեղանեղիդ Աստուած, անսկիզբն Հայր, արարիչ բոլոր գոյից և ամենայն եղելոց։ Փառք քեզ Որդիդ միածին, արարչակից Հաւր և

Սուրբ Հոգւոյդ փրկիչ ազգի մարդկան, Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ Փառք քեզ ամենասուրբ Հոդի փառակից Հաւր և Որդւոյ և Աստուած բոլորից։
545ա Փառք գոհացողական աւրհնութեամբ ի բարձունս երից անբաւից, անբաւ բնութեան համազոյ տէրութեանդ և միաստուածութեանդ՝ Հաւր և Որդւոյ և Հոգւոյդ Սրբոյ, որ արարչական սիրով գթաս ի վերայ խնգրողաց զքեզ, և լինիս առատապարգև, որք հայցէն ի քէն։ Որ և զմեզ անարժանս արժանի արարէր հասանել փափագման տենչալի այսմ հոգևոր ստացուածոյս, և զաւրացուցեր ի կատարումն ածել զբաղձանս սրտի՝ յաւարտումն այսմ տառի։

Արդ, ընկալ մարդասիրապէս ի հաճոյս կամաց քոց զշան և զվաստակ աշխատասէր գործոյս, զոր յանուն քո աւարտեցաւ զգերապայծառ սրբոց քոց զճառս վկայական հանգիսից, զնահատակութիւն ճգնութեան մարտից արեամբ կատարելոցն, խոստովանողացն զաստուածութիւնդ քո, որ ընդունելոց են ի քէն զպսակն անապական և զանվախճան կեանսն ի փառաւոր քո գալստեանն։ Եւ մեզ ողորմութիւն շնորհեա յայնմ մեծի աւուրն բարեխաւսութեամբ համագումար ընդ աջմէ քում դասելոցն գՅաստիս ի մեզ և յամենայն սիրողս սրբոց քոց։ Եւ քեզ երկրպագութիւն և փառք յերկնաւորաց և յերկրաւորաց և յամենայն գոյից, այժմ և յաւիտեանից։

Եւ ձեզ, ո՛վ առաքեալք սուրբք, հայրապետք և վկայք Քրիստոսի, գոհաբանութիւն և աւրհնութիւն ի մերմէ տկարութենէս, գերապայծառ ճառագայթք արփիափայլ լուսովն առ լեռնալք, գանձք աստուածայնւոյն ամբարեալք յերկինս յանեղաշէն բնակութիւնս անճառ լուսոյն, որ աւժանդակ եղէք մեզ այսմ հոգևոր աշխատութեանս յաւարտումն հասուցանել զձեր հանդիսական ճգնութեանցդ և զյաղթող նահատակ[ու]թեանցդ զպատմութիւնս ժողովել ի միասին ըստ կարի մերում, որ ի վերայ աստուածատուր աւրինացն կրեցէք և անտանելի չարչարանացն համբերեցէք, խաչակից եղեալ որդւոյն Աստուծոյ, հիմն և հաստատութիւն եկեղեցւոյ և պարծանք քրիստոնէից, և բարեխաւս ամենայն աշխարհի առ Քրիստոս, և ընդ նմա թագաւորելոց էք մեծապանծ պարծանաւք ի փառս անվախճանս։ Աղաչեմք զձեզ գթութեամբն Աստուծոյ մի անտես առնէք զմեր
545բ սակաւ սատարութիւնս, զշան և զփափա[գան]աց երկր /// ան սիրելոյ զձեզ /// առաքեցաք /// զգովեալ ի /// ձեր ցանկալի կատարման ի մխիթարութիւն և ի յոյս գնացելոց /// սիրո հաւատացելոցս /// ստանալ վկայաբանութիւնս ձեր և տացէ վարձս բարեաց և ընթերցողաց և լսողաց զղջմամբ և երկիւղիւ Տեառն, զի ամենեքեան գտցուք ողորմութիւն յարարչէն մերմէ և փրկչէն, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտեանից։

Արդ, ի թուականութեանս Հայոց ՈՀՋ (1227), ես նուաստ ծերս և անպիտան ծառայս Աստուծոյ Տաւթ անուն կոչեցեալ, ի լուսաւորութենէ սրբոյ աւազանին, ցանկացող եղէ վարուց և պատմութեանց սրբոց հարցն և հայրապետացն և ճգնազգաց մարտիրոսացն, և վկայիցն Քրիստոսի, մանաւանդ սրբազան աշակերտաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որք զանազան և անտանելի տանջանաւք կատարեցին զընթացս իւրեանց ի հաճոյս կամացն Աստուծոյ, որպէսզի աղաւթիւք սոցա և բարեխաւսութեամբ արժանի լիցուք մասին ժառանգութեան սրբոցն ի լոյս, վասն որոյ

ստացա զսա յարդեանց իմոյ, ի յիշատակ բազմամեղ անձին իմոյ, և ծնաւղաց և եղբարց իմոց ի Քրիստոս ննջեցելոցն։

Իսկ այժմ բարի առաջարկութեանս եղե[ւ] մեզ Թելագիր և առիթ և յորդորիչ սուրբ և պատուական հարքս և առաջնորդք սուրբ ուխտիս Աւագ վանիցս՝ Ստեփանոս, Պետրոս [և Յո]նան, որ է ի լերին Սուրբ Լուսաւորչիս մերոց, ի գաւառիս Դարանաղեաց գերադրական սուրբ մենաստանս, զարդարեալ գեղեցկաշէն սրբարանաւք և սպասիւք պատուականաւք, հիմնացեալք սուրբ քաւարանքս մինն յանուննն Սրբոյ Աստուածածնին և յերկրորդն յանուն Սրբոյ Կարապետին Յովաննու, յերրորդն յանուն Սրբոց Առաքելոցն, և միւս ևս յանուն Սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի, և եդի զսա ի դուռն երկնահանգէտ սուրբ քաւարանացս իբրև զարձան լուսեղէն, միջնորդ և բարեխաւս ունելով ինձ առ Քրիստոս զերջանիկ սուրբ մարտիրոսացն դասն։

Եւ արդ, աղաչեմ զամենեսեան ի դէպ ժամանակի գաստուածարեալ հարսդ և զեղբարսդ, զմանկունս սրբոց եկեղեցւոյ ընթերցողսդ և զլսողսդ պատմութեանց ///

Բ

Գրիչ*

2բ Քրիստոս Աստուած, քո անարատ եւ սուրբ ծնաւղիդ բարեխաւսութեամբ ողորմեայ մեղապարտ եւ անարժան գրողի սորա. եւ որք բարի կամաւք յիշատակի արժանի առնէն Աստուած իւր անճառ բարեացն եւ ողորմութեանն զնոսա արժանաւորեսցէ, ամէն։

Գ

170ա Բարեխաւսութեամբ սուրբ հայրապետիս եւ ամենայն սրբոց, Քրիստոս Աստուած, ողորմեայ Տրոցն հոգւոյն եւ իւր ծնաւղացն, եւ հայր Սահփանոսի եւ իւրոցն ամենի, ամէն**։

Դ

215բ Բարեխաւսութեամբ սուրբ եւ փառաւորեալ հայրապետիս եւ ամենայն սրբոց, Քրիստոս Աստուած, ողորմեայ Եղիազարու հոգիազարդ եւ աստուածաշնորհ վարդապետի՝ հեզոյ եւ խոնարհի եւ պատարուն ամենայն պատուիրանապահութեամբ եւ զարդարեալ ամենայն արդարութեամբ։

Շնորհեա Տէր նմա թողութիւն մեղաց, ամէն։

Ե

248բ Քրիստոս Աստուած, ողորմեաց Տրոցն հոգւոյն՝ բարեխաւսութեամբ այս սուրբ մարտիրոսացս, և Եղիազարու ընտրեալ վարդապետի։ Տէր ընկալ զհոգիս նոցա յաւթեւանս սրբոց քոց։

* Ձեռագրի առաջին մասի գրիչն է, որն անուն չի տալիս։
** Այս կարգի հիշատակագրություններ կան 194բ, 210բ, 226ա, 235բ, 255ա, 263բ, 272ա, և այլ էջերում։

գ

370բ Քրիստոս Աստուած, ողորմեսցի ստացողի գրոցս Տուրֆ միակեցի, և ամենայն աշխատողացն ի սմա, և հայր Սահփանոսի, և ամենայն միաբանաց եղբարցն, որ յԱւազ վանիճն՝ կենդանեաց և մեռելոց, և որք կենդանի լինի լինելոց եւ ի դէպ ժամանակի, ամէն։

է

381ա Ջստացող սուրբ գրոցս զՏուրֆ միակեացն եւ ղսպասաւորք սուրբ ուխտին Աւազ վանիցն։

ը

Գրիչ՝ Կարապետ

2ա Ստացողի գրոցս Տուրֆ միակեցի ողորմեա մարդասէր Աստուած և շնորհեա թողութիւն մեղաց և յանցանաց, ամէն։

թ

94բ Ջստացող սուրբ կտակիս զՏուրֆ միայնակեացն յաղաւթս յիշեսչիք, ընդ նմին և զհայր Սահփանոս եղբարք իւրովք՝ հանդերձ ամենեքումբք, որք աշխատեալ են ի գիրքս յայս, որոց ողորմեսցի Քրիստոս աստուած աղաթիւք և բարեխաւսութեամբ ամենայն սրբոց, ամէն։

ժ

392ա Ողորմեա Քրիստոս աստուած Տուրֆ միակեցին և զարմից իւրոց, ընդնմին և հայր Սահփանոսի և եղբարց և միարանաց իւրոց, նա և աշխատողացն ի սմա, Կարապետին, Ղազարու և Ներսիսի, ամէն։

ժա

398ա Տէր աստուած ողորմեա Տուրֆ միակեցին և ջնջեա զձեռագիր յանցանաց նորա, ընդ նմին և աշխատողաց գրոցս, և հայր Սահփանոսի և միաբան եղբարցն, որ յԱւազ վանիին՝ կենդանեաց և մեռելոց ամէն։

ժբ

401 Ջստացող սուրբ գրոցս զՏուրֆ միայնակեացն և զծնաւղսն իւր յիշեսչիք ի սուրբ աղաւթս ձեր, ընդ նմին և զհայր Սահփանոս, և զեղբարսն իւր զՅովհան և զՊետրոս, և զայլ միարանեալսն ընդ նոսա, և զանպիտան գրիչս։

ժգ

429բ Տէր աստուած, ողորմեա Տրոց միայնակեցի և ծնողաց նորա՝ ստացողի գրոցս, ընդ նմին և հայր Սահփանոսի և եղբարց նորա, և ծնողաց նոցա և գրչի անպիտանի՝ Կարապետին և Ղազարու վարդապետին, և եղբաւր իւրոյ Աստուածատրին՝ սպասաւորաց Սուրբ Լուսաւորչին անապատին, որք զգիրքս աւարտեցին։

Քրիստոս Աստուած աղաւթիւք սորոց քոց վկայիցս շնորհեա թողութիւն մեղաց և յանցանաց ամենեցուն ի սմա վերագրելոցս, ամէն։ Եւ զիս զնուաստ աշակերտս և զախմար գրիչս յիշեա մարդասէր Տէր ամենակալ, և զձեզ զամենեսեան աւրհնեացէ Տէր Աստուած, այն որ աւրհնեալ է յամենայն յարարածոց, ամէն*։

ժդ

501 Ջստացող գրոցս զՏուրէ միայնակեացն և զծնողսն իւր յաղաւթս յիշեսջիք, ընդ նմին և զվարդապետս իմ զՂազար և զԱստուածատուր, ո՛վ եղբարք։

ժե

525բ Արեալին աւգնեա Քրիստոս, որ երեր զտետրերս ի Սուրբ Գրիգորոյ յանապատէս՝ յԱւազ վանէն, Աստուած ողո[րմի]։

ժզ

52ա Քրիստոս Աստուած, շնորհեա զկենաց բաժակն Աստուածատրոյ, զի մատոյց մեզ զուրախարարն բաժակ յայսմ ժամու։ Տէր Աստուած շնորհեա նմա թողութիւն մեղաց և յանցանաց, և ինձ ընդ նմին, ամէն։

ժէ

370ա Սրբոյն Յակոբա բարեխաւսութեամբ սորա ողորմեա Քրիստոս Աստուած Տոգն, ընդ նմին և ամենեցուն աշխատողացն ի սմա։

ժը

412բ Աղաւթիւք Սրբոյն Գրիգորի ողորմեա Քրիստոս Աստուած Ղազարու, որ աշխատ եղեալ և ուղղեաց ըստ կարի; Տէր շնոր[հեա ն]մա հանգիստ յարդարոցն կայեանս, ամէն։

ժթ

450բ Երկուց բիւրոցն վասն սոցա ճգնութեան և նահատակութեան ողորմեա Քրիստոս Աստուած մեղապարտ ծառ[տյ]ի քո Ղազարու, որ ուղղեաց ի կարդալն ղսա։

ի

454ա Սոցա բարեխաւսութեամբ ողորմեա Քրիստոս Աստուած Ղազարու աշխատեցելոց յուղղելն։

իա

465բ Ողորմեա Քրիստոս Աստուած ի քեզ ապաւինեալ ծառային քո, որ ուղղեաց զսա ի կարդալն /// Տէր թողութիւն մեղաց և յանցանաց նոցա և Աստուածատուր ե Գրիգորի վարդապետի, ամէն։

---

* Գրիչ Կարապետը հիշատակագրութեան վերջին մասը լրացրել է շղագրով։ Նա է գրել նաև մյուս հիշատակագրությունները առաջին գրչի հիշատակագրություններից հետո։

իբ

117ա Ջնոսթանես, որ զգիրքս ծաղկաղարդեաց և զամուսին նորա ///

իգ

360ա Ջպատանեակքս զԳրիգոր և զՅովհան ///

110

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԳՈՐԾՈՑ ԳՐԻԳՈՐԻ ՆԻՍԱՑԻՈՑ

Երևան 1013

Գրիչ՝ Սիմէոն
Վայր՝ Սպլէնձաճան

291բ Յամի ՉՂԼԵ-երորդի (6735=1227) յաւիտենից Թուոյն գրեցաւ և աւարտեցաւ գիրքս Գրիգորի Նիսացոյ եպիսկոպոսի, յ(ը)նդիր և լաւ արիւնակաց հնոց, որ թարգմանչացն գրած էր, ձեռամբ մեղապարտ և անարժան կրաւնաւորի Սիմէոնի, յերկիրս Հայոց, մերձ ի Լաւոէ, ի վանքն որ կոչի Սպլէնձաճան, ընդ հովանեաւ Սուրբ [Աստուած]ածնին, յիշխանութիւն Իվանէ աթապագին՝ շինողի վանիցս, զոր երկար ժամանակ արասցէ Տէր, որդովք հանդէրձ։

Արդ, աղաչեմ, որք ընթեռնոյք կամ աւրինակէք, յիշման արժանի արարէք, և որք յիշէք, յիշեալ լիցիք ի Տեառնէ։

111

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 9319 (ժէ դ.)

Գրիչ
Վայր՝ Սիս

21ա Օգնեա Յիսուս Քրիստոս և աջողեա, որ աւարտեմ զընսկսեալս իմ, ի թվին ՈՀՋ (1227), ի Սիս:

112

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ

Վատիկան 4, Տիսեռան, 8ուցակ, էջ 223—224

Գրիչ՝ Թադեոս·
Վայր՝ [Հռոմ]

ա

349 Փառք ամենասուրբ Երրորդութեանն, որ զաւրացոյց զտկարութիւնս աւարտել զսա։ Ա՛րդ, ես Թադեոս ցանկացող եղեալ սուրբ հաւրս գրոցս անյագ ըղձիւ, եւ ոչ ունէի ինչս, ի դրեալ տալի՝ եւ անյագ բաղձանաւք սկսա գրել զսա, թերևս աւգտեցայց ի սմանէ, եւ ի զղջումն ածից զանձն իմ եղկելի, եւ զմիտս, եւ զխորհուրդս սահեցող յածմամբ նանրութեամբ սուտ ժամանակիս, որ ի մերում աւուրս հան[դիպ]եցաւ մերոյ աշխարհին արե՛ւելեան։ Վասն մեղաց մերոց բարկացաւ [անբար]կանալին և խրատե /// մերոյ եւ եհան աշխարհին սուր անպատմելի, զոր տեսաք աչաւք մերովք, զի զհամարն Աստուած միայն գիտէ զկոտորելոցն սրով և զգերելոցն ի ձեռս անաւրինաց։ Եւ յետ այնր մահ և սով սաստիկ, և այս ամենայն եղև վասն բազմանալոյ անաւրենութեանց, զի ոչ գտանի ոք զքիւն պատմէ, քան զի անճառ է։

Բայց գրեցաւ սա ի թուին ՈՀԷ (1228), ձեռամբ Թադեոսի անարժան քահանայի, որ անուամբ եւ ձևով միայն երեւի մարդկան եւ գործովք մեռեալ, եւ ակնկալեալ ողորմութեանն Աստուծոյ և սրբոց աղաւթից։

Արդ, աղաչեմ եւ երեսս անկեալ պաղատիմ գետնաքարշ գիմաւք թողութիւն հայցեցէք /// եցոյց մերոց ծնողաց և անմեղադիր /// աւք խոշորութեան, քանզի ոչ էր գր /// գրա /// եր, գրեցաւ ի սուրբ մենաստ[անիս] ///

բ

4բ Ո՛վ պատուական եղբայր, աւրինակն քիւր էր, որ գրեցի։ Այլ գիրք առի եւ տեսա շատ պակաս գտայ յառաջին աւրինակն, և որքան կարացի [ր]խորհեցի։

գ

121 Տէր Աստուած ողորմեա Թադեոսի գծողին և իւր ննջեցելոցն ամենեցուն*։

---

* Այսպէս հիշատակագրութիւնները բազմաթիվ են։

Պ

350 Ես Թադեոս տուի զիմ գիրգս ի Հռոմայ Ոսպեթալս, եւ որ հեռացուցանէ զսայ, յայտ յազաւթից տանէդ՝ զվարձս Ուղայի առցէ։ Զ///անիս զերկու /// աշխատեցաք և բերաք գծողս /// ելոց արժանի արարէք և զձեզ յիշէ և զմեզ, ամէն։

113

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երուսաղեմ 1295, Ն. Պողարյան, Ցուցակ Դ, էջ 515—516

Գրիչ՝ Կոստանդ
Վայր՝ Սկեւռա

Ա

628 Փառք քեզ Կոնեա քող [արեգսագոյն] կիսագնտի եւ Դեմետր[ի արարիչ] վայել տացէ զգիրքս նորընձա... Ո՛վ պատուական եղբայր...։ Ի վեցհարիւրորդի, եւ ութա[նասներորդի] է երորդի (1228) թու[ականիս, ի հայրապե]տութեան աստուածարեալ [Կոստանդեայ կաթողիկոսի, եւ ի թագ]աւորութեանն Հեթմոյ /// գրեցաւ /// [ի Սկեւռ]այ, ընդ հովանեաւ ամ[ենաւրհնեալ Սուրբ] Աստուածածնի եւ կենսա[կիր Սուրբ Նշանիս, որ է մերձ յան]մատոյց դղեակս Լա[մբրոնի] ||

[Գր]եցաւ սայ ձեռամբ /// Կոստանդ պիտակ /// յոյժ նեղեալ աղքատ /// զբովանդակն գրեալ /// լիցի սա /// եղբաւր իմո Պաւղ[ոսի]... եւ յետ ելից մեր ///

Բ

Գրիչ՝ Պաւ[ղոս]

54 Շնորհատուն բարեաց Յիսուս, եւ աղբիւր բարութեանց Հոգին Սուրբ, կամաւք Հաւր, որովք տիեզերք պայծառացան, տացէ շնորհս եւ ողորմութիւն տեառն իմոյ եւ հայրապատ եղբաւր Կոստանդեայ վարդապետի, զի ողորմած է եւ մարդասէր։ Ո՛վ րաբունք ամենիմաստք եւ հոգելիցք, յորժամ փարթամանայք ի սուրբ երգոյս, մեղաց թողութիւն հայցեցէք յԱստուծոյ, որով առէք իշխանութիւն կապել եւ արձակել։ Ես իմ ժտելով եւ բախելով, եւ ապաւինելով ի լուսաթռիչ աղաւթս ձեր, հայցեմ յառատ եւ ի ձրի պարգեւողէն մտանել յորդեգրութիւն Հաւրն երկնաւորի։ Ես որ առատն է առ ամենեսեան եւ բարին, ձեզ եւ մեզ եւ ծնաւղաց եւ եղբարց մերոց եւ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս առհասարակ ողորմեսցի, եւ նմա փառք այժմ եւ յանըսպառ յաւիտեանցն, ամէն։ Աղաչեմ չմեղադրել խոշորութեան գրոյս, վասնզի յոյժ անվարժ էի ըստ հոգւոյ եւ մա[ր]մնոյ։

Գ

383 Աղաչեմ յիշել զԻսիկ(՞)։

Դ

417 Ո՛վ վարդապետ Կոստանդին,
Հոգւով լցեալ աստուածային,

Դու քարոզող անմահ բանին,
Եւ ճշմարտիւ մշակ նորին։
Ի սերմանել քո զգանձն անգին,
Եւ ի յառնուլն զանհատ բարին,
Շնորհեա եւ ինձ մասն ընդ քոին,
Առնուլ զպսակ յաղթանակին,
Եւ ժառանգորդ լինել դրախտին։

Ե

2 Կենաց Տէր Յիսուս ողորմեա ստացողի սորա Հեթում վարդապետի եւ ծնողաց իւր, ամէն։

114

ՃԱՇՈՑ

Հովակիմյան, Յուցակ Նիկոմեդիայի, էջ 76

Գրիչ՝ Յուսիկ
Վայր՝ Յիսուանց անապատ

Փառք ամենասուրբ Երրորդութեան Հաւր անսկզբնականի եւ Որդւոյ ծնեցելոյ եւ եղուղի Հոգւոյն Սրբոյ այժմ, եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Աստուածային գործառնութեանն սկիզբն, եւ խնամոց նորա սէր, եւ ողորմութեան նորա տարածումն, եւ երկայնմտութեան նորա ներումն, եւ առատութեան նորա պարգեւք ի կատարումն աստուածախոսմբ տառիս եւ լուսափայլ մարգարտիս։

Ադր, յամի ՈՀՀ (1229) թուականութեան Հայոց... եւ ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ, գրեցաւ գիրս ընթերցուածոց մարգարեական եւ առաքելական, եւ աւետարանական, եւ աղաւթական բանից, հրամանաւ սրբազան եւ առաքելաշնորհ աստուածապատիւ տեառն Միքայելի, ձեռամբ անպիտանի յոքնամեղ եւ թարմատար գրչի Յուսկան, ի հռչակաւոր և մեծանուն անապատիս եւ հրեշտակաբնակ սուրբ ուխտիս Յիսուանց, յորում հովուէր սմա տէրս Միքայէլ եպիսկոպոս Անտիոքու, առ դուրս Սուրբ Կաթողիկէ տաճարիս հոգեւոր մաւրս մերո Սիոնի նորոյ եւ Աստուածածնիս, եւ ընդ հովանեաւ սքանչելահրաշ կենսաբեր եւ ամենայաղթ Սուրբ Խաչիս, վասն զի ստուգապէս Քրիստոս ի սմա բնակեալով բազում նշանս առնէ առ հիւանդս եւ ախտաժէտս, վասն զի եւ սա կոնքն յորում լուանար եւ մաքրէր զմերս աղտեղութիւն սուրբ եւ անկարաւտն մաքրութեան տղայացեալն վասն մեր Տէրն եւ փրկիչն Յիսուս Քրիստոս։ Մերձ յաստուածապահ դռեկին Պաղրաս, ի սահմանս Անտիոք քաղաքի, առ ստորոտ լերինս փոքու, որ կոչի Ծամրնդաւ, յորում բնակեալ են աստուածահաճոյ հարք և կուսակրաւն ճգնաւորք, եւ անդադար Սաղմոսիւ եւ աւրհնութեամբ, ի տուէ եւ ի գիշերի, եղովք հոգեւորաւք եւ ձայնիւք քաղցրութեամբ փառաւորեն զամենասուրբ Երրորդութիւն, որ է աւրհնեալ յաւիտեան։*

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ ուսմամբ կամ ընթերցմամբ, կամ գաղափարաւ, յիշեսջիք ի Տէր զվերոյ յիշատակեալդ

* «Հավանաբար գրաքննութենէ վախնալով Հայակի Լևկիո Բագաւորին անունը չէ արտագրածն»,—գրում է հրատարակիչը։

զարհիեպիսկոպոս Անտիոքու զՄիքայէլ, դողոդմածն, զաղքատասէրն, զաւտարասէրն, զներողն ի վերայ ամենեցուն, որ եւ մերոյ պանդխտութեանս եղեւ յարկ ծածկութի, վասն զի յոյժ բերէ սա զնմանութիւն ճըշմարիտ քահանայապետին յինքն, յորում շնորհեսցէ զսա Տէր մեզ մինչև ի խորին ծերութիւն, եւ ետ ելիցն՝ ընդ սրբոց քահանայապետից դասել: Ձիշեսջիք ի Տէր զՎարդան քուերորդի սմին, սարկաւագ եւ սպասաւոր սուրբ սեղանոյն, զի սրժանի լիցի աստիճանի քահանայութեան, եւ ի պատշաճ ժամու յառաւելն վերադասիլ պատիւ: Նա եւ զՍտեփանոս փակակալ սրբոյ տաճարացս, այր սրբասէր եւ աւտարասէր, որ եւ իմոյ անարժանութեանս բաղում մարդասիրութիւն ցուցեալ: Ձիշել հայցիմ ի Տէր եւ զհոգևոր հայր իմ եւ գետ մարմնոյ ազգական զԳրիգոր անհաս գրիչ, զսնուցիչն իմ և լուսաւորիչ աստուածային իմաստից, նա եւ զետ մարմնոյ ծնաւղսն իմ՝ զգնացեալսն առ տէր, զհոգևոր եղբայրս իմ, եւ զուսումնակիցք, եւ զազգականք զՍարգիս և զԹորոս: Ձիշեսջիք ի Տէր եւ զՎարդան՝ հայր վանիցս, եւ զհոգևոր հայր իմ զՅովհաննէս, եւ մերոյ անապատին աշակերտ, այլ եւ զմիաբան եղբարք սուրբ ուխտիս:

Արդ, գրեցաւ սա ի վայելումն մաքրափայլ եպիսկոպոսիս եւ մանկանց եկեղեցւոյ, եւ ի յիշատակ ամենաբարի հոգւոյ իւրոյ, եւ անպիտան գրչիս: Եւ արդ ես՝ ետնեալս եւ ունայնացեալս ամենայն գործոց բարեաց, յոքնամեղ եւ բիւր յանցանաց պարտական, փանաքի եւ թարմատար գրիչ, երեսս անկեալ առ ոտս ամենեցուն, սրտառուչ կականմամբ եւ բաղում արտասուաք խնդրեմ ի ջենջ, որ առ աչժմս էք, եւ որ զկնի գալոց էք, զի եւ ղիմս անարժանութիւնս արժանի արասջիք յիշատակի բարեաց, խնդրելով ի Տէր զթողութիւն յանցանաց իմոց, որպէս զի եւ դուք կարող լինիջիք ասել առ Հայր ձեր երկնաւոր, Թող մեզ զպարտս մեր, որպէս եւ մեք թողաք մերոց պարտապանացն, եւ որ առատն է ի պարգևս, եւ ողորմած առ ամենեսեան, որ խնդրէն ի նմանէ, ողորմեսցի ամենեցուն յիշողացդ և յիշելոցս իւրում փառաւոր եւ միասանգամ դալստեանն, որ է աւրհնեալ յաւիտեանս:

Յայսմ ամի եւ կայսրն Ալամանաց Ըմբրիուրն, այսինքն թագաւորաց թագաւորն, իբրև այն թէ յԱստուծոյ առաքեալ, քանզի ունանք յանաւրինաց հնազանդեցան նմա, եւ արարին խաղաղութիւն, եւ ետուն սիրով զսուրբ քաղաքն Երուսաղէմ, եւ այլ բազում ամրոցս, քանզի ազգն Իսմայելեան դողան սարսափմամբ յահէ նորա եւ եղեն փախստական եւ սոքա գնացեալ մտին ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, եւ սկիզբն արարին շինման, որ ի նոցանէն աւերեալ էր: Եւ եղեւ ուրախութիւն եւ ցնծութիւն ամենայն հաւատացելոց եւ բերկրալից խնդութեամբ, եւ գրեանաւք ընթանան ամենեքեան երկրպագութիւն սուրբ գերեզմանին, քանզի հաշտեցաւ աստուածութիւնն ողորմութեամբ ընդ արարածս և թողութիւն շնորհեաց մեզ: Արդ, զ՝ինչ տացուք տրիտուր Տեառն, բայց միայն աւրհնեսցուք, գովեսցուք, բարեբանեսցուք, ծունր կրկնեսցուք եւ երկրպագութեամբ հանդերձ, որում վայել է փառք եւ պատիւ՝ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

115

ՃԱՌՆՏԻՐ

Երևան 6169 (1227 թ.)

Ստացող՝ **Վարդան Վարդապետ**
Վայր՝ **Աւագ վանք**

202բ *Ի թուականութեանս Հայոց ի ՈՀԶ (1227) ծախաւք և ընչիւք նուաստ սպասաւորի բանի Վարդանա գրեցաւ ցանգալի կտակս, իսկ ՈՀԷ (1228) կազմեցաւ, և ղի ոչ էր կարդացած և ուղղած, ի ՈՀԸ (1229) կարդացի և ոչ կարացի ուղղել, վասն զի շատ էր սղալն աւելի և պակաս, զոր ոչ կարացի զաւելին հանել և կամ զպակասն գրել, վասն զի նորակազմ էր գիրքս և սաստիկ պինդ։ Եւ եհաս ինձ սուք անմխիթար, վասն զի սիրեցեալ եղբայր մի էր, որում անուն Յակոբ՝ վախճանեցաւ և եթող բաղում տղայս, որ[բ]ս և աղքատ, այլ և ծերացեալ մայր, որ կարի ևս թշուառացուցանէր զիս ողբովք, այլ և քոյր և եղբաւր էին սոքա երեքեան, ի միում ամսեան վախճանեցան, ընդ որ կարի յոյժ վիրաւորեցա, մանաւանդ զմտաւ ածելով զերկու դաս որբերն։ Վասն որոյ աղաչեմ զսուրբ և զպատուական ընթերցողստ յիշեսջիք զնոսա ի մաքրափայլ աղաւթս ձեր, այլ և զտառապեալ կրաւնաւորս զՎարդան զստացող գրոցս, և զծնողս, և զեղբարսն իմ՝ ղհոգևոր և զմարմնաւոր, այլև զայնոսիկ, որ յաձնեալ են յիշատակել յաղաւթս, որպէս զի բարեխաւսութեամբ և աղաւթիւք Սրբոյ Աստուածածնին՝ մաւրն լուսոյ, Յովանու Կարապետին և Սրբոյն Ստեփանոսի աղաւթիւք, և չարչարանաւք Լուսաւորչին մերոյ Գրիգորի, նահատակութեամբ և հեղմամբ արեամբ յոգնախոռմբ և բազմերանեան սուրբ և փառաւորեալ վկայիցս, որ ի սմա հաւաքեալ կան, յիշատակելոյս և յիշողացդ ողորմեսցի, մեղաց և յանցանաց թողութիւն շնորհեսցէ և իւրում սուրբ արքայութեանն արժանի արասցէ, և նմա փառք յաւիտեանս, ամէն։*

Յայսմ ամի խոռազմ շաճն բազում գաւառս աւարեաց և անմարդ արար, և անթիւ զաւրաւք պաշարեաց զՆալաթ և ունի ի մեծ նեղութիւն, որ և առ ի նույն ամի։*

116

ԺՈՂՈՎԱԾՈ

Երևան 472

Գրիչ՝ **Մարկոս**

ա

265բ *Ի թուական[ու]թիւնս Հայոց ՈՀԸ (1229), գրեցաւ բուրաստանս ամենազան պտղաւք ոչ ապականացաւք, այլ անմահականաւք, աւետ<ս>ար[ան]ականաւք, առաքեա<ն>կանաւք եւ մարգ[ար]եականաւք, ի ձեռն ան[պ]իտան երիցոյ Մարկոս կոչեցեալ, որ ա[ն]ուամբ միայն եւ գործով ոչ զնոյն կատ[ար]եալ։ Զի յայսմ ամի ել չարեաց՝ թա[գ]աւոր Ջալալատին կոչեցեալ։*

* Վերջին նախադասությունը գրված է ներքևում, այլ գրչով և թանաքով։

Բ

197բ Ո՛վ իմաստասէր անձ, սիրով հայիր և մի բա[մ]բասէր, զի կարողութեամբ նմանիլ Աստուծոյ, ասացեալ իմաս[տ]նոց, այլև ժամանակ ամենայն իր, զի ժամա[նա]կս խ[ի]ստ էր տարտարոս, եւ ես փախըստեայ, վասն [յ]անցանաց իմոց՝ յանաւրինաց, եւ զմիտս գերէր սատանայ, վասն այնր սխալ է և անարուեստ գրեցի։ Եւ ես Մարկոս սուտ երեց կոչեցեալ, զոր գծեցի զգի[ր]ս զայս անար[ու]եստ բաժանմամբ, աղաչեմ զամենիսեան, որք կարդայք զանճառ բուրաստանս այնմենա Տեառն լցեալ անմահական ճաշակաւն, որ մնա ի կեանս, զտառապեալ ոգիս յաղաւթս յիշեսջիք, և Աստուած զձեզ յիշէ։

Գ

246բ Ո՛վ եղբայր պատուական, որ կամիս շահեալ յաստուածա[յ]ին կտակէս, զիս սուտանուն քահանա յիշեա յաղաւթս, և սխալանաց թողութիւն արա, վասն զի ես տգէտ, եւ ժամանակս տարտարոս՝՝ի չ՚՚ր նետողացս, բայց փոքր մի խաղաղացաւ կամաւքն Աստուծոյ*։

117

ԱԻԵՏԱՐԱՆ

Վենետիկ 122, Սարգիսյան, ցուցակ Ա, էջ 537—538

Գրիչ՝ Սաեփանոս

ա

245բ Աւրհնեալ է Քրիստոս Աստուած իմ, ամէն։
Թուին ՈՀՀ (1229)։

Բ

189բ Տէր ողորմեա Սաեփանոսի յոյժ մեղաւորի, և [որ] ասէ ամէն, և նմայ Տէր ողորմեայ։

118

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻԽԱՅԻԼԻ ԱՍՈՐԻՈՑ

Երուսաղեմ 662, Պողարյան, ցուցակ Գ, էջ 94 (1679 թ.)

Ի թվին Հայոց ՈՀՀ (1229) կատարեցաւ աշխարհապատում Պատմութիւնս տէր Միխաէլի սուրբ. պատրիարգին Ասորոց, զոր սուուգիւ գրեաց ծայրաքաղ առնելով, յաստուածաստեղծ մարդոյն Ադամայ սկիզբն առնելով՝ ասաց մի ըստ միոջէ զկարգ եւ զծնունդ եւ զչինութիւն արարածոցս, զոր նախ քան զրհեղեղն աշխարհակործան, եւ զոր յետս զրհեղեղին յորդոցն Նոյի շինեալ եւ աճել ըստ հրամանի, եւ ուխտեցին ամենա-

* Լուսանցքներում այսպիսի հիշատակագրություններ կան. «Հալատ է նշանագրած ընկեր սորա» (222բ)։ «Այս տետր զհետ գիմին է» (23), այսինքն Գ պրակի հետ է. նրա մասն է և այլն։

կալին Աստուծոյ, որ եղ ընդ նոսա յետ յրհեղեղին։ Եւ ի վերայ այսորիկ զկարգ եւ զթիւ թագաւորացն Հոռոմոց եւ պարսից, եւ զկնի Պարսից թագաւորութեան վճարելոյ՝ սկիզբն առնէ թագաւորութեան Արաբակաց, որ են Տաճիկք. եւ զկատարածի սոցա զթուրքացս սուլտանութիւնն եւ զտիրելն բազում աշխարհաց եւ գաւառաց, զոր դեռ այժմ եւս ունին բռնացեալք ընդդէմ բազում ազգաց եւ ազանց։ Որ են թիւք ելիցն Ադամայ մինչեւ ի ժամանակս կատարելոյ գրոցս ի ձեռն Միխայէլի Ասորոց պատրիարգի ամք ՋՌԴՃ եւ Լ(6430), եւ այժմ է թիւս Հայոց ՈՀԸ (1229)։*

119

Ծեդիրք և ճարտումն տէր Միխայէլի Անդիոքայ եպիսկոպոսին ի մեղաւորէս Վարդանայ եթէ որպիսի աւրինաւկաւ է մարդս պատկեր Աստուծոյ

Երևան 8198 (ԺԴ դար)

75ա *Ով գերապատուեալդ յԱստուծոյ և ի մարդկանէ, հրեշտականուն եպիսկոպոս տէր Միխայէլ մեծին Անտիոքու և սուրբ ուխտիս, որ կոչի Յիզվանց...*

77ա *...Եւ սկսայց կատարել զհրամանս քո զոր տայ Սուրբ Հոգին ի հին յիշատակաց և ի յուսմանց, բայց և ամենայն ի շնորհաց նորա լինի և ոչ ի մեր շանուց, քանզի խաւարեցաւ միտք իմ յախտից աշխարհիս, և նուաղեցաւ լոյս աչացս և տկարացայ ծերութեամբս։ Ապայ սէրն քո մոռանալ տայ ինձ զամենայն, նայ և զի մնասցէ սայ ի ձեռս քո ինձ յիշատակ, որպէս զի յետ մահու յիշատակեսցես զողորմելիս առաջի անմահ գառինն Քրիստոսի, որ վասն մեր զենանի անծախապէս, բայց և երկեայ յԱստուծոյ և սկսայ, զի մի պատժեսցէ զիս ընդ այրն քանքարաթագոյց, ի վերայ այլ անթիւ յանցանաց իմոց։*

77բ *Եւ դու ընկալ զսա ի ձեռաց իմոց սիրով, որպէս Քրիստոս ընկալաւ զխէրևէշն ի ձեռաց երանելի այրոյն, և արդիւնացուսցէ զսա Քրիստոս!! ի հոգիս քո և զամենայն լսողաց, մինչև ի կատարած աշխարհիս, և պսակ լուսափայլ արասցէ զսայ Աստուած ի գլուխ քո այժմ և յատուրն դատաստանի, և նմայ փառք յաւիտեան**։*

---

* Հավանաբար «էջ» միավորը րաց են թողել։ Վերականգնելով միավորը կստանանք 6437 կայսերական թվականը, որը համապատասխանում է Հայոց 1229-ին։

** Ըստ Ն. Մառի, դրված է 1229 թվականին, այսինքն խաչակրաց հինգերորդ արշավանքից հետո (Сборник притчъ Вардана, С. Петербургъ, 1892 г., էջ 312)։

120

ԱՒԵՏԱՐԱՆ

Վենետիկ 129, Բ. Սարդիսյան, 8ուցակ Ա, էջ 567—574

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Թէոդոսպոլիս

ա

390բ Փառք ամենասուրբ երրորդութեանն, Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Իմաստք աստուածային և շնորհք Սուրբ Հոգւոյն միշտ հեղեալ յորդիս եկեղեցւոյ՝ առ ի լցուցանել զպատուք ծարաւեաց կամայաւժար փափաղողաց ի յարբումն ոգեկան շահաւետից և մարմնական վայելմանց, մանաւանդ և որք տրփան ի նոյն տենչանս երկուց առաջարկութեանց, զոր աստուածատ բարեժամանակիս և առ յապագայիցն համատելոց և ճեմարանաց որոճալով և հետամուտ լինելով երկուցս, զոր ցուցաք, յարատեւակ շահելովն և երկեակ շահիցն՝ բացայայտ գոլով սորին։ Մինն յոգիսն ամբարելով, իսկ միւսն յետ ժողովելոյն և ի բնաւիցն զրկեալ գտանի։ Այլ առաքելահոս վտակըս այս՝ քառահոլով բղխմամբ ըստ աւրինակի չորից գետոցն բղխեալ յագենայն, արբուցանէ զչորեքեզրեան ծագս երկրի։ Իսկ ես եղկելիս, Գրիգոր գրիչ, փափագող եղեալ այսմ անմահական ըմպելոյ, հայցեմ ի Տեառնէ զայս ջուր կենդանարար բղխեալ ի բնութենէ Սրբոյ Երրորդութեանն՝ ի յարբուցումն պասքեալ հոգւոյ իմոյ։ Եւ ըստ յուսոյն իմոյ, որ առ Քրիստոս, ետ Տէր զխնդրուածս իմ, զի ի վաղուց ժամու ցանկացեալ էի այսմ անգիւտ մարգարտիս և ամենալաւ աւրինակիս, որ կոչի Գրիգորի Մուղանեցւոյ, ճարտարագիծ գրչի և անյաղթ գիտնականի։ Եւ ըստ յաջողելոյն Աստուծոյ՝ եղեւ ըստ ’կամաց իմոց։ Եւ ես ըստ կարի իմում՝ բազում աշխատութեամբ գծագրեցի իմով ձեռամբ և ծաղկազարդեալ յաւրինեցի ոսկւով պատուականաւ, հրով փորձեալ և զտեալ, և երիւներին երանգաւք և պայծառ դեղովք գրոշմեալ, ներգործեցի ի սմա ազգի ազգի քանդակս խորանաձեւս և երկնանմանացս և այլ մանրամասն ինչ ծաղկաւք՝ ըստ տուեցելոյ ինձ ի շնորհաց Հոգւոյն Սրբոյ։

Արդ, եղեւ կատարումն կտակիս, մանաւանդ թէ քրիստոսածրի մատենիս, ի ժամանակս վերջինս, յորում քննեալ գտաք ի հանդիպման ամիս լինել յեղիցն Ադամայ ի դրախտէն մինչեւ առ մեզ՝ հազարաց վեցից և չորից հարիւրից, երեսուն յաւելեալ ամաւք։ Իսկ ի ծագմանէ բա-

նին Աստուծոյ՝ հազարի միոյ և երկուց հարիւրից, երեսուն և երկուս յաւելեալ ամաւք (1232), եւ Հայկազնեան տումարիս վեցից հարիւրից եւթանասուն և իննն ամաց (1230), ի հոյակապ և ի հռչակաւոր քաղաքիս Թեոդոպալիս, ընդ հովանեաւ Սրբոյ Յարութեանս՝ յիշատակ հոգւոյ իմոյ և ծնաւղաց իմոց։

Արդ խնդրեմք և ի ձեզէ հեղինակէ և աւրէնսապատում եկեղեցւոյ մանկունք, որք յաստուածային պաղոցս խորհրդիւ դիտէք ճաշակել, յորժամ ի ձեռն առեալ զփափագելի սուրբ զԱւետարանս ի յաւուրս տաւնից տէրունականաց, զի և ի ձերոմ անզրաւելի ուբախութեանց յիշեսջիք զԳրիգոր գրիչ, նաեւ զհայր իմ զնաչատուր քահանայ՝ ղյոյժ հմուտ և հռետոր այսմ արհեստի, եւ զմայր իմ եղկելի, որ բաղում աշխատութիւնս կրեաց ի վերայ մեր՝ տացէ նմա Տէր վարձս ընդ վերջին մշակացն, նոյն և զքուերսն իմ՝ զԹանկերե և զԱգգերե և զԱկներե՝ հանդերձ հարազատաւք իւրովք, եւ զփեսայ իմ զՎահրամ՝ զսիրելի անձին իմոյ, եւ զՅովասափ փիլիսոփայ՝ զհոգ[ե]ւոր եղբայր մեր, զի արժանի եղիցուք թագաւորական պատ[ո]ւոյն ընդ [մե]ռեալսն և մի մնասցուք առ երկենի, քանզի եմք սբաղեալք յագարակի զուրավաստակ պատճառանաւ, հինգաթեւ եզանց լծորդութեամբ։ Այլ և աղաչեմ յիշել զմեզ առաջի Քրիստոսի, զի ի ձեռն հայցման աղաւթից ձերոց թեթեւասցուք ի ծանրութենէ մեղաց և արժանաւորք հանդիպեսցուք գտանել ողորմութիւն յաւուրն այցելութեան՝ ընդ սուրբս և ընդ սիրելիս անուանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որում փառք յաւիտեանս։ Եւ նոյնինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ առատն է յամենայնի, շնորհեսցէ ողորմութիւն յիշողացդ և յիշեցելոցս յաւուր մեծի ծագման իւրոյ, և նմա փառք այժմ և յաւիտեանս, ամէն։

Զգեղեցիկ և զքրիստոսատէր պատանեակին՝ զպարոն Վարգ զբարեգործ, որ աշխատեցաւ ի պարզել թղթոյս և մասն ինչ եղ յԱւետարանս՝ յարդար ընչից իւրոց, տացէ նմա Տէր մասն և բաժին յարքայութեան արդարոց։ Եւ որք կարդայք աղաւթիւք ձերովք, աւրհնեսցուք զնա։ Յիշեսջիք և զբարեպաշտուհի զմաւրքոյր իմ՝ զԳումարն՝ հանդերձ հարազատ որգւովք իւրովք, որ և սա մասն ինչ եղ յԱւետարանս, որոց ողորմեսցի սոցա Քրիստոս ձերովք սուրբ աղաւթիւք։ Ընդ նմին յիշեսջիք և զԱգաաաիկին, և զդստրիկն իւր՝ զՆուռանսթի, որ յայս ամի փոխեցաւ ի Քրիստոս, քան զի և սա սակաւ ինչ աւգնական եղեւ, որոց գթասցի ի սոսա Քրիստոս յաւուր փրկութեան։ Զնաչատուր վարդապետն իմ և զԱմեհս քահանայ, որ ի մագաղաթս աշխատեցաւ ընդ իս, յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս։ Եւ ամենեքեան, որք միաբանեալ են ընդ մեզ հոգեւոր սիրով, աւրհնեսցէ զընտրսա Քրիստոս Աստուած հոգւով և մարմնով, ամէն։

Աւա՛ղ, աւա՛ղ և հազար աւա՛ղ դառնութեան ժամանակիս։

Բ

116ա Քրիստոս Աստուած, բարեխաւսութեամբ սուրբ և ընտրեալ առաքելոյս ողորմեա մեղուցեալ և պարտատր անձին իմոյ՝ Գրիգորի գրչի,

և ծնաւղաց իմոց, և քուերց և ազգականաց մերոց, և այնոցիկ, որք միաբանեալ են ընդ մեզ հոգւով։

Գ

138բ Քրիստոս Աստուած, ողորմեա Գազկանց Միքորոյ, որ յայսմ աւուր կոչեցեր առ քեզ, և թող զյանցանս նորա։

121

ԾԱՇՈՑ

Հռոմ, Լեոնյան վարժարան 4, Ն. Ակինյան, Ցուցակ, էջ 53—54

Գրիչ՝ Մխիթար
Վայր՝ Կապոսի վանք

ա

258ա Փառք ամենասուրբ Երրորդութեանն եւ մի աստուածութեանն՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Բայց գրեցաւ աստուածային գանձս ի տամաչխմբութիւն սրբոց մարտիրոսաց, ի թուականութեան Հայկազեան տոմարի ՈՀԹ (1230), ի լեառն Սուրբ Լուսաւորչիս, յանապատիս որ կոչի Կապոսի, հրամանաւ պատուական քահանայիցն Վարդանայ եւ Սարգսի, որ են ի գաւառէն Եկեղեաց, ի գեղջէն որ կոչի Իշոխա։ Եւ զմտաւ ածեալ զճգնութիւն սրբոց մարտիրոսացն եւ զսէր սրբոցն, զերկիւղ ամենայն կարեաց ի բաց մերժեցաք եւ ստացաք զսա մեզ ի ժառանգութիւն եւ յիշատակ ամենայն զարմից մերոց։ Արդ, աղաչեմք զամենեսեան որք աւգտիք ի սմանէ ուսանելով կամ կարդալով, կամ աւրինակաւ, յիշեսջիք ի Քրիստոս, որ աղաւթիւք սրբոց մարգարէից, առաքելոց, մարտիրոսաց ողորմեսցի եւ թողութիւն շնորհեսցէ Վարդանայ եւ Սարգսի, եւ հաւր եւ մաւր իւրեանց Սոսթանիսի եւ Ազգկանն, են հոգեւոր զաւակացն Աթանասի եւ Յովսեփայ քահանայից, եւ պատանեկին Յուսկանն:

Յիշեա Քրիստոս Աստուած ի քո արքայութիւնդ զՎարդան եւ զՍարգիս, զԳրիգոր եւ զԳորգ հարազատ եղբարք, եւ զքոյրեր մեր զՏիկնացն եւ զԿանացն, եւ զփեսայնին մեր զԻնքնաախոս եւ զԹիոդոս, եւ զՈվանէս խնամին մեր։ Տէր Յիսուս ողորմեա դրելոցս ի սմա եւ թողութիւն շնորհեա սոցա։

Եւ ինձ Մխիթարայ, որ զսակաւ յիշատակս գրեցի, ողորմեա Տէր, եւ քեզ փառք յաւիտեանս, ամէն։

Բ

Գրիչ՝ Գրիգոր

45բ Ո՜վ աստուածասէրք եւ աստուածապաշտք, որ ժողովեալ էք կատարել զտաւն պայծառակերպութեանն Քրիստոսի, յիշեսջիք զԹշւառականս զԳրիգոր գրող բարի յուսով եւ սիրով, եւ ասասջիք՝ Քրիստո՛ս, քո սուրբ պայծառակերպութեամբդ ողորմեա, եւ որք զմեզ յիշեն, եւ քեզ փառք այժմ, յաւիտեան։

Գ

Գրիգոր ամենաթշուառ գրիչ զամենայն ժողովալքս աղաչեմ մեղաց
126բ թողութիւն խնդրեցէք ի Սուրբ Երրորդութենէն ինձ եւ իմոցն եւ ձերաոցն, Քրիստոս զձեզ յիշե իւր ողորմութեամբն։

122

ԱՒԵՏԱՐԱՆ

Քյուրտյան, Ցուցակ, էջ 405

Գրիչ՝ Յովաննէս

ա

148 Զբազմամեղս զՅո[վ]ն[աննէս] յիշեսջիք։

Յայսմ ամի մեծ ահ կա Խորազմշանին յամենայն արարածս, զի այժմ առ զԽլաթ և զամենայն սրով մաշեաց զգաւառն։

Այժմ աւելի են գերիքն յաշխարհի, քան զազատքն, և նա փքա իբրև զվիշապ և գոչէ իբրև զառիւծ։ Եւ սուլտանն Հոռոմոց աշխարհախումբ ժողովով ընդդէմ նորա, և ամենայն սիրտ բեկեալ և զարհուրեալ առաջի ոմի։ Երանի որ ոչ է իմ ժամս յայս։

Բ

180 Յուլիս ամսոյ Թ (9), յաւուր երեքշաբ[թի] պահոցն այլակերպութեանն, ընդ Զ (6) ժամն և ընդ Թ (9)-ի մէջ շարժ եղև լաւ։ Փառք Աստուծոյ։

Գ

382 Ի թու[ին] Հայոց ՈՀԹ (1230), յամիս ագոստոս ԻԵ (25) աւրն, յաւուր կիրակէի եկն առ մեզ Սարգիս հայրն և եբեր մեզ վատ զրոյց, որ եկեալ Լևոն թագաւորին թագուհի ի Կիպռաւսա ի Սելևկիա, որ տենայր զիր դուստրն, որ էր Հեթում թագաւորին թագուհի։ Եւ տարան զթագուհին ի Սելևկիա, և անդ եռես զմայրն իւր, և խաբեց զթագաւորին հայրն զպարոն Կոստանդին, և մտաւ ի Սելևկիա, և մոտեց հետ իր մայրն, և զպարոնն հանին քաշնաւք բերդէն։ Այս այսպէս գործեցաւ, և ենք յահի և յերկեղի. այլ յառաջկայն Աստուծոյ է գիտելի։

Եւ Հոռոմոց սուլտանն և Մելէք յԵոլին, երեք որդի՝ բազում զաւրաւք, և Խորազմշահնն՝ բազում խուժադուժ ամբոխիւ դէմ իրերաց են դումարեալ. որ պատերազմին. այլ զոր լինելոց է՝ Աստուծոյ է գիտելի, այլ ար[ար]ածքս ամենայն են ի վտանգի։

Դ

129 Քունն խիստ կու չարչարէ և աւէրէ։

123

ԱԻԵՏԱՐԱՆ

Ն. Ջուղա 29, Տեր-Ավետեայն, Ձուցակ, էջ 43—44

Գրիչ՝ Ներսէս
Վայր՝ Ամասիա

Տէր Յիսուս ողորմեա գծուղի սորա Ներսիսի, և ծնուղաց իւրոց, և ամենայն զարմից իւրոց, որք են հանգուցեալ առ Քրիստոս։

Փառք... Շնորհիւն ամենակալին Աստուծոյ սկսայ և ողորմութեամբ Յիսուսի Քրիստոսի կատարեցի զսուրբ Աւետարանս յամի Ռ-երորդի Հ-երորդի Թ-երորդի (1230) թուականութեանս Հայկազնեան տումարիս, ի բռնակալութեան Իսմայէլական ազգին, ի շար և ի դառն ժամանակի, զի ըստ նախասաց տեսութեան մարգարէից և տէրունական աստուածապատում հրամանին լցաւ և աւարտեցաւ աւուրք ժամանակաց և մերձեցաւ և եհաս աւուրք պղծոյն անապատի, ըստ Պաւղոսի ձայնին և թէ Մինչև բարձցի որ այժմդ ունի, ապա յայտնեսցի որդին կորստեան և թէ ի բազմանալոյ անաւրէնութեան ցամաքեսցի սէր բազմաց, և եթէ ծովիցի նեղութիւն մեծ որպիսի ոչ եղ ի սկզբանէ աշխարհի։

Եւ արդ տեսանեմ նեղութիւն և անձկութիւն անբաւ, տագնապ և արհաւիրք անհանդուրժելիք, քանդումն և քայքայումն քաղաքաց և աւանից, աշխարհացն, գաւառից, զրկանք և յափշտակութիւն տկարաց և աւտարաց, կործանումն տանց և շինուածոց և եկեղեցեաց, զի ի յաճախելոյ և բազմանալոյ անաւրէնութեանց մերոց անկեալք ի ծառայութիւն աւտար և բարբարոս ազգաց, որք զաւրէն հրոյ անյագաբար ճարակեն զմարմին։

Եւ ի վերայ այսր ամենայնի ոչ զարհուրումն և ոչ դողումն, ոչ փոյթ և ոչ երկիւղ, ոչ պնդութիւն հաւատոյ և ոչ յաւժարութիւն գործոց բարեաց, այլ հաւատք պակասեալք և ամպարշտութիւն զօրացեալ, արդարութիւն հալածեալ և անաւրէնութիւն արմատացեալ, սէր եղծեալ և անգթութիւն ծաղկեալ, Աստուած վաճառեալ և ագահութիւն թագաւորեալ, անուն և ձև լոկ՝ քրիստոնեութեան, և կարգք և վարք՝ և ոչ բնաւ ումեք։

Արդ այսպիսի չարաշշուկ և բազմավրդով, ծանր, աղետաբեր դարանակալի աւուրս, ես ունայնացեալս ի գործառնութենէ կանուխ ժամանեալոյն յոյժ խաւարաժառանգ և պարապնդեալս մեղօք Ներսէս անպիտան գրիչ և սուտ անուն քահանայ, գրեցի զգերունակ և զաստուածատուր կտակ զսուրբ Աւետարանս ի ստոյգ և յընտիր աւրինակէ և ի բազմաց վկայեալ, ի յիշատակ Եաչուկ քահանայի և ծնուղաց և զաւակաց իւրոց, ընդ նմին և պարոն Վարդիճ և ծնուղացն և զաւակաց նոցին, ի պայծառութիւն եկեղեցւոյ և ի վարժումն մանկանց նոր առագաստի։

Արդ, որք ընթեռնուք և աւգտիք և կամ գրչութեան ընդարմինակէք, և որք լսելով լուսաւորիք, թողութիւն մեզաց հայցեցէք ի Քրիստոսէ Եաչուկ քահանայի և հաւր՝ զուգակցի իւրոյ, որոյ անունն Վարդ կոչի։ Եւ գրեցաւ սա յանապատիս Ամասիոյ, ընդ հովանեաւ Սուրբ Կարապետի։ Տէր Յիսուս ողորմեա Մանուէլի վարդապետի, որ բազում սիրով ընկալաւ և հանգոյց զմեզ, զոր Տէր Յիսուս հատուսցէ նմա յետ գալստեան,

որ աւգնական և առիթ եղև գրոցս։ Տէր Աստուած ողորմեսցի Սարգսի քահանայի, և հարազատ որդւոց իւրոց Կարապետի քահանայի, և եղբաւր իմոյ ըստ հոգւոյ, որ զաւրինակս շնորհեցին։

Արդ, որք ընթեռնուք և լուսաւորիք, խոշորութեան անմեղադիր լերուք, և Քրիստոս որ առատն է ողորմութեանց ձեզ և մեզ ողորմեսցի, և Սուրբ Երրորդութեանն փառք յաւիտեանս։ Ընդ նմին ողորմեսցի Տէր Աստուած ծնաւղաց իմոց Սիմէոնի և մաւր իմոյ Թամար տիկնայ, ամէն։

Որ յայս սուրբ Աւետարանիս զինքն աւգնական լինի, Տէր Աստուած իւր աւգնական լինի և մեղաց նորա թողութիւն շնորհեսցէ, եթե այր, և եթէ կին, եթէ ծեր, և եթէ տղայ։

124

ԳԻՐՔ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ

Երևան, պատառիկ 828

1ա Ի [թ]վիս ՌՀԹ (1230) ըստ յ[աճ]ախելոյ մեղաց մերո[ց], եւանէ
անգն այլայս[եռ] և խուժադուժ ազգին որ Թաթարքն, և ի սու[ր] սու-
սերի մաշեց զ[տ]իեզերս, մինչ ոչ մնաց տ[ե]ղի ողջ, զեկեղեցիս տա-
պալեաց, զքահան[այս կ]ոտորեց և ոչ խնայեց [մէ]կն նոցա ի կեն-
1բ դան, և այլ ղամենիսեան առ[հա]ս[ա]րակ կոտորեց զայ || դարձոյց ի
տեղիս իւ[րե]անց, ընդ որս և գնեց զայս Ընթերցուածս և [դա]րձեալ
ետ ի իւր առ[ա]ջին տեղին՝ ի Սուրբ Աստուածա[ծի]նն, յիշատակ իւրն,
և [ծն]ողաց իւրոց, և եղբաւ[ր] իւրոյ Ստեփաննոսին, եւ [ե]ղբաւր որ-
դոյն Լուսկա[ն]ն, որ տղայ հասակաւ փո[խե]ցաւ ի Քրիստոս։

Արդ, ո՛վ սուրբ մ[ա]նգունք սուրբ եկեղեցոյ, որ[ք] կարդայք կամ աւկ[տ]ի[ք] ի [ս]մանէ ///*։

125

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Երուսաղեմ 1818 (ԺԲ դ.), Պողարյան, Ցուցակ Զ, էջ 184

Ստացող՝ Առաքել
Վայր՝ Կիլիկիա

ա

384ա Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ...

---

* Ընթերցուածոց գրքից մի թերթի կես է մնացել, որը հետագայում ծալել են և պահպանակ դարձրել։ Մյուս սյունակում ևս կա հիշատակագրություն նույն ձեռագրի գերությունից փրկելու մասին. այն հավանաբար գրված է ԺԳ դարի վերջերին կամ ԺԴ դարի սկզբներին. բերում ենք ամբողջությամբ։ «Կամաւ ամենակալի Աստուծոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ես՝ Նազարաթեա, Շիրին սարկաւագի որդիս Թաւրիզեցի, տեսայ զԸնթերցուածս ի ձեռն այլազգեաց, և առի և տվի յեկեղեցին։ Արդ, ով կարդայք, զմեղուցեալ ծառայս Քրիստոսի յիշեսջէք, և զկենակիցն իմ զՈւլումելիք, և զվերայփոխեալ ի Քրիստոս զաւակն իմ՝ զՍադաթին, և զծնաւղս իմ ///»։

Մյուս էջում Ստեփանոս գրակապի հիշատակարանն է ձեռագիրը գնելու մասին։

Յամի Ո-որդի, ևւթանասներորդի, իններորդի (1230), թուականիս Հայոց, ի հայրապետութեան տեառն Կոստ[անդեայ], եւ ի թագաւորութեան քրիստոսապսակ արքայի Հեթմոյ, ես Առաքել նուաստ աշակերտ եւ սպասաւոր ուսման բանի, փափագաւղ եղեալ մատենի սրբոյ եւ կայծակնաճաշակ մարգարէին Եսայեայ, ստացայ զսա յարդար ընչից իմոց, ի վայելումն ինձ եւ յիշատակ հոգւոյ իմոյ, եւ եղբաւր իմոյ Գրիգ[որ] քահ[անայի], որ յայս ամի փոխեցաւ ի Քրիստոս, եւ ծնաւղաց իմոց, եւ անուցողացն և ուսուցչացն զիս հոգեւոր հարցն եւ ըստ մարմնոյ, Վարդանայ հաւրեղբաւր իմոյ, եւ Պետրոսի քեռոյ իմոյ, որ բազում աշխատեցան ի վերայ իմ յիմաստս աստուածային ուսմանց, նաեւ զինչս իւրեանց ետուն ի պէտս իմ, որոց Տէր Յիսուս ընդ միոյն հարիւրապատիկ հատուսցէ նոցա աստ եւ ի հանդերձեալսն զիւր ողորմութիւնն, ամէն։

Արդ, աղաչեմ զամենեսեան, զմանկունդ եկեղեցւոյ, զժառանգողք սմին եւ զվայելողդ, եւ որք աւգտիք ի սմանէ ուսմամբ կամ ընթերցմամբ կամ գաղափարաւ, յիշեսջիք ի մաքրափայլ եւ ի սրբամատոյց յաղաւթս ձեր որ առ Տէր զվերոյ յիշատակեալքս ի սմա, եւ որ առատն է ի պարգեւս եւ աննախանձ ի տուրս, որք հայցեն ի նմանէ, Քրիստոս ամենեցուն ողորմեսցի յիշելոցս եւ յիշողացդ յիւրում գալստեանն, եւ նմա փառք յաւիտեանս, ամէն։

Ցայսմ ամի եղեւ շարժ սաստիկ ի գաւառիս Կիլիկեցւոց, եւ բազում շէնս փլոյց, առաւել ի հո[յա]կապ քաղաքն զՏարսոն աւերեաց։

բ

Գրիչ՝ Կոստանդին
Վայր՝ Մլիճո վանք

401 Ո՛վ եղբարք, որք ընթեռնուք զդիրս զայս, յիշեսջիք ի Քրիստոս զըստացող սորին զԳրիգոր քահանայ, եւ զծնողսն իւր, եւ զեղբայր իւր զՍտեփանոս փոխեալն առ Քրիստոս, եւ զգրող սորա զԿոստա[նդին]։

գ

416 Ջստացող սորին զԳրիգոր կրաւնաւոր, որ է փակակալ սուրբ ուխտին Մլիճոյս, յիշեսջիք յաղաւթս առ Տէր, եւ զծնաւղսն իւր, եւ զհարազատն իւր զՍտեփանոս կրաւ[նաւոր]։ Ընդ նոցին եւ զգրողիկ սորին զԿոստա[նդին] եւ զըծնողս, եւ Քրիստոս որ առ[ատ]ն է ի պարգեւս ողորմեսցի յիշելոցն եւ յիշողացդ ամէն։

126

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Էջմիածին 233

Գրիչ՝ Ստեփաննոս
Վայր՝ Յեսուանց վանք

ա

26ա *Փառք ամենասուրբ Երրորդութեան Հաւր և Որդո և կենդանարար և ազատիչ Սուրբ Հոգւոյն, անբաժանելի և միասնական Սուրբ Երրորդութեանն, այժմ և հանապազ և յաւիտեանս յաւիտենից, ամէն, ամէն, ամէն։ [Ի] թուականութեանս Հայոց [Ո]ՀՀ (1229), գրեցաւ տառս Քագաւորութեանց, ի խնդրոյ աստուածապատիւ և առաքելաշնորհ արհիեպիսկոպոսին Անաի[ո]ֆո* տեառն Միքայելի և առաշնորդ սուրբ ուխտի Յեսուանց, ի վայելումն մանկանց եկեղեցւոյ, և ի յիշատակ հոգւոյ իւր և ծնողաց իւրոցն, ամէն։*

*Եղև զբաւ սորայ յանապատս Յեսուանց ի վանսն, ընդ հովանեաւ մաւրս մերոյ Սուրբ Սիոնի, և Սուրբ Աստուածածնիս, և զկենսակիր և սքանչելագործ Սուրբ Նշանիս, ձեռամբ յանարժան Սահփաննոսի, ի Քագաւորութեանն նոր օծեալ ընծային** Հեթմոյ և ի կաթողիկոսութեանն տեառն Կոստանդեայ, ամէն։*

բ

206բ *Տէր ծիսուս ի քո միւս անգամ գալստեանդ և ի հասարակաց յարութեանդ ողորմեա տէր Միքայելի՝ ստաւղողի գրոցս և ծնողաց իւրոց, ամէն։*

127

ԱԻԵՏԱՐԱՆ

Հովսեփյան, Ցիշատակարանք, էջ 867—870

Ծաղկող՝ Սիմաւոն

ա

Տէր Աստուած, ողորմեա ծաղկողի սմին Սիմէ՝ ծանրամեղի և ծնողաց իւրոց, ամէն։

բ

Սիմաւոն***։

---

* Նորոգված է, որոշ տառեր սխալ են վերծանվել. այստեղ՝ «Անտիոքոսի»։

** Նորոգված է. հավանաբար եղել է «արքայինն»։

*** Բոլոր Ավետարանների խորանների գլխագրերում գրված է «Սիմաւոն», ուրեմն ծաղկող Սիմէ-Սիմավոնն է։ Գրության մասին պահպանվել է հետագայում արտագրված սույն հիշատակարանը, որ բերում ենք ստորև։

128

ԱԻԵՏԱՐԱՆ

Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 870

«Յիշատակարան սուրբ Աւետարանիս

Արդ աղաչեմ զձեզ յիշել ի Տէր զգրողն և ղգրել տուողն սուրբ Աւետարանիս, որ զսորայ հին յիշատակարանն գտաք, որ Բարսեղ յանուն գրագիր գրեալ է զսա և թուական եդեալ էր այսպէս. ՈՀՔ (1230) թվին գրեալ էր։ Այսչափ հազիւ գտաք և գրեցաք։ Վասն որոյ ասեմք՝ Աստուած ողորմեսցի նոցա որպէս և կամեսցի»։

129

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 10688

Գրիչ՝ Ներսէս
Վայր՝ Սաւկիա Բաղաք

ա

224ա Փառք անսկիզբն և զուգական, անեղական, այլայլական, միասնական, անտանելի, անքրն[ն]ելի, անհասանելի, անիմանալի, անպարագրելի, անծերանալի, աներբ, անուր, անորակ, [ա]նքանա[կ], անբաժանելի, էական Սուրբ Երրորդութեանն յաւիտեանս, ամէն, որ զտկարութիւն իմ զաւրացոյց յաւէտ իւրով իմաստութեանն, վասն որով և ես յանձն առեալ ոգւով չափ, կատարեցի զտառս հոգեշունչ, աստուածազարդ, աստուածախաւս սուրբ Աւետարանս, զոր ամենասուրբ Հոգին հա[նգ]չելով երանելի աւետարանիչսն, ընդ համասփիւռ ոլորտս տիեզերաց լոյս շահացուցին։ Իսկ ի լինելութեան արարածոց, յորժամ բանն Հաւր բղխեցոյց յարարչագործն յընդեմայ չորս առաշս գետոց զչորս կ-
244բ մանս երկրի պարաբերով, որ բերէր աւրինակ զաւետաբեր չորս առա||շս աւետարանիս, վասն զի բղխելով ի կենդանի աղբիւրէն Քրիստոսի զբանաւոր բարունակս, այսինքն զքառանիւթեան զմարդիկ երկնաւոր այգեգործին ի ծաղկաւետութիւն և պտղածնութիւն ուրախութեան կազմեցին։

Նման են սոքա քառանկիւն աշխարհիս։ Իսկ զխորհուրդ չորեքկերպեան աթոռոցն զի՞նչ ասացից, զի են ի նոսա չորս դէմս՝ մարդոյ, առիւծոյ, եզին, արծուոյ, Մաթէոս դէմս մարդոյ պատմի, Մարկոս դէմս առիւծոյ, Ղուկաս դէմս ցլոյ, իսկ Յոհաննէս դէմս արծուոյ սրաթև, արագաթռիչ ի բարձունս ելանէ և զանճառսն ճառէ, և իւրաքանչիւր զմարմնաւորութիւնն Քրիստոսի գուշակէին։ Քանզի և Տէրն մեր Յիսուս Քրիստոս զքառանիւթեան մարմին նախաստեղծին Ադամայ զգեցեալ և երկրորդ Ադամ զինքն անուանելով բևեռեցաւ ի վերայ քառաթև խաչին, զարեգակն խաւարեցոյց, զլուսին յարիւն դարձոյց, զերկիր շարժեաց, զվէմս պատառեաց, զմեռեալսն արտաքս վերածեաց, զդժոխսն աւարեաց, զհոգիսն
225ա ազատեաց, զհպարտացեալ գոռոզն, զքշնամին ար||[գ]արութեան, որ եհան [զ]ն[ախա]ստեղծն ի դրա[խ]տէն՝ կապեաց, յարեաւ սքանչելապէս յաւուր երրորդի և յարոյց ընդ իւր [զ]ապականեալ մարմինն Ադամայ և մեզ հաւատացելոցս խրախոյս տալով ասէ. Քաջալերեցարուք, զի ես յաղթեցի աշխարհի։ Ել առ ծնաւղն իւր հրաշալի մարմնով, և հրաւի-

րեաց զմեզ իւր անմահութիւնն, առաքեաց զմխիթարիչ Սուրբ Հոգին յառաքեալսն և հրեղինաւք լեզուաւք զհաւատացեալքս ի Սուրբ Երրորդութիւնն, որում ամենեքեան արժանի լիցուք շնորհաւք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս։

Գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուիս Հայոց ՈՁ (1231), ձեռամբ Ներսիսի փցուն և վատ գրչի և քահանայի ըստ աշխարհի, ի քաղաքի Սասկիոյ, ի յիշատակ Յովաննիսի, և ամուսնոյ նորին, և հաւր իւրոյ Վարդի, և եղբաւր նորին Յոհաննիսի քահանայի ի Քրիստոս փոխելոյ։

Արդ, աղաչեմ զամենեսեան մանկունս եկեղեցւոյ, որ ոք ըն[թեռ]նու
285բ զսուրբ Աւետարանս, յիշեսջիք /// և մեզաց թողութիւն խնդրեցէք յԱստուծոյ Յովաննիսիկ, և ծնաւղին իւրոյ Վարդին, և Յոհաննիսի, և Աստուած զձեզ յիշողացդ ողորմեսցի, և որ յիշէ՝ ինքն յիշեալ եղիցի յԱստուծոյ։ Տէր Աստուած ողորմեսցի սուրբ քահանայից եղբարց իմոց Անտոնի և Կոստանդնայ, որ առիթ և կամակից եղեն սուրբ Աւետարանիս, և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։ Աւրհնեալ Սուրբ Երրորդութիւն, որ հասոյց զիս ի վերջին գիրս, մեծ գոհութիւն զԱստուծոյ։

Բ

1բ Եւ Տէր Յիսուս Ներսիսի գրողի ողորմեսցի և ծնողաց իւրոյ, ամէն։

Գ

Ստացող՝ Յովհաննէս

Յ[անուն] Աստուծոյ ես Յովաննէ[ս քահանայ ս]տացայ զսուրբ [Աւետարանս յարդ]ար [ս]տացուածոց իմո [և] ետու ի Սուրբ///Օգսենդ ի յիշատակ ինձ և ծնողաց իմոց, և եղբաւր իմոյ Յոհաննէս քահանայի ի Քրիստոս հանգուց[ել]ոց, և աւանդեցի ի ձեռն և ի հրաման Անդոն քահ<այ>անայի, որ պիտութիւն առնէ։ Բայց մի ոք իշխեսցէ աւձ[տ]ել զսա եկեղեցոյս կամ պռոյք տալ, կամ ունէք միրայթ հանել, այլ մնայ յայս եկեղեցիս ի Սուրբ Թորոս <Օգսենդ>*, և փրկութիւն հոգւոյ իմոյ Յովաննէսի, և եղբաւր իմոյ Յոհաննէս քահանայի, [և] Քրիստոսի Փ[ա]ռք յաւիտեանս։

130

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ

Երևան 1204

Գրիչ՝ Մաթէոս
Վայր՝ Սանահին

Ա

219բ Եւ զիս Մաթէոս, որ կաշկանաեալ կամ բազ[ում մեզացք]։

---

* Առաջին հիշատակութեան տեղանունը ջնջված է և վերևում այլ գրով գրված «Օգսենդ», իսկ այստեղ այն լավ չի ջնջված և բուն գրչի գրած «Թորոս» անունը կարդացվում է։

բ

Գրիչ՝ Կարապետ
Վայր՝ Սանահին

324բ [Ի] թ[ու]ին ՈՉ (1231) գրեցաւ աստուածային ընթերցուածի Մկ-
նութիւնս ի մեծահռչակ ուխտս Սանահինս, իմով ձեռամբ Մաթէոսի, զոր
գրեցի ինձ ի վայելումն, և ոչ ժամանցի ի սա ուրախանալ, այլ աւանդե-
ցի զսայ սիրելի ուսումնակցի իմոյ Ստեփաննոսի, և ես կիսաւրեայ գնա-
ցի յաշխարհէ, և սուգ մեծ թողի սիրելեաց իմոց, մանաւանդ հարազատ
եղբաւրն Կարապետին: Ու ես Կարապետս առեալ ղիշատակագրեցի խա-
ւարեալ աչաւք և մանրել ձեռաւք ի մեծ գանձարանէն, որ իբրև զարեգակն
փայլէր յայս[մ]աւուրս ի մէջ մարդկան։

Արդ, որ կարդայք և աւքտ[իք, յիշ]եսջիք զՄաթէոս, և ղխաւարեալս
Կարապետ, [և զՍտեփ]աննոս վայելող գրոյս, և որք յիշեք յիշ[եալ լիշիք
ի Տեառնէ]։

գ

Այլ գրիչ

286ա Վարդապետ ամենագով, ղփիծ գիրս ընթերցիր և զվայթարեալսն ի
սմա ուղղեա, բայց զսորին գծաւղս ի բարի յիշեա։

դ

Այլ գրիչ

288բ Վայ քաւրտխսխս։

131

ԳԻՐՔ ԴԱՏԱՍՏԱՆԻ

Ազգային գրադարան, Մաքլեր, Ծուցակ Փարիզի, էջ 100
Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 877—878, Մանրաժապավեն 1016

Գրիչ՝ Թուրոս
Վայր՝ Հաւոմկլա

ա

յա Ի թուականութեանս Հայոց ՈՉ (1231), գրեցաւ Գիրքս Դատաստա-
նի՝ ի խնդրոյ աստուածապատիւ և սրբասէր եպիսկոպոսին տէր Դաւթայ,
որոյ և հայրն փառաց վայելել տացէ իւր և ի ժառանգութիւն արասցէ
հոգւոյ և մարմնոյ։ Արդ, որք աւկտիք ի սմանէ և կամ ընդաւրինակէք,
զերջանիկ եպիսկոպոսս՝ զտէր Դաւիթ յիշելոյ արժանի [արյ]ասցուք. ընդ
նմին և զանարժան և զյանխմար գծողս, զորոյ և չեմ արժանի զանուն
յիշելոյ և կամ ընդ դրաւ արկանելոյ։ Ու որք յիշէքդ, յամենակալէն Աս-
տուծոյ և ի միածին Որդւոյ նորա և ի Սուրբ Հոգւոյն աւրհնեալ եղիցուք։
Ու խոշորութեան գրոյս անմեղադիր լերուք, զի այսքան է կար մեր և զեռ
եւս սակաւիկ մի կու հմտանանք ի գիծս։ Ու աւրհնեալ եղիցի Տէր մեր
Յիսուս Քրիստոս, յաւիտեանս յաւիտենից, ամէն, ամէն։

Բ

125բ Ի թուականութեանս Հայոց ՈԶ (1231), ի թագաւորութեանս Հեթմոյ՝ որգւոյ Կոստանդեայ իշխանաց իշխանի, [և ի] հայրապետութեանս տեառն Կոստանդեայ և արժանատուեալ կաթողիկոսին, գրեցաւ գիրքս այս ձեռամբ մեղաւոր և յախմար գրչի Թորոսի, ի յաստուածապահ անառիկ դղեակս Հատոմկլայս, ընդ հովանեաւ Սրբոյ Գրիգորի Լուսաւորչի, ի խնդրոյ քրիստոսազգեաց և առաքելաշնորհ եպիսկոպոսին տէր Պաւթայ: Արդ, որք աւգտիք ի սմանէ և կամ ընդաւրինակէք, ստացողի սորա՝ տէր Պաւթայ մեղաց թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, և անդրանիկ եղբաւրն իւրոյ Աբրահամ[այ], և պատուական ծերունոյ և ուսուցչի իւրոյ, և հոգեւոր հաւր իւրոյ և սրբասէր քահանային Սահփանոսի, և ծնողաց իւրոց, զի ստացաւ զգրկունքս յարդար ընչից իւրոց:

Եւ աղաչեմ ընդ նոսին և զեղկելի գծողս և զծնողսն իմ յիշեցէք ի Քրիստոս՝ թողութիւն գտանել բազում յանցանաց մերոց: Եւ որք յիշէքդ, աւրհնեալ եղիջիք ի Հաւրէն երկնաւորէն և ի յՈրդւոյ նորա Յիսուսէ Քրիստոսէ, և նմա փառք յաւիտեանս:

Արդ, ի յայսմ ամի ելաւ ազգ մի, որ կոչի թաթար, և փախստական արար զՊարսկաց թագաւորն և աւերեաց զՊարսկաց աշխարհն և երեկ ընդ Միջագետաց աշխարհս ի վայր մինչեւ յՕգեսա և ի Սամուսատ, և կոտորեաց բազում թուրք և քուրդ և քրիստոնէք և էառ բազումս ///

132

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 6519

Գրիչ՝ Սարգիս
Վայր՝ Յեսուանց անապատ

ա

389բ Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Ի թուականութեանս Հայոց ՈԶ (1231), ի հայրապետութեանն տեառն Կոստանդեայ, և ի թագաւորութեանն Հայոց Հեթմոյ, և յիշխանութեան հաւր նորին Կոստանդեայ, որոց տացէ Աստուած բազում ժամանակս և պահեսցէ յաղթող ի վերա ամենայն թշնամեաց իւրեանց, ամէն:

Գրեցաւ սուրբ Աւետարանս ի հռչակաւոր և ի մեծանուն անապատս Յեսուանց, մերձ ի մայրաքաղաքս Անիոմ, ընդ հովանեաւ մաւր մերոյ Սուրբ Սիոնի և կենսակիր և յաղթող Սրբոյ Նշանիս, և ի յաւուրս նորոգութեանն տեառն Միխայելի, ձեռամբ Սարգսի մեղաւոր և անպիտան գրչի,
390ա ի խնդրոյ Յոհաննիսի կրաւնաւոր քահանայի, որ ստացաւ զսա || ի յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց գնացելոց առ Քրիստոս:

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա և ընթեռնոյք, սրտի մտաւք յիշեսջիք և թողութիւն խնդրեցէք յառաջասացել ստացողի սորա Յոհաննէս և ծնողաց իւր, ամէն: Յիշել հայցեմ ի Տէր Յովսէփ զարդիւնական վարդապետն մեր և զարքեպիսկոպոսն Անիոմոյ՝ զգնացեալ-

սըն առ Քրիստոս, զի և նա ողորմութիւն գտցէ, քանզի և է արժանի, և զիս զանպիտան գրիչ Սարգիս յիշատակի արժանի արարէք, և ինքն Տէր Յիսուս, որ յառատն է ողորմութիւն ամենեցուն, ողորմեսցի մեզ և ձեզ՝ յիշողացդ և յիշեցելոցս, և նմա փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

բ

3բ Տեա ոչ մարմնապէս բազմանկուր, այլ հոգեպէս, և վայելեա իմաստիւք ի խնամս արարչին։

գ

Որք աւետեաց երկնից բանիս
Բանայք զմիտս և զլսելիս,
Աչուք նայիք յերևելիս
Եւ իմաստիւք իմանալիս։
Ի յաղբիւրէ քառավտակիս
Հայցեցէք զանճառ բարիս,
Տալ կեանք անչփոթ ի ներկայիս,
Եւ թողութիւն մեղաց աստիս։
Սրբասնունդ կրաւնաւորիս,
Յովանիսի քահանայիս,
Որ նուիրեաց զնիւթ տառիս,
Տեառն Յիսուսի որ զմարմին ետ և զոգիս,
Առ ի պատճառ յոքներանգիս,
Բազմանկար սուրբ կտակիս։
Արդ ժառանգողքդ ի կենցաղիս
Եւ վայելողք լուսազարդիս,
Աղաւթեցէք նախաստացիս
Համադասիլ լուսերամիցս։

դ

109բ Ջհոգիասէր սրբազանն և զմաքրափայլեալն ի վարս պարկեշտութեան զամենառաքինի Յոհաննէս զստացաւղն աստուածային փրկագործ իմաստիցս, յիշեսջիք ի Տէր, որպիք վերինն Սիովնի, ժառանգ և ես յոքնամեղ խոշորագիծս Սարգիս անմոռաց լինել ի ձենջ, զի և դուք յիշեսջիք ի Տեառնէ։

ե

183բ Ջստացաւղ կենսաբեր սուրբ Աւետարանիս զՅոհաննէս յիշեսջիք ի Տէր, նազելի մանկունք Սիոնի։

գ

Գրիչ՝ Սահփաննոս

391ա ՋՍահփաննոս, որ զսակաս գրեցի, յիշեսջիք ի Քրիստոս։
Եւ զԳրիգոր սարկաւագ՝ զաշակերտ Յոհաննիսի՝ ստացողի սորա յիշեսջիք ի Տէր, ամէն։

133

ԱԻՏԱՐԱՆ

Հալեպ 130, Սյուրմեյան, 3ուցակ, էջ 222—223

Գրիչ՝ Վասիլ

ա

Փառք ամենասուրբ Երրորդութեան յաւիտեանս ամէն։

Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ նուաստ եւ մեղաւոր, յետին և ցած քահանայի Վասլի, ի թվականիս Հայոց ՈՁ (1231), յամսեան մայիսի Ա (1), որ է համբարձման աւրեր, եւ հայրապետ Հայոց տէր Կոստանդին եւ թագաւոր Հեթում։ Գրեցաւ ընդ հովանեաւ Սուրբ Թորոսի, որ և բուն իսկ Կիլիկիայ կոչի։ Արդ, աղաչեմ զամենեսեան որք աւրինակէք և կամ կարդայք եւ կ[ամ]՝ ասկտիք ի սմանէ, մեղաց թողութիւն խնդրեցէք յԱստուծոյ մեղաւոր գրողիս, ցած եւ նուաստ քահանայիս Վասլիս, եւ մաւրն իմոյ Մէլիֆին եւ հաւրն իմոյ Խաչատուր քահանայի, եւ երկրորդ հոգևոր մաւրն իմոյ Մարգրաին, որ աւգնական եղեւ տվաւք իւրով ի նիւթ սորա, Քրիստոս Աստուած յիշողացն և յիշելոցն իւր, և ծնողացն իւրոց ողորմեսցի աստ, և ի հանդերձեալսն ընդ արդարսն դասեսցէ, ամէն։

Եւ աղաչեմ խոշորութեան եւ սխալանացս չլինել մեղադիր։

բ

Ջնուաստ հողիկս զԹումաս սարկաւագն, աղաչեմ յիշել ի Տէր։

134

ԲԱԳՆԱՅՐԻ ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 1519

Գրիչ՝ Իգնատիոս
Վայր՝ Հոռովմոս

ա

...Արդ այս աստուածաշունչ պատգամացս, եւ անճառիցն կենացն աւետարանութեանս իբր ական պատուականի և գեղեցիկ մարգարտի ի խնդիր ելեալ աստուածասէր եւ բարեպաշտ, քաջահաւատ եւ գովելի ի մրցմունս արիութեան՝ հանգոյն քաջ նախնեացն իւրոց նահատակեալ ի վերայ տանս Հայոց, մեծապատիւ իշխանաց իշխանն պատրոն Խաւռաս, որդի Ամիր Սարգսի. որ էր եղբայր մաւր կեսառոսաց Հայոց եւ Վրաց եւ ամենայն Ափխազաց, բարեպաշտից եւ Աստուծով զաւրացելոցն մեծին Զաքարիայի եւ Իվանեի, յորոց առաջի սնեալ եւ զարդա[րե]ալ, ի նոցին ողորմութենամբն մեծացեալ եւ փառաւորեալ ըստ անըստերիւր հաւատոյն որ ի Քրիստոս, հաստատուն եւ անխախտելի պահելով զմիամըտութիւնն առ բարեպաշտ տեարսն իւր, ծառայելով յամենայն սրտէ եւ զամենայն զաւրութենէ իւրմէ։

Ապա յետ տարաժամ փոխելոյն առ Քրիստոս մեծին Զաքարիայի, որ եւ խաւար գործեաց աշխարհիս Հա(յ)ոց, բարենշան նորին շառաւեղն
295բ *պա(յ)ազատն եւ մնացորդն ազգիս, դեռատէգն եւ նորաբողբոջն, սիրեցեալն եւ մեծացեալն յԱստուծոյ մանդատորթախուցէս մեծի թագաւորութեանն՝ Շահանշահ, յաջորդեալ զաթոռ թագաւորութեան հարւրն իւրոյ, լուսաւորեալ փարատեաց զմառախղապատ խաւարն, զոր ի զրկմանէ հաւր նորա մեծացեալ ոմնէր զեկեղեցիս Հայաստանեաց։ Զորոյ զկեանս եւ զժամանակս անծերանալի պարագայից ժամանակաւք, հանդերձ թագածին նորընծաին սքանչելատեսիլ որդւովն իւրով Զաքարիայիւ, շնորհեցէ Տէր Յիսուս Քրիստոս յանխորով խաղաղութեան, եւ կայծակն նոցա անշիջանելի մնասցէ մինչ ի կէտ յաւիտեանից, ի պարծանս եւ ի լրութիւն Հայաստանեացն։ Որ և զնոյն հաւատարմութիւն եւ առ սա պահե[լ մե]ծապատիւ իշխանաց իշխանն Խաւռաս, դաստիարակելով եւ սնուցանելով ամենայն երկիւղիւ եւ աստուածապաշտութեամբ. զոր ի նախնեացն ուսեալ էր, յորմէ ըստ արժանի հաւատարիմ ծառայութեանն իւրոյ ընկալեալ զհատուցումն՝ մեծաւ պատուով պատուեցաւ ըստ Վրացն բարբառոյ՝ մսախուրթա-*

խուցէս, որ ըստ մերումս թարգմանի գլուխ իշխեցող եւ հրամա[նա]տար ամենայն իշխեցողաց եւ գլխաւորաց տան թագաւորութեան տեառն իւրոյ։

298ա Եւ թեպէտ եւ յայսմ պատիւ ժամանեալ /// [սուգ անմխի]թար եթող ծնողաց իւրոց եւ բոլ[որ] սիրելեաց, ե[ւ եդաւ] ի հանգըստ[ա]րանի, ի հրեշտակաբնակ ուխտին Բագնայր [որ է մենաստ]ան Սուրբ Աստուածածնին։ Նա եւ մայր իւր ամէնաւրհնեալն յԱստուծոյ Խութլու Խաթունն [յա]ղէտ գո[լո]վ պարսիկ, իսկ ի կոչմանէ եւ ի շնորհացն Աստուծոյ ճշմարիտ աղախին գոլով Քրիստոսի, որ զկնի երկուց ամաց վախճանի որդւոյ իւրոյ բազմավիշտ սգով փոխ[ե]ցաւ ի Քրիստոս, որ կայ ի տապանի հանգստարանի անդրանկին իւրոյ, որոյ յիշատակն աւրհնութեամբ։

Իսկ ի հրամանէն Աստուծոյ մեծապատիւն Խատաս ընդ բարեպաշտոհւոյ կնոջ, որոյ անունն Զմրուխտ Խաթուն կոչի, որ եւ սա ազգաւ տաճիկ գոլով յազնուական եւ ի փառաւորայգւոյն յազգէ ի մեծ նախ[ա]րարացն Պարսից, որ եւ զսա շնորհք ողորմութեանն Աստուծոյ այսմ լուսաւոր

298բ հաւատոյս արժանացուցեալ || ...մեղապարտ [ծա]ռայ Քրիստոսի Խատաս ի մարդասիրութիւնն Աստուծոյ յուսալով եւտու գրել զ[սո]ւրբ Աւետարանս ի յիշատակ անդրանկի իմոյ [Սասն]այինն, եւ մ[աւ]ր նորին Խութլու Խաթունին, եւ ինձ բազմամեղի, եւ ամուսնոյ իմոյ Զմրուխտ Խ[ա]թունին, եւ սիրելի դստրիկի իմոյ Թայիկ թագոհո, ամուսնոյ անդրանկի իմոյ, որ է զարմ եւ շառաւիղ թագաւորացն Հայոց, եւ վասն յերկար կենդանութեան սիրելի որդւոյ իմոյ Վասակայ։ Եւ աւանդեցի զսա ի սուրբ մենաստանն ի Բագնայրն կոչեցեալ վանք, ի տէրութեան տեղւոյն տեառն Գրիգորայ, որ Մագիստրոսն ասի, վերայդիտող աթոռոյս Անտ, եւ յառաջնորդութեան հաւր Սիմեոնի եւ այլ համակամ եղբարց սրբոց։

296գ Արդ աղաչեմ զամենեսեան, որք լուսաւորիք||...յաղաւթս ձեր զՍասնայն զորդի իմ, յաղագս որոյ սուրբ Աւետարանս գրեցաւ։ Ընդ նմին եւ զիս զմեղուցեալ ծառայ Քրիստոսի զԽատաս եւ զայլս զորս վերայգոյն յիշատակեալ է ի գրութեանս, եւ Տէր Յիսուս Քրիստոս յիշողացդ եւ յիշեցելոյս առհասարակ ողորմեսցի։

Եւ արդ, գրեցաւ սա ձեռամբ Իգնատիոսի ապաշնորհ եւ մեղապարտ գրչի, ի ՈՁԱ (1232) թուականի, ի մեծահռչակ ուխտս ի Հոռովմոսի կոչեցեալ վանք, ընդ հովանեաւ Սրբոյ Կարապետիս, ի մէջ սուրբ եղբարց, որոց ողորմեսցի Քրիստոս Աստուած մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Բ

98բ Զպատրոն Խատաս, որդի Ամիր Սարգսի եւ զամուսին իւր զԽաթուն յիշեսջիք յաղաւթս, որ ստացան զԱւետարանս Բագնայրի Աստուածածնիս, վասն յիշատակ[ի] իւրեանց սիրելի եւ անդրանիկ որդւոյ Սասնայինն, որ տղայ հասակաւ փոխեցաւ ի Քրիստոս, եւ սուգ մեծ եթող ծնաւղաց իւրոց։ Որք կարդայք յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր, աղաչեմք։

Գ

211բ Աւրհնեալ է Աստուած յամենայն սրբոց, ամէն, որ զերծայ ի դառն կապանաց։

135

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 9871

Ծաղկող՝ [Իգնատիոս]

2բ Զպատրոն Եաւռաս եւ զամուսին իւր Զմրուխտ-խաթուն, որ զոսկին ետ գրոցս, յաղաւթս յիշեա, ո՛վ Տէր*։

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 9649

Գրիչ՝ Իգնատիոս

254բ ԶԻգնատիոս մեղաւոր գրիչ յիշեա ի Տէր, աղաչեմ**։

136

ԹՈՒՂԹ ՊԱՒՂՈՍԻ

Երևան 928

Գրիչ՝ Իգնատիոս

ԶԻգնատիոս եւ զՔրիստափոր յաղաւթս յիշեսջիք***։

137

ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 2743

Գրիչ՝ Տիրացու

ա

138ա Զմեղապարտ գրծիչս՝ զՏիրացու յիշեցէք ի Քրիստոս Տէր****։

---

* Ավետարանից միայն երկու մագաղաթյա թերթերն են մնացել, որոնք համաբարբառի նկարազարդ խորաններ են, և որոնցից մեկում ծաղկողը թողել է սույն հիշատակագրությունը։ Ստացող պարոն Եաւռասին և նրա ամուսին Զմրուխտ խաթունին հանդիպում ենք նախորդ հիշատակարանում, որոնք ձեռագիրը նվիրել են Բագնայրի Սուրբ Աստուածածին եկեղեցուն (որից էլ ձեռագրի «Բագնայրի Աւետարան» անունը)։ Բագնայրի Ավետարանի գրիչ և ծաղկող Իգնատիոսը, նաև այս ձեռագրի գրիչն ու ծաղկողն է։

** Մագաղաթյա երկաթագիր ձեռագիրը սկզբից և վերջից պակաս է։ Պոկված են Մաթևոսի, Մարկոսի և Ղուկասի ավետարանառաջները։ Պահպանվել է միայն Յովանու ավետարանառաջը՝ գեղեցիկ գլխազարդով, զարդագրերով և լուսանցազարդով։ 97, 152, 153 և 267 կտրած թերթերը նկարազարդ են եղել։ Գրիչն ու ծաղկողը Իգնատիոսն է։

*** Մագաղաթյա այս թերթը ծառայում է որպես կազմի կաշի՝ Մատենադարանի 1774 թ. գրված մի ձեռագրի։ Երկաթագիր, խոշոր գրությամբ այս հատակտորը գրության նմանությամբ և գրչի նույնությամբ համընկնում է Մատենադարանի № 1519 ձեռագրին։

**** Գրված է «Յարուցեալ Յիսուսի» վերջում։ Նույն գրով է գրված նաև խորանների նամակն ու համաբարբառը։ Ձեռագիրն հայտնի է «Թարգմանչաց» անունով, բերված է Գանձակի թարգմանչաց վանքից, Գ. Հովսեփյանի ձեռքով։

Բ

293ա Փառք փրկչին Յիսուսի, ամէն։

Գ

Ծաղկող՝ Գրիգոր

7բ Տէր Աստուած, ողորմեա պատուական քահանայի եւ երեւելի պարոնի Յովաննիսի, ամէն։

Դ

8ա ՋՅովաննէս աստուածազարդ քահանայ եւ զխաչիկ հայր իւր յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս, ի Տէր*։

Ե

9բ. 10ա Ի թուիս ՈՁԱ (1232) ծաղկազարդեցաւ սուրբ||Աւետարանս բարեխաւս առ Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր**։

Զ

12ա ՋՅովաննէս աւագերէց յիշեա Տէր Աստուած ամէն***։

Է

115ա Տէր Աստուած, ողորմեա Գրիգորի ծաղկողի ամէն, ամէն****։

Ը

311ա Թիւս ՈՁԱ (1232) ծա[ղկեցաւ]։

Թ

333բ Ողորմեա Տէր Աստուած*****։

138

ԱԽԵՏԱՐԱՆ

Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 881—884

Գրիչ՝ Սաեփաննոս
Վայր՝ Գեակա վանի՛

Ա

347ա Միամուխ խորոցն Աստուծոյ՝ Պաւղոս առաքեալ յիւրումն աշխարհալուր տումարի գրէ այսպէս. Ոչ ոք ասէ տէր զՅիսուս Քրիստոս, եթէ ոչ

---

* Գրված է համապատասխան էջերի երեք սյուների վրա։
** Գրված է խորանների միջին գերանի վրա։
*** Գրված է Մատթեոսի ավետարանառաջի գերանի վրա։
**** Գրված է Մարկոսի ավետարանառաջի գերանի վրա։
***** Ը և Թ հիշատակագրությունները գրված են լուսանցազարդ շրջանակների մեջ։

հոգւովն Աստուծոյ. արդ այս հոգի խազայ յորդահեղ շնչմամբ ի գունդս աւետարանչացն սրբոց, որք երկուցն դերա /// ութ /// սին /// զառաքելականն և զաւետարանականն, որք համաքանակ քառակի գետոցն ողողողացն զդրախտն ծաւալեալ յոգիս հաւատացելոց՝ արբուցին զպասքումն քառանիւթեան միացելոյն ըստ քառադէմ պահպանութեան ի վեր և ի վայր, յաշ և յահեակ և կամ ըստ քառագիծ անուան երրորդութեանն և ըստ մարդն և կամ յԱդամ /// անգեալ երկու և գիծ քառ, որ և զամենայն իսկ յինքեանս բերեալ զգաղափար ըստ շրշանի տարւոյն և ըստ չեղանակաց երկրի, հայել յարեւելս և ի մուտս, ի հիւսիսի և ի հարաւ և ըստ սանդխոցն, որ հասանէր և հանէր յերկինս՝ սկսեալ ոմն ի մարդանալն Աստուծոյ և ոմն յաստուածութեան անդ։ Իսկ որք ի միջին, իբր մատամբ մի առ մի հանեալ ի վեր անդր՝ տարան զհաւատացեալ ոգիս յամենասուրբ երրորդութիւնն ըստ Տեառն ձայնի. Ուր եմն եմ, անդ և պաշտաւնեայն իմ եղիցի։

Արդ այսմ լուսալիր իրի և գոյութեան աստուածախաւսութեան նշանաց և /// և շահից հոգեւոր տնաւրէնութեան բանին Աստուծոյ շրջելոյն, ըստ մեղ, ըստ կարի և յաւժարութեան խնդրող եղեալ քրիստոսասէր և բարեպաշտ ոմն անուն Վանենի՝ դուստր բարեպաշտ իշխանին Զաջոյ՝
348ա որդւոյ Խախբակայ||Թոռն Բակ իշխանին։ Իսկ յայնմ ժամանակի, յորժամ ի պարտութիւն մատնեցաւ սուրբն Վարդան՝ զաւրաւք իւրովք վասն ծովացեալ մեղաց մերոց, այս Բակ իշխան գնաց փախստեայ ի յամրոց /// ոմն, և զաւրքն Պարսից և ուրացեալն Վասակ զհետ մտեալ՝ պատեցին շուրջ զամրոցաւն. իսկ այս Բակ իշխան եղեալ ի պարիսպն՝ նախատեաց զուրացեալն Վասակ և զամենայն չարիսն, զոր անցուցեալ էր նա ընդ աշխարհս Հայոց, յիշեցուցանէր առաջի զաւրաւարին Պարից, և ելեալ ի գիշերի եւթն հարիւր արամբ գնաց փախստեայ յերեսաց Շապհոյ արքային Պարսից յամուրսն Արցախայ, և կեցեալք բարեպաշտութեամբ և քրիստոսական հաւատով մինչեւ յայս բարեպաշտ իշխանս Զաջոտ և
348բ ի սմին որդիացեալս||քրիստոսասէր Վանենի։ Որ և ստացաւ զայս աստուածախաւս Աւետարանս յիշատակ և փրկութիւն հոգւոյ հաւր իւրոյ՝ բարեպաշտ իշխանին Զաջոյ և ետ ի սուրբ մենաստանն, որ կոչի Հաւապաւուկ, որ է շինեալ յանուն Սրբոյ Աստուածածնին, և է բնական տուն և շիրիմ Զաջոյ իշխանի և նախնեաց իւրոց, և է ի գաւառին Արցախոյ, և է հանդէպ ամրոցին, որ կոչի Խափանաբերդ, ի տէրութիւն երից հարազատացն՝ բարեպաշտ իշխանացն Զալալին, Զաքարիայի, Իւանէի։

Իսկ վերակացեալ սպասաւորք սուրբ ուխտին սահմանեցին ի տարւոջն մի աւր պատարագ մատուցանել իշխանին Զաջոյ՝ ի տաւնի գալստեան Սուրբ Հոգւոյն։ Եւ որ զայս յիշատակս կատարէ, աւրհնի յԱստու-
349ա ծոյ, և որ զայս գիրսս յայս սուրբ ուխտէս||զինչ և իցէ պատճառանաւք հեռացուցանէ, դատի ի Տեառնէ և վարձս ղԿայենին առցէ, ամէն։

Արդ գրեցաւ սա ի թուիս Հայոց ՈՁԱ (1232), ի գաւառիս Կայեձոյ, ի գերահռչակ սուրբ ուխտսս Գեղակայ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Լուսաւորչիս Գրիգորի, ձեռամբ մեղապարտ Ստեփանոսի, յիշխանութիւն իշխանաց իշխանի աթաբակ Իւանեի և որդւոյ նորա

Աւագին, և վասն ղի Վրաց թագաւոր ոչ գոյր, ունէր զաթոռակալութիւնն դուստր Թամարին, և ի հայրապետութեանն Հայոց տէր Կոստանդնի, և յԱղուանից հայրապետութեանն տէր Յովաննիսի: Արդ աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնուք կամ ընդաւրինակէք, յիշեսջիք ի Տէր Աստուած զքրիստոսասէր պատրոնն զՎանենի՝ զստացող սուրբ մատենիս: Յիշեսջիք ի Քրիստոս զհայր նորին՝ զբարեպաշտ իշխանն զՋաջուռ, և զայլ սուրբ նախնիսն նորա:

Յիշեսջիք ի Տէր զմեղապարտ գրիչս զՍաեփանոս և զծնաւղն մեր: Եւ ինքն Քրիստոս, որ առատն է ի պարգեւս, յիշողացդ և յիշեցելոցն ողորմեսցի յիւրում գալստեանն, և նմա փառք ընդ Հաւր և ընդ Հոգւոյն Սրբոյ այժմ, և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Յայսմ ամի եկն ազգն նետողաց և զմայրաքաղաքն Գանձակ հիմն ի վեր արարեալ՝ կոտորեաց զմարդ և զանասուն և զբազումս ի քրիստովնէիցն:

Բ

Փառք Քրիստոսի Աստուծոյ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

ՋՍաեփանոս, որ զսակաւս գրեցի, յիշեսջիք ի Քրիստոս:

Եւ զԳրիգոր սարկաւագ՝ զաշակերտ Յոհաննիսի ստացողի սորա՝ յիշեսջիք ի Տէր, ամէն:

Գ

Ստացող՝ Սաեփանոս երէց

Արդ, աղաչեմ զամենեսեան, յիշման արժանի արարէք զիս՝ զՍաեփանոս երէց, որ ստացայ ըզսայ յարդար վաստակոց իմոց յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց, զրհանգուցեալն առ Քրիստոս, զԳէորգ քահանայ և ///

Եւ Քրիստոսի մարդասիրի փառք յաւիտեանս, ամէն*:

139

ԱԻԾՏԱՐԱՆ

Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 1017—1018

Գրիչ՝ Սաեփանոս
Վայր՝ Գետիկ

Յիշեսջիք ի Քրիստոս զսուրբ վարդապետն Մխիթար և զամենայն միաբան եղբարքս սուրբ ուխտիս, որք կամակից և ձեռնտու եղեն սուրբ Աւետարանիս:

Յիշեսջիք զՍադունն՝ զբարեպաշտ իշխանն, որ զծախսն սորա ետու:

Յիշեսջիք զՍերոբ և զՅովասափ և զեղբարս նոցա և զծնաւղսն իւրեանց, որ զնիւթս պատրաստեցին և ետուն կազմել զԱւետարանս:

Յիշեսջիք զՍարգիս իմաստուն հռետոր և սրբասէր կրօնատր և գծող սորա և զՍտեփանոս աշակերտ նորին, որ սպասաւորեցի նմա: Եւ որք յի-

* Նույն դարի գրություն է:

շէք, Քրիստոս Աստուած ամենեցուն վարձս բարեաց պարգեւեսցէ և նմա փառք յաւիտեան, ամէն*։

140

ԻՐԻՑ ԱԻՐՀՆԵՑԻՑ

Հովսեփյան, Ցիշատակարանք, էջ 899—900

Գրիչ՝ Գէորգ

33բ Յամի Ո-երորդի ՁԱ թուականութեան Հայոց (1232), գրեցաւ տետրակս այս Իրից Աւրհնեցից՝ հրամանաւ և ծախիւք սրբազան և մեծազգի արքեպիսկոպոսին տէր Յոհաննիսի՝ ի վայելումն անձին իւրոյ սրբասիրի և ի յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց ննչեցելոց, եւս առաւել բարեպաշտ հաւրն իւրոյ Սիր Պաղտոյնի, որ ի տիս մանկութեան իւր հանգեաւ ի Քրիստոս, որոց աղաւթիւք ամենայն սրբոց ողորմեսցի Տէր. և զքրիստոսասէր ծնաւղն իւր՝ զտիկին Թեւեանաւ՝ հանդերձ դստերքն իւրով Տամակացիւ յիշեսչիք ի Տէր։ Եւ դարձեալ կրկին աղաչեմ՝ յիշեսչիք և զաստուածասէր իշխանն՝ զպարոն Վասիլ Մա[r]զիւանցին, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի, ամէն։

Աղաչեմ և ես տառապեալ գրիչս Գեորգ յիշել և զիմ նուաստութիւնս, և նոյն ինքն Որդին Աստուծոյ աւրհնեսցէ զամենեսեան**։

---

* «Սուրբ վարդապետ Մխիթարը և Սադուն իշխանը ԺԳ դարի անձնավորություններ են։ Մխիթարը Գոշ կոչվածն է, որ մեռավ 1213 թվին։ Իսկ Սադուն անունով իշխանը՝ Կայենո և Մահկանաբերդի իշխան և Տփղիսի ամիրա Քուրդի որդին էր... Բայց ձեռագիրը գրված չէ Մխիթարի կենդանության ժամանակ... մոտավորապես ԺԳ դարի երկրորդ քառորդին»,—գրում է Գ. Հովսեփյանը (էջ 1018)։ Հավանաբար գրիչը նույնն է նախորդի հետ։

** Ձեռագիրը գտնվում է Ֆլորենցիայի Լորենձիանա Մեդիչյան գրադարանում։

141

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԻ ԵՊԻՓԱՆԻ ԿԻՊՐԱՑԻՈՑ ԵՒ ԱՅԼՈՑ

Երևան 1204 (1231 թ.)

Գրիչ՝ Ստեփաննոս Կեչառեցի
Վայր՝ [Սաճաճին]

ա

16ա Քրիստոս Աստուած, ի քո սոսկալի գալստեանդ ողորմեա՛ ստացողի սորա Համազասպիս և եղբաւր իւրում Պելեին, որ յա[յ]սմ ամի փոխեցաւ ի Քրիստոս, ամէն։

բ

29ա Քրիստոս Աստուած, քաղցրութեամբ նահաց ի Համազասպն և բարի ծնաւղն իւր ի քում գալստեանդ, ընդ աստուածախաւսութիւն առ ի բարուց վարդապետութեան հանդերձ։

գ

50ա Յիսուս՝ Հաւր միածին, յիշեա ի քում արքայութիւնդ զհայր Համազասպն և զծնաւղն իւր, ամէն։

դ

75բ Զհայր Համազասպս յիշեա Քրիստոս ի քո յարքայութեանդ...

ե

133ա Ո՛վ սուրբ վարդապետ, ի յարժանաւոր յաղաւթս քո յիշեա զհայր Համազասպն, և զծնաւղն իւր, և զեղբայ[ր]ն իւր, որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս։

զ

146ա Զխաղաղութիւնն և զողորմութիւնն Քրիստոսի ի սուրբ ուխտէս Կեշառուաց անպակաս արասցէ։

է

149բ Ի թու[խ] Հայոց ՈՁՌ (1233) կատարեցաւ դիրքս /// եա անձս Ստեփաննոս, ի բաղում աւրինակա[ց] ժողով[եցի ղ]գիրքս զայս ի վայելումն ինձ և յ[իշատ]ակ հոգւոյ իմո, և հարազատ եղբաւրն իմոյ Սարգսին, ծնաւղաց իմոց, նաև հոգեւոր ծնաւղաց իմոյ, որ են քեռիք ըստ

մարմնո, որք բաղմաժամանակեա աւուրբք սնուցին զիս՝ Յակոբ խաչ-
ընգուս քահանա և Աւոմ կուսակրաւն աբեղա, որ մինչև ես պանդխտա-
նաի յանլոյս երկի[րս] Սեւորդեաց, ի հռչակաւոր ուխտն Սանահին,
[զ]երկոսեան ի միում աւուր կոչեաց կոչողն ամենեցուն Քրիստոս, և
զՄարկոս զաստուածահաճոյն և զպատուական քահանայն, և զՍարկա-
ւագ՝ զմիացեալն ընդ Աստուծոյ, և զՄարգարէն, որ բազում զութ եցոյց
մեզ մինչ յաւտարութեան պանդխտանայաք։ Նա եւ զսիրելի ուս[ու]մնա-
կիցն իմ Մաթէոս՝ զաղբիւրն շնորհացն, որ կիսաւրեա ել յաշխարհէս.
և զնորին զհարազատն զԿարապետն, որ Ընթերցուածոց մեկնիչս ինձ
աւանդեցին և բաղում դութ ցուցին, և զՄխիթար միւս աշակերտակիցս,
զՅուսէփ կազմող դրոցս և զՍիմէոն: Արդ, աւարտ ի վերայ ամենայն
ասացելոցս՝ զամենաւրհնեալ զերեքերանեան զվարդապետն ի[մ զԽա]-
չատուր, որ բազում զութ և ողորմութիւն ար[ար ի] վերայ իմ։

Արդ, երեսս անկեալ աղաչեմ, որ[ք աւգ]տիք կամ ուսանիք, կամ
ընդ գաղափար ուն[իցիք], յիշեսջիք ի Քրիստոս նախ զհարազատն իմ
զՍարգիս, և դիս զՍանեփանենս՝ զստացող գրոցս, և զ[ամենեցունց],
զորս յիշատակեցաք ի գիրս, յիշեսջիք [ի Քրիստոս] և ինքն Քրիստոս
յիշողացդ և յիշեց[ելոցս ողորմեսցի]։

142

ԱՒԵՏԱՐԱՆ

Վենետիկ 89, Բ. Սարգիսյան, Ցուցակ Ա, էջ 403—404

Գրիչ՝ Յակոբ
Վայր՝ Լամբրոն,
Յովանի ագարակ

277ա Փառք գերագոյն ամենազաւր ձեռին հզաւրին և բոլորից նախախնա-
մողին յաւիտեանս, ամէն։

Յամի վեցհարիւրերորդի ութսներորդի երկրորդի (1233) Հայոց տոհ-
միս տումարի, գրեցաւ անուշահամ աստուածախաւս կենաց կտակս, որ
է աւետարանութիւն Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, ձեռամբ
Յակոբայ սուտանուն կրաւնաւորի և անարժան գրչի, ի խնդրոյ սրբասէր
քահանային Կարապետի, յաշխարհիս Կիլիկեցւոց՝ ի Տարսովնի, առ
ստորոտով լերինն Տորոսի... յանմատոյց դղեակս Լամբրուն, ի փոքրիկ
ագարակիս, որ Յովանի կոչի, վայրաբնակ լինելով ինձ գրչիս՝ ըստ նախ-
նեացն ձայնի, թէ Աւտարք և պանդուխտք եմք յերկրի, ի հայրապետու-
թեան տեառն Կոստանդեա և ի թագաւորութեան քրիստոսապսակ և բա-
րեպաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ:

Արդ, որք աւգտիք ի սմանէ կամ գաղափար առնոյք, յիշեսջիք ի
Քրիստոս զստացող գրոցս՝ զԿարապետ աստուածաբնակ քահանայ, զի
ստացաւ զսա յարդար վաստակոց իւրոց՝ ի յիշատակ հոգւոյ իւրոյ և ի
վայելս և ի ժառանգութիւն սրբասնոմնդ պատանւոյն Աառմայ՝ եղբորորդ-
ւոյ իւրոյ, զի և սոքա աւտար գոլով յայսմ գաւառէ, զի էին ի Միջագե-

տաց աշխարհէն, և վասն աստուածասաստ ցասմանն, որ բարկութեամբ շարժեալ զմարդակերպ գազանսն, որ տապալեցին զամենայն աշխարհս Հայոց և զբազում ազգս մաշեցին ի սուր սուսերի, և սա թողեալ զհայրենի ժառանգութիւն իւր վասն բարբարոսացն երկիւղի, եկեալ յաշխարհս Կիլիկեցւոց իւրովք հարազատովքն։

Ընդ նմին աղաչեմ յիշել աղաւթիւք ի Տէր զյոքնամեզ և եղկելի գրիչս և զծնաւղսն իմ և զաստուածասէր և բարի ստրատեալտն՝ զպարոն Յուշապն, զի հոգւոյ չաւի աւժանդակ եղեւ ինձ ի պանդխտութեանս իմում, զի պահեսցէ զնա Տէր Աստուած խաղաղութեամբ ի կեանս իւր և զկնի ելիցն իւր՝ ընդ սրբոց զինուորացն զնա դասեսցէ։ Եւ որք յիշեքդ զմեզ ողորմութեամբ ի բարի, և Աստուած յիշեսցէ զձեզ յիւր յանհուն բարին և յանսպառ ողորմութիւնն, ամէն։ Եւ աղաչեմ զամենեսեան, որք նայիք ի սա, անմեղադիր լինել խոշորութեան և սխալանաց, որ ի սմա, զի այս իսկ էր կար մեր, այլ և աւուրքս՝ դաժան, և ես տկար գոլով և պանդուխտ։ Եւ Քրիստոսի Աստուծոյ փառք, այժմ և յանշրաւ յաւիտեանն։

143

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՄՆ ԱՆՔՈՒՆ ՈՐԴԱՆՅՆ

Ծրուսաղեմ 1426 (1614 թ.), Ն. Պողարյան, Ցուցակ, ծ, էջ 90

Հեղինակ՝ Վարդան [Այգեկցի]

Եւ արդ եկայք այսաւր...։ Եւ արդ ածցուք զմտաւ թէ ՚Ադամայ մինչեւ ի մեզ, որ է թուականս մեր ՈՁԳ (1234), թէ քանի թագաւորք եւ առաջնորդք եւ իշխանք եւ փարթամք թողին զայս կեանս եւ գնացին ունայն եւ են ողորմ եւ շիւար...

144

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Քոսյան, Յուցակ Արծն։ան վարժարանի, էջ 112—113

Գրիչ՝ Սահփաճոս
Վայր՝ Աճապատիկ վաճք, որ կոչի Լիմ

Ի թուականս Հայոց ՌՁԴ (1235) գրեցաւ աստուածապատումն, ծայրածաւալ, վսեմական, տիեզերաքարոզ, գերարփի լուսով Երրորդութեանն պանծացեալ, հրաշափառագոյն գիր սուրբ Աւետարանիս յաստուածուստ կարգեալ մատենիս և բերանով Աստուծոյ խաւսեցեալ տառիս, ոչ ի Սինայէ տուեալ հնոյն Իսրայէլի, այլ ի յերկնից պարգեւեալ շնոր[հ]աւք Սուրբ Հոգւոյն նորոյս Իսրայէլի ի Երրորդութիւնն հաւատացելոց, եւ ոչ Մովսէսիւ առտուեալ ապարասանիցն այնոցիկ, որք գտան ապերախտք առ տուողն աւրինացն նոցա, այլ Յիսուսիւ Քրիստոսիւ շնորհեալ զբան աստուածախաւս աւետաբեր քարոզութեան իւրոյ քրիստոնէիցս ժողովրդոց եւ մանկանց Վերինն Երուսաղէմի ժառանգաւորաց ոտոգանել քառաւտակ բանս այս աստուածաբանութեան, ոչ որպէս ի դրախտէն ելեալքն ի յԱդենէ եւ բաժանեալ ի քառատաչս արբուցանելով զփշաբուսիկս երկիր, հնովն Ադամաւ զանկեալս ընդ ///

Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ **Սահփաճոսի**, *մականուն Ստեֆ աբեղայի՝ յոյժ մեղաւորի եւ անարժան ծառայի. եւ ոչ ըստ արժանեացս գրեցի, այլ ըստ իմում անարժանութեանս ի սէր Աստուծոյ փափաքեցայ գրել ի վանք* **Աճապատիկ**, *որ կոչի Լիմ, ընդ հովանեաւ Սուրբ Յեհնա եւ Սուրբ Նշանին։ Արդ, որք կարդայք կամ գեղափարէք, յիշեցէք զիս զանպիտանս եւ զսուտանուն քահանա, եւ զծնողն իմ, զհայրն իմ զԴաւիթ զրեհագործն եւ զմայրն իմ զՎարդուց եւ զայլսն, զոր հանգուցեալ են ի Քրիստոս եւ մեղաց թողութիւն խնդրեցէք նոցա, ամէն, ամէն։ Ընդ նմին եւ զփեսայն մեր զՄարաիրոս եւ զորդիսն իւր, եւ զքոյր եւ զեղբօրորդիս յիշեցէք եւ թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ, ամէն։*

Գրեցաւ սայ ի սրբաբան եւ յընտիր աւրինակէ, իսկ որք ընթեռնոյք եւ բան աւելի կամ պակաս լինի, աղաչեմ զամենիսեան չլինել մեղադիր, զի ունեաք զտկարութիւն եւ լուսոյ պակասութիւն, եւ ոչ էաք հասու այն բանից, այլ ի սէրն Աստուծոյ գթացաք։

Գրեցաւ ի հայրապետութեան տեառն Կոստանդիա, եւ ի թագաւորութեանն Հայոց Հեթմոյ, եւ իշխանաց իշխանին Կոստանդիայ՝ հայր թագաւորին, զորս պահեսցէ Տէր Աստուած խաղաղութեամբ պարագայ ամաւք, եւ շնորհեսցէ զնոսա ընդ երկայն աւուրս հաւատացելոց անձանց եւ եկեղեցոյ իւրոյ, ամէն, ամէն։ Եւ յիշողացդ, ամէն։

Մանկունք, որք աւրինակէք կամ ընթեռնոյք, զհոգեւոր եղբայրսն մեր զԹորոս քահանան, եւ զծնողսն իւր, եւ զեղբայրն իւր Վարդան քահանա՝ զհանգուցեալն ի Քրիստոս, յիշեցէք եւ մեղաց թողութիւն խնդրեցէք նոցա, ամէն, ամէն։ Եւ զսրբասնեալ քահանայն Սիմէոն, որ էր սպասաւոր մեր, եւ ծնողսն իւր, եւ զԻրիցայ ամուսինն իւր և զորդին զՎաւրզան, որէ հանգուցեալ ի Քրիստոս, խնդրեցէք մեղաց թողութիւն, զի տզա փոխեցաւ ի Քրիստոս, որում Տէր Աստուած ողորմեսցի նոցա, եւ ձեզ եւ մեզ ամէն, ամէն։ Ընդ նոսին եւ զբազմութիւն մեղաց գծողի սորա թողցէ զյանցանս մեր, որ թվին, զի բաղում յոյժ մեղք եմ /// եւ որ զա[յ]սոսիք կարդա, Տէր ողորմեա ինձ եւ նմա, ամէն, ամէն։

/// ամի շմոր եղեւ* Լամբրունին տէր ընդ թագաւորն Հայոց եւ ընդ հայրն նորա. եւ ընդ ամենայն քրիստոնեայս, զոր Տէր Աստուած տացէ յաղթո[ւթիւն] թագաւորին մերոյ, ամէն։

Տէր Աստուած բարեխաւսութեամբ Սուրբ Աստուածածնին եւ ամենայն սրբոց ողորմեա Կեռազո եւ ծնողաց իւրոց, զի սպասաւորեաց մեզ, ամէն, աշխատեցաւ, ամէն։

145

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Վիեննա 838, Ոսկեան, Ցուցակ, էջ 410—411

Գրիչ՝ Յովճաննէս
Վայր՝ Հռոմկլայ

207բ Ի հրամանէ աստուածապատիւ երջանիկ սրբազան կաթողիկոսին Հայոց տեառն Կոստանդեայ աւարտեալ եղեւ սուրբ եւ կենսակիր Աւետարանս այս ի յիշատակ իւր, եւ աստուածասէր ծնաւղաց իւրոց, եւ եղբաւր որդւոյն իւրոյ՝ արժանաւոր եւ սուրբ եպիսկոպոսին տէր Ստեփանոսի՝ ուղղեւորելոյն յաստեացս, որոց ողորմեսցի Քրիստոս Աստուած եւ յարութիւն կենաց շնորհեսցէ ի միւսանգամ գալստեանն իւրոյ։

Եւ արդ, աղաչեմք զամենեքեան, որք ընթեռնոյք զսա եւ լուսաւորիք, յիշեսջիք յարժանաւոր և մաքրափայլ յաղաւթս ձեր զերիցս երանեալ հայրապետն Հայոց զտէր Կոստանդին՝ զստացող սորա եւ զաստուածասէր ծնաւղսն իւր, եւ Քրիստոս Աստուած ամենեցուն ողորմեսցի յիւրում արքայութեանն, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Եւ արդ, գրեցաւ սա ի թուիս մերում ի ՈՉԴ (1235), ձեռամբ Յոհաննիսի մեղաւոր եւ անպիտան գրչի, ի յանմատչելի ամրոցիս Հռոմկլայի, ընդ հովանեաւ աստուածընկալ սրբոցս, որով պահպանիմք միշտ, որ է աւրհնեալ յաւիտեանս։

Աղաչեմ զգրիչս յիշման արժանի առնել։

* Տպված է ամիշ մոռեղ եւս։

146

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4160

Գրիչ՝ Պետրոս
Վայր՝ Հաւուց թառ

ա

244բ *[Ի վեց հա]րիւր երրորդի [ութսուն]երրորդի [և հինգ]* թվա[կա]նիս (1236) [կ]ա[տ]արեցաւ սուրբ Աւետարանս [այս] Յիսուսի Քրիստոսի, ձեռամբ ախմար և մեղապարտ քահանէի, որ [կ]ոչիմ* Սիմ[էո]ն *և ի ձեռս քահանութեան* Պետրոս, *ի վանս* Հաւռ[ւց Թառ, *ը]նդ հով[ան]եաւ Սուրբ Կարապետիս Յովանու։ Եւ յայսմ ժամանակ[ի] փոխեց[աւ ի] Քրիստոս բարի և հոգևոր հայր մեր* Յոճան*[նէս որ կո]չեցին զնա առ մեծ եպիսկո[պո]սն տէր* Գրիգոր, *որ ///-ի քահանայ, ընդ որում ողորմե[ս]ցի Քրիստոս նոցա և զ/// տացէ, որ ասաց առաքելոցն թէ Ուր ես եմ դուք ան /// սցա և ծնաւղաց նոցա։*

Եւ նստաւ յաթոռ /// ընտրեալ և պատուական սուրբ քահանայն Գէորգ /// *[եղ]բաւրորդի և սնուցած տէր* Գրիգորի, *ընդ որում ‖ Տէր Աստուած աջողութիւն և հաստատ անի նորա /// կործանեսցէ ըշարակամ նորա որպէս զփար[աւ]ոն։ [Պ]*ետրոս *աղաչեմ զամե[նե]սե[ա]ն արտասուաւք և հառ[աչան]աւք* զՎարդան *և* զԳրիգորէս *վարդապետ հ[աւ]րեղբ[արք] իմ,* զՇարւազար *և* զԱրեւտիկին *[քոյր]ք իմ, զ[Յո]*վանէս *և* զՆրջիս՝ *ծնաւղք իմ յաղաւթս յիշեցէք. ընդ նմին զբարեպաշտ հայր մեր* Խոցա[դեղ]ն, *զմայր] մեր* Արէա. *և* զՍարգիս *և* զՀզարդեղ /// *[զծ]նաւղս նոցա՝ յաղաւթս յիշեցէք աղաչեմ։*

բ

74բ *Գոյժ աղաղակի յոյժ լուաք յայսմ ամի, որ է ՈՁԵ (1236) յամսեանն յարաց ժ (10) չաւուր կիւրակէի, եթէ զքաղաքաբերդն* զԼաւռէ, զՍուրբ Մարի *առին անաւրէն, այլասէռք զաւրք* Տաթարին, *և անխնամաբար որպէս է իւրն անմտութեան չարութիւնն՝ իբրեւ զծարաւի և զպասքեալ գազանք դիմեցին ի վերայ, և ետուն ճարակ սրոյ, և արբեցան արեամբ*

* Ձեռագրի հիշատակարանը եզրերից շատ է մաշված։ Թվականը վերականգնում ենք Բ. հիշատակագրության համաձայն։

գառանցն գայլքն յափշտակողք անողորմաբար, որպէս ասէ Եզեկիէլ մարգարէն, թէ Մի ողորմիք եղիտասարդին և կուսին, ծերոյն և տղային և այնչափ մինչև ներկան ամէնայն վայրքն։

Գ

73բ Հաւատայ, զի ի ցանքս և ի համաբարբառոն Աւետարանի [սակաւ] մի աշխատեցայ։

Դ

140բ ՋՊետրոս գրիչ սուրբ Աւետարանիս յաղաւթս յիշէ, ո՛վ սուրբ հայր։

147

ԱԻԵՏԱՐԱՆ

Հովսեփյան, Ցիշատակարանք, էջ 913—914

Գրիչ՝ Իգնատիոս

Ա

Ո՛վ անարատ գառինք անարատ հարսին և մանկունք նոր Սիովնի, յորժամ զմայլիք կենսատու Աւետարանաւս, զսակաւ աշխատողս յիշեցէք առաջի սուրբ և անբիծ խորհրդոյն և ասիցէք, թէ Տէր Աստուած ողորմեսցի Խաչատրոյ և իւր ննջե[ցե]լոցն, ամէն։

Բ

ՋԻգնատիոս մեղաւոր՝ ոսկենկար սուրբ Աւետարանիս յիշեա ի սուրբ աղաւթս քո, ո՛վ Տէր իմ։

Գ

Ո՛վ մայր լուսոյ և բերկրանաց Աստուածածին միշտ կոյս, ընկալ զաւետարանութիւն որդոյ քո միածնի... ի Խաչատրոյ՝ որպէս միածին որդին քո զայրույն խերե[ւ]ին, և ողորմութիւն արա մեզ ի վերջին աւուրն։

Գ

Ջստացող սուրբ Աւետարանիս... և զԻգնատիոս մեղաւոր գրիչ յիշեսջիք ի տէր՝ աղաչեմ*։

---

* Ձեռագիրը պատկանել է Կալիֆորնիայի բնակիչ Վ. Սիմոնյանին։ Ն. Հովսեփյանը ձեռագրի մասին գրում է. «Գրիչը Իգնատիոսն է, Հիշատակարանների համաձայն։ Ղուկասի և Յովհաննու սկզբնազարդերի կամարների տակ եղած փոքր երկաթագրով Հիշատակարանները ճիշտ նույն գիրն են, ինչ որ նոյն գրչի էշմիածնի № 928 Ձեռագրի հատակոտորը։ Բայց Իգնատիոսն է անկասկած նաեւ նկարիչը, ի նկատի ունենալով զարդագրութեան եւ նկարների առանձնահատկութիւնները...»։

148

ԱԻԵՏԱՐԱՆ

Նոր Ջուղա 156, Տէր Ավետիսյան, Ծուցակ, էջ 206—207

Գրիչ՝ Իգնատիոս

ա

16ա ՋԻգնատիոս գծող սուրբ Աւետարանիս եւ զծնողս նորա յիշեայ, ո՛վ եղբայր, յորժամ կարդաս, ընդ նմին եւ զաշակերտ նորայ զՅովսէփ մի մոռանայցես ի բարի կամաց, եւ Աստուած զձեզ յիշէ ի բարի։

բ

200բ ՋԻգնատիոս մեղաւոր գրիչ եւ զստացող սորա յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր աղաչեմ։

գ

316ա Տէր Աստուած ողորմեայ Իգնատիոս մեղաւոր գրչի։

դ

503ա Փառք ամենասուրբ Երրորդութեանդ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, որ զաւրացոյց զտկարս Իգնատիոս աւարտել զսա, ամէն։

ե

124ա Ջստացող սուրբ Աւետարանիս զպատրոն Բռնաւորն եւ զՏղայիկին եւ զծնաւղսն իւրեանց յաղաւթս* /// յիշեայ, ո՛վ Տէր իմ։

զ

Ստացող՝ Բռնաւոր

Շնորհիւ եւ ողորմութեամբն Աստուծոյ ես Բռնաւորս, ծառայ եւ կենակից իմ Տղայիկին, յուսալով յողորմութիւնն Աստուծոյ, ստացաք զգանձս աստուածային ի մեր արդար վաստակոց, ի զարդ եւ ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ եւ ի վայելումն մանկանց առագաստի։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք լուսաւորիք ի սորին քաղցրածաւալ լուսոյ, յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր զիս զԲռնաւորս, եւ զսնուցաւղսն իմ՝ զբարեպաշտ իշխանաց իշխանն զպատրոն Դաւիթ Շոթոկանց, եւ զորդիսն իւր զքաջ եւ զանուանի պատրոնաց պատրոն Գրիգոր, եւ զորդիսն իւր զՍմբատ եւ զԱրջուկն եւ զԱրզուխաթունն, որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի ի Քրիստոս։

Եւ արդ, գրեցաւ սայ ի դառն եւ ի նեղ ժամանակի, յորում ամի առաւ մայրաքաղաքն Անի, արենգուխն կորուստն անթիւ հոգւոց։ Ո՞ր բերան կամ լեզու կարէ պատմել զանողորմիցն ողորմանն ի յանաւբէն թաթարէն, ի թուիս ՈՁԸ (1236)։

* Գրված է նախորդ հիշատակարանի ընչած տեղում։

է

404ա Ի ծագմանն բանին Աստուծոյ եւ լնուլ զառածս մարգարէիցն եւ լուսաւորել զա[ղ]գս ամենայն ըստ այնմ, թէ լցաւ երկիր գիտութեամբ Տեառն։ Քանզի աստուածային սուրբքն երկրաւորաբս ասացին իմանալ զերկնայինսն, ըստ որում եւ որք ի տունս թագաւորաց արքունական խորոցն հաւաստեաւ գիտակք եւ քննիչք յառաջակայ իրացն, սայպէս եւ որ մերձ յիմանալիսն եւ յԱստուած անմիջակ եւ անքակ պնգակացեալք նորահոց իսկապէս գիտակք ըստ առաքելոյն՝ թէ Ամենայն երեւոյթք նորա ի սկզբանէ արարածովքս իմացեալ տեսին, քանզի աղ ասաց որ եւ համեմեցին զանհամութիւն աշխարհի եւ զխաւար հոգոց փարատեցին. Թուական ՈՁԲ (1236)։

Արդ, ես Բռնաւորս, մեղուցեալ ծառայ Աստուծոյ եւ ամուսին իմ Տղայտիկին՝ աղախին Քրիստոսի, ոչ ունելով մարմնաւոր զաւակ, ցանկացող եղաք հոգեւոր զաւակի, ըստ ասելոյն, թէ՝ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընտանի երուսազէմ, եւ այլ թէ՝ Պատուիրանք Տեառն լոյս են եւ լոյս տան աչաց իմոց, եւ այլ թէ՝ Ճրագ են բանք քո եւ լոյս տան շաւղաց իմոց։

Արդ, մեծ յուսով եւ հաւատով ստացայ զաստուածախաւս մատեանս զայս պայծառ նիւթով եւ գեղեցիկ գրով եւ ընտիր բանիւք, ցանկալի ամենայն տեսողաց ի յարդար վաստակոց իմոց, եւ աւանդեցի զսա ի հրեշտակաբնակ ուխտն Խծկաւս, որ Տիկոռոյ վանք կոչի, ի Սուրբ Սարդիս եւ ի Սուրբ Գրիգոր եւ ի Սուրբ Յակոբ, ի ձեռն Պաւղոս վարդապետին, որ է ամենայն բարեաց պատճառ, եւ աստուածապատիւ տէր Աբասայ եպիսկոպոսի եւ հաւր Սարգսի հեզի եւ ամէնաբարոյ եւ այլ սուրբ միաբան եղբարց, որոց ողորմեսցի Քրիստոս Աստուած, ամէն։

Ո՛վ սուրբ մանկունքս ուխտի եկեղեցւոյ Աստուծոյ, աղերս թախանձանաց առաջի արկանեմ ամենեցուն եւ հայցեմք գորովագութ պաղատանաւք, յորժամ ընթեռնուք զաստուածախաւս պատգամս զայս, յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր զիս զԲռնաւորս, եւ զկենակից իմ զՏղայտիկին, եւ զծնաւղսն մեր, եւ զեղբարսն, եւ զամենայն ազգայինս, ասելով Թողութիւն արա Քրիստոս ամենայն յանցանաց նոցա, ամէն։ Իսկ զաստուածասաստ բարկութիւնն, որ եկն ի վերա ամենայն աշխարհաց Հայոց եւ Վրաց եւ Տաճկաց ի մարդադէմ գազանաց զտաճարէն, պատմեսցուք զդառնութիւն եւ զչարշարանս զժամանակիս. քանզի ոչ բաւեն միտք եւ լեզու զարհւնհեղութիւն եւ զկոտորումն ամենեցուն, զի ուսեալք են ի հաւրէն իւրեանց սատանայէ, զի նա մարդասպան է ի սկզբանէ այլակերպք, գիշակերք, արիւնարբուք, ամենայն մեղաւք կատարեալք էին, ոչ ծանեան զարարիչն եւ ոչ զմտաւ ածէին զաւր ահեղ դատաստանին. ով են նոցա ղաւրաւիգն՝ դեւք եւ սատանէք։ Իսկ մարդասէրն Աստուած թոյլ ետ վասն մեղաց մերոց առնել զամենայն կամս իւրեանց։

Անթիւ էր աւերումն քաղաքաց եւ գաւառաց մինչեւ ի մեր սահմանս, որ էր թուականիս ՈՁԲ (1236)։ Այլ ես Բռնաւորս մեծ հաւատով եւ յուսով խնդրեմք սիրաբար ի սուրբ եւ ի պատուական եղբարցս, յորժամ աւե-

տարանն ի կարդալոյ վճարի հոգւոյն գալստեանն, երանի որում թողութիւն տացէք եւ գպատարագին պատեհն դուք հոգացէք։

Ը

Ստացող՝ Աբաս եպիսկոպոս

405բ Սրդ, տէր Աբասս եպիսկոպոսս եւ վարդապետս Պատրոս եւ հայր Գրիգոր եւ այլ միաբանքս հաստատեցաք յեկեղեցոյ դրանս, որ ղնղիական երկու շաբաթ աւրն զմին պատարագն անխաբան յամենայն ամի Բռնատրիճ առնեն, ով եւ լինի հայր, կատարիչք գրոյս աւրհնեալ եղիցին եւ խափանիչքն դատապարտեսցին յԱստուծոյ, զի Քրիստոսի սուրբ Աւետարանս այս պայծառ է քան զարեգակն եւ յիշատակ անջնջելի պարոն Բռնատրիճ, ամէն։

149

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6202(909թ.)

Գրիչ՝ Իգնատիոս

ա

2ա Ես զԻգնատիոս յոքնամեզ գրիչ յաղաւթ յիշեա, ո՛վ տէր իմ, եւ դու յիշեալ լիցիս ի Տէր, ամէն*։

բ

3ա Քրիստոս Աստուած, ողորմեա Իգնատիոս նկարչի, ամէն։
Տէր Աստուած, ողորմեա ստացողի սորա, ամէն։

գ

3բ Մեղայ քեզ Աստուած, ողորմեայ ինձ Աստուած, յորժամ գայցես ի սոսկալի աւուրն։

դ

5ա Ո՛հ թաթար, վայ աւուրն, որ եկիր անցուցեր զաշխարհս։
Ո՛հ նեռեցեր Աստուած անչափ արիւնհեղութիւնս։

ե

6ա Աստուած ողորմեա ստացողի սորա եւ մեզ։
Տէր Աստուած ողորմեայ Իգնատիոսի, ամէն։

զ

6բ Սուրբ Նշան, աւգնեա մեղաւորիս Իգնատիոսի**։

---

* Ա հիշատակագրութիւնը գրված է Ովսեփիոսի թղթի վերջում, Բ-ծ-ն՝ խորաններէ գեբանների վրա։

** Գրված է խալի նկարի տակ, որը նախորդում է Մաթեոսի Ավետարանին։

150

ԱԻՏԱՐԱՆ

Վենետիկ 99, Մարգիսյան, Ցուցակ Ա, էջ 443

ա

242ա Փառք համագոյ եւ միասնական Սուրբ Երրորդութեանն, Հայր ամենակալի, Որդւոյն միածնի, և Հոգւոյն Սրբոյ նորոգողի և նախախնամողի, որ արժանի արար զքաւիւրս ի գործոց բարեաց և զլրացեալս մեղաւք՝ հասանել յեհին գիծ աստուածային տառիս և սուրբ Աւետարանիս. աւրհնեալ եղիցի յամենայն արարածոց և ի սրբոց և յիմոյ անարժան և ի մեղուցեալ բերանոյս՝ յաւիտենից յաւիտեանս, ամէն։

Յամս Հայկազեան թուաբերութեան տումարին, յորում էր թիւ համարոյ թուականին ՈՁԸ (1236), որ եղև աստուածասաստ բարկութիւնն յաշխարհն Արևելից, և յարեաւ ազգ մի գազանաբարոյ և անողորմ, և եհեղ բազում արիւն, և կերպարանն այսպէս. լայնաթիկունք և հաստաբազուկ. և գլուխն մեծ, և հեր գլխոյն ուղղորդ և ձարբ, և աչն նեղ, և ճակատն լայն, և քիթն տափակ, և մուրուքն քոսակ, բարքն մարդոյ, և քան զգազանս անողորմք էին ի վերայ մարդոյ, և բնական անուն նորա Խարաթաթար։ Թէ կերակուր գտանէր՝ ուտէր, և թէ չգտանէր, ոչ քննէր և ոչ խնդրէր կերակուր։ Եւ այնչափ անողորմ էր, որ թէ հրեղէն լեզու ստանամ՝ ոչ կարեմ պատմել զանցս չարշարանացն, որ ետ ըմպել զբաժակն բարկութեան Այրարատեան գաւառին և Անոյ՝ ևս առաւել, յոր իմ է տեսեալ զանհնարին ողբն և զաղետս տարակուսանացն, զի զբազում քաղաքս և զբերդերս էառ և հիմն ի վեր տապալեաց. զայր և զկին գերեաց, և զտղայս նոցա՝ առաջի նոցա զքարի հարոյր, զոմանս ի գիրկս մաւրն սրախոխոջ սպանանէին, և զեղբայրն՝ եղբարբ սպանանել տային, զոմանս քարկոծէին, զոմանս ի հուր ընկեցեալ այրէին, ղաղաբար գառինքն յոտս երիւարացն ընկեցեալ՝ կոխան արա[րէին ///

բ

Քրիստոս Աստուած, քո սուրբ ծնողին բարեխաւսութեամբ և ամենայն սրբոց ողորմեա Մխիթարա և հաւր նորա և մաւրն, որ աւդնական եղև գործոյս և զնիւթս պատրաստեաց, և իմ ծնողացն և ննջելոցն, որ սպանան սրով, և ողորմելի մահուամբ եկին յաշխարհէս։

գ

Կազմող՝ Վարդան

Եւ զիս զեղկելիս զսակաւ գրիս* գրողն զՎարդան սուտանուն աբեղայս և զկապաւղս և զկազմաւղս յիշեցէք և մեղաց թողութիւն խնդրեցէք, և Աստուած զձեզ [յիշէ]։

---

* Ձեռագրի 213ա—228բ էջերի գրիչն է։

151

ՅԱՅՄԱԻՈՒՐՔ

Երևան 1501 պահպանակ

ա

2բ Քրիստոս Աստուած, քո սուրբ աւետարանչացս բարեխաւսութեամբ ողորմեալ Աստուածատուոյ, և զաւակի նորայ Մանուփլայ, և հոգևոր մաւր իմոյ Սթլերոյն Առճիշեցի, և զաւակաց նորայ, որ նահատակեցան ի տաթարէն, և զրեա զնոսայ ի դպրութեան կենացն յաւիտենից, և շնորհ զձեռագիր յանցանաց նոցայ, և ողորմեա յաստ և ի հանդերձելումն, ամէն։

բ

/// եաց զնայ որպէս ինքն կամեցաւ։
///յ սուրբ առաքեալն և աւետարանիչն Քրիստոսի։
/// տե[մ]բերի ամսոյ և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։
///նուաստ և անարժան քահանա, աշակերտ և [սպասաւոր սուրբ]
ուխտիս Առջուառնո, որ ի դրան մայրաքաղաքիս Անոյ, որ աւանդեցի զսուրբ [Աւետարանս] ի նորին յուխտս, յիշատակ ինձ և ծնողաց մերոց և եղբարց և վարդապետաց /// ինս և ես ի//*

152

ԱԻԵՏԱՐԱՆ

Վենետիկ 87 (1181 թ.) Սարգիսյան, Յուցակ Ա, էջ 396

Նվիրող՝ Նացուալ

1ա Ի թուականիս Հայոց ՈՁԾ (1236), ես նուաստ ծառայ Աստուծոյ՝ Նացուալս՝ տվի զսուրբ Աւետարանս ի Սուրբ Կաթողիկէն ի յիշատակ ինձ և ննջեցելոց իմոց, ի ձեռն աստուածայպատիւ քահանայիցն՝ Դասապետին. Գերսամին, Սարգսի սերկեւագին։ Իմ յիշելով զերանութիւն մարգարէին, որ ասէր. Երանի այնոցիկ, որ ունի զաւակի Սիոն և ընդանի [յ]Երուսաղէմ. զայս երանութիւնս լվեալ իմ և յիշեալ զբազմութիւն ծովացեալ մեղաց, զի ոչ ունէի թոշակ յաւիտեանական ճանապարհին և բարեխաւս՝ ի սոսկալի դատաստանին, զի մեղք իմ բազում էին առաւել յոյժ։

Արդ ապաւինե[ալ] իմ առ ազատիչն ամենեցուն Յիսուս Քրիստոս, և զգանձնս աստուածայինս՝ զսուրբ Աւետարանս արաբի ինձ աւղնական և բարեխաւս ի յաւուր դատաստանին։

Արդ, յերես անկել աղաչեմ զմանկունս սուրբ եկեղ[եցւ]ոյ, որ աւգտիք կամ աւրինակէք, ասասջիք լի բերանով և բոլորով սրտիւ. Տէր Աստուած, ի քո գալստենդ ողորմեալ Նացուալին և իւր ամենայն ննջեցելոց ի քո ահաւոր գալստենդ, ամէն։ Եւ որք զմեզ յիշէք, յիշել լիջիք դուք ի Քրիստոսէ Աստուծոյ, ամէն։ Արդ, աղաչեմ զձեզ, որ կատարէք զյիշատակ մեր։ Արդ մի ոք իշխե[ս]ցէ զսայ հեռացուցանել ի Սուրբ Կաթողիկէն. կամ եպիսկոպոս կամ երէց կամ յիմ ազգականաց կամ յաւ[տ]արաց

* Գնում ենք նախորդին առընթեր մոտավոր ժամանակակից համարելով նրան։

ջանայ զսայ հանել ի Կաթողիկէն, եղեցի նայ մերժե[ա]լ և հեռաց[եա]լ ի յաւիտենից ուրախութենէն և մատնե[ալ] ի ձեռն սատանայի, և երկու կենաւքս նզովեսցէ ի սմանէ։

Քրիստոս Աստուած, հաստատ և շնորհաւոր առնէ զսուրբ Աւետարանս սուրբ Կաթողիկէին, և ի[ւր] սպասաւորացն՝ Դասկանճ, Գերսամին, Սարգսի սերկեւագին, որդիցէ յորդիք։ Մի ոք ձեռն արկցէ, զի մի նզովեսցի...

153

ՎԵՅՕՐԷԻՑ ԳԻՐՔ ԲԱՐՍՂԻ ԿԵՍԱՐԱՑԻՈՑ

Երուսաղեմ 1801 (1187 թ.), Պողարյան, Յուցակ Ջ, էջ 163

Ստացող՝ Հայրապետ
Վայր՝ Սիս

558—559 Ի թուականիս Հայոց ՈՁԲ (1236), ի դժընդակ ժամանակի, յանիծեալ յազգէն Քամա, կոչեցեալ անդադար*, ի պաշարեալ զմայրաքաղաքն Անի, եւ զամենիսեան ի սուր սուսերի մաշեալ, զսրբութիւնսն անարգեալ եւ զգրեանս գերի վարեալ։ Եւ գիրքս այս կոչեցեալ Վեցաւրեա, բերաւ յաշխարհ Կիլիկեցիոց, եւ ստացա զգիրքս քահանա անուն կոչեցեալ Հայրապետ, պանդուխտ եւ յանարգ ժամանակի, յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց։ Որ կարդայք կամ աւգտիք կամ աւրինակէք, յիշեսիք զծնաւղսն իմ կոչեալ անուն Տիրացու եւ Արքասիկին, եւ զՀոռոմսիկին եւ զՎարդերեսն եւ զԿիրակոսն, եւ [զ]Խաչերես, եւ զ[Դաւի]դ, եւ զանարժան ք[ահա]նայս զՀայրե[պետ]ս, եւ մեղաց թող[ութիւն] խնդրեցէք. եւ որք յիշէք յիշե[ա]լ եղիցիք։ Եւ յաւտարութիւնս մեր վշտակցեալ ի քաղաքն Սիս, ծերութեամբ ծաղկեալ անուն առն Թորոս եւ կենակցին Տիկնուկ, եւ զաւակս նոց[ա] փոխեալ ի Քրիստոս տղական հասակաւ, եւ զՎասակ եւ զԿոստին, եւ մեղաց թողութիւն խնդրեցէք, եւ ամենայն յիշողացդ [Տէր] ողորմեսցի։

154

ԱՒԵՏԱՐԱՆ

Սրվանձտյան, Թորոս Ազբար, Ա, էջ 118—119 (1175 թ.)

Սպացող՝

Չերկրորդ ստացիչ սուրբ Աւետարանիս զպարոն Կոստանդին զթագաւորահայրն զարմից նորընծայ թագաւորին Հեթմոյ, որ այն ինչ ամաց մետասանից ընկալեալ զթագաւորութիւն ի բարձրելոյն, և ի թուականութեանն մերոյս ազինս ՈՁԲ (1236) ստացաւ զսա պարոն Կոստանդին թագաւորահայրն և իշխեցողն ամենայն Հայոցս զարմից, և ընձեռեաց եկեղեցւոյ իւրոյ Սուրբ Փրկչին, զոր ինքն շինեաց բազում ծախիւք, ի յիշատակ իւր և աստուածապարգև շառաւիղացն իւրոց, զոր թէ ոչ Տեառն զաւրութեանց թողեալ էր մեզ զաւակ, իբրև զՍոդոմ լինէաք և Գոմորայ նմանէաք, զորս պահեսցէ Տէր Աստուած ընդ երկայն աւուրս և պարագայս ամաւք շնորհեսցէ եկեղեցւոյ իւրոյ և ամենայն հաւատացելոց իւրոց ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

* Բառախաղ է՝ ստեղծված «թաթար» և «անդադար» բառերի նմանության հիման վրա։

155

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Սանչյան, Յուցակ Ամերիկայի, էջ 233—234, Հովսեփյան, Ցիշատակարանք, էջ 919—928

Ստացողք՝ Գրիգոր եւ Վարդան
Վայր՝ Գանձասար

ա

311ա *Բղխումն շահավետ շնորհի շարադրի և շարժեալ ի հայրաշարժ ծագմանն...*

313ա *Եւ արդ, անսպառ կտակս եւ զգանձս անկողպտելի, զանճառ երկինս, որ բարձեալ ունի զՏէրն բոլորից, մեք՝ Գրիգոր և Վարդան հարազատք՝ տրուպ եւ նուաստ քահանայք, ըստ ձեւ տեսակի կրաւնատրք գոլով, ստացաք զընդիրս առաւել քան զամենայն ինչս պատուականս ձեռաց մարդկան ձգտելոց՝ զսուրբ Աւետարանս, բազում խերեւնշիւք ըստ կարեաց մերում, յորս եմք տեղեակեալ ի գլուխ սահմանաց Խաչենոյ, ի սուրբ ուխ[տէն] Գանձասար մենաստանէ, որ [է հանգէ՞պ] դղեկիս Սխսաղան Հ[աւթա]խաղաց, առաջնորդութեամբ սուրբ ուխտիս տեառն Յո[վհաննիսի անյաղ]թ վար[դապետի և] աստուածարեալ /// ղ պսակ եկեղեցոյ Քրիստոսի։ Մաղթեմք ի յաւկտելոց ի ամանէ՝ յիշեսջիք զվերագրեալքս ի Տէր, նաեւ զանուանս զհարազատքս ուշիմս, եւ կարկառք մնամք աղաւթից ձերոց, եւ զծնողս մեր զԳեղդ Փառաշ եւ զՇահանդուխտ, եւ զայլ եղբարսս եւ զքորս, եւ զազգահինս մեր, քան զի մեք Գրիգոր և Վարդան, որպէս զվտիտ և զընզար ամոլք ընգալաք զարաւրս մշակին երկնաւորի աւգնականութեամ[մ]բն Քրիստոսի առ ի հերկեալ զակաս սրտից ասուածայնոցդ եւ սերմանելոյ զընդիր ցորեանս, որ յագելլոցդ էք ի Քրիստոսի շահական պտղոյս։ Ցիշեսջիք զմեզ և զամենայն յանձն արարե[ա]լս /// ի ձեզ, նաեւ զսրբասնեալ եղբարքս մեր /// [միաբան]ակիցքս համաւրէն՝ զծերսս եւ /// զորդիացեալս սուրբ ուխ[տիս] /// յիշեալ լիջիք ի Տէր Յիսուսի ///անարդ նկար /// տես /// մահն եւ /// տադեց /// թվին ՈՁՁ (1237)*։*

---

* Ձեռագրի մասին Գ. Հովսեփյանը գրում է։

«Գրիգոր և Վարդան եղբայրները 1237 թվին ստացել են միայն և ոչ նոր գրել տվեալ այս ձեռագիրը, որովհետև իրենց հիշատակարանների մեջ գրչի և նկարչի մասին չեն խոսում։ Ուրեմն այս ձեռագիրը աւելի հին է քան 1237 թվականը։

Այս Ձեռագիրը մի ամբողջութիւն չէ. նրա մեջ տեսնում ենք առնվազն երեք ձեռքերի եւ ժամանակների աշխատանք. Բնագիրը, որ ամենից հինն է եւ որի սկզբնազարգերն ու լուսանցքի

բ

Ծաղկողք՝ Իգնատիոս, Հովսեփ

8բ Տէր Աստուած, ողորմեա մեղաւորիս։

գ

13ա Յիշեա, Տէր Աստուած զԻգնատիոս և զՅովսեփ։

դ

15ա Տէր Աստուած ողորմեայ բազմամեղիս, ամէն*։

ե

83բ Քրիստոս Աստուած ողորմեայ Գրիգորոյ և Վարդանայ [Փառա]շին որդեացն՝ ստացողաց սուրբ Աւետարանիս, ամէն։

զ

139ա Քրիստոս Աստուած ողորմեայ երկուց եղբարց պատուական քահանայից Գրիգորոյ և Վարդանայ, ստացողի սուրբ Աւետարանիս, ամէն։

է

236բ Երկուք եղբարք պատուականք և ընտրեալ քահանայք, որ ըստացան զսուրբ Աւետարանս ի հալալ ընչից իւրեանց՝ յիշատակ ինքեանց և ծնողաց իւրեանց, Վարդան և Գրիգոր՝ որդիք [Փառ]աշին։ Քրիստոս Աստուած ողորմի նոցայ յիւրում գալստեանն։

ը

Նկարող՝ Աբաս

199բ Յիշեա զԱբաս նկարիչ տրուպ երեց**։

156

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7700

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Սիս

ա

294բ Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր և Որդւոյ և Հոգւոյ Սրբոյ այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

զարդերը տարբեր արվեստ և ոճ ունին քան Աբաս նկարչի պատկերները և Իգնատիոս մանրանկարչի և նրա աշակերտ Հովսեփի կողմից նկարված խորանները։ Նույնպես բնագրի գրչությունն.ու մելանը տարբեր են մյուսներից...» («Յիշատակարանք», էջ 926—927)։

** Բ, Գ, Դ հիշատակագրությունները գրված են համապատասխան էջերի խորանների ներքին գերանների վրա. ծաղկողներ Իգնատիոսի և նրա աշակերտ Հովսեփի ձեռքով։*

*** Գրված է Ղուկասի նկարի տակ։ Նույնպիսի մակագրություն կա 4ա էջում։*

Աստանաւր յանգչելեալ աւարտեցաւ տառս աստուածախաւս Աւետարանս կենսաբեր, յորում էր թուականս Հայոց ՈՉՉ (1237), ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ և ի թագաւորութեան աշխարհիս Կիլի-
295 կեցւոց բարեպաշտ և աստուածասիրին Հեթմո, || և յիշխանութեան աստուածասէր պարոնին թագաւորահարն Կոստանպեա, եղև զրաւ սորին ի մայրաքաղաքս Կիլիկեցւոյ Սիս, ընդ հովանեաւ Սրբոյ Աստուածածնին։

Ո՛վ սուրբ և աստուածահաճոյ քահանայք և սպասաւորք բանին Տեառն, յորժամ աւգտիք ի սմանէ ընթերցմամբ կամ գաղափարաւ կամ տեսանելով, յիշեսջիք ի սուրբ աղաւթս ձեր զբարեպաշտ թագաւորն մեր Հեթում և զաստուածատէր պարոնն մեր Կոստանդին, որ ստացաւ զսա ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ բարի իւր, և ծնատաց իւրոցն, [և] ամենայն աղգացն։ Յիշեսջիք ի Տէր և զբարի շառաւեղն զսրբասէր քահանայն զեղբայր թագաւորին զԲարսեղն, և զպարոն Սմբատ գաւնդաստապլն, և զպարոն Աւշինն, և զԼեւոնն, և զքերս թագաւորին՝ զսրբասէրն Հոիփսիմ, և զԹեփանաւ, և զԿալամաոի, որպէսզի տացէ նոցա Տէր Աստուած բաղմաժամանակեա աւուրբք յերկարեալ յայսմ աշխարհի առողջ հոգւով և մարմնով, և յետ ատի փոխադրելոյն յերկնից արքայութեանն արժանաւորեսցին, և յիշողքդ յիշեալ լիջիք յԱստուծոյ և ի Տեառնէ Յիսուէ Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Բ

140բ Գրողի սորա Գրիգորի, մեղապարտ քահանայի, նւաստ և ետին գրչի Տէր Յիսուս ողորմեսցի, ամմէն։

Յաւուր ուրբաթու սկսայ սուրբ Աւետարանս և յաւուր ուրբաթու կատարեցի, փառք Քրիստոսի։

Գ

294բ Խովանեէի մեղա[պ]արտ քահանայի և սուտանուն գրչի Գրիգորի ողորմեսցի Քրիստոս Աստուած իւրում գալստեանն, ամմէն։

Դ

2ա Այս դեհիս գիրն շատ է, ապա քիչ*։

157

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Սանջյան, Ցուցակ Ամերիկայի, էջ 347—348

Գրիչ՝ Առաքել

Ա

274բ Գրեցաւ տուրբ Աւետարանս ձեռամբ Առաքելի քահանայի, տրուպ եւ անարժան ծառայի Աստուծոյ, ի թուիս ՈՉՉ (1237)։ Արդ՝ ով սուրբ

* Նւսեբիոսի նամակի երկրորդ կեսի խորանի տակ է դրված։ Այս խորանի մեջ բնագիրն չատ է, քան նախորդում։

եղբարք, որք ակտիք ի սմանէ, մեղաց թողութիւն շնորհեցէք ինձ եւ ծնաւղաց իմոց, եւ սխալանացս որ ի սմա է՝ թողութիւն արարէք, զի կարի անվարժ էի, եւ բազում մեղաւք եւ տրտմութեամբ լցեալ ի ծովացեալ աշխարհիս։ Եւ որով սրտիւ յիշէք եւ ձեզ ողորմեսցի բարեգութն Աստուած, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Ի ստոյգ եւ յնդիր աւրինակէ։

Բ

81ա Ո՛վ սուրբ եղբարք, յորժամ զաստուածաջունչ Աւետարանս կարդայք եւ լուսաւորիք՝ զմեղապարտ եւ զանարժան ծառայս Աստուծոյ զԱռաքել գրիչ յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր, եւ Աստուած ձեզ յիշէ՝ որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Գ

130ա Տէր Աստուած, ողորմեա աշխատողի Առաքելի՝ սուրբ Աւետարանիս։

Դ

213 Զմեղապարտ եւ զանարժան ծառայս Աստուծոյ՝ զԱռաքել գրիչ սուրբ Աւետարանիս յիշեսջիք ի Քրիստոս, ո՛վ սուրբ եղբարք, աղաչեմ։ Եւ որ յիշէք՝ յիշեսցէ եւ զձեզ բարեգութն Աստուած, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Ե

292 Ո՛վ սուրբ առաքեալք, յորժամ նստիք յերկոտասան աթոռ՝ բարեխաւսեցէք առ Տէր վասն գրողի սորա եւ ստացողի Ստեփաննոսի եւ ծնողաց մերոց, ամէն։

158

ԱԽԵՏԱՐԱՆ

Լալայան, Ծուցակ Վասպուրականի էջ 85—86

Վայր՝ Բոլորաձոր

Փառք ամենակարող և անքարժանելի Սուրբ Երրորդութեան, որ հասոյց զմեր տկարութիւնս ի յաւարտումն և ի վերջին գիծս սուրբ Աւետարանիս։

Արդ, գրեցաւ սա ի թվականիս Հա[յ]ոց ՉՃՁՁ (1237), ի Ձորիս վայռ, ի յանապատիս, որ կոչի Բոլորաձոր ///

159

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4823 (1224 թ.)

Գրիչ՝ Վանական վարդապետ
Վայր՝ Տփխիս

155ա *Ես* Վանականս *գրեցի իմով ձեռամբս ի Տփխիս քաղաքի, ի դրան Սուրբ Քառասնիցս, զի գերեալ էր Աւետարանս ի* Տաճկաց *ի* Մողան, *ի թաթարէն, և յետ երից ամաց աստ բերեալ անվնաս վաճառեցին ՚ի ՌՁԷ (1238) թուիս, զոր փառաւոր աւագէրէց* Սարգիս, *հաւատարիմ պատուական քահանայիւք և աստուածասէր ժողովրդական տանուտէրք, բազում ծախուք և աշխատութեամբ գնել ետուն ի մեզ, որոց տացէ Քրիստոս փոխադարձ զսուրբ արքայութիւնն և զդրախտն, արձակել ի կապանաց մեղաց, և հանել ի խաւարէ ի լոյս անմատոյց, ասէն պահելով ի շինութեան և ի խաղաղութեան, բարեխաւսութեամբ սուրբ Աւետարանիս և ամենայն սրբոց իւրոց, ամէն**։*

160

ԱՒԵՏԱՐԱՆ

Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 859—862, 929—930

Գրիչ՝ Գրիգոր Սսցի
Վայր՝ Սանգուլ անապատ

ա

Յիսուս Քրիստոս, ողորմեա վարդապետին Գրիգորոյ, *ամէն։*

բ

ԶԳրիգորիս Սքսցի՝ *զանպիտանս ի գրչաց և թարմատար երգեցող յիշեսջիք ի Քրիստոս, և ըստացաւղ Աւետարանիս՝ զվարդապետն* Գրիգոր, *և Տէր Յիսուս յիշողացդ և յիշելոցս ողորմեսցի, ամէն։*

ՌՁԷ (1238) գրեցաւ ձեռամբ անիմաստ գրչի Գրիգորիսի՝ *յանապատի* Սանդղոյ *կոչեցեալ, ի ժամանակիս, յորում բարեպաշտ թագաւորն*

---

* *Սրանից ոչ շատ ուշ գրված է. «Գրիգոր յիշել աղաչէ, ո՛վ սուրբ եղբարք։ Աւետիսն է ծղորմութիւն խնդրողն ի Քրիստոսէ»։*

Հեթում և աստուածասէր թագուհին Զապէլ անուանեցին զսա իւրեանց հովանոց և գեռածին մանուկն իւրեանց էր ամի միոյ և ամսոյ, որոյ Տէր Աստուած տացէ ժամանակ բարի պարագայից ամաւք խաղաղանալ յայսմ կենցաղի։

Ո՛ պատուականդ իմ Գրիգ[որ] վարգա[պետ], յիշեա զեղկելիս Գրիգ[որիս] և սխալանացս, որ ի սմա, անմեղադիր լեր, զի այգ էր կար մեր։

Գ

Ցամի վեցհարիւրի
եւթնից տասանց [և] եւթնեկի (1238)*,
Ցարքայութեանս Հեթումի
Քրիստոսազաւր թագատրի։
Եւ ի Հայոց հայրապետի՝
Սուրբ և ամբիծ հայրապետի
Որում Կոստանդին անուն կոչի,
Կատարեցաւ տառ մատենի,
Քրիստոսական պատուիրանի
Աւետարանս հռչակելի,
Ձեռամբ իմով Գրիգորիսի
Թարմատար գրչաւորի
Եւ սուտանուն երգեցողի։
Ի հրամանէ պատուաւորի
Սիրեցելոց վարդապետի
Տղբաւր մերոյ Գրիգորի։
Ի վայելումն պանծալի
Իւր ձեռնասուն աշակերտի,
Որ է շնորհաւքն Քրիստոսի
Առաւելեալ յամենայնի,
Պաւղոս անուն իւր ճանաչի։
Արդ, որք ի սոյն տառ պատուելի
Վայելէք սիրով ուրախալի,
Առցէ յաղագս աւրինակի,
Սա է ընտիր և գովելի,
Ի գրչէ յոյժ ճարտարի
Ոտեայեցի Կոստանգրենի
Փոխակերպեալ յայս քարտենի։
Աղաչեմ յիշման բարի
Ապագայից մահու զկնի
Զաշխատող սմին գրի
Եւ ղստացաւղ սորին նիւթի՝

* Գ. Հովսեփյանը հավանական է համարում առաջին թվականը (1238), քանի որ այդ ժամանակ, իսկապես Հեթում թագավորի կնոջ որդին մեկ տարեկան էր, ուրեմն «եւթնից»-ի փոխարեն պետք է լինի «ոլթնից»։

ԶԳրիգորիս ընդ Գրիգորի
Սրբաբան վարդապետի
Արժանի յիշատակի
Արարէք, սուրբք ի մարմնի.
Եւ բաբունին սուրբ եւ բարի՝
Ստեղծաւղն էիցս համայնի
Մեզ և ձեզ ողորմեսցի,
Որում պատիւ ընծայեսցի
Եւ փառք Հաւրն իւր անեղի
Եւ Հոգոյն համապատւոյ
Այժմ եւ յաւէտ որ յապաձգի
Ամեն ամենայնիւ յիրաւի.

161

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 7739 (1001 թ.)

Ստացող՝ Ներսէս

ա

179բ Տէր Աստուած ողորմեա ստացողիս։

Քրիստոս Աստուած բարէխաւսութեամբ սուրբ Աւետարանիս և բարեխաւսութեամբ սրբոց աւետարանչացն, և քո սուրբ ծննդեամբդ եւ մարդեղութեամբդ, և քո սուրբ չարչարանացդ, և քո սուրբ խաչելութեամբդ, և սուրբ թաղմամբդ, և քո սուրբ յարութեամբ, եւ սուրբ համբարձ[մամ]բդ ի յերկինս, եւ քո միւս անգամ սուրբ գալստեամբդ յահաւոր եւ ահեղ ատենին, գթայ եւ ողորմեայ Ներսէս էրիցու մեղապարտ քահանայի, որ եմ զառածեալ բաղու[մ] մեղաւք, և աստ պահեայ ի չարեաց, զի եմ տխուր մինչև ի մահ, վասն սգոյ։

Տէր Աստուած Յիսուս Քրիստոս բարեխաւսութեամբ Սուրբ Աստուածածնին և ամենայն սրբոց, ողորմեա Ներսէս քահանաի, և ծնաւղաց եւ եղբարց նորա։ Յով ոք անկանի, աղաչեմ զմանկունսդ եկեղեցւոյ և զընթերցող զսուրբ Աւետարանիս, լալով և աղերսիւ աղաչեմ, յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, եւ ողջ լիք Տերամբ։

Թվին ՌՁԷ (1238)։

162

ԳԻՐՔ ԴԱՏԱՍՏԱՆՑ ՄԽԻԹԱՐԱՑ ԳՈՇԻ

Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 929—932

Գրիչ՝ Բարսեղ
Վայր՝ Հոռմկլայ

Փառք Աստուծոյ յաւիտեանս, ամէն։ Ի թուիս ՌՁԷ (1238) գրեցաւ Գիրքս Դատաստանաց առ ափն մեծ գետոյս, որ կոչի Եփրատէս, առ ստորոտ աստուածապահ դղեկիս Հոռոմկլայ կոչեցեալ, ի հայրապետու-

թեան տեառն Կոստընդնա, ի չար և ի դառն ժամանակի, յորում նշանք երեւելիք եղեն, քան զի մեռաւ երիս սուլտանաս՝ Հոռոմոցն և Շամբիս և Մսրայն։ Եւ արդ գրեցաւ սա ձեռամբ Բարսղի մեղապարտի և փցուն գրչի, հրամանաւ աստուածապատիւ և առաքելաշնորհ տէր Մարկոսի արհիեպիսկոպոսի՝ ի վայելումն անձին իւրո և զկնի ելից իւրոց յաշխարհէս՝ անջինջ յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց և եղբարց և ազգականաց իւրոց։

Եւ արդ էր սա ի գաւառէն Սուրբ Մարոյ, և ըստ խոստոհելոյ մեր ի պատուիրանացն Տեառն՝ մատնեցաւ աշխարհն Հայոց ի ձեռն խուժադուժ ազգացն, որ կոչի դադար, քան զի յաւարի եառ զաշխարհն ամենայն առ հասարակ, բազում քաղաքս և աւանս, և բազում եպիսկոպոսք, և վարդապետք, և քահանայք, և սարկաւագունք, և իշխանայք, և ազատք, և շինականք, և բազում այլ եւս կանայք և մանկտիք, զոր ոչ կարէ ոք ընդ գրով արկանել, զոր ըմբռնեցին ընդ ձեռամբ իւրեանց։

Եւ արդ եպիսկոպոսս այս, զոր յառաջ ասացաք զանունն, մատնեալ եղեւ ի ձեռս անաւրինաց, նաեւ եղբարք իւր և ազգատոհմ իւր, և ոչ ուստեք կայր աւդնական գերելոցն, բայց միայն այն, որ ազատեցան զմեզ
148ա արեամբն իւրով,‖զի ամենեքեան ի մեծ վտանկի կային առ հասարակ։ Եւ արդ զեպիսկոպոսս զայս իշխան ոմն ի գերելոցն, որո անունն Քուրդ ասի, յիշատակ նորա՝ աւրհնութեամբ, ազատեալ յանաւրինացն, և սա ցաւագին սրտիւ և բեկեալ անձամբ դիմեալ յայս աթոռս հայրապետական, ուստի և սրբասնեալ կաթողիկոսս Հայոց, զոր յառաջ յիշատակեցաք զանունն, սիրով ընկալաւ զսա ըստ արժանոյն իւրոյ։

Եւ արդ ցանկացող այսմ տառիս, զոր է հաստատած յաշխարհս Կայենոյ՝ ի մենաստանին Գեղիկ, ի սուրբ վարդապետաց սահմանած, որոյ
148բ անունն Մխիթար յորջորջի։‖Եւ արդ եւ մեղապարտ ծառայս ձեր մոխրաթաւալ երեսաւք և արտասուագոչ սրտիւ աղաչեմ զամենեսեան, որք կարդայք կամ եղանակէք, զսուրբ եպիսկոպոսն զտէր Մարկոս, և զծնաւղսն իւր, և հարազատ եղբարսն իւր, և զիս զանարժանս, և զծնաւղսն իմ յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, և Աստուած առ հասարակ ամենեցուն ողորմեսցի, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Ո՛վ պատրւական և բարի հոգւով և մարմնով, զմեղապարտ ծառայս քո յիշեա և զծնաւղսն իմ ի մաքրափայլ յաղաւթս քո։

163

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ ՅՈՒՆԱԿԱՆ

Հռոմի Հայոց Հիւրանոց 15, Ակինյան, Յուցակ. էջ 11

Գրիչ՝ Ստեփանոս

ա

48բ Քրիստոս Աստուած, ողորմեա Ստեփանոսի գրչիս եւ Պետրոսի եւ ծնողաց իւրոց։

բ

94բ Քրիստոս Աստուած, ողորմեա ստացողի գրոյս... եւ Պետրոսի եւ ծնողաց իւրոց, եւ ինձ բազմամեղի Ստեփանոսի գծողի սորա։

Գ

125բ Վերջացեալս ի գրչաց ստացող սորա զՍտեփաննոս բազմամեղս, յաղաւթս յիշել... [Քրիստոս Աստուած] կեցոյ զՊետրոս եւ զծնողս իւր զՅոճանէս քահանա, որ զաւրինակն պարգեւեաց...։

Դ

258բ Բարեխաւսութեամբ Թալիլա... բժշկիս զախթս եւ զցաւս մարմնոյ եւ հոգոց Պետրոսի եւ Մաւիճէ եւ ծնողաց իւրոց եւ զմերս ամենեցուն*։

* Ակնյանը նկատի ունենալով դեկտեմբերի 5-ի հետևյալ հուշագիրը (99բ) «Եւ յայսմտուր յիշատակ է սուրբ եւ երիցս երանեալ հաւր մերոյ վարդապետաց վարդապետին Գրիգորի, Քվ. ՈՁԷ (1238)»,— գրում է. «Ընկատի ունենալով որ ձեռագրիս գրիչն Ստեփաննոս կկոչվի, կրնանք զանիկա Տէր Հուսկան համանուն որգւոյն հետ նույնացնել, և այս Գրիգոր վարդապետը նկատել Գրիգոր վարդապետ վկայասերը, առաջնորդ եաշգլուխ լեռան Ս. Սահակա վանից, որ ուներ բազմաթիվ աշակերտներ, որոնք խստակրոն ճգնաւորներ էին, սա կոչված է «Հրեղէն լեզուս» (1239-ին), Ասոր աշակերտած պիտի ըլլա Ստեփանոսս։

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 7574

Գրիչ՝ Աստուածատուր
Վայր՝ Սեբաստիա

ա

148ր Փառք ամենասուրբ Երրորդութեանն և միում աստուածութեանն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

Յամի Ո-րդի Զ-երորդի Ը-երորդ (1239) Արամազնեան տոմարիս, ի կաթողիկոսութեան տեառն Կոստանդի Հայոց դիտապետի, և ի թագաւորութեանն Հեթումի Հայոց թագաւորի Հայկազնեան տոհմիս, իսկ ի ըրոնակալութեան Իսմայելեան ազանց միջերկրեայ կողմանցս Խայաթստինի սուլտանի որդւոյ Ալատինի, եւ եպիսկոպոսութեան մեծի հոյակապ մայրաքաղաքիս Սեբաստուոյ տէր Գրիգորի, գրեցաւ հոգիանորոգ և աստուածաշունչ մատեանս Քրիստոսի տղայկութիւնն, ձեռամբ Աստուածատուր մեղապարտիս։

149ա Որ և յաւժարական կամաւք և արդար վաստակաւք ստացեալ զսա աստուածասէր և աղքատասէր և հիւրասէր Թէոդոս քահանայ, հանդերձ քրիստոսասէր ամուսնաւն իւրով և դեռաբոյս զաւակաւք իւրեանց՝ Ռըստագիսի քահանայի և սրբասնունդ և դեռաբողբոջ անձին՝ մանկան տիովք զարգացելովք Վարդի, այլովն հանդերձ, ի յիշատակ անձանց իւրեանց և զաւակաց, և ի Քրիստոս հանգուցելոց ծնաւղաց նոցին՝ Վարդ իրիցուն և Ծաղկին։

Եւ արդ, աղաչեմք զամենեսեան և խնդրեմք յամենեցունց, որք աւգտիք ի սմանէ ընթերցմամբ, մեղաց թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ աշխատաւղացն ի սմա և ստացաւղացն Թէոդոսի քահանայի և իւրոցն ամենի, և Աստուածատուրի և իւրոցն ամէնի։ Ողորմեսցի Քրիստոս Աստուած ի գալստեանն իւրում և արժանի արասցէ զնոսա պարակից և դասակից լինել սրբոցն և արդարոցն խմբից, զոր յիշատակեցաք, ամէն։

Գրեցաւ գիր աստուածախաւս մատենիս այսորիկ ձեռամբ անարժանի Աստուածատուրի, ի հոյակապ քաղաքիս Սեբաստիա, մերձ ի լուսազարդ և աստուածաբնակ տաճարիս, որ ի ձեռն Սրբոյ Գրիգորի մե[ր]ոյն լուսաւորչի հիմնացեալ և հաստատեալ է, որում ողորմեսցի գծողին և ստացողին, և զորս յիշատակեցաք ի Քրիստոսի տղայկութեան գիրքս, Քրիստոս Աստուած ի գալստեանն իւրում և ծնաւղաց նոցին և մասնակից

սրբոց իւրոց արասցէ, և որք յիշէք աղաւթիւք, զի և ձեզ ողորմեսցի, և Աւետիք հոյսանն, և կենակցի իւրոյ՝ Մամսթերի, և ծնաւղաց իւրեանց, և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։

150ա Բարեխաւսութեամբ ամենայն սրբոց քոց, Քրիստոս Աստուած, ողորմեա աւրինակին շնորհողին Վասիլ քահանայի, և ծնաւղաց իւրոց Խաչանուն քահանայի, և Թոռոսի կրաւնաւոր քահանայի, և իւրոցն ամենի, ամէն։

Բ

Քրիստոս Աստուած, որ պսակեցեր զսուրբ թագաւորն Թեոդոս և զԼոստանդիանոս, նոյն պսակաւն պսակեա և աւրհնեա զստացող սորա զտէր Թեոդոս և ծնաւղսն իւր, և զնորընծայն իւր զնոր քահանայն զՍտեփանոս երէց, և զամուսինն իւր զՄինայ իրիցկին, և զծնաւղսն իւրեանց, ամէն։

Գ

181բ Մաղթանաւք և բարեխաւսութեամբ սրբոյն Յակովբայ||Մծբնայ հայրապետի և Մարուդեի միայնակեցի, և Մելեսի եպիսկոպոսի, և ամենայն սրբոց քոց, Տէր Յիսուս Քրիստոս, ողորմեա ստացողի սորա Թեոդոսի քահանայի, և ծնաւղաց նորա, և ամենայն ազգաց նորա, և Ռստագիսի քահանայի որդւոյ Թեոդոսի, և գծողի սորա, և իւրոցն ամենի, ամէն*։

Դ

251բ Բարեխաւսութեամբ երիցս երանեալ և մեծ խոստովանողի քո Սրբոյ Թէոդորոսի կրաւնաւոր || քահանայի և որդւոյ Գոհարինէ, և Սրբոյն Գոհարինէի, և սուրբ եղբարց իւրոց, որ նահատակեցան ի Սեբաստիայ գաւառի, Քրիստոս Աստուած ողորմեա Աստուածատուրի մեղաւորի, և ծնաւղաց իւրոց, և Թէոդոսի, և քեռ իւրոյ Գոհարի, և զաւակաց իւրոց Մաղկին և Էսայէ, և լսողացս ամ[է]նի, ամէն**։

Ե

870բ Տէր Յիսուս Քրիստոս, աղաւթիւք և բարեխաւսութեամբ ամենայն սրբոց քոց ողորմեա ստացողի սորա Թեոդոսի, և ծնաւղաց իւրոց, և եղբարց, և քերց, և Առստակիսի որդւոյ Թեոդոսի, և դեռաբոյս զաւակաց իւրոց Վարդերի, և մին այլ զաւակին, ամէն։ Եւ գծողի սորա Աստուածատուրի և ծնողաց իւրոց ողորմեա Քրիստոս Աստուած, և զննջեա զձեռագիր յանցանաց նոցա և զլսողացտ ամենի, ամէն։

Տէր Աստուած, ողորմեա աւրինակին շնորհողին*** Վրթանէս եպիսկոպոսի և ծնաւղաց իւրոց, ամէն։ ՈՉՔ (1240)։

---

* Գրված է «Պատմութիւն սրբոյն Յակովբայ զոր գրեաց Մեղիդէ աշակերտ Մարուդեի միայնակեցի» հոդվածի վերջում։

** Գրված է «Վարք և վկայութիւն սրբոց Գոհարինեացն, որ կատարեցան ի փառս Աստուածոյ» հոդվածի վերջում։

*** Այս վերաբերում է վերջին երկու նյութերի օրինակին։

Գ

302բ [Տ]էր Աստուած, ողորմեա Թեոդոս քահանայի և ծնաւղաց իւրոց և իւրոցն ամենի։

Քրիստոս Աստուած, բարեխաւսութեամբ [ա]մենայն սրբոց քոց ողորմեա [Մա]րտիրոսի, և կենակցի իւրոց [Նո]նոփարին, և ծնաւղաց իւ[ր]եանց և ամենայն ազգաց իւրեաց, [և գ]ծողի սորա և իւրոցն ամենի, ամէն*։

Է

309բ Տէր Յիսուս Քրիստոս, աղաւթիւք և բարեխաւսութեամբ ամենայն սրբոց [ևս] առաւել սուրբ առաքելոցն Պաւղոսի և աշակերտին իւրոյ Դիեննեսիոսի եպիսկոպոսի ողոր[մեա] Թեոդոսի քահանայի, և Աստուածատրի [մեղաւ]որի գծողի, և ծնաւղաց իւրեանց /// որ ամէն աւէ, և նմա ողորմեա Քրիստոս։

Ը

323բ Տէր Յիսուս Քրիստոս, աղաւթիւք և բարեխաւսութեամբ ամենայն սրբոց քոց ուգնեա Ռստագիսի քահանայի, և ողորմեա տէր Թեոդոսի եւ Աստուածատրի մեղաւորի, և ծնաւղաց իւրեանց, Վարդ իւրիցու և այլոցն, և եղբարց իւրեանց և քերց, և համաւրէն ամենայն ազգականաց իւրեանց և ննջեցելոցն ամենի, ամէն։

Ընդ նմին և աւրինակի շնորհողին, և լսողացդ ամենի, և կարդացողին, ամէն, ամէն։

Թ

328բ Փառք փրկչին եւ յիշատակ ստացողին ամենամեղ դրչին և լսողին ամէն։

165

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 8906 (988 թ.)

Կազմող՝ Տիրատուր Կողբացի

175բ Ա[րգ ստացաւղ Աւ]ետարանիս այս պարոն Մխիթար որդի Գայլկոյն, կենակցաւ իւրով Հայոցիւն, ի յիշատակ իւր, եւ ծնողաց իւրոց՝ Գայլկոն եւ Աղէկաիկնոջն, եւ կենակցին իւրոյ Հայոցին եւ ազգին, եւ զաւակի իւրեանց Աւեավորին, եւ այլ համացեղիցն, եւ ազգայնո[ց]ն առհասարակ։ Պատրոն Մխիթար եւ կենակից իւր Հայոցն, որ են բարի անուն եւ աղքատաց կերակրիչք, քաղցելոց հաց եւ ծարաւելոց բաժակ ցուրտ, մերկոց վերարկուք եւ ււտարաց յարկ եւ նաւահանգիստ։ Գնալով յաւրէնս Տեառն եւ առնելով զկամս նորա, եղին ի մտի ղասացելն ի պատմողէն, որ աւէ, Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընդանեակ նորա՝ յԵրուսաղէմ։ Եւ սոցա ստանալով զպատգամս տէրունեան հրամա-

* Գրված է Յովհան Ոսկեբերանի «Վասն ապաշխարութեան և ողորմութեան» հոդվածի վերջում։

նին ի պահպանութիւն տանց իւրեանց և զաւակաց և փարթամութիւն հոգոց իւրեանց ի Վերինն Երուսաղէմ։

Արդ, որք ընթեռնոյք եւ որք լսէք եւ լուսաւորիք ի սմանէ, ասասջիք սրտի մտաւք Ողորմեա Աստուած ի քում գալստեանդ, Մխիթարա, եւ կենակցի իւրո Հայոցին, և ծնողաց իւրեանց, և զաւակաց, և ազգայնոցն առհասարակ, և այնոցիկ որք ի թաթառէն կոտորեցան, ամէն։

Արդ, կազմեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Տիրատուր Կողբացոյ, ի թվի ՈՋՐ (1239)։ Ով ոք կարդայք զմեզ ի բարին յիշէ[սչիքի] Քրիստոս, ամէն։

166

ՃԱՌՆՏԻՐ

Երեան 2756

Գրիչ՝ Ռսաակէս

ա

31ա Տէր Յիսուս Քրիստոս Աստուած անպարագրելի և անհաս, ողորմեա Վարդեմաւրն, որ կայ հանգուցեալ առ դուռս Սրբոյ Վասլի, յորոյ անուն այսմ ննջեցելոյ, այս սուրբ կտակս գրեցաւ ընծայ Սուրբ Վասլիս, սակս փրկութեան հոգւոյ նորա։

Այղ և աղաչեմ զսուրբ քահանայսդ և զաստուածասէր տանուտեարքդ և զբնաւին հաւատացեալսդ զմարսդ սուրբ հանդերձ երկիւղած սուրբ զաւակաւք, որ յայսմ հրաշագործ և փրկութիւնաբեր աւուրս ժողովեալ էք ի գաւիթ Սրբոյ Վասլիս, թողութիւն մեղաց հայցեցէք սրտի մտաւք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ Վարդեմաւրն հոգւոյն, որ և զձերն թողու Քրիստոս ի հանդերձեալ գալստեանն իւրոյ, յորում աւուր գայ ի դատել զկենդանիս և զմեռեալս, յորում աւուր բանք սպառին ամենեցուն և գործք թագաւորէն*։

բ

59բ Յիսուս լոյս փառացն Հաւր, որ այսաւր համբարձար հայրենին քո փառաւք, ողորմեա Վարդեմաւրն և Սիմեովնի։

գ

66ա Որ բազմահրաշ իմաստութեամբ զարդարեցէր Քրիստոս Աստուած զտապանակ ուխտիս, որ բարեխորհրդաբար համեմատութեամբ զսուրբ կոյսն Աստուածածին, յորում տազաւարեցար Աստուածդ բան, ողորմեա Վարդեմաւր Կողբացոյ, որ և տարաշխարհիկ մեռաւ և թաղեցաւ ի դուռն Սրբոյ Վասլիս։

դ

74ա Քրիստոս որդի Աստուծոյ, որ այսաւր արտափայլեցեր զանճառելի ջոյս աստուածութեանդ քո ի Թաբովր լերինն, ողորմեա Կողբացի, Վարդեմաւրն հոգւոյս և հան նմա մասն ընդ սուրբս քո։

* Այս կարդի հիշատակագրութիւններ կան նաև 3 ա, 11 ա, 85 բ, 93 ա, 96 ա և այլ էջերում։

Ե

96ա Քրիստոս Աստուած, քո Սուրբ Նշանին բարեխաւսութեամբ... ողորմեա Վարդեմատն և զաւակաց նորա*։

167

ՃԱՌԸՆՏԻՐ

Երևան 2784

Գրիչ՝ Ռսաակէս

Ա

6բ Աղաչեմ զսուրբ տաւնասերդ զՔրիստոսի պաշտաւնեայսդ և զհաւատացեալ ժողովուրդդ, մեղաց թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ Աստուծոյ ի սուրբ լուսաւորութեանս աւուր Վարդենէ հոգւոյն, որ կայ հանգուցեալ ընդ աշմէ կողմանէ առ. դրան Սուրբ Վասլիս, յորոյ անուն սուրբ գիրքս սկսաւ ի յանաւգուտ որդւոյ իւրոյ և ընծայ նմին Սուրբ Վասլի։

Բ

32ա Մնդեամբ քո Քրիստոս, որ յայտնեցար անճառ միութեամբ ի փըրկութիւն հաւատացելոց քոց, ողորմեա Վարդեմատն և հանդո ընդ սուրբըս քո։

Գ

45ա Մաղթողական աղաւթիւք սուրբ ճգնաւորին քո Քրիստոս Աստուած բարեխաւսութեամբ սուրբ Հաւրն հոգւոյ Անտուվնի Անապատականի ողորմեա տարաշխարհիկ ննշեցելոցն Վարդեաէ, յորոյ անուն աշխատեցայ սմա։

Դ

78բ Աղաչեմ և ես նուաստ գծաւղս Ռսաակէս զաստուածապատիւ քահանայսդ և զհաւատացեալ ժողովուրդ ի Քրիստոս, զի յիշեսջիք առաշի Տեառն Յիսուսի Քրիստոսի զմայր իմ վախճանեալ, որ կայ եղեայ ի գերեզմանի առ դրան Սրբոյ Վասլի, ընդ աշմէ կողմանէ, ի ներքոյ կուփածոյ վիմի կարծ(ր) տապանի, յորոյ անուն սուրբ պատմութիւնս աւարտեցաւ ի փառս Աստուծոյ, ամէն, և Քրիստոս Աստուած իւր մեծ ողորմութեամբն զձեզ յիշէ յիւրում յահագին գալստեանն, ամէն։

Ե

94ա Բարեխաւսութեամբ սուրբ և հրաշալի անարատ ծնողի քո Քրիստոսի, ողորմեա Վարդեմատ հոգւոյն, յորոյ անուն և այս սուրբ ճառս աւարտեցաւ ձեռամբ անպիտան և կարի նուաստ յորդւոյս։

---

* Հաջորդ համարի տակ բերված հիշատակարանները նույնպես այս ձեռագրին են պատկանում, որովհետև Մատենադարանի № № 2756 և 2784 ձեռագրերը միևնույն ճաշոցի բաղկացուցիչ մասերն են, որ վաղուց արդեն բաժանված են միմյանցից։

Գ

155բ Բարեխաւսութեամբ սուրբ քահանայապետիս Գրիգորի և համարւէն Հայաստանեայց Լուսաւորչի, ողորմեա Քրիստոս Աստուած անպիտան աղախնոյ քո Վարդենէ և այնոցիկ, որք հաւատով ասեն, ամէն*։

168

ԱԻԵՏԱՐԱՆ

Կյուվեսերյան, Յուցակ Անկիւրիոյ, էջ 883—880

Գրիչ՝ Սարգիս
Վայր՝ Դռազարկ

560—562 Փառք եզակի, եռահիւսակ դասանութեանն, ապենիազին կատարեալ և անսահմանելի, Աստուծոյ Հաւր, և Աստուծոյ Որդւոյ, և Աստուծոյ Հոգւոյ յաւիտեանս, ամէն։

Շնորհիւն Աստուծոյ սկսայ և ողորմութեամբն նորին աւարտեցաւ եռահրաշ հոգիայզարդ Աւետարանս, զոր էր չաղկապեալ երանեալ աւետարանչացն ըստ բազմերանգ գունոց ի մի ոստայն անդելով հանճար, զոր արուեստակեալ անուշոցաց ծաղկանց իւղեփեցական կազմութեամբ, որ ըստ հոգւոյն յստակութեան իմանի, զանազան որակութեամբք գաղափարելով, ըստ յօրինց արփիացելոցն դասակցութեանց, առ ի յեկեղեցւոյ յարմարումն, յաւգիւ խաղաղութեամբ գլխոյն պատշաճեա[լ], զի յայսմանէ կատարելութիւնն։ Ջորք աւետարանք, ի բազում պատճառէ. չորեքկերպեան կենդանիք՝ մարդ, առիւծ, ցուլ, արծիւ. չորք նիւթք աշխարհիս՝ հող, ջուր, հուր, աւդ, հակառակք անհաշտելիք, և սիրելիք անքակտելիք. չորք չորք գիր անուան երրորդութեանն՝ Հայր, Որդի, Հոգի. չորք գետք բղխեալ ի դրախտէն՝ Փիսոն, Գեհոն, Տիգրիս, Եւփրատ. չորս անկիւնս և եղջիւրք սեղանոյն, չորք դէմք խաչին, և այլ բազում պատճառս, յորս գաղափարի չորեքեան աւետարանիչքս, զի թէպէտ և բազում բանք ի սոսա որ երեւին ներհակք միմեանց, այլ քաջ ճշմարտիք և յոյժ միարանք միմեանց։

Արդ, գրեցաւ աստուածախաւս վարդապետութիւնս ի թուականութեանս Հայկազեան տումարիս ՈՉՐ (1239), ի մեծահռչակ անապատիս Դռազ[ա]րկի, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի և Սուրբ Թորոսի և այլ համարւէն սրբոցն, ի ստուգաբան և յընդիր աւրինակէ, ի հայրապետութեանն տեառն Կոստանդեայ աստուածահաճոյ հեղինակի, հեզի և խոնհարհի, յիշատակ նորա աւրհնութեամբ, ի թագաւորութեան՝ որոյ անուն Հեթում յորջորջի, որոյ տացէ Տէր Աստուած ժամանակ բարի, և դեռաբոյս զաւակի նորա Լեւոնի, և տացէ յաղթութիւն ի վերայ թշնամ[եաց] իւրոյ, զաւրութեամբ սրբոյ խաչի իւրոյ։

---

* Ի հավերժացումն տարաժամ մահացած Վարդենայր Կողբացու հիշատակի գրված այս անվական հիշատակագրությունները գնում ենք 1239-ի թվաշարքում, Տիրատուր Կողբացու հիշատակարանին առնչվեր, ուր խոսք կա մռնդոլների կողմից մեծ թվով կողբացիների կոտորված լինելու մասին։

Արդ՝ դրեցաւ ձեռամբ Սարգսի մեղապարտ և սուտանուն կրաւնաւորի, ի լուսաւորութիւն հոգւոյ իմոյ, և ի մխիթարութիւն կենաց և ի յիշատակ հոգւոյ իմոյ և ծնաւղաց իմոց և եղբարց և քոյց և աղգականց և ամենայն զարմից։ Արդ, ո՛վ սուրբ մանկունք եկեղեցոյ առագաստի և նաղէլի մարմն Սիոնի և որդիք լուսոյ, որք աւկտիք ի լուսահրաշ կենաց բղխմանէս, յաստուածախաւս վարդապետութենէս, ի կենեղուտ և ի հոգեկեցոյց Աւետարանէս, ընթեռնելով կամ ունկնդրութեամբ, և կամ գաղափար առնլով աւկտիք ի սմանէ, և լուսաւորեալ մխիթարիք, յիշեսջիք ջերմն գթով և ցաւակցաբար սիրով, զմեղուցեալ և զփծուն գրիչս զՍարգիս և զծնաւղս իմ, զի թերեւս գտցուք ողորմութիւն ի գալստեան իւրոյ, և որ զմեզ յիշման արժանի արասցէ, և ինքն եղիցի յիշեալ առաջի Քրիստոսի։ Ե՝ խոշորութեան գրոյս և սխալութեան մի խստութեամբ, այլ ողորմութեամբ և ներելով /// զսաստն, և Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս, ամէն։

169

ՃԱՇՈՑ

Վիեննա 53, Տաշյան, ձուցակ, էջ 251

Գրիչ՝ Կիրակոս
Վայր՝ Դռազարկ

ա

208ա Փառք քեզ...։ Գրեցաւ մատեանս աստուածային ի թուաբերութեանս որ ըստ Հայոց տումարիս ՈՉՐ (1239) եւ ի թագաւորութեանն Հեթումոյ բարեպաշտ թագաւորի, եւ ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ, ձեռամբ Կիւրակոսի ախմար եւ մեղապարտ գրչի, ի խնդրոյ երջանիկ եւ սրբասնեալ եպիսկոպոսի Տէր Գրիգորի՝ տեառն Կոստանդիա դրան սարկաւագի, եւ յաղագս բարեաց յիշատակի հոգւոյ իւրոյ եւ ծնողաց իւրոց՝ ստացաւ զսա անկողոպտելի գանձ, բարեաց ապաստան, եւ պարգեւէ զսա սուրբ ուխտիս Դռազարկու, ուր եւ գծեալ եղեւ սա, որպէս զի խրախասցին սովաւ մանկունք նաղելի մաւր մերոյ Սիովնի՝ երգովք եւ եղանակաւք ի յարութեան յիսնաւրեա աւուրս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Արդ որք հանդիպիք սմա յինչեւիցէ պէտս՝ աղաչեմ աղերսանաւք յիշեսջիք սրտի մտաւք զտէր Գրիգոր ստացողն։

բ

72ա Հնչողք երգա[րան]իս յիշեսջիք յա[զաւ]թս զԳրիգոր զստ[աց]աւղ եղանակա[ցս]։

170

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 9365

Գրիչ՝ Թորոս
Վայր՝ Խորին վանք

ա

3ա Զմեղապարտ գրիչս Թորոս և զամենագարշս յիշեսջիք ի Տէր աղաչեմ, աղաչեմ։

բ

3բ Յովհաննիսի Սիւնակեցի և անյաղթ ճգնաջան մենաւորի տէրունեան նշանին բարձողի ողորմեսցի Քրիստոս։

գ

6ա Զբազմամեղս և զամենայն սխալանաց ներքո անկեալս և զանգիւտ կորուսեալս Թորոս և զիմսն ամենայն, վասն սիրոյն Քրիստոսի և իւր սուրբ տնաւրինական կրիցն աղաչեմ յիշել ի Քրիստոս սրտի մտաւք։

դ

6բ Ստացաւղի սորա Յովհաննիսի աստուածունակ խարազնազգեստ ճգնաւորի ողորմեսցի Քրիստոս Աստուած և ծնաւղաց նորին, ընդ նմին և ամենասխալ մեղապարտիս Թոր[ոսի]*։

ե

Ստացող՝ Յոհաննէս

7ա Յանուն Աստուծոյ, ես Յոհաննէս արեղա Ռատին որդի Բագուանցի, որ կամ յարդելական վասն բաղում մեղաց իմոց, ուղնականութեամբ Աստուծոյ դրեալ տուի սուրբ Աւետարանս ինձ յիշատակ և ծնողաց իմոց, և կուտամ ի վանքն, որ կոչի Խորին, և հայցեմ ի սուրբ եղբարցդ, որ առնեք ինձ ողորմութիւն վասն Աստուծոյ ու վասն ձեր հոգւոյ յամէն տարի Բ աւր պատարագ, կամ թէ յայլ վանք հանդիպի, կամ ի գեղ, թէ էպիսկոպոսի հանդիպի, կամ վարդապետի կամ զինչ և իցէ մարդոյ, որ ուզէ, որ պահէ սուրբ Աւետարանս, կու դնեմ ի վերայ պարտք Բ աւր պատարագ. որ զայն ինձ ողորմութիւն առնէ, Քրիստոս Աստուած միոյ հարիւրապատիկ ձեզ

---

* Հիշատակագրութիւնները գրված են համաբարբառների խորանների ներքևի ազատ սյունակներում։ Մագաղաթյա ավետարանի գլխավոր հիշատակարանը չկա, բայց 1բ երեսում ռուսերեն, Պետրոս քահանա Պատկանովի ձեռքով (որը ձեռագիրը նվիրել է Կովկասյան գիմնազիային) գրված է, որ այս Աւետարանը գրված է ոմն կրոնավոր Հովհաննիսի կողմից 688 (1239) թ. Ջարափրկիլ վանքում, որը Թուրքերեն վերանվանվել է «Բեշզագիրման» (այսինքն «հինգ ջրաղաց»)։ Ձեռագիրը երկրորդ անգամ կազմվել է 1150 (1701) թ. այդ նույն վանքում։ Մեզ թվում է Պ. Պատկանովը թվականը վերցրել է գրչի այն ժամանակ չկորած հիշատակարանից, իսկ մյուս տվյալները հետագա հիշատակագրություններից, գրված Ղրիմում,

պարգևեսցէ։ Որ կարդա կամ աւրինակէ, աղաչեմ վասն այս սուրբ Աւետարանիս, յիշել հաւատով ի թողութիւն մեղաց, որ ծախէ կամ քերէ զգիրս, կամ կտրէ, անէծք զՈւգաին առցէ, և որ պահէ ու չառնէ զիմ պատարագն, ի Քրիստոսի դատաստանին վճարէ։

Աղաչեմ վասն Աստուծոյ անմեղադիր լերուք վասն պնդելոյս, զի շատ աշխատութիւն հասաւ յիս, ապա կարացի ի կապ բերել։ Աղաչեմ անմոռաց յիշել, այլ ինձ յիշատակչուն [իմ] քան զայս սուրբ Աւետարանս և ձեր սուրբ աղաւթքն, և զՔրիստոս որ մեզ և յիշողացդ ողորմեսցի ամէն։ Զմեղաւոր ծառայս Աստուծոյ Յոհան աբեղա յիշեսշիք և Աստուած զձեզ, ամէն։

171

ՅԱՂԱԳՍ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ, ԳՐԻԳՈՐԻ ՆԻՒՍԱՑԻՈՅ ԵՒ ՍՏՈՐՈԳՈՒԹԻՒՆՔ ԱՐԻՍՏՈՏԵԼԻ

Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 949 (1244 թ.)

Գրիչ՝ [Ստեփանո՞ս]*

197ա Ով պատուական և սուրբ կրաւնաւոր Ռստակէ զսակաւ գիրս ընկալ և զփանաք գրիչս յիշեսշիր ի մաքրափայլ յաղաւթս քո, և Աստուած վայելել տացէ մաքուր անձինդ։

Գրեցաւ ի թ[ո]ւ[ին] ՌՁԸ (1239)։

172

ԱՒԵՏԱՐԱՆ

Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 935—938

Գրիչ՝ Վարդան Խաչենեցի
Վայր՝ Հռոմ

Գրեցաւ սա և աւարտեցաւ ձեռամբ մեղապարտ Խաչենեցի Վարդան աբեղայիս, ի ՌՁԸ (1239) թուաբերութեան Հայկազեան տումարիս, ի տիեզերական մայրաքաղաքն Հռոմ, ընդ հովանեաւ սուրբ առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի և քրիստոսեան սուրբ պատկերին, զոր Դաստառակ ասի, ի Հանգստարանիս Հայոց, ի դռան սրբոյ մաւրս լուսոյ Սանթա Մարէ, ի միոջ միեղէն եղբայրութեանս, որք վասն սիրոյն Քրիստոսի և սրբոց առաքելոց և վասն յուսոյն արքայութեան յանձին ունեն զկամաւոր աղքատու-

* Ձեռագիրը 1244 թ. ստացել է Սմբատ Գունդստաբլը։ Հավանաբար այն սկսվել է ընդօրինակվել Ռստակեսի պատվերով, 1239 թ., իսկ հետո Սմբատ Գունդստաբլը շարունակել է տվել։ 325բ-ի ստորին լուսանցքում նույն գրչի ձեռքով գրված է հետևյալ հիշատակագրությունը, քաղված թերևս գաղափար օրինակից. «Գրեալ է սուրբ հայրապետն Գրիգորիոս, թէ յունվար ամիս որ եղաւ թիւ ՈԻԲ (1173), այնչափ ձին եբեկ և պաղեց, որ ընդ Եփրատ Կլայիս դիպան, և յամէն տեղի ի վերայ անցանէին, «և զարդ երկրի անցաւ՝ թռչուն և չորքոտանիք և ձուկն» («Յիշատակարանք» էջ 426)։

թիւն։ Որոյ է առաջնորդ տանս և եղբարցս **Սարգիս Մարմաշիճեցիճ**, *զորս յիշեսցէ Քրիստոս Աստուած զամենեսեան, որք կան յայս հանգստեանս, զմեծ և զփոքր, զառաջնորդն և զայլս ամենեսեան, և նոցունց սուրբ աղաւթիւք և այս սբբոցս առաքելոցս ողորմեսցի Քրիստոս Աստուած Վաճակաճին և իւր սրախողխող ննջեցելոյն, որ ոչ ընկալաւ զնոսա գերեզման։*

173

ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Երևան 912 (1779 թ.)

Գրիչ՝ **Գրիգորիս**

Յիշատակարան սուրբ թղթոցս

33բ *Ես* **Գրիգորիս** *մեղապարտ գրիչ և յետին ծառայ Քրիստոսի, գտի զսուրբ Թուղթս սուրբ տեառն Ներսիսի, գրեալ գրով սուրբ ձեռին իւրոյ, զկնի կէ (67)* ամի վերափոխման իւրոյ յաստեացս, և ի հնացեալ և ի տեղուջէ տեղ հատեալ թղթոցն, մեծաւ աշխատութեամբ և ջանիւ յերիւրեցի և նորոգապէս ի մատենիս գրեցի, ղի մի այնպիսւոյ սրբոյն Աստուծոյ բան ի վայր անկեալ մոռասցի և աղաւաղեալ կորիցէ, այլ որպէս զամբար լուսափայլ պայծառացեալ ծաղկեսցի, յեկեղեցիս Հայաստանեայց անջինջ յիշատակաւ։*

*Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք կամ ընդօրինակէք, յիշեսջիք զմեզ աղօթիւք ի Քրիստոս և թողութիւն յանցանաց հայցեսջիք ի նմանէ, որ և ձեզ յիշեսցէ Քրիստոս յիւր անսպառ բարիսն և ընդ սուրբս իւր դասեսցէ, ամէն**։*

---

* *Շնորհալին մահացել է 1173 թ., ուստի այս ձեռագիրն ընդօրինակվել է 1239 թ. (1173+67)։*

** *Հիշատակարանը մեզ է հասել Թովմասի՝ 1302 թ. կատարած ընդօրինակությամբ, որն սկսվում է այսպես. «Ես նուաստ յամենայնի և յետին ծառայ ծառայից Քրիստոսի Թովմաս մեղապարտ և մեղսասէր և անիմաստ գրիչ, ըստ ըղձից փափագման ոգւոյ իմոյ գտի զընդհանրական Թուղթս տեառն Ներսիսի Հայոց կաթողիկոսի և գրեցի զսա ի լաւ և յընտիր օրինակէ, ի մեծիմաստ և հանճարեղ գրչէ Գրիգորէ, որ ի Հառամ կայէնն, որև նա գրեալ էր այսպես. (ինչպես վերևում)։ Հիշատակարանի վերջում նոր ընդօրինակողը դրոմ է. «Իսկ այժմ վերստին գաղափարեցաւ եղև Սահմանոս քարտուղարէ Կոստանդնուպոլսեցւոյ, ընդ հովանեաւ սուրբ Հիշատակատեաց եկեղեցւոյ, որ ի Կոստանդնուպոլիս, յամի Տեառն 1779, նամսեանն հոկտեմբերի 29»։*

174

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 218

Գրիչ՝ Վանական
Վայր՝ Հռոմ

ա

264բ Փառք համագո և միասնական Սուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Յամի վեց հարիւրորդի ութսներորդի իններորդի (1240) թուականի աւարտագործեալ եղև սուրբ և կենսատու Աւետարանս Քրիստոսի Յիսուսի Աստուծոյն մերոյ, զոր ընկալեալ յաստուածալուր վարդապետութենէ երկնաւոր հովուապետին սրբոց աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու և սրբոյն Յովանիսի աստուածաբանի, յառաջացեալքն յանա-
265ա պական և յանմահարար գետոյն չորից յորդախաղաց վտակաց յարբումն|| և ի զովացումն ծարաւի անձանց և յաւրինեալ զսա թագ արքայական, եգին ի գլուխ, մաւրս մերոյ կաթողիկէ սուրբ եկեղեցոյ, ի պարծանս հանուրց հաւատացելոց և ի փառս փառաց թագաւորին։ Զոր իմ՝ բազմամեղի և անարժան քահանաի Սաեփանոս Համշինեցի, տկար մարմնով և հոգւովս ևս առաւել, ստացա զսա յիշատակ ինձ և զանձ անկողոպտելի, և փրկանս մեղուցեալ հոգւոյն։ Ընդ նմին և ծնողաց իմոց՝ Սոսթանէս քահանայի հաւր իմոց, և մաւր իմոյ, և պապուն իմոյ Միխել քահանաի, և եղբաւր իմոյ Գէորգա քահանաի, և Ճուան նաւտարին, և այլ արեան մերձակաից։

Արդ, ես Սաեփանոս թափուրս ի գործոց բարեաց և լրացեալս ամենայն յանցանաւք, զերեսս ի մայրն եդեալ աղերսահայց մաղթանաւք խնդրեմ յամենեցունց, զի ո ոք և իցէ, որ ժառանգէ զսա յետ ելից մերոց
265բ յաստեացս, սրտի մտաւք կարեկցաբար իբրև եղբաւր սիր||ելոյ աղաւթից և յիշման արժանի արասջիք և թողութիւն մեղաց խնդրեցէք առաջի մեղսաքաւիչ սուրբ պատարագին՝ Սաեփանոսի և վերադրելոցն ի սմա։ Յիշեսջիք և զԱւետիս փիլիսոփայն, որ յաւժար կամաւք ետ զաւրինակն գովելի, տացէ նմա Քրիստոս մասն ի սուրբ առաքելոցն, և զերկնից արքայութիւնն, և գրէ զնա ի գիր վերնատունին Սիովնի։

Եւ արդ, գրեցաւ սա ի յակնագիտակ և ի հռչակաւոր մայրաքաղաքս Հռոմ, ընդ հովանեաւ սուրբ առաքելոցս Պետրոսի և Պաւղոսի, ի Հանգրստարանի տանս Հայոց, ի դրանս սուրբ Աստուածածնիս, ձեռամբ

տկար և մեղապարտի միոյ Վանականս կոչեցելոյ։ Զոր այր մի աստուածասէր և բարեպաշտաւն ի Հոռմա, անուն Յակոբ, և ամուսին իւր եւս բարեպաշտ և հոգևոր տաւին ալրըստաւրէ զպարէնիկն ի պէտս կերակրոյ
266ա վատշուեր մարմնոյս։ Արդ, այն որ առատն է ի տուրս||պարգևաց, տացէ նոցա վարձս ըստ վաստակացն, զոր յիս են արարեալ, ընդ միոյն հազարապատիկ, և զերկնից արքայութիւնն պատրաստէ ի հանդերձեալ երկրին։։

Ողորմեսցի Քրիստոս Աստուած այս կամաւոր աղքատացս, որ կան աստ բազում տառապանաւք, արանց և կանանց, առաջնորդի տեղոյս Սարգսի և այլ միեղէն եղբայրութեանս, և մասնակից արասցէ բարեվաստակ մշակացն, նա և գրողի սորա Վանականին և իւր ծնողացն և նոցա, որ սրով ելին յաշխարհէս։

Արդ, ըստ իմում կարողութեան արտասանեցի զսա, որչափ կարացի, և դու ընկալ զսա, ո՛վ մարդ Աստուծոյ և պատուական եղբայր, և զեղկելիս յիշեա ի Տէր, և դու լիջիր յիշեալ ի հաճոյսն Աստուծոյ։

Բ

126ա Քրիստոս Աստուած, ողորմեա Սեփաննոսի քահանայի ստացողի սորա։ Ողորմեա Քրիստոս Աստուած և այս մաւրս հոգևորի, որ բազում աշխատութեամբ ի ժամ դրելոյ սորա սպասաւորեաց ինձ յաւժար կամաւք։

Գ

205բ Ո՛վ բան, և Հայր, եւ Հոգի Սուրբ, ողորմեա Սեփանոսի քահանայի ստացողի սրբոյ Աւետարանիս և իւր ծնողացն, եւ անպիտան գրողի սորա Վանականի և իւրայնոցն։

Դ

Կազմող՝

78բ Սեփաննոս արգելական և երջանիկ ճգնաւոր Քրիստոսի, ստացաւ զսուրբ Աւետարանս յիւր աղքատութենէ, ի վայելումն կենաց և ի յիշատակ հոգւոյ և ծնողաց իւրոց և յետ մահուան իւրոյ յով անկանի իւր պատարագ ամէ Կ(60)* աւր։

Ստացողի սորա և կազմողի ողորմեսցի Տէր Յիսուս Քրիստոս։

Ե

Ծաղկող՝ Յովանիսիկ

267ա Ընդ նմին զԹափուրս ի բարեաց զանպիտանս և զախմարս զՅովանիսիկս աղաչեմ յիշել ի Քրիստոս և դուք յիշեալ լիջիք ի միւսանգամ գալուստն, և ծաղկիս անմեղադիր լինել, զի կար մեր այս է։

* «Կ․ար» գրված է այլ գրով, բայց նույն թանաքով։

175

ՎԱՐՔ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

Սոփերք, ԺԴ, էջ 82—83

Հեղինակ՝

Ի թուականութեանս Հայոց վեցհարեւր ութսուն և ինն (1240) զկնի եւթանասուն եւ եւթն ամի վերափոխման սրբոյ հայրապետին* **Ներսէսի**, *ի հրամանէ և ի յորդորմանէ սուրբ վարդապետին* **Յովհաննու**, *շարադրեցի զՊատմութիւնս սուրբ հայապետին Ներսիսի և նախնեացն՝ ճշմարտաճառ և անսուտ պատմութեամբ, ի ժամանակս քրիստոսապսակեալ բարեպաշտ թագաւորին* **Հեթումոյ** *յաշխարհիս* **Կիլիկեցւոյ**, *որ երորդ է ի Լեռնէ բարեպաշտ առաջնոյ արքայէ այսմ նահանգի։*

176

ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ՄԽԻԹԱՐԱՅ ԳՈՇԻ

Ջմմաո 180, Քեշիշյան, Յուցակ, էջ 426

Գրիչ՝

Տէր Յիսուս ի վայելումն տացէ տեառն **Վրթանիսի** *արհիեպիսկոպոսի եւ հոգեւոր վերադիտողի, եւ բազմաց բարիս շնորհողի, եւ մոլորելոց դարձուցչի եւ մեղուցեալոց մխիթարչի։*

ՈՉՔ. (1240).

---

* Ն. Շնորհալին մահացել է 1173 թ., ուստի 1240 թ. նրա մահվանից անցել է ոչ թե «եւթանասուն եւ եւթն», այլ «վաթսուն և եւթն» տարի։

177

ԳԱՆՁԱՐԱՆ, ՏԱՂԱՐԱՆ

Փարիզ, 79(50) Երևան, մանրաժապավեն № 453

Գրիչ՝ Յոհաննէս
Վայր՝ Դրազարկ

ա

402 Կատարեցաւ Երգարանս տաղաց ձեռամբ Յոհաննիսի յետին եւ յոգնամեղի, ի թուականիս Հայոց ՈՁՂ (1241), ի վանս մեծ ոսկտին և հրեշակաւոր անապատս Դրազարկ կոչեցեալ, ի թագաւորութեանն Հեթմոյ որդոյ Կոստանդեա, և է* առաջնորդ ուխտիս մեծն Բասիլիոս, եղբայր թագաւորին Հեթմոյ, և դիւրապետ և աթոռակալ իշխանութեան մեծ եւ հռչակաւոր դղեկին Հռոմկլայիճ՝ տէր Կոստանդին արժանաւոր այնմ աշտիճանի։ Եւ իմ յանձին կալեալ և հետևեալ երաժշտական արհեստի, և ոչ ունելով տեղի և շնորհք, որպես արժա||ն է, այլ բազում ջանիւ և աշխատութեամբ հասեալ ի ծայր տառիս, ի կարի դժուարահամբոյր եղանակես կերդիս, և այլ ապա տառապանաւք զգրեանս ի կապ ածի, վասն զի նախ գրեցի ուսմամբ, և զենի՝ գրելոց։

Եւ ապա ժամանեալ յերկիրն իմ ի սընտեան տեղ, և վասն զի ոչ ունելով տեղի և նախանձ վարժմանն այսորիկ, զի կարի մարդիկ յետս կացին ի յուս[ու]մնասիրութենն և յաստուածասիրութենն թոլացեալ ի վայր մեղկեցան ի սեր երկրային ինչ իրաց անցաւորաց, որ ոչ նա, ըստ Տեառն բանի, թե ցեց ուտե և ուտիչ ապականե։

Եւ իմ տեսանելով զայն և կարի խոր վշտացեալ ընդ բազում աշխատանս իմ, զի տեղոջն յայնմիկ կարի անարգ եր և յոռի, և ոչ գտի տեղի սերման, վասն զի ապառաժուտ էր վայրն։ Եւ իմ կանխեալ վերը(ս)տին գոլով ի տեղի իմաստասիրաց և ուսումնասիրաց յերկիր Կիլիկոյ, որոյ Քրիստոս պահապան կանգնի և ինքն պատսպարե աջով իւրով, որպես յայն ժամ զնսրահել, և ինքն եղիցի մարտակից ընդդեմ հակառ[ակ]աց իւրոց։ Եւ եղեալ իմ ճանապարհ և պատահեաց յազդմանե չարին և գողացան զիմ գրկունքն։ Եւ ապա եկեալ և ջանիւ ձեռնարկեալ և գրել շտապով։ Եւ ապա իբրև աւարտեցաւ, այլ հոգս ունելով վասն զի ոչ ունելով ոչ զանձարան, ոչ տաղարան, և ելեալ ի խնդիր աւրինակի հռետորական, և

---

* Ամենուր է-ի փոխարեն ե է գրում։

ոչ գտանելով, և ապա գտեալ զաղեկ աւրինակ յոյժ գեղեցիկ, զառն միոյ յերաժշտապետի Յուսեփ կոչեալ, և կարի հասու ամենայն իմաստից երաժըշտից մինչև ի բաւանդակն, որ յատուրս ոչ գտանի հանգոյն։

Եւ արդ արարեալ սկիզբն Տաղարանիս և աւարտելով աւգնականութեամբ Աստուծոյ և Սուրբ Աստուածածնին, և այժմ աղաչեմ զամենեսեան ում և հանդիպի, անմոռաց ունելով ի մտի և թողութիւն խնդրել յանցանաց իմոց բազմաց, ինձ և ծնողաց իմոց և եղբարց իմոց կենդանեաց և ննջե-ց[ել]ոց, և քեռ իմոյ՝ ի Քրիստոսէ Աստուծոյ, և զԳրիգոր գրագիր, որ աւժընդակն եղև և գրեաց զՔարոզնին յիշեսչիք ի Տէր, և զՅուսեփ երաժըշտապետ, որ զաւրինակն անձանձիր շնորհեաց, յիշեսչիք ի Քրիստոս, և զվասիլ փեսայ իմ, և զիմ հաւրաղբայ[ր]ն՝ զԲարսեղն, և զՍտեփաննոս, և զՄխիթոցն, և զնիկավ, և զիմ հայրիկ հարազատիկ, և զմաւրմոխան իմ, և զամենեսեան յիշեսչիք ի Քրիստոս, և նա իւր քաղցր կամաւքն գթայ ի յիշեցեալքն և ի յիշողքդ, և նմա փառք յամենայն արարածոց իւրոց ի վերնոց և ի ն[եր]քնոցն, ամեն, ամեն*։

բ

39ա Տէ՛ր, յիշեա զմեղաւք մեռեալ ոգիս քո սուրբ գալստեամբդ։ Վա՛յ կուրացեալ մտաց, վերնագիրն ի մեկ այլ դիհն պիտեր**։

գ

65ա Ո՛վ սուրբ զինաւոր, ի յայնմ ի սոսկալի աւուրն, յորժամ բանք սպառին և գործք թագաւորեն, ես միայն մնամ ունայն ի բարի գործոց, դու լեր բարեխաւս վասն իմ առ Քրիստոս։

դ

75բ Զիս մեղաւք մեռեալ ոգիս և զսրտէ խոցեալ անարժան ծառայ ծառայիցն Աստուծոյ յիշեցէք միով Տէր ողորմայիւ։

ե

99ր Վա՛յ, աղմուկ ելաւ, խալտեցաւ։

զ

94բ Վա՛յ լալ ապա եղաւ,
Նա միտք քո շփոթեցաւ։

---

* Ձեռագրի սկզբի մասը ծԳ պրից է, բայց ուրիշ գրչի գործ, որի անունը չի պահպանվել, այլ միայն ներքոհիշյալ հիշատակագրությունները։ Ձեռագրի երկրորդ մասը եղել է Դանձարան և Տաղարան։ Գրիգորի գրած Դանձարանը («Քարոզնին») այժմ չկա, ձեռագիրն սկսվում է «բ» պրակից, որը Հովհաննեսի գրած Տաղարանն է։ Հետագայում ձեռագրին միացվել է մի այլ Դանձարան, որը թյուրիմացաբար համարվել է տաղարանին ժամանակակից։

** Վերնագիրը գրել է թերթի վերջում, գանձը՝ մյուս էջում։

Է

136բ Ո՛հ զիս զանարժանս և մեղաւք մեռեալ ոգիս, և զսրտէ խոցեալս, յիշեցէք միով Տէր ողորմայիւ, և Աստուած զձեզ յիշէ ի բարիս։

Ը

164բ Ո՛վ եղբարք, այս գանձիս աւրինակն խիստ անարհետ էր, թէ ծուռ լինիցի մի մեղադրէք։

178

ԱԻԵՏԱՐԱՆ

Սրվանձեան, Թորոս Աղբար, Բ, էջ 440—441

Գրիչ՝ Թորոս
Վայր՝ Հռոմ

Աստուածասէր եւ պատուական քահանայս Աւետիս ստացաւ զսա իւր քրտնածին աշխատանաց, ի վայելումն կենաց եւ յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնողացն, եւ ի բարեխաւսութիւն առ Աստուած,... ՈՂԱ (1242) ի մեծ եւ ի հռչակաւոր քաղաքս Հռոմ, ի դուռն գլխաւորաց սրբոց առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի՝ մեծ լուսաւորչաց, եւ Սուրբ Աստուածածնիս, ի Տանս Հայոց Հանգստարանի, ձեռամբ Թորոս ամենասխալ եւ բազմաբիծ դատապարտի, ի հայրապետութեան Ստեփանոսի Ղազարուվանցւոյ, որոյ ողորմեսցի Տէր Աստուած... եւ համաշունչ եղբարց մերոց սուրբ քահանայից՝ Յովհաննիսի, եւ Վարդանայ, եւ Խաչատուր, եւ Յովհաննիսի, որ կամաւոր յաւժարութեամբ ընկալան զմեզ, ողորմեսցի Քրիստոս, եւ հանգուսցէ զհուրեանց հոգին,... եւ հայր Պետուկիս Մշեցուն,... եւ Գրիգորի Կաղսեցւոյ ողորմեսցի Տէր Աստուած,... եւ որ յայսմ տանս հանգուցեալ են սուրբ հարք եւ եղբարք... եւ որ ի սմա բնակեալք են պանդխտութեամբ,... եւ աղաւթք սոցա ի վերա ամենայն աշխարհին եւ մեր եղիցի հանապազ...

Յիշեցէք զստացող սորա զՍիմէովն... եւ զԹորոս անպիտան եւ փցուն գրիչ...

179

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 3528

Գրիչ՝ Վարդան

ա

Փառք ամենասուրբ երրորդութեանն Հաւր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն, ամէն։

221բ Գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ ումեմն մեղաւորի Վարդանա, յուղորդ և ընտիր աւրինակէ, թեպետ և գծողս, և գիրս, ե նիւթս վատ է, ի թուականիս Հայոց ՈՂԱ (1242)։

Արդ գրեցաւ սա յանապատիս, ընդ հովանեաւ Սուրբ Կարապետիս և Սուրբ Ստեփանոսիս։ Եւ են ի սմա Բ(2) սուրբ վարդապետք՝ Քրիստոսա-

տուր և Վարդան, և առաջնոյ սուրբ ուխտիս Յուսիկ, և այլ սուրբ եղբարք, որոց անուանքն ի դպրութիւն կենաց, որոց ողորմեսցի տէր Քրիստոս. ամէն։

Ողորմեսցի Տէր Աստուած գծողի սորա, և ծնաւղաց իւրոց, և եղբարց, և որդւոց, և բնաւ զարմից իւրոց, և ամենայն հաւատացելոց, ամէն*։

Բ

Այլ գրով

165բ Քրիստոս Աստուած, յորժամ գաս հայրական փառաւք ի նորոգեալ ղերկիր, ողորմայ Թուխեռոյն** հոգոյն։ Սուրբ Աւետարանս յիշատակէ հոգոյ իւրոյ, ամէն։

---

* Ղուկասի Աւետարանի գլխագարդը հետաքրքրական է. նկարված է եղ Ա. սյունակի վերեվում, և մի հուշկապարիկ և արծիվ՝ ձուկը կտուցով և ոտքերով բռնած։

** 173բ էջում կրկնվում է նույն հիշատակագրությունը, միայն անվան փոխարեն գրված է «Պիկնոշն», իսկ 105բ-ում՝ «Ֆրիտոնի»։

180

ԴԱՒԻԹ ԱՆՅԱՂԹԻ ՍԱՀՄԱՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Երևան 1747

Ստացող՝ **Պետրոս**
Վայր՝ **Հաղբատ**

ա

121ա Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

ԶԱհմանաց զգիրս, զոր արարեալ է մեծ փիլիսոփայն Դաւիթ ընդդէմ հակառակողացն, որք կամեցան բառնալ զիմաստասիրութիւնն ակա-
121բ դիմեանցն Պիճռոնի և ճեմականաց, խաղաղացոյց զնոսա ի խոովութէնէն և ասաց էթէ Գոյ իմաստասիրութիւն և է՛, և ճշմարիտ է, և զաւրինակս առ մեզ հաստատեաց Հայաստանեայս; Որոց ես ծեր ոմն **Պետրոս** սպասաւոր Սուրբ Նշանիս Հաղբատայ բաղձանաւք սիրոյ եւտու գրել Յոհաննիսի կրաւնա[ւոր] քահանայի, իմով արդե[ամբք]՝ առ ի յուսումն մակացողաց։

Արդ, որք աւգտիք ի սմանէ, յիշեցէք ի սրբամատոյց յաղաւթս ձեր զիս զմեղաւորս **Պետրոս**, և Աստուած զձեզ յիշեսցէ ի բարի, և ի կատարման սորա՝ ասացէք Ջերանի ում թողութիւն եղև մեղաց և զՔրիստոս որդի Աստուծոյ։

122ա Գրեցաւ գիրքս ընդ հովանեաւ Սուրբ Նշանիս Հաղբատայ, || ի թուիս ՈՂԲ (1243), և աւանդեցաւ սմա։ Մի ոք իշխեսցէ հանել զսա աստի։

բ

Կազմեցաւ և ձեռամբ իմով **Պետրոսի***։

181

ՎԱՍՆ ԴԺՈԽՈՑՆ ԵՒ ԱՆՔՈՒՆ ՈՐԴՈՑՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՅԳԵԿՑԻՈՅ

Ձմմտ. 430 (1323 թ.), Ակինյան, Ոսկյան, Յուցակ էջ 18—19

Հեղինակ **Վարդան**

100բ Զոր մեղաւորս **Վարդան** յաստուածաշունչ գրոց յարմարեալ գրեցի Աստուծով յաղաչելոյ եւ ի խնդրոյ շնորհազարդ քահանային Թադէոսի։

* Այդ կազմը պահպանվել է առ այսօր։ Բարակ տախտակ է, պարզ զարդարված կաշվով պատած։

Ո՛վ քահանայք և ժողովուրդք Աստուծոյ, գիտացիք և ի միտս առէք զայս... Գրեցաւ սա ի թուիս ՈՂԲ (1243)։

---

* Այս երկը դրվել է 1229 թ.։ Նրա 1234 թ. հեղինակային ընդօրինակության մասին վկայություն է պահպանվել Երուսաղեմի № 1426 ձեռագրում (տե՛ս աստ, այդ թվաշարքում), իսկ 1243 թ. մասին՝ այստեղ։ Վարդան Այգեկցին իր գործերը արտագրելով բազմացնելու սովորություն ուներ։

182

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երեան 7347 (1166 թ.)

Նվիրող՝ Գրիգոր որդի Հասանա
Վայր՝ խաղայի վանք

342ա Բա[րկութիւն Աստուծոյ ե]հաս [մեզ եւ ծնո]զաց [մ]երոց և քրիս-[տոն]էից [ի]և աղգէս Նետողաց յարեւելից, [որ] Տա[տ]ար կոչին [եւ զ]արծաթն սիրեն՝ եւ ելեալք [աս]պատակաւ յաշխարհն Պարսից զբազում քաղաքս տապալեալ, եւ բնաշինչ արարեալ զթագաւորութիւնն Պարսից, եւ զայլ բազում գաւառս, զորս ոչ կարեմք գրով արկանեալ զազետս տարեկուսի կործմանման հանուրց աշխարհի, որ եւ եհաս մինչեւ յաշխարհս Հայոց եւ Աղուանից։ Եւ առեալ զանթիւ գաւառս եւ զքաղաքս եւ զվանորայս, ի տուր սուսերի մատնեցին զազգն քրիստոնէից, զիշխանսն մեծամեծս, եւ զռամիկ ժողովրդականս եւ զհրատագնաց տարս եւ ըզսպասաւորս սրբոյ սեղանոյն Աստուծոյ զդասս քահանայական, զմիաբանակեցսն եւ զճգնաւորս, տապալեալ եւ քանդեալ զեկեղեցիսս և ըզսպասս սրբութեան, եւ զնշանս տէրունական յաւար առեալ անաւրինացն, ի գերութեան վարել առհասարակ։ Եւ այս վասն զանազան մեղաց մերոց։

Եւ ապա սակաւիկ մի թողացուցեալ նահանգիս մերոյ եւ նուաճեալ ի ծառայութեան ընդհանց զիշխանս, եւ զհեծելազարս ընդ ինքեանս տանէին ուր եւ երթային, ընդ որս եւ գրաւեցաւ ես՝ Գրիգոր, որդի Հասանայ եւ Դոփին, քոռերորդի սպարապետացն Հայոց և Վրաց Զաքարիայի եւ Իւանէի։ Եւ անկեալ ընդ նոցին իշխանութիւն, որ եւ եհաս մեզ գնալ զաշխարհս Հայոց եւ Հոռոմոց, որ էր [տի]րապետեալ ազգն Պարսից, ասպատակեալ աւար հարկանէին զքաղաքս եւ զշինանիւտ գեղորայս եւ զվանորայս։

Մեք տեսանելով զանցս աղետից Պար[սից սահ]մանաց աւերման
342բ այնմ նահանգին, և՛ սրոյ ճարակ տային զամենեսեան||եւ մեր կական բարձեալ դողայ[աք տազն]ապէն զկործ[ան]մանն այնմ եւ ոչ էր /// անին զինչ ձեռնահաս գոլոյ մեզ աւգնել քրիստոնէից, քանզի ընդ նոցին տէրութեան էաք, այլ սակաւուց ոմանց, զոր գնելով ի նոցանէ, և զոր ձեռաւք մերովք թաքուցանելով, այլ և ըզսպաս սրբութեան, զնշանս տէրունական և զտառս աստուածային ոչ ձեռաւք մերաւք առեալ յաւարի,

այլ գնեալ ի նոցանէ, բերաք ի սեփական տէրութիւնս մեր՝ զծաղկալից բուրաստան զԱւագ Տաւնականն եւ զմիւս այլ Տաւնական, զԺողովոց Յոհանն եւ զԱւետարանն, եւ զաջն սրբոյն Ստեփաննոսի, զոր ի քաղաքէն Կանու բերաք եւ տուաք ի բնիկ հայրենական սուրբ ուխտս մեր Խաչայի վանիցս։

Իսկ ի միւսում ամի այլ եւս գնալով ընդ նոսա, հասաք մինչեւ ի մայրաքաղաքն Կեսարիայ՝ Կապադովկացւոց նահանգին, եւ անտի առեալ զԱւետարանս պարոնն իմ Աւագն եւ ետ ինձ, եւ իմ խնդալից եղեալ եւ բերկրեալ սրտիւ, զի ետ ինձ Տէր զիւր զաւետաբեր քարոզն, եւ բերել ետու ի նախասացեալ սուրբ ուխտս։

Արդ, որք [առ]թիք, ընթեռնոյք եւ աւգտիք յաստուածաշունչ տառիցս եւ ի սուրբ վարդապետութենէս կենարարի մերոյ, յիշեցէք առաջի զենմանն Քրիստոսի զիս՝ զԳրիգոր, եւ զամուսին իմ զՄամխան, եւ զհարազատ որդիքս իմ զՀասան, զՍե[ւադա եւ] զՅոհաննէս, եւ որք յիշէք, յիշեալ լիջիք ի Քրիստոսէ։

Եւ այս գործեցաւ ի թուականութեանն Հայոց ՈՂԳ (1244)*։

183

ՅԱՂԱԳՍ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՑ ԳՐԻԳՈՐԻ ՆԻՒՍԱՑԻՈՑ ՍՏՈՐՈԳՈՒԹԻՒՆՔ ԱՐԻՍՏՈՏԵԼԻ

Հովսեփյան, «Յիշատակարանք», էջ 951—956, Ալիշան, «Հայապատում», էջ 481—482

Գրիչ՝ Ստեփանոս
Վայր՝ Ադանա

ա

344բ Փառք երից անբաւից միոյ և միայնոյ անսկզբնականի երրեակի կատարելութեանն և տ[է]րութեան Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Գրեցաւ Գիրս Կազմութեան հանճարայեղծ բանի՝ Գրիգորի աստուածիմաստ անձին, ձեռամբ Ստեփանոսի նուաստի՝ անարուեստ գրչի և մեղապարտ անձին, ի խնդրոյ մեծ սպարապետին Հայոց Սմբատ՝ որդւոյ Կոստանդեա մեծ աթոռապահին Հայոց և եղբաւր թագաւորին Հայոց Հեթմոյ, որ և ստացաւ զսա ի յաղագս արդեանց իւրոց՝ ի վայելումն իւր և իւրոցն, և ի յիշատակ հոգւոյ իւրոյ յետ աստեացս։

Գրեցաւ ի թուականութեանս ՈՂԳ (1244), ի թագաւորութեանն Հայոց Հեթմո, և յիշխանութեանն Հայոց իշխանաց իշխանին հոգելից ծերոյն Կոստանդեա, և ի հայրապետութեանն տեառն Կոստանդեա: Արդ, գրեցաւ սա ի քաղաքս, որ կոչի Ադանա, ընդ հովանեաւ սուրբ և յառաջ

* Հիշատակարանը խիստ մաշված է։ Տեղ-տեղ վրայից անցել են անորակ թանաքով, որը տարածվելով անընթեռնելի է դարձրել գիրը։ Ձեռագրի մագաղաթը վերանորոգող Լ. Ազարեկյանի ջանքերով մաքրելուց և մշակելուց հետո, գրեթե ամբողջությամբ հնարավոր եղավ վերծանել հիշատակարանը։

զաւրաւարին Թէոդոսի։ Արդ աղաչեմք զձեզ, ով սուրբ ընթերցող գրոյս, չմեղադրէք խոշորութեան գրոյս և սխալանացս, որ ի սմա եղեալ են. թողութիւն հայցեցէք ստացողի գրոյս և գրողի սորա, ամէն։

Բ

198բ Զստացող բազմահանճար և նրբաբան իմաստիցս՝ զՍմբատ թագաւորեղբայրս և զգունդուստապլս Հայոց՝ յիշեսջիք յիշատակ բարիս, ո՜վ մակացուք իմաստութեան, և Աստուած յիշողացդ ի բարիս տրիտուր բարեաց հարիւրապատիկ արասցէ, ամէն։

Գ

237ա Զմեղապարտս և զանպիտան գրիչս՝ զՍտեփանէ նուաստ յիշեսջիք ի Քրիստոս՝ աղաչեմ զձեզ, ո՜վ ընթերցողք իմաստատիրական բանիս, և Աստուած զձեզ յիշէ յիւր միւսանգամ գալուստն։

Դ

Ստացող՝ Սմբատ Գունդստապլ

91ա Զմեղաւոր հողս՝ ըզՍմբատ Հայոց ասպարապետս, յիշեշջիք ի Քրիստոս, և ինք[ն] յիշողացդ ողորմեսցի, ամէն։

Ե

211բ Ըզսակաւ առոգելս իմ բաւ է, անմեղադրութեամբ ընգալարուք զհանգէտէր գրաւղի և անհասկանալի է գրել*։

Զ

223բ Դաւանիմ ճշմարտապէս զորպիսութիւնք հաւգոյն ըստ ճշգրիտ ելոյ բանից սուրբ վարդապետիս և զայլսն խոտան ի բաց ընգեցի եւ տրուպս Սմբատ Գուն[դ]ուստապլ և աղաչեմ, որ լավ հասկանայք զբանս։

Է

334բ Փառքն է փառաւորին**
Եւ զաւրութիւն է հզաւրին,
Կարաւղութիւն է կարաւղին
Եւ քաջութիւնն՝ անյաղթ քաջին,
Ստեղծվածք գործ գործաւորին,
Հանճար անյաղթ վարդապետին։

---

* Ստորին լուսանցքում ուրիշի կողմից գրված է. «Ո՜վ ամենավսեմական ոգի րաբունի Վահ[ամ], յիշեա, զըսպարապետն, որ զկարմիր գիրն է գրել և տեղ չկայր որ սխալն գրէաք»։

** Գրված է Ա հիշատակարանից հետո։

Եւ որք ի գրոյս ուսանել կամին,
Նա հասկնալ ըղորդ բանին,
Եւ զարմանալ ամենեւին
Ընդ գործարան հակառակին։
Եւ փառատր առնել ի սմին,
Զնախախնամողն ամենայնին։
Զորս աղաչեմ զամենեսին՝
Խնդրել զյանցանսն Սմբատին՝
Հայոց Մեծաց Դուն[դ]ուսատպլին։

Ը

349—50 Ո՛վ հանճարեղք իմաստ բանիս*,
Եւ մակացուք յայս արուեստիս,
Մտադրութեամբ միտ դիք բանիս՝
Անյաղթ գիտուն վարդապետիս,
Որ զընդհանուրն առեալ գոյիս,
Տընեալ բաշխեաց մարդկան ազգիս՝
Իբր զընթանուր զկենդանիս,
Բաժնեաց ի ձիս և ի ջորիս,
Զոր համանուամբքն առնէ տեղիս,
Իսկ բաշխելով զանուանս գոյիս
Միաւորէ դարձեալ ի միս
Եւ յարանուամբք գոլ նըմանիս,
Որպէս յարի ազդէն արիս
Կամ ի միոյն նոյնն իսկ զարմիս։
Արդ ո՞նց պատմեմ ղոճ ղբանիս,
Երբ կարի խիստ կարճ է տեղիս,
Բայց թէ հազար կարճեալ բանիս
Հարկըն կոչէ զիս յայս տեղիս,
Յիշել ըզմայրն ամէն գոյիս,
Եւ ըզպատճառ ծնընդականիս՝
Զգոյացութիւնն, որով լինիմք
Եւ գոյանամք ի յաշխարհիս։
Եւ զընկէքին ընկերք սորին,
Որ սա գլուխ է տասնէկիս,
Զորս անուանեաց Արիստոտէլ
Ստորոգութիւնք տասն տեսիս,
Եւ զոր գըրեաց Արիստոտէլ
Նամակ և գիր զարմանալիս
Առ Ալեքսանդր իւր աշակերտ՝

* Ձեռագրի մէջ այս գրված է հետագայում, բազմաթիւ սխալներով, որից և առել է Գ. Հավսեփյանը։ Մենք օգտվել ենք «Հայապատումից» (էջ 481—482), նկատի ունենալ նաև «Քիչատակարանքը»։

Տիեզերակալ երեք կուսից,
Երբ հետացեալ էր ի նմանէ
Առնուլ զչորք կողմ աշխարհիս,
Զորս ընդհանրեաց ի քիչ տեղիս՝
Զգիտութիւնս անճառելիս։
350ա Եւ ժողովեաց ի միասին
Զիմանալիս և ըզգալիս։
Ընթերցէք և զարմացէք,
Որք ի խնդիր լինիք բանիս՝
Զմակագիր Բնութեան ազգիս
Գրիգոր Նիւսեա վարդապետիս,
Զոր ժողովեալ ի մի տեղիս՝
Յարմարեցի ի պատէհիս։
Ես մեզօրս և ողբալիս՝
Տրրուպ զինւորս և եղկելիս՝
Սրմբատ անուն իմ Հայկազնիս՝
Տէր և պարոն Պապեռաւնիս՝
Եղբայր Հեթմոյ թագաւորիս
Եւ սպայապետ Հայոց զբնդիս,
Նոյն և շինող ի բնէ նորոյ
Զանառ դղեակն անմարտելիս,
Որ ըստ իմոյ անուանս եդի՝
Սմբատակլայ քաշ ամրոցիս։
Զորս աղաչեմ զամենեսին,
Որք ընթերցող լինիք գըրիս,
Խնդրել պարգեւս ի Քրիստոսէ՝
Զթողութիւն մեղատրիս,
Եւ պարգեւողն առատաձիր
Տրիտուր բարեաց տացէ բարիս,
Ի հայ ազգիս Քրւականիս
Ի վեցհարիւր իննսուն երրորդիս (1244)։
Գրեցի վատթար ձեռաւս ես
Անշար ըզգիրս յիշատակիս։

Եւ Աստուծոյ մեծին, հզաւրին, անմահին, միայն կարողին, ընդհանուր գոյից արարողին և յետ ճշմարիտ հայրենի տէր յետմնաց մնացողին, զի սուտ և խաբեբայ է ասել այլ ումեք ապրել կամ վայելել կամ ճոխալ ի վայելչութիւնս աշխարհի, բայց միայն ի նմանէ, այլ մահկանացուացս պարտ է ամենայնի խոհակ զմեռանելն և զմեռանիլն ըստ գրոյն և տեսակ[ան]աւն և գործականաւն զարդարել զբարս և զմշտնջենաւորին տոնակից լինել, որում պարգեւողին փառք յաւիտեանս, ամէն։

184

ԹՈՒՂԹ ԳՐԻԳՈՐԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԵՒ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼՒՈՅ

Սրվանձտյան, Թորոս Աղբար, Բ, էջ 332—34, Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 961—962

Ծմբագիր և գրիչ՝ Գրիգորիս
Վայր՝ Սիս

ա

Փառք միայնոյ անծին և ծնելոյն ի նմանէ միոյն և բղխեցելոյն ի նոցունց էութենէ... Ի ժամանակս աստուածասէր և բարեպաշտ տերանց մերոց քրիստոսապսակեալ արքայիս Կիլիկեցւոց *նահանգիս* Հեթմոյ *և քրիստոսասէր թագուհւոյն իւրոյ* Զաբէլի, *ի դառն և յանբարի ժամանակի, յորում անծանաւթ ազգն խուժադուժ, որ կոչին Թաթարք, յելեցն արեւու մինչեւ ի Դամասկոս և ի մեծն* Անտիոք *և մինչեւ յԻկոնիա առին զտիեզերս յաւար և ի գերութիւն ապատակաւ, և անխնայաբար ի սուր սուսերի մաշեն զամենայն ազգս և զազինս, և զայս ոչ եթէ ի միում ամի կամ յերկուս արարին և առնեն, այլ այս ԻԵ (25) ամ է, յորմէ յետ եկին և յաւար առին զտիեզերս և ոչ ոք կարաց կալ ի դիմի նոցա ի գլխաւորաց. քան զի ի Տեառնէ է այս վրէժխնդրութիւն յաղագս պէսպէս չար գնացից մերոց, քան զի մեղաք Տեառն Աստուծոյ մերոյ յամենայն գործս մեր և անաւրինեցաք ըստ ամենայն գնացից մերոց և առ հասարակ ամենեքեան խոտորեցաք և ի միասին անպիտանացաք, ըստ մարգարէին, մանաւանդ որ զառաջնորդական ունին աշտիճան, աւտարացն միանգամայն ի ճշմարտութենէ և ծառայք եղեալ չար տերանց, մամոնայի ասեմ և այլոցն, որ նմին հետեւին, և լռեցին լեզուք նոցա ի խրատոյ և ի յանդիմանութենէ և գրեթէ ամենայն բարեաց հետեւմունք լռեցին յամենեցունց։*

Արդ, ի սոյն այս բազմավրդով ժամանակի, ի ձեռն վերոյ նշանակեալ թագաւորին Հեթմոյ *խորագէտ իմաստութեան և նախահոգակ հանճարեղութեան, մեք մնամք ի խաղաղութեան՝ որպէս կղզի ինչ ի յալեաց մնացեալ յանդորր, զորոյ զկեանս և զթագուհւոյն սրբոյ և աստուածապարգեւ զաւակաց իւրեանց տացէ բազմամեայ կենդանութեամբ եկեղեցւոյ իւրոյ սրբոյ ի հաճոյս կամաց իւրոց։*

Իսկ ես՝ նուաստ և յետին ծառայ ծառայից Քրիստոսի՝ Գրիգորիս *մեղասասէր գրիչ հասեալ ի ծերութիւն և պակասեալ ի լուսոյ, ըստ ըղձից փափագման հոգւոյ իմոյ, աշխատասիրեալ գրեցի զմատեանս՝ բաղձալի ուսումնասիրաց անձանց, ժողովեալ զբազումսն ի մի հաւաքմամբ զսրբոյ և զտիեզերալոյս կաթողիկոսին և զերկրորդ լուսաւորչին Հայաստանեայց՝ զտէր* Ներսիսի *զթուղթսն, զորս բաւեցի փոքր ի շատէ դնել միմեանց առընթեր, զի լիցի պատճառս հոգեւոր զբաւսանաց ինձ, որքան աստուածային կամաւք ի մարմին տաղաւարիմ, և զկնի հրաժարման յաշխարհէս առ երկնաւորսն՝ յիշատակ բարեաց մնալոյ յիմսն ի յայլս։ Վասն որոյ աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ վերծանութեամբ, լսողութեամբ կամ յաւրինակ առնելով, յիշել զմեզ և զծնողսն մեր...։*

Գրեցաւ ի թագաւորական մայրաքաղաքն Սիս, *ի թուականիս Հայոց*

ՈՂԴ (1244), ի կաթողիկոսութեան տեառն Կոստանդեայ, ի փառս Աստուծոյ։

Բ

Տէ՛ր Աստուած ողորմեա Գրիգորիսի գրչի և իմոցն, ամէն*։

185

ԱՒԵՏԱՐԱՆ

Վենետիկ 69, Սարգիսյան, Ցուցակ Ա, էջ 650—652

Գրիչ՝ Կիրակոս
Վայր՝ Հռոմկլա

ա

335ա Փառք քեզ անսահմանս անուն, անզուգական անձնաւորութիւն՝ Հայր և Որդի և Սուրբ Հոգի. յամենայն արարածոց ի բնաւից եղականաց, այժմ և յանզրաւ յաւիտեանս, ամէն։

Շնորհիւ ամենախնամ ողորմութեանն Աստուծոյ՝ յանգ ելեալ աւարտեցաւ աստուածախաւս մատեան կենարարին մերոյ Տեառն և Աստուծոյ, ի լաւ և յընտիր աւրինակէ, յաշխարհամուտ աթոռս Հռոմկլա, ընդ հովանեաւ Սրբոյն Գրիգորի, և Սրբոյ Նշանին Վանկոյ, և այլ բազմահաւաք սրբոցս, որ պաշտին աստ, ի թուականութեանս Հայոց ՈՂԴ (1244), ի յառաջնորդութեանս երջանիկ հովուապետին տեառն Կոստանդեա, և ի թագաւորութեանն Հայոց Հեթմոյ քրիստոսապսակ թագաւորի, ի խնդրոյ աստուածապատիւ սուրբ տեառնս իմոյ ընդհանուրց եկեղեցւոյ գլխոյ սուրբ կաթողիկոսիս, որ յոյժ եռափափագ սիրով հրամայեաց իմում նուաստութեանս գրել զսա, և իմ ըստ կարի շան տարեալ գրեցի և պատուական երանգաւք և յոսկւոյ սրբոյ զարդարեցի զսա՝ յուրախութիւն հարսին եկեղեցւոյ և ի վայելս սուրբ տեառնս իմոյ, և յիշատակ հոգւոյ իւրոյ, լաւ համարելով զսա քան զականս պատուականս, զի յերկրէ նիւթք ի նոյն ունին կորուստ և բան Տեառն մնա յաւիտեան։

Գրեալ ե[ղե]ւ ի դառն և ի խուճապոտ և ի կականման ժամանակի, յորժամ ել ազգն խուժադուժ, որ կոչի Տաթար, և սպառեաց զամենայն հասակ յերկրէ, և մնացեալքս՝ ի յերերս եմք ի յահէ նոցա։ Իսկ աստուածամեծար սուրբ տէրս իմ, որ թեպէտեւ ողբայ անմխիթար զբեկումն ժողովրդեան իւրոյ, սակայն ոչ կասի ի յուսոյ ակնկալութենէ Տեառն, մեծահաւատ լեալ իբրեւ զԱբրահամ յայսմ խռովայեղ ժամանակի՝ ետ գրել զսա յուրախութիւն սրտի իւրոյ։

---

* Ձեռագիրն այժմ գտնվում է Լենինգրադում (ИВ—А—96) որից է սույն հիշատակագրությունը։ Ձեռագրից պահպանվել է միայն երեք պրակ։ 18բ-ում ունի այսպիսի հիշատակագրություն. «Ես՝ ողորմելիս Ստեփանոս կռաամ զիմ լուսազարդ մատեանս ի դամբարան սուրբ Լուսաւորչիս, յիշատակ ինձ և Խաչատուրին և ծնաւղաց մերոց‖(8 տող քերված) և խնամարկաւղքն աւրհնին յԱստուծոյ, և որք աւգտիք ի սմանէ զմ[ե]զ յիշեցէք ի մեղաց թողութիւն, զի և դուք յիշեալ լիջիք ի նոյն ողորմածն Աստուած»։

Արդ, որք վայելէք զսա կամ աւրինակէք, յիշեսջիք սրտի մտաւք զարժանաւոր հովուապետս մեր զտէր Կոստանդին և զծնաւղսն իւր զհանգուցեալսն ի Տէր, և զհարազատ եղբարսն իւր, որք և նոքա երթեալք ի ժողովս անդրանկաց, և զքուերս, զպատուելի քահանայն Աստուծոյ զԳէորգ, և զքրիստոսասէրն Գրիգոր, և զեղբաւրորդիս սուրբ տեառնս՝ զորդիսն Գէորդեա քահանայի՝ զշնորհալից քահանայն և իմաստուն և զհանճարեղն Թորոս, և աստուածաշնորհ պատանեակն իւր զՍահփանոս, զի տացէ սօցա Տէր ժամանակս երկայնս և խաղաղականս։ Յիշեսջիք, աղաչեմ, զեղբարս Թորոսի քահանայի՝ զտարաժամ վախճանեալն ի տէր՝ զտէր Սահփանոս, և զԳրիգոր քահանայ, և զմիւս այլ զեղբաւրորդին սուրբ տեառնս՝ զԳրիգոր, կարգեալ ի դրան Թագաւորին Հեթմոյ, որ և նա փոխեալ ի Տէր։ Աղաչեմ յիշել ղՀիւ զըստ հոգւոյ որդիացեալն սուրբ Տեառնս աւազանին ծնընդեամբ՝ զչքնաղ և զամենավայելուչ պատանին զՀետն՝ զորդի Թագաւորի Հայոց Հեթմոյ, զքրիստոսատէր Թագուհին զՋապել, զի տացէ նոցա տէր Աստուած խաղաղութեամբ Թագաւորել ի վերայ Հայոց ազգին։

Ընդ արժանաւոր յիշատակեցելոցս ի սմա յիշեսջիք զարեան մերձաւորն՝ զառաքելաշնորհ եպիսկոպոսն զտէր Սիմէոն։

Աղաչեմ յոքնամեղ գրիչս Կիւրակոս, որ և անյիշելի անուն, յիշել զեղկելիս և խնդրել Թողութիւն բազմամեղիս և ծնաւղաց իմոց, և առաջ, ի պարգեւս առ հասարակ յիշողացդ և յիշեցելոցս ողորմեսցի, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

բ

103բ Աստուածամեծար սուրբ կաթողիկոսն ամենայն Հայոց՝ զտէր Կոստանդին աղաչեմ յիշել ի Տէր, ո՛վ դասք մաքուր լուսերամից։

գ

162բ Զառ ի Քրիստոսէ կարգեալ հովիւ և գլուխ և առաջնորդ Հայոց ազգին զտէր Կոստանդին՝ զստացող սորա, յիշեսջիք ի Քրիստոս և ծնաւղըս իւր։

186

ՈՏԱՆԱՒՈՐՔ ԵՒ ԹՈՒՂԹՔ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Սրվանձտյան, Թորոս Աղբար, Բ, էջ 385

[Գրեցաւ] թվին ՈՂԴ (1244), ի կաթողիկոսութեան տեառն Կոստանդեայ...

187

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երուսաղեմ 773 (1352 թ.), Ն. Պողարյան, Ցուցակ Գ, էջ 221 (1352 թ.)

149ա Թուղթ Հայոց կաթողիկոսին Կոստանդեայ, զոր գրեաց յաստուածապահ դղեկէն Հռոմկլայէ առ թագաւորն Հեթում, ի մայրաքաղաքն Սիս. պատասխանի թղթոյն որ ի պապէն բերաւ առ թագաւորն Հայոց Հեթում ի ձեռն ծառ վիկարին, որ կոչէր Տիմանչ դիկար, ի թվին Հայոց, ՈՂԵ (1246)*. Գրեցաւ ի ձեռն արդիւնական վարդապետին Վարդանայ յար-մ-րեալ։

188

ՎԱՐՔ ՍՐԲՈՑ

Երուսաղեմ 97, Պողարյան, Ցուցակ Ա, էջ 305—306

323ա Ի բաղձանաց բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ և քրիստոսասէր հաւր նորա իշխանաց իշխանին Կոստանդեայ, դրուատ գովեստի պատմագրաբար ասացեալ մեծին Վարդանայ Արևելցւոյ ի սուրբ հայրապետսն Հայոց Սուրբն Գրիգոր Վկայասէրն և ի տէր Գրիգոր կաթողիկոս և եղբայր նորին ի սուրբ Ներսէս՝ ի թոռունս Սրբոյ Լուսաւորչին։

189

ՆԵՐԲՈՂԵԱՆ Ի ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԱԼՆ ԹԱԴԷՈՍ ԵՒ Ի ՑԱՐԳԱՐ ԱՐՔԱ ՀԱՅՈՑ ԵՒ ԱՍՈՐՈՑ ՍՐԲՈՑՆ ՅԱԿՈԲԱ ՍՐԾՈ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Երուսաղեմ 1365, Պողարյան, Ցուցակ Գ, էջ 644

Թարգմանիչ՝ Շմոն Ասորի

131ա Ի ՈՂԵ (1246) թւիս Հայոց թարգմանեցաւ ճառս յԱսորոց, ի ձեռն Շմոնի քահանայի Ասորւոց, հրամանաւ Վարդան Վարդապետի։

---

* Նույնը կա նաև Երուսաղեմի № 999 ձեռագրում, որտեղ միավոր «ե»-ի փոխարեն «է» է։

190

ՎԱՄՆ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴՈՑՆ ԵՎ Ի ՎԵՐԱՅ ՆԱՀԱՊԵՏԱՑՆ ԵՎ ՄԱՐԳԱՐԷԻՑՆ ՍՐԲՈՑՆ ՅԱԿՈԲԱՅ ՍՐԲՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Երուսաղեմ 1365, Պողարյան, Ցուցակ Դ, էջ 644

157ա *Զայս Ճառ Ներբողենից Սրբոյն Յակոբայ և այլ յոլով բանք թարգմանեաց վարդապետն* Վարդան:

191

ՏԱԻՆԱԿԱՆ

Փարիզ 110 (1194 թ.), Երևան, մանրաժապավեն 876

Նվիրող՝ Թէրան
Վայր՝ Անի

180ա *Յանուն Հաւր, յանուն Որդոյ, յանուն Հոգոյն Սրբոյ, ես՝* Թէրանս Հանեցիս, *որ գնեցի ի յիմ աշխատանաց գխանձլիս** *Պատմայգիրքս* Վարթերին *ագնականութեամրն՝ յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց և* Վարթերին *և ծնաւղաց իւրոց, և դրի ի Սուրբ Գրիգոր, և տվի զՍուրբ Սարգսի զաւուրն զպատարագն* Վարթին, *որ իսկի չխափանի։ Ու երէց, որ ի Սուրբ Գրիգոր կենայ և զգիր անփութ արնէ, նայ ինքն ջնջեսցի ի դպրութենէ կենաց և նզովի ի հայրապետացն և ի մարտիւրոսացն, և ի առաքելոց և ի քառասնից։*

*Գրեցի թվիս Հայոց ՈՂԵ (1246), հաստ**։*

---

* *Անհասկանալի է։*

** *Թերևս «յաստ», որովհետև «յԱնի» գրում Լ «Հանի» ձևով։ Ուրեմն՝ վայրը Անի քաղաքն է։*

192

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4528 (1851 թ.)

Գրիչ՝ Ջանցլեր Լևոն Բ թագաւորի
Վայր՝ Սիս

14բ *Փառք ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդոյ, ամէն, որ եմ հաւատով քրիստոնեայ, ազգաւ հայ, կարդաւ քահանայ, արհեստիւ գրիչ, ըստ արքունական պատուոյ՝ ջանչլեր առաջի թագաւորին Հայոց Լևոնի, ի Կիլիկացւոցն, հանդէս ըստ տարբերութիւն կենցաղոյս բազում պատահման բարոյ և չարի դիպեալ և բազում բերկրութեանս և ընդ չարչարանս անցեալ, հասեալ ի ծերութեան, ի թուականիս ՈՂՋ (1247), ի հայրապետութեան Հայոց տեառն Կոստանդեայ և (ի) թագաւորութեան Հեթմայ բարեպաշտի, որ յերկրորդ է ի Լէոն թագաւոր[է], որ ի Ռուսլենիացոց, և աստուածասէր թագահոյն իւրոյ Զասպիլի, որ դուստր էր թագաւորին Լեոնի, և դեռաբոյս և զուարթածաղիկ որգւոցն իւրոց Լևոնի և Թորոսի, գրեցի աշխատասիրաբար սուրբ Աւետարանս ի Սիս քաղաքն, ի չար ժամանակի, յորում թաթարք բազում զօրօք յելիցն արեգական մինչև մուտս, քանդեալ կործանեցին և գերեցին, և անթիւսն սրախողխող /// արարեալ։*

Իսկ աստուածասէր թագաւորն Հեթում յառաջագոյն առաքեաց և հետ նոցայ դաշինս հաշտութեան և ընծայիւք, թերևս այնու կարասցէ ապրեցուցանել ղինքն և հաւատացեալս Քրիստոսի։ Ոչ եղև հնար զի նահատակեցան երից եղբայր իւր Սմպատ քաջ սպարապետ Հայոց գնդին ։*

193

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ

Երևան 6273, էջ 37բ—38ա

Գրիչ՝ Ներսէս
Վայր՝ Ակներ անապատ

Փառք... Աստանօր յանգ ելեալ կատարեցաւ լուսեղէն և հոգեպատում սուրբ վարդապետութիւնս Պօղոսի առաքելոյն, ի խնդրոյ երից համաշունչ

* Վերջին տողը տարակուսանքի տեղիք է տալիս։ Սմբատ Սպարապետը մոնղոլների կողմից չի նահատակվել, այլ մեռել է սույն հիշատակարանի գրութիւնից շատ հետո՝ 1276 թ.։ Պետք է ենթադրել, որ երբ Սմբատը 1247-ին մեկնեց մոնղոլների մոտ բանակցութիւններ վարելու նպատակով, անստուգ լուրեր են տարածվել նրա նահատակության մասին, և հիշատակարանի հեղինակը գրանցել է իր լսած լուրը, հնարավորութիւն չունենալով ստուգել այն (Սմբատն իր դեսպանութիւնից վերադարձավ 1250 թ.)։

եղբարց մերոց՝ Բարսղի հոգեզուարթ և բարեբոյն քահանայի, և երկու համաբնակ և միանձն, ճգնազարդ և միաբնունդ եղբարց Հանիսի և Մատթէոսի, որ է[ն] գաւառականք իմ յԵկեղեաց գաւառէ, և ստացան զսա ի վայելս ե ի զբօսանս անձանց իւրեանց, և յետ մահուան՝ յիշատակ հոգւոյ իւրեանց։ Յիշեսջիք յաղօթս ձեր զյառաջասացեալ եղբարքս մեր զԲարսեղ քահանայն և ըստ հոգւոյ աւագ եղբայր մեր, ընդ նմին և զՀանէսն և զՄատթէոս խաչակրօն միանձունք, ևս առաւել յիշման արժանի արասջիք զհոգևոր հայրն իւրեանց և մեր ամենեցուն զՏիրացուն՝ զվեհից վեհագոյնն և զբարի օրինակն ամենայն առաջնորդաց, որ էր սպասաւոր սուրբ ուխտիս Ակներոյն, և յանցելումն տարւոջս յայսմիկ վերափոխեալ կոչեցաւ ի Տեառնէ ի խորանս լուսոյ, և եթող մեզ սուգ մեծ և անմխիթար։ Յիշեսջիք և զՎարդան քահանայն՝ զկոկող նիւթիս, և զծնողսն իւր...

Գրեցաւ ի թվիս Հայոց ՈՂՋ (1247), ձեռամբ Ներսէսի, յաշխարհիս Կելիկեցւոց, ուխտի որ կոչի Ակներ անապատ, ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ, և հօր իւրոյ պարոն Կոստանդեայ, և եղբարց իւրոց, և ի կաթողիկոսութեան երջանիկ հայրապետի Կոստանդեայ, որոց հայցեմք ի յամենողորմ Տեառնէն երկայնաձիգ և առանց ամենայն փորձութեան ժամանակս, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Տէր Աստուած, ողորմեայ ստացողաց այսմ լուսազարդ մատենիս Բարսղի հաւատարիմ և սիրելի եղբօրն մերոյ և ծնողաց իւրոց, ընդ նմին և շնորհազարդ հօրն մերոյ Տիրացուիս, որ յայսմ ամի կոչեցաւ ի քէն, և ձեռնասուն աշակերտաց նոցա Հանիսին և Մատթէոսին և մեղապարտ գրչիս։

194

ԱԻԵՏԱՐԱՆ

Մուրադյան, Ցուցակ Մշո Առաքելոց վանքի, էջ 6

Գրիչ՝ Խաչատուր
Վայր՝ Անդրեասանց վանք

Փառք ամենասուրբ Երրորդութեան Հաւր եւ Սուրբ Հոգւոյն յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Գրեցաւ սուրբ Աւետարանս, որ է հրաման եւ օրէնք փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ եւ Տեառն մերոյ, ի թուականութեան հայոց ՈՂՋ (1247), ի գերահռչակ անապատիս որ կոչի Անդրեասանց, ընդ հովանեաւ սրբոյ մաւրն մեր եւ Սուրբ Նշանիս, եւ ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Գէորգեա, ի դիտապետութեան տեառն Կոստանդիա, եւ ի թագաւորութեան Հեթմոյ բարեպաշտի, որդւոյ Կոստանդեա, ձեռամբ անարժան եւ մեղաւոր քահանայի եւ անպիտան կրաւնաւորիս Խաչատրոյ, յոյժ տխմար եւ անարհեստ գրչի..., յաղագս կարաւտութեան եւ ի զբաւսանս անձին իմոյ, եւ ի յիշատակ ծնաւղաց իմոց ի Քրիստոս հանգուցելոցն։

Արդ աղաչեմ զամենեսեան, ո՛վ սուրբ եղբարք |||

195

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 981—934

Գրիչ՝ Կիւրակոս
Վայր՝ Հոռոմկլա

ա

Փառք քեզ անսահման անուն և անզուգական անձնաւորութիւն, Հայր
694ա *և Որդի և Սուրբ Հոգի յամենայն արարածոց, ամէն։‖Որք բաց ունին ի*
յստակ հայեցուածս զոգւոց աչս, նոքա զբնաւ վայելս աշխարհիս առ
ոչինչ համարին՝ ի սէր բանին դեգերեալք և առ աստուածային պատուի-
րանին պահոզութիւնս, որով առաքինացեալք երանին [ի] յոքունց և բա-
րեբաստք լինին։ Ուստի և զաստուածապատիւ և զառաքինաջան երից
694բ *երանեալ եպիսկոպոսս մեր զտէր Ստեփաննոսէ տեսանել քաջա‖յայտ, որ*
ի վերայ սրբասէր վարուց իւրոց ստացաւ ե գրասէր լինել, հայելով և
հոգւոյ մերոյ տէրն և հայրն ի սուրբ կաթողիկոսն՝ ի տէր Կոստանդին,
որոյ էր սա դրան սարկաւագ և սպասաւոր, զի տայր գրել և ստանայր
բազում գրեանս և յոսկւոյ սրբոյ տայր յաւրինեալ բազում Աւետարանս,
ի յիշատակ հոգւոյ իւրոյ։

Եւ սա, իբրեւ զհաւատարիմ ծառայ Աստուծոյ և զհարազատ որդի
նորին, եռափափագ սիրով ի խնդիր ելեալ իբր պատուական մարգարտի
և հրամաեալ իմում նուաստութեանս գրել զսուրբ և զլուսաւոր մատեանս
կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի բազմածախ յաւրինուածովք յոսկ-
ւոյ սրբոյ և ի պատուական երանգոց գեղազարդել զսա ներքոյ և արտա-
քոյ և ամենեւին վայելուչ առնել զսա յուրախութիւն մանկանց Նորոյ
Սիովնի։ Եւ ես ըստ կարի իմում լցի զփափագ նորին և գրեցի զսա յամ-
րակառոյց և յաշխարհամուտ դղեակս Հոռոմկլայ, ընդ հովանեաւ բազ-
մահաւաք սրբոցս, որ պաշտին աստ, ի հայրապետութեան տեառն Կոս-
տանեայ կաթողիկոսի, որոյ հրամանաւ և աւժնդակութեամբ գրեցաւ
696ա *սուրբ Աւետարանս, զի որպէս յառաջ ասացաք՝‖իբրեւ զհայր գթած էր*
առ աւտարս և առ ընտանիս, եւս առաւել երախտաւոր առ սրբասէր եպիս-
կոպոսս տէր Ստեփաննոս՝ ստացաւղ գրոցս, մինչ զի բազումս յորդորէր
զնա յամենայն բարեաց գործս, և յայս առաւել եւս ստանալ զայսպիսի
բարի ստացուածս, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի։

Արդ էր թուականս Հայոց ՈՂԷ (1248) յորժամ աւարտեցաւ սուրբ
696բ *գիրս,‖և թագաւոր էր Հայոց քրիստոսասպասակն Հեթում, որ առաւելեալ*

էր քաղցր և բարի բնութեամբ՝ հնգից որդոց եղեալ հայր. առաջնոյն Լեւոն, որ յանուն հատուն իւրոյ, որ է աւրհնութեան շառաւեղ և բարի պատանի, և այլն մի ըստ միոջէ, որոց տացէ Տէր Աստուած երկայն աւուրբք թագաւորել ի վերայ Հայոց ազգին։

Եւ արդ ստացաւ զսա աստուածահաճոյ եպիսկոպոսն տէր Սահ[փա-
697ա նոս՝]՝||զլուսաւոր մատեանս ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգ-
ւոյ իւրոյ և ծնողաց իւրոց։ Այլ աղաչեմ զամենեսեան, որք վայելէք զսա կամ յինչ և իցէ պէտս աւգտիք ի սմանէ կամ աւրինակէք, յիշեսջիք սրտի մտաւք զտէր Սահփանոս՝ ստացաւղ սորա և զծնաւղսն իւր զվազ երթեալսքն առ Տէր, այլ և զհանգուցեալ եղբարսն իւր, որք են այսոքիկ՝ Գրիգոր,
697բ Սէմ և Խափք և որ այժմ է կենդանի՝ Վահրամ, || և զամենայն ազգայինսն իւր, որք յիշատակ բարի թողին զսա ինքեանց։ Ընդ արժանաւորսն յիշատակի աղաչեմ յիշել ի Տէր զառաքինի և ծերունի քահանայն Յուսիկ, որ էր դաստիարակ և հայր և աւետեան մերձաւոր ստացողի գրոցս, որ յայսմ ամի փոխեցաւ ի Տէր։ Աղաչեմ յիշել ի Տէր և զսրբասէր քահանայն Թորոս և զորդեակն իւր Սահփանոս, որ է եղբաւրորդի տեառն Կոստանդեա։

698ա Յիշեսջիք և զԳէորգ, որ է եղբաւրորդի տէր Սահփանոսի, որդի Գրիգորոյ։ Պաղատիմ յոգնամեղ գրիչս Կիւրակոս առնել արժանի յիշատակի և զիմ զանարժանութիւնս և խնդրել թողութիւն բազում մեղաց իմոց, և ծնաւղաց իմոց, և ամենայն երախտաւորաց իմոց։ Եւ առատն ի պարգևս Տէր Յիսուս յիշողացդ և յիշեցելոցս ողորմեսցի, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Սոյնպէս աղաչեմք յիշել և զՊետրոս քահանայ, որ բազում պաղատանաւք յորդորէր զմեզ և մխիթարէր ի ժամանակ գրչութեան սուրբ Աւետարանիս։

Այլ և զկնի եւից մերոց յաշխարհէս, ուր և հանդիպեսցի, կու տանք զսուրբ Աւետարանս ի սուրբ ուխտն ի Գոնեռն, յիշատակ մեզ և ծնաւղաց մերոց և ազգականաց, զի բազումք այն են, որ անդ են ամփոփած։

Բ

22 Ո՛վ յանըսկիզբն ծոցդ բան,
Որ ծաղկեցար յազգս մարդկան,
Եւ մեզ զշնորհս, քո շրթան
Հեղեր, աւրհնեալդ յաւիտեան։
Արդ առեալ զքոյս քեզ տամ,
Բարձեալ ի ձեռս առաջի կամ
Ընկալ զնուէրս բարեխնամ
Եւ յիս հայեա, Տէր, հաշտ ակամբ։
23 Տէր իմ Յիսուս փրկիչ մարդկան,
Պետ հովուբեան կարգիս աւծմամն,
Որ զայս մատեան Աւետարան,
Մեզ հնչեցեր ձայն ցնծութեան,
Դու զպճնողս քո բանի

Եւ զարդարող այսմ տառի՝
Զտէր Սահփանոս՝ հովիւ բարի՝
Նստոյ յաթոռ ընդ Պետրոսի։

դ

209բ *Ստացողի սորա՝ սրբազան եպիսկոպոսի տէր Սահփանոսի ողորմեսցի Տէր Յիսուս։*

ե

334բ *Զաստուածապատիւ եպիսկոպոսն՝ զտէր Սահփանոս ստացաւղ սուրբ տառիս յիշեսջիք ի Քրիստոս և զծնաւղսն իւր և զգրիչս Կիւր[ակոս] և զիման, և դուք յիշեսջիք ի Քրիստոսէ։*

զ

542բ *Ո՛վ մանկոմք. առագաստի և որդիք լուսոյ, զտէր Սահփանոս՝ ստացող սուրբ տառիս յիշեսջիք ի Քրիստոս։*

196

ԱՒԵՏԱՐԱՆ

Սրվանձտյան, Թորոս Աղթար, Բ, էջ 350—351

Գրիչ՝ Պետրոս
Վայր՝ Հռոմկլա

Ի թուին Հայոց ՈՂԷ (1248), ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ եւ ի թագաւորութեան մեծին Հեթմոյ, դրացաւ սուրբ Աւետարանս յաստուածապահ եւ անմատոյց Կլայս Հռոմի, յաթոռ լուսաւորչին մերոյ Սուրբ Գրիգորի, ի դրունս սուրբ վկայիցն Թէոդորոսի եւ Գէորգեայ եւ Սուրբ Աստուածածնին, յորոց դուռն սպասաւոր եմք այժմ, թողեալ զհայրենի բնակութիւն մեր զբարձր դղեակն եւ զանմատոյցն զԿատեճայ, եւ փախեալ յայլասեռից չարեաց, եւ վասն քաղցրութեան վերադիտողիս Հայոց Կոստանդեայ՝ սրբոյ եւ առաքինւոյ, եկեալ բնակեցաք աստ, հովանաւորեալ իբրեւ զփախուցեալն ի տապոյ ամառանւոյ առ թատոտ ծառոց ընդ շքով, զոր Տէր Յիսուս զսա հաստատուն պահեսցէ...

Կատարեցաւ սուրբ պատուիրանս Փրկչին... յայսմ վայրի, ձեռամբ յոգնամեղ գրչի Պետրոս երիցու որդւոյ Կոստանդնի երէցու, ազգաւ Կատանայեցի, յիշատակ ինձ եւ իմոցն, եւ ի վայելումն որդւոց իմոց Առաքելոյ եւ Կոստանդեայ... յիշման արժանի արարէք զբարեհոգիկ եւ զբարեկեցիկ զերկոսին հարսունսն իմ զԱրեւթագունին եւ զՏիրունին, յորոց ոչ միայ եհաս ի բերումն զաւակի, այլ տարաժամ եւ դեռաբոյս փոխեցան ի Քրիստոս, եւ անմխիթար սուգ թողին ինձ եւ որդւոց իմոց...։*

---

* *Լուսանցքում. «Մեսոր վարդապետ հիմնադիր սուրբ պաշտպանութեամբ իշխանաց Ծով դղեկու շինեցին մենաստանս, թուին Հայոց ՈՃԶԳ (1234)։ Յիշեսջիք... Մաղաքիայս։*

197

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4301

Գրիչ՝ Ապլմսեճ
Վայր՝ Կիլիկիա

ա

Ամենեցուն, որոց բաց են իմանալի տեսարանք մտաց, միշտ և հանապազ յառ աստուածասէր և ի նոյն խոկան պատուիրան, որպէս զի զնորայն ախորժակ կամս բաւանդակապէս ի լրումն ածել շանայ։ Այսպէս և պատուեալս իշխանութեամբ բարեպաշտս Սիր Ճոֆրի զամենայն ինչ իւր
272բ նուիրեալ Աստուծոյ, և առ ըղձից բաղձանաց սիրոյն առ Աստուած || զսուրբ և կենսաբեր Աւետարանս ընծաելով, զոր ի չորից աւետարանչացն Թողան մեզ մարդեղութեան փրկչին մերոյ պատմութիւն, զոր հրամայեալ իմում նուաստութեան յոգնամեղ գրչի Ապլմսեճի, և ես ըստ կարի իմում կատարեցի զխնդրելին։

Արդ, եղև գրաւ գրութեան սորա ի թուականիս Հայոց ի ՈՂԷ (1248), ի հայրապետութեան տեառն Կոստանդեա և ի թագաւորութեանն քրիստոսապսակ թագաւորին Հայոց Հեթմոյ, զոր պահեսցէ Տէր Յիսուս արդար դատողութեամբ ի կամս իւր։ Ընդ նմին և բարեպաշտ զՍիր Ճոֆրի զամենիմաստն և զմտերիմն թագաւորին, զխոհեմն և զճարտարն յամենայն բանս և զգործս արքային, որ ստացաւ զսուրբ մատեանս ի վայելումն աստուածազարդ անձին իւրոյ և ի յիշատակ հոգւոյ իւրոյ, և բարեպաշտ ծնողաց իւրոց՝ զնացեալոց առ Քրիստոս, և եղբարց իւրոց՝ յառաչելոց ի Տէր, և քերց և ազգականաց, որոց ողորմեսցի Տէր Յիսուս յաներեակ աւուրն։

Արդ, որք ընթեռնոյք զսուրբ մատեանս կամ աւրինակէք, յիշեսջիք սրտի մտաւք զբարեպաշտն զՍիր Ճոֆրի և զծնողսն իւր, զի ողորմեսցի նոցա Տէր։ Ընդ նմին ժառն և ես մեղապարտ քահանա Ապլմսեճ յիշել և զիմս անարաժանութիւն ի սուրբ յաղաւթս ձեր, եւ որ առատն է ի պարգևս Տէր Յիսուս, առհասարակ յիշողացդ և յիշեցելոցս ողորմեսցի, և նմա փառք յաւիտեանս։

Բ

204բ Զբարեպաշտ իշխանն զՍիր Ճոֆրի զստացող սուրբ Աւետարանիս յիշեսջիք ի Քրիստոս, ո՛վ մանկունք նոր Սիովնի։

198

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԻՔԱՅԷԼԻ ԱՍՈՐՒՈՅ

«Միխայէլի Ասորւոյ ժամանակագրութիւն», Ցերուսաղէմ, 1870 թ. էջ 609—622

Հեղինակ՝ Վարդան Արևելցի

Տէր Կոստանդին, յերրորդ մասնէ Հայոց, ի դեկէ Բարձրբերդոյ, որ հայի հարաւով ընդ դաշտն Կիլիկիա և ի ծովն Ադրիանու կոչեցեալ, որ-

գի առն արդարոյ խաղաղականի Վանրամ կոչեցելոյ, յորովայնէ ընտրեալ յառաքելական աստիճան ի Հոգւոյն՝ աւրինաւք նորին սնեալ և ըստ կարգի յամենայն գործս եկեղեցւոյ վարժեալ ի շնորհս քահանայութեան և յառաջնորդութեան վանիցս և յեպիսկոպոսութիւն տեսչութեան և յամենայն ընտիր գտեալ և հանդիսաւոր, վասն որոյ և ի կատարման հոգեւորական և մարմնական հասակի վկայութեամբ Աստուծոյ և մարդկան մեծի գահոյի և աթոռոյ հայրապետութեան Հայաստանեաց արժանաժառանգ լեալ ի շնորհէն և ի բնաւ լրմանէ եկեղեցւոյ բռնադատեալ. ըստ որում և փորձն ցուցաւ և արդիւնքն յայտնի արարին և միաբանեցաւ ընդ նմայ շնորհն։ Եւ է այժմ ԻԵ (25) ամ հայրապետութեան նորայ՝ ի դղեակս աստուածապահ Հռոմկլայ կոչեցեալ, խաղաղասէր բարուք և անարատ վարուք առ ամենեսեան խաղաղութիւն կալեալ, վկայութիւն բարի և դրուատնիս յարտաքնոցն, առեալ, այցելու որբոց և այրեաց՝ խնամածու և գերելոց անխնայ ծախիւք դարձուցիչ և զարդարիչ, հայրենի գթովն զամենեքումբք փարելով. և եղեալ առատաձեռն առ ամենայն կարաւտեալս ողորմածութեամբ և եկեղեցեաց բազմաց պիտոյից լցաւղ։

Ցաւել և ի յայլ բարիսն և զայս մատեանս ի գանձս եկեղեցւոյ, և ետ բաղձանաւք թարգմանել զսայ յԱսորոց ի Հայս, պիտանի և շահաւետ բուրաստան, լայն և երկայն իմաստիւք լցեալ* և կարճառաւտ բանիւք բովանդակեալ, որ ի սուղ ժամանակս կարող է զպատահեալսն ի վերայ կացուցանել հին և նոր դիպուածոց, այլ և հիմն հաստատ և անշարժ աշտարակ իսկ է հայադաւան հաւատոյ ե ուղղափառ խոստովանութեանս. վկայս բազումս ցուցանելով յազգաց ճշմարիտ ուղեգնացութեանս, բըխմամբ առաքելական աստուածագիր կայիւք ամրացեալ, այլ և յոլով տարակոյսք և հանգոյցք լուծանին ի սմա, և չէին զարմանալ ընդ նորանոր և ընդ անծանաւթ բանսն, որ գտանային ի սմա, քան զի Ասորիք բնակութեամբք գաւառացն և բառիւ լեզուաց մաւտաւորք են միշտ Հրէիցն լեալ, քան զամենայն ազգերդ և ի դէպ է նոցա մանաւանդ ծանաւթս գոլ հնոյ կտակին, քան այլոց. նաեւ որ զայս մատեանն շարայարեալ է ի Յունաց և յԵգիպտացւոց և ի Քաղդեացւոց դիւանաց և ի դպրոցաց է հաւաքեալ, վասն որոյ առաւել աւրեկի և պիտանի և հաւատալի է, և վարձս բազումս կալցի առաջի Աստուծոյ և երախտիս յեկեղեցիս ուղղափառաց՝ վաստակասէր այրն բարեփառ տէր Միքայէլ. զի յոլով սէր և գութ երեւի նա ունել առ ազգս մեր և ի գրոց աստի․

Արդ, յամի ութերորդի քառասներորդի երկերիւրորդի հազարերորդի թուահամարութեանս անժամանակ որդւոյ Աստուծոյ գալստեան, ի ՌՄԷ (1248) թուականութեանս Հայոց, թարգմանեցաւ գիրքս այս յասորոց ի Հայս, ի հայրապետութեան Հայոց տեառն Կոստանդեայ և ի թագաւորութեանն Հայոց Հեթմոյ քրիստոսապսակին և զգուշակենցաղ թագուհւոյն իւրոյ Զաբէլի՝ դստեր Լեւոնի արքայի՝ ըստ Աստուծոյ քաղաքաւարելոց հնգից եղելոց նոցա զաւակաց ծիրանածնաց՝ երից դստերաց և երկուց

* Ընդգծված մի քանի բառերը (հատուկ անուններից բացի) առնված կամ ուղղված են Երուսաղեմյան օրինակից (Տպագիրը, 1870 թ. էջ 609—622, «ի Վարդանայ»)։

ուստերաց, որոց անուանք Վետն և Թորոս՝ անուամբ հաւուն իւրեանց և հաւուն այնոյն հարազատի, որոյ հովանի լիցի ամենակալ բազուկն հայրենի, ածելով ի գահ հայրենի արքայութեանն եզերաւք Հայաստանեացս։ Յայսմ ամի կենդանի էր կորովամիտ և աղողեալն ի բարիս արքայահայրն Հայոց՝ պարոն Կոստանդին, և բերկրեալ այլովք ուստերաւք չորիւք՝ տէր Բաբսեղ՝ տէրն Դուզարկին, և պարոն Սմբատ՝ սպարապետն Հայոց, և պարոն Աւշին՝ տէրն Կուիկոսաւն, և պարոն Վետն, որոյ զաւրանալ լիցի ըստ Աստուծոյ և աճել արութեամբ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Ու էր պատրիարք Ասորոց ոտղաւփառաց Մատ Իգնատիէ Անտիոքու, որ զաւրինակս շնորհեաց և փոխեցաւ ի ձեռն Իշխայ սրբասնեալ քահանայի վարժ եղելոյ և ի հանճար բժշկական արհեստի, որոյ վարձատու լիցի Տէր ի շնորհս իւր։

Այլ և մեք տառապեալ ոգի Վարդան վարդապետ իսկ, որ ըստ մերոյ կարի սատարեցաք ի գիրքս յայս, ոմանք հաւատ և յոյս ի գթութիւն Աստուծոյ և յետ նորա յաղաւթս և ի բարեխաւսութիւն ծառայից նորա առ մեզ դարձուցանել զերեսս ողորմութեան Քրիստոսի ի վերայ անկշռելի պարտուց իմոց, անթիւապատիկ բիւրաց տաղանդաց, քան զի այսու ակնկալութեամբ ընդոստուցուք զմեզ մոռանալ զսննդակից և զընտանացեալս մեր տկարութիւն մարմնոյ և զբազմազան տրտմութիւն և ըստ ցնորս հոգւոց և խորհրդոց վասն սնշահաւոր տարաշրջութեանս։

Այլ և յաղագս թշուառացուցիչ ժամանակիս՝ չարածին չարիքն մեր յաճախեալ, քան զի սակաւ քան զչափն մերոցն մեղացն արդոյց մեզ Տէր արտասուս և նուազ քան զյորդաբուխ ախտից մերոց ջրհեղեղս խաղացին առ մեզ վտակք արեան և ըստ զգազանական գնացիցն մերոց, յագեցան գազանք ի մարմնոց մերոց։

Քան զի շնչեաց բարկութիւն Տեառն ճանճուն արեւելեան հիւսիսայնոյ աւտար և անընտել ազգին, որպէս ասին Թորգոմազունք զարմին Հագարու և հողմով անաւրինութեան մերոյ ած զնոսա մինչեւ առ մեզ ըստ նախատես մարգարէութեան նախնի սուրբ հաւրն մերոյ Ներսիսի արտասուապատում ողբոյն, զոր լալովն նախաձայնեաց զկորուստ հոգեւոր երկանցն իւրոց ծննդոցն, զոր ինչ կրեցաքս յազգէն Նետողաց, զորոց զանունսն կոչէ սուր և թեթեւ, զի թերեւս Թաթարն սուր և թեթեւ ասի ըստ լծորդաց փոփոխման և կամ տուր* տար, որ է Տաթար, քան զի հարին անյագապէս և տարան աներկիւղապէս զորդիսն Սիոնի ի տարկութիւն գերութեան։

Ու ասէ զնոսայ սուրբն Ներսէս ի մնացորդացն և Հադարու և Ասորիք առնն զնա Թորգոմեանս յայտ է խառնեալ ազգին Գովգայ, որ ի Թորգոմայ ընդ զարմն Հագարու որք ունին զՍկութիայ մասն աշխարհի, որ սկսանի յԱթշ գետոյ և ձգի առ Եմաւոն լերամբն, ուր բնակեալ են ազգ ԽԳ (43), որք խուժական անուամբ կոչին յիւրեանց լեզուս, և գլխաւորն տոցայ Բուշխ անուանի և սնուն միոյ ազգին Թուղարք ասի, զոր կարծեմք այս են Թաթարքս, և որպէս լուաք յոմանց ի նոցանէ, եթէ ելին առաջինք

* Տպագրում սրբագրված է «հար և տարն»։

նոցա ի Թուրքաստան աշխարհէ և մեկնեցան ի կողմ ինչ արեւելայ, և կային աղքատութեամբ ի գործս աւազակութեան և յափշտակութեան և պաշտան ինչ ոչ ունէին, բայց ընդ արեգակն զարմանային և ի պատճառս հմայութեան ունէին պատկերս ինչ թաղեայ, զոր տակաւին կրեն ընդ ինքնեանս։ Եւ զկնի ժամանակաց անցելոց ոմանց ի նոցանէ զգայուն արանց, նեղեալ ի քշուառական կենաց իւրեանց, կոչեցին զերկնաւորն Աստուած, որ զամենայն ինչ արար՝ յաւգնութիւն անձանց և ուխտեցին նմա ուխտ. և ելին ի վերայ քաղաքի միոյ փոքու և յափշտակեցին զնա ի տերանցն և բնակեցան անդ, և յայնմանէ ոյժ առեալ տիրացան երկրին, կոչեցին երկրէն իւրեանց Թիկունս և զաւրացն ի վերայ Պարսից և առին զիշխանութիւն նոցա։ Ուստի և ի մոգաց անտի կախարդութիւնս և տուեալ հրամանս ի դիւթաց անտի, եթէ տուեալ է նոցա յԱստուծոյ զաշխարհ ամենայն, ելեն վստահութեամբ և ժառանգեսցեն զնա։ Եւ չէ ինչ զարմանալի, զի Նաբուգոդոնոսոր արքայ Բաբելացւոց հմայիւք եւ յԵրուսաղէմ, և մատնեաց Տէր ի ձեռս նորա, և զԿիւրոս Պարսից արքայ աւծեալ իւր կոչէր Աստուած և հրաւիրէր ի վերայ Բաբելոնի։ Նաեւ ինքեանք իսկ խոստովանին զամենայն ինչ Աստուծոյ առնել և զինքեանս նորին հրամանաւ ասեն եկեալ։

Արդ, հաւատացեալ սոցա հրամանի իւրեանց երեւմանն՝ եղեն նոքա երեք բաժին ընտրութեամբ իւրեանց թագաւորին, զոր ղանն կոչեն։ Առաջին մասն գնաց ի կողմն Հնդկաց, և մասն երկրորդ չոգաւ առ անապատաւք հիւսիսի, և երրորդ բաժինն մէջ Պարսից աշխարհին եկն մինչեւ առ մեզ։ Եւ ասեն, թէ երեք էին գլխաւորք, և մինն բարեբարոյ, քան զերկուսն, զոր Զարմաղանն* կոչէին, որք և զկնի բազում աշխարհաց աւերման և կոտորման նստեալ ի խորհուրդս, զոր ղուրուլթայ կոչեն, և ասացեալ Զարմաղանին, թէ բաւական է աւերս և կոտորուածս, յայսմհետէ զհնազանդեալսն մեզ մի ջնջեսցուք ի սպառ, զի մի բարկասցի Աստուած։ Իսկ երկու գլխաւորքն հակառակեալք ընդ նմա՝ ասացին, թէ ոչ է պարտ մեզ ապրեցուցանել և ոչ զոք, որովհետեւ յաջողէ մեզ Աստուած։ Եւ տրտմութեամբ ննջեցին զգիշերն այն և յայնմ գիշերի մեռան երկոքինն, որ զանողորմութիւն կամէին։ Եւ զարմացան զաւրքն, և հասուցին զբանն առ ղանն, և առաքեաց հաստատեաց զկամս Զարմաղանին աւրինաւք խնայել ի հնազանդեալսն և դնել ի ներքոյ հարկի, և զնա միայն հաստատեալ ի գլխավորութիւն, զի այն է, ասէ, կամք Աստուծոյ, վասն որոյ և կան ի նոյն մինչեւ ցայսօր։

Իսկ զժամանակ ելանելոյ նոցա, ասէ մեծն Ներսէս, եթէ զկնի իմոյ վախճանիս՝ յորում անցանէ Ջ(700) ամ, սկսանի այս լինել։ Եւ արդ է, ըստ վճռի սրբոյն Ծ (50) ամ զաւրանալոյ նոցա յաղթութեան և յորմէհետէ մտեալ են ի յարեւելեան աշխարհն Հայոց՝ ԻՀ (28) ամ է. չար ինչ գործեցին ապականութիւն երկրին, և տապալումն քաղաքաց և դղեկաց, և աւեր եկեղեցեաց, և մահս ազգիս ազգիս, և գերութիւնս։ Եւ թէ որպէս յետ այնորիկ հաշտեցան ընդ մնացորդսն ի ձեռն իշխանաց աշխարհին

* Ձեռագրում՝ բոլոր դեպքերում «Զաղրմաննն»։

և արարին խնամութիւնս և մնացեալ եկեղեցեացն և եկեղեցականացն դիւրութիւնս և ազատ կամաւք կալ ի կրանս իւրեանց։ Սակայն անլռապէս պահանջումն հարկաց ճշդիւ և անխնայապէս ըստ գլխոց արանց և անասնոց, բաց ի մանկանց եկեղեցւոյ և ամենայնի, որք զձեւ աղաւթականութեան և զկարգ ունիցին։

Զայսոսիկ զամենեսեան դրեալ է լիով ի տեղիս տեղիս և մեք մի շփոթեսցուք զոճ շարագրացն կարգի, որ յատուկ խնդրէ հատածս և պարապումն ժամանակաց և հաւաստութիւն ի տեսիլ աչաց գործեցելոցն, սակայն զյոլովս տեսաք աչաւք մերովք ի նախաձայնեալ աղետից սուրբ նահատակին Ներսիսի. զեկեղեցիս մեր նսեմացեալ, զսեղանսն սուրբ կործանեալ, զմատեանս աստուածայինս այրեցեալ և առ ոտն կոխեալ, զսպասն սրբութեան և զքրիստոսական նշանս անարժանից ձեռամբ շաւշափեալ և նախատեալ, և յանարգ պէտս վարեալ, զաշխարհս մեր անապատացեալ, զքաղաքս բնակութիւն լեալ գազանաց, քան զի լցան լերինք և անապատք մեր անզերծ փախստիւք, և դաշտք դիակոյտք ոսկերաւք կոտորելոցն, և անդաստանք մեր և հովիտք ոռոգեցան արեամբ, և կերաք մնացորդքս զհասկ սնընդեան այնպիսի արտաւրայից։ Ազատք մեր ի ծառայութիւն իջին և փափուկքն մեր՝ յանըմբերելի չարչարանս, բարձունք մեր խոնարհեցան, և փառատրքն մեր յանարգութիւնս ընկճեցան, արաւտք հովասուն լերանց խորշակահարք եղեն յարեւու, կուսանք մեր աւտարաց եղեն և երիտասարդքն մեր՝ հովիւք և կատպանք այլասեռից։

Կարաւտացաք ողբոյն Երեմիայի և կրեցաք զպատուհասս հնոյ Իսրայելի։ Տղայք մեր որբք եղեն և մայրք նոցա՝ այրիք. որդիքն վերնոյն Սիոնի զուգակշիռ ոսկւոյ ղբարի հարան իբրեւ զանաւթ անպիտան. ցրուեցաւ հաւան, ճապաղեցան գառինք արաւտի նորա, վաճառակուր եղեն յազգս հեռաւորս գնեալքն արեամ[բն] Քրիստոսի։ Բաժանեցան ծնունդք ի ծնողաց, մեկնեցան հարազատք ի միմեանց սիրելեացն, բարեկամք հեռացան, դարձաւ տունն մեր ի սուգ և ուրախութիւն մեր յարտասուս, և ոչ գոյ թիւ աղաղակի մերում, զի չիք համար չարեաց մերոց։ Եւ ի վերայ այսր ամենայնի ոչ է ի մեզ զղջանս և ոչ ապաշխարութիւն. ոչ պատառեցաք զսիրտս մեր, և ոչ խարշեցան փորտիք մեր, և ոչ դարձաք ի գնացից մերոց խոտորնակաց, այլ յաւելաք եւս վէրս յանաւրէնութիւնսն մեր յառաջինսն, և խաւարեցան անմտութեամբ խորհուրդք մեր։ Եւ ո՛վ ոչ զարմասցի ընդ լրութիւնս մեր, զի տակաւին պիտի մեզ արեւս այս և խնդրեմք հնարիւք զսէր և զվայելս աշխարհիս և զգիտաս սորա զփախչըստականս։

Բայց ես մանաւանդ զանձնէ ասեմ, զոր գիտեմս, միայն զկիրս և զկամս ստորաքարշս՝ անյագաւրէն եղեալ մոխրատէր յատուրս իմ, և միայն ի ձեռն սակաւ սատարիս ազամ ունիմ ակն մեծի գթութեան Աստուծոյ վասն աղաւթից ձերոց, զոր հայցեմս լռութեամբ գրոյս իբրեւ զանկեալ սպասեակս առընթեր սեղանոյ մեծի տան տերանց և յաւելում ի մաղթանս իմ զբարեխաւսութիւն սրբոց՝ եղեալ առաջի ձեր նուէրս՝ առ իս ածել զգութ ձեր, սիրով զիջանել ըստ իս և խնդրել ինձ ողորմութիւն ի սրտէ ի կամեցող և ի խնդրող խնամոց Յիսուսի. և այն, որ մեծն է ողոր-

մութեամբ աջն աջողակ Հաւրն բարձրելոյ, որոյ բնաբար է փրկելն և ապրեցուցանելն, թէպէտ և ի մէնջ բռնադատել հարկանէ յուսով խրատու, այն որ ոչ անցաւելի կամաւք չարչարէ զանդամս իւր, նա բժշկեսցէ զվիրաւորեալ մարմինն՝ զսուրբ եկեղեցի, և ցրուեալ հաւտս իւր հաւաքեսցէ առ ինքն յաւարտս խաղաղութեան բարերար կամաւք իւրով Քրիստոս՝ ի փառս անուան իւրոյ և զերկոսին ակունս զայսոսիկ պատուական՝ զկայծ և զկանանչ, զաթոռս հայրապետական և արքունական հայադաւան ազդիս ուղղափառութեան, զոր եթող մեզ զաւակ յուսոյ տէրն զաւրութեանց, յորս դոյ աւրհնութիւն Տեառն ամենակալի. զսոսա հաստատուն և անսասան պահեսցէ զաւրութիւն ամենակիր և ամենաստեղծ արժանաժառանգ աթոռակալք մինչեւ ցյաւիտեան։

Եւ զայժմու նստեալքն արժանաւոր կոչմամբ Հոգւոյն Սրբոյ զտէր Կոստանդին Հայոց Մեծաց և հանուրց վերատեսուչ, և զնոյնազարմ ազգիս պսակադիր Հեթում ամաւք և առողջակիր հոգւով և անուանի փառաւք խնամեսցէ, ի գովեստ ամենասուրբ տէրութեան իւրոյ՝ զաւակաւք և զարմիւք, որք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, և յետ աստեացս անասելի աթոռացն և անթառամ պսակին արժանաւորեսցէ։ Եւ որք այժմ ընդ մեզ հարք և եղբարք և ժրաջան ճգնաւորք և պատարագողք և կղերիկոսք և գործաւորք մարմնական պիտոյից և խնամածու աստուածապատիւ դղեկիս և սպասաւորք սրբազան աթոռոյս, որք և ամենեքեան առ միմեանս սիրաւն Քրիստոսի և առ մեզ աննախանձ և փոխման մատենիս յաւժարամիտք և յորդորիչք, զամենեսեան, առատաձեռն պարգեւաւք լի արասցէ թագաւորն փառաց հոգեւոր և մարմնաւոր յաջողուածովք՝ ի մեծութիւն և ի փառս անուան իւրոյ, որ է աւրհնեալ և փառաւորեալ, գովեալ և գոհաբանեալ յազգս և յազինս բոլոր բանակաց յաւիտեան և յաւիտեանս և յաւիտեանից յաւիտեանս։

199

ՇԱՂԿԱՊՔ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆՔ ՊՐՈՒԿՂԻ

Ակինյան, Սիմէոն Պղնձահանեցի, 1951 թ. էջ 23—25
Հովսեփյան, Ցիշատակարանք, էջ 999—1002

Թարգմանիչ՝ Սիմէոն Ղանձեցի
Վայր՝ Պղնձահանք

Թարգմանեցաւ գիրքս, որ է Շարակապ և գլուխ աստուածաբանութեան Պրուկղի Դիադոխոսի պղատոնական իմաստասիրի, ձեռամբ Սիմէոնի անպիտան քահանայ կրօնաւորի՝ ի վրաց լեզուէ ի հայ լեզուս, յերկիրս Հայոց՝ ի ՚Ջանս Վրաց, որ կոչի Պղնձահանք, յաւիտենից թուականին ՉՂՂԶ (1248)։ Աղաչեմ զձեզ, ո՛վ եղբարք, զի յոյժ աշխատութեամբ թարգմանեցի. նախ, զի ոչ էի արժանի այսպիսի սպասաւորութեան՝ սակս շաղախեալ գոլ մեղօք. երկրորդ զի յոյժ ծերացեալ էի և տկարացեալ յաչաց և ի մտաց և ի զօրութենէ, զի ՀԿ(60) ամենիւք էի։ Այլ զի ոչ էր սա թարգմանեալ ի մերս լեզու և սա է մայր աստուածաբանութեան առաջին։ Մովսէս զայս ուսեալ զդպրութիւն և ի սորա բանիցն

կարգեաց զիւրն աստուածաբանութիւն։ Եւ Դիոնեսիոս Արիսպագացին և Տոռթէոս զիւրեանց գրեանքն բովանդակ ի սմանէ գրեցին. նոյնպէս և Գրիգոր Աստուածաբան զիւր աստուածաբանութիւն ի սմանէ խաւսեալ է, և բոլորովիմբ նորքս զամենայն աստուածաբանութիւնս իւրեանց ի սմին ոլորմանց բանիցս բխեցին։ Սա է հիմն և արմատ և մայր ամենայնի, ի սմանէ առին նոքա բովանդակ. իսկ այնք փոքր հատորք ելով, և ես յայն սակս թարգմանեցի, զի մի պակաս եղիցի սա յազգիս մերմէ։

Արդ աղաչեմք, որք կարդայք կամ օրինակ առնոյք, յիշեսջիք յազօթս, և զիմ փոքր բանս գրեցէք զկնի, և մի ինչ թողուցուք ի սմանէ։

Ջտէր Մխ[իթար] վարդապետ յիշեցէք ի Քրիստոս աղ[աչեմ]։

200

ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՑ ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

Երևան 6273, էջ 38ա

Գրիչ՝ Վասիլ
Վայր՝ Հռոմկլայ

Փառք քեզ անսահման անուն... Շնորհիւ ամենախնամող ողորմութեան Աստուծոյ յանկեալ աւարտեցաւ մատեանս աստուածային սուրբ և երանելի վարդապետին Գրիգորիոն Նարեկացւոց, ի խնդրոյ աստուածապատիւ սուրբ կաթողիկոսի և բարի բնութեան երջանիկ դիդապետի տանս Թորգոմայ տեառն Կոստանդեայ, և հրամայեալ իմում նուաստութեանս Վասլի Ուռեայեցւոյ բազմամեղ գրչի և ծառայի նորին, զի գրեցի զսա ի վայելումն մեծաշուք անձին իւրոյ և յիշատակ բարի հոգւոյ իւրոյ։

Եւ արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնուք զսա և աղօթէք սովաւ, յիշեսջիք սրտի մտօք զսուրբ հայրապետս մեր զտէր Կոստանդիոն զստացող սորա, և զծնողսն նորին, և զեղբայրսն զգնացեալսն առ Քրիստոս։ Եւ զմեծաշուք զեղբօր որդին իւր զԹորոս սրբահոգի քահանայն, և զորդեակն իւր և զվայելուչ պատանին Ստեփաննոս, աղաչեմ յիշել զնոսա առաջի Աստուծոյ։

Բայց գրեցաւ յանմատչելի դղեակս Հռոմկլայ, ընդ հովանեաւ Սրբոյն Գրիգորոյ և Սրբոյ Աստուածածնին և Սուրբ Նշանին Վանգոյ, ի թուականութեանս Հայոց ՈՂԸ (1249) ի յառաջնորդութեան տեառն Կոստանդեայ ստացողի զսա, և ի թագաւորութեան քրիստոսասպասակ թագաւորին Հեթմոյ և աստուածասէր թագուհւոյն իւրոյ Զապիլի, և որդոց նոցին Լեւոնի և Թորոսի, որոց տացէ Տէր Աստուած երկար ժամանակս և անթիւ աւուրս թագաւորել ի վերայ Հայոց ազգին։

Ընդ որս և ես՝ մեղաւոր և նուաստ գրիչս Վասիլ, աղաչեմ երկիր պագելով առ գարշապարս ձեր, յիշել և զիմ տխմար գրչութիւնս, և ծնողսն իմ, և զուսուցիչս իմ Կիրակոս...

Յիշեսջիք զՎարդան քահանայ զկապող սորա և զՎասիլ կրօնաւոր։

201

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7690

Գրիչ՝ Կիւրակոս
Վայր՝ Հռոմկլա

359։ Փառք քեզ անսահման անուն, եւ անզուգական անճնաւորութիւն Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի ամենայն եղանակացս, ամեն։

Շնորհիւ ամենախնամ ողորմութեանն Աստուծոյ, յանկ ելեալ աւարտեցաւ մատեանս աստուածային հրամանաւ եւ ծախիւք սուրբ եւ եբշանիկ կաթողիկոսիս Հայոց տեառն Կոստանդեայ։ Քանզի տեսեալ զլաւ եւ զընտիր նիւթ մագաղաթիս, հրամայեալ իմում նուաստ եւ մեղաւոր գրչութեանս լնուլ զփափագ նորա, եւ որպէս զբովանդակ ինչս իւր եւ զկեանս նուիրեալ էր Տեառն, նոյնպէս եւ զայս նիւթ, թէպէտ եւ փոքրագոյն էր ի դիրս Աւետարանի, յաղագս կատարեալ սիրոյն զոր ունէր առ փրկիչն մեր Քրիստոս եւ առ սուրբ հրամանս նորա, ետ եւ զսա գրել եւ վայելչացուցանել յոսկւոյ սրբոյ եւ ի պատուական երանգաց սիրելի առնել զսա ներքոյ եւ արտաքոյ։

Եւ ես ըստ իմում կարի լցի զփափագ նորա, եւ աւարտեցի զսա ի սուրբ եւ յաշխարհամուտ յաթոռս Հռոմկլա, ընդ հովանեաւ բազմահաւաք սրբոց որ պաշտին աստ։ Ի թուականութեանս Հայոց ՈՂԸ (1249), ի թագաւորութեանս Հայոց Հեթմոյ բարեպաշտի, եւ որդոց նորա բարի շառաւեղաց Լեւոնի եւ Թորոսի, եւ սրբահոգի թագուհոյ իւրոյ Զապիլի, որոց տացէ նոյն ինքն բանն Աստուած կեանս երկայնս եւ յաղթողս թագաւորել ի վերայ ազգիս Հայոց։ Իսկ սուրբ դիտապետս Հայոց տէր Կոստանդին, որ ստացաւ զսա ի վայելումն իւր եւ ի յիշատակ հոգւոյ իւրոյ գանձ անապական յերկինս, գրասէր եղեալ մանաւանդ թէ աստուածասէր, իմացեալ թէ Որ յեկրէ նիւթք, ի նոյն ունին կորնչել, եւ բանն Տեառն մնայ յաւիտեան, ետ գրել յոլով Աւետարանս եւ գրեանս ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ, եւ յուրախութիւն մանկանց նորա։

Եւ արդ աղաչեմք զամենեսեան որք ժառանգեէք զսա եւ կամ տեսանէք եւ ականիք, յիշեսջիք սրտի մտաւք զսուրբ կաթողիկոսս տէր Կոստանդին, որ ստացաւ զսա, եւ զծնաւղսն իւր, եւ զեղբարս, եւ զքոյրս՝ զվազ երթեալսն ի Քրիստոս, եւ զեղբաւրորդիս սորա, որ եւ նոքա հանգուցեալ են ի Տէր, եւ որ այժմ կենդանի է սրբասէր քահանայն Թորոս, եւ որդի նորին Սահփանոս, աղաչեմ զամենեսեան, զի խնդրեսջիք հանգուցելոցն հանգիստ ի Քրիստոսէ, եւ որ այժմ կենդանի է երկար եւ անխըռով կեանս ունել որդովն իւրով եւ ամենայն զարմիւք։

Յերես անկեալ յոքնամեղ գրիչս Կիւրակոս յիշել եւ զիմ անարժանութիւնս եւ զծնաւղսն իմ, զի ողորմեսցի նոցա Տէր ի գալստեան իւրում։ Ընդ արժանաւոր յիշատակի յիշեսջիք զմաքուր կրաւնաւորն եւ ըստ հոգւոյ եղբայրն Բարսեղ, որ երեր զմագաղաթս եւ նուիրեց բանին Քրիստոսի, եւ զԿարապետ սրբահոգի վանական եւ բեմբական քահանայ եւ զամենայն երախտաւորսն մեր, եւ զաշխատաւորսն...

202

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7635

Գրիչ՝ Սոսթենէս

ա

Ջմեղապարտ եւ զանարժան գրիչ՝ Սոսթենէս յիշեսցիք ի Տէր։*

բ

Նվիրող՝ Աւետաց,
Վայր՝ Հոռոմոսի վանք

267ա *Աւետարանս Հոռոմոսի վանից Սուրբ Յովանիսի է աւանդեալ ի մեղապարտ ծերոյս յԱւետացս, որդոյ Խաչեղբաւրն, աղաչէ յիշել յաղաւթս։*

Ի ՈՂՔ (1249) թվին։

Ով զմեզ յիշէ բարի մտաւք, ինքն յիշեալ եղիցի յԱստուծոյ և յամենայն սրբոց, ամէն։

203

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 1283

Գրիչ՝ Սոսթենէս

ա

180ա *Աւրհնեալ Սուրբ Երրորդութիւնն։ Գոհ եմ Քրիստոս զքո բարոյս։ Աւրհնեալ Սուրբ Նշանն եւ Սուրբ Աստուածածինն եւ Սուրբ Կարապետն։ Աստուած իմ Քրիստոս, քո եւ քոոցն է ամենայն պարգեւս։ Դու ես բան եւ գիր, եւ գրող, եւ գրիչ և ամենայն պատրաստութիւն գրոյ; եղիցիս աւրհնեալ դու յամենայն արարածոց։ Գիտեմ Տէր յայսմհետէ զի զքաս յանարժանս։*

Փառք քո տերութեանդ։

Որք ընթեռնուք կամ աւրինակէք, յիշեսջիք յաղաւթս զանարժան գծողքս զՍոսթ[ենէս] եւ զՀայր[ապետ] և զծնողսն մեր զՍահփանոս եւ զՏիրատուր ի Քրիստոս հանգուցեալսն եւ առհասարակ զամենայն նըն-ջեցեալսն։

Աղաչեմ յիշել եւ զերկրորդ ծնողսն զԿիրակոս փիլիսոփ[ա] և զԴաւիթ միայնակ[եացն], եւ զեղբարսն մեր զՅովաննէս եւ զՊատուականն եւ զայլսն ամենայն, եւ Աստուած յիշողացս ողորմեսցի։

բ

46ա *Տէր Աստուած ողորմեա Տիրատուրոյ եւ Սահփանոսի ի քում գալստեանդ։*

---

* Գրված է խորանի ստորին մասում։ Ձեռագիրն ավելի վաղ է գրված։

Գ

112բ ԶԳծողքս Սոսքենէս, եւ եղբարսն զՅովաննէս էւ զՊատուականն յաղաւթս յիշեսջիք։

Դ

134ա Վայ զիս, վայ զիս, վայ զիս, վատ նիւթ եւ գրաւոս

Ե

145բ Տէր Յիսուս, ողորմեա Ստեփանոսի եւ Տիրատուոյ ի քոմ գալստեանդ։ Զդաստիարականն եւ զծնողսն զԿիրակոս փիլիսոփայն և զԴավիթ միայնակեացն յիշեսջիք ի Տէր։

204

ՃԱՌՔ ԳՐԻԳՈՐԻ ՍԿԵՒՌԱՑԻՈՑ

Վիեննա 166, Հ. Տաշյան, Յուցակ, էջ 577

Գրիչ՝ Յովսէփ
Վայր՝ [Սկեռա՞]

ա

36ա Որք վայելէք ի մեծի փրկագործութեանս և մխիթարիք ի քաղցրաճաշակ բանիցս, ղյոքնամեղ գծողս Յովսէփ յիշման արժանի արարէք ի Տէր։

բ

Ապա և զանձն իմ եղկելի,
Վատթար գործով լցեալ իւիւ,
Սուրբ եւ մաքուր հարսն դշխոյ,
Վասն իմ առ Տէր աղերս մատոյ։
Յիշման արա զիս արժանի,
Սկեղեցի Տեառն առաշի,
ԶՅովսէփ անունս և անպիտան
Եւ զքահանայս Տեառն անարժան։
Զի որ բազում փափագանաւք
Զճառս գրեցի աշխատանաւք;
Յորմէ արբեալ զմայլիմ հոգւով,
Թագուն և խորս խորհրդով,
Զոր ի աբբոյս իմոյ հաւրէ
Յայտնեալ է քեզ ի Գրիգորէ։
Իսկ փափագողք և իմաստունք
Առագաստի մաքուր մանկունք,
Որք յատրինակ առնոյք զսա,
Սիրով սրտիւ ըղձիք սմա։
. . . . . .
Լիցին և այնք այսմ արժանի,
Ձեր մաղթանաւք տանողք բարի,
Որք ըստ մարմնոյ զիս մարդ ծնան
Եւ ի Քրիստոս վախճանեցան։
Եւ որ հոգւով զիս դիեցոյց,

Ուամամբ երկաւք խրատեալ լցոյց,
Որոց և ձեզ հանդի[պեսցի] ||

Գ

234բ *Որք զմայլիք հոգւով ի քաղցրաճաշակ բանից մեծ հռետորին Գրիգորի, մանաւանդ ի տանի մեծին Գրիգորի Լուսաւորչին մերոյ, հայցեցէք յառատապարգեւ Տեառնէն յաղագս մեծապատիւ իշխանաց իշխողիս մերոյ Կոստանդեայ և բարեշաւղաց որդւոց իւրոց Հեթմոյ և Ասղնի, որ է տէր աստուածապահ դղեկի Լամբրաւնի, զի պահեսցէ զկեանս սոցա խաղաղութեամբ ընդ երկայն աւուրս ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է աւրհնեալ յա[ւիտեանս]**։

205

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ ԹՂԹՈՑ ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 1007—1010

Գրիչ՝ Սահփանոս
Վայր՝ Զորոյքերդ

Փառք ամենասուրբ Երրորդութեանն երից անձին և միոյ տէրութեանն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Գրեցաւ ոգեշահ գիրս ձեռամբ մեղաւոր եւ յետին գրչի Սահփ[անոսի]՝ յանապատիս, որ կոչի Զորոյքերդ, ընդ հովանեաւ սուրբ մաւրս Կաթողիկէի և Սրբուհոյ Աստուածածնի և սուրբ վկային Մինայի և այլ սուրբ վկայիցս, որոց բարեխաւսութեամբ Քրիստոս փրկութիւն ոգւոյ շնորհեսցէ ստացողի սորա՝ Սահփանոսի՝ սուրբ և ոգելից քահանայի, և ծնաւղաց նորին, և վերակացուաց անապատիս՝ Թադէոսի և Մարկոսի, և ինձ բազմամեղ գրողիս և իմոցն, և Քրիստոսի փառք։

Արդ աղաչեմ զամենեսեանսն, որք վաելէք ի մխիթարութեան սորա
359բ *յիշեցէք ի սուրբ մաքրափայլ յաղ || աւթս ձեր զստացող սորա՝ զՍահփանոս քահանայ, որ ստացաւ զսա յարդար ընչից իւրոյ՝ յիշատակ իւր և ծնողաց իւրոց և ամենայն զարմից, և եղ ի դոսն Սուրբ Մակարայ յիւր անչինչ յիշատակ, յիշելով զի զանդ ամբարեալսն ոչ ցեց և ոչ ուտիչ ապականեն, այլ կա մնա։ Եւ արդ, Տէր իմ Յիսուս, շնորհեա ստացողի սորա ընդգրկեալ զսուրբ պատգամս և յապագայսն կեալ առաշի քո լուրջ երեսաւք և լսել ի քէն զքաղցր ձայնն. Ազնիւ ծառայ, բարի և հաւատարիմ, որով ի սակաւտա հաւատարիմ գտար, մուտ յուրախութիւն և շահեսչիր զբազումսն, զի արդ զլումայս ի տեղւոջ քաւարանի։*

Եւ արդ աղաչեմ հողացեալ բերանովս զորդիսդ Նոր Սիոնի՝ յիշատակ արժանի արարէք զմեղապարտ գրոզիկս և զծնողսն իմ և թողութիւն շնորհեցէք, յիշեալքդ զյառաջասացեալ վերայկացուք անապատիս և զհո-

* Ձեռագրիս գրչութեան թվականը չկայ, բայց 1250 թուից առաջ պիտի լինի որովհետև յիշուած Կոստանդին իշխանը 1250 թուին սպանվում է։ Այդ թվականից առաջ էր ապրում Դրազարկի հայտնի երաժշտապետ Հովսեփը (տե՛ս ատս, էջ 222)։ Հիշատակարանը դնում ենք 1250-ի տակ որպես հնարավոր վերջին թվական, իսկ տեղը՝ Սկեռա։

գեւոր հայրն և զբարի վարդապետ իմ՝ զՍամուէլ երաժշտապետն և մակացու յաստուածայինս, և թողութիւն շնորհեցէք ստացողի սորա և զորս յիշատակեցաք, և Քրիստոս ձեզ պարգևեսցէ զբազմապատիկ հատուց-
354ա մունս։ Գրեցաւ /// ի հայրա[պետու]թեան տեառն Կոստանդեա, և ի թագաւորութեանս Հայոց քրիստոսապսակ թագաւորին Հեթմոյ և աստուածասէր թագուհւոյն Զապէլի, որ է դուստր Լեւոնի թագաւորին, որոց Տէր Աստուած տացէ ժամանակս երկայն և յաղթող լինել ի վերայ ներհակացն, ամէն։ Բայց աղաչեմ անմեղադիր լինել սխալանացս, [որ]ի սմա, և խոշ[որութեան դրոյս], և մի ոք եպերեսցէ պարսաւելով, այլ ուղղեսցէ եղբայրաբար, զի այսչափ կարաւղութիւն էր տկարութեան իմում։ [Աւրհնեալ է Աստուած, որ] զաւրացոյց զվատթարս [յա]ւարտումն ածել զսա։ Եւ արդ ընդ իմոյ անարժանիս /// ձեռին /// [աւ]րհնեսցէ զքեզ Քրիստոս Աստուած, ամէն, ամէն, Ռ, Ռ-իւ Խ*։

206

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 10359 (1201 թ.)

Կազմող՝ Յովանէս

308բ Արդ, կազմեցաւ սուրբ Աւետարանս հրամանաւ ստացողի սորա Անառնի սուրբ և պատուական քահանաի, ի յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց եւ զաւակաց։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք եւ աւկտիք կա<ա>մ ընդաւրինակէք եւ լուսաւորիք ի սմանէ, յիշեսջիք ի Քրիստոս զստացողք սորա զԱնառն քահանա, եւ զկենակից նորա զԹանկազիզն, եւ զսեփական զաւակս նոցա զՍարգիս կրաւնաւոր, և զՊետրոս և զԿիւրեղն և զՎրթանէսն, և զեղբարս նոցա զԿոստանդին եւ զԴաւիթ, եւ զծնողս նոցա զՄխիթար եւ զԾովրատէս** եւ զԸնձեր նաղաշն եւ զծնողսն իւր զԳայլերն, որ աշխատեցաւ եւ ծաղկեաց իւր հալալ ինչիւք զսուրբ Աւետարանս։ Նայ եւ զԿոստանդ սարկաւագն եւ զկենակիցն իւր զտիկին Նաւրիկն յիշեսջիք, որ ընկալան զմեզ ի յարկս իւրեանց, և սպասաւորեցին մեզ զանազան կերակրաւք և պէսպէս մեծարանաւք, ընկալցի զնոսա Քրիստոս Աստուած ի յարկսն լուսեղէն ի հանկիստն յաւիտենից։ Նայ և զՍտեփաննոս, և զՔրիստոստուրն, և զԳրիկն, եւ զիս մեղապարտս զՅովանէս, և զծնողսն մեր յաղաւթս յիշեսջիք, որ կազմեցի զսուրբ Աւետարանս, ի թուականիս Հայոց ՈՂԹ (1250)։

Եւ զՍտեփանէ՞ոս ապրիշմգործն յիշեսցէք**։

---

* Գ. Հովսեփյանը ձեռագրի մասին գրում է. «Տարաբախտաբար փչացած է Յիշատակարանի թվականը պարունակող տողը։ Բայց կարելի է մոտավոր ժամանակը որոշել Ձեռագրիս գրչությամբ։ Հիշատակարանում Հեթումի թագուհին Զապել յիշւում է դեռևս կենդանի։ Զապել մեռել է 1252 թվի Հունվարի 22-ին (Ալիշան, Սիսուան, էջ 554)։ Ուրեմն այս Ձեռագիրը գրուել է 1251 թուից առաջ, հաւանօրէն 1250 թուին» (Յիշատակարանք Ա, էջ 1010)։

** Այս տողը գրված է վերին հիշատակարանից բաժանող կետ-գծային տողից ներքև, նույն

207

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 10686

Գրիչ՝

ա

318ա Փառք, պատիւ և երկրպագութիւն Հաւր և Որդւոյ և || Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զլուսայիղձ և զկենսակիր կտակս, ի թուի ՈՂՔ (1250)։ Արդ, որք աւկտիք ի սմանէ, յիշեսջիք ի Տէր զսրբասէր կրաւնաւորն զՊապիոս, և զծնաւղսն իւր, և զեղբարս, և զամենայն զարմ, որ բազում փափագանաք ստացաւ զսայ յարդար գոյից իւրոց։ Ընդ նոսին և զոզորմելի և զտխմար գրիչս յիշեսջիք ի Տէր, և զոր մեղ խնդրէք, նախ ձեզ կատարեսցէ Քրիստոս, ապա՝ մեզ, և խոշորութեանց և սխալանաց, որ ի սմա, աղաչեմ չմեղադրել, զի աւրինակն կարի խիստ ծ|||քան էր և պակաս*, և Քրիստոսի փառք։

բ

Փրկող՝ Վարդան

318բ Տէր Աստուած, ողորմի Վարդան սրբասնեալ քահանաի, որ է սուրբ Աւետարանս իմ աղբաւրն Պապիաւսին, և ետ զսայ ոմանմն, և գնացել էր յեզր ծովուն։ Ես՝ Վարդան գտայ և շատ տառապեցա, ինչուի թափեցի։ Որ կարդայ կամ աւրինե[ն]է, յիշեցէք յԱստուծոյ թողութիւն Պապիաւսին և Վարդանայ, և ծնողաց մերոց գնացելոց առ Քրիստոս, ամէն։

գ

Կազմող՝ ճաւսլին

Ջկազմող սորա զճաւսլին ան[արժ]ան քահանայս յիշեսցէք ի Քրիստոս։

208

ԱԻԵՏԱՐԱՆ

Վենետիկ 153, Բ. Սարգիսյան, 8ուցակ Ա, էջ 676

Գրիչ՝ Յուսիկ
Վայր՝ ճոխաքի վանք

169ա Ի թուիս ՈՂՔ (1250), ի կաթողիկոսութեան տեառն Կոստանդեայ և ի թագաւորութեան Հեթմոյ, որդւոյ Կոսաանդեա, և ի կաթողիկոսութեան տեառն ||| հայրապետին Ասորոց՝ յոյժ ծերի և աստուածասիրի և բարի

գրչի կողմից՝ խոսքը ձեռագրի կազմի կապտալները փաթաթող թելերի մասին է, որոնք մետաքսյա են և գործել է Սահականոսը։

* Այս և նախորդ բառը ջնջված է և դժվարընթեռնելի։

համբաւի՝ գրեցաւ սուրբ Աւետարանս Մատթէոսի աւետարանչի և այլ Մարկոսի և Ղուկասու և Յովհաննու սակաւ սակաւ, ի խնդրոյ սրբասնեալ և պատուական հայրապետին վանացն, որ կոչի Ճոխաք, յոյժ հռչակաւոր և բազում զարդարանաւք պայծառացեալ քահանայիւք, սարկաւագաւք, դպրաւք, նմանեալ անմարմնոցն կրանիւք և վարուք և աղքատասիրութեամբ՝ որպէս ի Տէառնէ առեալ պատուէր։ Արդ գրեցաւ ձեռամբ մեղաւորի Յուսիկ անարժանի, վասն որոյ Աստուած ողորմի ասացէք, ամէն։

209

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈԲԱՅ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Երևան 4037 (ԺԵ դ.)

Հեղինակ՝ Վանական վարդապետ

103բ *Ըստ բազմազան շնորհաց Հոգոյն շնչեալ ի միտս իմաստնոց, որ չուսաւորէ զմիտս լսասիրաց, մանաւանդ վարժելոց ի յարգանակի եդեւոյ իբր ի սեղան ամենեցուն հաւաքեալ ի մի, առ ի դիւրութիւն ընդհանուր հանդիպելոց։ Եւ այս են անուանք, զորոց զբանսն եդաք.* Եփրեմ, Եւսեբի, Ստեփաննոս, Դավիթ, Մովսէս Քերթող, Որոգինէս, Մովսէս Գանձակեցի, Բարսաւիւսան, Փիլոն, Եպիփան, Եւագր, Շարունիկն, *և յաւել[ո]ւածին նշանն այլ, զորս բազում աշխատութեամբ հաւաքեալ ի մի, դի դիւրալուր լիցի բան Յոբայ Երանելոյ, ի փառս Քրիստոսի, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն*։*

210

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Երևան 4037 (ԺԵ դ.)

Սրբագրող՝ Յովաննէս Գառնեցի

224բ Ստուգաբանութիւն Սաղմոսիս ի Յովաննէս Գառնեցոյ՝ ճոգելի վարդապետէ, որ յոմանց յերկբայս թըփ:

ԶՍաղմոսս Դաւթի, մանաւանդ թէ զերգս Հոգւոյն Սրբոյ այլ և այլ՝ աւելի և պակաս, նըւագեն մանկունք եկեղեցւոյ, ոչ ուսեալ զճշմարիտն և ոչ իմացեալ ղճըշգըրիտն. եւ այս եղեւ յանհոգութենէ ոմանց և ի սխա-
225ա *լագիր գրչաց։ Իրահամարձակք ոմանք ‖ մտայօդ իմացմամբ աարագրե-*

---

* *Այստեղ 1251-ի թվաշարքում (այդ թվականին է մահացել Վանական վարդապետը), դնում ենք նաև անթվական երկու հիշատակագրություններ, որոնցում հիշատակված է Վանականը, որպես կենդանի գործիչ։*

Ա. «Խնդիրք Վահրամա իշխանի և Ջալալա Հայչենոյ գաւառի և պատասխանի Վանական վարդապետի» (Ձեռ. № 2189. էջ 210ա)։

Բ. «Արդ, այս Տաւնացոյց կարգեալ բովանդակ տարոյ աշխատութեամբ տէր Իսրայէլի Խաչենեցոյ եպիսկոպոսի՝ հրամանաւ Վանական վարդապետի, ի խնդրոյ Ջալալ Դոլին՝ տեառն Խաչենոյ և տէր Գրիգորի եպիսկոպոսի, որք աղաչեցին զտէր Իսրայէլ եպիսկոպոսն, հայեցեալ ի կորովութիւն մտաց նորա և ի ժուժկալութիւն բարուցն։ Եւ նա յանձին կալաւ և ջանս եդ գտանել զաւր նահատակութեան սրբոցն, որ դրեալ կայ ի լիակատար պատմութիւնն, համառօտելով նմա զսքանչելի կատարումն սրբոցն և եդ ընդ այլ կարգեալ Յայսմաւուրս, զոր կարգ ամսոցն Հայիւ և Հռոմիւ միաչունչ եղեալ անսղալ զտարին կատարեն» (Ձեռ. № 1511, էջ 601 բ)։

ցին զուղիղն և զուղ[ղ]որդն։ Նայ և բաղում անկամ վիճին ոմանք ի նրւագելն ղՍաղմոսս։ Եւ այլք ոմանք ծայրաքաղ առնելով բարբանջեն անզիղջ սրտիւ և անիմաստ բայիւք, եւ ոչ յիշեն զասացեալն ի Դաւիթեայ, թէ Սաղմոս ասացից և ի միտ առից։ Եւ զհրամայեալն ի Պօղոսէ, եթէ Սաղմոս ասացից մտօք և Սաղմոս ասացից հոգւով։

Ամենայն ազգ[ք] գրովք երգեն զՍազմոսս և հայք ի բերան առեալ ասեն վայրապար, քահանայք և ռամիկք, մանկուք և կողեռք և հաւատ-[ա]ւոր կանայք։ Եւ երանի թէ ամենայն ոք հրճուեալ նըվագէր զհաստատն և զտոյգն։ Այլ ես նուաստս Յովաննէս Գառնեցի, ծառայակից ձեր ի Քրիստոս Յիսուս իբրեւ զայս տեսանէի, խիստ վշտանայ[ի] տարա-կուսանօք։ Ապա ճանապարհ արարեալ գնացի ի մայրաքաղաքն մենաս-տան ի Հաղբատ, և որոնեալ գտի ի թարգմանչացն գրած մագաղատ Սաղմոսարան մի, զոր առեալ սուրբ վարդապետին Սարկաւագ կոչե-ցեալ, այն, որ զՏոմարն երեւեցոյց զհին Հայոն, եւ նա սերմանեաց զայս
225բ ուղիղ և զուղ[ղ]որդ ‖ Սաղմոսս։ Եւ զի ոմանց այլ և այլ երեւի սա, բայց դու, ո՛վ սիրելի, ընկալ զայս գաղափար իբր բազում երկամբք ստուգեալ։ Այլ ես զայն բանքն, որ կասկածաւոր թըւին քեզ, զայն բացէ ի բաց եմ գրել. դու մի կարծեր, թէ պակաս է բանն, այլ ամենայն ջանիւք ջանայ, որ զինչ գրած է, զայն ուսանիս և զայն դրեսցես հաստատութեամբ։ Զի թէ ի վերայ հասանես, խիստ աւգտիս, զի ճշմարտաբան է, և լուսաւորիս հոգւովն սրբով, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն*։

211

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 3033

Գրիչ՝ Սարգիս
Վայր՝ Հռոմկլա

ա

Փառք միշտ փառաւորելոյն Աստուծոյ Հա[ւ]ր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն միոյն զաւրութեան, տէրութեան և կամաց, ամէն**։

---

* Նույնը կա մի Աւետի ժամագրքում փոքր այլ խմբագրությամբ։

«Ինչ ես մեղաւոր տէր Ստեփանոս՝ ծառայս ծառայիցդ Աստուծոյ՝ ի բազում ամս տենչ-մամբ տոչորեալ էի ի սէր ուղղարան Սաղմոսարանիս աւետի. ահա հանդիպեցայ ընդիր և լաւ աւրինակի, որ էր գրած յիշատակարանին, թէ գրեցաւ սա յաւրինակէ սուրբ վարդապետէն Դաւեճեցոյ, ձեռամբ նորին դրեալ և ստուգաբանեալ ճշմարտիւ, կրկին կրկին։ Որ նա նոյն բաղձ-մամբ ի խընդիր եղեալ էր ուղղարան Սաղմոսարանիս, որոյ յիշատակարանն դրեալ էր։ Եւ ապա ասէ. Դնացի ի սուրբ սէխոն Խաղբատ և երկիրպագեցի սուրբ խաչին և սուրբ գերեզմանի մեծի և տեսանող իմաստասիրին Հայոց սուրբ վարդապետի Յովաննիսի. մականուն Սարկաւագի. այն որ բազում ճգամբք զՍազմոսն թարգմանչագիր Սաղմոսարանէ դազափարեաց։ Զոր և իմ հանդիպեալ նորան՝ սուրբ վարդապետի Սարկաւագի ձեռագրիւ Սաղմոսարան, և իմ առեալ զայն Սաղմոսարանն՝ համբուրեցի և ինձ ետու գրել զսա յիւրմէն ամենայն ստուգութեամբ՝ գրանն, զգիր, զհարցուկն, զտուն[ն], զկէտն, զստորն, զշէշտն, զբոյթն. զպարոյկն, զսւեղն, զենթամնայն, զսոսկ. բայց մի ոք իշխեսցէ տգիտաբար բան թիւրել և կամ զդրեալսն զտուգել յօրինակէս, որպէս և ես Յովաննէս Գառնեցի» (Ձեռ № 5348, էջ 272ա)։

** Գրված է ամբողջ սյունակում կարմիր երկաթագրով։ Այսպես են գրված նաև հիշատա-կագրությունները։

409բ Որոց բաղձալի է հանդերձեալ կենացն խոստմունք և սէր արարչին, նոքա միշտ մրցին, թէ որպէս ժառանգորդք լիցին կենացն անվախճանից և մտայոյզ դիգերանաւք տոչորին զկամս Տեառն իւրեանց կատարել։ Ոմանք զանձինս իւրեանց ճգնութեամբ պատարագեն, և կէսք յաղքատս և տնանկս ծախեն զգոյս իւրեանց։ Եւ այլք պէսպէս բարեգործութեամբ հաճոյանան Աստուծոյ, և իւրաքանչիւր ըստ կարի իւրում և ըստ շնորհելոյ նմա ի վերուստ, և գի թեպէտ և ընդունայնն ընծայից հեզ է և խոնարհ, և հայի ի յաւժարութիւն սրտին, եւ ոչ յաղագս սակաւուց զոք մերժէ, այլ յարգէ, գովէ և մեծամեծաց յիշատակի արժանի առնէ և պար-
410ա գեաց հատուցման, որպես զը || կինն այրի, որոյ բանք բարեաց քարոզի միշտ ի ներկայս յեկեղեցի սուրբ, զարթուցանել զմեզ ի թմրութենէ մահաբեր քնոյ և յորդորել ի նախանձ հոգևոր։

Իսկ ի թուականիս Հայոց Ջ (1251) յամս աստուածապատիւ մեծի կաթողիկոսին Հայոց և հասարակաց հարս տեառն Կոստանդեա, զոր Տէր Աստուած ըստ առաջին սուրբ հայրապետացն դասեսցէ, ընդ որս եւ Վարդան նուաստ ծառայ Քրիստոսի, և աշակերտ սուրբ տեառնս և ըստ շնորհացն Աստուծոյ սպասաւոր և փակակալ մեծափառ տաճարացս Աստուծոյ տանս հայրապետական աստուածապահ դղեկիս որ կոչի Հռոմկլայ, ցանկացաւղ եղեալ բարեաց ճանապարհի առաքինեաց և ուղ եղեալ թէ ընթանամ յառաջ և ոչ ունելով աւժընդակ գործս ինչ անբիծ։
411 Արդ ակն չոր || ից աւետարանչացս եղեալ, զձեռս առ սոսա բարձեալ մատամբ սրտի հառաչեալ առ իշխանութեան աւուրն զսոսա բարեկամ կոչել և ասել թէ՝ Ով որդի և կաց առ իս անմեկնելի, վասն որոյ առեալ մեր զսուրբ աւետարանիչս Յոհաննէս և զՂուկաս և զՄարկոս և զՄատթէոս, և զբանքս նոյն ինքն փրկչին բարեխաւս ունելով առ ինքն Աստուած, և գրել եաու զսուրբ մատեանս զայս ծաղկերանկ և ոսկենկար յաւրինուածով ի լաւ ի յընտիր աւրինակէ բանիւ և եղանակաւ, ընդ հովանեաւ մաւրն լուսոյ Սրբոյ Աստուածածնի և գեղեցկայարմար տաճարիս Սրբոյն Գրիգորի, յիշատակ հոգւոյ և բարեխաւս յատենին։
411ա Արդ, եղեալ զերեսս յերկրի աղաչեմ զդասս || սրբազանից, ղի յորժամ ընթեռնոյք զաստուածախաւս մատեանս զայս ի ժամ սոսկալի սուրբ պատարագին, յիշեսջիք սրտի մտաւք զմեղուցեալս Վարդան՝ զկազմող և ղստացաւղ սուրբ մատենիս, աղաչեմ յիշել և զծնաւղսն իմ և զհամաւրէն ազգայինսն իմ, և որք յիշէքդ, յիշեալ լիջիք և դուք ի Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամմէն։

Ընդ նոսին աղաչեմ և զիս յիշման արժանի առնել՝ զանարժանս ի գրչաց Սարգիս սարկաւագ, և զծնաւղսն իմ և զամենայն արեան մերձաւորսն իմ։ Դարձեալ աղաչեմ ղյիշողդ յիշման արժանի առնել զտէր Ստեփանոս արհեպիսկոպոս Մելիտենոյ և զհարազատ եղբայրն իւր զհայր Մակար, որ նիւթոյս առիթ եղեն, և Տէր Յիսուս որ առատն է ի պարգևս,
411բ յիշողդ և յիշ || ելոցս առհասարակ ողորմեսցի, և նմա փառք յաւիտեանս, ամմէն։

Բ

Ո՞վ յանսկիզբ ծոցոյ բան,
Որ ծաղկեցար յազգս մարդկան,
12ա *Եւ մեզ զշնոր || հս քո շրթան,*
Հեղեր աւրհնեալդ յաւիտեան.
Դու զպճնողս քո բանի.
ԶՎարդան արա յիշման արժանի.*

Գ

124բ *Զկուսակրաւն քահանայս մեր զՎարդան յիշեսջիք ի Տէր.*

Դ

195բ *Զմեղուցեալս Վարդան, ստացաւղ սուրբ տառիս, յիշեսջիք ի Տէր.*

Ե

409ա *Զստացաւղ սուրբ տառիս՝ զկուսակրաւն քահանայ զՎարդան յիշեսջիք ի Տէր.*

212

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ

Երեւան 5076

Գրիչ՝

271ա *Արդ աղաչեմ զձեզ, ո՞վ մանկունք Նոր Սիովնի, որք հանդիպիք այսմ անյարմար և անարհեստ գրիս, անմեղադիր լերուք, զի առ փափաք սըրտիս և վասն ծովացեալ մեղաց իմոց թերևս շմէեսցէ զսիրտս իմ. Արդ, աղաչեմ զընթերցողսդ և զլսողքդ, զի թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, զի մի կրկնապատիկ տուժեցայց վասն մեղաց իմոց, զի յոյժ եմ մեղաւոր և անառակ գործով լի, զի թերևս աղաւթիւք ձերովք գտայց թողութիւն ի բարերար Տէառնէն մերմէ, և յիշողացս, և յիշելոցս Աստուած Հայր, և Որդի և Սուրբ Հոգին տացէ զքաւութիւնն ամէն, ամէն. Յ.*

Եւ որ ի գրելս մեզ սպասաւորեցին ռոճկաւք կամ հացով, կամ փոշիջուր եփելով կամ գինով, Գրիգոր*ն, ի[ր] կողակիցն* Մունաթ խաթունս, *Մղանն՝ մեծ մայրն, սպասաւորք մեր, որ ի մեր կերակուրն և ըմպելին երախտիք ունի, Քրիստոս Աստուած հատուսցէ իրենց ամէնին [հ]աւասար, փոխարէն զիւր արքայութիւ[ն] ամէն, ամէն.*

*Գրեցօ ի թուիս Հայոց ի Չ (1251)**.*

---

* Գրված է երկու խորաններում, ոսկյա խորքի վրա, կապույտ, զարդագիր երկաթագրով։

** Ձեռագրի ստորին մասը կտրված է, միայն Չ թվականն է կարդացվում։ Չնայած ազատ տեղին, այլ թվականի հետք չի երևում։

213

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7739 (1001 թ.)

Ստացող՝ **Ներսէս**

179բ Ես Ներսէս մեղապարտ քահանա բազում սիրով եւ ջանիւք ստացայ եւ վերստին նորոգեցի զսուրբ Աւետարանս յիմ հալսել արդեանց եւ աշխատանաց, յիշատակ ինձ եւ ծնողաց, եւ եղբարաց իմոց, եւ զկողն* իմ, զի կարի շոյտ քակտեցաւ յինէն ի Տէր, եւ Աստուած ողորմեսցի մեզ եւ ձեզ առհասարակ, ամմէն։

Ի տարիոջն, խնդրեմ, ժամ աւր Ա(1) թէ այլ կարես։

Թվ[ին] Ջ(1251)ն էր։ Ինձ անջինջ պահէք վասն սուրբ գրոցս։

---

* Այսինքն «զկողակիցն»։

214

ԺՈՂՈՎԱԾՈ

երևան 2273

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Խորանաշատ

ա

361ա Փառք ամենասուրբ Երրորդութեանն անբաժանելի, Հաւր անսկզբան, և Որդւոյ միածնի, և Հոգւոյն ճշմարտի յաւիտեանս, ամէն։

Գրեցաւ լուսաշաւեղ և աստուածաշունչ գիրքս այս ի թուաբեր ամանակաց Հայկազնեան ի Չ և ի Ա համարին (1252), ի նեղ և ի դառն [ժամա]նակիս այսմիկ և ի գարուս հետևման, և այս վասն մեղաց մերոց, ղի բազմացաւ անհնարին վիշտք և նեղութիւնք ի վերայ ամենայն աշխարհի, ի ձեռն անաւրէն և այլակերպ ղաւրուն Նետողաց, որով բաղմացեալ են քան զաստեղս և քան զաւազ ծովու։ Իսկ գրեցաւ տառս աստուածաշունչ ի վանս վարդապետի Վանականի, Խորանաշատ կոչեցեալ, ընդ հովանեաւ Սրբոհոյ Աստուածածնիս, որ է յոյս և բարեխաւս աշխարհի։ Արդ, ես Ստեփանոս քահանայ, սիրող եղեալ բանին սպասաւորութեան վասն պատուիրանացն Աստուծոյ մերո, սիրել յամենայն սրտէ և ի զաւրութենէ ըստ կամաց իւրոց ի փառս, գրել ետու ղհոգեշահ բանս լուսաւորութիւն հոգւոյ և մտաց իմոց, ի յիշատակ և ի բարեխաւս ինձ և ծնողաց իմոց։

Արդ, գրեցաւ երկակ բաներս առաքելական և մարգարէ[ակ]ան ի տանս Աղուանից, ի գաւառիս Երգևանճ կոչեցեալ, ի վանս Խորանաշատ Սուրբ Աստուածածնիս, ի գլուխ իշխանութեան երկրիս այսմ պարոն Աղ-
361բ պուղայիճ, և որդոց իւր[ո]ց Վաճրամ և Ջամարէ և Իւանէ, || և ի հայրապետ[ու]թեան տեառն Ներսիսի Աղուանից կաթողիկոսի։

Արդ, ո՛վ սուրբ մանկուք եկեղեցոյ և կոչեցեալք յորդեգրութիւն Հաւրն երկնաւորի, որք յաւժար կամաւք և շնորհա[լ]ք Հոգւոյն] Սրբոյ աւգտիք և կամ աւրինա[կ] [ա]ռնոյք զլուսավոր գիրքս զայս, յիշեցէք նախ և առաջին զփառաւոր վարդապետն և զհասարակաց հայրն զտէր Վանական, որ լուսատու և բաշխիչ եղև ամէնառատ շնորհացն Աստուծոյ, ընդ նմին և ձեռասուն զաւակ իւր զԳրիգորէս վարդապետն, որ այժմիկ յաջորդէ զաթոռ վարդապետին իւրոյ, լեալ բանիւ և գիտութեամբ Հոգւոյն Սրբոյ, ընդ սմին զՍտեփանոս և զԿիրակոս քահանայք և զծնողսն իւրեանց, հանդերձ ամենայն բարեկամաւք և ընկերակցաւք, որ են գաւառաւ Բա-

բերդեցի, ի գեղջէն, որ կոչի Խուբս և սնեալ ի հռչակաւոր ուխտն, որ կոչի Տարաւնցիք, որ կան առ ոտս եկեղեցոյն Ամենափրկիչ կոչեցեալ և Սուրբ Աստուածածնին Մարիամու։ Եւ ի վերա այսր ամենայնի, զանարժան և ղտարապեալ գրիչս զԳրիգոր և զծնողսն իմ, և զսնուցողսն և զամենայն հոգևոր եղբա[ր]քս, [որ] կան շուրջ զմեզ և խնամեն զմեզ հոգևոր սիրով իւրեանց, ղի թեպէտ և խաղոր էր գիրս, բաղում աշխատեցայ և լի հաւատով գրեցի, և այս էր պատճառն, որ չէաք հմուտ այսմ արուեստի, և յիշողքս, և յիշեալքս աւրհնին [ի] Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Բ

148բ Ջստացող զրոցս զՍտեփաննոս յիշեսչիք ի Քրիստոս, ընդ նմին և ղծրողս աղաչեմ։

Գ

153բ Ի խաչ ելեալդ Քրիստոս, տուր ինձ իմաստութիւն և համբերութիւն։

Դ

173ա Ո՛վ սուրբ ընթերցողք, որք աւգտիք ի սուրբ ի յաստուածընկալ բանիցս, յիշեցէք յաղաւթս ձեր զՍտեփաննոս և ծնողս իւր, ընդ նմին և ղգծող սորա զԳրիգոր անարժան քահանայ, և բարեաց տուողն Քրիստոս զձեզ յիշէ իւր գալուս[տ]ն, ամէն։

Ե

Գրիչ՝ Սաեփաննոս

233բ Փառք համագո Երրորդութեանն, որ արժանի արար զիս զտարակոյս՝ տեսանել զվերջին գիծս։ Արդ, գրեցաւ գի[ր]ս Ստեփաննոսի գրոց աշակերտի՝ գաւառաւ Բաբերդեցի, գեղջաւ Խփացի, ի վանացն Տարաւնցի։ Արդ, աղաչեմ զսուրբ ընթերցող գրոյս, ասա[ս]ջիք թէ Քրիստոս քո սուրբ մարմնոյ և արեանդ, ողորմեա Ստեփաննոսի և հարսն իմ Հայրապետ քահանաի, և մարսն իմ Թեկղ կոչեցեալ, և եղբարսն իմ Կիրակոս քահանաի, և միւս եղբարսն Աբրահամ։ Քրիստոս իւր սուրբ մեղսքաւիչ մարմնոյ և արեանն բարեխաւսութիւն տայց նոցա խաղաղական կեանս մինչ ի խորին ծերութիւն, և փոխեալ կենցաղուս՝ սիրով ընկալցի զնոսա Քրիստոս ընդ սիրելիս անուանն իւրո, վասն ղի յոյժ սիրէի զնոսա, և զփոխեցեալն ի Քրիստոս տղա հասակաւ և զքուրն Զաբիկն և Սիծմարն։ Որ զմեզ յիշէ, յիշել և աւրհնեալ լ[ի]ցին յԱստուծոյ, ամէն*։

* Հիշատակարանը և նրանից առաջ եղած նյութը Ստեփանոսը գրել է անվարժ շղագրով։

215

ԱԽՏԱՐԱՆ

Երևան 8321
«Լոմայա», 1902, № 1, էջ 197

Ծաղկող՝ Թորոս Ռոսլին

ա

Տեառն Կոստանդեա կաթողիկոսի
*ՉԱւետարանս այս [ը]ղձալի**
Շնորհեալ սանոյն իւր Լեւոնի
Որդոյ Հեթում թագաւորի։
Առ՛ի նշան արքաւութեան
Դատել ըստ հաւատոյ դաւանութեան,
Որ յուղղափառացն եղեալ սահման
Ի յիշատակ իւր յաւիտեան։

բ

Լեւոն *որդի Հեթում թագաւորի***

216

ԱԽՏԱՐԱՆ

Երևան 3893

Գրիչ՝ Բարսեղ սարկաւագ
Վայր՝ Խորին անապատ

ա

Փառք համագոյ և միասնական Սուրբ Երրորդութեանն յաւիտեանս
յաւիտենից, ամէն։ Յամի եւթնհարիւրորդի և ի մին (1252) թուաբերու-
231բ *թեանս Հայկազեան տումարիս աւարտագործեալ եղև սուրբ և կենսաբեր*
Աւետարանս Քրիստոսի Յիսուսի Աստուծոյն մերոյ, զոր ընկալեալ աս-
տուածալուր վարդապետութենէ երկնաւոր հովուապետաց սրբոց աւետա-
րանչացն Մաթէոսի, Մարկոսի, Ղուկասու և Սրբոյն Յովհաննու աստուա-
ծաբանի, յառաջացեալք յանապական և յանմահարար գետոյն չորից յոր-
232ա *դախաղաց վտակաց, յարբումն և ի զովացումն ծարաւ || ի անձանց, և*
յաւրինեալ զսա թագ արքայական եղեալ ի գլուխ մաւրս մերոյ կաթողիկէ

* «Ղձալի» է գրում Թորոս Ռոսլինը նաև մյուս հիշատակարաններում։

** Գրված է Լևոնի հասակով մեկ կանգնած նկարի աջ ու ձախ կողմերում, իսկ ա-ն՝ հանդիպակաց ընծայականն է նախորդ էջի, որ այժմ բացակայում է ձեռագրից։ Այս զույգ թերթերը վաղուց ի վեր անջատված են եղել մայր ձեռագրից։ Մի թերթը կորել է, իսկ մյուսը Ա. Գևորգյանի չանքերով գտել է իր մայր ձեռագիրը և տեղադրվել նրա մեջ։ Ձեռագրի մանրանկարչությունը վերագրվում է Թորոս Ռոսլինին։ Գրիչը այլ անձ է։ (Այդ մասին տե՛ս Ա. Գևորգյան, «Լևոն երկրորդ թագավորի Ավետարանը», Բանբեր Մատենադարանի, № 8, Երևան, 1967, էջ 141—156)։

Ժամանակն անհայտ է, հավանաբար Լևոն արքայորդու 15-ամյակը լրանալու և մոր՝ Զապել թագուհու մահվան տարում, այսինքն 1252 թվականին է գրված։

սուրբ եկեղեցոյ, ի մխիթարութիւն աւրիորդաց նորին, և ի պարծանս հանուրց հաւատացելոց, և ի փառս փառաց թագաւորին Քրիստոսի։

Զոր իմ բազմամեղի և անարժան քահանայի Յովհաննիսի, ստացա զսա յիշատակ ինձ, և զանձ անկողոպտելի, և փրկանս մեղուցեալ հոգւոյս, ընդ նմին և ծնողաց իմոց և ամենայն արեան մերձակայիցն։ Եւ աղաչեմ զամենէսեան աղերսահայց մաղթանաւք, ովի ոք և իցէ, որ ժառանգէ զսա յետ ելից մերոց յաստեցս, սրտի մտաւք կարեկցաբար իբրև եղբաւր սիրելոյ՝ աղաւթիւք յիշեսցիք առաջի մեղսաքաւիչ սուրբ պատարագին Յովհաննէս ղստացաւղ սորա, և զվերայգրեալսն ի սմա։ Յիշեսցիք և զԱւետիս քահանայն, որ փոխեցաւ ի Քրիստոս, որ տէր գովելի աւրինակիս էր։

Եւ արդ, գրեցաւ սա ի յակառաւոր և հռչակաւոր յանապատիս Խորնի,
232բ ընդ հով || անեաւ Սուրբ Աստուածածնի, ձեռամբ ախմար գրչի և մեղապարտ սարկաւագի Բարսղի, կելով յանապատիս Խորնի։ Ողորմեսցի Քրիստոս Աստուած այս միաբան եղբայրութեանս, որ կան պանդխտութեամբ յանապատիս, [և]առաջնորդի տեղւոյս, Բարսղի և պատուական ծերունոյ հայր Սահակայ և այլ միեղէն եղբայրութեանս, և մասնակից արասցէ զսոսա զամենէսեան բարիվաստակ մշակացն Քրիստոսի։ Նաև գրողի սորա Բարսղի յոգնամ[ե]զի և տառապեալ ոգւոյ, ընդ նմին և ծնաւղաց իմոց և այլ արեան մերձակայիցն։

Արդ, ես ըստ իմում կարաւղութեանս արտասանեցի զսա, որչափ կարացի, և դու ընկալ, ո՛վ պատուական եղբայր Յովաննէս զսա, և զեղկելիս յիշեա ի Տէր։ Ընդ նմին զպատուական քահանայն Բարսեղ և զհայր նորին /// ապիկ Ափսէկեցին, և զՅովհաննէս հոգևոր եղբայրն զպատուական քահանայն, և զՍիմէովն զդեռաբոյս մանուկն, զորդի քեռն իմոյ, զծնաւղսն նորին, և զձեզ Աստուած յիշէ, զի պարգևատու առատ է, և Քրիստոս ամենեցուն ողորմեսցի։

217

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 6202 (909 թ.)

Նվիրող՝ Հայրապետ
Վայր՝ Սուրբ Խաչ

ա

207 Յամի Ջ երորդի առաջներորդի (1252) թւի, ի հայրապետութեան տեառն Բարսղի Հա[յ]ոց կաթողիկոսի, ես Հայրապետ աբեղայս գնեցի զսուրբ Աւետարանս ի յՈստան քաղաքի՝ յայլազգեաց, ի Իե(25) դեկ[ան] կարմիր, եւ ետու ի Սուրբ Խաչի վանքն, յիւր սեպհական տեղն, որ առն[են] յամէն<յամէն> յամ ի Բ (2) պատարագ, զտեառնընդառաջին և զԿիւրղին անխափան։ Եւ որք հեռացուցել ջանայ ի Սուրբ Խաչէն զինչ եւ իցէ պատճառաւ, ինքն հեռացեալ լիցի ի փառաց որդւոյն Աստուծոյ, ամէն։

բ

132բ Ո՛վ դասք սրբազանից եւ սպասաւորք աստուածային խորհրդոյն, յորժամ ընթեռնուք զսուրբ Աւետարանս, զՀայրապետ նուաստ քահանա եւ

զծնողս իմ զԽաչիկ եւ զՏիկնոց յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, եւ Աստուած յիշողացդ ողորմեսցի։

218

ԱՒԵՏԱՐԱՆ

Երուսաղէմ 3459

Գրիչ՝ Խաչատուր

ա

482 Զսուտանուն գրիչ յիշեա և զդժիրակ կրաւնաւորն, որ շնորհիւ Տեառն սկսայ եւ ձեռնտուութեամբն նորին կատարեցի զաստուածախաւսութիւնս սրբոց լուսաւորչացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու եւ Յովհաննու, ի թուականութեան Հայոց ՉԱ (1252), ի թագաւորութիւն քրիստոսապսակին Հեթմոյ, եւ ի հայրապետութիւն տեառն Կոստանդնեայ: Գրեցաւ սա ձեռամբ իմով նուաստի Խաչատրոյ, ի խնդրոյ սրբասնեալ կրաւնաւորի Կիրակոսի, որ ստացաւ զսայ ի յարդար վաստակոց, յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց, եւ ընդանեաւ ի Վերինն Երուսաղէմ։

Արդ, որք աւգտիք ի սմանէ, յիշեսջիք ի Քրիստոս զԿիրակոս, որ հետեւող աստուածային դանձոյս, եւ զհայրն իւր զԲարեմանուկ, եւ զմայրն իւր զՔոյրաւզատն, եւ զհամաւրէն ազգականսն՝ զկենդանիսն եւ զմեռեալսն, եւ զիս զմեղապարտ գրիչս եւ զծնողսն իմ, եւ դուք յիշեալ լիջիք առաջի ահեղ ատենին Քրիստոսի։ Տէր Յիսուս ողորմի Ստեփանոս քահանայի եւ որդւոյ իւրոյ Կոստանդնեայ, եւ Գորգ քահանայի։

բ

135 Քրիստոս Աստուած քո սուրբ չարչարանացդ բարեխաւսութեամբ ողորմեա գրողին, եւ ողորմեա պարոն Յուսիբայ, եւ իւր զաւակին տիկին Խոսրովանուշին, եւ իւր մաւրն Քանանայի եւ Դաւթի, ամէն։ Եւ Սիոն քահանայի ողորմի, որ զԱւետարանն աւրինակ խնդրեցաք, նա երեդ։

գ

376 Քրիստոս Աստուած քո սուրբ Աւետարանիդ բարեխաւսութեամբ, ողորմեա Յոհաննիսի քահանայի, եւ Դաւիթ դարբնի, եւ Յուսկանն փիլ[իսոփայի]։

դ

222 Զնուաստ եւ զանարհեստ գրիչ, եւ զՊետրոս, որ զսյս զընչուիրս շնորհեաց, յիշեսջիք ի Քրիստոս։

219

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան 7463 (1413 թ.)

Աշխատասիրող՝ Կիրակոս վարդապետ

349բ Յիշատակ Կիրակոս վարդապետի:

Յուսով որ առ Աստուած և վասն սիրոյ վկայից Քրիստոսի և քարոզողաց բանին կենաց՝ առաջնորդաց և լուսաւորչաց եկեղեցոյ, և խաչակրօն միանձանց ճգնաւորաց Քրիստոսի, համարձակեալ ես նուաստ ծառայից Քրիստոսի Կիրակոս *վարդապետ, ի թուականութեանս ՉԲ (1253), աշխատասիրեալ յաւելի ի նախակարգեալ Տանապատճառս ճառս համառաւտս ԾԺԲ (112), հաւաքեալ յաստուածաշունչ գրոց, ի պայծառութիւն կաթողիկէ եկեղեցւոյ և մեզ տանողացս, ի բարեխաւսութիւն տանողացս։*

Եւ աղաչեմ զամենեսեան սիրովն Քրիստոսի, ոչ բառնալ զյիշատակ բանիս, այլ գրել յամենայն գիրս՝ որք գրրին ի սմանէ, զի՛ և ձերն գրեսցի յիշատակ ի գիրն կենաց, և որք բառնան, բարձցի և նորայն ի կենաց դպրութենէն։

Այլ և գրողի և ստացողի աւրինակի գրոցս վարդապետքն Սաեփաննոս *և* Վահրամ*, և նոքայ գրեսցին ի դպրութիւն կենաց ամէն**։

---

* *Նոյն հիշատակարանը կա նաև Մատենադարանի № 7433 Յայսմաւուրքում, աննշան տարբերությամբ. «Յուսովն որ առ Աստուած և վասն սիրոյ Քրիստոսի և քարոզողաց բանին կենաց առաջնորդացն և լուսաւորչաց եկեղեցոյ և խաչակրաւն միանձանց ճգնաւորաց Քրիստոսի, համարձակեալ ես նուաստ ծառա Քրիստոսի* Կիրակոս *վարդապետ, ի թուականիս Հայոց ՉԲ (1253) աշխատասիրեալ յաւելի ի նախակարգեալ տաւնս՝ ճառս համառաւտս ԾԺԲ (112), ի ձեռն* Ստեփաննոսի *և* Վահրամա *վարդապետացն, հաւաքեալ յաստուածաշունչ գրոց, ի պայծառութիւն կաթողիկէ եկեղեցո և մեզ տանողացն ի բարեխաւսութիւն։*

Եւ աղաչեմ զամենեսեան սիրովն Քրիստոսի, ոչ բառնալ զայս յիշատակ բանի, այլ գրեալ յամենայն գիրս, որ գրին ի սմանէ, զի և ձերն գրեսցի յիշատակ ի դպրութիւն կենաց, և որք բառնան, բարձցի նոցայն ի դպրութենէ կենաց։

Աւրհնեալ է ամենասուրբ Երրորդութիւն Հայր զՈրդի և Հոգին Սուրբ յաւիտեանս յաւիտեանս» (№ 7433, էջ 428 բ)։

220

ԱԻԵՏԱՐԱՆ

Կյուլեսէրյան, Ցուցակ Ձեռագրաց, էջ 468—472, Ս. Տեր-Ներսեսյան, Տրեների պատկերասրահի ձեռագրերը 44—17, էջ 105—107

Գրիչ՝ Յոհաննէս
Վայր՝ Հռոմկլայ

ա

285ա Փառք փառաւորեալ Սուրբ Երրորդութեանն, միաբուն զաւրութեանն, երեքանձնեա տէրութեանն եւ մի կատարեալ իսկութենանն, Հայր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտեանից, ամէն։

Աստուածային սիրոյն հետեւումն բնատրեալ Ձ յաստուածասէր անձըն, զի ամենայն բարեաց սկիզբն եւ գոյութիւն ի նմանէ է։ Եւ այնչափ զաւրաւոր է, եթէ ոք ուղ ինչ ճաշակէ ի նմանէ, անհատ կարաւտի, եւ առաւել ցանկայ, զի թեպէտ մեծ են հաւատ եւ յոյս, սակայն ի հանգեցեալսն ունին զկատարումն, իսկ սէր ընդ Աստուծոյ յերկարածգի յանժամանակ յաւիտեանսն, վասն այնորիկ սուրբքն եւ արդարքն առաչինք զամենայն զկեանս իւրեանց նեղութեամբ եւ չարչարանաւք աւարտեցին՝ ի սէրն Աստուծոյ բեւեռեալք։

Յաղագս այնորիկ եւ տէր Կոստւրնդին՝ աստուածակոչ վերադիտող Հայոց, զամենայն զկեանս իւր Աստուծոյ սիրոյն նուիրեալ ի մանկութենէ, յամենայն գործս բարիս յաւժարամիտ, եւ ի պայծառութիւն տան Աստուծոյ փոյթ, եւ ի ստացումն սուրբ կտակարանաց անդանդաղ, որ մեծ յուսով եւ անհատ սիրով ստացաւ եւ զայս կենսակիր եւ աւետալուր բանս բանին Աստուծոյ, ոչ ի լնուլ զթերութիւն անկարաւտ եւ փարթամ տան իւրոյ, այլ ի լրումն փափագման աստուածասէր հոգւոյն։

286ա Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուականութեանս Հայոց ՁԲ (1253), ի սուրբ եւ յաշխարհամուտ յաթոռս Հռոմկլայ, ընդ հովանեաւ Սուրբ Լուսաւորչին մերոյ եւ աստուածաներկ Սուրբ Նշանիս, եւ այլ բազմահաւաք սրբոցս, ի թագաւորութեանս Հայոց Հեթմոյ պայծառահաւատ թագաւորի եւ բարեպաշտ որդոյ նորա Լեւոնի, որոց տացէ Աստուած կեանս բարիս եւ անսասան թագաւորութիւն ի փառս իւր, հրամանաւ երջանիկ եւ աստուածազգեաց կաթողիկոսի Հայոց տեառն Կոստանդնեայ, որ ստացաւ զսա յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնաւղաց իւրոց եւ եղբարց հանգուցելոց ի Քրիստոս։

286ա Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ժառանգէք զսա, եւ կամ աւգտիք ի լուսաւոր բանից սորա, եւ կամ գաղափար առնուք, յիշեսջիք ի Քրիստոս զբարեաց յիշատակաց արժանիսն՝ զտէր Կոստրնդին աստուածապատիւ կաթողիկոս Հայոց, եւ զուղղադաւան հայր նորին զՎահրամ, եւ զքրիստոսասէր մայր նորին զՇուշիկն եւ զեղբարս նորին զԳրիգոր եւ զԳևորգ, եւ զԳևորգ՝ զվաղուց փոխեցեալս առ Քրիստոս, եւ զեղբաւորդի նորին զհանգուցեալն ի Տէր։ Յիշեսջիք եւ զեղբաւորդի նորին զարժանապատիւ աստուածասէր քահանայն զԹորոս, եւ զքրիստոսապահ որդի իւր զՍտեփաննոս, եւ համաւրէն զամենայն աղգայինս իւր՝ զկենդանիս

եւ զննչեցեալսն։ Յաւդ ողորմութեան ցաւղեսցի ի գերեզմանս ննջեցելոցն, եւ կեցուցիչն կենդանութիւն տացէ կենդանեացն ընդ երկայն աւուրս։

Այլ թէ ոք սրտի մտաւք եւ անկեղծ սիրով յիշեսցէ զյիշատակեալսդ, եւ նոքա եղիցին յիշեալք յողորմութիւնն Քրիստոսի եւ Աստուծոյ։

Արդ, ով բան եւ լոյս, ով կեանք եւ իմաստութիւն եւ զաւրութիւն Աստուծոյ Յիսուս Քրիստոս, ի քո յահատոր եւ սոսկալի գալստեանդ, յահեղ դատաստանիդ եւ յանկաշառ ատենիդ՝ ի ձեռն անխաւս միջնորդիս, եւ անբարբառ բարեխաւսիս, ընկալեցիս զտէր Կոստանդին, ընդ արժանաւոր եւ ընդ հաւատարիմ վաստակաւորսն քո։ Եւ ընդ ընտրեալ հովուապետսն առնուլ զբարեբիոն յաղթանակին ի քո յառատաձիր եւ յաննիւաղ պարգեւացդ, եւ քեզ փառք ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ յաւիտեանս յաւիտեանից, ամէն։

Եւ արդ, ես անարժան եւ անպիտան գծողս Յովհաննէս, յերեսս անկեալ աղաչեմ զամենեսեան, յիշել զմեզ եւ զմերսն ամենայն։ Եւ խոշորութեան եւ սխալանաց անմեղադիր լերուք, զի տկարանայ ամենայն մսեղի ի գործս իւր։ Սակայն եւ ես պակասեալ ի սգալի լուսոյ յաչաց տեսութենէ, եւ ի հոգւոյ և ի մտաց լուսոյ ամենեւին զրկեալ, այլ հարկեալ ի շնորհաշարժ ալեացն եւ պատկառեալ յաստուածապատիւ պատկերէն, գծագրեցի զսա ըստ իմում կարի։ Եւ դուք սիրով ուղղեցէք զթերութիւն եւ Աստուած առհասարակ ամենեցուն ողորմեսցի, եւ ինքն եղիցի աւրհնեալ յաւիտեանս, եւ յաւիտեանից յաւիտեանս, ամէն։

Բ

12բ Ո՞վ յանսկիզբն ծոցոյ բան,
Նոյն եւ ծաղկեալ յաղգս մարդկան,
Որ զայս մատեան Աւետարան
Մեզ հնչեցեր ձայն ցնծութեան։
Դու զպճնողս քո բանի
Ջտէր Կոստանդին հովիւ բարի,
Նստո յաթոռ ընդ Պետրոսի
Երգել քեզ փառս անլռելի։
13ա Որ յամենայն շնչոց աւրհնիս,
Հանուրց գոյից տէր ճանաչիս։
Արդ զնոսիրող այսմ նիւթիս,
Եւ զստացող սուրբ կտակիս
Ընկալ ի փառսդ որ յապառնիս,
Բազմիլ ընդ քեզ ի հար[ս]անիս։
Եւ ծնաւղաց նորին ողորմեսցիս,
Որ յաւիտեանս միշտ աւրհնիս։

Գ

223 Ստացող սորին՝ հոգեւոր տէր Կոստանդին յիշեսցի առաջի Քրիստոսի։

Դ

Ստացող՝ Կոստանդին կաթողիկոս

Ես Կոստանդին ծառայիցն Աստուծոյ ծառայ եւ ողորմութեամբն Աստուծոյ կաթողիկոս ամենայն Հայոց, որ ետու գրել զԱւետարանս զայս, յաղագս անձին իմոյ՝ յընտիր եւ ի լաւ աւրինակաց, եւ ոսկով եւ արծաթով զարգարեցի։ Եւ իմ անսեալ զմենաստան անապատն զՓոսն, եւ միաբանեցի զիւրեանք ի մի պաշտաւն եւ ի մի սեղան, եւ առին իւրեանց սահման ըստ կարեաց իւրեանց, եւ ես միաբանեցայ ընդ նոսայ եւ պարգեւեցի նոցա զԱւետարանս զայս՝ զոր ինձ ստացել էի՝ յիշատակ ինձ եւ եղբաւրգոյ իմո Թորոսի քահանայի, եւ ծնողաց մեոոց, եւ եղբարց, եւ քերց մերոց, զի անփոփոխ մնասցէ ի սուրբ ուխտս, եւ մի ոք իշխեսցէ հանել զսա ի սուրբ անապատէս, զի մի անիծիւք պատժեսցի*։

---

* Ս. Տեր-Ներսեսյանը ձեռագրի մանրանկարչությունը Թորոս Ռոսլինի գործն է համարում։

221

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Սրվանձտյան, Թորոս Ագրտր, Ա, էջ 327—328

Կազմող՝ Սիմէոն արքեպիսկոպոս
Վայր՝ Մալաթիա

Ջմեզաւք մեռեալ հոգին,
Ջտէր Սիմէովն *արքեպիսկոպոսին,*
Մալաթիոյ վերայդիտողին,
եւ իմ որդի Ուալուբէկին՝
Վարժեալ ձեռամբ վարդապետին,
Առիստակէս *րաբունապետին։*
Վերջին կազմողս ի Մելիտենիճ,
Ի դուռն Սուրբ Գրիգորին,
Ի ՁԳ (1254) թուականին
Ի յունիս ամսեանն քսաներկուսին։
Ով որ կարդայ ի յատենին,
Նա մեզ ասէ զՔրիստոս որդին,
եւ զՀայր մեր յերկինքն ի յետ նորին,
Նա թողցի իւր մեղքն եւ իւր ծնաւղին
եւ ժառանգէ ղերկնիցն զբարին։
եւ Աստուած ողորմի իմ վարդապետին,
Առիստակէս *րաբունապետին,*
եւ ինձ անարժան և անպիտան ծառային՝
Տէր Սիմէովն *արքեպիսկոպոսին,*
եւ ծնաւղաց իմոց առաջին եւ վէջին,
Հոգեւորին եւ մարմնաւորին;
եւ ամենայն արեան մերձաւորացն ամենին,
Ով որ ասէ յի սրտիւ զՏէր ողորմին,
Նա Քրիստոս թողու զիւր անցանքն եւ նախնեաց նոցին,
Ամէն, հազար, հազար ամէն։

222

ԱԻԵՏԱՐԱՆ

Վենետիկ, 90, Սարգիսյան, Ցուցակ Ա, էջ 408—410

Գրիչ՝ Յոճաննէս
Վայր՝ Հռոմ

216բ Փառք ամենասուրբ երրորդութեանն ամենայն արարածոց, որոյ անքակ և անսահման է աստուածութիւնն, որ ոչ առեալ և ոչ սկսեալ, ոչ դադարումն քո աստուածական թագաւորութեանդ։ Որ առաքեցեր զբանդ Աստուած՝ ղՄրդիդ քո սիբեվի, որ է յառաջ քան զյաւիտեանս, ի խնդիր ադամեան մարմնոյն, կուսածին երկրորդ Ադամ։ Եւ զամենայն կիրս մարդկային՝ յանձին իւրում կրեալ, բայց ի մեղաց, և քաղցրուսոյց վարդապետութեամբն իւրով բարբառեալ ասէր. Ծկայք առ իս աշխատեալք, և ես հանդուցից զձեզ։ Եւ յայսմ քարոզութեան հետևեալ զհետ ճշմարտութեանն Քրիստոսի առաքեալքն, յորոց ոմանք քարոզք աստուածունակ տնաւրէնութեանն, և ոմանք աւետարանիչք աստուածութեանն, որ ունի յինքեանս զչորս վտակս դետոց յեդեմայբուղխս աղբիւրացն, արբուցանելով զպասքումն հաւատացեալոցս։

Մատթէոս աւետարանիչն ի կոչմանէ Փրկ[չ]ին երթեալ զհետ Քրիստոսի, ականատես եղեալ սքանչելեաց Տեառն և վարդապետութեանն, ընկալեալ զՀոգին Սուրբ ի վերնատան, յետ է(7)ամի համբառնալոյ Փրկչին մերոյ, գրէ զԱւետարանն յԱնդիոք քաղաքի՝ եբրայեցոց բարբառովն, որ բովանդակէ յինքն թիւս ՅՇԵ, (355) Աւետարանս գլխաւորս ԿՉ (66)։

Մարկոս աւետարանիչ՝ աշակերտեալ Պետրոսի առաքելոյ, հրամանաւ նորա գրեաց զԱւետարանն յԱղեկսանդր քաղաքի, յետ ԺԵ (15) ամի վերանալոյ Փրկչին մերոյ յերկինս, գրեաց եդիպտացոց բարբառովն, որ բովանդակէ յինքն թիւս ՄԼԲ (232), Աւետարան գլխաւոր ՇԲ (52)։

Ղուկաս աւետարանիչ աշակերտ եղեալ Պաւղոսի առաքելոյ ի Հռոմ քաղաքի, յետ Ի (20) ամի համբառնալոյ Տեառն յերկինս, գրեաց զԱւետարանն հռովմայեցւոց բարբառովն, որ բովանդակէ յինքն թիւս ՅԽԲ (342), Աւետարան ՀԲ (72)։

Յովհաննէս աւետարանիչ՝ ականատես եղեալ Փրկչին սքանչելեացն և վարդապետութեանն, յետ ՇԲ (52) ամի գրեաց զԱւետարանն յԵփեսոս քաղաքի, յունական բարբառովն, որ բովանդակէ յինքն թիւս ՄԼԲ (232), և Աւետարան գլխաւորս ՇԶ (56)։

Արդ այսմ աստուածային պատմութեանս ցանկացող եղեալ աստուածասէր քահանայ Յոհաննէս, որ բազում աշխատութեամբ և փափաքանաւք դրեցի զսայ՝ ի վայելումն կենաց, և յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողաց իւրոց, և ի բարեխաւսութիւն առ Աստուած. յահեղ աւուրն դատաստանի ողորմեսցի Քրիստոս Աստուած՝ արարիչն ամենայնի, և արժանի արասցէ լսել գերանաւէտ ձայն՝ զնկայքն աւրհնեալք Հաւր իմոյ։

Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս է թվիս Հայոց ՉԳ (1254), ի մեծ

և յանուանի և յակնադիտակ և ի հռչակաւոր քաղաքիս Հռոմ կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի, ի խորանիս Սուրբ Պետրոսի։ Ո՜վ սուրբ եղբարք, որք հանդիպիք այսմ աստուածային քնարիս, յերեսս անկեալ աղաչեմ՝ յիշեսջիք զիս և զծնաւղսն իմ, և զեղբարս զՄատթէոս, որ աւգնական եղև ի նիւթ սորին, նա և զՅակովբ և զՄակարՆ և զՍտեփանոս և զՂազար յիշեսջիք սրտի մտաւք, և որք յիշէք՝ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, ամէն։

223

ԱԻԵՏԱՐԱՆ

Այտըմեյան, Ցուցակ Հալէպի Բ, էջ 6 (1248 թ.)

Վայր՝ [Հռոմկլա]։

Ի թուի ՉԳ (1254) կազմեցաւ սուրբ Աւետարանս ձախաւք Ստեփանոսի դրան եպիսկոպոսի Կոստանդեն կաթողիկոսի ի յիշատակ իւրոյ*։

224

ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ

Փարիզ 113, Երևան, մանրաժապավեն 925

Գրիչ՝ Վարդան։
Վայր՝ Ռիմ։

293ա Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր և Որդոյ և Սրբոյն Հոգւոյն յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Շնորհիւն Աստուծոյ սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցաւ աստուածաշունչ սուրբ տառս Սրբոյն Գրիգորի Հայոց լուսաւորչի, ի խնդրոյ երջանիկ, առաքելաշնորհ եպիսկոպոսին Յովանիսի և սրբասնեալ քահանայից Դանիէլի և Սիմէոնի, զի բազում յուսով և փափագանաւք ցանգացող եղեն սուրբ գրոցս ի վասն յիշատակի իւրեանց, եւ <եւ> ես պատճառեցի զանկարութիւն իմ, բայց տեսի զյոյս դոցա և ի յանձն առի, առաւել վասն բազում մեղաց իմոց, յուսալով իմ ողորմութիւնն Աստուծոյ և ի բարեխաւսութիւն սուրբ հայրապետին Գրիգորի։

Արդ, գրեցաւ գիրքս այս ձեռամբ մեղաւոր և անարժան և անպիտան կիսամեռ և դանդաղ, փցուն գրչի Վարդանի, ի թուականիին Հայոց ՉԳ (1254), ի քաղաքիս, որ կոչի Ռիմ, ընդ հովանեաւ սուրբ տաճարիս, որոյ յանուն սուրբ աւետարանչացն Յոհաննու և Մատթէոսի, և է սա Հոգետուն Հայոց: Եւ ես սուտանունս Վարդան գրեցի զգիրքս զայս և եդի զայս յայսմ եկեղեցւոջ ի յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց Ստեփանոսի քահանայի և քեռն իմոյ և որդւոյն Յոհանիսի, որոց ողորմեսցի Տէր Աստուած

---

* Գրված է արծաթապատ կազմի կռնակին։

և հանգուցեալ ընդ սուրբս իւր աղաչանաւք Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի և ամենայն սրբոց, ամէն։

Ընդ նմին ողորմեացի Տէր Քրիստոս երջանիկ եպիսկոպոսին Յովանէսի և սրբասնեալ քահանայիցն Դանիէլի և Սիմէոնի, ծնաւղաց իւրեանց և բնաւ զարմից ազ(գա)կանաց, ամէն։

Ողորմեացի Աստուած աշխատողաց ի գիրքս, և որ հանդիպեցան յայսմ տեղւոջ և աշխատեցան ի սպասաւորութիւն տկարութեանս մերոյ, ամէն։ Պատրոսակ և Պալաւակ։

225

Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ա Շ Ո Ւ Ն Չ

Երևան 178

Գրիչ՝ Միքայէլ
Վայր՝ Երկայն Մատուռի անապատ

ա

Փառք Հաւր, պատիւ Որդոյ, գոհութիւն նորոգաւղ Հոգոյն Սրբոյ։

146բ *Գրեցաւ մատեանս այս ի թուականին ՉԲ (1253) ձեռամբ* Միքայէլի *քահանայի։ Արդ աղաչեմ զամենայն որդիս Նորո Սիոնի, որ սիրող են այսմ պատուիրանի, յիշել զմեզ և զծնաւղսն մեր ի Քրիստոս;*

Եւ ինքն Տէրն բարի
Եւ ողորմած յամենայնի,
Մեզ և ձեզ ողորմեսցի,
Եւ նմա փառք յաւիտենի։

բ

177բ *Մինչ ի յայս տեղս եաք նա Պապիաւան եկն և երեր մեզ աւձանման, չգիտեմ ուստի։*

գ

178ա *Ջմեղաւք մեռեալս և զանարժան գրիչս* Միքաէլ, *աղաչեմ յիշել ի Տէր Յիսուս։ Գրեցաւ մատեանս այս ի թուականիս մերում ՉԴ (1255), յամսեանս հոգտեմբերի ԺԴ (14)-ին, ի յանապատիս* Յերկայն Մատուռի, *ի փառս ամենակալին Աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս։ Եւ վասն դառն ժամանակիս խիստ շտապով գրեցաւ, ոչ գրչի պէտ է այրած, և ոչ գրի։*

դ

212բ *Յամի եւթնհարիւրորդի և չորրորդի (1255), եղև զրաւ մատենիս, յամսեանս հոկտեմբերի ԻԹ (29), աւրն յուրբաթի, և մինչ էաք ի ցաւն, որ է վերջին գիր, վաղվաղակի հաւ խաւսեցաւ, և մեք գոհութեամբ փառս ի վեր առաքեցաք։*

Արդ, գրեցաւ սա ի դառն ժամանակիս, ի թագաւորութեանն Հեթմոյ, և նորա երեք ամն էր երթալոյն ի Թաթարսն, և ես մեղաւորս և անարժանս և անպիտանս կամաւ իմով մտախորհ եղէ ի գրել զգիրս զայս, և վասն առաւել սիրոյ՝ փոյթ ընդ փոյթ գրեցի, որ ոչ գրի պէտ եմ այրել,

ու ոչ գրչի շինելոյ զուղեղն, այլ շտապով ի գիշերի և յամենայն ժամ. գրեցի, Հայնց վատ գրչով, որ զերկու տետրն և զերեքն ի մի գրչէ, նաև զայս վերջինս ի մի գրչէ։

Արդ աղաչեմ սակաւ յիշման արժանի առնել զՄեզ և զմերսն, վասն սիրոյ Քրիստոսի։

Տէր Քրիստոս Յոամանսսնոցս գրեցի ես **Միքայէլ** *քահանա, ի փառս Աստուծոյ։*

Ե

Ր7ա **ԶՄիքաէլ** *զաշխատող մատենի։*

226

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Երևան 6661

Գրիչ՝ **Կոստանդին**
Վայր՝ **Կիլիկիա**

ա

Թուականին Հայոց ՉԴ (1255)։*

Փառք երից անձնաւորութեանն և միոյ աստուածութեանն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Որք զմտացս աչս անաղատ և վճիտ ունիցին երկնանըկատ դիտմամբ առ էականն լոյս և իմանալեացն տեսարանս, նոցին ոչինչ է փոյթ բովանդակ բնաւին ինչ որ յաշխարհի և որ ըստ հոսանուտ և եղծանելի բնութեանս բերին, այլ
412բ միանգամայն զհուր սիրոյն զոր հուրն կենդանի արկ ի բանականս || բնութիւն աւրըստաւրէ արծարծանեն յոգիս անշիջանելի բորբոքմամբ հոգեվորացն տուրևառութեամբ, որով և լուսաւորին ըստ բանի աստուածահայր մարգարէին, որ ասէ. Պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տանաչաց։

Արդ, ըստ նոյն ապացուցի աստուածայնոց իրաց հետևեալ յոգներջանիկ և արդիւնական վարդապետն **Ստեփաննոս**, *և իմանալի աչաց տեսութեամբ պայծառապէս և գերաբնաբար արտափայլեալ, և բովանդակ զինքն Աստուծոյ ընծաեալ, և ի մանկական տիոց ոչ աշխարհական ինչ իրաց հետևեալ, բայց եթէ աստուածային ուսմանց զանձն տուեալ, և ի նոյն միայն աշխատասիրաբար դեգերեալ, որոյ աղագաւ ոչինչ գրելով աշխատութիւն ըստ մարմնոյ, կամ զնիւթականաց գոյից զծախումն, այլ միայն ստացուած կենդանի ասացեալ, այսինքն զպատուիրանս աստուածայինս և զհոգեշունչ մատեանս Հնոց և Նորոց կտակարանաց, զաւետարանական աստուածախաւս քարոզութիւն փրկչին մերոյ և Աստուծոյ. նաև զառաքելոյն Պաւղոսի և զԳործոց առաքելոցն Քրիստոսի և զնւթանեքին Թուղթսն Կաթուղիկեայց յոյժ փափագանաւք և մեծատենչ ըղձմամբետ ծրագրել զաստուածաշունչ Նոր կտակարանս յաստիս ի վայելումն, և յետ ելից իւրոց յաշխարհէ, յիշատակ անջինջ ի ձեռս մանկանց Նորոյ Սիովնի։*

* Գրված է հիշատակարանից առաջ և բնագրից հետո՝ այլ գրչով։

Բ

4ա Ձկոստանդին գրիչ աղաչեմ յիշել աղաւթիւք ի Տէր։

Գ

179ա Ծաստիս ի վայելս և յաւրն Քրիստոսի ի պարծանս եղիցի աստուածախաւս մատեանս շնորհալից րաբունւոյս մերոյ Ստեփանոսի ստացաւղի սորա և Կոստանդեայ գրչի*։

Դ

383ա Ձկոստանդին գրիչ աղաչեմ յիշել ի Տէր։

Ե

Ստացող՝ Սաեփանոս

52ա Ձմեղաւք դատապարտեալ ստացող սուրբ կտակիս և զամենայն քրիստոնեայս, որոց արդեամբք ստացեալ եղև ի ձեռն իմ թշուառական և հեք վարդապետիս Ստեփանոսի ցաւակցաբար յիշեցէք որդիք լուսոյ և խաւարի զբնակեալս, և թողութիւն մեղաց խնդրեցէք։

Զ

Ջտառապեալ ստացող սորին Սաեփանոս յիշեա ի Տէր, Տէր իմ։

227

ԱԻԵՏԱՐԱՆ

Կյուլեսերյան, Յուցակ Անկիւրիո, էջ 1274—1276

Ստացող՝ Յովճաննէս
Վայր՝ Կիլիկիա

Ա

542 Փառք ամենասուրբ Երրորդութեանն, այժմ և յանդրաւ յաւիտեանս, ամէն։

Ի թուականութեանս Հայկազնեայ տումարիս, եւթն հարիւրերորդի չորրորդերորդի (1255) ամի, ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ աստուածասիրի, և ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ ծերունւոյ, ես Յովճաննէս երէց, նուաստ և անարժան ծառայ Աստուծոյ, գտի զաստվածապատում և փրկաւետ սուրբ Աւետարանս առ առն միյոջ, դրեալ ձեռամբ Գրիգորի մականուն Կոզեռն կոչեցեալ, և մտացայ զսա յիշատակ ինձ և իմոցն փոխեցելոցն առ Քրիստոս, և վասն ծովացեալ մեղաց իմոց, թերեւս գտից ներումն թողութեան։ Եւ իմ փափագալ եղեալ զարդարել

* Ձեռագիրը շուրջ 100 տարի հետո 1354 թ. ծաղկել է Սարդիս Պիծակը։ «Ընդ նմին և ղիս ղանարժանս զՍարգիս ծաղկաւղս, որ գոլով զարդարեցի զնկարեալ ծաղիկն և շինեցի զաւետարանչերն, և զծնողն իմ աղաչեմ յիշել ի Քրիստոս]]]»,—գրել է նա (էջ 180ա)։

զսա խորանաւք և ծաղկաւետ վայելչութեամբ և ոսկիատիպ պայծառութեամբ։ Եւ գտի զոմն յոյժ հմուտ և յարդի յարհեստ գրչութեան Կոստանդին կոչեցեալ, և ի ձեռն սորա բազում աշխատութեամբ եղեւ զրաւ սորա։

Իսկ որ արբեալ զմայլիք ի քառսվտակ հոսմանէ սորին, զոր Հոգին Սուրբ թելադրեալ ի շրթունս երանեալ աւետարանչացն, խաւսել վասն տնաւրէնութեան մարդացելոյ բանին, նաև վասն փրկաւետ վարդապետութեան նորին Որդւոյն Աստուծոյ, և նշանաց և արուեստից զոր առ մերս բնութիւն, և վասն իշման Հոգւոյն Սրբոյ ւսո ընտրեալ դասս առաքելոցն, և զնոսին առաքեալ քարողս և աւետարանիչս տիեզերաց, և տալ իշխանութիւն թողուլ որոց կամիցին։ Արդ, աղաչեմ զամենեսեան զմանկունս սուրբ եկեղեցւոյ, յորժամ ընթեռնուք զաստուածահաւաս մատեանս զայս, յիշեսջիք առաջի վենլոյն Յիսուսի զծնողսն իմ զփոխեցեալսն առ Քրիստոս, նաեւ զիմս անարժանութիւն, թերեւս գտից ձեւք թողութիւն ի Տեառնէ։ Եւ որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ հատուսցէ յաստիս բարիս, և ի հանդերձելումն ընդ նմին թագաւորեալ, որ է աւրհնեալ յաւիտեան։

Բ

Ուղղող՝ Վաւդան

544 Ջմեղապարտ Վաւդան աղաչեմ յիշման արժանի արարէք, ով սուրբ դասք քահանայից, վասն զի սակաւ ինչ աշխատանս և ես իսկ ծախեցի ի սա ուղղելով ղաղալն, զոր գտի։

Գ

Ուղղող՝ Ջաւրավար

Ջմեղապարտս Ջաւր[ա]վար նվաստ քահանայս աղաչեմ յիշման արժանի արարէք, ո՛վ դասք քահան[այ]ից, վասն զի աշխատեցայ զի զգիր աւէլին ու զպակասն /// եղ կու գան ի նայ /// ողորդի, և Աստուած [ձեզ] պարգեւեսցէ զերկնից արքայութիւն։

Դ

Սմբատ Գունդստապլ

443 Ողորմեա Քրիստոս Սմբատ Գունդաւստապլի, ամէն։

228

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԲԱՆԻՑ ՆՆՋՄԱՆ ՍՐԲՈՑ ԱԻԵՏԱՐԱՆՉԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ

Ծրուսաղեմ 453 (ԺԴ դ.), Պողարյան, Յուցակ Բ, էջ 437)

Ստացող՝ Յոհաննէս Արքեպիսկոպոս

238 Ես Յոհաննէս եպիսկոպոս դատապարտ ծառայ Աստուծոյ և նըւաստ ձեր, կրսերս իսկ պաշտաւնակից, որդի քրիստոսասէր և բարեպաշտ

իշխանաց իշխողին Կոստանդեա թագապահի և սրբայահաւր Հայոց, շնորհիւն Աստուծոյ և աւրհնարեր փուքով բարէհոգի և քրիստոսազգեաց հաւրն իմո եղեալ ծանաւթ մասամբ իւիք իբր ծագիւ մատին նշուլից աստուածաշունչ և քրիստոսածիր տառից, և իմ յընթեռնուլն զաստուածաբան սուրբ աւետարանչին և սիրելի աշակերտին տեառն զիմաստա[ս]փած հանգըստեան նորին բանս աղաւթից, ոչ լինէր հասու խակախամ միտք բծկանիս ըստ արժանւոյն, որո վասն ի խոյզ իսկ եղեալ գտի զքրիստոսազգեաց երջանկին տեառն Ներսէսի Լամբրոնեցւոյ զհոմաղնեա իսկ մեր և արեանաւուի տեսութիւն արարեալ սոցին բանից ի խնդրո հարց աստուածաղանից։ Ընդ որո գիւտ յոյժ բերկրալից եղէ որպէս զայր, որ զտանէ գանձ յագարակի և կամ որ առնու աւար բաղում ցնծալից, եղեալ Էրեսաւք մտաց, ոչ և եթ անձին իմոյ, այլև յոքանցդ ապագա իմաստախոյզ եղբարց զսոյն ցնծութիւն վայելել, դրիւ ետու, զոր իմ իսկ մեղսամակարթ ձեռամբ և հողացեալ մատամբ սկսա և վասն անպարապութեան իմոյ ետու գոել Փիլիպոսի քահանայի, որ թէպէտ և կիրթ էր գրոյ, այլ վնասեալ էր ի լուսոյ, որո Տէր ողորմեսցի։

Աստուածարեալ ոգոցդ ապագայից ի սոյն վարժողաց և աւգտողաց հայցեմ հողս ձեր Յոհան եպիսկոպոս և րաբունի, ծնողաւք մեր և համայն ընտանեաւք, նա և ևս ուսուցչաւք և ընկերակցաւք և բնաւին իսկ սպասաւորաւք, սրտի մտաւք և բազում հառաչմամբ և արտասուաւք յիշել զմեզ սերտ սրտիւ ի բարին Քրիստոս, ողորմութիւն և քաւութիւն, և հանդիստ ի Քրիստոսէ գտանել ամենեցունցս, զի կարաւտ եմք մտածիլ ձեզ և յիշել ի բարին Քրիստոս, յոր և դուք անմոռաց յիշումն ի միշտ կենդանւոյն մատեանս մեաւք լիջիք դրեալք, ամէն։

Նաև զայսր տառ խնամաւղ և յարգող, և աննախանձ զաւրինակ շնորհող խնամեսցէ գթով ամենախնամն Աստուած, ամէն։ Անմահ փառաց և բարեաց արժանացին համայն քրիստոնէայք ի Քրիստոսէ Աստուծոյ, ամէն*։

229

ՀԱՐՄՑՄՈՒՆՔ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Երևան 6106

Գրիչ՝ Գրիգորիս
Վայր՝ Խորանաշատ

ա

219բ Գրեցաւ Հարց և պատասխ[անիք] սուրբ վարդապետին Վանական Խորանաշատի, ի թվին ՁԴ (1255), հրամանաւ բերեմիտ և ընտրեալ երկու եղբարց Թադէի և Հայրապետի, ձեռամբ մեղապարտ(ի)ս Գրիգորիսի, ի վանս Խորանաշատի, առ դրան Աստուածամաւր։

---

* Հիշատակարանում տարեթիվ չի նշված, սակայն կարծում ենք, որ այն գրված պետք է լինի 1255 թվականին։ Այդպես կարծելու հիմք է տալիս Յովհաննու Ձայտունեցեան մեկնութեան 1179 թվականին հունարենից կատարած թարգմանության վերջում, Ներսես Լամբրոնացու հիշատակարանից հետո գրված հիշատակագրությունը, ուր ասված է. «և սորա օրինակին թիւն ՁԴ (1255) էր. Աստուած ողորմի ասացէք գծողին» (էջ 546)։

Ով հանդիպիք, յիշեցէք զԹադ[է] և զՀայրապետ, և զգրողս մեղուցեալ, և Աստուած զձեզ յիշէ։

Բ

Ստացող՝ Ստեփաննոս

72բ Սեբփաննոսի*։

Գ

125բ Ստեփաննոսի է գիրգս։

Դ

Գրիչ՝ Աստուածատուր

269բ Տէր Աստուած ողորմի Աստուածատուր աբեղային։

230

ՃԱՌԸՆՏԻՐ

Վեհետիկ, 221, Սարգիսյան, Ցուցակ, Բ., էջ 322

Գրիչ՝ Գրիգոր Վզիկ
Վայր՝ Կապոսի վանք

Ա

111բ Կատարեցաւ հրաշապատում եւ լուսազարդ վարդապետութիւն՝ աստուածազգեաց առնն սրբոյն Աբանասի եպիսկոպոսի Աղեքանդրի, եւ գլուխ եւ հիմն ամենայն ուղղափառաց, որ եւ համբաւ հաւատոյ սորա ընդ բնաւս ամենայն, հրամանաւ հաւր Սամուելի, եւ առաշնորդի սուրբ ոխտիս՝ որ Կապոսին ասի, ի նոյն վանքս, ի դրանն Ակոբայ, ձեռամբ մեղապարտ գրողի՝ որոյ անուն Գրիգոր, մականուն Վզիկ, յիշատակ իւրն, եւ ծնողացն իւրոց, եղբարց, քերց եւ ամենայն ազգայնոցն։

Աղաչեմ զքեզ, Քրիստոս որդի Աստուծոյ, ողորմեայ հաւր Սամուելի՝ ստացողի գրոցս, եւ ծնողաց իւրոց, եւ ամենայն եղբարց։ Եւ ինձ Գրիգորի, որ բազում չարշարանաւք փակուցի ի սմա գիր՝ ի պատմել զբանս պատվիրանի քո...

Բ

168ա Թվին ՁԴ (1255)։ Քրիստոս Աստուած սուրբ հայրապետին բարեխօսութեամբ ողորմեա հաւր Սամուելի, եւ ինձ մեղաւոր Գրիգորի։

231

ՃԱՌԸՆՏԻՐ

Վեհետիկ, 200, (1224 Թ.), Սարգիսյան, Ցուցակ Բ, էջ 35

123բ Ի թուին Հայոց ՁԴ (1255) միայբանեցաւ Սուրբ Լուսաւորչին պարոն Քրիստոսայաուր՝ Վասլին որդի, որ յամէն տարին և յամենայն ժամ այս

* Գրված է երկաթագիր, կարմիր թանաքով, կարծես մատենանիշ էր։

աղաւթիցս մասնակիցի ի տանի Սուրբ Արիստադիս[ի] և Գր[իգ]որիսի, Տէր Աստուած զժամանակ նորա յերկայն արասցէ ամեէն, և յամէն տարի սպ[իտակ] տայ։

232

ՇԱՐԱԿՆՈՑ

Մարտիրոսյան, Ցուցակ Մշո, էջ 97

Ծաղկող՝ Սարգիս

Փառք եռանձնեա տէրութեան, երից յատկութեամբ եւ մի բնութեամբ համապատիւ, վեհագոյն ինքնութեամբ Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ, ամէն։

Արդ, եղեւ աւարտումն տառիս որ կոչի Շարակնոց ի լաւ եւ յընտիր օրինակէ, որ է Խլկցի, ի թվականիս Հայկազան տումարի ՁԴ (1255), ի հայրապետութեան տեառն տէր Մխիթարայ, եւ թագաւորութեան Լեւոնի բարեպաշտի եղեւ աւարտումն սորա. աշխատողքս վարձս առնուն ի յԱստուծոյ, ամէն։

Ընդ նմին դիս զանարժան եւ զմեղաւոր հողս Սարգիս քահանայս, զծաղկաւղ եւ զոսկաւղ այսմ տառիս, աղաչեմ յիշել ի Տէր, եւ զծնաւղս իմ, եւ որ յիշէ յիշեալ լիշի ի Տէր։

233

ՍՏՈՐՈԳՈՒԹԻՒՆՔ ԱՐԻՍՏՈՏԵԼԻ

Երևան 1647

252ա Փառք Սուրբ երրորդութեանն կատարելոյ և միոյ։
ՁԴ (1255) գրեցաւ ի թուականիս։

234

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԱՆԴՐԷԱՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Երուսաղեմ 998 (1623 թ.), Պողարյան, Ցուցակ Գ, էջ 606

546բ Եւ սորա օրինակին թիւն ՁԴ (1255) էր։
Աստուած ողորմի ասացէք գծողին։

235

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 10450

Գրիչ՝ Թորոս Ռոսլի[ն]
Վայր՝ Հռոմկլայ

ա

402ա *Փառք քեզ, փառք քեզ անսահման անուն և անզուգական անճնաւո-*
րութիւն, Հայր և Որդի և Սուրբ Հոգի։ Աւրհնութիւն քեզ Սուրբ Երրորդու-
թիւն և մի տէրութիւն, որ ետուր կարողութիւն և սատար եղեր իմոյ տկա-
րութեան ի գրաւ հասանել զ[ը]ղձալի մատենիս, այժմ և միշտ. և յա-*
ւիտեանս յաւիտենից, ամէն։

Շնորհիւ Տեառն սկսեալ և ողորմութեամբ նորին յանգ ելեալ աւար-
տեցաւ մատեանս աստուածախաւս, աստուածունակ, երկրպագելի և
պաշտելի սուրբ Աւետարանս, յամի Չ և Ե երորդի (1256) թուաբերու-
թեանս Հայոց, ընդ հովանեաւ աստուածաբնակ տաճարացս, որ յանուն
միածնի Որդւոյն Աստուծոյ Սուրբ Փրկիչ կոչեցելոյ, և մաւր նորին Սըր-
բոյ Աստուածածնին, և Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի, և սուրբ հայ-
րապետին Նիկողայոսի և աստուածընգալ սուրբ և յաղթող նշանին Վան-
գոյ, և այլես բազմահաւաք սրբոց, որք պաշտին յաշխարհամուտ աթոռս,
402բ *և աւգնականութեամբ սոցա, յանառիկ դղեակս* Հռոմկլայ, ‖ *ի թագա-*
ւորութեանն քրիստոսապսակ և բարեպաշտ արքային Հեթմոյ, *և ի ժա-*
մանակի յորում նոյն աստուածասէր թագաւոր դարձեալ լինէր ի մեծ և
յաշխատամատոյց ճանապարհէն, որ առ խանն աւագ։

Հրամանաւ և ծախիւք աստուածապատիւ տեառն Կոստանդեա *կա-*
թողիկոսի Հայոց, որ զարմանահրաշ վարիւք իւրովք առհասարակ հիա-
ցուցանէր զբնաւս, մինչ զի և յարտաքնոցն առաւել ընդունէր վկայութիւն
զանհամեմատ վարուցն իւրոյ մաքրութեանն։ Քանզի աղբիւր էր նա բա-
րեաց և արբին ի նմանէ ամենեքեան, որք և կամեցան ըստ պասքոյն
իւրեանց։ Սոքա անդստան, նոքա բդւրաստան, ոմանք յարկ ծածկու-
թեան, վասն զի հայր էր որբոց և հոգայր վասն աղքատաց, և առաքելա-
կան թղթովք կանոնական սահմանաւ աշակերտէր զամենայն եկեղեցիս
ըստ ուղղափառ հաւատոյ։ Եւ այնպէս սիրելի էր ամենեցուն, մինչ զի և
աշխարհակալ բռնաւորք ընդառաջ նորա խաղային՝ յորժամ ճանապար-

---

* Գրված է «ղձալի» ձևով։

403ա Հորդուբեամբ հանդիպէր առ || նոսա և պատարագաւք զերեսս նորա պաշտէին, և ապա յղրկատրք լինել զտրիտուրն խնգրէին աւրհնիլ ի նմանէ։ Քան դի արդարև առ սա կատարիւր գնալն ի վերայ իժի և քարբի, և կոխել զամենայն զաւրութիւն թշնամոյն։ Սա և ողորմութիւնն Աստուծոյ գտեալ ի բարկութեան և չարալլուկ ժամանակիս։ Սա և ի վերայ ամենայն առաքինասէր վարուց իւրոց յաւել և զայն ևս՝ լինել գրասէր և աստուածասէր, որով և ստանայր գիրս սուրբս զհին և նոր կտակարանաց, և յոլովանաւթս ոսկւոյ և արծաթոյ և պատուական հանդերձեղէն զարդուց, և նուիրէր եկեղեցւոյ սրբոյ ընդ ամենայն տեղիս, ում զիարդ և պիտոյ ինչ լինէր։

Որ և ի կատարեալ սիրոյն զոր ունէր առ Աստուած և առ ի նմանէ պարգևեալ կտակարանք, ոչ էր նմա փոյթ ի լաւաց գրչաց կամ ի հմուտ արհեստագիտաց միայն ստանալ զայսոսիկ՝ վասն այնորիկ իմոյ, անարժանութեան փցուն և ախմար գրչի Թորոսի մականուն Ռաւսլի կոչեցելոյ
402բ ըստ նախնեաց, հրամայէր զգործի || գրչութեան ի կիր արկանել յաստուածային այս մատեան, որ և զարդարեալ ոսկով զտով և պատուական նիւթաւք ներքոյ և արտաքոյ, ըստ առատապարգև կամաց իւրոց, զոր ունէր առ սոսա, մանաւանդ թէ առ ամենայն ոք։ Վասն զի ամենեցուն, որոց բաց են աչք իմանալի ի մտաց, յաստուածասէր և ի նոյն պշնուն հանապազ, հաւատով և յուսով ակնկալեալ վարձուցն հատուցման և մշտամատոյց ձերոց մաքուր աղաւթից, ո՛վ աստուածասէր հարք և եղբարք, որք և ծնեալ վերստին յորդիս լուսոյ մաւր սրբոյ Սիոն և ժառանգէք զսա ըստ արդեանց հանդիպեցելոյ, զոր աղաչեմ յիշել ի Տէր մանաւանդ առաջի զենման ամահ գառինն Աստուծոյ, զարժանաւորս ամենայն աւրհնութեան յիշատակի, զտէր Կոստանդին կաթողիկոս Հայոց և ստացող սրբոյ լուսազարդիս, և ծնաւղն իւր Վաճրամ և Շուշիկ, և զեղ-
404ա բարս իւր զԳորգ և զԳրիգոր, և զքորք իւր Շուշանիկ, և Վանենի։ || Այլ և զեղբաւրորդին իւր զսրբասէր քահանայն Թորոս, և ղծնաւղք սորա՝ Գորգ վկայեալ քահանա և մայր նորա Ազիզ, և ղեղբարք նորին զաստուածապատիւ եպիսկոպոսն տէր Սաեփաննոս, և զԳրիգոր նորին հայրազատ, և զդստերսն իւր Մլէի և Շուշան, ևս և զորդին իւր Սաեփաննոս, որ այժմ զինուորեալ իշխանական պատուով ի դրունս թագաւորական, և զամուսին սորա Ակաց, և մայր սոցա Տալիթայ, և զմիւս եղբաւրորդի հոգևոր տեառնն զԳրիգոր՝ զինուոր և տարաժամ վախճանեալ։ Այլ և զամենայն ազգք սոցա և զազինս, որպէսզի ննջեցելոցն հանգիստ և ողորմութիւն պարգևեսցէ Քրիստոս Աստուած, և որ այժմ կենդանի՝ անխոով խաղաղութեամբ ընդ երկայն աւուրս պահեսցէ, ամէն։

Յերսս անգեալ ես բազմամեղ և թարմատար գրիչս, աղաչեմ յիշել ի նոյն և զիմ նուաստութիւն, այլ և խոշորութեան սորա և թէ սխալանք ինչ
404բ դիպեսցի, հայցեմ շնորհել թողութիւն։ || Յիշել դարձեալ և զերախտաւոր ծնաւղսն իմ, և զեղբայրն իմ Անտոն ևս առաւել, և որ ըստ հոգոյ և մարմնոյ եղբարք և քորք, հարք և ուսուցիչք, այլ և կուսակրաւն քահանայն Վարդան փակակալ աստուածընգալ տաճարացս և կազմաւղ սորա, և զամենայն աշխատաւղս ի սա առհասարակ ըստ բանից և արդեանք,

որք աւղնական եղեն մեղ։ Եւ Քրիստոս Աստուած որ առատն է ի պարգես, զձեզ յիշեսցէ յերկնից արքայութիւն իւր շնորհիւ ողորմութեամբ իւրով, որ և աւրհնեալ է յաւիտեան, և յաւիտենս յաւիտենից, ամէն։

Բ

4ա Ջմեղապարտ գրիչս աղաչեմ յիշել ի Քրիստոս*։

Գ

5բ Մեղապարտ գրչի սորա ողորմեա Քրիստոս Աստուած**։

Դ

.5բ Տէր իմ Քրիստոս որդի և բան,
Պետ հով(ու)ութեան կարգիս աւծման,
Որ զայս մատեան աւետաբան
Մեզ հնչեցեր ձայն ցնծութեան։
Ահա զքոյս առեալ քեզ տամ
Բարձեալ ի ձեռս առաշի դամ,
Եւ զայս նուէրս բարեխնամ
Եւ յիս նայ[ե]ա տէր հպշտակամ։

.6ա Ո՛վ յանսկիզբն ծոցո բան,
Նոյն և ծաղկեալ յաղգս մարդկան,
Որ մեզ զշնորհս քո շրթան
Հեղեր աւրհնեալդ յաւիտեան,
Դու զտէր Կոստանդին դէտ Հայկազեան
Նսաո յաթոռ կեսար[յ]ական։
Եւ զիւր Թորոս հայրազատեան
Ընկալ ի փառսըդ հայրական***։

Ե

.122բ Ընդ մետասանիցն ընկալ Յիսուս, զտէր Կոստանդին կաթողիկոս եւ զնորին Թորոս, ամէն։

Զ

194ա Զսուրբ եւ զերշանիկ դիտապետ Հայոց զտէր Կոստանդին ստացաւղ սորա յիշեսչիք ի Քրիստոս Յիսուս, ամէն։

---

* Գրված է Եվսեբիոսի քղքից հետո, խորանի մեջ։

** Գրված է խորանի գլխաղարդի համարակալ մուտքի մեջ։

*** Գրված է խորանների մեջ ոսկի խորքի վրա, մուգ կապույտ երկաթագրով՝ բաց կապույտով Նղերված։ Տողերն առնված են կարմիր գծերի մեջ, որոնք իրարից բաժանվում են ոսկյա լայն չեր-- տով։ Շքեղ զարգարված են խորանները։

է

310բ Զստացաւղ սուրբ տաճիս զտէր Կոստանդին կաթողիկոս Հայոց յիշեսչիք ի Քրիստոս Յիսուս*։

236

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Մուրադյան, Յուցակ Մշո Առաքելոց վանքի, էջ 7—8

Գրիչ՝ Յովհաննէս
Վայր՝ Մամոստիա, ուր կոչի Մսիս

Յամի ելթն հարիւրերորդի հինգերորդի թուաբերութեան հայկազեան տոմարի (1256), ի կաթողիկոսութեան տեառն Կոստանդեա Հայոց դիտապետի հեզի եւ ողջախոհի, եւ ի թագաւորութեան Հայոց Կիլիկեցւոց նահանգի Հեթմի բարեպաշտի եւ աստուածասիրի, ես Յովհաննէս էրէց՝ նուաստս եւ տրուպս յորդիս յեկեղեցւոյ, յերկրէ Տարաւնոյ եւ գեղջէ Հացեկաց, որդի Կարապետ քահանայի եւ մօր Ասլկան, եւ ի կենցաղս աշխարհի մեղաւոր եւ անսպառ խոստովանող Քրիստոսի, դիւրաշարժս ի մեղս, դժուարաշարժս յարդարութիւն, ապիկարս յոքունց եւ ախմարս ի գրչաց, փափաքելի սրտիւ եւ շերմեռանդ սիրով եւ յզձալի յաւժարութեամբ ցանկացող եղէ այսմ աստուածաշունչ կտակարանացս աւրինաց եւ մարգարէից ըստ ասելոյն աստուածահօրն Դաւթի, թէ Պատուիրանք Տեառն լոյս են եւ լոյս տան աչաց։ Ըստ այսմ հրամանի զաշխատ ի բաց եդի, շնորհիւն Աստուծոյ սկսայ, եւ նորին ողորմութեամբ յանկ հանեալ աւարտեցի զդիրս սուրբս ի պէտս մեղուցեալ յանձին իմոյ եւ յիշատակ հոգւոյ իմոյ եւ ծնողաց իմոց, եւ ի պէտս մանկանց Նոր Սիովնի։

Զի եթէ պատահեսցի այր խնդրող սորին եւ փափաքէ ըմպել ի կենսատու աղբիւրէս յայսմանէ, եւ կալցէ շնորհս գիտութեան եւ գտանիցէ զսա, հրճուասցի ի վերա սորայ եւ ուրախութեամբ արկցէ ընդ պարանոցս, եւ լաւ համարի զսա, զականս պատուականս զմարգարիտս զեկեղեցիս, քանզի եւ է իսկ, զի սա է գուռն երկնից, բանալի արքայութեան, ճանապարհ մոլորելոց, հաց քաղցելոց, աղբիւր ծարաւելոց, պարծանք արդարոց եւ յոյս հաւատացելոց, եւ ամենայն ինչ որ պատուական է, չարժէ զսա, զի սովաւ արդարքս հաստատեսցին ի գործս բարիս, եւ մեղաւորք զղջութեամբ զարդարութիւն ընգալցին, եւ ամենայն ոք, որ փափաքէ ըմպել ի քաղցրահամ եւ ի կենսատու բաժակէս յայսմանէ՝ կեցցէ եւ զկեանս յաւիտեանականս ժառանգեսցէ։

Ըստ որում կարի գրեցի ձեռամբ իմով եւ աշխատութեամբ, որպէս եւ հրամայէ Տէր Յիսուս, թէ՝ Գանձեցէք զգանձս յերկինս, եւ աստուածային առաքեալն, թէ՝ Գանձ հոգեւորական ունիմ զքեզ աստուածային բարութիւն, եւ դարձեալ Տէրն ասէ, թէ՝ Որ արբուսցէ բաժակաւ ջուր ցուրտ յանուն աշակերտի ոչ կորուսցէ զվարձս իւր. յայսմ յուսալով իմ

* Վերին երեք գրված են ոսկետառ երկաթագրով։

հաւաքեցի զամենայն դիրս աստուածաշունչ հին կտակարանաց եւ եդի ի միասին եւ զպատմութիւն Մակաբայեցւոց, որ ի նախկի ժամանակի մարտիրոսացն, զճշմարտութեան տեսակս բերելով յինքեանս եւ գրեցի զսա ոչ վասն մարմնաւոր ագահութեան, այլ յիշատակ ինձ եւ իմոցն եւ ամենայն հաւատացելոց. որպէս յայտնի է մեզ ամենեցուն որ ընդ մահու գրաւեալ եմք եւ անհնար էր ումէք ազատել ի մահուանէ այլ եւ ոչ կարողացի ոք ի ստացուածոց իւրոց տանել ինչ զկնի ի գերեզմանն, բայց միայն զգործս եթէ բարի եւ եթէ չար։ Որք հաստատեսցի որ ամենայն է եւ աստ մնալոց է, լաւ համարեցայ, որ զկնի փոխման իմոյ յաստեացս փոխանակ ոսկոյ եւ արծաթոյ եւ այլ գոյից ստացուածք գրեանք գտանին քան զայլ ինչ. զի գիրքն եթէ յաւազակացն գողացի, եթէ յայլազգեաց յափշտակի, եթէ այլ ոք առնու, եթէ գնով, եւ եթէ անգին ընդ որ երթայ եւ շրջագայի, դարձեալ ի վանք, յեկեղեցի ժողովի ընդ ձեռամբ եպիսկոպոսի, քահանայի, սարկաւագի եւ կրաւնաւորի, եւ մնասցէ անչինչ յիշատակ Կիւլիկեայ։

Եւ եղեւ զրաւ գրութեան յաշխարքս Կիւլիկեայ, մայրաքաղաքս ի Մամոստիա, որ կոչի Մսիս, ընդ հովանեաւ սուրբ առաքելոցս Պետրոսի եւ Պաւղոսի եւ Սուրբ Նշանիս, որ եւ յայսմ ամի ըստ առաւել նախախնամութեան Աստուծոյ վերադարձեալ եղեւ բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ աշխարհէն Արեւելից յազգէն այլասեռից, որ անուամբ Թաթար կոչի, զի վասն ծովացեալ մեղաց մերոց տիրեաց գրաւեաց զամենայն աշխարհ՝ նուաճեալ ընդ իւրում իշխանութիւնն. ըստ այսմ օրինակի եւ զաշխարհս Կիւլիկեցւոց։ Վասն որոյ հնազանդեալս յանձն առնելով զխառն Քրիստոսի չոգաւ վասն քրիստոնէից, եւ անդ լինէր մինչեւ յամս չորս, զոր բազում պաղատանօք խնդրեալք զբարի թագաւորն մեր եւ զմարդասիրութիւն նորա ոչ միայն այնոքիկ, որ ունի բազում պէտս օգնականութեան, այլ եւ որք ոչ էին յարմարք յայսոսիկ, եւ զի Տէր լուաւ տառապանաց նոցա եւ ետ զհայցելին մեր։ Զի եկն նա զաւրաւք բազմաւք յաշխարհն Հռոմոց եւ թողեալ անդ զաւրս խուժատուժ ազգացն, եւ ինքն փութայր գալ հասանէր աշխարհն իւր Կիւլիկեայ տեսանել զտառապանս նոցա։ Եւ եկեալ բազում յուղղութիւնս արար եւ ողորմութիւն, եւ պայծառութիւն եկեղեցեաց քրիստոնէից եւ քահանայութեան Հաւրն երկնաւորի, եւ այլ առաջակայն Աստուծոյ է դիտելի։

Արդ, աղաչեմ զամենեսին վասն սիրոյն Քրիստոսի, զի որք աւգտիք ի սմանէ, եւ կամ աւրինակէք, զաշխատող սորա զՅովհաննէս էրէց եւ զծնաւղս իւր, եւ զազգատոհմ, եւ զամուսին իւր, զՅովսէփ քահանայ որ զնիւթս շնորհեաց յիշեսջիք աղօթիւք ի Քրիստոս։ Եւ գրեցի զսայ ոչ միայն, այլ կրկնակի զբովանդակ Գիրս աստուածաշունչ Հին եւ Նոր կտակարանաց, զսոսա ստացայ գանձ անկողոպտելի, որ զմիտս զուարճացուցանէ զոդիս արդարոց ուրախալից գործէ, որ ոչ ցեց ապականէ եւ ոչ գողք ական հատանեն եւ գողանան, զի յերկրէ ելեալ նիւթք յերկիր սուզանին եւ ապականին, իսկ այս փարթամութիւն անկողոպտելի առ հասարակ ամենայն բնութեան, վասն այսորիկ զսա ստացայ ի վայելումն անձին իմոյ եւ յիշատակ հոգւոյ իմոյ, և ծնողաց եւ ազգականաց եւ

վարդապետաց. եւ խոշորութեանս եւ սխալանաց, որ ի սմա, անմեղադիր լերուք, զի ախմար էի եւ պակասամիտ, այլ յաժարութիւն իմ եւ սէր ստիպեաց զիս սկսանիլ, եւ ցաւագին անձամբ կատարեցի։

237

ԱԻԵՏԱՐԱՆ

Վեննափակ 100, Սարգիսյան, Ցուցակ Ա, էջ 447—448

Գրիչ՝ Յոհաննէս
Վայր՝ Կիլիկիա

202բ Փառք քեզ՝ անսահման անուն և անզուգական անձնաւորութիւն՝ Հայր և Որդի և Հոգի Սուրբ, յամենայն արարածոց և ի բնաւից եզականացս, ամէն։ Աստանաւր յանկ ելեալ աւարտեցաւ լուսայեղձ և փրկագործ սուրբ Աւետարանս, ի թուականին Ջb (1256), ի գաւառիս Կիլիկեցւոց, ի թագաւորութիւնս Հայոց Հեթմոյ աստուածասիրի և բարեպաշտի, և ի հայրապետութեան տեառն Կոստանդեա, ձեռամբ Յոհաննեսի յոզնամեղի, ի խնդրոյ աստուածասէր և բարի պատանւոյն սիր Լեւոնի, որ է որդի պարոն Լիկոսի՝ եղբաւր թագաւորին Հայոց Հեթմոյ։ Արդ, աղաչեմ զամենեսեան, սուրբ հարք և եղբարք, որդիք Նոր Սիոնի՝ ոյք հանդիպիք այսմ սուրբ Աւետարանի՝ յիշել ի մաքրափայլ յաղաւթս ձեր զբարի շաւուիղն զտղա պարոնն՝ զսիր Լեւոն, որ եռափափագ սիրով ստացաւ զսուրբ Աւետարանս, և զծնողս նորա՝ զհայրն իւր զսիր Լիկոս, և զմայրն իւր զբարեպաշտ տիկինն Ականցն, և զդստերս իւր զերեսեան։ Ես առաւել զսիրեցեալ պատանին զսիր Լեւոն, որպէս զի աղաւթիւք ձերովք Տէր Աստուած տացէ զնա ծնաւղաց իւրոց երկայն ժամանակս առողջութեամբ, և փրկեսցէ յամենայն փորձութեանց։

Աղաչեմ յիշել ի Տէր, և զեղկելի գրչողիկս Յոհաննէս, և զծնողս իմ՝ զհայրն իմ Ներսէս և զմայրն իմ Հանգուցեալ ի Քրիստոս, ևս առաւել զհարազատ եղբայրիկն իմ զԿոստանդին կրաւնաւոր քահանայ, նա որ ի տղայ հասակի փոխեցաւ յաստեացս, որոյ ողորմեսցի նմա Տէր Յիսուս Քրիստոս, և թողցէ զմեղս նորա և զգրողիս Յոհաննէսի։ Եւ աղաչեմ զամենեսեան ոչ մեղադրել խոշորութեան կամ սխալանաց որ ի սմա, և մանրութեան գրիս, զի կար մեր այս էր, և որ ստացաւն այսպէս ետ գրել։ Եւ Քրիստոս Աստուած իւր անճառ մարդեղութեամբն և փրկագործ անաւրէնութեամբն ողորմեսցի և թողցէ զմեղս յիշողացս և յիշեցելոցս, և նմա փառք և աւրհնութիւն յամենայն արարածոցս յաւիտեանս յաւիտենից, ամէն, ամէն, ամէն»։

238

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Կյուլեսերյան, Ցուցակ Անկիւրիո, էջ 285—288

Գրիչ՝ Միքայէլ
Վայր՝ [Երկայն Մաւրուի անապատ]

ա

154ա *Զստացաւղ պատուածեան մատենիս զՄիքայէլ քահանաս յաղաւթս յիշեսջիք, ո՜վ փրկեալք արեամբ գառինն Աստուծոյ, և Աստուած զձեզ ողորմեսցի, և անարհեստութեանս անմեղադիր լիք, զի այսչափ էր կարս մեր։*

բ

168ա *Զմեղաւք մեռեալս* Միքայէլ *ի Տէր Յիսուս յիշել միշտ աղաչեմ։*

գ

508բ *Փառք քեզ Երրորդութիւն Սուրբ, ամէն։*
Յամի ութն հարեւրերորդի և երկրորդի (1253) գրեցաւ մատեանս այս աշխատանաւք նուաստ գրչի Միքայէլի *քահանայի, որոյ Տէր Աստուած ողորմեսցի նմա։*
515 *Բազում գրեանք այրեցաւ յառաջի գերութեանն*։*

դ

267բ *Փառք Քրիստոսի Աստուծոյ յուսոյն մերոյ, ամէն։*
Ի թուին ՉԴ (1255) գրեցաւ մատեանս այս ձեռամբ Միքայէլի *մեղասէր քահանի, ի խնդրոյ եղբաւր մերոյ* Կոստանդեա *կրաւնաւոր քահանի։*

Արդ, աղաչեմք զամենեսեան զկարդացողսդ սրտի մտաւք յիշել զմեզ յաղաւթս և խոշորութեան անմեղադիր լիք, զի այսչափ էր կար մեր։
*Գրեցաւ ի յաւրինակէ, որ դրեալ էր ի ՆԼԶ (986) թուականին**։*

---

* *Գրված է Ա Կորնթացւոց վերջում։*

** *Ձեռագիրը պարունակում է Աստուածաշունչ (Հին ու Նոր կտակարաններ), Աղոթամատոյց, Պատարագամատոյց, Տաւնացոյց, Շարաթացոյց և Մաշտոցից կանոններ, գրված է 1253—1257 թվականներին, Միքայել և Զախար գրիչների ձեռքով, և ուղղակի գաղափարված է 986 թվականին գրված օրինակից։*

Ե

301ա Եւ զեղկելիս յիշեա Տէր՝ Աստուած ի քո յանսպառ յողորմութիւնդ, ընդ ինեւ և զպատուական եղբայրն Կոստանդիւ: Աղաչեմ խոշորութեան և սխալանաց թողութիւն շնորհեցէք, և Աստուած ձեզ տացէ, եւ նմա փառք յաւիտեանս: ՁՁ (1257) թուին:

Գ

502բ Ջստացաւզ աստուածային տառիս և զգրիչս՝ անպիտան զՄիքաէլ յիշեսջիք ի Տէր, աղաչեմ:

Է

Գրիչ՝ Ջախար

548ա Փառք քեզ Քրիստոս Աստուած, և զորս ողորմութեան քո կամեցողութեամբ, ներեցեր հիքացելոյս [է]. զայսպիսի վեր առաքել գոհութիւն կեցո<ո>յ ողորմութենէ քում առաւել, զի դիտող զկարիս քան զկարեացն խնդրաւ աւհրնեալդ յաւիտեանս, ամէն: ՁԲ (1253) գրեցաւ ի թուականութեան:

Ը

689բ Ջմեղաւորս Ջախար գրիչս և զծնողսն իմ և զեղբարսն և զքեռ յիշեսջիք ի մեղաց թողութիւն, և Աստուած զձերն թողու:

239

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 7718

Գրիչ
վայր [Կիլիկիա]

Ա

33ա Ջստացաւզ սուրբ Աւե[տարանիս] և զմեղաւք դատապարտեալս Ա[զգ] աղաչեմ յիշել ի Տէր Աստուած*:

Յամանու Աւետարանի վերջում կա այսպիսի մի հիշատակագրություն. «Աւրհնեալ է Աստուած, ամենայն ժամ աւրհնեալ է Աստուած: Ջփցուն գրիչս յիշեցէք, զվարդան երէց, ո՛վ եղբայրք, և Աստուած յիշատակ յիշէ իւր սուրբ արքաւութեան, ամէն: Ի յայս աւրինակէս Աւետարան մն գրեցի, վասն մանրութեան գրին սակաւ աշխատեցա. հապա կու զարմանամ, թէ այս գրօղն ինչպէս գրել է անչափ գիրս» (էջ 180 բ.):

Ամենայն հավանականությամբ Միքայելը նույնն է Մատենադարանի № 178 Աստվածաշնչի դրչի հետ, որը դարձյալ շատ մանրագիր է, տողագծերը վերջին էջերում իրարից հեռու են 3—4 միլիմետր, 20,5 սմ գրասյունակը 60 տող ունի, տողը 37 տառ, ուրեմն մի էջում տեղավորել է 4440, իսկ մի քերթում 8880 տառ:

Մատենադարանի № 178 Աստվածաշունչը Միքայելը գրել է 1253—1255 թվականներին Երկայն Մաւրուի անապատում: Ըստ այդմ սույն ձեռագրի գրչության վայրը ևս համարում ենք Երկայն Մաւրուի անապատը:

* Հայերեն մանրագիր ձեռագրերից մեկն է: 14,4×7,8 սմ մեծության 104 քերթերում տեղավորված է լրիվ Աւետարանը, բոլորգիր, երկսյուն գրությամբ, յուրաքանչյուրը 7×2,4 սմ գրա-

Բ

53ա Ջստացաւղ սորա և զմեղաւք դատապարտեալս աղաչեմ յիշել ի Տէր Յիսուս։

Գ

105ա ՈԻԱ (1172) թվին գրեցաւ սայ*։

240

ԱԻԵՏԱՐԱՆ

Սանջյան, Ցուցակ Ամերիկայի, էջ 675—677

Գրիչ՝ Յոհանէս
Վայր՝ Ակներ

ա

ճ8բ Յամի եւթն հարիւրերորդի եւ այժմու սկսեալ վեցերորդի (1257) թուաբերութեան Հայոց տումարի գրեցաւ ժամագրկունքս վասն ճանապարհի եւ անճարկութեան, յաշխարհիս Կիլիկեացւոց, ի գաւառիս Ցախուտ, ի հռչակաւոր եւ սուրբ մենարանիս Ակներ, ընդ հովանեաւ Սրբուհոյ Տիրամաւր Աստուածածնի եւ սուրբ առաքելայն Տեառնեղբաւրն Յակովբայ եւ կենսակիր նշանիս Սուրբ Կոստանդեա, եւ այլ աստուածունակ սրբոցս որ հաւաքեալ կան ի սմա, ի թագաւորութեանս Հայոց Հեթմոյ քրիստոսասիրի եւ ուղղափառի, որոյ Տէր Աստուած տացէ նմա, եւ որդւոց իւրոց Լեւոնի եւ Թորոսի՝ երկար ժամանակ խաղաղութեամբ վարել զթագաւորութիւն իւրեանց, ի հայրապետութեան տեառն Կոստանդեա, եւ ի հայրութիւն սուրբ ուխտիս հոգելից ծերունոյ՝ ճգնազգեաց եւ քրիստոսասէր անձին հայր Մխիթարայ եւ նորին հայրաղատին բարեշնորհ երաժշտին Վարդանայ:

Գրեցաւ սակաւագիծ մատեանս ձեռամբ յոգնամեղ եւ եղկելի անձին Յոհանէսի վշտալից եւ տգէտ գրչի, զոր բազում վշտաւք իմ ձեռնամուխ եղեալ ի սա. եւ կատարի առ իս ասացեալն ի սուրբ առաքելոյն Պաւղոսէ, որ ասէ՝ Վիշտս ի գետոց, վիշտս յաւազակաց, վիշ[տ]ս ի սուտ եղբարց եւ այլն, զոր բանսարկուն հանապազ յարուցանէ ինձ հեղեղս գետոց եւ ի տուէ եւ ի գիշերի չար աւազակութեամբն խոցոտեղ եղկելիս, եւ ոմանք ի բնակչացս բազում վիշտս հասուցանեն ի վերայ իմ, եւ ոչ ուստեք մխիթարութիւն՝ բայց ի Հաւրէն եւ ի նորին հարազատէն, զոր Հայրն երկնաւոր պահեսցէ զնոսա եւ սուրբ հարանցն մասնակից արասցէ, եւ թողցէ զյանցանս եղկելոյս Յոհանէսի:

դաշտով։ Մեկ քառակուսի սանտիմետրի վրա գրված է շուրջ 60 տառ։ Ա և Բ հիշատակագրությունները գրված են գրչի ձեռքով, որն, հավանաբար Միքայելն է։

* Գլխավոր հիշատակարանը չի գրված։ Ազատ տեղում, հետագայում Մարկոս գրիչը ավելացրել է «Հանգիստ երանելոյն Յովհաննու» հատվածը։ Աւետարանի վերջում նոտրգրված է սույն թվականը՝ ուրիշի ձեռքով։ Ձեռագիրը ավելի շուտ ԺԳ դարի գործ է, քան նշված թվականի։ Ունի փոքրիկ, գեղեցիկ կիսախորաններ։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա տեսութեամբ կամ յաւրինակ առնելով, ոչ մեղադրել մանրութիւն գրիս եւ խոշորութեան կամ սղալանաց բանի եւ բառի կամ գծի եւ կէտի, զի այս էր կար մեր։ Ով կարէ թող կարդա, եւ որ ոչ, թող զմեծն առնու կամ հաշուէ թէ իսկի չունի՝ զի իմ սիրտս զայս ուզեաց։ Այլ աղաչեմ յիշել ի մաքրափայլ յաղաւթս ձեր զեղկելի գրողս՝ Յոհաննէս՝ եւ զծնողսն իմ՝ զհայր իմ Ներսէս քահանայ եւ զմայր իմ՝ զհանգուցեալսն ի Քրիստոս, եւ զհարազատ եղբայրիկն իմ զԿոստանդին կուսան քահանայ, որ ի տղա հասակի փոխեցաւ ի Քրիստոս։ Եւ Քրիստոս Աստուած ողորմեսցի եւ թողցէ, զյանցանս յիշողացտ եւ յիշեցելոցս, եւ նմա փառք յաւիտեանս, ամէն, ամէն, ամէն։

Բ

79ա Փառք քեզ անսահման եւ անզուգական անձնատրութիւն, Հայր եւ Որդի եւ Հոգի Սուրբ, յամենայն արարածոց եւ ի բնաւից եզականաց*, այժմ եւ յանսպառ յաւիտեանս, ամէն։

Արդ, ես եղկելիս եւ յոգնամեղս Յոհաննէս գրող սորա, խնդրեմ յամենեցունց, ո՛վ սուրբ հարք եւ եղբարք, ոյք հանդիպիք այսմ սակաւ գծի, ոչ մեղադրել եւ պարսաւել վասն խոշորութեան եւ սղալանաց՝ զի այս էր կար մեր, եւ վասն մանրութեան դրիս ոչ դատապարտել զմեզ։ Այլ՝ յերես անգեալ աղաչեմ որպէս շան սովեցելոյ՝ տուք զփշրանս աղաւթից ձեր, խնդրելով Տեառն զթողութիւն մեղաց եղկելոյս Յոհաննէս գծողի եւ ծնողաց իմոց, եւ հարազատ եղբաւր իմոյ՝ Կոստանդէ, որ ի տղա հասակի փոխեցաւ յաստեացս; Եւ որ առատն է ի տուրս պարգեւաց անմահ թագաւորն, որպէս մեզ խնդրէք՝ զնոյն եւ ձեզ պարգեւեսցէ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն, ամէն։

Գ

79բ Աւրինակն ծուռ էր, ես կրկին գրեցի եւ ինն տող զայրն միաճղի՝ զի տեղս վճարեցաւ. թէ դժար թուի՝ դու շոշէ զթուղթս յետ եւ ի նշանածն սկսիր եւ կարդա եւ մի մեղադրեր։

Դ

Ջինչ յաւրինակն գտի՝ զայն գրեցի։

Ե

Վայ ինձ դառն վշտացելոյս։

---

* Տղված է գրնաւ ի ցեղականաց։

241

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վենետիկ 17, Սարգիսյան, ձեռագ. Ա, էջ 148—150

Գրիչ՝ Ներսէս

Ա

58ա Քրիստոս Աստուած բարեխօսութեամբ Սրբոյն Եսայեայ, ողորմեա բազմամեղ [գրող]իս Ներսիսի, և որ զամէնն ասեն։

Թվին ՉՉ (1257) գրեցի, Ներսէս ծառայ է Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Բ

10ա Քրիստոս Աստուած, բարեխօսութեամբ Սրբոյն Մովսէսի մարգարէին և Յովսէփ գեղեցկին ողորմեա ամենայն հաւատացելոց ի քեզ և բազմամեղ գրողիս Ներսիսի, և ծնողաց իմոց, և քեռեցն իմոց Յովաննիսի և Հանիսի և Տէրպապի, և որ զամէնն ասեն, և Քրիստոսի փառք յաւիտեանս։

Գ

189բ Քրիստոս Աստուած, բարեխաւսութեամբ Սրբոյն Մովսէսի մարգարէի ողորմեա ամենայն հաւատացելոց ի քեզ, և բազմամեղ գրողիս Ներսէսի և քեռոյն իմոյ Յովաննիսի և ծնողաց իմոց Աւտարշահի և Շնորհ[ֆ]որի, և քարն Աւծի, և որ զամէնն ասեն, և Քրիստոսի փառք յաւիտեանս։

Դ

Ո՛վ եղբարք, խոշորութեանս մի մեղադրէք, զի զշատն գիշերն՛եմ գրել. և էր աւրինակին գիրն լիզած, մեղայ Աստուծոյ։

242

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 234

Գրիչ՝ Կիւր[ակոս]
Վայր՝ Կիլիկիա

ա

299բ Փառք արդար և սեռնական էութեանն, Հաւր համալրարար, և Որդւոյ որ ետեկեան և Հոգւոյն տառի, զի որոց կարիւ և կարակնիւ երկասիրեալ զխաղս դարաստանից անձանց սրբազան աւետարանչացն, զբազմաբեղուն հրաշս խորհրդոյ տնաւրինեցելոյ բանին, նա և զլուսայիղծ բանս վարդապետութեան բանապետին վերնոյ արեգականն արդարութեան
300ա երևեցելոյ*||ազդեցութեամբ Հոգւոյն Սրբոյ, դրեալ թողին հաւատացեալոց ի Քրիստոս մատեան աւետական, ունելով զլուսայիղձ բանս կենարարին մերոյ, ի դարս և ի ժամանակս յեկեղեցիս նազելի Նորոյ Սիոնի, ի մխիթարութիւն ոգւոց նորոգութեան որդւոց նորա։ Որոյ ցանկացող եղեալ այսմ աստուածային տառի, գրեցի զսա վերջացեալս ի բարեաց, մեղաւք զառածեալս, անյիշելի անուն, ի վայելս և ի մխիթարութիւն ոգւոյ իմոյ։ Արդ, որ ոք վայելէք զսա, յիշեսջիք ի Քրիստոս զգրողս և զստացողս սորա, և ծնաւղսն մեր, և առատապարգև Տէրն մեզ և ձեզ ողորմեսցի ի գալստեան իւրում, ամէն։

Բայց եղև զրաւ գրչութեան սորա ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ և ի թագաւորութեանն Հայոց Հեթմոյ, ի թուին ՉԷ (1258) և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։

բ

91ա Ձանմեզ գրիչս Կիւր[ակոս] յիշեսջիք ի Քրիստոս, և որք յիշէքզ և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ։

---

* Այստեղից գրչությունը փոխում է։

243

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Մուրադյան, Յուցակ Մշո Առաքելոց վանքի, էջ 1

Գրիչ՝ Վարդան Ուռնաեցի
Վայր՝ [Հռոմկլա]

Վարդանա մեղապարտի Ուռնա[յ]եցւոյ անարուեստ գրչի աղաւթս արարէք ի Տէր, եւ Տէր Յիսուս ձեզ ողորմեսցի, ամէն։

Փառք ամենասուրբ Երրորդութեան Հաւր եւ Հոգւոյն [Սրբոյ], այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Յամի հազարերորդի [հարիւրերորդի] յիսուներորդի ութերորդի (1158) Աստուծոյ մերոյ եւ Տեառն Յիսուսի Քրիստոսի գալստեանն յորում ամի ժամանէր, թիւ տոմարի շրջագայութեանս Հայոց ՈՉ (1157), գրեցաւ աստուածախաւս մատեանս քրիստոսաձիր կտակ սրբոյ Աւետարանիս, յընտիր եւ լաւ աւրինակէ, որ կոչի Գրիգորի Մուրղանեցւոյ՝ գրչի ճարտարի, որոյ ատեալ էր ղաւրինակն ի Դանձատանէն Գագկայ թագաւորին Հայոց, եւ իրաւք ձեռաւք գրեալ գԱւետարանն մեծի կաթողիկոսին տեառն Գրիգորիսի: Եւ Կոսականդին գրիչ Ուռնայեցին կալով ի տան նորա, յաղագս աւրինակի գրեաց. ողորմեսցի նմա Տէր։ Եւ ի թուականութեանս Հայոց ՉՀ (1259), եւ ի թագաւորութեանս բարեպաշտ արքային Հեթումայ, եւ ի կաթողիկոսութեան Կոսականդեա Հայոց դիտապետի ստացաւ զաստուածախաւս Աւետարանս սրբամիտ քահանայն Թորոս, յիշատակ իւր եւ իւրոց փոխելոցն առ Քրիստոս...։

244

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Սյուրմեյան, Յուցակ Հալէպի, Ա, 55

Գրիչ՝ Կիրակոս
Վայր՝ Մաշկեւտրի վանք

ա

Փառք երից անբաւից, անհասանելեաց Սրբոյ Երրորդութեանն, երից անձանց և մի աստուածութեանն, Հաւր և Որդոյ և Սուրբ Հոգւոյն ամէն, ամէն։

---

* *Այստեղ ունենք հիշատակարանների չորս շերտ. (ա) տեղեկութիւն Գրիգոր Մուրղանեցու օրինակի մասին, որը գտնվել է Գագիկ Քագավորի Դանձատանը, որտեղից վերցրել և (բ) 1157*

590ա Գրեցաւ սուրբ Աւետարանս ի մեծահռչակ ուխտս Մաշկևորս, ի թուականիս ՉՀ (1259), ի հայրապետութեանն տեառն Կոստանդեայ, եւ ի թագաւորութեան Հեթմոյ՝ որդոյ Կոստանդեա, յայսմ ամի որ զՀալ[ս]–սյրն եառ և զբազում գաւառս խառնիճաղանճ ազգն Ագարայ։

Եւ գրեցաւ ձեռամբ Կիրակոսի անիմաստ գրչի, ի խնդրոյ հոգևոր եղբաւր մերոյ Յուսէփ քահանայի, վասն զի աղաչեաց զմեզ գրել իւր համար՝ յիշատակ իւր և ծնողաց իւրոյ և ամենայն ննջեցելոց՝ գնացելոցն առ Քրիստոս։

Արդ, ոյք աւգտիք ի սմանէ, յիշեսջիք զմեզ, զծնաւղսն մեր, և զԹեոդոս փակակալ, զՍտեփանոս քահանայ, և զԹորոս քահանայ, որ աւգնեցին յղորդելն, և ամենեցուն առ հասարակ ողորմեսցի Յիսուս Քրիստոս, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Խոշորութեանն անմեղադիր լիք, զի այսչափ էր կարն, բայց յաւրինակս վստահ լիք, մանաւանդ ի համաբայքն, որ գիտէ զի ընտ[ի]ր է։

Բ

Կազմող՝ Առաքել Հնազանդենց

590 Ջեղկելի կաղմաւղ սորա զԱռաքել Հնազանդենց, եւ զծնողսն իմ, եւ զհարազատն իմ զՊաւղոս սարկաւագ, եւ զուսուցիչն իմ զՍարգիս քահանայ՝ զհանգուցեալսն առ Քրիստոս, աղաչեմ յիշել ի Տէր։ Ի թու[ին] ՉԹ (1260)։

245

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 10554 (ԺԱ դ.)

Գրիչ՝ Զաքար Բաճանայ

ա

71բ Տէր Աստուած, ողորմեայ Տոնկան ծնողացն հոգոցն ամեն, ամեն և իր տան տիկ[ն]ոջն հոգուն Շամամին. և իւր տղոցն Ռստկանն /// որ յիշայատակ ըզսայ տնգեցին իրենց մնջեցելոցն և իրենց տղայոցն, ամէն։

72ա Ի թվականութեանն Հայոց ՉՀ (1259), ի յամսեն ի փետրվարու Ի (20), և Քրիստոսի մար[դ]այսիրին փառք յաւիտենս...

Բ

2331 ՉՏոնիկ յաղաւթս ձեր յիշեցէք զՄիայանցին, և Զաքար քահանայ, որ յիշատակ ըզսայ ունի ըզսուրբ Աւետարանս, որք յիշեմք և մենք՝ զՏոնիկ և զիւր տղաքն, և զիր ննջեցեալսն, ամէն, և զՍա[ե]փանոս ռայիսն Միայտնցի, ամէն, որ վարձս բարիս պարգևեսցէ աստ և ի հանդեր[ձ]եալումն։

Թվականին ընդօրինակել է Գրիգորիս Գ կաթողիկոսը։ (գ) Կոստանդին Ուռհայեցին գտնվելով Կաթողիկոսարանում (Հռոմկլա) ընդօրինակել է այն «յաղագս աւրինակի», որից (գ) 1259 թվականին արտագրել է Վարդան Ուռհայեցին Թորոս քահանայի համար։

Կյուլեսերյան, ծուցակ Անկիւրիոյ, էջ 150

Գրիչ՝ Թորոս

246

ԱՐՏԱՐԱՆ

465բ Գրեցաւ ատտուածախաս աւետարան, աւետարիր Աւետարան ի Քուսականութիւնեան մերում ի ՉԸ (1259)-ն, ընդ հովանեաւ սուրբ տաճարիս որ կոչի Սուրբ Յայտնի, մերձ ի գետն որոյ անուն Սալ անուանի, որ է պատմութեամբ լերին Տարոն, ի գաւառին Հոլ[յ]անա, քաղաքին Տարոնի, և ի յանուրիկ դղեակն Պապերոնի, ձեռամբ մեղապարտ և արժան քահանայ Թորոսի, դիզեալ անկարգութեամբ բազմավրդով և կուրացեալ աչօք, մանաւանդ հոդով խաւարեալ, յառաջնորդութեան կաթողիկոսութեան տեառն Կոստանդեայ, և ի թագաւորութեան Հեթմոյ որդւոյ Կոստանդեայ, և իշխանութեանս այսպարապետիս Հայոց Սմբատայ՝ եղբայր թագաւորիս, Հրամանաւ սրբասնեալ և աստուածամերձ քահանայ Յոհաննէսի և պատուական ծերունի հարս իւրոյ Գրիգորոյ, ի վայելումն մանկութեան իւրոյ, ամէն։

247

ԱՐՏԱՐԱՆ

Սրվանձտյան, Թորոս Աղբար, Բ, էջ 437

Գրիչ՝ Ասասիացի Ստեփաննոս

Գրեալ ձեռամբ Սիմոն փիլիսոփայի, ի Քվականիկ ՉԸ (1259), ի հայրապետութեան Կոստանդեայ, ի թագաւորութեան Հեթմոյ, իշխանութեան իշխանաց իշխանիս մերոյ Ճօֆրէ, եւ որդւոյն Կոստանդի, Սմբատի եւ Աշղնի... Յիշեցէք զտիկինն Կեռան... եւ զհանգուցեալ տիկինն Ալիծ, եւ զեղբայրն զՀեթումն...

Գրեցաւ յԱբեղակաղնի վանս, ձեռամբ Ամասիացի Ստեփաննոսի:

248

ԱՌԱՔԱ ՍԱՂՈՄՈՆ Ի...

Մուրադյան, ծուցակ Մշո Առաքելոց վանքի, էջ 8

Գրիչ՝ Յովսէփ

Փառք ամենասուրբ Երրորդութեանն եւ միոյ աստուածութեան յաւիտեանս ամէն։

ՋՅովսէփ եղկելի զստացող եւ ըզգծող սորա յիշեսչիք ի Տէր, եւ զհոգեւոր հայր իմ եւ զուսուցիչ զՓիլ[իպպոս] երաժիշտ եւ սխալմանց թողութիւն արարէք եւ զաւրինակս տուողն զՊետր[ոս] միայնակ[եցն]...*։

249

ՁԻԱԴԱՐՄԱՆՈՒԹԻՒՆ

Ջարբհանալեան, Թարգմանութիւնք նախնեաց, էջ 553

Այս խրատներս այլ ի հետ պողպատ շինելոյն և մուխ տալոյն էր գրած ի նոյն իմաստասիրացն Պարսից, զոր թարգմանեց Հեթում թագաւորն Հայոց, յորժամ գնաց ԺՐՌ (18000) հեծելով ի վերայ թշնամւոյն սուլտանին, և կոտորեաց և սպառեաց զամենեսին, և գնաց մեծաւ պատուով ի Պաղտատ առ նսոր խալիֆայն, և մեծ պարգևք դարձաւ։

Եւ իմաստասէր ոմն սարկաւագ, Սաեփանոս անուն, գտեալ առ կայսրն, որ այսչափ ազգի ազգի գիր և լեզու ուսեալ, նման առաջին փիլիսոփայիցն, և ոչ կայր գիր որ առ նմա ոչ գտանէր, և նա սիրեցեալ եղև ի Հայոց թագաւորէն վասն հզօր գիտութեանն։ Եւ խնդրեաց արքայէն, և ետ թարգմանել երեք գիրս. վասն ձիոյ պայթարնմամն, և վասն թրի շինելոյ, և վասն արեգական և լուսնի արուեստին, և բերեալ ի Հայոց աշխարհն**։

---

* Ցուցակում թվականը նշանակված է 1259։

** Հավանաբար այս տեղի է ունեցել 1259 թ., երբ Հեթում Ա-ն, մոնղոլների կողմից բաղդադը գրավելուց (1258 թ.) հետո ԺՐՌ (12000) ձիավորով և 40000 հետևակով մասնակցում է մոնղոլ դաշնակիցների մերձավոր Արևելքում կատարած նվաճումներին։ Ձիավորների քիվը ցույց տրվող գրերի մեջ շփոթված են Ը և Թ միավորները։

250

ԳՐԻԳՈՐԻ ՆԻՍԱՅԻՈՅ
ԳԻՐՔ ԲՆՈՒԹԵԱՆ, ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՈՒՍՈՒԹԵԱՆ

Սրեան 469

Գրիչ՝ Ստեփանոս
Վայր՝ Մեծքար անապատ

ա

261ա Երից անձանց միակամ և եղական տէրութեանն փառք յառաջ քան ղամենայն, յաւիտեանս և յապագայն, և յայժմս յաւիտեանս։ Զմեղուցեալ և զանիմաստ հոգիս և զյետնեալս յամենայն բարեգործութեանցս զՍտեփանոս՝ փոքու հետևող այսմ աստուածային տառի, աղաչեմ յիշել ի Տէր, Ո՞ բարեմիտ պատահողք սմին, և վերջին ստացողք, նաև ղծնողն իմ ըստ մարմնոյ, և զհարազատն իւր զԿիւր[ակոս] քահանա՝ զուսուցիչն իմ, ընդ նոսին և զվարժապետն իմ, և զի խավարէ տգիտութեան զլուսաւորիչն զրաբունին Յակոբ աղաչեմ յիշման արժանի առնել և տէրն իմ Յիսուս, որ առատն է յամենայնի՝ զձեզ յիշեսցէ ողորմութեամբն իւրով, որ է աւրհ[ն]եալ յաւիտեանս։

Ի թուին Հայ[ոց] Չ և Թ (1260) գրեցաւ յանապատիս որ կոչի Մեծքար, ընդ հովանեաւ սուրբ վկայիցս Տարագոսի, Պրոբոսի, Անդրոնիկոսի։

բ

117ա Ընդ նոսին և գրչիս և զսուտանուն քահանա զՍտեփանոս, և ծնողն իմ ըստ մարմնո և ըստ հոգո, աղաչեմ զերջանիկ սուրբ հարսդ յիշելո արժանի արարէք, և որ առատն է յամենայնի, զձեզ յիշեսցէ ողորմութեամբն իւրով, և նմա փառք և զոհութիւն յաւիտեանս, ամէն*։

գ

200բ ՛ Զամենամեղս զՍտեփանոս, որ ի սմա աշխատեցա ոչ սակաւ՝ աղաչեմ յիշել ի Տէր, ո՞ բարէմիտ պատահողք սմա, և Աստուած զձեզ յիշէ յողորմութիւնն իւր, որ է աւրհնեալ յաւիտեանս։

---

* Հիշատակարանի վերջում այլ գրով գրված է. «Որք պատահիք այսմ տառի զինչ և է տարագոյ, ի տեղիս-տեղիս տեսանէք բոլոր նշան ու խազեր, զամէն քերեցէք, ես շատ քերեցի։ Անմիտ մարդոյ է դրած ու անխնամ աւրինակելոյ նշանս։

ղ

Կազմող՝ Առաքել Հնազանդենց

253բ Ձեղկելի կազմաւղ սորա զԱռաքել Հնազանդենց և զծնաւղսն իմ, և զհարազատն իմ զՊաւղոս սարկաւագ, և զուսուցին իմ զՍարգիս քահանա, զհանգուցեալսն առ Քրիստոս աղաչեմ յիշել ի Տէր։ Ի թուին ՁԹ (1260)։

251

ԱՒԵՏԱՐԱՆ

Սրուսաղեմ 251, Պողարյան, ցուցակ Բ, էջ 15—18

Գրիչ՝ Թորոս Ռաւսլիճ
Վայր՝ Հռոմկլայ

325ա Փառք ամենասուրբ Երրորդութեան եւ միոյ տէրութեան։

Շնորհիւ Տեառն սկսեալ և ողորմութեամբ նորին յանկ ելեալ աւարտեցաւ մատեանս աստուածային, երկրպագելի և պաշտելի սուրբ Աւետարանս, յամի հոբն հարիւր եւ իննհերորդի (1260) թուաբերութեանս Հայոց, յաստուածապահ դղեակս Հռոմկլայ, ընդ հովանեաւ սրբոյ Նշանին Վանգոյ, եւ սրբոյ տաճարացն որ յանուն սուրբ Փրկչին, եւ սրբոյ Աստուածածնին և սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, եւ այլ բազմահաւաք սրբոցս, որ պաշտին աստ, ի բռնակալութեան մեծի իշխանին Մանկու կոչեցելոյ եւ տիեզերակալին Հողայուսիճ՝ եղբաւր նորա, ի թագաւորութեան աստուածասէր եւ բարեպաշտ արքային Հայոց Հեթմոյ, եւ ի ժամանակի յորում առաւ հռչակաւորն Հալպ, և ամենայն քաղաքք և ամուրք նորա։ Հրամանաւք եւ ծախիւք արի երջանկի եւ երիցս երանելոյ սրբազան եւ աստուածապատիւ տեառն Կոստանդեայ կաթողիկոսին ամենայն Հայոց, որ ի վերայ ամենայն բարի բնութեան իւրոյ, զոր ունէր առ հեռաւորս եւ առ մերձաւորս, առ աղքատս եւ առ կարաւտեալս, առ աւտարս եւ ընդանիս, առ կրանս ուղղափառս եւ առ հաւատս Հաստատուն, առ Աստուած եւ առ սուրբ պատուիրանս նորա, ունէր եւ զգրասիրութեան շնորհս։ Բազում ստանայր գիրս աստուածայինս, ի Հին եւ ի Նոր կտակարանաց, և անաւթս ոսկեղէնս և արծաթեղէնս, զարդս եկեղեցոյ մեծագինս եւ երեվելիս, ի յիշատակ իւր եւ ծնաւղաց իւրոց։

Ուստի և իմով անարժանութեանս Թորոսի, մականուն Ռաւսլիճ կոչեցելոյ, հրաման տայր զըգործի գրչութեան ի գործ արկանել յաստուածապարգեւ այս մատեան սուրբ Աւետարանի առատաձեռն ծախիւք նիւթաւք, եւ երիւն երիւն դունաւք վայելչուցուցանել զսա։ Որ եւ ես ըստ կարի իմում լցի զփափաք նորա։

Վասն որոյ աղաչեմ զձեզ, ո՛վ աստուածասէրք լուսասնունդք և տիրահաստատք սրբազան մանգոնք առագաստի նազելի մաւր մերոյ Սրբոյ Սիոնի, որք ժառանգէք զսա զինչ եւ իցէ արդեամբք, յիշեսջիք ազաւ-

Քիւք ի Տէր, մանաւանդ առաջի զենման անմահ գառինն Աստուծոյ զարժանաւորսն ամենայն բարեաց յիշատակի, զբարեպաշտ թագաւորն Հայոց Հեթում, և զաստուածարեալ թագուհի նորին Զապիլ, և զաստուածապարգև որդիսս նոցա։

Յիշեսջիք և զսրբազան կաթողիկոսն զտէր Կոնստանգին, լուսազարդիս այսմ ստացող, եւ զբարեբաստիկ եղեալ ծնաւղսն իւր Վաճրամ եւ Շուշիկ։ Նւս եւ զհայրապատ եղբարսն իւր Գրիգոր եւ Գորգ Ճշմարտասէր քահանայ, և զբարի հոգի քոյրսն իւր Շուշանիկ և Վասենի։ Յիշել դարձեալ եւ զսրբասնեալ եղբաւր որդիսն իւր՝ զառաքելաշնորհ եպիսկոպոսն տէր Ստեփաննոս և զԳրիգոր քահանայ։ Նւս եւ զերախտագործ տէրն իմ Թորոս մաքրակրաւն քահանայ եւ Ճշմարտասէր այր, և զբարեզարդ քոյր իւր Շուշիկ, եւ զաստուածապարգև որդին իւր պարոն Ստեփաննոս, իշխանական պատուով զինուորեալ ի դուռն արքայի, եւ զսրբասէր եւ բարեզարդ մայր սորա Տալիքայ, եւ ըզտիկինն իւր Ակաց՝ ի մեծ տոհմէ, եւ զաւագուհի մայր սոցա Ազիգ։ Յիշել և զմիւս Գրիգոր եղբաւրորդի հոգեւոր տիրոջն՝ իշխանական ձևով պատուեալ։ Այլ և զամենայն ազգայինս սոցա առհասարակ՝ զմեծ և զփոքր, որոց ննշեցելոցն հանգիստ և ողորմութիւն պարգեւեսցէ Աստուած՝ զկենդանիսն անխոով խաղաղութեամբ պահեսցէ, ամէն։

Յերես անգեալ և ես յոքնամեղ և թարմատար գրիչս, որ չեմ արժանի յիշել զանուն իմ ի կարգս անուանաց, աղաչեմ յիշել ողորմութեամբ եւ զիս, եւ զծնաւղսն իմ, զեղբարս եւ զքոյրս եւ զորդիս, այլև զամենաբարի ուսուցիչսն իմ, եւ զամենայն աշխատաւղք տուրա, բանիւ եւ արդեամ[բ]ք, զի վասն այդր յուսոյ էր ակնկալութիւն մեր։ Եւ որ առատն է ի պարգեւս և ի տուրս ողորմութեան, Քրիստոս Աստուած մեր, զձեզ յիշեսցէ յարքայութիւն եւ ի փառս իւր, որ է աւրհնեալ, գովեալ եւ առաւել փառաւորեալ ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյն, այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Բ

Զաստուածապատիւ Տէր Կոստանդին կաթողիկոս Հայոց, եւ զեղբորորդին իւր Թորոս քահանայ յիշեսջիք ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, այլ եւ զմեղապարտ գրիչս, աղաչեմ։

Գ

Շնորհեա Քրիստոս Աստուած մասն եւ ժառանգութիւն ընդ սրբոց առաքելոյն տեառն Կոստանդեա կաթողիկոսի Հայոց, լուսազարդիս այսմ ստացողի, եւ Թորոսի քահանայի տուր զպարգեւս ողորմութեան քո, ամէն, եւ մեղապարտ գրչիս, աղաչեմ։

Դ

Տէր իմ Քրիստոս փրկիչ մարդկան,
Պետ հով(ու)մթեան կարգիս աւծման,

Որ զայս մատեան Աւետարան,
Մեզ հնչեցեր ձայն ցնծութեան,
Ահա զքոյս առեալ քեզ տամ
Բարձեալ ի ձեռս առաջի գամ,
Առ զայս նուերս բարեխնամ,
Եւ յիս նայեա Տէր հաշտակամ։
Ո՜վ յանսկիզբ ծոցոյ բան,
Որ ծագկեցար յազգս մարդկան,
Եւ զշնորհս քո շրթան
Հեղեր ուրհնեալդ յաւխտեան,
Դու զպճնողս քո բանի
Եւ զարդարաւղ այսմ տառի
Զտէր Կոստանդին հովիւ բարի
Յաթոռ նստո ընդ Պետրոսի*։

252

ԱՒԵՏԱՐԱՆ

Թոփչյան, Ցուցակ Դադյանի, Բ. էջ 46—47

Գրիչ՝ Վարդան

Վայր՝ Վարագ

Կանայք Աղութ խաթունն *և* Ղատիշէն *եռուն գրել զսա յիշատակ*... *հօրն* Սարդսի *և մօրն* Ջանխաթունին, *և եղբարցն*՝ Նաւասարդին, Ասաթին, Ամիրտարին, Կիրակոսին, *և քուերցն* Մարիմին, Շարխաթունին *և* Բաղդատ խաթունին:

Կատարեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ... Վարդանայ, *ի թվ[ին] Հայոց ՉԹ(1260), ի հայրապետութեան տեառն* Գրիգորի *և մերոյ*... *ուխտիս* Վարագայ... Յակոբայ *[եպիսկոպոսի]*...

253

ԱՒԵՏԱՐԱՆ

Ճանիկյան, Հնութիւնք Ակնա, էջ 96

Վայր՝ Կոկիսոն

...*Ի հայրապետութեան* Կոստանդի[ն] *կաթողիկոսի, ի թագաւորութեան* Հեթմայ... *ի ՉԹ (1260) Հայոց թուականին*... *ի* Կիլիկիա, Կոկիսոնի *և* Կապանի *մեջ գրած է***։

* Գրված է ոսկի խորքի վրա, կապույտ երկաթագրով։
** Պարզ երևում է, որ Հ. Ճանիկյանը ոչ թե նույնությամբ ընդօրինակել է հիշատակարանը, այլ համառոտել է այն և վերապատմել իր բառերով։

254

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱԳԱԹԱՆԳԵՂԵԱՅ

Երևան 1481

Գրիչ՝ Դաւիթ Բջնեցի
Վայր՝ Ակներ

ա

366ա Իսկ յետ բազում ժամանակաց ծագեաց լոյս աստուածգիտութեան ի խաւար մեղաւք յաշխարհն Հայաստանեայց, զոր և ինքն իսկ Տէր մեր ասաց՝ Ոչ են կամք Հաւր իմոյ, թէ կորիցէ ի փոքրկանացս յայսցանէ։ Նաեւ գթացեալ փոխանակ առաքելոցն առաքէ զոմն սուրբ, զԳրիգորիոս ասեմ, զբաղմաչարչարն, զխստամբերողն, զխարազնազգեցն, զքրիստոսասէրն, զհամբերատարն, զիշխանակիցն Պետրոսի և Պաւղոսի սուրբ առաքելոցն։

Ջուրչարեալ տասն զանազան տանջանաւք, որ և զայս նամակս շաբադրեաց մեծ[ահանճար] քարտուղ[արն Ագա]թանգեղոս [ի սկզբան]է մինչեւ ցկատա[րումն]։

Յայս խակ /// թար եղեալ ի բազմաշահ մեծագին գանձուցս սուրբ եղբարց մեծ և հռչակաւոր անապատիս Ակներ կոչեցեալ, զի ունելով այլ գիրս գժուարընթեռնելի, զի ոչ ախորժէին ընթեռնուլ ի ժամատեղ կամ ի սեղան համարձակապէս։

Իսկ կամակից եղեալ առաջնորգք ուխտիս փոխեալ զսայ յայլ գիր, որով և իմ յանձն առեալ գհրամանեալս ի պատուական հարց և եղբարցս գրել զսա։

366բ [Շնորհ]աւք ամենա /// կատարե /// կարողութեան /// ոչ եթէ գիտէի զարուեստս գրչութեան յանգգնեցաք ի գործս, այլ ըստ յուսոյ մեր, որ ի սուրբ յուխտս, և ըստ հրամանի պատուական եղբարցս, որպէս և գրեալ է, թէ կեանք է լսողութիւն։

Եւ արդ աղաչեմ և մախթեմ զձեզ, ո՛վ ամենամաքուր և հոգիապայծառ սուրբ դասք քահանայից և միայնակեցաց, որք հանդիպիք այսմ տառի կամ ընթերցմամբ կամ գաղափար առնելով, յիշել առ Քրիստոս զպատուական հայրն՝ զԳրիգոր մաքրակրօն քահանայ և զտէր Բարսեղ և զվարդան վարդապետ, սքանչելի վարուք փայլեալ ի մէջ եկեզեցոյ, և զփակակալ Սիմեոն և զՀայրապետ [յ]ամենայնի սրբասէր և աստուածահաճոյք. նաեւ զհոգեւոր եղբայրս իմ՝ զՆերսէս և Յոհաննէս յոյժ պիտանի և աւետակար ի գործս բարիս, և զայլ ամենայն եղբայրութիւնս, որ ոչ էր կար մի ըստ միոջէ անուանել։ Աղաչեմ յիշել և զԹորոս միակեաց և

զԳրիգոր, որ աշխատեցան ի կոկ թղթիս, նաեւ զտնտես և զմարմպան և զհացպան և զփոմպան և զամենայն աշխատողս։ Առ Քրիստոս յիշեք զսուրբ ծերունիք՝ զՍարգիս և զԿարապետն աղաչեմ։

267ա Յուցից և ձեզ, սիրելիք, փոքր ի շատէ զիշուառութիւն իմոյ տկարութեանս, որ տրտպ և անարգ և անպիտան յամենայն գործս, զի չեմ ստացեալ գործ բարի, այլ զամենայն խոտոր և չար և անշահ։

Է և ինձ պատմել, զի գոլով իմ ի նահանգէն յարեւելից, յԱյրարատեան գաւառէն, ի դղեակէն Բջնոյ, և իմ խոցեալ չար վիրաւք հոգովզանազան մեղաւք. ապա այնուհետև որպէս զչար վիրաւք հարեալ մարդ՝ ի խնդիր եղեալ բժշկի և ոչ ուրեք գտեալ, այլ միայն դէմ եղեալ գնալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ և ի Հռոմ՝ ի պատկերն անձեռագործ [և Սուրբ Պետրոս] և Պաւղոս, նաեւ յԱստուածածին, որ ի ծագս տիեզերաց և ի սուրբ առաքեալն Յակոբ։

Քան զի ոչ եթէ վասն պանծանաց գրեմ զայս, այլ վասն մեծ մեղաց իմոց, որ անհուն է և անչափ է։

Իսկ դարձեալ զհամբաւ բարեաց և սուրբ կրաւնք և կանոնք այսմ մենաստանիս, յոյժ ցանկացայ և եկեալ իմ յուսով մեծաւ և աշխատութեամբ յոյժ և տուայ[տանաւք]։

Տեսեալ զիս աւտար և պանդուխտ ոգեսէր եղբարցս՝ և զթացին յիսիբրեւ զծնաւղ և ցուցին ինձ սէր իբրեւ զտէր Յիսուս, զոր հատուսցէ Քրիս-
367բ տոս սոցա ըստ իմ /// եանս||տացէ հանգիստն յաւիտենից ընդ սուրբս իւր, և ոչ միւսոյն զայս, այլ եւս առաւել ցուցին յիս զթութիւն։

Եւ ես ոչ ունելով զձեւ սոցա և զկարգ, զի ամենեքեան իբրեւ զհրեշտակս Աստուծոյ՝ արթուն և զուարթուն, և յաւրհնաբանութիւնս Աստուծոյ ի տուէ և ի գիշերի անզբաղ և անհանգիստ, և զայս տեսանելով իմ, վայ և եղուկ ասելով անձին իմոյ, զի թափուր գոլով ի կրաւնից սոցա և յառաքինութենէ։

Բամեալ զիս այնուհետև զմտաւ ածի զգործս զայս, թերեւս լինիմ կցորդ բարեաց սոցա։ Ուրեմն և [յ]որդորելով զիս և խրախուսելով սուրբ հարցդ, որ ի վերոյ գրեցաք, քան զի և մեր Տէրն անարգամեծար է, ընդունի զաշխատութիւնս իմ որպէս զխեղճուէշ այրոյն և զմազ այծեաց ի սպաս տաճարին։ Եւ դարձեալ մոխրամած դիմաւք և սրտառուչ հառաչմամբ աղաչեմ զսրբութիւնդ ձեր՝ անմեղադիր լինել սխալանացս և սիրով ուղղել, զի այս էր կարողութիւն իմ, այլ ի ստոյգ աւրինակէ դրեցի և ըստ չափու /// դարձ ///*.

Բ

15բ Ո՛վ եղբարք, թվի թէ պակաս է յայս դէմս և ի յաւրինակէս է, որ չղնես մեղ վասն Աստուծոյ։

---

* Հիշատակարանը թևրի է սկզբից և վերջից. պահպանված մասի պարբերությունների սկզբնատառերը հողում են ոչ յիշեցէք ի տեր։ Ինչպես երևում է, պակասում է գրչի անունը։ Սկզբնապես եղել է [Ղուափր գր]իչ յիշեցէք ի տեր։

Գ

47ա Տէր Յիսուս, ողորմեսցի Վարեամ միայնակեցի, որ զիմ չուխայն կոխել երետ։

Դ

48ա Ո՛վ համագումար դասք սրբազանից, յորժամ ընթեռնոյք կամ լսէք, յիշեցէք ի Քրիստոս զ[յ]որդորիչ գործոյս զՀայրապետն, և զՍիմեոնն փակակալ, և զանմաքուր գծողս. քէ արժանի առնէք յիշատակի վասն սիրոյն Քրիստոսի, ղի և դուք յիշեսջիք յԱստուծոյ մերմէ։

Ե

83բ Վա՛յ մարմին ի վերա քո, որ ոչ մահ և ոչ տանջան ղբեզ չեն ի խրատել։

Զ

87բ Յամուազ բաբէն և յանաղատ լուսոյն, յանծայրածաւալ մխիթարութեանցն և յանխնայ ողորմութեանցն, անվայրափակ գթութեանցն և անփամանալի քաղցրութեանցն, ի Հաւրէն մեծէ և յՈրդւոյն միածնէ և ի Սուրբ Հոգւոյն հայցեցէք, ո՛վ հոգեվից և հաւատարիմ եղբարք, աղքատիս հոգով՝ բարի, խաւարելոյս մեղաւք՝ լոյս, տարակուսելոյս չարիք՝ մխիթարութիւն, քաղցեալ գազանիս՝ ողորմութիւն յողորմածէն Յիսուսէ, որ և աւրհնեալ յաւիտեանս։

Է

108բ Ո՛վ մեծի տառապանացս, քէ ես յիսնէ ո՞ւր փախչիմ, զտեղն կու փոխեմ ու զիս ոչ։

Ը

174բ Շնորհալի և խոհեմ սուրբ եղբարք, անմեղադիր լերուք գործոյս;

Թ

247ա Ջամենամեղս և զբազմաչարս, զանարժանս յոքունց՝ զգրիչս Դաւիթ յիշել աղաչեմ առաջի սուրբ տառիս աստուածապատում, և զծնողսն մեր, և զամենայն եղբայրութիւնս, նաեւ զներեսէս՝ զհոգեւոր եղբայր. և որք յիշէք, յիշել լիշիք ի Քրիստոսէ, ամէն։

Ժ

261ա Սուրբ Լուսաւորիչ, բարեխաւսեայ առ Քրիստոս վասն մեղուցեալ զաւակացս քո, զոր ծնար սուրբ աւազանաւն յանուն Սուրբ Երրորդութեանն։

ԺԱ

275բ Քրիստոս Աստուած, յիշեայ և ողորմեայ անմաքուր հոգոյ մեղուցեալ գծողիս սորա և ամենայն եղբայրութեանս, զի դու ես վշտացելոյս՝ մխիթար և տարակուսելոյս՝ ապաւէն, խաւարելոյս՝ լոյս, մոլորելոյս՝

դարձ, գլորելոյս՝ կանգնիլ, յուսահատելոյս՝ յոյս կենաց, և ամենայն անհնարից՝ հնար, և քեզ փառք։

ԺԲ

325ա Ողորմութեամբն Աստուծոյ սկսայ ի յամսեանն դեկտեմբեր ԺԵ(15) և շնորհաւք Սուրբ Հոգւոյն կատարեցի ի մարտ Լ(30)։ Որ հասուցեր զմեզ ի գիծ վերջի այսմ նամակի, Սուրբ Երրորդութիւն, քեզ փառք յերկնաւորաց և յերկրաւորացս և ի համայն եղելոցս։

ԺԳ

325բ Արդ գրեցաւ գիրս ի թվին Հայոց ԺՁ (1261)*։

255

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀՆԳԱՄԱՏԵՆԻ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԵՒԵԼՑԻՈՅ

Երևան 2510 (1393 թ.)

Հեղինակ՝ Վարդան Արևելցի
Վայր՝ Սահաիին

Ի խնդրոյ տեառն Համազասպայ և վարդապետին Գրիգորի հաւաքումն մեկնութեան սրբո[ց հա]րանց Սղիշէի, Յովանու և զոր տեսանէք յանցն իւրսն, ի տառապեալ ոգւոյ Վարդանայ։

316ա Ամենողորմած**, անոխակալ, անյիշաչար, քաղցր և երկայնամիտ, անսկիզբն և անվախճան, աներե և անուրեք՝ աշխարհակիր և ամենամերձ Տէր, ամենատուրբ Երրորդութիւն ի միում բնութեան և ի զաւրութեան փառաւորել անարժանս զործոյ իրի և անուան յանդամս սուրբ եկեղեցւոյ քո, ի մեղսաներկ և ի ցաւալից ձեռս առեալ հաւատով զնշխարս ոսկերաց սրբոց քոց, որք մատուցին զինքեանս հաճոյական պատարագ քեզ ի հոտ անուշից; զխաւարչուտ և զնսեմացեալ գոյութեամբս իմով արկեալ՝ զլրոման կաթուղիկէ եկեղեցւոյ քո, երկիր պագանեմ քեզ ամենեքումբք, զսուրբ շրթունս նոցա դնելով ի պատուանդան ոտից քոց և զկենսունակ սուրբ նշան սիրոյ ի սրտի եդեալ գոհանամ զքէն քո[յ]ով հաճոյիւքն յերկին ի վեր և յերկիր ի խոնարհ, այլ և տալով բոլորից մասանց արարածոց կոտորելով զամէնիսեան ի չափ հաւատոյ մանանխոյ, զգեցուցանե-
316բ լով նոցա կեանս և լեզու, և այնպէս գովեմ և աւրհնեմ, գոհանամ և փառաւորեմ զղօրացեալ և զառատ ողորմութիւն քոյ անարժանս երկնի և երկրի։ Որ և յաւելէր յայլսն քաղցրութեան և զայս, զի արժանի եղէ տեսանել զկատարումն խնդրոյ սուրբ եկեղեցւոյ քո ի ձեռն աւագին իւրոյ Տեառն և որդւոյն հարազատի, թէ համարձակելի է մեզ և զձեզ մեծարել

---

* Գրված է այլ գրութեամբ։

** Հիշատակարանի սկզբի մասը պահպանվել է № 2604 ձեռագրում, գրված 1295 թ., որի զաղափար օրինակը Վարդանի ինքնագիրն է եղել, և սրա հետ ունի որոշ տարբերություններ, ուստի բերում ենք նաև այն։

ի նաւակատիս մեր գլուխ եկեղեցւոյ, վսեմարտ մեր արհիական և անդրանիկ մեր եղբայր րաբունի, և ասեմ զասացեալն իմաստնոյն Պիսիդեայ. Ո մշակ մորենեաց և վիմաց, և կամ աղտաղտ և խոխոմ գետնոյ և ցամաքեալ երկրի ցաւուք և ժամանակաւք. որ բռնադատեալ արարիք խիւս ի խորշակահար հասկաց, սակայն ղի արեգակնակոխ էր և յուսով կենդանի։

Եւ ար[դ] ընկալարուք զսերմանեացն ձերուց յոլովից յանկանջս դիմաւք և գրով ի տեսիլ աչաց զբերս պտղոցտ, և տուք զերեխայիրիս կալոյ և ղհնձանի Տեառն Յիսուսի և Հաւր իւրոյ գթածի և բարեխօսին զկողովն ուղկուղից մտաւոր գոհութիւն, ղի նորա է ողորմն և ձեր քաջութիւն յաղօթս և ի հաւատս, սակայն յորդառատ և անպակաս արտասուօք ոռոգել աղաչեմ զսպալերիկ և զանբանից կոխան անդաստանս։ Ուստի ընկալարուք զսակաւ սատարդ փոքր մի դադարեցուցանել զախորժակս կարօտութեան ձերոյ, ղի և ձերովքտ բարէգթութեամբ և աղերսօք մաղթանաց գտցէ և աստ ի Յիսուս քաղցեալն պտուղ ի Բեթանիէ յՍուրսաղէմ եկեալ աշակերտացն դասուք, յորմէ աւրհնեսցուք և պտղալիցք եղեալ ձեօք հանդերձ, փառաւորեսցուք զնա Հարբ և Հոգւով յաւիտեանս յաւիտենից, ամէն։

317ա Ի թվիս ՉԺ (1261), եղեւ սկիզբն և կատարումն համառօտ վերլուծութեան արարչապատում մովսիսական մատենիս ի խնդրոյ արհիական տեառն Համազասպայ և վարդապետին Գրիգորի՝ փակակալին սուրբ ուխտին Սանահինի, սատարութեամբ անարժան ծառաիս քրիստոնէից Վարդանայ, ի սիրոյ և ի մեծարոյ երեսաց բռնադատեալ, քան զի ի զգաւութեանէ էաք մերում անբաւականութեանս ի նսեմութենէ մտաց և ի ժամանակէ և ի հիւանդոտ կենաց. ապա ի շատ ժամանակաց հարամղեալ ի վարդապետէն Գրիգորի ընդ[դ]իմանա[յ]աք իրաւամբք, անվստահ եղեալ չիշխէաք ձեռնարկել յիրս, որ վեր էր քան զկարն մեր։ Ապա զի պատկառելի երեսօքն հարկեց զմեզ տեառն Համազասպայ՝ երեսաւք և գրով անդադար՝ յաղթեցաք և հնազանդել սկսաք՝ յԱստուած և յաղօթս նոցա վստահացեալ՝ ի գարնանային յեղանակն, առաշնորդ ունելով զամոլսն հաւատոյ զՆզիշէ և զՆփրեմ և զմեծն Ոսկիաբան և զայլսն, որ վաստակեալ էին ի գիրքս յայս ի տեղիս տեղիս, և յորոց հաւաքեալ էր լուսաւոր վարդապետ Տիմոթէոս։

Սակայն դիմեցաք յոլով փորձանաց և տւայտանաց ներքոյ և արտաքոյ ի շմոր և յամպոխել աւուրքս մեղսաբեր, վասն որոյ կասկածեմ այլ և գիտեմ իսկ եթէ սակաւ պակասութիւն և պատճառ է եպերանաց գտանէք պատահեալքտ այսմ գործոյ մեծի, ընդ որս վարկպարագի անցաք, է ղի զհարկաւորն և զառաւել պիտանին թողեալ լինինք ի սրբոցն բանից, և է ղի յանդէպ տեղ եդեալ, և դարձեալ զոր ի մէնջ համարձակեցաք զմիտս յաւելուլ, զթեցեալն պակաս չլինի ի դէպ, և մնացեալ իցէ դարձեալ
317բ հարկաւոր բանէար անլուծանելի, այլ և հրամանա||տուքն ստիրէին զմեզ ի շոյտն, և մեք ի կաս[կ]ածոտ և ի մուխատրա կենացս մերոց երկուցեալք, ել ի դուրս եդաք և համառաւտ գնացաք՝ փութացեալք յաւարտն, զոր տեսաք ի շնորհն Աստուծոյ և յողորմն նորա յեղանակս ամե-

բայնի ի հնգէտասանն մարգաց ամսոյ և ի քսան ու հինկն նոյեմբերի, ի տաճնի սուրբ հայրապետին Պետրոսի Աղէքսանդ[ր]ոյ պատրիարգին, և երկիր պագաք Աստուծոյ առաջի ձեր, ի շրթունս եկեղեցոյ և հաւատոյ, և նովաւ աղաչեմ զամէնիսեան ներել մեզ ղ[յ]անցանս՝ ատտուածաբար դթալով ի մեզ և ուղղելով զթիւրութիւն մեր, և թէ զշնորհն Յիսուսի Աստուծոյ մերոյ զանարգամեծարն տեսանէք բախեալ ի մեզ և պիտանի ինչ ծնեալ յամուլ և յաղտեղեալ մտացս մերոց, մի անարգէք, այլ մեծութիւն, պատիւ և փառք Աստուծոյ, գոհութիւն և աւրհնութիւն յաղգս և յազինս առաջի յԱստուծոյ յաւիտեանս յաւիտենից յաւիտեան, ամէն։

Շնորհս ունելով և աղօթս տալով հայցողացն բանիցս, ընդ որս և մեք զաղաչեմ մասնաւորել զառատ ողորմութիւն Աստուծոյ ի թողութիւն մեղաց մերոց և անբիծ և անդատապարտ կալոյ մեզ առաջի ահեղ աւետնին Աստուծոյ ձեզ հանդերձ և ամենայն լրութեամբք քրիստոնէից, և շնորհաւոր ձեզ և բարէմո[յ]ն և բարէշուք և բարեաց բազմաց կարապետ և նախընթաց գրկուքս այս վաստակ և աշխատութիւն փոքրիկ՝ փցուն և հեղք մատանց մերոց և ձեռաց, երկրորդելոյ ի դիւրընթերց մատեան որդւոյ իմոյ սիրեցելոյ Մարգարէի, որում և վարձ բարի տացէ նմայ Յիսուս Քրիստոս Տէրն մեր յառատաձիր գանձուց իւրոց և եղիցի ինքն աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

256

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀՆԳԱՄԱՏԵՆԻ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԵՒԵԼՑՒՈՅ

Երևան 2604 (1295 թ.)

1ա *Ի խնդրոյ Տեառն Համաղասպայ և վարդապետին Գրիգորի հաւաքումն մեկնութեան սրբո[ց հա]րանց եղիշէի, Յովհաննու և զոր տեսանէք յանցն իւրսն, ի տառապեալ ոգւոյ Վարդանա։*

Հեղինակ՝ **Վարդան վարդապետ**
Վայր՝ **Սանահին**

Վարդանայ յիշատակարան

Ամենաողորմ Աստուած անոխակալ, անյիշաչար, քաղցր և երկայնամիտ, անսկիզբն և անվախճան, աներբ և անուրեք, աշխարհակիր և ամենամերձ Տէր, ամենասուրբ Երրորդութիւն՝ ի միում բնութեան և ի զաւրութեան փառաւորեալ։ Անարժան գործոյ իրի և անուան, յանգամս սուրբ եկեղեցւոյ քոյ ի մեղսաներկ և ի ցաւալից ձեռաս առեալ հաւատով
185ա *զնշխարս ոսկերաց սրբոց քոց, որք մատուցին զինքեանս հաճոյական‖ պատարագ քեզ ի հոտ անուշից, զխաւարչուտ և զնսեմացեալ գոյութեամբս իմով արկեալ զլրումն կաթուղիկէ եկեղեցւոյ քոյ, երկրպագանեմ քեզ ամենեցումբք, զսուրբ շրջունս նոցա դնելով ի պատուանդան ոտից քոց. և զկենսունակ սուրբ նշան սիրոյ ի սրտի եդեալ գոհանամ զքէն՝ քոյովք հաճոյիւքն յերկին ի վեր և երկիր ի խոնարհ՝ այլև բան տալով բոլորից*

մասանց արարածոց, կոտորելով զամենէսեան ի չափ հատոյ մանանխոյ զգեցուցանելով նոցա կեանս և լեզու, և այնպէս գովեմք և աւրհնեմք, գոհանամք և փառաւորեմք, ղզաւրացեալ եւ զառատ ողորմութիւն քո անարժանս երկնի և երկրի, որ և յաւելեալ յայլսն քաղցրութիւն և ղայս; Զի արժանի եղէ տեսանել զկատարումն խնդրոյ սուրբ եկեղեցոյ քոյ ի ձեռն աւագին իւրոյ, տեառն և որդւոյն հարազատի: Թէ համարձակելի է մեղ և զձեզ մեծարել և ի նաւակատիս մեր, գլուխ եկեղեցոյ վսեմ տէրդ մեր արհիական և անդրանիկ մեր եղբայր րաբունի, և ասեմք զասացեալն իմաստնոյն Պիսիդեայ: Ո մշակդ մորենեաց և վիմաց, և կամ աղտաղտ և խոխոմ դետնոյ և ցամաքեալ երկրի ցաւաւք և ժամանակաւք, որ բռնադատեալ արարիք խիւս ի խորշակահար հասկաց, սակայն զի արեգակնակոխ էր և յուսով կենդանի:

Եւ արդ, ընկալարուք զսերմանեաց ձերոց յոլովից՝ յականշս, և գրեբով գիմաւք ի տեսիլ աչաց, զբերս պտղոցդ և տուք զերախայրիս կալո և հնծանի Տեառն Յիսուսի և Հաւր գթածի իւրոյ և բարեխաւսին, և զկողովն ուղկուզից մտաւոր գոհութեամբ, զի նորա է ողորմ, և ձեր քաջութիւն յաղաւթս և ի հաւատս: Սակայն յորդառատ և անպակաս արտասուաւք ոռոգել աղաչեմ զապալերկ եւ զանբանից կոխան անդաստանս, ուստի ընկալարուք զսակաւ սատարդ, փոքր մի դադարեցուցանել զախորժակս կարաւտութեան ձերոյ, զի և ձերովքդ բարեգթութեամբ Հւ աղեբսիւ մաղթանաց, դոցէ և աստի Յիսուս քաղցեալն պտուղ ի Բեթանիայէ եկեալ յԵրուսաղէմ աշակերտացն դասուք, յորմէ աւրհնեսցուք և պտղալիցք եղեալ ձեաւք հանդերձ փառաւորեսցուք զնա հարբ և հոգւով յաւիտեանս:

Բ

Գրիչ՝ Մարգարէ՞

Աղաչեմ ընդ նախայիշատակեալս Վարդան վարդապետ հոգացող այսր մատենի, զոր ի ն[ախ]կնագունիցն Մեկնչաց և զո[ր ի շ]նորհաւքն Աստուծոյ յիւրմէ յաւե[լ], յիշման բարւոյ արժանաւորէք, և զմեծապատիւ արհիեհիսկոպոսն մեծահռչակ տուրբ ուխտին Հաղբատայ զտէր Յոհաննէս, որ զաւրինակս էր սրբագրեալ և զնորա [ձե]ռասուն զեղբաւրորդին հարազատ Սարգիս քահանայ որ ի վարժս կր[թութեան] բանի է պարապեալ, որ և շնորհեաց իսկ զաւրինակս, որոյ լիցի մա[ս]ն ողորմութեան գտանել ի Քրիստոսէ յաւուրն վերջնում:

257

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 5661

Գրիչ՝ Ստեփանոս

ա

117ա Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր և Որդոյ և Հոգւոյ Սրբոյ այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Գրեցաւ լուսափայլ սուրբ պատուիրանս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի թուիս Հայոց ՉԺ (1261), հրամանաւ և արդեամբք բարերշանիկ սուրբ և ընդրեալ միայնակեացին Յոհաննիսի, ի վայրկես անձին իւրոյ և ի չիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց, և եղբարց և քեռց, կենդանեաց և մեռելոց։

Արդ, որք կարդայք կամ աւրինակէք, զյառաջասացեալ հայր և ընտրեալ միայնակեացս՝ յաղաւթս յիշեցէք։ Ընդ նմին և զիս զանարժան գծողըս զսուտանուն կրաւնաւորս, որ ըստ անւանս ոչ ունիմ զաւրինակ՝ Ստեփաննոս և ծնողսն իմ և ղեղբայրսն, և որ յիշէ՝ յիշեալ լիցի առաչի ղենլոյն Յիսուսի, և Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս։

Ո՛վ սուրբ հայր, յիշեայ զեղկելիս զՍտեփաննոս, և խոշորութեանս մի մեղադրեր, դի կարի ցուրտ էր աւուրքս և սառոյց ևս, և դրոց աշակերտութիւնս ի վերա՝։

Բ

71բ Զեղկելի գծողս յիշեա, ո՛վ սուրբ ընթերցող։ Գրեց[աւ] թըւականիս ՉՀ (1259), ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի։

258

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 378 (1212 թ.)

ա

8բ Ե[ս Հասան Ջալալ Դաւրոյ...]** չոգա յարեւելս առ արքայն Նեստղաց, եւ ի կողմն հիւսիսոյ՝ տոհմիւ աղխաւորն իմով անձամբս վասն խաղաղութեան եկեղեցոյ։ Ես եւ ամուսին իմ Մամխան***, և տեառնատուր մանուկս իմ Աթաբակ չոգաք ընդ արևելս հիւսիսոյ, եւ ես ընդ եզր աշխարհի գնացի առ թագաւորն որ Մանգու խանն։ Եւ յամեալ զամս հինդ, դարձա ի տուն, նոյն[պէս Մամխան]ն և Աթաբակն դարձան, և նոքա ժամանեալ ի տեղի իւրեանց, և ես ի Թաւրէժ յամեալ, յորում և աւրհասական մահ ի վերա հասեալ՝ փոխի [Մամխան]ն ի Քրիստոս։ Եւ ես եկեալ գտի զպայծառ տուն իմ լի սգով եւ արտասուաք անմխիթարելի, զի նա էր ամենայն զաւրաց և հեծելոց, նաեւ եկեղեցոյ և քահանայից սփոփիչ և մխիթարութիւն։

9ա Արդ, ի թուին||Հայոց ՉԺ (1261) տուի զսուրբ Աւետարանս ծաղկազարդ, յիշատակ աստուածասէր տիկնոջն [Մամխանա]ի մեր լուսաւորիչ սուրբ աթոռն Աղուանից, ի հոգևոր տէրն Ներսէս, որ ա[յ]ժմ բարեհամբաւ**** լրիւ ունի զաթոռն սուրբն, և առաւել քան զսուրբս։

---

* Ստեփանոսը Մաթէոսի և Մարկոսի Աւետարանների գրիչն է, մյուս երկուսի գրչի անունը չի պահպանվել։ Ձեռագիրը միասյուն է։

** Սկզբից չորս տող քերված է և մնացել է միայն գլխագիր ⟨ե⟩ տառը։ Այս երեք բառերը նույնպես քերված են և հետագայում վրայից սև թանաքով թարմացված։

*** Անունը քերված է ամենուրեք։

**** Հ. Օրբելին կարդացել է «բարեհամբուրիւ» և ավելացրել «գոց», ճիշտ չէ (И. А. Орбели. Избранные труды. Ереван, 1863, էջ 155)։

Արդ աղաչեմք զձեղ սուրբ հայրք եւ ընթերցողք, որք յիշատակս կարդայք, լի բերանով ասասջիք. Քրիստոս Աստուած յորժամ գաս ի նորոգել և ի փոխադրել զտիեզերս, նորոգէ և միաւորէ զաստուածասէրն [Մամֆան]ն և դասէ ի դասս ընտրելոց քոց, բարեխաւսութեամբ արարչագործ կամաց քոց և աղաչանաւք Սրբոյ Աստուածածնիդ և ամենայն սրբոց դասէ և պայծառացոյ ընդ սուրբս քո։ Ընդ նմին եւ ինձ [զՋալալ Դավլի] պարգեւէ զխաղաղութիւն հոգւոյ և մարմնոյ, և միոյ մանկանս իմոյ Իվանի Աբաբակին պարգեւէ զքո զառատ ողորմութիւնդ և զամենայն Քշնամի սոր[ա] ընկրկեալ սատակէ և յամաւթ արա, ամէն, ամէն։

Բ

163բ Քրիստոս Աստուած, ողորմէ Մամֆանին և գրէ զնա ի դպրութեան կենաց ընդ սուրբս քո՝ յարքայութեան քում, ամէն։

259

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Ն. Ջուղա 30, Տեր-Ավետիսյան, ծուցակ, էջ 45—46

Գրիչ՝ Թորոս Արևելցի
Վայր՝ Հռոմ

ա

190ա Փառք ամենասուրբ երրորդութեան։

Ես նուաստ և անարժան ծառայ Աստուծոյ Թորոս պիտակաբար սպասաւոր բանի յԱրևելից գաւառաւ, և քաղաքաւ ի Գանձակայ, սնեալ և վարժեալ ի մեծ մենաստանն Գետիկ, տարբերեալ այսր անդր, հասի սահասասան ճանապարհաւ, կասկածակոծ, մահահուպ, հիւծեալ, հիւանգամաշ մարմնով, մանաւանդ թեև հոգւով ևս, ի մեծս Հռովմ, ուր են ի դամբանի ամոլքն հաւատոյ Պետրոս և Պաւղոս, զի թերևս ի ձեռն նոցին բարեխաւսութեան ապրեսցուք ի յահագնասարսափ և ի սարսռաշատ աւուրն, և ազատեսցուք ի քսրմնելի ամաւթոյն բարեխաւսութեամբ նոցին։ Եւ զի յոյժ հեռի եաք յազգէ և եղբարց մարմնաղէտ արեան մերձաւորաց, որով վախճանեալքն յիշատակին, ստացայ զայս դրունքս դոյզն ինչ նշխար յիշատակի գծագրել իմով իսկ ձեռաւք խոշոր գծիւ, ի յաղքատ նիւթի։

Ի ՉԺԱ (1262) թուին եղեւ սկիզբն և աւարտ սմին ի տիեզերաց հըրչակելալ յականատես Հռովմ, առ դրան վիմին հաւատոյ Պետրոսի առաքելոյն չորք աւետարանչացն գրեալ Աւետարանքն և Չորքտասան թուխտքըն Պաւղոսի, Գործ առաքելոցն և Եւթն թուղթք կաթուղիկեացյն ի մի տուփ վասն որոյ աղաչեմ զպատահելսդ և ժառանգողսդ զսա խնամով պահել և սրտի մտաւք յիշել ի մաքուր ձեր յաղաւթսդ զԹորոս վարդապետ, և զծնողսն իմ զՄանուիլ և զՑատուռն, և զեղբարսն զՀոռբէն և զՅակովբ և զՅոհաննէս, և զքոյր իմ զԱզիզն, և զսնուցողսն, և զամենայն երախտաւորսն մեր, և զայլ ազգականս և զընտանիս։ Եւ որք զմեզ յիշեն աղաւթիւք, յիշեալ լիցին ի Քրիստոսէ յահեղ աւուրն ի կարեաց ժամուն։

189բ Յիշեսջիք ի Քրիստոս և զհոգևոր եղբարս իմ, որ ի միասին պանդըխտանայաք ի Հռոմս՝ զՄակար սրբասնունդ քահանայ, որ բազում խոնարհութեամբ հանգոյց զմեզ յոլով աւուրս, հանգուսցէ զնա Քրիստոս ի տան հօր իւրոյ՝ ընդ սուրբս իւր։ Յիշեսջիք և զայլ եղբարս՝ զՎարդան, և զՍտեփաննոս, և զՅակոբ, և զՅակովբոս, և զԱռաքել, որ էլ ի զկենցա-

*դո՝ աւանդեալ զհոգին, ի դեկտեմբերի Ի—ԻԸ (28), որում ողորմեա ի Քրիստոս...**

Յիշեսջիք և զ'Վասիլ Կոզեռն, որ ապուրն եփէր և զամենայն համաբնակ եղբարքս՝ զքահանայս և զկրաւնաւորս, որ կան ի Տանէն Հայոց ի Հռոմս:

Յիշեսջիք և զմիւս Թորոս վարդապետ՝ մականուն Խալիզոնիկ, և որք զմեզ յիշեն, յիշեալ լիցին ի Քրիստոսէ Աստուծոյ, որում փառք յավիտեանս ամէն։

Բ

82ա *Յիսուս յոյս քո[յ]ոց արարածոց ողորմեա Թորոսի ստացողի և ծրողի, և ծնողաց իւրոց և եղբարց, և քեզ փառք յամենայն (ժ)ա[մ]։*

Գ

47բ *Ջստացուղ սուրբ Աւետարանիս և գծող Թորոս Արնելցի ի Գետկա, յիշեջիք ի Տէր Քրիստոս։*

Դ

83ա *ԶԹորոս սպասաւոր բանի և զծնողսն, և զեղբարսն հանդերձ՝ ամենայն երախտաւորաւքն իւրեանց յիշեսջիք ի Քրիստոս, և Աստուած զձեզ յիշէ իւր արքայութեանն։*

Ե

143բ *Ողորմի Թորոսի վարպետի, և իւր ծնողացն Մանուիէլի և Տաւտսին, եղբարցն Ռոբինի և Յակոբայ և Յոհանիսի, և քեռն Ազըզին:*

260

ԱՒԵՏԱՐԱՆ

Սանջյան, Ցուցակ Ամերիկայի, էջ 281—284

Գրիչ՝ Թորոս Ռոսլին
Վայր՝ Հռոմկլայ

ա

Փառք քեզ անսահման անուն և անզուգական անձնաւորութիւն, Հայր
407ա *եւ Որդի եւ Սուրբ Հոգի‖որ ետուր կարողութիւն և սատար եղեր տկարութեան իմոյ ի գրաւ հասանել [ը]ղձալի մատենիս։ Աւրհնութիւն քեզ Սուրբ Երրորդութիւն եւ միասնական աստուածութիւն, այժմ և միշտ։*

Շնորհիւ Տեառն սկսեալ եւ ողորմութեամբ նորին յանգ ելեալ աւարտեցաւ մատեանս աստուածախաւս, աստուածունակ, երկրպագելի եւ պաշտելի սուրբ Աւետարանս յեւթնհարիւր եւ մետասաներորդի ամի թուաբերութեանս Հայոց (1262), յաշխարհամուտ յաթոռս Հռոռմկլա, ընդ հովանեաւ աստուածաբնակ տաճարացս, որ յանուն Սուրբ Փրկչին

* *Մի քանի անուններ չեն կարդացվում։*

եւ Սրբոյ Աստուածածնին եւ Սուրբ Լուսաւորչին մերոյ, եւ այլ եւս բազ-
մահաւաք սրբոց, ի ժամանակս աստուածասէր եւ բարեպաշտ արքային
Հեթմոյ, եւ ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ կաթողիկոսի, որ
407բ սրբազան վարիւք իւրովք առհասարակ զարմացուցանէր զբազումս,
մինչ զի եւ յարտաքնոցն առաւել ընդունէր վկայութիւն զանհամեմատ
վարուցն իւրոց մաքրութեան։ Հեզ էր եւ ողորմած եւ բազում բարութեանց
լինէր աւրինակ, ուստի եւ եղբաւրորդին իւր Թորոս քահանա ի նմանէ
ուսեալ՝ լինէր գրասէր եւ աստուածասէր, զմտաւ ածեալ, թէ ամենայն
որ ինչ յերկրէ ընծայեալ նիւթք ընդ սոյն կորնչել ունին, եւ որ յաւիտեան
մնայ՝ բան Տեառն է։ Վասն այսորիկ եռափափաք սիրով ստանայր մա-
տեանս աստուածաշունչս ի հին եւ ի նոր կտակարանաց, եւ զամենայն
գոյս եւ զարարս գոգշիր եթէ շանայր դնել ի վերա եւ այլ եւս զարդուց
սրբոյ եկեղեցւոյ, վասն զի յոյժ տանասէր էր այրն այն, եւ պայծառա-
ցուցիչ եկեղեցական կարգաց, նմին իրի ստանայր կրկին անգամ՝ զմա-
տեան սրբոյ Աւետարանիս յիմմէ անարժանութենէ Թորոսէ մականուն
Ռոսլին կոչեցելոյ, որ եւ ըստ կարի իմոյ յանգ հանի Աստուծով զհրա-
մանն նորա, նոյնպես զարդարեալ ոսկւով սրբով եւ երանգ երանգ դու-
նովք, ներքոյ եւ արտաքոյ ընդելուզեալ քարամբք պատուականաւք, առ ի
սիրելի առնել զսա մանգանց եկեղեցւոյ։

Վասն որոյ աղաչեմ զձեզ, ո՛վ աստուածասէրք, որք հանգիպիք սմա
եւ որք ժառանգէք զսա, յիշել աղաւթիւք ի Տէր զարժանաւորսն ամենայն
բարեաց յիշատակի զբարեպաշտ արքայն Հեթում, եւ զսրբահոգի թագու-
հին իւր Զապէլ՝ դուստր Լեւոնի արքայի, եւ Աստուծով զորդիս սոցա
զպարոն Լեւոն եւ զպարոն Թորոս, եւ զամենայն նախնիս իւրեանց, որք
408բ եւ անուանին Ռուբինեանք: Յիշել աղաչեմ եւ զթագաւորհայրն պարոն
Կոստանդին, ուստերաւք եւ դստերաւք եւ ամենայն զարմիւք։ Յիշեսջիք
եւ զերջանիկ հայրապետն Հայոց տէր Կոստանդին, եւ զհայր իւր Վահ-
րամ, եւ զմայր իւր Շուշիկ, եւ զեղբարսն իւր զԳորգ եւ զԳրիգոր, եւ
զպարկեշտուհի քորսն իւր Շուշանիկ եւ Վանենի:

Աղաչեմ յիշել եւ զքաջակրաւն քահանայն Թորոս՝ զստացող սուրբ
մատենիս, եւ զհայրն իւր Գորգ քահանա, եւ զմայրն իւր զԱզիզ, եւ զեղ-
բարսն իւր զաստուածապատիւ տէր Ստեփանոս եւ զԳրիգոր նորին հա-
րազատ, եւ զքոյր իւր Շուշանիկ, եւ դստերն իւր Մլքի եւ Շուշան, եւ զմայր
սոցա Տալիթա՝ կանուխ վախճանեցելոյ զկենցաղս, եւ զհաւրեղբաւրոր-
409ա դին իւր զԳրիգոր եւ զՍտեփանոս եւ զԹորոս եւ զամենայն ազգայինս
իւր։ Յիշել աղաչեմ եւ զբարի շառաւիղ որդին իւր պարոն Ստեփանոս իշ-
խանական պատուով զինուորեալ ի դրան արքայի, եւ զամուսին նորա
զտիկին Ակաց, ի մեծ տոհմէ, եւ զուստերս սոցա եւ զդստերս։ Որոց ամե-
նայն յիշելեացս առ հասարակ Քրիստոս Աստուած ննջեցելոցն հանգիստ
եւ ողորմութիւն պարգեւեսցէ եւ զկենդանիսն անխռով խաղաղութեամբ
պահեսցէ, ամէն։ Յերես անկեալ բազմամեղ թարմատար գրիչս, աղաչեմ
յիշել եւ զիմ անարժանութիւն, եւ ծնաւղսն իմ, եւ զամենայն բարի ուսու-
ցիչն իմ, եւ Աստուած զձեզ յիշեսցէ յիւրում արքայութիւնն եւ ի փառս,
ամէն։

Բ

11բ Ո՛վ յանսկիզբն ծոցո բան,
Որ ծաղկեցար յաղգս մարդկան
Եւ զայս մատեան Աւետարան
Մեզ հնչեցէր ձայն ցնծութեան.
Դու զորս ետուր մեզ քեզ փոխան
Կաթողիկոս՝ ի Հայաստան՝
Չտէր Կոսաւանդին պետ հովվութեան,
Ի գունդն ընգալ ի Պետրոսեան։

Գ

12ա Եւ զստացող այսմն տառի
Եւ զարդարող սուրբ կտակի,
ՉԹորոս նորին եղբաւրորդի
Եւ քահանայ սուրբ եւ արի,
Եւ զՏալիթա բարի հոգի
Իւրեանց ծննդաւք եւ այլ զարմի,
Ընգալ ի քում յառագաստի
Որ ես աւրհնեալ յամենայնի։

Դ

129բ Ընդ մետասանիցն գնդի համադասեա Քրիստոս զտէր Կոստանդին կաթողիկոս եւ զեղբաւրորդին իւր Թորոս քահանայ՝ ստացող աստուածախաւս այս մատենի և ամէն։

Ե

200 Ստացաւղի սորա Թորոս քահանաի ողորմեա Քրիստոս։

Զ

317 Զաստուածապատիւ տէր Կոստանդին կաթողիկոս Հայոց եւ զեղբաւրորդին իւր Թորոս քահանայ, որ եւ ստացող լուսազարդիս յիշեսչիք ի Քրիստոս Յիսուս։

Է

Կազմող՝ Առաքել Հնազանդեցի

Չմեղաւք դատապարտեալ կազմաւղ սորա զԱռաքել Հնազանդեցի եւ զծնաւղսն իմ, եւ զհարազատն իմ՝ զՊաւղոս սարկաւագ, եւ զուսուցիչն իմ՝ զՍարդիս քահանայ, զհանգուցեալսն ի Քրիստոս աղաչեմ յիշել ի Տէր։ Ի թվին ՉԺԱ (1262)։

261

ԱԻԵՏԱՐԱՆ

Երուսաղեմ 2660

Գրիչ՝ Թորոս Ռաւալիճ
Վայր՝ Հոռոմկլա

288բ Փառք ամենասուրբ երրորդութեանն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Շնորհիւ Տեառն սկսեալ և ողորմութեամբ նորին յանգ ելեալ աւարտեցաւ մատեանս աստուածային, երկրպագելի և պաշտելի սուրբ Աւետարանս, յամի եւթն հարիւրերորդի տասն և մի երորդի (1262) թուաբերութեանս Հայոց, ընդ հովանեաւ սուրբ աստուածաբնակ տաճարացս որ յանուն Սուրբ Փրկչին, և Սրբոյ Աստուածածնիս, և Սբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, և այլ բազմահաւաք սրբոցս, որք պաշտին յաշխարհամուտ աթոռս Հոռոմկլա, ի հայրապետութեանն տեառն Կոստանդեայ սրբազան կաթողիկոսի Հայոց, և ի բռնակալութեան ազգին Նետողաց որք կոչին դադար։ Հրամանաւ մեծի և բարէպաշտի և իշխանաց իշխանին պարոն Լեւոնի Աստուածով որդւոյ քրիստոսապսակ սուրբ արքային Հեթմոյ թագաւորի ամենայն Հայոց։ Որ և աստուածապարգև իմաստութեամբն իւրով ըստ մեծ և ուղիղ հաւատոյն իւրոյ զոր ունէր առ Աստուած, հանա-
285ա պազ զանձն իւր դներ քաջապէս ի վերայ հաւտին Քրիստոսի։‖Որ և ի դառնաբեր և չարալուկ ժամանակիս մինչ զի աշխարհք աշխարհաւք, և ժողովք ժողովրդաւք ի սով, ի սուր և ի գերութիւն վարեցաւ, սա շնորհաւք և ողորմութեամբն Աստուծոյ պահէր ի խաղաղութեան զաշխարհ իւր և զգաւառ։ Այլև բարեպաշտութեամբն իւրով յԱստուած զորացեալ հէրքէր զհոյս հաքարածին ծննդոցն և անաւրինաց սեռիցն, բազում անգամ յաղթեալ սուլտանին Հոռոմոց, և առեալ զամուրս նորա՝ զանմատչելին Մուճտաս, և զՄաճիաւնճ, զըՍիկի և զայլս բազում զոր ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ։ Որ և յայսմ ամի առ նա և զամուր դղեակն զհոյակապ և զյագանաւորն Պեճեսնի, որ աւր Ի և Ծ (25) էր ամսէանն հոգտեմբերի։ Եւ ոչ այս չափ միայն, այլ և զյոլով տեսակս առաքինութեան յինքն հաւաքեալ բերէր ղողորմածութեան, զարդար դատողութեան, զեկեղեցւոյ շինութեան, ևս առաւել և զհաստատեալն ի վերայ ուղիղ հաւատոյ և առաքելական վիմի։

Ուստի և բարի շառաւեղ և ավ[ադ] որդին իւր ծիրանածինն պարոն Լեւոն, հաւրն նմանեալ վարուց, ի նմանէ ուսեալ էինէր բարեպաշտաւն, աստուածասէր և երկիւղած յԱստուծոյ, սիրող ճշմարտութեան, և ատեցող անիրաւութեան, որ և ըստ յոքունց բարեաց ի նմանէ գործելոց, յաւել ի վերայ և ստացաւ զգիրս սուրբ՝ զմատեանս այս սրբոյ Աւետարանիս, զարդարեալ ոսկւով սրբով և երանգ երանգ դունովք, հրաման տուեալ իմոյ անարժանութեանս Թորոսի մականուն Ռաւալիճ կոչեցելոյ՝ առնել զայն, որ և ըստ կարի իմոյ յանգ հանի Աստուծով զհրաման նորա, և աղաչեմ զամենեսին, որք հանդիպիք սմա, և որք ժառանգէք զսա, և որք

աւգտիք ի սմանէ զինչ ե իցէ արդեամբք, յիշել աղաւթիք ի Տէր զարժանաւորսն ամենայն բարեաց յիշատակի, զաստուածասէր և բարէպաշտ արքայն Հեթում, զաստուածապարգև որդիսն իւր՝ զծիրանածինն պարոն Լեոն՝ ստացող լուսազարդիս, և զհայրազատ եղբայրն իւր զրարիհամբաւ

286ա *պարոնն Թորոս, և զբարէսէր քորն իւրեանց։ Աղաչեմ յիշել զսրբահոգի և զառաքինաշան և ողջախոհ մայրն իւրեանց Զապիլ թագուհի, դուստր մեծին Լեոնի արքայի, ե զամենայն նախնի նահապետութիւնս իւրեանց, որք են առաքաւղք և զրաւաւղք նահանգիս Կիլիկեցոց և երախտագործք Հայաստանեացս սեռից և անուանելք կոչին Ռոբինեաններ։*

Յիշել աղաչեմ ե զքաղաւորահայրն պարոն Կոստանդին աբբահամեան հաւատաւքն ծաղկեալ ուստերաւք և դստերաւք, և ամենայն զարմիւք, որոց ննջեցելոցն հանգիստ և ողորմութիւն պարգևեսցէ Քրիստոս Աստուած և զանճառ երկնից արքայութիւնն, և որք այժմ՝ կենդանի երկար կենաւք, պարագայց ամաւք, անխռով խաղաղութեամբ և մեծաւ յաղթութեամբ պահեսցէ յաւերժ ցնծութեամբ և ուրախութեամբ ի կամս ողորմութեան իւրոյ, ամէն։

Յերեսս անգեալ յոքնամեզ ծառայս Ռաւլին աղաչեմ յիշել զիս, և ծնաւղսն իմ, և զուսուցիչսն իմ, և Աստուած զձեզ յիշեսցէ յիւր յարքայութիւնն և ի փառս, ամէն։

Բ

287բ *Յոյս իմ Քրիստոս էնդ ի յէից*
Որ ես իշխան Տէր բոլորից,
Դու զստացող քոին բանից
Ես նուիրող քեզ ի քոյից՝
Զկնոն ժառանգ թագաւորմից,
Զտիկին կեռանն իւր զուգակից,
Ընգալ ի կեանսգ անվախճանից,
Դարձեալ լինել քեզ փառակից, ամէն։

Գ

Գրիչ՝ Աւետիս

739ա *ԶԱւետիս գրիչ ե քահանա, որ անուամբս միայն եմ և գործաւք ոչ վասն բազում յանցանաց իմոց, զգրաւղս սրբոյ Աւետարանիս աղաչեմ յիշել ի մաքրափայլ յաղաւթս ձեր, որք կարդայք կամ ընդաւրինակէք, և սղալանացս մի մեղադրէք, զի կարն մեր այս էր, և Աստուած զձեզ և մեզ առ հասարակ ողորմեսցի իւրում գալստեանն, և նմա փառք յաւիտեանս, ամէն։*

Դ

224ա *ԶԱւետիս գրիչ որ բազում աշխատութեամբ գրեցի զսուրբ Աւետարանս, յիշեսջիք ի Տէր Յիսուս, եւ Աստուած որ առատն է ողորմութեամբ ձեզ և մեզ ողորմեսցի յիւրում գալստեանն, և նմա փառք յաւիտեանս, ամէն։*

ե

Կազմող Առաքել Հնազանդենց

286բ Չմեղաւք դատապարտեալ կազմաւղ սորա զԱռաքել Հնազանդենց, և ղծնաւղն իմ, և զհարազատն իմ զՊատրոս սարկաւագ, և զուսուցիչն իմ զՍարգիս քահանայ՝ զհանգուցեալսն ի Քրիստոս, աղաչեմ յիշել ի տէր, ի թուին ՉԺԱ (1262)։

262

ԱԻԾՏԱՐԱՆ

«Արարատ», 1905, էջ 720—721

Գրիչ՝ Տղաա

Ի թուականիս Հայոց ՉԺԱ (1262) գրեալ եղև սուրբ Աւետարանս... Քրիստոս որդի Աստուծոյ երկիւղածաց կամաց կատարիչ և պարգևատու ողորմութեան յուսացելոց ի քեզ զօրացուցիչ, ողորմեա Յովսէփ քահանայի /// և Դաւթի որդւոյ յաւուրն մեծի գալստեան քո, ողորմեա ամէնողորմ և բարերար Աստուած /// յահաւոր ատենին և դասաւորեա յաջակողմեանսն։ Ըստ այսմ հաւատոյ և հայցման ողորմեա Տէր Աստուած Տղաայ գրողի սուրբ կտակիս, որ արժանի արարէր աւարտել, եւ Բարսղի հաւր և Բաղդասարի մաւր /// բազում ողորմութեամբ քո։ Եւ ընթերցողի սուրբ զրոցս և յիշելոյ դրեալքս ի յիշատակս ողորմեա... զի փառատր լիցի անուն քո... ամէն...

Յայնմ ժամանակի զաւրացեալ էին ազգն Նետողաց և աղեղնաւորաց, որք աւերեցին յաշխարհս արևելից մինչև ի ծովն Եգիպտոսի և զկողմն հարաւ, որ էր նեղութիւն մեծ ամենայն ազգաց /// սոյնպէս և տեսիլ սրբոյն Ներսիսի թէ բազում պատուաորք անկանին ի փառաց։ Եւ ո՞ կարէ ասել զկորստումն անթիւ մարդկան զ (30) ամ ոչ դադարեցին հեղլոյ զարիւն մարդկան և էր տիրեալ երկրի։ Յամս(*) Հոլաուն զանն եւ իւր Բ (2) եղբարք ունէին զիշխանութիւնն յարևելից մինչև յԵրուսաղէմ, և մնացեալն որպէս զԻսրայելացիսն ակն ունէին քաղցրութեան ի Տեառնէ Աստուծոյ, և ազատութեան ի գերութենէն անաւրինաց և ի բռնութենէ անբարշտացն և դեռ էին ի նեղութեան և ի հարկապահանջութեան, և երանի զմեռեալսն, և ցանգային մեռանել և ոչ ապրել։ Ի սաստկութենէ հարկին ծախէին զորդի և տային հարկ և ոչ կտրէին ազատել։ Ազատարարն Աստուած և խաղաղացուցիչն ազատեսցէ յանաւրինաց զծառայսն իւր և խաղաղութիւն տացէ աշխարհի, և ինքն աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից*։

263

ԱԻԾՏԱՐԱՆ

Լենինգրադ, Սալտիկով Շչեդրինի գրադարան, 51

Նորոգող՝ Բարսեղ

ՉԺԱ (1262) թուիս նորոգեցաւ Աւետարանս ձեռամբ Բարսեղ աբեզայի։ Աստուած ողորմի կազմողին և աշխատողաց սմայ։

* Բերված է նաև մի հիշատակագրություն. «Ցիշատակ է սուրբ Աւետարանս Սարգիս կուսակրաւն քահանայիս ծնողներն են Ավետիսն ու Արղուն, եղբայրները՝ Ամիրը և Բշնեն։

264

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7690 (1249 թ.)

Գրիչ՝ Լևոն կամ Թորոս
արքայորդի

-362ա Ի թուիս Հայոց ՉԺԲ (1263), ի ժամանակս քրիստոսասէր և բարէ-
պաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ, որ գերազանց գտաւ բարէպաշտու-
թեամբ ամենայն թագաւորացն առաջնոցն, միջնոցն և վերջնոցս, եւ ի
հայրապետութեանն Հայոց Կոստանդեայ, և ի պարոնութեանս Հայոց
Լևոնի, անդրանիկ որդոյ աստուածասէր թագաւորին Հեթմոյ, եւ հարա-
զատ եղբաւր նորին պարոն Թորոսի, որ ողջախոհութեամբ զարդարեալ
է, յորում ժամանակի աստուածասէր և բարէփառ կայսերածին և ծիրա-
նասնունդ տիկինն աստուածապահ քաղաքին Սահտոյ տամ Ֆիմի, դուստր
բարէպաշտ թագաւորին Հեթմոյ, յաղագս սատանայական պատերազմաց
եկն յաշխարհս Կիլիկեցւոյ առ հայրն իւր և առ աստուածասէր եղբարքն
.362բ պարոն Լևոն և պարոն Թորոս‖ուստերովք իւրովք և դստերովք, որոց
անուանք առաջնոյն Մարկրաւն, որ վերակոչի Մաոինէ, որ թարքմանի ի
մեր լեզուս լուսաւորիմ, և որդոյ նորին Պալիաւն, որ թարգմանի Բեթղէ-
հեմ, և անուն կրսէր որդոյն, որ սնաւ առանց կաթին մաւր իւրոյ Ճուան,
որ թարգմանի Յոհաննէս: Եւ զի տրտմեալ էր տամ Ֆիմէ վասն վշտացն,
որ ժամանեցին նմա աստուածասէր եղբայր նորին պարոն Լևոն, ետ
զաստուածախաւս Աւետարանս նմա ի մխիթարութիւն և ի փրկութիւն
հոգւոյ յետ աստի ելիցս տալ ի Սիոն զսա զաւակ մանկանց գրելով յոգոց
տախտակ։

Արդ, որք աւգտիք ի սմանէ և կամ ընդաւրինակէք, յիշեցէք զաստու-
ածասէր տիկինն զտամ Ֆիմէ որդովք իւրովք և բնաւին զարմիւք։ Յիշե-
-364 ցէք ի Տէր‖*զբարեպաշտ թագաւորն Հեթում, որդովք իւրովք։ Եւս առա-
ւել յիշեցէք ի Քրիստոս զարժանին յիշատակի զբարեպաշտ և զաստուա-
ծասէր թագուհին Զապէլ և նախնիս նորին Ռոբինանճ՝ զհանգուցեալսն ի
գոգն Աբրահամու Նա և զծիրանածին դստերս նորին՝ զբարեպաշտու-
թեամբ զարդարեալն և զսիրող աւբինացն Աստուծոյ, որ և զնմանութիւն
ծնողին բերելով յինքեան զաստուածասէր բրընձեսն զՍպիլ՝ որդւովք իւ-

---

* Այստեղից ձեռագիրը փոխվում է, շարունակության գրիչը տամ Ֆիմիի եղբայրներից, ստի Լևոն կամ Թորոս արքայազուններից մեկն է։

րովք, եւ զկնի սորա և զմիւս այլ քոյր իմ զՏիկնաց տիկին և զԸնիթայն, և զկնի սորա զհոմանուն ծնողին իմո զքոյր իմ՝ զՋապլուն, որ ոչ միայն անուամբն նման գոլ ծնողին, այլ և բարեպաշտութեամբն և աստուածասիրութեամբն, և զկրսեր քոյրն իմ զՄարիուն: Յիշեցէք ի Տէր և զստացաւղ աստուածախաւս մատենիս զտամ Ֆիմի, որ ամենայն բարե-
361բ պաշտութեամբ զարդարեալ է. աստուածասէր, ողորմած, աղաւթասէր, հեզ, քաղցր և հանդարտ առ ամենեսեան, և կարեկից ամենեցուն, մանաւանդ որ հիւանդութեան ախտից նեղեալ են, որոյ Տէր Աստուած տացէ նմա ընդ միոյն հարիւրապատիկ աստ և յերկնիցն արքայութիւնն, և զըստ մարմնոյ եկեալ փորձութիւնն և զտրտմութիւնն ի բարի և յուրախութիւն աւարտեսցէ, և ղորդիս նորա ի խորին ծերութիւն հասուսցէ, և նմա փառք յաւիտեանս, ամէն:

265

ԱՒԵՏԱՐԱՆ

Տեր-Ներսեսյան, Դուրլինի ձեռագրերը, էջ 558

Գրիչ՝

ա

339բ Ի թվին Հայոց ՅԻԵ (876)*:

բ

14ա Ով յանսկիզբն ծոցո բան
Նոյն ի ծաղկեալ յազգս մարդկան
Որ մեզ զընորհս քո շրթան
Հեղէր աւրհնեալգ յաւիտեան:
Դու զպճնողս քո բանի
Եւ զարդարող այսմ տառի
Ջտէր Կոստանդին հովիւ բարի
Յաթոռ նստոյ ընդ Պետրոսի**:

266

ԱՒԵՏԱՐԱՆ

Սանչյան, Յուցակ Ամերիկայի, էջ 737—739

Ստացող՝ Յոհաննէս Արքեպիսկոպոս
վայր՝ Գոներ

ա

Յամիս եօթն հարիւրորդի տասներորդի երկրորդի (1263) թուականութեան Հայոց. ես Յոհաննէ եպիսկոպոս նուաստ ծառայ Աստուծոյ,

* Գրված է Աւետարանի վերջում: Ինչպես ճիշտ նկատում է Սիրարփի Տեր-Ներսեսյանը, այն գաղափար օրինակի գրության թվականն է:

** Ղուկասի ՄԶԳ (283) համեմատ լուսանցքում խոշոր բոլորգրով գրված է. ակայ այս բան ի Փղոս[ն]գաց Աւետարանին եւ յԱսորոցն, եւ ի Հոռոմոցն, բայց յաղեքսանդրացոցս

որդի մեծին Կոստանդիա թագապահի եւ արքայահաւր Հայոց եւ եղբայր սուրբ արքային ամենայն Հայոց Հեթմոյ, մեծափոյթ ջանիւ եւ ջերմ սիրով գրել ետու զաստուածապատում սուրբ Աւետարանս ի Վայելումն կենաց ինձ եւ իմոցն, եւ յիշատակ բարի ապառնեացն, ի հայրապետութեան տեառն Կոսաւսնդիա, եւ ի թագաւորութեան բարեպաշտին Հեթմոյ իմո արքայի, եւ յիշողութեան բարեսէր եւ աստուածապահ որդոց նորին Լեւոնի եւ Թորոսի, ձեռամբ քահանայի Թորոս գրչի։

Եւ նկարագրեցաւ սա յայլ եւ յայլ գրչաց, որոց Տէր ողորմեսցի, ի գաւառիս Կիլիկիոյ, ի սուրբ անապատն Գոնէր կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ եւ աստուածակիր նշանին Կայտէնի կոչեցեալ եւ Սրբոյն Սիոնի մաւր մեր, որ է մերձ յաստուածապահ դղեակն Բերդ Բարձր կոչեցեալ։

Եւ արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք զսա եւ կամ աւգտիք ինչ ի սմանէ, յիշեսջիք ի Քրիստոս զերջանիկն արքայից Հեթում, որդուվք իւրով եւ եղբարբք եւ քերբք, որպէս զի զննջեցեալսն հանգուսցէ ի սիրելեացն իւր խորանս, եւ զարքայս իւրային կենդանեաւքն անփորձ պահեսցէ յամենայն ներհակաց, երկար կենդանութեամբն եւ անտրտում խնդութեամբ, եւ յետ աստեացս թագակից սրբոցն արասցէ։ Զի այս գլուխ յետ առաջնոյն հնարեցաւ եւ հնարի զփրկութիւն բուղմաց քրիստոնէից, ոչ զԿիլիկոյս եւեթ ասեմ գաւառ անվնաս պահել ի լիղաջինջ հինից նետողացն, այլ գրեթէ եւ զամենայն քրիստոնեայսն, որք ունկն դնեն կենսատու խրատու սորա։ Զոր թէ ոչ Տէր զթութեանց թողեալ էր նշոյլ կենաց լուսոյ եկեղեցւոյ, իբր եւ զարաբիալեալ էաք, եւ Բաբելոնի Դամասկեաւ նման էաք։ Զոր ամենաթագաւորին աջ պահեսցէ զսա որդուվք իւրովք միշտ ի չարէ, լինելով սոցա պարիսպ հրեղէն շուրջանակի։

Դարձեալ աղաչեմ յիշել զարժանին յիշատակի զմեծ նահապետն Հայոց ղրհայր արքային եւ մեր զԿոստանդին ի Քրիստոս Յիսուս, որ ի սոյն ամի, յամսեանն փետրուարի ի ԻԶ (26), յաւուր երկշաբաթուջ փոխեցաւ ի Քրիստոս, բարի խոստովանութեամբ հասարակեալ զկեանս իւր, եւ յիշատակ բարի եթող յաշխարհի, որոյ Տէր Աստուած ողորմեսցի, ամէն։

Նաեւ ես տառապեալս Յոհաննէս ստացող ստրա, երկրամերձ դիմաւք աղաչեմ զձեզ հայցել ի Քրիստոսէ թողութիւն մեղուցեալ ոգւոյ իմոյ, եւ ծնողացն իմոց, որք ըստ հոգւոյ եւ մարմնոյ վարձս բարեաց գտանել ի Քրիստոսէ, զի յոյժ ջանիւ աշխատեցան յիս՝ յաւէտ երջանիկ կրաւնաւորուհի Հոիփսիմէ, եւ մայրիկն իմ Պիաղրիս։ Եւ որք զմեզ արժանի առնէք յիշատակի, Քրիստոս Աստուած զձեզ իւր ողորմութեան արժանի արասցէ, որ է աւրհնեալ յաւիտեան։

Բ

Փառք ամենասուրբ երրորդութեանն, Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

չկայ։ Եւ թւի թէ Հայոցս ի նոցանէ է թարգմանումն, վասն այն, որ չկայր ի Հայոց Աւետարանիս այս բանս (էջ 253 բ)։

Ջատացող սորա զՅոհաննէս եպիսկոպոս եւ զաստուածապատիւ արհեպիսկոպոս արքեղբայրն Հայոց, զտէրն ողոյ եւ զերախտաւորն մարմնոյ իմոյ զԲասիլիոս, որոյ երախտիք գերազանց է քան զբան եւ ըզմիտս ի կրսերս իւր։ Նաեւ զերջանիկ քոյրսն մեր զԹեֆանաւ՝ արքայուհի Կիպրոսացւոյ, եւ զբարեսէրն Կալամառի գունդէս ճաֆուն որ զմագաղաթ տառիս շնորհեաց կրսերիս իւր, եւ զմեծափառ մարաշախտըն Հայոց՝ զբարետիպ եղբայրըն մեր Լեւոն, եւ զմեծ նահապետն Հայոց զհայր արքային եւ մեր զԿոստանդին՝ ամենայն ծննդովք իւր եւ զարմեաւք, մաղթեմ ի ձէնջ հարք մեր եւ եղբարք, յիշել առաջի գըթածին Քրիստոսի, զի զննշեցնալսն ընկալցի ի սիրելեացն իւր խորանս, եւ զարդէն մնացեալսն ի մարմնի յերկար կենդանութեամբ եւ անտրտում խնդութեամբ պահեսցէ հոգւով եւ մարմնով եւ յետ աստեացս թագակից և մասնակից սրբոցն արասցէ, եւ ամենեցուն առհասարակ, մեզ եւ ձեզ ողորմեսցի Քրիստոս Աստուած, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Գ

Նկարիչ՝ Կոստանդին

Ձմեղապարտ նկարիչս զԿոստանդին եւ ծնողս իմ աղաչեմ յիշել ի Տէր։

Դ

Ձմեղապարտ եւ զանարժան նկարագրիչս զԿոստանդին եւ զծնողս իմ աղաչեմ յիշել ի Տէր։

267

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 8590

Գրիչ՝ Ստեփանոս
Վայր՝ Սկևռայ

ա

Փառք էական իսկութեան, ինքնագոյ, արարչական, միազաւր, միաբուն տէրութեանն, Հաւր և Որդւոյ և Հոգւոյ Սրբոյ, ի բնաւից ամենայն գոյացելոց հոգեղինաց և բազմահոյլ հոգեղէն զուարթնոց, անկէտ, անժամանակ անձնաւորութեանն, որ յաւիտեանս յաւիտենից։

241բ Աւարտեցաւ աստուածատունկս այս հոգիաբողբոջ լուսափղձ, քառավտակ սուրբ Աւետարանս, որ յեղովմական դրտխտէն ուռճացեալ ծաղիկս բազմազան և պտուղս քաղցրաճաշակս, ուզէշս բարձրաբեղուսս և սաղարթս գեղեցկատեսիլ սփռեալ տարածեցաւ ընդ ամենայն տիեզերս առ ի յարբումն ամենայն ծարաւելոց, և ի ճաշակ ամենայն կարաւտելոց, ձեռամբ յոքնամեղ քահանայի Ստեփանոսի, ի թուականիս Հայոց ՁԺՔ (1263), ի մեծ ժողովարանս Սկևռայի՝ ընդ հովանեաւ Սուրբ Փրկչի, և և մաւր իւրոյ Աստուածածնի, և կենսունակ Սուրբ Նշանի, մերձ յանմա-
242ա տոյց||դղեակս Լամբրոնի, որ է ի գլուխ Տարսոնի, և ի ստորոտ մեծի

լերին Տաւրոսի, ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ Հայոց հեղինակի, և յառաջնորդութեան սուրբ ուխտիս տեառն Մխիթարայ եպիսկոպոսի, և ի թագաւորութեանս Հեթմոյ բարեպաշտի, ի խնդրոյ սրբասէր քահանայի Հայրապետի սպասաւոր սուրբ խորհրդոյն, որ բաղձալի սիրով ետ գրել զԱւետարանս, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգոյ։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք վայելէք յատուածային բղխմանէ սորա ընթերցմամբ և լսողութեամբ և կամ գաղափար առնելով, յիշեսջիք աղաւթիւք զվերոյ յիշատակեալդ զՀայրապետ քահանայ և զծնաւղսն իւր ըստ մարմնոյ և զեղբարս և զքոյրս, և զամենայն ազգատոհմս, զի ողորմութեան ի Քրիստոսէ արժանաւորեսցին, և յերկնից արքայութեանն ժառանգորդ լիցին ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր։

242բ Եւս առաւել աղաչեմ զանպիտան և զախմար և զփց||ուն գրիչս Ստեփանոս բարւոյ յիշատակի արժանի առնել և հայցուածոց Քո<ո>ւթեան մեղաց և ծնաւղսն իմ, և զծերացեալ հարեղբարս իմ զԹորոս՝ զսնուցիչ մեր, գտանել ողորմութիւն ի Տեառնէ։ Եւ որ ընդունողն է մաղթանաց և տուողն պարգևաց, ընկալցի զհայցուածս ձեր և յիշոզացդ և յիշելոցս առհասարակ ամենեցուն ողորմեսցի, և ծագմանն իւրում մեծի, հանդերձ փառաւքն հայրենի, և զերանաւետն արժանաւորեսցէ լսել ձայն, եթէ Եկայք աւրհնեալք ի Հաւրէ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն ի սկզբանէ աշխարհի, որում արժանաւորք լիցուք շնորհաւք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ է աւրհնեալ ընդ Հաւր և ընդ Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Բ

Ոսկոզ՝ Աւգսէնդ

244ա Ջոսկող սուրբ Աւետարանիս զԱւգսենդ տուտանուն աբեղայս աղաչեմ յիշել ի Տէր։

268

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Վենետիկ 151 (1244 թ.) Սարգիսյան, Յուցակ Ա, էջ 652

Ստացող՝ Կոստանդին կաթողիկոս

ա

337բ Այս մեր գիր հրամանի է Կոստանդեա ծառայի Աստուծոյ և նովաւ կաթողիկոսի ամենայն Հայոց, որ զԱւետարանս մեր, զոր գրել ենք ծախիւք և ծաղկերանգ զարդարել ոսկով և երփներին դունիւք, և կազմեալ ոսկւով և արծաթով՝ տուաք ի սուրբ ուխտն Անդրիասեանց և յառաքելաշնորհ եպիսկոպոսն տէր Պաւղոս, կամաւ եղբաւրորդւոյն մերոյ Թորոսի քահանայի, յիշատակ մեզ և ծնողաց մերոց. որ յամենայն ամի ի սուրբ խաչին ութաւրէքն առնեն ե (5). պատարագ, մին հաւր իմոյ Վաճրմա, և միւսն մաւր իմոյ Շուշկանն, երրորդն՝ եղբաւր իմոյ Գէորգեա քահ[անայի] հաւրն՝ Թորոսի, չորրորդն միւս եղբաւր իմոյ Գրիգորի, հինգերորդն Գրիգորի նորին որդւոյն։ Եւ մի ոք իշխեսցէ հանել զԱւետարանս յայն սուրբ ուխտին ժառանգութենէն, և որ հակառակի և հանէ զսա, ընդ բանադրանաւք մնասցէ։ Եւ այս եղև ի Թվ. ՉԺԳ (1264)։

269

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ԺՂԱՆՔ ԿՈՉԵՑԵԱԼ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԵՒԵԼՑՒՈՑ

*Երևան 341 (1365 թ.)**

Հեղինակ՝ Վարդան Արևելցի
Վայր՝ Անդուլ անապատ

103ա Այսպէս արա և դու սակաւ մի աշխատեա, քո սակաւ աշխատիլն զայլոց շատն արժէ։ Զի որպէս լուաք ի Քրիստոսէ, ամէն մարդու հրեշտակ կա պահապան։ Եւ ձեզ, որ ազգի գլուխ և թագաւր էք**, ինքն գլուխն Քրիստոս է պահապան և անմեկնելի։ Մի պաշտէր զնա որպէս հեռաւոր,

---

* Այս հիշատակարանը ոչ լրիվ կա նաև Մատենադարանի № 2544 ձեռագրում, որը մասնակի տարբերութիւն ունի վերոբերյալի հետ։

** Դիմում է պատվիրատու Հեթում թագավորին։

այլ որպէս առ քեզ ի սրտիդ եւ յոգւոյդ։ Որ կամիս զգլուխտ և զերեսա դնել ի պատիւ նմա, ի գիրկն դնես և յԱստուած միանաս, և զոդի խմ տառապեալ և տկար յիշեսցէս, որ քեզ սիրէ առաւել քան զասել։

Վասն որոյ զայս աշխատութիւն տկար մարմնով կատարեցի սիրով
103բ ձեր զաւրացեալ, և աւժանգակեալ, և յիշեա զոր||ի ձեռն Թորոսի հրամաեցիք Վասն եղաբերից կանանցս գրել ձեզ, և ի խորհուրդ պատարագին, և ապա երեսաւք յԱնդուլն հրամաեցիք, որ գրեաք ձեզ ժղլանք ի Մեկնութենէն Քերականին։ Եւ ես այլ յաւելի սիրով գրել ձեզ ձեռամբ Լուծմունս յԱւետարանէն և, յԱստուծոյն, ուստի տեսէք թէ շատ էիք հարցանել, և սիրէք սրտիւ, է՛ որ հանգուցանէ զձեր միտքդ, է որ պատճառ լինի ձեզ բանաւորութեան, զայս հարցանելոց և զստոյգն գտանել։

Բայց աղաչեմ զպարզամիտ մարդ և զառաքինի մի հարցանել, որ չամաչեն, զի ես նախահոգութեամբ գրեցի։ Եւ թէ առ ժամն դիս հարցանեն և ես գտանիմ տկարացեալ, վասն որոյ, մի մեղադրէր ժամուն չդտանաւղաց զտեսութիւն բանին։ Եւ ես գիտեմ, որ այս չէ քագաւորական իրք, այլ ոսկեգիր պիտէր, և ճարտար գրչի, և ես շատ պատճառ ունէի, որ [խա-
104ա փ]անէր զիս զայս ձեռնարկութենէս։ Տկար||ութիւն և մութն խրճիթս, և հողմ Պարխառու փոշեխառն փչելով ընդ պատուհանս, և պաղ ւադոյս։ Բայց սիրովն հրաշագործիւ յաղթահարեալ եղեն պատճառքն, և որպէս տեսանէք, եղև։ Թէ կամիս՝ դիւրին է տալ փոխել ի լաւն, որ հեշտ կարդայք, և թող Գրի[գոր]էսն փոխէ, որ բան չկորնչի։ Բայց իմ [գ]իրս, որ իմ մատանցս սատարն՝ մնա առ ձեզ, ո՞ գիտէ, թէ աւելի շնախաւոր լինի ձեզ վասն յուսոյն իմոյ՝ որ առ Տէր, և սիրոյն՝ որ առ ձեզ, զի այն ճառ և պատմութիւն չէ, որ շատ աշխատանք տանին՝ և ապա բան գտանեն։ Թէ թուղթ մի կարդաս ժամուն, կամ երկու, գտանես յոլով խորհուրդս, և Աստուծով տղահասակ, և մտաւք՝ և աչաւք զաւրաւոր եք, և ի մի անգամ կարդալն սակաւ ինչ աշխատիք, և յայլն անհոգ լինիք։

Եւ զի արքա և արքաւուհի ի միում մարմնի տեսանի, և հասարակ է հոգևորն և մարմնաւորն, և թէ Աստուծով իրք մի ւագուտ լինի ի գրե-
104բ լոցդ կամ մխիթարութիւն երկ||ուցդ լիցի, և զակնտ բազմագոյն և պայծառ, որ պսակէ զձեզ յաւիտեան։ Թող թագուհին պահէ և ի պիտոյ ժամն առնոյք ի նմանէ, և նմա հրամաէ Պաւղոս հարցանել ձեզ, և զպատշաճն ծանուցանել, և պարտական են, ասէ։ Ապրեցուցանելոյ զիրեարս առն և կնոջ, և զերկուսինդ ապրեցուսցէ Տէր Յիսուս կենդանութիւնն ձեր, ի խնամս Հաւր, և ի գութ Հոգւոյն Սրբոյ, յորոգումն սննդեան դալարարձակ, տնկաբողբոջ շառաւեղեալ ոստոցդ, ծիրանածին տղայոցդ, ի գիրկս իրն սրբոյ, ի կատարումն պսակման հայակոյտ ազնւական ազգաց և ազանց, տոհմից ազատաց, ազատեցուցիչք արեանառու զարմից, լծադիրք և բեռնաբարձաւղք, կորացուցիչք աւտարաց ազգաց, ի փառս փառաւոր և պաշտեցեալ աստուածութեանն, որև է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

270

ԱՆՍԻՉ ԱՆՏԻՈՔԱՅ

Փիրղալեմյան, Նչխարք,
Երևան 6273, էջ 38ա, 39բ

Թարգմանիչ՝ Սմբատ Գունդստապլ

ա

Աստանօր սկիզբն առնեմք ողորմութեամբ և օգնականութեամբ մեծին Աստուծոյ ի գիր արկանել զսովորութիւնք և զԱնսիզն զպարոնութեան մայրաքաղաքին Անտիոքայ, զիր լիճ ճորտերուն և զպարոնացն սովորութիւնն և զիրաւներն՝ զոր ունէին առ իրար. և են գլուխք տասն և եօթն ի ցանկք ածած։ Զորս խնդրեցի ես Սմբատ ծառայ Աստուծոյ և գունդստապլ Հայոց, և որդի Կոստանդեայ, և եզբայր բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ և տէր Պապաոճին, ի մեծազարմ իշխանաց իշխանէն և յարեան մերձաւորէն մերոյ ի սիր Սիմուն յԱնապոյ գունդստապլէն։ Եւ ինքն ունէր զոր ի բրինձ Պրմլեդին ժամանակ սիր Փեռ Տ'Ռաւենդիլին և սիր Թումաս մարաջախտն և այլ իմաստուն և գիտուն իշխանայք Անապոյ էին գրով հաստատել։ Եւ հանգուցեալն ի Քրիստոս սիր Մանսել գունդստապլն իր հայրն էր առել ի նացմէ և իր որդոյն սիր Սիմունին պարգևել։ Եւ ինքն վասն իմ սիրոյս և հաւասիս ինձ պարգևեաց, և ես աշխատեցայ և փոխեցի ի Հայ լեզու։

Եւ արդ վասն զի սովորութեամբ այն Անսիզովն կու գնայր ազգս մեր և Դարպասս Հայոց, և սխալումն ինչ կու գայր մեզ վասն տգիտութեան և վտանգութիւնք ոգոց, և պղերգանք ինչ վասն հարցանելոյ անդ զմեծամեծ դատաստանսն։ Եւ ես ուժգին տենչմամբ և բազում աշխատութեամբ գոի զայս և հալծեցայ ի փոխելն. և երբ փոխեցի, ես՝ յուղարկեցի դարձեալ ի յԱնապոյ դարպասն, որ գիմընդդիմեցին և հաստատեցին իրենց ձեռնգրերովն և վկայութեամբն՝ և ստոյգ և ըղորդ բան բանի։

Եւ արդ, որ կամի ճշմարտութեամբ ուղղել զԱնսիզս և զիրաւունքս նայ այս է ըղորդ Անսիզն Անտաքայ։ Եւ արդ, որք օգտիք կամ շահիք սովաւ, ինձ Սմբատայ մեղաց թողութիւն հայցեցէք, և որ վզենկիք՝ դուք չէք յիսնէ վզենկել, այլ ի յիոաւանցն, ես անդատապարտ եմ. և եթէ ոք վատ ասէ ի վզնկելոցն՝ նա Աստուծոյ իրաւանցն ասէ և ոչ ինձ։

---

* Ա. մասը տե՛ս Անսիզ Անտիոքայ, Վենետիկ, 1876, Յառաջաբան, էջ 2։

Բ

Եւ այլ շատ ի վերայ իրաւանցս կու պնդէ մարգարէն. Առ որս ես Սմբատս անարժան և մեղաւոր ծառայս Աստուծոյ, որդի Կոստանդեայ թագաւորահօրն Հայոց Հեթմոյ բազումս աշխատեցայ ի սա ծերացեալ մտօք ի հին և յանհասկանալի բառից։ Եւ ես բազում աշխատութեամբ փոխեցի զսա ի մեր հեշտալուր բառս, ի թուականութեանս Հայոց ՁԺԴ (1265), ի հայրապետութեան տեառն Կոստանդեա, և ի թագավորութեան Հեթմոյ և որդւոյ սորա Լեւոնի։

Առ որս աղաչեմ զամենեսեան վասն սիրոյն Քրիստոսի, յիշել զմեզ և մեղաց թողութիւն խնդրել ի Քրիստոսէ, զի և դուք յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի։

Եւ արդ, գրեցի զսա վասն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ և վասն աշխարհի դատաւորաց և թագաւորաց, և սիրտ բանիցն առեալ եւթի համառօտաբար։ Եւ աղաչեմ անմեղադիր լինել, զի աւելի քան զկարն մեր էր ձեռնարկութիւնս, և պարտ ու արժան համարեցաք վասն թագաւորացն գրել զիրաւունս, զի նոքա զԱստուծոյ են կարգած և յԱստուծոյ տեղն ի յերկրի են։*

271

ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐ ԱԻՐԷՆՔ ԵՎ ԿԱՆՈՆՔ ԸՆԹՀԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՑ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՑՆՈՑ

Երևան 487

Հեղինակ՝ Սմբատ Գունդստապլ

Ճա *Հրամայէ աստուածահարին Դաւիթ. Երանեալ են անբիծք ի ճանապարհի, եւ ոյք գնան յաւրէնս Տեառն։ Երանի ոյք քննեն զվկայութիւնս նորա, բոլորով սրտիւ իւրեանց խնդրեսցեն զնա, զի ոչ թէ որ գործեն զանաւրէնութիւն ի ճանապարհս նորա գնասցեն։ Դու պատուիրեցեր զպատուիրանս քո ի պահել ինձ յոյժ։ Երանի թէ յաջողեալ էին ինձ ճանապարհք իմ ի պահել ինձ զպատուիրանս քո։ Յայնժամ ես ոչ ամաչէի ի զգուշանալ ինձ ի պատուիրանս քո։ Խոստովան եղեց քեզ, Տէր, յուղղութիւն սրտի իմոյ, որպէս ուսայց զիրաւունս արդարութեան քո։ Զիրաւունս քո պահեսցի, մի թողուր զիս մինչև ի սպառ։ Եւ այլ շատ ի վերայ իրաւանցս կու պնդէ մարգարէն։*

Առ որս ես Սմբատս որ չեմ արժան, և մեղաւոր ծառայս Աստուծոյ, որդի Կոստանդեայ թագաւորահաւր եւ եղբայր բարեպաշտին Հեթմոյ, բազում աշխատանաւք աշխատեցայ ի Դատաստանագիրքս ծերացեալ մտաւք և ձեռաւք ի հին և ի դժարարբառ և յանհասկընալի գրոց, վասն զի այլակերպած էր և հեռացած ի հին Հայ բառէն ի նորոյս հայնց, որ իսկի չէին հասկնալ, և ոչ յօկտել գայր։ Եւ բազում աշխատութեամբ փոխեցի զսա ի մեր հեշտալուր և ի սովորական բառս, ի թըւականութեանս Հայոց ՁԺԴ (1265) ամին՝ ի հայրապետութիւն Կոստանդեա և ի թագա-

* *զի նոյն մատենէ յայլոմ տեղէ հանի զնետագայ հատուածնիս գրում է Ղ. Փիրղալեմյանը։*

տրութեանն բարեպաշտին Հեթմոյ և որդոյ սորա [Լեռնին]: Առ որս աղաչեմ զամենեսին վասն սիրոյն Քրիստոսի յիշել զմեզ և մեղաց թողութիւն խնդրէ ի Քրիստոսէ, զի և դուք յիշեալ լիջիք առաշի Քրիստոսի:

Եւ արդ, դրեցի զսա վասն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ եւ գոյանալոյ երկրի, եւ ապա վասն աշխարհական դատաստանաց եւ դատաւորաց եւ թագաւորաց, եւ զսիրտ բանիցն առեալ եդի համառատաբար Ջորս աղաչեմ անմեղադիր լինել իմոյ նուաստութեանս, վասն զի չէր իմ բան. եւ ձեռաւք իմովք աշխատեցայ եւ փոխեցի զսա ի չար եւ ի դառն ժամանակի:

Յառաջ պատեհ համարեցաք զվիճակեալ դատաւորացն գրել, բուն յառաջ գթագաւորացն, վասն զի յԱստուծոյ կարգեցաւ թագաւորութիւնն, եւ յԱստուծոյ տեղին է համարած ի երկրի: Եւ զնոցին դատաստանն եւ զիրաւունքն գրեցաք. եւ ապա զկարգաւորացն եւ զաշխարհականացն եւ զայր[ե]ւ զկնոջ:

272

ԱԻԵՏԱՐԱՆ

Երուսաղեմ 1956, Ն. Պողարյան, 8ուցակ Զ, էջ 526—529

Գրիչ՝ Թորոս Ռաւպլին
Վայր՝ Հոռոմկլա

ա

342ա Փառք ամենասուրբ երրորդութեանն եւ միոյ աստուածութեանն Հաւր եւ Որդոյ եւ Սուրբ Յոգոյն, ամէն:

Շնորհիւ Տեառն սկսեալ եւ ողորմութեամբ նորին յանգ ելեալ աւարտեցաւ մատեանս աստուածախաւս, աստուածունակ, երկրպագելի եւ պաշտելի սուրբ Աւետարանս, յամի եւթնհարիւրերորդի, չորեքտասաներորդի (1265) թուականութեան Հայոց, յաստուածասահ դղեակս Հոռոմկլայ, ընդ հովանեաւ սուրբ տաճարացս Սուրբ Փրկչին, եւ Սուրբ Աստուածածնին, եւ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, եւ բազմահաւաք սրբոցս որ պաշտին աստ. ի ժամանակս աստուածասէր եւ բարեպաշտ սուրբ արքային Հեթմոյ, մեծ երեխտեւորի ամենայն Հայոց եւ ազգաց բազմաց. վասնզի խաղաղասէր էր ի Քրիստոս եւ ըստ հրամանի Փրկչին հանապազ զանձն իւր դնէր ի վերայ հաւտի իւրոյ, եւ ի հայրապետութեանն տեառն Կոստանդեայ կաթողիկոսի Հայոց, որ եւ զսուրբ վարուցն իւրոյ մաքրութեան անհամեմատ ունի զպատմութիւն: Վասնզի արդարեւ զսոսա իմանամք ողորմութիւն Աստուծոյ գտեալ ի բարկութեան և չարալլուկ ժամանակիս, զի դեռ եւս սուրբ քաղաքն Երուսաղէմ ի ձեռս անաւրինաց, եւ ազգն նեստողաց, որք կոչին դադար, տիրեն աշխարաց եւ գաւառաց բազմաց:

Արդ, գրեցաւ սա հրամանաւ եւ ծախիւք մեծազգի եւ բարեպաշտուհի տիկնոջն տիկին Կեռանի, որ է ի շառաւիղէ սուրբ հայրապետացն Հայոց, արդարեւ ողջախոհ եւ երկեղած յԱստուծոյ, եւ դուստր պարոն Կոստանդեայ տեառն Լամբրունին, ածեալ ի տիկնութիւն շքեղաշուք պա-

րոնին, պարոն Ճոֆրէ, տեառն Քարին Սարուանդոյի, որ եւ յետ փոխելոյ նորա յաստեացս, սա նստէր յայրուքեան՝ պարապեալ աղաւթից եւ պահոց, բաղում առաքինութիւնս եւ վարս պարկեշտութեան յինքն հաւաքէր, լեալ կրաւնաւոր եւ մայր պարկեշտուհի։ Եւ ըստ փոփոխման քաղաքավարութեան իւրոյ, եւ զանունն փոխելով Աննա զնա կոչէին, վասնզի աղաւթասէր էր ի Քրիստոս եւ զամենայն գոյս իւր ջանայր վանաւրէից եւ մենաստանաց եւ եկեղեցեաց Աստուծոյ նուիրել եւ ամենայն բարեաց յիշատակի։

Ուստի եւ զնիւթ սուրբ Աւետարանիս ի ձեռն աստուածահաճոյ եւ քաշակրաւն քահանային Թորոսի, եղբաւրորդոյ սուրբ կաթողիկոսին Հայոց, հրամայէր գրել իմոյ անարժանութեանս Թորոսի մականուն Ռաւսլին կոչեցեալոյ, որ եւ ըստ ներողութեանն Աստուծոյ եւ ըստ քաղցրութեան նոցա յանգ ելեալ աւարտեցաւ սա ըստ կարի իմոյ, զանազան նիւթաք, ընտրելագոյն ոսկով եւ երանգ երանգ գունով։

Վասն որոյ աղաչեմ զձեզ, ո՛վ աստուածասէրք, որք ժառանգէք զսա, յիշել աղաւթիւք ի Տէր զարժանաւորսն ամենայն բարեաց յիշատակի, զյառաջասացեալ անուանս, եւս եւ զստացող սուրբ Աւետարանիս՝ զբարեպաշտուհի կրաւնաւորն Աննա, եւ զաստուածապարգեւ շքեղաշուք որդիքն իւր, զպարոն Կոստանդին՝ երկեղիւն Աստուծոյ զարդարեալ եւ արժանապատուեալ, թագադիր և փեսայ Հեթմոյ սուրբ արքային ամենայն Հայոց, եւ զպարկեշտագեղ եւ սրբահոգի տիկինն իւր տիկին Ռիթայն՝ դուստր սուրբ արքային, եւ զերկոսին հարազատ եղբարսն իւր՝ զպարոն Սմբատն եւ զպարոն Ալշինն, բարեպաշտ իշխանք, եւ մեծաւ սիրով սիրեցեալք ի սուրբ արքայէն։ Այլ եւ զամենայն նախնիս սոցա՝ զհայրս եւ զմայրս, զեղբարս եւ զքորս, եւ զամենայն աղգայինսն սոցա, զկենդանիս եւ զհանգուցեալսն, որոց ննջեցեալոցն հանգիստ եւ ողորմութիւն եւ յարութիւն կենաց պարգեւեսցէ Քրիստոս Աստուած եւ զկենդանիսն անխռով խաղաղութեամբ եւ մեծաւ յաղթութեամբ պահեսցէ յաւէտ եւ յերկար ի կամս ողորմութեան իւրոյ, եւ յետ աստեացս ընդ սուրբս եւ ընդ ընտրեալսն իւր դասեսցէ, ամէն։

Յերեսս անգեալ անարժան գրիչս, որ չեմ արժանի գրել զանուն իմ ի կարգաց անուանց, աղաչեմ ղի եւ զիս արժանի համարիցիք ողորմութեան, եւ յիշեսջիք զիս եւ զծնաւղսն իմ, եւ զեղբարս եւ զքորս եւ ղորդիս եւ զուսուցիչսն իմ, եւս եւ չքնաղագեղ գրիչն Կիւրակոս, եւ զամենայն երեխտեւորսն իմ, ի սուրբ աղաւթս ձեր։ Եւ խոշորութեանն, եւ թէ սխալանք ինչ դիպիցի, աղաչեմ շնորհել թողութիւն։ Եւ Քրիստոս Աստուած ձեզ շնորհեսցէ, եւ զձեզ յիշեսցէ յիւր արքայութիւն եւ ի փառս, ամէն ամէն։

Բ

Որ նուիրեաց զնիւթ տառի
Քեզ Տէր համայնց պարգեւողի,
Կեր Աննայի քո ծառայի,
Կենաց բանիդ փափագաւղի;

Զոր արարեր Տէր արժանի,
Բառնալ զկարգ ճգնաւորի,
Յորժամ փառաւք գաս հայրենի,
Ընդ սուրբս ընգալ յառագաստի։

Էնդ ի յէէն անեղ Որդի,
Որ խոնարհեալ իջեր յերկրի,
Եւ մեղ զմատեանս աւետալի,
Ետուր աւրհնեալգ յամենայնի;
Դու Կոստանդեայ մեծ իշխանի,
Արժանացեալ թագադրաւղի,
Հայրազատաւքն իւր պանծալի,
Ընգալ ի լոյսդ անճառելի։

273

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 9509

Գրիչ՝ Կիւրակոս
Վայր՝ Մաշկևորի ուխտ

ա

326ա Փառք... Գրեցաւ սուրբ Աւետարանս ի մեծահռչակ ուխտս Մաշկևո-
րի, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի և Սրբոյ Կարապետին, ի թուա-
կանիս ՉԺԴ (1265), ի հայրապետութեանն տեառն Կոստանդեայ և ի
թագաւորութեանն Հեթմոյ աւծեալ ի վերայ նահանգին Կիլիկեցւոց: Եւ
գրեցաւ ձեռամբ Կիւրակոսի անհմաստ գրչի, ի խնդրոյ Թեոդոսի փա-
328բ կակալի, վասն ղի ստացաւ զսա ի յիշատակ||հոգւոյ իւրոյ և ծնաւղացն
և եղբարցն և ամենայն ննջեցելոցն։

Արդ, որք աւգտիկ ի սմանէ ընթեռնուլով կամ գաղափար առնելով թո-
ղութիւն հայցեցէք Թեոդոսի փակակալի և վերոյ դրելոցն, ո՛վ մանկուք
Վերին Սիովնի և քահանայք աւծմամբ Սուրբ Հոգւոյն, ո՛վ լուսերամք և
լուսազարգեալք շնորհաւք Սուրբ Հոգւոյն ո՛վ սեղանոյ Տեառն պաշտաւ-
նեաք և քարոզք Երրորդութեանն և մշակք հոգեւորք։

Եւ աղաչեմ զամենեսեան ես մեղուցեալս Կիւրակոս՝ խոշորութեաւն
և սխալանաց չմեղադրել, զի աչքս վատել է։ Բայց աւրինակս վստահ
լիք, մանաւանդ ի համբայքն, զի ընտիր է որ գիտէ, եւ հայցել թողու-
329ա թիւն հաւր իմոյ,||և մաւր իմոյ, և եղբաւր իմոյ, որ սրով վախճանեցաւ,
և ամենայն ննջեցելոցն իմոց խնդրել թողութիւն։ Եւ աստուած ամենե-
ցուն առհասարակ ողորմեսցի ընդ նմին, և առաջնորդ տեզոյս Բարսղի
բարեպաշտի և աստուածասիրի, և Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք
յաւիտեանս, ամէն։

բ

329ա Յիշեսջիք և Մարտիւրոս եղբայր Թեոդոսին, և զՍաեփանոս տղն-
տեսն։

Գ

Կազմող՝ Առաքել Հնազանդենց

329ա Ո՛հ, [մեղա]ւք դատապարտեալ կազմատւ սորա զԱռաքել Հնազանդենց, և զծնաւղան իմ, և զհարազատսն իմ զԿարապետ քահանայ և զՊաւղոս սարկաւագ, և զուսուցիչն իմ զՍարգիս քահանայ՝ զհանգուցեալսն ի Քրիստոս աղաչեմ յիշել ի Տէր։ Ի թվին ՁԺԴ (1265)։

274

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՑ ԵՐԳՈՑՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Երևան 4834 (1296 թ.)

Հեղինակ՝ Վարդան Արևելցի
Վայր՝ Հաղբատ

ա

1ա Նման է արքայութիւնն երկնից գաձի ծածկելոյ յագարակի, ասէ Տէրն, գանձուն և արքայութեանն, զոր գտանէ խնդրողն, և տալով զոր ունի՝ գնէ զագարակն։ Զոր ասելի է ընդ այլ ինչ և զամենայն առակաւոր իմաստս, որ յաստուածաշունչ գիրս, որ է տէրունի, յորմէ ցանկացողն գնէ զիւրն տալով զբոլոր գոյսն, որ է հաւատն, ղի այն է մերն ամենայն, յորոց և դու ճանաչիս տէրունական իր և անուն։

Հարազատ եղբայր մեր Կիրակոս րաբունեց պետ և քաղցու այն ի կիրք մեր, և մեծ մասն յուսոյն ի սուրբ եկեղեցի, որ և քումդ [ը]զձիցն կցորդել հրամայեցեր ի բան և ի գիր շատս, զհաւատն Տեառն տալով շնորհաւք նորա կարել մեզ զմնացեալն յերգոյ երգոցն ի Գրիգորէ Նիւսացւոյ, որ մեծն է աղբիւր եկեղեցւոյ լնուլ առաչնորդութեամբ Որոգինեայ համառաւտել՝ և զԳրիդորին իսկ զբանէ, որ ի վեր գտանի, քան զկարն մեր յոյժ, Աստուծոյն միայն կարելի, և քումդ ազաւթից և յուսոյ, որ ի փշոյ և յապառաժ անապատէ ի ծերունւոյ և յանապատ մտաց խնդրես պտուղ ի ձեռն ոչ սակաւ վաստակոց, զոր առաք յանձն ի մեծն յոյս, վստահութեամբ չարչարիլ մարմնով և արդարանալ հոգւով, ի քեզ տալ զգիր պարտուցն մեր, կրել միշտ առաչի Աստուծոյ և շնչել անսպիտակէս, և դու նմանեալ տանուտեառն, ճոխասցիս աշակերտութեամբ արքայու-
1բ թեանն||հանելով ի գանձէն հին ճաշակ, որ քաղցրագոյնն է, ո գիտէ և նոր ինչ ընդ մեզ գոլ հաւատալ զՀոգին Սուրբ Հայր և որով ըստ խոստմանն աւրհնելոյն յօտիեանն*։

բ

51ա ...Իսկ դու եղբայր մեր մշակդ մորենէց և աղտաղտ անբուսաբեր վայրաց անոյշ մեզ ճաշակ, յարաժամ և յոյս յԱստուած վարդապետ Կիրակոս, որ հարկեցուցիչ հրամանաւ և գուժիւն մահու քեզ ասել զմերն մերձակա, մուծէր զմեզ ի տուն գինոյ, ի իւղոյ խնձորո, և նոնէնէց դրախտի, շղթայից արժանաւոր ոտիւք, հայել, լսել և խոսել, հոտոտել, շօշափել զկեանս և զանմահութիւն, զգայարանաւք բիւր քանքարոյ պար-

* Նախաբանի սկիզբն է։

տականաւք, իւրաքանչիւր մասամբ, որ անախորժելեցն էին արժանաւորք, քան ղիմանալ և զասել մեծ էր ինձ և սոսկալի սակայն ոստեաք ե առաք յոյս մեծագոյն, եթէ և արդ ես եկն Տէրն և կոչէք*, և ոչ զարժանաւոր ոք, այլ զմեղաւորս զիս, ոչ յապաշաւ միայնացել կենացն, այլ յանբաւ և յանճառ ուրախութիւն հարսանեց, զի ղարմացուցէ զերկինս և զերկիր, զոր սովոր է միշտ առնել, որք և գտանին ի գիրս յայս, Թանար և Բաբելոն և էթոպիա ի բաց եդել բնաւին զառաջին կերպարանն և աստուածազդեց եղել, զոր և դու միշտ աղաւթեսցէս, զայս լինել ի կարող և ի կամեցող Տեառնէն։

Եւ մեք քեզ շնորհ ունելովն շատ գոհութեամբ ձեռնարկեցաք ի յիղձս բաղձանաց հայցման քո, զձեռն յուսոյն ի Քրիստոս տալով մտաք յանհուն խորս և ելաք էթե բերաք ինչ քեզ ի վեր ցանկալի իրս, որ գտանի յայսպիսի ծովու, չունիմ ասել, Տէրն տուողն, որ ում երկրպագեսցէս յառնուլն ինչ, և զսղալանսն ինձ համարել ուղղեսցէս օժանդակդ ինձ
51բ յամենայնի։ Սակայն զհնազանդութիւնս‖հաստուսցէս ցայգ և զցերեկ անմոռաց յաղաւթս, և զդա նւէր տացես Սիոնի մաւրն վերնոյ, ի գաւիթս նորա ընկենլով իբրև զոստ մի ձիթենեաց, ո գիտէ, թէ մանկունք նորա ի մտանելն առցեն և ցուցեն նմա ի խնդութիւնս ինքեանց և ի քաւութիւն մեզ բացերես զնա և բերկրել տեսանելով յորդիս իւր՝ միակցելով զմեզ ի շնորհս փեսային իւրոյ Յիսուսի և Հաւրն գթածի և Հոգոյն Սրբո ողորմածի, որում ամենայն խնդութիւն և ցնծութիւն և սէր ի սուրբս իւրս յարարածս և ի քեզ, և ի մեզ յամենայն յափտեանս։

Գ

Գրիչ՝

Ի թուիս ՉԺԴ (1265)-ն եղև մեկնութիւն Երգո Երգոյս ի Վարդանայ ի գիտնականի տիեզերալոյս. և յիմաստուն վարդապետէ, յաստուածամերձ սուրբ ուխտս Հաղբատա, ընդ հովանեաւ Սուրբ Նշանիս փրկութեան մերոյ արեգականս և հաւր և հաւաքողի որբութեանս մերոյ, ի պատրիարգութեան Հայոց Կոստանդեա, և Հեթմո պսակաւորին մերոյ, և յարհիեպիսկոպոս տէր Յովանիսի, զորս ի կամս իւր խնամեսցէ և ի սէրն իւր մած[աց]ուսցէ Յիսուս Քրիստոս Աստուածն մեր, բանն փեսայացել և հարսնազգեցել, և նմա փառք յօիտեանս, ամէն։

---

* Մատենադարանի № 1419 ձեռագրում այսպես է. «եթե արդարև եկն տէրն և կոչէք» (սրբագրված՝ «Կոչեայ»)։

275

ՀԵՔՈՒՄ Ա ԹԱԳԱՒՈՐԻ ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 5458, պատառիկ 1454

Գրիչ՝ Թորոս Ռոսլինճ
Վայր՝ Հռոմկլա

310բ Փառք եւ երկրպագութիւն, պատիւ եւ գոհութիւն համագո Սուրբ Երրորդութեանն եւ միոյ աստուածութեանն Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն։

Շնորհիւ Տեառն սկսեալ եւ ողորմութեամբ նորին յանգ ելեալ ուրախութեաւ մատենս այս աստուածախաւս, աստուածունակ, երկրպագելի եւ պաշտելի սուրբ Աւետարանս, յամի յեւթն հարիւր եւ հինգետասաներորդի (1266) թուաբերութեանս Հայկազեան տումարի, յաստուածապահ դղեակս եւ յաշխարհամուտ աթոռս Հռոմկլա, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչին, եւ Սուրբ Աստուածածնին եւ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, ի հայրապետութեան աստուածապատիւ տեառն Կոստանդեայ կաթողիկոսի, որ եւ սրբազան վարուցն իւրոց անհամեմատ ունէր զմաքրութիւն։ Հրա-
1ա մանաւ եւ ծախիք աստուածասէր եւ բարեպաշտ թագաւորին||* Հայոց Հեթմոյ որ եւ ըստ մեծ յոտոյն իւրոյ զոր ունէր առ Աստուած, յաւել եւ զայն գրասէր եւս լինել, եւ սիրող կարգաց եւ կրաւնից եկեղեցւոյ եւ նորին խորհրդոց, տաւնից տերունականաց եւ սրբոց վկայից։ Որ եւ /// [յ]առատաձ[իր] /// որպէս /// [սուվ]երութիւն յամենայնի։

Ուստի եւ իմ անարժանութիւն, թեպէտ եւ ըստ նորին արժանեաց եւ մեծի երախտեացն զոր ունէր առ իս, ոչ էր բաւական հատուցանել, սա-
1բ կայն ըստ հասութեան /// [պճնազար]դեալ ծաղկ[երանգ բազմա]կերպ պատ[կ]երագրութեամբ, որպէսզի ընդ լսելոյ զլուր բանին կենաց, տես-

---

* Հաջորդ թերթն ընկած է։ Այս հիշատակարանը վերարերում է մագաղաթյա ձեռագրից մնացած 39 թերթերին, որոնք գրված են երկաթագրով, ոսկյա գլխագրերով և նրբակեռտ լուսանցազարդերով ու զարդագրերով։ Գարեգին Հովսեփյանի և Սիրարփի Տէր-Ներսեսյանի կարծիքով, այս Թորոս Ռոսլինի ձեռքի գործն է։

Ձեռագիրը հղոտված և փեռակտած դերությունից փրկում է Հովհաննես քահանան և նորից գոել տալով, լրացնում է պակաս մասերը, «զի թագաւորական յիշատակս... ոչ խափանեսցի»։ Մեզ հաշողվեց ապացուցել, որ Մատենադարանի № 1454 պատառիկը, որ երբևէ եղել է ձեռագրի պահպանակ և մուտք է գործել Մատենադարան անցյալ դարի վերջերին, սուրն ձեռագրի հիշատակարանի շարունակությունն է։ (Այդ մասին տես մեր հոդվածը. «Հեքիմ Ա թագավորի Ռոսլինյան Ավետարանի նորահայտ մասունքները» (ԲԱնբեր Մատենադարանի № 13, 1980, էջ 275—294)։

ցես իբրեւ աչաւք իմն զտիպ նախահարցն եւ զփրկագործ տնաւրէնութիւն բանին Աստուծոյ մարմնացելոյ վասն /// առաւել ի բազում եկեղեցիսն իւր, զորս ինքն կանգնեաց։

Վասն զի յաւուրս սորա եղեւ խաղաղութիւն մեծ աշխարհիս Կիլիկեցւոյ եւ հանգիստ քրիստոնէից, մինչ զի ի բազում աշխարհաց ի սրոյ
2ա եւ ի գերութենէ /// եւ ես որպէս յիմարեալ ընդ կերողս եւ ընդ արբեցողս ընթացա անառակութեամբ, եւ զի՞նչ ունիցիմ պատասխանի ի գալստեան Տեառն իմոյ, վասն որոյ զխոստովանութիւն իմ զրով արձանացուցանեմ և աղաչեմ զժառանգաւորս /// սրտի նորա ասելով. Էրանի ում թողութիւն եղեւ մեղաց եւ որ ղկնի պատշաճի։

Եւ յիշեցէք աղաւթիւք ի Տէր զարժանաւորսն ամենայն բարեաց յի-
2բ շատակի զաստուածասէր թագաւորն Հեթում, եւ զբարէպաշտ թագուհին նորա Ջապիլ՝ դուստր Լեւոնի արքայի ///, եւ որդի սուրբ արքային զծիրանածին պարոնն Լեւոն, որոյ մնանք Աստուծով փրկութեան նորա, եւ զմեծազդի կենակիցն իւր, զսրբասերն Կեռան, եւ զդեռաբոյս մանուկ սոցա Հեթում, եւ զքորք իւր։ Այլեւ զբարեպաշտուհիք եւ զաւրիորդք /// [զԿոսաան]դին աստուածապարգեւ, աստուածապատիւ զաւակաւք իւրաւք, ուստերաւք եւ դստերաւք, եւ ամենայն ծննդաւք իւրեանց, որոց ննջեցելոցն հանգիստ եւ ողորմութիւն պարգեւեսցէ Քրիստոս Աստուած, եւ զկենդանիսն անխռով խաղա[ղութիւն] ///։

276

ՄԱՇՏՈՑ

Երուսաղէմ 2027, Գողարյան, 3ուցակ է, էջ 63—65

Ծաղկող՝ Թորոս [Ռաւպիճ]
Վայր՝ Հռոմկլա

ա

273ա Փառք ամենասուրբ Երրորդութեանն եւ միոյ աստուածութեանն Հաւր Եւ Որդւոյ եւ ամենասուրբ Հոգւոյն։

Շնորհիւ Տեառն սկսեալ և ողորմութեամբ նորին յանգ հասեալ աւարտեցաւ [տառս] աստուածային, յամի եւթնհարիւր եւ հինգետասաներորդի (1266) թուականութեանն Հայոց, ի հռչակաւոր եւ ի թագաւորեալ քա-
273բ ղաքին||Սիս կոչեցեալ յաշխարհին Կիլիկեցւոց, ընդ հովանեաւ աստուածաբնակ տաճարին որ յանուն Սրբոյ Աստուածածնին, ի հայրապետութեանն տեառն Կոստանդեա, որ եւ զսրբազան վարուցն իւրոյ մաքրութեան անհամեմատ ունէր զպատմութիւն։

Եւ ի ժամանակս աստուածասէր և բարեպաշտ արքային Հեթմոյ՝ մեծ երեխտաւորի ամենայն սէրից Հայոց եւ ազգաց բազմաց։ Վասն զի արդարեւ զսոսա իմանալմ ողորմութիւն Աստուծոյ գտեալ ի բարկութեան եւ չարալլուկ ժամանակիս, զորոյ զկեանս յերկարեսցէ Քրիստոս Աստուած, և ետ աստեացս ընդ սուրբս եւ ընդ ընտրեալսն իւր դասեսցէ, ամէն։ Հրամանաւ և ծախիւք աստուածապատիւ եպիսկոպոսին տէր Վար-

274ա դանա՝ շառաւեղի տէր Դաւթայ||սրբազան եպիսկոպոսի և առաջնորդի սրբոյ եկեղեցոյն Նսեպնայ և այլոց գաւառաց։ Ուստի և արեանառու նորին ասացեալս տէր Վարդան, բաղում (ը)զձիւ և փափկանաւք ստացաւ զսա ի վայելումն անձին իւրոյ և ի յիշատակ հոգւոյ։ Վասն զի ի մանզականն տիոց ի վեր մաքրակրաւն վարիւք եւ խստաջան առաքինութեամբ կեցեալ էր, հմուտ եւ վարժ լեալ Հին եւ նոր կտակարանաց, ուստի և արժանացեալ լինի վարդապետական հրամանի։ Եւ վասն առաւել սգաստութեան և քաջարիութեան իւրոյ մեծարեալ եւ սիրեցեալ լինի ի սրբոյ հայրապետէն տեառն Կոստանդեայ կաթուղիկոսէ, որով եւ ի մեծապա-
274բ տիվ եպիսկոպոսութեան աշտիճանի կոչեալ եղեւ ի նմանէ||եւ զայսու ժամանակի սպասաւորէր հայրապետական սուրբ աթոռոյն, որ յաստուածասիրահ դղեակն Հոռոմկլա, որ եւ ետ վայելչացուցանել զսա ոսկւով և զանազան նիւթով բազմամեղ գրչին Թորոսի, դրեալ ձեռամբ Աւետիք քահանայի*։

Վասն որոյ աղաչեմք զձեզ, ո՛վ աստուածասէր հարք եւ եղբարք, որդիք լուսոյ մաւր Սիոնի, յիշել աղաւթիք ի Տէր զսուրբ հայրապետն զտէր Կոստանդին կաթողիկոս, եւ զաշակերտն իւր զտէր Վարդան՝ ստացող գրոցս, եւ զծնաւղսն իւրեանց ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Եւ զտէր Դաւիթ նախնի սորին, եւ զհարազատ եղբայրն իւր Կոստանդին, եւ զա-
275ա մենայն ազգայինս իւր||զքոյր եւ զեղբարս, որոց ննջեցելոցն հանգիստ եւ ողորմութիւն պարգեւեսցէ Քրիստոս Աստուած, եւ զմնացեալսն անխռով խաղաղութեամբ պահեսցէ, ամէն։

Դարձեալ յիշել աղաչեմ և զգրողս սորա և զայլ աշխատաւորսն և զծնաւղսն իւրեանց, և Քրիստոս Աստուած, որ առատն է ի տուրս ողորմութեան իւրոյ, եւ զձեզ յիշեսցէ ի գալստեան իւրում եւ յարքայութեան, որ է աւրհնեալ ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյն այժմ ւեւ միշտ, եւ [յաւիտեանս, ամէն]։

Եւ դարձեալ աղաչեմք յիշել զեղբայրն իւր զԹորոս, զտարաժամ գնացեալն ի Քրիստոս։

Բ

135ա Ջաստուածապատիւ եպիսկոպոսն զտէր Վարդան զստացող սորա յիշեսիշք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր։

Գ

61բ Իմաստութիւն Հաւր երկնաին,
Որ զշնորհս աստուածաին,
Ետուր բնութեանս մարդկաին,
Ըստ խորհրդեան աշտիճանին,
Դու Վարդանա հաւտապետին՝
Այսմ տառի ըստացաւղին,

---

* Ավետիքը ձեռագրի գրիչն է։ Հիշատակարանը գրել է Թորոս Ռոսլինը։

Շնորհեա դասիւ յառագաստին
Ընդ Պետրոսեան սուրբ երամին։

86բ *Որ նուիրեաց զնիւթ տարի*
Քեզ Տէր հանուրց պարգեւողի,
Դու զտէր Վարդան հովիւ բարի,
Եպիսկոպոս եւ րաբունի,
Ի կեանս ընգալ ի գերարփի
Յորժամ փառաւք գաս հայրենի։

ե

Նկարողի սորա թողութիւն խնդրեցէք։

277

ԱԻԵՏԱՐԱՆ

Երուսաղէմ 1958, Պողարյան, ծուցակ Չ, էջ 534—535

Գրիչ՝ Յովհաննէս
Վայր՝ Տարսոն

ա

866ա *Ձառք ամենասուրբ երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից, ամէն։*
Գրեցաւ ի թուականութեանս Հայոց ՉԺԸ (1266)։

Գրեցաւ կենսաբեր, աստուածախաւս, քրիստոսապատում, քառագլուխ սուրբ Աւետարանս յառաջնորդութեանս մերայինս հայասեռիցս տեառն Կոստանդեա կաթողիկոսի, եւ ի թագաւորութեանս քրիստոսապսակ թագաւորիս Հայոց Հեթմոյ, ի քաղաքիս Տարսոն, ընդ հովանեաւ Սրբոյ Սարգսի եւ Սրբոյ Փրկչին։

Եւ գրեցաւ ձեռամբ յոքնամեղ գրչիս Յովհաննէսի, ի խնդրոյ պատուական քահանայի Թորոսի, ի յիշատակ իւր եւ ծնաւղաց եւ ամենայն զարմից իւրոց կտակ բարի։

Արդ, աղաչեմ զամենեսեան սիրովն Քրիստոսի, որ ոք հանդիպի յայս ի հոգեւոր փարթամութիւնս, եւ շահեսցի ինչ ի սմանէ, գաղափարելով կամ վերծանութեամբ, յիշատակի արժանի արարէք զմեղապարտ գրիչս Յովհաննէս եւ զծնաւղսն իմ, եւ զամենայն համացեղսն իմ զԹորոս քահանայ ստացաւղ սուրբ Աւետարանիս, ղի տացէ նմա Տէր ողորմութիւն գտանել յաւուրն յետնում։ Եւ զծնաւղք սորա ըստ մարմնոյ, որ զթուղթն կոկեց, եւ աշխատեցաւ։ Աղաչեմ, վասն սիրոյ Քրիստոսի, յիշել ի Տէր զբազմամեղիս, եւ խոշորութեան գրոյս չլինել մձղադիր, զի այս է կարն մեր։

բ

269ա *Ձստացաւղ Սուրբ Աւետարանիս զԹորոս քահանա յիշեսջիք ի Տէր, եւ զիս զբազմամեղ սուտ գրիչս Յովհաննէս յիշեսջիք ի Տէր, եւ որ զամէնն ասէ։*

Գ

422ա Ստացաւղ սրբոյ Աւետարանիս զԹոռոս, որ եւ պատուեալ քահանայական շնորհիւ, հանդերձ ծնողովքն իւրովք եւ մանկամբք, եւ զիս զՅովճաննէս բազմամեղս յիշեսջիք ի Քրիստոս։

Դ

868ա Գրեցաւ մատեանս աստուածծնակ,
քառադրական, աւետատու Աւետարան, յուսադրական մեր փրկանաց
Իսկական դիր ըղձանաց, մակաւասար, զանազանեալ վսեմաբան
երեւակաց,
Ջորից գլխոց հանգետագրաց, միասարազ շարայարեալ տրամաբանաց,
Արգամեծար, աշխարհալուր, գերահռչակ, բաղադրական տառ տենչանաց։
Ի քառառաջս համադրական, հանգունատիպ գիծ աստուածաբան
շաղկապանաց,
Ճահոզասաց պիտառաբան, մակաքարող արտոդութեան արձանագրեաց;
Ներանութեան լուր յագաճմունս յարգունելով վերծանական դրուատանաց։
Իսկական գիր ըղձանաց, մակաւասար զանազանեալ
վսեմաբան երեւակաց։
Գերադրական կաթողիկէ ակներեւակ, առգասաւոր աստուածաւանդ
բան բաղձանաց,
Ջորեկլծին մաճակալաց, գրանաւոր երկիր հերկեն սերմանելով
զբանն կենաց։

278

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ

Երեւան 4965

Գրիչ՝ Վասիլ Ուռհայեցի
Վայր՝ Կիլիկիա

ա

Փառք քեզ անսահման անուն և անզուգական անձնաւորութիւն, Հայր և Որդի և Սուրբ Հոգիդ յամենայն արարածոց։

330ա Շնորհիւ ամենախնամ ողորմութեանն Աստուծոյ յանկ ելեալ աւարտեցաւ մատեանս աստուածային սուրբ և երանեալ վարդապետին Գրիգորի Նարեկացւոյ, ի խնդրոյ աստուածապատիւ սուրբ կաթողիկոսին և բարի բնութեան երջանիկ դիտապետին տանս Թորգոմայ տեառն Կոստանդնա, քանզի տեսեալ զգեղ վայելչութեան բանիս, որ ամբարեալ կա ի յաստուածախաւս մատեանս, զի է սա դուռն և մուտ ի գաւիթս Աստուծոյ, որ ի ձեռն զղջման և պաղատանաց արտասուաթոր աղերսարկու աղաւթից սրբո հաւր Գրիգորի առնէ զմեղսամակարթ մարդիճ նորոգ և հոգիացեալ նման հրեշտակաց։ Զի է սա խաւսք ընդ Աստուծոյ և կըշ-

տամբանքն մեղուցեալ անձին, և աղերս առ ամենայն սուրբս՝ Եւ հայցեալ սուրբ հովվապետս մեր ի յաստուածատուր բանս պիտանացու, սի-
330բ րեաց զսա քան զոսկի և քան զականս||պատ[ուա]նս, եւ հրամաեալ իմում նուաստութեանս Վասլի Ոտհայեցոյ բազմամեղ գրչի և ծառայիդ նորին, զի գրեցից զսա ի վայելում մեծաշուք անձին իւրոյ և յիշատակ բարի հոգոյ իւրոյ, եւ ստացաւ զսա գանձ անկողոպտելի, որ մաքրէ և լուանայ զաղտս և զտիղմ հոգոց, ի ձեռն աղաւթից աղաւթականաց՝

Եւ արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք զսա և աղաւթէք սովաւ, յիշեսջիք սրտի մտաւք զսուրբ հայրապետս մեր զտէր Կոստանդին զստացաւդ սորա և զծնաւղսն նորին և զեղբարսն զնացեալսն առ Քրիստոս, և մեծաշուք եղբաւր որդին իւր զԹորոս սրբահոգի քահանայ և զորդեակն իւր զվայէլուչ պատանին Ստեփանոս, աղաչեմ յիշել զնոսա առաջի Աստուծոյ, զի տացէ նոցա Տէր երկար կեանս և անսասանելիս յամենայն վնասակար որոգայթից, որպէսզի և դուք յիշես[ջիք] ///*՝

Բ

1ա Սրբազան կաթողիկոսի Հայոց տեառն Կոստանդնեայ աղաւթամատոյց ի Տեառն, և յիշատակ յետ վախճանի**՝

Գ

159բ Ո՛վ մանկունք Նոր Սիովնի, յիշեցէք զարքայորդին զԼևոն՝ զմատնեալն ի ձեռս անաւրինաց, զի շնորհեսցէ զնա մեզ վերստին, զի որբ և անտեսուչ ոչ մնասցուք, և զամուսինն իւր՝ զբարեպաշտ տիկինն զԿեռան, և զդեռաբոյս որդեակ իւր զԿոստանդին, զոր տէր Յիսուս կարողացուսցէ և յաղթողս արասցէ ի վերայ թշնամեաց խաչին Քրիստոսի, և պարադայց ամաւք շնորհեսցէ ի պարծանս հկեղեցւոյ, զի խաղաղութեամբ վարեսցուք զկեանս մեր՝ Եւ որք յիշէք ի բարին և դուք յիշեալ լիցիք, և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն***՝

279

ԱՌ ՆԱԻԱՐԿՈՒԹԻՒՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԻ

Երևան 823

Գրիչ՝ Յովաննէս
Վայր՝ Նզնկայ

171բ Փառք ամենասուրբ Երրորդութեանն յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից, ամէն՝ Աւրհնեալ է Հայրն անսկիզբն, Որդին միածին, և Սուրբ

---

* Հաջորդ թերթը չի պահպանվել՝

** Այսպիսի հիշատակագրություններ կան նաև 123ա, 137ա, 159ր, 159 և այլ էջերում՝

*** Ձեռագրի ստացողը՝ Կոստանդին կաթողիկոսը, մահացել է 1267 թ. ապրիլի 9-ին (Տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 155)՝ Նշանակում է ձեռագիրը գրելու վերջին հնարավոր ժամկետը 1267-ն է՝ Սակայն այս հիշատակագրությունը, որ գրված է գրությունից հետո, Լևոն արքայորդու գե-

Հոգին ճշմարիտ, զոյգ և հաւասար երրորդութիւն, որ կարողացոյց զիս զմեղաւոր և զանարժան գրիչս հասանել ի կատարումն Աստուածաբանիս։

Բայց գրեցաւ ձեռամբ իմով, նուաստ և անարժան և մեղապարտ անձին իմո սուտանուն Յովանիսի վատ սարկաւագի։ Բայց գրեցաւ սա ի քաղաքիս որ կոչ[ի] յԵկեղեց գաւառս, մականուն Եգնկայ, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչիս, ի թուականութեանս Հայոց ՀԾ ու ի ԺԵ (1266), ի հայրապետութեանն տեառն Կոստանդեայ, և յարհիեպիսկոպոսութեանն տեառն Սարգսի Մարճասիայի մեծի, եւ ի քրիստոսասպասակ իշխանին մերոյ պարոն Յոճանիսի՝ Տեառն ծառայի, իւր ժամանակ կենացն երկարասցի, ամէն։

Արդ աղաչեմ ես բազմամեղ և անարժան գրողս զսրբազնեալ քահա-
172ա նայդ զհայր* յիշեալ զհոգևոր հայրն իմ՝ դաստու||ցիչն և վարդապետն զտէր Յովաննէս, ի մաքուր և յանբիծ յաղաւթս քո, որ սպանեալ եղև յանաւրինաց սրով զենեալ. ո՛հ դառն տրտմութեան և անմխիթար ոգոյ։ Ընդ նմին յիշեալ զառաջին ղուսուցիչն իմ՝ զհայր Յակոբ, և զպատուական հայրն իմ զՇիրին, և զհանգուցեալ մայր իմ զՍափիրայ, և զեղբարքս իմ զԱւետչաև և զՇահնշահ, զհոգևոր եղբայրն իմ և զուսումնակիցն զՍարգիս, և զհանգուցեալ մայրն իւր, և մեղաց թողութիւն խնդրեալ ի Տեառնէ։ Այլ աղաչեմ զքեզ՝ հայր, անմեղադիր լինել քեզ՝ ինձ, եթէ սխալանք ինչ կայ ի դմայ, կամ խոշորութեան դրոյս թողութիւն սորա ինձ, զի դեռ առաշին գիրն այս է, զի գրեալ է, թողէք, և թողցի ձեզ։

Արդ, կրկին աղաչեմ, թողութիւն հայցեա վասն իմ մեղաւորիս, զի սովորութիւն է բարերարին Աստուծոյ ի ձեռն այլոց աղաւթից, այլոց մեղաց թողութիւն շնորհել, եւ որ զմեզ յիշէ, Քրիստոս զինքն յիշէ յիւր ողորմութիւնն, և ի նմանէ առնու զփոխարէնսն ի տուողէն բարեաց. որ
172բ տա ամենայնի առատապէս և ոչ նախա||տէ զոք։ Քրիստոսի Աստուծոյ, բարերարի և մարդասիրի, խնամողի և անոխակալի վաել է փառք, իշխանութիւն և պատիւ, և այժմ և միշտ, յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Տէր Աստուած վայելել տացէ զսա հոգևոր հաւրն վարդապետին և ուսուցչին իմոյ հայր** ընդ երկայն աւուրս, ամէն։

280

ԲԱՐՍԵՂԻ ԱՐՔԱԵՂԲՕՐ ՄԵԿՆՈՒԹԻՆ ՄԱՐԿՈՍԻ

Ներսաղեմ 514 (1726), Պողարյան, Ցուցակ Բ, էջ 513

24 Մեկնութիւն սրբոյ Աւետարանիս Մարկոսի, զոր արարեալ է երանելոյն Բարսղի արքեպիսկոպոսի՝ եղբօր Հեթմոյ թագաւորին Հայոց, ի կաթողիկոսութեան մեծին Կոստանդնի առաքինւոյ։ Զոր ի թուականիս Հա-

---

րութեան տարեթվին, այն է 1266 թ., վերջին հնարավոր ժամկետը մի տարի առաջ է տանում։ Հետևաբար ձեռագիրը գրվել է մինչև 1266 թվականը, ուստի գնում ենք այդ թվաշարքում։

* Անունը քերված է։

** Անունը քերված է։

յոց ՉԺԵ (1266) արար զՄեկնութիւն երկու հատորով բաժանելով հանդերձ յորդորակօք*։

281

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 6273, Փիրղալեմյան, Նշխարք, էջ 42ա—42բ (1235 թ.)

Գնող՝ Վարդան

Յայսմ ամի, որ թիւ ՉԺԵ (1266) էր, երեկ Մուղին ի Հայոց երկիրն ու տարաւ զայս գիրքս Անդոց: Ես՝ Վարդան յԵրուսաղէմ կու երթայի, հանդիպեցաւ այս գիրքս ինձ։ Գնեցի ինձ յիշատակ։

282

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան 4243

Գրիչ՝ Ստեփանոս Վանկայցի
Վայր՝ Բարձր բերդ

ա

15ա Քրիստոս յոյս ազգի մարդկան, սրբոյն Յոհաննու աւետար<չ>անչի և աստուածաբանի բարեխաւսութեամբ, ողորմեա ի քո միւսանգամ գալստեանն տեառն Յոհաննու րա[բունոյ]՝ արքաեղբաւր Հայոց, [և ծ]նողաց նորա, և ամենայն զարմից, և մեղաց թողութիւն շնորհեա նոցա, և որոց սրտի մտաւք յիշեն զմեզ, ամէն։

բ

Փառք ամենասուրբ Երրորդութեանն և մի աստուածութեանն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

129ա Ի թուին Հայոց ՉԺԲ (1263) գրեցաւ աստուածային մատեանս ձեռամբ Ստեփանոսի գրչի, որոյ Տէր Աստուած ողորմեսցի, ամէն։

գ

175ա Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Տէր Յիսուս ողորմեա տտացողի** սուրբ տէր Յոհաննէս րաբունոյ, և ծնողաց նորին, և աշխատողիս Ստեփանոսի գրչի ի քո սոսկալի աւուրն, ամէն։

---

* Ձեռագրի սկզբում Խապայանը ունի այսպիսի դիտողութիւն. «Եթե գրչի սխալը կամ կամայականութիւնը չէ, Բարսեղ Արքայեղբոր տալ Մեկնութիւնս պատմական բանասիրութեան համար նորութիւն մի է գոնէ, ըստ մեզ»։

** Գրված է «սցացողի»։

Ի թուին Հայոց գրեցաւ՝ ՉԺԸ (1266) ի թագաւորութեանն Հեթմոյ, ի հայրապետութեան Կոստանդեա:

Յայսմ ամիս, ի գեկտեմբր, ՉԺԴ (1265), հանգեաւ ի Քրիստոս պարոն Աւշին՝ եղբայր թագաւորի Հայոց, որում Տէր Յիսուս ողորմեսցի, ամէն։

դ

221բ Չգտա լավ աւրինակ Մարգարէից մահու, այլ գրեանքդ ամէննն յընդիր աւրինակաց է գտած, բայց Երկոտասանիցդ*։

ե

223ա Չեղկելի գրիչս զՍտեփաննոս յիշեցէք ի Տէր Քրիստոս։

զ

200ա Չմեղապարտ գրիչ Սաեփաննոս Վահկայցի յիշեցէք ի բարի, ո՛վ սուրբ տեարք իմ և հարք։

է

Ստացող՝ Յոհաննէս Արքաեղբայր

222բ Ես Յոհաննէս նուաստ եպիսկոպոս, մեղապարտ ծառայ Աստուծոյ և ամենայն ծառայիցդ նորա, ջերմ սիրով և բաղում աշխատութեամբ ստացա զհոգեշունչ և քրիստոսաւանդ, հայրատուր սուրբ տառքս ի վայելս թշուառական և եղկելո անձինս ի կեանս իմ, և յետ աստեացս՝ ում Տէր կամեսցի, և յիշատակ բարի ինձ և ծնողացն իմոց և ծնընդոց նոցին և ամենայն զարմից մերոց։ Վասն որո անգեալ առ սուրբ ոտս ձեր, մոխրաթաւալ դիմաւք և բազում արտասուաւք աղաչեմ զձեզ Քրիստոսիւ Աստուծով մերով, հարք սուրբք և եղբարք մեր ի Քրիստոս, որք պատահիք սմա տեսլեամբ կամ գաղափարիւ, և որք ժառանգէք զսա, յիշեսջիք ի սուրբ աղաւթս ձեր թողութեան և ողորմութեան և հանգստի արժանանալ մեղապարտիս, և յոյլով չարեաւք լցեալ ոգոյս Յոհաննէսի եպիսկոպոսի, և ծնաւղաց իմոց և վարդապետաց և ընկերաց և հոմասեռ թագաղնեա զարմից մերոց, զի կարաւտ եմք ձերո յիշման, որպէս դուք Տէառն ողորմութեան։ Եւ որ առատն է ի տուրս բարեաց, Քրիստոս մեղ և ձեզ և ամենեցուն առհասարակ ողորմեսցի։

Բայց գրեցաւ սա ձեռամբ Սաեփաննոս գրչի մերձ ի բերդն Բարձր կոչեցեալ, ի դառն և յանբարի և յոյժ վշտալի ժամանակի, զի վասն բազում մեղաց մերոց արբոյց Աստուած մեղ զբար[կու]թեան բաժակն, զի բռնաւորն Եգիպտոսի Պլաուխտարե, վերջինս Նաբուգոդոնոսոր, ի թուին Հայոց ՉԺԸ (1266), բազում զաւրօք քրիստոսատեաց տաճկաւքն

---

* Գրված է «Մահ նաւումա մարգարէի» փոքրիկ հատվածից հետո, որը կես սյունակ է զբաղեցրել, և վերաբերում է նաև նախորդ էջերում (220ա-ից) գրված մյուս մարգարէների մասին։ Վերջին երկու բառերը ավելացրել է Հովհաննես Արքաեղբայրը և շարունակել. այսպես, «բայց երկոտասանիցդ։ Որք ընթեռնուք յիշեցէք ի տէր զՅոհաննէս եպիսկոպոսս...

դաշխարհս Կիլիկիո սրով և հրով սպառեաց։ Զորդիս եղբօրն իմո, զբարեպաշտ թագաւորի Հեթմու՝ զանդրանիկն Լևոն, որ էր պարոն Հայոց, գերի ունիամ մի է, և զկրսերն Թորոս, զլցեալն ամենայն բարեձևութեամբ, էսպան յոլով հոմաշնեա նիզակակցօք ի Մաւի, որոց Տէր ողորմեսցի։ Եւ զարքայանիստն Սիս, մեծօն Սոփէս և զամենայն սահմանս նորա մինչև Ատանա, հրձիգ արար, անթիւ եսպան, բազումս գերեաց։

Ի սոյն ամի առ Քրիստոս փոխեցաւ կաթողիկոսն Հայոց տէր Կոստանդին, որ ողորմեսցի Քրիստոս Աստուած, ամէն։ Եւ բարի արքայն մեր Հեթում՝ երկրորդն Յոր, մեծաւ ջանիւ և անասելի ժուժակլութեամբ հոգա և փութա վասն ամենեցունց փրկութեան, զոր Տէր Աստուած պահեսցէ փրկութեան զօակ Հայոց, զի մի՛ Սոդոմա և Գոմորա նմանիցիմք։

Աղաչեմ յիշել զհայր արքային և մեր՝ զպարոն Կոստանդին, և զամենայն եղբարսն իմ՝ զՍմբատ սպարապետ, և զՀեթում թագաւոր, և զՕշին պայլ, և զԲասիլ արհեպիսկոպոս, և զԼևոն մարաջախտ, և զՎասակ իշխան, այլև ղբոյրսն մեր զՀռիփսիմի կրօնաւոր, զԹեֆանօ դշխո Կիպոսաւ և զԿալամառի գունդս Ճաֆուն, և զԱկացն, և զՄաւեմն և զՖիլիպն, նաև մայրիկն իմ Պլադրիծ յիշեսցի, և Քրիստոս Աստուած հանգուսցէ զամենեսեան ի խորանս արդարոցն, այլ և զեղկելիս Յոհաննէս եպիսկոպոս մի մոռանայք։

Բ

123ա *Ես Յոհաննէս եպիսկոպոս և րաբունի, որդի Կոստանդեա և եղբայր բարեպաշտին Հեթմո արքային Հայոց, ստացա զսա ի վայէլումն ինձ, և յիշատակ բարի ինձ և իմոցն։ Աղաչեմ զտեսողսդ և զժառանգողդ սուրբ կտակիս, յիշել զեղկելի ոգիս և զծնողսն իմ՝ ծնընդաւք նոցին առաջի գթածին Քրիստոսի Աստուծոյ իմո, զի թողութիւն և ողորմութիւն և հանգիստ չնորհեսցէ ամենեցունց աստ և յապագայն, և յիշողդ յիշեալ լիջիք ի բարիսն անսպառ։*

Ի թվիս Հայոց ՋԺԵ (1266) գրեցաւ սա ի յոյժ դառն ժամանակի, զի փարաւոն բռնաւորն Եգիպտոսի ի սուր և ի հուր մաշեաց զԿիլիկեա, զարքայածինսն ձերբակալ արար, զպարոն Լևոն ծառա ունի և զգեզազէշն Թորոս սպան, որ Տէր Աստուած ողորմեսցի, և այժմ եմք ի կեանս լալիս և կսկծելիս։

Բ

15ա *Ո՛վ սուրբ առաքեալդ սիրոյն սիրելի, զտեառնագին հոմանուն ծառայս Քրիստոսի և քո, որ չերմ գթով կամ առաջի քո, և արտասուաւք խնդրեմ ի քէն Հայցեա ի Քրիստոսէ Աստուծոյդ մերո մեղուցեալ ողո իմո թողութիւն, և պարտեացն իմոց չնչում, և քեզ եղէց յանձին ի սոսկալի ահեղ ատենին և յաւրն իմ վախճանին քև եղէց փրկեալ իմովքն ի չարէ*։*

---

* Երկրորդ սյունակի երկարությամբ շրջանակի մեջ նկարված է Հովհաննես ավետարանիչը՝ ձախ ձեռքը վեր մեկնած դեպի տիրոջ աջը, իսկ աջով օրհնում է իր առաջ ծնրադիր և բաղկատարած չոքած Հովհաննես արքաեղբորը։ Նկարի տակ գրված է. «Սուրբն Յոհաննէս աստուածաբան աւետարանիչն է» «Տէր Յոհաննէս եպիսկոպոս արքաեղբայրն է՝ ստացող գրոցս»։

ժ

50ա Կապից և լուծման իշխող, ո՛վ առաքեալ, լոյծ ի կապից մեղաց զստացողս զՅոհաննէս եպիսկոպոս*։

ժա

221բ Որք ընթեռնոյք յիշեցէք ի տէր զՅոհաննէս եպիսկոպոս։

283

ԱԻԵՏԱՐԱՆ

Սանչյան, Յուցակ Ամերիկայի, էջ 284 (1262 թ.)

Նվիրող՝ Թորոս·
Վայր՝ Աբրակաղին

409բ Դարձեալ ես՝ բազմամեղս Թորոս, ի թուին ՋԺԸ (1266) ետու զսուրբ Աւետարանս ի սուրբ ուխտն Աբրակաղին կոչեցեալ, ի ձեռն տէր Սիոնի եպիսկոպոսի, և խնդրեցի ի նմանէ, զի ի յիշատակի Նախավկային զպատարագն իմ ծնողացն և հոգևոր տիրոջն և ինձ մատուցեն զինչ յայ[ն]մ աւուր պատարագ մատուցանի։ Եւ որք զխնդրուածս կատարեն, Քրիստոս Աստուած զիւրեանցն կատարեսցի։

Զսահմանս զայս միաբան եղբայրութիւնն յանձն էառ, և որք զկնի մեր գան, կատարեսցեն զայս։

Ի Թորոս բազմամեղ**։

284

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՅ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԵՒԵԼՑԻՈՅ

Երևան 1119

Հեղինակ՝ վարդան Արևելցի·

ա

Շա Մի է Աստուած և մի՝ միշնորդ Աստուծոյ և մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս, ասէ Քրիստոսիւ կենդանին Պաւղոս։ Քանզի մի է Տէրն, ուր ամբարեալ կան ամենայն գանձք իմաստութեան և գիտութեան, որ անշարժ գոլով շարժէ զարարածս ի կեանս և ի փրկութիւն։ Եւ մի է հաւատ և մկրտութիւն, որ առնէ զբաժանեալ որդիսն Ադամա ի մի Տեառնէ և յիրերաց մի, որ թեպէտ և թուին ոմանք խնդրողք և կէսք տուողք, այլ մի Տէրն էր, որ շարժէ զոմանս ի խնդիր և զկէսս ի տուր տալով նոցա զշարժմանն խնդիր, և սոցա զկամս և զգոյս հայցմանն իւրոյն գանձուց պատճառս գոլոյ նոցա միշտ մի, ի շաղկապ սիրո զոր արար դէմս իւրոց աշակերտութեանն։

---

* Գրված է Պետրոս առաքյալի նկարի ներքևում։

** Հիշատակարանը (ինչպես նաև ձեռագիրը) գրված է երկաթագրով, վերջին տողը՝ բոլոր թագիր է, Թորոսի ստորագրությունն է անշուշտ (ծանոթ. Ս. Տեր-Ներսեսյանի)։

Որպէս և մեղ ետուն հրաման կանուխ և անագան ի ձև խնդրոյ զկանուխն անունակիր միոյ Տեառն զգլուխն արհիական տէրն Յովհաննէս. նստելոյ յաթոռ սուրբ ուխտին Հաղբատա՝ երևանի աշխարհի հարկեցուցիչ և վճիռ հրաման և զանագանն, որք ընդ մեզ էին, եղբարք հեռաւորք և մերձաւորք, սիրով զմեզ գրաւեցին ի յայս մեծ իւրեանց աւգըտի ե մեր և իւրեանց նմանեացն, և զի ոչ ընդ անշրդի անապատի և ընդ
·ԵՐ անկոխ ճանապարհ գնալ եդին մեզ||գործ, ի յանգործ մատեանս վաստակել, այլ զՍազմոսն Դաւթի զհոգին և զկեանս բանականաց, խիտ և անհատ ճաշակմամբ զտիւն և զգիշեր, զոր յոլով ճանապարհորդք հատին ուղիս, և թռչունք հոգւոյն թևաւք ի վեր և ի խոնարհ ցուցին հետս հարքն հոգեկիրք. Սթանաս, եպիփանես, եփրեմ. Դանիէլ և Ներսէս յետո, վասն որո վստահեալ յԱստուած, որ յաղբեւսաց եառ զիս և յաստուածարեալ հարքն, առաք յանձն մերձ դնել առ միմեանց զբանս նոցա ի մի մատեան։

Է՛ զի կարճեալ զլայնատարած բանս նոցա ըստ կարճոգի մերս անախորժակաց ի կարճել ժամանակիս, և է՛ զի հոգեխառնեալ ի հայրենի շնորհաց աստ անդ դիցուք, զորս տացէ մեզ Տէր յաղաւթս նոցա, կամ պարզելով զծերունական հանճարո նոցա զանյայտութիւնս, զորոց առեալ զծաղիկս Հոգւոյն Սրբո կազմեալ ի հովիտս դաշտաց սրտից նոցա և շրթանց, ի գոյնագոյնս երանգոց կապեսցուք փունջ մի համահամ և բաղմահոտուտ, զորս առձեռն գտանեմք յասացեալ հարանցս, և տացուք ի ձեռս ձեր, մանկունք Սիոնի, զի և դուք միշտ ընկենուք ի գիրկս սուրբ եկեղեցւո, ի գգվանս ցնծութեան անմահ փեսային իւրո Յիսուսի, և որդւոցն առագաստի, ի սբաստանս երկնաւոր պարաւորութեաննն, և մեզ նպաստ բարւո և նեւթ գթութեան և ողորմութեաննն Աստուծոյ, ձերովդ
Շա խնդրւածովք, հարք մեր, և եղբարք, և որդի||ք, տուեալ մեզ ի մեծապարգև և շնորհացն Աստուծոյ աւրհնելոյն յաւիտենից յաւիտեան, յերիս անձինս և միութիւն բնութեանն և յաստուածութեանն անոլորտ և անեզրապէս մըշտընջենաւոր ճոխութեամբ։

Բ

300բ Որո յուսով յեցեալ ի հաւատն անկշիռ, անչափ, անհամար, անեզր, անսահման, ողորմածին Աստուծոյ Վարդանս մեղսաներկ մարմին, եկի ընդ երկնագնաց ուղիս, բուռն հարեալ զողորմած ձեռացն Յիսուսի և զեկեղեցւոյ նորա, հասի յաւարտս, հարիւրն տուել զբերքանքար պարտուցն իմոց ի Սաղմոսս և յաղաւթս, նախքան զմեզ գնացեալ՝ առաջնորդացն մեկնողաց հոգիազգեցից և յիսնիւն** աղատիլ ակն ունիմ յաղաւտարարն և յաստուածարարն Հոգին Սուրբ ապաւինել մյուս ուրախութիւն մեծարելով զազատ մանկունս եկեղեցւոյ և զբնաւ արարածս բոլորիւք և մասամբք բաղմապատկեալ, աղաչելով զՏէրն զիմանալիս և զգա-

---

* Գրված է «զնացողացեալ», ուղղում ենք ըստ ձեռագրի № 863 ձեռագրի (Ցուցակ Գ., էջ 361)։

** Գրված է «յծանիւն», ուղղում ենք ըստ վերոգրյալ Ցուցակի։

լիս, որքան կամի ե կարէ ընդունել յամենեցունց, յաղագս իմոյ փրկութեանս խնդութեամբք և յաւերժապէս ցնծութեամբ, աւրհնութիւն, գոհութիւն, փառք, պատիւ, երկրպագութիւն։

Ի սկիզբն հիմնարկութեան արարածոցս մինչև յաւրս յայս և մինչև ցկատարումն արարածոցս ի նորանալն երկնքի և երկրի և անզրաւ յաւիտեանին, և ևս և յիւրում անսկզբնութեանն և յանվախճանութեանն բարեբան փառատրութեամբ աւրհնեսցի անկարաւան բնութիւն, լի պահելով զեկեղեցի և զաշխարհս գթութեամբ և ողորմութեամբ, և փառաւք իւրովք զԱմէնն և զՆղիցին ասասցեն համարձակագոյնքն և մերձաւորքըն նորայ սուրբք ամենայն երկնաւորք և երկրաւորք, որք էին, և են, և լինելոց են, անմեկնելի զմեր նւաստութիւնս կամելով ինքեանց, և յաստուծոյ հայցելով յամենողորմ Տեառնէն և ի բարեբունն բարոյ յաւիտեանս յաւիտենից։

285

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՅ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Ն. Ջուղա 358, Ս. Տեր-Ավետեան, Յուցակ, էջ 551

Գրիչ՝ Տիրացու
Վայր՝ Խոր Վիրապ

351բ Փառք ամենատեառն, որ հասոյց ի վերջ, ի կէտ վերջին։ Այլ, ով եղբայր, մի մեղադրէր, ճշմարտիւ ասեմ, զի եղանակս ձմեռն էր, դեղս սառցոյց, եւ տունս ցուրտ, եւ ես պանդուխտ, զի անպարապ բաղում մասն ճրաղով գրեցաւ* /// Զոր տեսեալ մեծն վարդապետ հասարակաց եկեղեցւոց լրման Վարդան և աւգականութեամբ Հոգոյն, ի մեկնչաց սրբոց եդ զբնաբանսն և համառօտեաց ղմեկնութիւնն բանիցն ի նոցունց հոգեկիր մեկնողացն՝ դիւրահաս ընթերցողաց և ուսումնասիրաց։ Վասն որոյ յիշատակ նորա աւրհնութեամբ եղիցի, ամէն։

Վասն որոյ և ես Տիրացու անարժան աշակերտ գոլով նորուն, անդաւեւ տեղեաւն դրեցի զսա անարհետ գրչութեամբ, ի վայելս մեզ և յիշատակ, որ յապայսդ հանդիպիք և ժառանգէք ամենալիր բուրաստանս; Վասն որո մախթել աղաչեմ և հայցել պաղատիմ, որք հանդիպիք սմա ընթերցմամբ, արժանի արարէք զմեզ յիշման, ղծնաւղսն մեր և զեղբարք, եւ որք յիշէքդ ի նոյն մնաք յիշման ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ ընդ Հաւր և Հոգոյն Սրբոյ յաւիտենից, ամէն։

Կատարեցաւ սա ի Վիրապն, մինչ կաաք մեք ի յոտմսն, ի թվին ՋԺԸ (1266)։ Յիշեցէք ի Տէր /// հաճոյացեալք և ընտրեալք արժանի աւրհնութեանց և բարի յիշատակի։ Ես և ղծնողսն մեր և զսնուցաւղսն և զերախտաւորն ի մարմնաւորս, ևս և ի հոգեւորսն հասարակացն ամենեցուն ողորմեսցի /// գալստեան և զոր գրեալս /// և նմա փառք յաւիտենից յաւիտեանս, ամէն։

---

* Թվում է թերթ է ընկած։

286

ՎԱՐԴԱՆԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ԴԱՒԹԻ

Երևան 1190 (ԺԶ դ.)

Գրիչ՝ Տիրացու
Վայր՝ Խոր վիրապ

330ա Յաստուածածագ լուսոյ ճառագայթից շնորհեց Սուրբ Հոգւոյն զարգարեցան եղականքս ամենայն իմանալիք և զգալիք, և ի նմանէ նախախնամեալք կան ի կայի իւրեանց, և լցեալ լինի ի նմանէ բարի պարգեւաւք ըստ այնմ թէ՝ Զերկինս և զերկիր ես լնում, և նա տայ կերակուր ամենեցուն, և շունչ ամենայն մարմնոյ, և ոգի ամենայն մարդոյ, զոր և ասէ մարգարէին՝ Ես արարի զերկիր և զմարդ ի վերա նորա, երկուց շաղկապեալ մի կենդանի, յոգւոյ բանականէ և ի մարմնոյ գործնականէ, միովն ընդ հրեշտակս ազգակցեալ, և միւսովն ընդ մարմնաւոր կենդանիսս Վասն որոյ ի սոցանէ ոմանք մարմնոյ վիճակեցան ի կամս անձանց իւրոց գնալով, որք մարմինս ևթ անուանեցան, ըստ այնմ թէ՝ Մի մնասցէ ոգի իմ ի մարդ, յայդ է վասն լինելո մարմին, և ոմանք յԱստուծոյ ընտրեալք և իւրեանց յաւժարութենէ կամաց հոգևորք կոչեցան, թեպէտ ի մարմնի պարաւանդեալ էին։ Ես որք յորովայնէ ընտրեցան, և են որք ի ծաղկութենէ կոչեցան, և են բազումք որ յաւագոյթ։

Յորոց յառաջնոցն և յազնւականն ընտերլոցն է Դաւիթ մեծն, մանաւանդ ի վեր քան զբազումս, զի ոչ մի շնորք հեղաւ ի նա, այլ բազում. թագաւորական և մարգարէական, և հայր ըստ մարմնոյ որդւոյն Աստուծոյ կոչելով։ Ես զի ոչ են բանք նորա ըստ այլոց մարգարէիցն, այլ առաւել հոգեշահք բոլոր սեռի մարդկութեանս, որ ձևանայ յոգիս մեր իբր առ ի մէնջ, և առ Աստուած ելանէ զինդիրսն կատարելով։ Ես թեպէտ յայլ և յայլ տեսակս բաժանի բանք սորա, այլ են ամենեքին ի կերպ աղաւ-
300բ թից, և այլ բազումն ի խորհուրդ||մարդանալոյ բանին Աստուծոյն յիսկըզբանէ մինչև ցկատարումն տնաւրէնութեան նորա, ևս և վասն երկրորդ նորա գալստեանն։

Վասն որոյ ի տղայութենէ մինչև ի լրումն կենաց զսա առեալ ի բերան մանկունք եկեղեցւոյ և ամենայն հաւատացելոց ազգք նուագեն ի հալածումն դիւաց և պահապան անձանց, քաւութիւն մեղաց և ճանապարհ հանդերձեալ կենացն, որ տանի զմարդիք առ Աստուած։ Ես չիք ինչ տնաւրինական խորհուրդ Քրիստոսի և տաւնախմբութիւն, որ առանց սորա կատարի ի ձեռս մեր։

Վասն որոյ ի հաճախմանէ ընթերցմանց և գըրոցաց ամենայն ումեք՝ յայլ և յայլ աւրինակաց, ի տգիտաց և ի մանգանց, բազում ինչ բան սղալական նուագեմք և ոչ որպէս ի Դաւիթ։ Զոր տեսեալ մեծն վարդապետ հաստարակաց եկեղեցւոց լրման Վարդան, և օգնութեամբ Հոգւոյն ի մեկնչից սրբոց, ած զբնաբանսն և համառօտեաց զմեկնութիւն բանիցն ի նոցունց հոգեկիր մեկնողացն՝ դիւրահաս ընթերցողաց և ուսումնասիրաց, վասն որո յիշատակ նորա աւրհնութեամբ եղիցի, ամէն։

Վասն որո և ես Տիրացու անարժան աշակերտ գոլով նորուն, անգ առ տեղեաւն գրեցի զսա անարհեստ գրչութեամբ, ի վայելս մեզ և յիշատակ, որ յապայսդ հանդիպիք և ժառանգէք զայս ամենալիր բուրաստանս։ Վասն որոյ մաղթել աղաչեմ և հայցել պաղատիմ, որք հանդիպիք սմա ընթերցման, արժանի արարէք զմեղ յիշման, զծնողսն մեր և ղեղբարքն, և որ յիշէքդ, ի նոյն մնայք յիշման ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ ընդ Հօր և Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենից, ամէն*։

* Հաջորդ թերթը ընկած է։ Սուլն ձեռագրի համար գաղափար օրինակ է եղել Նոր Ջուղայի ձեռագիրը, որի հիշատակարանը տեղավորել ենք սրանից առաջ։ Երկուսը տեղ-տեղ իրար լրացնում են։

287

ՏՕՆԱՊԱՏՃԱՌ, ՀԱՒԱՔԱՑՈ

Երևան 3082

Գրիչ՝ Գէորգ Լամբրոնացի
Վայր՝ Խոր Վիրապ, Սաղմոսա-
վանք, Թեղենիք

ա

475բ Փառք եռանձնական աստուածութեանն և եզաբուն բնութեան, միասնական տէրութեանն և ինքնիշխան թագաւորութեանն, Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ի բնաւիցս վեր առաքեցի գոյից, այժմ և յանեզրն հանդերձեալ յաւիտենից, ամէն։ Ուստի յերեքերևեան լուսոյն գերահրաշ արփիանշոյղ փաղփիցն արտաթորմանէ՝ անթերի լրութեամբ յաւէտ առլցեալ երիցս երանեալ սրբազանիցն գունարք աստուածայնոց որեարցրն՝ սրբոցն ասեմ հայրապետացն խըմբից, որք ետ առաջնոց լուսաւորչացն տիեզերաց՝ նախնի ընտրելոցն առաքելականն դասու՝ որք ճշմարիտն լուսոյ անընդմիշաբար հպմամբ ի ճահ արփաւորեալք լոյս աշխարհի յանսուտ բերանոյն բաղանուանեցան։ Սրկրորդականն սոքա ժամանեալք գահու կամ որպէս ի դէպ է ասել՝ նմանասարաս պատուոյ բարգաւաճեալ ճոխութեամբ, զի ոչ միայն լուսաւորք՝ այղ և լուսատուք և բոցաճաճանչ ճառագայթարձակք, ընդ նոսին և հոյզք վարդապետաց եկեղեցւոյ սրբոյ և խումբք հռետորաց, ճարտարաց, բանասիրաց, հոգեհանճար գիտնականաց, աստուածուսոյց փիղիսոփայից, մանկանց եկեղեցոյ սրբոյ և որդւոց վերին Սիովնի, որք ի յանցնիւր դարս և ի ժամանակս զփրկականն իրագործութիւն ներտնաւրինեցեալ բանին Աստուծոյ զաստուածային առատաձիր պարգևացն մեզ՝ տրչութեանն զխորհուրդս՝ հոգեշունչ մատենից առասացութեանց պիտառութեամբ առաքեալանդ աստուածախաւսութեանցն վիպագրութեամբ ի նույն ինքն ի հոգւոյն Աստուծոյ աւժանդակեալք ձեռնտուութեամբ աստուածայինցն արձանագրութեանց, անծածուկ յայտնութեամբ բացերևոցեալ՝ սուրբ եկեղեցւոյ շտեմարանեցին մթերք անծախելի և գանձ անկողոպուտ, զկարգագրութիւնս տաւնից տէրունականաց խորհրդոյն՝ հանդերձ բացայայտութեամբ և որպիսութեան պատճառին ի բազմաց ծածկելոյ յայտարարութեամբ, ի պայծառութիւն սրբոյ մաւր մերոյ կաթողիկէի և ի բերկրումն հոգևորական տանասիրաց քրիստոսասէր ժողովոց։ Տի նա յաւէտ ի հատատութիւն ուղղափառ հաւատոյ և ի վանդումն աւգտողացն

զճշմարտութիւն խանգարչաց նորոյս Իսրաէղի միան<ն>գամայն և ի դաստիարակութիւն բարեպաշտ քաղաքաւարութեան ի Քրիստոս հաւատացելոց։

Որում յոքնատենչ ըղձիւք բաղձացեալ քաջ հռետորն և բանիբուն
476ա ճարտարն՝ միշամուխ մակացուն||աստուածայնոց տառից՝ սրբազան քահանայն Գրիգոր տպասաւոր բանի, որոյ ներկրկեալ կամացն բարէսէր յաւժարութեամբ և ձեռնտու աւժանդակութեամբ հոգէշուք ալեաւք ծաղկեալ սուրբ ծերունին աստուածապատուեալ արհիեպիսկոպոսն տէր Գրիգոր, որ ունէր զվերատեսչութիւն այցելականն դիտման՝ քահանայական դա[սու] կատարող պետութեան Այրարատեան նահանգին, ներակայեան ունելով զամուրն Բջնի, որ ի նուաղեալ ժամանակի[ս] առաքինասէր վարուք պայծառացեալ իբրե զարեգակն փայլէ յաշխարհի, զոր Տէր Յիսուս շնորհեսցէ զսա եկեղեցւոյ իւր՝ ընդ երկայն ժամանակս խաղաղական կենաւք։ Ընդ նմին և զհամապատիւ ինքեան ղձեռասուն [որ]գեակս իւր հոգևոր՝ զտէր Վարգան, հարազատ եղբարբ իւրով նախայիշեցեալն Գրիգորիւ, և զտէր Դաւիթ՝ քուերորդի տեառն Գրիգորի, որոց կամաւք և յաւժարութեամբ յանկ ելեալ կատարեցաւ Պատճառ նամակս տունից, ի լրումն բաղձանացն Գրիգորի վարդապետի, ի վայելումն անձինն կրթասիրի, և յետ աստեացս վճարման՝ յիշատակ անջնջելի ինքեան, և նախաժաման եղեալ ի Քրիստոս ծնողաց և եղբարց, ևս առաւել տեառն Վանականի՝ վերյիշեցեալ աթոռոյս վերադիտողի, և ամենեցուն սոցա ի Քրիստոս սնուցողի, որոյ [յի]շատակն աւրհնութեամբ և աղաւթք ի վերայ սոցա և ամենայն աշխարհի։

Եւ եղև աւարտ գրչութեան սորա ի ձեռն տարաշխարհիկ պատանւոյ ումեմն թարմատար գրչի Գէորգայ, ի Կիղիկիեան նահանգէն, յանմատչելի ամրոցէն՝ Ղամբրաւն կոչեցելոյ, որ է ի ստորոտ մեծի լերինն Տաւրոսի, որ ոչ եթէ իբրու ճարտար գոլով յարհեստ գրչութեան՝ յանձնապաստան համարձակութեամբ ձեռնամուխ եղև ի գործ, որ ի վեր էր քան զկար նորա, այլ ի յոլով խնամս վայելեալ նախայիշեցեալ արանցս փառաւորաց, և անիճահ վարկուցեալ զանց առնել զպատկառեցուցիչ հրամանաւ սոցին, զսարիսխ յուսոյն յԱստուած ընկենլով՝ ձեռն ի գործ արկեալ՝ սատարութեամբ նժդեհակցի [պ]անդխտութեանն իւրոյ և դաստիարակի անկատարութեան Յովհաննու քահանայի։ Ի շրշագայութեան ամենակաց թուերերութեան Հայկականս ազին տամարի, յարաբարդեալ
276ր ամաց չորեքտասան յիսնեկաց՝ հանդերձ առաջին կատարեալ թու||ով վեցեկեաւ ընդ տասնեկի շարամանելոյ (1267), ի բռնակալութեան կողմանցն արևելից բաժնին Ասիոյ, ի վերայ յոլովից աիրեալ ազգաց՝ խուժադուժ և բարբարոս ազգին Նետողաց, ընդ որոց գրավեալ ծառայութեամբ ծանրագոյն լծոյ հարկապահանջութեան ևս առաւել Տաւնս Հայոց, որպէս երբեմն Իսրայէղ ի ժամանակս անիշխանութեանն, յորում ժամանակի վարէր զառաջնորդութիւն թագաւորութեանն Կիղիկիոյ Հեթում, բարեպաշտ, որ էր և նա մտեալ ընդ վերասացեալս հարկաւ։

Այլ ն[ա] բռնադատէ զիս աստանաւր թախիծ սրտիս յողորմելիս յամել պատմութիւն, զի յանցելում ամի, ներգրութեան այսր մատենի,

յաղագս ծովացեալ մեղաց մերոց սուլտանն Մրատայ, բազմաձեռն զաւրու պատրաստութեամբ մահմետական սպայիւ, իբր ի ցասմանէ Աստուծոյ ածեալ՝ [ե]մուտ[տ] յերկիրն Կիղիկիոյ, որում ոչ կարացեալ զդէմ ունել զաւրքն Հայոց, անդէն վաղվաղակի թիկունս դարձուցեալ, պարտեալ, յաղթեալ, լքեալ, վայրավատնեալ, ցրուեալ լինէին։ Ուրանաւր երկու որդիք թագաւորին ձեռբակալ եղեալ՝ թշնամեացն ի բուռն անկանէին, կրսերոյն սրախողխող եղեալ, զերէցն գերի վարէին։ Եւ ընդ ցրուել զաւրացն, զի և թագաւորն ևս ոչ եղև պատահեալ յերկրին։ Այնուհետև, առանց կատածի եղեալ, բազում նախճիրս և ոճիրս արարեալ, հրդեհեալ զյոլովս ի քաղաքաց և զաւանս նոցին, և տապալեալ զեկեղեցիս և զգիրս սուրբս հրոյ մատնեալ, ընդ որս և յարքայանիստ քաղաքն Սիս գեղեցկաշէն ապարանաւք և մեծափառ եկեղեցեաւն՝ Սբրբովն Սոփեաւ հրձիգ արարեալ, զբազումս ի սուրս սուսերի մաշեալ, և զևս բազումս գերի վարեալ՝ հանդերձ յոլով աւարաւ։ Եւ մատ ի լնուլ ամին, փոխեալ եղև յաշխարհէ կաթողիկոսն Հայոց տէր Կոստանդին, որոյ ոդորմեսցի Քրիստոս։ Այսոցիկ այսպէս եղելոյ՝ խնամքն Աստուծոյ ժամանեսցէ ազգի և աշխարհացն Հայոց, անդորր առնելով ի յոքնադիմի վշտա[ց]։

Հանդիպելոցդ սրբոյ մատենիս մաղթեմ ադերսիւ՝ զստացաւդ սորուն Գրիգոր վարդապետ աղաւթիւք յիշել ի Քրիստոս, ևս առաւել զտէր Գրիգոր, և զծնաւղսն իւրեանց. և դուք յիշեալ լիցիք յոգւոյմութիւնն Աստուծոյ աւրհնելոյն յաւիտեանս։ Ամէն։ Ամէն։ Ամէն

Եւ անտի փոխեալ [եկե]ալ առ մեծ իշխանն Քուրդ, և մեր զկնի նորա հետևեալ՝ ժամանակ՝ [ին]չ արարաք յանուանեալն Սաղմոսավանք, ուր և զառաջինն աւարտեցաք հատոր սրբոյ մատենիս։ Եւ քանզի դէպ լինէր և անտի ևս փոխիլ նմա ի գործ բարւոք ուսուցչութեանն՝ ի տեղի, ուր Տէր յաշողեսցէ, յուզարկեալք եղեալ մեր ի ստացողէ տառիս՝ ի բուն տունս իւրեա[նց], ի մեծ[ահո]չակ, հրեշտակակրաւն, աստուածաբնակ սուրբ ուխտս Թեղինեաց, ուր և յանկ իսկ հանաք զառաջարկեալս։ Բարւոք ընկալեալ զմեզ բարեբարոյ և սրբասէր քահանայի Սարգսի, սիրով և յաւժարամիտ կ[ամ]աւք սպասաւորելով, զոր աղաչեմ յիշման բարւոյ արժան[ի] առնել ի մաքրափայլ աղաւթս ձեր։

477բ [Աստան]աւր յերսս անկեալ կրկին /// ըն[տ]րելոցդ սրբ[ո]ց, որք միւս /// տեսութեամբ ինչ կամ /// վերծան /// [ս]րտի մտաւք թողութիւն յանցանաց հայցէք ի Քրիստոս։ Մկր[տիչ] /// տայի ի /// ստացողին այս /// [յիշա]տակին արժանաւոր հարազատին սորուն Թաղ[է]ոսի /// ճահ վարկանիմ շտեմարան ասել զնա բնաւից աստուածա[հա]ճոյ առաքինութեամբ /// մասնաւորապէս զառ ի նայն բովանդակեալ տեսական աստուած[աբանութիւն, տկա]բանայ լեզու առ ի պատմել՝ նախ առաշին զկ /// րութենէն զորմէ շար /// եղբայրսիր[ութիւն] ///, աղքատասիրութիւն, որք են լրումն բնաւից աւրինաց /// տէրունական սահմանի, զոր երկրորդէ մեծն Պաւ[ղոս] /// համեստ խոհեմութենէն զարդալուծումն անարիութեանն ընդ նմին և զշռայլական բազմապուխ վիշապի /// կամս։ Զհակառակն այսոցիկ յինքն շարահիւսեալ /// իկ մասունս ևս և զարդարակշիռ չափաւորութիւնն, զոր և /// կատարեալ կոչեն իմաստասիրութիւն այսոցիկ սեռ[առա]քինութեանց իւրեանցայովքն մասամբ գերաւրապէս /// ելոց որովք և հաճոյ գտեալ Աստուծոյ վաղ ժաման /// նի լիցի աղաւթիւք ամենայն սրբոց և ձեր մասն ողորմ /// [հաս]նել յաւրն վերջին։

Յիշեսիք աղաչեմ զսրնդ[կիցս] Գրիգորի վարդապետի /// քահանայն ին /// զյոլով ընդ սմին գաշխատեալն զաստուած[ար]եալն ի քահանայ[ս զՅակո]բոս, ևս և զուսումնակից ըստ հոգւոյն, զկատարեալ եղ[բայր]ն հեզահոգի, զհոմանուն սորին զԳրիգոր քահանայ, որք /// ժամանակաց քրտնաշան վաստակաւք և տքնութեամբ [կրթեին ա]ռ ոտս սուրբ և արդիւնական վարդապետին մեծի Վարգ[անայ]||դեգերեալք և տրւթեամբ և շնորհացն Աստուծոյ հասեալ[ք]||կատարման գիտութեան աստուածային գրոց, զորս Տէր Յիսուս անփո[րձ և] անխոով պահեսցէ և ի հանդերձեալն սրբոց իւրոց դասակից արասցէ, ամէն։

Բ

474բ Ի չափ երկոտասանիցն պարզեալ ոտից Հոմերականն արհեստի սուղ ինչ բան

Գրութեան տառիս ներցուցողի զփաստս տանից
եղև նպաստ ոմն ի գրչաց, ի բնաւս անարդ

* էջը խիստ մաշված է և կարկատված։

Նկեալ յերկրէ հեռաստանէ, ի գիւտ բանի
և պատահեալ քաջն ուսուցչի, որում բաղձայր
Ուր իսկ և իսկ, ապա հարկի յոմն եղբարէ
այնինչ յաւարտ գրեթէ հասեալ վարժից բանի
Բարունական անունն ի ճահ գոլ արժանի,
սակըս սիրով խոկմանն յաւրէնըս Տեառըն ցանգ
Գորովական խանդիւ տառիս այսմիկ բաղձայր,
լինել նպաստ և ձեռընտու իւրըն փութո
Պատանեկին ապա մաղթել ոչ հրաժարէ,
թեպէտ և չէր նա բաւական առ այն խնդիր,
Այլ հայելով առ յոյժ նորայն փափակ սիրոյ
և հրամանին՝ փորձի լցաւղ գոլ ըստ կարի։
Տագնապ հասեալ ապա և այլ իմըն հարկի
յայսր փութոյ վրիպէր պաշտել գնա պարապով,
Այլ և խըրճիթն ոչ պատահեալ ըստ պատշաճի;
ևս և գործիքն, որ արհեստիս այս ձեռըն տա,
Նեղասըրտեալ յոլով անգամ կըրթիւր յապուշ
տի նա յաւէտ ի զինչն առնել տարակուսէր,
Ի վեհագոյն վեհին խնամոց կարողացեալ
առ այս նըւագ գըլխատրել զառեալս յաւանդ
Ներքողական ձայնիւ դրրուատ փառատրութեան
իբր տրիտուր վայելչապէս ձաւնէ նըմա
Էթէ իցէ հաճոյ կամ ոչ տեսանողաց՝
նա ի իւրոյն փութոյ չեղև գըտեալ վըրէպ,
Գերաղանցեալ էր խնդրողին տենչ բաղձանաց՝
յորմէ տրւաւղըն յաղթեցաւ իբր ի վեհէ
Րոպէական իմըն մասամբ զկամս ընձեռեալ,
իբր ըզլոմայսն երկու զոր արկ այրին աղքատ
Նղեալ ստացաւղ տառիս առ գըրողն մեծախոհ՝
և զսխալանսըն ներելով զերկս ընկալեցի
Արժանատր լինել և ինքն ի Քրիստոսէ՝
գտանիլ ներեալ և ողորմեալ յաւրն վերջին,
Ցընծալ պարիլ ընդ բաղմելոցն յառագաստին՝
երրորդութեանն երգել զփառս միշտ ընդ նոսին
Փառք ամենասուրբ երրորդութեանն, ամէն*։

Գ

Ձա Ո՛վ սուրբ տեարք իմ որ /// ստացող սորին Գրի[գորի] /// յամենայն ամի միա /// իւրո Թադէոսի /// եցաւ մանգաղա[ւ] /// թի անվերանալ /// զաղատածին /// զտէր Յոհաննէս յիշեց[էք ի Տէր]։

* Երկտող տների սկզբնատողերով շարահարվում է «Գեորգ պտտանին է գրեաց» (հավանաբար պետք է լիներ «գրեալ»), իսկ վերջին տողերով՝ «Գրիգորի վարդապետինս»։

ղ

23բ Զտէր Գրիգոր արհեպիսկոպոս և [պատ]ուելի ծերունի, և զԳրիգոր սպասաւոր բանի նորին ձեռասուն, որոյ և տառս՝ յիշեսջիք ի Տէր աղաչէմ։

ե

100ա Զթարմատար գրիչս ե զբիւր ըղձալի տենչալւք ստացիչն այսր շարագրածուքեան զԳրիգոր քաջահանճար հռետոր յիշման բարւոյ ի հանգիպելոցգ մաղթեմ արժանի լինել։

զ

109ա Զստացատէն սորա Գրիգոր յիշել ի բարի մաղթեմ*։

է

169բ Զսրբազան վարդապետն Գրիգոր՝ զստացաւդ սուրբ մատենիս և զԳէորգ անարհեստ գրիչ յիշել ի բարի մաղթեմ։

ը

461ա Զգերերջանիկ և զսրբազան արհիեպիսկոպոսն զտէր Գրիգոր և զնորին ձեռնասուն քահանա Գրիգոր՝ սպասաւոր բանի յիշել աղաչեմ ի Տէր։

թ

470ա Զգրիգոր մակացու ստացիչ սորին յիշեսջիք։

ժ

97ա Ո՛հ, կուճ քարտեսս, չէ կոկ։

ժա

111ա Մակար իմ սչքս ելեալ էր, քան այսմ հանդիպել, բայց իմ աներկեղութենէ չէր, գիտէ Քրիստոս**։

ժբ

141ա Ա՛յս տետրս Դ թուղթ է։

ժգ

286բ Աստի յառաջ գրիչս կաղնի է. աւաղ չքաւորութեանս։

ժդ

295ա Տակաւին կաղնի է գրիչս։

---

* Այս կարգի հիշատակագրություններ կան նաև 198բ, 340բ, 398ա էջերում։

** Գրված է շղագրով, ակնարկում է անզգուշաբար թափած թանաքը, որը փչացրել է բնագրից և վերնագրից մի փոքր հատված։ Գրիչը սև թանաքով ծածկված տեղում գրել է կարմիրով, ապա նրա վրայից անցել սևով, որպեսզի ընթեռնելի լինի։

ժե

430բ Կարի դժվար է ի կապած գիրք գրիչ բանեցնել, վասն այն, որ ձեռքն կու սղա առանց շիքրոնի։

ժզ

Գրիչ՝ Մանվել

378բ Եւ ի վերայ այսր ամենայնի զՄանվել գրիչ յիշեցէք*։

288

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Ն. Ջուղա 31, Տեր-Ավետիսյան, 8ուցակ, էջ 47—48

Գրիչ՝ Բարսեղ
Վայր՝ Ականց անապատ

ա

145բ Փառք... Արդ աղաչեմ զձեզ, ով արժանաւոր և աստուածամերձ դասք քահանայութեան, յիշել առաջի Քրիստոսի զիմ անարաժանութիւնս սրտի մտաւք և զայնոսիկ որ քաշալերիչ և յորդորիչ եղեն մեզ ի սոյն գիր՝ զհոգևոր հղբայր մեր զԴաւիթ և զՊողոս, որ զխորան գլխոցս նկարեաց կարմրադեղով, նաև զծնաւղս մեր և զսնուցաւղսն մեր՝ զհոգեհոր և զմարմնաւորս։ Եւ որքան կամաւորաբար բարեխաւսէք վասն մեր, նոյնիսկ և ձեզ պարգևեսցէ Աստուած զարքայութիւնն իւր ընդ սուրբս ամենայն, ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս, ամէն։

Գրեցաւ սուրբ Աւետարանս յԱկանց անապատիս, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչին և Սրբոյ Աստուածածնիս և այլ բազմհաւաք սրբոցս, ի հայրապետութեան տեառն Կոսականդեա և ի թագաւորութեանն Հեթմոյ, ի թուին Հայոց ՉԺԶ (1267), յայս նշանաւոր և ի վշտալից ամիս, յորում եկին անաւրէն զաւրքն Իսմաէլացոց և մտին յաշխարհս Կիլիկեցւոց, իսկ ելեալ զաւրաց մերոց ընդդէմ նոցա, ոչ կարացեալ ընդդէմ կալ վասն սակաւութեանն՝ ի պարտութիւն մատնեցան, և զերկուս որդիս թագաւորին ըզմիննն սրախող արարին, և զմիւսն գերի վարեցին յԵգիպտոս։ Եւ մտեալ նոցա այնուհետև բազում գաւառս և քաղաքս և գեաւղս և վանորայս և եկեղեցիս հրձիգ արարին, և անթիւ քրիստոնեայս սրոյ և հրոյ մատնեցին, և երիս բիւրս և վեց հազար (36000) գերիս տարան յաշխարհ իւրեանց, իսկ զանասնոց և շնչից, ո՞ կարասցէ պատմել։ Զորս յանմխիթար սուգ կանք եկեղեցիք քրիստոնէից, և ողբամք զողբս Երեմիա մարգարէի. որ ի վերայ Սիովնի։ Եւ այս ամենայն եղև վասն բազում մեղաց մերոց։ Զոր Տէր այց արասցէ աղաւթիւք ամենայն սրբոց, և նմա փառք յաւիտեան, ամէն։

Ողորմեսցի Քրիստոս Աստուած այնոցիկ, որ զաւրինակս գրեալ են, և այնոցիկ որ շնորհեսցեն, նաև ամենայն հաւատացելոց։

---

* Մանվելի գրիչն է մի քանի էջի։

Բ

239ա Փառք Սուրբ Երրորդութեան յաւիտեանս յաւիտենից, որ եւ զօրութիւն ստահակ և անարժան ծառայիս Բարսղի սուտանուն քահանայի գրել զգիրս Պաւղոսի առաքելոյ, զոր Հոգին Սուրբ եգ ի բերան նորա ի խրատ և ի շարժումն մանկանց եկեղեցւոյ։

Արդ աղաչեմ զձեզ, ո՛վ դասք լուսեցամից, արժանի արարէք զմեղաւք լցեալս արժանի յիշատակի ի մաքրափայլ յաղաւթս ձեր և սղալանաց և խոշորութեան գրոյս անմեղադիր լերուք, զի կար մեր այդ չափ էր։ Գրեցաւ ի թուիս ի ՉԺԶ (1267), յանապտիս Ականց կոչեցեալ, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչիս և Սուրբ Աստուածածնիս և այլ բազմահաւաք սուրբ նշանացս և նշխարաց, ի գաւառիս Ցախուտ, յայս նշանաւոր ամիս, յորում աւարեցաւ աշխարհս Կիլիկեցւոց յանաւրէն զաւրացն Իսմայելացւոց, և ի բազում սուք և տրտմութեան են ազգ քրիստոնեից, զոր Տէր այց արասցէ ողորմութեամբ իւրով, ամէն։

Ողորմեսցի Քրիստոս Աստուած հոգևոր եղբաւր մերոյ Դաւթի, որ աւժանդակ և քաջալերիչ եղև մեզ։ Ողորմութենամբն իւրով Քրիստոս և աղաւթիւք ընթերցաւղացդ և լսողացդ ողորմեսցի ամենայն հաւատացելոց ի Քրիստոս և մերոց ննջեցելոց, հարց և եղբարց՝ հոգևորաց և մարմնաւորաց, և սնուցանողաց և ուսուցչաց և որ երախտաւորք են մեզ ողորմութեամբ՝ թէ հոգեկանաւք թէ մարմնականաւք, ամենեցուն առհասարակ ողորմեսցի։ Եւ որ զԱստուած ողորմին ասէ, և նմա ողորմեսցի Քրիստոս Աստուած, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։ Եւ որ զաւրինակն գրեալ են և որք ետուն և նոցա ողորմեսցի Տէր Յիսուս յահեղ գալըստեան։

67ա Փառք Սուրբ Երրորդութեանն, որ ետ զաւրութիւն հասանել յերկրորդ գլուխ սուրբ Աւետարանիս։ Աղաչեմ զձեզ և խնդրեմ ի ձէնջ ողորմութիւն, ո՛վ ընթերցողք, որք ընթեռնոյք և լուսաւորիք ի սմանէ, յիշեցէք սրտի մտօք զմեղուցեալ և զտառապեալս յամենայն գործոց բարեաց զսուտանուն կրաւնաւորս Բարսեղ ի մաքրափայլ սղաւթս ձեր, մանաւանդ յայսմ վայր, դի և դուք յիշեալ լիջիք ողորմութեանն Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեան, ամէն։

Տէր Յիսուս Քրիստոս Աստուած իմ, ողորմեա հոգևոր եղբաւր իմոյ Տրդատ քահանայի յահեղ ատեան քոմ դատաստանի։

Գ

155ա Յուրտ է, ձեռս կաղուել է, գէշ կու գրուի, թողութիւն արա աղաչեմ։

Դ

161ա Անհեթեթ կու գրուի, յուրտ է, ձեռս կաղուել է, թողութիւն արա աղաչեմ։

289

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 2877 (ժ. դ.)

Ստացող՝ Ըսպաեան

13բ *Ի արարչայգործն Աստուած, որ ըստեղծ զմարդն զառաջին, եւ ետ նմայ շնորհս զաստուածական և վեհագոյն զարգարեաց քան զամենայն կենդանիս, և ետ նմայ պատուէր ի կատարումն աւուրց, զոր ստեղծողն գիտէ։ Նախանձեցաւ բանսարկոյն ընդ այն վեհագոյն պատիւ, խարեաց զմարդն. անմահն բարկացեալ ընկեց զմարդն ի մահկանացու երկիրս, զի ծանիցեն զինքեանս եւ զարարածս Աստուծոյ, եւ հրամայեաց մեզ ժառանգել զանցաւոր աշխարհս, եւ մեք եղաք զանուն նորայ։ Ի վերայ փայտի եկն միայածինն, եւ ետ իւր աշակերտացն առնել քննութիւն որդոց մարդկան, եւ ասաց, թէ՝ սուտ է աշխարհս, ով գնայ ընդ սայ։ Այսմ ձայնի լսելով Ըսպայեան եւ ամուսին իւր Կատայ, բազում մեծարանս գտել ի Ջալալայ Դաւլէն եւ ի յիր մեծայմեծացն, զի մեծայհարկիս էաւ ամենեսեան, հասին ի ծերութեան աւուրց, յիշեցին զաւրն ահեղ, զի ոչ ունէին որդի ծածկոյթ գերեզմանի, ըստացան իւրեանց հոգևոր զաւակ Աւետարանս, եւ ետուն յԱյտարձորի Սուրբ վկայքն եւ ի տէր Երոյց եւ որդի իւր Վանական, և նոքայ խոստացան ի տարումն Դ(4) պատարագել զՔրիստոս ի տաւնի Աստուածածնի յանուն մեր՝ որչափ մեք կենդանի*

19ա *ենք, և մեր ծնաւ(ղա)ցն՝ յետ<մահու>‖մահուան մերոյ՝ մեզ։*

Արդ, ես՝ մեղուցեալ ծառայ Աստուծոյ Ըսպայեան, եւ ամուսին իմ Կայտայի, ստացաք զսուրբ Աւետարանս ի մեր հալալ ընչից, անջինջ յիշատակ ինձ Ըսպայենայ եւ Կատայի, եւ ծնաւղացս մերոց, եւ կիսաւրէ վախճանելոյ եղբաւր իմոյ Ըսպայեանիկայ, եւ որդոյ իւրոյ Պռաւշայ, եւ զաւակաց մերոց Մարիենոյ, Տիրայմայրայ եւ Ազգին, եւ ն[ն]ջեցելոց մերոց՝ կենդանեաց եւ մեռելոց։ Եւ որ տվաք յեկեղեցին զսուրբ Աւետարանս՝ կամ ի մեծաց կամ ի մերոց կամ յատարաց, մի ոք իշխեսցէ հանել զինչ պատճառով եւ իցէ, թէ յանդգնի, հանել չանայ, նզովե[ս]ցի ի Սուրբ Երրորդութենէն, ու մեր մեղաց պարտական է առաջի Քրիստոսի։

Ով ընթեռնոյք զսուրբ Աւետարանս, ասասջիք, թէ՝ Տէ՛ր Յիսուս, թո՛ղ զյանցանաց Ըսպայեանայ եւ Կաատյին, եւ չնչնայ զձեռագիր յանցանաց նոցայ եւ ն[ն]ջելոց իւրեանց, որ ետին ստացան սուրբ Աւետարանս, թ[վին] ՉԺՉ (1267)։

Քրիստոս Աստուած ողորմի ետին ստ[ա]ցողի Աւետարանիս Ըսպաենայ եւ ամուսնոյ իւրոյ Կայտային։

290

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Չմմառ 499, Ակինյան, Ոսկյան, Ցուցակ, (Բ), էջ 97—98

Գրիչ՝ Յովանէս

ա

75բ Փառք... Գրեցաւ ի թվին Հայոց էճ ու ԺԶ (1267), ձեռամբ մեղապարտ սարկաւագի Յովանիսի, ի յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց։

Բ

47բ Աղաչեմ զձեզ, ո՜վ պատուական հարք, զԲասիլ եւ զտառապեալ գծողս եւ զծնաւղս իմ յիշեսջիր աղաչեմ։ ԶՅովանէս յիշեա*։

Գ

Ստացող՝ Ներսէս

58բ Զստացողիս կեանք, զստացողսն իւր յոգի, զստացողս Ներսէս յոյժ վերջացեալ յաշակերտութիւն եւ [յ]որդիութիւն...

291

ԺՈՂՈՎԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՌԱՍՊԵԼԱՑ

Երուսաղեմ 788, Պողարյան, Ցուցակ Գ, էջ 238

Գրիչ՝ Սարկաւագ

83 Գրեցաւ ի թուին Հայոց էԺ ու ԺԶ (1267) ձեռամբ մեղապարտ Սարկաւագի:

292

ՅՈՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆ, ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

Երևան 3611

Ստացող՝ Կոստանդին

292բ ...Ի թուաբերութեանս Հայոց ՉԺԶ (1267) ես Կոստանդին ծառայ աստուծոյ, նու[աստ] և վերջին յորդիս եկ[եղ]եցւոյ, ցանկացայ ստանալ անձին իմոյ նեցուկ և աւգնական ի կեանս յայսոսիկ, և ի հանդ[ե]րձեալն բարեխաւս և [ա]պ[աւ]էն զաստուածաշունչ ///։

---

* Ծածկագիր է։

293

ԱԻԵՏԱՐԱՆ ՀԵՔՈՒՄ ԱՐՔԱՅՈՐԴՈՒ

Երևան 10675

Գրիչ և ծաղկող՝ Թորոս Ռաւպիճ
Վայր՝ Հոռոմկլա

ա

Փառք համագոյ և միասնական Սուրբ Երրորդութեանն և միոյ||աստուածութեանն Հայր և Որդւոյ և ամենասուրբ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեան։

Շնորհիւ Տեառն սկսեալ և ողորմութեամբ նորին յանգ ելեալ աւարտեցաւ մատեանս աստուածային երկրպագելի և համբուրելի սուրբ Աւետարանս, յամի ՉԺ և է երորդի (1268) թուաբերութեանս Հայկազեան տումարի, յաստուածապահ ղեկակս Հոռոմկլա, ընդ հովանեաւ սուրբ տաճա-
330ա րապետիս Սուրբ Փրկչին մերոյ և Սուրբ Աստուածածնին||և Սուրբ Լուսաւորչին մերոյ, հրամանաւ և ծախիւք երջանիկ հայրապետին Հայոց տեառն Կոստանդեայ, որ զաստուածահաճոյ վարուց իւրոց և բարի անուանն համեմատ ունէր զպատմութիւն։ Որ և ի կեանս իւր, ի ձեռն քաջակրաւն քահանայի Թորոսի՝ եղբաւրորդւոյ իւրոյ, ետ գրել զսա իմոյ անարժանութեանս՝ Թորոսի մականուն Ռաւսլին կոչեցեալոյ։ Եւ նուիրեաց զսա կտակ հոգւոյ իւրոյ, և ծնողացն, և գեղեցիկ մանկանն Հեթմոյ որդւոյ Լեւոնի, որդւոյ Հեթում թագաւորի։ Եւ ինքն կատարեալ զկեանս իւր՝ հանգեւ ի Քրիստոս, կալեալ զաթոռ հայրապետութեան ամս ԽԱ և Ը (45)։ Որ և ի շնորհացն Աստուծոյ և հրամանաւ թագաւորին Հեթմոյ, յաջորդէ զաթոռն սուրբ տէր Յակոբ՝ այր բարի և վարդապետ Հին և Նոր կտակարանաց, անապատական վարուք ճգնե[ա]լ։

Ի ժամանակի յայսմիկ մեծն Աեսիոս դերի վարեաց զբազումս անաւ-
330բ րէն արք||այէն Եգիպտացւոց, և բազում եղեն սպանեալք և գերիք նորա և կսկիծ աստուածաբնակ սուրբ և հռչակաւոր տաճարացն որ ի նմա, զոր ոչ է պատմել զհրաշատեսակ վայելչութիւն դեղոյ նոցա, որք հրով սպառեցան։ Յայսմ երկիւղէ և չարալլուկ համբաւոյ զարհուրեցան բազում գաւառք, և առաւել աշխարհս Կիլիկեցւոց։

Եւ մինչ յայսմ մեծի տագնապի և ի դողման էաք, բացաւ առաւաւտ խաղաղութեան մարգասիրին Աստուծոյ, և մեծն Լեւոն՝ թագաժառանգն Հայոց՝ զերծեալ եղև խնամալքն Աստուծոյ յերկաթի հալոցացն, ի ծառայութենէ և ի ձեռաց նոյն արքային Եգիպտացւոց։ Եւ բազում պատուով և

ընծայիւք եկն յաշխարհ և ի հայրենի աթոռ իւր, և եղև խաղաղութիւն երկրիս և խնդութիւն քրիստոնէից։

Ի սոյն աւուրս եղև զրաւ գրչութեան սորա զանազան նիւթաւք և երանգ երանգ դունաւք, առ ի սխրալի լինել որղոց սրբոյ եկեղեցոյ։ Վասն որոյ աղաչեմ զձեզ, ո՛վ որդիք լուսոյ մաւր Սիոնի, որք վայելէք սովաւ, յիշեսջիք աղաւթիւք ի Տէր զարժանատրսն ամենայն բարեաց յիշատակի զսուրբ հայրապետն զտէր Կոստանդին ստացող սորա, և զժառանգող սորին զծիրանածին մանուկն Հեթում, և զհայր իւր Լեւոն թագաժառանգ, և զմայր իւր բարեպաշտուհի թագուհի Հայոց Կեռան կոչեցեալ, բարեպաշտանեայն Հեթում՝ երեխտագործ Հայոց և ինձ անարժանիս՝ որդաւք և դստերաւք իւրովք և ամենայն զարմիւք, որոց ննջեցելոցն հանգիստ և ողորմութիւն պարգեւեսցէ Քրիստոս Աստուած, և զմնացեալսն անխռով խաղաղութեամբ պահեսցէ և երկնաւոր թագաւորութեան հաղորդս արասցէ, ամէն։

Յիշել աղաչեմ և զարիագոյն քահանայն Թորոս, որ զծախս գրոցս
331բ երկրորդեաց ղոսկւոյ։ || Զբազմամեղ գրիչս աղաչեմ յիշել՝ զանարժանութիւն իմ, և զծնաւղս, և զորդիս իմ, և զուսուցիչս, և զամենայն երախտագործս իմ, և զկազմաւղ սորա, և Քրիստոս Աստուած զձեզ յիշեսցէ ի գալըստեան իւրում և յարքայութեան, որ է աւրհնեալ ընդ Հաւր և Սուրբ Հոգւոյն այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտեանից, ամէն։

Բ

4ա Մեղապարտ գրչի սրա ողորմեա Քրիստոս Աստուած։

Գ

13բ Տէր իմ Քրիստոս՝ լոյս գերարփի,
Որ շրջեցար մարմնով յերկրի,
Եւ զայս մատեանս աւետալի
Մեզ հնչեցեր ձայն ցնծալի,
Դու զտէր Կոստանդին՝ հովիւ բարի,
Կաթողիկոս Հայոց սեռի,
Զոր փոխեցեր ի յայսմ ամի՝
Յաթոռ նստոյ ընդ Պետրոսի, ամէն։

ՉԺԶ (1267)։

14ա Եւ ժառանգող այս մատենի
Զպարոն Հեթում համբակ բարի,
Որ է որդի նա Լեւոնի,
Որդւոյ Հեթմո մեծ արքայի,
Պահեա կենաւք յերկարելի,
Իւր ծնողաւքն եւ այլ զարմի,
Եւ ի քո փառդ հայրենի,
Հաղորդս ընգալ քեզ կրկնակի, ամէն*։

* Գրված է խորանների մեջ, ոսկի խորքի վրա, կապույտ երկաթագրով։

պ

101բ Զաստուածապատիւ տէր Կոստանդին կաթողիկոս յիշեսջիք ի Քրիստոս։

ե

157բ Ընդ մեռեալսն հանդասեա Քրիստոս զսրբազան կաթողիկոսն տէր Կոստանդին՝ ստացող տոհմ, և զեղբարորդի նորին՝ Թորոս քահանայ։ Եւ մեղապարտ գրչի սորա շնորհեա մեղաց թողութիւն*։

զ

153բ Ընտրելոց մեռելոցն հաղորդս ընկալ, Քրիստոս Աստուած, զտէր Կոստանդին կաթողիկոս Հայոց՝ ստացաւղ քոյին բանի, և Թորոսի քահանայի՝ եղբաւրորդւոյ նորա շնորհեայ դասիլ ընդ սուրբս քո, և քեզ փառք յաւիտեանս, ամէն։

է

Կազմող՝ Առաքել Հեռազանդեցի

331բ Զկաղմաւղ սորա զԱռաքել Հեռազանդեցի և զծնաւղսն իմ, և զհարազատսն իմ զԿարապետ քահանա և զՊետրոս սարկաւագ և զուսուցիչն իմ զՍարգիս քահանա՝ զհանգուցեալսն ի Քրիստոս աղաչեմ յիշել ի Տէր։

Ի թվին ՉԺԷ (1268)**։

Վազգէն Ա».

294

ՃԱՇՈՑ

Ստացող՝ Սմբատ Գունդստապլ

Փառք Աստուծոյն ամենայնի
Գոյից էիցս արարաւղի,

---

* Ի, ե. զ հիշատակագրությունները ոսկեզօծ րոլորգրով են գրված, բացառությամբ այս վերջին նախազասության։

** Մատյանս Երուսաղեմի Սրբոց Հակոբյանից մատենարանի № 3627 ձեռագիրն է, որը պահվում էր այնտեղ Դանձատանը 119 համարի տակ։ 1975 թվականին այն նվիրվեց Մաշտոցի անվան մատենադարանին։ Ահա այդ մասին հիշատակությունները.

Մենք՝ վազգէն Ա. կաթողիկոս Ամենայն Հայոց, այսօր 25 Յուլիս 1975 թուին, սոյն ձեռագիր Աւետարանը յանձնեցինք Երևանի Մ. Մեսրոպի անուան Պետական Մատենադարանին։

«Նորին Սուրբ օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. կաթողիկոսի փափաքով, սրբազան պատրիարքը Երուսաղէմի և Սրբոց Յակոբեանց միաբանութիւնը Երևանի պետական Մաշտոց Մատենադարանին կը նուիրեն Ոսկիքճի սոյն ձեռագիրը ի վայելումն ազգիս Հայոց։

եղիշէ արքեպիսկոպոս Տէրտէրեան.
Պատրիարք Հայոց Երուսաղէմի

30 Յունիս 1975
Երուսաղէմ։

Վազգէն Ա»

Որ ինք է մէն 'ւ այլ չլինի.
Տէր և պարոն անփոյխելի։
Ի թվականիս Հայոց գըրի
Ցիւթն հարոյր տասնիւթնի (1268),
Ես՝ Սմբատս Հայկազնի,
Ծառայս և հողս Քրիստոսի
Եւ սպայապետ Հայոց գընդի,
Տէր ամրոցիս Պապէռաւնի,
Անդրանիկ՝ հաւրն իմ Կոստանդնի,
Եղ[ր]այր Հեթմոյ թագաւորի,
Որ ցանկացա և սիրեցի
Ըղմայրն իմ՝ ըղսուրբ եկեղեցի,
Եւ զինչ ի նմա իսկ ընթեռնի,
Ամբողջ ի լրման ի մէկ տարի
Զամէնն ի սմա հաւաքեցի։
Հայնց որ, ով ոք որ զսա ունի,
Նա բնաւ ի յայլ գիրք չսնգի,
Բայց և զայլս այլ գրել պիտի։
Թէ ե՞րբ սկսաք կամ կատրեցի
Զաստուածային տառս ի կարգի.
Սկիզբն էր ի չար ժամանակի,
Երբ Մսրցին եկն ի Մառի
'Ի էսպան ըզԹորոս թագւորորդի
Եւ այլք բազումք ի նոյն ըզկնի,
'Ի այրեց ըզՍիս և զՄսիս
Եւ զինչ որ չէն կայր ի միջի,
Եւ զԼևոն ասագորդի
Հեթմոյ Հայոց մեծ արքայի,
Տարաւ ծառա 'ւ եդ ի բանդի,
Ի քաղաքին Եգիպտոսի:
Բայց զո՞ր ածեմ աստ ի գրի
Զառ և աւար և զարոյննի,
Կամ զհամարքն ծառայի,
Զորս ընդ մեղաց էհաս երկրի,
Որ թէ զամէնն գրել էի՝
Նա շատ առնոյր թուղթ և շտի։
Բայց յաջողմամբ Քրիստոսի
Ի վերոյ դրեալն թվականի,
Որ զընթերցվածքս կատրեցի
Ձեռամբ գրչին Կիրակոսի,
Զերծաւ Լևոն թագւորորդի,
'Ի եբեկ ի յիւր տոմ և տեղի.
Եւ ղայս ձեռամբ իմով գրեցի,
Զի յիշատակ ինձ եղիցի,

Տրուպ և անզեղչ մեղաւորի
Սմբատա Դուձդստապլի,
Հաւր իմոյ Կոստանդնի,
Եւ մաւր իմոյ տամ Ավիծի,
Ծղրարց և քերց, նաև ազգի,
Զնոյն և որդոց իմում զկնի՝
Հեթմոյ, Աւշնի և Կոստընդնի,
Եւ մաւր սոցին Թեֆանաւի,
Որ՝ որ զթան 'ւ ասեն բարի,
Կամ ըղձալից Տէր ողորմի,
Նա [ա]ռատաձիր Տէրն ամէնի,
Բազմապատիկ տա իր բարի՝
Աստ ի ներկայս՝ այժմ և զկնի։

295

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան 287

Գրիչ՝ Կոստանդին
Վայր՝ [Հռոմկլայ]

ա

289ա Փառք [ք]եզ կոնա քող արեգսագոն կիսագնդի և Դեմետրի ծովուե ամենայն արարածոց, որ արժանի արարէր յանգ հանել զայս աստուածախաւս մարգարէական տառս, ձեռամբ Կոսաանդեա նւաստ քահանաի՝ ախմար գրչի, ի խնդրոյ եղբաւր մերոյ Պետրոսի, որ եռափափագ սիրով ցանկացաւ այս հոգիապատում մատենիս, և ետ գրել զսա ի վարժումն անձին իւրոյ, և յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց և բնաւ զարմից։

Արդ, աղաչեմք զամենեսեան, որք աւկտիք ի սմանէ կամ ընդաւրինակէք, յիշեսջիք զիս զՊետրոս, և զծնաւղսն իմ, ևս և զերանեալ արժանապատուեալ քահանայապետն և զըստ հոգւոյ հայրն մեր և զվարժիչ իմ յայսմ աստուածախաւս բանիցս զ|||*, որ բազում աշխատութիւնս և զբաղանս զորս ըստ հոգւոյ և մարմնոյ ոչինչ գրէր, այլ ի վերա յամենայնի և զայս առնէր աշխատութիւն՝ զցայգ և զցերեկ անդադար քննէր մեզ զգիրս Աստուծոյ լուրջ սրտիւ և բերկրեալ հոգւով, ոչ ձանձրանայր կամ մեծամտէր աւ մեր ախմարութիւնս, որ անբաժ էաք ամենայն բայից և բառից գրոց, այլ փոքրոգի եղեալ՝ քաղցրութեամբ ուսուցանէր զամենայն, թեպէտ և մեք ոչ կարէաք ծածկել ի մեզ զամենայն լուսաւոր բանս նորա, այլ փոքրիջատէն. և բազում սատարութիւնս ընձեռեաց մեզ ընչիւք և աւրինակաւ։

Ընդ նմին և յիշատակի արժանին յիշեսջիք զսուրբ հայրապետն մեր զկաթողիկոսն, որ և նա մասնաւոր աւգնեաց մեզ։ Որովք աղաչեմք զա-

* Անունը ջնջված է։

ռատաճիրն Աստուած՝ զՀոգին Սուրբ, զի շնորհազարդեսցէ զարժանիքն յիշատակի զվերոյգրեալ սուրբ հարքս մեր յաստիս և ի հանդերձեալումն՝ հոգւով և մարմնով։ Ընդ նոցին և զանարժան աշակերտս զՊետրոս, և զծնաւղսն իմ և զսնուցիչն իմ զՄաւրեմ և զԿոստանդին քահանայ, և զծնաւղսն իմ, և զորդիսն իմ, որ բազում աշխատեցաւ ի սա, և եթէ անարհաստ համարիք զգիրս, մի՛ մեղադրէք, զի ի վանկից, շեստից և տտորից չէր տեղեակ և աւրինակքն ախմարաց գրած էր։ Վասն այնորիկ այս մինչև յայս չափ։

Արդ, գրեցաւ սա ի թվիս Հայոց Չ[ԺԾ]է (1268)*, ի թագաւորութեանն Հեթմոյ բարէպաշտի, ի դիդապետութեանն տեառն Յակոբայ, որ յայսմ
289բ ամի կարգեցաւ առաջնորդ սուրբ եկեղեցւոյ||Հայկազեան քրիստոնէիցս և յաջորդ աթոռոյ Սուրբ Լուսաւորչին մերոյ Գրիգորի, յամսեանն փետրուար, որ աւր ԺԲ (12) էր։ Եւ վասն թշուառութեան ժամանակիս զինչ պիտոյ է մեզ գրել, որ Երեմիայի մարգարէին ողբոցն կարաւտանամք, զի աշխատեսցուք գերիսն յանաւրէն ղաւրացն փարաւոնի նմանեալք գերութեանն Նաուսաղէմի։ Եւս առաւել աւաղեմք զթագաժառանգն թագաւորութեանս մերոյ, զիաղխողեալն սրով անաւրինացն՝ ղքաջ զաւրականն Քրիստոսի ղպարոն Թորոս, և զգերեալն յԵգիպտացւոցն զպարոն Լեւոն, վասն որոց հայցեմք յԱստուծոյ՝ միոյն հանգիստ յարքայութեանն երկնից և պսակ մարտիրոսական արեամբ նահատակին, և ազատութիւն ազատեցելոյն արեամբն Քրիստոսի պայազատին Լեւոնի պարոնին մերոյ։ Զի ազատութեամբ նորին վերստին ուրախասցուք մեք, որպէս Իսրաել ի դարձին ի Բաբելովնէ ի ձեռն Զաւրսաբաբելի, որում շնորհիս պարգեւողին Քրիստոսի աւրհնութիւն և փառք ընդ հաւր իւրոյ և հոգւոյն սրբոյ յաւիտեանս, ամէն։

Բ

104բ Զմեղաւք դատապարտեալս յիշեա ի Տէր։

Գ

288ա Զմեղաւք դատապարտեալս զԿոստանդ[ին] քահանայ աղաչեմ յիշել ի Տէր Յիսուս։

---

1 Ջնջված են «ԺԾ» տասնավորը, Յակոբ կաթողիկոսի և Լեւոն արքայորդու անունները։ Վերջին երկուսը հետագայում իրավացիորեն վերականգնել են իսկ «Ժ» տասնավորը՝ ոչ, ուստի ձեռագիրը ցուցակներում համարվել է 1258 թ. գրված։ Ուղղում ենք թյուրիմացությունը և ավելացնում տասնավորը։

296

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԴԱՆԻԷԼԻ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԵՒԵԼՑԻՈՅ

Երևան 4834 (1296 թ.)

Հեղինակ՝ Վարդան Արեւելցի
Վայր՝ Խոր-Վիրապ և Աղջոց վանք

ա

168ա Մերձաւորք մեր և եղբարք և որդեակք յաւժարեցին զհեռաւորութիւնս մեր մերձ տանել մերձաւորաց Հոգւոյն Աստուծոյ, և զտկարութիւնս մեր զաւրացուցանել Տերամբ զաւրացելովքն, և զհիւանդութիւնս մեր բժշկել վարժեցելովքն ի բժշկապետէն Յիսուսի Աստուծոյ մերոյ, յորոց մի է քաւիչ եղբայրն մեր Գրիգոր վարդապետն Սանահնեցի և այլք ընդ նմա, որք կամեցան վաստակել մեզ մեծ յուսով ի բաղձալին ամենաւրք Հոգւոյ և ի ցանկալին հոգեղէն զուարթնոցն՝ ի յարդար և ի մեծն Դանիէլ, առաջնորդ ունելով և ճրագ ճանապարհի զաստուածընկալ լուսաւորիչքն այսմ մատենի, զսքանչելի Ասորին զԵփրեմ, և զՀիպողիտա Հռոմա հայրապետ, և զարդ ու զաւակն Հայաստանեայցս եկեղեցւոյ՝ զպսակեալն Ստեփանոս Սիւնեա(ց), առընթեր միմեանց դնել զաստ և անդ դտեալ բանս նոցա, զառնելով վաստակ զուսումնասէրսն, որ գան զհետ մեր։ Եւ է դի ի յարձակմանէ նշուլից լուսոյ նոցա տեսցուք ինչ, և դիցուք ի փառս Աստուծոյ, և ի զուարճացումն զարմիցդ Սիոնն և ի յոյս քաւութեան դժուարալուաց իմոցն մեղաց։

բ

211բ Եւ ինձ իսկ անարժանիս եղև բաղձալի փոքր ինչ վաստակել||ի բանս նորա, զսրբոցն խաւսս, վասն գրոց նորայ դնել առ իրեարս, յորոց շատ մնացեալ լինի ի յոլով հոգւոց իմոց և ի ցնորից, և զոր չէին առեալ ի մեկնութիւն՝ յայնց բանից դնէաք լուծմունս, և շատս թողուաք վասն ձանձրանալոյ, զբնաբանն չգրելով։

Եւ յաղագս ամենեցունց երկընչիմ և խնդրեմ ներումն և թողութիւն և ողորմութիւն յԱստուծոյ, և իրմէն, և ի սուրբ հրեշտակաց, և եղբարցդ, և յորդոցդ. որք պատահէք, չբարկանալ մերում համարձակութեանս, պատճառ ունելով մեր զյոյսն և զսէրն, որ առ Աստուած ի սուրբսն իւր Աստուծոյ, որ միայն յԱստուած նայեցով, և ի մեզ բարի կամաւք հաւատամք սրբել և հաճոյ երևիլ Աստուծոյ և սուրբ եկեղեցոյ ամաւթովս և անհաճոյս, որքան յինէն է։ Այլ և եղբայրն Գրիգոր վարդապետն Սանահնեցին շատ հարկեաց և աճեցոյց զյոյսն իմ ի Քրիստոս և ի Դանիէլ, որ զայն աստուածաբանեաց և կանխաւ գուշակեաց կրելով զնա անարատ ոգոյն։

Եւ սկսաք ՉԺԶ (1267) թուին, ի Սուրբ Վիրապին, և կատարեցաւ ՉԺԷ (1268), առաջի սուրբ և փառաւորեալ նահատակիս Սուրբ Ստեփանոսի, ի սուրբ ուխտս Աղջոց վանիցս, յառաջնորդութեան Երեմիա գովելի ասպընջականիս, և գոհանալի եղբարց։

Աղաչեմ զամենեսեան սիրովն Քրիստոսի ղպատահեալսդ, ներել սխալանացն մեր յամենայն իրս և ի գիրս յայս, և խնդրել յԱստուծոյ մեզ ողորմութիւն և թողութիւն մեղաց, և ամենայն երախտաւոր պարոնացն
212ա Սադունին,||Սմբատա, Քրդին, Պռաշայ, և ամենայն բնակչաց երկրիս, և եղբաւր իմոյ Ներսէս վարդապետին, որ և գնա աշխատեցաք ի գիրս, 'և աւրհնեալ է Քրիստոս Աստուած ի սուրբս իւր և յարարածս ի բոլոր և ի մասնաւորսն, ընդ Հաւր և ամենասուրբ Հոգւոյն յաւիտեանս, ամէն։

297

ԱԻԵՏԱՐԱՆ

Ճանիկյան, Հնութիւնք Ակնայ, էջ 89—90

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Երուսաղեմ

ա

Ես նուաստ Գրիգորս՝ անարժանս և անպիտանս յամենայնի, տեսի զաստուածախօս Աւետարանս Քրիստոսի, զի էր բժիշկ ամէն ցաւի։ Գրեցաւ ի թուին ՉԺԷ (1268), ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ ծերի, և ի կաթողիկոսութեանն տեառն Յակոբայ, որ է դրած ի յայսմ ամի, ի նեղ և ի յանձուկ ժամանակի, զի յայսմ ամի ազատեցաւ ի ծառայութենէ Լևոն որդի թագաւորի...*

բ

Կազմող՝ Առաքել Հնազանդենց

Թուականն է ՉԺԷ (1268)։

298

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 234 (1258 թ.)

Կազմող՝ Առաքել Հնազանդենց

300բ Ո՜հ զմեղաւք դատապարտեալ կազմաւղ սորա զԱռաքել Հնազանդենց, և ղծնաւղսն իմ, և զհարազատսն իմ զԿարապետ քահանայ և զՊաւղոս սարկաւագ, և զուսուցիչն իմ զՍարգիս քահանա, զհանգուցեալսըն ի Քրիստոս, աղաչեմ յիշել ի Տէր։
Ի թուին ՉԺԷ (1268)։

---

* Ճանիկյանը գրում է. «Կը հիշեն ի Ս. Երուսաղէմ գրուիլն ի յիշատակ իւր, ծնողացն և նախնեացն»։

299

ՀԱՒԱՔԱԾՈՒ

Տիրայր վրդ. Ծուցակ Օքսֆորդի, էջ 349 (1585 թ.) Տիրայր վարդապետ Ծուցակ (անտիպ)։

Գրիչ՝ Թորոս
Վայր՝ Հռոմ

169ա Այս գրոցս աւրինակն գրած է ի Հռոմ քաղաքն, առ գրան սուրբ առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի, ձեռամբ Թորոս անուն գրակրի. Աստուած թողցէ ղյանցանս իւր, ամէն։

Եւ գրեալ էր ի թիւս Հայոց ՉԺԷ (1268)։

300

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 142

Գրիչ՝ Մարգարէ
Վայր՝ Հռոմ

ա

Փառք ամենասուրբ երրորդութեանն, Հաւր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից և յանսպառ յաւիտեանս, ամէն, ամէն, ամէն։

325ա *Ի յամի հաւթն հարիւրերորդի, ութ և տասներորդի (1269) թըւականութեանս Հա[յ]ոց տոմարիս, յորում ժամանակի հովըւէր զուղղափառութիւն հաւատոյս քրիստոնեութեան վերադիտողական իշխանութեամբ ճշմարիտ աթոռակալ Լուսաւորչին մերո տէր Յակոբոս, աստանօր յանդ ելեալ կատարեցաւ աստուածախօս մատեանս ի մեծամասնեան բարժնի մասին Եւրոպիոյն, ի նահանգիս Իտալական, ի գերահռչակ և յականատուր մայրաքաղաքիս Հռոմ, ընդ հովանեաւ սուրբ առաքելոյս վսամապատիւ և վեհ անւանի /// կալի* վերնոյն Երուսաղէմի Պետրոսի՝ վիմիս հաւատոյ և տիեզերալոյս և համատարած հօրս բարեխնամի, անօթոյս ընտրութեան սուրբ առաքելոյս Պօղոսի, ի Հանգստարանիս Հայոց, որ է շինեալ ի բաղում աշխատութեանց յոլովից աղքատաց և փարթամաց, և ամենայն ոք, որ եկեալ է ի յերկիրպագութիւն Սուրբ Առաքելոցս ինքնայօժար կամաւ ձեռնտու եղեալ է արդեամբք ի շինութիւն Տանս, որ շատ և որ պակաս, ըստ իւրում կարի, որոց ամենեցունց Տէրն ամենակալ և ամենառատն ի բարի պարգևս, հարիւրապատիկ, հազարապատիկ և բիւրապատիկ հատուցումն արասցէ ի յարքայութեանն իւրում։ Նոցայ որ*
325բ *առաշագոյն աշխատեալ են ի Տունս, զի ոմանք||ի յանցանէ, որ յառաջագոյն աշխատեալ են, հանգեալ են ի Քրիստոս, և ոմանք գնացեալ յաշխարհն իւրեանց, որոց ամենեցուն Քրիստոս Աստուած առհասարակ ողորմեսցի, և որք ի յայժմու ներկաիս բնակեալ են ի Տունս, փառաշուարճ քահանայք, անբիծք և անարատք, բարեշուք ծերունիքն Գրիգորն Ն Առաքեալն, և սոքա ևս որ մանկական տիոք արիանան ընդդէմ բազմահնար ախտիցն Բելիարայ՝ Ստեփաննոսն, և Կարապետն, Խաչատուրն, և Յովհաննէսն, Թորոսն, և եղիազարն, և Վարդան Առևելցին։*

---

* Սկզբից քերված է լաւի կէսը։

Այլև արիական ճգնաւորքս՝ բարձողք խաչին Քրիստոսի և հետևողք լուսաշաւիղ ճանապարհացն Տեառն Աղեկանուս և Կոսարընդին, Սարգիս Սուրբմարեցի և Ստեփաննոս Խլաթեցի, Կիւրակոս և Ներսէս, Տիրաւուր և Խաչերն, Յովաննէս Արևմտցի և Փոքր Խաչերն, Արևիկն և Վասիլն, Կոսարընդին Պրճիկ, Վարդան փոնավառն, և այլ Գրիգորի Ուձնացոյ, և Գրիգոր Կիւլիկեցի, Պօղոսի, և Պետրոսի Երկայնոյ, Ստեփաննոսի, և Աւետեացն, Յովհան, և Յովհաննէս, Սիրուն կօշկարն, և Գրիգոր Արևմըտցի, Գրիգորի և Կարապետի: Սոքա են բնակիչք Տանս ի յայժմուս, որք թողեալ զաշխարհ իւրեանց և զազգ, զտունս և զհայրենիս, եկեալ պանդրխտանան ի դուռն սուրբ առաքելոցս Պետրոսի և Պաւղոսի, և ակն ունին յուսոյն յաւիտենից և անապատում հանգստեանն։

Իսկ հանդերձ այսոքիւք և կանայք պատւականք, և պարկեշտ պառաւունք կան բնակեալ ի Տունս, աղքատ և աղքատացեալք վասն Քրիստոսի, գետնախշտիք և պահակաց, այլև կան ոմանք ի սոցանէ կուսութեամբ նահատակեալք, և այլ որք պարկեշտաբար ամուսնացեալք ի կենցաղս, յետո հետևեցան վերնական յուսոյն և ակն ունին հանգստեանն արդարոց։

Արդ Տէրն ամենակալ, Հայրն բարեաց Աստուածն ողորմութեան և Տէրն գթութեան, որ առատն է ի տուրս և շնորհն ի ձիրս առատապէս հեղեալ զողորմութիւն իւր ի վերայ ամենեցուն, որ ի յայս Տունս են աշխատէալ առաջնոցն և միջնոցն և վերջնոցս, որ շատ է աշխատեալ և որ փոքր, որ շատ է ընծայաբեր լեալ արդեամբք և որ պակաս, ամենեցուն առհասարակ ողորմեսցի ողորմածն Աստուած, կենդանեաց և մեռելոց, եկաց և բնակաց, քահանաից և սարկաւագաց, միանձանց և կրօնաւորաց, աշխարհականաց և պառաւանաց, ցօղ ողորմութեանն Աստուծոյ իջցէ ի յոսկերս մեռելոցն, որ ի յայսմ քաւարանի ննջեցեալք են, հոգին
326ա Աստուած հանգիցէ ի հոգիս նոցա, կամք ամենակալին||Աստուծոյ կամեսցի, որդին միածին զաչս նոցա ըմբռնեալ ասասցէ. Ծկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ի սկզբանէ զարքայութիւնն, ոչ միայն այնոցիկ, որ ի յայսմ քաւարանի են ննջեցեալք, այլ և ամենայն հայադաւան ննջեցելոցն տացէ Տէր Աստուած զնոյն հանգիստն։

Այլ և ձեր աղաւթիւք, և բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնին և սուրբ առաքելոցն Պետրոսի և Պօղոսի և ամենայն սրբոց՝ երկնաւորաց և երկրաւորաց, և Սրբոյ Յովաննու Կարապետին՝ խաղաղութիւն տացէ մերում աշխարհին, և աղատեսցէ ի ծառայութենէ այլասեռիցն, կազդուրեցուսցէ, կարողացուսցէ և հաստահիմն արասցէ, և զբնակիչք Տանս Հռոմայ օրհնեսցէ բարեգութն Աստուած, զբահանայսն ընդ առաքեալսն դասեսցէ, միանձունսն ընդ ճգնաւորսն հանգուսցէ, և զպառաւունսն ընդ սուրբ և ընդ եղաբեր կանանցն պսակեսցէ։ Եւս առաւել բարի պարգև պարգ[և]եսցէ Քրիստոս Աստուած Վարդանայ, և իւր ծնողացն՝ հօր և մօրն, զի՞ բազում աշխատեցաւ ի յևփել կերակուր և տալով մեզ շատ քացախ, որում տացէ Տէր ծխուս քաղցրն՝ զքաղցրաճաշակ կերակուրն և զուրախարար հանգիստն, և եղիցի օրհնեալ յաւիտեան։

Իսկ ես՝ բազմավրդովս Մարգարէս, որ աշխատեալ ծրպըտեցի զդիրս զայս ի խնդրոյ եղբօրն մերոյ Կարապետին, անարատ և անբիծ քահանային, ի վաթս անձանց մերոց և ի յիշատակ հոգւոց մերոց։ Արդ ես՝ տառապեալս Մարգարէս, անպէտս և անպիտանս, տարտամս և աղկաղկս, ապիկարս և թարմատարս, ամօթալիս և եղեռնագործս, չարս ի չարեաց և ատելի ատելեալս, որ բարիս ոչ գործեցի և ի չարեաց ոչ հեռացա, զո՞րս յիշեցից և կամ զո՞րս գրեցից ի չար և անյիշելի գործոց իմոց, դի անհնար և անհամար են չարիքն իմ, և երբեք ընդ գրով և ընդ բըւով ոչ ևս անկանին։ Եւ ահա կամ տարակուսեալ, դի թէ գրեցից զբազմութիւն չարեաց իմոց բազում նիւթք մագաղաթեայք պէտք են, որ բառնան գյոլովութիւն եղեռնագործիս։ Եւ ահաւասիկ յիշեցուցանեմ ձեզ սրբոցդ և սրբազանիցդ, հարցդ և եղբարցդ, թեպէտ և չեմ արժանի որդիութեան և եղբայրութեան ձերոյ, բայց սակայն ունիմ զծնունդ սուրբ աւազանին ընդ ձեզ և զդաւանութիւն և զհաւատս ուղիղս ի Սուրբ Երրորդութիւնն, ի Հայր և յՈրդի և ի Սուրբ Հոգին, և յուսամ ի Տէր, դի թերևս գտայց և ես ողորմութիւն ի բարեգութ Տեառնէն, դի նա ողորմած է։ Զի թէ յիշեմ զմտացս չարութիւն՝ գործոցն յառաջ են, քան զխորհրդոյս, և
326բ թէ յիշ||եմ զտեսութեանցս զսխալանս, լսելեացս արգել անկանին մեղանք, և թէ յիշեցից զճաշակելեացս, շաւշափելեացս՝ գարշութիւնք կուտին յոլովք, դի ահաւասիկ երկու անըմբերելի գազանքն, ձայն տըւեալ միմեանց, սրտմտականն և ցանկականն ի մէջ առեալ, զեղկելի հոգիս պիշաղէշ պատառեցին, խոցեցին, վիրաւորեցին, գանալից արարին զմիմեամբք ելևել առնելով, դի թերևս ամենևին սպառեսցեն զփրկութեան յոյս հոգւոյս։ Վասն դի սրտմտականն ի կողմն եղեալ, մոռացեալ իբրև զառիւծ և իբրև զարշ նետահար անողորմ և չարաչար՝ պատառէ զհոգիս։ Միայն զսա գտեալ ի բարի գործոց, չարաչար խոցոտեաց, պատառեաց, գանալիր արար, և ոչ այնու շատացեալ, այլ հանեալ արտաքս ի գաւթէ հօտից՝ ի դաշտ անուղաւութեան ձրգեալ իւր չարութեամբն երբեմն խածատէ, երբեմն զարհուրեցուցանէ, երբեմն ըմբռնեալ ժանեաւքն իւրովք ի քարշ տանի ընդ երկիր և ընդ աղբ թաւալեցուցանէ, զեղկելիս։ Եւ զայս ոչ է թէ իւրով ուժովն առնէ, այլ իմով կամակցութեամբ, դի զոր Տէրն և ստեղծողն Աստուած սահմանեալ է զսրտնութիւնն ի չէութիւն հոգւոյս, որովք ի բաց հալածեցից զչարութեան արկածս բանսարկուին, զնա ես ինքնին ինձ նպաստ կորստեան իմում արարի, ոչ միայն թէ չբարկացայ եղբօրն, այլ և կամօք իմովք սպանի զնայ և չարագէշ լեզուաւս խոցոտեցի զեղբայրն, զոմն ի խորհուրդս բամբասեցի, զոմն յայտնապէս հայհոյեցի, զոմն նախատանօք ձաղեցի, զոմն չարեաւք տուժեցի՝ յիմար կոչելով, զորս պարտ էր փառաւորել՝ ես անարգեցի, զորս պարտ էր հանգուցանել՝ ես դժարացուցի, զորս պարտ էր ուրախացուցանել՝ ես տրտմեցուցի, զորս պարտ էր դարմանել՝ ես հալածեցի, զորս պարտ էր ժողովել՝ ես արտաքս հանի, զսրտնութիւնն ի կիր արկի ընդդէմ բարեացն, զոր արժանի էր ընդդէմ չարեացն առնել, ես արարի ընդ եղբարսն, զոմանս խորհրդով սպանի, զոմանս կամօք, որոց ոչ էի ձեռնահաս՝ զայնոսիկ յօժարութեամբ դրժեցի։

Իսկ ցանկականն գազան եղեալ ի ճագատ հանդիսիս, առեալ իւր զորաւիգն և զօրս հեծելոց զնախանձն և զատելութիւն, որովք զօրաժողով արարեալք մեծաւ հանդիսիւ դիմեցին հանդիսիւն իւրեանց և սայրասուր գինուքն ի վերա մերկ հոգոյս, և գոռոզաբար ճոխանային ի վերա յաղթութեանն իւրեանց, և խնդային, խայտային և ուրախ լինէին ընդ կորուստըն իմ, զի ոմն առեալ զհաշտէնն իւր՝ մերձ ընդ մերձ մխէ ի կողս, և
327ա ոմն առեալ զվաղակաւորն երկսայրի՝ ցըցէ ճոխ||արար ի յանպատսպար սրտիս, և ոմն առեալ զաղեղն, արտաքո կացեալ և ի հեռաստանէ նետահարէ զրոլոր մարմինս և զհոգիս, և այլք առեալ զբազմահնար և զդժուարաբեռն պելետկինին, զոր ի մերում գաւառին լախտ անըւանէն, և յայլ տեղիս սառնեխ, և այլք մահակ՝ ի մատ եկեալ անողորմն ծեծեն և վիրաւորեն զգլուխս բովանդակ։

Եւ այսոքիկ ոչ եթէ բանսարկըւին արարք, այլ իմոց յաւժարութեանցս և կամացս, վասն զի զայն ցանկութեան մասն, զոր սահմանեալ է արարիչն ի կենդանութեան ոգոյս, ես առեալ ի խոտորնակն դարձուցի, և սիրեցի ամենևին զաղտեղութիւն, զի ահաւասիկ ցանկացա ի յայլադենս և ի յայլասեռս, զի ոչ եթէ ի բնականն տարփացայ, այլև ի յանբանականս, զի շնացի ընդ շրոյ, և ընդ քարի, ընդ փայտի և ընդ երկրի, ընդ հրոյ և ընդ ջրոյ; Եւ ոչ եթէ ի տարերս միայն պղծեցա և պղծեցի, այլ և ի ծնունդս սոցին, զի զաչս զայս զոր սահմանեաց արարիչն ի տես արբութեան, ես դարձուցի ի տես արատոյ, վասնզի տեսանելով զվաեչջութիւն կենցաղոյս ամենեցուն, ցանկացա, տեսի զվաելուրշ գեղ ոսկոյ և զարծաթո և զգունագոյն հանդերձից և յօժարեցայ, տեսի զաստուածաշնորհ գեղեցկութիւն կանանց, և սիրեցի զհաելն զտիպ գեղաղեղ մանկանց և տարփացա, պղծեցայ, աղտեղացա, զազրացա ի հոգիս, այլայլ<ել>եցա, մտօք զազրածս, շաւշափելեաւքս աղտեղացա, ճաշակելեաւքս պոռընկեցա, լսելեաւքս գարշեցա, շաւշափելեաւքս ամենևին ի մուտս մեղաց՝ ընթացա, աւտարացա, հեռացա ի յօրինացն Աստուծոյ։

Արդ զայսքանս և զայսպիսի նետահարեալս և հաշտենախոցս, տիգահարս և վաղակափիրաւորս, մահակածեծս և անդամ-անդամ յոշածս, վիրաւոր և խղխայթեալ ոգիս, լալով և արտասրւաթոր աչօք անկանիմ առաջի ամէնախնամ և բարէգութ Տեառնն հօրն ամէնակալի, և Որդոյն միածնի և ամենասուրբ Հոգոյն, մաղթեմ, աղաչեմ և խնդրեմ, զի կամեցեալ ողորմեսցի և գթացեալ կեցուսցէ։ Մի հանեսցէ ի մեղսաթաւալ անձնս դառնութեամբ, այլ քաղցրութեամբ գթասցի, և գթութեամբ քաւեսցէ, չնչեսցէ զձեռագիր յանցանացս, մաքրեսցէ զաղտեղութիւն հոգոյս, սպիտակափայլ գունեցուսցէ զսևացեալ թխացեալս, սրսկեսցէ զամենամաքուր արիւնն իւր սուրբ, տացէ կերակուր զկենեղուտ և զկեցուցիչ մարմինն իւր, զորս կերեալ և արբեալ արտաքս փսխեցից, զամենայն չարութիւն զխորհրդոց և զկամաց, զգործելեաց և զանդործելեաց, զկա-
327բ մաց և զակամաից, զմտաց և զբանից||և վերաթռիչ բարձրացայց ամպեղէն կառօք, ելից ի բարձունս ընդառաջ փեսային և հարսինն, և ճոխացայց ի պանծալի հարսանիսն, և գոհանալով փառավորեցից զՀայր և զՈրդի և զսուրբ զհոգին այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից, ամէն, ամէն։

Յիշեալ լիցին կամօք բարերարին Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ բարեսէր քրիստոնեայքն, որ տան մեզ կերակուր հացի, տացէ նոցա Տէր Աստուած ղկենաց հացն և ղանմահութեան ճաշակն, բարեխաւսութեամբ ամենայն սրբոց և եղիցի նոցա մասն և վիճակ ընդ ամենայն Սուրբս, ամէն։

Արդ, յայսմհետէ և յաւիտեանս ժամանակաց օրհնեալ Հայրն ամէնակալ, Որդին միածին և Հոգին ճշմարիտ, յաւիտեան և յաւիտեանս յաւիտեան։

Բ

26ա Վարդան եղբայր մեզ* երեւ, Տէր Յիսուս տացէ նմա ղանմահական բաժակն և զմայլեցուսցէ զնա ի իւր կենարար սեղանն։

Գ

71ա Սաստիկ ծուռ էր օրինակն և ըսխալ։

Դ

Կազմող՝ Կոստընդին

60բ Ջմեղապա[ր]տ կազմող գրոցս զԿոստընդին սարկաւագ յիշեսջիք ի մեղսաքաւիչ յաղաւթս ձեր, և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։

301

ԱՒԵՏԱՐԱՆ

Վենետիկ, 152, Սարգիսյան, Ցուցակ Ա, էջ 656—657

Գրիչ՝ Կոստանդին Հոէփսիմեցի
Վայր՝ Մայրս քաղաքից (Սիս)

ա

373ա Փառք, որ էն և է և եղիցի յաւէտ, Հաւր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյ։ Գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվին Հայոց ՁԺՀ (1269), ի փետրուարի ի վեցն, ձեռամբ Կոստանդին Հոէփսիմեցո։

Բ

376ա Գրեցաւ ի թուին Հայկազնէից՝
Եւթանց հարիւր լեալ ամեից
Եւս ութսուտասն ընդ նոյն ի կից (1269),
Ի փետրվար ամսոյ վեցից,
Ի գաւառիս Կիլիկիոյ,
Մայր քաղաքաց հանուրց [Հայո՞յ]**,

* Հաջորդ բառը բաց է թողել։

** Հավանաբար դրված է եղել «Մայր քաղաքաց հանուրց Հայոյ», որ չեն ընդունել և հետագայում ընդել են։ Այս քառատողը գրված է ստորին լուսանցքում, նույն գրչի ձեռքով, բայց ավելի մանր գրությամբ։

Ընդ հովանեաւ յոյժ Սրբուհոյ
Հռեփսիմէից սքանչելոյ։
Դարձեալ մաղթեմ ղձեզ կրկնակի
Յիշել յաւէտ ի Տէր բարի,
Զիս Կոստանդին Հռէփսիմեցի
Եւ Շահանդուխտն իմ տիրուհի։
Ընդ նոյն զմաքուր և գովելի
Թէոդոս հայրն իմ ցանկալի,
Եւ զերիցկինն իւր հրաշալի,
Զմայրն իմ Խելաւէ ընտրեալ յերկրի։
Եւ զԽաչատուր հայր մայրենի,
Եւ զՅոհաննէս հայր հայրենի,
Նոցին և քերցն իմ Զապիլի
Եւ Հռէփսիմէ այլ և Սպիլի։
Եւ եղբաւր մեր տէր Թորոսի,
Ի իւր տիրուհոյն Թեֆանաւի,
Եւ որդոյն մեր Թեադոսի
. . . . . *
Այլ և հանուր իմոյ սեռի,
Զորս անուամբ որ շարադրեցի,
Որք են մեռեալք և կենդանի,
Կան դեռ յայժմուս ՚ւ որք գան ղկընի։
Եւ բովանդակ ամենայնի
Դաւանողացն Քրիստոսի,
Որք են ննջեալք, ՚ւ որք յաշխարհի,
Են և լինին մինչ յաւր վերջի։
Զի ամենից ողորմեսցի,
Տէր և Աստուած Իսրայէլի,
Եւ յիշողացդ իսկ այսպիսի,
Զեզ բիւրապէս վայելս տացի.
Երգել բզփառս անլռելի,
Երրորդութեանն անճառելի։

---

* Մի տող եղծված է։

** Հետագայում 380ա-ում նոտրգրված է «Գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվին Հայոց ՁԺՐ (1269) ի փետրվար վեցն», որին հաջորդում են քսաներկու անուններ. ամեն մեկը սկսվում է «Աստուած ողորմիով»։

302

ՅԱՅՄԱՒՈՒՐՔ

Երուսաղէմ Պողարյան, Ցուցակ Ա, էջ 260 (1439 թ.)

Խմբագրող՝ Կիւրեղոս Արևելցի
Վայր՝ Սիս

1183բ Յուսովն Աստուծոյ և սիրով սրբոց նորա՝ նուաստ ոգի Կիրակոս վարդապետ Արեւելցի*, ի միասին հաւաքեցի զտաւն սրբոցս Աստուծոյ ըստ իւրաքանչիւր յիշատակի աւուրց, գրեցի և պատմութիւնս նոցունց, որոց ոչ էր եղեալ ի գիրս Յայսմաւուրցն, և խառնեցի ընդ նախակարգսն՝ եւ աղաչեմ զտաւնաւղսդ [և ղգրաւղսդ] գրել և զայս յիշատակ բանի, ղի և դուք գրեսջիք ի գիրն կենաց, և որ բառնա զմերս՝ ջնջեսցի և ինքն ի զբպրութենէն կենաց։

Եւ եղեւ իրարկութիւնս այս ՁԺԸ (1269) թուականիս, յաշխարհիս Կիլիկեցւոց, ի Սիս մայրաքաղաքի, ի թագաւորութեանն Հեթմոյ, և յառաջին ամի իշխանութեան որդւոյ նորա Լեւոնի, ի ԿՁ (66) ամի կենաց պանդըխտութեան մերոյ, յորում աւարտն եղեւ ի փառս Աստուծոյ, յաւիտեանս, ամէն։

Եւ ճառք, որ յաւելաք մեք, ընդ հինն խառնեցաք՝ ՃՀ (170), անուամբն Աստուծոյ Հաւր, և շնորհաւքն Քրիստոսի Որդւոյն, և զաւրութեամբ Սուրբ Հոգւոյն, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն**։

303

ԵՐՁՆԿԱՅԻ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁ

Երուսաղէմ 1925, Պողարյան, Ցուցակ Ձ, էջ 413—415

Գրիչ՝ Մխիթար
Վայր՝ Երզնկա

ա

194բ Ձմեղուցեալ ծառայս Աստուծոյ աղաչեմ յիշել ի Տէր, ով սուրբ եղբարք, նաեւ զծնաւղսն իմ եւ զամենայն ազգահսն իմ, եւ որ զմեզ յի-

---

* Նիկոսիայի Յայսմաւուրքում (Ն. Ակինյան, Ցուցակ, թիւ 2, էջ 7) այստեղ ավելացված է «ի վանաց Դետկեցի»: Ամբողջ հիշատակարանը նույնն է վերոբերյալի հետ, բացակայում է միայն վերջին պարբերությունը («Եւ Ճառք, որ յաւելաք...»)։

** Ղ. Ալիշանը սույն հիշատակարանը բերելուց հետո «Հայապատումում» (էջ 47, ծբ. 3) գրում է «Ուրիշ Յիշատակարան է մը կիմանանք, որ իբր 17 տարի առաջ ավելցուցեր է Կիրակոս հին Յայսմաւուրաց վրա 112 նոր բան, ի վանքն Կողա, Մեծ Հայոց Տայք գաւառի մեջ և իրեն օգնել են Վահրամ և Ստեփանոս անուամբ քահանայքն։ Ակնարկված է 1253 թվականի հիշատակարանը, բայց այլ տեղանվամբ։ Չի համընկնում նաև տարիների քանակը, ուր նկատելի է ժՀ և ժԷ թվականների չփոթը։ Կիրակոսը երկու անգամ է անդրադարձել Յայսմաւուրքին, առաջին անգամ 1253 թ. և ավելացրել է 112, իսկ երկրորդ անգամ, 1269 թ., ավելացրել է 58 (170—112) Ճառ-միավոր։

շեսցէ՝ Աստուած զինքն յիշեսցէ յիւր արքայութիւնն, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։

Աւաղ աշխատանացս, զի աւրինակերս խիստ անհեթեթ են։

Բ

248բ Զմեղաւք դատապարտեալ ծառայս Աստուծոյ զՄխիթար աղաչեմ յիշել ի Տէր և ղծնատղան իմ, ո՛վ սուրբ եղբարք, աղաչեմ։ Եւ Աստուած զձեզ յիշեսցէ յիւր ողորմութիւնն։

Գ

307բ Զսուրն սարսռալի անոպաիցն հատանող, յերեւել հրալի փայլակնաբորբոք աներեակ աւուրն անցո ամենակեցոյց Փրկիչ, ի Մխիթարայ եղկելի դծաւղէ սորա, եւ ի ծնաւղաց իւրոց եւ յամենայն հաւատացելոց, խնդրուածովք սուրբ մարգարէին Դաւթի, ամէն։

Դ

358բ Զմեղաւք դատապարտեալ ծառայս Աստուծոյ զեղկելի գծաւղ սորին աղաչեմ յիշել ի Տէր, նայեւ ղծնատղան իմ եւ զամենայն հաւատացեալս Սրբոյ Երրորդութեանն, եւ Աստուած զձեզ յիշեսցէ յիւր անսպառ բարիս, եւ նմա փառք յաւիտեանս, ամէն։

Ե

395բ Բազում վնաս եւ սզալանք լինի գրոյս ի նեղութենէ վշտաց լուի եւ քնոյ, որ տանջէ։

Զ

Գրիչ՝ Յակովբոս

426ա ԶՅակովբոս գծաւղ սորին՝ զտւտանուն կրաւնատւր, և զհոգեւոր եղբայրն իմ զՄխիթար՝ սրբասէր կրաւնատւր, աղաչեմ յիշել ի Տէր, ո՛վ սուրբ եղբարք։

Է

464ա Ընդ նմին եւ զիս զմեղուցեալ ծառայս Յիսուսի Քրիստոսի զՅակովբոս գրիչ աղաչեմ յիշել ի Տէր։

Ը

535 Տուր զաւրութիւն ձեռին իմոյ հասանել ի վերջին գիծ գրոյս, զի ի փառս քո կատարի, եւ կարողութիւն քո է, Տէր իմ Յիսուս, փառք քեզ։

Թ

1129բ Զմեղաւք դատապարտեալ ծառայս Աստուծոյ, զանարհեստ եւ զանպիտան գրիչս Յակովբոս, աղաչեմ յիշել ի Տէր, եւ չլինել մեղադիր, ո՛վ աստուածասէր ընթերցողք։

ժ

1133բ ՁՅակով[բ]ոս անպիտան եւ զսուտանուն կրաւնաւոր և զանարհեստ գծաւղ սորին աղաչեմ յիշել ի Տէր, եւ ղհոգեւոր եղբայրն իմ զՄխիթար:

ժա

1162բ Ձծառայս ամենայն ծառայից Աստուծոյ, զՅակովբոս սուտանուն կրաւնաւոր և անարհեստ գծաւղ, եւ զհոգեւոր եղբայրն զՄխիթար, աղաչեմ յիշել ի Տէր, եւ որք յիշէքդ սրտի մտաւք, եւ դուք յիշեսջիք առաջի զենլոյն Քրիստոսի՝ Յիշեսջիք եւ զՄխիթրուկ դպիրն որ զթուղթս կոկեաց բազում աշխատութեամբ, եւ յաւժարութեամբ սրտիւ:

ժբ

Գրիչ՝ Մովսէս

580 Աւրհնեալ է ամենասուրբ Երրորդութիւնն, Հայր եւ Որդի և Հոգին Սուրբ, այժմ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն, որ արժանի արար զանարժան ծառայս իւր հասանել ի վերջին գիծ գրոյս, քանզի յոյժ դիւրին է ամենակալին Աստուծոյ շնորհել առատապէս զպարզեւս իւր հաւատով խնդրողաց ի նմանէ, ի թուականիս Հայոց ՁԺԸ (1269)։

Արդ, գրեցաւ պրակս աստուածային սուրբ մարգարէին Եսայիա հրամանաւ եւ արդեամբք տեառն Սարգսի սրբասէր եւ արհիական եպիսկոպոսի, եւ նորին հարազատ որդւոյ՝ աստուածասէր եւ քրիստոսապահ իշխանին պարոն Յոհաննէսի, ի վարժումն անձին իւրոյ եւ ի պէտս սրբոյ եկեղեցւոյ, եւ ի խրատ աստուածատուր եւ դեռաբոյս զաւակաց իւրոց՝ Ներսէսի եւ Գրիգորէսի:

Ո՛վ մանկունք սուրբ եկեղեցւոյ, աղաչեմ յիշել ի Տէր զստացաւղ գրոյս զպարոն Յոհաննէս եւ զամենայն մերձակայս իւր, ընդ նմին եւ զՄովսէս գրողս։

ժգ

583 Ի թուիս Հայոց ՁԺԲ, (1270) յամսեանս փետրուարի Ա [1] պարոն Ալէքսն փոխեցաւ առ Քրիստոս, զոր Տէր Աստուած յարութիւն կենաց շնորհեսցէ նմա, ամէն։

ժդ

645ա Ո՛վ սուրբ եղբայր, զմեղուցեալ գրիչս աղաչեմ յիշել ի Տէր, եւ խոշորութեան գրիս եւ սխալանացն ոչ լինել մեղադիր։

ժե

662բ Ձստացող սրբոյ մատենիս զՊարոն Յոհաննէս յիշեա։

ժզ

665բ Տէր Աստուած, աւգնեա բարեպաշտ իշխանին պարոն Յոհաննէսին, եւ աստուածատուր զաւակաց իւրոց, եւ համաւրէն զարմից իւրոց կենդանութիւն շնորհեա։

ժէ

669ա Ջամենեցրջանիկ եւ զսրբասէր եպիսկոպոսն մեր զտէր Սարգիս, հանդերձ քրիստոսահաճոյ որդւովն իւրով պարոն Յոհաննիսիւն, յիշեսջիք ի Տէր, ո՛վ մանկունք սուրբ եկեղեցւոյ։

ժը

684ա Գրեցաւ Մարգարէութիւն երկոյտասան մարգարէիցն ի թուիս Հայոց ՉԺՀ (1269), յամսեանս քաղոց, եւ ի Յունաց՝ ի մայիս ԻԴ (24)։

ժբ

774բ Քրիստոս Աստուած, սուրբ տիրոշն եւ մեծ պարոնին, և իւրեանց աստուածատուր զաւակացն վայելեալ տացէ երկար ժամանակաւք, ամէն, ամէն։

Խոշորութեան գրոյս չմեղադրել, զի թուխթս յաննշա է։

ի

783 Անիծէ Աստուած զճանճն եւ ընդ նմին զլոյն, զի յոյժ կծեն զիս, այլ եւ տաւթ աւուրս տագնապեն զիս։

իա

810ա Փառք արարչին ամենայն արարածոց, անմահ թագաւորին երկնաւորի, Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ամէն։

Ջստացաւզ այսմ աստուածաշունչ տառիցս, համահաւաք կտակարանացս հնոց եւ նորոց, զառաքելաշնորհ եւ զարհիեպիսկոպոսս մեր, և զվերատեսուչ մեծի վիճակիս եկեղեցւոյ զաւառիս եւ մեծահռչակ քաղաքիս Եզնկայիս՝ զտէր Սարգիս, եւ զաստուածասէր եւ զամենիմաստուն իշխանն՝ զպարոն Յոհաննէս, հանդերձ աստուածատուր զաւակաւք իւրովք, յիշեսջիք ի Տէր, ո՛վ պաշտաւնեայք սուրբ եկեղեցւոյ։ Քանզի մեծաւ փափաքանաւք եւ ջերմեռանդն սիրով շարժեալ եղեւ ի Հոգւոյն Սրբոյ հոգիընկալ միտս սորա ժողովել ի մի վայր զամենայն տառս հոգիանուագ մարգարէիցն, եւ զՔրիստոսի Աստուծոյ մերոյ տնաւրէնութեանն զկենսաբեր քարոզութիւնն եւ զհանգամանսն, եւ զսրբոց առաքելոցն գործսն, եւ զնոցին քարոզութիւնն, եւ զտեսիլն Յոհաննու աւետարանչի՝ որ ի Պատմոս կղզւոջն։ Զոր Տէր Աստուած բարեխաւսութեամբ սրբոց մարգարէիցն եւ առաքել[ոցն] և ամենայն սրբոց, ժողովեսցէ զսոսա յիւր արքայութիւնն, եւ նմա փառք, յաւիտեան։

Այլ եւ զանպիտան գրիչս զՄովսէս եւ զծնողսն իմ աղաչեմ յիշել ի Տէր, ո՛վ մանկունք սուրբ եկեղեցւոյ, եւ Քրիստոս զձեզ յիշեսցէ։ Յիշեա ի Տէր։

---

* 1178ա էջում պահպանվել է հետագա ստացող Մարգարե վարդապետի հետաքրքիր, անձնական հիշատակարանը. բերում ենք ամբողջությամբ. «Ջվերջին ստացողս Սուրբ Գրոցս

304

ԱՒԵՏԱՐԱՆ

Վենետիկ 111, Սարգիսյան, Ցուցակ Ա, էջ 494—496

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Մաշկևոր և Անդրեասանց վանք

ա

Փառք ամենասուրբ Երրորդութեան Հաւր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն յաւիտեան յաւիտենից, ամէն։ Գրեցաւ սուրբ Աւետարանս որ է հրամանք փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ամէն։ Փառք եռաՀիւսակ եզակի, անբաժին և անորիշ միասնական Սուրբ Եր-

---

Աստուածաշնչիս եւ ծաղկաւէտ բուրաստանիս աստուածային տառիս զՄարգարէ, վարդապետն եւ զծնաւղս իմ զՍտեփանոս քահանայ, եւ զմայր իմ զՀռիփսիմէ, եւ զեղբայրն իմ զՍանուկ երէցն եւ զդեռաբոյս որդին իւր զԱյիկսիանոսն, որ ետուն սոքա Ը (8) ֆլորի յԱստուածաշնչիս գինն։

Արդ, ստացա զսայ ի վայելումն անձին իմոյ, եւ յիշատակ ծնողաց իմոց, եւ դէռաբուս կրաւնաւորաց իմոց, հոգւոյ որդեաց իմոց Առաքելին, եւ Մա[ր]կոսին, Մեսրոպին եւ Յովհաննիսին, Կիրակոսին եւ Պետրոսին եւ Բաղդամին, եւ մղտեսի Փողոցին, Դ (4) ֆլորի նայ երետ ի գին գրոցս։

Արդ, աղաչեմ զամենեսեան՝ զընթերցողսդ և զաւրինակողսդ և զհանդիպողսդ Աստուածաշունչ տառիս, յիշեսջիք յաղաւթս եւ մեղաց թողութիւն խնդրեցէք մե[ղ]սաթաւալ անձինս Մարգարէ վարդապետ, եւ ծնաւղաց իմոց, եւ Աստուած թողցէ ձեզ զանցանս ձեր, ամէն։

Եւ այսչափ գիրք է, զոր ժողովեցի ես Մարգարէ վարդապետս ի վայելումն անձին իմոյ, եւ ոչ լուա իմաստուն Սողոմոնի որ ասէ. Զգուշ լեր ի ստանալոյ զգիրս բազումս։

Նախ՝ զԱստուածաշունչս,
Երկրորդ՝ կէս Աստուածաշունչս,
Երրորդ՝ Արարածոց մեկնիչն,
Դ. Երկոտասանից Մարգարէից մեկնիչն,
Ե. Եսայու մեկնիչն,
Զ. Պաւղոսի մեկնիչն,
Է. Կաթողիկէքն, Աղաւթքն, Տեսիլն, էր ընդ եղբարս, ձեռամբ իմով գրեալ։
Ը. Բուն Լուծմունք, ձեռամբ իմով գրեալ,
Թ. Ղուկասոյ մեկնիչն,
Ժ. Դիոնէսիոս,
ԺԱ. Հարցողացն,
ԺԲ. Բնութեանցն,
ԺԳ. Ասացուածոց Գիրքն,
ԺԴ. Հարցմունքն,
ԺԵ. Սաղմոսի քաղուածուն,
ԺԶ. Մեր ձեռամբ գրեալ բուն Քարոզգիրքն,
ԺԷ. Փոքրն,
ԺԸ. Աւետարանին քաղուածուն եւ Յոբայ,
ԺԹ. Եսային, Առակսն եւ Պողոսն,
Ի. Պարապմանցն, Առ Որսն, Վեցաւրէիցն, եւ Տումարն, եւ Քերականն,
ԻԱ. Արտաքին քաղուածուն եւ իւր Բնաբանն, ձեռամբ իմով գրեալ,
ԻԲ. Նուրբ Դրանաց Լուծմունքն։

Այսչափ դրանք ժողովեցի եւ նստայ լռութեամբ, զի առանց հանելու լռեալ են պատասխանիքն, եւ առանց խնդրելոյ փակեալ են ողորմութիւնքն, եւ առանց դեդերողաց հեռացեալ է իմաստութիւն, բստ այնմ հեռացի ի խորհրդոց անմտաց։

րորդութեանն և միաբան տէրութեանն՝ Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և յանզրաւ յաւիտենին, ամէն։ Զաստուածապատում և զերկնաձիր, զմշտընջենաբուխ, և զյաւետախաղաց շնորհս Հոգւոյն Սուրբ, եռերշանիկ սուրբ և երանելի աւետարանիչքն, և զմայլեալք անմահական բաժակաւն, կարգեցան և մատռուակք երկնահոս և կենդանաբուխ վտակացն, արբուցանելով տիեզերաց զանմահականն զայս բաժակ, որով արբեալք և անմահացեալք յաւէրժ կենդանութեամբ, ուստի և անստիւրելի պահեցին զհաւատոյ խոստովանութիւն Սուրբ Երրորդութեանն, յերիս անձնատրութիւնս և մի բնութիւն և աստուածութիւն ընդ սերոբէսն զեռահիւսակն գեղապարեալ սրբասացութիւն։ Ի բաց կացուցանելով ի հեթանոսական բազմաստուած մոլորութենէն և ի հրէական նուազութենէ, և ընդ ուղեղն առաշնորդեալ արածելով ի դալար վայրի բնակեցուցեալ, և ի ջուրն հանգըստարար մակաղեալ. մուծանելով յանքոյթ և ի խաղաղ հանգիստն, յաստուածակերտ և.յանխմանալի խորանն՝ եզուտ և մակեղուտ գործառնութեամբ։

Արդ այսմ ամենայն բարեացս և որ նման սոցին պատճառ և առիթ են մեզ աւետարանիչքս, յեղեմական հայրաշարժ աղբիւրէն՝ քառավտակ բղխմամբ, զսեռս բանականաց, այսինքն զիմանալին սգալովն զովացուցանելով մշտահոս վտակաւք ըստ Տեառն, թէ Որ ըմբէ ի ջրոյն զոր ես տաց, մի ծարաւեսցի յաւիտեան։

Որում և ես անպիտան կրա[նաւ]որս և յետին ի դասս մանկանց նոր Սիոնի՝ Սերուեսն ցանկացող եղէ աստուածախաւս մատենիս, և կենսաբաշխ սուրբ Աւետարանիս, ստացա զսա ինձ և խմոցն գանձ երկնային, ճանապարհ առ Հայր մտին, բանալի կենացն դրան, այլ և վերակացու ի կենցաղումս, առաջնորդ առ մշտակայն՝վերակացու կենաց. և հանգիստ ծնողացն մերոյ սուվաւ ի Քրիստոս փոխելոցն, և մեզ ի նոյնն հասանել, զսա ունելով պարծանս ի փառս Քրիստոսի ըստ մարգարէականն ձայնի, երանելով զունողսն զաւակ ի Սիոն, և յԵրուսաղէմ ընտանի, որ ճշմարտապէս զայս գուշակէր ի հնումն։

Բայց գրեցաւ սա ի նշա[նա]տոր ժամանակի, վասն զի անոպա գործաւք մեր ի բարկութիւն շարժեցաք մեզ զանբարկանալին բնութիւն, քանզի շարժեալ սասանեցաւ երկիրս մեր առ հասարակ, նաև բաղում գաւառք այլազգեաց. և այս ոչ ի մի ժամանակս, մինչ զի անապատացան բազում շինանիստք, քանզի դղեակն կոչեցեալ Սարաւանիքաւր՝ ընդ մէջ հերձեալ յերկիր կործանեցաւ՝ զամենայն բնակիչսն ծածկելով, բաց ի սակաւուց, նաև Համուսն անուանեալ զմայր սիրելի որդւովք և որ մերձ էին՝ կորոյս տարաժամ վախճանաւք։ Տաց(՞) բանիս և որ կարի վշտալին է, քանզի գերահռչակն ուխտ Արքակաղինն անուանեալ և որ ընդ վիճակաւ նորա, բազում ազաւթանոցք և մենաստանք առ հասարակ ի վայր խազաղացին։ Եւ ան[դ էր] տեսանել արժանի ողբոց պատահումն, և լսել ականջաց դառնութիւն, վասն զի ոմանք հեծին, և այլք հառաչ, կէսք ի ճիչ, այլ[ք] յողբս, և ով ոք կարասցէ պատմել զանպատմելի վիշտն, որ եհաս նահանգիս Կիւլիկեայ, աւերումն եկեղեցեաց, քահանայիցն կորուստ, ժողովրդոց սպառումն, և ամենայն հասակի սուգ ան-

մխիթար։ Եւ զայսոսիք մեք իսկ տեսաք աչաւք մերովք. իսկ առաջակայն Տեառն գթութեան և ողորմութեան յանձին, վասն ղի յոյժ ղարհուրեալ եմք։

Բայց եղև այս ի ժամանակս գարնայնոյն, յամսեանն մայիս, ի թագաւորութեան բարեպաշտ արքային Հեթմոյ, և յիշխանութեան որղոյ իւրոյ Լեւոնի, այն ինչ նորընծա ի պարոնութիւն, և ի հայրապետութեանն տեառն Յակոբայ, յորում էր թիւ տումարին ՁԺՀ (1269)։ Արդ ի սոյն ամի եղև սկսեալ աստուածախաւս այս մատեան ի մեծանուն եղբայրանոցն Մաշկատար կոչեցեալ՝ առ դուռն Սուրբ Կարապետի, եւ աւարտեցաւ ի գերահռչակ ոստս Անդրիասանց՝ մերձ յանառիկն դղեակ Բարձր անուն կոչե[ցե]ալ, յառաջնորդութեանն տեառն Սիմէոնի և այլ միաբան եղբայրութիւնս, ի դուռն մաւրս Սիոնի և կենսակիր և աստուածընկալ Սուրբ Նշանիս։

Արդ, աղաչեմ զաստուածասէր հարսդ և եղբարս, որք պատահէք սմա ընթերցմամբ կամ գաղաբար առնուլ՝ զի ի ստոյգ աւրինակէ գրեցաւ մեծաւ աշխատանաւք, յիշեցէք զվերոյասացեալ պատուական քահանայն և զիս, [ի] Քրիստոս հանգուցեալ ծնողսն մեր և զազգատոհմն և զկարևոր բարեկամսն...

Դարձեալ աղաչեմ զաստուածահաճոյ հարսդ և զբրիստոսասէր եղբարսդ, ես տառապեալ Գրիգոր նուաստ կրաւնաւորս, զի որք պատահէք աստուածաբարբառ Աւետարանիս, բարի յիշման արժանի առնէք զմեզ, և զառ Քրիստոս գնացեալ ծնողսն մեր և զեղբարս, զի և մեզ ողորմեսցի ամենաբարի Տէրն։ Իսկ թէ յաւելումն կամ պակասումն կամ խոշորութիւն գրիս՝ ոչ իցէ ըստ կամաց, խնդրեմ զի սիրով ուղղէք զթերին, քանզի այսչափ էր կար մեր, և ոչ թէ ի ծուլութենէ, մանաւանդ զի անտուն, անտեղ շրջէաք, ոչ ունելով տեղի հանգստեան։ Եւ որ զմեզ սրտի մտաւք յիշէ ի բարին, և ինքն յիշեալ լիցի յողորմութիւնն Աստուծոյ, որում փառք յաւիտեանս, ամէն։

Բ

Գրիչ՝ Հեթում–Ստեփանոս

Ջնուաստ Հեթում Ստեփանոս, սպասաւոր բանին Աստուծոյ, և զծնողսն իմ յիշեցէք ի Տէր, որ զսակաւս գծեցի, ո՛վ սուրբ եղբարք իմ։

Գ

Գրիչ՝ Յովճաննէս
Վայր՝ Գլակա Վանք

Փառք Աստուծոյ անոահմանին ի բոլորից արարածոց, ամէն, ամէն։

Ես տրուպս ամենայն վանականաց Սաեփաննոս կրաւնաւոր ըստացա գնոյ արծաթոյ յարդար վաստակոց ագարակս՝ աստուածայնով առլըցեալ գանձիւ, որոյ ճարտարապետ և արարիչ Աստուած է, և աւանդեցի ի տաճար Սրբոյ Կարապետին՝ ի վանս Գլակայ՝ յիշատակ ինձ, և ծնողաց իմոց, և ամենայն ազգականաց։ Ոչ ոք ունի իշխանութիւն ձեռնարկել ի հանել զսա, ոչ աւտար և ոչ ազգականաց, առաջնորդ կամ իշա-

խանաւոր մի իշխեսցէ /// և քակել զյիշատակս մեր, զի մի քակեսցի յա-
մենաղաւր աջոյն Քրիստոսի Աստուծոյ, պատճառաւ մի ելցէ սա ի
Սրբոյ Կարապետէն, և ուր հանդիպեսցի՝ մի իշխեսցեն պահել ի զատ
ի Սուրբ Կարապետէն։ Եւ որ ոք զանց առնէ զբանիւք մերովք և հանել
չանա կամ զգիրս չնչէ, ինքն չնեսցի ի գրոյն դպրութեան կենաց, և ընդ
Կայենի և ընդ Ղամեքի զեօթնեկին և զեաւթանասնեկին եւթից վրէժս
լուծցէ յայտմ և ի հանդերձեալն։

Բայց եղև այս ի յառաջնորդութիւն տէր Գրիգորի հեզահոգի արհե-
պիսկոպոսի և եղբաւրորդւոյ իւրոյ տէր Յովաննէսի, որ են սոքա առա-
ջին շինողք սուրբ ոսխտիս։ Արդ որ ոք հանդիպեսցի սուրբ Աւետարանիս
զինչ և իցէ պատճառաւք կամ աւկտութեամբ, աղերսեմ և յերեսս անկա-
նիմ անմոռաց ասել. զերանի որում թողութիւնն և զՔրիստոս Որդի Աստու-
ծոյն։ Եւ յոքնամեղ Յովհաննէսի, որ նշանագրեաց զԱւետարանս և զյի-
շատակս գրեաց՝ ասացէք մի Տէր ողորմեաւ։

305

ԱԽՏԱՐԱՆ

Երևան 4891

Գրիչ՝ Ստեփանոս
Վայր՝ Փոխրընդայ վանք

ա

248բ Փառք... Որ նոյն ինքնաբուն իւրով զաւրութեամբն զորացուցց զտկա-
րութիւնս իմ, որ սկսեալ յանգ ելաւ գրութիւնս լուսայարմար հաւաքումն
սուրբ Աւետարանիս, որ ի չորիցն սրբազանից բոլորեալ բարբեցաւ յա-
րանցն հոգեկիր աւետարանագրաց Սաթէոսի, Մարկոսի, Ղուկասու և
Յովհաննիսի, որ ըստ չորիցն ազենական գետացն մշտահոսեալ ընդ չո-
րեքծագեան ոլորտս տիեզերաց զաւ ի յերկրէ ի չորիցս կացեալ կենդան-
ւոյ նիւթականաւս, և սորին կենդանածնութեանս լուսաւորի միշտ աս-
տուածային լուսով, որ է աւրհնեալ յաւիտեանս։

Յիշատակարան գրոցս։

Յամի եւթնհարիւրերորդի տասներորդի ութերորդի (1269) թուաբե-
րութեանս Հայոց, յամս աստուածազգեցեալ սուրբ և ընդրեալ դիտապե-
տի և առաջնոր[դ]ի տանս Թորգոմայ տեառն Յակոբայ, ի թագաւորու-
թեան Հեթմոյ և յիշխանութեանն անդրանիկ որդւոյ նորա Լեւոնի աս-
տուածասիրի, զորս տացէ Աստուած մեզ անսասանելի և հաստատուն
բազում ժամանակաւք։

Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս գլուխն Մաթիոսի և Մարկոսի ի
ձեռն ումէմն, զորոյ ոչ գիտեմք զանուն, զորոյ Աստուած, որ գիտակն է,
ողորմեսցի նմա յիւ[ր] գալստեանն, ամէն։ Իսկ գլուխն Ղուկասու և Յո-
հաննու իմոյ նուաստ և անարհեստ գրիչս յանձն առեալ գրեցի, ի խնդրոյ
սրբազան քահանայի Մարտիրոսի, ի յիշատակ իւրոյ ելից յաշխարհի։

Գրեցաւ ի գաւառիս Կիլիկիայի, ի սահմանս աստուածապահ դեղե-
կիս Վանկայի, ի վանս որոյ անունն Փոխրընդայ կոչի, ընդ հովանեաւ

Սուրբ Ջաւրաւաբացս և Սուրբ Նշանացս*, ձեռամբ մեղաւորիս Ստեփանոսի:

Արդ, աղաչեմք զմանկունս եկեղեցւոյ սրբոյ, որք ընթեռնոյք և լուսաւորիք, և որք լսէք և շահիք ի հոգևոր փարթամութենէ սորա, և ոչք
249բ աւրինակէք, յիշեսջիք սրտի մ||տաւք ի մաքուր յաղաւթս ձեր ի Տէր Յիսուս Քրիստոս և յԱստուած Հայր և Սուրբ Հոգին զՄարտիւրոս քահանայ և զծնաւղս իւր, և զաղդատոհմն նորա, որ ի քրտանց մարմնոյ իւրոյ ստացաւ զսա գանձ անկողոպտելի հոգւոյ իւրոյ:

Յիշեսջիք և զԿոստանդին սրբաւէր քահանայ և զծնաւղս և զազգատոհմ նորա, որ առիթ և յորդորիչ եղև գրոյս: Եւ ես յերեսս անկեալ աղաչեմ զամենեսեան զընթերցողդ և զլսողք՝ իբրև հայր որդւոյ գթալ ի յիմ նուաստութիւնս և անմեղադիր լինել խոշորութեանս և սղալանացս, զի մեր կարն այս էր և Աստուած է անխաբատ: Եւ մարդ որ պարտապան լինի բիւր քանքարոյ և ամենայն Աստուծոյ պատուիրանացն արտաքոյ գտուի, զի՞նչ զարմանք է թէ և յարուեստ թերի գտուի: Ապա յուսացեալ յանբարկանալին Աստուած, զի ձեռն միածնի Որդւոյ իւրոյ Յիսուսի Քրիստոսի ձեզ և մեզ ողորմեսցի: Այլ աղաչեմ զամենեսեան, զի ոչ հարևանցի, այլ սրտիւ հառաչմամբ յիշեսջիք զիս, և ծնաւղսն իմ, և զեղբարքն իմ զԴրիգոր, զԽոռեն, զԹոռոս, և զԿոստանդին, և զքուերսն իմ՝ զփոխեցեալքըն առ Քրիստոս, և Աստուած ձեզ պարգևէսցէ, զս[ր] մեզ պարգևէք:

ՉՍիոն յիշեցէք, որ ի նիւթս աւգնական [եղև]:

Բ

190ա* Եղբա՛յր, ի երկու կէտն հանգիր, և ի ստորն լուր շունչ առ, մի արագ իլիր, և ուր քաշն դրած է՝ անդր քաշէ:

Գ

Գրիչ՝ Ջաւրավար

71ա Յիսուս Քրիստոս, ողորմեաց Անդրեաս քահանայի, և ծնողաց իւրեանց, և եղբարց**, և Վասլին, և Պապկանն, և Մրտերին, և Ներսիսին և իւրեանցն ամենի, ամէն: Եւ ինձ՝ բազմամեղ գրչիս Ջաւրավարիս***, և ծնաւղաց իմոց, և եղբարց առ քեզ հանգուցելոց, և քեզ փառք:

---

* Գրված է «նշանաց»:

** Մի տող ազատ է թողած:

*** Գրված է «Ջաւրվ»՝ համառոտ ձևով, այդ պատճառով երկրորդ գրիչ Ստեփանոսը անհայտ է համարում առաջին գրչին: Ջաւրավարից 21 էջոմ միակ զարդագրված «է» տառի մոտ գրված է. «գրողն է հանել»:

306

ԱԻԵՏԱՐԱՆ

Երուսաղեմ 2660

Կապող՝ Սիմեոն

286բ Յետ ամի ՉԺԸ երրորդի (1269) մեծ թուականի, դարձեալ կապեցաւ [ձեռամբ] Սիմեոնի մեղապարտի։ Աղաչեմ յիշել և զիս, և զիմսն հա-մարէն, և զՍարգիս քահանայ, որ առատն է ամենեցունցս պարգեւէ և նման։ Փառք յամենեցունց արարածոց։

307

ՅՈՎՀԱՆԷՍ ԱՐՔԱԵՂԲՕՐ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան 345

Գրիչ՝ Բարսեղ եպիսկոպոս

ա

42ա Ջստացող տառիս զտէր Յոհաննէս րաբունի՝ զեղբայր թագաւորին յիշեսջիք ի Տէր, և զծնաւղն նորին՝ ամենայն զարմաւք իւրովք, ո՛վ աստուածասէր ընթերցողք։ Ընդ նմին և յանպիտան գծաւղս Բարսեղ, և զնաւղն իմ, և զամենայն հաւատացեալս ի Քրիստոս. և Աստուած յիշողաղացդ ողորմեսցի, և նմա փառք յաւիտեան, ամէն։

բ

51ա Ի յայսմ ամի, որ է թուականութեանս ՉԺԹ (1270), մեծ թագաւորն Հեթում ամենայն քրիստոնեից յԱստուած փոխեցաւ, և եթող մեծ սուգ և տրտմութիւն ամենայն Հայոց, որոյ Տէր Աստուած ընդ իւր սուրբ թագաւորս դասեսցէ զհոգի նորա, ամէն։ Եւ է յամսոյս հոկտեմբերի ԻՀ (29), և աւրն է երեքշաբթի*.

գ

90բ Ջստացող տառիս զտէր Յոհաննէս րաբունի՝ եղբայր արքային Հեթմոյ, յիշեսջիք ի Տէր, և զամենայն հաւատացեալս ի Քրիստոս, և մեղապարտ գծողս Բարսեղ, և Աստուած յիշողացդ ողորմեսցի, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

դ

145ա Սուրբ մարգարէիս բարեխաւսութեամբ և ամենայն սրբոց քոց, Քրիստոս Աստուած, ողորմեա ստացողի տառիս տէր Յոհաննիսի րաբունոյ՝ եղբաւր արքայի, և ամենայն զարմից իւրոց՝ կենդանեաց և ննջեցելոց, և ամենայն հաւատացելոց ի Քրիստոս՝ կենդանեաց և հանգուցելոց։ Աղաչեմ յիշել և զմեղապարտ գծողս Բարսեղ և ծնողս իմ, և Աստուած յիշողացդ ողորմեսցի։

Յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս թագաւորն Հեթում, որո հանգիստ պարգևեսցէ Քրիստոս Աստուած և ընդ սուրբ թագաւորսն դասեսցէ զհոգի նորա։ Եւ յաջորդէ զաթոռ նորին որդի իւր Լևոն՝ յոյժ բարեպաշտ

---

* Այստեղ մի տող՝ մաքրել է Արքահեղբայրը և գրել «Ստացողիս և ուղղողիս Յոհաննէս եպիսկոպոսի թողութիւն տացի Քրիստոս»։

և աստուածասէր և քաղցր առ ամենեսեան, որոյ ընդ երկայն աւուրս պահեսցէ Քրիստոս Աստուած, և զաւրացուցէ ի վերայ Թշնամեաց խաչին Քրիստոս, և ամրածածուկ աջովն իւրով հովանի լիցի նմա մինչև յաւիտեանս։ Եւ Քրիստոսի մարդասիրի փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ե

162ա *Զստացող տառիս զտէր* **Յոհաննէս** *րաբունի՝ եղբայր արքային* **Հեթմոյ**, *և ծնաւղսն իր յիշեսջիք ի Տէր։ Ընդ նմին և զմեղապարտ գծողս* **Բարսեղ** *և ծնողսն իմ, և Աստուած զձեզ յիշէ։*

Գ

179ա
Տէր և փրկիչ ազգի մարդկան,
Զքեզ աղաչեմք մեք անխափան,
Ի սոսկալի քում գալստեան
Յիշեա զծառայքս քո սնարժան։
Զի մեղուցեալ եմք յոյժ բնական,
Եւ զարհուրեմք յաւր գալստեան,
Գոչմամբ փողոյն ահեղական
Առ քեղ կոչես զազգս մարդկան։
Զմեզ ազատեայ սիրող մարդկան
Զերծոյ ի հրոյն անշիջական,
Աղաչանաւք մաւր քո գթական
Եւ մկրտչին քո սուրբ հայցման,
Եւ ընդ արդարոցն միշտ անխափան
Քեզ Երգեսցուք զփառս յաւիտեան։
Զստացող տառիս միշտ յիշեսջիք
Որք ընթերցողք եք սուրբ գրիս,
ԶՏէր **Յոհաննէս Արքաեղբայր**
Եւ զազգայինս իւր միաբան։
Եւ որք յիշեք զմեզ ի բարի
Աստուած և զձեզ ողորմեսցի Ամէն։

Է

244բ *Զտէր* **Յոհաննէս** *րաբունի՝ եղբայր Թագաւորին* **Հեթմոյ**, *և զծնողսն իւր,. և զամենայն հաւատացեալս ի Քրիստոս յիշեսջիք ի Տէր, ընդ նմին և զմեղապարտ գծողս* **Բարսեղ**, *և զծնաւղսն իմ, և Աստուած յիշելոցս և յիշողացդ ողորմեսցի և նմա փառք յաւիտեանս, ամէն։*

Ը

284բ *Զստացող տառիս զտէր* **Յոհաննէս** *րաբունի և զծնողսն իւր յիշեսջիք ի Տէր, ով սրբասնեալ ընթերցողք, և զմեղապարտ գծողս,* **Բարսեղ** *և զծնողսն իմ, և Աստուած զձեզ յիշէ, և նմա փառք յաւիտեանս, ամէն։*

Ի

331բ *ԶԱռաջին Եզրասն դրեցի և զԵրկրորդս յաւժարեցայ ի կարգ այլ աստուածաշունչ բանիցդ հաւասարել, որ անկարծիքս է, զի մի իւիք թերի մնացէ ի բանից, որք ունին զվկայութիւն ի վերայ իւրեանց յառաջնոց մեր սուրբ հարցն, ե զի նոքա գրեցին Եզրաս Առաջին և Երկրորդ։ Ընդ Առաջնոյն ե Երկրորդս հիւսեցաւ հրամանաւ տեառն Յոհաննիսի բաբունոյ և ձեռամբ մեղապարտի Բարսեղի, ի մխիթարութիւն ընթերցողացդ ե ի պատիւ և ի փառս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ լրումն է աւրինաց և մարգարէից, եւ գլուխ եկեղեցւոյ իւր սրբոյ, յորոյ տրուպ անդամս ի մարմինն աճեցուցի զայս ի տաճարի սուրբ՝ ծառայս անպիտան, զպարտս պաշտաման, յորոյ լրումնս աւրհնութիւն և փառք նորին անուան, յայժմուս և յաւիտեան, ամէն։*

Ստացաւղ տալիս զտէր Յոհաննէս և ըծնաւղսն իւր յիշեսջիք ի Տէր, ոյք ընթեռնույք զաստուածախաւս մատեանս։ Ընդ նմին և զամենայն հաւատացեալս ի Քրիստոս, և Աստուած զձեզ յիշէ, ամէն։*

Ժ

316բ *Առաջին ասելով զգիրսս՝ Երկրորդ նշանակէ զգիրս զկնի սորին զոլ Եզրի, որ և կայ առ մեզ, թեպէտ և ոչ յայս կարգս։ Գիրս մի այլ Եզրի, յորում տեսիլք և խաւսակցութիւն նմա և հրեշտակի՝ առակաւք և աւրինակաւք և ի կատարումնն՝ թէ շնորհս առ Եզր, և զամենայն գիրս, որք եղծած ի գերութեանն, նորոգապէս վերստին խաւսեցաւ և գրել ետ դպրաց յարտաքին դաշտ։ Բայց ոչ կարացաք ստուգել, թէ յառաջին հարցն ընկալեա՞լ եղև այն ընդ այլ աստուածաշունչ գիրսս, բայց միայն, զի Եւսեբի յիշէ զԻրէնիոսի խաւսս, ասացեալ թէ՝ Զի՞նչ զարմանալի է այդ, որ յեւթանասնիցն թարգմանեցան գրեանքդ հաւասարք, ուր զի և ի ձեռն Եզրի զգիրս սուրբս, որք կորեան ի գերութեանն, վերստին նորոգեաց ի Բաբելովն: Եւ այս գրոց սրբոց նորոգմունք յայն Եզր յիշի և ոչ յայս։ Սակայն այլ բանքն յահուրք են և արհաւիրք, և տկար մտաց ի կարծիս, սակայն Աստուծոյ ամենայն ինչ դիւրին է, այլ՝ես զի չգտի հաւատարիմ վկայութիւն վասն նորին՝ ի գրոց հարցն մերոց, և ոչ յԵւսեբայ, բայց միայն զայդ բանդ։ Եւ զի յաւրինակս ուստի զԱռաջինս գրեցի, ոչ էր եդեալ և այն Երկրորդ ըստ կարգի։ Վասն այսօրիկ չհամարձակեցայ ես զնոյն անձամբ անձին դնել ի շարս Աստուածաշունչ գրոցս հիւսման, զմտաւ ածեալ, զի թէ զՅայտնութիւն Յովհաննու ի կարծիք ձգեցին վասն այսպիսի զարհուրական բանից յետ նորոյ շնորհացս, որչա՞փ զայն, որ ևս առաւել է, նա և անհաւան է, թե ամենևին եղծան գիրք Աւրինացն և Մարգարէիցն ի Բաբելովն։ Զի գոյին և ի Բաբելովնի որք հաճոյք գտան Աստուծոյ նոքաւք դաստիարակեալք։ Եւ որպէս յայտ է ի Դանիէլէ կարգք ունէին և դատաւորք ի Բաբելովն, որք աւրինակաւք խրատէին, այլ ճշմարիտն է Աստուծոյ գիտելի։*

* Գրված է Երկրորդ Եզրասի վերջում։

Ջստացաւղ տառիս զտէր Յոհաննէս և զծնաւղսն իւր յիշեսջիք ի Տէր, և զմեղապարտ գծողս Բարսեղ, և զծնողս իմ, և Աստուած զձեզ յիշէ, ամէն*։

ժա

338բ Հայեաց ի հրաշս որ պատմեցան,
Ո՛վ ընթերցող ի Յեսթերայն,
Զի ի յուսոյն ունայն չդարձան,
Որք աղերսիւ յԱստուած յեցան։
Իսկ մեր միջնորդ խաղաղութեան
Յիսուս Քրիստոս Հաւր ծոցոյ բան
Լիցուք ի նոյն յոյսն ապաստան
Եւս ընդունել շնորհ աւդնութեան։
Որոյ նուէր զկեանս մարմնական,
Տուեալ ի վարս ճգնութեան,
Առնումք մեք Թագ արքայական
Ի հանդերձեալ կեանսն անվախճան։
Ջտէր Յոհաննէս րաբունական
Մաղթեմ յիշել միշտ անխափան,
ԶԲարսեղ ծառայ և անպիտան
Որ եմ մեղաւք անյագական,
Նա և փրկիչն ազգի մարդկան
Զեր ղորոմի յաւուր ծագման,
Եւ նմա փառք այժմ յաւիտեան, ամէն։

ժբ

338բ Ջստացող տառիս զտէր Յոհաննէս րաբունի յիշեսջիք ի Տէր և ղծնողսըն իւր։ Ընդ նմին և զՅոհաննէս սրբասնեալ քահանայ, որ զաւրինակս եւս։ Աղաչեմ յիշել և զսուրբ ուխտիս սպասաւորն՝ երջանիկ կրաննաւորն զԲարոս մառնապանն, որ բաղում սպաս տարաւ մեզ և հոգւ։ Աստուած հատուցանէ իւր, և Աստուած յիշողացդ ողորմեսցի։

ժգ

487ա Որք յայս հայիք կենդանագիրս նմանութեան,
Նոյն և մտաւք ի հսպց և փորձս խորհնըս բան։
Զոր ի Յորայ առ բարեկամն, որք հուպ նստան
Եւ զնոցա պատասխանիսն խստութեան։
Ծանիք զՅովբ ի ճշմարիտ արդարութեան
Յորժամ բնութիւնն մնաց անխմոր չարին սերման։
Զոր արարիչն եթեր վկայ իւրն ստեղծման,
Առ սատանայ, որ զմեզ քարշէ յախտս զանազան,
Իսկ նա զսուտն ածէ ներհակ ճշմարտութեանն

* Գրված է Առաջին եզրասի վերջում։

Թէ ոչ բնութեամբ, այլ է ըստ քոյդ մեծ աւգնութեան,
Թողու Աստուած ի նա զմարմինն անաւգնական,
Նույն և զմարմնոյն պէս պէս ստացուածըք մեծութեան։
Այլ ըղՀոդին ասաց ոչ տամ քեզ աւթարան,
Անդ մի խառնես դու զխորհուրդս խռովութեան։
Նստեր ապա սայ ի տանջանքս մարմնական
Եւ էր հոգւովն արթուն ի լույսն գիտութեան։
Եկին ի ձև այս բարեկամքս վշտակցութեան,
Խառնեալ թունիւք սատանայի մոլորութեան։
Ասեն թէ՝ ես դու ի տանջանսդ մեղաց փոխման,
Այլ և ստիպէ կինն իւր ասել բան անզգամ։
Սա համառի թէ եմ արդար ըստ իմս բնութեան,
Եւ ճշմարիտն է յիմս անսուտ վկայութեան։
Եւ այլ մարդիկ, որ մեղանչեն ոչ ըստ բնութեան,
Այլ ի տոռանց սատանայի ի նոյնն գան։
Զայս ի Յոբայ նախ դուշակեալս խորհրդական
Յիւրն յայտնեաց Քրիստոս մարմինն անախտական։
Եւ ամաչեալն աստ սատանայ իւրն ստութեան
Գտաւ պատժեալ ի Քրիստոսէ մարդկան փոխման*։

ԺԴ

378ա Զպատմութիւն բանիցս փորձանաց արդեամբք ընդունողքս ի համազգոյ և ոչ յաւտարասեռէ այս ամ ի գլուխ աւարտեալ մխիթարեալ, Քրիստոս, ի յաւձևանք երկնից քոյ արքայութեանդ, ո՛վ առատապարգև Տէր, գի հածեալքս ի նանիր մխիթարեալք յարքայութիւն քո փառս վեր առաքեսցուք բարեգութ քում մարդասիրութեանդ յաւիտեանս, ամէն։

ԺԵ

555բ Զստացող սուրբ տաճիս և զուղղող Յոհաննես եպիսկոպոս և զնուաստ Բարսեղ եպիսկոպոս յիշեսջիք ի Տէր։

ԺԶ

579 Տարտամս յիմաստս սուրբ գրոց,
Որովք սնայ յարբունս տիոց,
Ահա կարաւտ սոցին համոց,
Գտայ զեբեալ յաւտար հոգոց։
Ուստի հարեալ սրտիս ի խոց
Եւ տոչորմանս, որ կայ յիս բոց,
Զայս սրսկեմ կաթս անձրևոց

* «Գիրք Յովբայ» գրված է էջի երկրորդ սյունակում, իսկ այս՝ առաջին սյունակում, որից հետո նկարված են Հոբը՝ աղքատ, կիսամերկ, պատառոտված շորերով՝ գլխին լուսապսակ, իսկ դիմացը երկու ծեր և մի երիտասարդ։

Ջձեռահիսս սուրբ գրոց։
Միթէ գնացիւք այսոց գետոց
Իմ զովասցի ծարաւս ոգւոց
Եւ սփոփեսցի յիւրոց ցաւոց
Սրբել տաճար Տեառն աւթանոց։
Այսու յուսով յերկս վաստակոց
Կամ ի յոքունց մէջ ի հոգոց,
Զի արծարծեալ ճրագիս իմ բոց
Մի խրթնասցի յաւտար հողմոց։

ԺԷ

644բ Աւրհնութիւն քեզ գոհութեամբ և փառք երկրպագութեամբ Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ խաւսեցար ի ճառս գրոց սրբոց քոց մարգարէիցս զխորհուրդս քո հրաշալիս։ Ողորմեա ստացողի աստուածախաւս մատենիս տէր Յոճաննիսի րաբոյնոյ, և ծնաւղաց իւրոց, և ամենայն զարմից՝ կենդանեաց և հանգուցելոց։ Ընդ նմին և մեղապարտ գծողիս Բարսեղի, և ծնաւղաց իմոց, և ամենայն հաւատացելոց ի Քրիստոս, և այնոցիկ, որ սրտի մտաւք խնդրէն զթողութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

ԺԸ

669բ Սուրբ աւետարանիչ, բարեխաւսեա առ Քրիստոս վասն ստացողին՝ տեառն Յոճաննիսի*, և գծողիս, և ծնողաց մերոց։

Ով սուրբ առաքեալ զտեառնագին հոմանուն ծառայս չիշեա սուրաչի Քրիստոսի և զիմն**։

ԺԲ

Ստացող, ուղղող և մի մասի գրիչ՝
Յովհաննէս Արքաեղբայր

486ա Զեղկելիս ոգի զՍիրաքայս գրող և զտառիս ստացող մեղապարտ ծառայ Աստուծոյ և ամենայն ծառայիցդ նորա զՅոճաննէս եպիսկոպոս, զեղբայր բարեպաշտ արքային Հայոց Հեթմոյ, և զորդիս մեծին Կոստանդեայ, աղաչեմ զվայելողսդ սորա և ղժառանգողսդ, և որք լուսաւորիք սոքաւք, չիշել սրտի մտաւք զմեզ ծնողաւքն մերովք և համայն ընդանեաւք և երախտաւորաւք՝ թողութիւն և ողորմութիւն և հանգիստ գտանել ի Քրիստոսէ Աստուծոյ այժմ և ապագային, զի կարաւտ եմք ձերդ· բարի չիշման, որպէս և Տեառն ողորմութեան։ Եւ որ առատն է ի բարիս՝ Աստուած, մեզ և ձեզ և ամենեցուն ողորմեսցի, որ է աւրհնեալ,

---

* Գրված է Հովհաննու ավետարանի նկարի վերևում և ներքևում։ Արքաեղբայրն իր անունը ավելացրել է համառոտագրված։

** «Իրք կնոշն շնացելոյ» հատվածից հետո գրված է. «Զայս շնորհ Տեառն սքանչելեաց Նաւաբի ժամանակագրէ, թէ ի հեբրայեցի Աւետարանէ անտի ընկալաւ եկեղեցի։ Վասն այնորիկ և առնքեր պատշաճ համարեցաք կարգել ընթացից Յովհաննու Աւետարանիս, զոր չիշատակէ յերորգ գլուխեան լթ գլխին բանիւ Պապիայ» (714ա)։

գովեալ, բարեբանեալ և երկրպագեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Թողութիւն շնորհեսցէ Քրիստոս Աստուած նեղողացն զմեզ, և տապնապողաց, և բամբասողաց, և չարակամաց, ամէն։

ի

667ա Ով քրիստոսասէր եղբարք մեր, թողութիւն մեղաց և ողորմութիւն ողո բազմամեղիս Յոհաննէս եպիսկոպոսիս և իմոցն հայցեցէք ի Քրիստոսէ, զի յոյժ փափաքմամբ եւու գրել զԱստուածաշունչքս, ի մեծ աշխատութեամբ տաժանեցա յուղղելն ի վաէլս եկեղոցդ։ Բայց չէ ի թվի ուղեղ յինչ ինչ իրս վերագրեալ համարքդ*։

իա

Ի տեղիս տեղիս չէ ի թվիլ ուղեղ. զՅոհաննէս եպիսկոպոս յիշեցէք**։

իբ

786բ Ջմեղաւք և վըշտաւք լցեալ եղկելի ոգիս զՅոհաննէս եպիսկոպոս՝ ստացող սուրբ տառիս և ուղղող, յիշել հայցեմ ի վայելողացդ զսա և ժառանգողաց յետ մեր, ի Քրիստոս Աստուած, զի գրեսցէ ի կենացն՝ իւր մատեան զմեզ մերայովքն և ողորմեսցի, յիշողքն յիշեալ լիցին ի Քրիստոսէ։

իգ

802բ Եղկելոյս ստացողի սորա և մեծ շանիւ ուղղողի Յոհաննէս եպիսկոպոսի Արքաեղբաւր և ծնողաց և զարմից թողութիւն խնդրեցէք ի Տեառնէ***։

308

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 4165

Գրիչ՝ Սահփանոս
Վայր՝ Արճակաղնի վանք

ա

Փառք Սուրբ Երրորդութեանն Հաւր և Որդոյ և Հոգւոյ Սրբոյ յաւիտենից յաւիտեանս, ամէն։

157բ Շնորհիւ և ողորմութեամբ ամենախնամ Աստուծոյ յանկ եղեալ կատարեցաւ մատեանս սուրբ և կայծակնաքարող մարգարէին Եսահայ, ի թուաբերութեանս Հայոց. ՉԺԲ (1270), ի թագաւորութեանն Հայոց քրիս-

---

* Ակնարկում է Մարկոսի ավետարանի համեմատական ցանկը։

** Գրված է ցանկի տակ, չղագրով։

*** Գրված է «Ծովհաննու Ձայտնութեան» առաջին սյունակում։

«Ես եմ ալփայ և ովմ բառակապակցության դիմաց, որը ասորերեն առաջին և վերջին տառերն են և նշանակում է սկիզբն և կատարածն»։ Ուղղման նշանով Արքաեղբայրը ուղղել է՝ «Հայր և քէ»։

տոսապսակ արքային Հեթմոյ, և ի հայրապետութեան տեառն Յակովբայ, հրամանաւ և ծախիւք աստուածապատիւ և առաքելաշնորհ արքեպիսկոպոսին տէր Սիովնի, վերադիտողի սուրբ և գերադրական անապատիս Առաքաղենոյս, ի յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց և ամենայն ազգականաց, ի ստոյգ և ի յընտիր աւրինակէ, զի որ ոք կամեսցի

158ա աւրինակ||եսցի, և մի ոք արգելցէ, վասն ընտիր գոլոյ և ստուգաբանի։

Եւ արդ, եղև զրաւ սորա ի սուրբ և գերադրական անապատիս Առաքաղենի, ընդ հովանեաւ սրբոց զաւրավարացն Միքայելի և Գաբրիելի և կենսակիր սուրբ նշանիս Կոստանդեա։ Եւ արդ աղաչեմ զամենեսեան, որք աւկտիք ի սմանէ և կամ ընդաւրինակէք, յիշեսջիք աղաւթիւք զաստուածապատիւ եպիսկոպոսն զտէր Սիովն, և ծնաւղս նորա, նաև զքվեբորդի նորին զԳրիգոր պատուելի քահանայ, և ծնաւղսն իւր։ Եւ ինքն Քրիստոս որ մեծն է ողորմութեամբ, առհասարակ յիշողացդ և յիշելեացս ողորմեսցի, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Բ

182բ Գրեցաւ տայ ձեռամբ Սաեփանոս կրաւնաւորի և սուտանոն քահանայի;

Գ

Գրիչ՝ Սարգիս

285ա Ի միւս անգամ գալստեան քո, Քրիստոս, ողորմեաց նեռսիսի գրչի և համաւրէն զարմից՝ մերոյ, ամէն։

Դ

310բ Սորին թուղթ սուրբ առաքելին
Գլխաւոր սուրբ Պաւղոսին,
Որք ընթեռնոյք ի տաճարին,
Ո՛վ պաշտաւնեայք սուրբ սեղանին,
Եւ սպասաւորք հրեղէն հացին,
Տէր Սիոնի արքեպիսկոպոսին,
Եւ հարազատին իւր Տուածին,
Եւ համաւրէն նորին զարմին
Աղաւթեցէք առ տէրունին,
Զի ժառանգեսցէն զանճառ բարին։
Ամէն, ամէն։

309

ՇԱՐԱԿՆՈՑ ԱՌԱՋԱՐԱՆ

Յուցակ ձեռագրաց, որ ի «Հանդէս ամսօրեայ», էջ 107

Գրիչ՝ Յակովբոս
Վայր՝ Կապոսի անապատ

ա

472 *Փառք ամենասուրբ Երրորդութեան Հաւր եւ Որդւոյ եւ Սրբոյ Հոգւոյն, այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։*

Աստանաւր յանկ ելեալ աւարտեցաւ մատեանս որ է Առաջարան, և լեառն Սուրբ Լուսաւորչին, ի յանապատիս որ կոչի Կապոսի, ընդ հովանեաւ Սուրբ Յակոբայ եւ Սուրբ Սիովնի, ի թուին Հայոց ՉԺԹ (1270), ի թագաւորութիւնն Հեթմոյ եւ ի հայրապետութեանն տեառն Յակովբայ, եւ յառաջնորդութեան արքեպիսկոպոսին մերոյ տէր Սարգսի՝ մայրաքաղաքիս Սգնկայի, եղեւ կատարումն սորա ձեռամբ մեղապարտ եւ սուտանուն կրաննաւորի Յակովբոսի։

Բայց գրեցաւ սա ի խնդրոյ պատուելի եւ սրբասէր եղբաւր մերոյ Յոհաննիսի, որ ստացաւ զսա ի վայելումն անձին իւրոյ, եւ յիշատակ իւր եւ ծնաւղաց իւրոց, հաւր իւրոյ սրբայսնեալ ծերոյն Ատոմ քահանայի, եւ մաւր իւրոյ Տիկնոջ։ Արդ, աղաչեմ զամենեսեան որք հանդիպիք սմա եւ աւկտիք, յիշեսջիք զեղբայրն մեր Յոհաննէս, որ ստացաւ զսա յիշատակ իւրոյ. Տէր Աստուած վայելեալ տացէ։ Եւ ես մեղուցեալ ծառայս... Յակոբոս դրաւղ սորին, աղաչեմ յիշել յաղաւթս քո /// զՄխիթար, որ հանդուցեալն է, եւ եղբայր սորա Յոհաննէ /// լոկ դպիր, որ զթուղթս կոկեաց բազում աշխատութեամբ։*

Յիշեա զկազմող սորին զՌբստակէս դպիր, որ ծաղկեաց եւ կազմեաց /// եւ դուք լիջիք յիշել /// ի Քրիստոսէ, եւ նմա փառք յաւիտեան։

բ

245ա *Ո՛, սպանանեաց զիս քունն յայսմ տեղոջ, կենդանի է Տէր, եւս առաւել ճանճն զաչս իմ եհան։*

գ

471 *Ոհ բազում վիշտս ի ճանճէս։*

310

ԱԽՏԱՐԱՆ

Սրվանձտյան, Թորոս Աղբար Բ. էջ 382

Վայր՝ Սիս

Եղեւ զրաւ աստուածախաւս մատենիս այս ի մայրաքաղաքս Սիս, ընդ հովանեաւ Սուրբ Յակոբայ, ի թուականութեան Հայոց ի եաւթն հա-

* երեք տող մաշված է։

բիւրերորդի, տասներորդի, իններորդի (1270), ի հայրապետութեան Հայոց տեառն Յակոբայ, եւ ի պարոնութեան Լեւոնի, բարեպաշտիւ Արդ ի յայսմ ամի, ի հոկտեմբեր ամսոյ, որ աւր էր Ի եւ Ե (25) հանգեաւ ի Քրիստոս բարեպաշտ արքայն Հայոց Հեթում, որում ողորմեսցի նմա Տէր Յիսուս, եւ յիշատակ աւրհնութեան նորա մնասցէ յաւիտեան։

Եւ Տէր Յիսուս ետ շնորհս ցանկալի եւ աստուածասէր պարոնին Հայոց Լեւոնի՝ որդւոյ իւրոյ, եւ նա թագաւորեաց փոխան հաւր իւրոյ եւ նստաւ յաթոռն իւր կարողութեամբ Աստուծոյ։ Եւ աւր հանդիսի աւրհնութեան նորա եղեւ ի սուրբ յայտնումն Քրիստոսի, ի մայրաքաղաքն Տարսոնի Կիլիկիոյ, ի մեծ եկեղեցին Սուրբ Սոփի։

Եւ եղեւ ժողով մեծ յամենայն ազգաց՝ վերադիտողաւն Հայոց տեառն Յակոբայ, եւ բազում եպիսկոպոսաւք եւ վարդապետաւք, եւ բազումք ի Յունաց պատրիարքաց եւ յԱսորւոց եւ Ֆռանգաց, եւ յիշխանաց մեծամեծաց ի Հայոց, ի Ֆռանկաց եւ ի Հոռոմոց. յորս եղեւ մեծ հանդէս եւ ուրախութիւն ազգիս Հայոց։ Վասն որոյ աղաչեմ զամենեսեան ազաւթս առնել նման եւ խնդրել յԱստուծոյ շնորհս եւ իմաստութիւն եւ զաւրութիւն... խաչին Քրիստոսի։

311

ՃԱՌԸՆՏԻՐ

Վէնետիկ 237, Սարգիսյան, ծուցակ Բ, էջ 564

Գրիչ՝ Բասիլ

Վայր՝ [Խորին անապատ]

Ա

Բարեխաւսութեամբ սուրբ հայրապետին Պետրոսի ողորմեսցի Քրիստոս Աստուած Պետրոսի քահանայի՝ հանգուցելոյ ի Տէր, և զհոգի նորա անթառամ պսակաւքն զարդարեսցէ, նաև զԲասլի մեղապարտ գրչի, և ամենեցուն որ զամէնն ասեն։

Բ

Բարեխաւսութեամբ քրիստոսապսակեալ թագաւորին Թէոդոսի և սուրբ հայրապետացն, որ ի մի վայր գումարեցան վասն ուղղափառ հաւատոցն՝ ողորմեսցի Քրիստոս Աստուած Տիրացու եպիսկոպոսի՝ հաւրեղբաւր իմոյ և ուսուցչի, և նորին հարազատի Առաքելի, և ձեզ լսողացդ՝ Առաշաւորս։

Գ

Քրիստոս Աստուած, ի ահեղ գալստեանդ յորժամ հարուցանես զոր յԱդամայ զմեռեալս, յարութիւն կենաց պարգեւեայ արքային Հեթմոյ*, որ զկնի երից աւուրց յիշատակիս փոխեցաւ յաստեացս; և ընդեա զձեռագիրս յանցանաց նորա՝ զկամայ և զակամայ, բարեխաւսութեամբ Սուրբ Աստուածածնին և ամենայն սրբոց, և ողորմեաց այնոցիկ որ իրիս ծըն-

* Հեթում Ա վախճանվել է 1270 թվականի հոկտեմբերի 25-ին։ Ձեռագիրը գրվել է այդ թվականին։

բագրուքեամբ հայցեն ի քէն զՔողուքիւն նորա, և քեզ փառք յաւիտեանս։

Դ

Տէր Աստուած, յարուքիւն կենաց պարգեւեսցէ Կոստանդեայ ծերունոյ և հիւրատեսի, և ծնողաց նորին և բնաւին զարմից, և ջնջեսցէ զձեռագիր յանցանաց նոցին, նա և ինձ և իմոցն, և լսողացդ և զամէնն ասացողաց։

312

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Երևան 1119

Գրիչ՝ Տիրացու

ա

304բ *[Փա]ռք փառաց Թագաւորին և փրկչ[ին, որ հաս]ոյց զանարժանս ի գիծս վերջին, վասն որո [զու]զին երկար և ուղևորն կաղ, այլ և տկար, հասանէ աշխատուքիւն ոչ սակաւ, որպէս և մեզ իսկ դիպեցաւ աստ։ Այլ քան զի ամենայն աստուածաշունչս գիրք յԱստուծոյ սկսեալ և առ Աստուած ունին զաւարտումն, որպէս և այս հոգելից մարգարէս Դաւիթ յերանուքեն[է ս]կսեալ և զի երանելի ինքն միայն է, ըստ Պաւղոսի. երանելի ասեն միայն ՀՋ, վասն որո էա[րյկ հիմն զերանուքիւնն, որ խմ[աս]տուքենէն տնգին ի գնացս ջուրց և տան զպտուղ [քաղցր]ուքեան ի ժամու, և աւարտեաց ի խաչն, որ է կատարումն տնաւրէնուքեան · խորհրդ[ոց և] ասէ ի յարհնուքեան Սաղմոսիս կատարման՝ ար[հնուքիւն] ի սրբուքիւն։ Զխաչէն ասէ սրբուքիւն, զի նովին իսկ արա[ր սրբ]ուքիւն մեղաց մերոց, և որ նովաւ սրբի երանելին տուգապէս, որոյ պտուղն ի դէպ հասեալ ժողովի յշտեմարանս անմահ կենացըն, և ունի զբոլոր խորհուրդ մարդանալոյն Քրիստոսի ծայրիւ բովանդակեալ և զի խոր է խորհուրդ սորայ, զոր և սուրբքն ի հայրապետաց և ընտրեալքն հոգւոյն ազդեցմամբ լայնատարած մեկնեցին յանցն իւր ժամանակի։ Եւ զի ամենայն ոք ոչ կարէր հ[աս]ու լինել [աստուածա]ին խորհին խորհրդոյ վասն յաճախուքեան բ[ան]բցն յայլ մեկնիչս, վասն որոյ մերս վարդապետն Վարդան՝ հայրս հա[սա]րակաց աւժանդակեալ ի Սուրբ Հոգւոյն համառաւտե||| պար զբանիւ ի նոյն մեկնչաց և յազդմանէ Հոգե[ոյն... սբբոյ դիւր]ահաս ընթերցողաց, որում և ես նորին անար[ժան]||։

բ

5բ *Աշխարհալուր և տիեզերալոյս վարդապետին Վարդանա պարզ և լուսաւոր խորին խորհրդով և դիւրագիւտ լուծմամբ և բանիւ մեկնուքիւն արարեալ Սաղմոսիս, շարժեալ ի Հոգւոյն Սրբո և յարհիականէն Հաղպատա և յաշակերտաց իւրոց, յոյժ աշխատեալ մտաւոր բանիւ, զոր ցուցանէ առաջիկա· ամբարեալս ի վարժ մանկանց Սիոնի նաև զսրբոցն ամենայն ի մի հաւաքեալ՝ ձեռնահաս սիրողացն, զոր և ինքն հասցէ յիւրայօվքն երկնից արքայուքիւնն։*

[Զ]ի և ես Տիրացու նորին անարժան աշակերտ գծագրեցի զսա աստ իմով անարհեստ գրչութեամբս, յիշատակ անջինչ մեզ և ծնաւղաց մերոց և եղբարց, և որ զհոգո են Կախաբերն և զՄուլուխն, զի որ առ յապայտ [հա]նգէք զսա՝ խնգրեցէք ի Տեառնէ մեղաց մերո[ց] թո-
ղութիւն, որք ընթեռնոյք և աւգտիք և կամ աւ[րինակէք, սրտի մտ]աւք յիշեցէք, և մի հարևանցիկ և/// Քրիստոս Աստուած զձեզ ամէն։

Գ

Ջհոգիազարդ քոյրն իմ ըստ հոգւո, զանփորձն ի կորըստական
148ա սղալմանէ՝ զՄուլուխն, և զբարեպաշտ այր նորա զԿախաբէրն, || զյիշ-
ման արժանիսն, յիշեցէք ի բարի մասին առաչի Քրիստոսի, խնդրելով
ի նմանէ զթողութիւն և զմեծ զողորմութիւն*։

Դ

179ա Ջանպէտ, զյոգնամեղ գրիչ զՏիրացու յիշեա ի Տէր աղաչեմ։

Ե

246ա Եւ յոգնամեղ գրող գրոցս զՏիրացու և զծնաւղսն մեր, և զեղբարսն
յիշեցէք առ Տէր ի բարի, և երախտաւորաց մերոց հոգևորաց անդ ար-
ասցէ Քրիստոս Աստուած բարի հատուցումն, առաւել Կախաբարն և Մու-
լուխին, և որք յիշէք, յիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ
յաւիտեանս ամէն։

Զ

300բ Նաև զանպատուղս ի բոլորից բարեաց՝ զնորին անարժան աշակեր-
տեալս զՏիրացու՝ զի ամ՝աւթալի գործոց անբարեաց, յիշել աղաչեմ ի
մաքրափայլ յաղաւթս ձեր, զի թերևս մեզ լիցի ողորմութիւնն գտանել
ի Քրիստոսէ յաւուրն աներեակ։

313

ԱԽԵՏԱՐԱՆ

Երևան 4515, Փիրղալեմյան, նշխարք, Բ, էջ 39—40

Գրիչ՝ Բարսեղ
Վայր՝ Խոսճկա

Ա

251բ Ո՛վ հրաշափառ և երջանիկ, երկնաւոր հրեղէն դասուս զարմանալի,
անբաժանելի ծոցածին Հօր բան, հեղ ինս՝ զանարժան ծառայիս քո ի
Յովհաննէս, և ի մեղուցեալ գծողս Բարսեղ ըզգթութեան վտակս, և մի
տար, Տէր, դատ ընդ ծառայիս քո, որ ոչ արդարանամք, այլ մաղթանաւք

---

* Ձեռագիրը գրված է մինչև Վարդան Արևելցու մահը (1271), ըստ այդմ դնում ենք 1270 թվաշարքում։

մաւր քո, Քրիստոս, զմեղաց լուծն մեր խորտակեա և քաւեա, և քեղ փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն, ամէն։

Ո՛վ երջանիկ դասք սրբազան քահանայից, որք հանդիպիք աստուածային սուրբ Աւետարանիս, յիշեսջիք ի Տէր զարքայն Հայոց զԼեւոն, և զբարեպաշտ թագուհին իւր զԿեռան, և զորդին իւրեանց զԿոստանդին՝ զբարի ջառավիղն, ի բարի արմատոց, որոց Տէր Աստուած տացէ ժամանակս երկայնս և խաղաղականս, և զաւրասցուցէ ի վերայ թշնամեաց խաչին Քրիստոսի, և պարագայց ամաւք շնորհեսցէ մեզ ընդ երկայն աւուրս, ամէն, ամէն։ Եւ որ զմեզ յիշեա աղաւթիւք, և նա եղիցի յիշեալ։

Բ

Այլ գրիչ

323բ Ի ելթն հարիւրերորդի տասներորդի, իններորդի (1270) թուաբերութեան տումարի Հայոց, յաւաշնորդութեան և ի դիտապետութեան անբիծ հեղինակին և յաջորդութիւն աթոռոյ Սրբոյն Գրիգորի տեառն Յակոբայ, և ի թագաւորութեան Կիղիկեցւոյ Նահանգիս Հեթմոյ բարեպաշտի, և ի պարոնութեանն Հայոց Լեւոնի որդւոյ Հեթմոյ արքայի, զոր Տէր Աստուած տացէ սոցա ժամանակ խաղաղութեամբ երկար ամաւք, և ետ ելից յայսմ աշխարհէ ի հանդերձեալ կեանս զանսպառ բարիսն պարգեւեսցէ։ Նաև երջանիկ ամենաւրհնեալ ամուսնւոյն Լեւոնի Կիր Աննայի և դեռաբոյս մանկանն նոցա Հեթմոյ տացէ Յիսուս Քրիստոս հոգի հեզութեան և խմաստութեան, և երկիւղ աստուածապաշտութեան, և բազում ժամանակ խաղաղութեան, և հանգիստ յաւիտենական ի յանվախճան կեանս։

325ա Վասն որոյ աղաչեմ զամենեսեան առհասարակ, ես նուաստս Յոհաննէս, յետինս յորդիս եկեղեցւոյ, որ ցանկացող եղայ այսմ լուսալեզձ և կենսակիր, քառաջահեան, մշտալոյս բանից Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ աւետեաց Աւետարանիս, և ստացա զսա բազում աշխատութեամբ, ի լուսաւորութիւն մանգանց նորածնելոց Նոր Սիովնի և ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ, ի բժշկութիւն հիւանդաց և ի վանում այսոց չարաց, ի պարծանս քրիստոնէից և ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ի յիշատակ հոգւոց մերոց, և ծնաւղաց, և բնաւ զարմից՝ և կենդանեաց և մեռելոց, սորա, որ ստացաւ ի յարդար վաստակոց իւրոց, ի վայելումն անձին իւրոյ և Թորոսի հանգուցելոյն ի Քրիստոս, և յիշատակ Գրիգորի քահանայի և կենակցին իւրոյ Հռիփսիմե, և ամենայն հաւատացելոց [և] ննջեցելոց։

324բ Արդ, ո՛վ սուրբ ճգնազգեաց կրաւ||նաւորք և առաքելագումար դասք քահանայից, յորժամ վայելէք ի քաղցրաճաշակ, եդեմատունկ, աստուածառոյգ վտակաց աստուածային աւետարանական բանիցս, յիշեսջիք առաջի զենլոյն Քրիստոսի ստացողի սորին զՅովհաննէս՝ ողորմութիւն գտանել յահեղ աւուրն ի մեծի ծագմանն յաներեկ ատենին, մանաւանդ զգծող սորին՝ զԲասիլ քահանայ, որ ի բազում աղաչանաց յանձն էառ զգծել սորին՝ բազում աշխատութեամբ և տկար մարմնով, յանխաղազ նաւահանգիստ այսր և անդր շրջելով, յայսր և ի ծէրպս, զոր իմաստուն ընթերցողք և հմտական մտառուքդ ճանաչէք զարուեստ և զիմաստութիւն,

որ ի սմա գանձեալ կայ, վասն որոյ աղաչեմ զամենեսեան, ընդ ստացողիս և զգրիչ յիշեսջիք ի Տէր, ողորմութիւն գտանել ի Քրիստոսէ։
325ա Եւ[ ]նոյն ինքն հասարակաց պարգևատուն ամենեցուն ողորմեսցի ստացողիս, և գրչին, և այսմ յիշատակարանի գրողիս, և վայելողացդ, ամէն։

Արդ, գրեցաւ սա ի լեառնս Կարմիր, մերձ յանառիկ դղեակն Բարձրբերդ, ի վանքս Լիսոնկայ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Սուրբ Նշանին, եւ աւարտումն սորա՝ ի յանապատս Միծեռնաքոյն եղև...

գ

326բ Երեսս անկեալ աղաչեմ զամենեսեան, որք պատահիք սմին, յիշեցէք ի սրբամաքուր աղաւթս ձեր զերիցս երանեալ ծերունի պատուական քահանայն Յոհաննէս Գոմաձբերցի, որ զաւրինակն շնորհեաց, նաև զգրող աւրինակին զԸոստակէս, և Տէրն փառաց ամենեցուն ձեզ և մեզ ողորմեսցի առհասարակ, ի յահեղ հրապարակին, ուր գործք թագաւորեն և սատանայ ամաւթ լինի։
327ա Նաև զպատճառ եղեալ կազմութեան սորա զքեռ թագաւորի Հայոց Հեթմոյ և զորդի աստուածասիրի և բարէպաշտի Կոստանդեա թագաւորահաւրն զՀոեփսիմի կրաւնաւորն յիշման արժանի արասջիք, և զկազմող սորա զԳրիգոր փակակալ և զեղբայր նորին զՍտեփանոս վանական քահանայք։

314

ԱՒԵՏԱՐԱՆ

Զարբհանալյան Հայկական դպրութիւն, էջ 710

Հրամանաւ Սոսթենէս րաբունւոյ, որ էր վարժ և կիրթ յամենայն գիրս աստուածային՝ հնոցն և նորոցս և արտաքին փիլիսոփայիցն գեր ի վերոյ, որ և ի ժամանակիս մեր և ի թագաւորութեան Լեոնի, և ի հայրապետութեան Յակոբայ ոչ ոք է կատարեալ իբրև զսա յամենայն իմաստս, բաց ի մեծ րաբունեաց րաբունւոյն որոյ անուն ցաւղ է քաղցր, որ և Վահրամ կոչի։

315

ՎԱՀՐԱՄԱՅ ՐԱԲՈՒՆՒՈՅ ԼՈՒԾՄՈՒՆՔ

Երևան 6362

Գրիչ՝

ա

66բ Զվահրամ գերաբուն բանի սպասաւոր և զստացօղ Լուծմանցս յիշեսջիք ի Քրիստոս, մեղաց թողութիւն հայցելով նաև զեղկելիս գրող սորին, հանդերձ ծնողօք մերովք յիշեսջիք, և որք յիշէք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ։

Նոյն և ղանյաղի և երջանիկ րաբունիս մեր Գէորգ, հանդերձ զարմիւք իւրովք, որ և կամաւ սորին եղև գրութիւն սորա, և ընկերակիցքս մեր, և յիշողքն յիշեալ լիցին ի տեառնէ։

Բ

66ա Ի Քրիստոսի խաչելութենէն մինչև ի ՈԼ (1181) թուակ[ան] ամք ՌՃՁԲ (1182)*։

316

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Երուսաղէմ 741, Պողարյան, Յուշակ Գ., էջ 185

Ստացող՝ Գրիգոր

Ա

423 Յամի Ջ երորդի, Ժ երորդի, Ք երորդի (1270) թուականութեանս Հայոց (1270), Գրիգոր տկարս եւ փանաքիս, յոյժ նուազեալ ի բարեաց տեսակէ և փարթամացեալս թշուառութեամբ, որ եւ դիմեցի յաշխարհէն Միջագետաց ի կողմանս յԱրեւելից, ի յուսումն վարդապետութեան առ տիեզերափայլ վարդապետս Վարդան, եւ փափաքեցա այսմ հոգեշահ տառի Մեկնութեանս, եւ գրել ետու զայս։

Բ

Գրիչ

Ո՛վ եղբայրք, մի մեղադրէք, վասն ամպին մթին ծռեցաւ տողն։

---

* Սույն թվականն ընդունված է որպես ձեռագրի գրության թվական։ Սակայն պատվիրող Գևորգը, որ Սկևռացին է, իսկ նուիրմունքի հեղինակը՝ Վահրամ Բարունի նշանավոր փիլիսոփան, ապրել են ԺԳ դարի երկրորդ կեսին, ուստի հիշատակարանը գնում ենք նրա անվանն առընթեր։

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 2814

Գրիչ՝ Մխիթարիչ
Վայր՝ Գեղակա վանք

ա

147ա Ջսրբազան քահանայն Գրիգոր միայնաւոր ստացաւղ սուրբ և պատուական Աւետարանիս, և զանարժան գրիչս Մխիթարիչս, որ ծրեցի ի գովելի աւրինակէ, ուղիղ և լի արուեստիւ, ի բան և ի գիր, ի տուն և ստոր, և ի գրադարձս, և յեղանակս, և ի վանկս, և յառագանութիւնս, զոր կոչեն Գրիգորի Մուղանեցոյ՝ ի բազմաց վկայեալ, ըստ յաւժարութեան մերում յաջողեաց մեզ Աստուած։ Բայց դիտէ այս սուրբ Աւետարանս, որչափ կարացի պահաւք և պանդխտութեամբ գրեցի, վասն զի գրոց աշակերտ էի. զմիտքս ի վերա կալայ վասն ղորդութեան, վասն զի վարդապետք, որ տեսանէին՝ հաւանէին։ Աղաչեմ զձեզ յիշել զմեզ ի Քրիստոս, ամէն, ամէն։

բ

9ա Աւգնեա՛ Հոգիդ Սուրբ Աստուած ան[ա]րժան և մեղաւոր գրիչս Մխի[բ]արչիս, աւարտեա՛ զսա խաղաղու[թեամբ]։

գ

50ա Վա՛շ է աւրինակիս եւ իւր գրողիս։ Շատ ու բազում վարդապետք են հավանել։

Կիւրակոսի է հաւանած Գրիգորի Մուղանեցւոյն աւրինակ*։

դ

53բ Վաշ է աւրինակիս դրատղիս,
Գրոց հմուտ գիտնականիս,
Վարդապետաց ընտրեալ բանիս,
Ես ինչ արնեմ գերիս։
Բնութեան գրոցս ///**։

---

* երկրորդ տողը կտրվել է կազմելու ժամանակ և բառերի վերին մասերն են երևում միայն։
** Կտրված է թերթի ստորին յուսանգրը։

Ե

55ա Աստուած ողորմի աւրինակիս գրաւղին, հրաշափառ է, բայց ևս պանդուխտ եմ ու ի պահս խիստ, մի մեղադրէք։

Զ

61բ Քրիստոս Աստուած ողորմի Մանասի և Սիմէոնի պատանեկին, զի երկոսեանքն խեղճ մեռան անյիշ[ատակ]։

Է

64ա Տէր, ողորմեա Գրիգորո և Մխիթարիչ գրչի* ի քում գալստեանդ, յորժամ գաս հատուցանել ըստ իւրաքանչիւր գործոց։

Եղբայր, թողութիւն արա, խալատեցայ ի ցանկիս, յառաջ Մշակաց այգուոյն է և ապա Յուցել Յիսուս զչինուած տաճարին։ Զբնութեան գիրքս կու քննեաք։ Ես մոռացայ գրել, յետոյ գրեցի**։

Ը

92բ Ջստացաւղ սուրբ Աւետարանիս զԳրիգոր քահանայ եւ զանարժան գրիչս Մխիթարիչս յիշեսջիք ի Քրիստոս։

Բ

153բ Ի Գրիգորոյ Մուրղանեցոյն աւրինակէն է, և շատ երևելի վարդապետաց հաւանած զորդի ///։

Ժ

154բ Զցանկս սաստիկ դժուար ձգեցի յիրար, և աշխատանաւք։ ՁՄխիթարիչս յիշեաւ։

155ա Կիւրակոս վարդապետն իւրն գրել ետ, որ վարդապետաց վարդապետ էր և երևելի։ Ես ես զշատն վասն աւրինակի գրեցի, եղբա՛յր, աւրինակ լավ է, ի Գետկայ։ վանքս, որ է վարդ[ապետարա՞ն]***։

---

* Մինչև այստեղ գրված է երկաթագիր կցագրութեամբ, մնացածը կարմիր բոլորգիր, հաջորդը՝ մանր բոլորգիր սև թանաքով։

** Նորանի տակ գրված է «Մխիթար գրիչ», ուրեմն Մխիթարը նաև ձեռագրի ծաղկողն է։

*** Դժբախտաբար կտրված է թերթի ստորին մասը։ Կիրակոս վարդապետաց վարդապետը նշանավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցին է, նոր Գետիկի դպրոցի բարեփոխիչը։

Ձեռագիրը գնում ենք Կիրակոսի մահվան տարին, որպես վերջին հնարավոր թվական։

318

ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Երևան 1903 (1600 թ.)

Հեղինակ՝ Վարդան Արեւելցի

292ա Այլ և զհոգևոր դաստ կրաւնաւորական եղբարցս, մանաւանդ թէև հայրս զմիայնացեալսն ի տանց, զհեռացեալս յընդանեաց, և ի մեկնեալս աշխարհական հոգոց, զսիրողս սրբութեանց և զաղբիւր առաքինութեանց աւրհնեսցէ Քրիստոս Աստուածն մեր, և պահեսցէ անթառամ ծաղկաւք վարուց սրբութեան ի պատիւ, ի փառս եկեղեցոյ, և ի յամաւթ բանսարկուին, և յետ աստեացս ընդ ճգնաւորացն դասակցեսցէ։ Նա և համշիրակ եղբարցս՝ դաստ սրբազանիցդ, զգրոց աշակերտեալ անձինդ, որ ծարաւիտ էք ի ջրոյն կենաց, տացէ ձեզ ինքնին ըմբել զուխտս փափկութեանն, մինչ զի եղիջիք իւրաքանչիւր ի շնորհաց հոգոյն բաժանեալ, որով անմոտաց ըստ թարգմանութեան տեառն ջուր կենդանական իմաստից
292բ անաղտ բղխմամբ պարագայիցև երկար ամաւք կրթիլ ձեզ ի մամուլս առաքինութեան, և ի հրահանգս իմաստից ժամանիլ ի բարիոք աւարտս ի փառս հանդերձեալ կենաց, ամէն։

Այլ և քահանայք և փակակալք եղիցին արթունք և պատրաստք լապտերաւք բարեգործութեան, զի գալ փեսային՝ արժանասցին մըտից առագաստին, ամէն։

Այլ և զկամարակապ հաստատութիւն և անդրթելի զաւրութեամբ կացցէ դշխոյ ընդ աջմէ Քրիստոսի, ի հերքում դիւաց, ի բժշկութիւն
293ա հիւանդաց,ի քաւութիւն մեղաց յուսով ի սմա դիմելոց, ի հալածումն անաւրինաց, ի պապակումն բերանոյ հերձուածողաց, իղձ մաղթանաց, հոսմունք արտասուաց, ծնրադրութիւն մայրամած դիմաց, խնդիրք աղաչանաց բարեսէր կամաց, տարածումն բազկաց՝ առ Տէրն գթած, լսելի լինիցի ականջս Աստուծոյ և ամենայն խնդրուածք հոգեւոր միջնորդութեամբ սրբոյ տաճարիս ի բարին կատարեսցին, ամէն։

Այլ և շինողք սուրբ եկեղեցոյս և զկառուցող կամարակապ երկինս ի ծախոց և ընչից վաստակեաց վասն սիրոյն Քրիստոսի, փոխանակ այսմ սգալի խորանացս տացէ նմա տէր Աստուած զանձեռագործ խորանն և իմանալի տաճարն, ի ժառանգութիւն և ի հանգիստ անձանց նորին։

Այլ և ուխտաւորք և պտղաբերք և երախտաւորք և գործաւորք իւրաքանչիւր զփոխարէնս վաստակոցն իւրոց միոյն հազարապատիկ առնուցուն, զկեանս յաւիտենականս անսուտ բերանոյն և ամենվեհեր խոստմանցն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ*։։։

---

* Վարդանի «Աշխարհացոյց»-ը ավարտվում է այսպես. «...և այլ բազումք ազգ և քաղաք և աշխարհ, զոր անազդուտ համարիմ զշարակարգելն դոցա, վասն որոյ ոչ կամեցա գրել, և Քրիստոսի մարդասիրին փառք, յաւիտեանս ամէնս, և անմիշապես հարում է «Այլ և զհոգևոր դաստ կրաւնաւորական եղբարցս...» և այլն, ինչպես վերևում։ Այսպես է նաև № 2618 ձեռագրում (էջ 271)։ Անմիշական շարադրանք լինելու հանգամանքը, բովանդակությունը, լեզուն և ոճը, թույլ են տալիս այն համարելու Վարդան Արևելցու «Աշխարհագրության» հիշատակարանը։

319

ԳԻՐՔ ԲՆՈՒԹԵԱՆ, ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԵՎ ԿՈՒՍՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԻՒՍԱՑԻՈՅ

Երևան 469 (1260 թ.)

Գրիչ՝ Վարդան Արևելցի
Վայր՝ Խոր Վիրապ

260բ *Գիրքս սրբոյն* Գրիգորի Նիւսացւոյ, *որ բաժանեալ է երիս հատածըս. ի Բնութեան, ի Կազմութեան և ի Կուսութեան, իմաստնոյ և շնորհալից եղբաւր մերոյ և սպասաւորի բանին* Գրիգորոյ, *մականուն* Բրժնեցոյն *է, շարագծեալ ի կրսերէ նորին* ի Ստեփանոսէ, *և շնորհեալ նմայ։ Աստուած վայելել տացէ երկար ամաւք։ Ոչ իմոյ և ոչ աւտարաց ունի իշխանութիւն ջալունշ առնել, և որ յանդգնի, յԱստուծոյ և ի Սուրբ Գրիգորէ և ի մէնջ ընդ կապանաւք է։*

Ի թվ[ին] Հայոց ՉԻ (1271) գրեցաւ յետին գիրս, առ դրան Սրբոյ Վիրապիս*։

320

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼՈՑՆ ՅԱԿՈՎԲԱՅ՝ ԵՂԲԱԻՐ ՅՈՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՉԻ

Երևան 4086

58ա *Թարքմանեցաւ ճառս այս երկուց քահանայից՝ ի* Դաւթէ *և ի* Յոհաննիսէ: *Եւ առաջին թարքմանիչն թարգմանեաց զՔարոզ վարդապետութեան առաքելոյն Յակովբայ և զգլխատումն ի հրէիցն հրամանաւն Հերովդէի, իսկ երկրորդն՝ զգնալն* Իսպանիա *ի ձեռն հրեշտակաց, որպէս և ճառս պատմէ կարգաւ։*

Իսկ երանելի վարդապետն Հայոց Վարդան *դրեալ զերկուցն թարգմանեալս, և ըստ իւրում իմաստութեանն միաւորեաց ի մի, զթերին ելից և ողորկեաց յ*Երուսաղէմ, *և առաքեաց ի տեղիս-տեղիս։*

321

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀՆԳԱՄԱՏԵՆԻ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԵՒԵԼՑԻՈՅ

Երևան 1094

Գրիչ՝ Յոհաննէս

327բ Վարդան *վարդապետին և ստացողի սորա* Ներսէ *վարդ[ապ]ետի և իւրայոցն, և անարժան և ծոյլ գրչի* Յոհաննիսի *ողորմութիւն ի նմա***։

* «Գրիչը՝ Վարդան վարդապետն է, և այս նրա ինքնագիրն է ծերության հասակում, իր մահվան տարին»,—նկատում է Գ. Հովսեփյանը («Խաղբակեանք... էջ 253)։

** Ձեռագիրը հետագայում պատկանել է Խառաբաստա բարոնապետեր Սարգսին և Վարդանին, որոնք ավանդել են այս գիրքը Թովմա Մեծոփեցուն և նրա ընկերներին (էջ 400ա)։

Հաջորդ էջում պահպանվել է այսպիսի հիշատակագրություն. «Արիստոտելին գրկնք որ կայ այս է. Բ(2) Տամապատճառ, Ա(1) Սաշմոսի մեկնիչ, Ա(1) Արարածք, Ա(1) Արարածոց մեկնիչ, Ա(1) Առակս, Ա(1) Եսայի, Ա(1) Ճառընտիր, Ա(1) Տետր, Ա(1) Նեղոս, Բ(2) Նոհ, Բ(2) Ջուխտ սարմուզա, շարմին, Հացղորէնս»։

322

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀՆԳԱՄԱՏԵՆԻ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԵՒԵԼՑՒՈՅ

Երևան 7452

Գրիչ՝ Սարգիս

ա

225բ *Եւ Քրիստոսի Աստուծոյն իմոյ փառք և* Վարդան *վարդապետին գնացելոյն առ Քրիստոս ի յաւիտենական լուսոյ հանգիստ, և րաբունեաց րաբունոյն* Մխիթար *վարդապետէն ողորմութիւն, և գծողիս մեղաց թողութիւն շնորհաւքն Քրիստոսի, և նմա պատիւ և զաւրութիւն յաւիտեանս, ամէն։*

բ

244ա Վարդան *վարդապետին ողորմութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս։*

գ

262ա *զ*Սարգիս *գրիչ յիշեա ի Տէր աղաչեմ։*

դ

277ա Մխիթար *վարդապետին ողորմեսցի Քրիստոս։*

ե

290բ *Տէր Աստուած վայելել տացէ րաբունոյ վարդապետ* Մխիթարայ:

զ

295բ *Կատարեցաւ հինգ գիրքս Մովսիսի, շնորհաւք /// եանս ժամանակս երից /// յ[եւ]թ հարիւրից և քսան ամաց (1271)։*

է

Գրիչ՝ Ներսէս

285ա *Զ*Ներսէս *սպասաւոր բանիս յիշեցէք ի Քրիստոս։*

323

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻԽԱՅԵԼԻ ԱՍՈՐԻՈՅ

Երուսաղեմ, 32 (1273 թ.) Պողարյան, Ցուցակ Ա, էջ 146

592 *Ի թուականին Հայոց Չ և Ի (1271) փոխեցան ի Քրիստոս փառաւոր վարդապետքն Հայոց* Վարդան *և* Կիւրակոս, *որոց սուրբ աղաւթք նոցա ի վերայ մեր և ամենայն աշխարհի։*

324

ԼՈՒԾՄՈՒՆՔ ՃԱՌԻՑ ԳՐԻԳՈՐԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԻ ԲԱՐՍՂԻ ԿԵՍԱՐԱՑՒՈՑ ԵՒԱՅԼՈՑ

Երևան 5518

Գրիչ՝ Յովանէս
Վայր՝ Վանկունք

ա

184ա Գրեցաւ լուծմունքս ձեռամբ Յովանիսի անարժան սարկաւագի, ի թուիս Հայոց Ջի (1271), ի վանքս որ կոչի Վանկունք, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի և Սուրբ Պաւղոսի, հրամանաւ սուրբ հաւրն մերո և հրաշաբան վարդապետի Սինասի: Արդ որք աւգտիք ի սմանէ, յիշեցէք զմեզ ի ձեր աղաւտքս և Աստուած զձեզ յիշէ։

բ

117բ Զեղկելի գրիչս զբազմամեղ անձս յիշեա։
Յափշտակեցաւ յերիս երկինս սուրբ առաքեալն աստուածային,
Որպէս և գրեաց յիւր կտակին, թե ես լուա զանճառելին,
Համանման եղեք նմին, այսմ կենաց առագաստին։
Անտեսին եղեք տեսաւղ, և պատմեցէք զանպատմելին;
Նիւսացիտ Գրիգորիոս, որ և անուամբ հրեշտակային
Եւ սրբազանդ Բասիլիոս՝ պատմեա գրիչ անճառ բանին,
Սերտեալ ի սէրն աստուածային Գրիգորիոս Աստուածաբան
Ինձ հայցէք ի Քրիստոսէ մեղաց իմոց զթողութիւն,
Աղաչեմ*։

գ

208ա Հոգի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, առաշնորդեա հոգո իմո ելանել յերկինս և խառնիլ ի գունդս սրբոց, որք ի սկզբանէ հաճո եղեն քեզ և կամարար Հաւր և կենդանարար Որդո, և զհոգի եղբաւր իմո Ստեփանոսի քահանայի և զհաւատացեալ ծնողացն իմոց, որ ըստ իւ հաւատացին յարդարութիւն և բերանով խոստովանեցան զփրկութիւն։ Ընդ նմին և զվարդապետն իմ զՍինաս և զեղբարս նորա՝ ծնողաւք իւրովք հանդերձ, որք զաստիս վճարեցին բարիոք խոստովանութեամբ, և հատուցման անճառելի փառաց քոց սպասեն, ամէն։

դ

130բ Աստուածային հոգով լցեալ և ի շնորհացն հղփացեալ,
Բանիւ զբանն քարոզեալ և յաղբիւրէն առատացեալ,
Գրիգորիոս աստուածարեալ, հոգով և մտաւք վերամբարձեալ,
Դարձեալ աղերս քեզ մատուցեալ սուրբ ժողովուրդն հաւատացեալ։
Եւ ի հեզոյն էիր ուսեալ արագագոյն զհետ ընթացեալ,

* Սկզբնատառերով հոդվում է. «ԶՅոհաննեսի ա»:

131ա Զիշխանն որ զհարկն պահանջեալ՝ քո խորհր||գով յանդիմանեալ,
էղեալ հաւան և հնազանդեալ և ըստ աւրինի զնոսա գրեալ,
Ըստ սոյն և ինձ քեզ աղաչեալ, Հաւրն Աստուծոյ զիս ընձաեալ,
Թագաւորին յաջմէ կացեալ և ընդ արսն պսակեալ։

Ե

171բ Ժողովուրդք ամե[նե]քին, որ էք ի տան աստուածային,
Ի միտ առէք ի միասին և գործեցէք զարդարարութիւն,
Լուարուք զվախճան անաւրին, դառն և զչար թագաւորին.
Խոցեալ զնա սուրբ հրեշտակին և սատակեալ յատար երկրին,
Շախեալ զիշխանն մահածին, իբր սաստիկ հողմ զփոշին,
Կործանեցաւ զանկանկնէլին և յիշատակին աղաղկին։
Հաւտք բանատր պատարագին և չարչարացք բռնատրին,
Զայնակցելով մարգարէին և գոչեցուք զանկամ Բելին,
Ղեկաւ չարին ուղղեալ նաւին և բարձրացաւ իբրև զալին,
Ճշմարիտ հողմով հոգին խորասուզեալ յատակ ծովին*։

Զ

171բ Ջհոգիացեալ և զխնամածու վարդապետն Միհաս և զաշակերտ նո-
րին՝ զգրիչս յիշեսջիք ի Տէր։

Է

42ա Սրտիս հառաչ կուգա, մեղուցելոյս, որ լերդիս ցաւ կուտա, ոհ,
ոհ, ոհ։
43ա Աչուիս կու կուրնա, ու ձեռուիս կու թուլնա, աւա՛խ, աւա՛խ։
43բ Ո՛հ, Տէր, թոյլ արա ինձ զի հանկեայց, զի պանդուխտ եմ ես՝ յատար երկրի։

Ը

71բ Ո՛վ հրաշաբան սուրբ վարդապետ Գրիգոր և աստուածային խորոցն քննող սուրբ Բարսեղ, շնորհեցէք անսրբոյս ի սուրբս հպիլ։

Բ

79ա Զբազմամեղ անձն իմ և զեղբայրն իմ Ստեփանոս քահանա աղաչեմ յիշել՝ ի Տէր հանկուցեալն բարիոք խոստովանութեամբ՝ ի Հայր և Որդի և Հոգի Սուրբ։

Ժ

126բ Ելեր ի վերա բարձու լերին սուրբ քաբոզիչն Սիոնի,
Եւ գոչեցեր բարձր ձայնիւ մոլորելոց գալ զկնի։
Թողուլ զաղանդս Աբելի ի միանձինս ժողովողի.
Եւ զանիծել Արիոսին զչարաչար բարժանողի։
Եւ գալ ի լոյսն անճառելի, և հաւատալ Աստուած զՈրդի,

* Դ և ե միավորների սկզբնատառերով հոդվում է հայոց այբուբենը՝ Ա-ից Ձ։

Բնութիւնակից Հաւր և Որդւոյ խոստովանել Աստուած զՀոգի՝
Երիս անձինս բաժանեալ Հայր և Որդի և Սուրբ Հոգի,
Որով յաւէտ փառաբանի երրորդութիւն անճառելի, ամէն։

ժա

92ա Զփանաքի և զեղկելի գրիչս զՅովաննէս աղաչեմ յիշել ի Տէր։

ժբ

120ա Ի Կոստանդինուպաւլիս էր, յորժամ զայս ասէր*։

ժգ

125բ Չկարցի այլ յիստակ իմանալ և գրել, տես դու, վարձք է։

ժզ

Գրիչ՝ Կոստանդին

245բ Գրեցաւ սա ձեռամբ իմով Կոստանդնէի մեղապարտ և ախմար գրչի։
Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ, մեղաց թողութիւն խնդրեցէք ինձ և ննջեցեալոց իմոց, ամէն, ամէն, և փառք յաւիտեանս, ամէն։
Այս լուծմունքս, որ գրեցի, նա Մինաս վարդապետին է, և թէ այլ մարդ ասէ թէ իմն է, նա սուտ է**։

ժե

250 Ո՛վ հրաշալի եղբարք, որք ընթեռնուք զգիրս զայսոսիկ, յիշեցէք զախմար գրիչ Կոստանդին դպիր, ընդ նմին զհայրն իմ և զմայրն, և որ յիշէ յիշեալ լիցի այժմ և ի հանդերձելումն, և ինքն՝ աւրհնեալ յաւիտեան։

ժզ

Ստացող՝ Մինաս։

305ա Շնորհաւք ամենախնամ և մշտասէրտ զաւրութեամբ Հոգւոյն Աստուծոյ, որ է իսկապէս և տիրաբար Աստուած, ընդ Հաւր և ընդ Որդւոյ յաւէտ, ես՝ Մինաս, սպասաւոր բանի, ստացա զգծ[ուա]ծք լուծմանցս սրբազանից արանց յոքնիմաստ և բազմահանճար գրութեանցն, զոր թելադրութեամբ տրամիմաստ վարդապետին մերո Դաւթա արարեալ է վսեմախորհ և մեծ գլուխն հանուրց Հայաստանեաց եկեղեցւո տէրն Յակոբ. ի յիշատակ անձին բարեաց և պատճառին առ արդիւնակրեալքն յիմաստունդ գրութեանցս, ի յիշատակ բարեաց և ինձ, և ծնաւղաց իմոց, եղբաւր, քւեր և ամենայն զարմից։ Վասն որո իսկ սիրովն Քրիստոսի աղաչեմ զաշակերտսդ բանի և զհանգիպեալսդ այսմ գրութեան ընթերցմամբ կամ գրութեամբ, արժանաւորել զիս, զՄինաս, ծնաւղաւք իմովք,

* Գրված է «Նորին Գրիգորի Մաքսիմոս յիմաստասէրն» ճառի մասին։
** Վերջին նախադասութիւնը գրված է էջի ստորին լուսանցքում և վերաբերում է «Պարպմանց գրոց լուծմունքին։

եղբարք, քերբ, զարմիւք և ամենայն ընկերակցաւք, որո աղագաւ եղև ստացումն] սորայ յիշման բարո, զի և բարերարն Աստուած պարգևաց [բ]արեաց արժանաւորեսցէ զյիշողսդ զմեզ ի Տէր, որում փառք յաւիտեան յաւիտենից։

325

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 199

Գրիչ՝ Կոստանդին
Վայր՝ Դրազարկ,
Վանկուեմ անապատ

ա

433բ Աւրհնութիւն և փառք և գոհութիւն ամենասուրբ երրեակ անճննաւորութեանն ի միում տէրութեան և աստուածութեան Հաւր և Որդո և Հոգւոյն Սրբո, որում մեք վիճակիմք հաւատով, յուսով և սիրով։

Ի թուականութեանս Հայոց եւթն հարիւր և քսանն (1271), ի հայրապետութեանն տեառն Յակովբա Հայոց կաթողիկոսի, և ի թագաւորութեանն Հեթմո Հայոց թագաւորի, կամաւքն Աստուծոյ փափագեցի բազմավրէպս Կոստանդին պիտակ անուամբ սպասաւոր բանին ստանալ զաստուածաբան մարգարէիցս տառս, և շնորհիւ Տեառն, ծախիւք իսկ և ձեռամբ իմով, գրեալ աւարտեցաւ ի հռչակաւոր ուխտս Դրազարկ և յանապատս Վանկուեմ, ընդ հովանեաւ ամենաւարհնեալ Սուրբ Տիրամաւրն, ի վայելումն մանկանց եկեղեցո և յիշատակ բարեաց առաջի Աստուծոյ ստացողի և գրողի սորա Կոստանդեա և ծնատղաց և հարազատաց իմոց ըստ մարմնո և ի Քրիստոս։

Արդ, աղաչեմ Աստուծով զքրիստոսասէր պաշտաւնեայսդ սրբո եկեղեցո, որք պատահիք այսմ գրո ընթերցմամբ կամ աւրինակելով, համարձակ լերուք, զի բազում աշխատութեամբ ուղղեցի, և որ ինչ ի սմա ըստ մտի թուեսցի, գոհութիւն Տեառն մատուսցի, և եթէ սխալ ինչ հանդիպեսցի, զիջմամբ ըստ իս ներելով թողցի, զի ոչ ծուլութեամբ անփոյթ արարի, այլ մեծաւ ջանիւ այդ չափ կարացի։ Վասն որո բարեմիտ կամաւք յիշեսջիք զմեզ և զծնաւղս և զհարազատսն մեր աղաւթիւք՝ յառաջ ողորմութիւնն Աստուծոյ և յանծախելի սուրբ և անմահ պատարագն, զի արժանասցուք թողութեան մեղաց և արքայութեանն երկնից, ի փառս բարերարին Աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Ո՜հ, զմեզաւք դատապարտեալ կազմաւղ սորա զԱռաքել Հնազընդենց, և զծնաւղս, և զհարազատս, և զուսուցիչս իմ զհանկուցեալսն ի Քրիստոս, աղաչեմ յիշել ի Տէր։ Այլ Գրիգոր նորընծա քահանա, որ ծաղկազարդեաց զսա, և զընտիր գրչատրն զԱետիս, որ զգլխագրեաց զսա, յիշեսջիք աղաւթիւք ի Քրիստոս, որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն։

Բ

107բ Զայս Աստուածաշունչ մատեանս, զոր սկիզբն արարեալ իմոյ ձեռին Կոստանդեա սպասաւոր բանի, եթէ ի յանկ ելեալ աւարտեսցի զկնի

մահուան իմոյ, տաց զսա ի ժառանգութիւն մաւրն Աստուծոյ ի յԱւագ Ոլիճին: Եթէ կամի Աստուած, ուր և հասանէ վախճան կենաց իմոց, անդր առաքեցից, զի իմ ժառանգաւոր Սուրբ Աստուածածինն էւ եւ որ զայս գիրքս հանէ և կողոպտէ զՍուրբ Աստուածածինն՝ յետ իմ մահուան, հանցէ և զնա Քրիստոս իւր արքայութենէն, քանզի սեղանակողոպուտ էւ եւ ժառանգաւորն սորա, զոր վերագոյն յիշեցաք՝ աւտխ և դատախազ նմա ի համագումար ատեան հանդիսին: Վասն որոյ ընծայեմ զսա ի Աւագ Մլիճոյն Սուրբ Աստուածածինն՝ ի յիշատակ ինձ և հաւր իմոյ Մանուէլ երիցու, զի իւր մահուան աւրն ինձ լուիլու յայն սուրբ տաճարին Աստուածամաւրն ընծայեաց և նուիրեաց զիս, և ինքն հաւն է թաղեալ ի դամբարանի, վասն որոյ անշարժ մնասցէ ի նմա եղեալ: Ոչ ասեմ զտիւ և զգիշեր կալ մնալ ի նմա, զի այս անհնար է, այլ զի մի ոք իբր զիւր ստացուած առեալ գնասցէ ուր և կամի, զի զայս ես միայն կարեմ առնել յիմ կենդանութեան: Ոչ ոք իշխեսցէ անցանել և արհամարհել զհաստատուն տիպ տառիս մարդկանէ, ո՛չ թագաւոր, ո՛չ իշխան, ո՛չ եպիսկոպոս, և ո՛չ հայր վանաց, ո՛չ մեծ և ո՛չ փոքր, ո՛չ եկեղեցական, և ո՛չ աշխարհական, զի մի՛ հպարտացեալ ի դատաստան սատանայի անկցի և զվերագոյն անէծքս առցէ:

Եւ այս վերոյգրեալս հաստատուն է կամաւքն Աստուծոյ, և վասն առաւել հաստատութեան՝ իմով ձեռամբս գծագրեցի:

Գ

305ա Բարեխաւսութեամբ և աղաւթիւք սուրբ մարգարէին Երեմիայի և ամենաաւրհնեալ Տիրամաւրն որոյ զգիրքս շնորհեցաք Աւագ Մլիճոյն եկեղեցւոյն, մի յիշեր զմեղս իմ, և մի բարկանար իսպառ, զի գինք արեան քո եմ, և դարձոյ զսրտմտութիւնս քո յինէն:

Դ

169ա Եւ արդ լեր պաշտպան և վերակացու Յիսուս Հոգւոյ և մարմնոյ իմ յամենայն ժամանակի, և անտես արար զյանցանս հաւատացելոց ի քեզ, և փառաւորեա բարձր ի գլուխ պսակաւ առ դատաստան, և արժանաւորեա, զի մնասցէ անջինջ յիշատակ ինձ ի յեկեղեցւոջ Աւագ Մլիճոյ Աստուածածնին և Սուրբ Փրկչին:

326

ՃԱՌԸՆՏԻՐ

Վենետիկ, 212, Սարգիսյան, Ցուցակ Բ, էջ 294

Գրիչ՝ Բասիլ
Վայր՝ Խորին ուխտ

ա

Քրիստոս Աստուած, որ յայսմ աւուր լոյս ծագեցար աշխարհի, լուսաւորեա զհոգի Երիաճոսի, առաջնորդի սուրբ ուխտիս և ծնաւղաց նորին: Նա և. զյոքնամեզ գրչիս Բասլի՝ և Աստուածասուրու եղբաւր իմոյ, և ծնողաց մերոց և որոց զամէնն ասեն:

Բ

Քրիստոս Աստուած, որ ի խանձարուրս պատեցար վասն ազգի մարդկան, անշիջանելի լուսով քո պայծառացո զհոգի Երաճոսի և զՊետրոսի դիտապետաց մենաստանիս և ծնաւղաց նոցին։ Նա և զՍտեփաճոսի առաջին հիմնարկողի սորին, և զիմ մեղաւոր գրչիս Վասլի, և ծնողաց իմոց, և որոց զամէնն ասասցեն։

Գ

Հոգի Սուրբ Աստուած, աղբեր անսպառ, զերկնային պսակ քո պարգեւեա Բարսղի և հանգո զնա ընդ ընտրեալս քո՝ որ զաւրինակս պարգեւեաց և ինքն զկնի սակաւ աւուրց փոխեցաւ յաստեացս, և էր առաջնորդ աստուածաբնակ ուխտին Խորնիճ։ Ընդ նմին և Աստուածատուր քահանայի, որ բնաւին սպասաւորէր նիւթոց և ամենայն պիտոյից. և նմա պատրաստեա զարքայութիւն քո, և ծնողաց նորին, և ինձ յոքնամեղիս, և որոց զամէնն ասասցեն։

Դ

Քրիստոս Աստուած, որ լուաց զոտս աշակերտացն, լուասցէ և զյանցանս Ստեփաճոսի և զԿոստանդեայ հարազատին և զՀայրապետին, որ բազում աշխատութեամբ շինեցին զմենաստանս։ Սրբոց իւրոց սեղանակից արասցէ զհոգիս նոցա։ Նա և զտարաժամ վախճանեալն զՍտեփաճոս՝ զնոցին արմատն։ Հանգուսցէ Քրիստոս Աստուած և զհոգիս այնոցիկ, որ աշխատողաց գրոցս մեղաց թողութիւն հայցեն։ Նա և զիմս չարեաց պարտականիս, և զայնոցիկ, որ զամէնն ասասցեն։

Ե

Ողորմած և մարդասէր Աստուած, ողորմեա Բարսղի անարժան քահանայի և ծնողաց նորին, որ յարդար ընչից իւրոց աւժանդակեաց ի մատեանս յայս, դու հարիւրապատիկ հատո նմա ընդ միոյն յարքայութեան քում, և ամենայն եղբայրութեանս։ Նա և ինձ յոգնամեղ գրչի Բասլի, և հարսն իմոյ Նեսիսի, և այնոցիկ, որ զամէնն ասեն։

Զ

Յամի ՉԻ (1271), յայսմ աւուր՝ որ է չորեքշաբթի, բարեպաշտ արքայն Հեթում փոխեցաւ առ Քրիստոս՝ կրաւնաւորական վարուք, զոր հանգուսցէ Քրիստոս զհոգի նորա ընդ Մակարա ճգնաւորի և ընդ այլ սրբոցն, ամէն։*

---

* Գրված է ձեռագրի 189-րդ թերթում, Հեթում և թագավորը 1270 թ. հոկտեմբերի 20-ին հրաժարվելով թագից, կրոնավոր է դարձել, ընդունելով Մակար անունը։ Մահացել է նույն թվականի հոկտեմբերի 28-ին։

Առանձին հիշատակագրություններում հիշատակվում են «Վարդանուկ պարտիզպան» Խորին անապատի, գրչի «Հիպայ՝ քոյրը», նրա որդի Խաչատուր սարկավագը, «Յովաննէս կրոնավոր և ուխտի փակակալ», հանգուցյալ Պետրոս քահանան, Վարդան սարկավագը, Տիրացու եպիսկոպոսը՝ գրչի հորեղբայրը և ուսուցիչը, Առաքելը, նրա հարազատը՝ անապատի տնտես Թորոսը, Կոստանդ ծերունին՝ հյուրատեսը և հանգուցյալ Դավիթ քահանան։

327

ԱԻԵՏԱՐԱՆ

Քյուրտյան հավաքածու 111

Գրիչ՝ Բասիլ

ա

295ա Փառք... յամի Ջ-երորդի Ի-երորդի (1271) թուաբերութեան տումարի Հայոց, յառաշնորդութեան անբիծ հեղինակին եւ յաջորդին աթոռոյ Սրբոյն Գրիգորի տեառն Յակոբա, և ի թագաւորութեան Կիլիկեցւոց նահանգիս Լեւոնի, Աստուածատուր քահանայ ցանկացող եղեալ այսմ լուսալիզձ եւ կենսագիր...

Ջստացող սորա զԱստուածատուր՝ զհոգւոյ եղբայրն իմ եւ զծնաւղսն նորին։

բ

224ա Աղաչանաւք սրբոյն Ղուկասու աւետարանիչի ողորմեա Բասլի եւ ծնաւղաց իմոց։

գ

Կազմող՝ Առաքել Հնազանդենց

296ա Ո՛հ զմեղաւք դատապարտեալ կազմող սորա զԱռաքել Հնազանդենց եւ զծնաւղսն իմ, եւ զհարազատսն իմ զԿարապետ քահանայ եւ զՊաւղոս սարկաւագ, եւ զուսուցիչն իմ զՍարգիս քահանայ՝ զհանգուցեալսն ի Քրիստոս աղաչեմ յիշել ի Տէր։

Ի թվին Ջի (1271) կազմեցաւ սա։

դ

Հետ. ստացող՝ Յովհաննէս Արքեղբայր

82ա Ջստացող սորա զՅոհաննէս եպիսկոպոս՝ արքեղբայր Հայոց, ծնողաւք իւր եւ ընտանեաւք յիշեալ լիցին ի տեսողացդ եւ վայելողաց ապագայիցդ, եւ զձեզ Աստուած յիշեցէ, որպէս դուք զմեզ, ամէն։

328

ԳՈՐԾՔ ԴԻՈՆԻՍԻՈՍԻ ԱՐԻՈՊԱԳԱՑԻՈՅ

Ալիշան, «Հայապատում», էջ 486

Գրիչ՝ Յովհաննէս Արքեղբայր

ա

Ես Յովհաննէս եպիսկոպոս և բարուն, ծառայ մեծին Աստուծոյ և ընտրելոցդ, որդի մեծ իշխանաց իշխանին Կոստանդեայ՝ աբրահամեան Հերունւոյ և աշխարհաշէն առաքինւոյ, և եղբայր համահայր ի Քրիս-

տոս փոխեցեալ բարեպաշտ արքային Հեթմոյ, որոյ յիշատակն օրհնութեամբ և ցօղ կենսակայլակ կողից կենարարին իջցէ ի դամբարան շիրմի նորա, ամէն։ Ի թվականիս Հայոց ՉԻ (1271) գրել եառւ զիմաստալի և գերապատում տառս սրբոյն Դիոնիսիոսի Աթենայ եպիսկոպոսի և տիեզերալոյս վարդապետի, ի թագաւորութեանս քրիստոսապսակ արքային Լեւոնի՝ տեառն իմոյ և եղբօրորդւոյ, զոր աջն Աստուծոյ միշտ պահեսցէ ի չարէ, աստուածաշնորհ զաւակօքն իւր՝ Հեթմիւ և Թորոսիւ և Ռաւբինեաւ, փառաց ի փառս բարձրացուցանելով, ամէն։

Եւ գրեցաւ սա յերկուց գրչաց՝ ի Ստեփանոսէ և ի Յովհաննիսէ, որոց Տէր ողորմեսցի, ի կաթողիկոսութեան տեառն Յակոբայ, յորմէ և զօրինակն ընկալայ, ի լուսաւորութիւն խաւարելոյս և յիշատակ բարի ինձ, և ծնողաց իմոց, և համայն զարմից։ Աղաչեմ Տերամբ Աստուծով, որք օգտիք ինչ ի սմանէ և կամ գաղափարէք, ողորմութիւն և թողութիւն խնդրեցէք մեզ ի Քրիստոսէ Աստուծոյ, զոր և ձեզ տացէ Քրիստոս։

Բ

Յաստուածային սէրըն հարեալ
Սա որ հրով նորին վառեալ,
Որ և ըզտառս այս ըստացեալ
Բամբիշըն մեծ Զիմի կոչեալ,
Հեթմոյ քաջի նա դուստըր լեալ՝
Որ էր արքայ Հայոց օծեալ.
Անցաւոր զայս ծանուցեալ
Անանց թագին այն բաղձացեալ։
Նորափետուր սովաւ պճնեալ,
Լի լապտերօք ընդառաջեալ,
Նոր փեսային է հարսնացեալ,
Մտից դըրախտին արժանանալ։
Դղկելիս սովաւ թախծեալ
Երկամբք մատանցս ըղսա ստանալ,
Սակս որ ի մի գործ ըսկըսեալ
Փոքր ինչ յայլոց օժանդակեալ։
Ստացողք վերջո և որք օգտեալ՝
Հայցեմք բաթի մասըն մեզ տալ,
Ապրիլ ձեօք ի հրոյն գանձեալ
Մեք մերայօքըն զայս ժըտեալ։
Սըրտիւք ի ձեզ եմըք դիմեալ
Բուըըն զոտից ձերոց հարեալ,
Երանութեան սուրբ վիճակեալ
Եւ թողութեան պարգեւ շնորհեալ,
Մեզ և մերոցն յիշողքն յիշեալ
Եւ համայնիւքս Աստուած օրհնեալ*։

* Տների սկզբնատառերով հոդվում են «Յոհաննեսս ասեմ» բառերը։

Գ

Զհմաստութեամբ լցեալն և զամենայն բարեձեւութեամբ զարդարեալն, զսիրողն Աստուծոյ և զսպասաւորն ամենայն ծառայից նորա, զարքածին բամբիշն Ֆիմի և զաստուածապարգեւ զաւակն նորին՝ զՊալիան և զՃուան, և ղհեղանաղն Մարկոսն յիշեցէք ի Քրիստոս Աստուած, ստացողք սորա և վայելողք։ Եւ Աստուած զձեզ յիշեսցէ ի բարի։

Այլ և զեղկելիս Յոհան եպիսկոպոս՝ մի մոռանայք զզրողիկս անարժան։

Դ

Ընկալ, ո՛վ աստուածասէր և զթասէր հոգի, մեծդ ըստ մարմնոյ և բարգաւաճդ ըստ հոգւոյ՝ ծիրանածինդ Ֆիմի, զբաղձալին քո՝ երկամբք ձեռին մեղապարտիս Յոհաննէս եպիսկոպոսի կրսերոյ եղբօր հօր քո, որով յԱստուած և յաստուածայինսն խոկասցիս միշտ և տրտմեալ սրտի քո սփոփանս սովաւ արասցես, գիտելով սեփհական է մարդոյ նժդեհութիւն և պանդխտութիւն և փորձանք։ Որոց անդորր տացէ ձեզ, որ ամենահնարն է։

329

ԺՈՂՈՎԱԾՈ

Երևան 10062

Գրիչ՝ Յոհաննէս.

ա

52բ Փառք աստուծոյ Հաւր և բանի նորայ Յիսուսի Քրիստոսի և Սուրբ Հոգւոյն յաւիտեանս, ամէն։

Թուականութեանս հայոց ի ՉԻ (1271) գրեցաւ Պատմութիւն վարուց երանելոյս Անտոնի։ Աղաչեմ զամենեսեան որք ընթեռնոյք զվարս սրբոյ հաւրս Անտոնի, յիշելոյ արժանի արասջիք զգրող սորայ զՅոհաննէս անարժան, և զերեսսին եղբարսս իմ՝ զԳրիգոր և զԱնդրիաս, և զմիւս Գրիգոր, և զհոգևոր հայրն մեր Ջաւվար՝ որ են սուրբք և ճգնաւորք ի կրաւնս քահանայութեանն։ Եւ որք յիշէք, յիշեալ եղիջիք և դուք, և Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս, ամէն։ Յիշեսջիք և զդեռաբոյս եղբայրս մեր Սաեփանոս։

Աստուածային շնորհացն առ ընդունիլ և Սուրբ Երրորդութեան տեղի ասթեվանի և բնակարան, ո՛վ ամեներջանիկ սուրբ հայր Անտոն, որ
53ա քոյով ամենայպայծառ սքանչելի և սուրբ և մարդկան անտ||անելի ճրագնութեամբդ զաստանայական բռնութիւն ընկճեալ խորտակեցեր և կոխանս արարեր, առ ոտս քո անկեալ աղաչեմք զքեզ, մի մոռանալ զհաւատացեալքս Քրիստոսի և մաղթանս քո առ Տէր մեր և Աստուած, զի ապրեսցին ի պատրանաց բանսարկուին մեծաւ շնորհաւք մարդասիրութեան նորայ։ Յոյժ պաղատանաւք հայցեմք և մեք, որ զքոյ վերաստացաք զգիրս, աղաչեայ վասն մեր զՏէրն Քրիստոս՝ պարգևել մեզ զանշարժ զխաղաղութիւն ի կեանս յայսմիկ, պահել ամենազաւր աջով նորա

յամենայն փորձութենէ և յաւիտենական հանկստեանն արժանանալ ի Քրիստոս քոյով բարեխաւսութեամբ տէր և հայր։

Ընդ նոսին յիշեսիք և զՍէք քահանայն, որ զաւրինակս պարգևեաց։

Բ

Գրիչ՝ Յոհան

310ա Փառք ամենասուրբ Երրորդութեան յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Ո՛վ սուրբ և ընդրեալ և մաքրեալ ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ հոգեւոր հայր իմ Անդրէաս, յիշեայ զանարժանս և զանպիտանս Յոհան ի սուրբ և յարժանաւոր յաղաւթս քո, զի թերևս հաշտեսցի բարեգութն Աստուած քոին պաղատանաւք և բժըշկեսցէ ղվիրաւք թարախեալ հոգիս իմ, զի մի ամաչեցից ի յաներեկ աւուրն, յորժամ բանք սպառին և գործք թագաւորեն, և Քրիստոս, որ առատն է ի տուրս պարգևաց մեզ և ձեզ ողորմեսցի, ամէն։ Աղաչեմ և խոշորութեանս մի մեղադրել, և ընկալ զսակաւ գրիկս իբրև ղերկու լումայս տառապեալ կնոջն կամ իբրև զյետինս մշակսն, որ ի յայգին գործեցին, և յիշեայ զբազմայմեղ ծառայս Քրիստոսի և ձերոյ սրբութեանդ, աղ /// յո՞ յերեսս անկեալ աղաչեմ յիշել ղհոգևոր հայրն իմ զՎարդան սուրբ քահանայ, և Քրիստոսի փառք յաւիտեանս։

Գ

130բ Տէր Աստուած, բարեխաւսութեամբ սորա ողորմեա Անդրի[աս]ի և գրողի։

Դ

52բ Աղաչեմ յիշել ի Տէր զաշխատողս ի սմայ զեաչատուր քահանայ և զողորմելիս Յոհան՝ եղբայր սորայ։

Ե

139ա Բարեխաւսութեամբ սուրբ ճգնաւորիս, Քրիստոս ողորմեա մեղապարտիս Անդրէասի և մեղուցեալ ծառայի նորին Յոհ[ա]նի, ամէն։

Զ

306բ Վա՛յ մեղաւորիս Յոհ[ա]նայ, թէ ինչ կամիմ լինել յանդուն որդանցն։

Է

Գրիչ՝ Գրիգոր

245ա ՋԱնդրիաս քահանայ յիշեսջիք ի Քրիստոս։ Ընդ նոսին և զտառապեալ գրող սորայ՝ զԳրիգոր բաղմայմեղս, ընդ նոսին և զհոգևոր հայր մեր Ջաւվար։

Ը

Սրբագրիչ՝ Աշխեն

321բ Ո՛վ սուրբ հարք և եղբարք, յորժամ աւգտիք ինչ ի սմանէ կարդալով և կամ գաղափար առնելով կամ լսելով, յիշելոյ արժանի արասջիք զԱ-

չին Նուասա քահանայս և զսպասաւորս Սրբոյն Նիկողայոսի, քանզի և ես սակաւ ինչ աշխատեցայ ի սմայ ուղղելով զսղալն զոր գտի։ Եւ զձեզ և մեզ և ծնողաց մերոց թողութիւն շնորհեսցէ Տէր Յիսուս, ամմէն։

Թ

318ա ԶԱւշին նվաստ քահանայս և ըզծնողսն մեր յիշեսջիք ի Տէր Յիսուս։

Ժ

Կազմող՝ Ստեփանոս

321բ ԶՍտեփանոս պրակս, զկազմող տառիս աղաչեմ յիշել ի Տէր, և զհոգեւոր հայրն իմ զԹադեոս, և Աստուած զձեզ յիշէ իւր յահեղ ատենին, և ընդ աջոյսն դասէ զհոգիս յիշողացն։

ԱԻԵՏԱՐԱՆ ԿԵՌԱՆ ԹԱԳՈՒՀԻՈՅ

Երուսաղէմ 2563

Գրիչ՝ Աւետիս

ա

6բ Տէր իմ Քրիստոս փրկիչ մարդկան
Եւ թագաւոր միշտ յաւիտեան,
Զարժանացեալսն ի քէն աւժման,
ԶԼևոն արքայն ի Հայաստան,
Եւ զթագուհին սորին Կեռան,
Որ եւ ստացաւ ըզքոյս մատեան,
Յորժամ փառաւք գաս հայրական,
Ընգալ ի դասս աշակողմեան։
7ա Եւ զՀեթում սոցին որդի,
Թագաժառանգ Հայոց սեռի,
Պահեա կենաւք երկարեկի,
Հանդերձ եղբարբք իւրաւք բարի։
Եւ զծնողաց սոցին հոգի,
Իւրեանց նախնեաւքն եւ այլ զարմի,
Ընգալ ի լոյսդ ընդ գերարփի,
Եւ քեզ Տէր փառք յամենայնի։

բ

372բ Փառք ամենասուրբ Երրորդութեանն յամենայն արարածոց, երկնաւորաց եւ երկրաւորաց, յիմանալեաց եւ զգալեաց, եւ յամենայն շնչոյ եւ յամենայն եղականաց՝ ի գոյից եւ յոչ գոյից, որ ծանր եւ մթացուցիչ խորհուրդս ի բաց եդեալ, ոչ յայլ ինչ քան յԱստուած եւ յաստուածայինսն խոկալ փութան բանիւք եւ արդեամբք, երկրորդ զստորեւ կացեալս վարկանելով, զի պնդելիք են եւ անկայանք, եւ վերնոյն, եւ արդարեւ անապականին բաղձան բարւոյ, ի գլուխ ըստ իմաստացն զակն ոգւոյն ունելով, յորմէ ամենայն եւ որով ամենայն, զոր է տեսանել յերանուհիս այս բամբիշ, ի մաքուր աւբիորդ փեսային սուրբ, ի թագուհին Կեռան, որ
373ա զյոլով մասունս||առաքինութեան կրելով յինքեան, փութա այլս ի վերայ այլոց բարդել, զի համայնիւքն պսակ բիւրակնեա յաւրինեսցէ ինքեան, և ղանկապուտն թագ ի վերայ այսր կալցի, զի ամենագեղ վայելչութեամբ հաճոյասցի Որդւոյն Աստուծոյ։

Սոյն վասն ողջախոհ մոլութեամբ վարէր և հանապազաւր կանխէր երկրպագութիւն Տեառն ի գիրկս մաւր մեր Սիովնի սրբոյ, ունկն գնէր գրոց սրբոց, և լուալ զբանն, եթէ՝ Ծրանի որ ունիցի զաւակ ի Սիովն, և ելեալ ի խնդիր իմոյ նուաստութեանս Աւետից գրչի յանձնարարեալ ստանալ զճշմարիտ զաւակս զայս, զոր Հոգին թելադրեալ ի շրթունս երանեալ աւետարանչացն, խաւսել վասն տնաւրէնութեան մարդացելոյ
373բ բանին, նաև||վասն փրկութեան վարդապետութեան նորին Որդւոյն Աստուծոյ, եւ նշանաց եւ արուեստից, զոր առ մեզս բնութիւն, եւ վասն իջման Հոգւոյ Սրբոյ առ ընտրեալ դասս առաքելոցն, եւ զնոսին առաքեալ քարոզս եւ աւետարանիչս տիեզերաց, եւ տալ իշխանութիւն որոց կամիցի։ Եւ իմ յանկ հանեալ զսայ, ետ ի ձեռն այլում հմուտ և յարգի յարհեստ գրչութեան՝ զարդարել զսա խորանաւք և ծաղկաւէտ վայելչութեամբ, և ոսկիատիպ պայծառութեամբ, և ետ ի վանս, որ կոչի Ակներ։

Վասն որոյ աղաչեմ զտեսողսդ և զվայելողսդ սորա, յիշել սրտի մտաւք զերիցս երանեալ թագուհին զԿեռւսանն՝ զարմիւքն իւրովք կենգա-
374ա նեաւք՝ յաղաւթս ձեր, զի երկար ժամանակաւ ու||զղեսցէ զթագաւորութիւնն իւր, և ետ ելից աստի՝ թագակից և պսակակից լիցի սուրբ թագուհեացն։ Յիշեսջիք և զառ ի Քրիստոս հանգուցեալն զհայրն իւր զՀեթում, հանդիստ և ողորմութիւն շնորհելով նմա ի Տեառնէ, և ընդ աջեայսն իւր դասեսցէ, և կենդանեացն իւր աջովն իւրով պաշտպանեսցէ, փրկելով յարժանահաս նեզլաց և վշտաց անդորր տալով ամպրոպ խռովութեան կուտակեալ ալեացն, յորում շրջապատեալ սուղանիմք։

Արդ, գրեցաւ սա ի թուականութեանս Հայկազնեա տումարիս ի ՉԻԱ (1272), ի թագաւորութեան Հայոց Լեւոնի աստուածասիրի, և ի հայրապետութեան տեառն Յակովբայ։

Յիշել այժմ աղաչեմ առաջի զենման անարատ գառինն Քրիստոսի
374բ զամենայն բարեձևութեամբ զարդարեալ||զարքայն Հայոց զԼեւոն, զկենաց կցորդ և ղրանից ընկեր, նա և թագակից երանուհոյն Կեռւանի, երկար ժամանակաւք աշխարհավարել զթագաւորութիւնն իւր արդար իրաւամբք, և ետ աստի ելից ընկալցի զերկնային խորանն թագաւորել ի նմա ընդ սրբոց թագաւորացն Թէոդոսի և Կոստանդիանոսի։ Նա և զծիրանածին որդեակն իւրեանց զՀեթում, զի հասցէ ի չափ հասակի կատարման, և աջն աստուածային ի վերայ սորա լիցի, ի նստել ի տան և ի գնալ ի ճանապարհի, ի ննջել և ի յառնել, ժառանգել զթագն հայրենի, և կեցեալ ըստ աւրինացն Աստուծոյ վարժեալ գրովք աստուածայնովք և զինուք սպառազինաւք՝ յաղթող լինել ի վերայ թշնամեաց խաչին Քրիստոսի։

375ա Ընդ յիշատակալովքս աղաչեմ յի||շել առաջի Քրիստոսի Աստուծոյ զանդրանիկ դուստր սոցա Ձապլի՝ զփոխեալն ի Քրիստոս, զի ընկալցի զսա ի կենդանեացն իւր խորանս, պայծառացեալ լապտերաւք մուծանել յառագաստն ընդ իմաստուն կուսանսն։

Դարձեալ, յիշման արժանի առնիցէք և զերկրորդ քոյր սորա զՍպիլի. զննջեցեալսն ի Քրիստոս, զի փոխանակ զգալ ի վայելմանցս ունայնու-

Յիսան, դոր ոչ վայելեաց, վասնզի ստընդիմա զոլով, ընկալցի զանթառամ փառաց զպսակն, և զգեստն անկողոպուտ՝ զլոյս մշտընջենաւոր։ Խընդրելով և զայս ևս ի Քրիստոսէ յառատաձիր պարգևատուէն, զի զկենդանի քոր սոցին պահեսցէ անվրդով, նաև երկար ժամանակաւք տալ զսա
375ր *հաւր և մաւրն լնուլ և փարատել զսուգ տրտմութեանն, զոր ի ծննդոց||իւրեանց ընկալան։*

Վասն որոյ աղաչեմ զդասս սրբազանից՝ զվայելողքդ սրբոյ Աւետարանիս, նաև զպատահեալ տեսողք սորա, առնուլ ի մտի զբան վարդապետութեան Քրիստոսի, որ ասէ, Խնդրեցէք և տացի ձեզ, հայցեցէք և գտջիք։ Խնգրեցէք ի յԱստուծոյ ի հասարակաց կենաց տուողէն, զի զդեռաբոյս որդեակն զկոչեցեալն Թորոս՝ մխիթարութեան որդին, որ այժմ տուեալ եղև պարգևք աստուածային, առնուլ զհասակ երիտասարդական, և հասանել մինչև ի խորին ծերութիւն, զաւրութեամբ հզաւրին զաւրացեալ և առաւել քան զառաւել մեծացեալ՝ լնուլ զտեղ նախնոյն իւրոյ զմեծն Թորոսի, ընդարձակել զաշխարհս Հայոց, առնուլ զվրէժս քրիստոնէից ի
376ա *քաննասարա, նկուն լիցին ի սրոյ||դորա բնակեալքն ի յԵգիպտոս, այսպէս փառաւոր լիցի յաստուածայնուստ յաշխարհի իբր զարեգակն ծագեալ նուաղեցուցանել զլոյս ճրագաց։*

Աղաւթս ձիգս մատուցանել առ Աստուած, մանաւանդ յիշմամբ և սրտահառաչ ողբով յիշել զաղբեւրն յորդառատ, զմայրս իմաստութեան, զերախտաւորն Հայաստանեայցս՝ զարքայն Հեթում, որով սոքայքս յառաջ ածան։ Զի այնչափ սիրեաց զքրիստոնեայս և զկեղեցիս Հայաստանեայց մնալ հաստատուն, մինչ զի զանձն իւր եդ ի մահ բաղում անգամ, կեցեալ սորա բարեպաշտութեամբ և ուղղութեամբ թագաւորութեանն, կատարեալ [ը]նթացս իւր փոխեցաւ ի Քրիստոս։ Տացէ սմա Աս-
376բ *տուած փոխանակ անցականից զանանց թագաւորութիւնն ասելով||սմա՝ Ծառայ բարի և հաւատարիմ եկ մուտ յուրախութիւն Տեառն քո։ Լիցի սա թագակից և պսակակից սրբոց թագաւորացն, վայելել և թագաւորել յերկնային քաղաքն ի Վերինն Երուսաղէմ։*

Զողորմածն, ղհեզանազն, բարէբարոյ, զաղքատասէրն, զբազմաբաշխն, զլցեալն ամենայն բարութեամբ, զճշմարիտ ժառանգն Հայաստան աշխարհիս Զապիլ թագուհի՝ զհանգուցեալն ի Քրիստոս, յիշեցէք յաղաւթս մաքուրս, զի և նա բազում հոգէբարձութեամբ նախախ[նա]մեաց զաշխարհս, նաև զեկեղեցիս և դվանաւորեայս, և ի վերա ամենայն բարեացն զոր գործեաց, յաւել և զայս, զի ետ Հայաստան աշխարհիս ժառանգ, զի ոչ շրջեցաք անտերունչս, և կամ վարատեալս, այլ զբնա-
377ա *կութիւնս||մեր կալաք։ Տացէ սմա Աստուած սեփհական հայրենիք զդրախտն եդեմական, զուարճանալ և բարգավաճիլ ընդ հեղինեանսն, և ընդ այլ սրբոց թագուհեացն։*

Յիշել աղաչեմ ի միշտ զենեալ և անմահ կենդանւոյն զենումն զմեծ զաւրականն Քրիստոսի, զգեղաղէշն քաջակորով, զարեամբ նահատակեալն զԹորոս՝ որդի սոցին, որ սրախողող եղեալ ի Մառի։ Վասն զի մեծ և անպատմելի ոճիրս գործեաց յանաւրինացն զաւրս, ընդ որս մախացեալ սրախոց և կտրտամահ արարին յոլով նիզակակցաւք համաղ-

նէիւք նորին, որո յիշատակն աւրհնութեամբ։ Անուն սորա ի դպրութիւն կենաց գրեսցի, զի անսուրբ և ամբարիշտ ձեռաւք նուիրեցաւ ընդունելի պատարագ Աստուծոյ Հաւր ի հոտ անուշից ի վերայ խաչին սեղանւոյ, յորս հաճեսցի Տէր իբր յԱբելին, ի Նոյին և յԱբրահամուն բոլորապտուղ զոհացս, ամէն։ Որ թէպէտ և հաճոյ գտաւ Աստուծոյ սակաւ աւուրբք և կատարեալ քան զբազմամեայսն, զի ցանկալի էր Տեառն անձն նորա, վասն այնր ի միշոյ մեղաւորացս փոխեցաւ անաղաւտ լապտերաւք, զի մի մոռայլ ինչ նսեմութեան զճաճանչ նշոլից նորա մղտացուսցէ, և այժմ թագապճնեայ ընդ համասեռսն ինքեան գեղապարէ զեռահիւսակն նուագ երիցն և միոյ Տեառն մատուցանէ սփոփութիւն յուրայոցն, անմխիթար սրտից խնդրելով գերեաց դարձ, կապեղոց արձակումն, կորուսելոց գիւտ,
378ա վարուցելոց և աս||տանգէլոցն կազդուրումն և խաղաղութիւն։

Ընթերցողք այսմ մատեան աստուածաբան Աւետարանիս զսոյնս բառնալ ի ձեռս եւ խնդրել ի Քրիստոսէ միջնորդութեամբ սորին, զի միշտ զաւդուտն մեր և զհաճոյսն իւր տնաւրինեսցէ թագաւորութեանս մեր, ներել եւ անոխակալ լինել յանցանաց մերոց։ Եւ մի ըստ մեղս մեր տալ մեզ, այլ ի մեղս եւ յանաւրէնութիւնս վերակացու իւրագին ծառայիցս լիցի, եւ յիշողացդ եւ յիշելոցս Տէր ողորմեսցի։

Այլ եւ զեղկելի յԱետիս գրիչ յիշել յաղաւթս մի մոռանայք, ո՛վ աստուածազարդ եւ սրբասնեալ քահանայք, որք յայսմ աստուածախաւս
378բ մատենիս խրախանայք եւ յոսկիանկար ծաղկոց եւ պատկերացս||բարգաւաճիք, զհանգուցեալս ի Քրիստոս զպարոն Կոստանդին զտէր Լամբրունին, զմեծ հայր բարեզարդհոյս Կեռանի յիշեցէք յաղաւթս, զի տացէ նմա Աստուած հանգիստ յանսպառ կեանսն, դասակցելով սրբոց իշխանացն, որք վասն Քրիստոսի նահատակեցան։ Զի ազգայնովք ընտիր գոլ նմա եւ հարազատութեամբ գեր ի վերոյ, որդի մեծին Հեթմոյ սեւաստուսիոսի, եղբաւր տեառն Նեռսէսի, եւ աստիճանաւ պատուեալ, զի են թագադիրք թագաւորութեանս Հայոց, զի շնորհեսցէ նմա Աստուած թագ արքայական բրաբիոն պսակ ի գլուխ նորա, եւ փոխանակ անցականիս
379ա թագաւորելոյ, ընկալցի ի Քրիստոսէ թագաւորու||թիւն մշտընջենաւոր։

Դ

Ի թուաբերութեանս Հայոց ՉԻԴ (1274), յամսեան մայիս ի հնգետասան աւրն, յԱստուած փոխեցաւ Ըռուվբէն, որդի երանուհոյն Կեռանի, եւ եթող սուգ մեծ, զի յոյժ գեղազարդեալ էր տեսակով, ընդ որս եւ դուք ցաւակից գոլով, սրբերամ դասք, յաղաւթս յիշատակել զտրընդեայս զայն, զի ընդ անմեղ մանկունս Աստուծոյ Հաւր նվիրեցան դասակցեսցի եւ սփոփանս հաւրն եւ մաւրն արասցէ ի խոր տրտմութենէն ազատել։

Յաղաւթս յիշել աղաչեմ զՍմբատ զմխիթարութեան որդեակ սորա, որ ծնեալ եղեւ յետոյ մահուանն ըՌուբէնի, երկար ժամանակաւ վայելել
379բ ի տես սորա, խնդալ||ի տուրս աստուածային, զի ոչ եթող թերի զտեղի, զոր առ իւրն տարաւ։ Այլ եւ մաղթանս առ Աստուած մատուսցուք, զի զդեռաբոյս քոր սորին զՍպիլ պահեսցէ Աստուած անվրդով երկար ժամանակաւ մնալ նմա, զի յոյժ սիրեցեալ եղեւ յաչս հաւրն եւ մաւրն։ Սրտի

մտաւք աղաւթս արարէք եւ միւս այլ քաւր սոցին Զասպէլի, որ է ամաց երրորդի՝ կեալ յաստիս յերկայն աւուրբք հասանել ի չափ հասակի, բարիոք աշխարհավարիլ սրբամիտ եւ ողջախոհ մարմնով և տալ փառս ամենասուրբ երրորդութեանն։

Ո՛վ եղբարք, խնդրեցէք յաղաւթս ձեր զտնտեա տղայք արքայհոհոյն, զԿոստանդին, զՆերսէս, զԱւշին և զՌուբէն մնալ անսասանե||լի ամենայն պատահմանց*։

331

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7651

Գրիչ՝ Աւետիս

ա

130բ Ո տէր իմ Յիսուս Քրիստոս, յորժամ նստիս յաթոռ դատողական հատուցանել մարդկան իւրաքանչիւր զգործս իւր, ղոչ թողեալս ի դատաստան քո և զխլեալս յիրաւանց քո զԱւետիս գրիչ, որ խրատեալս եմ վճիռ տալով մեղաց իմոց, բաւականասցի ի մարդասիրէդ, ղի ընդունիցեմ զարքայութիւնդ։

բ

268բ Փառք քեղ անսահման անուն և անզուգական անձնաւորութիւն, Հայր և Որդի և Սուրբ Հոգի յամենայն արարածոց, և բնաւից եղականաց, ամէն**։

332

ԼՈՒԾՄՈՒՆՔ Ի ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ԺՂԱՆՔ ԿՈՉԵՑԵԱԼ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Երուսաղեմ 898 (1619 թ.) Պողարյան, ցուցակ Գ, էջ 414

Գրիչ՝ Ստեփաննոս Իրիցուղի

ա

24 Ջամենագով եւ զտրամաբան վարդապետն Վարդան՝ զարարող բանիս, եւ զստացող սորա զմեծապատիւ բարեպաշտ մայրն Կեւտան թագունէ՝ Թեւանու, հրամայեաց ինձ մեղաւորի Սաեփաննոսի եւ մականուն Իրիցուղի գրել զհոգիալից տառս՝ ի մխիթարութիւն աստուածասիրաց անձանց։ Արդ, աղաչեմ, որք հանդիպիք սմայ յիշեսջիք աղօթիւք զվերոյ գրեալն՝ զհոգեւոր մայրն ա[մենայն] կրօնաւորաց, եւ զաստուածատուր դստերքն իւր՝ հանդերձ ուստերօք եւ դստերօք, անփորձ մնալ յաստիս եւ ի հանդերձեալ գալստեանն յաջագահ դասուն հանդիպիլ սմայ, եւ ընդ հրեշտակս փառաւորել զամենասուրբ երրորդութիւնդ, յանընպատ յաւիտեանս, ամէն։

---

* Հետագայի ստացող նսար Ամբեցին եղծել է անունը («Գրիգոր») և գրել իրենը։
** Գրիչը նույնն է նախորդի հետ։

Բ

32 Զսրբազան վարդապետն Վարդան, յարմարող տառիս եւ զստացողս սորայ, եւ ղգրողս, աղաչեմ յիշել ի Տէր, եւ Աստուած մեզ եւ ձեզ ողորմիսցի։

Գ

72ա Զարժանին յիշատակի զսուրբ վարդապետն Վարդան յիշեսջիք աղօթիւք։ Ընդ սմայ եւ զբարեպաշտ տիկինն եւ ղխաչընդուս բարձօղն, որ է մայր թադուհէ ամենայն Հայոց Կեռանի եւ ստացող այսմն գծի, որ Թեւանուն կոչի, որք հանդիպիք այսմըն տառի, աղօթից անձին ձեզ ինք լիցի Քրիստոս, եւ ձեզ ողորմիսցի և ամենայն հաւատացելոց ի Քրիստոս այսմ եւ յաւուրն ապագայի։

Դ

81բ Որք օկտիք ի սմանէ, ծասքելով ի հոգեւոր կերակրոյս իբրեւ զմեղու զխորիսխ, յիշեսջիք զսուրբ եւ զարդիւնական վարդապետն Վարդան, զարարօղս սորա, ընդ նմին եւ զպատուական եւ զբարի մայրն կրօնաւորաց, եւ տառապեալ աղքատաց, զոր զրէ Քէ Քրիստոսի զինքն հրամայեաց՝ Աղքատ էի եւ տեսէք։ Զոր յուսամ յիւր մարդասիրութիւնն աղաւտիլ ի մեղաց մեզ եւ ամենայն քրիստոնէից այնմ ահագին աւուրն։

Ե

15բ Որք օկտիք ի սմանէ և մխիթարիք, յիշեսջիք աղօթիւք զստացօղս սորա եւ զգծօղս սորա, զմայր ///

333

ԽԱՉԳԻՐՔ

Երուսաղէմ 1654, Պողարյան, ծուցակ ե, էջ 485

Գրիչ՝ Ստեփանոս Բաճանա
Վայր՝ Սկեւռայ

163 Փառք համագոյ անբաժանելի Երրորդութեանն եւ միոյ տէրութեան եւ աստուածութեանն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Յեւթնհարիւրորդի քսաներորդի առաջներորդի (1272) թուականութեանն Հայոց գրեցաւ երաժշտական տառս ձեռամբ Ստեփանոսի քահանայի, ի խնդրոյ պատուելի եղբաւր մերոյ Գրիգորի քահանայի, ի վայելումն անձին եւ յիշատակ ինքեան եւ ծնողաց իւրոց՝ փոխեցելոց ի Քրիստոս, եւ որոց դեռ եւս ի մարմնի, եւս առաւել սնուցչին իւրոյ հոգեւոր տեառն եւ վարժապետի տէր Սիմեոնի՝ առաջնորդի սրբոյ ուխտիս Սկեւռայի, ուրանաւր եւ ձեռահիւսս աւարտեցաւ, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչիս եւ ամենասուրբ ծնօղի իւրոյ, եւ Սուրբ նշանի, ի հայրապետութեան տեառն Յակոբայ քաջահանճար հռետորի, եւ յարքայութեան բարեպաշտն Ղեւոնի՝ որդւոյ Հեթմոյ, զորս խնամք մեծին Աստուծոյ զբնաւ նախայիշե ///

334

ԱԻԵՏԱՐԱՆ

Մարտիրոսյան, Յուցակ Մշո, էջ 97—98

Վայր՝ Շերժիոյ և Բագոսի վանք,

Փառք Աստուծոյ եւ Յիսուսի Քրիստոսի եւ կեցուցիչ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Որպէս օտարն, որ տեսանէ օտարութենէ իւր գաւառն, նոյնպէս գրողն փափաքի՝ յորժամ գրոց տեսանէ վերշ եւ վճարին կատարէ։

Գրեցաւ լուսազարդ Աւետարանս ի թուականիս յաւիտենից ՅՀՇԱ, եւ Հայոց թուիս ՉԻԱ (1272), յերկիրս Շէրժիոյ եւ ի վանքն նոյն փառաւոր վկայիցն Սերժիոյ եւ Բագոսի, առ ափն Եփրատ գետոյ, ընդ հովանեաւ ամենասրբուհւոյ Աստուածածնի, իշխանութեան Կիր-Կոստանդին Պատաս ամիրային, զոր երկար ժամանակ արասցէ Քրիստոս տամբ եւ զաւակօք, ամէն։

335

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՍՈՒ ԻԳՆԱՏԻՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Երուսաղէմ 352, Պողարյան, Յուցակ Բ, էջ 248

Գրիչ՝ Յոհաննէս

Փառք Քրիստոսի, որ արժանի արար հասանել յաւարտումն կտակիս, շնորհեա եւ այժմ ողորմութեան քում ժամանել յահաւոր քում գալստեանդ, ամէն։

Յամի ՉԻԱ (1272) ի թուականութեան Հայոց գրեցաւ մատեանս հոգելից աւետարանչին Ղուկայ, զոր մեկնեաց սուրբ վարդապետն Իգնատիոս եպիսկոպոս, ի խնդրոյ մեծի դիտապետին Հայոց տեառն Գրիգորիսի։ Զոր տեսեալ պատուական քահանայն Վարդան փափաքեց սմա ըղձալի սրտիւ, եւ եհտ գրել զսա յիշատակ բարի հոգւոյ իւրում, եւ ծնաւղաց իւրոց, եւ ամենայն ննջեցելոց իւրոց։ Եւ ես փցնագիրս Հաճիսուկ, ոչ հայելով, ի խոշորութիւն եւ յանյարմարութիւն գրչիս, այլ եռանդոտ յաւժարութեամբ գործ ի ձեռն առեալ գրեցի զսա ի վարժումն ուսումնասիրաց, եւ յիշատակ ծնաւղաց իմոց եւ եղբարց եւ բազմամեղ անձին իմոյ։

Արդ, գրեցաւ ձեռամբ անարժան ծառայի Աստուծոյ Յոհաննէսի, զի անձն իմ լցեալ էր ամենայն մեղաւք, եւ ի միում աւուր ոչ եմ կացեալ ի պատուիրանն Քրիստոսի զի միտք իմ///

336

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Ծրուսաղեմ 306, Պողարյան, Ցուցակ Բ, էջ 154—155

Գրիչ՝ Թորոս դպիր
Վայր՝ Մեծմար վանք

ա

Փառք ամենասուրբ Երրորդութեան յաւիտեանս, ամէն։

Արդ, գրեցաւ Աստուածաշունչ տառս սրբոց մարգարէիցն ամենայն ի թագաւորութեան երկրորդ Լեւոնի եւ ի հայրապետութեան տեառն Յակովբայ, ի վանքս որ կոչի Սեծմար, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ նշանին սրբոյն Թէոդորոսի եւ այլ սրբոց վկայից, որ ի սմա՝ Տարագոսի, Պրոբոսի եւ Անդրոնիկոսի, ձեռամբ անարժան դպրի Թորոսի, ի խնդրոյ պատուական հոգեւոր եղբաւր մերում Սարգսի քահանայի, որոյ Տէր Աստուած վայելել տացէ զսա ընդ երկայն աւուրս։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ ընթերցմամբ կամ աւրինակաւ, զստացաւղ սորա զՍարգիս քահանայ, եւ ղծնաւղսն իւր, եւ զամենայն ազգայինս աղաչեմ յիշել ի Տէր, եւ խնդրել մեղաց թողութիւն։

Ընդ նմին եւ դիս՝ զեղկելի գրիչս Թորոս, եւ ղծնաւղսն իմ, ո՜հ, եւ ղերջանիկ ծերունին՝ ղհաւրեղբայրն իմ զԹորոս Վանկցի, մականուն կոչեցեալ Քւրձ, եւ զառաջնորդ ուխտի անապատիս զտէր Յակովբ աղաչեմ յիշել ի մեղսաքաւիչ յաղաւթս ձեր, եւ հայցել մեղաց թողութիւն ամենեցուն, առ հասարակ, մեզ՝ գրողին եւ ստացողին եւ այլոց հարցս։ Եւ Քրիստոս Աստուած որ փչեաց զՀոգին Սուրբ ի մարգարէքս յայս՝ մարգարէանալ եւ գուշակել զիւր մարմնանալն ի սրբոյ կոյսէն եւ զկրկնակի գալուստն եւ զդատաստանն, ձեզ յիշողացդ եւ մեզ յիշելեաց առ հասարակ ողորմեսցի եւ նմա փառք յաւիտեանս, ամէն։*

Եպիսկոպոսն սնոյց եւ կերակրեաց, եւ հաւրեղբայրն ուսոյց բազում տառապանաւք, ո՜հ, առաւել աղաչեմ վասն սոցա՝ խնդրել եպիսկոպոսին հանգչել ընդ Մելքիսեդեկի, եւ հաւրեղբաւրն՝ ընդ քահանայիցն սրբոց, եւ թէ դուք մէկ խնդրէք եւ հայցէք, եւ նոյն ձեզ բիւրապատիկ պարգեւեսցի։

բ

Փառք ամենասուրբ Երրորդութեան յաւիտեանս, ամէն։ Արդ, գրեցաւ սա ի ստոյդ եւ յընտիր աւրինակէ, ի թուի ՉԻԱ (1272)։ Արդ, աղաչեմ զամենեսեան որք կարդայք եւ ընդաւրինակէք՝ յիշեցէք զստացաւղ սորա, եւ զգրող սորա, եւ ղծնաւղսն մեր՝ ի մաքրափայլ յաղաւթս ձեր, եւ ղոր դուք մեզ՝ եւ Աստուած՝ ձեզ։

գ

Փառք ամենասուրբ Երրորդութեանն եւ մի աստուածութեանն յաւիտեանս, ամէն։ Ո՜վ դասք լուսերամից, աղաչեմ յիշել յարժանաւոր յա-

* Պետք է լինի «Վահկցի»։

ղաւթս ձեր ղստացաւղ սորա զՍարգիս քահանայ եւ ղծնողսն իւր, որ ստացաւ ղսա ի վայելումն անձին իւրոյ, եւ յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնաւղաց իւրոց։ Ընդ նմին եւ ղիս, զեղկելի գծող սորա զԹորոս սարկաւագ, եւ ղհաւրեղրայրն իմ՝ վերլուծանող բանի եւ մականուն կոչեցեալ Քարձ Թորոս, եւ զծնաւղսն իմ յիշեսջիք ի Տէր, եւ դուք յիշողքդ յիշեալ լիջիք ի Տէր Յիսուս եւ ընդ սուրբս դասեսցէ զձեզ։

Դ

Ո՛վ պատուական քահանայք, որ կարդայք եւ աւրինակէք, յիշեսջիք ի Տէր Յիսուս ղստացաւղ սորա զՍարգիս սպասաւոր բանի, եւ զծնաւղսն իւր, եւ զամենայն ազգայինս։ Ընդ նմին եւ զիս՝ զեղկելի գծողս Թորոս դպիր, եւ զծնաւղսն իմ, եւ ղհաւրեղրայրն իմ զԹորոս Վահկցի՝ մականուն կոչեցեալ Քարձ, եւ Քրիստոս, որ առատն է ի տուրս պարգեւաց, ձեղ յիշողացդ եւ մեզ յիշելեացս առհասարակ ողորմեսցի, եւ նմա փառք յաւիտեանս, ամէն։

337

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՌԱԿԱՑՆ ՍՈՂՈՄՈՆԻ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ

Տիօայր վրդ. Յուցակ Օքսֆորդի, էջ 578 (1184 թ.)

Գրիչ՝ Սարգիս

ա

3ա *Տեսութիւն առակացն Սողովմոնի Ներսիսի եպիսկոպոսի* Տարսոնի, *ի թուականին Հայոց ՉԻԱ (1272) աւարտեալ։*

Բ

32ա *Ջստացաւղ սորին զԿարապետ րաբունի և զծնողսն իւր, գրեա՛, Քրիստոս, ի գիրն կենդանի։ Ընդ սմին և զմեղապարտ ծրողս* Սարգիս։

Գ

129ա *Ջստացող սորին զգեբրիմաստ հռետորն զԿարապետն և զեղկելի գրիչս* Սարգիս *յիշեսջիք ի Քրիստոս, աղաչեմ, զմաքրամիտ յիշողսդ։*

Դ

232բ *Ջերջանիկ ստացող սորին զԿարապետ րաբունի յիշեսջիք ամենայն արեան մերձաւորաւք, որոց տացէ Աստուած զառատ ողորմութեան պարգևն, ամէն։ Ընդ նմին զեղկելի գրողս* Սարգիս *անարժան և սուտանուն քահանայ յիշեսջիք սրտի մտաւք, որում բազումոզորմն Աստուած ողորմեսցի [յա]հեղ աւուրն, ամէն։*

338

ՀԱՒԱՔԱԾՈՅ

Վիեննա 2286, Սերովլյան, Ցուցակ, էջ 870

ա

37ա *Զկենդանի ծառ կենաց պտղոյս տերունական բանիցս անմահացուցիչ քաղցրաճաշակացս կերող ընթերցման՝ զլոյս վարդապետն* Վարդան *յիշատակեայ-ի Տէր Քրիստոս։*

բ

39բ *Զանյայտ գանձիս յայտնիչ* զՎարդան *գանձապահ, որ փարթամանայք հոգով, յիշատակեսջիք ի բարէբախտիչն ի Տէր։*

գ

55բ *Սրբազան կաթողիկոսի Հայոց տեառն* Կոստանդեա *ողորմեսցի Տէր և լոյս վարդապետին* Վարդանայ, *որ ղբանքս յարմարել է։*

դ

122ա *Զարժանի յիշատակի զսուրբ վարդապետն* Վարդան *լուսոյ բանիցս ծագաւղ յիշեա ի Տէր։*

339

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՂԱՒԹԻՑ ԵՒ ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՍՐՈՎԻ ԱՆՁԵՒԱՑԻՈՅ

Երևան 1329

Գրիչ՝ Սարգիս
Վայր՝ Նեղուսի վանք

191բ *Եւ արդ, գրեցաւ գիրքս հրամանաւ և արդեամբք սուրբ և առաքելաշնորհ եպիսկոպոսին* Բջնոյ *տէր* Գրիգորի, *ի թիւս Հայոց ՉԻԱ (1272), ձեռամ[բ] մեղապարտ* Սարգսի, *ի վանս որ կոչի* Նեղուս, *ընդ հովանեաւ Սուրբ Աստուածա[ծն]իս և այլ սրբոցս։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք և լու[ս]աւորիք ի սմանէ, զբարէհամն և զանուշահոտն ղտէր* [Գրիգոր]* *սրտի մտա[ոք] յիշեցէք առ Աստուած՝ բոլոր ազգայնաւքն։*

340

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 284 ;

Գրիչ՝ Կիւրակոս

ա

Փառք քեզ անսահման անուն և անզուգական անձնաւորութիւնը Հայր և Որդի և Սուրբ Հոգի յամենայն արարածոց, ամէն։

* *Հետագայի ստացող Եսայի Ամթեցին եղծել է անունը («Գրիգոր») և գրել իրենը։*

325ա Շնորհիւն Աստուծոյ սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ Աւետարանս ի խնդրոյ աստուածասէր առն Պաւղոսի, որ ստացաւ զսա յարդար ընչից իւրոց ի յիշատակ հոգւոյ իւրոյ, եւ պարգեւեաց զսա աստուածարեալ քահանային Սարգսի առ ի յիշատակել զոգի նորա ի յաղաւթս իւր և ի պատարագս։ Արդ, որք հանդիպիք սմա, կամ ժառանգէք զսա, կամ ընթեռնոյք, յիշեցէք աղաւթիւք զստացաւղ սուրբ տառիս զՊաւղոս, և զծնաւղս իւր, և զՍարգիս քահանայ, և առատն ի
325բ պարգևս Քրիստոս առհասարակ յիշողացդ և յիշե||ցելոցս ողորմեսցի ի գալստեան իւրում։

Բայց գրեցաւ սա ի թուականին Հայոց ՋԻԱ (1272), ի հայրապետութեանն տեառն Յակոբայ, և ի թագաւորութեանն Հայոց Լևոնի բարէպաշտ արքայի, ձեռամբ մեղաւոր գրչի Կիւրակոսի*, որ և աղաչեմ յիշել յաղաւթս և զիմ զանարժանութիւն և զծնաւղսն իմ, և Աստուած զձեզ յիշեսցէ յառատ ողորմութիւն իւր, և նմա փառք այժմ և յանսպառ յաւիտեանս, ամէն։

Աղաչեմ յիշել ի Քրիստոս զԳրիգոր կազմող սորա, և զհարազատն իւր Ստեփանոս, որ տարաժամ հանգեաւ ի Քրիստոս։

բ

105բ Ստացաւղի սորա Պաւղոսի և վայելողի սուրբ տառիս Սարգսի քահանայի ողորմեա Քրիստոս ի գալստեան քում, և մեղաւոր գրչիս Կիւրակոսի, և որ ամէն ասէ, ամէն։

գ

254բ Պաւղոսի առն աստուածասիրի ստացողի սուրբ Աւետարանիս, և Սարգսի քահանայի վա[ելողի] զսա, և տառապեալ գրչի ողորմեա Քրիստոս ի գալստեան քում, և որք ամէն ասեն, ամէն։

341

ԱԻԵՏԱՐԱՆ

Գուշակյան, Ցուցակ Մեքենտիո, էջ 21

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Երիզա

ա

550 Շնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ Աւետարանս ի թուականիս Հայոց ՋԻԱ (1272)։ Ես Սիոն կուսակրաւն քահանայ, ստացայ զսա ինձ զաւակ ի Սիոն եւ ընտանի յԵրուսաղէմ, յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց, եւ եղբարց իմոց ի Քրիստոս կատարելոց, որ անգան ի սուր, որոնց Քրիստոս Աստուած ողորմեսցի ի գալստեան իւրում։ Արդ, ես՝ Գրիգոր, աւտարաշխարհիկ գոլով, գրեցի ըստ իմում

* Իրված է եղել «կիւր» ձևով, հետագայում դարձրել են «կար»։ Բայց բ հիշատակարանում անունը ևղծված չէ։

կարի ի վանս Երիզայի դրան Սուրբ Աստուածածնիս, ընդ հովանեաւ Սուրբ Լուսաւորչիս, ի յառաշնորդութեան եւ ի հայրութեան Գուրգա, որոց Քրիստոս Աստուած վարձս բարիս հատուսցէ նմա եւ այլ եղբարցս հաւասար, որք աւտակարք եղեն մեզ ի յամենայն ինչ եւ իցէ, որք խնդրող եղեն բանիցս Քրիստոսի։ Ահա մարգարիտս անփոխելի, զորս անճառելի ասեն, թէ փառք քեզ են, եւ որ չեն կամ այսպէս ասին կամ՝ այնպէս։ Քրիստոս Աստուած վարձս տացէ Աւետիճ եւ եղբարց իւրոց, ամէն, որ զաւրինակս ետուն, որ է սա ի սեռէ ընտիր յաւրինակէ. եւ որ ընծայեն սա ի Քրիստոս, յիշեսչիք զմեզ ի Քրիստոս Յիսուս։ Արդ, գրեալ եղեւ սա ի գաւառս Երիզա, որ յորջորջի Եկեղեաց գաւառ, ի հայրապետութեան տէր Սուրգսի, իշխանակալութեան որդւոյ նորա պարոն Յոճանիսի, որ է ի ժամանակս սոցա խաղաղութիւն քրիստոնէից, զորս Քրիստոս Աստուած երկարակեացս արասցէ, ամէն։

Բ

Ջեղկելիս Գրիգոր յիշեցէք ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր։

342

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 10099, Բարխուդարյան, «Արցախ», էջ 226—227

Ջաստուածափառ և զաշխարհալոյս սուրբ Աւետարանս, որ ձեռաւք Հասնայ Ուզին որդոյ բերաւ ի Կեսարիոյ, և նոյն Հասնայն և ամուսին Նլթի և պարծանաց որդիք իւր Հասըմբեր և Սասնայ ետուն զսա յիւրեանց տապանատունս, որ էին տեղւոյս իշխանք՝ զտուն Շիրանշահաց, Դաւթի ձեռաւք, ի վանս Նղիշէի, և հաստատի սմա բանիւն Աստուծոյ և յանուն Հասնային և Նլթոյն յետ մահու պատարագ ի Քրիստոս յամեն եկեղեցիս, ի զատկին յարութեան աւրն, որ յարոյց ընդ իւր բազում մեռեալք և յարուսցէ Քրիստոս փառաւք զՀասնայն և զՆլթի հանդերձ իւր ծնեալաւք միւսանգամ գալստեանն։

Արդ, որք խափանեն զպատարագն և կամ հանէ զԱւետարանս և զՆիրանշահեանց տունն ի տապանատնէս, հանիսցի նա յարքայութենէն Աստուծոյ։ Առանց աշխարհաւերի թիւն Հայոց էր ՉԺԵ (1266)։ ՉԻԱ (1272) շինեցաւ ժամատունս*։

* Ձեռագիրը Լեռնային Ղարաբաղի Քալիշ գյուղի «Բեգյունց» կոչված նշանավոր Ավետարանն է։ 1962 թ. Մատենադարանի գիտական արշավախումբը Քալիշ գյուղում գտավ այդ նշանավոր ձեռագրից 18 թերթ միայն, մի ավետարանչի նկարով։

343

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻԽԱՅԷԼԻ ԱՍՈՐԻՈՅ

Երուսաղեմ 32, Պողարյան, Ցուցակ Ա, էջ 144—146

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Ականց անապատ

ա

Ի թուականին Հայոց ՈՀԸ (1229) կատարեցաւ աշխարհապատում Պատմութիւնս տէր Միխայլի *սուրբ պատրիա[ր]գին Ասորոց, զոր ստուգիւ գրեաց ծայրաքաղ առնելով. յաստուածաստեղծ մարդոյն Ադամայ սկիզբն առնելով, ասաց մի ըստ միոջէ զկարգ և զծնունդ և զշինութիւն արարածոցս, զոր նախ քան ջրհեղեղն աշխարհակործան, և զոր յետոյ ջրհեղեղին յորդոցն Նոյի շինեալ, և աճել ըստ հրամանի և ուխտին ամենակալին Աստուծոյ, որ եդ ընդ նոսայ յետ ջրհեղեղին։ Եւ ի վերայ այսորիկ զկարգ և զթիւ թագաւորացն Հոռոմոց և զՊարսից, և ղկնի Պարսից թագաւորութեանն վճարելոյ սկիզբն առնէ թագաւորութեանն Արաբկաց, որ են տաճիկք, և ի կատարածի սոցայ զԹուրքաց սուլտանութեանն, և զտիրելն բազում աշխարհաց և գաւառաց, զոր դեռ այժմ եւս ունին բռնացեալք ընդդէմ բազում ազգաց և ազանց։*

Որ են թիւք ամացն յելիցն Ադամայ մինչեւ ի ժամանակ կատարելոյ գրոցս ի ձեռն Միխայլի *Ասորոց պատրիարգի՝ ամք վեց հազար չորս հարիւր և երեսուն, և այժմ է թիւս Հայոց ՉԻԲ (1273), որ գրեցաւ գիրքս ձեռամբ տառապեալ* Գրիգորոյ, *զոր կամաւքն Աստուծոյ գրեցուք և մեք զպակասութիւն սորայ զամաց Խ (40) և չորից։*

բ

Քրիստոս Աստուած, քո սուրբ տնաւրէնութեանդ բարեխաւսութեամբ և ամենայն ուղղափառ դաւանողացն զքո անճառ աստուածութիւնդ, սրբոց հայրապետացն և ամենայն սրբոց բարեխաւսութեամբ, փառաւորեայ կ՚աւր Ստեփաննոսի *հոգին և զիւր ննջեցեալոցն ի քո սուրբ արքայութեանդ՝ ըստացողի գրոցս։ Ընդ սմին և զփակակալ* Վարդանայ, *որ յաւժար կամաւք առիթ եղեւ-մեղ տեւել և գրել ըզգիրքս, ողորմեա Քրիստոս Աստուած նմայ և ծնողաց իւրոց, ամէն։ Եւ ինձ մեղուցեալ գրչիս* Գրիգորոյ, *և* Կոստանդէ, *որ զթուխտս կոկեաց, ողորմեա Տէր Աստուած, ամէն։*

Գ

Քրիստոս Աստուած, քո ամենակարող աստուածութեամբդ և մարդասիրութեամբդ փառաւորեա զհաւր Ստեփաննոսի հոդին ի քո սուրբ յարքայութիւնդ։ Ընդ սմին և զփակակալ սուրբ անապատիս սրբութեանցս՝ զՎարդանայ, և զամենայն եղբայրութեանցս հոդին լուսաւորեա քո ողորմութեամբդ, ընդ սրբոց առաքելոցն։ Ընդ սոցին և զմեղուցեալ գրչիս, և քեղ փառք, ամէն։

Դ

Ո՛վ սուրբ մանկունք Նոր Սիոնի, որք ընթեռնոյք և աւկտիք յաշխարհապատում մատենէս, յիշեցէք յողորմութիւն Աստուծոյ զՊսակ անուն հայրն Ականց անապատիս՝ զՍտեփաննոս, ընդ սմին և զփակակալն Վարդան, և զամենայն միաբան եղբարքս, և զմեղուցեալ գրչիս։ Եւ դուք, որ յիշէք զմեզ, յիշել լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեան, ամէն։

Ե

Զարժանացեալն բարի յիշատակի, զաստուածազարդ հայրն Ականց անապատիս զՍտեփաննոս, և զծնողսն իւր յիշեսցուք յողորմութիւնն Աստուծոյ, ո՛վ սուրբ դասք ուղղափառաց, ընտրեալ և բանաւոր հաւտք ճշմարիտ հաւատապետին Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Ընդ սմին և զսիրողն սրբութեան, զմեծահոգի փակակալն Վարդան, և զամենայն միակամ եղբայրութիւնս, և զիս զտառապեալ գրչիս յիշեսջիք ի Քրիստոս, ո՛վ պատուական լսողք և ընթերցողք։

Զ

Գրիչ՝ Վարդան

Եւ ես Վարդանս աղաչեմ և աղաւսեմ զընթերցողս և զլսողսդ, յիշել ի մեղաց թողութիւն, զի յոյժ քաղց կենացն հացին եմ։

Է

Յայսմ վայրի Տէր Աստուած ողորմեայ Վարդանայ և իւրայոցն ամենեցուն, ամէն։

Ը

Եւս առաւել մաղթեմ յիշել զմիւս Վարդան ի մեղաց թողութիւն։

Թ

Եւ միւս Վարդան անկեալ յերես աղաչէ զձեզ առհասարակ՝ յիշել զնա ի մեղաց թողութիւն։

Ժ

Գրիչ՝ Բարսեղ

Տէր Աստուած ողորմեսցի Բարսեղ վարդապետին, ամէն։

ժա

Քրիստոս Աստուած քո անմահ աստուածութեամբդ ողորմեայ Յովաննիսի, ամէն։

344

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԱԹԱՐԱՑ

Սրուսաղեմ 32, Պողարյան, 8ուցակ Ա, էջ 146

Հեղինակ՝ Գրիգոր
Վայր՝ Ակների անապատ

ա

594բ *Յամի եւթնհարիւրերորդի, քսաներորդի, երկրորդի (1273), թուականութիւնս Հայոց գրեցաւ աշխարհապատում տառս այս, հրամանաւ սուրբ և փառաւորեալ հաւր Սահփանոսի Ակաց անապատիս, այլ և համակցութեամբ փակակալի սուրբ անապատիս՝ Վարդանայ և ամենայն եղբայրութեանս, քահանայից և կրաւնաւորաց, ձեռամբ տառապեալ գրչի Գրիգորոյ սպասաւորի բանին։*

Արդ աղաչեմք ղպատահեալսդ ի սմայ, որ ոք ընթեռնոյք զաշխարհապատում տառս զայս, յիշեցէք ի Քրիստոս զհայր Սահփանոս, և զծնողսն իւր, ընդ սմին և զամենայն եղբայրութիւնս սրբոյ անապատիս՝ զքահ[ան]այքս և զկրաւնաւորքս, և զմեղուցեալ գրիչս, զի և դուք որ յիշէք զմեղ՝ յիշեսցէ և զձեզ Քրիստոս Աստուած յողորմութիւն իւր, ամէն։

բ

Կատարեցաւ Պատմութիւն տաճարիս գործելոց ԽԴ(44) ամաց բայց համառատ և ոչ ամէն։

գ

Արդ, ես եղկելի գրիչս Գրիգոր, աղաչեմք ղպատահեալսդ ի սմայ, յորժամ ընթեռնոյք զարարածապատում պատմութիւնս, ասացէք Տէր Աստուած, ողորմեսցի հաւր Սահփանոսի, առաջնորդի սուրբ ուխտի Ակներոյս, և ամենայն ննջեցելոց իւրոց։ Ողորմեսցի Քրիստոս Աստուած փակակալ Վարդանայ և ծնողաց իւրոց։ Տէր Աստուած ողորմեսցի ամենայն գործաւորաց և սպասաւորաց սրբոյ ուխտիս, առաջնոցն և միջնոցս, այլ և վերջնոցն, որ գալոց են զկնի մեր։ Ողորմեսցի Քրիստոս Աստուած Կոստանդ և Սիոն քահանայիցն, և համաշունչ եղբարցն, որ զթուխտս կոկեցին։

Եւ ի վերայ այսր ամենայնի յիշեցէք յողորմութիւնն Աստուծոյ զտառապեալ գրիչս, զի բազում աշխատանաւք և տկար մարմնով գրեցի։ Յիշեցէք և զծնողսն իմ, զննջեցեալսն ի Քրիստոս, և զհարազատ եղբայրն իմ զՄխիթար, որ տարաժամ հասակաւ փոխեցաւ ի Քրիստոս։

Յիշեցէք ի Քրիստոս և զպատուական քահանայն զՅոհաննէս, որ զվերշի տետրս գրեաց, զի մեք էաք յոյժ տկար և անխել։ Յիշեցէք և զտէր Թադէոս զհայր Աւագ անապատին, որ զաւրինակս շնորհեաց, և Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Դ

Գրիչ՝ Յովհաննէս

Յիշեսջիք զսրբազանն և զսրբամատոյց զվարդապետն մեր զԳրիգոր. որ բազում աշխատութեամբ և ժուժկալութեամբ ի յանգ եհան զաստուածային տառս։ Եւ զիս՝ զծովացեալս մեղաւք զՅոհաննէս սուտանուն կրաւն[աւ]որ, որ լի եմ մեղաւք, յիշեսջիք ի Տէր։

Ե

Ստացող՝ Ստեփանոս վանահայր

Բազմադիմի է շնորհք մարդասիրին և բարերարին Աստուծոյ առ ազգս մարդկան, զի յորդորէ հանապազ զբնութիւն մարդոյ ի գործս բարիս և ի շինութիւն հաւատոյ, այսինքն ի սէր և ի պարծանս ամենասուրբ անուան իւրոյ։ Վասն զի որպէս ինքն արարիչն և ամենազաւրն Աստուած բնութեամբ բարի է, նոյն և սիրող է բարէսիրաց և բարէգործաց ազգի մարդկան, ըստ այնմ որ ասէ՝ Բարի առնէ Տէր բարեաց. և դարձեալ թէ՝ Բարի է Աստուած և բարեաց արժանաւորացն տուղ։

Եւ արդ զինչ է պտուղն բարոյն, եթէ ոչ խաչն և եկեղեցին և գիրքն, որով յորդորին աստուածասէր և բանաւոր մարդիկ, գործել և սիրել զբարիս, վասն յիշատակի և փոխարինի հանդերձելոցն բարեաց։ Վասնզի ոմանք շինեն եկեղեցիս՝ հրեշտակաց բնակարան և մարդկան քաւարան։ Ոմանք կազմեն խաչս յոսկւոյ սրբոյ, և զարդարէն պատուական և պայծառ ակամբ, վասն յիշատակի և սիրոյ խաչելոյն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արար խաղաղութիւն յերկինս և յերկրի արեամբ խաչին իւրոյ։ Ոմանք գուգեն գիրք, այսինքն գրելով զյիշատակս մարտիրոսաց, յաղագս բարէխաւսութեան առաջի ահեղ ատենին Քրիստոսի։ Ոմանք արձանագրեն զյաղթութիւն և զպատերազմունս թագաւորաց աշխարհակալաց՝ յուշ առնելով ազգի մարդկան, առժամանակ մի լինել զթագաւորութիւն մահկանացու թագաւորացս։ Իսկ անմահ թագաւորին Քրիստոսի Աստուծոյ մերոյ թագաւորութիւնն անանց և յաւիտենական։

Արդ, ես նուաստս յամենայնի Ստեփանոս հայր Ականց անապատիս եւու գրել զՊատմութիւն տեառն Միխայելի պատրիարգի Ասորոց զուր է գրեալ ծայրաքաղ յԱդամայ մինչև ի ծնունդն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և ի ծնընդենէն Քրիստոսի մինչեւ ի Հայոց Թուականին վեց հարիւր յեւթանասուն և յոթն (1229) Եւ զՊատմութիւն տաբարին, այսինքն ազդին նետողաց, ԽԴ (44) ամաց գործելոց մինչեւ առ մեզ, վասն իմանալոյ զանցաւորութիւն սուտ և պատրող կենցաղոյս ընթերցողացդ և լսողացդ։ Զի ոչ թագաւորութիւն, ոչ իշխանութիւն, ոչ այլ ինչ արարածական մնալոց է յայսմ աշխարհիս, այլ ամէնն է ունայնութիւն ունայնութեանց, որպէս ասաց իմաստունն Սաղովմոն, անցանելով և տեսանելով զամենայն կենցաղս սուտ և ոչինչ խաբող և անցաւոր ։։։

345

ՏԵԱՌՆ ՄԻԽԱՅԷԼԻ ՊԱՏՐԻԱՐԳԻ ԱՍՈՐՈՑ ՅԱՂԱԳՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Երուսաղէմ, 960 (1602 թ.), Պողարյան, Ցուցակ Դ, էջ 527

Գրիչ՝ Մաղաքիա վարդապետ

Արդ, ես նուաստս յամենայնի Մաղաքիա *սպասաւոր բանի, գրեցի զՊատմութիւն Տեառն* Միխայէլի *Պատրիարգի Ասորոց, զոր է գրել ծայրագոյն յԱդամայ մինչեւ ի ծնունդն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, եւ ի ծննդենէն Քրիստոսի մինչեւ ի Հայոց թվական ՈՀ եւ Ը (1229), եւ զՊատմութիւն Տաճարին, այսինքն, ազգին նեստողաց, ԽԴ (44) ամաց գործելոց մինչեւ աս մեղ (1273), վասն իմանալոյ զանցաւորութիւն սուտ եւ պատրող կենցաղոյս, ընթերցողացդ եւ լսողացդ, զի ոչ թագաւորութիւն, ոչ իշխանութիւն, ոչ այլ ինչ արարածական մնալոց է յայսմ աշխարհիս, այլ ամենեւին է ունայնութիւն ունայնութեանց, որպէս ասաց Սողոմոն, անցաննելով եւ տեսանելով զամենայն կենցաղս սուտ եւ ոչինչ, խաբող եւ անցաւոր։*

346

ՆԵՐԲՈՂԵԱՆ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԹԷՈՎՓԻԼՈՍԻ

Երուսաղէմ 89 (1273 թ.). Պողարյան, Ցուցակ Ա, էջ 281—282։

Գրիչ՝ Պաւղոս
Վայր՝ Արքայկաղնի անապատ

ա

Թարգմանեցաւ լուսազարդ և վայելչաշար ճառս այս ի յունականէն ի մերս հրամանաւ երիցս երանելոյ հայրապետին տեառն Գրիգորիսի *Հայոց Մեծաց կաթողիկոսի, ի ձեռն իմաստուն և հանճարեղ թարգմանչին* Թէոփիստէի, *զոր և մինչեւ ցայժմ ճրագս այս թաքուցեալ էր ընդ մահճաւք և ծածկեալ էր ընդ գրուանաւ, իսկ ի հրամ(ան)էն Աստուծոյ յայտնեցաւ սա ի սուրբ վանս յ*Արքայկաղնիս:

Իսկ իմոյ անարժանիս յոգնամեղ և անպիտան կրաւնաւորիս Պաւղոսի *ըղձալի փափագանաւք գրեալ՝ եդի զսա ի հոյակապ մայրաքաղաքացեալ սուրբ անապատս* Արքայկաղնիս, *ի յիշատակ մեղաւոր հոգւոյ իմոյ և ծնաւղաց իմոց։*

Իսկ համբաւ սորա իբրեւ պսակազարդ թագաւորի հասեալ ի յերկնանման սուրբ և աստուածաբնակ անապատն ի յԱկներն, առ լուսասքեսա սուրբ և երջանիկ հայրն Ստեփաննոս, *և նորա առաքեալ որակս, և հրամայեաց գրել և աւանդել զսա ի դրունս սուրբ տաճարին Աստուածամաւրն, ի պայծառութիւն տաւնի մեր լուսաւորչին և յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց և իմոյ ամենամեղի։ Եւ ես ըստ իմում կարի գրեցի և առաքեցի։*

Եւ աղերսալի պաղատանաւք աղաչեմ, ո՛վ սրովբէանման դասք լուսերամից, յիշեսջիք աղաւթիւք զաստուածապատուեալ հայրն զՍտեփա-

նաս, զառաջնորդ սուրբ ուխտիս Ականց անապատիս, և զծնաւղսն իւր և ղիմաստուն երաժիշտն զՄանուէլ, որ ուսով իւրով բնրաւղ եղեւ Ճառիս ի վանս, և զաշխատաւղ գրիչս զՊաւղոս, և զծնաւղսն մեր, և զամենայն ի Քրիստոս հաւատացեալս։ Եւ Քրիստոս, առհասարակ, յիշաւղացդ և յիշեղեցս ողորմեսցի, և նմա փառք յաւիտեանս ամէն։

Բ

Ձխաչակրաւն և ղհոգիաղարդ միայնակեցն զՍտեփաննոս մառընպանն ծնաւղաւք իւրաւք և ամենայն զարմիւք աղաչեմ յիշել ի մեղաց թողութիւն, ով սուրբ Աղբարք, և Աստուած զձեզ յիշէ։

347

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՅ ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Երուսաղեմ 89, Պողարյան, 3ուցակ Ա, էջ 282—83

Գրիչ՝ Ղազար
Վայր՝ Ականց անապատ

ա

357բ Ձաստուածային անբաւ գթութեանցն շնորհ, որ միշտ առ ի յաւգուտ մարդկան ըստ իւրաքանչիւր ոմ ժամանակի, առատաձիր նախախնամութեամբ սրբոյ եկեղեցւոյ պարգեւի...։ Իսկ թուականութեանս Հայոց ՉԻԲ (1273), զկնի ՃԱ (101) ամի փոխման սրբոյ հայրապետին Ներսիսի, ի հրամանէ հաւր Ստեփաննոսէ աստուածազարդ ծերոյ և սպասաւորէ սուրբ ուխտիս Ականց անապատիս, շարագրեցաւ պատմութիւն սուրբ հայրապետին Ներսիսի և իւրոց նախնեացն, ճշմարտաճառ և անսուտ պատմութեամբ, ի ժամանակս քրիստոսապսակեալ բարեպաշտ թագաւորին Հայոց Լեւոնի՝ որդւոյ թագաւորին Հեթմոյ, յաշխարհիս Կիլիկեցւոց։

Արդ, վայելողք սրբոցս արանցս պատմութեան, յիշեսջիք սիրով ի Քրիստոս զվերոյ նշանակեալ պատուական հայրն Ստեփաննոս, և զամենայն եղբայրութիւն սուրբ ուխտին զմեծ և զփոքր, զքահանայ և զկրաւնաւոր, ի մշտամատոյց յաղաւթս ձեր, և Աստուած զձեզ յիշեսցէ յողորմութիւնն իւր, ամէն։ Յիշեսցէ Քրիստոս Աստուած և զՎարդան փակակալ սուրբ տաճարիս։ Ւարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ դասք լուսերամից, ես անպտուղս ի բարեաց և ւլցեալս մեղաւք, յիշեսջիք զիս զանարժանս Ղազար ի մաքրափայլ յաղաւթս ձեր։ Յիշեսջիք և զեղբայրն իմ զԱւետիքն, և զծնաւղսն իմ, և զայլ աղգականսն։ Յիշեսջիք զկոկոզ նիւթիս զպատուական քահանայն Քեռվքէ։ Եւ ինքն ամենասուրբ երրորդութիւնն գթասցի յարարածս իւր և յիշեսցէ զամենայն հաւատացեալս անուանն իւրոյ ամէն, և նմա փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Բ

Կազմող՝ Մանվել

417բ Ո՛վ մանկունք եկեղեցւոյ և որդիք վերին Սիոնի, յորժամ ընթեռնոյք զգիրս զայս, զտառապեալս ի բարեց ղմանվել յիշեսջիք, զի սա-

կաւ մի և մեք աշխատեցաք ի կազմված գրոցս. զի թէպէտ և մեք տըխմար էաք, բայց նիւթն վատ հանդիպեցաւ՝ Որ զիս յիշէ և զԱստուած ողորմին ասէ, Տէր զինք յիշէ, և նմա փառք յաւիտեանս։

Գ

Գրիչ՝ Վարդան

305ա Վարդան էրեսս անկեալ աղաչեմ զլսողդ և զընթ[երց]ողս, յիշել ի մեղաց թողութիւն։

348

ԱԻԵՏԱՐԱՆ

«Բազմավէպ», 1968, էջ 116—118, Ա. Անդրեասյան, «Պօղոս Սկևռայի Աւետարանին յիշատակարանները»

Գրիչ՝ Ստեփանոս
Վայր՝ Սկեւռա

Փառք համագոյ եւ անբաժանելի սուրբ Երրորդութեանն, Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյ սրբոյ, ամէն։

Ծորոյ արարչագործ խնամոցն միշտ բարեգործին բոլոր եղականքս, որ եւ ի ձեռն արժանընդունակ սպասաւորաց իւրոցն՝ կամաց՝ բազմամասնապէս ձրիւք զսուրբ եկեղեցի իւր զարդարէ։ Ու նոյն ինքն եւ ի նուազել ժամանակիս յառաջեալ ի քահանայապետական սպասահարկութիւնն եւ յաշտիճան եպիսկոպոսութեան սրբոյ աթոռոյս և հռչակաւոր ուխտիս Սկեւռայի զարժանապատիւ առաջնորդս զՏէր Սիմէոն, որ յաղագս աստուածասէր կամաց իւրոց ի պէտս հոգեւոր հրճուանաց եւ սրբավայելուչ պատուասիրութեան սուրբ եւ աստուածաբնակ մաւրս մերոյ կաթողիկէ եկեղեցոյս, ընդ այլ նշանաւոր եւ ականատր զարդուցն յիշատակաց՝ ստացաւ եւ զայս պանծալի քարս պատուական եւ զմարգարիտս գեղեցիկ, զաստուածաւանդ, ճշմարտապատում, հոգեբուղխ վիպագրութիւնս աստուածավայելուչ եւ փրկութիւնագործ անշփոթ մարդեղութեան բանին Աստուծոյ, որ զմեր մեղս իւրով մարմնովն վերացոյց, զի մեզ տացէ զիւրն արդարութիւն։

Ջոր եւ կարգ ըստ կարգի լի եւ համառաւտ պատմաբանութեամբ վերաբարողեալ հռչակեցուցանէ ընդ ոլորտս տիեզերաց հոգիահրաշս այս աստուածաբանութիւն, որ քերթողաւրէն ստուգաբանութեամբ կոչի Աւետարան՝ յիրէն ընկալեալ զկոչումն անուանն, զի աւետիս, տայ աշխարհի, զԱստուած մարդ եղեալ եւ զմարդիկ աստուածացուցեալ, զերկայն պատերազմն քակեալ եւ զշնամիսն սիրելի որդիս եւ ժառանգս Աստուծոյ եղեալ։

Որոյ յոքնատենչ ըղձից փութաքմամբ նախայիշատակեալ Տէրս Սիմեւոն, մեծածախ պատրաստութիւնմբ հոգ տարեալ սուրբ մագաղաթի, եւ զեղապանծ գրով, արհեստակիտուած ոլորակաւք, բազմապայծառ զարդարուք, սքանչելափառ խորանաց ոսկեճաճանչ խառնուածով, յոքներանդ ծաղկանց պճնապաճոյճ յաւրինուածով, ոսկեգիր դրոշմածիւք

զտէրունական անուանսն փառաղարդեալ, վերընծայեաց սրբոյ տաճարիս, ի բերկրումն հոգեւոր եւ ի հրճուանս մխիթարութեան զգալի աչաց սրբազան դասուց մանկանց Նոր Սիովնի, եւ յիշատակ պանծալի հոգեւոր եւ մնացական իւր եւ ծնողաց իւրոց եւ բոլոր զարմից ըստ մարմնոյ։

Ջայսու ժամանակաւ հանդիպիւր թւականս ՉԻԲ (1273), յորում զդիտապետական գահագլխութիւնն վարէր Տէր Յակովբ քաշահանճար հռետոր եւ սրբազան կաթողիկոս։

Իսկ աստուածասէր եւ բարեպաշտն Լեւոն, որդի Հեթմոյ, զթագաւորութեանն առաջնորդէր զհանդէս, զորոյ զհեզահայեաց հանդարտութիւնն եւ զխաղաղասէր բարուցն խոնարհութիւն եւ զանոխակալ մարդասիրութեանն տկարանայ լեզու ի պատմել։

Ընդ որոյ բարեպաշտութեանն նազելի պարկեշտութիւն նախանձաբեկ եղեալ բանսարկուն, ջանայր շիջուցանել զճրագն տանս Հայոց։ Եւ սպասաւորս կամացն իւրոց չարութեան գտեալ զոմանս ի ծառայիցն նորա, որոց բաղում ձիրս պարգեւաց ընկալեալ էին ի նմանէ, եւ ի հաւրէն նորա իշխանութիւնս գաւառաց, բերդից, գեղից եւ եւս զանազան փառաւորութիւնս։

Սակայն անմտաբար ի մաւռացոնս եկեալ այնքան բարեգործութեանցն, եւ նմանք եղեալ Յուդայի, եւ եւս քան զնա չարագոյն, դաւաճանութիւն մահու խորամանդէին ի վերայ անձինն արդարոյ, բնիկ հայրենի իւրեանց տեառն թագաւորի, որպէս շունք կատաղիք եւ ծառայք չարք գտեալք, աստուածասպան հրէիցն կցորդք։

Որոց նախագլուխ չարին խորհրդոց Վաճրամ իշխան տէրն Համուսիճ, եւ Լեւոն տէրն Մոլեւաւնիճ, եւ Ապլխարիպ իշխան երեւելի։ Սոքա ի յունաց։

Էր եւ ի հայոց համախոհ անաւրէնութեան սոցա դժնդակ եւ չար խորամանկութեամբ լցեալ ապերախտ եւ տիրանենգ վատըշուերք ոմանք, որ երեւելի իսկ էին հռչակեալ ճարտարութեամբ կորովաբանութեան, իբրեւ զԱֆիտոփելն զայն ի հնումն եւ այլք յոլովք զինուորական գնդէ, զորս աւելորդ էր յիշատակելն, որք միաբանեալ էին յեղեռն խորհրդոյ տիրասպանութեանն։

Իսկ իբրեւ ի խնամոց Աստուծոյ իրազեկ լինէր արքայն դաւաճանութեանն, այն ինչ ապա եւ չարքն այնոքիկ գիտելով զխիղճ մտաց իւրեանց, ահաբեկ լինեն, կասկածելով ընդ անգործ մնալ խորհրդոյն չարի, զոր ծածկել չէր ի դէպ, այսր անդր ապա ճողոպրել ջանային։ Սակայն զգուշն փորեալ անձամբք պարտ էր լնուլ։ Յանկարծ ի նրբափողոցս քաղաքին Սիսոյ իշխանն Համուսիճ հարեալ լինէր յումեմնէ զկարեվեր խոցումն մահու։ Իսկ տէրն Մոլեւաւնիճ, հանդերձ Ապլղարպիւ, իբր զչար ապստամբ յամուր բերդին անկեալ բոնանայր, զղաւրս տաճկաց ի թիկունս կոչելով, որոց եւ զամուրն իսկ էր վաճառեալ առ որս հրեշտակս արձակեալ՝ ի խաղաղութիւն կոչէր արքայն. եւ անմիտքն դեռ եւս խիզախեալ յոդիս ապաստան լեղեալ, կարծելով հաստատել զոր խորհէինն, թշնամանս եւս արքային դարձուցանէին. որոց եւ պատրիարգն յունաց լինէր թելադիր՝ յերթալն առ նոսա պատգամ յարքայէ։

Յայնժամ շրջափակեալ զամուրն Մոլեւաւն զաւրացն արքայի, եւ գործակցութեամբ աստուածապաշտից ոմանց հայկազանց ներքսաբնակաց, յետ սուղ ինչ աւուրց զամուրն յինքեանս գրաւէին եւ զԼեւոն տէր բերդին ձերբակալ արարեալ։ Իսկ Ապլվարիպն վանդակաւ կախուեալ ի բերդէն հանդերձ եղբարքն ի բուռն անկանէր եւ զարդարադատ վճիռ մահու ընդունէր։ Զեւ եւս այսոցիկ յաւարտ հատելոյ, փութով արձակէր արքայն զնախասացեալ Տէրս Սիմէոն յամուրն Պէհեստնի, կասկածելով դի մի ապստամբեսցեն բնակիչք բերդին, յորում ի պահեստի կայր մանկիկ մի փոքրիկ ապստամբին Վաճրամայ։ Եւ սորա զվտանգ ծերութեանն անտես արարեալ, շտապով անդր հասանէր եւ զառաջի եդեալ գործն բարւոք վճարէր ընդ ձեռամբ արքային զամուրն գրաւեալ։

Իբրեւ փոքր ինչ գրեթէ գոռ աղմկիս ներքոյ դադարէր, յորոց զյոլովս ոչ յիշատակեցաք, արտաքին թշնամիքն յառաջ մատչէին. եւ Փառուանայն իշխանն տաճկաց դաւաճանութեան կամաւք յեզր սահմանաց աշխարհիս զարքայն կոչէր ի պատճառս սինաւռ կտրելոյ. զորոյ իմացեալ զդաւ նենգութեան, յետս դառնայր չու արարեալ երթալ յանդիման լինել էլղանին Ապաղայի, մեծամեծ ճգանց տալով զանձն վասն փրկութեան քրիստոնէիցս։ Որոյ ճանապարհին Աստուած լիցի առաջնորդ, տալով նմա շնորհս առաջի արքայից արքայի, եւ բաղում փառաւք այսրէն փութով յաթոռ իւր դարձուսցէ, ընդ երկայն աւուրս պահելով զնա հանդերձ աստուածապարգեւ որդւովքն իւրովք։

Արդ, յայսմ ամի յորում այսպիսի դիպուածովք ճգնէր արքայն եւ աշխարհս, եղեւ աւարտ գրչութեան սրբոյ Աւետարանիս ի սուրբ Ուխտս Սկեւռայ, ի ձեռն Ստեփաննոսի ամենամեղ գրչի եւ Յովասափի նկարչի, հրամանաւ տեառն Սիմեւնի։ Որոց ամենեցուն հրամայողին եւ կատարչացս վարձս բարեաց լիցի գտանել ի Քրիստոսէ յաւուրն յետնում, յամենանուշակ արքայութեանն անդադար փառաւորել զամենասուրբ Երրորդութիւնն յաւիտեանս յաւիտենից, ամեն։

349

ԺՈՂՈՎԱԾՈ

Երուսաղեմ 1288, Պողոսյան, Յուցակ Դ, էջ 484—496

Գրիչ՝ Մխիթար
Վայր՝ Գետկայ վանք

ա

Փառք Հաւր անեղի, Որդոյ միածնի եւ ազատիչ Սուրբ Հոգւոյն յաւիտեանս յաւիտենից, ամէն, ամէն։

Յամի ԷՒՆՀարիւրերորդի քսաներորդի երկրորդի (1273) թուականութեանս Հաւց, յորում ժամանակի հով[ու]էր ղուղղափառութիւն հաւատոյս քրիստոնէութեան վերադիտողութեամբ ճշմարիտ աթոռակալ Լուսաւորչին մերոյ տէր Յակոբ, եւ յԱղուանից տէր Ստեփաննոս, եւ ի տիեզերակալութեան Ապաղա [ղա]նին, եւ յանհիշխանութեան մերո աշխարհիս, յաբթարակութեան Սադունին, եւ ի տէրութեան տեղոյս Ճարին,

աստանաւր կատարեցաւ տառ մատենիս ի սուրբ եւ ի հռչակաւոր վանքս Գետկա, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, եւ Սրբո Նշանիս Մ[եհ-կուռ]իոսի, այլ եւ առ ոտս սուրբ եւ վսեմապայծառ վարդապետիս Յովասաբիս, որ է ամենայնիւ աւրինակ բարեաց վարիւք եւ բանիւ։ Վասն զի չէր բաւական մեր նուաստութիւնս մի ըստ միոջ պատմել զառաքինութիւնս նորայ։ Վասն զի յոյժ զարդարեալ է գիտնականաւն [գործ]նականաւն, արիութեամբ, ողջախոհութեամբ, արդարութեամբ, [ողորմած]ութեամբ, գթած առ աւտարս եւ առ մերձաւորս, մանաւանդ առ մեղ եւս։ Զի յետ Աստուծոյ սա էր կենաց պատճառ պանդխտութեանս մերոյ, ոչ միայն բանիւ վարդապետութեան, այլ եւ մարմնական պիտոյիւք, զոր հատուսցէ սմայ այն, որ առատն է ի տուրս զհազարապատիկն եւ զբիւրապատիկն, յաւուրն յայնմիկ, որ ոչ ոք աւգնական, բայց միայն գործք բարիք, ամէն։

Արդ, ես յոքնամեղս Մխիթար, առ ոտն սորա կալով եւ յաղաւթս սորայ ապաւինեալ եւ յԱստուած, մոռացում արարի ամենայն մարմնականիս եւս առաւել տկարութեան մարմնոյ, առ յոյժ փափաքումն աստուածային մատենիս, եւ յոյժ նեղութեամբ եւ տառապանաւք գծագրեցի իմով ձեռամբ ի վաեյլումն անձին իմոյ եւ յիշատակ հոգոյս։

Արդ, երկրաթաւալ գիմաւք աղաչեմ զպատահելսդ, յիշեցէք ի սրբբամատոյց յաղաւթս ձեր զվերագոյն ասացեալ վարդապետն զՅովասափ, եւ ղբստ մարմնո ծնաւղսն մեր՝ զհայրն իմ զԳերգ և զմայր իմ Մամախաթուն, եւ զհանիկն իմ Գէնի։ Ընդ նմին եւ զբա[ր]ձրողէշ ծառն արմաւենի եւ նորատունկ այգին, զխնձորն քա[ղ]ցրահամ ի մէշ անտառաց, զԱռաքել վարդա<պա>պետն, որ [ելից զ]պակասութիւն քարտիս։ Եւ յիշողդ յիշել լիջիք յ[աւուրն մ]եծի։

Կատարեցաւ ի յահկի քսան եւ ինն, յաւուր [շաբաթ]ու, ընդ ծագել արեգականն, ի փառս Աստուծոյ աւրհն[ելոյն յաւ]իտեանս։

Յայսմ ամի վախճանեցաւ [իշխանաց իշխա]ննն Սմպատ, եւ սուգ մեծ էր տանս Առեւելից։ [Վատզի բազ]ում խաղաղութիւն շնորհեաց Աստուած [ի ձեռս նորա] Առեւելից, մանաւանդ եկեղեցեաց։ Քրիստոս Աստուած ի գալստեան իւրում ի վերա տասն քաղաքաց կացուսցէ զնա, ամէն։

բ

Այսաւր զիմ ճաղն կտրեցին, բայց ես չմեռնեմ։ Բայց եղուկ է լուէս զի նեղեցին յոյժ։

գ

Զեղկելի գրիչս զՄխիթար յաղաւթս յիշեցէք եւ զծնաւղսն իմ, եւ դուք յիշեալ լիջիք։

դ

Ո՛վ պատուական հա[ն]դիպողք, զտառապեալ գրիչս Մխիթար յաղաւթս յիշեցէք։

Ե

Ա՛յ վա՛ի էջս խիստ կու ցաւի, ու թանձանձս ու լոյս խիստ նեղ կու առնէ։

Զ

Մխիթար ի մեղս ղառածեալ աղերսիւ հայցէ յընթերցողացս թողութիւն խնդրել ի Տիսուսէ բաղում յանցանացս, ղի յոյժ շատ է։

Է

Եւ այս կատարեցաւ, ո՛ եղբայր, թէ քեզ հաճո թուի դու փոխեա, ապա թէ ոչ ղիս մի պարսաւեր, ղի ես սիրեցի եւ գրեցի։ Յիշել եւ փառաւորեալ Վանական վարդապետն, որ սատուռեաց զսայ սուռ ի յաւդուտ թերավարժիցս։

Ը

Ո՛վ պատուական ընթերցողք, զմեղապարտ գծողս զՄխիթար յաղաւթս յիշեցէք, ղի յոյժ բազում են յանցանք իմ, եւ ծանր քան զաւազ ծովու։

Թ

Ո՛վ սիրելիք, ամաչեսցէ ոչ բնութիւն զանգուածոյս սակ ճարտարութեան արուեստարկողին, այլ յեղումն կամողին, ունելով գրողիս ապականացու մարմին, քան զչնչին որակութեան քարտիս. սորա մնալ կենդանի, եւ ինձ հողանալ վաղվաղակի։ Բայց զի յարայտեսութիւն մեղասատար սեւակիս, յարայտեւելով յայլմէ յայլ, շահընկալ զիս ցուցանէ։ Ի նոցունց մաղթանաց վստահանամ գերայզանցիլ յապայսն յամենայն նիւթոյ յաղթութիւն վերըստին առեցելովն, անկարացեալ սադրանք ստորայսուղին զքաջատոհմութիւն յուսոյն նուաստացուցանել։ Ուստի որք աննախանձաբար այսմ յուսոյ գործակից են աղաւթիւք, ընկալցին եւ նոքայ առանց տարժամանց ի համարահատին ժամանակի զիւրեանց ըղձիցն լրումն, ամէն։ Եւ Սուրբ Երրորդութիւնն յամենայն արարածոց աւրհնեալ եղիցի, ամէն, ամէն։

350

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 5559

Գրիչ՝ Ատոմ
Վայր՝ Պազար

Ա

192ա *Փառք յարուցելոյն ի մեռելոց, որ արժանի արար հասանել յաւարտումն և ի կատարումն աստուածահրաման շարակարգեալ, զաւետաւոր, զհրաշափառ և աստուածունակ հրաւիրեալ զյոլորտս տիեզերաց առ ի կանգնումն անգելոցս։ Արդ, գրեցաւ սայ ձեռամբ մեղապարտ և անարժանի, յոգնամեղի և անթերի յամենայն մեղաց լցեալ և յագեալ ի շա-*

րեաց, որոյ անուն քահանայի առեալ և գործք հեռացեալ, որպէս երկինք յերկրէ, որոյ անուն Ատամ ճանաչի։ Գծագրեցի զսայ յաղագս գերամաքուր և երջանիկ քահանային Յոհաննիսի, առ ի վայելումն ղարմից և զաւակաց իւրոց և յիշատակ ծնողաց և իւրոցն ամենից, որ է սայ ի մայրաքաղաքն յՈրմի, մերձ [առ] լերամբն, որոյ են շիրիմք սուրբ առաքելոցն Յուդայ Յակոբեան և Շմաւոն Նախանձայոյզ։ Եւ սայ բազում աղաչանաւք և աղերսիւ ստ[աց]աւ ղ[սուրբ Աւետարանս յիշատ]ակ իւրոց։

192բ Եւ ես գա///աչելի ծերութեամբ գրեցի զսայ բազում աշխատութեամբ ի բացավայր սահմանս, որ անուն Պաղար կոչի, ընդ հովանեաւ Սուրբ Սարգսի զաւրաւարին, որոյ յարկ վրանաւ է գրեալ հովահար, և արեգականակէղ շատ աշխատանաւք եղև կատարումն։

Արդ, գրեցաւ սայ ի ժամանակիս, որ է թիւ Հայական տումարի թուաբերութեան ՉԻԲ (1273), եւ է աշխարհակալ թագաւոր Ապաղայ, որ է սայ որդի Հուլայու ղանին, և են սոքա յազգէն մեծ տոհմին Զրնգզ ղանին, եւ ունի [ահ] և երկիւղ սոցայ յարևելից մինչ ի մուտս արևի։

Արդ, ի յայսմ ամի եղև սա զաւրաժողով ի վերա սուլտան[ին] Մըսրայ, և ի ժամուս յայսմիկ ոչ ևս է երևումն գործ պատերազմի։ Ջայս միարան աղաչեմք զԱստուածն ամենեցուն և զՏէրն մեր Յիսուս Քրիստոս, զի տացէ թագաւորիս մերոյ Ապաղայ ղանիս ղաւրութիւն և յաղթութիւն սմայ ի վերա թշնամեաց խաչին, սուրբ թշնամեաց սորա մտցեն ի սիրտս իւրեանց, և մի կարասցեն կեալ ընդդէմ սորայ հակառակորդք սորայ, այլ եղիցին թշնամիք սորա կոխան ամենայն ազգաց քրիստոնէից, ամէն, եղիցի կամաւն Աստուծոյ։

Եւ է թագաւոր Հայոց Լևոն բարեպաշտ և բարձր ի վերա թշնամեաց իւրոց, զոր և տացէ նմա Քրիստոս Աստուած զաւրութիւն, և յաղթութիւն ի վերայ թշնամեաց իւրոց, ամէն։ Եւ է հայրապետ Հայոց տէր Յակոբ սուրբ և արժանի ///

Բ

Ծաղկող՝ Մարտիրոս

140բ ՁՄարտիրոս երեցս յիշեսցի*։

351

ԱԽԾՏԱՐԱՆ

Սմբատյան, «Երնջակ», էջ 270

Գրիչ՝ Յովճաննէս
Վայր՝ Գերմաղբիւր

Գրեալ... ի թուին ՉԻԲ (1273), ի թագաւորութեան Լևոնի բարեպաշտի և ի հայրապետութեան տեառն Յակոբայ, ի վանս Գերմաղբիւր յապահով վաղդապետանոցի, ձեռամբ Յովճաննէս գրչի։

---

* Գրված է հռեշտակապետների նկարի մոտ, ըստ երևույթին ծաղկողն է։

352

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Սանջյան, Յուրակ Ամերիկայի, էջ 586—595

Գրիչ՝ Կոստանդին
Վայր՝ Սիս

ա

Որ ի Հաւրէ լուսոյ ծագեալ
Եւ ի կուսէն մարմնով ծնեալ,
ԶԱւետարանս լուսազարդեալ,
Մարդկան կենաց կտակ շնորհեալ,
Որում Աւշինն տեննչացեալ,
Որ մարաչախտ Հայոց պաւվեալ
Զայս աւետեաց մատեան ստացեալ։

Սայ յիշատակ բարեաց լիցի,
Աւշին սորին ըստացողի,
Եւ Կոստանդեա եւ Ստեֆանի,
Մնողաց նորին, որ ի յերկնի։
Նաեւ որդոցն իւր ցանկալի,
Նախ Կոստանդիա մեծ իշխանի,
Այլ եւ Հեթմոյ պատանեկի
Եւ ամենայն նոցին տոհմի։

բ

314ա *Փառք... Արդ զայսպիսի խնկելի եւ նախանձելի հոգեւոր գանձ եւ անկապուտ մեծութիւն, մեծայոյս հաւատով եւ եռանդնոտ սիրով սեպհականել ինքեան կամեցաւ եւ անձկացեալ հոգւով տրփացաւ, խոհեմն ի խորհուրդս եւ ջերմ ի բարեպաշտութեան, յաղթողն ի ճակատս, եւ հարազատն յիշխանութեան, մեծ զաւրապետն Հայոց Աւշին, որդի մեծ իշխանաց իշխանին Կոստանդեա տեառն Լամբրոնի, ոչ նոր ինչ կամաւ տարբերելով յինքեան զբարեացն յեղանակ, այլ ի գովելի նախնեացն պայազատեալ, եւ զարդիւնս ընտիր արմատոցն պըտղաբերեալ, զմեծաշուք հարց գոլով գովելի որդի եւ շառաւիղեալ ի նախնեաց յընտիր ցեղէն Պահլաւունի, յոր եւ Աւշակունեաւքն խառնեցան զարմն։ Ըստ որում իսկապէս ժառանգն աւրհնութեանն աւետեաց, զի գոլով սերունդ յԱբ-*

րահամէ եւ շառաւիղ մեծի Լուսաւորչին, յորոց տընկոց եւ ի վերջին աւուրս եւ ի լսնացեալ ժամանակս պըտղաբերեցաւ ճիռն աւրհնութեան եւ հոգեւոր ողկոյզն, որ զգեղեցիկ վարդապետութեանն մզելով գինի եկեղեցւոյ մանկանց, զամենեսեան արբեալս գործէ երկնաւորին սիրով, եւ ինքն ըստ անձնակիր խառնման ի սրբագործ հարազատ սէրն, ըստ Որոտման Որզւոյն, զսիրելին ասեմ նմա յատկութիւն անուան աշխարհալոյս վարդապետն, երկնաքաղաքացին Ներսէս:

Արդ, այսպիսեաց գոլով ընտանի բարեպաշտն Աւշին զսոյն շանալով բերել նախանձ լաւութեան, եւ գրել զսուրբ եւ զերկրպագելի Աւետարանս արդար արդեամբք հոչակատր գրչին Կոստանդեա՝ մեծաւ փափաքանօք, եւ վասն յոյժ սիրոյն որ ի Տէր՝ առաւել վայելչացոյց զսա ոսկենկար ծաղկաւք եւ տփիւ ի պայծառութիւն եկեղեցւոյ, որպէս թէ զոր կարէր եւ էր հնար մատուցանելով Աստուծոյ: Եւ զայս ոչ ընդդէմ աստուածային կամացն եւ աւրինաց; Առաջին, զի ոչ թէ ի զրկանաց տնանկաց մատոյց զնուէրս, որ դոհ պղծութեան է Աստուծոյ, եւ կամ թէ անտես առնելով զաղքատացն տուրս եւ զողորմութիւն, որ նախապատիւ է ամենայն բարեաց, եւ յայս միայն փութացաւ, այլ սա ըստ ղաւրութեան, նախ զնոցայն մասնատրելով զայս պատարագ անուշահոտ արար Աստուծոյ: Եւ երկրորդ՝ զի նոյն ինքն Աստուած զիւրն խորան՝ զսեղանս եւ զտապանակ եւ զտաճարն իսկ ոսկով եւ զուտիւ ասէր աւծանել, եւ իւրաքանչիւրոցն ըստ պատշաճի կարին խնդրէր զնուէրսն, որով եւ զիշխանաց ցեղից մատուցեալ ոսկին ընդունէր, եւ նոյն ի մարդանալն, եւ տղայն ծնանիլ մանուկ, ի մոգուց զոսկին մատուցեալ ոչ ընկեց անարդնալ: Ոչ իբրու կարաւտ այսպիսեաց, այլ միայն ընդ մերն բերկրելով ջերմն յաւժարութիւն ըստ կարի, որպէս երեւեալ նկատի ի պատարագն Աբելի, թողում ասել եւ զի Տեառնէն պատասխանի որ առ կնոջն աւծողի:

Արդ, այսպիսին ներբողելի հաւատով, յանգեցաւ գրութին սորա ի մայրաքաղաքս Սիս ընդ հովանեաւ Սուրբ Նշանին եւ Սուրբ Հրեշտակապետացն, ի թուականութեանս Հայոց ՋԻԳ (1274), յորում ժամանակի փոխանորդէր զհովուապետական լուսաւորչին մերոյ գահ, որ գործնական մաքրութեամբ յաջորդէ եւ զվարս նորին պատկառելի քահանայապետն Աստուծոյ եւ մեծ հռետորն տէր Յակոբ: Յարքայութեան հզաւր եւ աստուածասէր ժառանգաւորին իշխանութեանս Հայոց՝ ծիրանածին արժանապսակ թագաւորին Երկրորդին Լեւոնի, թոռին առաջնոյն մեծին Ռուբենեանց զմերս սպառեալ իշխանութիւն եւ թագ նորոգողի, եւ որդւոյ արժանեացն յիշատակի բարեաց բարեպաշտի Հեթմոյ եւ քրիստոսասիրին Ջապիլի, որ հարցն քաջութեան եւ ընդարձակելոյ զմերս տէրութիւն ոչ ինչ պակաս գտաւ, այլ մանաւանդ առաւելաւ, եւ պարկեշտութեամբ մարմնոյ, եւ հեզութեամբ բարուց զլոլովս ի ստորեաւ եթող: Մանաւանդ հոգաբարձութեամբ եւ գթով ի սուրբ եկեղեցւոյ կարգս, ընդ որ եւ համալծորդ գոլով վեհն գովութեան բանի քրիստոսասէր եւ թագաղնեա դշխոյ նորին Կեռան, որ ի նախապատմեալսն զարմից եւ եղբաւրորդի է ստացողի գրոցս Աւշնի, եւ դուստր քաղցրաբարոյին Հեթմո արեամբ նահատակելոյ ի վերայ ճշմարիտ հաւատոցս Քրիստոսի, որ սոյն

այս դշխոյ ամենայն առաքինութեամբ ճոխացաւ լծելով տիրատուր իշխանութեանն ղաղաւթիցն բարիս, եւ զժուժկալութիւն գովելի ողորմածութեամբ, որոյ բարեպաշտութիւնն գրեթէ սիւն է թագաւորութեանս։ Զոր Տէր Յիսուս գլխովն իւրով արքայիւն մերով եւ վայելչածաղիկ ժառանգաւորաւքն ընդ երկայն աւուրս տացէ մեզ եւ անվաղճան արքայութեանն արժանի արասցէ, եւ ղձեզ զամենեսեան աղաչեմք, որ վայելէք յամենալի սեղան մատենիս, մաղթեցէք առատ շնորհացն Աստուծոյ դրել ի կենաց դպրութիւնն եւ յանշինչ յիշատակ բարեաց զբարեպաշտ մարաջախտն Հայոց Աշին քահել եւ թողուլ զսղալանս նորին նորոգութեամբ արդարութեան եւ համադաս եւ զուարճակից առնել սրբոյ Աւետարանիս գրողացն, քարողողացն եւ զվարդապետութիւն սորին կատարողացն։

Նա եւ որ անծախելի մեծութեամբն սիրէ եւ սովոր է զտալն առատութեամբ, եւ առհասարակ, որպէս տեսանեմք զհեղումն աւդոյ եւ ծագումն լուսոյ, եւ զնոյն զկենացն աւետիս վարձակիցս եւ հաղորդս հոգեւորական ընթրեացս եւ աստուածային սեղանոյս արասցէ զամենայն ազգատոհմն եւ զմերձաւորս պարոնին Աշնի խրախութեանս պատրաստողի, նախ զշրջապատեալսն զնովիմբ, որպէս զնորատունկս ձիթենոյ զաստուածատուր եւ զառոգապտուղ զաւակսն զկորովանի զակ եւ զքաջազաւր իշխանն իշխանաց եւ զուարթաբարոյն եւ զգեղանձնեայն Կոստանդին, որ զամենայն բարեացն տեսակս զոր բերէ յանձին առաւել պսակէ յեռեալն հոգւով յամենայն աստուածայինսն, եւ խանթակաթ գոլով ի սէր սրբոյ եկեղեցւոյ, եւ զդեռաբոյս պատանին Հեթում, եւ զհամեստ դուստրն Թէֆանաւ, մանաւանդ զնմանն առաքինութեանն Սառային, զամուսին բարեպաշտ իշխանին Աշնի զտիկինն Ակաց։ Նաեւ զքուերս նոյն իշխանի զԿեռան, եւ զորդիս իւր զերկիւղած թագադիրն Հայոց Կոստանդին՝ պիտանի եղբարքն Աշնիւ եւ Սմբատիւ, եւ զմիւս քոյրն զՇահանդուխտ, եւ զորդի նորին Լեւո՝ հարքն իւրով, եւ զայլ արիւնառու մերձաւորս զամենայն, զորս խնդրեսջիք յԱստուծոյ պարագայս ամաւք խաղաղութեամբ պահել եւ երկնաւոր փառացն արժանաւորել։

Բայց առաւել աղաչեմք զձեզ ոչ մոռանալ ի յիշոմն բարեաց եւ զնախնի ննջեցեալս նորին, զբարեսէր հայր նորին Կոստանդին՝ տէր Լամբրունի, եւ զպարկեշտուհի մայր Ստեփանեա, եւ զկատարեալ արեամբ եղբայր նորին Հեթում, ոչ անտեսել զպապ նոցին զՀեթում, որ կրաւնաւորեալ Հեղի կոչեցաւ, այլ եղբարքն իւրովք, յորոց է եւ եռամեծն Ներսէս։ Նաեւ յիշեսջիք զհանգուցեալ փեսայ սոյն իշխանի, զքաջասիրտն Ռոֆրի, զտէր աստուածաշէն դղեկին Սարվանդոյ, եւ զամենայն ծանաւթս եւ զազգայինս զննջեցեալսն ի Քրիստոս, յորոց ոսկերսն ցաւզեսցի քաւութիւն արեանն Քրիստոսի եւ հոգւոցն հանգիստ ընդ արդարս պարգեւեսցի, եւ ձեզ յիշողացդ հարիւրապատիկ փոխարէն հատուսցէ բաւականն յառեալն եւ ամենազաւրն Աստուած, որպէս զի ի՛ մի բերան փառաւորեսցի աւրհնեալն ի բնաւից ամենակալ տէրութիւնն Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Զխոհեմ այրն եւ զիմաստից իմաստակն, զձարտասանն ի գործս, ի բանս, ի խորհուրդս յամենայն կողմ՝ <մինչ գրեթէ> մինչ գրեթէ

եւ զգազանաբարոյն եւ զթիմնատրսն ի քաղցրութիւն փոխարկեալ ողոքական եւ հեզ շրթամբք իւրովք զմեծ իշխանն Հեթում Զաւտկանց զսընդեկնոսն նոյնո իշխանի, որ զաւետաբեր մատեանս ետ գրել, յիշեցէք սրտի մտաւք ըստ նախագրելոցս...։

Գ

Մաղկո՞ղ Ստեփանոս Վանկացի

Նաեւ զարի երշանիկ քահանայ Գրիգոր որդի Կոստանդեա իշխանի, որ էր ի տան դշխոյին իշխեցոյ ի վերայ մեծի եւ վսոքու, եւ որպէս հայր տածող եւ խնամող ամենեցուն, որ զայս յիշատակ շարայարեաց ի ձեռն մեծ վարդապետի եւ եպիսկոպոսի Յակոբայ՝ քեռոյ իւրոյ, ուր եւ սնեալն էր եւ վարժէր ղիմաստից աստուածայինն եւ զՍտեփանոս Վանկացի որ զսա յամենեսինս յիշատակի արժանի արարէք։*

353

ԺԱՄԱԳԻՐՔ

«Էջմիածին», 1951 թ., IV—VI էջ 57—63

Գրիչ՝ Ստեփանոս Վանկացի

337 *Փառք միայնոյ, անբաժանելոյ, անհասանելոյ, եռանձնեան և անեզրական Սուրբ երրորդութեանն և միաստուածութեան ի վերնայնոյ հրաբունից դումարտակաց և ի ստորաբնակ եղականացս յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից, ամէն, ամէն։*

Շնորհիւ Տեառն և ամենառատ ողորմութեամբ ամենակարող և անճառ զաւրութեան նորա և գերագոյակ անեզրական իմաստութեան արգահատութեամբ Հոգւոյն Սրբոյ աւժանդակեալ կատարեցի զաստուածամաղթան և տիրապետում տառս մարգարէից և զքրիստոսայայտ տնաւրէնութեան բացայայտութիւն առաքելական և աւետարանական թղթովք, որ է գանձ ծածկեալ բազմաբեղուն և չքնաղատիպ մարգարիտ և ակն լուսատու, և սուիերայեան ոսկի, որ և դէպ է ըստ տեսողին, իբր և ոսկի ընդ սարդիոն յեռեալ և կինամոն տաշխիւք կնդրկաց խնկեալ անմահաբար հոտիւք, զոր նուաստս ի յորդիս եկեղեցոյ և փցուն գրիչս Ստեփանոս Վանկայցի յանգ ելեալ կատարեցի հրամանաւ և ծախիւք քրիստոսապսակ բարեպաշտին և աստուածունակ արքային Հայոց Լեռնի՝ որդւոյ Հեթմոյ՝ որդւոյ Կոստանդեայ, և մայրենի ազգաւ որդի Զապէլ թագուհոյ, որդւոյ Լեռնի թագաւորին Հայոց առաջնոյ յՌոբինեանց, որ ի յարմատոց բարեաց գտաւ գերազանց բարունակ ստեղնեալ անուշահոտ և քաղցրաճաշակ պտղովք աստուածայնոցն առլցեալ կտակարանացն ըղձիւք և մեծատենչ ևս, որ առ տէր հրով սիրոյն փափաքմամբ միշտ վառեալ, որ

* *Մի բառ անընթեռնելի է։*

*և յաղագս անբաղդատելի սիրոյն առ Աստուած և առ ամենայն ուղղափառ քրիստոնեայս, բաղում անգամ գանձ ի մահ եդ, աւրինակ եղեալ ///**

354

ԺՈՂՈՎԱԾՈ

Երևան 4086

Գրիչ՝ Ստեփաննոս Վանկացի

ա

98բ *Ո՛վ պատուական հովիւ քաջ բանաւոր հաւտի, քրիստոսահանգէտ քաղցր և բարի, որն նմանապէս սրբոց առաքելոցն՝ ընդ ամենայն ոլորտս տիեզերաց քարոզեցեր զբանն կենաց, և լուսաւորեցեր զամենեսեան անլուծանելի լուսով, և ի Քրիստոս Աստուած միացուցեր շնորհաւք ամենասուրբ Հոգւոյն, և զորդիսն սատանայի որդիս Աստուծոյ արարեր և ժա-*

99ա *ռանգակից Քրիստոսի, ամենասուրբ աւազանաւն|| և աստուածահրաշ սրբազան հոդիաներկ սուրբ միւռոնիւն աւծութեամբ հանուն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, երրորդութեանն և մի աստուածութեանն, ամենակալի, անմահի, անեղի և արարչի։ Եւ այսպիսի ամենասուրբ իւղովս և դաւանութեամբս հաստատեցեր զեկեղեցիս Հայաստանեայց՝ ի վերայ առաքելական վիմի, ի մի Տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ, զոր և դրունք դժոխոց ոչ յաղթահարեցին և ոչ կարեն յաղթահարել յաւիտեան։*

Այսպիսի ամենասուրբ հաւատովս պահեա զամենեսեան, և զմեզ անպիտան ծառայքս մինչ ի վերջին աւր կատարման մերոյ, և ի յարութեան համաւրէն մանկանց եկեղեցւոյ սրբոյ քո եւ ընգառաջ սիրով, և գրկեա համբուրիւ, և փարատեա զմէգ մեղաց տեսակաց, զոր բանսարկուին պատրանաւք մեղուցեալ եմք, և քաւեա աստուածայնապէս, և ասա առաջի տեառն և փրկչին բոլորեցունց՝ ահաւասիկ ես և մանկունք իմ զորս ետուրն ինձ՝ զարեամբ գնեալքս քո, ընդ որս և զԱւշին ծնողաւք իւրովք և զարմիւք, և զծառայս մեղապարտ զՍտեփաննս Վանկայցի, որ ձեռամբ իմով շարեցի զճառս ներբողական Սուրբ Լուսաւորչիդ մերոյ։

99բ *Աղաչեմք հոգւամած երեսաւք զաստուածատիպ սուրբ հայրդ հանուրց, զմեծդ Գրիգորիոս Լուսաւորիչ Հայաստանեայց, զի ճշգրտիւ առնուցումք՝ զոր հայցեցաքն ի ձենջ, ընդ առաջ ելանել մեզ աստուածայնապէս ըստ անառակ որդոյն, և խրախացուցանել զմեզ և զամենեսեան, և ի*

---

* Ստորին լուսանցքի վրա կա նոտրգրով մի հիշատակագրութիւն. «Գրեալ է ժամագիրքս յամի տեառն 1224 և ի Թուին հայոց ՉՃՀԹ-ին, ձեռամբ Ստեփաննոսի Վանկեցւոյ»։ «Այդ թվականին Հեթումի որդի Լևոն չկար, որին Ստեփանոս Վահկացին նկարեր կամ նրա համար Աւետարան (պետք է լինի ժամագիրք) գրեր»,—գրում է Գ. Հովսեփյանը, և գտնում, որ այն գրված պետք է լինի 1270-ական թվականների սկզբին (անդ, էջ 65)։ Անշուշտ թվականը սխալ է կարդացել նոտրգրողը։ Հավանաբար տասնավոր «Ի»-ն «Հ» է կարդացել, այլապես կունենայինք ՉՃԻԹ=1274-որը կհամապատասխաներ Թագավորի օծման առթիվ գրած Աւետարանի ժամանակին (Երուսաղեմ, ձեռ. № 2564, «Ստեփանոս Վահկացի», էջմիածին. 1951, IV—VI, էջ 64)։ Այդ թվականն է ընդունում նաև ձեռագիրը նկարագրող Արտավազդ Արքեպիսկոպոսը («Լևոն Դ Թագավորի ժամագիրքը», անդ, էջ 61)։ Հիշատակարանն ըստ այդմ դնում ենք 1274 թվականի ներքո։

վերայ ուսոյ բարձեալ ըստ մոլորեալ ոչխարին տարացուցի, և պառկել հարսնացուցանել փրկչին արարածոց և փեսային Քրիստոսի Յիսուսի տեառն մերոյ, որում փառք, պատիւ, և զաւրութիւն, գոհաբանութեամբ հանդերձ, և երկրպագութիւն յաւիտեանս, ամէն։

Ո՛վ գերահրաշ ընթերցողք և վերծանողք և մտառուք, որք և լսեքդ զբազմաչարչար առաքինութիւնս սրբոյս, հաղորդակից լերուք չարչարանաց սորա, զի և անճառ փառացն նորա կցորդակից լիջիք, և բոլորով հաւատով ի սուրբ սրտէ թողութիւն մեղաց և հանգիստ յաւիտենից խնդրեցէք ի Քրիստոսէ Աստուծոյ՝ և ի Հաւրէ, և ի հոգոյ նորին, և ի սուրբ վկայէս Քրիստոսի Աստուծոյ, զի հաշտեսցի ընդ զվերադրեալքս՝ ընդ Աւշին և ծնողս նորա, և ընդ Ստեփանոս գրիչ և ընդ ծնողս նորա, ղի և դուք արժանաւորիք այսմ բարութեանցս, որ ի Քրիստոս Յիսուս, ամէն։

Բ

26ա Սուրբ և փրկական ծննդեամբդ քո, Քրիստոս Աստուած մեր, թող զմեղս ամենայն հաւատացելոց ի քեզ, ես և զԱւշնի՝ որդւոյ պարոն Թաւսաւրէի, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի, ամէն։ Նա և զանպիտան գրողին Ստեփանոս և ծնողաց նորա։

Գ

38ա Զմեղաւոր ծառայս Յիսուսի Քրիստոսի ամենակալի և Հաւր և Հոգոյ նորին՝ զՍտեփանոս, ծնողաւք և զարմիւք յիշեսջիք, յոյժ յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր, ո՛վ քրիստոսասէր սուրբ հարք մեր և եղբարք՝ մանկունք սուրբ եկեղեցոյ։ Նա ևս առաւելապէս զԱւշին՝ որդի Թաւսաւրէի, եղբարբք իւրով, և ծնողաւք, և համայն զարմիւքք, որ ստացաւ զսա գանձ անապական յերկինս, և յիշատակ հոգոց և մարմնոց, այժմ և յաւետ յամենայնի։

Դ

58ա Զպարոն Աւշին որդի պարոն Թաւսաւրէի, որ ստացաւ զաստուածային զգանձս զայս, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց նորին, և ամենայն զարմից նոցա, որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի և դուք մակունք սուրբ եկեղեցոց, յիշեցէք ի բարին ի Քրիստոս Աստուած մեր*։

---

* Ստեփանոս Վահկացու ձեռքով գրված մասը ավարտվում է ա (13-րդ) պրակով, 99-րդ թերթում։ Ձեռագիրն այժմ կազմում է 1323 թ. գրված մի ձեռագրի սկզբի մասը։ Վահկացու հիշատակարանների մի մասը (Ա, մասամբ և Դ) տե՛ս տպագրված «Դ գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (Երևան, 1950) 185 էջում։

355

ԱՒԵՏԱՐԱՆ

Երուսաղեմ 1955, Պողարյան, Ցուցակ Չ, էջ 524—525

Գրիչ՝ Կոստանդին
Վայր՝ Մաշկեւոր եւ Դրազարկ

ա

621ա *Աւրհնութիւն և փոհութիւն, փառք եւ պատիւ անբաւից եւ անհասանելեաց, ամենասուրբ եւ երկրպագելի Երրորդութեանն, միոյ տէրութեանն եւ աստուածութեանն, Հաւր արարչի, եւ Որդւոյն միածնի, եւ Հոգւոյն ճշմարտի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն։ Որ ետ ղաւրութիւն իմոյս տկարութեան հասանել ի վերջին գիծ գրոց քառավտակ կենսունակ սուրբ Աւետարանիս, զոր ընկալեալք սիրելիք բանին եւ սիրեցեալքն ի բանէն, զբանն կենաց անդստին յանծայրածաւալ ծովէն առատապէս անհատաբար յառաջ բղխեալ յանսպառ յաղբիւրէն, անորիշ բաժանմամբ քառառաջ շարժմամբ յաւէտախաղաց ընթացիւք, աւանդեցին պասքմամբ լքելոյ ազինս յարբումն անսպառ։*

Յորմէ ոգիակենդան վերանորոգ գերփայլեալ ի ծագմանէ էականն լուսոյ լուսալրացեալ եւ յորդիս լուսոյ եղեալ, ընծա խորհրդական, սնունդ սրբութեան, վարժեալ աստուածային աւրինաւք, կատարեալ տեսական եւ արդիւնական, գերապայծառ եւ տիեզերափայլ վարդապետութեամբ, լի եւ առաւելեալ ամենայն մաքրութեամբ եւ բոլոր առաքինութեամբ, սուրբ եւ երիցս երանեալ այրն Աստուծոյ, տէր սուրբ Յակոբ, *որ աստուածային նախահրաւէր ընտրութեամբ արժանապատուեալ յառաջնորդութիւն հայրապետութեան հայկազեան ազգիս շնորհեցաւ գլուխ պատուական եկեղեցւոյ՝ Քրիստոսի արեամբն գնեալ բանաւոր հաւտին հովիւ քաջ եւ բարի; որ փափագաւղ եղեալ կենսունակ սուրբ Աւետարանիս, ոչ հայելով ի վայելչութիւն նիւթոյ և գրոյ, այլ ի լուսաւորութիւն բանի եւ յուղղութիւն գրոյ, որպէս է սովորութիւն ընթերցասիրաց։ Ի սորին հրամանէ եւ ի խնդրոյ, ես տրուպ աշակերտ սորին եւ նւաստ որդի ըստ հոգւոյ՝* Կոստանդին *սպասաւոր բանին. յանձն առեալ, շնորհիւ Տեառն սկսա զսա ի սուրբ անապատս* Մաշկեւոր, *ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, եւ Սուրբ Կարապետին եւ Մկրտչին Յովհաննու, եւ ողորմութեամբն Աստուծոյ յանկ հանեալ աւարտեցի զսա ի հռչակաւոր եւ Սուրբ ուխտս* Դրազարկ, *ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ այլ սրբոցս, յամի յորում էր թիւ Հայկազան տոմարիս եւթն հարիւրորդ քսաներորդ երրորդ (1274), ի հայրապետութեան սորին՝ տեառն* Յակով*—*բա *կաթողիկոսի ամենայն Հայոց, եւ ի թագաւորութեան քրիստոսապսակեալ սուրբ թագաւորին ամենայն Հայոց* Լեւոնի, *զորս տացէ մեզ Տէր ընդ երկայն աւուրս պարագայց ամաւք զաւրաւոր եւ յաղթող ի վերայ թշնամեաց իւրոց։*

Ո՜վ աստուածարեալ սուրբ հարք, եւ ճգնազգեաց սրբասնունդ քահանայք, որք կարդայք եւ լուսաւորիք եւ որք լսէք եւ մխիթարիք, կամ որք ընդաւրինակէք, մանաւանդ յորժամ բառնայք զսա ի վերայ աստուա—

ծարեալ բազկացդ ի ժամ սոսկալի եւ մեղսաքաւիչ պատարագին, յիշեսջիք առաջի սրբոյ սեղանոյն ղստացաւղ աստուածախաւս մատենիս զտէր սուրբ Յակովբ կաթողիկոս Հայոց, որ ստացաւ զաւետահրաւիրակ եւ տիեզերաքարոզ Սուրբ Աւետարանս յիշատակ բարեաց անձին եւ ծնաւղաց եւ հարազատաց իւրոց։

Աղաչեմ և ես մեղապարտս Կոստանդին, զի եւ զիմ անարժանութիւնս արժանի առնիցէք յիշատակի, եւ որք յիշէքդ յիշեալ լիշիք եւ դուք յողորմութիւնն Աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Երդմնեցուցանեմ զքեզ, որ գրես զգիրս զայս, ի Տէր Յիսուս Քրիստոս, եւ ի սքանչելի գալուստն նորա, այն որ ի նմայն գայ դատել զկենդանիս եւ զմեռեալս, զի համեմատեալ կշռեսցես դու զայդ այսմ աւրինակի ուստի գրեցերդ զդա, եւ հոգաբարձութեամբ եւ զսոյն զայս երդումն գրեսցես եւ դիցես ի գիրսդ զոր գրեցեր։

Բ

Կազմող՝ Առաքել Հնազանդենց

625ա Ո՛հ զմեղաւք դատապարտեալ կազմաւղ սորա Առաքել Հնազանդենց, եւ զծնաւղսն իմ, եւ զհարազատսն իմ՝ զԿարապետ քահանայ և զՊաւղոս սարկաւագ, եւ զուսուցիչսն իմ զՍարգիս քահանայ, եւ զեղբաւրորդեակն իմ զԹորոս, զհանգուցեալսն ի Քրիստոս, աղաչեմ յիշել ի Տէր։

Ի թուին ՉԻԴ (1274) կազմեց[աւ]։

Երկրորդ ստացող

Գ

625ա Չ[երկրորդ] ստացաւղ Սուրբ Աւետարանիս զոր ի հալեալ արդեանց ստացաւ զսա՝ Աւշին մարայշախտ Հայոց, որդի բարեպաշտ իշխանաց իշխանին Կոստանդեա, տեառն Լամբրունեն, թագաւորի Հայոց, աղաչեմ զմանկունս մաւր մերոյ Սիոնի յիշել եւ ողորմութիւն խնդրել, յորժամ ընթեռնոյք։

356

ԱՒԵՏԱՐԱՆ

Պալյան, ծուցակ Կեսարիո, էջ 29 (1203 թ.)

Կազմող՝ Առաքել Հնազանդենց

293ա Ո՛հ զմեղաւք զդատապարտեալ կազմաւղ սորա զԱռաքել Հնազանդենց, եւ զծնաւղս իմ, եւ զհարազատսն իմ զԿարապետ քահանայ եւ զՊաւղոս սարկաւագ, եւ զուսուցիչն իմ զՍարգիս քահանայ, եւ զեղբաւր որդեակն իմ զԹորոս՝ զհանգուցեալսն ի Քրիստոս, աղաչեմ յիշել ի Տէր։

Ի թվ. ՉԻԴ (1274) կազմեցաւ սա։

357

ՄԱՆՐՈՒՄՈՒՆՔ

Կոնիբեր, Ցուցակ Լոնդոնի, էջ 85

Գրիչ՝ Յակոբ
Վայր՝ Սիս

Փառք... Յամի ՉԻԳ (1274), ի թուականիս Հայոց գրեցաւ Տետր եղանակաւորս, ձեռամբ թարմատար և բևրևր մեղապարտ և տիմար գրողիս Յակոբ, ի մայրաքաղաքս ի Սիս, ընդ հովանեաւ Սրբոյն Յակոբա, ի վերադիտողութեանն Հայոց ազգիս տեառն Յակոբա, և ի թագաւորութեան աստուածասէր և բարեպաշտին Լևոնի...

Արդ, ստացաւ զսա սրբամիտ և բարեբարո դպիրն Կարապետն, որ է որդի Թորոսի ձիաւորի, ի յարդար ընչից իւրոց, ի վայելումն անձին իւրոյ...

Դարձեալ աղաչեմ զամենեսեան յիշելո արժանի առնել... զծնողն և զուսուցաւղսն մեր, և զ Բ (2) որդեկներ, զոր գերեցին և տարան յԵգիպտոս: Առ ոտս անկեալ յամենեցունց խնդրել դարձումն գերելոցն, և զառաքին[ի] հոգևոր եղբայրն մեր Գրիգոր երէց, որ էրես գրել զսա իւրով միջնորդութեամբ, աղաչեմ և զնա յիշել...

358

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6273, Փիրղալեմյան, Նչխարք, էջ 47ա

Գրիչ՝ Յակոբ դպիր
Վայր՝ Մամեսպիա

Փառք Սուրբ Երրորդութեան յաւիտեանս յաւիտենից, ամէն: Յամի հօթն հարիւրերորդի քսաներորդի երրորդի (1274) թուականութեանս Հայոց, ի հայրապետութեան տեառն Յակոբայ, և ի թագաւորութեան Հայոց Լեռնի որդւոյ Հեթմոյ մեծի արքայի, գրեցաւ Նոր Կտակարանս ընդ հովանեաւ Սրբոյն Ղազարու կաթողիկէի, ի քաղաքիս Մամեսպիայ, ի խնդրոյ սուրբ և երջանիկ, առատաձիր և շնորհազարդ անձին տեառն Յովհաննէսի Մշեցւոյ, ձեռամբ թարմատար Յակոբայ դպրի:

359

ՎԱՐԴԱՆԱ ԵՌԱՄԵԾԻ ՍՈՓԵՍՏԻ ԺՈՂՈՎԵԱԼ ԱՐԴԱՐԵԻ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ՉԱԻԳՈՒՏՆ Ի ԲԱՋՄԱՑ

Տիսերան, ծուցակ Հռոմի, էջ 47 (1631 թ.)

Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր եւ Որդոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Յամի եւութն հարիւրեւորդի քսաներորդի երրորդի (1274) թուաբերութեանս Հայոց։

360

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6373, Փիրոալեմյան, նշխարք, էջ 47

Գրիչ՝ Իգաստիոս
Վայր՝ Զիմառա

Փառք ամենասուրբ Երրորդութեան... ամէն։

Գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ անարժան սարկաւագ Իգնատիոսի, ի թուին Հայոց ՉԻԳ (1274), ընդ հովանեաւ Սրբոյն Յովհաննու, ի գիւղաքաղաքիս, որ կոչի Զիմառայ։

Արդ աղաչեմ ///

361

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՑ

Երևան 3929 (1247 թ.)

Ստացող՝ Բարսեղ

337բ *Ի ՉԻԳ (1274) թուին Հայոց, ես Բարսեղ կրաւնաւոր ստացայ զայս գիրքս ի յիմ արդեանց ինձ ի վայելումն և յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց իմոց։ Արդ, աղաչեմ զպատահեալսդ և յո ոք եւ անկանի սայ յետ մեր, յիշեսջիք ի Քրիստոս զԲարսեղ միակեաց՝ հանդերձ ծնողաւք և ազգականաւք, և որք զմեզ յիշէք սրտի մտաւք, Քրիստոս զինք յիշէ յիւր արքաւթիւն։*

---

* «Այսչափ էր գոած առաջին ցիշատակարան և ոչ աւելի»,— գրում է գրիչը,—Ոհ, զի խիստ ծեր էր աւրինակս, հազիւ կարացի յանկ հանել։ Իսկ Ձեռագրի հիշատակարանում գրում է. «Եւ ես Յովհաննէս վարգապետս Կոսանգինապօլսոյ պատրիարգ անուամբ, ի Հռոմ գնալս պատահեցայ ի նով քաղաքն, տեսի զՎարգան վարդապետի Պատմագիրն, զի խիստ հնացեալ էր, վասն որոյ եղի աւրինակ և գրեցի զգիրս։ Անմեղադիր լերուք, ծերութեան ժամանակի գիրս է, եւ այս եղև թվ. ՌՁ (1631) դեկտեմբերի առաջին աւրն, որ էր հինգշաբթի»։

362

ԿԱՐԳ ԱՍԱՑՈՒԱԾՈՑՆ

Երևան 5197

Գրիչ՝ Շմատե
Վայր՝ Գեաիկ

ա

233բ Ջստացաւղ Սարգիս յիշեցէք առ Տէր Յիսուս, և զՇմատե գրիչ յիշեցէք առ Քրիստոս Աստուած*։

բ

315ա Ո՛վ պատուական, վասն Աստուծոյ զՇմատե յիշեա ի Տէր։

գ

320բ Տէր Աստուած ողորմեսցի Ալաֆսիոսի, ամէն։

դ

420 ՋՍարգիս զստացող յիշէ, և զՇմատե գրիչ, զԱլաֆսիոս յիշէ։

ե

Այլ գրիչ՝

434բ /// անձն զՍարգիս յիշեա ամէն։

363

ԼՈՒԾՄՈՒՆՔ ԳՐՈՑՆ ՓԻԼՈՎՆԻ ԵՔՐԱՅԵՑՑՈՑ

Երևան 5239

Գրիչ՝ Մաթէոս
Վայր՝ Առաջնաբար

Փառք եռակի, եզակի Սուրբ Երրորդութեանն՝ Հաւր և Որդոյ և Սրբոյ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

93ա Ի թուիս ՉԻԳ (1274) գրեցաւ գիրքս այս մեծ և խոհեմ կորովամիտ առնն աստուծոյ Փիլոն կոչեցելոյ, ազգաւ Իսրայէլացի, ի ցեղէ Ղևտացի, դպիր գոլով, ձեռամբ անարժան և անարհեստ գրչի Մաթէոսի, ի վանս Առաջնաբար, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, ընդ իշխանութեամբ և ընդ [գլխ]աւորութեամբ բարեւնեաց պետիս, որ է մեստր և տելետ Գրիգոր Բշնեցի մականրեալ, զոր Տէր Յիսուս անտասան պահեսցէ ի ներհ[ակ] գոռոզէն։

---

* Ստացող Սարգիս վարդապետի հիշատակարանը 1280 թվականի տակ է, ուր ասում է «Գտաւ գրել... զկարգ ասացուածոցն... ի Գետիկ, ի թվին Հայոց ՉԻԳ (1274)»։ Հենվելով այս վկայութեան վրա նշանակել ենք թվականը և տեղը։

93բ Այլ Աստուածն իմ Յիսուս Քրիստոս ողորմածն և ||| ածն, մարդասէրն ի բաղամողորմն, այցարարն և խնդրողն, դարձուցանողն և փրկողն զգեր[ե]ալսն ոչխարին, խնդրողն և տանն աւել ածողն, ընդ մաքսաւորն ուտողն և զպոռնիկս արդարացուցանողն, ողջաց պահողն և հիւանդաց առողջացուցանողն, արդարոց դոյացուցանողն և մեղաւորաց փրկութիւն շնորհողն, և որ յարմար սմին երթայք ուսարուք չինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ, և դտջիք հանգիստ անձանց ձերոց, զի լուծ իմ քաղցր է և բեռն իմ փոքրոզի, փոքրացուսցէ նոյն ինքն բանն Աստուած, այսինքն լուսացէ իբրև զձիւն, սպիտակացուսցէ զհոգի և զմարմին ամենայն երախտաւորաց մերոց, երջանիկ եպիսկոպոսին տէր Սարգսի, և հաւրեղբաւրն իմոյ Մխիթարի՝ [ը]ստ մարմնոյ, սնուցող և հայրապէս գթած և ըստ ոգո մատակարար, և ծնողացն իմոց Ամէնատէրին և Աղուտին, ևս առաւել եղբաւրն իմոյ Հասանեա: Սոցա ամենեցուն աստ յիշատակեցելոցս ողորմեսցի բազմագութն Աստուած, ասելով. Ով բարի ծառա հաւատարիմ, մուտ յուրախութիւն Տեառն քո և մեզ յիշէ ի բարիսն, և ինքն հանդիպեսցի այնմ բարեաց, և որով հայցէ մեզ ի Տեառնէ, զնոյն և առցէ յաւուրն սոսկալի ի Քրիստոսէ Աստուծոյ, որ է աւրհնեալ, գովաբանեալ և փառաւորեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն*:

364

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Երուսաղէմ 353, Պողարյան, Յուցակ Բ, էջ 250—251

Գրիչ՝ Սահակ Ասորի

ա

205ա Տէր Աստուած Իսրաէլի ողորմեաց ըստացողի գրոցս տէր Կոստանդեայ պատուական քահանայպետի, ընդ նմին եւ գծողի սորա նուաստ քահանայն Սահակայ Ասորւոյ, եւ Աստուծոյ փառք յաւիտեանս, ամէն:

բ

259բ Կատարեցաւ գիրքս Յեսուա մարգարէին եւ աստուածախաւսին, որ է դատաւորք ցեղիցն Իսրաէղի, ձեռամ[բ] յո<ւ>զնամեղ քահանային Սահա[կայ] Ասորւոյ, ի խնդրոյ աստուածասէր քահանային տէր Կոստանդեա: Վայելել տացէ սա Տէր իւր, ի զրաւ սորա:

գ

Ստացող և սրբագրող՝ Ստեփանոս

297ա Փառք թագաւորին երկնաւորի, որոյ անվախճան է թագաւորութիւնն, ամէն, ամէն: Ո՛վ սրբասէր հարք եւ եղբարք, որք հանդիպիք

* Հիշատակարանի սկզբում այլ գրով և թանաքով գրված է «Եսայի վարդապետին է գիրքս»:

սմա մեղաց թողութիւն հայցեցէք ի Տեառնէ ստացողի սորա Ստ[եփանո-սի], եւ ուղղչի, որ բազումս աշխատեցայ, որպէս եւ տեսանէքդ։ Եւ Աստուած զձեզ յիշէ յիւր ողորմութիւնն։

դ

407բ Ո՛վ աստուածարեալ մանկունք Վերին Սիոնի, որք աւգտիք ի սմանէ՝ բազմամեղ ստացողի սորա ը[Ստ[եփանոսի], եւ ծնաւղաց իւրոց, եւ ամենայն աշխատողաց ի սմա՝ մեղաց թողութիւն հայցեցէք ի Տեառնէ, եւ սխալանացս որ ի սմա անմեղադիր լերուք, զի գրողն ասորի էր, եւ յոյժ թիւր էր դրել եւ անյարմար։ Ես ըստ կարի իմում համարձակեցա ուղղել զսա ի ստոյգ աւրինակէ, եւ խիստ վիշտ կրեցի յուղղել սորա, զի կարի սխալ էր որպէս եւ տեսանէք։ Բայց ընդ այս ուրախ եմ, զի թէպէտ գիրս այլայլեցաւ վասն ուղղելոյն, այլ որ ընթեռնու՝ կամ ընդաւրինակէ՝ նմա յոյժ աւգուտ է։ Եւ [որք] յիշէքդ զմեզ՝ եւ դուք յիշեալ լիջիք ի բարերար Տեառնէն մերմէ, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն, ամէն, ամէն։

ե

91բ Որ զերեսան Մովսէսի պայծառացուցեր՝ եւ զխորանն շնորհաւք հոգւոյդ լցեր, լուսատրեա եւ զմեղապարտ հոգի ստացողի սորա Սահ-փա[նոսի] եւ զծնողաց իւրոց։ Նաեւ ղուղղիչ սորա զԿոստա[նդին], եւ զծնաւղսն իւր ընկալ ողորմութեամբք ի լոյսդ անմատոյց։ Եւ որք յիշենն զմեզ՝ եւ ինքեանք յիշեալ լիցին ի Տեառնէ։

զ

Կազմող՝ Կարապետ

408բ Կազմեցաւ սայ ձեռամբ մեղուցելոյս Կարապետի, ի թուականին Հայոց ՉԻԳ (1274)։ Արդ, ես տառապեալ կազմող սորայ, զերեսս ի մոխիրն դնեմ ընթերցողացդ եւ աղաչեմ յիշել ի մեղաց թողութիւն զիս, եւ զծնողքն իմ, եւ զեղբայրքն զհանգուցեալսն ի Քրիստոս, եւ ըստ հոգոյ եղբայրս իմ զՍտեփանոս եւ զնաչեր կրաւնաւոր, որ աստուածայսիրաբար խնամէ մեզ յայսմ աւտարութիւնս. եւ որք յիշէքդ, եւ դուք յիշեալ լիցիք ի Քրիստոս, որում փառք յաւիտեանս, ամէն։

365

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վեներիկ 23, Մարգիսյան, Ցուցակ Ա, էջ 171

Գրիչ՝ Սահակ Ասորի

ա

193ա Կատարեցաւ Իմաստութիւն Սողովմոնի՝ ի խնդրոյ աստուածասէր և բարեպաշտին պարոն Յակովբայ՝ ձեռամբ յոգնամեղ և նուաստ քահանայի Սահակա Ասորոյ փծգոն գրչի։

Բ

96բ Ո՛վ քրիստոսազգեաց գասք, յորժամ ընթեռնոյք զհոգեշահ իմաստքս որ աստ գրեցան, յիշեսջիք ի Քրիստոս զստացաւղ սորա զՏէր Յակոբ և զծնողս իւր, ընդ նմին և զգծող սորին զՍաճեակ:

Գ

81բ Զամենիմաստ ստացող գերահրաշ իմաստից զպարոն Յակովբ և ըզծնաւղս իւր յիշեսջիք ի Քրիստոս։

366

ՈՍԿԵՓՈՐԻԿ

Վենետիկ 268, Սարգիսյան, 8ուցակ Բ, էջ 872

Գրիչ՝ Յոհաննէս
Վայր՝ Անիիոf

ա

216բ Փառք ամենայսուրբ Երրորդութեանն, Հաւր և Որդոյ և Սրբոյ Հոգւոյն։
Գրեցաւ նախալաւիաննս ի գաւառին Անիիոfայ, ընդ հովանեաւ Սրբոյ<Հոյ> Սարդսի, ձեռամբ անարժան և յետին քահանայի և ծառայի Աստուծոյ Յոհաննիսի յետին և ի փցուն գրչի, և մի մեղադրէք վասն խոշորութեան և սղալանաց գրիս, զի այսչափ կարացաք դրեալ։
Գրացաւ ի թվականութեան յաւիտենից [ՉԻԴ] (1275), և Աստուած վայելել տացէ։ [Արդ որք աւ[գ]տիք ի տմանէ՝ մեղաց թողութիւն]... խնգրեցէք ծառ[այ]ին Աստուծոյ Յոհաննէսիս և ծնողաց։

բ

Վայր՝ Կեսարիա

247ա Կատարեցաւ տառս այս ի մայրաքաղաքս Կեսարիայ, ընդ հովանեաւ Սուրբ Ստեփանոսի, [յիշատակ] Պարոնին և ի բարեխաւսութիւն հաւր իւրոյ Պապանվան, և համաւրէն ննջեցելոց իւրոց և ի վայելումն որդոց իւրեանց... Պարոնին և ///
Արդ, որք աւկտիք ի տմանէ կամ ընդաւրինակէք, յիշեսցիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՊարոն և զիր ննջեցեալսն, և Քրիստոս, որ առատն է յամենայնի՝ մեզ և ձեզ ողորմեսցի յիւրում գալստեան, ամէն։
Գրեցաւ ի թվիս ի ՉԻԴ (1275)։

գ

Գրիչ՝ Գրիգոր

147բ Եւ զիս բազմամեղս զԳրիգոր գրիչս յիշեսցի ի Քրիստոս, և յիշողս ///

367

ԱԻՏԱՐԱՆ

Երևան 7534

Գրիչ՝ Սահփաճոս Վանկայցի

ա

273ա Փառք Սուրբ Երրորդութեանն յաւիտեանս, ամէն։ Ի թվին Հայոց Մեծաց ՉԻԴ (1274) և ի հայրապետութեանն տեառն Յակովբա, և ի թագաւորութեանն Հայոց Լեւոնի, գրեցաւ իմով ձեռամբ Կոստաճեա քահանայի սուրբ Աւետարանս ի յղորդ և յընտիր աւրինակէ, ի խնդրոյ եղբաւր մերոյ Դաւթի կրաւնաւոր քահանայի, ի վայելումն անձին իւրոյ և
273բ ի յիշատակ ծն||ողաց իւրոց Վաճրամ քահանայի և Պաճրկանճ, և քուերց իւրոյ Աւրեայաիկնայ և Փառացաիկնայ, և որդւոյ նորա Գրիգորի սարկաւագի, և հաւր սորին Ներսէս քահանայի։

Արդ, եղև զրաւ սորա յայսմ ամի, որ է Հայոց թուականն ՉԻԴ (1275), զոր կարճ ի կարճոյ ճշտիւ և համառաւտ յիշել պարտ է զդառնաբեր ժամանակս ի վերայ երկրիս Կիլիկեցւոց։ Յամսեանն մարտի, որ աւր Ի և Ե (25) էր, երկուշաբթի, գոռոզն փարաւոն, արբանեակն սատանայի, առեալ զառաջնորդն իւր զԲելիար ամենայն զաւրաւքն իւրովք ի յաւգնութիւն իւր և զաւրաց իւր և ամենայն զաւրաւքն իւրովք ի յաւգնութիւն իւր և զաւրաց իւր և ամենայն հնազանդելոց նորա, զաւրաժողով արարեալ զամենայն երկիրն Եգիպտացւոց՝ ի մեծէ մինչև ցփոքունս, մինչ գրեթէ ժ(10) բիւր էր զաւրք նորա, և եկեալ երկիրս Կիլիկեցւոց, և գտեալ անպատրաստ զամենեսեան, որպէ[ս աս]աց Տէրն, թէ Արթուն կացէք չմատնել ի փորձութիւն։

Եւ զայս ոչ միտ առեալ թագաւոր[ին] մերոյ և ամենայն զաւրաց նորա, այլ որպէս արբեալք և յիմաբեալք կացին և ոչ կարէին զդէմ ունել,
274ա և հրեշտակութիւն առաքէին ի խալ||աղութիւն և կամ տալ հարկս, զի մի եկեալ գերեսցէ զամենեսեան; Եւ նա յանկարծակի, որպէս զհուր ցոլացեալ ի վերայ ամենեցուն, ցիր և ցան արար զնոսա, և զամենայն քաղաքս և զգեաւղս՝ զդաշտայինս և զլեռնայինս, հրկէզ արար և զարս և զկանայս ի քսանամենից ի վեր՝ ի սուր սուսերի մաշեաց, և զողջյան առ ոտս երիվարացն արկեալ զի տրորեսցին, որպէս զմարախ անթիւ բազմութեամբ, և զաղջկունս և զմանկունս գերի տարեալ յաշխարհն իւր, և կացեալ յերկիրս Կիլիկեցւոց զատուրս երեսուն անսասան և անհոգ, և ոչ ոք էլ ընդդէմ նո[ցայ] և ոչ մի, և ոչ մնաց ի սահմանացն դաշտ[այ-ն]ոց, ոչ մեծ և ոչ փոքր որ ոչ ըմբռնեցաւ ի ձեռս նորա ամենայն ստացուածովք իւրեանց; Եւ մնաց երկիրս այս աւերակ յամենայնի, զատ ի քարանձաւաց և յամրոցաց աշտարակաց, և զաղէտ սորին և կսկիծ որպիսի կարացից ընդ գրով արկանել, զի հակառակն ճշմարտութեան և մարդասպանն ի սկզբանէ նախանձեցաւ ընդ ճշմարիտ գառինն զենումն,
274բ որ յամենայն աւուր զամենեսեան վերստին նոր||գէր և լուսաւորէր, և զաւրացուցանէր զհաւատացեալս իւր։ Եւ յայսմ ժամանակի ոչ կարաց հանդուրժել, այլ եմուտ ամենայն զաւրաւք իւր ընդ ձեռամբ անհաւատին

փարաւոնի, որպէս ի հնումն էր սովորութիւն նորա առ Մահմեդին, և զտաճար ընդհանուր Հայաստանեայց զմայր մեր Սիոն կոխան արար այլազգեաց և ծաղր և աւպնկատա[կա]նաց, և զկենսակիր Սուրբ Նշանն Քրիստոսի Աստուծոյն մերոյ առ ոտն խոզիցն յերկիր տարածեաց որպէս զչիթս անձրևաց։ Նաև զքահանայիցն և զսարկաւակացն և զամենայն ուխ[տ]ի մանկանց եկեղեցոյ զինչ ասացից կամ զինչ խաւսեցայց, զի ասի ի բերան եղէց և ոչ խաւսեցայց զառականս զնախատինս մեր, որ ի ծովացեալ մեղաց իմոց և ի կոհակաց կուտելոց, որպէս զլերինս անպատումս և անճառելիս եղև և այլոց առհասարակ ըստ չափու ոչ էր, այլ անթիւ էր յանցանքն, մինչև եւ աղաղակ չարութեան մեր առ Տէր։ Եւ նա ի ձեռն հրեշտակի չարի արբոյց մեզ զմրուր դառնութեան, և մեք յամառեալ ի նոյն հայհոյութիւն դարձուք և ոչ ի զղջումն։ Եւ այս Դաւիթ շատ աշխատեցաւ ի յայսմ ժամանակի որպէս զքաշ նահատակ, մինչ ի յաւարտ սորա հասաւ։

275ա Իսայց քաջս այս և արիս ի բարեփառութիւն և ի յողջախոհութիւն զմահ յանձն առեալ, և անկեալ ի մէջ անաւրինաց, և Տէրն ամենեցուն, պահապանն Իսրաէլի, առաջնորդեաց, նմա և անցոյց ընդ գետն մեծ Ճանուն, և ի ձեռն նորա զայլս բազումս և փրծանէր ի նոցանէ անսայթաք; Եւ յայլ բազումս ազգի ազգի վշտաց փրկեաց զնա Աստուած որպէս զՄովսէս ի ձեռաց փարաւոնի, և յոյժ աշխատեցաւ ի վերայ սորին որպէս Դաւիթ ի վերայ տապանակին, և զայլն է իմանալ ի մտաց սորին։ Եւ յերեսս անկեալ աղաչեմ զամենեսեան վասն սիրոյն Աստուծոյ, սրտի մտաւք յիշատակեցէք զյառաջասացեալ քահանայ Դաւիթ և զծնողսն նորա, և զամեն արեանառու մերձաւորք իւր, նա և զգծող սորին զԿոստանդին քահանայ, և զՍտեփանոս համարուեստ իւր, որ սակաւիկս գծեցի, և զքեռիք Դաւթի՝ զԱեսփսն և զՅովաննէս, և զքեռորդի սորա զՍտեփանոս քահանայ, և զհայր իւրեանց զՅոհաննէս, և մայրն, և զամենայն զարմ իւրեանց՝ զկենդանիս և զհանգուցեալս, և զամենայն հաւատացեալս ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որում փառք, պատիւ և երկրպագութիւն յամենայն հաւատացելոց իւրոց, ամէն, ամէն, ամէն։

Բ

136բ Ո՛վ պատուական հարք մեր և եղբարք, որք կարդայք կամ աւրինակէք, յիշատակեցէք ի մեղաց թողութիւն զԴաւիթ քահանա, և զծնողսն իւր՝ որ ըստ մարմնոյ և որք ըստ հոգւոյ, նաև զքուերսն իւր, և զքուերորդիքն, և զհաւրաքեռքն, և զամենայն ազգատոհմն, մինչև ի հազար ազգ, և զոր յԱդամա մինչև ցայս աւր հաւատով և յուսով են հանգուցեալ ի տէր Քրիստոս Աստուած մեր, և դուք որ յիշէքդ, յիշեալ լիջիք յանեղէն Աստուծոյ միայնոյ։ Նա ևս առաւել զանարժանս յիշատակի ըստ բարի կամաց ձերոց զթածաբար ողբալով և յոգոց հանելով ողորմեցարուք բազմամեղիս Սահակ Վանկացոյ, որ սակաւ թերութիւն տառիս շարագրեցի։

Գ

2ա Ձտառապեալս ի բարեաց Սահփանոս Վահկայցի, որ զհամաբարբառս գրեցի և զԴափք քահանայ, զտացող սորա, յիշեսջիք ի մեղաց Թողութիւն։

368

ՄԱՆՐՈՒՍՈՒՄ

Սյուրմելյան, Յուցակ Հալէպի, Ա, էջ 243

Գրիչ՝ Սահփանոս
Վայր՝ Սկևռայ

114 Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Որ տա զաւրութիւն յինքն հայեցողաց ի ներհակ եկամտից պարսպել զանձինս և բնաւորական արաբչադիրն հետևիլ սահմանի, յորոց մի է և այժմու յիշատակեալ պատուական քահանայս Յովհաննէս, ղի յետ ամենայն բարեաց առաւել մանուկ մի ի տհաս հասակի, և հայրական խնամով սնոյց աստուածային երկիւղիւն վարժեալ անուն Կոստաանդին։ Եւ իբրև եհաս յաշտիճան քահանայութեան, կամեցաւ զի անմոռաց պահեսցէ զնա ի սրտէ, և փոխանակ աշխատութեան տրիտուր հատուսցէ նմա մասամբք աղաւթից եւ պատարագաց։

Եւ ի թուիս Հայ[ոց] ՉԻԴ (1275), ի հայրապետութեան տեառն Յակովբայ, եւ ի թագաւորութեանն Լեռնի որդւոյ Հեթմոյ, յորում ըստ մեղաց մերոց զաւրացեալ անաւրէն իշխանն հարաւոյ՝ տէրն Մսրոյ, եկեալ աշխարհս Կիւլիկեցւոց բազում զաւրաւք, և ի սուր սուսերի մաշեալ զբնակիչս գաւառիս, և զքաղաքս և զգեաւղս հրոյ ճարակ արարեալ, և անթիւ բազմութիւն մարդկան ի գերութիւն վարեալ, բազում աւարաւ՝ ողջանդամ յաշխարհ իւր դարձաւ։ Եւ մնացեալքս ի լերինս և ի ծերպս վիմաց յահէ անաւրինին այսր-անդր գեգերեալ՝ ակն ունելով ողորմութեան և խնամոցն Աստուծոյ։

Արդ, յայսմ ի դառն և յանպրոպ խռովութեանս և յանփարատելի տրտմութեանն, գրեցաւ երաժշտական տետրս Մանբռւման, ձեռամբ բազմամեղ քահանայի Սահփանոսի, ի հռչակաւոր անապատս Սկևռայ, որ է մերձ դղեակս Լամբրունի և ի ստորոտ լերինս Տաւրոսի, ի խնդրոյ յառաշասացեալ սրբազան քահանայի Յովաննիսի եւ յիշատակ հոգւոյ իւրոյ, եւ ի վայելումն հոգևոր որդեկին իւրոյ Կոստաանդեա։

Արդ, աղաչեմ զամենեսեան որք աւգտիք ի սմանէ ուսմամբ կամ տեսակաւ կամ գաղափար առնելով, [ւ]իշեսջիք ի Քրիստոս զվերոյ ասացեալ պատուական քահանայ զՅովհաննէս եւ զԿոստաանդին եւ զծնաւղսն իւրեանց։ Յիշեսջիք աղաւթիւք եւ զպատուելի քահանան Թորոս, որոյ այժմ խնամ արկ զստացաւղ գրոյս, ընդ նմին եւ զանպիտան գրիչս եւ ծնաւղսն իմ, և որ ընդունողն է մաղթանաց՝ Տէր Յիսուս Քրիստոս, յիշելոցս և յիշողաց ողորմեսցի, և ինքն եղիցի աւրհնեալ ընդ Հաւր և ընդ Հոգւոյն սրբոյ, յաւիտեանս յաւիտենից, ամէն։

369

ՍՄԲԱՏ ԳՈՒՆԴՍՏԱՊԼԻ ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 7644

Գրիչ

ա

380բ Փառք եռակի և համագոյ երից և մի Տեառն Աստուծոյ, Հաւր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյ, յիմանալեաց վեհից վերնոյ, և ի սգալեաց արարածոյ, այժմ և յանզրաւ յաւիտենին, ամէն*։

բ

298բ ԶՍմբատ Գունդստապլ զստացաւղ սուրբ տառիս յիշեսջիք ի Քրիստոս**։

գ

Ստացող՝ Սմբատ Գունդստապլ
Վայր՝ Կիլիկիա

124ա Զմեղաւոր հողըս Սըմբատ՝ որ ստացա զաստուածախաւս Աւետ[ար]անըս և ու[ո]գէցի ըզսա քէրթութեան արհեստիւն տասն ուոգոնութեամբն, յիշեսջիք բարի յիշմամբ ի Քրիստոս, ո՛վ որդիք մակացութեան և ծնունդ սրբոյն Սիոնի։ Եւ թէ ի կարդալն սորա հետ կարմիր աշաննոյն էրթայք և տանիք զեղանակ կարդալոյն, լաւ առնեք։ Բայց դըժվարագոյն է, վասն զի մոռացել են ազգս ի վաղուց հետէ և ատարացեալք ի հմ[ու]ութենէ ս[ո]րին***։

դ

Ոռոգողիս Տէր ողորմեա՛,
Գաւնդաւ[ս]տա[պ]լին այս Սմբատա,
Որ յոռոգելս հալծէցա,
Քերականաւ ուղ[ղ]ել ըզսա,

* Ձնայած սյունակի համարյա ամբողջ ազատ մասին, հիշատակարանը այստեղ վերջանում է։
ԺԳ դարից կա այսպիսի հնգատող.

Աստուածար[ան Ա]վետարան,
Մեր Քրիստոսին տվել [ս]ահման,
Նա և յայտնեաց բան ի սման,
Զինքն Աստուծոյ Որդ[ի] և բան
՚Ի Աստուծոյ առաջ քան զաւիտեան։

Սրանից հետո, հավանաբար ԺԶ դարի գրությամբ գրված է Երաշխավորի վանքին նվիրելու մասին հիշատակարան։

** Գրված է կարմիր թանաքով՝ ընդ որում անունը երկաթագրով։

*** Վերջում՝ ստորագրություն՝ նույն թանաքով։ Գլխավոր հիշատակարանը չի պահպանվել։ Ձեռագիրը նշանավոր է իր մանրանկարչությամբ՝ խորաններով, ավետարանիչներով, ավետարանառաջներով և լուսանցազարդերով։

Որ արվէստին հմուտ է նա,
Նա ճանաչել այն կարէնաւ

370

ԴՐԻԴՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԻ ՃԱՌՔ

Ն. Ջուղա 393, Տէր-Ավետիսյան, ծուցակ, էջ 593

Գրիչ՝ Վարդան

ա

4բ *Ի թուին Հայոց ՋԻԴ (1275) կատարեցաւ աստուածաբան մատեանս սրբոյն Գրիգորի Աստուածաբանի, ձեռամբ Վարդանայ անպիտան քահանայի և յետին գրչի։*

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ, մեզաց թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ առաջին գրողի սորա եւ վերջին, եւ ծնողաց նոցա։ Ցիշեցէք և զարդիւնական րարունին Վաճրամ, որ զառաջոյ գրեալսըն ի սմա շնորհեաց մեզ եւ մեք կատարեցաք։

բ

Գրիչ՝ Ղուկաս

72բ *Քրիստոս, քո սուրբ հայրապետացն բարեխաւսութեամբ ողորմեայ Յոհաննէս վարդապետի՝ ստացողի սորա, եւ իւր ծնողացն, եւ Ղուկասու անարժան և փցուն գրչի, եւ այլոցն ամենեցուն, որք երախտաւորք են, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։*

գ

Ղուկաս փցուն գրիչն աղաչէ զընթերցողս թողութիւն խնդրել յանցանաց ի Քրիստոսէ։*

371

ԱԻԵՏԱՐԱՆ

Սյուրմեյան, ծուցակ Հալէպի Ա, էջ 77—78

Գրիչ՝ Ընճնաիոս

ա

Փառք ամենասուրբ Երրորդութեանն, Հաւր և Որդո և Հոգւոյն Սրբո, այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից, ամէն, ամէն։

Գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Ընճնաիոսի ծառայ Աստուծոյ, ի թվիս ՋԻԴ (1275)։

բ

Լուսայքեր իրիցու Աւետարանն է, յիշեցէք ի Տէր, և Տէր յիշէ զձեզ յիւր երկնից արքայութեանն, ամէն։ Ո՛վ քահանայք, [յ]որժամ զայս յի-

* Ձեռագիրն ավելի հին է և գրված է Անտիոքում,

շատակարան կարդաք, Աստուած ողորմի ասացէք Մարեամին՝ իր կողակցին։

գ

Աւետարան Լուսաբեր էրիցուն է։ Աստուած ողորմի աւղորմածաց։

դ

Մաղկոզ՝ Տիրացու

Մաղկազարդ՝ Տիրացուէ*։

ե

Տէր Աստուած ողորմեայ Տիրացու էրիցուն և Տիրուհէ, ամէն։

372

ԼՈՒՍՄՈՒՆՔ ՀՆԳԱՄԱՏԵՆԻ ՓԻԼՈՆԻ ԵՐԲԱՅԵՑԻՈՑ

Երևան 3932

ա

Գրիչ՝ Գրիգոր

Վայր՝ Ղազարու վանք

127բ Փառք ողորմածին Հաւր և սիրալուր Որդոյն երևելու և բխողական Հոգոյ;

Փառք եռանձնեա երեքերևեան աստուածութեանն և միաւոր երորդութեանն և յիշխանութեանն, ամէն, որ արժանի արար զտկարս հասանել ի գիծ վերջին։

Արդ, յամենից վեր երանելն հայրն հասարակաց՝ Ներսէս վարդապետն խնդրել ի նուաստ աշակ[երտէ]՝ Գրիգորէ սուտանուն վարդապետէ զգիծս Մննդոց Փ[իլոնի], ի մէջ ձմերանս, որ և ամենայն ազգայնաւքն
128ա յիշել լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, ամէն։ Եւ զմեր վարդապետնն Դաւիթ ընդ նմա արժանի արասցէ Քրիստոս յիւր արքայութեանն, ամէն, և մեզ մասնակցութիւն։

Արդ, ով կարդայք կամ ընթեռնոյք, կամ ընդաւրինակէք, աղաչեմ երեսս անկեալ յիշեացիք զնուաստս Գրիգոր, զհայրն իմ զԲարսեղ քահանա, և զմայրն, և զայլ ազգահինսն, և դուք յիշողք յիշեալ լիցիք ի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և նմա փառք յաւիտեան, ամէն։

բ

329բ Յորժամ գծագրեցաւ մատեանս այս թուականն Հայոց ՁԻԴ (1275) էր, և թագաւոր Լեռն, և կաթողիկոս տէր Յակոբ, և բնակութիւն տեղի Ղազարու վանք, և տեղոյս առաջնորդ տեր Հայրապետ, և վարդապետ և ուսուցիչ Ներսէս՝ ստացաւղ գրոցս, և անուն գծողիս Բարսեղ**, և դուք լիչիք յիշել ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս, ամէն։

---

* Դրված է խազանիշ կարմիր լուսանցազարդի մեջ։

** Բարսեղը գրել է սկսած 234 թերթից։

373

ԳՈՐԾՔ ՓԻԼՈՆԻ ԵԲՐԱՅԵՑԻՈՑ

Երևան 3935

Գրիչ՝ Բարսեղ

ա

120բ Յայսմ վայրի յիշեցէք զսաացող գրոցս զվարդապետն Ներսէս և զգծողս զԲարսեղ և զԹումայն, որ զԹուխտս կոկեաց։

բ

181բ ԶՆերսէս վարդապետն ստացող կտակիս և զԲարսեղ գծողս յիշեսջիք ի Տէր Յիսուս, ո՛վ սրբութեամբ սնեալ մանկուք Սիոնի և ցանկացողք բանից մտաց կտակիս։

գ

277ա Այն որ լսէ և ուգտի, յիշելոյ արժանի արարէք, ընդ նմին և զանպիտան գծողս զԲարսեղ։

դ

15բ Ո՛, Փիլոն, չես հասել ստուգութեան բանիդ։

374

ԱԻԵՏԱՐԱՆ

Երուսաղէմ 2591

Գրիչ՝ Թորոս

ա

Վայր Դռազարկ

338ա ...Բայց գրեցաւ լուսազարդեալ Աւետարանս ի լուսալրական ժամանակի սկզբանց արարչութեանն մինչև առ մեզ վեցհազար եւթն հարիւր քսան և չորս, իսկ ի կենարարի գալստենէն Ռ3Ա, իսկ ի խոսրովային Պարսից սկսեալ մերս թիւ ՋԻԴ (1275)։

Եւ գրեցաւ սա յանապատի Դռազարկ կոչեցեալ, ձեռամբ յոգնամեղ անիմաստ գրչի Թորոսի, ըղձմամբ սրտի իմոյ գրեցի զսա յաղագս փափագանաց ծարաւի ամենայն արդարութեան և յոյժ ի մթութենէ մեղաց խավարեալ հոգւոյ իմոյ, ի հայրապետութեան տեառն Յակովբայ կաթողիկոսի, և ի թագաւորութեիանն Լևոնի, յիշատակ բարի և մեզ բարեխաւս առ Քրիստոս հանգուցեալ սուրբ առաջնորդի սուրբ անապատիս տեառն Բարսեղի արհիեպիսկոպոսի, որ յայսմ ամի [հանգեաւ] ի Քրիստոս։

Արդ, աղաչեմ զամենեսեան որք հանդիպիք այսմ սրբոյ Աւետարանիս, կամ աւրինակեք, կամ ուգտիք լուսաւորելով ինչ ի սմանէ, յիշեսջիք զմեղապարտ և զախմար գրիչ սորա զԹորոս, և հանգուցեալ ծերունի հայրն իմ զպարոն Կոստընդին, և զնախնի ծնաւղսն, որ հանգուցեալ են ի Քրիստոս ի սուրբ և յարժանատր յաղաւթս ձեր...

Բ

Կազմող՝ Առաքել Հնազանդենց

Ո՛Հ զմեղաւք դատապարտեալ կազմողս զԱռաքել Հնազանդենց, և զծնաւղսն իմ, և զհարազատսն իմ, և զծնունդս նոցա, և զուսցիչն իմ զՍարգիս քահանայ՝ զհանգուցեալն ի Քրիստոս, աղաչեմ յիշել ի Տէր։ Ի թվիս ՉԻԸ (1276) կազմեցաւ։

375

ԱԻԵՏԱՐԱՆ

Սանչյան, Ցուցակ Ամերիկայի, էջ 234 (1297 թ.)

15բ *Իմ հոգոյ որդի /// ժառանգ է Տէառն կարողութեամբ եւ տեսայ զաստուածայշռունչ կենսատու Կարմիր սուրբ Աւետարանս, յաւթեցաք ընդ հովան զաւրութեան շնորհի սորա, եւ զովացաք աստուածայնի ամենայլի բարեաւք սեղանոյս, տեսաք զյիշատակարան սորա, հաստատուն պայազատ հայրապետաւք, կրկնակի եւ եռակի կատարեալ արամբք վկայեալ զվաղուց ստոյգայբանութիւնն ի սուրբ Աւետարանս գրել էին։ Եւ*
16ա *մեք ստոյգ բանիցս, որ ի թագաւորաց||հաստատեալ կայր՝ հաւատով ընկալաք /// հայրենական /// ով զՍուրբ Աւետարանս /// թվին ՉԻԴ՝* (1275) /// ի ժ (10) գրեցաւ։*

* Տպագրված է «ՀԻԴ»։

376

ԱԻԵՏԱՐԱՆ

Վէնետիկ 95, Մարգիսյան, Ցուցակ Ա, էջ 426

Գրիչ՝ Ռամաճռա
Վայր՝ Ընծայեաց վանք

Փառք ձեզ ըստ հաճութեան ձերում, որպէս վայելէ ի տեղոջ[է] ձերմէ աննախանձելի և անուազելի և անանջրպետելք ի միմեանց Աստուած կատարեալք և մի բնութիւն համարնաբար, յաւիտեան յաւիտենից յաւիտեանս, ամէն։

Արդ, մելինագիծ շաղաշար յարմարեցաւ Աւետարանս, խոշորատաղմամբ ձեռակերտեալ փանաք և ունայն վարդապետի Ռամաճռոսի, ստոյգ մեղաւորի ծերացելոյ, և ի լուսոյ դադարելոյ, և անձամբ դանդաչելոյ, յաղագս աղքատութեան մերում, զի մուրանալ ամաչեմ։ Կամիմ Աստուծով ձեռամբ կերակրիլ ես, և որ ընդ իս իցեն։ Թէպէտ և զամենայն զպատուիրանս Աստուծոյ թողի, կամիմ զի այսու զմարդիկ խալբալեցից՝ զի զբազմութիւն մեղացն ծածկեցից, մանաւանդ զարկղն ագահութեան։

Այլ աւարտեալ սա ի թուիս Հայոց ՋԻԸ (1276), յամսեանն մեհեկի Ը (8), ի տիեզերակալութեանն Դուպիլա ղանին, և յոստանիութեան Ապաղա ղանին՝ որդոյ եղբա[ւ]ր նորին, եւ ի թագաւորութեանն Հայոց Լեւոնի որդի Զապէլ թագուհոյ, դստեր Լեռն թագաւորի, եւ ի կաթողիկոսութեան տեառն Ստեփաննոսի, եւ մեր ընդ հովանեաւ լեալ՝ Ընծայեաց Աստուածածնիս՝ ի գաւառիս Վասպուրականիս։ Արդ, որք ընթեռնոյք կամ աւրինակէք՝ խոշորութեանս և սղալանացս մի մեղադրէք, այլ յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր զվերոյգրեալսդ, մանաւանդ զգեաղստն զՊօվրոս Մելիքն, և զստընտու որդի նորա զԹագվորն, նաև զերկու եղբայրն նորա՝ զՅեհճաճա և զԵլիա, զի պարագայք ամաւք պահեսցէ Աստուած ի յամա(յ)րամս։ Նաև որ զմեզ և զծնողսն մեր յիշէ ի բարիսն, ինքն և իւրքն յիշեալ եղիցին ի բարիսն ի Քրիստոս՝ յաւուր ահեղատենին, ամէն։

Դարձեալ պատմեցից ձեզ աղէտս աղեխարշեալ, քանզի ի թուիս [Ջ]ԻԴ (1275) եկն Մսրա սուլտանն ի Սիս, և աւերեաց բաղում գեաղս, և սրոյ ճարակ ետ զյոլովս։ Եւ թագաւորն Լեռն ոչ վստահացեալ զանձն ղաւրաց իւրոց, գիտելով զխարդախութիւն նոցա՝ ոչ էլ ի պատերազմն ընդդէմ անաւրինացն. և նոքա վստահացեալ յանզգամութիւնսն կամե-

ցան յափշտակել զամուրն Սիսոյ՝ *զբերդն, և եւ երէց մի ընդդէմ նոցա ի ճակատու, և զմի ի սուլտանեացն սատակեաց, և ինքն անդէն նահատակեցաւ, և այլքն պերճանդամ գնացին յաշխարհն իւրեանց։ Եւ ի նոյն ամի դարձեալ դարձան ի* Սիս, *և Տէր ոչ յաջողեաց նոցա, այլ փակեաց զնոսա ընդ ձեռամբ* Լեոն *Թագաւորի. և ի սուր մաշեաց զնոսա, և մնացեալքն փախստեա անկան ի խորշս իւրեանց։ Իսկ սպարապետն Հայոց մեծաւ քաջութեամբ կացեալ ի մէջ նոցա, և յորժամ ելեալ ի պատերազմէն, երիվարն հարեալ գնա ընդ ծառոյ միոջ՝ ոչ կարաց տանել ցաւոյն, քանզի ծերացեալ էր, գնաց ի* Սիս *և սակաւ ինչ ապրեալ՝ բարի խոստովանութեամբ ննջեաց ընդ հարսն իւր ի Քրիստոս Յիսուս. և՛ մի յիշեսցի մեղք նորա առաջի Աստուծոյ, այլ ընդ Աբրահամու և ընդ Սահակայ կարգեսցի յարքայութեանն Աստուծոյ։ Եւ ի սոյն ամի երիցս անգամ Հոռոմոց տաճիկն եկն երկիրն Հայոց, և Աստուած յաջողեաց Թագաւորին* Լեոնի *և զնոսա սրով մաշեաց։*

Դարձեալ տրտմալի աղէտս, որ ի յԱստուծոյ եղև վասն մեղաց իմոց, քանզի ի սոյն ամի շարժեաց Աստուած մասն ինչ ի յերկրէ, և անդընդասոյզ արար զԽլաթ, զԱրճէշ, *և ոչ գիտեմք որչափ մարդոց վախճան եղև։ Եւ բաւանդակ ամ մի շարժի երկիր և զկատ[ար]ածն Աստուած գիտէ, որքան։ Քանզի այր մի էր բաբիոէր և երկիւղած յ*Արճէշ *քաղաք, անուն* Խաչիկ, *ինքն և որդին իւր* Կոստանդին *տարաժամ մնացին մահուամբ ընդ շաժեալ վիմացն, որով և յանցանք նոցա ջնջեսցին և նահատակութիւն նոցա ընդ Սուրբ Ստեփանոսի խառնեսցի; Այլ և կին մի բարիհոգի, անուն* Տաւնասթի՝ *ընդ Մարթայի և ընդ Մարիամու մասն բարի առցէ ի Քրիստոսէ, և* Սաեփանոս *աշակերտ իմ հանգիտապատուեալ Յովսեփա և Նիկոդիմոսի՝ աշակերտացն Քրիստոսի. և որով յիշմամբ յիշէք՝ է դուք յիշեալ եղերուք առաջի Աստուծոյ։ Նաև* զԱբրահամ *երեց և* զՏիրացու *զեղբայրաւրէնս մեր, Քրիստոսիւ յիշեսցուք առ աւրին և յապա յաւիտեան ի Քրիստոս Յիսուս յԱստուած մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։*

377

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ

Մուրատյան, Ցուցակ Մշո Առաքելոց վանքի, էջ 11

Գրիչ՝ Բարսեղ
Վայր՝ Փոս անապատ

ա

Փառք քեզ միայնոյ սկզբանդ եւ անսկզբանդ... ի ՋԻԴ (1275) թւաբերութեան Հայկազնեան տոմարիս, աւարտեցաւ աստուածախաւս մատեանս, որ ունի աւարտեալ յինքեան զկիրս ամենայն մեղանաց խոստովանողականաց զղջացելոց սրտի մտաւք, զի թէ ոք որպէս արժանն է պաղատեսցի սովաւ առ ողորմած անոխակալ Տէրն, հաւատամ ստուգապէս թեթևանալոյ ի ծանրաբեռն կրիցն մեղանացն...։

Յիշեսջիք զնախասացեալ տառապեալս Բարսեղս *ի սրբամաքուր աղաւթս ձեր, յորժամ ոռոգանէք քաղցրաբուղխ արտասուանք զանդ մտաց*

ձերոց... յահեղ աւուրն սոսկալի, արդար դատաւորին ուր բանք սպառին եւ գործք թագաւորեն։

Բայց եղեւ զրաւ սորա ի գաւառիս Ցախուտ կոչեցեալ, յաշխարհիս Կիլիկեցւոց, յանապատի որ կոչի Փոս, ընդ հովանեաւ սուրբ տաճարիս Տիրամաւրն, ի հայրապետութեան տեառն Յակոբա, եւ ի թագաւորութեան Լեւոնի, զորս տացէ զսոսա մեզ Տէրն ընդ երկայն ընդ աւուրս։

Բ

Փառք ամենասուրբ երրորդութեանն Հաւր եւ Որդւոյ եւ ամենայն Սուրբ Հոգւոյն, ամէն։ Ի թուիս հայոց ՁԻԸ (1276) յամսեանն յունուարի ԻՀ (28), աւարտեցաւ գիրս ոտանաւորս ասացեալ սրբազան կաթողիկոսացն տեառն Ներսէսի եւ եղբաւրորդւոյ իւրոյ տեառն Գրիգորիսի, ի գաւառիս Ցախուտ կոչեցեալ, յաշխարհիս Կիլիկեցւոց, յանապատիս որ կոչի Փոս, ընդ հովանեաւ Սրբոյ Աստուածածնիս եւ Սրբոյն Գրիգորի եւ Յովհաննու Մկրտչի, եւ սրբոց առաքելոց Պետրոսի եւ Պաւղոսի, եւ այլ բազմահաւաք սուրբ նշանացս եւ աստուածընկալ սուրբ նշխարացս, ձեռամբ անարժան եւ բազմամեղ վանականիս եւ անպիտան քահանայ Բարսեղի գրեցաւ խոշորագիծ եւ ախմար, տառապեալ եւ անարհեստ գրչիս, ի վայելումն անձին իմոյ եւ յիշատակ եղկելի հոգւոյս, եւ ծնողաց, եւ սնուցողաց, եւ ուսուցողաց իմոց։

Արդ, աղաչեմ եւ յերեսս անկեալ պաղատիմ առ ձեզ, ո՛վ մանկունք Նոր Սիոնի, որ հանդիպիք այսմ դրոյս եւ ընթեռնոյք եւ զուարճանայք ի սմա, սրտի մտաւք թողութիւն մեղաց հայցեցէք եղկելի անձինս Բարսեղի, զի յաղագս այդր պատճառի եմ գրել զսա, եւ ոչ վասն մարմնաւոր շահի։ Եւ այժմ դարձեալ մաղթեմ, մի՛ անտես առնէք տալ զփշրանսդ ի սեղանոյ մանկանց առաքաստին շան սովեցելոյս, նաեւ պապակելոյս ի տապ տապակի գեհենեայ, ծագիւ մատին զովացուցէք զլեզու իմ, զի մի լուիցեմ ի դատաւորէն եթէ Այդր պապակիս եւ զայլն։

Եւ որ սրտի մտաւք եւ յաւժար կամաւք եւ արտասահոս աչաւք մեզ թողութիւն հայցէ ի Տեառնէ, թողին եւ իւր յանցանքն, եւ որ երախտաւորաց մերոց եւ հոգեւոր եղբարց մերոց, նաեւ մարմնաւորաց արժանի արասցէ յիշման ի մեղաց թողութիւն, թողցէ Քրիստոս Աստուած եւ զիւրոցն ամենեցուն զմեղսն, եւ չնչէ զյանցանս նոցա եւ զսյնոցիկ, որ զամէնն. ասեն։ Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս, ամէն։

378

ՎԱՐՔ ՍՐԲՈՑ

Կիւլեսերյան, Յուցակ Անկիւրիո, էջ 760—764

Գրիչ՝ Յակովբ
Վայր՝ Սիս

ա

444 Փառք Հաւր միականի, Որդւոյ միածնի, և աղատիչ Սուրբ Հոգւոյն՝ վաել է փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեան։ [Գրե-

ցաւ՝ սուրբ պատուիրանքս եւ պատմութիւններս ձեռամբ Յակովբայ, ի մայրաքաղաքս Սիս, ընդ հովանեաւ սուրբ առաքելոցն Պետրոսի և Պողոսի՝ բացող արքաւութեանն։

Հրամանաւ և [ծախի՞ւք] աստուածասէր կրաւնաւորին Սարգիս-Թորոսի, զոր երևոյթ գրել պատուական գանձս փափագ սրտիւ, յիշատակ իւր և ի[ւ]ր հանգուցեալ ննջեցելոցն, յիշեսջիք ի Քրիստոս։ Գրեցաւ ի քվին Հայոց ՋԻԵ (1276), ի թագաւորութեան Հայոց Լեւոնի, ի հայրապետութենանն Հայոց Յակովբայ։

Արդ, աղաչեմ զամենիսեան, որք ընթեռնոյք և լուսաւորիք, և որք լսէք և աւգտիք ի սմանէ, մեղաց թողութիւն հայցեցէք ի Տեառնէ Սարգիս-Թորոսի. և ծնողաց իւրոց, և ինձ՝ նուաստ քահանայ Յակոբ գրչիս։ Ընդ նմին և ինձ՝ Կոստանց սարկաւագի, որ աշխատեցաւ ի տէրունական գաներս, և ծնողին՝ Գրիգոր նուաստ քահանայի, և ինքն աւրհնեալ։

Բ

396 Ո՞վ սրբասնեալ քահանայք և կարգաւորք, մեղաց թողութիւն հայեցէք ի Քրիստոսէ։

Քրիստոս Աստուած, բարեխաւսութեամբ Սուրբ Աստուածածնին՝ Տիրամարն և Սրբոյն Ստեփանոսի Նախավկային, և սրբոց առաքելոցն և հայրապետացն և մարգարէիցն և մարտիրոսացն, ողորմեա Սարգիս-Թորոսի միակ[ե]ղ]ին հոգւոյն, որ ստացաւ զսա յիշատակ իւր և ի[ւ]ր հանգուցեալ ննջեցելոցն՝ հաւր և մաւր իւր, զի յոյժ փափաքմամբ սրտիւ ստացաւ զսայ, և ինձ մեղապարտ գրչի Յակովբ նուաստ քահանայ[ի], և յիշողացս և յիշելեացս ողորմեսցի Քրիստոս Աստուած յիւրում միւսանգամ գալըստեանդ, և ինքն աւրհնեալ է յաւիտեանս յաւիտենից, ամէն, եղիցի, եղիցի։

Գ

Գրիչ՝ Կոստանց

228 Քրիստոս Աստուած, բարեխօսութեամբ ամենաւրհնեալ սուրբ մաւրդ և միշտ կուսի, և ամենայն սրոց քոց ողորմեայ Սարգիս-Թորոս միակեցին հոգւոյն, որ ստացաւ զսա իւր յիշատակ, և ի[ւ]ր ննջեցելոցն, և կարդացողացդ և լսողացդ, ամէն, ամէն։

Ընդ նմին և զմեղապարտ ոգի գրիչ Կոստանց սարկաւագս, և զհանգուցեալ զհայրն իմ նուա[ստ] քահանայ Գրիգոր, եւ որ յիշէ, յիշեալ եղիցի ի Քրիստոս Աստուած, և ինքն աւրհնեալ եղիցի յաւիտեան, ամէն։

Դ

82 Քրիստոս Աստուած, բարէխօսութեամբ սուրբ նահատակիս, ընդեա զմեղս Սարգիս միակեցի, և զանպիտան քահանայի Կոստանց՝ գրողիս գրոցս, և կարդացողացդ, և լսողացդ, և Քրիստոսի փառք յաւիտեանս։

Ե

198 Քրիստոս Աստուած, և այս սուրբ բանքս որ գրած է յայս տետրերս,

իրենց բարեխօսութեամբ ողորմեա Սարգիս որ է Թորոս միայնակեցին հոգոյն և որ կարդացողացդ։

379

ԺՈՂՈՎԱԾՈ

Երևան 1716

Գրիչ՝ Ստեփանոս
Վայր՝ Կիլիկիա

ա

Յիշատակարան գրոցս

Մշտապայծառ, եռաշահեան համաբնութեան և եղական լուսոյն, անսկիզբն և անկատարած գերաբնաբար բարոյն, այն որ ի բնաւից եղելութեանց առ չինքենէ յանմարմին իմանալեաց հոգեղինացն և նիւթական մահկանացու հոգեղինաց միշտ և յարաժամ նոր աւրհնութիւն վեր առաքի, փառք և պատիւ եւ գոհութիւն և երկրպագութիւն այժմ և [յաւիտեանս, ամէն]։

Արդ, ես Ստեփանոս սուտանուն քահանա, ըստ մանկական անհասատատ յածմանն խորհրդոց ըմբռնեցա ի սէր այսմ անպէտ և պիտանի գրոցս, ապա թէ ըստ տեսութեանց իւրոց անաւգուտ թւի, այլ յաստուածայ[ին]ն աւգտակա[ր]։ Այլ աղաչեմ զձեզ սուրբ հարք եւ եղբարք, որք աւգտիք ինչ ի սմանէ կարդալով կամ յաւրինակ[ելով], մի ի դերև համարել զբազում աշխատութիւնս իմ ի սմայ, այլ ըստ ընդաբոյս բարի բարուց ձերոց՝ յիշատակի առնել արժանի զբիւր պարտուց պարտականս տէրունի։

բ

277բ ՋՍտեփանոս որդի յա[ստ]նվորին,
Որ կորուսի զհայրենին,
Ոչ ոք ի նոյն փառս տային,
Հայցեմ ժտել թաղծեալս անծին,
/// մաքրել զմեղաց սպին,
Դառնալ եդեմ մեզ վերստին,
/// ընդ ձեզ երեակ անձին
Ջփառս յանվախճան յաւիտենին։
Թվին ՋԻԲ (1276)։

գ

276ա Ցայսմ աւուր զփախուստ առեալ դողա երկիրս Կիլիկեցոց յանաւրէն բռնակալէն Իսմաէլոց։ Թվին ի ՋԻԲ (1276)։

դ

Ընթերցող

158բ Բնական կարգն արտաքին գրենացս այս է. նախ՝ Քերականն, ապա Սահմանքը և Ամենայն չարտանջելին, ապա Պորփիւրն և զկնի Ստորոգու-

Թիւնքն, և ապա Պերիարմէնիասն, և ապա Աշխարհացն, և զկնի Առաքինութեանցն։ Իսկ ատտ, որ զհետ Պորփիւրիս Աշխարհացս է և Առաքինութեանցս, կամ ի տգիտութենէ է կամ յաւրինակէն, և կամ երկուցն։

380

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԲԱՆԻՑ ՆԵՐՍԵՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Երևան 579

Գրիչ՝ Յովճաննէս

ա

Շնորհիւ տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի զտառս
72բ *աստուածարեալ և սուրբ կաթողիոսին Հայոց տեառն Ներս[իսի]‖յազագս ընդդէմ չարափառ և մարդախողող հերձուածողաց յունաց և ասորւոց, որք զարիոսկանն և զնեստորականն ասեն ի մի բնութիւնն Քրիստոսի, և զայլոց ևս անաւրինականացն, և զհաւատս հայհոյեն առասպել բանիւք, զոր ի Սրբոյ Լուսաւորչէն և ի սրբոց հարցն հաստատեալ է, և զուղիղ միտս թիւրեն զոմանց աղքատմտաց։ Իսկ որ ոք ընթերցցի զսա հանապազ և փոյթ յանձին ունիցի, բազում աւգտութիւնս գտցէ ի սմա և շահս, ըստ այնմ որ հանիցէ յովկիանոսէ քարինս պատուականս և մարգարիտս գեղեցիկս, եւ ով ոք պանձասցի պատասխանի առնել գրեալեացս կամ թիւրել, վասն որոյ և ոչ մի։*

Գրեցաւ ի թուիս Հայոց ՋԻԵ (1276), ձեռամբ Յովանիսի անպիտանի և փցուն գրչի։ Արդ, աղաչեմ զձեզ մանկունք եկեղեցւոյ, յիշեսջիք զցանգացող գրոյս զՆոռոգէս, և ծնաւղսն իւր ի Քրիստոս, և զՅովանէս, և Աստուած որ կարողն է յամենայն յողորմութեանց և գրութեանց, ձեզ և մեզ առհասարակ ողորմեսցի, և նմա փառք յաւիտեանս։

Ով եղբայրք, աղաւնացս մի մեղադրեք։

բ

Զբարեհամբաւեալ ճգնաւոր եղբայր մեր զՆոռոգէս կրաւնաւոր քահանայ՝ ըզստացող գրոցս, և զբազմամեղ գրչող նամակիս՝ Յովանննէս սուտանուն քահանայ աղաչեմք յիշել ի Տէր։

գ

265 *Աստանաւոր յա[ն]կ ելեալ աւարտեցաւ Ողբս Հոգևոր, զոր երգեալ է սուրբ հոգին՝ ի ձեռն տեառն Ներսիսի, և գրեցաւ սայ ձեռամբ մեղապարտի Յովաննիսի անարժանի, ի վայելումն Նոռոգէսի քահանայի։ Արդ, երեսս անկեալ արտասուոք ձայնիւ աղաչեմ զամենեսեան, թողութիւն խնդրել բազում և չարաչար մեղաց իմոց, և ծնաւղաց իմոց, և Աստուած, որ առատն է ողորմութեան, ձեզ և մեզ առհասարակ ողորմեսցի։*

Սայ կրաւնաւորի միշտ վայելէ,
Որ կարդայ և զմա(յ)լի,
Յառատաբուխ հոգւոյն ձրի,

Երնեկ որ անտ ինքն յիշուի,
Կամ լուր յիւր միտն անկանի,
Ամառ կարդայ հայրիկ բարի,
Զգծողս յիշեա անլռելի,
Եւ փառք մատոյ իմ Յիսուսի, ամէն։

Գ

289բ Տէր Յիսուս, յորժամ գաս փառաւք Հաւր ի միւս անգամ գալստեանդ, ողորմեայ ստացաւղի սորա Նոռոգէս քահանայի և ծնաւղաց իւրոց, ընդ նմին և ինձ գծողիս Յովճաննէսի։ Սղալանաց գրոցս մի մեղադրէք։

381

ԱԻԵՏԱՐԱՆ

7534 (1275 թ.)

Կազմող՝ Նոռոգէս

277ա Չկտզմաւղ սորա զՆոռոգէս վանական քահանայ և զեղբայրն իմ զՆերսէս քահանա՝ զփոխեցեալն առ Տէր, և ղծնաւղսն մեր յիշեցէք ի Տէր։ Ընդ նմին և զստացաւղ սորայ զտէր Դաւիթ սրբազան եպիսկոպոս և ղծնաւղսն նորա յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր։

Ի թուին ՉԻԸ (1276) կազմեցաւ սայ։

382

ՔԱՂՈՒԱԾՔ ԺԱՄԱԳՐՈՑ

Ն. Ջուղա 264, Տէր-Ավետիսյան, Յուցակ, էջ 471

Գրիչ՝ Վասիլ

Ա

183բ Փառք ամենասուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Արդ, գրեցաւ եղանակաւետս տառիկ, ձեռամբ սուտանոմն գրչատրի Վասլի, յամի ՉԻԸ (1276) ի յանապատս...

Բ

Գրիչ՝ Աբիսաակէս

184բ Ո՛վ սուրբ եղբարք, յորժամ քաղցր եղանակէք, Աբիսաակէս սուտանոմն յիշեցէք, զի տարիս խոշոր է եւ ժամանակս դառն, եւ վաղէց մանր գիր չեաք գրել, թողութիւն արարէք խոշորութեան։

383

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ

Սմբատյան, Երնչակ, էջ 140

Գրեալ յամի Տեառն ՌՄՀԶ, (1276), թվին Հայոց ՉԻԷ (1278), ի վանս Կաւճուայ։

384

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ

Երևան 208

Գրիչ՝ Սիմէոն
Վայր՝ Ախթամար

ա

Փառք եռակի անճառելոյ, անքակ և անբաժին, եռահիւսակ դասնութեանն, Հաւր և Որդւոյն և Հոգւոյն Սրբոյ, այժմ և հանապազ յաւիտենից յաւիտեանս, ամէն։

153ա Յամի ՉԻԶ (1277) թուականութեանս Հայկազնէն սեռի և յամս աստուածապատիւ տեառն մերոյ Տղայ Սահփաճոսի Հայոց վերադիտողի գրեցաւ ծաղկազարդ և տիեզերալոյս Գործք սրբոց առաքելոցն, ձեռամբ յոգնամեղ ոգւոյ Սիմէոնի, ի խնդրոյ Խաչատուր քահանայի, ի կղզիս Ախթամար, ընդ հովանեաւ Սուրբ Խաչիս։ Վասն որոյ աղաչեմ զամե-
153բ նեսեան, որք հանդիպողք||սմա, յիշեսջիք աղաւթիւք ի Տէր զստացող սորա և զծնողսն իւր, և զմեղապարտ գրիչ և զծնողսն իմ, և Քրիստոս Աստուած յիշողացդ ողորմեսցի և նմա փառք յաւիտեանս, ամէն։

բ

221բ Փառք անսկիզբն և անժամանակ, աներբ և անուտեք, անորակ և անքանակ, եռակի և եզականի տէրութեանն և միոյ աստուածութեանն երկրպագութիւն և գովաստանութիւն յիմանալեացս և զգալեացս և համանգամայն ի բոլորից սեռական կենդանեացս, սկզբանց և առյապա, անդր քան զյաւիտեանս և յաւիտենից յաւիտեան, ամէն։

Աստանաւր յանգ ելեալ աւարտեցաւ լուսեղէն և շնորհակիր տառս, որ է սա հաւաստապէս լրումն և պատճառ աստուածային բանիցն սքան-
222ա չելի նշանա||ցն և աստուածահրաման վարդապետութեանն, զոր ճշմարիտ և Աստուածն բան կատարեաց ի մեզ զամենայնն ստուգապէս, զի ծանիցեն ճշմարիտ զՔրիստոս որդի Աստուծոյ, հաւասար և փառակից Հաւր և Սուրբ Հոգւոյն։

Որոյ փափագեալ սրբասէր և շնորհազարդ և երիցս երանեալ քահանայ Աստուծոյ Խաչատուր, գրել ետ և ստացաւ սա յընտիր աւրինակէ, ի վայելումն կենաց իւրոց և զաւակաց յաստիս, և ետ եկից իւրոյ յաստեացս, յիշատակ բարի հոգւոյ իւրոյ, որոյ Տէր Յիսուս վայելեալ տացէ ընդ երկայն աւուրս։

Արդ, աղաչեմ զամենեսեան, ո՛վ դասք լուսերամից, որք հանդիպիք տեսութեամբ կամ զազաբար դնելով, և տարազաւ իւիք ինչ ուգտութիւն 223ա ուգտիք ի սմանէ, յիշել սրտի մտ||աւք ի բաղդատական և երկնաբացիկ աղաւթս ձեր զխաչատուր քահանայ և զծնողսն իւր։ Նաև զապիկար և զախմար գրիչ զՍիմէոն և ծնողսն իմ աղաչեմ յիշել ի Տէր, և Քրիստոս Աստուած յիշողացդ և յիշելոցդ ողորմեսցի կրկին կենաւք և երկոտ աշխարհաւք ի փառս աւրհնելոյն յաւիտեանս, ամէն։

Ցամի ՉԻՉ (1277) գրեցաւ։

. . . 385

ԱԻԵՏԱՐԱՆ

Տեր-Մովսիսյան, Համահավաք ցուցակ, Աւետարանք, I։ 248—249

Գրիչ՝ Պաւղոս
Վայր՝ Սիմոնկլայի վանք

ա

Փառք ամենասուրբ Երրորդութեանն եւ փառաւորեալ տէրութեանն... Բարւո ամենայն ոք ցուսկայ, ոմանք մասանց եւ այլք բոլորին։ Աստուածայնոյն աստուածասէրքն եւ գերագունին բարեբարուքն, զորոց Տէր բանայ զուշ ներքին մարդոյն գիտել եւ ճանաչել զտիրակործան եւ զապականելի կենցաղոյս վայելս, թէ Ընդգտանելն արագ ունի և զեղծումն. իսկ որոց բաց եւ յստակ են մտաց աչք եւ լուսատեսակ հոգւոյն տեսարան, գանձեն անձանց իւրեանց անճողոպրելի շահս, որ միշտ եւ անզրաւ ունի զկա ընդ Աստուծոյ եւ ոչ ական հատանի ի վնասակար դողոց, որով փարթամացեալ ճոխութեամբ ընդ Աստուծոյ միացեալ գտանին։ Ուստի եւ շառաւեղն աւրհնութեան եւ սեռն բարենշան քրիստոսասէր եւ բարեպաշտ իշխանաց իշխանն պարոն Հեթում, որդի ի Քրիստոս հանգուցեալ պարոն Լեւոնի Աստուծով տէր Սիմոնկլայինն, պետական գահոյիւք պատուեալ ըստ բարետոհմ եւ քաշակորով ազգին իւրոյ, արի եւ յաղթող զօրով ի վերայ հակառակորդաց եւ թշնամեաց խաչին Քրիստոսի։ Ունելով վահան ամրութեան եւ սաղաւարտ փրկութեան զհաւատ, զյոյս եւ զսէրն որ առ Աստուած, որով զաւրաւոր զաւրութեամբ վերափայլի արփիապէս ի մէջ համագումար բարձակեաց տանս Թորգոմայ։ Գոլով հեզ ըստ Դաւթի եւ իմաստուն ըստ Սողովմոնի, որով վերընկալեալ զշնորհս առատաձիրս ի հանուրց շնորհաւէնն, զսէր նորա առ Աստուած եւ զգութս որ առ նորա տար սուրբ եկեղեցիս, այլ եւ ցանկացող բարեաց եւ միշտ փափագող պատուական մարգարտաց, որ ոչ զմարմին շքեղացուցանէ, այլ միշտ յարազուարճ զհոգին փայլեցուցանէ; Յորոյ համբաւ բարեաց դիմեալ սրբասնունդ քահանա Քեռովբէ, ունելով նիւթս պատրաստ առ ի ստանալ սուրբ Աւետարանս, եւ մատուցեալ առաջի նորա, խնդրեաց նկարել Աւետարան եւ աւանդել սուրբ միաբնարանին, որ յանուն սուրբ Աստուածածնին, ղի լիցի եւ նորին մասն յիշատակի եւ ծնաւղաց իւրոց։

Իսկ ամենաբարի պարոնն, ըստ ընտրութեան հոգոյ իւրոյ ընկալաւ մեծաւ բաղձանաւք եւ խոստացաւ լնուլ զփափագ սրտի նորին։

Եւ ապա հրամայեալ իմոյ անարժանիս ամենամեղ հոգւոյս Պաւղոսի շարադրել ոսկէնկար անկուածովք զհրաման տնաւրէնութեան կենարար բանին Աստուծոյ։ Եւ իմ թէպէտ եւ անարժան գոլով այսմ ձեռնարկութեան, քանզի ի վեր էր քան զկար մեր եւ զարժան, սակայն հարկեալ ի հրամանէ նորին, ըստ կարի իմում գրեալ աւարտեցի մեծաւ դողութեամբ սկսմամբ եւ աւարտմամբ ի սուրբ քառասնորգն, որ լիացեալ կատարի քիւ Հայկազեան տոմարիս ՉԻԶ (1277), ի հայրապետութեան տեառն Յակոբայ եւ ի թագաւորութեան Քրիստոսապսակեալ արքային Հայոց Լեւոնի որդոյ ի Քրիստոս հանդուցեալոյն Մակարայ (Հեթմոյ), եւ ի վերադիտողութեան այսմ անապատի սուրբ եւ երանաշնորհ քահանային Յովհաննիսի, ի սուրբ եւ յերկնանման միայնարանս որ յանուն սուրբ Աստուածածնին, որոյ հովանեաւ պարփակիմք։ Ի յիշատակ քրիստոսասէր պարոն Հեթմոյ եւ գեղապաճոյճ լուսանկար եւ ծաղկեաց արժանի գտանել, որով եւ դուք ընկալջիք մասն ողորմութեան ի Քրիստոսի Յիսուսի ի Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Եւս առաւել աղաչեմ կրկին անգամ Յիշեսջիք զբարեպաշտ իշխանն զպարոն Հեթում եւ զհարազատ նորին զսիր Լեւոն, խաղաղական կենաւք անցուսէ ընդ վրդովման կենցաղոյս մինչեւ ի խորին ծերութիւն, եւ յետ աստեացս ելանելոց անանց պարգեւին արժանի արասցէ; եւ ինքն աւրհնեալ եղիցի, ամէն, ամէն*։

Բ

Ջստացող Սուրբ Աւետարանիս զքրիստոսասէր եւ զբարեպաշտ իշխանն զպարոն Հեթում՝ հանդերձ ծնաւղաւք իւրովք եւ ծնընդովք, ընկա՛լ Քրիստոս Աստուած ընդ Մովսէսի եւ ընդ Յեսուայ եւ ընդ ընտրելոցն զհոգիս նոցին անտրտում խնդութեամբ ի յարկսդ յաւիտենականսդ, եւ քեղ փառք յաւիտեանս, ամէն։ Եւ զքրիստոսասէր պարոն զԹորոս յիշեա Քրիստոս Աստուած աստ եւ ի հանդերձեալն։

Գ

Ստացաւղի սուրբ եւ կենսաբեր Աւետարանիս քրիստոսասէր եւ բարեպաշտ իշխանին պարոն Հեթմոյ, տեառն Սիմոնկլայիճ եւ ծնողաց իւրոց, ողորմեա Քրիստոս Աստուած ի քում սոսկալի եւ յահաւոր գալստեանն, ամէն։ Այլ եւ աշխատողին ի սմա Պաւղոսի։

---

* Սրան հաջորդում է հետագա ստացողի ստորև բերվող հիշատակագրութիւնը. «Փառք ամենատուրբ Երրորդութեանն։ Արդ ցանկացող եղեւ սուրբ Աւետարանիս պարոն Աղաւնիս եւ ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց։ Յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զպարոն Աղաւնիս եւ զամենայն արեան մերձաւորան իւրոյ։

386

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 10687

Գրիչ՝ Յուսէփ
Վայր՝ Կեսարիա

233բ *Գրեցաւ սուրբ տէրունեան բանիցն շտեմարանս, ձեռամբ անարժան
և սուտանուն քահանայի* Յուսեփա, *ի վախլումն մանկանց առագաստի։
Որք ընթեռնոյք զսա կամ աւրինակէք, թողութիւն հայցեցէք յԱստուծոյ
մեղաց մերոց, և ծնողաց մերոց, արեամբ նահատակելո հաւր իմո* Նա-
ճապետի, *և եղբաւր իմոյ* Յակոբի՝ *փոխեցելոյն առ Քրիստոս, և երկուց
234ա հայրաղատացն իմոց՝* Գրերի *և* Սեթի, *և մա‖ւր մերո առաքինո, և որ
առատն է յամենայնի առհասարակ <ամէն> ամէնեցուն ողորմեսցի՝
յիշելեացն և յիշողացն, և նմա փառք ընդ Հաւր և Հոգոյն Սրբո, այժմ և
միշտ, և յաւիտեանս յաւիտեանն, ամէն։*

Արդ, գրեցաւ սա ի մայրաքաղաքիս Կեսարիո. *ընդ հովանեաւ Սուրբ
Աստուածածնիս, ի դառն ժամանակի, յորում եկն երկրորդն փարաւոն
խրոխտալով ի քաղաքս* Կեսարիա, *և ահիւ մեծաւ ըմբռնեցան քրիստո-
ն[ե]այք ամենայն, և նկուն դարձեալ գնաց յաշխարհ իւր, և ի ճանա-
պարհին սատակեցաւ ի թուաբերութեանս Հաոց ՉԻԶ (1277)-ն։*

*Աղաչեմ անմեղադիր լինել սխալանացն և խոշորութեանս, զի աւ-
րըստաւրէ փախչեալք վասն հալածանաց անաւրինաց ի ծերպս վիմաց
մտանէաք, յաղաՙս ծովացեալ մեղաց իմոց։ Եւ մեծ նշան երկինս եղեալ,
զի խաւարեցաւ լուսին, որ ոչ էր այնպիսի խաւարեալ և երեք ժամ խաւար
եկաց՝ ամենևին մութն*։*

387

ԱԻԵՏԱՐԱՆ

Ն. Ջուղա Տեր-Ավետիսյան. Ցուցակ, էջ 48

Գրիչ՝ Հիպայի Ճոգևորդի

ա

334բ *Թուականութեանս Հայոց ՉԻԶ (1277) կատարեցաւ սուրբ Աւետա-
րանս ի յունուարի ամսոյ ԻԶ (26), ի թագաւորութեանն Հայոց* Լեւոնի
որդի Հեթում *թագաւորի, որ եւ Աստուած զաւրացուցանէ զթագաւորն մէր*
Լեոն *և զաստուածատուր որդի իւր* Հեթում:

բ

256բ *Զաստուածասէր և զբարեպաշտ և զամէնաւրհնեալն ի կանայս* բդ-
Հիպայն *և զաստուածատուր որդի իւր* Գրիգոր *եւ զեղբայր իւր* Սարգիս,

** Գրիչը «էշ» է գործածում թե՛ «էջ»-ի և թե՛ «եշ»-ի փոխարեն։ Գրչի նահատակության մասին իր հորեղբորորդի Կոստանդնի շարադրած հիշատակարանը, որ անմիջապես հաջորդում է սրան, տե՛ս 1282 թվաշարքում:*

որ ստացաւ զսուրբ Աւետարանս յարդար վաստակոց ի յիշատակ անուան իւրոյ, և ի հանգուցեալ ծառային Աստուծոյ Գրիգորի, որոյ Տէր Աստուած իւր սուրբ ծնաւղին բարեխաւսութեամբ թողցէ զմեղս նորա՝ զկամայն եւ զակամայն։ Ընդ նմին և զՀիպպոլիտոս՝ զԱւետարանի գրողին հոգևոր մայր, որ ստացաւ զսա ի վայելումն Միխայիլի քահանայի։

Գ

103ա Աւրհնեալ Տէր Աստուած իմ, որ եւտուր ժուժկալութիւն անարժան ծառայիս Աստուծոյ կատարել զաստուածախաւս գլուխս սուրբ Աւետարանիս Մատթէի։

Ջստացաւղ սուրբ Աւետարանիս զՀիպպոլիտոս և որդի իւր Գրիգոր, և զեղբայր իւր Սուրգիս աղաչեմ յիշել ի Տէր, և որ յիշէք, յիշեալ լիջիք ի Տէր մեր։

388

ԺԱՄԱԳԻՐՔ

Երևան 4515, Փիրղալեմյան, Նշխարք, Ա, էջ 42

Գրիչ՝ Յակոբ
Վայր՝ Սիս

Փառք ամենատուրք երրորդութեան յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Ջստացող գրոյս զպատուական կրօնատուրն Պետրոս, և ծնողն իւր, և զուսուցողն իւր՝ զսրբազան կրօնատուրին զծերունին Կարապետ և զԿոստանդին յիշեսջիք ի սուրբ աղաւթս ձեր, ո՛վ դասք լուսերամից, և մեղաց թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ Աստուծոյ։ Նաև զԲարմատար և զբիւր մեղաց պարտական գծողիկս Յակոբ, և զուսուցողսն մեր զԳորգ աբեղայն և զԳրիգոր փիլիսոփայ յիշելոյ արժանի արարէք, և մեղաց թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ Աստուծոյ։ Եւ որ յիշեքդ լի սրտիւ, նաև զձեզ Տէր յիշեսցէ իւր միւս անգամ գալուստն, և ի փառս, ամէն։

Արդ, եղև զրաւ սորա ի մայրաքաղաքս ի Սիս, ընդ հովանեաւ Սրբոյն Յակոբայ, ի լաւ օրինակէ, զի և շնորհողին ողորմեսցի ի Քրիստոս։

Գրեցաւ ի թուին ՉԻՉ (1277)։

389

ԱՌ ՈՐՍ ԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԻ

Նրևան 6213, Փիրղալեմյան, էջ 69—70

Գրիչ՝ Բարսեղ
Վայր՝ Սատատակոյ անապատ

Գրեցաւ հոգիախոս մատեանս այս Առ որս, ասացեալ ի Գրիգորէ Աստուածաբանէ, ի թուականութեանս Հայոց ՉԻՉ (1277), ձեռամբ ամենամեղ Բարսղի, ի վարժումն և ի օգտութիւն աստուածասիրաց և ուսումնասիրաց անձանց...

Այլև գրեցաւ սա ի յաստուածաբնակ սուրբ ուխտս և ի գեղեցիկ իմն անապատս Ծառատակոյ:

390

ԿՈՉՈՒՄՆ ԸՆԾԱՅՈՒԹԵԱՆ ԿԻՒՐՂԻ ԵՐՈՒՍԱղԵՄԱՑԻՈՅ

Վիեննա 273, Տաշյան, ծուցակ, էջ 694

Գրիչ՝ Եփրեմ

ա

Յամենայնի զաւրացուցիչն իմո Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։ Գրեցաւ ի թվին ՉԻԶ (1277)։ Ո՛վ սրբասնեալ քահանայք եւ սրբասնեալ ժողովուրդք, որք կարդացողդ էք եւ լսողդ, անմեղադիր լերուք, թէ սղալ գտանէք, զի իմ կարս այդչափ էր, եւ զոք ուգնական չունէի այսմ նիւթիս, զի էի խիստ տրտում եւ մարմն մեր /// իկ էի, հոգւով աղքատ, եւ էի մարմնով։ Ով աւրհնէ զիս՝ աւրհնեալ լիցի, եւ որ զմեզ այլ բանն ասէ՝ զայն ժառ[անդեսցէ]։

բ

Ո՛վ պատուական եղբայրք, որք ընթեռնուք զվարդապետութիւն սըրբոյն Կիւրղի հայրապետի, ասացէք լի բերանով. Տէր Աստուած ողորմեա Աւազէր աղախնո, որ կիսաւրեա փոխեցաւ ի Քրիստոս, զի վասն նորա յիշատակի գրեցի, եւ Եփրեմի՝ մեղաւոր եւ ախմար գրչի, եւ ծնողաց իմոց։

391

ՏԱԻՆԱԿԱՆ

Երևան 995

Գրիչ՝ Սիմէոն
Վայր՝ Աւարատյան
գավառի Մողնո Սուրբ Գէորգ

ա

561բ Փառք, փառք ամենակալ մեծանուն Տէր, անհաս բարձրութիւն, անչափ խորութիւն, անոլորտ լայնութիւն, անքննելի, անպատմելի, անիմանալի, անհասանելի, միայն սուրբ, միայն ողորմած, միայն բարերար, միայն գթած, միայն մարդասեր, միայն իշխան, միայն թագաւոր, միայն հզաւր, միայն առատ, միայն բաշխող բարեաց, միայն տուող ողորմութեան, միայն բժիշկ հիվանդաց, արուհնութիւն և գովութիւն և փառք քեզ, ի Սիմեոնե* հոին գրչե, որ արժանի արարեր զիս հասանել ի գիծ վերջին մելակիս և տառիս, ամեն։

562ա Արդ, ի յայս հասեալ ժամանակիս, յորում զաւրացեալ լիներ ազգն Նեստորաց եւ տիրել ամենայն աշխարհիս, և մեք յահե սոցա սարսուցեալ, որպես փրկիչն ասէ. Թե ի բազմանալ անաւրինութեան ցամաքեսցի սեր բազմաց, եւ Դաւիթ ասե. Մաշեցաւ երկիր և ամենայն բնակիչք նորա, եւ Պատրոս ասե, թե Անցեալ վայելչութիւն աշխարհիս։ Յայս հասեալ եւ ի ծերացեալ ժամանակից կատարեցաւ աստուածահրաշ մատեանս, յամի յորում լցեալ լինեին թիւն ամաց ելանելոյ նախահարն մերոյ ի դրախտեն ըստ եւթանեսնիցն թարգմանութեան ամք ՅՅՀԱ
562բ (6371), եւ ըստ այլում համարոյ ՅՇՂՋ (6596), իսկ ի կուսական հայտնութենե Աստուածն բանի ՌՄՀԷ (1277) ամք, և աստուածայծանաւթեւթենե եւ ի լուսաւորեալս մեր ի ձեռն Սրբոյն Գրիգորի ՋՀ (970), յորում էր թուական մերոյ տաճարիս ՉԻԷ (1278)։

Քահան ոմն Մարկոս անուն, զարդարեալ առաքինութեամբ, զմտաւ ածելով զբան մարգարեին, որ ասէ, Պատուիրանք Տեառն լոյս են, եւ լոյս տան աչաց իմոց, եւ միւս մարգարէն ասէ. Որանի որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընղանի ի Վերինն Երուսաղեմ, սոյն աւրինակաւ եւ սայ ստացաւ զտառս աստուածային իւր հալալ արդեանց, յիշատակ իւր եւ ծնող
562ա ողած իւր Յովաննես Մարագ երիցոյ||եւ Աւագաիկնայ, եւ Պապիե, եւ Ելթե։

---

* Շատ հաճախ «էյ»-ի փոխարեն «ե» է գործածում։

Զի քեպետ եւ փոքր տեսանի առ աչս մարդկան, սակայն բազում ճառս պատմէ սայ։

Եւ արդ, իմ սեսեալ զփոյթ յաւժարութեան Մարկոս, քահանայի, նուաստս եւ անպիտանս քահանայ եւ ոչ ըստ արժանոյն Սիմեոն անուն, ակսա դրել զսայ յուսով աներեւոյթ զաւրութեան Աստուծոյ. ոչ վասն վարձոյն, այլ ակն ունելով ի վերնատուղեն բարեացն և վարձուցն։ Եւ եհաս ողորմութիւն նորա ի վերուստ յաւգնականութեան ինձ, և կատարեցաւ ի լայնատարած դաշտիս Այրայրատեան գաւառի ընդ [հովա-
562բ նեաւ] Սուրբ Գ[եորդ]այ զաւրավարիս և տղայ Մարտիրոսիս,‖ի հայրապետութեան տեառն Յակոբայ Հայոց վերադիտողի, որ եհաս ի կատար ամենայն աստուածահաճոյ վարուց։ Եւ եպիսկոպոսութեան տեր Գրիգորոյ և տէր Համազասպայ՝ սուրբքն ի մէջ սրբոց, շահք պայծառք ի դրան կաթողիկէ եկեղեցոյ։

Արդ, աղերսիւ հայցմամ[բ] աղաչեմ զամենիսեն, որք հանդիպիք [հ]ոգեշահ կտակիս վերծանելով զյիշատակս սրբոցն, եւ որք աւգտիք ի սորա լրութենե, մանաւանդ որք գաղափար առնոյք, զստացող գրոցս զՄարկոս քահանա [յիշեսջիք], որ եւ գրել զսայ ի հալալ արդեանց յիշատակ իւր;

Ինձ մեղաւորիս և անարժանիս Սիմեոնիս առ որս և զանարժանագրիչս Սիմեոն եւ զհայրն իմ զՆփրեմիանոս ‖։

Բ

424ա Յաւրինակին այսչափ կայր, եւ մեք բազում խնդիր արարաք և ոչ գտաք, աղաչեմ զձեզ թողութիւն առնել։ Եւ յորժամ ընթեռնոյք զպատմութիւն սուրբ հայրապետին Յակոբայ, ասացէք. Քրիստոս Աստուած, աղաւթիւք սուրբ հայրապետիս Յակովբայ ողորմեայ ստացողաց գրոցս Մարկոս քահանայի, և ծնողաց իւրոց Յովանես Մարազ իրիցոյ, եւ եղբարն Պապին, և Աւագաիկնայ, և Ալբե, եւ ինձ մեղաւոր գրիչս Սիմեոնիս, եւ Քրիստոս Աստուած յիշելոցդ ողորմե[ս]ցի, ամեն։

Գ

147բ Փառք անպատում և անորակ եակին, և անճառ և անմահ վեհի, անհաս և անքանակ փրկողի, անձև եւ անսահման հաստչի, Հաւր անպատճառի և գոյացուցչի զբնաւս, և Որդոյ անճառ ծնելութեամբ փառակցաբար գործակցի ի կազմուածս գոյից, այլ և Հոգոյն Սրբոյ ելողի, անքերի և լրայպատիւ ընդ Հաւր և ընդ յՈրդոյ յանճառ փառսն, և յանպայման բարձրութիւնս, այժմ և անդրաւ յաւիտեանս։

Դ

218ա Քրիստոս Աստուած, քո սուրբ առաքելոյս Յակոբայ բարեխաւսութեամբ ողորմեայ ստացողաց գրոցս Մարկոս քահանաի, եւ Յովանեսի

իրիցոյ, Պապին, Ելթե, եւ Ավաքտիկնայ, և ինձ մեղաւոր գրչիս Սիմեոնի ամեն"։

Ե

277ա Քրիստոս Աստուած, բարեխաւսութեամբ քո սուրբ և ընտրեալ առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի և Յոհաննու, ողորմեա ստացողի գրոցս Մարկոսի և Յովաննէսի իրիցոյ, և ինձ մեղաւորիս Մողնոյ իրիցոյս։

Զ

320ա Մեծդ ի մարտիրոսաց, դասս նահատակ Քրիստոսի Գէորգիէ, բարեխաւսեայ վասն ստացողաց գրոցս Մարկոս քահանայի, եւ Յովաննէս Մարագ իրիցոյ, եւ Պապին, եւ Ելթե, եւ Աւսքափիկնայ։ Ընդ նոսին եւ ինձ ողորմեացի՝ մեղաւոր գրչիս Սիմեոնիս, եւ Քրիստոս յիշողացդ ողորմեացի բարեխաւսութեամբ Սուրբ Գէորգայ, ամէն եւ հազար ամէն։

Է

361 Քրիստոս Աստուած, քո սուրբ թաղմանդ և յարութեանդ բարեխաւսութեամբ ողորմեա Մարկոս քահանայի և Յովաննիսի, որ կոչի Մարագ երեց, և Ելթե, և Աւագափիկնա, ընդ սոցայ և ինձ մեղաւոր գրչիս Սիմեոնի։ Ողորմածն առատ է մեզ և ձեզ ողորմեացի։

Այլ կարդացող, ասայ բարձր ձայնիւ, յորժամ կարդայս, և Քրիստոս քեզ այլ ողորմի և մեզ"։

Ը

50բ Աւաղ տղայոցս բարբաջմանս և իմոյ մտացս սխալելոյս։

Ք

99ա Տէր Աստուած աւգնեա եղբաւր մերոյ որ ասի Թիրխիշ հաբեղայ, որ աւգնեց մեզ ի գիրս ղտյս չափս ըստ կարիւ իւր"։

Ժ

133ա Ընդանի ե գրկացն, որ դիեցին, եւ եղուկ ե ձեռինն, որ տանի առ մայրն։

ԺԱ

243բ Աւաղ կայծուկ փշիս,
Որ ելաւ ի մատն գրագրիս,
Յաւուր շարաթիս,
Ի տաւնի Վարդավառիս։

---

* Այս կարգի մանր հիշատակագրութիւններ կան 13բ, 44բ, 62ա, 95բ, 119ա, 190ա, 252ա, 295բ, 328բ, 351ա, 391ա, 456ա, 469ա, 480ա, 492ա, 504բ, 530բ, 555բ էջերում։

** Այս և մյուս հիշատակարաններում գրիչը չի պահպանել ե-է, ը-գ, գ-տ տառերի գրութեան միօրինակութիւնը։

*** Թիրքիշ արեղան միայն մի էջ է գրել կիլիկյան բոլորգրով, որը խիստ տարբերվում է Սիմեոնի բոլորգրից։

ժբ

308բ Աւադ Գ անձիս կորուսեալոց, զոր արարաք բազում խնդիր և ոչ ուրեք գտաք, և յաւրինակին այս չափ կայր, թողութիւն արարէք աղաչեմ*։

ժգ

399ա Քունս նեղեաց, և թող այն մարդն մեղադրէ, որ քուն չունի։

ժդ

461ա Որդակն իմ Գէորգ առաք ի գրկակս մեր, և ձգեց զձեռն իւր տղայաբար։ Տէր արա զինքն ընդ երկայն աւուրս, ամէն։
Գէորգ վկային է տղայս։

ժե

501բ Տէր յիշեա զկենակիցն իմ, որ երեր փոխինդ է (7) ցեղ և վերարկուքն մինն գործ անարիւնի։

ժզ

517բ Դադարեաց գրկոյկս ի գրելոյ ի Սուրբ Զաւրաւարիս առաջի, ի Սուրբ խաչիս բարեկենդանիս։ Եւ յայսմ աւուր Մարկոս մեզ ձուկն էբեր ժռով և բաժակ՝ հայրերիւն և մանկտևաքին հանդերձ։
Տէր տուր նմայ զքո անմահ բաժակդ, ամէն։

ժէ

540բ [/// մ]եզ սեխ և բաժակ անուշ ի պարտիզի իւր յայգոյն։ Քրիստոս Աստուած պարգևեա նմայ և իւրոցն զքո արքայութեանտ, ամէն, և յայսմ աւուր բարեկենդան էր Սուրբ խաչին։

ժը

548 Տէր յիշեայ զՏեռտէր երկրցին մեր, որ ած եբեր փոխանակ ճաշի, և վերարկուն՝ ընկոյզ՝ փոխան եղիւ։ Բայց ի ձեռին նորա այն կայր։

ժթ

Նկարող

218բ Յի[շ]եա զ[մ]եզո[ւ]ցեալ[ս]ս ով [ը]նթե[ր]ցաս[է]ր**։

ի

Յետինս և անարժանս և զարժանիս յիշման, նկարող ծաղկիս և յաւրինողս աղաչեմ յիշել, ո՛վ սուրբ վերծանողք։

---

* Գրված է Գէորգ զորավարի վարքի առքիվ։

** Ծաղկողը տառերը, հաջորդաբար գրել է սև, կարմիր, կանաչ, իսկ չորրորդը (փակագծերինը) բաց է թողել։ Բաց թողած տառերից ստացվում է «չմ(ո)ւլ ըրէ»։ Բառախա՞ղ է։

392

ԺՈՂՈՎԱԾՈ

Երևան 1328

Գրիչ՝ Մկրտիչ
Վայր՝ Կարփի

ա

176ա Եւ արդ, գրեցաւ գիրքս հրամանաւ և արդեամբ սուրբ և ընտրեալ երջանկի, հեզի և սիրեցելոյ Աստուծոյ Տիրատուոյ, վերակացուի, իշխողի և իշխեցելոյ վանաց, որ և Սաղմոսի կոչի։ Վասն զի սուրբ սիրոյն որ առ Աստուած, փափագեալ սմա ըղձալի սրտիւ և գորովալի գթով, ետ գրել իմում անարհեստ և անարժան գրչի, քահանայ և ոչ ըստ արժանոյն Մկրտիչ կոչեցեալ, ի թվականութեանս Հայոց ՁԻԷ (1278), ի գեղաքաղաքիս Կարփի, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, և սուրբ վկայարանիս Կիւրակոսի և Յուղիտեա։

176բ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք լուսաւորիք ի սորա լուսալրութենէս կամ աւրինակէք, յիշեսջիք զստացող սորա զՏիրատուր և զհոգևոր հայրն իմ զԳրիգոր փակակալ, նաև զվարդապետքն իմ զՓիլիպպոս և զԽաչատուր, ընդ նմին և զծնողսն իմ ըստ մարմնոյ զԹադէոս և զՏիրումայրն, և զորդիացեալն իմ տղայ գոլով Սիոն կոչեցեալ, յիշեսջիք ի սուրբ և ի մաքրափայլ յաղաւթս ձեր, լի բերանով ողորմութիւն հայցելով յամենառատ և յամենապարգև արարչեն Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։ Արդ, ես յետինս և անարժանս, թափուրս ի գործոց բարեաց, գծող գրոցս, յերեսս անկեալ աղաչեմ զընթերցողսդ և զլսողսդ, յիշատակի արժանի առնել զիս, և զկողածինն իմ, ողորմալի և գորովալի գթով ասելով, Քրիստոս Աստուած՝ որդի Աստուծոյ, յիշեա զաշխատողք սորա ի քո մեծի երևման և
177ա վարձատրեա նոցա ի վարձուց սուրբ մշակացն քոց, համաւրեն ստացողաց և գծողաց, կենդանեաց և ննջեցելոց, ամէն, և դուք յիշեցողքդ և մեք յիշեալքս յիշեալ լիցուք ի Քրիստոսէ յանմահ կեանսն, ամէն, ամէն։

Զառաւտաբաշխ աղբիւրն և զամենայն առաքինութեամբ զարդարեալն, զվարդապետն Մխիթար յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ եղև յաւժարութիւն աստուածախաւսութեան գրոցս։

Քրիստոս աստուած յիշեա զծնողսն մեր զՅովաննէս և զԵղբայրիկ քո աներեակ ծագմանն, և հան մասն և բաժին նոցա ընդ սուրբսն քո, ամէն։

Ո՛վ ընթերցող մի զանց առնէր ի գրելոցս, զի և դու յիշատակիս ի գիրն կենաց, ամէն։

բ

7ա Յայսմ վոյր(ի) յիշեա զհնացեալս մեղաւք։

գ

31բ Աւաղ մտացս և սխալման գրոյս։ Յրուեցաւ միտս։

Պ

49բ Ի բազմութիւն խաւսից սխալեցաւ միտս, || և կրկնեցի զգրելսն, աւա՛ղ մթացեալ մտացս։

Ե

77բ Բաժակ ուստի ըմպենք, վասն զի||զխաղողն ալափեցին, եղո՛ւկ զկեբրողսն։

Զ

102ա Աստանաւր յիշեսջիք զտացող գրոցս զսրբասնեալն զՏիրատուր, զի սիրով և փափագմամբ ետ գրել զսայս։ Նա և ղհոգևոր և զարդիւնատր վարդապետն զՄխիթար, զյառաջաբան դրոցս, ընդ նմին և զմեղուցեալ անձն իմ։

Է

338բ Արդ, գրեցաւ պատմութիւնս Տարաւնոյ հրամանաւ և արդեամբ երջանիկ
և պատուական իշխողի և վերադիտողի վանից Սաղմոսի, ձեռամբ անար-
ժան քահանայի, ի վայելումն և ի շատակ յաւիտեան, ստացողի գրոցս
339ա Տիրատրոյ, և յիւրայնոցն ամեն||այն։ Զի որք կարդայք և գաղափարիք, յիշեցէք առաջի Աստուծոյ անմահին և երկնաւորին, Տէր Յիսուս ողորմեսցի Տիրատուր կրաւնաւորի, և տուր նմայ և իւր ամենայն ազգայնոցն ի քո լուսեղէն յարկացն և յանթառամ պսակացն ընդ սրբոց կրաւնաւորացն և միանձանցն, զի որք հաւատով խնդրեն, լսող է Աստուած, վասն զի խոստացաւ հաւատացելոց իւրոց և ասաց. Խնդրեցէք և տացի ձեզ...

Արդ, ես յետինս և անարժան, փցուն և աղմաբ գրիչս, յոտս անկեալ ձեր ամենեցուն, ո՛վ սուրբ և երջանիկ դասք պաշտաւնեիցդ, և ինձ՝ խնդրել յԱստուծոյ զերծանիլ յաններելի տան[չ]անցան։

Ր

308ա Աստանաւր յիշեսջիք զերջանիկ և ղհոգևոր ստացող գրոցս զՏիրատուր, ո՛վ վերծանաւղք, ասելով՝ Յիշեա Քրիստոս Աստուած ի քո աներեկ ծագմանդ և հան նմա մասն և բաժին ընդ սուրբ կրաւնաւորացն, որք նահատակեցան, ամէն, ընդ նմին և ինձ գծողի գրոցս։

Ք

492բ Յայսմ աւուր, որ աւր Իէ (25) էր սահմի ամսոյ, խիստ մեծամեծ ձիւն երեկ, որ կարծեմ քե այլ մարդ չէր այսպիսի տեսել, և այլ շուտ վերացոյց Աստուած։ Վասն մեղաց էր այս։

Ժ

224ա Մի մեղադրէք, շատահաչ մարդ կէր մատ յիս*։

---

* Տողը կոկին է առտագրել, այդ կապակցութեամբ է գրել հիշատակագրութիւնը։

ժա

264ա Կծիկս զինչ շուն, ով Արծան պիղծ*։

302ա Եղուկ մահու պատիւ է Միհրանայ, արժան է պատվոյն։

303ա Անոշ քնէ Միհրան, քո քունդ նմա, որ չար խորհի քրիստոննից, ամէն։

304ա Ազեկ պատիւ է շինել Վահան Միհրանա և իւր զաւրացն, նմա այսպիսի պահիւ, որ հերձուածող է։

393

ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ

Երևան 751

Գրիչ՝ Յոհան
Վայր՝ Բաբյբերդ դղեակ

185ա Փառք... եռակի եզակի և եռափափաք փառաւորեալ Սուրբ Երրորդութեանն, [որ] զաւրացոյց զիս զանարժանս, հասանել ի վերջին գիծս յամի եւթնհարիւրերորդի քսան[ե]ւթներորդի (1278) տարբերութեան Թ[վ]ականիս Հա[յ]ոց գրեցաւ Երգարանս [մանր]ուսման, [ձ]եռամբ Յոհանա անար[ժա]ն [վա]նաց իրիցու, ի գաւառիս Խաղաղեաց, ի դղ[եա]կըս որ կոչի Բա[յ]բերդ, ընդ հ[ո]վանեաւ Սուրբ Աստուածածնիս, ի Թաղս որ կոչի Ջկրաշէն, ի նեղ և ի դառն ժամանակիս, յորում ոչ կարեմ ընդ Թուվ արկանել զնեղութիւն և զ[տար]աբեկութիւն ազգիս Հայոց ի չարասէր ազգէն Իսմ[ա]էլի [ղի] բազում վանորայք[ս] [ա]ւէրեց[ին]///ցուցին ///չաց զարև ի մտես...

Բ

110բ Քրիստոս Աստուած քո սուրբ և մեղսաքաւիչ մարմնոյ [և] արեանդ բարէխաւսութեամբ ողորմեա մեղաւք մեռեալ գծողիս Յոհան անարժան կրաւնաւորի։ Ընդ նմին և ստացողի այսմ տառի։

394

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 5563

Գրիչ՝ Պաւղոս
Վայր՝ Յոհնանց անապատ

315բ Փառք ամենասուրբ Երրորդութեանն և մի աստուածութեանն Հաւր և Որդւոյ և ամենասուրբ Հոգւոյն, այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից,

---

* Ջննոր Դլակին վերագրված «Պատմութիւն Տարօնոյ» անվավեր գրվածքի մեր հիշատակված Արձան քրմապետի։ Միհրանի և Վահանի մասին են գրչի գրած այս և հաջորդ լուսանցագրությունները։

31—457

ամէն։ Զընորհս բարերար ողորմութեանն Աստուծոյ, որ առ իւր արարածս, անհաս իմանալիք ի բանականացս սեռից, մանաւանդ զանցելոյ հրաշիցն ներգործութիւնս որ առ հարսն մեր կատարեցաւ եւ զներկայիս հիանշմար զեղոմն նախախնամող գթութեանց Հոգւոյն Սրբոյ առ ի քաջասնութիւն միանգամայն արարածականս սեռից, մանաւանդ ղոր առ իմանալի հոգիս արգասաւորաբար համանգամայն ցանկալ տայր բար-
316ա ւոյ, ոմանց ըստ ընդ||ու[նո]ղութեանն մասանց և այլոց՝ բոլորին աստուածայնոյն՝ աստուածասիրացն և գերագունին՝ բարեբարոյիցն, զորոց գթութեամբ Տէր բանայ զաչս ներքինն մարդոյն գիտել և ճանաչել զդիւրակործան և զապականելի կենցաղոյս վայելս, թէ ընդ գտանելն արագ ունի և զեղծումն։

Իսկ որոյ բաց է յստակ ունիցեն զմտացն աչս և լուսատեսակ զհոգւոյն տեսարանս, գանձ են անձանց իւրեանց անճողոպրելի շահս, որ միշտ և անզրաւ ունի զկա ընդ Աստուծոյ և ոչ ական հատանի ի վնասակար գողոց։

Ուստի և աստուածահաճոյիցն ցանկացաւղն և ամենայն բարէկարգութեամբ զարդարեալ միայնաւորն Ստեփաննոս հմտաբար վարժիւք ն
316բ ընտրողական||հոգւով քաջապինդ գոլով յամենայն տեսակս բարէկարգութեան, մանաւանդ առ ընդանիս հաւատոյ, և ի գութ, և ի սէր սուրբ եկեղեցւոյ, յորս արգասաւորաբար ըստ չափոյ գոյից անճշդելի մատակարարէր, որ և այսմ երանաւետ ե կենսաշնորհ տառի մեծապէս բաղձանաւք ցանկացեալ ընձեռել և նըւիրել ի տունս Տեառն ի տրապիզի|||ս* գահաւորակի լուսընկալ լուսարանի մաւր մերո Սիովնի։

Իսկ իմ ամենամեղ հոգոյ և անիմաստ գրչաւորի Պատրոսի, դեգերելով ի դրունս դժոխաքակ և մեծապէս ապաստանիս փախուցելոց երեսաց բանսարկուին, ձայն ի բանին և գաւետիս հնչաւղին, ի յունկն համայն
317ա մարդկայինս սեռի Սրբոյ||Կարապետին, ակն ունելով սուաւ և ի ձեռն սորա ողորմութիւն գտանել, և տեսլեան անմահ բանին արժանի գտանիլ։ Իսկ նախասացեալ կրաւնաւորն և ամենաբարեացապարտն Սահփաննոս, ըստ յառաջադիմութեանն իւրոյ ի բարիսն, կամեցաւ ստանալ իւր գանձ անկողոպտելի, լնուլ բաղձանաւք այնմ որ ասացն, թէ Երանի որ ունեցի զաւակ ի Սիովն, և ընդանեակք իցեն նորա յերուսաղէմ, զարձանացեալ խորհուրդս իւր նախ ծանուցեալ բարէմիտ և հրեշտակերամ եղբայրութեանս և գերագոյն գլխոյն, և ամենարարի պարոն Կոստանդեա, և նա քրիստոսասէր կամաւք ըստ եռափափաք սիրոյն յանձն արար
317բ մերում ապիկարութեանս,||և իմ հարկեալ ի հրամանէ նոցին և յաղթեալ ի սիրոյ, յանձն առի քաջապինդ յուսով, ակն ունելով և ինձ գտանել մասն ողորմութեան յարդարապէս չափաւղէն և ըստ արժանեացն հատուցանողէն։

Եւ գրեալ աւարտեցի զսա, որ լիացեալ կատարի թիւ համարի Հայկազեան տոմարիս ՋԻԷ (1278), ընդ հովանեաւ ամենազաւր աջոյն Յիսուսի, ի սուրբ երկնանման անապատիս, որ կոչի Յոճնաձոր, ի խնամս

* Մի քանի տառ ընկած է։

ողորմութեան Սրբոյ Կարապետիս և կենսակիր Սրբոյ Նշանիս, ի հայրապետութեան տեառն Յակովբայ և ի թագաւորութեանն քրիստոսապսակ արքային Հայոց Լևոնի, և ի վերաշիտողութեան այսմ անապատիս, քրիս-
318ա տոսասէր և բարեպաշտ իշխանաց իշխանին պարոն Կոստանդեա՝ տեառն Սաբվանդոմարիւն, որ ինքնակամ յաւժարութեամբ յինք առբերելով ի մասինս յայսմիկ զտիպ և զաւրինակ ամենատեսուն Յիսուսի, լինելով հնչ ըստ խրատուն, գթած և ողորմած ըստ պատուիրանին, մանաւանդ անփակ ունել զգութ և զողորմութիւն առ չարսն և առ բարիս, առ մեծամեծս և առ փոքունս, խրատելով ըստ հոգւոյ և մեծապէս ծախիւք դրամանս տանելով ըստ մարմնոյ, վշտանալով ընդ վտանկեալսն և բերկրելով ընդ խրախացեալսն։ Մինչ գոռհ տալով ի բազում գուառաց, լինել տեսաւղ և բնակել հանգստեամբ, մինչ գրեթէ լի իսկ լինել ճգնաւորական հանդեսիւ, որոց աղաւթիւք և բարեխաւսութեամբ ամենայն սրբոց շնորհեսցէ
318բ զսա||մեզ Տէր ընդ երկայն աւուրս՝ հանդերձ պայծառացեալ հարազատաւքն իւրովք պարոն Սմբատիւ և պարոն Աւշնիւ փթթեալ մանկամբք և ծաղկեալ արգասիւք, փառաւորեալ փառաւք, գնալով զաւրութենէն ի զաւրութիւն և փառաց ի փառս, պարագայց ամաւք պատուեալ մեծութեամբ ի փառս Քրիստոսի և ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ։

Եւ արդ աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք և լուսաւորիք, յիշեսջիք աղաւթիւք զստացաւղ սուրբ Աւետարանիս զնախասացեալ միայնաւորն զՍտեփաննոս՝ ծնաւղաւք իւրովք և զարմիւք և ամենայն ազգայնաւք։ Յիշեսցի աղաչեմ և զհոգևոր դաստիարակ սորա ղբոցափայլ///*

395

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 2629

Գրիչ՝
վայր՝ Կիլիկիա

139ա Շնորհեա զմեզ, Տէր, ընդ երկայն աւուրս զԿոստանդին բարեպաշտ իշխան թագադիր Հայոց Կիլիկեցւոց նահանգիս եւ տէր Սարուանդի
fur[n]///

396

ՄԱՆՐՈՒՄՈՒՆՔ

Երևան 759

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Սկևռա

Գրեցաւ առաջաբանս և տետրակս Մանրուսման ի թուիս Հայոց ՋԻԷ (1278), ի հայրապետութեան տեառն Յակովբայ, և ի թագավորութեան

* Հաջորդ թերթն ընկած է։ 127ա-ում ունի այսպիսի հիշատակություն. «Յիշեսիք զՄիքայէլն ի յազաթս ձեր, որ գնեցի զԱւետարանս ի գէղն Կապճգիհ»։

Լևոնի, որդւոյ Հեթմոյ, ի հուշակատր անապատս Սկևռայ, ընդ հովա-
181ա նեաւ Սուրբ Փրկչի և մաւր լուսոյ Աստուածածնի և կենսա||կիր Սուրբ Նշանի, մերձ յանմատոյց դղեակս Կամբրունի, որ է ի գլուխ Տարսոնի, և ի ստորոտ մեծ լերին Տաւրոսի, ի լաւ և յընտիր աւրինակաց, ձեռամբ բազմ[ամ]եղ քահանայի և անպիտան գրչի Ստեփանոսի, ի խնդրոյ պատուական հոգևոր եղբաւր մերոյ և ամենաիմաստուն քահանայի Ստեփանոսի, որ ստացաւ զսա ի վայելս սրբատէր անձին իւրոյ և ի յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ ուսմամբ կամ տեսակաւ, կամ գաղափար առնելով, յիշեսջիք ի Քրիստոս զյառաջասացեալ պատուական քահանայ Ստեփանոս՝ ստացաւղ տառիս և զաստուածասէր ծնաւղսն իւր, և զհարազատ եղբարսն իւր զԿոստանդին, և զսրբասէր նորընծայ քահանա Կիւրակոս և զՅովսեփ սարկաւագս հան-
181բ դերձ ազգատոհմիւ||իւրեանց։ Եւս առաւել աղաչեմ յիշել ի տէր զինամաւղ զուսուցիչ սոցա զպատկառելի քահանայն և զպատուելի ծերունին Դաւիթ։

Ընդ նմին և զամենամեղ գրիչս Ստեփանոս և զծնաւղսն աղաչեմ յիշել [ի] Տէր, և խոշորութեան և սղխալանացս չլինել մեղադիր, զի այսչափ էր կար մեր։ Եւ որ ընդունայտն է մաղթանաց և տուաւղն բարեաց Տէր Յիսուս Քրիստոս յիշողացդ և յիշելոյս ողորմեսցի, և ինքն եղիցի աւրհնեալ ընդ Հաւր և ընդ Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն*։

397

ՏՕՄԱՐ

Երուսաղեմ 2341, Պողարյան, 8ուցակ է, էջ 466

Գրիչ՝ Հայրապետ
Վայր՝ Ականց անապատ

ա

Փառք քեզ անսահման անուն, անզուգական անձնաւորութիւն, Հայր և Որդի և Հոգի Սուրբ յամենայն արարածոցս եւ ի յիմաստայիզծ բանիցս, այժմ եւ յանսպառ յաւիտեանս, ամէն։

Գրեցաւ սա ձեռամբ Հայրապետի քահանայի,
Բարեաց գործող տառապելի,
Զձեզ աղաչեմ, ով հանդիպի
Ցիշման առնեք զիս արժանի,
Որպէս և դուք յիշել լիշիք յայնմ ատենի։

---

* Սահակ Ամասունին սույն ձեռագիրը համեմատելով Մատենադարանի № 630 մանրուսմոնքի հետ գրում է.

«Ժամամուտներից այս չափ էլ պակասում է 680 (այժմ 759) Մանրուսման հազագրքի մեջ։ Գիրքը գրուած է ՉԻԷ (1279) Հայոց թուին և որովհետև սույն հազդիրքը (630) թուական չունի և գրութեամբ մանաւանդ ժամամուտների դասաւորութեամբ և այլ երգերի խորագրերի միօրինակութեամբ բոլորովին նման է հիշեալ հազդրքին, ուստի հաւանական է, որ նույն թուականին գրուած լինի։ 1895. 28 ապրիլի Ս. Էջմիածինն»։

Գրեցա այս իմաստալեծ մատեանս ի Հայկական տումարի ՋԻԷ (1278), ի կաթողիկոսութեանն Յակոբայ, և ի բարեպաշտութիւնն Լեռնի թագաւորին ի գաւառիս Կիլիկեայ, ի վանս Ակաճց անապատի, և ի յառաջնորդութեանն հաւր Ստեփաննոսի և Վարդան փակակալի։ Որք աւգտիք ի սմանէ ուսմամբ կամ աւրինակաւք կամ գաղափարաւ, յիշեսջիք ի Տէր զառածեալս մեղաւք իւ զՀայրապետ, և զհաւրեղբայրն իմ քահանայ զՄովսէս, որ և զիս ուսուցեալ է, և զհայրն իմ զԱռաքել, և զեղբայրն իմ զՍտեփաննոս, և զմայրն իմ, և զամենայն ազգականս իմ։ Եւ որ սրտի մտաւք յիշէ, Աստուած զինք յիշէ յիւր արքայութիւն, և որ զԱստուած ողորմին [ասէ], և նմա պարգևէսցէ ըստ այնմ, թէ՝ Ես առատ եմ։

Յիշեսջիք զՄանուել փիլիսոփայն, որ զաւրինակն երեաւ։

Յիշեսջիք և ծերոնի սրբասէր կրաւնաւոր զԴաւիթ, որ զտումարս աշխատութեամբ ուսոյց մեզ, և բանիւ և արդեամբ ընկալաք ի նմանէ, և որ յիշէ, ինքն յիշեալ լիջի ի Տեառնէ։

Բ

Ո՛վ եղբարք, որք աւկտիք ի սմանէ, յիշեսջիք զՄանուէլ փիլիսոփայ, որ զաւրինակս շնորհեաց; և որ զամէն ասէ՝ Աստուած իր պարգևեսցէ շատ և առատ։

Ով դասք լուսերամից, որք աւգտիք յայս յիմաստալեղծ տառիս ուսմա[մ]բ կամ աւրինակաւ, յիշեսջիք զՀայրապետ գծող և զհայրն իմ զԱռաքեալ, և զհաւեղբայրն իմ զՄովսէս քահանա, և զեղբայրն իմ զՍտեփաննոս սարկաւագ, և Աստուած զձեզ յիշէ ի բարին, և ձեզ և մեզ ողորմեսցի, և ամենայն հաւ[ատացելոց], և Քրիստոսի փառք։

Գ

Եւ զՀայրապետ յիշեա, և որ զաւրինակս շնորհեաց։

398

ԼՈՒԾՄՈՒՆՔ ԳՐՈՑՆ ԵՒԱԳՐԻ ՊՈՆՏԱՑԻՈՅ

Երևան 4515, Փիրղալեմյան, նշխարք, և, էջ 44—46

Գրիչ՝ Յովհաննէս Արքաեղբայր
Վայր՝ Գոճեր

Բազմամեղ ծառայս Աստուծոյ և նուաստ ձեր պաշտօնակից՝ հողացեալ և մոռացեալ կրսերս Յովհան, անիմաստ բարուն և ուխտադրուժ այցելու, շնորհիւ ողորմութեան Քրիստոսի Աստուծոյն՝ իմոյ յուսոյ և Սուրբ Հոգւոյ նորին ձեռնտուութեամբ, ի փառս բարեգութն Աստուծոյ Հօր՝ գրել եռու զաստուածազգեաց սուրբ հօրն Նաագրեայ զբանս լուծման, զոր արարեալ է երջանիկ վարդապետին Գրիգորի Սկեւռացւոյ, ի բանից քաջ մենամարտին և արի ըմբշին Աւռմայ ճգնաւորի, որք երկուս տեսակս

էին բարգաւաճ ի տեսականաւն և գործնականաւն, զոր Տէր ի փառս իւր հանգստեամբ ընկալցի և մեզ ի նոյն՝ զսոյնս բարեխօս կալցի, ամէն։

[Դրել ետու զգիրս] ձեռնասուն աշակերտի իմոյ քահանայի Յոհաննիսի, ի Թուականիս հայոց ՉԻԷ (1278), ի լեառն Կարմիր, ի սուրբ հրեշտակաբնակ անապատն Գռներ, յորում իմս իսկ զետեղի դատապարտ անձն, ի կաթողիկոսութեան տեառն Յակոբոյ և ի թագաւորութեան քրիստոսասէր և իմաստախոհ, հեզանազ և բարեմիտ, քաշ և արի, աստուածասէր արքային Լևոնի՝ որդւոյ տեառն իմոյ և եղբաւր, ի Քրիստոս հանգուցեալ արքային մերոյ Հեթմոյ՝ որդոյ Կոստանդեայ՝ որդոյ Վասակայ, քաջ, բարձր և կարող յաստուածազարդից ցեղիցն Ռուբինեանց, որք հանգիստ և ողորմութիւն և ևս տասն քաղաքաց իմանալեաց ի Քրիստոսէ իշխանաւորիւն կալցին, այժմ և յապագայ աներեկ աւուրն, ամէն, եղիցի։

Վասն որոյ և ես եղկելի և թարմատար յոռի կրսերս ձեր Յոհաննէս եպիսկոպոս արքաեղբայր Հայոց, անկեալ յոտս ձեր երկնաքաղաքացի ապագայ եղբարցդ արտասւամբ հայցեմ յարդիւնագործ և ժիր մշակացդ այսմ այգւոյ, յիշել զսորին պատրաստող ձեզ և որք զկնի ընդ սույն ուղի եկողիդ՝ թողութիւն և հանգիստ և ողորմութիւն ի Քրիստոսէ՝ ծնողք մեր կրկին և ընտանեօք ձեօք գտանել, և Տէր ողորմեա ասել մեզ մինչ ձանձրանայք և ողորմածն Աստուած յիշողացդ և յիշեցելոցս, նաև գրողին և կազմողին և խնամող պահողին բիւր բարիս տացէ բնաւիցդ Աստուած, ամէն։

399

ԱԻԵՏԱՐԱՆ

Գալեմքյարյան, Յուցակ Մյունխենի, էջ 7—8

Գրիչ՝ Յովհաննէս Արքաեղբայր
Վայր՝ Գռներ

ա

9բ Երջանկացդ պարու հայցեմ յիշել զեղկելի ոգիս ի բարին Քրիստոս զՅոհաննէս եպիսկոպոս եւ ղծնաւղսն իմ, և Աստուած զձեզ յիշէ։

բ

100բ Բաղմամեզ եւ դատապարա ոգւոյ գրողիս սորա եւ սաացողիս Յոհաննէս եպիսկոպոսի թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ տեսողք սորա։

գ

152ա Զեղկելի ոգիս զՅոհաննէս եպիսկոպոս՝ զԱրքաեղբայր Հայոց, զգրող տրա եւ զստացող՝ որք ժառանգէք զսա կամ գաղափարէք՝ յիշեցէք զծնողսն մեր եւ զբնաւ զարմսն միաւք հանդերձ. զի յոյժ տաժանիմ յուղողն գիւտ եւ զձեզ տէր յիշեսցէ, ամէն։

Դ

Ծաղկող՝ Վասիլ

295ա Շնորհիւ Տեառն եւ ողորմութեամբ կատարեցաւ սուրբ Աւետարանս, ի յընդիր աւրինակէ, ի վայելումն աստուածասէր իշխանին պարոն Սմբատ, որդոյ հանգուցեալ եւ բարեպաշտ իշխանին պարոն Կոստանդեայ, եւ հանգուցեալ մաւրն իւրոյ տիկին Շահանդրխտին, եւ հանգուցեալ եղբարցն պարոն Բակուրան, եւ պարոն Կոստանդեայ:

Գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ սուրբ եւ ընտրեալ աստուածահաճոյ արքեպիսկոպոսին սուրբ ուխտին Գոնեռոյն տէր Յոհաննէսի, որդի աստուածասէր եւ բարեպաշտ իշխանաց իշխանին՝ հանգուցեալ ի Քրիստոս պարոն Կոստանդեայ թագաւորահաւրն:

Գրեցաւ սայ ի հայրապետութիւնն տեառն Յակոբայ, եւ ի թագաւորութիւնն Հայոց աստուածասէր եւ բարեպաշտ թագաւորին Լեւոնի: Գրեցաւ ի մեծ թուականին Հայոց ՉԻԷ (1278):

Արդ, որ ընթեռնուիք կամ աւրինակէք, յիշեսջիք զմեզ, եւ զծնողսն, եւ զեղբարսն մեր, որում Քրիստոս միոյն հարիւրապատիկ ձեզ ողորմեսցի, որում աւրհնեալ յաւիտեանս, ամէն, եւ զիս զբազմամեղս Վասիլ զյետին գրիչս, որ ծաղկեցի զսուրբ Աւետարանս, յիշեսջիք ի Քրիստոս, ամէն:

Ե

Կազմող՝ Առաքել Հնազանդենց

299բ Ո՜հ, զմեղաւք զդատապարտեալ կազմող սորա զԱռաքել Հնազանդենց, եւ զծնաւղսն իմ, եւ զհարազատսն իմ, հանդերձ ծննդովք՝ եւ ամենայն զարմիւք, եւ զուսուցիչն իմ զՍարգիս քահանայ, զհանգուցեալն ի Քրիստոս, աղաչեմ յիշել ի Տէր: Ի թվին ՉԻԷ (1278) կազմեցաւ սայ:

400

ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍԻ

Երուսաղէմ 332, Պողարյան, Ցուցակ, Բ, էջ 207—208

Գրիչ՝ Սահփանոս

Ա

ՉՍահփանոս նուաստ գրիչ, յաղաւթս յիշեսջիք աղաչեմ:

Բ

Ստացող՝ Սիմեոն

Չվարդապետն իմ սրբազան զԳաւիթ, եւ զիս զՍիմեոն ըստացող տառիս յիշեսջի Քրիստոս աղաչեմ, եւ զԿոստանդ եւ ընտանեաւր ընկերակից և ուսումնակիցս իմ անմոռաց յիշեսջիք:

գ

Զվարդապետն Սիմեոն եւ զԳոգ, եւ զՄխիթար յիշեա Քրիստոս, եւ զԽաչատուր, սիրելի եղբայր մեր։

դ

408 Ես նուաստս Սիմէոն յիշատակեցի ի գիրս իմ զամենայն ընկերակիցս... յընկերաց աստի իմոց, այլ ընկեր է սատանի. զի չխնայեաց նա ի մանկութիւնս իմ... աթգարագատգ։

ե

Հետագա ստացող՝ Գէորգ
վայր՝ Բագնայր

604 Նուաստ վարդապետս Գէորգ, յետին ստացիչ աստուածայխաւս աւետաւուր բանից աստուածայնոց ի Հոգոյն Սրբոյ ազդեղ մեկնողաւրէն ի միտս աստուածազան արանց, զոր ժողովեալ տեառն Ներսիսի Հայոց կաթողիկոսի, ի վարժումն հետեւողաց բանասիրաց, յաւգուտ անձանց եւ եկեղեցոյ. աղաչեմ երկրամերձ գիմաւք, որք յետ մեր ժառանգէք, յիշել զմեզ անմոռաց. եւ որք յիշէք՝ յիշել լիշիք յանսպառ բարիսն; թվին ՉԻԷ (1278) ի հր[եշտ]ակաբնակ ուխտիս Բգնայրս գրեցի, ուր էր հանգիստ մեր, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, զոր հաստ[ատ]ուն պահեսցէ միածինն իւր, մինչ ի գալուստն իւր միւս անգամ։

401

ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Սրվանձտյան, Թորոս Աղբար, Բ, էջ 389

Գրեալ ի թվին Հայոց ՉԻԷ (1278), ի հայրապետութեան տեառն Յակոբայ հեզի և սրբասիրի, և ի թագաւորութեան քրիստոսապսակ արքային Հայոց Լեւոնի:

402

ՃԱՇՈՑ

Ակինյան, Յուցակ Հռոմի, էջ 54 (1230 թ.)

Նվիրող՝ Լեոն թագաւոր Հայոց

ա

257բ Լեոն՝ շնորհաւք Աստուծոյ եւ աւգնականութեամբ նորին թագաւոր Հայոց, որդի հանգուցեալ արքային Հեթմոյ, վասն խնդրոյ Յոհաննիսի քահանայի, պարգեւեցաք զժամագիրքս զայս իւր եկեղեցւոյն Սուրբ Մատթեոսի աւետարանչի, որ է ի Փերուժ քաղաք, ի յիշատակ մեր եւ նախնեացն մերոց, ի թուականութեանս Հայոց ՀՃԻՀ (1279)։

բ

Գրիչ՝ Հեթում

Յիշեսջիք եւ զիս զՀեթում նուաստ սարկաւագ, ո՛վ սուրբ ընթերցողք, եւ զեղբայրն իմ զՂուկաս քահանայ եւ զԱյշին սաբկաւագ, եւ որք յիշէքդ յիշեալ լիջիք ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն*։

403

ՃԱՌՔ ԲԱՐՍԵՂԻ ԿԵՍԱՐԱՑԻՈՅ

Երևան 5595

Գրիչ՝ Սապայի Նշեցի

գ

400ա Կատա[րեցաւ] /// ման գրոցս այսոցիկ։ Ճառք հրէսուն և մի ասացուածք սրբոյն Բար[ս]ղի եպիսկոպոսի Կեսարեայ Կապ[ադ]ո[վ]կա-

---

* Դնում ենք հետագա հիշատակարանը, գրված Փերուժում։

«Աղաչեմ յիշել ի Տէր եւ զվերջին ստացողք գրուս զսրբասնեալ զքահանայքս զՅակոբ ծերունին եւ զԲասիլ զհոգեւոր որդին իւր՝ զվերատեսուչք Տանս Փերուժի եւ սպասաւորք Սուրբ Առաքելոյն եւ աւետարանչին Մաթէոսի։

Յիշեցէք եւ զեղնազգեաց կրաւնաւորն Յրանկ՝ զկազմող եւ զնորոգող գրոցս։

Յիշեցէք եւ զգրող սակաւ յիշատակիս և զամենայն եղբայրութիւնս ի բարին Քրիստոս, եւ յիշելոցս եւ յիշողացգ առհասարակ ողորմեսցի» (էջ 258 բ)։

ցոց։ Ջմեղապարտ գրիչս Եսայի յիշել յաղաւթս աղ[աչեմ], եւ զստացօղ սորին ըզՆերսէս վարդապետ և զծնողսն։

400բ [Ջ]երջանիկ րաբունն, զուսուցիչ և զվ[ար]ժապետ[ն], զմաք[ու]ր անձն և զպայծառ հոգի, զուղղապա[տու]մ և զճ[շ]մարտախաւսն բանին կենաց, զստա[ցո]ղ գրոցս զվարդապետն Ներսէս, և ծնաւ[ղսն] իւր [և] զամենայն զարմն յիշեսջիք յաղ[աւ]թս ձեր սրտի մտաւք, որք աւգ[տ]իք ի սմանէ, Աստուած [առ] հասարակ ամենեցուն ողորմեսցի՝ յիշ[ելոց]դ և յ[իշե]ցելոցս, և նմա փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն*։

Բ

Գրիչ՝ Ներսէս վարդապետ
Վայր՝ Եղիայզարու վանք

228բ Ի ՉԻԸ (1279) գրեցաւ կանոնական սահմանադրութիւն ուղղութեանցս յուսումն խրատու կարգաւորութեան վանականաց, յարմարեալ և շարակարգեալ ի հոգիայպայծառ և ի տիեզերալոյս վարդապետէ, եւ ի մեծէ եպիսկոպոսապետէն Կեսարու Կապադոկացոյ սրբոյն Բարսղի, ի հռչակաւոր և յականաւոր սուրբ ուխտս Եղիսյզարու, ընդ հովանե[ա]ւ սրբոց առաքելոցն Պաւղոսի և Պետրոսի և Անդրէի, կ[ամ]աւք և յանձարութեամբ և մեծաւ հոգաբարձութեամբ իմոյ անպիտանութեանս՝ Ներսիսի վարդապետի, զոր ետու գրել ի խրատ ուղղութեան վարուց իմոյ անուղղա կենացս, և ամենեցուն որ պատահեն և շահեսցին ի հոգեշահ բանից սորա, և վարժեալ կրթեսցէն զանձինս դիտելով թէ որպէս արժան է կեալ ի միաբանական եղբայրանոցս ըստ այսմ եդելոյ սահմանիս, որ ի հոգոյն սրբոյ ազդեցաւ հողիացելոյն Բարսղի, զի մի ոք սխալեալ անգիտութեամբ վնասեսցէ զանձն փոխանակաւ գտելոյ։ Եւ իմոյ մեղսաշատ և յոգնասխալ և ծոյլ անձին սրտի մտաւք թողութիւն խնդրեսցէ ի Քրիստոսէ, որ քաւութիւն է յոլովապատիկ յանցմանն մերոյ։ Զի վասն այսպիսի յուսոյ ձեռնամուխ եղաք ի սա, եւ ակն ունիմք ի ձեռն սորա թողութիւն մեղաց գտանել հանդերձ ծնաւղաւք, եղբարբք և քերբք և ամենայն մերձաւորաւք հաւատոյ և արեան, ասելով. Ջերանի որում թողութիւն բարի յիշատակաւն Քրիստոսի։ Եւ կատարողքդ այսմ հայցուածի բարոյ մասին արժանաշիք ի Քրիստոսէ Յիսուսէ ի Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Գ

Գրիչ՝ Ստեփանոս

107բ Սկիզբն ողորմութեամբ Տեառն արարի
Եւ կամաւ նորին կատարեցի,
Զյոգնախումբ և զկորովիմաստս սրբոյն Բարսղի:
Զոր խաւսեցաւ յասդման հոգոյն հանճարեղաց, որ չծուլանան
Վասն րոպէից քառորդ տարեաց, որք տարրացան,

* Անմիջապես հաջորդում է կարմիր վարժ բոլորգրով գրված հետևյալ հիշատակագրությունը. «Աստուած աւգնէ վարդապետին Ես[այեայ], որ զգիրքս հրամեաց, որ կարդցաք և ոչ առնենք»։

Սիրելիք և հակառակք որք միացան։
Եւ որք ժամուց մերոց ունողք չինքեանս որք ընթանան,
Եւ եւթնեակ մոլորակաց որք կարգեցան,
Եւ վերինք, որ անմոլարք ղարդ կառուցան,
Կենդանիք երկոտասանք անուանեցան։
Այլև բոլոր սեռից տեսակ, որք գոյացան,
Բացի մարդոյն, որ աւր մահուն եղև խափան։
Ի սրբոյն խրատ բարի վերծանուցան
Վասն արարչին, որք փառս տան միշտ անվախճան
Հր և Ներս[էս] հռետոր կորովաբան,
Յիսուսական տեսարանացն խոհեմ տեսաւղ անվրիպական,
Ետ ինձ գրել վասն մանկանց նոր Սի[ոն]ի, որ հմտանան,
Եւ վասն իւր հոգւոյն և իւրոցն, որ չիշէք միշտ յամեն ժամ
ընթերցման,
Զվարդապետ Ներսէս և որ իւրքն են ամենայն
Եւ ընդ [ն]մին զաղկաղկ գրիչ Ստեփաե,
Թափուր յամենայն բարի գործոց լրման,
Եւ զեղբայրն իմ և ծնաւ[ղս]ն /// քէն ամենայն,
Եւ Տէր հատուսցէ ձեզ փոխարեն յայսմ յամենայն։

404

ԺՈՂՈՎԱԾՈ

Երևան 579

Գրիչ՝ Ներսէս

ա

290բ Փառք համագոյ երրորդութեան,
Որ է գով///
Աւուր վերջումըն զաւրութեամբ
[Ու]նի աթոռ իւր հրամանաւ դատողական,
Ի նմայ բազմի Քրիստոս ահեղ լուսոյ նման,
Փողն գոչեա առհասարակ գաբրիէլեան,
Յառնեն մեռեալք փութանակի ի դատաստան,
Ի յայնմ ահեղ հրապարակին [ը]նկեալ և զմեզ յաջայկոդմեան,
Եւ զննջեցեալս իմ զամենայն
Խառնեալ ի դասս արդարութեան։
Եւ նորոգէս սուրբ քահանայ, որ ետ գրել ինձ զայս բան,
Զոր տէր Ներսէս է յարմարել ի իւր վաղչանն,
Տուր վայելել նմայ ըզսայ քոյով ողորմութեան,
Որ ես աւրհնեալ յարարածոց Տէր յաւիտեան։

Արդ, գրեցաւ ձեռամբ Ներսիսի անարժան և մեղապարտ սարկաւագի
201ա ||ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին՝ [ծն]աւղին Տեառն, և Սրբոյն Սարդսի զաւրավարի և Սրբոյն Ստեփաննոսի նախավկային, ի վայե-

լումն սուրբ և պատուական քահանային Նուռզիսին, ի թվիս Հայոց ՋԻՐ (1279) յունիսի Ա (1), և Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս, ամէն։

բ

Ո՛վ եղբայրք ո[րք կարդայ]ք կամ ինչ ընդաւրինակէք, զմեղայ-պարտ գծողս յիշես[չիք ի Քրիստոս] և զծնողս իմ զՅոհաննէ չուխակարն, և զեղբայրն իմ զՊարոնշա[ն ընդ]նմին և զքեռն իմ զՊարգև աբեղայն, և զեղբայր նորայ զՆուեր նաւտարն, և զայլ նախնիսն իմ, և որ յիշէ յիշեալ եղից[ի] առաշի ահեղ ատենին Աստուծոյ։ Եւ ախմարութեան գրոյս մի մեղադրէք, զի տկարացայ, և Յիսուս ողորմեսցի յամենայն ննջեցեալոց, ծանաւթից և անծանաւթից*։

405

ՏՕՆԱՑՈՅՑ ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Երուսաղեմ, 1692, Պողարյան, Յուցակ Ե, էջ 560—561

Գրիչ՝ Յոհաննէս
Վայր՝ Սիս

219 Փառք Յիսուսի փրկչին իմոյ, որ զաւրացոյց զիս ի լրումն ածել զտետր եւ զառաշաբանս, ի լաւ եւ յընտիր աւրինակէ։

Եւ արդ, գրեցաւ սայ ձեռամբ մեղապարտի եւ անպաշաւի Յոհաննիսի, ի խնդրոյ եղբաւր մերոյ Մաւաիրոսի վանական քահանայի, ի թուականիս Հայոց ՋՃԻՐ (1279), ի հայրապետութեանն տեառն Յակովբայ, եւ ի թագաւորութեանն Հայ[ոց] Լեւոնի։

Արդ, աղաչեմ զամենեսեան, յիշելոյ արժանի արարէք զաշխատողս եւ զստացողս, զի եւ դուք յիշեսջիք ի Տեառնէ մերմէ, որ է աւրհնեալ յաւիտեանս։

Գրեցաւ սա ի մայրաքաղաքս Սիս, ընդ հովանեաւ Սրբոց Հրեշտակապետացն։

406

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Էջմիածին 476

ա

43բ Զաստուածապատիւ և զառաքելաշնորհ զսրբազան հայրապետս մեր զտէր Յովաննէս** պահեսցէ Քրիստոս Աստուած երկար ժամանակաւ հո-

---

* Թերթերը սխալ են դրել կազմելիս, և հիշատակարանը կիսվել է։ Բ հիշատակարանը գրված է ավելի մանր տառերով։

** Ջնջված է «Գրիգոր» (Անավարզեցի) անունը, որն այն ժամանակ կաթողիկոս էր Հայոց, և գրված է ջնջողի ժամանակակից կաթողիկոսի անունը։ Անավարզեցուց հետո եկած կաթողիկոսների մեջ Հովհաննես անունով վեց կաթողիկոս միայն Կիլիկիայում է եղել։

վուել զբանատր հաւ<ա>տս Քրիստոսի, և յանվախճան յաւիտեանս աթոռակից արասցէ զսա Քրիստոս Աստուած լուսաւորչին մերոյ Գրիգորի, ամմէն։

ը

101բ Զաստուածապատուեալ այրն առաքելական՝ զտուրբ հեղինակն Հայաստանեայց, ստացող ոգիակեցոյց տառիս Գրիգոր եպիսկոպոսն և ծնողսն իւր յիշեսիք ի Քրիստոս, ո՛վ աստուածարեալք։

Ի թու[իս] ՉԻՀ (1279)

407

ՋԵՐՄԱՆՑ ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ ՄԽԻԹԱՐԱՅ ՀԵՐԱՑԻՈՅ

Երևան 416

Գրիչ՝ Կոստանդին

119ա Փառք Սուրբ Երրորդութեանն յաւիտենից յաւիտեանս, ամէն։ Ի յեւթնհարիւրերորդի քսաներորդի ութերորդի (1279) թուականի Հայոց գրեցաւ գիրքս այս, որ է Ջերմանց բժշկարան, հրամանաւ աստուածազարդեալ եպիսկոպոսին Սիմէոնի, ի վայելումն անձին իւր, և ի պէտս եղբայրական միաբանեալ անձանց, եւ յետ ելից իւր յիշատակ հոգւոյ։ Եւ գրեցաւ սա ձեռամբ մեղապարտ ծառայի Աստուծոյ Կոստանդեայ, եւ կատարեցաւ սա ի թու. ՉԻՀ (1279), յամսեան աւգաւստոս, որ աւր Թ (9) է։

Արդ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմայ, թողութիւն մեղաց հայցեցէք յԱստուծոյ՝ մեզ և ծնողաց մերոց և զարմից, և Աստուած յ[ի]շողացդ և յիշեցելոցս ողորմեսցի, որում փառք յաւիտեանս։

Գրեցաւ հաստատութեամբ ի կամս Աստուծոյ։

408

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6273, Փիրղալեմյան, նշխարք էջ 76—77

Գրիչ՝ Շմաւօն
Վայր՝ Մաշկատ

Փառք եռանձնեայ տերութեան։ Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի... զլուսատր, զմաքրափայլ Աւետարանս, ի Փոսաճահանգ գաւառս Կիլիկեցւոյ, ի կաթողիկոսանիստ միաբանիս, ի վանս Մաշկատ կոչեցեալ, մերձ առ գերամաքուր սուրբ ուխտ[ս] որ Դրազարկ յորջորջի, ի հայրապետութեան տեառն Յակոբայ, և ի թագաւորութեան Լեւոնի, ի թուականութեանս Հայկազեանս ՉԻՀ (1279)։

Ես մեղուցեալ անձն Շմաւօն գրեցի զսա բազում փափագանօք, տաժանակիրտն երկօք, և ըստ կարի իմում զարդարեցի ոսկով և արծաթով իւրո պատրոն Վաղտանգին, ի փառս Քրիստոսի Աստուծոյ աւրհնելոյ յիմոց։

409

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 5669

Գրիչ՝ Վարդա՞

206բ Շնորհիւն Աստուծոյ աւարտագծեցաւ եղեմարուխ, աստուածային և անմահական աղբիւրս Մաթեոսեան Աւետարանս, ի թվի ՉԻՐ (1279), յամսեանս արեգ ԻԸ (29), հրամանաւ բարիարմատ և քաղցրամիտ պատրոնին [Վաղ]տանկա* որդո աստուածասէր մեծ պատրոնին Օմեկին-*,
207ա և թոռին իշխանաց իշխանին Զ||ալալին***, ի վաելումն և ի պահպանութիւն անձին իւրո, և ի խրատ և ի վարժումն մանկական տիոց իւրոց, որո տացէ Տէր Աստուած կեանք խաղաղական և պարագայց ամք երկարեալ յայսմ աշխարհի, մինչև ի խորին ծերութիւն, աններհակի փորձո-
207բ ղէն աւրըստաւրէ յառ||աջացեալ ի մեծութենէ ի մեծութիւն, ի փառաց ի փառս, ի պատու ի պատիւ, ի պարծանս քրիստոնէից, և զամենաւրհնեալ սուրբ ծնողն իւր զպատրոն Զուլուխաթունն**** պահեսցէ անսասանելի
208ա կենաւք անբիծ և անարատ, և խաղաղական ժամանակաւք վաելել զ||աստիս, տեսանելով զորդիս որդոց աստուածասէր և քաղցրաշառավեղէն իւրո պատրոն Վաղտանգին, ի փառս Քրիստոսի Աստուծոյ՝ աւրհնելոյ յաւիտեանս։

Եւ զգծողս զՎարդան յիշման արժանի արարէք*****։

410

ԱԻԵՏԱՐԱՆ

Տեր-Մովսէսյան, Համահավաք ցուցակ, Աւետարանք, էջ 251

Գրիչ՝ Խաչատուր

Ի ՉԻՐ (1279) թուին Հայոց... եա Պետրոս տառապեալ եւ յոգնամեղ կարգաւոր. տարփող եղեալ ստացայ զսա... ընդ նմին եւ զծնողսն իմ Ստեփանոս քահանայն... եւ զԽաչատուր գրիչս յիշեցէք։

---

* Առաջին տառերը քերված են, նորից գրված։

** Քերված և հետագայում վերականգնված է։

*** Քերված է անունը և վերականգնված։

**** Անունը քերված է և լուսանցքում այլ գրով ավելացված «Զուլուխաթունն»։

***** Փոքրագիր (8×6), մագաղաթյա, հին բոլորագրով, միասյուն գրութեամբ Աւետարան է, սկզբում Մաթէոսի խոնարհած նկարով. պարունակում է միայն Մաթեոսի Աւետարանը։

411

ՏԱԻՆԱՊԱՏՃԱՌ

Երեան 5197

Ստացող՝ **Սարգիս**
Վայր՝ **[Դեզձուտի վանք]***

211ա Փառք Հաւր և Որդո և Հո[գո]յն Սրբո եռանձնեա տէրութեն ան-
տար[որ]ոշ աստուածութեն, անբարժանելի բնութեն ի մասանց արա-
րածոցս և յամենայն եղելոցս, ի ծայրածաւալ լուսոյն Հօր ծագումն
անճառելի և բանն անքննելի, իսկութիւնն անհետազատելի և մշտաբուխ
հոգին անսպառելի, ելեալն ի Հօրէ և երևելն յՈրդո, որք միակամ կամօք
և արարչական զօրութեամբ, և միաբուն բնութեամբ ոչ միայն վայելեալ
ի բարիսն իւրեանց անեզրական, այլ շարժեալ բարերար կամօքն յան-
դորից գոացոյց, և յանէից էացոյց զբնաւ մասունս արարածոցս։ Ի սկիզբն
ամենայնի զերկինս վերին, զոր և եթեր անուանեցին, և զերկիր ի խոնարհ
գոլով, և զմիջնատարերքս ի սոցանէ և ի չորից նիւթոց՝ ի հողո և ի ջրո,
յօդո և ի հրո, արար զամենայն կարգօ, որպէս ցուցանեն աստուածաշունչ
քնարք հոգոյն։ Իսկ ի բանական բնութիւնս նախ յառաջ իմանալոյ զհրեշ-
տակ զօրութիւնս անթիւ բազմութիւնն, որք եւ աննիւթք և անմարմինք, որ
ասի հողմ անվայրապակ, լոյս թափանցիկ և հուր անկիզանող, վաելողք
վերին արփոյն, մերձ առ դուրս անմահ թագաւորքն կարգեալ իննեակ դաս
ըստ սահմանին կացեալ մնացեալ յիւրեանց տեղիսն, թեպետ և մին շե-
ղեալ հպարտութեամբ և ընկեալ ի փառացն, զոր այլքն ունին։

Իսկ զերկրորդս բանական,
Դրախտին արար վաելչական,
Պատուեր երետ հայրական
Թէ կացէք ի յիմ հրաման
Եւ վայելեցէք անվախճան։
Նոքա զբանիւն այնու անցան,
Եւ անբանից նմանեցան,
Երկիր մահու պարտօրեցան
Անասնաբար աճումն ընկալան

---

* Տե՛ս հաջորդ Հիշատակարանը (ձեռ. 5354), որտեղից իմանում ենք, որ ևս վարդապետի դպրոցը Դեղ՝ուտի վանքում էր, ուր սովո՛ում էր նաև ստացող Սարգիսը։

Եւ բազում ժամանակս մոլորեցան,
Եւ զարարիչն մոռացան,
Հինգ հազար իննսուն ինն ամ թիւրեցան,
Ապա գթութեանց անդունդ բացան,
Եւ ողորմութեան լոյս ծագեցան,
Լոյսն իջեալ այն Հայրական
Զկոյսն արար իւր բնակարան,
Մարմին եառ ադամական,
211բ Աշակերտք ընտրեց երկոտասան,
Տիեզերաց քարոզք եղան
Եւ հօատո վէմ կոչեցան,
Սուրբ հոգով նոքա լցան
Եւ բազմաց պատճառք եղան,

Եւ լցուցին յիմաստայեղց գիտութեամբն լինել շահ եկեղեցոյ և պայծառութիւն ուղղափառութեանս, առնել յայտնի զբան կանոնաց և սահմանաց ի ձեռն գրոց և բանից ի լոյս, որ և զայս գիրք Տօնապատճառ հօաքեց ի բազմաց ի մի և ետուն մանկանց Սիոնի ի լոյսաւորութիւն հօատոց և ի պարծանս ուղղափառութեան։

211բ. Վասն որո և ես՝ կրտեր և յետին սպասօորս բանին Սարգիս, ըղձացեալ այս մատենի, և անձնատատան աշխատութեամբ և քրտնաջան ջանիւք և բազում տառապանօք դժ[ո]ւար ի գիւտ գրչաց, եւու գծագրեալ զսա ի նեղ և ի դառն ժամանակիս, որ վասն ծուլացեալ մեղաց մերոց տիրել ունէին աղդն Նետողաց, ձիակթաց կաթնակերաց, և սրփռեալ էին ամենայն ուրեք՝ արկեալ հարկապահանջութիւն ի վերայ ամենեցուն առհասարակ, առօել քան զկար։ Եւ Ապաղանն ունէր զբռնակալութիւն և արհօիրք էին ամենայն ուստեք, և ելն աղետիս Աստուծոյ է գիտելի։

Արդ ես Սարգիս յորժամ էի դեգերել առ ոտս կենդանի վիմիս Առաքել վարդապետի, ի գօառիս Մահկանաբերդո, ի պարոնութեան աթապակ Սադունիի, ետու գրել զգիրքս զայս այլևայլ գրչաց, զի օրինակ չգտանէի. զկարգ ասացուածոցն՝ յիմ սնեալ միայնարանին, ի Գեաիկ, ի թվին Հայոց ՉԻԳ (1274) և զՊատճառն տօնից ի Թառակիճն, ձեռամբ կուսակրօն Գրիգոր քահանայի, թվին ՉԻԹ (1280)*, որ և նմա և ծնողաց իւր ողորմեսցի Տէր Յիսուսի։

Եւ ես Սարգիս երեսս անկեալ աղաչեմ զպատահելսդ, յիշեսցիք սրտի մտօք զիս և զաղգականսն իմ՝ զաստուածահաճո զհայրն իմ զփոխեցեալն առ Քրիստոս զԱլեքսիոս, և զբարեաց յիշատակաց արժանի զմայրն իմ զԳոճար, զհամշիրակ հարազատսն իմ՝ զԱճառոն և զԳաո-
212ա նիկն, և զփոխեցեալն ի Քրիստոս Մխիթարիչն,‖ և զծնողագութ հարսն իմ զԹամթիխաթուն, որ յօտարութեան գոլով մեր ի ժամ աշակերտութեան, բազում մխիթար եղև և ձեռնտու մեզ, եւ զայս գիրք ետ գրել ի վայելումն ան<ն>ձին իմո, և յիշատակ իւր, և բարէգութ մաւր իւրո,

* Թվականը գրված է լուսանցքում։

փոխեցելո առ Քրիստոս՝ տիկին Շամերին, որ և նմա ողորմեսցի Քրիստոս ի յաւուրն աներեկի, և յաջմէ դասեսցէ, յարքայութիւն հանգուսցէ, եւ զաւակաց իւրոց Յակոբո և Մխիթարշին տացէ Քրիստոս երկար կենդանութիւն՝ լինել յիշատակ ծնողաց իւրեանց, ամէն։ Եւ զմիւս հարսն Թութմամ՝ իւրովք զաւակաւքն Գրիգորիւ և Ալեճսիոսիւ, պահեսցէ Աստուած մեր։

Յիշեսջիք զհայրն մեր հոգևոր և սնուցող զ[յ]ոքնահանճար ծերունին զԳաւիթ, և զիս սուտանուն Սարգիս վարդապետ յիշման, և Աստուած ողորմէի արժանացուց, և ձրի տուք, զի և դուք առնուցուք ի նմանէ, որ անսուտն խոստացաւ։

Գրեց[աւ] Տանապատճառս ի թվին ՉԻԹ (1280) և կազմեցաւ յաւուր վճարման, մարերի ԻԸ (28)ն և Հոռ[ոմոց] Նոեմբեր Դ (4)ն՝ յաշնան եղանակիս, որ ահագին շարժ եղև ի մէջ գիշերիս, ի մի շաբաթն Բ (2) դիր։ Զոր Տէր խնամեսցէ զսասանեալքս, զահաբեկեալքս, և Տէր Յիսուս արհնեալ, որ ժողովեաց ի մի տեղի զցրուած թխթ<տ>երս, և նմա փառք յարարածոցս, ամէն*։

Բ

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Թառական

10ա Բարեխաւսութեամբ սոցա Քրիստոս ողորմեսցի Ալեճսիոսին և իւր որդեացն Սարգսի և Հարոնին և Գառնկանն, երկար կենդանութիւն տացէ ստացողի գրոցս, ամէն։

Գ

149ա Ո ոք ագտեսցի ի սմանէ, յիշեսցէ զստաց[ող] սորա զՍարգիս և զանարժան գծողս զԳրիգոր:

Դ

169ա ԶԳրիգորի գծողի մեղապարտի և Սարգսի սուրբ քահանայի և ծնողաց ողորմեսցի Քրիստոս։

Ե

Այլ գրիչ

156ա Զլաւագոյն սպասաւոր բանի Սարգիս և ստացող մատենիս**։

---

* Անմիջապես այլ գրով հետևում է «Ի ևթնհարիւր ծԸ (1309) թուին փոխեցաւ ի Քրիստոս վարդապետն Սարգիս, յիշատակն արհնութեամբ» (Տասնավորը գրված է եղել «ծ», ապա դարձրել են «ժ»)։

** ԻԴ պրակի գրիչն է։

412

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 1097

Գրիչ՝ Լուսեր
Վայր՝ [Նղիազարու վանք]

ա

145ա Շնորհաւք և ողորմութեամբն Աստուծոյ, կատարեցի զտառս աստուածաշունչ, ես փցուն և ապիկար գրող Լուսեր, ի վայելումն սուրբ և ամենագով վարդապետին Ներսէսի: Աղաչեմ զդասս լուսերամից յիշել բազմամեղ գրողի <ի>կս և ժառանկորդ գրիս զհետոր զվարդապետն, և Աստուած յիշոզացա ողորմեսցի։
Ի թուիս Հայոց ՋԻԹ (1280) գրեցաւ։

բ

Սրբագրող՝ Եսայի [Նշեցի]

6բ Ջպատահեալսդ այսմ մատենի, աղաչեմ յիշել յաղաւթս զստացաւզ սորին զմեծ հռետորն Ներսէս, նոյնպէս և զնուաստ ոգիս Եսայի՝ հետևող և աշակերտ սուրբ առնն Աստուծոյ Ներսէսի վարդապետի։

գ

320բ Ջսակաւ աշխատողս յիշեա ի Տէր, աղաչեմ**։

դ

Կազմող՝ Գրիգոր

315ա Ո՛վ երամք սղաւնեաց, ընթերցողք սրբոյ տառիս, յիշեսջիք զկազմողս զԳրիգոր:

413

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4096

Գրիչ՝ Պօղոս
Վայր՝ Վանդիր անապատ

Փառք ամենասուրբ Երրորդութեանն և մի աստուածութեան, և Հայր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

---

* Անմիջապես հետո երկու տողով՝ մանր գրութեամբ գրված է. «Աստուած ողորմի Ներսէս վարժապետին և ինձ Թովմա վարդապետիս, որ զանարուեստ գիրս յաւարտ ածի. Քրիստոս Աստուած այն աշակերտին ողորմեսցի, որ սակաւ ինքն ընդ մեզ տանջի, ամէն»։ Գրողը Թովմա Մեծոփեցին է, ինչպես թուլլ է տալիս կարծելու գրչությունը։ Նույն գրչությամբ 107բ էջի տողերին լուսանցքում կարդում ենք. «Աւաղ և եղուկ է անգէտ գրագրին։ Աւրհնած հոգի, ի՞նչ կառնես. գիտեմ բանական ես. զգիրս տողել ես և մէկ ի մէկ չինչ ես կցելւ»։

** 315ա էջից Եսայի Նշեցին գրել է «Ի Դատաւորաց մեկնութենէն» մի հատված և վերջում թողել սույն հիշատակագրությունը։ Տեղը նշանակում ենք նշ։ազարու կամ Առաքե։ոց վանքը,

Ջանհատահոս բղխումն .ամենառատ իջման կենեղուտ շնորհին, որ առ մերս բնութիւն անհասական իմանի ի բանականացս սեռից, մանաւանդ
333ա զներկայիս առատ[ած]աւալ փափագումն, որ///*ութիւն մանգանց առաքեաստի եւ արդ եղև զրաւ սորա ի թվականութեանս Հայոց եւթնհարիւրիններորդի քսաներորդ իններորդի (1280), ի հայրապետութեան տեառն Յակովբայ և ի թագաւորութեանն Հայոց Լեոնի, ի նահանգիս Կիլիկեցւոց, ընդ հովանեաւ ամենազաւր աջոյն Յիսուսի, և սուրբ խորանիս Սուրբ Սիովնի, և կենսապարգև Սրբոյ Նշանիս, ի դառն և ի դժնեայ ժամանակիս, զի ըստ նախապատում առաջին սուրբ հարցն, զոր առ Երեմիայիւ տեսանիւր, զի երբարձ Տէր զհաճոյացեալսն իւր յաշխարհէ վասն անչափ ծովացեալ մեղաց մերոց, սկիզբն ի սրբութիւնսն իւր արարեալ մատնեաց ի հուր և ի սուր, և ներելով անարժանիցս և հառաչել չնախագործեալ յանցանս մեր, որ և ոչ այսու զգաստանամք, այլ թմբրեալք ի յա-
333բ մսութս [յա]ւելումն չարեաց մերոց առնելով ի նոյն ծնկեալ գտանիմք։ Այլ վայ է ինձ, եղուկ եմ ես, զի և ոչ զմի ոք ի սդաստութեան տեսանեմք, այլ միահաղոյն չապականութիւն վարեալք յոտից մինչև ցգլուխ, որ և զառհասատչեայ անտի տանջանացն աստէն ընդունիմք յարդարապէս չափաւղէն և յանբարկանալի աստուածութենէն։

Եւ արդ, աղաչեմք զամենեսեան, ո՛վ լուսակիր երամացեալ [դ]ասք քահանայից, յիշեսջիք մաքուր աղաւթիւք զգերապատուեալ արքեպիսկոպոս զտէր Տիրատուր, և զաստուածապատուեալ սուրբ եպիսկոպոս զտէր Բարթուղիմէոս, և զստացաւղ սուրբ Աւետարանիս զսրուվբեանման եպիսկոպոս զտէր Դաւիթ, և զաստուածազարդ քահանա զՊետրոս սրբազան,
334ա երկնամուտ||նորատուր մանկունս Նորոյ Սիովնի, վասն զի արհամարհանս առնել տայ աղցատր վայելից ի տարատրոհ կայանիս և միայնոյ այնմ փափագել, որ միշտ և հանապազ զկա ունի ընդ Աստուծոյ, և ոչ ական հատանի ի վնասակար գողոց, որով այսմ բաղձանաւք լիապէս լցեալ ամենիմաստ և ամենայն խոհեմութեամբ զարդարեալ սուրբ և երանաշնորհ եպիսկոպոսն տէր Դաւիթ, ի խնդիր ելեալ իբր զիմաստուն վաճառական ի գիւտ պատուական մարգարտի, ոչ ի յանձին փարթամութիւն, այլ խրախացեալ ի յԱստուած, որ տայ սերմն սերմանողի, և լնու զբաղձանս ճշմարտիցն ցանկացողաց, ունելով և ապաստան յուսոյ զաստուածապատուեալ սուրբ և առաքելանման արքեպիսկոպոս զտէր Տիրա-
334բ տուր զպարագրեալն ի գլուխս լրման սուրբ և||երկնանման անապատին Արքայկաղնոյն։

Իսկ ըստ նախախնամութեան ամենասուրբ հոգւոյն հանդիպել իմոյ մեղաւորիս և անարհեստ գրչիս Պաւղոսի, շարադրելով իմ զաստուածային պարգեւս զայս զքառավտակ աղբիւրս և զչորեքծագեան արեգակունս՝ յաշխատութենէ մատին իմոյ, ըստ սրտիւ իմոյ կապակցեալ, և յեռանդնահոս փափագմանէ նախադրեալ տեառն Դաւթայ, հարկեալ իմ ի շքե-

---

որովհետև Ներսես Մշեցին՝ (իր դպրոցով) և նաայի աշակերտը այդ թվականին այնտեղ էին և հաջորդ տարվա կեսերին միայն թողեցին այդ վանքը։

* Թերթ է ընկած։

ղաշուք հրամանէ նորին, եւտու զօա ի ձեռն նորա, ի վայելումն անձին իւրոյ և ի յիշատակ հոգւոյ իւրոյ, և առ ի Քրիստոս հանգուցեալ նախնեաց նորին, զի անփոխանորդելի հաստատեսցի ի տրապիզիտս գահաւորակի լրապէս լուսարանի մաւր մերոյ Սիովնի, սուրբ և գերագրական անապատին Վանդիր, ի խրախ կոչեցեալ։

414

ԺՈՂՈՎԱԾՈ

Երևան 1418

Ստացող՝ Մովսէս
Վայր՝ Խորին անապատ

ա

126բ Եւ ես՝ վերջացեալս յամենայն բարեաց Մովսէս սուտանուն կրաւնաւոր, որ փափագանաւք ստացայ զսա ի վայելումն անձին և ի յիշատակ ինձ և ծընողաց իմոց, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա ընթեռնելով կամ լսելով կամ աւրինակ առնելով, յիշման արժանի արարէք զմեզ միով Տէր ողորմայիւ, նաև զԲասիլ քահանա՝ զգծատւ սորին, և զՊաւղոս փակակալ, որ զաւրինակն ետ, և զսիրելի եղբայրն իմ զՍտեփաննոս, այղ և զԱլէքսիանոս և զհարազատն իւր յիշեսջիք, որ աւգնական եղև մեզ, և որ առատն է ի տուրս պարգևաց՝ ձեզ յիշողացդ և մեզ յիշելեացս ողորմեսցի։

Եւ արդ գրեցաւ սա
Ի թուաբերութեան Հայոց ազգի,
Քառասուներորդ [ըմ]դքտիոնի
Եւ յութեկի իննեակ թվի (1280)*։
Ի գաւառիս Կիլիկէի վտառշուերի,
Հուպ յանապատս հռչակելի,
Որոյ Խորին անուն կոչի,
Ի դառնութեան ժամանակի,
Միշտ նեղելով Իսմայելի,
Որ զսովաւ շրջապատի։
Այղ և ազգին միշտ նեստողի,
Ակնկալեալ թե հասանի
Բազմաթշուառն և կատաղի,
Որ կաշառաւք յոլով պատրի,
Ցառաջնորդացն Իսմաէլի
Խափան լինի։
Այղ և մեղաց մերոց չարի
Գոլով արգել յամենայնի,

* Հայց թիվը (551)+48 ընդհքտիոն (48+15=720)+իննեակ (9)=1280։ Այս նույն թվականին է Մովսեսը գրել նաև ձեռագրի երրորդ նյութը՝ «Ծեւագրեա նշանակ յեզեկիելի» (էջ 222ա 319բ, տես հաջորդ հիշատակարանը)։ Երկրորդ նյութը տե՛ս 1286 թվականի տակ։

Ի գլխոյն սկսեալ լինի
Եւ յարքայէն մերոյս ազգի։
127ա Պատահեալ անձն իմ եղ||կելի
Նմա յաւուրս տէրունի,
Յայլակերպման աւուրն մեծի
Զանհաստատ վարս նորա տեսի
Եվ անդ վայր մի ես ողբացի,
Զի որ նմա հոգք պիտանի,
Անփոյթ առնէր յամենայնի,
Եւ որ չէր նմա յարգի,
Միշտ յայն փութայր, զի հպեսցի,
Եկեղեցի հրկէզ լինի,
Եվ քրիստոնեայ գերի վարի՝
Նմա ոչ ցաւ ոչ հոգ լինի,
Ոչ ի փրկելն փոյթ ունի։
Աղքատաց անգութ լինի,
Վտանգելոց ոչ ողորմի,
Շահավաճառ յաւէտ լինի,
Եւ ընդ այլոյ բարիս՝ չարի,
Է զոր աշաւք իմաւք տեսի
Եւ զոր ունկամբ ես լսեցի։
Այղ հայրապետըն թէ յիշի,
Որ է յաթոռ հաւրն մեծի,
Ամաչեմ յամենայնի
Եւ պառակտեմ թէ պատմեցի.
Վարանիմ երկուց միջի,
Տարակուսիմ յելըս բանի։
Իմ է նորայն թէ պատմեցի,
Զի դլխովն անձըն պարսաւի,
Եւ բամբասանք թէ աստ յիշի՝
Դարձեալ անձին իմոյ լինի։
Երանի թէ լռէի
Եւ ի բազմացն ոչ պատմէի,
Այղ փութացեալ բանս լինի,
Եւ յաւժարի զի ասասցի։
Զի հայրապետն, որ յիշեցի,
Անփոյթ առնէ զեկեղեցի,
Հաւատոյ խնամ չտանի,
Ո՛չ, չար կարգաց թէ խլել պիտի,
Գայթագղութեան պատճառ լինի։
Զթագաւորին կամս հաճի,
Յանդիմանել բնաւ չյաւժարի,
Զի ի փառաց մի ղրկեսցի,
Սուտակասպասք գոլ արքայի,

Եւ հացկատակք յամենայնի։
127բ Առաջնորդ և վարդապետ՝
Թագաւորին կամաւք վարի,
Յանդիմանել ոք չյաւժարի,
Եւ ոչ ի յեչս բանի հայի;
Եւ նա նոցին հետևեսցի,
Որ կարծեցեալ սիւնըն կոչի,
Հայրապետական գահիւ պատուի,
Եւ այլ հոգոց բնաւ փոյթ չտանի;
Եւ որ իւրն են ընտանի,
Լիրբք և լկտիք յամենայն[իւ]։
Ի բազմաց սուղ զոր յիշեցի,
Փոքր ի վեհիցն աստ գրեցի,
Բանիս ընթացըս կրնքեսցի,
Եւ լռութեամբ եզր կալցի,
Զի մի յանբաւս յառաչի
Կամ սասկագինըն յիշեսցի,
Այլ զոր աստ դրեալ լինի,
Զկնի եկելոցըդ խրատ լինի;
Զի թէ չեաք մեք արժանի
Զեաք հանդիպեալ այսմ արքայի,
Ոչ փառամոլ առաջնորդի,
Կամ հացկատակ վարդապետի;
Այլ ըստ գործոց մերոց չարի,
Զհանդիպեցաք արանց բարի,
Այլ դուք որք կաք ըզմեր կնի,
Կացէք ըզգոյշ ձերում գործի,
Զի ձեզ լինի արքայ բարի,
Եւ հայրապետ մաքուր ոգի;
Տացէ ձեզ Տէր միտս բարի,
Վարել զընթացս ըստ աւրինի,
Յիշման առնել զմեզ արժանի
Միշտ ասելով Տէր ողորմի։
Այլ և զաղէտս իմոյ անձնի,
Պատմեմ ձերումդ հրամանի,
Զի հոգւովս եմ եղկելի,
Մարմինս ցաւաւք միշտ վարակի։
Փափագեմ ամէն տառի,
Աղքատութիւնս ոչ հասանի.
128ա Վերծանութեան||հետևեի՝
Նա գրչութեան սէրն ստիպի,
Քանքար չգոյր, զի վարձէի,
Մատամբս քանի՞ ես գրեի;
Ընթերցման հոգըն աւելի,

Որ դեգերումն առնէ մտի,
Ջժամանակս իմ անբարի
Զայս տարակոյս ես ծախեցի.
Էր զոր անձամբ ես գրէի,
Էր զոր այլոց գրել տայի։
Յայս միջոցի անձն իմ կոծի.
Եվ վարանի յամենայնի.
Թէ զինչ աւգուտ ինձ յայս ջանի,
Թէ ընթեռնուլ ինձ ոչ լինի։
Մի յոյս միայն գերոյս Թոզի.
Թէ եկելոյ վայել լինի,
Չի թէ այս ոչ գոյր առաջի՝
Կարծեմ սակաւ գոյր գիր յերկրի,
Որպէս և ես վարանէի.
Աւա՛ղ թէ ընդվայր ջանս իմ լինի։
Եւ ամենայն որ զայս խորհի,
Սակաւ տանի հոգ այս գործի;
Այլ ըստ յուսոյն, որ կայ առաջի,
Միշտ յաւժարեալ գիրս ոք ստացի,
Չի տէրունի բանն լցցի.
Այլոց վաստակ այլում լինի։
Եւ արդ, ի յայս յոյսըս յէցեալ
Անձն իմ գերի և եղկելի,
Իւրաքանչիւր ոք վարձ կալցի.
Ըստ հաւատոյ իւր և յուսի..
Թողի զտառս ցանկալի,
Չկնի Եկեղոցդ վայելս բարի,
Ով աւգտեսցի յիշել պարտի,
Չտառապեալս այրի հոգի,
Ծնողաց իմոց և այլ զարմի,
Վերաձայնել տէր ողորմի.
Եւ մարդասէրն յամենայնի
Առհասարակ ողորմեսցի,
Որ է աւրհնեալ այժմուս ժամի
Եւ յապագայն աներեկի,
Ամէն, ամէն և եղիցի։

Բ

319բ Աւրհնեալ Սուրբ Երրորդութիւնն անբաժանելի յամենայն արարածոց, ամէն։ Թվ[ին] ՉԻԲ (1280)։

Ով գանձ աստուածային
Սէր իմ ի քեզ բորբոքեցին,
Որպէս փեսայ, որ առ հարսին,
Իմս առաւել քան ըզնոցին;

Ստացայ ըզքեզ և ցնծացայ՝
Աւշ թէ գործով ընդ քեզ միացայ,
Ապա թէ այն ոչ լինէ նա՝
Կարծեմ ընդ վայր աշխատեցայ։
Կաց դու ընդ իս ի յարակայ,
Զի ես ի սէր քո կապեցայ,
Մի թէ լինի ինձ յապագայ,
Հանգչել ընդ քեզ, որպէս փեսայ,
Ի գալստեան բանին անմահ
Քրիստոս քէն և ի յիս գթա,
Որ մեզ ասէ Տէր ողորմեա,
Ստուգիւ և նա մասն ունեննայ;
Փառք փրկչին, ամէն։

Գ

320ա Մեծապատիւ սուրբ հայրն ընտերալ՝
Եւագրիոս անուն կոչեալ,
Սա ի Յունաց ազգէն ծնեալ
Իմաստական բանիւ վարժեալ։
Որ ի սրբոյն Բասիլէ խրատեալ
Յեկեղեցի նորին սընեալ,
Զկնի մահու նորին տրտմեալ
Եւ առ Գրիգոր փութով դիմեալ։
Վասն սիրոյն, զոր էր ստացեալ
Առ պատուիրանս աստուածարեալ,
Ի Հանապարհ ընդ նա անգեալ
Ի Բիւզանդիոն քաղաք հասեալ։
Սա դէմ չարին ախոյանեալ
Եւ ըզնորին գումդըս վանեալ,
Յուղղափառաց դասուն պատուեալ
Եւ գովելի անուն ստացեալ։
Էդեալ նմա ջանըս պատրեալ
Զար թշնամին խորամանգեալ,
Զառնակինն եպարքոսեալ,
Զի որսասցէ զնա թակարգեալ։
Սրմա և անդ Տէրն յաջողեալ,
Զուարթնոյն յանուրջ ըզնա խրատեալ
Տէր սարկաւագ ասէ կոչեալ
Զի կաս կապեալ և կաշկանդեալ։
Ի յոչ գիտելն ապաւինեալ
Վնասու անպարտ զինքն ցուցեալ,
Ի մանրախոյզ զուարթնոյն լինել,
Նա զեպարքոսըն պատճառեալ։

Առ նա երդման խնդիր կոչեալ,
    Զուարթնոյն, որ զնա կամէր փրկեալ,
    ԶԱւետարանն յառաջ բերեալ
    Նովաւ զերթալըն հաստատեալ։
Շտապ տագնապի ընդնա կալեալ,
    Նաւարկութեան ի խնդիր ելեալ,
    ՅԵրուսաղէմ քաղաք հասեալ,
    Անդ դադարումն ի մտի եդեալ։
Անգ հանդերձիւք///
    Եղ զառաջին///
    Բարերարին նախ///
    Զնա երկար ցաւաւք տանջ[եալ]։
Կին մի բարի առ՝[ն]ա հասեալ,
    Խրատիւք զնա հանդիմանեալ,
    Ըզթէքայիտ նըմա ցուցեալ
    Եւ աղաւթիւք նմա աւգնեալ։
Երանելին ստրրջացեալ,
    Եւ զ[կա]րասին իւր բաժանեալ,
320բ Զանձն յԱստուած ապաստանեալ.
    Նորին յուսովն յուղի անկեալ։
Բաստոն մեղուի յոյժ նմանեալ,
    Ըզթեքայիտ մեծն ողջունեալ,
    Անգրաքով վարըս ցուցեալ,
    Զարմանալի բազմաց եղեալ։
Տեսեալ երիս արս կացեալ,
    Նմա առաջի կարգաւորեալ,
    Կլերիկոսք զինքեան ցուցեալ,
    Դեւքն որ կամին ընդնա պատրեալ։
Ի Սուրբ Հոգոյն նա զաւրացեալ,
    Զչարսն բանիւ յանդիմանեալ,
    Զանուն փրկչին նա կարդացեալ,
    Զչար ոգիսըն հալածեալ։
Պնդից վարուց զինքն տուեալ,
    Բազմաց հրաշից ստացաւղ եղեալ,
    Ի ծերութիւն խորին հասեալ,
    Եւ աւրինակ բազմաց կացեալ։
Աս* ի բազում գիրս անդ գրեալ,
    Խրթնատեսակ շահաւետեալ,
    Է զոր յայտնի խրատիւք վարեալ,
    Վասն ախմարաց, որ չեն վարժեալ։

---

* Նախագիծ տառերը կարմիր երկաթագիր են։ «Սա» բառի «ա» տառն է պետք եղել ծայրակապ նախադասության համար, ուստի Մովսեսը Ա-ն գրել է մյուսների նման կարմիր երկաթառեր, իսկ «ս»-ն սև բոլորգիր և տեղադրել նրա մեջ, որպեսզի կարդացվի սա։

Տուիմամբ սիրով հոգոյն լցեալ
Երիւք ամաւք յախտէ կացեալ,
Ի ստորնայնոցս հրաժարեալ
Եւ անմարմնոյն պարակցեալ։
Մեծապայծառ վայելչացեալ
Անանց փառացն արժանացեալ,
Բարեխաւս մեզ անդ գտեալ.
Առ արարիչն որ է աւրհնեալ։
Այլ և Գրիգոր անուն կոչեալ.
Մեծ րաբունին և հռչակեալ
Մտաւք յաւետ ի սա նաեալ
Ջերանելոյն գիրս ընթերցեալ։
Գտեալ լոյծեր ոմն զընտրեալ,
Որոյ Ատոմ անուն կոչեալ,
Շատ փորձանաց էր համբերեալ,
Սա ի նմանէ տեղեկացեալ։
Րաբունաւրէն սմա ասացեալ,
Վասն անճառիցն որ էր ծածկեալ։
Սա դիւրալուր հասու եղեալ,
[Ի]րատով նորին փարթամացեալ։
321ա Այլ և վարուց խստից տուեալ,
Ջանձն իւր ճգանց և աշխատեալ,
Ի յԱստուծոյ վերահալցեալ
Յերկրս բանի նմա աւգնեալ։
Բարձրագընաց Յեւակոխեալ
Ջերանելոյն գիրս լուծեալ.
Համառաւտիւ կարգաւորեալ
Եւանթերի բովանդակեալ։
Այլ և ճառիւ ըզսա չափեալ
Թուով մեծաւ գլխաւորեալ,
Քան և չորիւք գլխովք եդեալ,
Որ մեծ խորհուրդ ունի ծածկեալ։
Բաստոք Քէ ոք կամի լինել
Մտաւք ի տիպ տորին յառեալ,
Ըստ փիլոնեան կարգին եդեալ
Ունի և սայ ինքն ամբարեալ։
Վասն ճառիցն, որ է եդեալ,
Առցուք ի ձեռն բացայայտեալ,
Որ քսան և չորքն է կողեցեալ,
Իյուք մասունս գոյ բաժանեալ։
Այլ դու կալ զմիտս քո հաւաքեալ.
Զի իմացիս, զոր կա աստ գրեալ,
Զի չորք վեցիւք է սա չափեալ.
Եւ վեց չորիւք բովանդակեալ։

Սա զաշխարհիս կարգըս ցուցեալ,
Ի վեց աւուր ստեղծագործեալ,
Ի վեց գարուն Քրիստոս ծնեալ,
Զծնունդս Ադամայ դոլ ազատեալ։
Նա և չորից Թիւն հայեցեալ,
Ի չորք տարերքըս նիւթ ելեալ
Այլ և չորք գետքն բաժանեալ
Յպղենական դրախտէն եղեալ։
Եւ ութերիւք գոյ բաժանեալ
Երեք ութիւք լիալցեալ,
Որ սա քրւեա ասի եղեալ.
Զհանդերձելոյն խորհուրդ ունել,
Իխեալ ի մեզ երից ընտերալ.
Հաւատ և յոյս, սէր հաստատեալ,
Երեք անձինք փառաբանեալ,
Երեք սրբիւ մի տէր կնքեալ։
Այլ և երկուք Թուովք լցեալ
[Եր]կոտասան Թիւն երկրորդեալ,
321բ Երկուց մարդոց նախընտեղծեալ
Երկուց կենաց ժառանդ եղեալ։
Գոլ և փրկչին մերոյ ընտերեալ,
Երկոտասան Թիւ առաքեալ,
Եւ նահապետք ի հինն եղեալ
Երկոտասան ակամբք պատուեալ։
Րոպէից բովանդակեալ
Քսան և չորից միակ եղեալ,
Մի բնութիւն խոստովանեալ,
Ըզբանն Աստուած մարմնով ծնեալ։
Ի եբիցունսըն գոյ հայեալ.
Քսան ու չորից Թիւըն լցեալ
Զորս որոտման որդին տեսեալ
Որք աթոռով էին բազմեալ։
Եւ մարգարէք սմին նրմանեալ,
Որք տեսանաւղ են անուանեալ։
Տես Թէ քանի մըտաւք լցեալ։
Համար ճառիցս, որ է եղեալ։
Ով եղրայրըդ սիրեցեալ,
Որ հանդիպիս տաղիս չափեալ,
Ցիշեա զանձն իմ տառապեալ,
Ցաւարտ բանիս, որ է շարեալ։
Փրկչին փառս վերառաքեալ,
Եւ մեզ ասել Տէր ողորմեալ,
Եւ դու ունկնաս լիով լցեալ
Ի Քրիստոսէ, որ է աւրհնեալ,

Այժմ և յաւուրն աներեկեալ,
Յապագային անվախճանեալ,
Այս ամէն բարեբանեալ,
Մի տէրութիւնն երեքանձեալ,
Յաւիտեանից յաւէտ եղեալ,
Աւրհնաբանեալ, փառաւորեալ
Գովեալ, աւրհնեալ և բարձրացեալ,
Անլըռ[ելի բ]անիւ աւրհնեալ, ամէն*։

415

ԱՒԵՏԱՐԱՆ

Երուսաղէմ 3392

Գրիչ՝ Յովհաննէս քահանայ
Վայր՝ Երզնկա

496 Արդ գրեցաւ սա ի մայրաքաղաքն յԵզնկայն, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչին կաթողիկէ եկեղեցւոյն, զոր շինեաց տէրն Սարգիս արհիական եպիսկոպոսն և բարեպաշտն որդի իւր Յոհաննէս: Գրեցաւ ի թուականիս Հայոց ի ՉԻԹ (1280), ի թագաւորութեանն Լևոնի բարեպաշտի, որդոյ Հեթմոյ, և ի հայրապետութեանն տեառն Յակոբայ, և յարհիական եպիսկոպոսութեան տեառն Ներսէսի՝ թոռին տեառն Սարգսի, և աստուածասէր եղբայր նորին պարոնին Գրիգորիսի, և յաշխարհակալութեանն Ապղա խանին՝ որդւոյ Հուլայուին...

416

ՍԱՀՄԱՆ ԵՒ ԿԱՆՈՆՔ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՂԲԱՐՑ, ՈՐՔ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՍԻՐՈՎՆ ՄԻԱԲԱՆԵՑԱՆ ՅԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ ՄԻՄԵԱՆՑ, Ի ՄԱՅՐԱՔԱՂԱՔՍ ՄԵԾ ՅԵԶՆԿԱՅՍ Ի ԹՎԻՆ ՉԻԹ (1280)։

Երևան 2329 (1291 թ.)

Հեղինակ՝ Յովաննէս Եզնկացի
Վայր՝ Եզնկա

Աստ հանդիպելով և ծերունի վարդապետն Գրիգոր Սանահնեցի, որ և գրեցաւ ի գլուխ եղբարութեանս, և ես նուաստ վարդապետ Յովհաննէս Եզնկեցի, գրեցի զՍահման և զկրատ եղբայրութեանս, և զշահաւէտ աւգուտն որ ի սմանէ, առաջնորդութեամբն Սուրբ Հոգւոյն։

* Բ հիշատակարանի տնագլուխ տառերը հոդում են «Ոսկի» բառը, իսկ Գ-ինը, որ գրված են կարմիրով՝ «Մովսէսի աշակերտի՝ պատմագրաբար վասն Ուագրի» (էջ 222ա), էջի լուսանցազարդի շրջանակի մեջ գրված է. «Մովսէսի տէր ողորմի»։

-417

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 5254

Գրիչ՝ Գէորգ
Վայր՝ Դեղձուտի վանք

ա

54բ Որք աւգտիք ի սմանէ ղհոգևոր եղբարքս իմ՝ զվարճամ և զՍտեփանոս յաղաւթս յիշեցէք, քանզի մինչ ցայսր վայր զաւրինակն սոքայ շնորհեցին, և ոչ միայն այս, այլև պանդխտութեանս իմոյ մխիթարիչք էին հոգևոր և մարմնաւոր, քանզի ի միում խցի պանդխտանեաք, որ և Քրիստոս հատուսցէ զվարձս։ Եւ յայսմ աւուր գնալով սոցա յերկիրն իւրեանց, յԱյրարատեան գաւառն, տրտմութիւն հասուցին ինձ՝ զիս միայն թողլով։ Այլ աջողեսցի սոցա խնամիչն ամենայնի ամենայն ուրեք, ուր և երթայցեն։ Եւ զիս, Գէորգ որդի Պահուտաթոռին, հղա[է]րայ յերկրէն Խաչինոյ, ի մեծահռչակ քաւարանէն Գանձասարայ, որ մակացու էի յերկիրս Մաճկանաբերդոյ, ի վանս Դեղձուտի, առ ոտս Առաքել վարդապետի, յաղաւթս յիշեսջիք։

Ի թվիս ՉԻԹ (1280) աւգուստոսի ժ (10) գրեցաւ։

բ

125ա ՉԳէորգ փցուն գրիչ յիշեայ եղբայր աղա[չեմ]ք։

գ

222բ Աւրինակս այսչափ էր, և բանս ոչ աւարտեցաւ, և գիշերի գրեցաւ, զի ըշտապէի։

դ

Գրիչ՝ Աւետիս

47բ ՉԳեորգ ընդրեալ քահանայ, զտէր գրոցս յիշեցի [ի] Քրիստոս, ընդ նմին և զանարժանս զԱւետիսս*։

418

ԱԽԾԱՐԱՆ

Ն. Ջուղա, 33, Տեր-Ավետիսյան, Յուցակ, էջ 49

Գրիչ՝ Պետրէ
Վայր՝ Կիպրոս

ա

335ա Փառք ամենասուրբ երրորդութեանն և մի աստուածութեանն Հաւր և Որդւոյ և ամենասուրբ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից,

* Հիշյալ էջի գրիչն է։

ամէն։ Ես մեղաւոր հողս Պետրէ նուաստ երէցուկ, Այստուի* որդին, եկեղեցւոյն սպասաւորս, ցանկացա սուրբ Աւետարանիս և կտտարեաց Աստուած զփափաքն իմ եւ գրեցի, զի էի ես կարի յոյժ տկարացեալ յաչաց եւ տագնապ մեծ ի մահմետականաց, զի եկին զաւրաւք և հանին զմեզ ի բերդէն պարոնայքն եւ տվին ի մահմեդականքն, եւ զինչ Մաագեռն կտրէ՝ տուին եւ զբերդերն աւերեցին։ Զի վասն մեղաց մերոց այս ամենայն գործեցաւ, եւ եկաք ի Կիպրոս կրղզին, ի դուռն Սրբուհոյ Աստուածածանին, եւ աւարտեցաւ սուրբ Աւետարանս ըստ կարի մերում, զի ոչ էաք ծառայել վարպետ եւ արուեստի, այլ շնորհաց Աստուծոյ աւարտեցաւ սա։ Աղաչեմ ներել սղալանացս եւ խոշոր ձաքուտանացս, զի յոյժ ցաւաւք եւ տառապփնաւք գրեցի, եւ աղաչեմ ներել և թողութիւն խնդրել յանցանաց իմոց, եւ ծնաւղաց իմոց, եւ որդւոց իմոց, եւ մաւր իւրոյ Սառենի, եւ դստեր իւրոյ Ալիծի, եւ որդւոց իւրոց, եւ թողութիւն խնդրել ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, եւ ինք ձեզ թողցէ, եւ որ զամենն ասէ, նմա Տէր ողորմեսցի։

Գրեցաւ ի թվին ՉԻԹ (1280) ի դառն ժամանակիս, զի ազգն Հայոց վարին ոմն այսպէս, ոմն այնպէս, զոր Տէր Յիսուս Քրիստոս առաջնորդեսցէ եւ ուղղեսցէ զգնացս մեր ի ճանապարհս ուղեղս, զի բարեբար է Աստուած և ողորմած, և նմա փառք յաւիտեանս։

Զբանն Աստուծոյ զսոսկալիք
Պարտ է յիշել զամէնն ի միտք,
Թէ մի դատիք որ չգատիցիք,
Պոմանս ահեղ եւ արհաւիրք
Տէրունական է սպառնալիք։
Ես իմ գիտելով զայս սպառնալիք,
Կամաւ նիւթեմ ես ինձ չարիք։
Գրեալ է. Մի՛ դատիք, զի մի դատիցիք։
Վայ տուք ինձ եւ ողորմեցէք,
Ես Աստուած ձեզ։

Բ

Ստացող՝ Հռոմխաթուն

Ընդ նմին եւ զիս՝ զբազմամեղս Հռոմխաթունս, որ ստացայ զայս, վասն Սուրբ Աստուածածնին ի յիշատակ։

---

* «Ծուցակում» գրել են «այս տուի||եկեղեցւոյն ձեռվ. այնինչ «Այստուն Պետրէի հայրանունն է, թերևս՝ Աստուածատուր-Աստուր-Այստու հապավմամբ։

419

ԱԻՏԱՐԱՆ

Երևան 10773

Գրիչ՝ Յովճաննէս Արմաեդրայր
Վայր՝ Գոռներ

ա

264բ [Փառք///միա]րուն աստուածութեանն, այժմ և յաւիտեանս, ամէն։ Անմահին մահու մահակիցք և փառաց նորին թագակիցք, հայք մեր և եղբարք ի Քրիստոս, ժառանգողք սորայ և տեսողք և գաղափարողք, նըւաստս ձեր Յովճաննէս եպիսկոպոս, որդի մեծին և քրիստոսասիրին Կոստանդեայ արքայհաւր Հայոց՝ ձեռամբ իմով գրեցի զսա յիշատակ բարեաց՝ ինձ և իմոցն յիշել զհամայնս ի Քրիստոս աղաչեմ, և զձեզ Տէր յիշեսցէ ի բարի։

265ա Փառք* ամենատուրբ Երրորդութեանն և մի աստուածաբանութեանն, ամէն։ Յամին Ջիբ (1280) թուականիս Հայոց, ես Յովճաննէս եպիսկոպոս նըւաստ ծառայ Աստուծոյն իմոյ Յիսուսի Քրիստոսի և կրսեր ձեր ծառայակից, որդի քրիստոսարեալ և բարեպաշտ իշխանաց իշխողին Կոստանդեայ թագապահի և արքայահաւր Հայոց, և եղբայր քրիստոսապսակ քաջ արքային Հեթմոյ, շնորհիւ ողորմածին Աստուծոյ, և աւրհնութեամբ և չանիւ ամենաւրհնեալ հոգի հաւրն իմոյ Կոստանդեայ, եղէ այցելու սուրբ անապատին Գոռներ կոչեցեալ ի գահս Կիլիկիոյ, ի գաւառն Բերդին Բարձրասացելոյ, յորժամ տիրէր հայրն իմ՝ դղեկին, և կրսերս՝ անապատին, յորում տաւաղեալ բնակէի իբր անխռով և անքոյթ նաւահանգստի, բերկրեալ միշտ աստուածաշունչ տեսլեամբ մեծ նահապետին հաւրն մեր, և կրթեալ սուրբ տաւուք, տեսի զնորին շինեալ գիւղաքաղաքն յանունն իւր Կոստաբնդնոց կոչեցեալ, լի ի Քրիստոս հաւատացելովք բազմաւք՝ առաքինի երիցամբք և սարկաւագաւք, ընդ որս խրախուցեալ յանձին կալա իմովս իսկ մեղսամակարթ ձեռամբքս գրել նոցին զսուրբ Աւետարանս, յոր և յանկ ելեալ Տերամբ, ի մէջ ամբողից և պատաղմանց, զի թէպէտ ոչ էի հմուտ գրչութեան, այլ վասն Տեառն իմոյ Քրիստոսի սիրոյն, նաև
265բ հարն իմոյ և եղբարց ի Քրիստոս||փոխեցելոց, որոց Տէր ողորմեսցի, ամէն։

Եւ ես վասն հողացելոցս և մոռացելոցս յիշմանց, գրեցի զսա լաւ և ընտիր կազմեալ, որպէս տեսանի, և եռու զսոյն ի գեաւղն Կոստաբնդնոց, որ էին նախ կարմիր գտակնի կոչեցեալք, յիշատակ մեզ և վայելս ապագայիցդ։ Վասն որոյ աղաչեմ Տերամբ զվաչելոզդ, յիշել ի բարին Քրիստոս մերայովք անմոռաց յիշմամբ, և թողութիւն և հանգիստ գտանել համայն թագազնեիցն մեր, և որք յիշեքդ յիշեալ լիչիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ։ Մի ոք յիշախեսցէ իւր առնել հայրենիք կամ յափշտակել,

---

* Այստեղից սկսած մինչև վերջ, 1587 թվականին արտագրել է կազմող Ստեփանոս քահանան, Առանայում, հավանաբար քաչքայված լինելու պատճառով։ Թերևս այդ է պատճառը, որ թվականը «ՋԻԲ» (1280) գրելու փոխարեն գրել է ՈՒԲ (1180), մեկդարյա սխալ գործելով։

կամ գողանալ կամ ծախել, կամ աղաւաղել բան յիշատակի մեր, այլ թէ որ յանդգնի մասն ը[յո]ւդային առցէ, և որ մեզ լսէ և յիշէ՝ բիւր բարիս ի Քրիստոսէ գտցէ։

Բայց գրեցաւ ի յոյժ տրտմութեան ժամ, զի այս երիցս անգամ քրիստոսատեաց տաճիկքն Եգիպտոսի հրձիգ զամենայն Կիւլիկայ արարին, զորս հուրն անշէջ կիզեսցէ զնոսա։

Եւ քրիստոսասէր տէրն իմ և եղբարորդի արքայն Լևոն, իբրև զգթած հայր ժողովէ և մխիթարէ զմնացեալսն, և ևս բարիոք պատուաստէ, զոր աչն ամենակալին Աստուծոյ որդւովք իւրովք պահեսցէ միշտ ի չարէ, ի ճրկին կեանս թագաւորել։

Այլ և զերշանիկ կաթողիկոսն Հայոց տէր Յակոբ համայն լրութեամբ
266ա եկեղեցւոյ||Քրիստոս Աստուած միշտ պահեսցէ մեր[ձ] իւր, և զամենայն գնեալքս սուրբ արեանն իւրոյ, յինքն միայցուսցէ ողորմութեամբ իւր Քրիստոս՝ աւրհնել զնա ընդ Հաւր և Սուրբ Հոգւոյն յաւիտեանս, ամէն։

Բ

72ա Զգերամաքուր և աստուածարեալ ապագա եղբարսդ մեր, որք վայելէք զսա և ժառանգէք, դատապարտ ծառայս Աստուծոյ և հողացեալ ձեր ծառայակից Յոհաննէս եպիսկոպոս՝ արքաեղբայրս Հայոց, աղաչեմ զբնաւսդ յիշել զիս ծնողաւքն իմովք և համայն ընտանեաւք և բարին Քրիստոս, թողութիւն, ողորմութիւն և հանգիստ գտանել այժմ և յապագայն, զի ի մէջ յոլով հոգւոց մատամբք իմով գրեցի, և Աստուած զձեզ յիշեսցէ, ամէն։

Գ

120բ Մշտածարաւք աստուածահոսք և յորդաբուխ վտակացս որք արբէք ի սմանէ և զմայլիք զծարաւիս փրկութեանն Աստուծոյ, և ձերդ բարի յիշման, զստացող սորա և գրող զՅոհաննէս եպիսկոպոս արքաեղբայր Հայոց ծնողաւք մեր և ծննդաւք նոցին և համայն ընտանեաւք և ուսուցչաւք յիշել հայցեմ զսրբազանիցդ դաս զմեզ ի բարին Քրիստոս, փրկութիւն, թողութիւն և ողորմութիւն և հանգիստ գտանել այժմ և՛յապագայն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ...

Դ

199ա Զաստուածարեալ հարսդ մեր և զեղբարսդ ի Քրիստոս ծառայակից կրսերս ձեր Յոհաննէս եպիսկոպոս արքաեղբայրս Հայոց՝ գրող սորա և ստացողս, աղաչեմ յիշել զմեզ՝ ծնողաւք մեր և ընտանեաւք ի բարին Քրիստոս...

420

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 355

Գրիչ՝ Սիմէոն
Վայր՝ (Մուղնու) ս. Գէորգ

ա

Փառք սուրբ և կենդանարար Երրորդութեանն, մի աստուածութեան, Հաւրն և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, յաւիտեանս յաւիտենից, ամէն։

308ա *Սուրբ Աւետարանս յաղագս իմոյ՝ Յակոբոսիս նուաստի հոգւոյ և մարմնո փրկութեան, և ծնողաց իմոց Մելքիսէդեկ քահանայի և ըՌիճանայ, և եղբարց իմոց միշտ յիշատակ սա եղ[ի]ցի ի դրան Սուրբ Գէորդա զաւրավարի, տղա Մարտիրոսի, ղոր և ես նուաստ ծառայս Աստուծոյ Յակոբոսս աւանդեցի զսայ իմ հայրէնի էկեղեցոյս Սուրբ Գէորգա։*

Արդ, գրեցաւ այս սուրբ Աւետարանս ձեռամբ Սիմէոնի մեղաւորի, ի յընտիր աւրի[նակէ], առ դրան Սուրբ ղաւ[ր]ավարիս Գէորգայ, ի թուաբերութեան Հայոց ՁԻԹ (1280), ի հայրապետութեան տեառն Յակոբայ եւ եպիսկոպոսութեան տէր Համազասպայ՝ առաջնորդի մեծափառ տանն Յովհաննու։

բ

86բ *Աւաղ մտացս սխալելոյ, և թողութեան ձեզ մեղ առնելոյ։*

գ

123ա *Եւ զմեղաւո[ր] Սիմէոն [յիշ]է աղաւթ[ս]*։*

դ

132բ *Ջտառապեալս ի բարեաց, աղաչեմ յիշել ի Տէր, ո՛վ մանկունք եկեղեցոյ։*

ե

148ա *Աւաղ տղաոցս բարբաջմանս և իմ մտաց սխալելոյս։ Եւ այսաւր տաւն էր Բարսղի Հայրապետին /// տանէին։*

զ

307բ *Ցաւրինակն հայնց էր գրած, թէ այս սքանչելի գթութեան շնորհ ի Քրիստոսէ՝ ի հեբրայեցի Աւետարանէն աստ եղաւ, որպէս ասէ Եւսէբի**։*

---

* Գրված է լուսանցաղարդի մեջ։

** Գրված է «Իրք կնոջ շնացելոցս» հատվածի առթիվ։

է

Ծաղկող

212ա Ջնկարող սուրբ Աւետարանիս յիշեա, ասելով՝ Տէր Աստուած, ողորմեա ծաղկողի սորա, ամէն*։

421

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 2746

Գրիչ՝ Եղբայրիկ
Վայր՝ Քարայատակ,

ա

248ա Փառք քեզ [եղ]ակի, անեղի, եռայհիւսկ [է]ւ մշտապայծառ դաւանութենն յամենայն արարածոց եւ ի բնաւից եղականաց, ամէն, որ արժանի արար զմեռեալս մեզաւք հասանել ի վերշին դիծ սրբոյ Աւետարանիս։

Բայց դրեց[ա]ւ յամի եւթն հարիւերորդի քսաներորդի իններորդի (1280) ամ[ի] տումարիս Հայոց, ի ձեռն դառնացելոյ ումեմն սուտա-
248բ նուն [գ]րչ||ի Եղբայրիկ կոչեցելոյ, ի Քարայյատակ տեղւոջ, ուրեք որոյ հանդէպ կայ մայրաքաղաքն Կարս, ուր ես միայնացեալ նստեի ամենայն չարեաւք եւ դառնութեամբ լի, ըստ խնդրոյ պա[տու]ական եղբաւր միոյ Եփկար քահանայի։ Եւ աւրինակ սորայ գրեցաւ ձեռաւք իմովք յերկուց ընտրոց աւրինակաց։ Եւ այս տ[ա]սն եւ վեց Աւետարան, որ [գ]րեցի շնորհաւքն Քրիստոսի։

Քրիստոս Աստուած բարեխաւսութեամբ սուրբ մաւր քո, եւ սրբոց քոց առաքելոցդ եւ աւետարանչացդ, գթայ ի Եփկար ստացաւղ եւ իւրսն ամենայն, և Եղբայրիկ եւ ի նախնիս նորին, և յայնոսիկ որք Աւ[ետ]արանիս ընդ[ձ]այաբեր լինի[ին], եւ տուր նոցայ զկեանսդ քո յաւիտենից, ամէն։

բ

247ա Քրիստոս Աստուած, բարեխաւսութեամբ սիրելի առաքելոյ եւ աւետարանչիդ քո Յովհաննու, գթայ ի պատուական եղբայրն իմ Թադէոս քահանայ, եւ տուր նմայ զարքայութիւնդ յերկնից, ամէն։

գ

72բ Քրիստոս Աստուած, բարեխաւսութեամբ սուրբ մաւր քո եւ սրբոյ աւետարանչիդ քո Մաթէոսի, գթայ յԵղբայրիկ մեզաւք մեռեալ աշխատող, և յիրսն ամենայն, եւ ի Եփկար ճգնազգեց քահանայ՝ ստացող սորայ, և ի նախնիսն նորայ, եւ տուր նոցայ զկեանսդ քո յաւիտենից և ամենայն քրիստոնէից երկրպագուաց սուրբ անուան քո, ամէն։

---

* Դժբախտաբար ծաղկողը անունը չի տալիս, և անհայտ է մնում ուշադրության արժանի նկարների հեղինակը։

422

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6333, Բարղամյան, Յուցակ, էջ 26բ

Գրիչ՝ [Յովճաննէս]
Վայր՝ Քարատնիս

Այլ եղև գիծ սորա ի տունս Սիւնեաց, ի սուրբ մենաստանս, որ կոչի Քարատնիս, ի դուռն Սուրբ Աստուածածնիս, ձեռամբ մեղապարտ և թարմատար գրչի, ղոր առեալ զնոյն ինքն զծնաւղս բարեխաւս առ ծնեալն տանել իմում տկարութեանս։ Եւ մի իսպառ տալ զանձն պատուահատակական հրամանաց, և նովին երաշխաւորութեամբ աւարտեալ եղև ի թուականութեանս Հայկազեան տումարի չեթն հարիւերորդի քսաներորդի իններորդի (1280) ամին, ի բռնակալութեան ազգին Նետողաց, որոյ կայսրականին Ապաղա խան անուն ճանաչիւր, և ի դիտապետութեան Հայոց տեառն Յակոբայ, և յառաջնորդութեան տանս Սիսականի տէր Հայրապետայ և տէր Յոճաննէսի, մականորոգ սուրբ տաճարացս, և յիշխանութեան Տարսայիսի։

Արդ, ես յոգնամեղ և ամենաթշուառ և յետինս ի գծողս անկեալ ի յերկիր սրտահառաչ կականալուր ձայնիւ պաղատեմ [մի զ]տառապեալս և զեղկելիս հարազատական բերանով գորովադատ պատժել, քանզի ի հարկէ և ի ժամ տագնապի բաժանվեցաւ ի մէնջ։ Եւ արդ, մեք զայս կրկին հայցեմք, զի զնախաճառեալ եղբայրն զՅոճաննէս, զստացող սորա, և զհամաչահոս յաղաւթս ձեր մասնաւորել, վարկանեսջիք ընդ նախ և զմեզ մերայնովքն։ Եւ զի մարդասիրութիւնն Աստուծոյ ոչ տարամերժ զմեզ, հայեցեալ ի ձեր խնդրուածս և ի մեր յոյսն ապաստանի, այլ ի միասին փառաւորեսցէ զմեզ իւրովք պաղատանաւք, և դուք և մեք ի միասին գոհանալով փառաւորեմք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգի այժմ և միշտ... ամէն։ Զհոգևոր և զպատուական եղբարսն զՍարգիս և զՎարդան, որք երախտաւորեցան մեզ և եղեն աւգնական և կամակից ի գիծ տառիս և զայլ համաւրէն եղբարսն յիշատակի և բարեաց մասին արժանի արասցէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, և նմա փառք յաւիտեան.*

423

ԴՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ, ԹՈՒՂԹՔ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ

Երևան 6333, Բարղամյան, Յուցակ Վասպուրականի, էջ 54բ—55ա

Գրիչ՝ Դանիէլ
Վայր՝ Զեւաւղի գեաւղ

ա

Ի թուին ՋԻԹ (1270) գրեցաւ պրակք Առաքելոց, ձեռամբ Դանիէլի անարժանի, ի յիշատակ ինձ և ծնողաց իմոց, և ի վայելումն որդոց իմոց

* *Հիշատակարանի վերջում Բարղամյանը գրում է. «Ընկեղեցոյն կոնդակին նայելով՝ Լենկ Թիմուր տասներկու բեռ հայ գրեանք բարձած՝ սոյն Ամուկ քաղաքի Հայոց տէր Փիլիպպոս*

Գրիգորին և Քահանայապետին, զորս փրկեսցէ Քրիստոս յամենայն փորձութենէ, ամէն։ Որ ոք հանգիպեսցի սմա անմոռաց յիշեսցէ զգրող սորա, և զծնողսն իմ, և զեղբարսն. և Քրիստոս Աստուած, որ առատն է ողորմութեամբ մեզ և ձեզ ողորմեսցի, ամէն։

Բ

Փառք ամենասուրբ երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Ի յիսնհիւր որդի քսաներորդի և իններորդի (1280) թուականութեանս Հայոց, ի թագաւորութեանն մեծին Լևոնի՝ որդւոյ թագաւորին Հեթմոյ, ի հայրապետութեանն Յակոբայ րաբունւոյ, գրեցաւ սայ ձեռամբ Դանիէլի նուաստս ի քահանայս, ի զեւաղս Գեւաւղի, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին։ Եւ արդ, երեսս աննկեալ աղաչեմ զամենեսեան թողութիւն մեզաց հայցել ի Քրիստոսէ ինձ և ծնողաց իմոց և ամենայն արեանաոուաց և յիշողացդ ե յիշել[ոցս]///

424

ԱԻԵՏԱՐԱՆ

Կոնիբեր, Յուցակ Լոնդոնի, էջ 12—13

Գրիչ՝ Ստեփանոս Վանկայցի
Վայր՝ Սիս

ա

312 Փառք ամենասուրբ երրորդութեան։ Գրեցաւ ի թուիս Հայոց ՋԻԹ՝ իաւթն հարիւր և քսան և ինն (1280), ի մայրաքաղաքս Սիս, ընդ հովանեաւ Սուրբ Հոգւոյն, որ յայսմ ամի վերստին նորոգեցաւ պատուական քարամբք՝ քերեալ ի ճարտարաց, ձեռամբ Ստեփանոսի Վանկայցւոյ, և ծախիւք և հրամանաւ Սոսթենէս րաբունւոյ, որ էր վարժ և կիրթ ամենայն դիրս աստուածային՝ հնոցն և նորոցս և արտաքին փիլիսոփայիցն գեր ի վերոյ՝ որ և ի ժամանակիս մեր՝ և ի թագաւորութեանն Լևոնի և ի հայրապետութեանս Յակոբայ՝ Ոչ ոք է կատարեալ իբրև զսա յամենայն իմաստս, բայց ի մեծ րաբունեաց րաբունւոյն, որոյ անունն ցաւղէ քաղցր, որ և Վահրամ կոչի...

Բ

252 Որդի Աւշնի տեառն Կոռիկոսոյ, և եղբաւր թագաւորի Հայոց Հեթմոյ, առաջնոյ ստացաւղ յիշեսջիք ի Քրիստոս։

անուն քահանային տան իչևանելով՝ և անոր սուրբ վարք ու բարքը տեսնելով՝ այս Աւետարանը ընծայ կտայ անոր։ Աւետարանը կոչվում է «Կարմիր թագաւոր Հրաշագործ Աւետարանօր Գրիչը, ըստ ավանդության Հովհաննես Ոսպնակեր վարդապետն է։

Վանք-Թեմուրի կողմից գերեվարված ձեռագրերի այս առասպելախառն պատմության մասին ժամանակակից հիշատակարաններում որևէ տեղեկություն չի պահպանված։

425

ԱԻԵՏԱՐԱՆ

Սրվանձտյան, Թորոս Աղբար, Ա, էջ 215

Գրիչ՝ Գրիգոր.

Արդ, ես նուաստ հողս Գրիգոր *աբեղայս, ծոյլս և անարժանս ի կրանատրս, և շնորհիւն Աստուծոյ և ողորմութեամբ նորին դրեցի զսուրբ և զկենսունակ Աւետարանս ի պայծառութիւն մանկանց նորին։ Գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՉԻԹ (1280), ի առաջնորդութեան* Պաւղոս *Եպիսկոպոսի, ի սուրբ և ի գերահռչակ անապատիս որ* Փրկչի վանք *կոչի, ի դուռս Սուրբ Փրկչիս և Սուրբ* Երեմանց *և Շամունեայ և աստուածընկալ Սուրբ Նշանիս, որ աստ կայ։ Արդ, աղաչեմ զձեզ մանկունք Նորոյ Սիովնի, որք հանդիպիք այս սուրբ և աւետաքարող Աւետարանիս, կարդայք, աւգտիք, և կամ աւրինակէք, յիշեցէք սրտի մտաւք ի մաքրափայլ աղաւթս ձեր զփծուն և զխոշոր գրչակս զ*Գրիգոր *աբեղաս, և զծնաւղսն՝ զԳրիգոր *Ներկրար, և զմայրն իմ զՇուշան *խաթուն, և զմտեսի* Մելիք *մայրն իմ, որ բազում աշխատութեամբ անոյց զիս...*

426

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՍԱԵԱՅ ԴԱՒԹԻ ՔՈԲԱՅՐԵՑԻՈՅ

Երուսաղեմ 1758, Պողարյան, Ցուցակ Զ, էջ 89—93

Գրիչ՝ Բարսեղ
Վայր՝ Մշակավանք

ա

419 Փառք փառաց փրկողին տիեզերաց Քրիստոս յուսոյն մերոյ, ընդ
Հաւր իւրում բարերարի եւ Սուրբ Հոգոյն ճշմարտի, յաւիտեանս յաւիտե-
նից, ամէն։ Յանկ ելեալ կատարեցաւ հոգելից մատեանս այս Մեկնու-
թիւն համարձակախաւս եւ աստուածաբան մարգարէին Եսայեայ, ի
թուականութեանս հնոյ ըստ Հայոց ՉԼ (1281), եւ նորոյս շրջանի միոյ
հարիւրոյ և ՂԷ-ից (197+1084=1281), ի տանս Արեւելեան, ի վիճակիս
գերապանծ և բարձրապատիւ սուրբ ուխտին Հաղբատա, ի գաւառս Գու-
գարացւոց, ի սուրբ և ի հրաշազարդ մենաստանս Մշակավանք կոչե-
ցեալ, ի խնդրոյ երիցս երանեալ առն Աստուծոյ՝ աստուածազարդ րա-
բունւոյն եւ անյաղթ վարժապետին Ներսիսի, որ է ի Տարաւն գաւառէ
Վասնզի ի ձեռն նամակի ի վերագրեալ նահանգէն խնդրեաց զսա, և զայլ
բազումս գծագրել իմոյ եղկելի անձինս, որ կոչիմս Բարսեղ։ Եւ մեք ի
նորին խնդրոյ գծեցաք զսա փանաքի և անյարմար տառիւ, զոր Տէր Աս-
492 տուած վայելեալ տացէ նմա զսա, ի յաւուրսն ան‖թիւս և յամս հազա-
րաւորս՝ ի շահ և ի յաւգուտ իւրո անձինն եւ նորին աշակերտելոցն, ի
փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։
Բայց գրեցաւ սա ի յաւրինակէ մեծիմաստ և կորովաբան վարդա-
պետին Դաւթա, որ է հանգիստ նորա ի գերահռչակ սուրբ ուխտին Հաղ-
բատ, և մականուն Քոփերեցի կոչեն, վասն ծնաւղացն անտի լինելոյ և
նոյն ինքն անտի ծննդեամբ։ Եւ զի ժողովեալ է սորա զբանս երից մեկըն-
չացն սրբոց, որպէս ցուցանէ իւրն յիշատակարան, եւ անուանէ զինքն
քահանայ միայն՝ զբարձրագոյն պատիւն ծածկելով՝ զվարդապետականն
անուն, և այն վասն յոյժ խոնարհութեան և անանպարտաւան մտացն, զոր
կալեալ է սուրբն այն այր։
Բայց զի երկուցն սրբոց բանքն Կիւրղի և Յոհաննու ոչ գա ի յաւարտ
գրոցս, որպէս ցուցանէ յիւրաքանչիւրսն զկայն առեալ, զոր մեք նշա-
նագրեցաք զտեղիսն, անգիտանամք զպատճառն։ Եւ զայս զի յիշեցաք
այսու պատճառաւ, զի մի կարծիք լիցի թէ այլ ոք գծելով զսա, ոչ է գրել
զերկուցն բանս զինչ և իցէ պատճառ. զի այս գիրք այլ ոչ է աւրինակել

անդից և այսր, որ մեք գծեցաք, բայց ի նորին աշակերտէ և արեան հարազատէ Մխիթար վարդապետէ, որ նորին հրամանաւ սրբագրել է զնորին երկն աշխատութեան։ Բայց ոմանք ասեն ի նոյն սուրբ ուխտն, և այն թերևս կարծեաւք, թէ ի Դաւթայ սկզբնաւորել և ոչ ժամանել ի յաւարտն, փոխի մահուամբ ի սրբոցն կայանս, և աւանդէ զթերին ի լրութենէ վերագրել աշակերտին իւրոյ, յանձն արարել զի յաւարտ հասուցէ, և նորա միայն զեփրեմին սրբոյ բաւական համարել գրէ, և զայլ ոչ ևս։ Բայց ոչ սա իրաւունս այսմ այսպէս լինել յիշատակարանդ նորուն Դաւթա, որ ի կատարած գրոցդ եդեալ է, ապա թէ ոչ յիշատակարանդ ոչ է գրած նորուն Դաւթա, այլ Մխիթարա և վասն երկիւղածութեան իւրոյ անձինն, վարդապետին տա զիւր աշխատութիւն, ի նորայն խառնելով և ի նորա յանուն և զյիշատակարանն գրէ։

Արդ, եթէ այդպէս է թէ այսպէս՝ անդիտելի է, բայց յիշատակ նոցա աւրհնութեամբ, եւ աղաւթք նոցա ի վերա ամենայն քրիստոնէից, ամէն։

Արդ աղաչեմք զամենեսեան ճաշակողացդ յայսմ սեղանոյ յոքնաւրեն և ախորժահամ հանդերձելոյ, յիշեսջիք ի Տէր նախ զերանեալն այն և ցանկալին հրեշտակաց, զպետն բաբունեաց զՆերսէս՝ ստացող գրոցս, ընդ նմին և զարքեպիսկոպոսն զտէր Յովաննէս՝ զաթոռակալն գերահրաշակ սուրբ ուխտին Հաղբատա, որ զաւրինակս շնորհեաց, ընդ նմին և զՅոհաննէս բաբունի՝ աշակերտ նորուն Ներսէսի, որ առ մեզս է, և գնաց ի մէնջ, երբր զաւրինակս առ մեզ աւուր միոյ ճանապարհ բարձեալ ի վերայ թիկանց ողինն իւրոյ, ընդ նմին և զհամաւրէն բնակիչք սուրբ ուխտիս Մշակավանիզ, որք են հանգիստ և հոգաբարձու եղկելի անձին իմոյ, որ իբր զգազան կատաղի արգելեալ կամ ի խցի աստ՝ մերձ ի սուրբ ուխտս։

Եւս առաւել յիշեսջիք ի նոյն եղբարցս զերկուսն զայն, զԽաչատուր և զԱւետիսն, որ են ըստ հոգւոյ հարազատք, միաշաւիղք և զուգակցորդք, հաւասարք և համապատիւք, որ ըստ իւրեանց ծնաւղգուի բարուցն և սիրայեղձ կամացն այնքան հոգացան առ մեզ զգործ սիրոյն, որ անցանէ զանցանէ զբնութիւն ամենայն համացեղիս հողածնելոցս, և միայն աստուածասգեստից անձանց համեմատի սոցայն գութ և սէր։ Զի զամենայն որպիսութիւն պիտոյից մերոց, զգեստուց և զկերակրոց լի և պատարուն հոգային զմեր, և այն ոչ աւտարաբար և կամ ի հարկէ, այլ այնքան զուարթ եւ ուրախ կամաւք, որ այնպէս համարէին, թէ ի յառնուլ են ի մէնջ և ոչ թէ տալ։

Յիշեսջիք և զնոցայն սրբասնունդ պատանիսն, նախ զՍարգիս, քահանայն և ապա զնուիրեալ աշակերտսն զՅակոբոս, զՄարաիրոս, զՅովաննէս, զՀայրապետն, զՄխիթար։

Յիշեսջիք և ի յաւարտ յիշատակիս զՄխիթար քահանայ, որ զթուղթս կոկեաց այսու յուսով, զի յիշատակեսցի անուն իւր ի զգիրս յայս։ Ընդ նմին եւ զբազմասխալ եւ զմեղսանեարկ զիմս անձն, զկարաւտս ողորմութեանն Աստուծոյ զգծաւղ սորա, որ կոչիմս Բարսեղ, զի գծեցի զսա յոյժ աշխատութեամբ, խաւարեալ ակամբ և մթացեալ լուսով, զոր և զկեր-

պարան ներքին մարդոյն երեւելիս ցուցանէ: Եւ որք յիշէք զոր ասա զծալ են, յիշեալ լիջիք և դուք ի Քրիստոսէ Աստուած աւրհնելոյն յաւիտեանս, ամէն։

Յիշեսջիք և զհայր վանիցս դԲարթուղիմէոս, զի այց արասցէ նմա Տէր եւ դարձուսցէ ի չար բնութենէ իւրմէ աստ, և ի հանդերձեալն քազգր դատաստան արասցէ նմա, թողլով նմա զոր մեզ յանցանէ, ամէն։

Այլ դու, ո՛վ աստուածարեալ և հոգիանորոգ սուրբդ Աստուծոյ, ընկալ ի քոյոյ նուաստ տգի ծառայէ զսակաւ տարազս աշխատանաց և վաեւլեա բերկրալի սրտիւ ի համադամս դորա, թողութիւն շնորհելով խոշորութեան գրիդ, եւ աղալանաց բանի, թէ հանդիպիս՝ ծնողաբար ուզղեա ըստ քում քաղցր բարուցդ։ Բայց զփոխարէն մերոյ աշխատանացդ աղաչեմ ի ձեռն յորդահոսան արտասուացդ և ընդունական աղաւթիցգ ի հանդերձեալն ինձ չահաւորեա, զի ի ձեռն աղաւթից ձերոց գտայց ողորմութիւն բազմադիմի յանցանաց իմոց ի Քրիստոսէ Աստուծոյ աւրհնելոյն յաւիտեանս, ամէն, եւ անդր քան զյաւիտեանս, ամէն։

Նաև ընդ վերահամբաւելդ առն յիշեսջիք զհետևողս սորին, զտհաս և զպարզամիտ պատանի Եսայի, զի Աստուած տացէ նմա արթուն հոգի։

Բ

Ի մարգաց ԺԳ (13) սկիզբն եղև, ի նաւասարդի ԻԱ (21) կատարեցաւ*։

Գ

Սկզբնեղագունին ամենայն սկսմանց, անսկզբանն Աստուծոյ Հաւր, եւ որ ի նմանէ է անժամանակաբար ծնեալն Որդւոյ հանգունակցի նորին ամենայնիւ, ելոզին ի Հաւրէ Սրբոյ Հոգւոյն համազոյգ Երրորդութեանն ամենայն փառք, պաշտաւն և երկրպագութիւն ամենեցունց, և ի յերջանիկ ծառայէն Աստուծոյ Նեռսիսէ, եւ ի նորին զաւակէ Բարսղէ, յամենայն յաւիտեանս, և յանկէտն յաւիտեան, ամէն։

Դ

191 Ի յասմն վայրի յիշեսցի ի Տէր ցանկալին հրեշտակաց և ճշմարիտ պատկերն Աստուծոյ և Հաւր, իմաստայեղձ բարւոնին Նեռսէս, ընդ նմին և ընդունակս խելագարութեան անպիտան գծողս Բարսեղ։

Ե

495 Գրեցաւ աղիւսակս այս ի զաւրութիւնն Քրիստոս և քառամասունս, էժ-ան տառիւք։ Եթէ զմուտն կամիցիս գիտել, ունի աղիւսակս ԺԴՌՈՒ՝ մասն ի բազմապատկացն համարոյ։ Դրունք բազում են, նոյն եւ աստիճանք, թուով ԿՐ։ Բայց ակն ունիմ թէ դժւարաւ մատանես, եւ կամ բնաւ ոչ։

* Գրված է էջի ստորին լուսանցքում։

Բայց սեւագեղն եւ կարմրագեղն ոչ միապէս վարի, այլ որպէս կարասցես հասու լինել, եւ զտառապեալս հոգով յիշել ի Տէր զԲարսեղ գրիչ*։

427

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երեան 1324

Ստացող՝ Բարսեղ վարդապետ
Վայր՝ Հաղբատ

ա

356բ ԶԲարսեղ սպասաւոր բանի, որ և զգիրքս գրեցի խոշոր և անյարմար, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր։

Ի ծաղկերանգ մարդս և յամենավայելուչ դարաստանս բուրաստանաց, և կամ թէ ի դրախտս յոքնազանս յորժամ մտանէ ոք ախորժելի է նմա յորժամ մնալ անդէն, և վայելեալ տեսանելեաւքն, հոտոտեւեաւքն, և ճաշակելեաւքն, ի զունոցն, ի հոտոցն, և ի համոցն, սակայն չէ հնար յարամնալ անդէն, և վայելեալ միշտ ի նոյն, վասն զի զոն և այլ յոլովակի հոգք խափանիչք, նայ և ի գալ ձմերայնի խամրի ամենայն և ոչ բնաւին երևի տենչողացն։ Բայց աստուածատունկ բուրաս[տ]անք և դրախտ հոգելիցք և իմաստութեան տունկք, հանապազ կանաչելք և յաւետ ծաղկալիցք և բարեպտուղք են, և որ ախորժէ ոք վաելեալ ի նոցունց՝ չիք ինչ արգել։ Ուստի վաելեալ կամելով նուաստ և ապիկար ոմն Բարսեղ կոչեցեալ, նմանել տկար մեղուի՝ անժոյժ թեւաւք ընթացաւ ի մարդս աստուածայինի և յոքնազան բուրաստանս հոգէկեցոյց բանից հարցն սըրբոց առնլով ի նոցունց բանից որքան կարացի, լինել ձեռնտու և նպաստ աւգնականութեան տկարութեանս իմոյ, նայ և վստահ եղեալ յաղաւթս
357ա և ի բարէխաւսութիւն նոցունց որք յիշատակել են ի սմա,‖զի նոցին մաղթանաւք ողորմի Քրիստոս մեղուցեալ հոգո իմոյ։ Վասն որո աղաչեմ և առ ոտս անկեալ պաղատիմ, որոց լիցի սայ առիթ աւգտութեան և կամ յետ մեր ժառանգէ ոք զսայ, յիշել զանարժանութիւնս մեր միով այսու

---

* Գրված է շեղանկյուն քառակուսի ալյուսակի չորս կողմը, որի մեջ բոլոր ուղղություններով կարդացվում է պատվիրատուի անունը՝ «Ներսէս վարդապետ»։ Ալյուսակից ներքև գրված է այլ գրչությամբ՝ հին և անհարթ. «Սովորութիւն է մարդկային բնութեան յանապատն առանել աշխատել քան քէ յաւգտակարն, մանաւանդ ոք կամիցին կարծրագոյն ոսկր ձգել ի միջի, որ բազմաց անգծելի լիցի, որպէս և յառաջիկայէս է տեսանել։

Եւ սրդ, այսպէս իմա զմուտ սորա ի Դ նուէն սկսիր. որ ի մէջն է, չոր եւ կամիս, նու առ եւ գնա ի յեչն. յոր եւ կամիս, եւ յեզրէն ի ներքո եկ դէպ ի մէջն։ Կարմիր գիրն նոյնն է զինչ դրած է, ու զսեաւն զմին տասն կալ ու զտասն մի, զհարիւրն հազար կալ ու զհազարն հարիւր, ու գկարգին զդրեղն փոխէ՝ անսխալ է։

Ապա թէ դիւրին խնդրես այսպես տես. յեչն ի ներս Ջայն Րէ է, ու Հեն է է, Զին Վով է, ու ժէն՝ Այր. Մայն Եչ է, ու Բենն Ինի է. Տոյնն բոլոր եղերին ամէնն նու է, Հօն որ ի մէջն է՝ յետի գիրն է, որ երբ յամենայն կողմանց ի ներս դայ մէջն է ասէ, որ ասէ թէ «Ներսէս վարդապետին էջ»։

Հաջորդ էջում նոտրգրված է «Աղիւսակիս ի միա·դիմին զինչ սև կայ համարքն է, եւ կարմիրն բնագիրն է, եւ իւր անունն, որ է, Ներսէս Վարդապետին է գիրքս»։

աղերսիւ. Տէր Յիսուս ողորմեա մեղուցեալ ծառայի քո Բարսղի ստացողի գրոցս, և Հազարդեղի նորին հարազատի, յառաջագոյն ի Քրիստոս գնացելոց, և այլոց ևս եղբարց և ազգականաց, միանգամայն և ծնողաց իւրոց՝ ի գալստեանն քում, և որ յիշէ զմեզ սրտի մտաւք, յիշեսցի և ինքն ի Քրիստոս, ամէն։

Եւ է որ գրեցաւ իմով ձեռամբ խոշոր և անյարմար, և է որ ի ձեռս այլոց՝ ի հալակ արդեանց իմոց, ի գերահռչակ ուխտս Հաղբատայ, յորում եղէ արժանի կոչիլ սպասաւոր բանի. յաղագս որոյ ծաղկաքաղ արարի սագս իմո պիտոյից, նայև զաւակ հոգևոր զկնի ելից մեր ի կենաց աստի։

Եւ եղև աւարտ սորին ի մերումս Թուականի եւթնհարիւրորդի երեսներորդի (1281), շնորհաւք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յուսոյն մերոյն, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտեան, ամէն։

Բ

54բ—55ա Աւաղ, զի խառնակ և անաւգուտ գրեցին զգիրքս և ես խիստ եմ փոշիման, զի զայս պատճառ էր գրաւղն՝ քէ քարտեսս անաւգուտ է, այլ գրաւղն էր անաւգուտ և թանաքն։

Գ

325բ Որք հանդիպիք այսմ աստուածաշունչ երգարանի, զանպիտանս Բարսեղ սպասաւոր բանի և զեղբայրն իմ Գոզիկ և զամենայն ազգաինսն յիշեսիք ի մաքրափայլ աղաւթս ձեր, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեան։

Դ

Գրիչ՝ Յոհաննէս

96բ Աստանաւր յիշեսցի ի բարի ամենագով եղբայրս Բարսեղ, որ ետ գրել հալալ արդեամբք իւրով։ Ընդ նմին յիշեսջիք և զմեղապարտ գրիչս և մի մեղադիր լինիք, զի ծեր և տկար և պակասել ի լուսոյ։

Ե

202բ Ողորմեսցի Քրիստոս Աստուած սպասաւորի բանիս Բարսղի և մեղաւոր և յետին գրիչս Յոհաննիսի, ամէն։ Զի և յոյժ նեղիմ յաւրինակէս, և այն, զի պակասել ի լուսոյ և տկար մարմնով և անցեալ զաւուրքք*։

Զ

47ա Աւաղ վատ նիւթիս։

---

* Անմիջապես հետո, այլ գրով գրված է. «Ուսուրք Բարսեղի հայրապետին տունն և աւր պատարագ Բար[ս]եղ վարդապետին առնեն անխաբան, և յիշէն զամենայն ազգ նորայ; Յիշեսջիք և զմեղուցեալ Դաւիթս»։

է

65ա Վայ նիւթիս արնաւղն։

ը

Գրիչ՝ Աբրահամ

442բ Սուրբ Աստուածածին բարեխաւսեա առ քո Որդին միածին աւգնել Բարսեղ վարդապետին, և ողորմել ծնողաց նորին, որ ստացաւ զգիրքս զայս ի հալաբ արդե[ան]ցն, և բարեխաւս Աստուածածին, և վասն մեղապարտ և փծուն ծրողի Աբրահամա, և ծնողաց իմոց, և Վարդան հոգեվոր եղբաւր, որ շատ սպասաւորութիւն արար մեզ։

բ

359ա Բարսեղ եղբայր իմ սիրելի,
Եւ արժանաւոր սուրբ բաբունի,
Ընդրեալ և սուրբ և գովելի,
Եւ առիւծոյ հոգուն ի լի,
Արթուն հովիւ ընդրեալ հաւտի...
Դու հրեշտակ ես իմ մարմնի,
Եւ սերոբե տաղաւարի,
Ընկալ զսակաւ գիծս ի քարտի
Եւ զմեզ յիշեա ի ժամ պատեհի,
Եւ դու կարող ես յամենայնի
Քրիստոս առ քեզ միշտ էասց[ի]
Ինքն աւրհնեալ յամենայնի։

ժ

471բ Ո՛վ սուրբ հարք և եղբարք [աստուածա]սէրք, աղաչեմ վասն Քրիստոսի՝ խոշորութեանս և ծուռթեանս թողութիւն ա[ր]արէք, զի կարի փծուն և տխմար եմ և անմի[տ]։ Քրիստոս Աստուած քո մաւրա անապատ կուսիա և պ[ա]տուական խաչիա և Յովաննու կարապետին և Սբրբոյ Ստեփանոսի նախ և ամենայն սրբոց բարէխաւսութեամբ աւգնեալ Բարսեղ վարդապետին և ողորմէ ննջե[ցե]լոց սորա, որ ստացաւ զգիրքս և ինձ բազմամեղ ծրողի Աբրամա թողութիւն հայցեցէք մեր ննջեցելոցն, և որ զմեզ յիշէ, եղիցի յայնմ յիշմանն [արժանի]։

428

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՅ ԵՐԳՈՅՆ ԵՒ ԴԱՆԻԷԼ ՄԱՐԳԱՐԷԻ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԵՒԵԼՑԻՈՅ

երևան 3213

Գրիչ՝ Բարսեղ

ա

5ա ՋԴաւիթ վարդապետ և զԲարսեղ աշակե[ր]տ աղաչեմ յիշել ի Քրիստոս։

Բ

59ա Օրինակ՝ շտապս և աչքս վատ։

Գ

80ա Ո՛վ սրբասնեալ պատահող, մի մեղադրեր վասն շտապս դրելոյս.

429

ՇԱՐԱԿՆՈՑ.

Գրիչ՝ Կիրակոս եպիսկոպոս
Վայր՝ Կնղի

ա

285բ Զգրող տառիս զԿիրակոս եպիսկոպոս Կեղւ և զծնողն իմ զՍտեփանոս եւ զմայրն իմ զՅազիզ եւ զեղբայրն իմ զՓիլիպոս եւ զհաւրեղբայրսն, զառաքելաշնորհ եպիսկոպոսունքն զտէր Փիլիպոս և զտէր Սաւճակ եւ զտէր Գրիգոր և զերախտաւորն զտէր Կոստանդին եւ զհաւրաքոյրն իմ զԽաթուն Տալիթն, որ սնոյց զիս անհայր եւ անմայր, եւ Տէր Յիսուս ողորմեսցի յիշողացդ եւ յիշեցելոյս եւ նմա փառք*։

430

ՄԱՐԳԱՐԷՈՒԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ ԵՒ ԹՈՒՂՔ ՊԱՐՂՈՍԻ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՔ

Վիեննա 247, Տաշյան; Յուցակ, էջ 636

Գրիչ՝ Յովհաննէս
Վայր՝ Ժանի անապատ

ա

72ա Արդ, եղեւ զրաւ գրչութեան ի Հայկազան տոմարիս ՉԻԹ (1280), ի հայրապետութեան տեառն Յակովբայ մեծ դիտողի, եւ ի թագաւորութեանն Հայոց Լեւոնի բարեպաշտի եւ աստուածասիրի, եղեւ զուգահաւասարութիւն անաւրէն Իսմայելացւոց ի վերա քրիստոնէից. ըմբռնեցին զաշխարհս ամենայն, ի սուր եւ ի գերութիւն մատնեցաւ ազգս մեր, վասն բազում եւ անաւրէն մեղաց մերոց, ի դառն եւ նուրբ ժամանակիս։

Արդ, գրեցաւ անուշահոտ եւ աստուածահին Տեառն քնարն Պաւղոսի եւ սքանչելիք եւ գործք սուրբ առաքելոցն եւ երգն Սաիայ մարգարէի՝ հաւաքեցի զսա ի մէկ տեղի։ Արդ, գրեցաւ սա ձեռամբ մեղապարտ և անարժան ծառայիս Աստուծոյ սուտանուն կրաւնաւորի Յովհաննիսի, որ միայն զձեւս ունիմ քահանայութեան, այլ մեղաւք լի եմ... Գրեցի զսա ի

* Ձեռագիրն հետագայում նորոգվել և կազմվել է Սսեցի Կիրակոս դպիրի ձեռքով, հավանաբար Սեբաստիա քաղաքի Ս. Նշան վանքում։

վայելումն անձին իմոյ եւ ի յիշատակ հոգւոյ՝ ինձ, եւ ծնողաց իմոց, և հաւրեղբարց, եւ ամենայն ազգատոհմի, եւ փոխելոցն առ Քրիստոս... ոչ գիտելով զգրչութիւն, այլ միայն ցանկացեալ հոգէլից տառիս. աղաչե՛մ անմեղադիր լինել խոշորութեան եւ սխալանացս որ ի սմայ է...։ Գրեցաւ սա ի յանապատիս որ կոչի Ժանի, ընդ հուանեաւ սուրբ և հոչակաւոր ուխտիս Քրիստափորի եւ սուրբ նշանացն եւ Սրբուհոյ Աստուածածնին։

Տէր Յիսուս Քրիստոս ողորմեաց սուրբ գրոցս թե շատ և եթէ սակաւ, եւ քո աշխարհակեցոյց տնաւրէնութեամբ թողութիւն մեղաց շնորհեաւ։

Բ

182բ Ի թուաբերութեանս Հայոց Հայկազեան տումարիս ՉԻԸ (1279), յանկ ելեալ աւարտեցաւ դիրքս աստուածաւախս Պաւղոսի առաքելոյն զփողն Տարսովնացի, զճպռուն ճշմարտութեան ի դառն և ի նուրբ ժամանակի, շարժեալ կամք արարչին խեթիւ հայելով յարարածս, յարուցեալ զեգիպտական իսմայելեան ազգին, յերեսս բերելով զհարուածոց հոսանս, առնուլ զվրեժս յանուանեալ ազգէն քրիստոնէից, որ եւ զբաժակն անապական առեալ ի ձեռն արբուցանէ նոցա. զերբակալ արար զաշխարհս ամենայն, զոմանց արիւնն յերկիր եհեղ եւ բազումս գերի տարեալ, յաղագս ծովացեալ մեղաց մերոց։ Գրեցաւ սա ձեռամբ Յոճանիսի անպիտանաբար կոչեցեալ քահանայ, անձամբ առեալ զպատիւ եւ ոչ յԱստուծոյ...։ Վասն բազում մեղաց իմոց ստացա զսա յիշատակ ինձ, եւ ծնողաց իմոց, և ամենայն զարմից, թէ երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և ընդանի յերուսաղէմ։

Գ

355բ Ջստացող մատենիս եւ զգրողս սուտանուն քահանայ զՅովաննէս մեղսա[ս]էր յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր...

Ի թուականիս Հայոցն տումարի
Ութնհարիւր եւ երեսնի (1281),
Կատարեցաւ գիրքս*
Աստուածաշունչ եւ մեծ տառի
Առաքելին եւ Պաւղոսի
Եւ Եսայիա մարդ[ար]էի,
Աւետարանն Քրիստոսի,
Յամսեան հոկտեմբերի,
Որ աւր տասն եւ հնկեկի,
Ի ժամանակս բարեպաշտի՝
Լեւոն և մեծ թագաւորի,
Եւ որդւոյ իւրում Հեթմի,
Եւ հայրապետին մեր Յակովբի,
Հայոց եւ Տեառն կաթողիկոսի։
Աստուած եւ Տէրն յամենայնի,

* Մի բառ պակասում է։

Ժամանակ տացէ նոցա բարի,
Ի յապագայսն աներեկի։
Յեւթնհարիւր ամին եւ երեսնի (1281)
Շարժեցաւ ազգն Թաթարի,
Անհամար եւ անթուի,
Ջուեաց յաշխարհն Եգիպտոսի
. . . . . վրացի
Գեր ...Իսմայէլի,
Աստուած աւրհնի յամէն տեղի։
Ո՛վ սուրբ եղբայր առաքինի,
Որ գու սիրող ես Քրիստոսի...
Յիշման արա դու արժանի,
Ի սուրբ աղաւթս սրտաստւալի,
Չի թողութիւն ինձ պարգևի...

Դ

Յիշեսչիք///եւ* զհոգևոր էւ զեղբայրն եմ զՍտեփանոս՝ կազմող գրոցս, որ աշխատեցաւ ի սմայ**։

431

ԱԻԵՏԱՐԱՆ

Կոնիբիբ, Յուցակ Լոնդոնի, էջ 8

Վայր՝ Ասպիսընկա վանք

Փառք... արդ գրեցաւ... սուրբ Աւետատետրս, ի թուիս ՉԼ (1281) ի գաւառիս յԱրճիշոյ, ի վանս յԱսպիսընկա ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածինս, յառաջնորդութիւն հաւր Արրահամու, զոր Տէր պահեսցէ անարատ իմ կամս իւր։

Արդ, գրեցաւ ձէռամբ անարհեստ գրչի սուտանուն քահանաի, որ զանունս միայն ունիմ և զվարս՝ ոչ իսկ չեմ արժանի յիշելոյ։

432

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 5915

Գրիչ՝ Ներսէս
Վայր՝ Յոհանց վանք

404ա Արդ [աղ]աչեմ յիշել զհայր սուրբ ուխտիս Յոհանցիս զսրբասնեալք քահանա զՆերսէս յաղաւթս ձեր, ամէն։

---

* Սի յետ քեղված է։

** Երեք տարբեր նյութերից կազմված սույն ձեռագիրը Հովհաննես գրիչը գրել է երեք տարբեր տարիներում և կազմել միասին «ի մեկ տեղի»։ Դնում ենք վերջին (1281) թվականի

404բ Յամի ՉԼ երորդի (1281) թուականիս, աստանաւր յանգ ելեալ աւարտեցաւ Աւետարանս այս ի սուրբ ուխտիս՝ ի հռչակաւոր վանս Յոհաննց, ընդ հովանեաւ Սուրբ Կարապետիս և Սուրբ Նշանի խաչիս, ի յառաջնորդութեան սրբասնեալ հայրապետին տեառն Յակոբայ, ի թագաւորութեանն Հայոց Լեռնի, և իշխանութեան Սմբատայ, միշտ խնդրելով ի Տեառնէ, ղի տացէ զսոսայ ուղղութեամբ և արդարութեամբ հովի[ու]ել զժողովուրդս Քրիստոսի և առնուլ ի Տեառնէ զվարձս ըստ վաստակոց։

տակ, երր հավանաբար, նաև կազմվել է։

Վերչին կազմի աստառի վրա, որ թուղթ է, գրված է. «Յայտարարութիւն, ի Ռմկէ (1788) թուին, որ յայնմ ամի արեգակն խաւարեցաւ բոլորովին եւ աստեղք երեւեցան, եւ մարտիրոս անվարժ վարժապետս Լիւստրացի զայս գիրքս վանն սիրոյն տիրացու Դէորգին, որ է աւագ սարկաւագ եւ ղարգ Քառասուն մանուկ եկեղեցւոյ, աշխատասիրութեամբ զննչեալ տառան գրեցի, քանզի ի բազում տեղիս տառքն աւերեալ եւ եղծեալ էին, որոյ վասն յայլ ընտիր օրինակն հայելով՝ գրեցի...»։

433

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 10687 (1277 թ.)

Գրիչ՝ Կոստանդին
Վայր՝ [Կեսարիա]

134բ *Փառք հաւասարապատիւ և համաբուն, պաշտելի և երկրպագելի Երրորդութեանն Հաւր և [Որդւ]ոյ և Հոգոյն Սրբոյ։*

Բարի արարածս բնութեամբ ստեղծեալ բարի ի բարւոյ արարչէն, ըստ աստուածեղէն վկաութեան գրոց, և զնոյն երնեցուցանէ միշտ փափագմամբ ի նոյն։ Ըստ որում բազումք ըընդերկրաւս ամենայն անտեսեալ ղուրվականս և ղառաւրեալս, վասն հոսանուտ և անցաւոր գոյոյն և միոյն միայնոյ իսկապէս բարոյն հետևեալ փափագմամբ, այս է Աստուծոյ և աստուածայնոցն: Եւ յաղագս նորին արեամբ չափ պատերազմեալ, հակառակ կալով մարմնոյ և մեղաց, ոմանք զանձինս ի մահ եդին, որպէս զվկայսն երանելիս, որք ընդ հուր և ընդ սուր խաղացին, վերագոյն գտեալ հնարիցն սատանայի և գործակցաց նորին։ Եւ այլք ճգնողական խստակեաւն վարուք արեամբ և մարմնով ընդ իշխանքն աշխարհի և այսոցն չարութեան մարտեան և սպառազինեալ քաջապէս խաչին Քրիստոսի պարծանաւք յաղթեցին։ Եւ կէսք ընդ անձին և զստացուածս և զինչս բազմածախս նվիրեցին Աստուծոյ մատակա[րա]րելով բաշխմամբ աղքատաց և կարաւտելոց, ակն ունելով հատուցման փոխարինաց յամենառատ Տեառնէն։ Եւ զայս առնեն ոմանք վասն սիրոյն Աստուծոյ, և կէսք սակս երկեղի տանջանաց, և այլք վասն պսակաց հանդերձելոց փառացն, փոխարինացն ակն ունելով և վարձուցն ընդունելութեան։ Յորոց էր մի սրբակրաւն և պարկեշտ վարուք առաքինի քահանայ Յովսէփ, որ մատոյց զանձնուէր ի պաշտաւնն Աստուծոյ, և ընդ անձին կամեցաւ տալ երախայրիս ի տաճար Տեառն ի Նոր Սիոն զաւակ զշունչ և զբան բանին Աստուծոյ մարմնացելոյն Քրիստոսի Յիսուսի վասն մեր՝ իւրոցն մատանց վաստակաւք և ձեռացն երկամբք, և զնոյն յոլով աշխատութեամբ և բաղում քրտամբք, ի դառն և յաւուրս ժաման[ակ]իս, և ըստ սրտին իւրոյ տենչման աւարտեաց զսա։ ի թվին Հայոց ՉԻԶ (1277), ի հայրապետութեան տեառն Յակոբայ և ի թագաւորութեանն Լեոնի բարեպաշտ արքայի։

Եւ յետոյ, ի թվին Հայոց ՉԼԱ (1282) ելեալ ինքն պատուելի քահանայ Յովսէփ ի Կեսարւոյ Կապադովկացոց, ճանապ[արհ]որդել ի գաւառն Կի-

235ա լիկոյ; եւ հասեալ ի քաղաքն Նգիոյ, որ է Այաս,‖եւ եղև յանգարծակի շրջաբնակաց ոմանց Իսմաէլացոց, որ յայսմ ժամանակի զզուէին զերկիրն, արշաւեցին ի քաղաքն Այաս և որ շուրջ զնովաւ գեաղք և աւանք. ղրաղումս գերեցին, և զայլս սրախոխոջ արարին, ընդ որս և պատահեաց քահանայ Յովսեփ, և կատարեցաւ սրով, յամսեանն դեկտեմբերի ԻԲ (22), և ընգալաւ ի պսակողէն սրբոց ի Քրիստոսի զանթառամ պսակն, սուգ մեծ և վիշտ և աղէտ կսկծալի թողեալ ծերունի և բազմահառաչ մաւր իւրոյ, և հարազատ եղբարց Գրեհին և Սեթին, և ամենայն ազգատոհմի իւրոյ։

Վասն որոյ և ես Կոստանդին՝ նուաստ և յետինս յորդիս եկեղեցւոյ, անմխիթար սգով լցայ ընդ մահն իմոյ արեանառու սիրելի և համազգի եղբաւրն, ղի ըստ մարմնոյ եղբաւր հաւր իմոյ որդի էր Յովսեփ, և ի տղայական տիոց միասին սնեալ և վարժեալ մեր յաստուածաւանդ աւրէնս Տեառն, երես անգեալ աղաչեմ զքրիստոսասէրսդ, զի յիշեսջիք սրտի մտաւք զգրող տառիս զՅուսէփ աղաւթիւք ի Տէր, և նա ինքն, որ զամենեսեան դիտէ և ճանաչէ յանւանէ կոչելով, զձեզ զամենեսեան յիշեսցէ, և ինքն աւրհ[ն]եալ եղիցի յաւիտեանս, ամէն*։

434

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԴԻՈՆԻՍԻՈՍԻ ԱՐԻՈՊԱԳԱՑԻՈՅ

Երևան 49

Գիրչ՝ Ստեփանոս

ա

338բ Փառք էից անբաւից Սուրբ երրորդութեանն և մի տէրութեան և զաւրութեանն Հաւր և Որդու և Հոգւոյն Սրբոյ, այժմ և յաւիտենից յաւիտեանս, ամէն, որ ետ զաւրութիւն իմո տկարութեանս նաւել ընդ այսպիսի յորդեռանդ և գերահոս անբաւ խորոցս, ղեկաւ եղեգնեաւ և թոյլ և տարտամ դաստակաւ։ Բայց զաւրացուցիչ և խնամիչ Հոգին ճշմարտութեան և զաւրութեան, որ ասգէ ի կենդանս և յանկենդանս, որ և ղիս հասոյց ի յաւարտ
339ա ձեռնարկութեանս այս, ի թիւս ՉԼԱ (1282) Հակազեն տումարիս,‖և յորամ սկսեալ՝ ի նոյն կատարեալ։

Բայց գրեցաւ հրամանաւ գիտնական և արդիւնական հեռետորի Ներսիսի ի ծնունդ և ի սնունդ** մաքրափայլ որդոյ մաւր մերո Սիոնի, որ և զյաւժարամիտսն ծնանի երկաւք բանին ճշմարտութեան, այլև յիշատակ իւր և իւրոցն ամենայնի։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ կենսապարգև կտակիս, յիշեսջիք զառաջ ասացեալ երջանիկ վարդապետն Ներսէս, և զծնաւղբսն իւր։ Ընդ նմին և զՄովսէս բեմբական, որ ամենայն մարմնաւոր հանգստեամբ սպասաւորեաց մեզ, որ և փոխարէն տացէ նմա Տէր զիւր

---

* Կոստանդնի հիշատակարան-վկայութիւնը գրված է Հովսեփի արտագրած ձեռագրի վերջում։

** Գրված էր «ի սնունդ և ի ծնունդ»։ Սրբագրիչ նայի նշեցին «սնունդ» բառի վրա «ր» է գրել, մյուսի վրա՝ «ա», որպեսզի կարդացվի «ի ծնունդ և ի սնունդ»։

հանգիստն։ Իսկ հուակ յետո քան զամենեսեան, յիշեցէք զազազուն և փցուն գրիչս՝ Ստեփանոս սոսկ անուամբ կրաւնաւոր, և զեղբայրն իմ Պետրոս, զհանգուցեալն ի Քրիստոս, և զայլ աշխատեալքս ի սմա, և տացէ Տէր յիշողացդ և յիշելոցս զիւր անճառ հանգիստն յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Բ

165ա Յայսմ հետէ յայլ սուրինակէ գրեցաւ մինչև ի Ե (5) տետրակ։

Գ

Ուղղող՝ Եսայի

296ա Զամենամեղ ոգի Եսայի, որ յուղղեալս աշխատեցայ, յիշեսջիք հանդերձ վարժողաւք ողորմութիւնն Աստուծոյ։

435

ԱԻԵՏԱՐԱՆ

Կոնիբեր, 8ուցակ Լոնդոնի, էջ 18

Գրիչ՝ Բարսեղ
Վայր՝ Դրազարկ

ա

Յորժամ մեծ թուական Հայոց Չ[ԼԱ]* էր, ի թագաւորութեանն Հայոց Լեւոնի, որ Բժ (12) ամ էր թագաւորութեանն նորա, և ի հինգետասան ամ ի հայրապետութեանն Հայոց տէր Յակոբա, գրեցաւ սուրբ Աւետարանս ի հռչակաւոր մենաստանիս ի Դրազարկս, ընդ հովանեաւ մաւր լուսոյ Աստուածածնիս, յիշատակ Թորոս վարդապետի։

Բ

...Որում ցանկացեալ... վարդապետն Թորոս և ետ գրել զսա... վասն որոյ աղաչեմ... յիշել ի մաքրամատոյց յաղաւթս ձեր զԹորոս վարդապետն և զծնողսն իւր, և զեղբարս նորին զՌոբէն, զՅակովբ և զՅովհաննէս և զքոյր նոցա զԱզիզն...

Աղաչեմ յիշել զփցուն գրիչս Բարսեղ և զծնողս իմ։

---

* Թվականը ցույց տվող հաջորդ տառերը ջնջված են, բայց քանի որ ձեռագիրը ավարտվել է Լեոնի թագավորության տասներկուերորդ և Հակոբ Կլայեցու կաթողիկոսության տասնհինգերորդ տարում, նշանակում է գրության թվականը ՉԼԱ—1282 է, ինչպես ընդունում է Տ. Կոնիբերը։

436

ՃԱՌՐՆՏԻՐ ՄԽԻԹԱՐԱ ԱՅՐԻՎԱՆԵՑԻՈՅ

Երևան 1500, «Ակոս», Բեյրութ, 1946 թ, էջ 124—126

Գրիչ՝ Մխիթար Այրիվանեցի
Վայր՝ Այրիվանք

ա

7բ Աւգնեա Յիսուս և ողորմեա
Տէր Մխիթար վարդապետիս,
Գրչողիս և ստացողիս
Աստուածաշունչ սուրբ կտակիս,
Յառաջին աստիճանիս։

բ

15ա Ողորմեա Քրիստոս տէր Մխիթար վարդապետին*։

գ

40ա Որոց աղաւթաւքն ողորմեսցի Քրիստոս Աստուած տէր Մխիթար վարդապետիս, գծողի և ստացչի։

դ

67բ Գթա Քրիստոս Աստուած քո սուրբ առաքելոցն բարեխաւսութեամբ ի տէր Մխիթար վարդապետն։

ե

76ա Վասն հայրապետին մերո տեառն Յակոբայ կենաց և փրկութեան զՏէր։

զ

79բ Եկեղեցո իւրում սրբո և ամենայն ուղղափառ եպիսկոպոս հայրապետին Հայոց տէառն Յակոբայ եւ մերո արհի եպիսկոպոսի տէր Մխիթարա, որ զպատիւ և վասն զաւրութեան և յաղթութեան թագաւորաց

---

* Այսպիսի հիշատակություններ կան 20ա, 44բ, 74բ, 230բ, 262ա, 285բ, 298բ, 312բ, 346ա, 507բ, 576ա, 685ա, 696ա էջերում։

քրիստոնէից և իշխանաց բարեպաշտից, քրիստոսաղաւր արքաին Լեւոնին և Դեմետրէի, և ամենայն զօրագլխաց և զաւրաց նոցին, ազատութիւն եղբարց*։

է

230բ Զչորրորդ Մակարաէցիսն ոչ գտի, եւ ոչ զՅովսէպոսն, որ գրել էի ի գիրսս որ է Կաիափա։

ը

369բ Յիշեա ի բարի, բարերար Յիսուս զտէր Մխիթար վարդապետն։

թ

763ա Աւրհնեալ է Աստուած, որ աւրհնէ զտէր Մխիթար վարդապետ ծորպտիչ գրոցս։

ժ

879ա Աստուած բան, ողորմեա բազմամեղ տէր Մխիթար վարդապետի գրչի։

ժա

976ա Վեցօրեայ գիրքս երկու թարգմանչաց է յաւրինած, վասն որո ուրոյն ուրոյն են։ Քրիստոս Աստուած քավեա զմեղս տէր Մխիթար վարդապետին։

ժբ

Զայսոսիկ** ժողովեցի ի միասին եւ գրեցի յաւուրս Ծ եւ Հ(170), ես տէր Մխիթար վարդապետս։
Թվ[ին] ՉԼԲ (1283) գրեցի յԱյրիվանս, յաւուրս Ծ եւ Հ (170)։

ժգ

Տէր Մխիթար վարդապետի
Այրիվանայ մեծի ուխտի,
Ծռափափաք տենչմամբ սրտի
Յօժարեցեալ ի գործ գրչի,
ԶԱստուածաշունչս ի մի տըփի
Եւ սուրբ գրեանս, որ ի կարգի,
Յուսով յԱստուած վստահալի
Գրել սկսայ կարդ ըստ կարգի։
Բայց ես տըկար եւ հեղգ հոգի,

* Գրված է «Գոհութիւն և փառաբանութիւն» քարոզի մեջ։
** Ձեռագրի գլխավոր հիշատակարանը չի պահպանվել, որովհետև վերջից թերթեր են պակաս։ Բարեբախտաբար ժամանակին այն արտագրվել է մի ձեռագիր ժողովածուի մեջ, ինչպես հաճախ անում էին միջնադարյան գրիչները, և պահպանվել։ Ն. Ակինյանը այն տեսել է Բեյրութում, գրված մոտավորապես 1309—1387 թթ.։
Այրիվանեցին Հիշատակարանում բերել է նաև «Կարգաւորութիւն գրոց սրբոց» ցանկը, որը կա նաև իր Ժամանակագրութեան մեջ (էջ 35—36)։ (Ն. Ակինյան «Մխիթար Այրիվանեցւոյ Ճառընտիր Նորագիւտ Յիշատակարանը» «Ակոս» ԺԳ, 1946, Բեյրութ, էջ 123—124)։

Մարմնով տարտամ եւ ցաւալի,
Զունիմ նիւթ յիս [ես] հաճելի
Շորում Հոգին Աստուած հանգչի։
Արդ պաղատիմ արտասուալի,
Որք հանդիպիք այս մատենի
Զիս յիշեցէք Տեառն առաջի,
Միթէ բազում մեղք իմ քաւի։

ժգ

Գրիչ՝ Սարգիս

230բ *Զ*Սարգիս *յիշէ։*

ժե

270բ *Զ*Սարգիս *Տէր յիշէ։*

ժզ

Ո տէր Մխիթար *վարդապետ յիշեա ի Տէր։*

ժէ

Գրիչ՝ Ստեփանոս

*Զ*Ստեփաննոս *սարկաւագ յիշէ**։

437

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՏԱՍԱՆ ՄԱՐԳԱՐԷՒՑՆ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՑ

Երեան 1216

Ստացող՝ Գրիգոր Բջնեցի
Վայր՝ Բջնի

ա

Փառք Սուրբ Երրորդութեանն Հաւր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ եւ յամենայն յաւիտեանս, ամէն։

216ա *Ի թուիս ՉԼԲ (1283) գրեցաւ Մեկնութիւն երկոտ[աս]ան մարգար[է] իցս։*

Շնորհաւք ամենախնամ Սուրբ Հոգւոյն, ես Գրիգոր սպասաւոր բանի և Տեառն Յիսուսի Քրիստոսի ծառայ, ազգաւ Տամբատեցի, որ և մականրեալ կոչեցայ Բջնեցի, սնեալ և վարժեալ առ ոտս տիեզերալոյս սուրբ և երանաշնորհ րաբունապետին Վարդանայ, մեծաւ բաղձանաւք ետու գրել զՄեկնութիւնս. երկոտասան մարգարէիցն, զոր արարեալ է տեառն Ներսիսի եպիսկոպոսի և վերադիտողի թագաւորական քաղաքին Տարսոնի լուսաւոր մտաւք և աստուածիմաստ հանճարով, ի լուսաւորութիւն մանգանց Սիովնի, և զՄեկնութիւնս մարգարէութեանն Երեմիայի, զոր արարեալ է երիցս երանեալ րաբունոյն Մխիթարայ, որ մականրեալ կոչեցաւ Գոշ։

---

* *Ժդ—ժէ հիշատակագրութիւնները գրված են ձեռագրի լուսանցքներում կարմիր գունով գծված զարգի բոլորակների մէջ։ Հավանաբար Սարգիսը ծաղկողն է և Ստեփանոսի հետ օգնել է Մխիթարին։*

Արդ, հոգեզուարճ փափաքանաւք ստացայ զսա ի վայելումն և ի
զբաւսանս անձին իմոյ և զկնի ելանելոյն իմոյ յաստեացս, յիշատակ
հոգւոյ իմոյ, և ծնաւղացն իմոց և ամենայն արեան մերձաւորաց։ Արդ,
որք աւգտիք ի սմանէ ընթերցմամբ կամ ընդաւրինակէք, յիշեսջիք աղաւ-
թիւք զիս՝ զԳրիգոր վարդապետս մականուն Բջնեցի, և ծնաւղսն իմ, և
զամենայն ազգայինս ի մեղաց թողութիւն, որպէս ղի աղաւթիւքն ձե-
րովք ողորմութիւն գտայց յապագա յաւուրն. առաջի ահաւոր ատէնին
Քրիստոսի, զարմիւք մերովք և ամենայն նախնեաւք, որովք յիշողքդ
հանդերձ յիշատակելովքս ողորմութեան և գթութեանցն Աստուծոյ հան-
դիպեսցուք առաջի դատաւորին Քրիստոսի, և երկնաւոր բարութեանցն
հասցուք ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս,
ամէն։

Բ

Գրիչ

217բ Զարի, եոջանիկ, զսուրբ և տիեզերալոյս րաբունապետն զԳրիգոր
Բջնեցի՝ ծնաւղաւք իւրովք և հարազատովք յիշել աղաչեմ արժանաւոր
աղաւթիւք, և տէր Աստուած զձեզ յիշեսցէ ողորմութեամբ և գթութեամբ։

Գ

Փառք փառաւորեալ, համազաւր, համագոյ, համարնակ տէրու-
թեանն Հաւր և Որդոյ և ամենասուրբ Հոգւոյն յաւիտեանս յաւիտենից,
ամէն։

424ա Յամենախնամ ողորմութենէն, յամենասուրբ Երրորդութենէն և ի
կամաց զաւրութենէ նորա, սիրող եղեալ ամենայն Հին և Նոր Կտակա-
րանաց աստուածային հրամանաց, րաբունի վարդապետն Գրիգոր մա-
կանուն Բջնեցի բարի անուն, լեալ աշակերտ մեծ վարդապետին Վար-
դանա; Այսմ իրի ցանկացող եղեալ աստուածասէր և ճգնազգեց ընդրեալ
վարդապետ Գրիգոր կոչեցեալ, այր հեզ և խոնարհ և պատուիրանաց
Տեառն պահող և քաղցր առ ամէնեսին, և ուսուցիչ, և ուղղիչ բազմաց,
և դարձուցիչ մեղաւորաց, որպէս հայր գթած, որ և ոչ կնտընտոցաւ լե-
զուաւ բաւեմ պատմել զպես պես զառաքինութիւն սորայ, քանզի ան-
ցանէր զամենեքումբ։ Սայ բազում աշխատութեամբ և մեծաւ ջանիւ ժո-
ղովել զսայ ի տեղւոջէ ի տեղիս ընթանալով և յաշխարհէ յաշխարհ, որ-
պէս գործաւէր մեղու, որ զթևսն արձակէ և ի մարգսն թռչի, և կապտէ
պտուղ զանազան և գեղեցիկ, և աշխատի առնելով ի մաղսն զվեցան-
կիւնիսն և զընդդիմադրել բջիջսն անկանելով։ Նոյնպէս և սայ զոտս
արձակել և յաստուածային բուրաստանսն ընթացեալ, և զգեղեցիկ, և զըն-
դիր-ընտիր և զքաղցրահամ ծաղիկս հաւաքելով զպտուղս հոգևորս ի
424բ միասին և ըշտեմարանս մտաց ամբարել զաստուածային և գճշմար‼իտ
գանձս պատուական, որպէս և է այս Հաւաստեաւ գանձարան կամ Իմաս-
տութեան ժողովարան, բերեալ մատուցանէ աստուածասէր և ճշմարիտ
գիտնականաց։ Որպէս մեղուն զքաղցր ճաշակ, նոնյպէս և զսա հոգևոր
խրատս և ղանուշահոտ կերակուր ջամբէ ուս[ու]մնասիրաց և երկիւղա-

ծաց անձանց։ Տէր Յիսուս յիշեսցէ զհոգի սորա և դասեսցէ ընդ սուրբս իւր, ընդ նմին և ղծնողս իւր յանծերանալի կեանսն, ամէն։

Արդ, ով որդիք լուսոյ ամենայն յամենայնի, Գրիգոր վարդապետ ցանկացող եղեալ այսմ պատուական մարդարտի, բաղում փափականաւք և մեծաւ ըղձմամբ, որ փափագէք կենդանի ջրոյն և լնոյք զփափագ տենչման ձերոյ ի սուրբ կտակէս, յիշման բարիոյ արժանի արարէք զպատուեալն յԱստուծոյ և ի մարդկանէ զտէր Վարգան, և րաբունի վարդապետն Գրիգոր, և զամենայն ընդանիս իւր՝ զմիջինսն և զվերջինսն և զառաջինսն, և զարեանառու մերձաւորսն իւր, և զգնացեալսն առ Քրիստոս, յորում յարութիւն կենաց շնորհեսցի ի Տեառնէ Յիսուսէ, ամէն։

Շնորհիւ բարերարին Աստուծոյ ե ողորմութեամբ Որդւոյ և աւժընդակութեամբ Հոգւոյն Սրբոյ խնամողին և ձեռնատուողին և հաստողին, որ ամենեցուն առաջն է ի բանս և ի գործս բարիս առաջնորդել, տէր Վարդանա և րաբունի վարդապետին Գրիգորոյ և զաւրէնս առն իմաստնոյ, որ խնդրիգ մարգարիտս գեղեցիկս և բազում աշխ[ատութեամբ]///

438

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Վենետիկ 150, Սարգիսյան, ծուցակ Ա, էջ 643—645

Գրիչ՝ Յոհաննէս
Վայր՝ Կաև գիւղ

ա

102բ Ի թուականութեան Հայոց ՉԼԲ (1283) գրեցաւ տիեզերաքարող և գերահռչակ աւետարբր սուրբ Աւետարանս, ձեռամբ անարհեստ և անարժանի Յոհաննէս իրիցու, որ ապաւինեալ ի ներողութիւնն Աստուծոյ և ի բարեխաւսութիւն նորին, իշխեցի մերձենալ ի հրակէզս և ի բոցաճաճանչ փայլուածս, որ պատմէ զանքննիս, զխորս խորոցն Աստուծոյ, որում փառք ի յաւիտեանս, ամէն։

բ

Իբրև իժի և քարբի խցել զականսն ոչ ուրեք լուել զբանն Տեառն թէ Ամենայն որ հարցի ի վէմս յայս՝ փշրեսցի և յորոյ վերա անկցի՝ հոսեսցէ զնա, որ և հոսեցաւ ի մանր փոշիս և տուաւ մրրկի մեծի, քանզի յանձնէ ել դահիճ անձինն զմարմինս բազկացն կերեալ, ըստ ձայնի սբրբոյ հայրապետին, եւ այս իբրև այլուստ ուստեք ներգործեցաւ ի Տեառնէ, զի մի իշխեսցուք համարձակիլ յասել եթե ամբծութիւն մեր և հպարտութիւն ի գլուխ ելանիցէ, այլ թէ այցելուն Աստուծոյ այցարար։ Եւ արդ բազում զգուշութեամբ զանձինս հոգասցուք, զի մի նախատինք դրացեաց լիցուք։ Առ մեղ բազում բան կատարեցաւ և այդ ձեզ յիշումն փոքր ի շատէ։

Ի յայսմ ժամանակի քահանայ ոմն Երեմիաս իմաստուն վաճառական և ակն առատ տեսանող՝ ի մտի եդել զամենայն ինչս իւր վաճառել և սկիզբն արեալ յառաջ զստացաւ զտիեզերալուր քարոզս զաստուածա-

բարբառ մատեանս, զհոգիախաղաց տառս, զհնչումս աւետեաց երկընաւորաց և երկրաւորաց, զյոյսս ամենայն աշխարհի։ Եւս առաւել մեծաւ յուսով ստացող սորա Երեմիաս ստացաւ զսա յիշատակ իւր և ծնողաց իւրոց և ազգականաց, և ոչ այսքան, այլ և սա շինեաց վկայարան և կատարեաց ի յայսմ ամի, և բաղում ընչիւք ծախաւորեցաւ ի նմա, մինչև արկ գոյիւ չափ զկեանս իւր, զոր ունէր զամենայն, յիշելով զբան սորին սուրբ Աւետարանիս, եթէ Մի հոգեայցէք զվաղիւն, քանզի այսու յայտնի սէր կատարման, եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահէսջիք։

Եւ արդ, աղաչեմ զամենայն աստուածազան ընթերցողաց և զլսողս, զի զայս ամենայն յանձն առ վասն կարի փութագանաց ի պէտ աղաւթից ձերոց, յիշելոյ արժանի առնէք ի սուրբ և մաքրափայլ յամբիծ աղաւթս ձեր զԵրեմիա քահանայ, և զհայր իւր զՏիրաառւր՝ բարեսէր և ողորմած ի պէտս ե բարի հատակաւ ծերացեալ, և զմայր իւր զՄայրաիկին՝ զփոխեալն ի Քրիստոս, և զմիւս սնուցանող մայր սորա զՏիրանցն, որ աշխատեցաւ ի վերա սորա մինչև ի հասակ մեծութեան, և ապա երկուցեալ յարդար դատաւորէն, զի թողեալ զբնակութիւն աշխարհիս և զսէր, տարագրեցաւ ի տար աշխարհ՝ բազում ճգնութիւն յանձն առեալ վասն փրկութեան անձինն։ Ընդ նմին յիշեսջիք և զկենակից սորա զԹագուհի և զծնաւզսն իւր զՅովաննէս քահանայ, և զմայրն իւր զՄարեմ։ Յիշեսջիք աղաչեմ դարձեալ զԵրեմիա քահանայ, և զեղբարսն իւր՝ զՍարգիս և զԱւտուրն, և զքոյրն սոցին զՄարզրիա, և զԳրիգոր երէց։

Եւ արդ, քանզի Աստուած հասարակաց է պարգեւատու և ձրի ի շնորհս, և դուք մի ձանձրանայք, այլ ախորժելով մտադիրեցէք և ցաւակցաբար խնդրեցէք, յիշեցէք և զՅովաննէս, որ ի մէջ երկոցունց շնորհեալ է կնիք լուսաւորութեան սուրբ աւազանին, և զկենակիցն զՏիկնացն, և զքոյրն իւր զԹուրքեր, որ յայսմ ամի փոխեցաւ, և սուգ մեծ թողեց ծնողացն, որոց ողորմեսցի Տէր Աստուած առ հասարակ ամենեցուն, ամէն, քանզի և սոքա ի հալալ արդեանց իւրեանց ընծայեցին ի յիշատակութիւն սուրբ աւետարանիս ի փրկութիւն հոգոց իւրեանց։

Եւս առաւել Յովաննէս քահանայի՝ ուսուցանողի և վարդապետի սորա հաւատարիմ, և ստացեալ ունի զզարդ կատարմանն զեղբայրսիրութեան առ ամենիսեւն, և եղև սմա առիթ ի հոգևորն և ի մարմնաւորս, որոյ հատուցանէ սմա Տէր Աստուած վարձս բարիս, և սա կաղմեաց զսուրբ Աւետարանս շնորհելով միայն ի ձիրս։

Եւ զԸնձեր՝ նկարիչ սորա յիշեսջիք, աղաչեմ։

Եւ դիս, զանարհեստ և զանարժան գրոզս զՅոճաննէս երէց, որ առաւել կարաւտիմ ձերոց աղաւթից, յիշելոյ արժանի արարէք զիս և զծնողսն իմ, զհայրն իմ Վարդապետ անուն, և զմայրն իմ զՄամաւթիկին, և զերեսին եղբարս իմ և զքոյրսն, և ինքն որ տուիչն է ամենայն բարեաց՝ Յիսուս Քրիստոս, առ հասարակ, ողորմեսցի յիշողացդ և յիշելեացս, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Գրեցաւ սուրբ Աւետարանս ի գաւառիս Կարնո, որ կոչի Թեւդեպատլիս, ի Կաճ դեղ, ընդ հովանեաւ սրբոյ զաւրաւարիս [Սարգսի] և Սրբոյն Գրիգորի և Սրբոյն Սիոնի և սրբոյն Գէորգա։

439

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 4066

Գրիչ՝ Կոստանդին
Վայր՝ Անավարզա

ա

349բ Փառք պաշտելի Երրորդութեանն և միոյ աստուածութեանն, այժմ և միշտ և յաւիտեանս, ամէն։ Ջերջանիկ հայրապետին Հիւպողիտա զՀամառաւտ մեկնութիւն Երդոյ երգոցս հս բազմամեղ հոգի Կոստանդին գտի գրեալ յոյժ գեղեցիկ սրբոյ հարւն մերոյ տեառն Ներսիսի Տարսեցի եպիսկոպոսի, և ի միջոյն ի վեր իւր իսկ մեկնեալ, և յոյժ փափագմամբ և ցաւագին մարմնով դրեցի ի վայելումն աստուածասէր ընթերցողաց։

Գրեցաւ ի յաստուածապահ՝ դղեակս Անաւարզաբա, ընդ հովանեաւ ամենասուրբ Աստուածամօրն պատկերի, յառաջնորգութեան սուրբ և աստուածապատիւ տիեզերալուր տեառնս Գրիգորի, ընդ որոյ թևաւք խնամոց յաւուրս դառնութեան մերոյ ՝տառապիմք յընթերցումն աստուածախաւս տառից, զոր ղաստուածատունկ, զամենափարթամ և զյոքնապտուղ կերակրիչս ոդոց բանականաց զտէրս մեր ընդ երկայն աւուրս շնորհեցէ Տէրն Քրիստոս և ի հանդերձեալսն ծնողաւք իւրովք արքայութեանն երկնից արժանաւորեսցէ։

Ընդ նմին և զմեղապարտ գրողս Կոստանդին, և զիմ ըստ հոգոյն զհամաշունչ և զսիրելի եղբայրս զԿոստանդին, որ ի միասին վաղ ժամանակաւ և բազում վշտաւք ներքնաւք և արտաքնաւք, հոգեկանաւք և մարմնականաւք տառապիմք յընթերցումն աստուածախաւս տառից ոչ յումեքէ, բայց միայն յամենատուր Տեռանէն ակն ունելով վարձուց և մխիթարութիւն, մերովքն ծնողովք։ Ցիշեսջիք և զիմ ըստ հոգոյ հայրն զՄխիթար քահանայ, և զեղբայրն զՊետրոս քահանայ, և ծնողս նոցին։ Եւ զեղբարքս մեր, որ ի միասին կամք ի վարժս տառիցն Աստուծոյ, և որ առատն է յամենայնի, ամենեցուն առհասարակ ողորմեսցի, և նմա փառք։

Գրեցաւ ի թվին Հայոց ՉԼԲ (1283), ի յԱնավարզայ։

բ

115ա Առաքելի ստացողի գրոցս ողորմեայ, Տէր։

գ

192բ Ընկալ, ո՛ պատուական վարդապետ Առաքել, զսակաւ գիծս յոլով աշխատանաւք ի մենջ։ Սակայն թեպէտ զկամս ձեր ոչ ունի լնուլ վասն սղալին և խոջորութեանն, այլ ի մենջ յոյժ տաժանելի կրիւք այս չափ յառաջացաւ։ Այլ և աղաչեմ սիրով տեսանել և յաղաւթս յիշել զմեզ և յողորմութիւնն Քրիստոսի, և զսիրելի եղբայ[ր]ս մեր զՍտեփանոս. մերայնաւքն հանդերձ, և յիշել լիջիս դու ի յաւրքայութեանն Աստուծոյ, յորժամ պսակէ զսուրբս իւր աւրհնելն, յաւիտեանս, ամէն։

440

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6764

Գրիչ՝ Ստեփաննոս
Վայր՝ Սկեռայ

262բ Փառք ամենասուրբ երրորդութեանն՝ Հաւր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Որոց փափագ ըղձիցն յաստուածայինսն բերին, նոցին և հուրն սիրոյ միշտ և հանապազ բորբոքի աւրըստաւրէ աճմամբ, և այսոցիկ պատրաստեալ կամայաւժար մտաց ընծայելոց զինքեանս Աստուծոյ։ Որպէս և գերապատուելսն ծայրագոյն իշխանութեամբ ի բարի արմատոց մեծափառ թագուհին Հայոց Կեռաև, դուստր իշխանաց իշխան Հեթում սեբաստաւսի, որոյ զերկիւղն աստուածային յինքն ամփոփեալ զգլուխ և զսկիզբն ամենայն իմաստութեան, և ըստ ամենայն բարեգործութեան իւրոյ, խորհուրդ բարի ի միտ արկեալ, ետ գրել զքառավտակ սուրբ Աւետարանս ի յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց, և բնաւ զարմից՝ կենդանեաց և նշեցելոց, ի լուսաւորութիւն մանկանց նորածընելոց Նոր Սիովնի։

263ա Արդ, ո՛վ սուրբ հարք և առաքելադումար դասք քահանայից, յորժամ վայելէք ի քաղցրաճաշակ եդեմատունկ աստուածառոյգ վտակաց քառառաջեա հոսանաց կենդանական աստուածային ածտարանական բանիցս, մանաւանդ յորժամ բառնայք ի վերայ ուսոց ի ժամ սոսկալի պատարագին, յորժամ խաղան ի վերուստ յողջոյն ձեր զաւրք հրեշտակաց, և սքողեալ ահիւ խառնին ընդ ձեզ, յայն ժամ նովին սուրբ Աւետարանաւդ և միջնորդական հրաշիւք կենդանարար սուրբ պատարագին, յիշեսջիք զստացաւղ սորին զբարեպաշտ թագուհին Կեռաև, հանդերձ սուրբ թագաւորաւն Լեռնիւ, և զծնաւղս իւրեանց, և զդեռաբոյս ծիրանածին մանկունս նոցա, զի կենդանիքն պարագայց սմաւք և երկար խաղաղութեամբ անփորձ պահեսցին, և հանգուցելոցն հանգիստ և ողորմութիւն շնորհեսցի յամենառատ բարերարէն Աստուծոյ։

263բ Արդ, գրեցաւ գիրս||ձեռամբ ամենամեղ քահանայի Սաեփաննուի, ի թուականիս Հայոց ՉԼԲ (1283), ի հայրապետութեան տեառն Յակովբոյ, և ի թագավորութեան Լեռնի, որդւոյ Հեթմոյ, ի մեծանուն սուրբ ուխտս Սկեռայ, ընդ հովանեաւ Սուրբ Փրկիչս և մաւր լուսոյ Աստուածածնիս և կենսակիր Սուրբ Նշանիս, մերձ յանմատոյց դղեակս Լամբրուն, որ է ի գլուխ Տարսոնի, և ի ստորոտ մեծի լերինս Տաւրոսի։ Յորում ամի բարենշան և բարեպաշտ անդրանիկ որդին արքայիս մերոյ պարոն Հեթում զձիաւորութեան աշտիճան ընկալաւ, և այժմ տիրէ աստուածապահ դղեկիս և այլ շուրշակայ գաւառացս, զոր յուսամբ և մաղթեմք ի բարերարէն Աստուծոյ, անփորձ մնալ սորա ի յարդիսս բազում ամաւք՝ ընդ երկայն աւուրս՝ անուանի և յաղթաւղ լինել ի վերայ երկրի։

Եւս առաւել աղաչեմ յիշել ի Քրիստոս զնախայիշատակեալ ստացաւղ տառիս, և զբնաւ զարմն իւր՝ զկենդանիս և զհանգու||ցեալս; Եւ ով ոք որ կարդայք, և կամ տեսանէք, լիակատար և միամիտ սրտիւ ողորմի ասացէք սոցա հոգւոյն, և ձեզ տայ Տէրն իւր բարի ողորմութիւնն, ամէն։*

441

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 5555

Գրիչ

ա

256բ *Գրեցաւ ի թվին ՉԼՔ (1283)։*
*Աղաչեմ յիշել ի Տէր զՎարդան, որ առիթ եղև սմայ, և զստացող սորա զՍտեփաննոս քահանա**։*

Բ

Մաղկող՝ Սուխիաս

124բ *զՍակաւ աշխատողս սորայ, որ ի ծաղիկ, և ի գլխագիր և ի կազմել աշխատեցայ, զՍուխիաս աղաչեմ յիշել ի Տէր, և մի մեղադրեր, զի մեր կարս այս չափ էր։*

442

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ

Երևան 1563

Գրիչ՝ Մարտիրոս
Վայր՝ Վանական վարդապետի վանք

336բ *Ի ՉԼՔ (1283) թվիս գրեցաւ գիրքս Գրիգորի Նարեկացի, աղաւթք, հառաչանք, և պաղատանք [ո]ղորմագին, ի վանս Վանական վարդապետ[ի] առաջ[նորդ] գ[ոլ]ով Պետրոս վարդապետի, ձեռամբ [Մ]ար [տի]րոսի բազմամեղ ծառայի,*

Ի ծերութիւն ժամանակի։
Ահա յարտասուաբուխ աղաւթանի,
Ով որ ունի խոցուած հո[գի],

---

* Հաջորդ թերթը ընկել է դեռևս 1357 թվականից առաջ, ինչպես երևում է Անիում լրացրած մագաղաթյա թերթերի վրա այդ թվականին գրված հիշատակարանից։ Մատենադարանի № 8509 ձեռագրում (ժէ դար) պահպանվել է գլխավոր հիշատակարանը ամբողջությամբ։ Թերին լրացնում ենք հիշյալ ձեռագրից (էջ 98բ)։

** Ձեռագիրը հետագայում վերանորոգելիս ՌՃԿՔ=1713 թվին լուսանցազարդերը, զարդագրերը և խորաններդ գույներով քարմացրել, կամ բոլորովին նոր է նկարել հնի վրա, ծածկելով նուրբ և գեղեցիկ զարդերը, որոնք երևում են ներկով անհաջող ծածկված տեղերում։ Ավետարանիչները և տերունական նկարները նույնպես, նորոգելիս ավելացված թղթերի վրա են նկարված։

Կամ մարմին մեռեալ մեղաւք իւր,
[Սա դ]եղս [ե]ղե վասն իւր հոգոյ;
Աստ գտանէ զիւր պիտանի,
[Ո]վ կարգս կամ ում պիտի,
Աստուած ողորմի թող ինձ ասի,
*Նմա փառք յամենայնի**։

443

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Հովակիմյան, Յուցակ Նիկոմեդիո, էջ 13 (1574 թ.)

Գրիչ՝ Թորոս Վահկայցի

ա

512ա *Յամենայն մտաց խոստովանեալ է ահա բարեաց ամենից մասանց սկիզբն յԱստուծոյ գոլ, նմանապէս եւ կատարումն ի նոյն, ըստ աւրինի բոլորակին ձեւոց, յորմէ զաւրացեալ ի յոլով տեսակս բարեաց աստուածարեալ բարունն Սոսթենէս, եւ ի վերայ բազմացն եւ զայս եւս կամեցաւ յաւելուլ իմաստունս բարեացն, զի ղսրբոյ աստուածազան գնդի առաքելոյն ստասցի զճշմարտապատում վիպադրութիւնս գործոյ նոցին եւ զընդհանրական նոցին կաթողիկեաց թղթոցն աստուածախաւս վարդապետութիւնս ի պարծանս եւ ի բարեխաւսութիւն իւր եւ իւրայոցն, եւ ի բերկրումն աստուածասէր լսողաց եւ ի պայծառութիւն սրբուհոյ մերոյ Ազատին դստեր Վերնոյ Երուսաղէմի, զոր եւ կամաւքն Աստուծոյ ելից զբարւոք փափաքն իւր, եւ ստացաւ զաստուածային մատեանս նպաստաւորութեամբ Թորոս Վահկայցոյ տրուպ գրչի, ի թուիս ՉԼԲ (1283), ի հայրապետութեան տեառն Յակոբայ եւ յարքայութեան աստուածապաշտըն Լեւոնի. զորոց կեանս ընդ երկայն աւուրն շնորհեսցէ Տէր, բարգաւաճեալ խաղաղութեամբ։*

Արդ, որք հանդիպիք մատենիս, ըստացաւղ սորին զՍոսթենէս վարդապետն եւ զծնողսն նորին յիշեսջիք աղաւթիւք ի Տէր։ Եւս եւ զողորմելի գրիչս զԹորոս, եւ զծնողս իմ, եւ Տէր հասարակ բնաւիցս ողորմեսցի, եւ նմա փառք յաւիտեանս, ամէն։

բ

590բ *ՋՍոսթենէս բարուն, եւ զծնողսն նորա եւ զամենայն զգարմն իւր՝ զանցեալ եւ զայժմուս, եւ զիս զԹորոս քահանայ, եւ ծնողսն իմ, եւ զհաւրեղբայրն իմ Ստեփանոս, որ շատ աշխ[ատ]եցաւ հետ ինձ, յիշեցէք ի Տէր Քրիստոս, ամէն, Ռ. ամէն։*

---

* Ցեցակեր է, լավ չի կարդացվում։

Գ

629բ ՁՍոսքենէս բարուն յիշեցէք ի Տէր, և ղտրուպ գրիչս Թորոս Վահկայցի, ո՛վ սպասաւորք բանին Աստուծոյ*։

444

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երուսաղեմ 304, Պողարյան, ծուցակ Բ, էջ 151

Գրիչ՝ Թորոս դպիր

191բ Փառք ամենասուրբ Երրորդութեանն յաւիտեանս, ամէն։ Ձստացող սորա զՍոսքենէս բարունի և զծնողս իւր աղաչեմ յիշել ի Տէր։ Ընդ նմին եւ զեղկելի գծող սորա զԹորոս դպիր եւ զծնաւղս իմ, և հաւրողբայրն աղաչեմ յիշել ի Տէր, եւ շնորհել մեզաց թողութիւն, եւ դուք յիշողդ յիշեալ լիջիք։

445

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՀԱՆՆՈՒ

Երևան 1978

Գրիչ՝ Թորոս Վահկայցի

ա

139բ Քրիստոս Աստուած, որ վասն փրկութեան մերոյ եղեր գառն և մատեար պատարագ Հաւր վասն հաշտութեան մերոյ, և այժմ աղաչեմք զքեզ քոին փրկագործ խորհրդովն, և սուրբ առաքելոյն Յոհանու, և Սբրբոյ Աստուածածնին, եւ ամենայն ժառանգաւորաց սրբոց քաղաքին բարեխաւսութեամբ, փրկեա եաւթն հարուածոցն և ի թիւնից վիշապին զԹորոս գրիչ Վահկայցի, և իմովք սեռիւք և ծնընդովք, և զուսուցիչս, և զամենայն լսաւղս, և զընթերցողս, և զամենայն հաւատացեալս, և զփափագող սուրբ գրոցս զԱստուածաառաւ վարդապետ յիշեցէք ի Քրիստոս Աստուած մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Բ

143ա Աւրհնութիւն, որ կարդայ
Դովութիւն, որ լսե,
Փառք տուողին
Եւ յիշատակ գրչիս· ամէն, ·ամէն**։

---

* Այսպիսի հիշատակագրություններ կան նաև 596բ, 645ա, 661ա, 670բ էջերում։

** Թորոս Վահկացու գրած մասը (թերթ 118—143) հետագայում կցվել է սույն ձեռագրին՝ գրված 17-րդ դարում։

446

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Կոնիբեր, Յուցակ Լոնդոնի, էջ 10

Գրիչ՝ Թորոս Վահկացի

ա

...Յիշեցէք զպատուական քահանայ Կոստանդին և զամենայն զարմն իւր, զայժմուս և զանցեալն, առաջի զենլոյն Յիսուսի Քրիստոսի, Եւ զիս ղանպիտան գրիչս զԹորոս և զամենայն հաւատացեալս, ամէն։

բ

*Զ*Թորոս Վահկայցի նուաստ քահանայ աղաչեմ յիշել ի Տէր։

գ

Ով, հարք իմ եւ եղբարք... յիշելո արարէք արժանի զիս Թորոս Վահկայցի։

447

ԳՈՐԾՔ ԵՒ ԹՈՒՂԹՔ ԱՌԱՔԵԼՈՅ

Օքսան 5147

Գրիչ՝ Թորոս Վահկայցի

ա

Փառք ամենասուրբ Երրորդութեանն|| յորում մենք վիճակիմք հաւատով յուսով և սիրով, ամէն։

116ա *Արդ, ո՛վ երկասէր ընթեցրողի**
Վարդապետիս եռամեծի.
Եւ մեր նախնեաց հռիփսորի,
Առաքելոյս մեր Քրիստոսի։
Սա ի ցեղէն Բենիամի
Վերաձայնեալ Փող Տարսոնի,
Գամաղելին աշակերտի,
Որում Պաւղոս անուն կոչի։
Որոյ հայցեմ միշտ բաղձալի,
Յիշել ստ[աց]աւղ այսմն տառի.
Որոյ անուն Գրիգոր կոչի,
Որ գաւառաւ է Մլուենցի։
Վասն սիրոյն մեր Յիսուսի,
Խնդրել թողութիւն իմո անձնի,
Եւ հաւրն իմո Յոհաննէսի,
Եւ ընթհանուր իմո ազգի։

---

* վերջում ավելացված են *այսմ տառիս* բառերը, այլ գրչով։

Նաև հարաղատիցն իմ երկուակի,
Ստեփաննոսի և Կոստանդնի,
Եւ մաւրն իմո մեծատոհմի,
Որում անուն Ցաւղեր կոչի։
Եւ ամենայն մերձակայի,
Արեանառու իմո զարմի,
Փոխեցելոյն ի մէջն յաստի,
Եւ որ ծրփին յայսմըն ծովի։
Ընդ նմին և զգրիչս Վանկայցի
Որում անուն Թորոս կոչի,
Անտես չառնել յիշատակի,
Զի ուղղութեան ես փոյթ արի,
Որ յիմ ջանուց իսկի չթողի,
Ապա թէ ոք յիշէ զմեզ ի բարի,
Հարիւրապատիկ նա ընկալցի, ամէն*։

Բ

10ա Արդ, աղաչեմ զամէնեսեան զորդիս Սիոնի, որք կարդայք կամ աւրինակէք ղաստուածախաւսութիւնս համատարած հաւրն սուրբ առաքելոյն Պաւղոսի, զԹորոս գրիչ յիշեցէք ի Տէր Քրիստոս, և զծնաւղսն և զազգն իմ, և զուսուցիչսն իմ և զամենայն հաւատեալս, ամէն։

Գ

48բ Ասուրբ Պաւղէ նախ հալածիչ,
Եւ ի յետոյ քարոզ բանին,
Յիշեա առ քոյդ Տէր երկնաւոր,
Զիս զԹորոս յոյժ մեղաւոր**։

448

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վենետիկ 5, Սարդիսյան, ցուցակ Ա, էջ 49

Գրիչ՝ Թորոս
Վայր՝ Սկևռա

ա

Տէր Յիսուս Քրիստոս Աստուած, գթա, ողորմեա Գէորգ վարդապետին, որ զնախադրութիւններս և զգլխնիս ամէն Հին կտակարանացս շի-

* Հիշատակարանին շատ են միշամտել այլ քանաքով և գրչով։

** Ձեռագիրը հետագայում պատկանել է ԺԶ դարի հայտնի մատենագիր Սիմեոն Ապարանցուն։ Հիշատակարանից հետո խոշոր գրերով գրված է «Գիրքս յիշատակ է Սիմէոն վարդապետին», ուրիշ, մանր և գեղեցիկ գրությամբ ավելացված է «Գիրքս այս յիշատակ է Ապարանցի Սիմէոն քաջ րաբունապետին, որ ի դաս յասէն, նման Յոհաննու աւետարանչին, յանկարծակի վախճանեցաւ»։

նել է, և զՄարտիրոս վարդապետն, որ ղաւրինակն հետ, և զԴրիգոր և զամուսին իւր, որ զնիւթս շնորհեցին, և զողորմելի գերիս՝ ծնաւղ[աւ]ք և եղբարբք և քեռ և զարմիւք, և զայնոսիկ, որ յիշեն զմեղ Աստուած ողորմայիւ։ Եւ քեզ ընդ Հաւր և ընդ Հոգւոյդ Սրբոյ աւրհնութիւն և գոհութիւն և փառք և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտ[ենից], ամէն։

Բ

Փառք քեզ, Քրիստոս Աստուած մեր, վասն ամենայնի, որ զաւրացուցեր զտառապեալ քո Թորոս ի մեծ ծանրութեան մեղացս հոգոց, զայս ձեռահիւս տառս տալ քեզ պատարագ յինքնավաստակ երկոց...

Գ

Փառք ամենասուրբ երրորգութեան յաւիտեանս, ամէն...

Արդ գրեցաւ ի ձեռն բազմամեղ Թորոսի և Բարսղի՝ ի յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց և եղբարց իմոց և քեռ իմոյ։ Արդ, որք ընթերցմամբ մխիթարիք ի սուրբ պատուիրանէս, լուսաւորեսցէ Աստուած զհոգիս ձեր և ի շնորհաց աղաթից ձեր հանգուսցէ զվերոդրեալքս ի սմա ընդ վերին մշակացն, ըստ մեծի ողորմութեան իւրոյ։

Դ

Ո՛վ Տէր Աստուած, հասարակաց յոյս ամենեցուն, որ յուսան ի քեզ, ողորմեայ մեղաւոր ծառայիցս Թորոսի և ծնաւղաց իմոց և եղբարց, և մաւրնղբօր Վասլի և Ստեփաննոս քահանայի, և ծնաւղաց իւրոց, վասն զի զգիծս ուսուցանէ, և որ զմեզ յիշեն։

Ո՛վ Տէր Աստուած, հասարակաց յոյս, որ զամենայսն, որք յիշեցին զքեզ յիւրաքանչիւր նեղութիւնս ոչ դարձուցեր ամաչեցեալս... այլ արա և մեզ, որ կամք ի ներքոյ պատուհասի մեղաց մերոց՝ Թորոսի և ծնաւղաց մերոց և եղբարց և քեռ և ուսուցչի մերոյ Թորոսի և որ մեզ յիշեն և փառք այժմ ///

Ե

Ո՛վ Սուրբ Դաւիթ, բարեխաւսեա առ Տէր Աստուած վասն բազմամեղիս Թորոսի և ծնաւղաց իմոց, և եղբարց և քեռ, և Մարեմախկեի և Վասլի և յանոցիկ, որ յիշեն զմեզ։

Զ

Ո՛վ Սուրբ առաքեալք Պետրոս և Պաւղոս, եւ ամենայն խումբք սուրբ առաքելոցդ, բարեխաւսեցէք առ Տէր Յիսուս Քրիստոս Աստուած մեր վասն Գէորգեա վարդապետի, որ զԳործս գրեաց, և վասն բազմամեղիս Թորոսի, և ծնողաց իմոց, և զարմից, այնոցիկ, որ յիշեն զմեզ ի մեղաց թողութիւն։

է

Աւրհնութիւն քեզ գովութեամբ, և փառք երգրպագութեամբ, Տէր իմ Յիսուս Քրիստոս... որ ի ձեռն առաքելոց քոց յանարգութենէ յառաջ կոչեցեալ և քո աւծութեամբ շնորհի արժանի եղեալ տառապեալս Թորոս՝ վերջինս ի բարեաց և վերջինս և անբարի աւուրցս ծնունդ, վասն առաւել դառնութեանց աւուրցս ընտրեցի զլռութեամբ նստել ի տան և սպասել անընպատ քո ողորմութեանդ, որ բաժին իմ ես յամենայն էիցս, և նուիրեցի քեզ, որ անկարաւտ ես, զայս ձեռահիւս լրութեամբ կրող զնախաճաշառութիւն սրբոց քոց մարգարէիցն։ Ընկալ, ով որ քաղցր է քեզ մարդկան տուրեւառութիւն, և տուր զաւրութիւն շարամանել և յեռուլ ի սա զլրումն ելից աւետեաց սոցա ի նոր քո Աւետարանս, որ նորոգութիւնդ ես մեզ, Տէր մեր և Աստուած, և քեզ փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

ը

Ով Սուրբ Երեմիա, բարեխաւսեա առ Տէր Յիսուս Քրիստոս Աստուած վասն Թորոսի և Դաւթի և ծնաւղաց մերոց։*

449

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՍՈՒ ԱՎԵՏԱՐԱՆԻ

Երևան, 2609

Գրիչ՝ Գրիգոր վարդապետ

319ա *Արարչա[գո]րծ Աստուած, որ յոչ էից գոյացուցեր զեղեց[իկսն] ամենայն որո[շող] Աստուած զլուխ արարեր զնախնի[ն] մեր [Ա]դամ, տալով նմա տեղի բարձր քան զարեգական, որ և հաւ[ատ]ամ թէ ընդ բարձրութեան տեղոյն նմանապէս և փառաց բարձրագունի զնա արժանացուցեր, իսկ նայ այնքան ճոխութենէ [արտ]աքո անգեալ մախանաւք այնմ, որ պայծառութեանն արաւսեաւ լեալ և խաւար վասն ամբառնալոյն եղեալ գնայ ևս խաւարեցոյց ի ճշմարիտ լուսոյ կենաց դրախտին, վիրաւորելով ի ձեռն նախնոյն զբաւանդակ սերելքս հիմանէ, և ոչ ոք էր որ ի թիկունս հասանէր նւաստագունիցս, իսկ արարչական գթութիւնդ շարժեալ յարարածս քո առաքելով զ[ն]ա կից բանդ ճշմարտի փրկութիւն բանական հաւտիս, որ եղև հովիւ և բժիշկ բնածին, [հաւ]ատացեալոցս փրկելով ի զանազան հարուածոց խաչիս և արեամբ աւարտեալ զմեր փրկութիւն ուղղելով զգնացս ի ճանապարհս վերնոյն Երուսաղէմի մաւրն ամենեցուն գնալով ի զաւրութենէ ի զաւրութիւն, մինչև գայցէ միւս*

---

* Բ. Սարգիսյանը գրում է. «Ժամանակ անյայտ, զի գլխաւոր յիշատակարանն ինկած է, միւսներն ալ առանց թուականի են, բայց ձեռագրիս ներքին եւ արտաքին պարագաներէն դատելով, յամի տեառն 1220—1282 գրուած է հաւանօրէն»։ Իսկ տեղը նոյնպես հավանորեն համարում է Գաղարկը։ Բայց քանի որ Գևորգ Սկևռացին ևս գրիչներից մեկն է, ուստի տեղը Սկևռան կարելի է համարել, իսկ ժամանակը ԺԹ դարի վերջերը, երբ ավարտել էր ցանկերի և նախադասութիւնների մուծումը Աստվածաշնչի մեջ։

անգամ հատուցանել ըստ իւրաքանչիւր գործոց յաւուրն ան[երեկի յ]որժամ դողան և սարսափին ամենայն արա[րա]ծք։ Յայնմ աւուր յահեղին ողորմա նւաստագունիս, որ անուամբ ևեթ ունիմ զաստիճան քահանայական, պարտական գտել բիւր քանքարոյ, որ և վարդապետ[ա]կան ընկալա աշտիճան՝ Գրիգորս անուամբ և մակ[անուանեալ] վարդապետ, որ
319բ և անունս բաւական է ինձ||կշտամբութիւն անուղա և սողոսկեր անձինս, այլոցաց ուսուցիչ և ինձ կորուսիչ, զայլս ժրացուցանեմ բանիւ տեառն, հեղգ գտանիմ գործով, յաղագս որո անունս բաւական է ինձ ի յանդիմանութիւն։

Եւ արդ Տէր բարերո[ա]ր ես ինձեն բողոքիմ և հրապարակատես գոչեմ յականջս ամենեցուն, ոչ թաքուցանեմ զխոյթեալ վէրս հոգոյս, ոչ կարեմ վիրաւորս կեղծաւորել առաջի ծածկագետ բժշկիդ, պատմեմ զանաւր[էն]ութիւնս իմ զի արդարացայց։ Ո Տէր բարերար, զոր ստեղծեր արարչութեամբ, մի անտես առներ ողորմութեամբդ, զոր ազատեցեր խաչիւդ, մի թողուր ի ծառայութեան մեղաց և դժոխոց, զոր գնեցեր արեամբ, մի մերժեր ի տիրական իշխանութենէդ ասելով ի բաց կացէք ամենայն մշակդ, տնաւր[ենաթեան], այլ ներեա, գթայ, ողորմայ թշուառացեալ և եղկելի անձինս յառաջ յիշեցեալ անուանս տառապելս և տկարս, Գրիգոր վարդապետս աղաչեմ, պաղատիմ, [հայ]ցեմ ի բարերար կամացդ, միջնորդութեամբ և բարեխաւսութեամբ Սուրբ Աստուածածնիդ և ամենայն սրբոց, և թող պարտիս յանցանաց իմոց և զծնողացն իմ Թագուհէ և Աստուածատուր հաշտարար կամաւք նայել և ողորմած աչաւք թողութիւն առնել և ներումն ամենայն սխալանաց մերոց, ամէն։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք, մեղաց թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ, զի և ձեզ նոյն եղիցի յամենատատ ողորմութենէն Աստուծոյ, ամէն*։

450

ԺՈՂՈՎԱԾՈ

Գալեմքեարյան, 8ուցակ Միւնխենի, էջ 10—11

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Սալեռն

283ա Փառք եռանձնեա տէրութեան... Գրեցաւ աստուածայհարց, սուրբ հարց մեր, սուրբ կրանաւորացն, խոշորատեսակ եւ անյարմար գծիւ, ձեռամբ ամենամեղ եւ անպիտան գրողի Գրիգորի, յաշխարհիս Տոռանկաց, ի Սալեռն, ընդ հովանեաւ Սուրբ Մաքէոսի առաքելոցս, ի Տուն Հայոց, առ դրանս Սրբոյ Կղմնի, յամի յորում էր թուականս Հայոց ՉԼԲ (1283)։ Արդ, աղաչեմ չլինել մեղադիր խոշորութեան եւ անյարմարու-

* Հիշատակարանի թանաքը տեղ-տեղ թափվել է և շատ աղոտ նշմարվում են տառերի հետքերը թղթերի վրա, ուստի դժվարությամբ վերծանվեց։ Թվական չունի, բայց Գ. Հովսեփյանը գրում է. «Հնագույն հիշատակարանը տեսնել. 1283 (2) թվականի մեջ» (Հիշատակարանը, էջ 502)։ Հանգամանքները հայտնի չեն, սակայն ԺԳ դարի գրություն է, ուստի ընդունում ենք ենթադրաբար նշանակված թվաշարքում։

թեան գրիս, ղի արուեստաւոր ոչ էի, բայց կարի խիստ բանիւ գրեցի յընտիր եւ ի լաւ աւրինակէ։

Արդ, գրեցաւ սա ի խոնարհ հոգի, որ եւ վաստն սիրոյն Քրիստոսի յանձն առեալ դաւտարութիւն զպանդխտութիւն, որ եւ ընդ այլ բազում բարէգործութիւնսն ստացաւ եւ զայս գեղեցիկ կտակ, ի յիշատակ հոգւոյ իւրոյ և ամենայն ընտանեաց իւրոց՝ կենդանեաց եւ մեռելոց, որ պահեսցէ յամենայն փորձութենէ յերեւելեաց եւ յաներեւութից, բարէխաւսութեամբ եւ սուրբ առաքելոցն և ամենայն սրբոց։

Արդ, ես անարժան ծառայս Քրիստոսի **Գրիգոր** միակեցի, ստացա ղհոգէկեցոյց հարցն սրբոց եւ յիշատակ հոգւոյն իմոյ եւ ննջեցելոց իմոց, եւ ետու դրել զսա ի հալալ արդեանց իմոց։ Արդ, յերկիր անկեալ աղաչեմ զամենեսեան ոգէհեծ պաղատանաւք, որք կարդայք եւ աւգտիք ի սմանէ կամ գաղափար առնուք, յիշեսջիք ի սուրբ եւ ի մաքրափայլ յաղաւթս ձեր զբազմամեղս **Գրիգոր**, եւ զհայրն իմ **Վարդ**, եւ զմայրն իմ, եւ զեղբարսն իմ, եւ զքոյր՝ զկենդանիս եւ զհանգուցեալս ի Քրիստոս, եւ զամենայն ընտանիս իմ եւ զսիրելիս, զի ի ձեռն արժանաւոր աղաւթից ձերոց ընկալցուք մասն եւ բաժին ընդ սուրբս ամենայն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ յահեղ աւուրն յապագայի, յորժամ բանք սպառին եւ գործք թագաւորեն։

Յիշման արժանի արարէք եւ զանարժան գրողս սորայ եւ որ զմեզ յիշեն սրտի մտաւք, յիշեսցէ Քրիստոս զնոսա իւր առատ ողորմութեամբ եւ երկնից արքայութիւն արժանի լինի, եւ ինքն աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

451

ԺՈՂՈՎԱԾՈ

Երուսաղէմ 1350, Պողարյան, ծուցակ Դ, էջ 621

Գրիչ՝ Սիոն Սեւաստացի

ա

[Փ]առք Հաւրն անեղի, անհասի, անբաւի, եւ էացուցչին ամենայնի, փառք Որդւոյ երեւելոյ եւ ծնելոյ, եւ ընդ իւր յարուցանելոյ զիւրայինսն ամենայն։ Փառք եւ պատիւ ելողի, եւ ազատարար, աննիւզ, անուշաբուրիչ Սուրբ Հոգւոյն։ Փառք երեքերեւեան երրորդական Աստուածութեանն եւ անբաժանելի միութեանն, այժմ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Որ արժանացոյց զտկարս, գրել զգիրքս Հայոց առաջնորդացն Սրբոյն Սահակայ եւ Մեսրոբա ասացեալ վասն աւգտի մանկանց*։

բ

Զգծող սորին զ**Սիոն Սեւաստացի** սպասաւոր բանի, եւ զ**Վարդան** վարդապետ համառաւտող սորին, աղաչեմ յիշել ի Տէր։

---

* Թվականը ծուցակում նշված է 1283։

452

ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏԱՐՈՆԵՑՒՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գրիչ՝ Կարապետ

98բ Յաղագս գրչի յիշատակ։

Ընդ նմին եւ ես յետինս յամենեսեան եւ քան զբանս յանցաւորս եւ անթիւ մեղօք ծանրաբեռնեալս, եւ արժանիս բազում մահաց եւ ոչ մի կենաց, խաւարամած հոգով Կարապետ *գրիչ որ չեմ յիշելոց, աղաչեմ յիշել յաղօթս առաջի Քրիստոսի զիս եւ եւ զծնողսն իմ զտեր* Յոհաննէս *քահանայն եւ Վաթ ճաթունն, որպէսզի աղօթիւք ձեր գտցուք զողորմութիւն ի Քրիստոսէ եէ տէր տացէ զԴրիգոր ձեզ բազումս, ամէն։*

453

ԴՐՈՒԱՏ Ի ՍՈՒՐԲՆ ՅՈՀԱՆՆԷՍ

Երուսաղեմ 97, Պողարյան ձեռագ. Ա, էջ 306

730ա Դ[րուատ ի Սուրբ առաքեալն և աւետարանիչն Յոհա]նէս, ի պատկառե[լի խնդրոյ] Յոհաննու եպիսկոպո[սի եղբաւր] բարեպաշտ արքային Հայոց Հեթմոյ, ի թուականին ՉԼԲ (1283), Գէորգեայ մեծի և յոքնալոյս վարդապետի ասացեալ Սկեւռացոյ։

454

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ ԼԵՒՈՆ Գ ԹԱԳԱՒՈՐԻ

«Հանդէս ամսօրեայ», 1922 թ., էջ 148—151

Գրիչ՝ Յոհան
Վայր՝ Սիս

ա

Ջմեղապարտ Յոհաննս *յիշեա, ով ընթերցողք։*

բ

Աստուածատունկս այս հոգէզուարճ
դրախտ ցանկալի,
Եւ բուրատտան բազմաբեղուն
բարեաց բաղձալի,
Յոքնազան տնկովք տեղնչալի,

Քաղցրաճաշակ պըտղովք ըղձալի,
Ծաղկովք բազմափայլ և անծորելի,
Գեղով գեղահրաշ և յոյժ անձկալի,
Դեղ բըժշկարար հոգւոց խաթուածի,
Անկեալ բարբառով բանի
մարգարէին Դաւթի
Աստուածային այգոյն արթուն
եւ աննիրհելի տնկագործի։
Այս Սաղմոս յոգնանկար երանգովք գունազարդ դեղոյ
Տիրական պատկերին
Եւ մեզ կերպարագրող զոր Հոգւոյն Սրբոյ ամէնիմաստ կոչի,
Թացեալ ըլեղու գործարան բանի մարգարէին Դաւթի,
Գրեալ ձեռինն արագաշարժ դպրի,
Զգեղեցկին քան զամենայն որդւոյս Ագամա
Գործ սքանչելեաց և զարմանալի,
Այս բարբառ մարգարէական բանի,
Երգեալ եւթնաղեաւ ձայնիւք քնարի,
Եւ տասնաղեաւ Սաղմոսարանի.
Զեւթնարփեան շնորհս Հոգւոյն ի զգայականս մեր
Տասանց մասունս խորհրդածողի,
Յորոց յարմարական ձայնից հնչողի,
Ստեղծողն էից ի բանականացս բարեբանի։

Այս ամենունակ բարեաց գանձարանի սիրեցող եղեալ բարեպաշտ և աստուածասէր արքայն Հայոց, թագաւորն Լէոն, պայազատ և ժառանգաւոր թագի թագաւորութեանս Հայկազեան զարմի, սերեալ ծննդեամ[բ] յՌոբինեա իշխանէ, որ յազգականութենէ Բագրատունի, ի տանէ և ի տոհմէ Արծրունի: Որոյ հրամանաւ գրեցաւ երգ Սաղմոսացս Դաւթի, ի զարդ եկեղեցւոյ և ի վարժ ուսման մանկանց Նորոյս Սիոնի, և իւր իսկ բաղձանս ունելով երգել սովաւ և սաղմոսել և խաւսել ընդ Աստուծոյ անզբաղապէս, և մնալ նմա յիշատակ բարեաց յապագայս ժամանակի։

Գրեցաւ սայ ի թուականիս Հայոց ՉԼՐ (1283*. ի թագաւորանիստ 260ա մայրաքաղաքն ի Սիս: Արդ, որք աւգտիք ի սմանէ յիշեսջիք զ||ամենայն բարեաց արժանաւոր թագաւորն Հայոց զԼեւոն և զնախնիսն իւր, և յիշողացդ և յիշեցելոցն ողորմեսցի Քրիստոս Աստուած մեր, յոյսն արա-

* 260ա էջի գրչութիւնը ամրողջութեամբ այլ ձեռքի գործ է, ոչ թէ միայն այստեղից, որ նկարագրողը գրում է «տարբեր գրչով» («Հանդէս ամսօրեայ», 1922, էջ 151)։ Բուն հիշատակարանի վերջին թերթը անչատել են Լեւոն Դ-ի թագավորութեան ժամանակ (1305—1307 թթ.) և նոր թերթ միացրել, որի վրա արտագրել են նախորդ հիշատակարանի մնացած մասը և շարադրել նորը՝ նշված տեղից, նախորդի նման, արձակ և չափածո շարադրանքով։ Այս բանը կատարել է պարոն Թորոսենց պարոն Աւշինը, այսպէս. «Ծիշեցէք և ընդ նմին զաստուածասէր և զբարեպաշտ պարոն Աւշին պարոն Թորոսենց, և զծնողսն իւր՝ զՀայրն իւր Ստեփաննոս և զմայրն իւր, և թողութիւն մեղաց հայցեցէք ի Քրիստոսէ՝ իւր և ծնողաց իւրոց, և որ յիշէ՝ ինքն յիշեալ լիցի առաշի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն» և այլն։

*րածոց, որ է աւրհնեալ ընդ Հաւր և Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենից, ամէն**։

---

* *Սույն ձեռագրում գտնվող 1164 և 1307 ԲԲ. հիշատակարանները Կ. Պոլսում արտագրելուց հետո (Մատենադարան, ձեռ. № 10653, էջ 163բ) Եփրեմ Վարդապետը գրում է. «Ձայս Բ պատմութիւնս գրեցի ի մագաղաթեայ Սաղմոսարանէ Հէօն Թագաւորին Հայոց, գրեալ ի Թուին ՁԼՔ (1283) ի Սիս»։ Այնուհետև արտագրում է 1375 Թ. Սսում արտագրված մի Դատաստանագրքի հիշատակարան և ավելացնում. «Եւ զայս գաղափարեցի ես նուաստ Եփրեմ վարդապետս ի մագաղատեայ Դատաստանէ գրքէ, որ գրեալ էր ի Սիս» (Այս հիշատակարանը տե՛ս Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 516)։*

455

ՀԱՒԱՔԱԾՈՒ

Վիեննա 571, Տաշյան, Ցուցակ,՝էջ 1039

Գրիչ՝ Մատթէոս
Վայր՝ Աղբերց վանք

ա

Արդ յորժամ գրեցաւ ահեղ և սքանչելի տեսութիւն աստուածային յայտնութիւնս սուրբ և աստուածաբան աւետարանչին Յովհաննու էր 157ա թիւ||Հայկազեան սեռի ՉԼԲ (1283), և թագաւոր Լեւոն, բայց իշխէր Կիլիկո նահանգին միայն, դիտապետ տէր Յակոբ, և վարժապետ և խրատիչ սուրբ վարդապետս Ներսէս, որոյ հրամանաւ գրեցի զսայ մեղապարտս Մատթէոս, որ դեգերեալ կայի առ ոտս սորա, զոր մաղթեմ յիշել յաղաւթս զստա[ցա]ւղ սորին՝ զառաջասացեալ բարունին, և զմեղաւոր գրիչս, որ և դուք յիշեալ լինիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս։

բ

485բ—486բ

Գոցս յիշատակարան
Եւ տաղ չափաբերական

Ի Հայկազեանըս տումարի,
Յեաւթն հարիւր մերոյս թուի
Երեսներրորդի և երրորդի (1284),
Որ և ամաւք շրջագայի։
Ջմեր Հայկազեան տունս հայրենի,
Որ բռնացեալ զսա ունի
Ի բարբարոս և այլազգի,
Որոյ անունըն Ամմատ կոչի;
Յարքայութեանն Լևոնի,
Որդւոյ Հեթմոյ բարեպաշտի,
Բարեբարոյ և հեզահոգի,
Որ և տիրէ Կիլիկոյի;
Մատթէ՝ անուն և եղկելի,
Սուտ քահանայ տարտամ հոգի,
Ժահահոտեալ մեղաւք իւիւ,
Զոր կամաւորն գործեցի։

Զկուսաւորչին ի Գրիգորի,
Ի գրոյ մեղաց վեր ածողի
Զաղաս մեղաց իմ լուացողի,
Զաթոռն ունի տեառն Յակոբի,
Ի նահանգէ Կիւլիկեցի,
Ուստի և փողն Տարսոնացի,
Յանապատէ հռչակելի,
Որ յորջորջի անուն Մլիճի:
Է ի ստորոտն Տաւրոսի
Լերին մեծի և անուանի,
Մերձ ի դղեակ Պապաւանի
Առ սահմանաւքն Տարսոնի:
Որոյ եկեալ յայս գաւառի,
Որում անուն Վայձոր կոչի.
Հուպ ի շիրիմըն Սիւնեցի,
Ի Յաղբեց վանս մենաստանի:
Յերկրորդ Աթէնս պանծալի,
Առ ոտս հաւր մեր Ներսէսի,
Ու րաբունեաց վարժապետի,
Հասեալ ի ծայրս իմաստ բանի:
Բարձեալ ղխաչն Քրիստոսի,
Ու հետևյալ նորին շաւղի,
Ի գիշերի և ի տուընջենի,
Աստուածային բանիւ բերկրի:
Ըստ տէրունեանն հրամանի,
Քննէր զգիրս մատենի,
Զի առանց այսմ հանճարի,
Կեանս անհնարին ոք ընդունի:
Հրաման առի այսմ տառի,
Էր ընդ եղբարցս մեկնչի,
Ու Յովհաննու Յայտնութիւնի,
Զսոսա դրոշմել ի քարտիսի՝
Մանկանց որդւոյ Նոր Սիովնի,
Որ ի յուսումն փափագի,
Աստուածային իմաստ բանի:
Ի յիշատակ անջնջելի,
Իւր եւ հոգւոյ սրբասիրի,
Այլ և ծնաւղաց իւր և ղարմի,
Որ վասն մեր յոյժ տաժանի,
Յաստուածաշունչ գիրս մատենի;
Վարձահատուց Քրիստոս լիցի,
Ու ննջելոց իւր համազգի,
Այլ և ծնաւղաց իմ եղիցի
Յարքայութեանն Յիսուսի:

Այլ և իմոյ անարժանի
Հոգւոյ զաւակ ինձ եղիցի,
Որք ընթեռնուն ընդ յատենի,
Յիշման առնեն զմեզ արժանի
Երեսս անկեալ արտասուելի,
Մերձակայիցդ Քրիստոսի,
Խոշորութեանս մի լիցի
Տրտունջ ի ձենջ աններելի։
Եւ սխալանաց ոք մի լիցի,
Եղբարք և հարք իմ սիրելի,
Այլ ուղղելով մեզ շնորհեսցի,
Զի և ձերում պարգևեսցի;
Դաստիարակին իմոյ Բարսղի
Յանուն և կարգ վարդապետի,
Եւ հոգևոր. իմ ուսուցչի,
Որ զմեզ վարժեաց այսմ արհեստի,
Հայցեմ ասել Տէր ողորմի,
Միով բանիւ, զի կարաւտի
Որ հողևղէն զգեցեալ ունի
Մարմին և տուն քառանիւթի։
Այլ և Ղուկաս քահանայի,
Որ էր եղբայր մեր սիրելի,
Եւ առ Քրիստոս վերափոխի,
Որոյ Յիսուս ողորմեսցի։
Աւրհնեալ է հայր անճառելի
Որդւոյ պատճառ անշննելի,
Եւ յէուվհանց նոցունց հոգի
Այժմ, յաւետ, անլռելի։ Ամէն։

Գ

Գրեցաւ յառաջ քան զՀ (8) կաղանդին, յուլիս ամսոյ, ձեռամբ Մատթէոս անարժան քահանայի։

Դ

Գրիչ՝ Եսայի [Նչեցի]

Եսայի աշակերտ* մեծիմաստ վեհին Ներսիսի յիշեսցուք։

Ե

Նկարչ՝ Մոմիկ

23ա ՁՄոմիկ նկարիչ խորանիս յիշեցէք, աղաչեմ։

* Գրված է «Եսայի ասակերտ» ձևով։

գ

Գրիչ՝ Սարգիս

312բ Եւ մեղուցեալ խուլս անմոռաց յիշեա յաղաւթս, ո՛վ սուրբ վարդապետ րաբունի և մեծայպատիւ։ Վարդապետին է Ներսիսի եւագրայ ոգեշահ խրատս։ Անպիտան գրիչ Սարգիս ծրեաց և աւարտեաց։ Վարդապետ, աղաչեմ զսովեալս ի հոգևոր կերակրոյն յիշեայ ի կենդանի յաղաւթսդ։

456

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 437

Գրիչ՝ Եսայի [Նշեցի]
Վայր՝ [Աղբերց վանք]

ա

88ա Աստանաւր հանդիպեալք այսմ խըթանայայ[տիչ և մ]իդասուղիչ լուսարանիս, յիշեսջիք ղ[եր]ից երանեալ այրն Աստուծոյն՝ ղմեծ հռետորն Ներսէս վարժիչ իմ ամենավրդովս անձին, ընդ նմին և զեղկելի գրիչ[ս] Եսայի, և դուք յիշեալ լիջիք։

բ

98բ Ձմեղապարտ գրիչս և զվարդապետն իմ յիշել աղաչեմ յաղաւթս ձեր։

գ

107ա Ձհամշիրակ եղբայր իմ Ստեփաննոս, որ զօրինակս քարտիւ հանդերձ շնորհեաց, յիշեսջիք։ Ընդ նմին և զամենամեղ գրիչս Եսայի, աղաչեմ։

դ

127ա Ընդ որս և դու, ո՛վ ընթերցասէր և սպասօր բանի։

ե

144ա Զվարդապետն իմ զՆերսէս և զամենամեղ գրողս աշակերտ նորին Եսայի յիշել աղաչեմ ի Տէր, ամէն և եղիցի։

զ

153բ Աղաչեմ յիշել զպէտս իմո վարժից և իմոց հոմասեռից Ներսէս։ Յիշեա ի Տէր, ո՛վ ընթերցող այսմ մատենի, ընդ նմին և զամենամեղս Եսաի գրիչ*։

* 103բ էջի լուսանցքում գրված է գրչի ձեռքով. «Ձի՞նչ է սէր։ Սէր է բարեմտութիւն փոխադրութիւնն անմոռաց (կտրված է լուսանցքը)։

է

278բ Դժւար է խիստ, այսչափ կարացի բազում աշխատութեամբ, մի մեղադնեք։ Զեզ տացէ Աստուած զստոյգն իմանալ։

ը

314ա Զամենաերջանիկ վարդապետն իմ Ներսէս և զմեղատր գրիչս եսաի յիշել աղաչեմ։

ր

340բ Զմեղապարտ գրիչս յիշել [աղաչեմ], եւ զհեռտոր վարդապետն իմ Ներսէս՝ հանճարեղ դպիր այս իմաս[տութեան]*։

ժ

Գրիչ՝ Սիմոն

117բ Զմեղուցեալ Սիմոն գծաւղ աղաչեմ յիշել։

ժա

126բ Ո՛վ պատուական եղբայր եսայի, դու արժանի ես թէ ի (40) տետր այստեղ քեզ օգնութիւն էի արարեալ, ապա դու գիտես զտկարութիւնս իմ և զհարկիս, որ ի վերա կա։ Անմեղադիր լեր և յաղօթից մի մոռանար։ Թէ այլ կարեմ օգնել, յօժար եմ**։

ժբ

363բ Զվերի էջս անյարմար գրեցին այլք***։

ժգ

365 Գիրս հնանա,
Զեռս հողանա,
Աստուած միայն է միշտ, և կա,
Եւ որ զայս տգեղ գիր**** կարդա
Յիսուս ողորմի ինձ և նմա։

ժդ

Գրիչ՝ Սարգիս

227բ Ես Սարգիս գրողս յիշե[ցէ]*****։

---

* Գրված է «Պատճառք պահոց Բարսղին» նյութի վերջում։

** Ինչպես երևում է, հետագայում էլ Սիմոնը օգնել է եսայի գրչին։ Եսային նրանից խնդրել է մանր տառերով գրել, ինչպես ինքն էր գրում, և ահա, Սիմեոնը մանր է գրում. «Մանր կու ուզես, կարդաս» (348ա)։

*** Էջի վերին մասը 12 տող գրված է նոտրգրով։ Սիմեոնը այն համարում է «անյարմար» գիր, ինչպես մի ժամանակ բոլորագիրն էին համարում «անյարմար» գիր։

**** Սիմեոնը գեղեցիկ ձեռագիր ունի, ինչպես ցույց է տալիս 116—126 էջերի գրությունը, բայց արագագրության պատճառով գրում է շղագիր հիշեցնող անկանոն բոլորագրով, ուստի և «տգեղ գիր» է անվանում այն։

***** Պրակի հինգերորդ թերթի երկրորդ էջում (383 բ) Սարդիս գրիչը գրել է «այս տետրս ե թուխտ էս, իսկ պրակի 1—5 թերթերի վրա համապատասխանաբար գրված է լա՝ ան է,

ժԷ

293ա Աւրհնեալ Տէր Աստուած, որ զաւրացոյց զտկարութիւնս իմ յանկ հանել զսակաւ աշխատութիւնս։ Զստացող գրոցս զԵսաի վարդապետ յիշեա առ Քրիստոս*։

457

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 1422

Գրիչ՝ Եսայի [Նշեցի]

ա

190բ [Փ]առք ի գոյից բնաւից տարր և անտարր արարածոց եզակի և եռակի աստուածութեանն, այժմ և միշտ և յանսպառ յաւիտեանս, ամէն։

Ծրագրեալ և ի ծայրս աւարտմամբ զկա ընկալեալ դպրութիւն տեսութեանս սարսափելի տեսլեան և աղաւթից, սրբազան և աստուածաբան աւետարանչին Յոհանու, հրամանաւ երից երանեալ առնն Աստուծոյ Գրիգորի արքեպիսկոպոսի Սարաւադեան գաւառի, ի յիշատակ իւր յետ աստեացս և իւրոցն նախնեաց տէր Վանականին և այլոցն ամենեցուն, եւ ի վաելումն արիւնառու մերձաւորաց և ժառանգորդաց իւրոց՝ տէր Վարդանայ, և Դաւթի, և Գրիգոր վարդապետի, որ եւ վասն հուշակելի դոլոյն մականուամբ յաշխարհէն հրատարակի, այսինքն///**։ Եւ միւս այլ վարդապետի Վաճրամայ, որ ի սոցանէ սնեալ և կրթեալ ի մամուլս գրոց, և ի սոյն ամի եղև կոչումն սորա յաստիճան վարդապետութեան։ Որք են

191ա սոքա ժառանգորդ և աթոռապահք*** Սուրբ Լուսաւորչին մերի‖Գրիգորի, ի հարանց յորդիս ընկալեալ զշնորհս աւրհնութեան և զաթոռս։ Որ է սա երրակի ականքք զարդարեալ, յեռանձնեա յերորդութենէ պարգև ընձեռեալ տանս Քորգոմա. Ա՝ հատեալն մասն ի կենդանարարն փայտէ աստուածեանն խաչէ, նշանն Հացաւնեաց, մխեալն արեամբ Աստուծոյ հրախառն վտակաւք, եւ Բ՝ Վիրապն անդնգահին տեղի չարչարանաց սուրբ հաւրն մերոյ, լրմամբ, Գծ (13) ամաւք, որ է պատճառ և գործարան փրկական ծնընդեան և նորոգմանս մերոյ, վասն զի իջմամբ նորա ի խորս անդընդահին վերադասեաց զմեզ ի յերկինս, և յանլոյս բանդին բնակել

լա բն է, լա՝ գն է, լա՝ դն է լա՝ են է։ Հաջորդ թերթի վրա գրված է լա՝ մեջն է (որից հետո երկու թերթ է պահպանվել, և պրականիշը չկա)։ Այսպես է գրված նաև նախորդ 8 պրակում, բայց այստեղ կա նաև «լզ-նէ», ապա նոր «մեջն էր», այսինքն պրակի (12 թերթի) մեջտեղն է։

* Ինչպես երևում է Սարդիս գրչին էլ է զգուշացրել Եսային, որ մանր գրի, և նա վերջին մասերը մանր գրով է գրել։ Սարգսի գիրը՝ շղագիր է։ Սարգսին հանդիպում ենք Եսայի Նշեցու մոտ առաջին անգամ 1283 թվականին, որպես նորուսում։

Եսային առաջին անգամ է հիշվում որպես վարդապետ, որին արժանացել է հավանաբար 1284 թվականին, Աղբերց վանքում։ Ձեռագիրը ընդամենը 128։ թ. տակ, որպես վերջին հնարավոր թվական. այդ թվականին մահանում է Ներսես բարձրապետը, իսկ Ձեռագիրն ընդօրինակելու ժամանակ դեռևս ողջ էր։

** Հաջորդ բառը ջերվոծ է։ Անհասկանալի է մնում «հրատարակի»—բառի իմաստը։

*** Գրված է «աթոռապահք»։

նմին, ի բանդէ մեղաց զմեզ աղատեաց նսեմական աղջամղջին. եւ Գ-ն տապանն Նոյեան՝ մայրն երկրորդի սեռի մարդկութեանս, հանգուցեալ ի բարձրաբլուր գագաթն Մասեաց, որ է լեառն Սարարադ գաւառի, որ է առակ աւրինակի, զի սկիզբն բարեպաշտութեանն, որ է ուղղափառ հաւատն, աստ է սիրով զաւրացեալ և արմատացեալ, զի բնակեալ յերկինս երկնից ի սմա բնակեցս, զի հաճեցաւ ընդ սա։

Բայց գրեցաւ սա ի թիւ Հայկազինս տումարի ՉԼԹ (1284), ի հայրապետութիւն տեառն Յակոբա, եւ ի թագաւորութիւն [Հ]այոց Ղեռնի,
191բ բայց տիրէր միայն նահանգին Կիլիկո։‖Ու յաշխարհա[կա]լութիւն Սողաւն խանին [որ է ա]զդէն Նետողաց, որ տիրէր սեռ ազգայնոց և ազանաց ամենայն։ Ահարկու ի վերա անաւրէն և ապստամբ ազգացն-մահ-[մ]ետականաց, և յոյժ գտած և խնամած բարեպաշտ ազգաց քրիստոնէից ընտերալ ի բանէն Աստուծոյ և աւծեալ շնորհաւք նորին, և գաւազան բազկաւն ամենազաւր ըմբռնեալ խորտակել և մանրել զխստացեալ պարանոց անհնազանդից աւրինաց իւրոց։

Եւ արդ, աղաչեմ զամենեսեան, ոյք հանդիպիք այսմ մատեանագրութեան, յիշեսջիք զվերայհիշատակեալսդ, որք են սմա ստացողք և ժառանգողք, յաղաւթս ձեր, ընդ նոսին և զամենամեղ գրիչս Եսաի, և զսիրելի եղբայրս Ստեփաննոս, սպասաւոր բանի, վասն զի շատ յորդորիչ և մխիթար գտաւ մեզ յամենայն պէտս հոգւո և մարմնո, և որք յիշէքդ ի բարի և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Բ

137ա Ձմեղա[պարտ] գրիչս Եսաի յիշել աղ[աչեմ]։

Գ

144ա ԼԼ աա յմ րտ 22 նն 22 յմ բբ բա շմ բա 22 ճճ բա ճճ դա ժմ սռ 22 րտ 22 ցո դա ռռ*։

458

ԱԻԵՏԱՐԱՆ

Ն. Ջուղա 34, Տեր-Ավետիսյան, 8ուցակ, էջ 50—51

Ստացող՝ Վարդան
Վայր՝ Գնդեվանք

ա

Փառք... Արդ, այսպիսի հրաշակերտ տէրունական հրամանացս եղէ ես անպէտս ի բնաւիցս անաթժան ի յոքունց Վարդան՝ վարդապետ անուամբ և ձևով միայն, և ոչ արդամբք և ճշմարտութեամբ, վասնզի խաւար այսոյ զկենցաղս պատրէ զհիս հանապազ, սնեալ և վարժեալ ի սուրբ ուխտին, որ կոչի Արատէս, առ ոտս աստուածազարդ բարձունոյ Հայրապետի, նորոգիչ եկեղեցոյ և սիրող սրբութեան։ Ու ետ այնորիկ

* Ծածկագիրը կարդացվում է. «Ձմեղապարտս Եսաի յիշել աղաչեմ»։

եկեալ բնակեցայ ի մենաստանիս, որ կոչի Գնդէվանս, ընդ հովանեալ Սուրբ նախավկային և աստուածամուխ Նշանիս, որ յորջորշի Սուրբ Սարդիս և գծագրել ետու ի թուականութեանն Հայոց, որ էր ՁԼԳ (1284), ի հայրապետութեան Հայոց տեառն Յակոբայ և յարհիեպիսկոպոսութեան այսմ նահանկի տէր Սարգսի գիտնականի և արդիւնականի, յիշխանութեան բարեպաշտ Պասլաֆին, և ի տէրութեան այսմ||մենաստանիս պարոն Դաւթի և ամուսնոյն իւրոյ Թաւսերին, ձեռամբ սրբասընեալ և պատուական Յովաննէսի՝ ի սուրբ ուխտէն, որ կոչի Թանատի վանս, որ մեծաւ աշխատութեամբ գրեաց զսայ և նկարեաց ըստ իւրում կարողութեան։

Արդ, ըստացա զսա ինձ և ծնողաց իմոց և եղբարց իմոց գանձ անկողոպտելի յերկինս զաւրաւիգն և բարեխաւս յաներեկ աւուրն, մանաւանդ յիշատակ մաւրն իմոյ Մամայիւթունին, զի բան Հաւր չնչեսցէ ձեռագիր յանցանաց նորա։ Եւ աղաչեմ զամենեսեան որք ընթեռնոյք կամ աւրինակ առնոյք, յիշեցէք ի Քրիստոս զիս՝ զեղկելիս, և զհայրն իմ Ասլան և զմայրն իմ, զոր վերագոյն յիշեցաք, և զհարազատ եղբարքն իմ զՄխիթար և զՈվանէս, և զամուսինսն և զաւակսն իւրեանց, և զՈհան եղբայրն իմ, որ փոխեցաւ ի Քրիստոս, և զհաւրեզբայրն իմ զՊտիկ, և
262ա ղբեռին իմ զԳրիգոր, և զգծող տառիս զՅովանէս։||Եւ առաւել աղաչեմ յիշեցէք առաջի Քրիստոսի զպատուականս ի կարգ քահանայից, զմաքրամիտ հոգևոր հայր իմ և խնամածու զԱռաքեալս, որ է զարդ եկեղեցոյ և ի բարի արմատոց շառաւիղ բխեալ։

Ընդ նմին յիշեցէք ի Քրիստոս զհոգևոր հայրս մեր զՍահակ փակակալ սուրբ եկեղեցոյս, և զՊետրոս անդրանիկ որդի սուրբ վկայիցս, և զՄխիթար ծերունի քահանայ, և զՀամազասպ նորընծայ, և զՍարգիս ճգնաւոր, զՄխիթար սարկաւագ, որ զքարտէզս կոկեաց, ևս առաւել զհոգևոր եղբայրն իմ զՅուսիկ րաբունի, որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս, և զառաջագոյն յիշեցեալ պարոնայքն և զննջեցեալսն իւրեանց, և ինքն Տէրն բոլորից յիշողացդ և յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Բ

Բ=Ճ=Հ=Գ=Կ=
=Վ=Մ=Է=Ջ=Լ=Ց=
=Կ=Ս=Մ=Շ=Ռ=Է
Թէ դպիր ես՝ կարդայ, թէ չէ՝ լռեայ։

Գ

262բ Յիշեցէք ի Քրիստոս զպատուական և զսրբայսնեալ քահանայքն զՍահակ և զԴաւիթ, որ զաւրինակս շնորհեցին։

Դ

204ա Ո՛վ սուրբ՝եղբարք, զստացող սուրբ Աւետարանիս զՎարդան վարդապետս հեզ և խոնարհ յիշեցէք ի Քրիստոս։ Ընդ նմին և զմեղուցեալ գծողս զՅովանէս, աղաչեմ։

է

Կազմող՝ Տուրմ

262ա Յիշեսցի աղաւթիւք մասամբ Տուրմ անուն կազմողի։

459

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՏԱՍԱՆ ՄԱՐԳԱՐԷԻՑ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ

Երուսաղեմ 1280, Պողարյան, Յուցակ Դ, էջ 469—470

Գրիչ՝ Յովաննէս

Վայր՝ Սիւնեաց Նահանգ

ա

Փառք անբաւից եռանձնեայ Սուրբ Երրորդութեանն... եւ աստուածութեանն Հաւր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգւոյն, այժմ եւ միշտ եւ յամենայն յաւիտեան։

Աստանաւր յանգ ելեալ կատարեցաւ դպրութիւն երկոտասան աստուածախաւս սուրբ մարգարէիցն, ի նահանգիս Սիւնեաց, եւ ի տէրութիւն մեծաշուք իշխանի այմ գաւառի Տարսաիճին, իսկ հանուրց ազգին նետողաց, ի թագաւորութիւնն Հայոց Լեւոնի, եւ ի հայրապետութիւն տեառն Յակոբա, եւ ի տոմարի Հայկազանցս թուոյ ՉԼԳ (1284), հրամանաւ եւ արդեամբ ազնուազարմ եւ իշխանաշուք, վեհխաստ եւ զուարթանուն բարւոյն Սահփանոսի, որ տարփացաւ բանից սորին անբիծ, եւ հրամայեաց դրոշմել ի գիծ ինձ ամենամեղ անձինս Յովաննէս քահանայի... հարազատ նորին եղբարց եւ արիւնառու մերձաւորաց, քաջ իշխանաց Հայոց Մեծաց գովելի եւ յաղթող զաւրավարաց...։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք արբիք եւ զմայլիք ղերիցս երանեալ բարւոյն, զպանծալի Պսակն, եւ զծընաւզս նորին զառաշասացեալ ղաւրապետն Տարսաիճն, եւ զամենայն մերձաւորս եւ երախտաւորս ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ, ի մաքրափայլ յաղաւթս ձեր, զի երկու կենաւքս ճոխասցին, եւ կրկին աշխարհաւք պայծառասցին, եւ երանեսցին ի փառս աւրհնելոյն յաւիտեանս, ամէն։

բ

Ստացող՝ Սահփանոս

/// Ջ Սահփանոս *մեղապարտ յիշեցէք**։

---

* Գրված է լուսանցքում, հունատառ, բացառությամբ ֆ և ց տառերի. Ն. Պողարյանի կարծիքով, Սահփանոս Օրբելյանն է գրել։

460

ԱԻԵՏԱՐԱՆ

Երուսաղէմ 2654, Սյուրմեյեան, ծուցակ, էջ 359

Գրիչ՝ Աստուածատուր
Վայր՝ Հաւարծին

Փառք քեզ սուրբ եւ համագոյ Երրորդութիւն յամենայն արարածոց քոց, յաւիտեանս յաւիտենից, ամէն, ամէն։

Ի թուականութեանս Հայոց ՉԼԳ (1284) գրեցաւ Աւետարանս Յոհաննու սիրելոյ Տեառն և այլոց աւետարանչացն սկիզբն և վերջն, ի վանս Հաւարծին կոչեցեալ, ընդ հուանեաւ Սուրբ Գրիգորին մեր Լուսաւորչի, ի ձեռն անարժան ծառայի Տեառն եւ անպիտան քահանայ Աստուածատրոյ՝ Յուսկայ որդոյ, եւ գրեցաւ հրամանաւ և արդեամբք սուրբ և պատուական քահանայի Գրիգոր անուն կոչեցեալ, զոր ետ գրեալ յիշատակ եւ բարեխաւս իւր եւ ամենայն արեան մերձաւորաց իւրոց։ Եւ արդ, աղաչեմ զամենեսեան, որք լուսաւորիք ի կենսահրաւէր Աւետարանէս, յիշեցէք Աստուած ողորմեիւ զպատուական քահանայն Գրիգոր, և զամուսին իւր Տիրանց, եւ զմայր նորին Մարիամ. յիշեցէք եւ զծնողսն նորայ, եւ զեղբարսն, եւ զփոխեցեալսն ի Քրիստոս զարժանաւոր քահանայսն՝ զՄխիթար եւ զՆահապետն, և զայլ եղբարսն նորին՝ զկենդանիսն, եւ զմայր իւրեանց եւ զամենայն ընտանիսն, եւ որ բարի մտաւք յիշէք եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս։

Տէր Աստուած ողորմի Փթութին, որ աւժանդակ եղաւ ի գին գրոյս վասն յիշատակի հոգոյ իւրոյ, ի գիր կենդանի գրեսցի եւ նա, ամէն եւ եղիցի։

Ընդ նոսին և անպիտան գծողս աղաչեմ յիշել զիս և զիմսն ամենայն, զի Տէրն առատ է ի տուրս պարգևաց ամենեցուն առհասարակ ողորմեսցի վերագրելոցս եւ յիշողացդ։ Աղաչեմ ղբարեգութն Աստուած և բարեխաւս ունիմք առ քեզ զբանտ կենդանի եւ զմայր միածնի քո, և զամենայն սուրբս քո, որք հաճեցան քեզ զամենեցուն, որ յայսմ աւետագոչ տառիս գծագրել կան, զգիր յանցանաց նոցա ընջեայ եւ գրեայ ի գիր կենդանի և դասեա ի դասս աջ ու ընդ սիրելիսն եւ ընդ կամարարսն քո, եւ քեզ փառք յամենայն շնչոց, ամէն, ամէն։

Խոշորութիւն գրոյս անմեղադիր լերուք, աղաչեմ, եւ թէ սխալանս ինչ գտանէք, ուղղեցեք աննախանձաբար, գիտէք զի ամենայն մսեղի տկարանայ ի գործս իւր։ Հասու մարդ որ տեսնուս, վասն նշանացն մի մեղադրել, զի ոչ ուսեալ էի, եւ ոչ այլ նկարել, այդ չափ կարացի։

Տէր Յիսուս Քրիստոս, Աստուած իմ, ընդ սուրբ եղսբերիցն յիշեայ զանարժան ծառայս քո, զմեղուցեալ գրիչս Աստուածատուր, եւ զքոյրն իմ հոգևոր զՄարիամ աղաչեմ զքեզ Տէր յիշեա ի գալստեան քում եւ ողորմեա վասն Սուրբ Աստուածածնիդ եւ ամենայն սրբոց քոց, ամէն։

461

ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԵՐՋՆԿԱՑԻՈՅ

Երևան 10337 (1339)

Հեղինակ՝ Յովաննէս Երզնկացի

Յաղագս երկնային շարժմանն նուաստ Յոհաննիսի Եզնկեցոյ շարագրեալ իմաստնոյն բանից ի խնդրոյ բարեպաշտ և երկիղազարդ պատանոյն պարոն Վաղթանկայ

167ա *Ամենայն ոք որ ղրան՝ որ է ծնունդ անմարմին մտաց՝ գրով ի քարտիսի կամիցի դրոշմել՝ պարտի և զնորին պատճառն յանդիման կացուցանել, որպէս զի վերջին ժամանակին ծննդոց մարդկան յօժարութիւն ի*

167բ *սէր խնդրողի բանին՝ և աշխատանք տուողի||խնդրոյն մի ծածկեսցի ի բանասիրաց և յաշխատասէր անձանց, զի կարօտքն բանի իբրեւ զերկիր ծարավուտ զցօղ քաղցրութեանն երկնի խնդրեսցեն, և ապա սպասաւորին բանի իբրեւ զամբ ընդունակ ցօղոյ զառեալն յանսահման ծովէ իմաստից և ի գետոց հոսմանէ՝ յաղագս ծուլութեան մի արգելցեն։*

Ըստ որում և ես նուաստ Յոհաննես Եզնկեցի, *աշակերտ հոգելից հօրն և սուրբ վարդապետին* Վարդանայ, *սպասաւոր սուրբ գրոց բանից, ի թվին ՉԼԹ (1284), պատահաց գալ ի կողմանս աստուածապահ թագաւորութեանս աշխարհիս Վրաց, ի հռչակաւոր և ի մեծ մայրաքաղաքս ի* Տփխիս, *Փայտակարան կոչեցեալ ի գիրս պատմողաց, և հանդիպեցայ խօսել մեզ բանս քարոզութեան ի դուռն եկեղեցւոյն մեծապատիւ և խոհեմամիտ և մեծ իշխանին Հայոց պարոն Քարիմատինին, զոր շինեալ էր աստուածասէր և բարեհոգի հայրն նորա պարոն Ոմեկն, և էր խօսեցեալ բանն՝ յաղագս երկնային շարժմանն։*

168ա *Վասն որոյ ախորժելի եղեւ զուարթամիտ պատանոյն Վախթանկայ, որ էր որդի կրսեր հռչակաւոր անուանն պարոն Ոմեկին, և մայրենի ազգաւ թոռն մեծ իշխանին Ջալալին, տհաւն Խաչենոյ, որդի մօր բարեպաշտի, որ էր Քրիստոսի օրինօքն զարդարեալ յոգի, և ի խնդիր բանիս յորդորող զորդի։ Սա խնդրեաց ի մենջ յաղագս երկնի և նորին շարժմանն, յորս հարկեալ յորդորեաց զտկարութիւնս մեր՝ մեծազգ եպիսկոպոսն տէր Յոհաննէս ազնուական զարմից և բարեհոգմիկ հարց ծնունդ, որ և շարժեալ ի սիրոյն և ի յուսոյ խնդրողաց, և ակն առեալ ի պատուոյ շնորհաշուք տեառն և գերապատիւ եկեղեցւոյ գլխոյն ի նրբաշաւիղ և ի կորովամիտ բանից սուրբ հարցն, և վարդապետաց մերոց, և իմաստախոհ արանց, պարզեալ գրեցի համառօտ բանիւ և աշխարհական խօսիւք, վասն դիւրաւ հասկանալի լինել ընթերցողաց։*

Արդ, որք գրէք յաղագս օգտի՝ զսակաւ աշխատութիւնս մեր, գրեսջիք և զայս նախադրութիւնս, և զբան յիշատակի անուան խնդրողաց. և գրողի

168բ *սորին||գրեալ լիջիք և դուք ի գիրն կենաց, և որ ծուլանայ, թողու զսա, ոչ լիցի առանց պատժոց, իբր յոլով աշխատութեանց՝ զիւր սակաւն գին տալ ոչ կամեցաւղ այլոց։*

462

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 4207

Գրիչ՝ Կոստանդին, մականուն՝ Թուտաթ
Վայր՝ Առանա

ա

127բ Փառք ամենայսուրբ Երրորդութեանն յաւիտեանս, ամէն։ Կարողութեամբ տեառն սկսա և ողորմութեամբ||նորին կատարեցի, ղԹուղթ պատգամաց, ի խնդրոյ աստուածասէր և հետաքրքիր աստուածային աւրինացս պարոն Աւշնի, եղբաւր պարոն Հեթմոյ, որ է տէր Կիւրիկոսոյ, և որդիք պարոն Աւշնի և Թոռունք Աւագ պարոնի և ազն թագաւորին Հայոց Լեւոնի, ի վայելումն մարմնոյ և յիշատակ հոգւոյ իւրոյ և նախնեաց նորին։

Արդ, որք կարդայք և աւգտիք ի սմա, մեղաց Թողութիւն խնգրեցէք իւր և իւրոցն։ Գրեցաւ սա ձեռամբ յոգնամեղ և անպիտան, սուտանուն քահանայի Կոստանդնի, որ մականուն Թուտաք կոչի, ի թվին ՉԼԳ (1284), ի մայրաքաղաքիս Առանայ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս։

Մշակդ Քրիստոսի,
Յիշեցէք զիս ղեղկելի,
Յորժամ գայցէ Տէր հայրենի,
Տացէ ձեզ վարձս անհատնելի։
Եւ Քրիստոսի փառ[ք] յաւիտեանս, ամէն։

բ

Փառք Հաւր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն այժմ և յաւիտեանս, ամէն։

363բ Գրեցաւ սա ձեռամբ անարժան քահանայի Կոստանդնի, մականուն Քուտաք կոչի, ի վայելում հոգեկիր և ուսումնասէր, և աստուածասէր և բարեպաշտ իշխանի Աւշնի, որ է որդի իշխանին Աւշնի թագաւորազնի,
364ա որ է եղբայր Հեթմի և տէր Կիւրիկոսի, ի վայելումն մարմնոյ և յիշատա||կ հոգւոյ և ծնողաց իւրոց, որ և փոխեալ ի Քրիստոս։

Արդ, որք ընթեռնոյք կամ աւրինակէք, յիշեսջիք զբարեպաշտ իշխանն զԱւշին, քանզի յոյժ փափականաւք ետ գրել զսայ, զի յոյժ սիրէր զընթերցումն գրոց, և զի էր լցեալ սա աստուածային շնորհաւ։

Արդ, գրեցաւ սա ի թուին Հայոց ՉԼԳ (1284), ի քաղաքիս Առանայ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, և որք յիշէք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս։

գ

385բ Փառք ամենայսուրբ Երրորդութեանն յաւիտեանս, ամէն։ Աղաչեմ յիշել զԱւշին իշխանն, զի յոյժ աստուածասէր և ղուսումնայսէր որդին պարոն Աւշին, զտէր Կիւրիկոսու, որ և սայ ետ շարադրել զսա ձեռամբ

անարժան Կոստանդեա, մականուն Թուռաք կոչեցեալ։ Աղաչեմ չմեղադրել, զի ժամանակս ցաւագին և ի գրել սմա շատ հիւանդ և ունայն կեցայ։

463

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 195

Գրիչ՝ Կոստանդին

ա

118բ Ջստացաւղ սուրբ Աւետարանիս զՅոհաննէս արհեպիսկոպոս արքաեղբայր Հայոց, հանդերձ ծնողիւք իւր և համայն ընտանեաւք յիշեցեք ի բարին Քրիստոս։

Ի թուականիս ՉԼԳ (1284), ի ժամ սորին գրութեան փոխեցաւ առ Քրիստոս բարեպաշտ իշխանաց իշխանն արքաեղբայրն Հայոց և աեառնըս վասակ տէր Ճանճոյն, ի մարտի ամսոյ ի ԺԳ (13), յաւուր երկշաբթոջ ընդ էրեկս աւուրն, ի մայրաքաղաքին Սիս, և թաղեցաւ ի սուրբ ուխտն Ակնեբ, որոյ ողորմեսցի Տէր Յիսուս Քրիստոս, ամէն*։

բ

195բ Ջստացաւղ սորին աստուածաշունչ տառիս զՅոհաննէս արհեպիսկոպոս արքաեղբայր Հայոց, հանդերձ ծնողաւք և նոցին ծննդաւք և համայն զարմաւքն իւրն թաղաղնեաւք յիշեցէք ի բարին Քրիստոս՝ տեսողք սորին և վայելողք։

Ընդ որս և զիս, զանարհեստ գրիչս Կոստ[անդին], ծառայ և աշակերտ վերասացեալ տեառնն իմում յաստուածամեծար վեհիցդ հայցեմ յիշել և զմեզ սովաւ ի բարին Քրիստոս։

Եւ նա որ ամենառատն է և բազմաբաշխ առ հասարակ յիշողացդ և յիշեցելոցս և ամենայն հաւատացելոց հանգիստ և ողորմութիւն շնորհեսցէ իւրոց անսպառ դթութեանցն, այժմ և յաւրն յաւիտենից, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

գ

273բ Ջկոստ[անդին] սորին գծող յիշեցէք ի Տէր։

դ

Ստացող, սրբագրող և մի մասի գրիչ՝ Յոհաննէս Արքաեղբայր

363ա Դատապարտ և եղկելի ոզւոյս Յոհաննէսի եպիսկոպոսի արքաեղբաւր ստացողի սորա և աշխատողի, ողորմեսցի Քրիստոս Աստուած, և աշխատողացն ի սա, և զմեզ սուտի մտաւք ի բարին յիշողաց, ամէն։

* Մինչև այստեղ տե՛ս նաև № 4188 ձեռագրում (էջ 219)։

Ե

Փառք քեզ Աստուած իմ Յիսուս Քրիստոս։

394ա *Թողութիւն, փրկութիւն և ողորմութիւն Յոհանէս եպիսկոպոսի աշխատողիս և իմոյն հայցեցէք ի Քրիստոսէ վայելողք սորա և ձեզ Տէր տացէ, որպէս դուք մեզ՝ սատ և անդ։*

Գ

406ա *Զգրողս սորա և ստացող զՅոհաննէս եպիսկոպոս արքաեղբայր յիշեսցէք, որ յոյժ աշխատեցա յուղղոյն սորա գիւտ։ Յիշեցէք ծնողաւք և ընտանեաւք մեռովք ի բարին Քրիստոս և Աստուած զձեզ յիշեսցէ։*

Ի թվականին Հայոց ՉԼԷ (1288) գրեցա։*

464

ԱՒԵՏԱՐԱՆ

Սյուրմեյան, Ցուցակ Հալեպի, Ա, էջ 57

Գրիչ՝ Պաւղոս
Վայր՝ Արքակաղնի
վանք

Ա

Փառք ամենասուրբ Երրորդութեանն և միաստուածութեանն, Հաւր և Որդւոյ և ամենասուրբ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Արդ, ամենայն ոք ցանկայ՝ ոմանք մասանց, և այլք բոլորին, աստուածայնոյն աստուածասէրքն և գերագոյնին բարեբարուքն, զորոց Տէր բանայ զաչս ներքին մարդոյն գիտել և ճանաչել զդիւրակործան և զապականելի կենցաղոյս վայելն, թէ ընդ զտանելն արագ ունի և զեղծումն։ Իսկ որոյ բաց և յստակ ունիցին զմտացն աչս, և լուսատեսակ զհոգւոյն տեսարանս գանձեն անձանց իւրեանց անճողոպրելի շահս որ միշտ անզրաւ ունի զկայն ընդ Աստուծոյ և ոչ ական հատանի ի վնասակար գողոց։ Ուստի և շառաւիղն աւրհնութեան և սեռն բարէնշան սուրբ եւ երանաշնորհ կուսակրաւն քահանայն Կոստանդին, աստուածային սիրովն վառեալ միշտ ի վեր ունելով զաչս հոգւոյն, ցանկայր կարաւոր գտանել աւուրն պարենի, և զբաղձանս իւր յայսմ հաստատէր։ Զի թէ ուր ուրեք գտանիցէ զցանկալիս իւր և ապա եռափափագ սիրով հրամայեալ իմոյն նուաստիս յոդնամեղ և անարհեստ գրչիս Պաւղոսի գրել զսա զարդարուն երանգովք, զարդափայլեալ վտակս. կենսապարգև սուրբ Աւետարանիս։

---

* *Ձեռագիրը գրել է Կոստանդին գրիչը, Հովհաննես արքաեղբոր համար։ Վերջինս հետագայում (1288 թ), լրացրել է այն մասամբ։ Որովհետև ձեռագրի մեծ մասը գրված է 1284 թվականին, դրա համար այս հիշատակարանը եւս դնում ենք այդ թվաշարքում։*

Եւ իմ հարկեալ յեղբայրական սիրոյ նորին, ըստ կարի իմում գրեալ աւարտեցի զսա ի թուին Հայոց ՉԼԹ (1284), ի հայրապետութեան Յակովբայ և ի թագաւորութեան Հայոց Լևոնի, եւ սուրբ գերադրական անապատիս Առքայակաղնի, ընդ հովանեաւ ամենազաւր աջոյն Յիսուսի, եւ Սրբոհոյ Աստուածածնին եւ սրբոց հրեշտակապետացն Միքայելի և Գաբրիելի եւ կենսագիր սրբոյ նշանիս Սուրբ Կոստանդեայ։

Եւ արդ, գրեցաւ սա հրամանաւ սրբասնունդ քահանայի Կոստանդեա, ի յիշատակ հոգւոյ իւրոյ և առ ի Քրիստոս հանգուցեալ նախնեացն իւրոց. հաւրն իւրոյ Գրիգոր քահանայի եւ մաւրն և հաւուն իւրոյ Թադէոս քահանաի, և ամենայն զաւրմիցն, եւս առաւել հարազատին իւրոյ տեառն Ստեփաննոսի արքեպիսկոպոսի եւ առաջնորդի Առքայակաղնոյս, զոր կացեալ յեպիսկոպոսութենն Ղուկասու ժամանակս, վարելով զկեանս իւր հեզութեամբ և խոնարհութեամբ, ըստ սրբոց առաքելոցն վերափոխի առ Քրիստոս ի թվին ՉԼԹ (1284), ի մայիս ԺԶ (16) և՝ վերադասի ըստ այլ սրբոց հարցն և հայրապետացն, որոյ Քրիստոս Աստուած հանգիստ և ողորմութիւն շնորհեսցէ։

Եւ արդ, աղաչեմ զամենեսեան, որ խրախանայք և լուսաւորիք աստուածային գանձուցս, յիշեսջիք աղաւթիւք զստացաւղ գրոցս զԿոստանդին քահանա, ծնաւղաւք իւրովք եւ ամենայն զարմիւք։ Եւս առաւել երես անգեալ աղաչեմ զձեզ յոգնամեղ և անարհեստ գրիչս Պատրոս յիշեսջիք և զիմ ի մեղաց թողութիւն, զհայրն իմ և զմայրն, և զամենայն ազգայինս, և ինքն Քրիստոս յիշողացդ. և յիշելեացս ողորմութիւն շնորհեսցէ, և նմա փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Բ

Ձստացաւղ սուրբ Աւետարանիս զաստուածազարդ քահանա ՁԿոստանդնէն եւ զհայրազատ եղբայր նորին, զաստուածապատիւ եպիսկոպոսն զտէր Սահփաննոս՝ զվերափոխեալն առ Քրիստոս, աղաչեմ յիշել աղաւթիւք ի Տէր։

465

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 5547 (Թ. դ)

Նվիրող՝ Գորգ
Վայր՝ Կոռ գեաւղ

ա

149բ Ես՝ Գորգ անարժան ծառայ Աստուծոյ, եւս կազմել զսուրբ Աւետարանս, զոր գնեալ էր իմ պապն Գրիգորն, եւ տուեալ ի Սուրբ Ստեփաննոսն, որ է ի գեաւղն, որ կոչի անուն Կոռ, յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց եւ զաւակաց իւրոց։ Եւ ըստ բերման ժամանակիս, հեռացուցեալ էին զԱւետարանս ի Սուրբ Նախավկէն։ Ես Գորգս գտա եւ եւս ի Սուրբ Նախավկայն՝ յիշատակ ինձ, եւ ծնողաց իմոց, եւ զաւակաց, որք կար-

դայք, յիշեսջիք առ Քրիստոս՝ ղիս եւ ղծնողսն իմ, եւ Աստուածն բոլորիդ ողորմեսցի մեզ եւ ձեզ, ամէն։

Թուի[ի] ՉԼԴ (1284)։

Նորոգեցաւ եւ կազմեցաւ ձեռամբ Յովաննէս քահանայի եւ յոգնամեղի՝ կրկին աղաչեմ յիշել ղիս առ Քրիստոս, զի ողորմեսցի Քրիստոս յաւուրն աներեկի, ամէն, ամէն։

Բ

Կազմող՝ Յովաննէս

252բ Տէր Աստուած ողորմեա Յովաննէս քահանայ, ամէն։

Ո՛վ մանկունք Նոր Սիովնի, յորժամ ընթեռնուք զսուրբ Աւետարանս, յիշեսջիք ի Քրիստոս զբազմամեղս զՅովաննէս քահանա, որ բազում չանիւ նորոգեցի* և կազմեցի զսուրբ Աւետարանս, եւ Քրիստոս աստուածս բոլորից համայնից ողորմեսցի մեզ և ձեզ, ամէն։

Գ

324ա Տէր Աստուած ողորմեա Յովաննէս քահանայի ամէն։

* Հովհաննեսը քանաքով անցել է խունացած տառերի վրայով։ Նահ է գրել վերոբերյալ ամբողջ հիշատակարանը։

466

ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄՐՐՈՆԱՑՒՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ

Երևան. 1526 (1294 թ.)

Յիշատակարան թագաւորին Հայոց Լեւոնի ընծայաւղի զաւրինակ սուրբ գրոցս Հաղբատա*

857բ Ամենապատճառ և սկզբնական էութիւն երանական Երրորդութեանն Սրբոյ, որ բոլոր գոյիցս է պատճառ, և հանուր էացելոց սկիզբն արմատ և աղբիւր գոլով բարեաց, իբր ամենահարուստ և առաջին բարի, որպէս աստուածաբանէ ծայրագոյնն աստուածաբանից որդին Որոտման յաստուածաւանդ ասացեալսն, Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչինչ որ ինչ եղևն։ Եւ յառաջ քան զայս նախաձայնէր ոմն մարգարէ, Որ ինչ բարին է՝ նորա է։ Եւ ի նոյն մտաց զաւրութիւն, համաձայն ի միւսոյ սեանն կարծելոյ աստուածեղբաւրն մեծի՝ արտաճառ վարդապետութիւն. Ամենայն ասէ տուրք բարիք և ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալ ի Հաւրէն լուսոյ, որով ուսեալ վարդապետեցաք, զի որպէս ըստ բնութեանն էակութեան պատճառ է անպատճառապէս, և սկիզբն անժամանակապէս, որ էն Հայր անսկզբնակից բանին իւր Որդւոյ, և անհատաբար Հոգւոյն բղխեցոյ ի նոյն պատկեր համեմատութեան՝ և յայլ տարազ իմացման իմանամք, զի ըստ ստացման և արարչութեան դարձեալ՝ նոյն համագոյ և միասնական կատարելութիւն, երրեակն անձնաւորութիւն պատճառ է պատճառաւորապէս, յոչէից յանգոյից բոլոր էիցս ամենից, որով արժան և իրաւ պատշաճաւորութեամբ սկսմամբ յինքենէ յառաջ եկեալսն էութեամբ, սկսաւ դարձեալ՝ և կարդաւորեաց աւրինադրութեամբ, զբնական լոկ՝ բնական կարգաւոր շարժմամբք, և զբանականսն՝ բանական բարի աւրինադրութեամբ, որով և որք առ ի նմանէ ուսեալք և սկզբնաւորեալք՝ առաջինն յաշխարհի սկզբունք և պատճառք եղեն բարեաց աւրժանապէս իբրու նորին ճշմարիտ բարեաց պատճառին և սկզբան պատկերք. պատուեցան և մեծարեցան, և զան-
858ա մահութեան նորին աւրինակ, անմահ յիշատակաւն յերկրի յանձինս տպաւորեցին, որպէս գոչէ խաւսելով անվախճան, իբրու միշտ կենդանի առաջին պատարագողին Աբելի արիւն, և երևի և մնայ անսպառ պտուղ

---

* Մատենադարանի № 6558 ձեռագրում (էջ 634) այսպիսի խորագիր ունի սույն հիշատակարանը։

ողջախոհութեանն Նոյի՝ յաշխարհ ամենայն, և ի բնութիւն մարդկային, որ նորին յադդի արդարանալոյն փոխանակ դարձեալ ծաղկեցան։ Նաև Հաւրն և սկզբան հաւատոցն արդարութեան, Աբրահամու ուխտ և ողորմութիւն պահեցաւ մինչև ի հազար ազդ. նմանապէս և որ առաջին առաջնորդ եղև աշխարհի գրաւոր աւրինաց և սահմանադրութեան, Մովսէս մեծն, աստուած թագաւորաց կոչեցաւ, և նախապատիւ և մեծ մարգարէից հանուրց պատուեցաւ, ըստ նմին և անուանի յառաջին աստուածապաշտ թագաւորս Դաւիթ, որ նախ ի նոցանէ պատուեաց զԱստուած սեղան կանգնելով։ Եւ մեծ ի ծնունդս կանանց Յովհաննէս, որ նախ չնաշխարհիկ հրեշտակական սկսաւ ղանապատի կեանս, և մանաւանդ վասն նախկին ղբարւոքն դաւանելոյ կրաւնս, հիւն և վաւակակալ թագաւորութեանն երկնից, յերանելի և միայն հղաւր բնութենէն երանեալն Պետրոս, առաքելոցն գլուխ արժանապէս պատուեցաւ և մեծարեցաւ, որով այսչափ նախապատվութիւն այնոցիկ որ զբարին սկզբնաւորեցին, բազմաց յորդորումն եղև և նախանձ զանազան բարեաց պատճառ ի սկիզբն լինելոյ, որպէս և ըստ որում այլք այլոց, նմանաւրինակ և մերս աշխարհի և ազգի հայր լուսաւորութեան և հաւատոց ծագեալ փայլեաց առաքելաչափ մեծ Լուսաւորիչն Գրիգորիոս։ Եւ ի նորին զարմէ լուսոյ շառաւիղք ծագեալք զանազան նշոյլիւք ճառագայթից, զմերս լուսաֆայլեալ շնորհազարդեցին զտոհմ և զեկեղեցի, որպէս յետ գովեալ որդոցն նորին համանման թոռն նոցին մեծն Ներսէս, կարգաւք կրաւնաստանեայց և բարեգործութեամբ տնանգաց, երկնի հաւասար առաքինութեամբ զաշխարհս Հայաստանեաց նորոգեաց։

858բ Եւ սուրբ հայրապետն Սահակ գրաւք եւ||թարգմանութեամբք ի գնացս գետոց Աստուծոյ ուրախ արար զեկեղեցւոյս քաղաք, յորոց վերայ իբր ի բարւոք հիման շինելով, ոմանք փիլիսոփայական գետս յաւելին և այլք զմեկնութեան մառաց շաւիղ մաքրեցին. կէսք զեղանակաց երգս կարգեցին, և այլք զկանոնաց չափ սահմանեցին յորոց յամենեցունց և յետ յոլովից ի վախճան ժամանակաց և ի վերջինս գարուս, յանբարի և ի նուազեալ ժամանակս իբր ի դրունս ձմերայնոյ ի լսնացեալ ճուռ կամ ողկոյզ ինչ զարմանալի փայլեաց և երևեցաւ ի զարմէ և ի ցեղէ ընտրութենէ մեծ լուսաւորչին համեմատ առաջնոյն երկրորդ գերամաքուրն Ներսէս, որ զհայրենին յաջորդեաց գահ և աթոռ հայրապետութեան ի Կայսր Հատաւմական, և զամենայն նորոգեաց ըստ նախնի հարցն բարեզարդութեան զառ ի զանազան թշուառութենանցն աղաւաղեալ եկեղեցւոյ կարգս, որում ի նորին արեան մերձաւորութենէ, մանաւանդ յաշակերտութենէ, լուսափայլն բանի և մաքուրն վարուց յետ նորա ծագեաց և փայլեաց նորին ձեռնասուն եղբօր ծննդոյ որդի, սուրբ և երջանիկ հայրն մեր Ներսէս, որ ըստ եռանդոտ բորբոքման ի սրբագործ հարազատի սէրն ըստ Ջնբեդայ որդոյ զսիրելին ունի յատկութիւն մանկակոչութեան, զի որպէս գործասէր մեղու ի բազում ծաղկանց զբիւրապատիկ և զանազան ժողովեաց զբարեաց նախանձ յամենայն նախնեաց սրբոցն գերազարդից զհարցն և զհայրապետաց՝ զճգնաւորացն և զմիանձանց, մանաւանդ թէ առաւել լրացեալ մարգարէական և առաքելական աստուա-

ծաբանութեամբն, և ի նոցին հոգւոյ շնչմանէ զբաղմաճաշակս այս խորիսխ՝ որ քաղցր է քան զմեղր բերանոյ, և քան զոսկի և զականս ընտիրս պատուականս երկասիրութեամբ, գործեաց և եթող մեծամեծացն հոգւով և տնանկաց ի ճշմարիտ բժշկութիւն հոգւոց, միանգամայն և ի
859ա նախանձ առաքինի գործոց, և յորդոր||ումն և ի սէր ուսումնասիրութեան՝ իբրու երկրորդք ի յետին ժամանակս ի յազգիս մերոյ սկիզբն և յորտորիչ լինելով մեկնողական իմաստից և հոգևոր այլաբանութեանց, որով բարդաւաճեալ և եկեղեցի, ղի վաստակով քրտնաջան հարցս փարթամացեալ, ոչինչ աղքատ գտանիմք քան զայլ եկեղեցիս, որ փայլեցին նախնի մեկնողացն և հարցն սրբոց դասք։

Մանաւանդ առաւել սիրելով որպէս զայլ ամենայն դիրս և զսոյն հոգեշահ տառ՝ արքայս Հայոց Լեւոն, և բերկրելով ոտվաւ պանծանաւք, ե զսոյն կամեցաւ ընծայ առաքել աշխարհին Արևելից, զոր և յիշատակեալն ի նախնեաց իրաւացի է, զի նախնական զարմ թագաւորիս մերոյ ի վերջին ժամանակս աւուրց աստուածային աւրհնութեամբն ծաղկեալ ղխափանեալ ի վաղուց թագաւորութիւնն Հայոց նորոգեցին, և զտարբերեալ ազգս ծառայութեամբ և գերութեամբ ի ստրկութիւն այլասեռից՝ զատեալ և ժողովեալ հանգուցին և բնակեցուցին ընդարձակապէս իշխանութեամբ, ի ժամանակս յոլով աշխարհաց աւերմանց և մեծամեծ թագաւորութեանց կործանման հաւասարեալք Նոյին նահապետութեանն՝ որ ի ջնջելն աշխարհի նշխար աճման և արծարծելոյ մնաց բնութեանս մերոյ, որ և սոքին իսկ հարք և հաւք արքայիս մերոյ Լեւոնի, ըստ հաւստի ազգաբանութեան յերկուց նախընտիր ցեղս պետութեանց խառնեալ ի հայկազանցն քաջաց և Աբրահամեան աստուածապաշտ բեղմնաւորութենէն ի Քէտուրական ծննդոց, նսև յետոյ Արշակունի թագաւորութեանն զարմ, և Պալհաւիկ ցեղն հայրապետական որ ի Լուսաւորչէն մերմէ, միաւորեալ Քրիստոսիւ ի մի զբարեպատուղ արքայս մեր ծաղկեցուցին, ղի ըստ Հեբմեանցն անուանեաց, եկն ի սա՝ ցեղն Պալհաւիկ, և մերձաւորութիւն արեան հայրապետական տոհմին, և ըստ Ռուբինեանց յաղթողաց՝ խառնեցաւ ցեղն Արշակունի հայկազն ի տոհմն թագաւորական։ Քանզի քաջ և արի իշխանն Ռուբէն նախնին սոցա, ազգական զո-
859բ լով մեծի թագ||աւորին Հայոց Գագկայ, դիմեալ յԱրևելից, եկն ի սահմանս Տաւրոսի ի գահ Կիլիկեցւոց, և բացեալ և ընդարձակեալ՝ աիրեաց կողմանցն այնոցիկ; և յետ նորա տիրէ նորա Կոստանդին, և ապա քաջն և բարին Թորոս, մեծ որդին Կոստանդեայ, որ առաւել ընդարձակեաց զիշխանութիւն տէրութեանն։

Յետ Թորոսի տիրէ Լեւոն որդովքն, յետ Լեւոնի՝ որդի նորին Թորոս երկրորդ։ Ապա յետ Թորոսի տիրեաց իշխանն Ստեֆանէ, և յետ Ստեֆանէի՝ տիրեաց Մլէհն և յետ Մլէհին տիրեաց իշխանն Ռուբէն՝ որդին Ստեֆանէի. և յետ Ռուբէնի բարեշնորհն և բարենշանն Լեւոն՝ միւս որդին Ստեֆանէի և եղբայրն Ռուբէնի՝ տիրեաց մեծա[ւ] յաղթութեամբ, որ ընդ բազում նուաճեաց ազգս և աշխարհս զմերս ընդարձակելով. և ըստ նախնի պսակաւորացն մերոց Հրաչէին և Պարոյրի, կամաւք քաղցրութեանն Աստուծոյ բարձրացեալ, յերկուց կայսերացն

ընկալեալ թագ, նորոգեաց զխափանեալ աթոռ և արքունիս թագաւորութեան մերոյ. յորմէ ծնեալ ամենագով թագուհին Զապէլ, այն որ ղուգեալ յամուսնութիւն բարի թագաւորին Հեթմոյ ծնաւ զյաղթող թագաւորս մեր Լևոն. որ թէպէտ ըստ աւրինակին Տեառն իբրու քաշ հովիւ եգ զանձն ի վերայ ոչխարաց և եկեղեցւոյ, և մատնեցաւ ընդ եղբաւրն իւրում Թորոսի ի մահ և ի գերութիւն, սակայն շնորհն Աստուծոյ իբրև զսիրեցեալ անդրանիկ որդին ղիսրարէլ վերստին յերկաթի հնոցէն և ի հալոցէն յԵգիպտոսէ պարգևեալ մեզ շնորհեաց. որ թագաւորեալ տիրէ մեզ իմաստութեամբ և բարեպաշտութեամբ, իբրու վէմ անդամանդ և անշարժելի բազմագոյն հնարիւք իմաստից, և աշխատութեամբ ճանապարհաց և պատերազմաց և ծախիւք գոյից, պարապէ զմեզ շուրշանակի ի մրրկեալ ալեացն անաստուած հեթանոսացն խռովութենէն։

Արդ, սոյն ամենաբարի և պայազատ թագաւորս մեր Լևոն, ի վերայ յոքունց բարեաց տեսակաց և բարեսիրութեանց որպէս Դաւիթ մեծն, որ
860ա քան‖զամենայն փառսն թագաւորական՝ երանելի համարէր զվայելչութիւն տանն Աստուծոյ սիրել և տեսանել, նոյն աւրինակ և սա սիրելով զսրբոյ եկեղեցւոյ պայծառութիւն՝ և զվայելչական կարգս եկեղեցականս՝ առատանայր ի բազում վանսւրայս և յեկեղեցիս, լնող զպէտս սպասաւորաց առատաձիր պարգևաւք ոճկաց, միանգամայն և վայելչացուցանէր փարթամութեամբն զտունս Աստուծոյ պէս պէս զգեստուք և անաւթաւք պատուականաւք և բազում կտակարանաւք Հին և Նոր պատուիրանաց, նաև պէսպէս մեկնութեամբք նոցին՝ զոր հարքն երշանիկք ի ձեռն Հոգւոյն Սրբոյ պարզեալ բացայայտեցին։ Եւ մանաւանդ առաւել տենչմամբ սրտի սիրելով զհայրենի և պարծելի բնիկ Հայկազանց աշխարհն՝ զՏունն Արևելից՝ որ առաջին է մասն և գլուխ աւրինակ իմն բոլոր աշխարհի, զի անտի սկսանին ի ձեռն լուսաւորացն՝ աշխարհի շարժմունք և կամ թէ կոչել զնոյն աշխարհի իրաւ հայր և հաւ մարդկութեանս՝ յորում դադարեալ տապանն Նոյի և բացեալ անտի դարձեալ սերեցաւ մարդկային զարմ, յորմէ ի նոյն արևելեան կողմանէ, որպէս զգալի լոյս արևուն տիեզերաց ծագէ, այսպէս և զհոգևոր լոյս աւետարանին փառաց անտի ծագեալ ընկալաք ի մեծ լուսաւորչէն մերմէ Գրիգորէ, որով թէպէտ այսր և անդր վտարեալ հեռացաք ի նմանէ իբրև Հրէիցն ազգ յԵռուսաղէմէ գերութեամբ, սակայն զԴաւթին գոչէ ամենից մեր սիրտ, թէ Մոռացայց զքեզ Երուսաղէմ՝ մոռասցի զիս աջ իմ զոր ճշմարտապէս քան զբազում առաւել սիրելով և անմոռաց բաղձանաւք միշտ ի մտի ունելով արքայս Լևոն, զվանարայս և զեկեղեցիս և զբարեճև կրաւնաւորս, և զկարգս արևելեան կողմանցն որ ի Մեծ Հայս, որով հանապազ պարծէր առ ամենայն ազգս և լեզուս քրիստոնէից, և միշտ գովէր և տենչէր իբրու հարազատ ժառանգ, և մանաւանդ քան զբազում տեղիս զմեծ և զհռչակաւոր երկնահաւասար սուրբ ուխտն զմայրավանքն զՀաղբատ, յորում կամէր անմոռաց արձանացուցանել զինքեանն յիշատակ բարի ի Քրիս-
860բ տոս նուիր‖աւք և պատարագաւք, վասն որոյ և ընդ այլոց թագաւորական ընծայից, զոր միշտ առաքէր, և ղգիրքս զայս Մեկնութեան Սաղմոսաց Դաւթի, որ ի նախասացեալ սուրբ հաւրէն Ներսէսէ յազգայնոյ ար-

քայիս մերոյ յարմարեալ տեսանելով ղի չգոյր և ղեռ չէր բնաւ ուրեք տարածեալ յաշխարհն Արեւելից, սա սկիզբն և պատճառ լինելով բարւոց՝ նորոգընծայ առաքեալ պարգեւեաց սուրբ ուխտին Հաղբատայ ի վայելումն մանկանց նորա, և յիշատակ ինքեան անմոռաց և ամենայն աշխարհին և վանուէիցն արեւելից յաւրինակ գաղափարի և պատճառ տարածման ի բոլորսն։

Վասն որոյ աղաչեմք զամենեսեան, որք կարդայք և վայելէք և կամ լսէք ե շահիք աւգտութեամբ, դարձեալ և որք աւրինակէք և գրէք, մանաւանդ թէ սուն բարելոյս արքայս աղաչէ թախանձանաւք և ժտէ զսրբազնամաքրութիւն ձեր, յիշել զսոյն բաղմաքիրտն զաշխատեալ ի վերայ ազգիս մերոյ ղթագաւորս Լևոն, որ մնաց զաւակ արձանագրութեան Հայկազունց տոհմիս։ Զոր թէ ոչ Տեառն զաւրութեանց թողեալ էր մեզ զաւակը՝ իբրև զՍոդոմ լինէաք և Գոմորայ նմանէաք։ Նա և զբարեհոգի նախնիսն՝ ղազգն Ռուբինեանց և Հեթմանց, և զմեծ արքայն զառաջին պսակաւորն զթագաւորն Լևոն, և զամենապարկեշտ և զառաքինի դուստր նորին, զմարդասէրն և զքրիստոսատէրն զթագուհին Զապէլ՝ զմայր արքայիս։ Եւս և զերանելի հօրդ սորա զբարի թագաւորն Հեթում, զգովեալն և զհռչակեալն յամենայն ազգաց և ի հանուրց բերանոց, որ ընդ ամենայն բարեաց և աստուածասիրութեանց յաւել և զայս, զի յորժամ եւ ի վերայ աշխարհի գերբիչ և աւերիչ հեղեղ զաւրացն որ Մուղալ կոչի, սա ի սկիզբն վաղվաղակի ընդ մէջ բազմութեան ազգացն թուրքաց, և երկայնաձիգ հեռաւորութեան ճանապարհի և աշխարհաց ծառայական և ստրուկ գրա-
861ա նութեամբ զառաջինն այլակերպեալ||ընդ դեսպանաց իւրոց եհաս առ խանն մեծ, և զհաշտութիւն և զիւազաղութիւն աշխարհին և ազգի մերոյ հնարեցաւ. որպէս Տէրն որ զծառայի առեալ կերպարան, և խոնարհեալ յանճառ աստուածութեանն փառաց, արար զմեր փրկութիւն։ Որով իմաստութեամբ նորին թագաւորին յորժամ աշխարհ ամենայն և մեծամեծ թագաւորութիւնք ի սուր սուսերի մաշեցան, մեր փոքրագոյն գաւառս և ազգ անվնաս ապրեցաւ; և յաւիտեան առ նոսին հաւատարիմ պատուեցաւ, որով արժանապէս յիշեալ լիցի ի Քրիստոս։

Յիշեցէք և զթագաւորահայրն զծնօղ նորին արքային Հեթմոյ՝ զպարոն Կոստանդին, արեամբ նահատակեալ որդովք իւրով ի Տէր, և մանաւանդ զորդի թագաւորին՝ զպարոն Թորոս, զկրտսեր եղբայր արքայիս մերոյ, որ ընդդէմ դինեալ Եգիպտացի մահմետական զաւրացն վասն քրիստոնական կրաւնիցն և եկեղեցւոյ սրբոյ և ազգիս մերոյ արեամբ նահատակեցաւ։ Յիշեցէք և զամենարարեգործ և զքրիստոսասէր դշխոյ արքայիս մերոյ զաւրհնեալն ի կանայս զթագուհին զԿիր Անեայ՝ որ մայրաբար խնամալք զբոլոր եկեղեցւոյ որդիս յանձանձէր, և զհայրական այցառնութիւն ամենայն աղքատաց յառատաձիր տուրս զուարթամիտ ողորմածութեամբ լնոյր. իբրև զնորատունկ ձիթենի ծաղկեալ, լուսաւոր գործովք և բարեբոյս ծննդովք, կատարեալ ի սակաւուն զերկայն ժամանակաց վաստակ և զարդիւնս եղից, և յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս*,

* Կիր Աննան մահացել է 1285 թ.։ Հիշատակարանը գնում ենք այդ թվականի տակ։

յորժամ արքայ նորին տէրս մեր ճանապարհորդեալ էր յԱրևելս՝ ի դուռն խանին Աղուանի: Յիշեցէք և զբարի յիշատակն առցին ղարքայիս մեր և զհանուրց, և զղշխոյին բարի, զթագաժառանգն բարեմիտ, և զշնորհալի և զամենիմաստ անդրանիկն՝ զպարոն Հեթում զզուարթադէմն և զզուարթարարոյն, որ փոխանակորդն է և գաւազան մերոյս արքայի թագաւորութեանն, եւ զառաքինի եղբայր նորին զպարոն Թորոս, որ հաւասարի ի մանկական տիս ողջախոհութեան Յովսէփայ, նոյնպէս և զայլ ևս եղ-
861բ բայրս սոցին՝ ղորդիս թագաւորիս մերոյ Լեւոնի, զՍմբատ, զԿոս||տանդին, զնուիրեալն Աստուծոյ զՆերսէս, զԱւշին, զՌուբէն՝ հանդերձ քերբքն իւրեանց: Նաև բոլոր զարմք և տոհմք թագաւորիս մերոյ յիշեալք լիցին շնորհացն և ողորմութեանն Աստուծոյ:

Եւ առաւել աղաչեմք զձեզ կրկին և պաղատիմք սիրովն ի մեղսաքաւիչ խորհուրդ պատարագելոյն Քրիստոսի, և յամենայն քահանայական նուիրագործութիւնս տէրունական տաւնից, և ի հանապազորդ աղաւթս միաբանականս և յառանձնականս ժտել յԱստուծոյ, զի պարգևեսցի արքայիս մերոյ Լեւոնի և իւրոցն յետ երկայն և խաղաղական կենաց յաղթութեամբ և բարեպաշտութեամբ թագաւորելոյ յաստիս, ժառանգել զանանց թագաւորութիւնն՝ գտանելով ներումն և թողութիւն յանցանաց, և արձակել յերկինս և յերկրի ձերով միջնորդութեամբդ ի կապից մեղաց, յառնել ընդ արդարս և դասիլ յաշակողմեան դասուն, և ժառանգել զյաւիտենական կեանն ի Քրիստոս ի Տէր մեր:

Դարձեալ աղաչեմք զաւրինակողսդ աստի, զի գրեսջիք և զյիշատակս արքայիս ի Քրիստոս:

467

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՅ ՎԱՐԴԱՆԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Երուսաղէմ 3098 (1623 թ.), Պողարյան, Յուցակ Բ, էջ 309—311

Գրիչ՝ Ստեփաննոս
Վաճկացի

Փառք միայնոյ, անբաժանելոյ, անհասանելոյ, եռանձնեան եւ անեզրական Սուրբ Երրորդութեանն եւ մի աստուածութեանն, ի վերնայնոց հրաբունից դումարտակացն, եւ ի ստորաբնակ եղանակականաց յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Շնորհիւ Տեառն եւ ամէնառատ ողորմութեամբն, ամենակարող եւ անճառ զօրութեամբ նորա, սկսա եւ գերագոյակ անեզրական իմաստութեանն արգահատութեամբ Հոգոյն Սրբոյ աւժանդակեալ կատարեցի՝ զաստուածամաղթան եւ տիրապատում տառս մարգարէից եւ զքրիստոսայայտ տնաւրէնութեան բացայայտութիւն, առաքելական եւ աւետարանական քղթովք, որ է գանձ ծածկեալ, բազմայբեղուն եւ չքնաղատիպ մարգարիտ, եւ ակն լուսատու, եւ սոփերայեան ոսկի, որ եւ ի դէպ է ըստ տեսողին, իբրեւ ոսկի ընդ սարդիոն յեռեալ, եւ կինամոմոն տաշխիւք կնդրկաց խընկեալ անմահարար հոտիւք, զոր նուաստս յորդիս եկեղեցոյ եւ փցուն գրիչս, Ստեփաննոս Վաճկայցի, յանգ ելեալ կատարեցի,

հրամանաւ եւ ծախիւք քրիստոսապսակ բարեպաշտին եւ աստուածունակ արքային Հայոց Լեւոնի, որդւոյ Հեթմոյ, որդւոյ Կոսաանդեա, եւ մայրենի ազգաւ որդի Զապել թագուհոյն, որդւոյ Լեւոնի թագաւորին Հայոց առաջնոյ յՌոբինանց:

Որ ի յարմատոց բարեաց գտաւ գերազանց բարունակ՝ ստեղնեալ անուշահոտ եւ քաղցրաճաշակ պտղովք, աստուածայնոցն առլցեալ կտակարանացն ըղձիւք, եւ մեծատենչ եւս որ առ Տէր հրով սիրոյն փափաքմամբ միշտ վառեալ, որ եւ յաղագս անբաղդ[ատ]ելի սիրոյն առ Աստուած եւ առ ամենայն ուղղափառ քրիստոնեայս, բազում անգամ զանձն ի մահ եդ, աւրինակ եղեալ Փրկչին Յիսուսի, ընթացմամբ առ ազգն նեոտողաց պէս պէս ընծայիւք, եւ ամենակարողին Աստուծոյ միայնոյ ակն կալեալ ձեռնատուիչեանն՝ սակս ի խաղաղութիւն մնալոյ բնակչաց աշխարհին իւրոյ:

Իսկ որ ի սկզբանէ մարդասպանն է եւ ամենաչար բանսարկուն, հակառակն ամենայն բարութեան, բազմադէմ մեքենայիւք, համախոհ գտեալ իւրում անաւրէնութեանն, զարբանեակն ամենաթշուառ, զայրն ամբարիշտ, զզատեալն յԱստուծոյ, որ ի կողմանէ Արիոսի եւս էր, եւ աւրինակ Բելիարա, խորհուրդ չար ի միտ արկեալ ընդդէմ ամենաբարեպաշտ թագաւորին Լեւոնի, զորս ոչ կարացաք զբովանդակն որ այն ամենայն անիրաւութեան ընդ գրով արկանել, զորս Տէր Աստուած ամենախնամն զներհակս նորին ընդ ոտիւք իւրովք նուաճեաց խորհրդակցաւքն իւրովք:

Իսկ ի վերայ այսր ամենայնի յարեան ոմանց յամենայն կողմանց յիւրայոցն եւ յայ[լ]արաց, եւ յայլազգաց անաւրինաց ազգի ազգիք ի յարկածից Արուսակին անկելոյ, խորհուրդ չար ի մտի եդին, եւ ընթացան առ թագաւոր ազգին նեոտողաց, ի բարէպաշտ խանն Ապաղա, որդի մեծի խանին Հուլայուի, եւ բազում նենգաբանութեամբ մատնեալ զարքայն ամենայն Հայոց՝ չարաչար սուտ եւ բասիր բանիւք:

Վասն որոյ եւ ամենասուրբ արքայն Հայոց թէպէտ եւ բազում անգամ ընթացեալ եւս էր առ մեծ խանն վասն քրիստոնէից, եւս առաւել սակս այս պատճառի, զանազան եւ անբաւ բազմութեամբ ընծայից ամենայն արեւելայնոցն իշխանաց արքայազանց, նա եւս առաւել խանին եւ ամենայն բազմութեան զաւրաց իւրոց մատուցեալ, մինչեւ զվաղընջուց բանսարկուեալ նենդաբանութիւնսն ի թշնամեաց իւրոց կարողութեամբ անեղին Աստուծոյ սուտ արարեալ, եւ զիւրն ամենայճշմարիտ հաւատս եւ զգործս անարատ ընդդէմ Աստուծոյ եւ խանին յայտնի կացուցեալ, որ եւ բազում գովութիւնս ընկալեալ ի նմանէն, եւ պարգեւաւք թագաւորականաւք դարձուցեալ յաշխարհ իւր, եւ զամենայն թշնամիսն իւր եդեալ ի ներքոյ ոտից նորա՝ առնել ընդ նոսա զոր ինչ եւ կամեսցի, եւ այս այսպէս պատահեցաւ ըստ ժամանակին բերմանց եւ տարբերութեան:

Բայց եւ սայ քաջայպէս եւ արիաբար վառեալ ի սէր աստուածայնոցն տաւնախմբութեանց եւ տէրունական տաւնիցն՝ հսկմամբ զամենայն գիշերսն յաւարտ ածեալ պէս պէս եւ զանազան եկեղեցականաւք, եպիսկոպոսաւք, վարդապետաւք, դպրաւք եւ համաւրէն պաշտաւնէիւք,

ըստ կարգագրութեանց վերնայնոցն լուսափայլութեանց, յաղագս հաշտեցուցանելոյ զՀայր ընդ արարածս, եւ ընդ Որդոյ նորա արեամբ գնեալ հաւաքս։ Եւ ի վերայ ամենայն այսց բարութեանց ղամենայն գիրս աստուածային՝ վերստին ուսեր նորոգել, եւ յաւրէնս Տեառն խորհել ըստ մարգարէին միշտ եւ հանապազ։

Ընդ որս եւ զայս գիր աստուածային, որ ունի յինքեան զկարգ եկեղեցոյ լիապէս՝ զաղաւթականս եւ զսաղմոսսն, որով եւ զարգարի ամենայն բանականաց հոգի եւ մարմին. ընդ նմին եւ աւետարանական եւ առաքելական եւ մարգարէական աստուածախօսութիւնքս հրամայեաց իմումս անկարութեան գրել անյապաղ, ի պատճառս առանձնական ազաւթելոյ յամենայն ժամու առ Տէր, ըստ Տեառն հրամանի՝ եթէ արթուն կացէք եւ յամենայն ժամու աղաւթս արարէք, եւ այլն որ զկնի սորա է։

Իսկ ես անարժան եւ տրուպ ծառայ նորին, ի բաղում եւ ազգի ազգի հոգ[ւ]ոց աշխարհայնոցս, քաղցոյ եւ ծարաւոյ եւ ամենայն դառնաբեր վշաց, եւ չքաւորութեան իմոյ, որ ըստ մարգարէին ասացելոյ՝ եթէ ի խաւարի եւ ի ըստուերս մահու նստէին կապեալքն յաղքատութեան որսէս յերկաթս. որք եւ դառնացուցին զբանն Աստուծոյ, եւ զխորհուրդս բարձրելոյն բարկացուցին. նոյնպէս եւ ես զհրամանս տեառն իմոյ սուրբ արքային ոչ կարացեալ փութով կատարել. զորս աղաչեմ՝ աստուածաբար ներել իմումս սղալանաց. քանզի ոչ յայլմէ իմէքէ եղեւ այս, բայց ի յասացելոցս պատճառաց, որով եւ հայցեմ եւս մարդասիրաբար յիմս ամենայնի կարաւտեալ անձն քաղցրութեամբ եւ ողորմութեամբ ակնարկել յիմս աղքատութիւն, ղի յորս առեւծուց բազում ազուեսք կերակրին։

Եւ արարիչն ամենայն արարածոց, երեւելեաց եւ աներեւութից, բարէխօսութեամբ ամենայն սրբոց, երկնաւորաց եւ երկրաւորաց, պահեսցէ ընդ ամէնահզաւր աջովն իւրով անպարտելի յամենայն կողմանց զաստուածասէր եւ զբարեպաշտ թագաւորս մեր Լեւոն, իւրովք ծննդովք, ուստերաւք եւ դստերովք, եւ երիցս երանեալ երջանիկ եւ ամէնաւրհնեալ թագուհեան իւրով Կեռանիւ, եւ ամենայն ճշմարիտ հաւատացեալ ժողովրդովք իւրովք, յայտ յաւիտենիս, եւ ի հանդերձեալ կեանսն զանըսպառ եւ զանպատում բարիսն պարգեւեսցէ, եւ հանդուսցէ ի կայեանս անկելոց հրեշտակացն, ի վերինն Երուսաղէմ, յանդրանկաց սրբոց դասն, երգել եւ պարել ընդ հրեշտակս՝ անլռելի աւրհնաբանութիւն ամենասուրբ Երրորդութեանն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից։

Արդ եղբարք սուրբք եւ ծառայակիցք ի Քրիստոս, որք զանցօր կենացս մերոյ հոլովումն ի սուրբ եւ յայս մատեանս լսէք, եւ յերկս աշխատութեան տառապեալ մատինս վայելէք, եւ յաստուածային սուրբ գրոցս զանդս մտաց ձերոց պարարէք, զմեզ, որ ընդ ճանապարհ կենցաղոյս ընթացից զայս արձան յիշատակ հանդէպ ձեր կառուցաք, եւ փութացեալ ի ծոց հասարակ մաւրս ծրարեալ պահեցաք, եւ ի սրտից եղբարց իբրեւ ղանաւթ կորուսեալ մեռելութեամբ մա[ր]մնոյ մոռացեալ էաք, աղաչեմ տեարք իմ սուրբք, վերստին մտածեսցի ունայնութիւն մեր ի ձեռն առհասուչէիս ընթերցման, որ ձեռահիս է եղելոցս ի գրի խաւարայնոյս դամբարան, եւ ցաւղ աղաւթից ձերոց կաթեսցէ ի վերա մեր՝ գրգել եւ

բեղմնաւորել ղպասքեալքս ի պատրաստութիւն հասարակաց յարութիւնն։

Զի թէ մեծատունն այն զդնելն վկայութիւն Ղազարու՝ եղբարցն իւր մխիթարութիւն վարկանէր՝ ի սոսկալին յայնմ տանջանս՝ որքան ապայ մեք տառապեալքս՝ բարէյոյս հանգչիմք ի կարգս մեռելոց, աւանդելով զաստուածային այս մատեան յեդբարսդ մեր ընծայ առաջի Քրիստոսի, եւ յիշտակ մեր ոգւոց, միայն զի կալցուք զձեզ յանծանաւթ աշխարհն յայն վշտակիցս, եւ հասարակաց փրկանաւն Քրիստոսի պատարագաւն հանապազորդ մեզ քաւիչս, որ եւ եւս աղաչեմ իբրեւ հասարակաց բնութեանն վիճակեալք, եւ մերոյ տկարութեանս փորձիւ աւժանդակ բոլոր սրտիւ զմիջնորդութիւն բարեխաւսութեան, որ ի սմա առաքելոց եւ մարգարէից առնուլ ձեզ ձայնակիցս, եւ զաւետարանեալն աստ ի Քրիստոսէ արքայութիւնն խնդրել մերոյ տառապանացս հանգիստ. եւ նայ որ ըստ մեծի ողորմութեանն բանայ զձեռն եւ լնու զամենայն խնդրողս ի քաղցրութենէ կամաց իւրոց՝ զձեզ մեզ հանդերձ, եւ զմեզ եւ զձեզ, որք աստ յիշատակեցաք, ընդ ամենայն սուրբս ընկալցի խորանակից իւր յերկնային հարսնարանին առագաստն, առ ի լնուլ հասակի աստուածեղէն մարմնոյն ի զանազան անդամոցս իւրոց, որք եմք յեկեղեցի, եւ կատարել Աստուած ամենայն յամենայնի, որում փառք այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն*։

468

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան 5560

Գրիչ՝ Վարդան
Վայր՝ Անարզաբա

ա

355ա Փառք և պատիւ, և զոհութիւն, և երկրպագութիւն անեղին և անծնին Աստուծոյ Հաւր, և ծնիցելոյն ի նմանէ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, և բխեցելոյն ի նոցունց էութենէ Հոգւոյն Սրբոյ, երից կատարեալ անձնաւորութեանց և մի անբաժանելի աստուածութեանն, յորմէ ամենայն էքս են գոյացեալ՝ իմանալիքն և զգալիքս, քանզի նորա սպասաւոր են վեհագոյն դասք անմարմնոցն, միշտ անլռելի ձայնիւ վեր առաքեն զերեքսրբեան աւրհնութիւնս և ի նմանէ լուսափայլին աստուածեղէն իմաստութեամբ և տեղեկանան նորին անճառ խորհրդոց աստուածութեան։ Հաճեցաւ և ի մեզ աւրհնութիւնս ընդունել և առնել զմեզ տեղեակս իւրոց աստուածութեանն, որո վասն ի ընդրեաց զամէնեցդանիկ դասս մարգարէիցն յառաջ քան զլինելն աշխարհի, ըստ այնմ թէ Մինչ չև ծնեալ էիր յարգանդի, սրբեցի զքեզ և լցոյց զնոսա յառատաբուխ շնորհաց Հո[գւ]ոյն, որով և արբեց[ա]ն անմ[ա]հական բաժակա[ն] և մ[ատր]ուակեցին ղուր[ա]խարա[ր]ն մանկանց եկեղեցոյ։

* Այստեղ կեռան թաղուհին դեռ ողջ է. դնում ենք մահվան թվականի (1285) տակ, որպես դրության հնարավոր վերջին ժամանակ։

Քաջ հովիւքն և հաւատարիմքն յամենայն տանն Աստուծոյ, զի
զանձինս դնէին ի վերա ժողովրդեանն, որպէս դտանես յիւրաքանչիւր
մատեանս, և այնպիսի ջերմ սէր և փոյթ ունէին առ աստուածային տըն-
տեսութիւնս, վասն որոյ և արժանի եղեն հոգոյն ակամբ գուշակել
զամենագովելի և զաւիթն փրկութեանն մերոյ բնութեանս, զոր կորու-
սեալ էաք նախահաւրն յանցանաւք, զանանց և զանթառամելի ուրախու-
թիւնն զտնաւրենութիւն Տեառն մերո և բանին Հաւր գուշակեցին բանիւ,
և ցնծացան հոգով, և կատարեցին մարմնով ակն ունելով ճշմարիտ արե-
գականն արդարութեան, որ լուսաւորեաց զխաւար մեղաց մերոց, և ան-
տըրտում ուրախութեանն, յորս հայցեալ իբր ընդ հայելի աւրինակաւ
ցանկացան այնմ հանգստեան և զհեշտասէր և զվայրաքարշ կրիցս
355բ զան‖արարեալ և աստուածային սիրովն///անչափ, զի և զայ[ս] աղքա-
տութիւն և պանդխտութիւն համարէին, թէպէտ և թագաւորութեան պա-
տահէին ըստ Դաւթեա, թէ Վայ զի ընդ երկար եղև պա[նդխտութիւն իմ]
և զնորս խորհուրդ գուշակեցին, որպէս ասացաք, նմանողք եղեն տեառն
իւրեանց, գունակ-գունակ առաքինութեամբ զանձինս զարդարեցին և ի
վերայ պատուիրի տեառն իւրեանց զմարտիրոսական մահ ճաշակեցին,
որպէս և աստուածային առաքեալն վիպասանէ։ Քարկոծեցան, սղոցե-
ցան և այլն ամենայն բանաւոր ծիծռունքն աստուածաբան մարգարէքն,
որ զհոգևոր գարունն մեզ ընծայեցին, քաջ և արի և իմաստուն նաւա-
պետին, որ ի ծովածուփ և ի կուտակեալ ալեաց կենցաղոյս անվրդով
զղեակս նաւին ուղղեալ՝ հասին ի խաղաղ նաւահանգիստն, և մեզ ճա-
նապարհորդեալ, զի անմոլարապէս ընթասցուք, թերևս արժանի լիցուք
հասանել ի նոցա կայանս, շնորհաւք Հոգոյն Սրբո։

Ցանկացայ ստանալ զմատեանս սոցա, ես Վարդանես սուտանուն
կրաւնաւոր, բազմաւէր և ամենաթշուառ անձին իմոյ, ի մխիթարութիւն
և ի սփոփանս տկարացեալ և հարեալս ի բանսարկուէն անձին իմոյ, որ
յոյժ նեղիմ և լլկիմ ի նմանէ, ապաւինեալ ի սոցա աւգնականութիւնն,
թերևս ազատութիւն լիցի ինձ։ Բայց ոչ եթէ ըստ կարողութեան և ըստ
յաջողակ լինելոյն ստացա զսա, այլ ի վեր քան զկար մեր, զի աղքա-
տութիւնն չտայր թոյլ և տկարութիւն մարմնոյ չզաւրէր, և յերկուցունց
կողմանցն տագնապէր ինձ։ Մանաւանդ զի և ժամանակն կարի յոյժ
թշուառութեան էր։ Զի ամբարիշտ և երիցս անիծեալ ազգն Իսմաելեան,
զաւրացեալ էր ի վերայ աշխարհիս մերոյ, և միշտ և հանապազ յաւարի
առեալ, և զքրիստոնէսն գերիս վարեալ, և զեկեղեցիս և զվանօւրեայս
336ա աւար հարկանէր, և ոչ գտանէք տեղի հանգստեան‖և ի տեղոց ի տեղիս
փոփոխեաք, և այսպէս յընդդէմն և հակառակն պատահէր սմա, որով և
անյարմար եղև գիր սորա և խոշոր, այլև յիմոյ տկարութէնէս եղև, զի
անհմուտ էի բանիս, աղաչեմ չմեղադրել տխմարութեանս իմոյ։ Զի
սէր և փափագ աստուածային բանիցս էած զիս ի սոցին հանդէսս, զի լիցի
ինձ սա գանձ անպակաս յերկինս, և փող աստուածային շնչոյն՝ գոչելով
զեկեղեցիս Աստուծոյ՝ ի շահ և ի յաւգուտ լսողաց։ Բարեխաւսութեամբ
և աղաւթիւք սոցին աւանդողաց Քրիստոս Աստուած արժանի արասցէ
զանարժանս զՎարդան և զծնողսն իմ, և զհարազատ զեղբարսն իմ, և

ղքւերսն իմ, և զամենայն ազգատոհմն իմ լսել զերանական զձայն, եթէ եկայք աւրհնեալք Հաւր իմոյ։ Մանաւանդ և այնոցիկ, որք ձեռնտու եղեն ի դրութիւն սորա Ստեփաննոսի և Կիւրակոսի սպասաւորք բանի և Կոստրնկին վարդապետի, վարձս բարեաց պարգեւեա Քրիստոս Աստուած ի քո [գալստեանն]. զի յաւրինակ [շնորհեաց]։

Եղև կատարումն գ[րոցս] ի յաստուածապահ դղեակս Անա[րզա]ւբոյ, ընդ հովանեաւ գերահռչակ և պատուական պատկերին և մաւրն և հանգուցեալ հաւրն իմոյ Ալիխսի, և մաւրն իմո, ընդ սմին և զՍտեփաթեան եկեղեցւոյն Կաստաղաւնոյ, և յաթոռակալութեան Անաւրզաբոյ տեառն մերոյ Գրիգորի առաքինասէր և սրբատէր անձն, կենադանութեան աղբիւրն, իմաստութեան մայրն, որով զծարաւի և զպասքեալ ժողովուրդս իւր ուրախ առնէր հոգեշահ և արդիւնական բանիւ, մանաւանդ և մեզ հանգուցիչ ե անդորիչ եղև։ Քրիստոս Աստուած, ղհոգի սորա և ծնողաց իւրոց յանանց հանգիս[տ]ն հաստուսցէ, և զմերձաւոր և զընդանի եղբարքս մեր, Քրիստոս Աստուած, իւր անճառ և անտրտում բարեացն արժանի արարսցէ, և որք յիշէք զտառապեալս յամենայն բարեաց զվարդան, ո՞վ մանկուք Նոր Սիոնի, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն, ամէն, ամէն։

356բ [Գրեցաւ սա] ի թուին [Հայոց ՁԼԴ (1285)*; ի հայ]րապետութեան [տեառն Յակ]ովբայ և ի թագ[աւո]րութեան Հայոց Լևոնի՝ որդոյ Հեթմոյ՝ որդոյ Ռաւբենեագն։ Թագաւորն Քրիստոս խաղաղութեամբ և հաստատուն պահեսցէ զթագաւորութիւն սորա՝ որդովք իւրովք ընդ երկայն աւուրս, և Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս։

Բ

240ա Յիշեսջիք զիս՝ զմեղուցեալ և զանարժան ծառայս Քրիստոսի Աստուծոյն իմոյ զՎարդան, և մեղաց թողութիւն հայցէջիք ի Քրիստոսէ ինձ, և հանգուցեալ հաւրն իմոյ Ալիխսի, և մաւրն իմո, ընդ սմին և զՍտեփանոս սպասաւոր բանի, որ զաւրինակն շնորհեաց. և որք յիշէք, յիշեալ լիջիք ի Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեան**։

Գ

334բ ...Զգրող սոցին մատենից զՎարդան, և զծնողն իմ զԱլէքս, և զմայրն իմ զՄարգարիտ, և զեղբայրն իմ զՎասիլ, որ զթուղթս կոկեց, սրբեսցես յամենայն մեղաց, որ ի չարէն ծնանի, և քո արքայութեանդ արժանի արասցէս, և քեզ փառք այժմ և յաւիտեանս։

---

* Թերթի վերևի անկյունը մաշվել պատռվել է իր հետ տանելով նաև գրության թվականը։ Բարեբախտաբար Ղ. Փիրղալեմյանը 1365 թ. սեպտեմբերի 15-ին կտուց կղզու Ս. Կարապետի վանքում ընդօրինակել է հիշատակարանը և փրկել թվականը։ Լրացնում ենք նրանից (տե՛ս ձեռ. 6273, էջ 50)։

** Այսպիսի հիշատակագրություններ կան նաև 176բ, 289ա, 311բ և այլ էջերում։

469

ՊԱՀՈՑ ԳԻՐՔ ԲԱՐՍՂԻ ԿԵՍԱՐԱՑԻՈՑ

Երևան 822

ա

270բ Կատարեցաւ պայման գրոցս այսոցիկ ասացուածքի սրբոյն Բարսեղի եպիսկոպոսի Կապադ[ովկացոց], ի ձեռն Ստեփաննոսի քահանայի և հտին կրաւնաւորի։

բ

Գրիչ՝ Եզեկիել

Կատարեցաւ վարդապետական խրատս սրբոյն Բարսեղի, յամի յորում Հա[յ] թուականն ՉԼԴ (1285) էր, յամսեանս արաց ԻԵ (25)։ Ես բազմամեղս Եզեկիել գրեցի զսա, բայց ոչ զբաւանդակս, այլ զկէսն, քանզի այլն գրած էր*, և զպակասն մեք կատարեցաք, հրամանաւ բազմերջանիկ և սրբազան Յոհաննիսի վարդապետաց վարժապետի, ի վայելումն անձին իւրոյ մաքրափայլի, և յետ ելից իւրոյ՝ յիշատակ հոգոյ իւրոյ անջնջելի, ի պէտս մանկանց նոր Սիոնի։

Ես երեսս անկեալ ամենի,
Զբժշկութիւն խնդրեմ վիրի,
Զի յոյժ խոցեալ նետիւք չարի
Եւ հեծեծեմ յամէն ժամի։
Յորժամ ճաշիք յայսմ սեղանի,
Եւ տայք այլոց ում արժանի,
Դուք յիշեսջիք զիս ի բարի,
Եւ ասասջիք Տէր ողորմի
Եզեկիել սարկաւագի,
Եւ ձեզ նոյնն հատուսցի։

գ

Երկրորդ գրիչ

155բ Քրիստոս Աստուած ողորմեա աշխարհի և աշխատեցելոց ի բարի։

470

ՄԱՆՐՈՒՄՈՒՆՔ

Երևան 2453

Գրիչ՝ Վարդան

37բ Փառք ամենասուրբ Երրորդութեան, Հաւր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ, այժմ և միշտ։

* Առաջին մասի (1—148 թերթեր) գրչից հիշատակագրություն չկա։ 148—155բ թերթերը գրել է մի այլ գրիչ և թողել գ հիշատակագրությունը։ Եզեկիելը երրորդ գրիչն է, որի ասյն հիշատակարանից առաջ եղած վկայությունը (ա), հավանաբար գաղափար օրինակի գրչին չ վերաբերում։

Ի թիւ Հայոց ՉԼԴ (1285) գրեցաւ տառս այս, ձեռամբ մեղապարտ և սուտանուն կրաւնաւորի Վարդանի:

հ4ա Աղաչեմ յիշել ի Տէր ղգծողս:

471

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Վէնետիկ 40, Սարգիսյան, Ցուցակ Ա, էջ 818

Գրիչ՝ **Մխիթար**

ա

Ո՛վ սրբազան սուրբ առաքեալք, զձեզ արարիչն արարածոց Քրիստոս Աստուած հանդերձ Հարբ և Սուրբ Հոգւովն առաքեաց ի փրկութիւն ամենայն ծննդոց Ադամայ: Արդ, ես ողորմելիս քան զամենեսեան **Մխիթար** զամենայն սուրբս բարեխաւս ունիմք առ ձեզ արտասուալից գոչմամբ, և մեծ հաւատով հայցեմք ողորմեցարուք ինձ և իմոցն աստուածապէս, և փրկեցէք աններելի տանջանացն, և զայնոսիկ որ զմեզ յիշեն և յիշելոցն, ամէն:

բ

Գրիչ՝ **Պետրոս**

Յամի ՉԼԴ (1285) գրեցաւ Կաթողիկէքս, և եղև աւարտ սորա ի ձեռն Պետրոսի քահանայի, զի Գործքն այլում էր գրած և չէր ժամանեալ ի յաւարտն՝ Ստեփանոս վանական քահանայի, Քրիստոս ողորմեսցի նմա և թողութիւն շնորհեսցէ յանցանաց նորա: Ընդ նմին և ի յապագային, ուր բանքն սպառին, Քրիստոս Աստուած թողութիւն շնորհեսցէ ստացող[ի] Կաթողիկէիցս Պետրոս վանական քահանայի, և մաւր նորա Սանդղխի, ի Քրիստոս հանգուցեալ է, յիշեսջիք///:

472

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երուսաղէմ 1681, Պողարյան, Ցուցակ Ե, էջ 540—541

ա

Գրիչ՝ **Սիմոն**

148 Այլ եւ զպատեալն շնորհիւ զՄաթէոս ստացող գրոյս յիշեսջիք ի Քրիստոս, եւ զծնողս իւր, եւ զամենայն ազգատոհմն՝ զկենդանիս եւ զհանգուցեալսն:

Ո՛վ աստուածարեալ եւ շնորհալք զարդարեալ պատուական եղբայր Մաթէոս, զսակաւ գիծս ընկալ եւ զմեղապարտ Սիմոն գրիչ յիշման արժանի արա ի մաքրափայլ յաղաւթս քո: Այլ եւ աղաչեմ անմեղադիր լինել աղաչանաց, եւ եղբայրաբար ուղղել, որպէս է ձեր սովորութիւն:

Բ

188 *Ո՛վ աստուածարեալ եւ վեհիմաց բարւոյն* Մաթէոս, *ընկալ զսակաւ գիծս, եւ անմեղադիր լեր անարհեստութեան, եւ ի քարտիսէ աղքատ էի, եւ զնուաստս զ*Սիմոն *արժանի արա մի Տէր ողորմահաւ։*

Գ

Գրիչ՝ Տիրիկ
Վայր՝ Հոռս գիւղ

578 *Փառք անբաժանելի Սուրբ Երրորդութեանն, յաւիտեանս յաւիտեանից ամէն։*

Գրեցաւ աստուածային Յայտնութեանս Մեկնութիւն ի թվականիս ՁԼԴ (1285), ի գաւառիս որ կոչի Վայոյձոր, *ի գեղս որ կոչի* Հոռս, *ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, իշխանութեան բարեպաշտ պարոնիս* Լիպարտի, *յառաջնորդութեան արհեպիսկոպոսի տէր* Սարգսի, *ձեռամբ անարժ[ան]։։։։*

Դ

573 *Զ*Մաթէոս *վարդապետ* Տայթեւացի *սպասաւոր բանի, եւ բստացիչ գրոցս, եւ զբազմամեղ գրիչս զ*Տիրիկ *յիշեցէք ի Քրիստոս, ո՛վ սուրբ ընթերցողք աստուածային խորհրդոյս։*

473

ՃԱՌՔ ՎԱՀՐԱՄԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Վիեննա 77, (ԺԸ—ԺԹ դդ.) Տաշյան Յուցակ, էջ 331

Հեղինակ՝ Վահրամ րաբունի

Ա

21ա *Շարադրեալ ի մերս նուաստութենէ* Վահրամայ *վարդապետի ի հրամանէ մեծի թագաւորին* Լեւոնի։ *Վասն որոյ եթէ ինչ արժանաւոր եւ պիտանացու յասացեալս գտցի, Աստուծոյ շնորհ, որ զկամել ետ մեզ յառնելն։ Իսկ եթէ նուաստագոյն եւ դուզնաքեայ ի շահս աւգտութեան, իբր զի սխալագոյն եւ կամ թիւր ինչ, ոչ ունիմ ասել գտանել ի գրեցեալքս քան զանձն իմ, եւ զայլս հաւանեցուցանեմ աստուածային գրոց վկայութեամբ, որ են ի սոյն շարադրութիւն առագրեալ, սակս որոյ զայնքան թիւրութիւն իմոյ տկարութեանս վարկանիջիք, որ վասն երկրաքարշ եւ մեղսասէր դոլոյ ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ՝ ոչ կարացի ի բարձրագոյնսն եւ յաստուածային խորս մտանել, եւ յայնմանէ փարթամութիւն բարձրագունից մտաց ընծայել։ Վասն որոյ բարեսէր կամօք չափաւոր այս աշխատութեան թողութիւն անչափից մեղաց իմոց հայցեսջիք յանբաւաբաշխ բարեացն Աստուծոյ, այլ եւ ստացողի սորա* Տեառն Սահակ *եպիսկոպոսի արքեպիսկոպոսի մայրաքաղաքին* Տարսոնի։ *Թվին ՁԼԴ (1285)։*

Բ

36ա Բայց դու, ով իմաստուն և ճշմարիտ ուղղափառ խնդրող, թէ հաւանիս սակաւ բանիցս՝ Աստուծոյ շնորհ, որ այսչափ ետ զօրութիւն տկարիմաց մտացս և թէ ոչ՝ նոյնպէս Աստուծոյ շնորհ, որ զայսչափ զանարժան արժանացոյց, միայն առանց բամբասանաց արձակեսցես, եւ մի տալ տեղի այնոցիկ որ բամբասեն թէ Հայոց վարդապետերն վասն անձին ոչ բան չգիտեն ասել։

474

ՃԱՇՈՑ ՀԵՔՄՈՅ ԱՐՔԱՅՈՐԴՒՈՅ

Երևան 979

Հեղինակ՝ [Գէորգ Սկեւռացի]
Գրիչ՝ [Ստեփանոս Սկեւռացի]
Վայր՝ [Սկեւռայի վանք]

ա

470ա *Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Ի թուականութեանս Հայոց ՉԼԸ (1286) յանկ ելեալ կատարեցաւ աստուածախաւս մատեանս, հրամանաւ աստուածասէր և ամենիմաստ, բարեպաշտ և հանճարեղ պարոնին Հեթմոյ, որդւոյ քրիստոսապսակ սուրբ արքային Լևոնի, որ լի և պատարուն իբրև զծաղկազարդ բուրաստան հաւաքեալ է ի հին և ի նոր աւրինաց, ի պէս պայծառութեան տանից տէրունականաց, հրաշափառ ծննդեանն Քրիստոսի և կենսաբեր չարչարանացն, փառաւոր յարութեանն և սքանչելի համբարձմանն, պայծառ գալստեան Սուրբ Հոգւոյն և այլոց փրկչական տեսութեանցն։ Ընդ որս և սրբոցն Աստուծոյ, առաքելոց և մարգարէից, բազմաշարշար մարտիրոսաց՝ հայրապետաց և միանձանց, և ամենայն հաճոյացելոց Աստուծոյ, որով մեծախորհրդութիւնն, և շնորհ մերոյ փրկութեանն՝ միշտ հոչակի եկեղեցիս սրբոց, խրնկանուէր հընչմամբ առաջի Աստուծոյ, ի բարեխաւսութիւն մեզ մեղաւորացս, ի վարդապետութիւն խրատու յաւիտենական կենացն ժամանելոց։*

Զայս խրախճանութիւն հոգևոր և անմահական փարթամութիւնս
470բ *ստացաւ նախայիշատակեալ բարեսէր||պարոնս մեր Հեթում, որ է շառաւիղ բարեշնորհ բղխեալ յարմատոյ թագաւորութեան Թորգոմեան սեռի և Ասքանազանաց տոհմի, որ յայտնաբանեալ լինի զայս ձև աւրինակիւ։*

Յորժամ յաղախնածին զաւրացն սրոյ, և ի պարսկականն իւակամիտ ննջգութենէ սպառեցաւ թագաւորութիւնն Հայոց ի տանէն Արևելից, և բարձաւ բազուկ տէրութեան նոցին ի կողմանցն հիւսիսոյ, յայնժամ սահեալք իշխանք Հայոց և որք ընդ իշխանութեամբ նոցին, զետեղեալ պանդխտեցան ի ստորին կողմանս Գամրաց և Պոնտոսի, որք և անդա-

---

* Ձեռագրի և հիշատակարանի մասին տե՛ս Ա. Մաթևոսյան, Հեթում Բ թագավորի ճաշոցը։

նաւր նեղեալք և ն[ա]հանջեալք ի ննհգաժէտ յազգէն Յունաց, խոյս
տուեալ եկին ի սահմանս Կեսարեայ Կապադովկացւոց, որոյ տիրեալ
քաջութեամբ արքայն մեծ Գագիկ, և զբազումս ի Յունաց սատակեալ,
ընդ որս և զմետրապաւլիտ քաղաքին զՄարկոս, որ եղեռնական բարուք
զանուն ազգին Հայոց՝ շանն իւրոյ մակագրեալ Արմէն անուն վերաձայնէր։
Արքայն բարեշուք՝ զնա և շունն իւր ի միում քրձի ածեալ չար հարուա-
ծովք գանից ի միասին սատակեաց։

Վասն որոյ և յընթանուր Յունաց բնակչաց աշխարհին որսացեալ
եղև, որով և սպանաւ արդար արքայն յամպարիշտ որդւոցն Մանճալէի
ի բերդն Կնդասկաւի: Եւ յայնմ պատճառէ ցրուեցան պայազատք Հա-
յոց և այլ ևս խառնիճաղանջ բազմութիւնքն ընդ բազում տեղիս և գա-
ւառս պանդխտացեալք։ Ընդ որս և մեծափառ ոմն իշխան իշխանաց, ի
սեռէ թագաւորութեանն արեանառու մեծին Գագկայ, Ռուբէն անուն,
471ա յինքն հարեալ զյոլովս ի զաւրացն, խաղացեալ‖գայ և առնու զամրոցն
զԿաւսիտառայ, յորում և դնէ ինքեան տուն իշխանութեան, և տիրէ
լեռնակողմանցն Փռիգիոյ, և բարեպաշտութեամբ կենաւք կացեալ, փո-
խեցաւ առ Քրիստոս։

Յաջորդեալ զփառս նորա որդի նորին Կոստանդին, այր քաջ և ար-
դարագործ, որ և ի բազմաց սիրեցեալ եղև բնակչաց աշխարհին Կիլի-
կեայ, որոյ ձեռնտուութեամբ ելեալ ի ծովակողմ Տաւրոսի, տիրեաց նա-
հանգին այնորիկ, նախ առեալ զդղեակն զՎա(ճ)կայ, և ապա անտի
յառաջ յոլովից տիրեալ տեղեաց՝ դաշտաց և ամրոցաց, զյոքունս ի Յու-
նաց հարեալ։

Այլ և Փռանգ զաւրուն, որ յԱնտիոք, նիզակակից եղեալ ընդդէմ
Իսմայելեան զաւրուն, և քաջութիւնս զարմանալիս անդանաւր կատա-
րեալ, հիացոյց զարիականաց գունդն, յորոց և կոմսութեան անուն ստա-
ցեալ՝ մարգիզ զնա վերակոչէին։ Եւ այնպիսի յաղթական կենաւք կեցեալ
և ծնեալ երկու որդիս զԹորոս և զԼևոն, ինքն փոխեցաւ առ Քրիստոս, և
թաղեցաւ ի սուրբ ուխտն Կաստաղաւն: Տուեալ զիշխանութիւն իւր որդւոյ
իւրոյ Թորոսի, այն որ ի Յունացն պատուեալ պռտաւ սևաստիաւս կո-
չեցաւ։

Որ և իսկոյն ընդ տիրելն խնդրեաց զվրէժ արեանն Գագկայ յորդւոցն
Մանճալէի, և առեալ զամրոցն յոլով գանձիւք և զնոսին չարամահ սա-
տակեալ, բերեալ ընդ ինքեան զպատկեր Տիրամաւր, եդ ի դղեակն Անար-
զաբայ զոր իւր առեալ էր ի Յունաց, յորում և շինեաց զհոյակաւոր տա-
ճարն և եդ անդ զպատկերն, որպէս և դրեալ է յարձանի, ի շինուածս
տաճարին։ Այլ և բազում եկեղեցիս և ժողովարանս միանձանց շինեալ,
471բ և առատատուր պարգևաւք‖կարգաւորեալ ճոխացոյց, միանգամայն և
հիւրանոցս բազումս և ամենայն ազգաց քրիստոնէից տեղի և տուն
պատրաստեալ, հարգեցաւ, բարձրացաւ և հռչակեցաւ յամենայն լեզուս,
որք զԿիլիկեա անուն լքեալ, Թորոսի երկիր զաշխարհն նորին վերա-
ձայնէին։ Եւ նա բարւոք վարուք կենցաղավարեալ հանգեաւ ի Քրիստոս,
և թաղեցաւ ի սուրբ ուխտն Դրազարկն, թողեալ իւր որդի մի, որ նենգեալ
սպանմամբ յամպարըշտաց ոմանց։ Վասն որոյ ընկալաւ զիշխանութիւն

մեծին Թորոսի, եղբայր նորին Լևոն, որ և ծնեալ երիս որդիս զԹորոս, զՍտեֆանէ և ի հարճէ զոմն Ռուբէն անուն։

Այս Լևոն տիրեալ Մամեստիոյ և Տարսոնի, ի ամենայն սոցին նահանգի և աջակցեալ ֆռանգաց ի գործ պատերազմի, քաջութեան անուն՝ ստացաւ։ Եւ կացեալ յիշխանութեանն կարողագոյն կենաւք և առաքինի վարուք, մինչև եկն թագաւորն Յունաց Փեռիեռաւժէն ի Կիլիկեա և պատրանաւք կոչեալ զԼևոն, ըմբռնեաց ի կապանս երկու որդւովքն Թորոսի և Ռուբենաւ, ոչ դիպեալ անդ Մլէհին և Ստեֆանէի, զի կային յՈւռհայ, առ կոմս նորին, որ էր քեռի ինքեանց։

Առեալ Պեռպեռաւժէն զԼևոն որդւովքն, տարաւ ի Կոստանդինուպաւլիս և արկ ի բանտ, յորում տեղւոջ Ռուբէն վասն անհնարին քաջութեանն կուրացուցին, կուրացեալ նախանձով ազգն Յունաց։ Եւ մեծն Լևոն, որդի նորա Թորոս, մնացին անդանաւր ի բանտի, և իշխանութիւն Հայոց բարձաւ ի Կիլիկիոյ, տիրելով վերստին Յունաց։

472ա Յետ ժամանակաց ինչ լի||նելոյ ի բանտի, ետես երազ որդի նորա Թորոս և պատմեաց հաւր իւրում, թէ տեսի յանուրջս, զի այր ոմն տայր յիս նկանակ մի հացի, և ձուկն ի վերայ, եւ ես առի և քեզ ոչ ետու ի նմանէ։ Եւ հայրն խնդացեալ ելոյծ զտեսիլն որդւոյ, թէ ունիս վերստին տիրել Կիլիկիոյ, զոր նախնիքն մեր կալան քաջութեամբ, այլ և ընդարձակեսցես զտէրութիւնն քո, մինչև ի ծով, զոր ձուկն նշանակեաց։ Սակայն ես յայն ոչ ժամանեմ։ Որ և եղև իսկ, զի մեռաւ մեծն Լևոն ի Կոստանդինուպաւլիս։

Եւ մեծն Թորոս գտեալ աւգնութիւնն յԱստուծոյ, և ի դիպաւղ ժամու վերստին եկն ի Կիլիկիա և ձեռնտուութեամբ Լեռնակողմանցն Տաւրոսի ազինս Հայոց, որ մնացեալ էին անդանաւր, տիրեաց նախ Վահկային և ամենայն Փոիգիոյ, և ետ սակաւուց Անարզաբոյ և ամենայն Դաշտակողմանն, զորոյ զյեղանակ գալստեանն ի Կոստանդնուպաւլսէ և զտիրելոյն Կիլիկեա այլ և այլ աւրինակաւ պատմեն գիրք։ Բայց որպէս և է՝ գթութեամբն Աստուծոյ և աւգնականութեամբն ազատեալ ի բանտէ, վերստին տիրեաց իշխանութեան նախնեաց իւրոց, զոր յափշտակեալ էր Յունաց։ Եւ ես ընդարձակեալ զբազուկ տէրութեան իւրոյ, գնաց ի Մամուստիայ և առ զնա։

Եւ մինչ կայր անդ յանհոգս, տուկն յունական ազգին, որ էր ի կայսերէ կարգեալ, ժողովեալ զզաւրս իւր, ես և զհայկազունսն, զնաքանիլեանք, զտերսն Ասկուտայ, և զՀեթում տէր Լամբրունին, որք և նոքա յարեւելից ի սրոյ Իսմայէլացւոց խոյս տուեալ, եկին և կալան զկողմանսդ նախասացեալ, և մտին ընդ հնազանդութեամբ կայսէրն Յունաց վասն սրոյ և ընդ նոցին զաւրաց և զաւրապետի, եկին ի վերայ Թորոսի
472բ ի Մամեստիա։ Եւ նա||յարուցեալ սակաւուք արամբք, անզէն և անպատրաստ, ի վերայ աննկաւ բիւրական զաւրացն յեղակարծ ժամու, զյոյնսն եսպան և զհայկազունսն ձերբակալ արարեալ կալաւ, և յետոյ աղատեաց։ Եւ այսպէս քաջացեալ էառ զՏարսոն և զյոլով մասն Սավղոիոյ, զորոյ քաջութեան համբաւ լուեալ կայսրն Եմմանուի[լ] որդին Պեռպեռաւժէնին, մրմռեալ իբրև զառիւծ, եկն զաւրաւք բազմաւք ի Կիլիկիա,

ըմբռնել զԹորոս: Եւ պաշարեալ զնա ի դղեակն Բարձրբերդ կոչեցեալ: Յարձակեալ* ապա քաջն Թորոս ի վերայ ժողովոյն Յունաց, զբազումս եսպան, և զյոլով սեաստիաւս գերի տարեալ ի դղեակն, վաճառեաց ընդ ոսկւոյն կայսերն էմմանուիլի, և զգանձն բաշխեաց իւրոյ հետևակաց զաւրուն: Ընդ որոյ քաջութիւնն և առատամտութիւնն զարմացեալ կոչեաց զնա իւր յորդեգրութիւնն, և ետ զԿիլիկիա ձեռնագրով և ոսկի վուլով Թորոսի և այլ գանձս բազումս, և ինքն գնաց ի Կոստանդինուպաւլիս:

Եւ վերստին լուեալ զհամբաւ բարութեան և քաջութեան մեծին Թորոսի կայսրն էմմանուիլ, եւ ոչ կարեցեալ տանել նախանձու, սկսաւ կաշառաւք գրգռել զԿլիճ Ասլան սուլտանն Իկոնիոյ ի վերայ Թորոսի, որ և եկեալ և բազում զաւրաւք ի Կիլիկեայ, պաշարեաց զԹիլն ավան, և ի Տեառնէ պատուհասեալ ախտիւ և ցաւաւք, զորոց զերիվարսն շանաճանճ սպառեաց:

Այլ և մեծն Թորոս ասպատակեալ զաշխարհն Իկոնիոյ, աւերեաց և զառ և դաւար էած ի Կիլիկիա: Վասն որոյ յայտմանէ Կլիճ Ասլան և ի հարուածոցն Աստուծոյ նեղեալ, ամաւթով դարձաւ յաշխարհն իւր, սէր
473ա երդմամբ եդեալ ընդ մեծին Թորոսի, և այլ ոչ հրապուրեցաւ‖ի բանսն էմմանուիլի:

Բայց իբրև եկն Թորոս ի Կոստանդինուպաւլսէ ի Կիլիկիա, լուեալ եղբաւր նորա Ստեֆանէի եկն առ նա: Բայց Մլէճն մնաց առ Նուրատին սուլտանն Հալպայ: Եւ Ստեֆանէ ձեռնտուութեամբ եղբաւր իւրոյ գնաց ի Սեաւ լեռան և տիրեաց ամենայն կողմանցն այնոցիկ, այլ և կալաւ զԳերմանիկէն զ Պեհեսնի և դաւեալ ի Յունացն սպանաւ յեռանդան կասայի, և թաղեցաւ ի տուրբ ուխտն յԱրքայակաղնին, թողեալ իւր երկու որդի՝ զՌուբէն և զԼևոն, որ և յետոյ թագաւորեաց:

Այլ մեծն Թորոս տիրեալ քաջութեամբ Կիլիկեա և Սատիոյ, վարէր զիշխանութիւնն ըստ հաճոյիցն Աստուծոյ, զի էր այր բարեպաշտ և ողորմած; մեծախորհուրդ և առատամիտ, վարեալ հին և նոր աւրինաւք Աստուծոյ, տեղեակ գոլով և ամենայն իմաստասիրական արհեստից, զորմէ ամեն հոգի մարգարեութեան ունել, որ և զբազում դժուարալոյծ բանս մեկնեալ, զոր գտանի այժմ առ մեզ: Կեցեալ սա այսպիսի բարեզարդ կենաւք, փոխեցաւ յաշխարհն կենդանեաց, և հանգուցեալ եղաւ ի դամբարանի, ի հռչակաւոր անապատն սուրբ, ի Դրազարկն: Եւ երկիր իշխանութեան իւրոյ և զմատաղ որդին իւր վստահացաւ յաներն իւր՝ Թումաս անուն, իշխան մեծ, զոր և պայլ իսկ եդ Հայոց՝ յետ իւր:

Այլ Մլէճն լուեալ զմահ եղբաւր իւրոյ զմեծին Թորոսի, էառ զաւր բազում ի Նորատին սուլտանէն, և եկն առնուլ զտէրութիւն ի վերայ Հայոց: Եւ բազում չար հասուցեալ աշխարհիս Կիլիկեցւոց, յորմէ նեղեալք բնակիչք և իշխանք աշխարհիս, կամաւք ձեռնտու եղեն նմա տիրեալ ի վերայ ինքեանց: Ուստի ընդ գալն նորա Թումասն փախչէր յԱնտիոք,
473բ ուստի և եկեալն իսկ էր: Եւ զորդի Թորոսին ամպարիշտք‖ոմանք կալեալ

* Գրված է գարձակեալ. հավանաբար մտածել է գրել գարձեալ յարձակեալ և շփոթել էո

ապանին։ Եւ Մլէճճ տիրեաց որոց ցանկայր անձն նորա։ Սակայն վասն խստասրտութեանն ոչ կարացեալ յերկարել, վաղվաղակի սպանաւ ի զաւրաց իւրոց ի քաղաքն Սիս, և թաղեցաւ ի վանքն Մեծ Խուր կոչեցեալ, զոր իւր իսկ շինեալ էր։ Եւ զաւրք աշխարհին առաքեալ բերին զորդիսն Ստեֆանէի, որ սնանէին առ քեռին իւրեանց Բակուրան, ի Տարսոն, և կացուցին իշխան և պարոն զՌուբէն զորդի Ստեֆանէի, որ եղև այր աշխարհաշէն, առատամիտ և բարեգործ, որոյ եւ համբաւ անուան նորա ընդ ամենայն աշխարհ։ Վասն որոյ Հռովմայեցիքն զնա պատուեալ յազգէն թագաւորութեանն կին ետուն նմա, յորմէ ծնաւ երկուս դստերս։

Սակայն ի տերանց Լամբրունի, եղև դաւ նմա; զի սղարել էր Ռուբէն զԼամբրուն։ Եւ նոքա նեղեալ, յեղիցին առ բրինձն առ Անտիոքոս, զի եւս հնարեսցէ իրացն։ Իսկ բրինձն խաբանաւք ի ճաշ կոչեալ զՌուբէն, արգել զնա յԱնտիոք, վստահանալով, թէ կարասցէ այնու զԿիլիկեա առնուլ։ Այլ Ռուբէն յղեաց առ եղբայր իւր Լևոնի՝ նստել՝ յաթոռ պարոնութեանն և պահել զերկիրն, և պնդել զսղար բերդին Լամբրունի։ Եւ Լևոն և իշխանքն այսպէս արարին։

Իսկ բրինձն իբրև ետես, թե ոչինչ շահի այնու, ապա անկաւ ի բանս վաճառելոյ, զոր հաւանեալ պարոն Լևոն և իշխանքն, ետուն զանձ և երկիր, և թափեցին զՌուբէն։ Որ եկեալ և վերստին յինքն առեալ զպարոնութիւնն, կեցեալ աւուրս ինչ բարիոք կենաւք։ Եւ վախճան մահու հասեալ, խրատեաց զեղբայրն իւր բազում իմաստութեամբ և բարութեան
474ա խրատով, թողեալ ի նա զիշխանութիւնն և զ[դս]տերս իւր, ‖ ինքն հանգաւ ի Քրիստոս, և կրաւնատրեալ թողեցաւ ի Դրազարկն։

Լևոն ընկալեալ զտէրութիւնն եղբաւրէն, առաւելաւ յամենայն բարութիւնս քան զնախնիսն իւր։ Եւ ևս ընդարձակեաց զսահմանս տէրութեանն, եւ մինչդեռ կայր քաշութեամբ և բարութեամբ, ել ի վերայ նորա Ռբսաամ յազգէ Իսմայէլի անթիւ զաւրաւք, և նկուն եղեալ աւգնականութեամբն Աստուծոյ, խորտակեցաւ առաջի մեծին Լևոնի, և մնացեալքն փախստական եղէն։ Տիրեաց և զկողմանցն Սսվրիոյ մինչև յԻռալիա։ Էառ զԱռակլիա և զկեսարիա, և ընդ գանձուց փոխանակեաց։ Բազում ամրոցս և դղեակս շինեաց, յոլով վանաւրեայս և աղքատանոցս կազմեաց, և գոդեացն տունս և ռոճիկս պարգևաց, և բարութեամբ զաշխարհըն իւր ել[ի]ց։

Զոր զբարեգործութիւնն նորա լուեալ թագաւորք երկրի՝ ստիպէին զնա թագ առնուլ, յորոց և ումբրուրն Ֆռանգաց, կայսրն Յունաց, առաքեցին նմա թագ և գանձ բազում։ Եւ նա ընկալեալ զայն, աշխարհաժողով բազմութեամբ և եկեղեցւոյ լրութեամբ պսակեցաւ թագաւոր Հայոց, և նորոգեաց զաթոռ և զգաւազան թագաւորութեան Բորգոմայ, և ելից խաղաղութեամբ զաշխարհ և բարութեամբ, իբրև զդրախտ պտղաւետեալ։ Ամուսնացոյց զդստեր եղբաւր իւրոյ յԱնտիոք, և ապա առեալ զԱնտիոք՝ ետ նմա և որդւոյ իւրոյ, այնմ որ բրինձ Ռուբեն կոչեցաւ, էառ զԱրասուս և զՊաղրաս, տիրեաց և Լամբրունին։

Յետ աւուրց եկն ի վերայ նորա սուլտան Հռոմոց Քայխայուզն, և պաշարեաց զդղեակն զԿապանն ըմբռնեաց և զիշխանսն Հայոց և

474բ զզաւրա‖զլուխսն զպարոն Կոստանդին: Իսկ արքայն Լեոն, առեալ զմնացեալ զաւրս իւր, ասպատակեաց յաշխարհն Գամրաց, և բազում ոճիրս գործեաց, և առեալ զառ և զաւար, դարձաւ ի Կիլիկեա: Զոր լուեալ Քայֆայուզն, եթող զԿապանն և զերկիր թագաւորին, և ամաւթով դարձաւ յաշխարհ իւր, ընդ սակաւ գնով դարձոյց զիշխանսն, և սէր երդմամբ եդ ընդ արքային Լեոնի:

Բայց արքայն Լևոն կացեալ ի պարոնութեան զերկոտասան ամ և թագաւոր ԻԲ (22) ամ, փոխեցաւ առ անմահ արքայն Քրիստոս և հանգուցեաւ ի սուրբ ուխտն յԱկներն, վստահացեալ զերկիր իւր զդուստր մի իւր Զապել* անուն, յիշխան ումն Ատան անուն, որ իսկոյն սպանեալ եղև ի Հաշիշեացն ի Սիս:

Եւ ամբարձեալ ազգական թագաւորին Լևոնի, պարոն Կոստանդին էառ յինքն զիշխանութիւնն Հայոց և զդուստր թագաւորին Լևոնի զԶապել ամուսնացոյց որդի իւր ի Հեթում, որ և ածաւ թագաւոր Հայոց։ Եւ եղև բարեբախտ և անուանի առ ամենեսեան։ Ծնաւ այս արքայ Հեթում ի թագուհոյ իւր Զապիլէ զԼևոն, որ այժմ է թագաւոր, զեղբայր իւր Թորոս, որ խողխողեցաւ ի զաւրացն Հագարացւոց, և դստերս բազումս։ Եւ աստուածահաճոյ կենաւք կային ի Քրիստոս։ Իսկ ի վախճան կենաց հասեալ թագուհոյն բարեպաշտի, փոխեցաւ ի Քրիստոս և եդեալ կայ ի սուրբ ուխտն ի Դրազարկ:

Յայնժամ արքայն Հեթում խորհրդածեալ զխաղաղութիւն աշխարհիս Հայոց, յուղի անկեալ գնաց առ ազգն Մուղալ, զոր Թաթարն կոչեն, և յուխտ մտեալ ընդ նոսա, զմշտ(ը)նջենաւր խաղաղութիւն այսու ստա-
475ա ցաւ աշխարհի իւրոյ ի նոցանէ, որ ապականէին զամենայն աշ‖խարհ։ Յայսմանէ լցեալ նախանձու պաշտամնեայքն Մահմետի ամենայն ուստեք՝ նիւթէին նենգութիւն ի վերայ Հայոց։ Այլ նա աւգնականութեամբն Աստուծոյ և ձեռնտուութեամբ Մուղալ զաւրուն էառ զմեծն Գերմանիկէ և և զՊեհեսնի, թափեաց և զնախնեաց իւրոց զաշխարհ՝ ղյափշտակեալն յայլոց։

Եւ մինչ կայր յաշխարհ Հայոց ի հաշտութիւնն Աստուծոյ, և ի բարութիւն, յայն ժամ բազմապատիկ մեղաւք լցեալ ազգ մարդկան, ձգեցին ի վերայ ինքնեաց զարժանասաստ բարկութիւնն Աստուծոյ, յորմէ եղև զաւրացեալ ազգն Հագարացւոց և բռնակալեաց ումն ծառայ յԵգիպտոս, և տիրեաց ամենայն տանն Սեմյան։ Եւ շարժեցաւ ընդդէմ քրիստոնէից, աւերեաց զծովեզերա[յս]ն, քակեալ կործանեաց [զ]մեծն Անտիոք, գերեաց [ա]նհամար անձինս քրիստոնէից, և զանթիւս մաշեաց ի սուր սուսերի։

---

* Ձեռագրում, Զապել անվան վրա նշան է գրված և ստորին լուսանցքում, նույնակերպ նշանի տակ գրված է. «Ի հայրապետութեան տեառն մեր Մինաս Կաթողիկոսին, թվականութեանս Հայոց ՌՁԷ (1638) նուաստս յամենայնի Յակոբ [Ս]ըսցի. որ յայժմ եմ փակակալ ի գումն Սուրբ Լուսորչի, ի Կըլիկեայ այմ որ ի Մարաստոն ասի Բ և Գ եղբօր հետ ելայ գնացի Սանտըխտով, թվական նորայ, որ ի դռան վերայ կայր կարդացի, որ էր օրինակն այս. Կատարեցաւ յարմարումն շինուա[ծ] հիւանդանոցիս, հրամանաւ մեծաւ փառաւք քրիստոսասէր թագուհոյ Զապիլի <ի թվ>ի թվականութեանս Հայոց ի Ո և Ղ (1241)»։

Բայց յառաջ քան զայս, եկն ի վերայ թագաւորին Հեթմոյ և տանս Հայոց, վանեաց զզաւրսն քրիստոնէից, եւսպան զԹուրոս ղորդին Հեթմոյ թագաւորին, և զմեծն Լևոն, որ այժմ է թագաւոր, յետ բազում քաջութիւնս կատարելոյ նորա՝ ըմբռնեաց զնա ի գերութիւն։ Վասն որոյ և յայնմանէ համարձակեալ եմուտ յաշխարհ Հայոց ե հրկիզութեամբ ապականեաց, և զբնակիչսն ի սուր մաշեաց, զառ և զաւար առեալ, ել ողջամբ և գնաց յաշխարհ իւր։

Բայց որդի թագաւորին Լևոն, ոչ զանգիտեալ ի ծառայութենէ իսմայէլացւոցն, այլ պինդ հաւատով և արիագոյն սրտիւ կացեալ ի գերութեանն, նախ բանիւք քաջալերէր զբնակիչս, որ յամրոցս աշխարհիս գայ-
475բ թագղեալք էին, պինդ կեալ և ոչ տալ ի ձեռս, և ապա||ի յանդիման լինելն սուլտանին, զարմացոյց զամենեսին իմաստուն բանիւքն ե ահարկու կայիւքն, պատրաստ գոլով ի հարցմունսն և ի պատասխանիսն։ Այլ և ի ձիրնթացս ասպարիսին ելեալ ընդ սուլտանին, առաւելագոյն գտաւ, քան զամենայն զինվորսն ի հրահանգս ձիաւարժութեան, մինչ ղի զամենայն գործս և ի բանս նորա հաճեալ և հաւանեալ սուլտանն, ազատեաց զնա ի բանտէ և ի կապանաց։ Եւ ի պատգամ յղեալ առ թագաւորն Հեթում, և սիրով և երդմամբ, մեծագոյն պարգեւաք դարձոյց զմեծն Լևոն յաշխարհ իւր։ Որ և ի գալն վերստին նորոգեցան բնակիչք Կիլիկեա, և ամենայն զարմք քրիստոնէից։ Եւ իսկոյն հայր նորա և ամենայն աշխարհն եդին զնա յաթոռ պարոնութեան, քանզի ոչ առ յանձն լինել թագաւոր յաւուրս հաւր իւրոյ։

Յետ այսորիկ հիւանդացաւ թագաւորն Հեթում, որ եւ մեռաւ իսկ լեալ կրաւնատր, թաղեցաւ ի սուրբ ուխտն Դրազարկն, եւ մեծն Լևոն սուգ պահեալ զերիս ամիսս ցաւագին անձամբ, և ապա մեծարեալ ի զանեն և յամենայն թագաւորաց մերձակայից և հեռաւորաց, միաբանութեամբ ամենայն աշխարհի աւծաւ թագաւոր ի վերայ ամենայն Հայոց, եթող ի սրտէ զյանցանս ամենեցուն, որք սղալեալ էին նմա, և շնորհեաց պարգևս ամենեցուն։

Է սուրբ արքայս Հայոց առատամիտ, ողորմած, ունկնդիր զղուելոց, ապաւէն վտանգելոց, տղջախոհ և մաքուր, երկայնամիտ և ժուժկալ և յամենայն նեղութիւնս համբերաւղ նման Յովբայ, և մեծախորհ[ուր]դ իբրև զնա, ի փորձութիւ[ն] անկեալ նման նմա, քանզի յիշեալ* սուլ-

---

* Այստեղ մագաղաթյա թերթերը վերջանում են և հաջորդում է 1694 թ. վերանորոգող Իսկենտեր դպրի լրացրած թերթերը. «Վերստին նորոգեցաւ գիրզս ի մայրաքաղաքն Ատանայ, ձեռամբ սուտանուն Իսկենտեր դպրի, թուականիս մերում ՌՃԽԴ (1694)», որոնցից առաջինի վրա շարունակվում է հիշատակարանը և զբաղեցնում մեկ ու կես սյունակ։ Հիշատակարանը, որ առաջին անգամ հրատարակվել է «Ազդարար» ամսագրում (1870 թ., էջ 353—360, 382—386), «Ձիշատակարան թագաւորական Ճաշոցին կամ Համառօտ պատմութիւն Ռուբինեան իշխանաց» վերնագրով, լրացրած թերթի մասին գրում է. «Աստի մինչ ցվերջն... բուն հեղինակին ձեռագիրը չէ, այլ Իսկենտեր... կազմարարի ձեռագիրն է, և ընդօրինակութեան մեջ մի քանի սխալներ սպրդած (գուցե և պարբերութիւններ մոռացած) է, բայց մի քանի բառեր ես մոռացած լինելը աներկբայելի կերևի ընդօրինակութեան մեջ։ «Դարձեալ աւուրս (յաւուրս) Լևոն եկն զօրօք բազմօք յաշխարհս Հայոց» աստ յայտնի չէ, թէ ո՞վ եկաւ, թեև ի պատմութեանց յայլոց դիտեմք, որ եգիպտոսի սուլթան Փնտուխտար կամ Բիբարսն է»։

տանն Սըսոա, որ յաւուր Հայոց Թագաւորիս եմուտ ի Կիլիկեա, դարձեալ յաւուրս Լեռնի եկն զօրօք բազմաւք յաշխարհս Հայոց, և եկեալ Արապ և Թուրքման ամբոխիւք, որ ընդ նմա միաբանեալ էին, և աւերեցին դարձեալ զաշխարհս Կիլիկիայ։ Եւ արքայս Լեռն, ըստ բնական քաջութեան իւրոյ զամենեսին յորդորէր մարտնչել ընդ Հագարացիսն, այլ զաւրքն ոչ առին յանձն, զի սակաւք էին։

Բայց իբրև թշնամիքն գնացին, զամենեսեան քաջալերէր և մխիթարէր, և առատ պարգևօք յանձանձէր, մինչև հայեցեալ Աստուած ի պնդագոյն հաւատս նորա և ի սէր՝ դարձոյց զքաղցրութիւն իւր ի վերայ մեր, և սկիզբն արար բնակելոցս ի մէջ ցաւոց, քանզի ետ մերոյ թագաւորիս յաղթութիւն ընդդէմ թշնամեաց, նախ կոտորեաց զբազում զօրս սուլտանին Մսրայ ի Հարունին, և ապա զբազումս ի Թուրք սեռէն՝ և յոլով առ և աւար շահեցաւ, այլ և եգիտ շնորհս աւաշի գլխաւորին Մուղալ զօրուն, մինչ զի պարգևս և պատիւս յոլով շնորհեաց նմայ, ամէն։

Բ

276ա Համբարձմանն առաւատուն և ճաշոյն կարգն գրեալ է ի մայիս ամիս, ԿԵ (65) համարն, գիտ և կարդայ և մի մեղադրեր, զի զԳործքս յետոյ գրեցի և ի Յինանցն ի կարգն դրի։

475

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 10480

Գրիչ և ստացող՝ Վարդան Բարձրաբերդցի

ա

159բ Զվարդան վարդապետ Բարձրբերդցի զստացաւղ աստուածային մարգարանիս՝ աղաչեմ զամենեսեան, որք սրտի մտաւք ճաշակէք զպըտուղ անմահական դրախտիս, յիշեցէք զմեզ ծնաւղաւքն մեր և եղբարբք, խնդրել զթողութիւն մեղաց ի Քրիստոսէ, և ուսուցողին իմոյ տեառն Յոհանիսի արքայի եղբաւր Հայոց Հեթմոյ, և Աստուած յիշողացդ ողորմեսցի, ամեն*։

Մաշտոցի անվան Մատենադարանի № 3073 ձեռագրում պահպանվել է այդ հիշատակարանի լրիվ ընդօրինակությունը, կատարված մինչև նորոգումը։ Համեմատությունը ցույց տվեց, որ Իսկենդեր գրիչը առաջին բառերից բացի հարազատ է մնացել բնագրին։ Սրբագրում ենք այդ հատվածը. Ճաշոցում առաջին երկու տողն այսպես է. «զնոսայ որ աւուրն Լեոն թագաւորիս եմուտ ի իւրեանսն»։ Մնացած մասում տարբերությունները քիչ են։ Ուշ հիշատակարանը № 3073 ձեռագրում, որ վերնագրված է «Պատմութիւն թագաւորացն Հայոց, որ ի Սիսն», սկսվում է 258ա էջից. «Ի թվականիս Հայոց ՉԼԵ յանկ եղեալ կատարեցաւ աստուածախօս մատեանսն» նախադասությամբ. բաց է թողնված «Փառքի» մի քանի տողը։

* Գրված է Իգնատիոսի՝ Ղուկասի Աւետարանի Մեկնութեան վերջում։

Բ

Գրիչ՝ Յոհաննէս Արճեղբայր

Ես Յոհաննէս եպիսկոպոս արքաեղբայր Հայոց, որ երբեմն Պաղաւոյն կոչէի, որդի քրիստոսարեալ և ամեներջանիկ իշխանաց իշխանին և աբրահամյան ծերունւոյն արքայահաւր և պարոնին Հայոց Լեւոստանդեսւոյ, Մոգոն կոչեցելոյ, որոց Քրիստոս Աստուած ողորմեսցի ի լոյս երեսաց իւրոց ընդ արդարոն դասելով, ամէն։

Ի թվականին Հայոց ՉԼԸ (1286) գրել եաու զսուրբ տառս երից գրչաց, որոց Տէր Աստուած ողորմեսցի, ամէն։ Որոց յոյժ բազձալի լուսալիր մտաց սոցա և անսայթաք իմաստից յար ընդ իս կալոյ սակս, զորս ի մի տեղ հաւաքեալ եդի գՂուկասոն՝ յիգնատոսէ, զՅոհաննոն՝ ի Նանաե Սարկաւագէ, զՅայտնութեանն՝ ի Թեսալիոսէ եպիսկոպոսէ, զէր ընդ եղբարսն՝ ի Ներսէս եպիսկոպոսէ Տարսոնի, զի առ ձեռն պատրաստ բնաւքն գտցի բանասիրաց և աշխատասէր ժիր մշակացդ աստուածատունկն այզւոց։ Վասն որոյ Տէրամբ Աստուծով աղաչեմ զվայելողսդ սորա և զկնի մեր ժառանգողսդ, որք աւգտիք ի սմանէ, և որք աւրինակէք՝ յիշեցէք սրտի մտաւք զմեզ ի բարին Քրիստոս՝ ծնողաւք մերովք և համայն նոցին ծնընդաւք և ամենայն ի Քրիստոս հաւատացելովք, փրկութիւն և թողութիւն, և հանգիստ և ողորմութիւն գտանել համայնից ի Քրիստոսէ Աստուծոյ, այժմ և յապագայն, և յիշողաց մեր՝ կրկին Աստուած ի բարի յիշեսցէ միշտ, ամէն։

Դարձեալ աղաչեմ խնամ և գութ, և մեծարանս առնել սմա իբր Աստուծոյ պատդամաւորի և հոգոց ծնողի, մի մրճոտել, մի պատառել, մի մերկ ընգենուլ//և որ անցանէ ընդ միւս՝ զրկեսցի ի կենացն Քրիստոսի, և որ առնէ զոր գրեալս եղև, և յիշէ ի բարի զմեզ աւրհնեալ Աստուծոյ լիցի, ամէն։

Գ

335ա ՋՅոհաննէս եպիսկոպոս յիշեցէք ի Քրիստոս, սո՛ւրբք Աստուծոյ։

Դ

337ա Ջստացող տառիս և ղգծող սակաւուս զՅոհաննէս եպիսկոպոս արքաեղբայր Հայոց, ծնողաւք նորին և ծնընաւք նոցին յիշեցէք ի Քրիստոս և Տէր զձեզ յիշեսցէ։

Ե

Աւրհնութիւն գոհութիւն և փառք ամենասուրբ Երրորդութեանն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ես՝ Յոհաննէս եպիսկոպոս անիմա րաբուն արքաեղբայր, դատապարտ ծառա Քրիստոսի Աստուծոյ, նվաստ ձեր ծառայակից, ի թուին ՉԼԸ (1286), գրել եաու զսուրբ տառս այլևայլ գրչաց, որոց Տէր ողորմեսցի, ուսումնասիրացդ ի վայելս աւգտի, և յիշատակ բարի մեզ և մերոցն հոգեպէս և մարմնապէս ծնողաց և զարմից և սպասաւորաց, վասն որոյ առերամբ Աստուծով աղաչեմ զամենեսեան, յիշել զմեզ սրտի մտաւք ի

բարին Քրիստոս, թողութիւն և հանգիստ, ողորմութիւն հայցել մեզ ի Քրիստոսէ, այժմ և յապագայն, զի միշտ կարաւտ ենք ձերդ յիշման, որպէս և դուք Տեառն ողորմութեան, և որք յիշեքդ, յիշեալ-լիշիք Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, որ է աւրհնեալ յաւիտեան, ամէն։

գ

Գրիչ՝ Բարսեղ

333ա Եւ վարդանա վարդապետի գրչութեանս յիշել մերայաւքն ի Քրիստոս։

է

396ա Ջստացող սորա զսրբասնեալ արհի եպիսկոպոսն զտէր Յովհաննէս արքահղբայր Հայոց, և զծնաւղս նորին, և զհարազատ եղբարսն իւր՝ համայն ծնրնդովք նոցին փրկեսցէ Քրիստոս Աստուած ի պատրանաց և ի նենգութենէ հակառակ Քրիստոսին, և սրբոց իւրոց սպիտակազգեստիցն մասնակից և ժառանգակից արասցէ, և սիրելոց քաղաքին բնակակից, ամէն։

Ընդ որս և տառապեալ Բարսեղս աղաչեմ զընթերցողսդ յիշել զեղկելիս, և յանցանաց իմոց թողութիւն հայցել յԱստուծոյ, և առատ տուողն Տէրն և Աստուածն մեր Յիսուս Քրիստոս յիշելեացս և յիշողացդ և ամենեցուն ողորմեսցի, ամէն*։

476

ՄԱՍՈՒՆՔ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Երևան 196

Գրիչ՝ Կոստանդին Աւրզցի
Վայր՝ Տիրոջ գիւղ

ա

76բ ՋՅովհաննէս** սրբազան արքեպիսկոպոս, որդի բարեպաշտ իշխանաց իշխանին Կոստանդեա, և զեղբայր քրիստոսասէր արքային Հայոց Հեթմոյ՝ զստացող սորա, ծնաւղաւք իւր և համայն զարմիւք յիշեցէք ի բարին Քրիստոս՝ ժառանգողք սորա և վայելողք, և Աստուած զձեզ յիշեսցէ ի բարի, ամէն։

Գրեցաւ սուրբ տառս նորակերտ տաճարին, որ յանուն աստուածասուրբ Հոգոյն կանգնեցաւ ի գաւղն Տիրոջ, որ է սեփհական ժառանգութիւն սուրբ անապատին Գոնեռոյն, որոց Տէր հովանասցի, ամէն։

---

* Բարսեղը, գրիչն է 333 էջից սկսվող նյութերի։ Մինչ այդ գրել է Վարդանը, իսկ 335—339 էջերը գրել է Հովհաննես արքահղբայրը։

367 բ-ի ստորին լուսանցքում գրված է «Ի Քրիստոսի խաչելութենէ մինչև ի Ոլ Քուականն ամք ՌՃՁՔ (1182), որը գաղափար օրինակից է։

** Այսպիսի մի հիշատակարան կա նաև 78բ-ում։ Ամենուր Յովհաննէս անունը քերված է, բայց ոչ լրիվ և տեղ-տեղ գրված «Ջրիստակէս»՝ վերջին ստացողի անունը։

բ

86բ Ձստացող սուրբ [Աւետարանիս] զՅոհաննէս*... նաև զձեռասուն աշակերտ իւր զՍտեփանոս Վանկացի և զԳրիգոր մականուն Պիծակ՝ զնկարողք սուրբ տառիցս յիշման արժանի համարեսջիք և ղգծող սորին զԿոստանդին Աւրղցի:

գ

111բ Ձաստուածահաճոյ և ղերիցս երանեալ բարունին ե տէր, զՅոհաննէս եպիսկոպոս արքաեղբայր ամենայն Հայոց յիշեցէք ի սուրբ սրտէ և զամենայն զաւրութենէ ծնողաւք իւրաք և համայն զարմաւք ի Տէր Յիսուս Քրիստոս, և որ առատն է ի տուրս բարեաց տացէ այնմ հազարապատիկ, որ արտասուալից հառաչմամբ խնդրէ զթողութիւն մեղաց և դհանգիստն յաւիտենից վերագրելոցս և ստորագրելոցս, գծողին և նկարագրողացն, այժմ և յարաժամ:

դ

Յոհաննէս Արքաեղբայր

10ա Ստացողի սորա Յոհաննիսի եպիսկոպոսի ողորմեսցի:

ե

111բ Տարտամս ի բարիս և արագս ի չարիս, դատապարտ ծառայակիցս Յոհաննէս եպիսկոպոս յիշեալ յաստուածայնոցդ եղէց**:

477

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 5525

Գրիչ՝ Յոհաննէս Արքաեղբայր
Վայր՝ Տիրոջ գիւղ

ա

Փառք ամենամեծին Աստուծոյ և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի: Նըւաստ ծառայս՝ վեհիդդ տրուպս և մեծագունիցդ հողս, Յովհան եպիսկոպոս արքաեղբայրս, բարուն առաջնորդ աստուածաբնակ սուրբ մենաստանիս Գոնեռոյն, ի թուականիս ՉԻԱ (1272) շինեցի զսուրբ մատուռն յանուն սուրբ աւետարանչին Յոհաննու, ի գեաւղս Տիրոջ կոչեցեալ: Զոր ի բազում ամաց՝ նախնին արքայ վեռն Յոաւրիենեաց՝ շնորհեալ էր Գոնեռոյն զայս գեաւղ Տիրոջ կոչեցեալ, որոյ յիշատակն աւրհնութեամբ ի Քրիստոս և ցաւղ արեան նորա յոսկերս նոցին միշտ ցաւղեսցի:

---

* Նույնն է, ինչ նախորդում:

** Պահպանվել է ձեռագրի ԼԱ-պրակից, որ «Գործք Առաքելոցն» է: Սկզբի մասը՝ կորած է: Թվականն անհայտ է, դնում ենք արքաեղբոր պատվիրած և Կոստանդնի գրած մյուս ձեռագրին առընթեր:

Եւ ես սակս պիտոյից իմոց շինեցի զՍուրբն Յոհաննէս, զոր և ըստ
226ա կարի պատշաճին զարդարեցի զգեստիւք* և[ա]առիւք**, եւտու սուրբ Աւետարան, զորս մերկեաց և գողացաւ գողացեա[լ] ի չար գողէն, և ոչ գտի։ Զոր իմ ի ծեր հասակի սկսա գրել զտուրբ Աւետարանս ի թվին ՁԼԸ (1286), ի լաւ և յընտիր աւրինակէ, և սորին մերձ զայլ սրբոցն եդի ընթերցմունս ճաշոյ, գրեալ ձեռամբ Ստեփանոս երիցու, և պարգևեցի զսա Տիրոջ դեղչին եկեղեցոյն, յընթեռնուլ ի շահ աւգտի բնակչաց Տիրոջ գեաւգջս, և ի յիշատակ մեզ և մերոցն։

Վասն որոյ տէրամբ Աստուծով աղաչեմ զապագայսդ յիշել սովաւ զմեզ ի բարին Քրիստոս, հանգիստ և թողութիւն և ողորմութիւն գտանել բնաւիցս ի Քրիստոսէ Աստուծոյ աստ և յապագայն, և ընդ աջեայսն դասումն, և մի ոք իւր սեփհական զգանձս հասարակաց վարկցի և մի տացէ զսա մանդանց՝ ձեռամբ մրճոտել և անառիգած ունել և յանվայելուչ վայրըս ընկենուլ։ Եւ մի ոք գողասցի և ի փառացն Քրիստոսի մերկասցի, այլ ի սուրբ խորանն կայցէ, և անդ կենդանատյն Աստուծոյ զձայն հընչեսցէ համայն լսողաց։ Եւ յամենայն ժամ զմաղթանաց մեր բան ընթերցին ի լուր լսողաց, Տէր ողորմի և Քրիստոս որդի Աստուծոյ մեզ ասել մեղայիւ։

226բ Որով բարեյոյս ի կարգ[ք]րիստոսաղաւան ննջեցելոցն լիցուք դասեալք՝ ուր և հանգիստ ի վայրն անծկութեան սուրբ մարմնոյ և արեան Տեառն ցաւղմամբ, և սուրբ աղաւթից ձեր արտասուաւք զմեզ ի բարին Քրիստոս յիշմամբ զտցուք։ Որով և ի պարս աջէիցն խառնեալք և անաղտ մաքրութեամբ ի գերակատարն մեր գլուխ Քրիստոս յաւդեալք ձեաւք և ի նոյնն միացեալք՝ ըստ անսուտ խոստմանն իւրոց՝ թէ Ուր եմն եմ, անդ եղիցի և պաշտաւնեայն իմ։ Ուր և դուք յիշողդ մեր սրտի մտաւք արտասուաւք դասեալք գտջիք, ամէն։

Աղաչեմ դարձեալ զձեզ, զիշխանացն իշխան քրիստոսա[ս]էր զպարոն Հայոց Կոստանդին և զորդիսն իւր զՍմբատ սպարապետ, զՀեթ[ում] թագաւոր, և զԱւշին պայլ և զարքեպիսկոպոս Սիսոյ Հասիլ, և զԼեւոն մարաջախտ, և զՎասակ մենամարտ կորովի, և զքոյրսն մեր զՀոռիփսիմի կրաւնաւոր, զԹեֆեանաւ թագուհի Կիպրոսի, և զԿալամաոի գունդէս Ճաֆուն և Ռամլոյ, և զՖիլիպ և զՄարեմբագ, և զԱկաց՝ ծնընգաւք նոցին և զարմիւք յիշեցէք ի բարին Քրիստոս, զի բնաւիցն ողորմեսցի։ Նաև զձեզ զյիշողդ մեր և զվայելողդ սորա մեաւք հանգուսցէ Քրիստոս ընդ սուրբըս իւր, որում փառք յաւիտեան, ամէն։

Բ

221ա Աստուածարելոցդ անձանց հարց մերոց ի Քրիստոս և եղբարց, նաստակրսեր հոգս ձեր Յոհաննէս եպիսկոպոս և րաբուն արքաեղբայր՝

---

* Մինչև այստեղ պակասում է ձեռագրում, լրացնում ենք Ե. Լալայանի Վասպուրականի ցուցակից, որի կազմելու ժամանակ հիշատակարանը ամբողջական է եղել, «բավական լավ պահվածք»։ Նշված 420 թղթանոց Աւետարանից այժմ մնացել է 226 թերթ։

** Ե. Լալայանի մոտ «զարդիւք»։

կրկին ակամբ ճայրոտեալ մեղսագործ իմս ձեռաւք գրեցի զսուրբ Աւետարանս ծեր և ցաւոտ անձամբ, ուղղեալ և յրղկեալ յոլով աւրինակաց, որպէս ահա յայտ իսկ երևի տեսող գիտնոց՝ բանից և ջեշտից, և տանց և գրադարձից ծանաւթից, յոյժ վտանգեալ յանյայտից և յայտնեաց ցաւոց։

Վասն որոյ աղաչեմ Տէրսմբ Աստուծով զժառանգողսդ սորա և զգաղափարողսդ, սրտի մտաւք ի բարին Քրիստոս յիշել զմեզ ծնաւղաւք մեր, և նոցին համայն ծնրնդաւք և ընտանեաւք, և ևս յաւէտ ի սուրբ և մեզսաբարձ գառինն Աստուծոյ անմահ զենումն տալ հանգիստ և թողութիւն բնաւիցն՝ յայժմուս և յանկէտ յաւիտենին։ Որում և դուք հաղորդք գտջիք այժմ և յապագայն։

Մի եպերել, այլ ի բարի յիշել, և զևսն ձեաւք լնուլ։

Գ

57բ Պարուպետիդ սուրբ հարդ և եղբարդ հոդս Յոհաննէս եպիսկոպոս արքաեղբայր գրող սորա պաղատիմ յիշել զմեզ մերայովքն ի բարին Քրիստոս և Աստուած զձեզ յիշեսցէ, ամէն։

Դ

110բ Ջմտաւք և աչաւք խաւարեալ ոգիս Յոհաննէս եպիսկոպոս և զաստուածասէր ծնաւղսն իմ և զծնունդս նոցին, յաւէտ զերջանիկ կրսեր եղբայրն իմ Վասակ, որի ի տոյն ամի ՁԼԴ (1284), ի մարտի ԺԴ (13) փոխեցաւ ի Քրիստոս, որոց Տէր Քրիստոս ողորմեսցի բնաւիցն, ամէն, յիշեցէք ի Քրիստոս։

Ե

173ա Զբազմաբիծ և դատապարտ ոգի ստացողիս և աշխատողիս Յոհաննէս եպիսկոպոսի Աբրաեղբաւր բաբունոյ, եւ ծնողաց նորին յիշել ի Քրիստոս, աղաչեմ զապագայսդ։

478

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Մարտիրոսյան, Ցուցակ, Մշո, էջ 98

Գրիչ՝ Աւագ

ա

Փառք հզաւրին եւ անմահին, անեղին եւ անճառին... որ տրամադրեաց զմատունս վերջացեալ գծագրի եւ տկար ոգոյ, նոսաստ քահանայի անուամբ տէր Ավաք յորջորջի, սակայն մտաւք կատարեալ չնացող և պոռնիկ գոլով։ Եւ արդ, չնորհիւն Աստուծոյ սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զտառս Աստուածայրամար, զգեղեցիկ, զպատուական, զանգին մարգարիտս...

Բ

Վայր՝ Մուշ քաղաք

Ի թւին ՉԼԵ (1286) գերի վարեցաւ սուրբ Աւետարանս եւ բերաւ ի քաղաքիս Մուշ, եւ էր ի ձեռս այլազգեաց եւ յոյժ հայհոյէին եւ կամեցան ծախել յաւտար աշխարհ։ Իսկ բարեպաշտ եւ երկիւղած եւ բարի ծնաւղաց ղաւակըն՝ եղբարքն հարազատք Հուսէն, որ մղդսի էր, եւ Մուսէսն տեսեալ զայսպիսի մարգարիտս ի ձեռս այլազգեաց, վառեցան ի սէր հոգևոր եւ առին զհրամանս Քրիստոսի, որ ասէ, թէ Գտեալ մի պատուական մարգարիտ, երթեալ վաճառեաց, զոր ունէր, եւ գնեաց զայս անգին մարգարիտս ԲՃ (200) սպ[իտակ] յիշատակ իւրեանց, եւ ծնաւղաց իւրոց Մագուլէի եւ Գոհարի, եւ քեր իւրոյ Մամխաթունին, եւ ամենայն արեան մերձաւորաց մեծի եւ փոքրի։

479

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՅՈՀԱՆՆՈՒ

Երևան 1418

Տեսութիւն քննութեամբ աղաւթից սուրբ աւետարանչին Յոհաննու, ի խնդրոյ վարդապետին Յակոբա, ի Ներսիսէ հոգևոր որդւոյ, եղբաւրէ պարոն Հայթմոյ:

221 Գրեցաւ Մեկնութիւն հանգստեան Յոհաննու աւետարանչի աստուածաբանի և սիրեցելոյն Յիսուսի, ի թվիս ՉԼԵ (1286)*, հրամանաւ և արդեամբք սրբազան եպիսկոպոսին տէր Համազասպայ, յիշատակ անջինջ յաւիտեանս։ Արդ, որք աւգտիք և լուսաւորիք ի սորա լուսալրութենէ, յիշեսջիք զսրբասնեալ և զերջանիկ սուրբ եպիսկոպոս զտէր Համազասպ, ասելով. Տէր Յիսուս արժանացոյ զսա մասին սուրբ առաքելոյն Յոհաննու ի փառս Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ. Ընդ նմին զեղկելի և զամենամեղ գրիչս յիշեա Տէր իմ Յիսուս։

480

ԳԱՆՁԱՐԱՆ

Երևան 4011 (ԺԵ դ.)

Հեղինակ՝ Մխիթար Այրիվանեցի
Վայր՝ [Այրիվանք]

4ա ՉԼԵ (1286)։
Ի յախտաժետ ըստեանց ճընշեալ

---

* Իրար կպած էջերը անջատելիս, որոշ տառեր պոկվել են։ Հետագայում վերականգնելիս, թվականը գրել են ՋԼԷ (1488)։ Ինչպես երևում է ուշադիր նայելուց «Ջ»-ի փոխարեն «Չ», իսկ «Է»-ի փոխարեն «Ե» է գրված եղել։ Հիրավի, այդ ժամանակ Համազասպ եպիսկոպոսը Հովհաննավանքի առաջնորդն էր, որը և գրել է տվել այս նույն գրչին բազմաթիվ ուրիշ ձեռագրեր։

Սպիտակ գինիս այս նոր յայտնեալ,
Տէր Մխիթար ի հոգս անկեալ
Պըտուդ պտուղ դայս հաւաքեալ։
Յաստուածաշունչ գրոց առեալ,
Եւ ի սրբոց բանից քաղեալ,
Քան զդամարտակ ի մին շարեալ
'Ի եկեղեցոյ կոդն կախեալ։
Արդ դուք որդիք մաւրս այս ընտրեալ,
Որք յետ մեր գայք յարկս այս սըրբեալ,
Զմեզ յիշեցէք ի յաղաւթիլ,
*Գրեկով դայս բանքս ի սրբագրել**։

481

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ

երեան 5135

Գրիչ՝ Յովանէս
Վայր՝ Վայոց ձոր, ի
վանս Թանասի

262ա *Փառք անբաւանդակելի և անսահման տէրութեան, որ է բնութիւն անհատնելի տ[ար]ածումն անփոփելի, նրբութիւն անարգելի, բաւանդակութիւն անծախելի, լիութիւն անթերանելի, անզուգակշիռ մեծի, անքանակ կերպի և անորակ նոյնութեան, երից անձանց և միոյ բնութեան ամենայզաւր շնորհաց Հաւր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենից։ Ի գերունակ և մշտայրուժ ծաւալմանէն, որոյ անչափելի լուսոյն [ճ]առագայթիւք և մերձակայ լուսոյն անըմբռնելի, թէպէտ իմանալիք և հոգեղէնք հաղորդին և զայս, որ արդիւնս է հասարակաց հաւանելիս, առաջի դնէ վայելչաբանիւս երկրագործն Գրիգորիոս Նարեկայ, որ զբանականն արտափայլեալ պտղաբերել ի մեզ, աստուածային տեսչութեանցն ժամանել, որ ըստ գոյութեանն ճշմարտապէս լոյս է։*

Ընթանալ և է եղելս, քանզի և առաքք ամենեքեան ըստ նմանութեան լուսոյ են պայծառացուցեալ յանձինս զլոյս պատուին, որ զծածուկս քննէ Աստուած և զիւրաքանչիւր զբնութեան զչափն ճանաչէ ետես զի !!! անձ[նու]եր(*) չանից մարդկան ի բնաւորական [գոյ]ից տիրելոց ոչ զերծանել, վասն այս[ո]րիկ ածել զնոսա յիմաստս գիտութեան ա[ռ]
262բ *մուտքն, [ը]ն[դ] երկինս [ե]լանէ...‖բնութեանն, նմանել ն[ա]հապետին իւ[ր] հաւատոյ և ամենայն հեթանոսացն [ա]յսո[ցիկ] մտաց ճա-*

* «Տէր Մխիթարն ի Չլն (1286) թըւին ասացեալ էր զիւր բանսն եւ Գրիգոր վարդապետն ի ՊԼԶ (1387) թվին հանդիպեցաւ նորա բանիցն»,—գրում է գրիչը, որն ընդօրինակել է Գրիգոր Ալաթեցու արտագրած գանձերը և այս հիշատակարանը (էջ 4բ)։ Ալաթեցին, որ 1387 թ. Այրիվանքում հանդիպել է Մխիթարի գրած Գանձարանին, գրում է. «ԻՆ (21) գանձ կայ Տէր Մխիթարայ Այրիվանեցոյն ի գիրքս, և այս Բ երգս նորկերտ դրոց և Պատկերաց սրբոց» և ընդօրինակում է այդ երկերը։

նապարհորդակից գտ[եա]լ զսրբազան պվէտիկոսն Գրիգորիոս [Ն]ա-
րիկեցի ոսկէգործ և մաքսուքեանս ճար[տ]արապետ, զի թեպէտ ետես
զկատարելութիւն իւրաքանչիւր մարդկան, ոչ այնու [ը]ղձ[իս տեն-
չանաց իւրոյ յագելոյց, [ա]յլ դարձեալ արկանէ զամենեսեան ի բովս
[ի]մաստիցն առ [ի] կրկին մաքրութեան մինչև [տ]եսցե զառա[ջ]ին
զարքունական տիպն [ա]նձինս ամե[նե]ցուն, առանց ազտոյ արտա-
փայլեալ, [ո]րպէս և այժմ մաքրեաց զ[Հ]ոգևոր տեսութիւնն աստուա-
ծասէր և բարեպաշտ և արքայուհի պարծանաց պարոնին [Թ]աճերին և
իմացեալ զհոգևոր դեղ կեն[ա]ցն որ ի սմայ, և ետ զսայ վերայդրել
լապտեր անշիջանելի, զի արկցէ զսայ [աստուած]ային երկնաւոր յա-
ռագաստն [հ]այրեն[եաց] և երկար կենդանութիւն և բարէխաւս [ա]ռ
Տէր՝ իւրն և պատուական գլխոյն իւրոյ աստուածազաւր իշխանաց իշ-
խանին Հասան[այ] որղոյն Պռոշայ, և հարազատ և [պարծան]աց նղ-
բաւր իւրոյ Պապաքին, և գեղ[եցիկ] և [բարե]պաշտ զաւակին էաչոյ:
263ա [Տէր երկար]ասցի յամերամս ժաման||[ակ]:

Գրեցաւ աստուածազարդ խոր[անս] ի գաւառիս Վայոց ձոր ի վանս
Թանատի ձեռամբ Յովանիսի ախմար և տգետ գրչի, ի վերադիտողու-
թեան Թորգոմեան սեռից տէառն Յակոբայ, և ի թագաւորութեանն Լե-
վոնի, և մերոյս գաւառի հայրապե[տ]ութեան տեառն Սարգսի գիտնա-
կանի և արդի[ւն]ական[ի], հեզի և անարատի, պատւիրանաց Տեառն
կատարողի: Եւ արդ, մանկունք ե[կ]եղեցոյ, որք հանդիպիք ճշմարիտ
գան[ձ]արանիս վերլու[ծ]անել կամ աւրինակել, որ խաւսի ընդ Աս-
տուծոյ, ամենեքեան առհասարակ սրտի մտաւք աւր[հնեց]էք զամե-
նաւ[ր]հ[ն]եալ պարոնայքն զԹաճերն և զՀասան, զՊապաքին և զէաչի,
ղի պահեսցէ զնոսայ Տէր արտաքոյ լինել ամենայն փորձանաց մինչև ի
խորին ծերութիւն, զի առատ[ն ի] տուրս ողորմութեան մեզ և ձեզ ողոր-
մեսցի:

Եւ արդ, ես զծառաեալս մեղաւք Յովանէս գրիչ, որ յաշխատութեամբ
կատարեցի զհրաման մարմնատր տեառց ըստ առաքելոյ, յիշել զիմ
ան|||զի և դուք յիշեսջիք առաջի աւետնին Քրիստոսի յաներեակ աւուրն,
ամէն և եղիցի, եղիցի:

Թվկ ՉԼԸ (1286)*:

Բ

3բ Քրիստոս աւգնէ պատրոն Թաճերին:

Գ

64ա Հոգևոր գանձս պատրոն Թաճերի, նայ Աստուած վայելել տացէ:

* Հիշատակարանը եղծված է և տեղ-տեղ մաշված: Հետագայում այլ քանաքով անցել են որոշ տառերի վրայով և երբեմն բառերը խեղաթյուրել: 1865 թ. հիշատակարանը կտուց անա-պատում ընդօրինակել է Ղ. Փիրղալեմյանը, երբ դեռ թվականը խաթարված չէր (Մատենադա-րան, ձեռ. № 6273 էջ 50ա—50բ) վերականգնում ենք ըստ այմմ: Ձեռագրում գրչության վայրը «վերականգնված» է «Թատեւոյ» ձևով, և Փիրղալեմյանը տեղը ընդունում է Տաթևը: Գ. Հով-սեփյանը այն վերականգնում է «Թանատի» ճիշտ ձևով, ելնելով այն բանից, որ Վայոց ձորում Տաթև չկա, իսկ վերջինս «Թատեւ» չի դրվում (Ղազրակյանը, էջ 77):

դ

153 *Քրիստոս Աստուած աւգնէ պատրոն Թաճերին և որդոյ էաչոյ:*

ե

166ա *Տէր Յիսուս Քրիստոս աւգնեա պարոն Թաճերիւն, որ ստացաւ ղհոգելից երգս Նարեկացւոյ Գրիգորի:*

զ

178բ *Աստուած վայելել տացէ ղհոգելից տառս պատրոնացն Թաճերիճ և էաչոյ:*

է

204ա *Աստուած վայելել տացէ զհոգեշահ աղաւթ[ար]անս պատրոն Թաճերին:*

ը

232բ *Ձերկար կեանք պահէ Աստուած զպատրոնայքն ղԹաճ[երն և էաչ]ոյ*:*

482

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 9229

4ա *[Գրեցաւ... ի հայրա]պետութ[իւն տեառն] Յակոբա, ի թա[գաւո-ր]ութիւն Լեոնի, յաշխարհակալութիւն և [յա]զթութիւն Աղդու իսանին, յայս նեղ և ի գառն ժամանակիս, որ հասել եկն ի վերայ մե[ր] վասն մեղաց մերոց, որ նախանձ կալեալ յաղագս քրիստոնէից և ըստ նախանձոյ նոցա եկն ազգն Նետողաց և գերեաց զաշ[խ]արհս ամենայն։*

483

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 9027, Փիրղալեմյան, Տետր, էջ 56

Գրիչ՝ Վահան
Վայր՝ Դրազարկ

Բայց գրեցաւ լուսազարդ Աւետարանս... մերս թիւ Ձկե (1286)։ Եւ գրեցաւ սա ի սուրբ ուխտս Դրազարկ կոչեցեալ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի, ձեռամբ անիմաստ գրչի Վաճանայ, ծովածուփ ալեկոծեալ մտօք և բազում աշխատութեամբ և չարչարանօք, շնորհօք և ձեռնըտուութեամբ Հոգւոյն գրեցի զսա և ի կատարումն ածի՝ յիշատակ կենդանի և ընտանեկան բարի հօրն իմոյ Ստեփաննոսի և մօրն իմոյ Ոսկե-

* Բոլոր հիշատակագրությունները գրված են ստորին լուսանցքներում, կարմիր թանաքով։

հատի, և ինձ յոգնամեղ գրչի Վահան անարժան քահանայի և եղբարց իմոց։

ՋԱւետարան գրեցի մեր՝ծախիւք և բազում աշխատութեամբ, կուտամ ի Սուրբ Կարապետն ու ի Սուրբ Աստուածածինն ու ի Սուրբ Թորոս, յիշատակ ինձ և ծնողաց իմոց, որ չունենա այլ ոք իշխանութիւն, որ հանէ զսա ի յայս վանացս, այլ կայցէ սա յիշատակ յաւիտեանս յաւիտենից։

484

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱԾՈՑ

Երևան 1135

Գրիչ՝ Սիմէոն

223բ ...Գրեցաւ Մեկնութիւն Արարածոցս ձեռամբ մեղսապարտի և անարժանի Սիմէոնի, յանապատիս, որ կոչի Սուրբ Սիոն, ի թվաբերութիւն Հայոց ՉԼԸ (1286)։ Գրեցաւ սա հրամանաւ երջանիկ անյաղթ վարդապետին, որ կոչի [Թու]մա, ի վայելումն անձին և յիշատակ հոգւո, և այս է կար մեր վասն գրոյս։ Որ զմեզ յիշէ յիշեսցի ինքն ի Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեան։

485

ԱԻԵՏԱՐԱՆ

Սյուրմնյան, Ցուցակ Հալէպի, Ա, էջ 55 (1259 թ.)

Յիշատակագիր՝ Կոստանդին

///* Ցոյս, եւ որ ոք յանդգնի և արասցէ բռնութիւնք, ընդ կապանաւք և ընդ պատժաւք եղիցի։ Այլ մնասցէ սեփհական սուրբ եկեղեցոյն, որպէս վերոյ ասացեալ եմք անշլուկնշ յամենայն կենդանոյ։ Եւ քահանայ, որ սպասաւոր լիցի սուրբ եկեղեցոյն, զգաստ կացցէ սուրբ Աւետարանիս՝ իբր Աստուծոյ պատգամաւորի, պահել յամենայն վնասակարաց։

Դարձեալ ես առաւել աղաչեմ զսուրբ քահանայդ, որ և լիցի սպասաւոր սուրբ տաճարիդ, զի յամենայն աւր էրևելի տաւնից տերունականաց լսելի արասցես ժողովրդեանդ զպաղատանաւք բանս մեր յիշատակաց, զի վասն այնր յուսոյ եղաւ սա ի սուրբ եկեղեցիդ։

Ընդ նմին և զիս զմեղուցեալ ծառայս զԿոսա[նդին], որ զսակաւ բանքս յիշատակ գրեցի՝ աղաչեմ յիշել։

Ի Թու[ին] ՉԼԸ (1286) եղաւ սա ի սուրբ եկեղեցին։

---

* Սկզբից թերթ է պակասում, այդ պատճառով անհայտ են մնում և նվիրողի և նվերն ստացող եկեղեցու անունները։

486

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԵՒԵԼՑԻՈՅ

Երևան 6273, Փիրղալեմյան, նշխարք, էջ 52ա, 52բ

Գրիչ՝ Գրիգոր Տաուշեցի
Վայր՝ Աւճէշ

Ահա Թովմայ վարդապետ անուն բարի*
Զքո խնդիրքս զուզելի
Կատարեցի ըստ իմում կարի;
Թեպէտ որ շատ յամեցուցի
Խիստ գովելի զինքս արարի,
Հենս որ ամէն մարդ հաւանի։
Արդ, գրեցաւ սա ի թուի՝
Ի Հայկազեան մեծ տոհմարի,
Յեօթն հարիւր և երեսնի
Վեցն այլ զհետ իւր աւելի (1287)։
Յիշխանութեանս Տաթարի
Աստուածադիր թագաւորի,
Ի ժամանակս Աղուն դանի
Քրիստոնէից յոյժ սիրելի։
Ի հայրապետութիւն Հայոց ազգի
Տէր Սահփանոս մեծ և անուանի։
Այլ ես Գրիգոր Տաուշեցի
Եւ աշխարհաւ Աղուանեցի,
Որ գրեցի զսա յԱւճէշ քաղաքի,
Ընդ հովանեաւ Սրբոյն Ստեփաննոսի։
Յոտք անկանիմ արտասուալի
Եւ աղաչեմ պաղատալի,
Զիս յիշել Տեառն առաջի,
Վասն սիրոյն Տէր Քրիստոսի։
Եւ զստացող այսմ տառի,

---

* Այս հիշատակարանը, որոշ կրճատումով ընդօրինակված է նաև Մատենադարանի № 6333 ձեռագրում (էջ 44բ), ուր ձեռագրի մասին ասված է. «Բորբոսնած, դեղնած և յատակէն փքած, գիրը տգեղ և դժվար ընթեռնելի, մեն մի երեսը 30 տողս։

ԶԹոմայ անուն բարի,
Եւ վարդապետ խիստ գովելի,
Նաև ղիւր ծնողքն ցանկալի,
Որով ծնան ժառանգ բարի։
Եւ զասացեալն րաբունի,
Արժանաւոր պատարագի,
Յիշմամբ յիշել ով հանդիպի
Եւ ասել՝ Տէր ողորմի,
Ամէն, ամէն, հազար հետի։

487

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6273, Փիրղալեմյան, Նշխարք, էջ 50բ-51ա

Գրիչ՝ Դաւիթ
վայր՝ Թեղենեաց անապատ

Յամի ՉԼՉ (1287) գրեցաւ սուրբ Աւետարանս ի յընտիր աւրինակէ, ի սուրբ անապատս Թեղենեաց, ձեռամբ մեղապարտ գրչի Դաւթի նուաստ բանի սպասաւորի, յիշատակ հոգւոյս ողորմելոյ և ի սփոփանս մարմնոյ ընթեռնելոյ։

Իսկ սատանայ խափան եղև բազմադիմի,
Զի զառաջին տառսն սքանչելի,
Նկարագրեալ Մոմիկ գրչի
Գեղաղէշ և պիտանի
Պիղծ հարամիք տարան գերի...
Իսկ որ ունէր զաշխարհս հայրենի,
Աւդուն ղան և մեզ բարի,
Քրիստոնէիցս սիրելի,
Եւ զաշխարհս արար ղահիւ իլի։
Եւ թագաւոր Հայոց երկրի՝
Լևոն որդի մեծ թագաւորի,
Որ և Հեթում յորջորջի։
Կաթողիկոս տէր Կոստանդին Խորենացին,
Որ յայսմ ամի յաթոռն սուրբ
Լուսաւորչին հաստատեցին։
Եւ աթոռոյս մեծ Բջնեցւոյ
Զտէր Յովհաննէս եպիսկոպոս ձեռնադրեցին,
Եւ ի նախնեաց վիճակ հրաւիրեցին։
Եկեղեցւոյս Սուրբ Թեղենեաց
Տէր, վերատեսուչ մեծ Գրիգոր,
Որ Բջնեցին էր բանաւոր
Եւ հանճարեղ, հռչակաւոր։

488

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 5247

Գրիչ

ա

240ա Փառք քառագիր ա՚նուան Սուրբ Երրորդութեան՝ Հայր, Որդի, Հոգի Սուրբ։

բ

Ստացող՝ Մխիթար
Վայր՝ [Մաճեա այր]

243ա Այսմ աստուածաշունչ երգոյս և [հո]գևոր գանձուցս, աստուածապատում սուրբ Աւետարանիս փափագող եղէ կրսերս յորդիս եկեղեցոյ
և յետինս ի կարգս կրաւնաւորաց Մխիթար անուն, որ անուամբ Թերևս միայնակեց, և ըստացա զսայ ի մխիթարութիւն բաղմավրդով կենաց
իմոց և ելք լուսազարդ շաւղացն, որ տանի առ Աստուած զամենայն
հոգի զհաւատով ապաւինողաց և զաւանողացս ըզսայ։ Արդ, երեսս անկեալ աղաչեմ զամենայն հանդիպեալսդ կենսատու սուրբ Աւետարանիս,
վասն սիրոյն Քրիստոսի յիշման արժանի արարէք զըստացողս զՄխիթար
քահանա, և զհայրն իմ զԽայչիկ, և ղհաւրեղբայրն իմ զԳրիգոր, և ղա-
243բ մենայն աղգաինս մեր, զկենդանիս և զննջեցեալսն։ Նայ և||[սրբաս]-
նեալ սուրբ ճգնաւորն զՅովան[է]ս միայնակեցն, որ զսուրբ Աւետարանս մեզ շնորհեաց, որ աւանդեցաք միաբան սիրով յանուն սուրբ տիրուհոյ Աստուածածնին, որոյ փառաւորութիւնն է յամուր անձաւին, որ է
յանդիման աստուածաբնակ տաճարիս Սրբոյն Գրիգորի Հայաստանեաց
Լուսաւորչի։ Այլև մի ոք իշխեսցէ հանել զսայ ի սուրբ մենաստանէն և
ի Սուրբ Տիրուհոյն, որչափ հնար լինի կելոյ միանձանց պարսպեալք
աւգնականութեամբ Սուրբ Աստուածածնին և իւր միածնին, է թէ ոչ
լինի, առ Սուրբ Գրիգորս կալցեն հաստատուն և անպակաս յիշման, և
յիշատակի արժանի արասցեն զվերագրեալսս ի սմայ. և ինքն որ աննախանձ պարգևատուն է Քրիստոս Աստուած զձեզ յիշէ յիւր յառատ պարգևսն, ամէն, ամէն*։

գ

244ա Աւետարանս այս աւետ[եաց],
Որ միախումբ ըզմեզ կոչեաց,
Զազգս մարդկան ի կենդանեաց,
Զոր ի Նախնումն մեզ ճառեաց,

---

* Սույն հիշատակարանները տպագրված են Ե. Լալայանի «Վասպուրականի Ցուցակում» (№ 206), ըստ որում գրչության տարեթիվը ՊԼՁ=1487 և տեղը Աղթամար է նշանակել։ Ինչպես տեսնում ենք, հիշատակարանները այդ չեն հուշում։ Ձեռագիրը նվիրվել է Մանե այրին։ Մոտավորապես այս շրջանում էլ ընդօրինակված պետք է լինի երկու տարբեր գրիչների ձեռքով, որոնց անունները անհայտ են։

Եւ ի Սահակ տպաւորեաց,
Զայն ի խաչին եւ կատարեաց,
Եւ զԶաքարիա* գերի փրկեաց։
Գրեցաւ ի թվին ՉԼՉ (1287)։

489

ԱԻԵՏԱՐԱՆ

Երուսաղեմ 1796 (ԺԲ. դ), Պողարյան, Ցուցակ Զ, էջ 149

Ստացող՝ Յովհաննէս [Եզնկացի]
Վայր՝ Եզնկա

Առաջնորդք սուրբ ուխտիս եւ սպասաւորք Սուրբ Լուսաւորչիս գերեզմանին, որ յետ մեր լինիք եւ տեսանէք զգեղեցիկ եւ զծաղկանկար Աւետարանս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, յիշեցէք զստացողք սորին, զի բարի եւ քրիստոսասէր քրիստոնեայ մի Կիր Վասիլ անուն, եկեալ ի քաքաղէն Մելտեճո յԵզնկայս՝ տամբ եւ զաւակաւք, եւ աստ վախճանեալ, փոխեցաւ ի Քրիստոս՝ յոյսն քրիստոնէից։

Իսկ ի թուիս ՉԼՉ (1287), ի տան վարդավառին եկին ի յուխտ ի Սուրբ Լուսաւորիչն բարեպաշտաւն կենակից նորա Մեծամիկին եւ երկեզազարդ որդի նորին Ապուլֆարամ այլ տղայաւքն, յորում էի ի ծառայութիւն Սուրբ Լուսաւորչիս նուաստ վարդապետս Յոհաննէս, եւ տուին զգեղեցկազարդ Աւետարանս ընծայք Սուրբ Լուսաւորչիս, յիշատակ հոգւոյ պարոն Կիր Վասլին, եւ փրկութիւն զաւակաց իւրոց։ Եւ ես վարդապետ Յոհաննէս եւ այլ միաբանքս տուաք ի տարին աւր մի պատարագ Կիր Վասլին, ի տանի սուրբ քառասնիցն, քանի պատարագող որ լինին յամեն եկեղեցիքն։

Արդ, որ գայք յետ մեր՝ անխափան կատարեցէք զյիշատակս զայս, եւ մնասցէ սա անջնջելի յիշատակ Կիր Վասլին, Մեծամիկնա, Ապուլֆարիմին, Նուսրաթ խաթունին, եւ Ամիրոցին։

Յիշեսջիք եւ զհարկեւոր քրիստոնեայն զՇահնշահ դերձակն յԵզնկեա, որ միշնորդ եղեւ բարեգործութեանս, որ եւ յետին գլուխ** Մեծծամիկնա, որո տացէ Քրիստոս վարձս բարեաց նմա, եւ ծնողաց իւրոց։

---

* Գրված է «զզաքր» ձևով։
** Նշանակում է երկրորդ ամուսին և վերաբերվում է դերձակ Շահնշահին։

490

ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԱՅԻՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՈՒԹԵԱՆՑ ԴԻՈՆԻՍԻՈՍԻ ԱՐԻՈՊԱԳԱՅԻՈՅ ԵԻ ԷԱԿԱՅ ԳԻՐՔ

Երուսաղեմ 1709, Պողարյան, Յուցակ Զ, էջ 17—18

Գրիչ՝ Վարդան Կիլիկեցի
Վայր՝ (Գլաձոր)

ա

681 Վերնահանդէս լոյսն իմաստութեան առատակազմն յաւրինէ ի լուսաւորեալս պէսպէս որակս, եւս առաւել ի հանդիսարկուք յատենականսն ընախաւսել. զի որք հողովն են ըստ Պաւղոսի՝ չարալծեալ ունին զամենայն, իսկ որք աշխատասէրք գոլով ի վերին աւգնականութենէն շարժեալ՝ պարզ դոլով տեսողակին գերամբարձ զաւրութեամբն։ Քանզի ներգործականքն առաքինութեամբն շարժեն զիսկական լոյսն առ ի յընդունումն լուսալիր մտաց, ի պատիւ եւ ի փառս Երրորդութեանն։ Յաւետ եւս շարժեալ զիմ սակարութիւնս ի սէր աստուածային մարգարանիս մեծին Դիոնէսիոսի։

Եւ թէ ոք վերաձայնէ թէ ղիա՞րդ կամ ո՞րպէս զմեծին Ստեփանոսի զմեկնիչն չէ աստ շարադրել, զի ոչ թէ խոտան գոլով, այլ կարի յոյժ գեղեցիկ իմաստաբար. եւ այսպէս ուսցիս զպատճառն. մին վասն տակաւութեան մարմնոյ ոչ շարադրեալ, եւ միւսն վասն աղքատութեանն, իսկ միւսն վասն ժամանակին անկարութեան։ [Աղա]չեմ ով ոք տիրեսցէ յետ մեր սիրով ընկալչիք, զի բազում են մեկնիչք՝ ով եւ կամի առցէ. զի առաւել սիրէի զսրբոցս վարդապետութիւնս, այսմ այսպէս գրեցաւ։

Աղաչեմ յիշել զմեզ ի բարին Քրիստոս՝ զՎարդան սպասաւոր բանի, հանդերձ ծնաւղաւքն մեր եւ եղբարբք, ընդ նմին եւ զուսուցիչն իմ զտէրն Յոճաննէս զԱրեւելեղբայր Հայոց Հեթմոյ, եւս եւ զվարժապետս իմ զԵսայի, որ զաւրինակն շնորհեաց, գրեսցի ի դպրութիւն կենաց. եւ որ մեզ հայցէ եւ ինքն գտցէ ի Քրիստոսէ։

Էր թիւն Հայոց ՉԽԷ (1288), ի թագաւորութեանն Հայոց Հեթմոյ բարեպաշտի եւ աստուածասիրի, այր ողորմածի եւ բարիվայելուչ թագաւորի։ Եւ ի հայրապետութեան Հայոց տեառն Գրիգորիսի երկրորդ վկայասիրի եւ գերակատար իմաստասիրի, այր առաքինւոյ, ուղիղ եւ ճշմարիտ դաւանողի զԵրրորդութիւնն։ Եւ ինքն Քրիստոս աւրհնեալ յաւիտեան, ամէն։

բ

641 Զվարդան սպասաւոր բանի յիշէք յաղաւթս, ո՛ սրբամիտ վերծանողք։

գ

729 Կատարեցաւ էակաց Գիր եւ Դիոնէսիոսն ի մի կազմ, ձեռամբ Վարդանա Կիլիկեցո, յիշել յաղաւթս աղաչեմ։

491

ԺՈՂՈՎԱԾՈ

Երևան 470

Գրիչ՝ Վարդան Կիլիկեցի
Վայր՝ [Գլաձոր]

ա

115ր Զարիականն գերահանդէս և զներածմունք բնաւին յընթացս ի վերնկառոյց իմաստութեանն զծագաւղ բանին երկիղածաց զվարժապետն իմ [Սսայի] ստացաւղ համայն աստուածագիր վեպասիս, ծիրանափայլ հոդո վառմամբ յիմանալիսն կրող հաւրն լուսո, զաւր ըստ աւրէն հաց իմաստութեան յարքայականն սեղան ընդ բանին միացեալ, յիշեցէք արթուն ակամբ յաղաւթս, ո՛վ սիրալիրք վերծանողք բոլոր ազգապարն ննջեցելովք, առ որո և դուք ընկալջիք, զի յոմանց մաքրագունից սրտից, յայլ ոմանց վերաբաշխել յողորմածէն զթողութիւն։ Եւ զիմն տեառն Յո-
116ա հաննէս||զեզրայր արքային Հայոց Հեթմո, և զտարակացեալ գրիչս Վարդան Կիլիկեցի իմովքն, և որ յիշէ առաջի կենեղուտ պատարագաց՝ ի սպառուած գրոյս յորժամ բոլորաջահիք՝ աւգտութեամբ իրենիազն իմաստէս՝ և դուք ի համայնն ընկալջիք ի բառացի Տեառնէն, ամէն։

բ

213ա Զենթադիր արտակերտեալս ի վիս սալեն ի Գրիգորէ Նիւսեա արտաշարեալ զտիպն տերունեան ընդ երբեակն հանգէրեալով դրախտ իմանալի և զսգալի՝ յոգնազան դատողաց, հրամանաւ իմոյ վարժապետիս Եսայեա շարազան պարեցի զգերարուն դրախտս պէսպէսորակ պտղովք՝ ի զմայլուսն իմաստից՝ ճմլեալ ի խոհեմական իմաստս բանասիրաց լուսափայլ դիտողութեամբ յիսկականն լոյս՝ յորմէ ճաշակ և ճաշակաւղ վերաբերիլ յիմանալի ստեղունսն ի փառս միակին, զվերոասացեալ բարունիս մեր Իսայի հանդերձ ծնողաւք և ազգայնաւք անմոռաց մաղթել զիսկն բան, յորմէ թողութիւնն վեր յաւելու աստ և ի հանդերձեալն, ո և
213ր զիմն տեառն Յոհաննես արեայ||եղբայր հայոց Հեթմո՝ յիշել առաջի կենեղուտ պատարագին, այլև զիմս անարժան թախիծ մակածու գրչութեան զՎարդան Կիլիկեցի՝ համայն ծնողաւք մեր և եղբայրք, հայցել ի Քրիստոսէ զթողութիւն մեղաց, և որ մեզ հայցէ և ինքն գտցէ և Քրիստոսի փառք ի սփիւռս բնաւից ամէն։

գ

133ա Զմարդացեալն մարդութեամբն՝ յորմէ մարդն՝ ընդ աւծելումն, որ է գէրն հանգէտ էզոջն, զիմաստս ընդ ելապար իմաստին՝ զիմս Սսայի ելա ելում, որ է դաստիարակ բանին Յիսուսի, յիշեցէք և քերականելով յաղաւթս և զիս զՎարդան։

պ

87բ Ջսնուցիլ և զուսուցիչն իմ զտեառն Յոճաննէս զեղբայր արքային հայոց Հեթմո յիշեցէք ի Տէր և Աստուած ձեզ յիշէ՞։

ե

151բ Ո վատթար ենթայի, որ ցագանէ զսեւագեղս։

գ

157ա ‹Վա է արբեցողին, որ իբր զստուղապ սուտ իմաստակաց շրջագա[յէ]։

է

185բ Ջմարդս մարդութեամբն, գենթայս ի գերակայսն, զմակագիրս ի քաղութեանն արժանանալ հայցմամբ։

492

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 197

Նորոգող՝ Վասիլ
Վայր՝ Ֆռնուզ

ա

849 Գրեալ սուրբ Աւետարանս ձեռամբ Ոհաննէս եպիսկոպոսի, ի քաղաւորութեանն** Հայոց Հեթմոյ, ի սուրբ ուխտն Անգեր կոչեցեալ, ուր յոլով ամաւք նախ նոցին միաբան էր գրեալ և յոլով արդիւնք անդ արարեալ։ Ի թուականին Հայոց ի ՉԼՁ (1287), ի մարտի ամսոյ ի ԺԳ (13), ի Սուրբ Քառասնորդացն պահս։

---

* Ձեռագրում կան այսպիսի ծածկագրություններ, որոնք չեն վերծանվում. 116ա ժ. ծ. շ. խ։ Ա. ս. տ. ր։ հ։ ձ։

95բ ս։ ի. ա։ ե։ ա։ վ։ ր։ գ։ (տառերի տեղափոխությա՞մբ գնսաի վարգ»)

85ա ա, ժ, մ, չ, պ, յ, ս, հշ, ր, ո, բ, ե, ն, մ, կ, էէ։

** Գլխավոր հիշատակարանը չկա, գրչից մնացել են ցածր բերված հիշատակագրությունները։ 1590 թ. Ֆռունզի Մարտիրոս եպիսկոպոսը Ավետարանը հանձնում է Վասիլ արեղային նորոգելու։ Խոնավությունից ձեռագիրը փտեալ, եղծեալ, ապականեալ էր, ուստի ժլերստին ուսլայեցաք և գրեցաք» հավաստում է գրիչը։ Հիրավի, Վասիլը վարպետորեն գրելով անցնում է բոլոր տառերի վրայով, շատ ունշչան բացառությամբ, և միջամտում նույնիսկ նկարների, հատկապես խորաններիր, գույներին։ Փքած լինելու պատճառով Վասիլ գրիչը հիշատակարանը չի բերում, այլ վերապատմում է, և սխալ է թուլլ տալիս։ «Ի թգրութենն» (ի թագաւորութեանն) բառը այդտեղ չէր կարող լինել, որովհետև 1287 թ. թագավորը Լևոն էր և ոչ Հեթումը։ Բացի դրանից, Հովհաննես արքեպիսկոպոսը միշտ հիշվում էր «Յովհաննէս արքեպիսկոպոս (կամ՝ եպիսկոպոս) առքաեղբայրս» մականունով։ Այստեղ պետք է կարդալ «Գրեալ սուրբ Աւետարանս ձեռամբ Ոհաննէս եպիսկոպոսի, առքաեղբօր Հայոց Հեթմոյ...» և թյուրիմացությունը կվերանա։

Բ

Կիսոյն գրող և ստացող՝
Յոհաննէս արքաեղբայր
Վայր՝ Ակներ

102ա Գերակատար գլխոյն մաքուր անդամք, բարի և քաջ հովուին անմեղ գառինք, հայրատունկ որթ[ո]յն ուռք պտղեղք, այս աստուածատունկ դրախտի վայելողք և ժառանգողք հարք սուրբք և [եղ]բարք ի Քրիստոս և որդեակք, գրողս սորա և աշխատողս Յոհաննէս եպիսկոպոս, ծնողաւք և ընտանեաւք մեր, և համայն Քրիստոսի երկրպագողաւք յիշեալ լիցուք ի ձենջ ի բարի, և դուք ևս։

Գ

103բ Եղկելի ոգիս Յոհաննէս եպիսկոպոս արքաեղբայր՝ այսմ գրող, ծնաւղաւք մեր կրկին, և ընտանեաւք, և ամենայն ի սա աշխատողաւք յիշեալ լիցուք ի բարին Քրիստոս, ի վայելողացդ զսա, և զձեզ ի բարին յիշեսցէ Քրիստոս Աստուած մեաւք, ամէն։

Դ

162բ Բազմաբիծ բծկանս Յովհանէս /// ին Քրիստոս լիցուք յիշե ///

Ե

348բ Երջանիկ անձանցդ [տ]աննասիրաց և աստուածասիրաց պաղատիմ հողս դատապարտ ծառայակիցս Յոհաննէս եպիսկոպոս արքաեղբայր ստացող սորա և կիսոյն գրող* յիշել ի Քրիստոս մեծի լ[ու]սափայլ տաւնիս զիս, և ծնաւղսն իմ, և զեղբարսն, և զքոյրսն համայն՝ նոցին ծնընդաւք, և զարմիւք, հանգիստ և փրկութիւն և ողորմութիւն ի Քրիստոսէ գտանել համայն ի Քրիստոս հաւատացելոյք այժմ և յապագայն, ևս և զի մեզ, աշխատողսն կրկին։ Եւ որ առատն է ի տուրս բարեաց Աստուածն իմ Յիսուս Քրիստոս զնախեղեալսն և զկնի եկեալսդ մեաւք ևս և զմեղ յիշողաւքդ ի փառս իւր ընկալցի հայցմամբ սրբոյս, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

---

* Ձեռագրում «գրող» բառը տողադարձ է արված՝ «գր-ող»։ Բառի մեջ հետագայում ր-ից հետո ավելացրել են «ո», իսկ ող-ից առաջ «գ» տառերը։ Քերել են «գրող» բառի գ տառի ներքևի մասը՝ դարձրել «ո» և միացնելով «կիսոյն» բառի վերջին ն-ի հետ ստացել են «կիսոյ նորոդող»։ Այնինչ Հովհաննես արքաեղբայրը իսկապես կեսն է գրել, իսկ սկիզբը, խորանները, կիսախորանները, զարդագրերը և լուսանցազարդերը՝ այլ գրչի գործ են։ Մի երրորդի գործ են տերունական և ավետարանիչների նկարները, իսկ նախադրույթյունները և ցանկերը Հովհաննես արքաեղբայրն է գրել՝ և տերունական նկարների հետ մուծել ձեռագրի մեջ։

493

ՏԱՂԱՐԱՆ

Երևան, Պատարիկ 909

Ի ժամանակս արքային արքայից Հայոց Մեծաց Լևոնի բարեպաշտի և քրիստոսասիրի, և ի թվաբերութեան Հայոց տումարի ՉԼԶ (1287) յանկ ելեալ աւարտեցաւ տառս այս հոգիաշունչ, որ ունի ղծ[ա]ղիկս զանազանս կենդա[նա]րար, հաւաքեալ ըս[տ] սարասի աղին դրախտին, պահողացն և պատուղացն զսա կեանս անմահականս, արհամարհողացն մահ յաւիտենական։ Որոյ ցանկացեալ եղև մեծափափաք ըղձականութեամբ որպէս միեղջերու՝ յաղբիւրս ջուրց, խոհեմ յամենայնի և իմաստուն՝ ըստ Սողոմոնի, քաջ և արին՝ ըստ Դէդեոնի, արքայազունն պարոն Աւշին, որդի Աւշնի՝ արքաղեբաւրն Հեթմոյ, և հաւրեղբարն Լևոնի արքայի, և ըստ մայրենի ծննդեան՝ դստեր մեծի, քաջի և իմաստնոյ աստուածակրողի Զալալին Հայոց Մեծաց պարոնին, ի զարմէ Լուսաւորչին Սրբոյն Գրիգորի։

Եւ արդ, աստուածասէր և բարեսէր պարոն Աւշինս այս՝ տէր Կանշոյ, ժողովեաց զյոգնիմաստ տառքս տաղից. ներբողինից, քաջոլորակաց ըստ Հոմերի չափոց և ոչ ըստ աշխարհի, այլ աստուածային և երկնային, ի վայելումն անձին և ի յիշատակ հոգւոյ իւր և նախնեացն իւր, որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի և ամենեցունց զարմից նոցին կենդանեացն և հանգուցելոցն, և ի գալըստեան միածնի Որգւոյն Աստուծոյ ի վերջին աւր կենցաղոյս, և յառաջին աւր յաւիտենականին անմահ աշխարհին, ընդ սրբոց առաքելոցն մարգարէից և մարտիրոսացն, պսակեցին անթառամելի պսակաւք ժառանգակից լինել Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ աւրհնեալն է ընդ Հաւր և Սուրբ Հոգւոյն յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից, ամէն, ամէն։

494

ԱՌԱԿՔ ՍՈՂՈՄՈՆԻ

Երևան 6333, Բարղամյան, 3ուցակ, էջ 30ա—30բ

Գրիչ՝ Թորոս
Վայր՝ Սիս

Փառք Հաւրն անհասի, Որդոյն միածնի և Հոգւոյն ճշմարտի, ամէն։

Ի թուականիս Հայոց Մեծաց ՉԼԶ (1287) յամսեանն մարտի ե (5), աւարտեցաւ Գիր Առակաց Սողոմովնի աստուածայնոյ, ձեռամբ նուաստ քահանայի Թորոսի, ի վայելումն րաբունւոյն Սարգսի, որ մականուն Շալուէ կոչի, և զԳրիգոր սարկաւագի, յաւրինակէ տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի։

Արդ, գրեցաւ սա ի ժամանակի բարեպաշտ թագաւորին Հայոց Լևոնի, և ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ, ի մայրաքաղաքս Սիս, ընդ հովանեաւ Սրբոյն Թեոդորոսի, որ մականուն Առիւծանով կոչի։ Արդ,

աղաչեմ ղամենիսեան, որք կուրդայք կամ աւրինակէք կամ գաղափարէք, յիշեցէք զսրբազան Վարդան և զԳրիգոր սարկաւագն, որք փափաք[ողք] եղէն այսմ աստուածայնոյս Սողոմովնի իմաստութեան: Եւս առաւել աղաչեմ զձեզ ղամենիսեան ղորդիս Սիոնի, վասն սիրոյն Աստուծոյ թողութիւն մեղաց հայցել /// վերո դրելոցս ///

495

ԱՎԵՏԱՐԱՆ

Երևան 6345

Գրիչ՝ Խաչատուր
Վայր՝ Կիպրոս կղզի

ա

Փառք ի սկզբանն և անսկզբանն, և որ ընդ սկզբանն, երրեակ միութեանն, և եռսնձնեան միակամ երրորդութեանն, մի տէրութիւն, մի զաւրութիւն, մի իշխանութիւն, մի փառք և մի պատիւ համայդո երրորդութեանն, յաւիտեանս, ամէն:

Որ արժանի արար զանարժան և զյետին կրաւնաւորս, որ անոսամբ միայն և դործովը յետս կացեալ ամենայն բարեաց, հասանել ի վերջ գծիս:

280ա Արդ, շնորհիւն Աստուծոյ սկսա և ոգորմութեամբ նորին կատարեցի զառաքելադիր սուրբ Աւետարանս, ի սրայծառութիւն եկեղեցոյ և ի լուսաւորութիւն մանգանց առագաստի Նոր Սիովնի, և ի հանգիստ համաւրէն ննջեցելոց:

Արդ, դրեցաւ սա ի թուականութեանս Հայոց յամի ՉՃ-երրորդի և Լ-երրորդի Չ-երրորդի (1287), ի թագաւորութիւն Հայոց Լեռնի, և ի կաթողիկոսութիւն տեառն Կոստանդեա: Արդ, շարադրեցաւ սա ի կղզիս, որ կոչի Կիպրաւս, ընդ հովանեաւ Սուրբ Վառվառա և սուրբ զաւրաւարին Սարգսի: Արդ, գրեցաւ ձեռամբ մեղապարտ և անարժան և մականուն կրաւնաւորի, ի խնդրո սրբասէր և պատուական քահանայի Աբրահամա, զոր ստացաւ ղսա յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց, զոր ետ գրել զսա ի հալալ արդեանց, վասն սննդեան տեղո իւրոյ*:

280բ Ո՛վ մանկունք Նոր Սիովնի, որք լուսաւորիք ի սմանէ, կամ գաղափարէք, յիշեսջիք զԱբրահամ||քահանա, և զհայր իւր զՄահակ և զմայր իւր, և զեղբարս, և զքոյր, և զամենայն ազգատոհմն իւր, և զվարդապետն իւր զՍարգիս, և զիրսն ամենայն:

Յիշեսջիք և զԽաչատուր քահանայ, որ գծեաց զսա: Յիշեսջիք զպարոն Վասակ, որո ընգալեալ զլուծ խոնարհութեան, զի և մեզ խրատատու եղև: Նաև զՄխիթիար միակեց, զի և սպասաւոր էր մեր: Յիշեսջիք և զտիկին Ալիծե, որ զաւրինակն շնորհեաց: Յիշեսջիք և որ այլ ոք ի սմա տրաք աւգնեաց վասն կատարման սորա: Յիշեսջիք և ասաս-

* Մի տող չնչված է:

չիք երանի ում թողու և Քրիստոս որդի, և որք յիշէք, յիշել լիշիք յանհիշաչար Տէառնէ։

Արդ, աղաչեմ, զի ամ ի յամի ընթեռնուք զյիշատակ սորա, յաւուր մեծի պենդէկոստէին, և մի անփոյթ առնէք, զի թերևս ողորմութիւն գտցուք ասելով զՔրիստոս որդին։ Եւ մի ոք իշխեսցէ հանել զսա ի տեղոչէդ յայսմանէ, զի մի ելցէ ինք յարքայութենէն Աստուծոյ։

Արդ, աղաչեմ զամենեսեան, զի անմեղադիր լինիք խոշոր[ութեան] ///

Բ

87բ Քրիստոս Աստուած մեր, զՍաճակ*///

496

ԺՈՂՈՎԱԾՈ

Տիսերան, 8ուրակ Հռոմի, էջ 221

Գրիչ՝ Ստեփաննոս

ա

Հրամանաւ թագազարմ իշխանին իշխանաց՝ բարեպաշտին և աստուածասիրին Հեթմո տեառն Կուրիկոսի, շինեցաւ և գրեցաւ Ամսամտիկս այս ձեռամբ Ստեփաննոսի նըւաստ քահանայի, ի ժամանակս հայրապետին Հայոց տեառն Կոստանդեա, եւ ի թագաւորութեանն Հայոց բարեպաշտին և աստուածասիրին Լէօնի, ի թուականիս Հայոց ՉՀԶ (1287)-ն, եւ ի փոքր թուին, ի յընդիքտիոնին Հոռոմոց ի ԺԵ (15)-ն, եւ ի մեծ թուին Հոռոմոց ՉՂԵ (795)-ն։ Եւ է յայսմ ամի արեգականն շրջանն ԺԹ (19), եւ լուսնին շրջան ԺԲ (12)։

Արդ, աղաչեմ զամէնեսեան, խնդրեցէք յԱստուծոյ, զի զվերասացեալ տեարդ-մեր՝ պահեսցէ խաղաղութեամբ և առողջութեամբ, և ուղիղ վերակացութեամբ երկայն ժամանակօք։ Ընդ նոսին և դիս դաշխատողս ի սմա։

Բ

Գրիչ՝ Ռօբեն

Ձմեղաւք դատապարտեալս, զՌօբեն գրիչս աղաչեմ յիշել ի Տէր։

---

* Մյուս մասը լվացված է։

497

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՈՅՆ ԱՌԱՔԵԼՈՅ ՅՈՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

Երևան 1316

Գրիչ՝ Կարապետ
Վայր՝ Յոհաննավանք

ա

403ա Փառք ամենասուրբ Երրորդութեանն յաւիտենս յաւիտենից, ամէն։ Աստանաւր յանկ ելեալ աւարտեցաւ առաքելական մատեանս, զոր սուրբն Ղուկաս գրեաց զքաղաքաւարոսթեան և զվարս և զսքանչելագործութիւն և զմահ սուրբ առաքելոցն, և ետ ի լուր և ի պայծառութիւն և ի փառս և ի պարծանս ամենայն հաւատացելոց Քրիստոսի։ Զոր սուրբ հայրապետս Յոհաննէ Ոսկեբերան հանդիսացեալ վարդապետութեամբ և
403բ առեալ||զգործ սուրբ առաքելոցն մեկնութիւն արարեալ, և դժուարինսն ի լոյս և ի յայտ արարեալ էած, և ետ ամենայն մանկանց եկեղեցւոյ, ի զարդարումն և ի պայծառութիւն, և ի բժշկութիւն հոգւոյ և մարմնոյ ամենայն ախտելոց, և ամենայն հիւանդացելոց հոգւով և մարմնով, զի որ լսէ ունկնդրութեամբ և առնէ զբան տուրբ հայրապետիս, ոչ միայն հոգին բժշկի, այլ և մարմինն ու հոգին, և ժառանգէ զպատիւ և զփառս սուրբ Առաքելոցն, և այլ վերագոյն ևս առնուլ փառաւք։

Արդ, ոչ եթէ զմեկնութիւն միայն գրեաց սա, այլ և յորդորակաւք և նախերգութեամբ և խրատաւք ղարդարեաց, և ետ քրիստոնէից ի լսել և յառնել և յագտել։ Որ և տէր Համազասպ մեծապատիւ և առաքելաշնորհ արհիեպիսկոպոս, վերադիտող տանս Այրարատու և մեծ մենաստանի վանից Յոհաննու, ցանկացող եղել այսմ աստուածային մատենագիրս, և ետ գրել զսա ի հալալ արդեանց, ի վայելումն յերկար կենդանութեան իւր, և բարի գնացելոց առ Քրիստոս հանգիստ և ողորմութիւն յերկնից արքայութեանն։

Արդ, ով որդիք լուսոյ, որ փափագէք կենդանի ջրոյն և լնուլք զփափագ տենչման ձեր ի սուրբ կտակէս, յիշման բարոյ արժանի արարէք զպատուեալն յԱստուծոյ և մարդկանէ զտէր Համազասպ և զամենայն ընտանիս իւր, զազգայինսն Մամիկոնեան՝ զմիջինսն և զվերջինսն և
404բ զառաջինսն, և զարէն մեր||ձաւրոսն, զկենդանիս և զգնացեալսն առ Քրիստոս, կենդանեացն բարի և երկար ժամանակ, և բարի գնացելոցն յարութիւն կենաց ի Տեառնէ Յիսուսէ Աստուծոյ մերոյ։

Ու ես իսկ տրուպ և փցուն գրիչս, ծառայ Աստուծոյ Կարապետս

խնդրել ի ձէնջ, խնդրել ի Տեառնէ Թողութիւն յանցանաց ինձ և իմոց ամէնեցուն, և Տէր Յիսուս առատ պարգեւաւք լցուսցէ զամենեսեան և նմա փառք ընդ Հաւր և ընդ ամենասուրբ Հոգւոյն այժմ և միշտ, յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Արդ, աղերսանաւք աղաչեմ և խնդրեմ ի ձէնջ ղլաւն և զբարին և զհաճոյն Աստուծոյ և մարդկան՝ զՍարգիս քահանայ, և զեղբարն իւր ղսիրեցեալ զԽափլան, և ձեռնասուն աշակերտն ղԳաւգի յիշման արժանի արարէք, և գնացեալոց առ Քրիստոս՝ հանգիստ և ողորմութիւն խնդրեցէք Աստուծոյ, զոր և վասն մեր խիստ էր ցաւակից ի գրոցս գրելս։ Իսկ մեք հոգւով և մարմնով հանգաք ընդ հովանեաւ սմայ։ Քրիստոս, որ առատ է ի տուրս բարեաց, հատուսցէ ընդ միոյ հազարապատիկ աստ և ի հանդերձումն գնացելոցն յարութիւն կենաց և կենդանեացն երկար ժամանակ։

Ընդ նմին և զՎարդան վարդապետն, որ և բազում լուսաւորութեան բանիւ խրատէր հանապազ, և զհոգեւոր եղբայրն մեր զՅովաննէս յիշման արժանի արարէք, զի մեղ և ձեզ և ամենեցուն առհասարակ ողորմեսցի գթածն Աստուած յարն։ կարեաց, ուր սնոտի բանքն սպառին և բարի գործքն թագաւորեն։

Արդ, դծագրեցաւ սա ի նոյն վանս Յոհաննու Սրբոյ Կարապետիս և մաւր լուսոյ Սրբոյ Կաթողիկէիս, հրամանաւ և արդեամբք տէր Համազասպայ, ի թվաբերութեանս Հայոց ՉԼԷ (1288)։ Մի ոք իշխեսցի հեռացուցանել զսա ի դրանէ Սուրբ Կարապետիս, զի մի ինքն լիցի հեռացեալ ի կենացն։ Քրիստոս Աստուած մեր, որ դու ղաւրութիւն տկարաց, ընդ Հաւր և ընդ ամենայն Սուրբ Հոգւոյն, փառք այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից, ամէն, այո, եղիցի, եղիցի։

Ձխաչատուր զաշակերտս մեր յիշեցէք ի Տէր։

Բ

39բ *Զաստուածայպատիւ և ղառաքելայշնորհ տէր Համազասպ և զանդրանիկ որդին անդր մաւրն Սիոնի յիշեցէք առ աւրհնեալն Աստուած, և նմ[ա] պատիւ յաւիտեանս։*

Գ

46բ *Քրիստոս Աստուած, տուր զսէր և զխաղաղութիւն ի սիրտս լսաւղացս, եւ սոցա աղաւթիւք և բարեխաւսութեամբ ամենայն սրբոց ողորմեա գրողի գրոցս, տէր Համազասպ, եւ իւր ծնողացն, ամէն։*

Դ

113ա *Զստացող սուրբ տառիս ղարհեպիսկոպոսն զտէր Համազասպ և զամենայն ազգայինսն յիշեացիք, ո՛վ սուրբ մանկունք, ընդ նմին և զիս զգծողս, և Աստուած զձեզ յիշէ։*

Ե

121ա *Զգծողս և զամենաւրհնեալ զեղբայրն մեր Սարգիս յիշեսջիք յաղաւթս։ Աստուած, որ առատ է ի տուրս բարեաց, զձեզ յիշէ, ամէն։*

գ

128ա Ջկարապետ գծողս յիշեսջիք և Աստուած ղձեզ յիշէ։

է

201բ Քրիստոս Աստուած ողորմեա Շնաւոր տիկնա քո սուրբ առաքելոցն բարեխաւսութեամբ, և ինձ ողորմելի գրչիս, ամէն։

ը

214ա Արդ, աղերսանաւք աղաչեմ զձեզ, ո՛վ սուրբ քահանայքդ, մխալ ողորմաիւ զփոխեցեալն առ Քրիստոս զեղբաւր զաւակն իմ՝ զՇնաւոր տիկինն, ղի տառաժամ էլ աշխարհէս, և էքող սուգ մեծ ծնաւղաց իւրոց, և ղիս՝ ղգծողս զողորմելիս; Ձեղկելիս յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ղձէղ յիշէ։

բ

251բ ՋՇնաւոր տիկինն, որ տղայ հասակաւ ել յաշխարհէս... յաղաւթս ձեր յիշեսջիք...

ժ

69բ Յայսմ աւուր տաւն է քառասնիցն, որք ի Սեբաստիա կատարեցան, և են բարեխաւս վասն մեր։

ժա

381ա Ողորմեսցի մարդասէր Աստուած և գթասցէ ի հոգիս գնացելոցն ի Քրիստոս և զաւթևան նոցա քաղցր արասցէ, և սուրբ առաքելոցն մատնակից լիցի, որ աւգնական եղև մեզ ի գրոց գրելս Սարգիս և պահեսցէ հաստատ մինչև ի խորին ծերութեան անխարդախ, և զպատանի եղբարն, որ հեռւոր գնաց ի ճանապարհ, բերէ Քրիստոս բարով, ամէն։

ժբ

396ա Տէր աստուած Յիսուս Քրիստոս, որդի Աստուծոյ, որ արարէր զքո զանարժանս հասանել ի վերջս, արայ և զմեզ արժանի ընդ արթուց քոց առաքելոց, որք արժանի եղեն որ սիրեցին զքեզ։ Եւ մեր ննջեցեալացն առաջնոցն և միջնոցն և վերջնոցն արայ տեղ ի քում արքայութեանդ, և քեղ փառք յաւիտեանս, ամէն։

Եւ ընդ նմին յիշեայ զպատանի եղբայրորդեակն իմ զՈւմեկ, որ ի Աստուծոյ և մարդկան հաճոյ։

ժգ

186ա Ջհոգևոր եղբայրն մեր Գրիգոր, որ ի նեղել ժամս երեկ և զվաղտահաս ծիրանն էբեր, յաղաւթս յիշեցէք ի Քրիստոս, և Աստուած զձեզ յիշէ, ամէն։

ժդ

304ա Ջհոգևոր եղբարն մեր զՄխիթար, որ երեկ և ի նեղել ժամու մխիթարեաց, յիշեցէք ի Քրիստոս։

ժե

Սրբագրող

22ա Այս որ անգիր է, յաւրինակէն պակաս էր։ Թէ այլ աւրինակ գտանես, որ ի Լիմն կենա, զպակասդ դրեայ և զմեզ յիշեա յաղաւթս*։

ժզ

Կազմող՝ Մխիթար

104բ Քրիստոս Աստուած ողորմեա Յոհաննէ կազմողի և Մխիթարայ վարդապետի, ամէն։

498

ԱՎԵՏԱՐԱՆ

Երևան 4810

Գրիչ՝ Սարգիս
Վայր՝ Առեղս գիւղ

ա

252բ Փառք եռանձնեաւ, աննեզարուն, համակերտող, անշարժ, մշտաշարժ, յավէտաշարժ, անակ էին, անհոսանուտ կաին, անպար արփոյն, անկըցորդ պետականին, աննկէտ ամակաւորին, ինքնաբաւ փառացն, յոքնարի զաւրութեանն, բիւրաճաճանչ լուսոյ, անբաւ մարդասիրի, անկարաւտ հղաւրի, աննուազ բարերարի, Սուրբ Երրորդութեանն և միասնական աստուածութեանն, այժմ և միշտ, յաւիտեանս յաւիտէնից, ամէն։

253ա [Աստ]անաւր յանգ եղեալ [ա]ւա[րտ]եցաւ սուրբ աւետարքեր [քա]ռակմամբ և քառանիւթ և քառագիր Աւետարանս չորս եղեմարուի վտակաւքս արբուցեալ և հաստատուն պահեալ զեկեղեցի սուրբ ոսկեհանկար քանտուածով առաւել քան զլուսատեսիլն բիւրեղ, սեղան ամենալի յոքնախորտիկ և աղբիւր անսպառ և ուրախարար, սեղան ոչ ունայնութեան, որ ծորելով լրութեան կարաւտանա, այլ յանծայրածաւալ սեղանոյն, զոր Տէրն հրամայեաց ուտել, և ոչ ճաշակել զմահ։

Իսկ ի յայսմ սեղանոյ ճաշակեցաք մեք, Յոհաննէս քահանայս և Յովաննէս, Աւետս և Մուսիկս, Վարդանս և Սահակս, Աբրահամս և Դաւիթս, և Յակոբս, Մարգարիտս և Թագուհիս, և որդեակս իմ Ստեփաննոս, և եղբայրքն իմ Թաւրոս և Սարգիս։ Յանկացողք եղեալ մեր այսմ կենսակիր և աստուածական սեղանոյս, որ և գովի ի շինուած արարչին ի վերա հիմանն Յիսուսի, կարկեհան ակամբ րնդ արծաթոյ և ելիտական ոսկոյ, զի սա [է] ժառանգ լուսաճաճանչ և հրաշալի ուրախութիւն երկնաւորաց և երկրաւորաց, վասնզի հոգևոր ծնունդն, որ յաւազանէն, և զպատուական անուն, որ է կոչումն յորդեգրութիւն Հաւրն երկնաւորի յաւծումն քահանայութեան և զպատարագիչս անմահ գառինն Աստուծոյ,

253ա զենեալ։ Միշտ և կենդանի ի հաշտութիւն Հաւր և ի բառնալ զմեղս աշխարհի, գի սա է կեանք մեր և փրկութիւն, զի աստի ո[ւ]նիմք զակն լուսափայլ և զմարգարիտս գեղեցկատեսիլ, որ զինչ և ունիմք՝ վաճառեմք

* Երված է չգրված սյունակի տողերին մասամ՝ շղագրով և սրբագրության թանաքով։

և դնեմք զայս մարգարիտ, զի սովիմք հոգով հոգիանամք, և սմին անճառ և աստուածային լուսով լուսաւ[ո]րիմք ի խավարէ և յանաստուածութենէ, սորին զաւրութեամբն զաւրանամ[ք] և լինիմք յաղթ[ող]ք հակառակամարտին ի պատերազմունս։ Եւ սա է խորտակիչ անբարի բարուցն Բելիարայ, յորմէ փրկեսցէ Քրիստոս Աստուած մեր զհաւատացեալս<ա>նն իւրոյ։

253բ *Արդ, ես՝ Յոհաննէս էրէցս, ետացայ զսուրբ Աւետարանս և զկենար[ար վար]դապետութիւնս ան /// նին և բազկացն, /// ութեանց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, [յիշա]տակ ինձ և ծնողաց ի[մոց և] ամենայն ազգատոհմից մերո[յ ի կ]ենդանեաց և մեռելոց, և ի վայելումն զաւակի իմոյ Ստեփաննոսի ըստ այնմ [թէ] Պատուաիրանք Տեառն լուսաւ են և լոյս տան, և՝ Որանի որ ունի զաւակ ի Սիոն և ընտանեակք իցեն նորա յերուսաղէմ վերին, և թէ՝ Գանձնեցէք ձեզ գանձս յերկինս, որ ոչ ցեց և ուտիճ ապականէ, և ոչ գողք ական հատանեն և գողանան։*

Արդ ես, Յ[ո]հաննէս էրէցս փափագող եղեալ այսմ աստուածային գանձուս և անպատման ուրախութեան, և գրել ետու զսա ի դառն և ի վշտաբեր ժամանակիս, ի նեղ և ի դարանակալի աւուր /// ի թուաբերութեան Հայկազեն [տոմարիս]մերում մ///ազատութիւն եւթնհարիւրերորդի երես[ներ]որդի եւթներորդի (1288) ի Հայկազեան տեռից, ի հայրապետութեան տեառն Տղա Ստեփաննոսի, ի տիեզերակալութեան Ղուբիլա և ի կողմկալութեան Աղոյ և ի քռնակալութեան ազգին նեստողաց։

Արդ, գրեցաւ ի դուռն Նախաւկաի և յառաջին սարկաւագի, և այլ սրբոցս որ կան շուրջ զմեաւք, ի դեղս Առեղս, երկրիս Տարբերունոյ, որ կոչի Բերկրի։ Զքխացեալս մեղաւք զՍարգիս գրողս տուրբ Աւետարանիս աղաչեմ զձեզ, ո՛վ լուսերամից դասք և որդիք Վերինն Սիոնի, անմոռաց հայց[ես]էք ի հեզէն և ի մարդասիրէն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ զթողութիւն իմոցն յանցանաց, և ի ձեռն մաքրափայլ աղաւթից ձերոց ոչ կրեցից զանտի ամաւթն և զարտասուսն անվախճան, զի յոյժ քան զամենայն երկրածինք առաւել գտա ստոմնկանող [պ]ատուիրանաց արարչին իմոյ Յիսուսի։

Աղաչեմք զձեզ, ո՛վ եղբարք զթութեամբն Աստուծոյ և Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, սխալանաց և խոշորութեան անմեղադի[ր] լինիք։ Կրկին յիշման բարոյ արժանի արարեք զ[Յ]ոհաննէս սրբասնեալ քահանա և զծնողսն իւր, [և] զաւակսն իւր և զերիցակինն իւր, և զհաւրեղբարքն իւրեանց՝ ամուսնաւքն, զաւակաւքն [պ]ահեսցէ Տէր Աստուած ի խաղաղութիւն, և թէ ոք զյիշատակարանս կտրէ կամ անուն քերէ, ջնջեսցի և՛ ինքն ի դպրութենէ կենացն յաւիտենից, ամէն։

Բ

128բ *ՁՍարգիս գրիչս յիշեայ ի Տէր Յիսուս, ո՛վ խազագիծք, և Քրիստոս զձեզ յիշէ յիւր անսպառ բարիսն, ամէն, ամէն։*

Գ

199բ *Ի կարդացմանդ զՍարգիս գրիչ յիշեա ի Տէր Քրիստոս, ամէն։*

ղ

18բ Զի ծնեաց զիս մայր իմ, և ես նստեալ լամ։

ե

51ա Եւ արդ ես հիգեցեալս մեղաւք և թշուառացեալս մարմնոյ,

499

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4851

Գրիչ՝ Սիմէոն
Վայր՝ Արճէշ

ա

261բ Փառք անպարագիծ էին, այնմ որ ոչ են հետ հղաւրի և ոչ զինչ են, և ոչ զինչ պիտին, և ոչ քանակն համբարձելոյն յամենայն մտաց սլացման։ Գոհութիւն անզնին գոյին, որ է բան, կնիք և սահման էին։ Փառատրութիւն անպատ իմանալի սեռին, որ է հոգի համագոյ էին և փառակից բանին, որ տրամագրեաց զմատունս վերջացեալ տկար ոգւոյ Սիմեոնի նուաստ քահանայի, գրեալ և կարգեալ զճառս երախտեաց աստուածագործ սքանչելեացն, զոր ճշմարիտ և աստուածն բան միածին Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս, ի վախճան ժամանակի կատարեաց զնշանս և զարուեստս, որպէս զի որք ընթերցին, ի միտ առցեն և ծանիցեն, թէ նոյն Տէրն է, որ Մովսէսի հրամայեաց առնուլ գառն տարեւոր և յիշել զերախտիս աստուածութեան, որ յԵգիպտոս։ Նոյն և աստ Նոյոյ մեզ յիշատակ չարշարանաց իւրոց, ոչ միայն պէս պէս նշանաւք լուսաւորեաց, այլ և չարշարանաց և մահու համբերեաց, զի գիտեր, թէ լսելով զանարգանս Տեառն մերում, դարձ եղիցէ ի մեղաց մերոց։

262ա Արդ, այսմ գաղափարութեան, երջանիկ ոմն պատուական և աստուածային ձրիւքն բարգաւաճեալ վարդապետ Թովմայ, սորա ելեալ մեծաւ ցանկութեամբ և յոյժ փափագմամբ ի խնդիր աստուածունակ տառից, որ կեանս տայ կամայորդոր լսողաց, ստացաւ զսա զաւակ ի Սրովն և ընտանեակ յԲրուսաղէմ, ի զարդ հոխութեան հարսնացեալ սրբոյ մաւր եկեղեցւոյ, և ի լուսաւորութիւն մանկանց Սիովնի, յամս աստուածապատիւ և երջանիկ հոգևոր տեառն Ստեփանոսի և ի թուաբերութեանս Հայկազնեան տոմարիս ՉԼԷ (1288), ի քաղա[քիս] Արճէշ, և ընդ հով[ան]եաւ Սրբոյն Յակովբայ գրեցաւ։

Եւ արդ, աղաչեմ զձեզ Տէրամբ անպտուղս ի բարեաց, զդաստ լուսերամիդ, որ հանդիպիք սմա տեսութեամբ և ընթեռնուք և կամ գաղաբարէք, յիշեսջիք ի սուրբ և երկնաբացիկ աղաւթս ձեր զստացող տառիս զվարդապետ Թովմա, և ծնաւղսն իւր Ստեփանոս, և զթարմատար գրիչ Սիմէոն, և զծնողսն իմ, և զնախնիսն իմ՝ հանգուցեալսն ի Քրիստոս և որք սատարեցին և աւգնական եղեն մեզ յայս գործ, և Քրիստոս Աս-
262բ տուած, որ տերն է փառաց և[և տ[ո]ւիչ ամենայն բարեաց յիշողացգ և

յիշեցելոց[ս] ողորմեացի կրկին կենաւք և երկու աշխարհաւք, որ է աւրհնեալ, գովեալ և փառաւորեալ յաւիտեանս, և յաւիտենից յաւիտեանս, ամէն։

բ

3բ Քրիստոս Աստուած բարեխաւսութեամբ քո եւ Կուսի ողորմեա Թումա վարդապետի և իւր ծնաւղին Սաեփաննոսի, և եղկելի գրչի Սիմէոնի և իւրոցն։

գ

4բ Տէր Յիսուս ողորմեա գծողին և ստացողին։

դ

Ստացող՝ Թովմա

7բ Ջսուրբ Աւետարանս Սուրբ Խաչիս Աղթամարայ, ես Թովմայ տվի իմ հաւրն յիշատակ, ղի յամեն ամի Ա ժամ արասցէն անխափան։

500

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

«Լոյս» 1906 թ. էջ 1219—1220. Ալիշան, Հայապատում, Բ, էջ 496—497

Գրիչ՝ Սաեփաննոս
Վայր՝ Սկեւռայ

ա

1065 Փառք գոյացուցչին բոլորից անսկիզբն և անեզր բնութեան միասնական աստուածութեանն Հաւր եւ Որդւոյ եւ ամենասուրբ Հոգւոյ, որոյ շնորհաւքն շարժին էակք ամենայն, յիւրաքանչիւր ընթացս ըստ կարգի, յաւէտ եւս ի զգալեացս բանականս այս մարդ սլատուեալ հանճարով, որով զբնաւորական շարժումնն իմաստնապէս մարթ է յաւրինել, աստուածային սիրովն ուղերձեալ. ըստ որում է տեսանել ի բազմադիմի յայսպիսեաց իւրաց, այսինքն յաստուածասէր կամաց լաւաց մարդկան արգասեաց, եւ զգրութիւնս աստուածայնոց գրոց ստանալ։ Յորոց պընդագոյն փութոյ խորհուրդեամբ՝ քահանայ ոմն Աստուածատուր անուն հանդերձ ձեռնասուն իւր հարազատ պատանւով Խաչատրիւ, որ է որդի քեռ իւրոյ, ի դեգերանս աստուածայնոց գրոց գոլով, կանխագոյն յինքենէ ի տղայոյթ վարժեալ եւ իւրանման կրթատէր բարուց զուգակցեալ կամաւք երկոցունց յաստուածահաճոյ զբաւսանս անձանց եւ ի սատարութիւն բռնահարեալ գործոյ ընթերցմանն, եւ ի յիշատակ բարեաց զկնի՝ ստացան զայս աստուածախաւս մատեանս նորոյ կտակարանաց, ի ձեռն իմոյ նուաստութեան Սաեփաննոսի ամենամեղ եւ անպիտան գրչի եւ ներելովն Աստուծոյ տրուպ և անարժան քահանայի, ի ժամանակս աստուածապաշտ, աստուածահաճոյ կրկին արքայի Լեառնի որդւոյ Հեթմոյ, և ի նորուն աստուածասէր անդրանիկի Հեթմոյ՝ տէրութեան աս-

տուածապահ բերդիս Լամբրոնի, և ի կաթողիկոսութեան ծերութեամբ պատուեալ տեառն Յակովբայ, ՉԼԴ (1285) թուականիս Հայոց գրեցաւ տառս յաստուածապահ սրբարանս մեծի ուխտիս Սկեւռայի՝ ընդ շքով թեւոց աստուածազաւր Նշանիս եւ Սրբոյ Փրկչիս, յառաջնորդութեան տեառն Մինասայ:

Արդ, մաղթեմք բոլորիցն Աստուծոյ, զստացաւղք գրոցս հանդերձ տրուպ գրչաւս եւ մերովքն համայնիւք, եւս եւ զպատուական քահանայն Ստեփանոս Գոյներերիցանց և զծնաւղս նորին գտանել ողորմութիւն ի Տեառնէ, որ աւդնական եղեւ ի նիւթ գրոյս։ Նա եւ հանդիպելովդ այժմ եւ յապա՝ ամենառատ ողորմութեանն Աստուծոյ արժանանալ խընդրուածովք Աստուածածնին սրբոյ եւ սրբոց աւետարանչացն եւ բոլոր իսկ առաքելոցն դասուց, այժմ եւ յանվախճան աւուրն, ի փառս մարդասիրին Աստուծոյ, յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Բ

Գրիչ՝ Ստեփանոս Գոյներերիցանց
Վայր՝ Սկեւռայ

822բ Ըստ բանի սրբոյ ուրեմն. Որում բաղձայ ոք՝ նմին եւ հասանել ջանայ, վասն զի բուռն է քան զմահ սէր, զոր ջուրք բազումք ոչ կարեն շիջուցանել, մանաւանդ յորժամ Աստուած իցէ տուփումնն։ Այսպիսեաւ երանելի ըղձիւք առ ստացումն աստուածաչունչ տառիցս վառեալ սըրբասնունդ պատանին Խաչատուր, թելադրութեամբ Գէորգեայ վարդապետի, առ որում կայր ի վարժս կրթութեան բանի եւ գրոյ ուսումնասէր դպիրն Խաչատուր, ինքնագիր երկաւք ստացաւ զգիրս ծննդոցն, զԴատաւորացն և զԹագաւորութեանց։ Եւ վասն ոչ բերելոյ տկար մարմնոյն զերկս գրութեանն, աւժանդակեաց սնուցիչ նորին և քեռի աստուածապաշտ քահանայն Աստուածատուրն, եւ սակս աղքատութեան կարծեաց նախ զնոր Կտակարանս եւ գրել իբրեւ ղյոյժ հարկաւորս։

Եւ դարձեալք յԱստուած խրախուսեալք իմով ձեռամբ Ստեփանոսի Գոյներերիցանց փցուն գրչի՝ ստացան զաստուածային գիրս սրբոց մարգարէից եւ զսրբագրաց ոմանց, յեւթն հարիւր երեսուն եւ եւթն (1288) թուականիս, ի մխիթարութիւն ինքեանց հոգւով, որոց տացէ Աստուած ի հաճոյս իւր երկար վայելել ի սոյն, եւ ի յոյս բարեաց յիշատակի ստացողացն և աշխատողիս գրչի եւս եւ ընդհանուր զարմիցն նոցա եւ մեր, ի փառս Քրիստոսի աւրհնելոյն յաւիտեանս, ամէն։

Գ

Կին ոմն ի նիւթ աւգնական եղեւ, յիշեսջիք եւ զնա ընդ վերոգրեալքըն, եւ Աստուած ձեզ յիշէ։

Դ

756բ Զմեղուցեալ հոգս զՍտեփանոս Գոյներերիցանց յիշեա ի Տէր, պատուական եղբայր Խաչատուր;

Ե

782ա Ձստացաւղ գրոցս զԽաչատուր յիշեսջիք ի Քրիստոս, այլ եւ զմեղաւոր հողս Ստեփանոս, եւ Աստուած զքեզ յիշէ։

Գ

970բ Փառք ամենասուրբ Երրորդութեանն, որ ետ զաւրութիւն ամենամեղ քահանայի Ստեփանոսի աւարտել զտառս աստուածայինն, եւ զփափաք ըղձից պատուական եղբարն Խաչատրոյ լցոյց, զոր եւ մաղթեմ ի Տեառնէ ներել բազում յանցանաց իմոց, զի զմեծն եւ զեւս գերագոյնն կատարեցից*։

501

ՔԱՐՈԶԳԻՐՔ

Երուսաղէմ 1406 (1731 թ.), Պողարյան, ձուցակ Ե, էջ 60

...Ի թուականիս Հայոց ՉԼԷ (1288) ասացաւ եւ գրեցաւ ճառս, եւ ընծայեցաւ Հայաստանեայց տուրբ եկեղեցւոյ*։

502

ՀԱՒԱՔԱԾՈՒ

Օքսֆորդի, էջ 307 (ԺԶ գ.)

Գրիչ՝ [Թորոս]
Վայր՝ [Հռոմ]

69ա Այս գրոց աւրինակն գրած էր ի Հռոմ քաղաքն, առ դրան սուրբ ծայեցաւ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ**։
տուած թողջէ դյանցանս իւր, ամէն. և գրեալ էր ի թվինս Հայոց ՉԺԷ (1288)։

---

* Ձեռագիրը նկարագրել է Բարկեն Կյուլեսերյանը «Պրուսայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ձեռագիր Աստուածաշունչը 1285—1287 ԹԹ.» հոդվածում, («Լոյս», 1906, Կ. Պոլիս, էջ 1166—1172, 1191—1196, 1216—1221)։ Ձեռագիրն ունեցել է 534 թերթ, կամ 1068 էջ, 22,5×10,6 մեծութեան։ Գրվել է 1285 և 1288 թվականներին, երեք գրիչների ձեռքով, ինչպես երևում է հիշատակարանից։ Սննդոց գիրքը, Դատաստրացն և Թագաւորութեանցն գրել է ստացող խաչատուր Դպիրը։ Այն զբաղեցնում է 1—356 էջերը։ Այնուհետև Ստեփանոս գրիչը 1285 թ. ավարտում է նոր Կտակարանը, որն զբաղեցնում է ձեռագրի 835—1068 էջերը։ 1288 թ. Ստեփանոս Դոյներերիցանցը գրում է «գրոց մարգարէից և զորբագրաց ոմանց» գրքերը, այսինքն 357—834 էջերը։ Սկզբում՝ Ստեփանոսի հիշատակարանն ենք բերել, որովհետև այնտեղ բացատրված են գրութեան հանգամանքները և տրված է առաջին թվականը։

Վերջ Սկևռացին այս օրինակի վրա է սկսել նախագրութիւնների և ցանկերի ավելացումը և ավարտել է Մովսես Երզնկացու պատվերով 1295 թվականին։

** էջի վերին մասը կտրված է, ուստի անհայտ է մնում ճառի խորագիրը։

503

ՅՈՀԱՆՆԷՍԻ ԵՋՆԿԱՑՈ ԳՈՎԵՍՏ Ի ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉՆ ՀԱՅՈՑ

Վեննտիկ 207 (1272 թ.), Սարգիսյան, ծուցակ Բ, էջ 169

117բ *Փառաւորեցուալ զամենատուրբ զերրորդութիւնն՝ զՀայր և զՈրդի և զամենասուրբ Հոգին այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտեանից, ամէն։ Ի թուականիս Հայոց ՉԼԷ (1288) գրեցաւ ճառն և ընծայեցաւ Հայաստանեայց [սուրբ եկեղեցւոյ]*։

504

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ-ԵԻ ԹՈՒՂԹՔ ԿԱԹՈՒՂԻԿԵԱՑՔ

Վիեննա 261, Տաշյան, ծուցակ, էջ 667

Գրիչ
Վայր՝ Կամբիկ աճապատ

ա

159ա *Փառք...։ Բայց գրեցաւ Գործք Առաքելոցն Քրիստոսի ի դղեակս Մոլեւոնի, ի յանապատըս որ Կամբիկ կոչ[ի], ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ առաքելոցն<եւ>Պետրոսի եւ Պաւղոսի եւ սքանչելագործ Սուրբ Նշանի, որ պահապան այսմ եղիցի, ի թագաւորութեանն Լէոնի։ Արդ, յիշեցէք զփակակալ սուրբ ուխտին Կամբկունն՝ զՅովաննէս պատուական կուսակրաւն քահանայն, որ ետ ըզսայ փափաքանաւք գրել յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց, եւ որ յիշէ՝ յիշեալ լիցի և Քրիստոսէ ինք։ Ո՛վ սուրբ հարք եւ եղբարք եւ որդեակ, եւ որք առնոյք ըզսայ ուսմամբ կամ աւրինակ դնելով, յիշեցէք զՅովաննէս քահանայ, որ ստացաւ ըզսայ յարդար ընչից իւրոց յիշատակ հոգւոյ իւրոյ։*

բ

Ծաղկող

113բ *Ո՛վ հայրք եւ եղբայրք, անմեղադիր լերուք տխ(մ)արութեան ծաղկիս, աղաչեմ զձեզ մախրաթաւալ երեսաւք։ Վա՛յ խաւարեալ մտացս ինչ այնեմ, գերա եղկելիս ի՞նչ այնեմ**։*

---

* Թվում է այս և 501-րդ հիշատակագրությունները միևնույն ճառին են վերաբերվում։
** Դնում ենք Լևոն Գ թագավորի մահվան թվականից առաջ։

505

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Ն. Ջուղա 207, Տէր-Ավետիսյան, 8ուցակ, էջ 235—256

Գրիչ՝ Զակէէոս
Վայր՝ Կողբայ վանք

ա

237ա ...Որում և ես կրսեր յորդիս եկեղեցոյ Վարդան քահանա, փափագող եղէ այսր շահաւետութեան եւ հոգեկիր գանձուցս գրոց Դործոց առաքելոց եւ Ընթանրական Թղթոց կաթողիկէից, ջինքեան ունելով զգլուխն մեր Քրիստոս, զպրակս աւետաբեր սուրբ Աւետարանիս, ցուցանելով մասնաւորաբար զմարգարէութիւն ստոյգ ուղեաց, որ միահաղոյն կոչի Յինունք։ Եւ աւանդեցի զսայ ընծայ և նուէր Սուրբ Գրիգորիս Հայաստանեաց Լուսաւորչիս և աստուածաշնորհ նշխարացս Սրբոց Սուքեաեանց րստ կարի մերում, զի կացցէ յիշատակս մեր անհեռանալի ի սուրբ տաճարէս աստուածաբնակ, զի ընթեռնելով եւ լուսաւորելով յաստուածատուր պատգամացս, արժանի եղեցուք միասին փրկութեան, յանձին առնելով և յերեսս անկեալ աղաչելով զաստուածառաք սուրբ զառաքեալն և զհամանման որդիս իւրեանց զՍուրբս Գրիգոր և զսուրբ նահատակս աստուածունակ, զի թերևս աղաւթիւք ձեր և ամենայն սրբոց, որ հաւաքեալ կան ի գիրս, գթասցի բնութեամբ բարին Աստուած ի ստացող գրոյս ի Վարդան քահանայ, և ի հայրն իմ Զարեհամշաե, և ի մայրն Ծաղկանց, և ի քոյրն իմ Շաղթի, և յեղբայրն իմ Դաւիթ, յայնմ ի տիեզերական եւ ահեղ հրապարակն, ուր բանք սպառին և գործքն թագաւորեն, զի նմայ միայնոյ իմաստնոյն Աստուծոյ վայել է փառք, իշխանութիւն և պատիւ յաւիտեանս յաւիտենից։

Այլ և ես յետինս ի գրչաց և առաշինս ի մեղաւորաց, մեղապարտ ծառայս Զակէէոս, գրեցի զհոգոյ լուսատու պատուիրանս ի թվին ՉԼԸ (1289), ի սուրբ մենաստան Գրիգորի և աստուածագուբ ծնողի և Հայաստանեաց Լուսաւորչի, ի նահանգս Սուրբ Մարոյ, տր կոչի Կողբա Վանք, յորում տեղւոջ կամ ծածկեալ աստուածահին գանձքս և նշխարք Սուրբ Սուքիասեանց գլխաւորաց, զոր էր բերեալ սուրբ հայրն հաւատոյ մեծն Գրիգորիոս՝ կրկին տեսլեամբ եւս դառնալոյն ի Հռոմա։ Աստուածահրաշ նշանիւք երևեալ սմա և բերեալ սորա ի տեղիս յայս, ամփոփէ ի խորանս լուսոյ, ի կողմ արևմտից, մերձ ի դուռս, զոր յաւուրս մեր

յայտնեաց Աստուած սքանչելի հրաշիւք, ի ձեռն արհիականիս մերոյ և մեծ դիտապետիս տէր Տիրացուի, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի առաչի Քրիստոսի։

Զոր տեսեալ սորա զայս սոսկալի սրբութիւնս և իբրև զհուր վառեալ ի սէրս աստուածային, զանձագին արարեալ ազատեաց զբազմամեայ ծառայելաքս յայլազգեաց և ղհնացեալ և ղամայացեալ հայրենիք եւ զվիճակ, որ յառաջ լեալ էր, սա եւս առաւել կրկին նորոգեաց և արձանացոյց բաղում եւ երեւելի ընձայիւք, որոյ վարձահատոյց լիցի Քրիստոս իւր սիրեցեալ սրբովքս, և ղվերագրեալ ըստացող սուրբ մատենիս զՎարդան քահանայ և զամենայն ազգաինս իւր և զաշակերտ իւր զԱստուածստուր քահանայ մասին փրկութեան արժանի արասցէ։ Եւս առաւել զարդիւնական ծերունիս զԿարապետս և զՅովանէս, որ մխիթարութեան և հանգստեան պատճառ եղեն մեզ, հանգուսցէ Քրիստոս յիւր լուսեղէն յարկսն, և զայլ սպասաւորք սուրբ տաճարիս, եւ զմիեղէն եղբայրութիւնս, որ դեգերեալ պաղատանաւք կան արձանացեալ ի դուռս տուրբ քաւարանիս, ակն ունելով ողորմութեանն Աստուծոյ, արժանի արասցէ Քրիստոս ողորմութիւն գտանել յաւուրն յետնում, ամէն;

Ջսնուցող վարդապետն մեր զՎարդան և զսիրելի եղբայրն մեր Ղևոնդ, որ յայսմ ամի փոխեցան ի Քրիստոս, յիշեցէք ի նուիրական յաղաւթս։ Նաեւ զՄաթէոս վարդապետ Կիւլիկեցի, որ աւժանդակ եղեւ իմոյ անյարմար արհեստիս, գրեսցէ Քրիստոս զսա ի գիրն կենդանի, ամէն։

Աղաչեմք վասն սիրոյն Քրիստոսի, ընթեռնուլ զյիշատակարանս ի տանի Հոգոյն գալստեան, եւ ասել, Երանի ոմ թողութիւն եղեւ եւ Քրիստոս Որդի և Աստուած զձեզ յիշէ յիւր բարութիւնսն եւ յանտրտում ուրախութիւնսն ամէն։

Բ

159ա Ողորմեսցի Քրիստոս Աստուած Խաչատուր քահանայի, որ կոկեաց զնիւթ գրոյս և հանգոյց զանարգութիւնս մեր։ Հանգուսցէ Քրիստոս զննջեցեալսն սորա ի լուսեղէն յարկսն, և տացէ սմա հոդի երկնդի, ամէն։

Գ

Սուրբ Գրիգորիսէ գիրքս՝ Կողբա վանիցս, մի ոք իշխեսցէ հեռացուցանել ի սուրբ ուխտէս։ Եթէ ոք յանդգնի և հանէ, ինքն ելցէ յաւիտենից կենացն, եւ որք հաստատուն պահեն ի սմայ, աւրհնին Աստուծոյ։

Յիշեցէք առաջի Քրիստոսի զմեղապարտ գրիչս Զակէոս և Աստուած զձեզ յիշէ յիւր ողորմն, ամէն։

Դ

Սուրբ Գրիգորիս[է] գիրքս՝ Կողբա վանիցս, աւանդեալ ի Վարդան փակակալէ, մի ոք իշխեսցէ հեռացուցանել և հանել ի սուրբ քաւարանէս; Եւ թէ ոք յանդգնի և հանէ, ինքն ելցի ի կենաց յուսոյն, եւ որք հաստատուն պահեն, աւրհնին յԱստուծոյ եւ յամենայն սրբոց։

Այլև հրաման ունի եկեղեցապանն յաստուածաշունչ մատհնէս, որ խնամով պահէ և չտայ ի տղայի ձեռն։

506

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԷԻՑ ԹՂԹՈՑ ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Երևան 1530

Գրիչ՝ Ոմեկ
Վայր՝ Եզնկա

ա

460ր Փառաւորեսցուք և մեք զԱստուած մի՛ բերանով միայն և լեզուաւ, այլ հոգով և մտաւք, մի՛ բանիւք միայն, այլև արդեամբք և իրաւք, և յայնժամ փառաւորեմք յորժամ զմիմեանց բեռն բառնամք, յորժամ միմեանց գիրկս արկանեմք, յորժամ զմիմեամբք փարիցիմք, յորժամ առ միմեանս ջոլորիցիմք, յորժամ միմեանց կարեկից և վշտակից գտանիցիմք, յորժամ ի վերա յիրերաց հիքութեան արտասուեմք՝ յայնժամ փառատրեմք զԱստուած։ Վասն զի այսու ամենայնիւ առաւել փառատրի Աստուած, քան ի ձայնիցն փառաւորութեանէ։ Այնպէս վշտակից լիցուք միմեանց, զոր աւրինակ, եթէ զմիոյ գաւառի զգաւառականս ի մի քաղաք ի գերութիւն տանիցեն, և յորժամ բազումնքն զմիմեանս տեսանիցեն ի հասարակաց վիշտսն՝ սգակից միմեանց լինիցին և ողբակիցք, ընդ
461 միմեանս անկանին և հառաչէն, և զմիարտասուս ամենեքեան կաթէցուց‖ անեն։ Նմանապէս և մեք ամենեքին ի գերութիւն մեղաց ըմպըռնեալք յիւրաքանչիւր հասակէ, յիւրաքանչիւր արժանաւորութենէ, և երանի թէ մարմնով ևթէ էաք ի գերութիւն և ոչ ընդ նմին հոգով և մտաւք, որ ևս չար է քան զամենայն գերութիւնս, եւ երանի եթէ ի ձեռս մարդկան ըմպռնեալք էաք ի գերութիւն, և ոչ ի ձեռն խուժադուժ տիկնոջ բանսարկուին, որ քան զամենայն դառնագոյն տեառս է ծանրագոյն, վասն զի չիք ի մարդկանէ քան զդէւս չարագոյն զտանել, և ոչ կապանս նորայ ծանրագոյն։

Եւ արդ, յայսպիսի գերութեան գոլով մեք արտասուեսցուք, մեք ողբասցուք, հառաչեսցուք, մի՛ միայն զանձինս մեր լացցուք, այլ եւս առաւել զեղբայրս մեր տեսանելով յայնպիսի տոռունս մեղաց, մի՛ մեայն զմեղս մեր զղջասցուք, այլև զմեղս եղբարցն ի մասինս յայսմիկ, առաւել առ միմեանս խոնարհեսցուք, յառաւել նեղութիւնս զանձինս մեր արկցուք ի յանծուկ սիրո, ի յաճախութիւն գթոյ, որպէսզի այսու զպատուիրանս Քրիստոսի կատարեմք, որ եւս զանձն իւր վասն մեղաց մերոց, առ ի զմեզ արդարացուցանելոյ, որոյ վիրաւքն բժըշկեցաք։

Արդ, մտցուք ի նեղութիւնս իրոյն այնորիկ, վասն զի կապանք անլուծանելիք են այսպիսի նեղութիւնք սիրո, յաջախումն ստըրջանաց և երկիւղի պատճառք։ Լուր Դաւթի զինչ ասէ. Բարի է ինձ, զի խոնարհ արարեր զիս, որով ուսայց զարդարութիւնս քո։ Եւ միւսոյ մարգարէին. Բարի է, ասէ, մարդոյ, յորժամ առնու զլուծ խոնարհութեան ի մանկութենէ։ Եւ դարձեալ՝ Երանի մարդոյ, զոր խրատես դու, Տէր։ Եւ միւսո

իմաստնո. էթէ մի ինչ հեղգար ի խրատ Տեառն՝ եւ միւսումն. եթէ մերձենաս ծառայել Տեառն, պատրաստեայ զանձն քո ի փորձութիւնս՝ եւ Քրիստոս հրամայէ. Եթէ յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարուք; եւ դարձեալ. եթէ լացէք և զգացարուք դուք, և աշխարհ խնդասցէ; եւ դարձեալ նեղ և նուրբ է ճանապարհն՝

Տեսանե՞ս, ղի ամենայն ուրէք նեղութիւն է գովելի, և նոյն մեզ կարևոր պիտանացու, զի թէ յարտաքին մարտսն ոչ ոք է որ պսակի, եթէ ոչ յաշխատութեան կալցէ և ի վնասակար կերակրոց հրաժարիցէ, և ըստ աւրինաց զանձնն կրթիսցէ, և տքնութեամբ և այլ ինչ բազում իրաւք ամբանայցէ, որչափ ևս առաւել աստ՝

461բ Արդ, ո՞վ ոք ի թագաւորաց տեսեր, զի զաստի կեանս||անհոգութեամբ անցոյց, ո՞վ ոք ի բռնաւորաց, ո՞վ ոք յիշխանաց, ո՞վ ոք ի փարթամաց զառժամանակեայ զկեանս հեշտեաւ վճարեց; եւ դո՛ւ մի՛ ընդ երևելի զարդն հայիր, այլ ի ներքո, ի միտսն յառեաց, և անդ տեսանիցես բազում խռովութիւնս, բազում ալեկոծութիւնս, բազում ամբրունս, բազում յոյզ հոգոց, բազում պատճառս տրտմութեան՝ որ յընտանեացն, որ յարտաքնոցն, որ ի պատերազմացն, որ ի դաւղացն՝

Արդ, ո՞րքան խաղաղութիւն ի տունս շինականաց և անհոգութիւն, քան ի տունս թագաւորաց. ահաւ յայտնի է և չէ ինչ զանխուլ՝ եւ դու մի՛ զայն ինչ ասիցես, եթէ ամենեցունց իշխէ, յամենեցունց դողա, յամենեցունց երկնչի՝ Այնպիսեացն և ոչ սեղանն քաղցրագոյն է, այլ լի կասկածանաւք, և ոչ քունն հեշտալի, այլ լի խռովութեամբ, նաւ և երազք այնպիսեացն անդորհականք և զարհուրեցուցիչք, և արդ այն կեանք իցէ՞, աղէ, ասաւ, և ո՛չ երբեք, այլ քան զմահ եւս դառնագոյն՝ եւ արդ, եթէ այսպիսի վշտաւք լի է կենցաղս և եւս դառնագոյնիւք, քան զասացեալս, և ոչ է ումէք հանկիստ գտանել ի սմա, կամ հեշտեաւ ելանել ի սմանէ, ապաւ զհարկաւորն կամաւոր արասցուք, զի փոխարէն զվարձան ընկալցուք՝ Այլ մէք տրտմեսցուք մի՛ վասն այնպիսի ինչ իրաց, որովք թագաւորք տրտմին, այլ վասն այնպիսեացն, որովք շահս մեծամեծս շահիցիմք, որ ըստ Աստուծոյ տրտմութինէ ասէ. Ապաշխարութիւն ի փրկութիւն առանց զղջանալոյ գործէ՝ Վասն այնպիսեացն պարտ է տրտմել, զի և Պաւղոս վասն այնպիսեացն տրտմէր և արտասուէր. Ի բազում նեղութենէ, ասէ, և ի վշաց սրտիս գրեցի առ ձեզ բազում արտասուաւք, քան զի ընդ իւր մեղս չզոյր նորա յարտասուել, այլ ընդ այլոց տրտմէր, մանաւանդ թէև զայն եւս իւր սուգ համարէր, քանզի այլք գայթակղէին և նայ ջերմանայր, այլ՝ տկարանային, և նայ հիւանդանայր՝ Քան զամենայն աշխարհական ուրախութիւն՝ կարևոր համարիմ զայն սուգ՝

Նայ և ինքն Տէրն զայնպիսի սգաւորսն երանէ, որ վշտակիցն գիտիցեն լինել; Եւ ես ոչ զնոսա, որ ի վիշտս ինչ-որ վասն Աստուծոյ կայցեն, աւելի ինչ գովեմք, քան զնոսայ, որ վասն այլոց մեղաց սուգ առնուցուն, զի այս զաստուածասէր և ի գթած ոգոյ լինի, զոր Քրիստոս խնդրէ, և յեղբայրական վշտակցութենէ, և ի հայրական խնամոց, մանաւանդ եթէ
462ա քան զերկոսինն իսկ մեծ իցէ, այնպէս գթալ ||* Փոխանակ ճառելոյ և

* Թերթի անկյունը պատռված է, ուր տող բաց ենք թողնում։

ի յայ[տ] բերելոյ զհրաշսն՝ լոէին, և համանգամանք միմեանց իբրև յահեղի կացեալք, սարսեալ դողային, և Տեառնն շնորհէին գիտել զխորսն նորայ, անցելոցն Տէր կարդային և արարիչ, և ներկայիցս՝ խնամող և փրկիչ, և ապառնեացն կարող գոլ, զորս կամեսցի հրաշագործել և այս նոցա։

Իսկ խուզարկուք եղեն յարտաքնոց և ի մանր և ի նուրբ քննութիւնս աշխատեալք վերին և ստորին գոյութեանց, ի ձեռն չորից խառնուածոց, գտակք ցուցին զինքեանս, և կարծեցեալք գիտել ինչ՝ գտին զոչինչ, և փոխանակ ճանաչելոյ զարարիչն ի ձեռն արարածոցս զպաշտաւն Աստուածոյ ճշմարտ[ի] յարարածս դարձուցեալ, խաւարեցան ի գիտութեանն Աստուծոյ, վասն որոյ պատճառի ոչ կարացեալ արարչին կորուսեալս տեսանել, և յիմաստութեամբ լցեալ ղմարդկան ազգս, այլ /// և զանիմաստ մարդիկ վարդապետեալ ծանոյց նոցայ զխորհուրդ խորոցն Աստուծոյ, վասն զի ինքն էր արարիչ, ինքեամբ դարձեալ պարտէր ածել ի գիտութիւն, զի հաստատուն կայցէ ձայնն, թէ՝ Ողիցի Աստուած ճշմարիտ և սմենայն մարդ՝ սուտ։ Քանզի առ գիտութիմն Աստուծոյ՝ տկարացաւ հրբեայն, յամաւթ եղև հեթանոսն, Աստուծոյ միայն եղև կարողանալ, զի ոչ տկարասցի առ նայ և ոչինչ, և զոր յառաջագոյն ի ձեռն անմարմին և տարրամած եղութեանց բարձանց և ստորնագունից խորհրդածեաց, և ոչ ոք գտաւ խորհրդածու և ճանաչող։

Սկսաւ դարձեալ /// ընտրեաց յառաջ խա /// աշխարհի; և զհրաւիրեաց /// զինքն զնորս եկեղեցի, յինքն /// ցանելով, իբրև զհարսն նախախաւսեալ՝ յարդարելով վերստին և զեղեալն կարակերպութիւնն կրկին շնորհելով, երկին կազմեալ և վերնաքաղաք բնակետղ հոգեղինա[ց], որ հիմնատրեալ սկզմամբ ի ոմն կենդանի, որ եղաւ ի հիմունս /// նի, որ է վէմ պատուական և քար գլ[ո]ւխ անկեան, աստուածութեամբն և
462բ մարդկութեամբն, միացեալ և մխացուցեալ զԱստուած /// որ առնի փրկագործել, զի զոր աւրինակ ի զոյգ եղեն, պարտ էր, զի և ի զոյգ նորոգեսցին, այլ և ի միասին առցեն զկատարումն։ Զի որպէս մի է կենդանիս, յոր հաճեցաւ Աստուած բնակիլ ի սմա, այսինքն մարդս բանական, որ և պատկեր կոչեցաւ Աստուծոյ և երկնից համապատուաբար պայծառազարդեալ գտաւ վերըստին նորոգութեամբ; Եւ այժմ ամենայն ոք գտեալ զկարգ իւր և կայան, ուղղեցան ի լոյս քաջ հովուապետին նորոյ Ադամայ՝ Յիսուսի Քրիստոսի, քանզի եկեալ մարդասիրապէս և ի ձեռն տնաւրէննութեանն ուղղեաց զամենայն և զոր ինչ ի սկզբանն ժամանակէ, և այսր տպաւորեաց յառաջ քան զլինելն աշխարհի, և յետ լինելութեան դրախտին և առ մարդն նախաստեղծ։

Զայս ամենայն եկեալ ի լրումն ///*

Յայս բառբառ խրախուսեալք և արիացեալք կարող զաւրութեամբն Աստուծոյ, այնոքիկ որք թողեալ զամենայն և առեալ զխաչ չարչարանաց և զհետ նորայ ընթացան և սիրեցին զնա, քան զաշխարհ, որք ընկալան

* Այս սյունակի ստորին ծայրը և հաջորդի վերին անկյունը պատռված են։ Բաց ենք թողնում տասնյոթ տող։

ի նմանէ զիշխանութիւն յերկինս և յերկրի, և զայլս բազմապատիկ պարգևս։

Սոքայ, որ առաքեալք կոչեցան Քրիստոսի և հազարապետք խորհրդոցն Աստուծոյ, իբրև առին զշնորհս Հոգւոյն Սրբո, յետ կատարելոյն Տեառն զկամս Հաւր, և մերովս մարմնով վերանալ առ Հայր, յայնժամ եկեալ բնակեցաւ ի նոսայ զաւրութիւն Տեառն իւրեանց, և բովանդակ զխորս Աստուծոյ իմացեալ ածին զամենայն [տիե]զերս ի լոյս գիտութեան, ի ձեռն սուրբ մկրտութեանն, որ ի Հայր և յՈրդի և ի Հոգին Սուրբ։

Ուսուցանէին զամենեսին երկրպագութիւնն Քրիստոսի և ի հաւատս
463ա ||ճշմարիտս, վկայեալ ի Հին և Նոր կտակարանաց և յաւարտմանէ սըրբոյ կենսաբեր աւետարանչաց և յամենայն հոգէշնորհ նուագերգութեանց աւրհնեալ միշտ զԱստուած Հայր՝ առաքիչ և զՈրդի Աստուած՝ առաքեալ, և զՀոգին Սուրբ Աստուած՝ յարդարիչ և ուղղիչ և կարգաւորիչ ամենայնի, ի կամս Հաւր և Որդոյ համազուգեալ։

Զայս այսպէս տրամարկեալ հաստատէին, դի եկեղեցի բարձրասցի և ամրապահեստ մնասցէ ի ձեռն այսոցիկ այսպէս եղելոյ։

Այսմ համաձայն և զուգաբան հոգիունակ և շնորհառատ սուրբ վարդապետս Սարգիս, որ նախատեսչութեամբն պահեալ Աստուծոյ, և ի վերջին դարուս, ի պէտս ժամանակի յայտնեաց առ ի լցումն տարփողաց այսմ առաքելախաւս և աստուածաբան թղթոց Եւթանեցունց գլխոց Կաթուղիկեաց յոգնաչան վաստակաւք և բազմաքիրտ տքնութեամբ, յորդառատ արտասուաւք և անդադար աղաւթիւք առեալ ի տուչութեանցն Աստուծոյ, ղվերծալուծութիւն այսմ աստուածատուր զանձուցս, որ ոչ ուրեք գտաւ յառաջնոցն հոգացուղ սմա, և ոչ ի վերջնոցս, ոչ ի մերասէր ազգէ, և ոչ յայլոց եւս ուրեք։ Վասն որոյ յԱստուծոյ տուաւ այսմ հոգէշնորհ վարդապետի սերմանեալ յազգս մեր և յեկեղեցիս Հայաստ[անեայց] /// [թ]արգմանչացն և վարդապ[ետացն] ի սպարծանս Հայկազեան ազգիս Թորգոմա, երիվնեռանդն և յորդառատ յորդորակաւք յաւրինեալ հանգոյն տեառն Յոհաննու Ոսկէբերանի, որ զամենեսեան յապաշխարութիւն կոչէ։ Եւ Քրիստոսի մարդաս[իրի]ն փառք յաւիտեանս։

463բ /// հոգևորս աս[ա]ցեալ սուրբ և իմաստուն և առաքինի վարդապետի Սարգսի և նորին ողորմութեամբն կատարեցաք։ Յամի ՉԾ երրորդի երեսունևերորդի ութէրրորդի (1289) թուականութեանս Հայոց գրեցաւ հոգէպատում գանձս աստուածային, Մեկնութիւն Եւթանեցունց Թղթոց Կաթուղիկեաց, զոր արարեալ է Շնորհալից վարդապետին Սարգսի։ Եւ սա նորընծայ եկեալ ի մայրաքաղաքս ի Տեգրնկայս, զոր ստացաւ զսա և ետ գրել հոգևոր և իմաստուն և հանճարեղ պարոն Թորոս, մականուն Հուսամատին, որդի պարոն Նիկողիի, ի հալալ արդեանց իւրոց և յիշատակ իւր, և զաւակաց իւրոց, և նախնեաց իւրոց։ [Ե]ւ գրեցաւ սայ ընդ հովա[նեաւ] տուրբ և փ[առա]կան կաթուղիկէ եկեղ[եցւոյ, առ ոտս] սուրբ և արհիական եպի[սկոպո]սին տէր Սարգսի։ Եւ գրեցաւ սայ ի կաթողիկոսութեան սրբոյն Կոստանդնեայ, և ի թագաւորութեան Հեթմո, և ի եպիսկոպոսութեան մերոյ տէր Ներսիսի։

Արդ, ես՝ Թորոս մականուն կոչեցեալ Հուսամատին, արարի զսա հոդո իմո* յիշատակ, ղի յետ ելից իմոց յաշխարհէս յիշեսցի անուն իմ ի դրան եկեղեցո, միայն զառաքեալսն սուրբ և ղկտակս նոցա տեսեալ աւժընդակ և ապաւէն և յոյս, բարեխաւս ունելով առ փրկագործաւղն բոլոր սեռիցս։ Եւ քրտնաջան աշխատութեամբ և տառապանաւք ստացայ զկատակս զայս նորայթարգման զաւակ ի Սիոն և ընդանեակ յՕրուսաղէմ, ի յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց իմոց և զաւակաց. ղի ողորմեսցի Քրիստոս յաներեկ աւուրն մեծի աղաւթիւք և բարեխաւսութեամբ տուրբ առաքելոցն Յակովբոսի և Պետրոսի և Յոհաննու և Յուդայի և ամենայն սրբոց։ Եւ ողորմեսցի սուրբն Թէոդորոս, որ անուանակից է սորայ և լինի...

Բ

2բ Տէր Աստուած, զգործս ձեռաց մերոց ուղղեա և զհոգիս մեր իմաստնացոյ աղաւթիւք Սուրբ Վարդան եպիսկոպոսի։

Գ

Գրիչ՝ Յովսէփ

17բ Քրիստոս Աստուած, բարեխաւսութեամբ սուրբ առաքելոյն Յակովբա և սուրբ վարդապետիս, ողորմեայ ստացողի սորա պարոն Թորոսին, մականուն կոչեցեալ Հուսամատին, և հաւր նորին պարոն Նիկալին, և նախնեաց նոցին, և զաւակաց; Որ առատն է ի տուրս բարեաց ողորմեացի մեզ և լսողացտ առ հասարակ։

Եւ զիս բազմամեղս զգրող սորին զՅովսէփ աղաչեմ յիշման արժանի արարէք**։

Դ

63բ ...Եւ զգրող սորին զՅովսէփ սարկաւագ յիշման արժանի արարէք։

Ե

82ա Սուրբ Յովանէս՝ կարապետ և մկրտիչ Քրիստոսի
Բարէխաւս և յոյս յաւուրն մեծի,
Ընկալ զընծայս զայս քեզ հաճելի,
Որ վասն սիրո քո ի դրան քո ընձեռեցի։
Գանձ փարթամացուցիչ, որ սովաւ վարժի
Մեզ ի լոյս յիշատակի և արձան անջնջելի;
Թորոս ծառա քո, որ մականուն Հուսամատին յորջորջի
Զի յարաժամ որքան սա ի դրան քո ընթերցի,
Գթութեամբ զմեզ խնամարկեացես յամենայնի,
Եւ ողորմութիւն ի Տեառնէ հայցեսցես անսպառելի։
Յառաւրեա կեանս առաջնորդել մեզ միշտ բարի.

---

* «Արարի զսա հոգո իմոյ» բառերը գրված են այլ թանաքով, ուրիշ բառեր ջնջելուց հետո։

** Ձեռագիրը երեք գրչի գործ է. սկսել է Յովսեփը և հասցրել մինչև 305ա։

Եւ ի հանդերձեալն արժանի լինել երանեալն ձայնի։
Եւ դուք ընթերցողք այսմ աստուածային մատենի,
Եւ շնորհեա ողորմութիւն քո առատապէս նմա յամենայնի։

գ

97ա *Քրիստոս Աստուած, քո միւս անդամ գալուստ ողորմեա ստացողի այսմ լուսազարդ կտակի պարոն Հասամատեի և հաւր նորին պարոն Նիկալիճ և նախնեաց նոցին, որ անուանեցին զգիրքս զայս Սրբոյ Կարապետին, ամէն։*

է

124ա *Զանպիտան և մեղուցեալ գրող սորին Յովսէփ դպիրս աղաչեմ յիշման արժանի արարէք։*

ը

Այլ գրիչ*

310ա *Քրիստոս Աստուած, բարեխաւսութեամբ սուրբ առաքելոյն Յակովբա և ամենայն սրբոց ողորմեա ստացողի և այսմ լուսազարդ կտակի պարոն Թորոսի մականուն կոչեցեալ Հասամատեին, և հաւր նորին պարոն Նիկալիճն, և նախնեաց նոցին, և զաւակաց նոցա։*

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք կարդաք և լսէքդ ողորմութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ մեզ և ձեզ, և յամենայն մեղաւորաց դարձ առ Քրիստոս ամենայն բարեաւք, ամէն։ ՉԼԸ (1289)։

թ

Այլ գրիչ

380ա *Արգ, աղաչեմ զամենեսեան, որք կարդաք և լսէքդ, ողորմութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ մեզ և ձեզ, և ամենայն մեղաւորաց դարձ առ Քրիստոս ամենայն բարեաւք, ամէն։ ՉԼԸ (1289)**։*

ժ

Գրիչ՝ Ոմեկ

413ա *Քրիստոս Աստուած բարեխաւսութեամբ առաքելացս Յոհաննու և Սարգսի վարդապետի և ամենայն սրբոց քոց, ողորմեայ ստացողի սորայ պարոն Հասամատեի, որդի պարոն Նիկոլի, և նախնեաց սորին, և զաւակաց իւրոց, և Քրիստոսի մարդաս[իր]ին փառք յաւիտեանս։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որ կարդայք կամ աւրինակէք, թողութիւն յանցանաց իմոց հայցեցէք՝ ինձ, բազմամեղ գծողիս Ոմեկ սարկաւագս, և ծնողաց իմոց փոխեցելոցն ի Քրիստոս***։*

---

* Այս գրիչը գրել է 306բ-386բ էջերը և իր անունը ոչ մի տեղ չի հիշում։

** Այս գրչից այսպիսի հիշատակագրություններ կան 340ա, 347ա, 354ա, 366ա, 376բ էջերում, և անունը չի հիշատակում, գրել է մինչև 19 պրակը (էջ 386 բ)։

*** Ոմեկի անվամբ (որը գրել է 387ա—463բ էջերը. վերջը թերի) այսպիսի հիշատակագրություններ կան նաև 338բ, 405բ, 456բ էջերում։ Ոմեկն է գրել նաև գլխավոր հիշատակարանը։

507

ԱԻԵՏԱՐԱՆ

Կյուլնսերյան, ծուցակ Անկիւրիո, էջ 1116—1120

Գրիչ՝ Ստեփաննոս Կաղզանցի
Վայր՝ Ցախուտան անապատ

ա

560 *Փառք համագոյն և միասնական անբաժանելի Սուրբ Երրորդութեան և միաստուածութեանն՝ Հաւր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս։*

*Ի թուականութեանս Հայոց մեծաց ՉԼԸ (1289), ի թագաւորութեանն Հայոց Հեթմոյ՝ որդւոյ բարեպաշտ արքային Լեւոնի, և ի դիտապետութեանն տեառն Կոստանդեայ գրեցաւ աստուածախաւս մատեանս՝ վտակս քառավտակ գետոյն Ադենայ, յերկիրս Կիլիկիա, ի յանապատիս Ցախուտան Սուրբ Աստուածածնիս, ձեռամբ Ստեփաննոսի Կաղզանցւոյ, ի դառն և ի դժնեայ ժամանակիս, յորում ամի յարեաւ անհիծեալ ազգն Իսմայելի՝ զօրքն եգիպ[տ]ոսի կառաւք և հեծելօք, անաւրէն և արիւնարբու սուլտանեան իւրեանց Ալֆէիւ, և չոգան ի վերայ մեծի մայրաքաղաքին Տրապօլսոյ, և բազում անցս չարչարանաց և զամենայն հնարս որոգայթից կուտեցին ի վերայ նորա, մինչեւ առին զանառիկ ամրոցն, և ի հիմանց տապալեցին զմեծ և ղհռչակաւոր կաթողիկէ եկեղեցին, և զայլ տաճարսն Աստուծոյ, և զսուրբ վանաւրեայսն, զարանց և զկանանց՝ որք էին ի մեծ քաղաքին գեղեցիկք և շքեղազարդ փառաւք պաճուճեալք, հրաձիգ արաին ե քարայատակ, և զսեղանսն սուրբ կործանեցին, և զզարդ տաճարացն կողոպտեցին, և զսուրբ քահանայսն և զսարկաւագունս և զհրեշտակատեսիլ դպիրսն և զամենայն ժառանգաւորս եկեղեցեացն ի սուր սուսերի մաշեցին, և զիշխանս և զամենայն զօրս քրիստոնէիցն սրախողխող յերկիր ընկեցին, և զնազելի տիկնայս և զազախնայս և զկրօնաւորեալ կուսանսն՝ զդստերս մեծատանց և զաղքատաց՝ հրապարակախաղ առնէին, և զանբիծ մանկունսն՝ ի գիրկս մարցն սպանանէին, և զարիւն ընդ կաթին խառնեալ՝ տային մարցն ըմպել, և ընդ սրբութիւն սրբոցն զանհնարին չարիսն գործէին, զոր անվայելուչ համարեցիք զճառելն։ Ո՛վ հրաշիցս անճառութեան, ո՛հ աստուածասէր եղբարք, ոչ կարէ բերան պատմել և ոչ լեզու ճառել զանհնարին աղէտն և զհրաբորբոք կսկիծն, զոր վասն մեղաց իմոց կրեցին անմեղ անձինք յանօրէն զաւրացն։ Մի թէ յաւարումն Երուսաղէմի ի ձեռն Քաղդէացոցն ի ժամանակն Երեմիայ, որք ի գնալն ի գերութիւնն զերգարանս տաճարին միշտ յուռիսն կախէին, և անդադար նստեալ լային միշտ առ գետով Բաբելոնիի, եւ կամ թէ կրկին աւարումն Երուսաղէմի ի յանիծեալ զօրացն եգիպտոսի, ի Սալաճատին սուլտանա, որք ի սուր սուսերի մաշեցին զերկիրն Պաղեստինացւոց, և աւերեցին զսուրբ տեղիս Աստուծոյ՝ զմեծն Սիօն, և զՍուրբ մատուռն զՍուրբ Համբարձումն՝ զԹեղլէ[ճ]էմ և զԼեռնակոդմն և զամենայն տնօրինականսն։ Կարծեմ և այլ համադէպ սորա աղետիցն զաւառումն մեծին Ռոճայոյ, նաեւ զմայրաքաղաքին

Անախոհայ, և զտապալումն երկրիս Կիլիկիա, զՍիսիա և զՄամուէսաիա, զէգիա, և զԱտանա, և զՏարսոնն մեծ, և զգեբափառ տաճարն Աստուծոյ զՍուրբ Սոֆի, և զայլ աստուածաբնակ յարկքն։ Բայց կարծեմ, ո՛վ եղբարք, ամենեցուն համադէպ զկսկիծ վերջնոյս Տրապալսոյ համարել. և վա և եղուկ անձին և հոգոյ իմոյ տալ, որ վասն մեղաց իմոց այս ամենայն ներգործի ի տունս Աստուծոյ։

Այլ ես, ո՛վ լուսերամ դասք քահանայից, ի վաղուց հետէ փափագէի այսմ աստուածախաւս մատենի, և թեպէտ և անկատար էի ի գրչական արհեստիս, բայց ըստ ասացն Պօղոսի թէ Սերն կատարեալ ի բաց մերժէ զերկեղն, աներկեղ համարձակութեամբ սկսայ և Տէրամբ Աստուծով կատարեցի րստ կարի տկարութեանն իմոյ։ Վասն որոյ յերես անգթալ աղաչեմ զձեզ խոշորութեանս և սխալանացս անմեղադիր լինել, և զիս անարժան գրիչս Ստեփանոս ի բարին Քրիստոս յիշել, և ղծ[ն]ողն իմ, և զեղբարսն և զհամազգիսն մեր, նա և զուսուցիչսն մեր զԹորոս գրիչ և զայլսն՝ որք բազում աշխատութեամբ երկնեցին զիս յայսչափ գիտութիւնս։

Ր

183բ ԶՍտեփանոս անարհես գրիչ աղաչեմ յիշել ի սուրբ յաղաւթս ձեր, ո՛վ սուրբ ընթերձողք։

Գ

Քրիստոս Աստուած, քո սուրբ աւետարանչիս բարեխաւսութեամբ՝ Մատթեոսի, թող զիմ ծնաւղացն ղյանցանսն՝ զկամայ և զակամայ, և զիմ ողորմելի գրողի սորին՝ Ստեփանոսի սուտանուն կրաւնաւորի, որ միայն զձեւ ունիմ և ոչ զվարս, և տուր ինձ սգաստանալ յայս մեղսասէր յաշխարհէս և քեզ միայն ցանկալ։

Դ

Գրիչ՝ Աւշին սենեկալ

56 Եւ ղամէնայմեծ սենեկալն Հայոց զպարոն Աւշին՝ որդի ամենայմեծ սպարապետին Հայոց Սմբատայ, և զմայրն իմ զԹէֆանաւ՝ զդուս[տ]րան մեծ պարոնին պարոն Կոզնայ Լամբրու[ն]ին սիրէողջն յիշէ[ս]ջ[իք] ի Տեր*։

508

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԱՍԵՐ

Վիեննա 316, Տաշյան, Յուցակ, էջ 754

Ստացող Աւշին սենեքալ որդի
Սմբատ Գունդստապլի

Ես Աւշին սենեքալս ամենայն Հայոց՝ որդի բարեպաշտ իշխանաց իշխանին պարոն Սմբատ Գունդստապլին Հայոց, զոր հմտեցա գրոցս եւ

* Գրված է գլխավոր հիշատակարաններից անմիջապես հետո տարբեր գրչով. անճոռնի ու անխնամ, հավանաբար Օշին սենեկալի (1277—1307) ձեռքով։

յոյժ սիրեցի, աղաչեմ զձեզ եղբարք, որք ընթեռնուք մեղաց թողութիւն խնդրեցէք ինձ եւ ծնողաց իմոց, եւ որք խնդրէ Աստուած, հազարապատիկ տացէ իւր եւ ծնողաց իւրոց, ամէն* ։

509

ԺԱՄԱԳԻՐՔ ԵՒ ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ

Գալիմքյարյան, Յուցակ Մխիթեանի էջ 19—20, (1427—1432 թթ.)։

Ի ժամանակս յետին եղեալ,
Ի Լեւոնի արքայ աւծեալ,
Հայոց մեծաց զարմէն սերեալ,
Ի յՌուբինեանց յառաջ եկեալ։
Ի հայրապետութիւնն լեալ,
Որ Կոստանդին Սիսցի եղեալ,
Ի թուականիս մեր շուրջ առեալ,
Հարիւր իւթանց ՚ւ երեսուն այլ լեալ,
Նա եւ եւթն այլ յաւելեալ,
Միակս ի հետ կոյս կիւս եկեալ (1289),
Գրեցաւ սուրբ տառքս այս շարադրեալ
Որ պատարագք են միացեալ։
Ազգաց հնգից, որ թարգմանեալ
Ի հայ բարբառ եւ յոյժ քերեալ,
Ի սուրբ բանէն բանքս այս ստեղծեալ,
Հոդւով սրբով սա մեզ շնորհեալ,
Ձիր պարգեւաց սա մեզ տուեալ,
Ի նախահարց մեր յարդարեալ,
Եւ ի յաւանդ մեզ հաստատեալ.
Աստուածախաւսս տառքս այս պատուեալ։
Որով ըզլոկ հաց մեր առեալ,
Բանիւքս այսու զառն կենքեալ,
Ջխորհուրդ փրկչին մեր սուրբ խնկեալ,
Եւ ի սեղան սուրբ կառուցեալ,
Ի հաշտութիւն Հաւր ընծայեալ,
Ու ի թողութիւն հոգւոց բաշխեալ;
Որով լիցին արժանացեալ,
Հաղորդակից սրբոյն եղեալ,
Եւ ընդ հոգին սուրբ միացեալ,
Հաւր և Որդւոյ կցորդակցեալ։
Ընդ որս մեծ ռաբին Վարդան կոչեալ.
Այն երջանիկն աստուածարեալ,

---

* Օշինը սեռնեչալ էր 1277—1307 թվերին. «բայց գրչութիւնը քիչ մ ավելի հին ըլլալու է»— դրամ է Հ. Տաշյանը։

Որ ի մարմնի հրեշտակացեալ
Եւ աշխարհի քարոզ եղեալ,
Ի բաբուն Սարգիս՝ Շալվէ ձայնեալ,
Զսա յիշատակ հոգւոյ ստացեալ։
Անկողոպուտ գանձ սուրբ կնքեալ,
Եւ ապաւէն աշխարհի լեալ,
Մաքրիչ մեղաց մարդկան եղեալ
Եւ քաւութիւն մեզ պարգեւեալ։
Որք հաւատով զյուսոյ կախեալ,
Կան դէմ սորին ղձեռս տարածեալ,
Յանմահ գառին որ ընծայեալ,
Բանիւքս այսու պատարագեալ,
Ի սրբութիւն սրբոց կնքեալ,
Զեռամբ սրբոց եւ միշտ բաշխեալ,
Ի կերակուր հոգւոց տվեալ,
Որք յաւազան սուրբ մկրտեալ,
Եւ զարժանիսն աստուածացեալ,
Առնէ անմահ յարակայեալ։
Եւ զոչ արժանսն ի հուր մատնեալ,
Հոգւոյ մարմնովն ի մահ հովուեալ,
Ով մեծ հրաշիցս այս սքանչացեալ,
Սարսափելի բանս հիացեալ,
Որ զհացն Աստուած առնէ ստուգեալ,
Հացիւն զմարդն աստուածացեալ,
Եւ երկնայնոցն վեհ գտեալ,
Սէրովբէից գերակայեալ։
Որպէս զՏէրս մեր գըտեալ,
ՁՍարգիս Շալվէ բաբուն կոչեալ,
Հեղ և խոնարհ եւ երկեղեալ,
Եւ ի բանիցս այս դողացեալ,
Հայր եւ Որդին ապաւազեալ,
Եւ Սուրբ Հոգին անդ հանգուցեալ,
Եւ ընդ ծնողսն իւր նընջեցեալ
Զարմիւքն իւրովք առ Տէր գնացեալ,
Որոց հոգիք նոցա աւրհնեալ
Որ աստ գրով են յիշեցեալ,
'Իորք ոչ անուանք աստ է դրեալ՝
Ի գիր կենացն է կըտակեալ։
Որոց և մեք արժանացեալ,
Լիցուք մասին ժառանգեալ,
Զ[illegible]որոս երէց, որ զայս գծեալ
Զեռամբ իւրով եւ շարագրեալ,
Նա եւ զծնաւղսն իմ կատարեալ,
Յիշման ձերոց արժանացեալ,

Հարք և եղբարք զինչ յաշխարհ լեալ,
Հաւատացեալք եւ սրբասնեալ,
Արք և կանայք մանկունք տիեալ
Ծերք եւ ամեն հասակ ստեղծեալ;
Եւ անպիտան ծառայքս եղեալ,
Որ բանիս այս ենք միշտ սպասեալ,
Աղաչեմք զձեզ որք աղաւթեալ,
Սովաւ առ Հայր ու Որդի ղենեալ
Եւ առ Հոգին Սուրբս ըզսա բաշխեալ,
Որով լիցի սա կատարեալ։
Ձի մեք յաղաւթս ձեր յիշեալ
Գտից ընդ ձեզ հաղորդ եղեալ։
Նա եւ որդեակն իւր հսկող լեալ,
Գրիգորիուս ամեն օրհնեալ*։
Մարմնոյ եւ արեան արժանացեալ,
Տեառն փրկչին մեր կցորդեալ,
Աստ եւ յապառյն փառազարդեալ
Եւ պարակից սրբոցն եղեալ։
Որք ժառանգէք զհետ մեր եղեալ,
Մինչ ի վախճանն հանդերձեալ,
Սուրբ պատարագին արժանացեալ,
Եւ պարգեւացն հաղորդեալ։

510

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 1531

Գրիչ
Վայր՝ Յովճաննու վանք

ա

230բ Այս պատմութիւն իմաստասիրական** ոչ գոլով ի սուրբ մենաստանէս, ի վանս Յովհաննու, ես տէր Համազասպս բաղում փափագանաւք ի խնդիր էի, ղի յետ իմ մնասցէ ինձ ընծայ ընդ մեծամեծս ի սուրբս այս Սիովն կաթողիկէին։

Արդ աղաչեմ զձեզ մանդունք սուրբ առագաստի, հայցել ի Քրիստոսէ զթողութիւն յանցանաց մերոց, եւ ինձ եղկելի գրչիս***։

---

* Գրիչը Պատարագամատոյցն ընդօրինակելիս, պահպանել է գաղափարի հիշատակարանը, փոխելով գոչի անունը։ Բայց «Ջաքարիա կրանատոր» բառերի դիմաց լուսանցքում դրել է նախորդ գրչի՝ Թորոս Երեցի անունը։ Մենք տեղագրեցինք գաղափար օրինակից բաց թողումը։

** Ժողովածուն պարունակում է Պատմութիւն եկեղեցւոյ Սոկրատի, Պատմութիւն վարուց Ս. Սեղբեստրոսի, և Պատմութիւն Աղուանից Մ. Կաղանկատուացւոյ գործերը, որոնք գրված են տարբեր գրիչների կողմից և տարբեր ժամանակներում։ Հիշատակարանը վերաբերում է երկրորդ նյութին, որի վերջում էլ գրված է։

*** Ձեռագրում գրված բազմաթիվ հիշատակագրություններից և ոչ մեկում գրիչը չի հիշում իր անունը։

Բ

306բ Աւաղ մեծի աղետիս և անմխիթար սգոյս, որ էհաս տանս Վրաց և քրիստոնէից, զի սպանաւ թագաւորն Դէմէտրէ յազգէն Նետողաց, ոչ ինչ մահու պարտական, ի սահմի ամսոյ, և էր թիւն ՉԼՀ (1289)։

Եւ ահաւ ի մեծի վտանգի կանք, Տէր փրկեա զմեզ /// նեղութեանցս, ամէն*։

Գ

123բ Ջառաջնորդ գրոցս զսրբազան էպիսկոպոսն զտէր Համազասպ յիշեսջիք ի Քրիստոսն և զԳրիգորէս կրաւնաւոր։

Դ

149ա Աստանաւր յիշեսջիք զսրբազան էպիսկոպոսն զտէր Համազասպ, ընդ նմին եւ զԳրիգորէս կրաւնաւոր, եւ զիս ղանարժան գրչողս ի Քրիստոս։

Ե

205ր Յիշեա Քրիստոս Աստուած ղստացաւղ գրոցս և զառաջնորդ սորա, և զգրողս։

Զ

256բ Սխալեցաւ միտքս, զի նեղէին զմեզ այլակրանաւքս, թողութիւն արայ։ Աւա՛դ ի վրացեա՛ց**։

Է

120ա Աւաղ դառն ցաւիս, որ դիպա, և խափանեցաւ գիրս, վասն զի ատամս ցաւեցաւ զաւուրս եւթն, նաև գլուխս, այլ Տէր կարողացոյց։

Ը

97ա Ողո՛ւկ, քունս նեղեաց և վիշտս յաւելուլ կամի։

Թ

172ա Ջառաջնորդ գրոց զսրբազան եպիսկոպոսն Համազասպ եւ զԳրիգորէս կրաւնաւոր յիշեցէք ի Քրիստոս եւ զմեղապարտ գրիչս, աղաչեմք։

Ժ

265ա Աստանաւր յիշեսջիք զսրբազան եպիսկոպոսն զտէր Համազասպ, որ եղեւ ստացող գրոցս, եւ զԳրիգորէս կրաւնաւոր։ Թէ ճար կա՝ և զմեղապարտ գրիչս։

ԺԱ

273ա Ջստացող գրոցս զերջանիկ եպիսկոպոսն զտէր Համազասպ, եւ զեղկելի գրիչս յիշեցէք ի Քրիստոս։

---

* Գրված է ներքևի լուսանցքում և վերջին տողը կտրված է, երկու բառ չի կարգացվում։

** Հետագայում, մեկը նոտարով ավելացրել է՝ «ճշմարիտ»։

ԺԲ

Գրիչ՝ Գրիգոր

74բ ՋԳրիգոր աշակերտ Թոթկայ, որ զդէմս գրեցի, յաղաւթս յիշեցէք, նայ և դուք անմոռաց լիցիք առաջի Աստուծոյ*։

511

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՂԵՒՈՆԴԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Երևան 1902

Գրիչ՝ Սարգիս
Վայր՝ Յովհաննավանի

Ա

130բ Կատարեցաւ վարդապետութիւն Ղեւոնդի վասն ժամանակագրաց տանս Թորգոմայ, ի հրամանէ տեառն Շապհոյ Բագրատունւոյ, որ և ցանկացող եղեալ սորին տէր Համազասպ ի պատուատուր յազգէն Մամիկոնեանց, ի հալալ արդեանց եւ հրաման ծրել փցուն գրչի Սարգսի: Աղաչեմ յիշել յողորմածն Աստուած, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Բ

217բ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք կամ լսէք և կամ աւրինակէք, զմեծավաստակ ճգնաւորին Եւագրէայ զհոգիայշահ հրամանքս, յիշեցէք զարժանին բարի յիշատակաց և բազմաց վկայեալն ի լաւն, զտէր Համազասպ, թէ յիշէք ղփցուն գրիչս զՍարգիս, որ եմ սովեալ ի հոգեւոր կերակրոց։ Ողորմածն Աստուած ամենեցուն ողորմեսցի յաւրն կարեաց, զի նմա վաել է փառք և երկրպագութիւն այժմ և միշտ և յաւիտեանս այւիտենից, ամէն։

512

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀՆԳԱՄԱՏԵՆԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Երևան 1094

Գրիչ՝ Յովհաննէս

Ա

2բ Ի խնդրոյն տեառն Համազասպայ և Գրիգոր վարդապետի Հաւաքումն մեկնութեան սրբոց արանց Եղիշէի, Եփրեմի, Յովհաննու Ոսկեբերանին և զորս տեսանին ի յանցնիւրս։

Բ

327բ ...Աւրհնութիւն... Վարդան վարդապետին, և ստացողի սորա Ներսէ[ս] վարդ[ապ]ետի, և անարժան և ծոյլ գրչի Յովհաննիսի ողորմութիւն ի նմա։

---

* Գրիգորը միայն մի էջ է գրել և նշել է իր անունը։

513

ԺՈՂՈՎԱԾՈ

Երևան 4834

Գրիչ՝ Առաքել
Վայր՝ Ս. Թեոդորոսի վանք,
մեծ ի գեղաքաղաքս Ճմին

57բ Ի թուականիս Հայոց ՋԼԸ (1289), ի յամենայն յուլիս ԺԸ (18) եղև կատարումն գրոցս ձեռամբ Աստուածատուր Աստուածաբանի գրչի, արդեամբք և ծախիւք Աճառոն վարդապետի, յիշատակ իւր և ծնողաց և եղբարց և քերց, և ամենայն ազգատոհմից՝ կենդանեաց և հանգուցելոց, և որք մի անգամ ազնական եղեն Մելիսանին, և Վարդին, և Շահնշահ յատրին, որ զթուխտըն յաժան ծախեց, և Վարդան սարկաւագին, որ ի կոկելն աւգնեց, ընդ հովանեաւ Սուրբ Թեոդորոսի, մերձ ի գեղաքաղաքս Ճմին:

Արդ, որք ընթեռնուք զսա, կամ աւրինակէք, յիշեցէք զմեղ և մեղայ
58ա ք[ո]ղուքին խնդրէցէք,|| և Աստուած, որ առատն է ի տուրս պարգևաց, մեղ և ձեզ և ամենայն հաւատացելոց առհասարակ, ողորմեսցի, և նմա փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից։

514

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 9483

Գրիչ՝ Յովաննէս
Վայր՝ Ասայելի վանք և
Մշակավանք

ա

Փառք համագոյ Երրորդութեանն յամենայն արարածոց, որ արժանի արար հասանել յաւարտումն աստուածախաւս տառիս և հրաւիրակ հա-
186ա մա[գ]ոյից։ /// Գր /// կենաց լուսաւոր սուրբ աւազանաւն [ը]նդ ամենայն տիեզերս քարոզ կենդանի և ջուր կենդանարար, առ ի յարբումն հոգւոյ և մարմնոյ, հանգիստ ննջեցելոց և բժիշկ ախացելոց, և հալածիչ դիւական գնդից, գիր կ[են]դանի մինչ ի կատարած աշխարհի, խրատ մեղուցելոց, և սպառնացող անդարձից, ուրախութիւն սրբասիրեաց, ուղղութիւն հայրապետաց սրբոց, առաջնորդ քահանից, պսակ և պարծանք թագաւորաց, իշխեցող իշխանաց և համարէն հաւատացելոց կեցո[ւ]ցիչ, բարձրաքարոզ ի վերին զաւ[ր]ութենէն ընթհանիւր տիեզեր[ա]ց։ Ջոր մեղաւոր հողս, անարժան և անմաքուր[ս] որո մանաւանդ զանուն մի[այ]ն առեալ ունիմ քահանաի բ[այց գ]ործք, որպէս հեռացեալ երկի[նս] յերկրէ ամենայն գոյիւ արտ[աք]ո երևիմ և ոչ եմ արժանի մեր[ձ]ենալ ի սուրբ կտակս, վասնզի այս գործ մաքրագունիցն է, այլ ես լրբաբար հետևեցա և գծած[գ]րեցի զփրկագործ սուրբ Աւետարանս. անվարժ ուսմամբ փ[ցո]ւն և ախմար արուեստիւ։

Գրեցաւ ի ժամանա[կիս] տեղապահ և աշխարհակալ մեծազաւրն Աղուն, և ու[նի ը]նդ ձեռամբ ի ծովէ ի ծով, [որու]մ և տացէ նմա Տէր Աստուած վայելել զաթոռ իւր իշխանութեանն։ Եւ է թու[ականութիւն] Հայոց ՉԼԸ (1289), եւ է հայրապետ յայս ///* Հայոց տէր Գրիգոր ///** տէր Ստեփանոս որ[ոյ] տացէ նորա Տէր Աստուած [ա]թոռ աշտիճանի և ուղղափ[առ] հովո[ւյել զհաւտս Քրիստոսի Աստուծոյ մեր[ո], և նմա փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Գրեցաւ սուրբ Աւետարանս ի խ[ո]չակաւոր և յաստուածայբնակ [սուրբ] ուխտիս Ասայէլի անապ[ա]տիս, ընդ հովանեաւ Սուրբ Կա-ր[ա]պետիս և սուրբ առաքելոյս Բա[ր]թողիմե[ո]սի և Սուրբ Գրիգորի Հայոց Լու[սաւորչի], և կենսայբեր Սուրբ [Նշ]անիս և այլ սուրբ նախա-տակաց։ Եւ ըստ մեղաց մերոց և անհ[ն]աղանդութեան ոչ եղեալ կատա-ր[ու]մն, այլ Յոհան գլուխ մնաց, [և] վերջ եղեալ ի սուրբ ուխտիս Մշակավանի, ընդ հովանեաւ Սուրբ Գեորգեա և Սուրբ Կարապետի և Սուրբ Սա[րգսի] և Սուրբ Սիոնի, եւ Սուրբ Ստեփանոս[ի] եւ Պատե-բաւզ[մ]ի սուրբ Նշանիս։ ///*** Սրբասնե[ալ] /// յարազատ եղբաւր Սար-գըսի [հ]աւատարիմ կ[ր]ամաւորի, և Համազասպայ աշխարհականի, և անուն գրչիս Յովաննէս կոչեցայ։

Ար[դ], աղաչեմ զամենիսեան սիրովն Աստուծոյ, որք հանդիպիք տեսլեամբ սրբոյ Աւետարանիս, զխոշորութեան գրիս և զանարուեստ բանիս անմեղայդիր լերուք։ Զանարժանս յիշելոյ արժ[ան]ի արարէք, ի սուրբ և ի մաքրափայլ [յա]ղաւթս ձեր, և զհոգևոր և զմարմնաւոր և զսնուցիչն իմ զհայր Յուսիկ հաւրեղբայր իմ, և զհայրն իմ զՊեհառոս, և զմայրն իմ զԲարի։ Յուսամք ի ձեզ լինել մեզ յիշող առաջի Քրիստոսի, զի ողորմութիւնն Աստուծոյ ի ձեռս արժանաւորաց գթասցի։

Բ

142բ Եւ զմեղսաճոճեալ Յովաննէս յիշեցէք, ո՛վ եղբայ[ր]ք, և Քրիստոս յիշողացդ և յիշելոցս առհասարակ ողորմեսցի, ամէն, ամէն։

515

ԱԽԾԱՐԱՆ

Սրվանձտյան, Թորոս Աղթար. Բ, էջ 293

Գրիչ՝ Պեհառոս
Վայր՝ Երզնկա և Սեւաստ

Եղեւ աւարտումն սուրբ Աւետարանիս ի թվականութեանս Հայկազ-նեան տումարիս ՉԼԸ (1289) յաստուածազարդ հայրապետութեան տեառն

---

* Մի բառ չի կարդացվում։

** Դրիգոր անունը ուրիշ թանաքով հետո է ավելացված։ Գրիգոր Անվարղեցին աթոռակալել է 1293—1307 թթ.։

*** Տող և կես պատռված է։

Կոստանդնեայ Հայոց կաթողիկոսի և ի քրիստոսապսակ թագաւորութեանն Հեթմոյ, եւ արժանապատիւ եպիսկոպոսութեան սրբասէր աստուածամեծար արքեպիսկոպոսիս մերոյ տէր Ներսէսի:

Բայց գրեցաւ Աւետարանս ի գաւառիս Նկեղեաց, ի մայրաքաղաքին Երզնկայ, ձեռամբ... գրչի Պետրոսի... քահանայի, նաեւ տեղի հանգրստեան մերոյ՝ յորում գրեցաք, ի գուռն Սեւաստու, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի մաւր բանին Աստուծոյ: Եւ ստացայ դա ինձ ի մխիթարութիւն կենաց և ելիցն յաշխարհէ, յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց...:

516

ԺԱՄԱԳԻՐՔ

Երուսաղէմ 2419, Պողարյան, 8ուցակ Ը, էջ 62

Գրիչ՝ Ստեփանոս

269 Փառք Սուրբ Երրորդութեանն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Ի թուականութեանս Հայոց ՁԼԸ (1289) գրեցաւ լուսազարդ աղաւթից մա-
270 տեանս, ի խնդրոյ ումեմն սրբասէր միայն||ակեցի Նորոգէս անուն կոչեցեալ, ձեռամբ ամենամեղ և ախմար գրչի Ստեփ[անոսի]: Արդ, որք աւգտիք ի սմանէ ումամբ կամ գաղափարաւ, յիշեսջիք ի Քրիստոս զՆորոգէս միայնակեաց և զծնողս իւր, նաև զիս՝ զՍտեփան[ոս] ի սրտէ խոցեալ և մեղաւք լցեալ հոգի, զանդարձս ի չարիս, յերեսս անկեալ աղաչեմ յիշման արժանի առնել, և Քրիստոս, որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ և մեզ ողորմեսցի:

517

ԱՒԵՏԱՐԱՆ

Երուսաղէմ 3290

Գրիչ՝ Գոգի

ա

589 Ի թուիս Հայոց ՁԼԸ (1289) դրեցաւ սուրբ Աւետարանս ընդ ձեռամբ մեղապարտ Գոգու և անարժան քահանայի, նաև ստացող սորայ ղպատուական քահանայ զՄիխայլ, որ ստացաւ ղսա յարդար ընչից իւրոց, յիշատակ իւրոյ և ծնողաց իւրոց, և քեզ փառք յաւիտեանս, ամէն:

բ

Կազմող՝ Սուրիաս

Եւ զսակաւ աշխատող սորա զՍուրիաս, որ կազմեցի զսայ, յիշելո արժան արարէք և Տէր [զձեզ յիշ]*:

---

* Դրված է կարմիր թանաքով:

518

ՇԱՐԱԿՆՈՑ

Ձմմառ 58, Քէշիշյան, Յուցակ. էջ 93

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Կլայ Հռոմեական

298բ Գրեցաւ սա ի լաւ եւ ի ստոյգ աւրինակէ, որ կոչի Կոստընկցի, Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր եւ Որդոյ եւ Սրբոյն Հոգոյն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, ամէն։ Ի թուականութեանն Հայոց ՁԼՀ (1289) եւ ի հայրապետութեան տեառն սուրբ եւ փառաւորեալ, երշանիկ եւ տիեզերալոյս հայրապետին մերոյ տեառն Կոստանդեա, եւ ի թագաւորութեան սուրբ եւ բարեպաշտ արքային Լեւոնի, գրեցաւ Շարականոցս այս, սատարութեամբ Աստուծոյ, ձեռամբ յոգնապարտ քանքարո եւ փանաքի գրչի Գրիգոր քահանայի, ի յանառիկ ամրոցն ի Կլայս Հռոմկական, ընդ հովանեաւ տիեզերալոյս հայրապետին Սրբոյն Գրիգորի եւ Մարիանէի եւ Սուրբ Աստուածածնի փափագ մ ///*

519

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ԴԱՆԻԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍՈՐԻՈՅ

Ձմմառ 120, Քէշիշյան, Յուցակ. էջ 241—243. Ալիշան, Հայապատում, Բ. էջ 488—491

Սրբագրող և ստացող՝ Յովաննէս Արճաեղբայր
Վայր՝ Ոռնկա վանք

ա

Բնաւորական իմն է բանականս սեռի՝ բարւոյն բաղձալ եւ նմանիլ նախատպին ըստ կարի գիտողացն զնա, ի վեր՝ զաւրէն հրոյ միտել զակնն ոգւոյ ի գերն մեր գլուխ ունել. զի վեհիցն է եւ բարձրագունից՝ յովտէս տխրութեան բարձրանալ եւ զթակարդիւք սորս անդրաքայլել, ան անդր ի վեր ելանել եւ հրազինեա լուսափայլիցն վեհմաց պարառոցիլ։ Իսկ ես Յոհաննէս արճաեղբայր, որ երբեմն Պաղտացն, որդի քրիստոսամեծար եւ ամենաբջանիկ, աստուածարեալ իշխանաց իշխանին Հայոց եւ պարոնին Կոստանդեա մականուն Մոզոն, որո յիշատակն աւրհնեալ միշտ յԱստուծոյ եւ յաստուածազանիցդ եղիցի, ամէն։

Դատապարտս այցելու, անիմաստ հրաբուն հողս եւ նըւաստ ձեր ծառայ ծառայակիցս, ոչ ընդ սակաւ գտանիմ պարտեաւք անգեալ՝ Տեառն իմոյ արարչին եւ վասն իմ խաչեցելոյն, զի մոռացաւղ անթիւ երախտեաց եւ բաղում բարեաց նորա եղէ, ի ստորակայս եւեթ յար պշուցեալ, եւ ցանգալի տեսոյ իւրոյ վրիպեալ, կա զանկայս եւ էակ զոչէս վարկուցեալ։ Յորմէ շնորհիւ գթածի Տեառն իմոյ եւ հաստչի Յիսուսի Քրիստոսի ստեղծչի եւ նորոգողի Աստուծոյ՝ իբր ի թմբրական քունոյ ընդոստուցեալ տաղտապմամբ՝ ի սքանչելի պատուիրանս նորա ուշմսբար նայեցեալ

* երկու տող եղծված է, իսկ հաջորդ թերթը՝ ընկած։

եւ աղտափարատ* լուսով հըրճըւեալ, յինէն անծանաւթ անունս** կրեալ եւ լուսատու բանիւքս ոգիացեալ, ղբերան ոգւոյս բացեալ եւ զաստուածագիծ մատեանս կլնալ, որ քաղցր ի քիմս մտացս իմ գտեալ, քան թէ զխորիսխ մեղու ճաշակեալ, որով յոյժ եղէ ճոխացեալ, քան որ ոսկւով եւ ակամբք է փարթամացեալ եւ իմ յայս իսկ ջանասիրեալ։ Զի զանգիւտ ի գիւտ փոխարկեալ***, եւ զոր յախմար գրչաց էր այլալեալ՝ յաւրինակաց բազմաց տաժանմամբ եղեւ յարմարեալ, զաւրէն ջրոյ խողովակի ի սուրբսդ իմ անցուցեալ, եւ զոգւոց ձեր պտուղ անթարշամ սովաւ արարեալ։ Վարուք տերեւախիտ զմարմինսդ փթթեալ, եւ իմաստիւք զմիտս ոգւոց պտղեղ սովաւ կազմեցեալ****։ Երջանիկ պարուպետաց պարակցեալ, եւ աշալուրջ տեսլեամբ Արքային մեծի ղբւարճացեալ, լի լապտերաւք մտից սուրբ փեսային ժամանեալ, եւ անաղտ սիրով ի սէր նորին խառնեցեալ, այոյ, ամէն, եղիցի։

Արդ, պաղատանաւք սրտիւ եւ ջերմ արտասուաւք հայցեմ ի ձէնջ, հարք սուրբք եւ եղբարք ի Քրիստոս եւ որդեակք, ժառանգողք սորա եւ ընթերցողք եւ աւրինակողք՝ յիշել ի բարին Քրիստոս զտառապեալս Յոհաննէս եպիսկոպոս, ծնաւղաւք մեր, ընտանեաւք եւ ամենայն նոցին ծնընդաւք, եւ համայն ի Քրիստոս հաւատովք՝ քաւութիւն, թողութիւն, հանգիստ եւ ողորմութիւն գտանել ի Քրիստոսէ Աստուծոյ, այժմ եւ յապագայն, ամէն։

Պաղատիմ մերդ ասւրաց՝ մի աղաւաղել տալ զսա անմիտ մանգամբք, մի մրճոտել, մի անառիգած եւ բերանաբաց ձգել, մի զգանձս հասարակաց գողանալ, խորել եւ ծրարել իբր զժխտողն ստամբակ, մի գիտնոց խնայել, եւ մի արհեստագէտ գրչաց արգելուլ յաւրինակ տալոյ, եւ մի պարսել զայսր խահի կազմող ձեր, զյոյժ տաժանեալս յուղղոյն գիւտ. մանր է ասել գիր եւ փոքր դիրք. Գ (3) աւրինակ բերեալ զմին ուղղեցի, եւ զսա ետու գրել Սարգիս քահանայի, եւ եւս ուղղեալ յինէն կրկին եղբարբք մեր վաստակակցաւք՝ որոց Քրիստոս Աստուած ողորմեսցի նոցա եւ նոցայոցն, ամէն։

Գրեցաւ ի թվիս Հայոց ՉԼԸ (1289) յՈտնկա վանքն*****, ի կաթողիկոսութեան տեառն Կոստանդեա երկրորդի՝ յայսմ ամ եդելոյ, ի թագաւորութեան Լեւոնի բարեպաշտի եւ քաջի, աստուածաշնորհ զաւակաց նորան պարոնի Հայոց Հեթում աստուածապահ երջանիկն ի կրաւնաւորս եւ անհամեմատն ի բնաւս, զոր Քրիստոս փրկեսցէ միշտ ի չարէ, ամէն, եւ պարոն Թորոս, Սմբատ, Կոստանց, Ստեփանէ, Ռուբէն, Աւշին. Աջն Աստուծոյ****** հովանասցի ի նոցին ամէն, եւ Աստուած զձեզ յիշեսցէ, ամէն։

---

* Բառը չնջած է. լրացնում ենք «Հայապատումից» (էջ 488—489), ուր Ղ. Ալիշանը բերել է նույն հիշատակարանը այլ ձեռագրից, որը հավանաբար գտնվում է Վենետիկում։

** Լրացնում ենք «Հայապատումից»։

*** «Հայապատումի» մեջ «ի գիւտ գրիս արկեալ»։

**** «Հայապատումի» մեջ՝ «Գրոց պարզել սովաւ կամեցեալ»։

***** Նույնն է Լիսոնկա վանքի հետ։

****** «Աստուծոյ» բառը լրացնում ենք «Հայապատումից»։

Բ

Դատապարտ այցելու եւ անիմաստ բարուն արքայեղբայր Հայոց Յովհաննէս, որ երբեմն Պաղտայն, որդի քրիստոսարեալ եւ ամենաընտիր, երշանիկ եւ բարեպաշտ իշխանաց իշխանին եւ թագապահին՝ պարոնին ամենայն Հայոց Կոստանդէա, մականուն Մոզոն կոչեցեալ, յՌուբինեանց տոհմէ՝ որոց յիշատակն աւրհնեալ յԱստուծոյ եւ յաստուածայնոցդ լիցի, ամէն. ցաւղ կողից կենարարին յոսկերս նոցա տեղասցի, ամէն։ Ի հոգիս նոցա հոգին Աստուծոյ հանգիցէ եւ ի լոյս երեսաց իւրոց լոյս փառացն Հաւր ընդ սուրբսն դասեսցէ զնոսա։

Արդ, ի թուականիս Հայոց ՉԼՀ (1289) գրել ետու զեռափափաք եւ խմաստատու, հոգէնիւթ եւ աստուածարեալ բանքս սրբոյն Դանիէլի մեծ վարդապետին եւ հոգէխառն իմաստնոյ Սարգսի նորակերտ գրչի վանից իրիցու՝ որոյ Տէր ողորմեցի։ Եւ քան[զ]ի յոյժ վատթարեալ յախմար գրչաց տեսի զաւրինակքն, յորս բնաւ իսկ ոչ եւ կամ սակաւ ինչ գտանի ճշգրտութիւն. Բ (2) աւրինակս եգի առ իրեարս, եւ յոյժ քրտնաշան եւ մեծախոնջ տաժանմամբ ուղղեցի ըստ կարի, որպէս յայտ ահա գիտնոցդ երեւի։ Յոյժ համազոյգ էին մինչ ի ԿԸ Սաղմոսն, եւ զկնի այնց կարի եւս բայից երկարութեամբ զատեալ գտանին ի միմեանց՝ թէպէտ եւ ամբողջ մտացն էութիւն գոյր ի նոսա, եւ արտհետ իսկ գոյր ի միոյն բանքս դրեալ չինէին։ Վասն որոյ Տերամբ Աստուծով աղաչեմ զսուրբսդ մեր եւ զժառանգողսդ սորա եւ զաւրինակողսդ, եւ որք աշխատասիրաբար ուշմութեամբ ընթեռնոյք՝ ուղղածուծ զանծախս ծասկոմն առնել։

Յիշեցէք սրտի մտաւք զմեզ մերայովքն ի բարի եւ անմոռաց յիշումն Քրիստոս՝ ներումն յանցմանց, քաւումն պարտեաց, գրումն ի գիրն կենաց, ազատ ի գերչաց, հաշտ ի խռովութեանց եւ հուպ ի տարաբնակաց։ Նա եւ բնաւ իսկ ի գերն մեր գլուխ Քրիստոս միանալ՝ համայն ի նա մկրտելոց, եւս եւ զմեզ յիշողսդ եւ ք՝ ի սա աշխատողքս, ամէն։

Աղաչեմ սուրբ եւ մաքուր զսա պահել, գրել իսկ, եւ մի գողանալ եւ խորել։ Աւրհնեալ են յԱստուծոյ լսող եւ յիշողք մեր, ամէն։

Գ

52ա *Ուղղողիս մեծախոնջ տաժանմամբ եւ ստացող հողոյս Յովհաննէս եպիսկոպոս, եւ կրկին ծնողաց իմոց եւ զարմից, եւ զմեզ ի բարի յիշողացդ՝ ողորմեսցի Քրիստոս Աստուած իմ։*

Դ

Գրիչ՝ Սարգիս

149բ *Արդ, որք վայելէք ի լրոյ հոգիատար Մեկնութեանս եւ կամ գաղափարէք՝ յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս զքարգմանող սորա զտէր Գրիգորիս Վկայասէր, եւ զնորին հարազատ հեղինակ զտէր Բարսեղ։ Նա եւ զիս զտէր Յովհաննէս արքեղբայր ուղղող սորա յիշէ Քրիստոս ի բարի եւ զյիշողսդ մեր։ Եւ այժմ զնուաստ զՍարգիս գրողս աղաչեմ յիշել ի Տէր։*

Ե

6բ Ջստացաւղ սորա զտէր Յոհաննէս արհիեպիսկոպոս, արքաեղբայր Հայոց յիշեսչիք ի Տէր, հանդերձ ամենայն զարմիւք։

Զ

29ա Ջնուաստս զՍարգիս գրիչ աղաչեմ յիշել ի Տէր, եւ զքեռին իմ զՅոհաննէս վարդապետն։

Է

52ա Ջստացաւղ սորա զարհիեպիսկոպոս զտէր Յոհաննէս արքաեղբայրը յիշեսչիք ի Տէր, հանդերձ ամենայն զգզաւ, եւ Աստուած զձեզ յիշէ յիւր ողորմութիւն։ Ընդ ամին եւ զնուաստ Սարգիս գրիչ աղաչեմ յիշել ի Տէր։

Ը

84բ Ջնուաստս Սարգիս գրիչ աղաչեմ յիշել ի Տէր, եւ Աստուած զձեզ յիշէ։

520

ԱԻԵՏԱՐԱՆ

Հովակիմյան, Ցուցակ Նիկոմեդիոյ, էջ 15

Գրիչ

Կատարեցաւ սուրբ Աւետարանս ի մարտ ամսոյն ԺԸ (18), թագաւորութեանն Հայոց Լեւոնին՝ որդին Հեթում թագաւորի, որ եւ Աստուած զաւրացուցանէ թագաւորին մեր Լեւոն եւ զաստուածատուր որդին իւր Հեթում։

521

ՃԱՇՈՑ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՐՔԱՅԵՂԲՕՐ

Վիեննա, 245, Տաշյան, Ցուցակ, էջ 634

Գրիչ

Քրիստոս Աստուած բարեխաւսութեամբ մաւր քո եւ կուսի եւ սրբոց առաքելոցն եւ ամենայն սրբոց քոց, ողորմեա ծառային քո տէառն Յովհաննիսի արհէպիսկոպոսի եւ տիեզերալոյս վարդապետի արքաեղբաւր՝ մեծ արքային Հեթմոյ գնացելոյն առ Քրիստոս, եւ ծնողաց իւրոց եւ ամենայն զարմից, եւ Թողութիւն շնորհեա յանցանաց նոցա, եւ քո սուրբ արքաութեանդ արժանի արա ընդ սուրբս քո։ Եւ որք յիշեն զսոսա սրտի մտաւք ի բարի եւ Թողութիւն մեղաց խնդրեն ի քէն, եւ նոցա Թողութիւն շնորհեսցես աստ եւ ի հանդերձեալն, եւ քեզ փառ յաւիտեանս, ամէն։

* Հեթում Ա-ն մահացել է 1270 թվականին, իսկ Հովհաննես արքայեղբայրը՝ 1289 թվականին։ Ձեռագիրը գրված է այդ թվականների միջև ընկած տարիներին։ Դնում ենք վերջին հնարավոր թվականի տակ։

522

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 1315

Գրիչ և ստացող՝ Յոհաննէս
Արքաեղբայր

ա

1բ *Զսակաւս գրող և զաարխս ստացող զ*Յոհաննէս *եպիսկոպոս և ծնաւղսն իմ՝ ծնընդաւք նոցին, յիշեսջիք ի Քրիստոս, ո՜վ սուրբք Աստուծոյ։*

բ

5բ *Ընդ նմին և զյետին գծողս տէր* Յոհաննէս *արհիեպիսկոպոս Արքաեղբայր յիշեսջիք ի Քրիստոս, և զնաւղսն իմ, և ամենայն հաւատացելոց և ընթերցողացս, և լսողացդ ողորմեսցի Քրիստոս, որ է աւրհնեալ յաւիտեանս։*

գ

9ա *Զաստուածասեր և քրիստոսազգեաց հարսդ և զեղբարսդ իմ ի Քրիստոս, աղաչեմ յոքնամեղ դատապարտեալս ոգի* Յոհաննէս *եպիսկոպոս Արքաեղբայր Հայոց, որ և բաբում, յիշել հանապազ զծնաւղսն իմ, և զեղբարսն, և զքերսն, ամենայն թագազնեա տոհմայնաւքն մեր թողութիւն և փրկութիւն և հանգիստ և ողորմութիւն գտանել մեզ ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։ Մանաւանդ զիմս անարժանութիւն ջերմ գթով և աղէկէզ սրտիւ յիշել հայցեմ յաւուր տանի երևման սուրբ խաչին, որք լուսաւորիք սովաւ, զի յոյժ փափագմամբ գրեցի ինչ-ինչ մեղսակարկամ ձեռամբ իմով, և է զոր այլոց ետու գրել տաժանելի կրիւք, յիշատակ ինձ և իմոցն, և ի վաելումն աւճտի ապագայիցդ, ի դառն և վշտալի տըխրալլուկ [աւ]ուրս, յուրամ նեղիմ յընգանեաց՝ իբր ի թշնամեաց, և վըշտագնիմ ի սիրելեաց, իբր յատելեաց, որոց և յիշողացդ զմեզ ի բարի Քրիստոս Աստուած ողորմեսցի միշտ, ամէն։*

դ

20ա *Երջանկացդ պարուց երկիր անգեալ եղկելի ոգիս* Յոհաննէս *եպիսկոպոս Արքաեղբայր Հայոց, հայցեմ յիշել զիս և զիմսն ի Քրիստոս, զի յոյժ փափագմամբ ետու բերել զսա ի* Հռոմկլայէն, *զի չկայր յերկիրս, և ես ձեռամբ իմով գրեցի ի յոյժ վշտաբեր աւուրսս, և որք յիշէք զմեզ ի բարի, և զձեզ յիշեսցէ անմոռացն Աստուած ի բարի։*

Երախտաւորքն մեր՝ մասն բարի գտցեն ի Քրիստոսէ Աստուծոյ, և մեղուցելոցն մեր, եթէ բանիւ և եթէ գործով, թողութիւն համայնիցն շնորհեսցէ Քրիստոս, և նմա փառք յաւիտեան, ամէն։

---

* *Արքաեղբայրը գրել է առաջին 20 թերթերը...*

Ե

Գրիչ՝ Յակոբ

75ր Զաստուածապատեալ սուրբ եպիսկոպոսն տէր Յոհաննէս զեղբայր թագաւորի աղաչեմ յիշել ի Տէր, ո՛վ աստուածասէր անձինք։ Ընդ նմին և զեղկելիս Յակոբ սուտանուն գրիչ, և Աստուած զձեզ յիշէ յիւր ողորմութիւն։

Զ

120ա Զտեր Յոհաննես արքեպիսկոպոս և րաբուն, զեղբայր բարեպաշտին Հայոց Հեթմոյ և ղորդի քրիստոսասէր իշխանաց իշխողին մեծին Կոստանդեա՝ Արքայահաւր Հայոց, ծնաղաւք նոցին և ծննդաւք և ամենայն թագազնեա ընդանեաք յիշել աղաչեմ ի Քրիստոս, թողութիւն և ողորմութիւն գտանել ի Քրիստոսէ Աստուծոյ այժմ և յապագայն, ղի յոյժ փափագանաւք ետ դրել զաստուածային մատեանս ի հիշատակ ինքեանց, և Աստուած յիշողացդ և յիշելոցն ողորմեսցի, ամէն։

Այլ և զեղկելի գրիչս Յակոբ, և զիմսն չմոռանալ աղաչեմ։

Է

352ա Զսրբանեալ արհի սուրբ եպիսկոպոսի տէր Յոհաննէսի, եղբայր արքային Հեթմոյ, աղաչեմ յիշել ի Տէր, ո՛վ սուրբ եղբայրք, և զլցեալս մեղաւք Յակոբ գրիչս, և զեղբայրն իմ Կոստանդ, որ յայսմ ամի սպանաւ յանաւրինաց, աղաչեմ սրտի մտաւք յիշել ի սուրբ յաղաւթսդ ձեր, և Աստուած զձեզ յիշեսցէ։

Ը

360բ Զարքաեղրարն Հայոց զտէր Յոհաննէս ստացող սորա և զիւրսն յիշեցէք առաջի Քրիստոսի, ո՛վ տեարք։

Ր

378բ Սիրելիք Աստուծոյ և ծառայակիցք մեր ի Քրիստոս, զարհիեպիսկոպոս զտէր Յոհաննէս՝ ստացող սորա, և ծնողսն իւր, և զհամայն թագազնեա ընտանիսն իւր յիշեցէք առաջի Քրիստոսի ի բարի, և Աստուած զձեզ յիշեսցէ, ամէն։

Ժ

454բ Զյետին գրող սորա զՅակոբ, և ծնաղւսն իմ, և զեղբայրն իմ Կոստանդ որ յայսմ ամի սպանաւ յանաւրէնաց, յիշել աղաչեմ ի Տէր, ո՛վ աստուածասէր սուրբ հարք և եղբարք։

523

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 3710

Գրիչ՝ Յոհաննէս Արխաեղբայր

ա

7ա Զունայնս ի համայն մասանց բարեաց և փարթամն եպերելեաց, զդատապարտս ոգի զՅոհաննէս եպիսկոպոս արքաեղբայր Հայոց, ծնողաւք մեր և ընտանեաւք յիշեցէք ի բարին Քրիստոս աղաչեմ զսուրբսդ Աստուծոյ, և զձեզ Տէր յիշեսցէ, ամէն։

բ

28բ Զգրող սորա Յոհաննէս արքեպիսկոպոս և րաբուն, զորդի քրիստոսասէր և ամենընտիր իշխանաց իշխանին Կոստանդեայ թագապահի, և եղբայր բարեպաշտի և քաջի Հայոց մեծաց արքայի Հեթմոյ, որոց յիշատակն աւրհնութեամբ լիցի առաջի Աստուծոյ, համայն ծնրնգաւք սոցա և բնաւին զարմիւք, յիշել ի բարին Քրիստոս աղաչեմ զսուրբսդ, և յիշեալն ամենից՝ ղյիշողսդ յիշեսցէ, ամէն։

գ

Այլ գրիչ

262բ Զաստուածարեալ և զերիցս երանեալ արքեպիսկոպոսն զըտէր Յովաննէս զտացող գրոցս, զեղբայրն սուրբ արքային յիշեսջիք ի Տէր և զտառապեալ գրողս։

դ

Գրիչ՝ Թորոս

294ա Ա՛յ եղբայր, յիշեա՛ զիս զԹորոս ի Տէր Քրիստոս։

ե

314ա Զծառայեալս գրոյն և ոչ բանին,
Ծառայք հոգւոյն և ոչ բայիւն,
Յիշողք լիջիք ինձ առ հոգին,
Զի ուր իցեմ, հոգւոյն լիցիմ։

զ

Գրիչ՝ Ստեփանոս Վանկայցի

347ա Պակաս է ի բան առ բան Հարցմանցդ, Թերոյն Թողջիք մեզ, զի զայս գտաք յաւրինակին, եւ զՅոհաննէս արքեպիսկոպոս՝ արքաեղբայր Կիլիկոյ, ծնողաւք և զարմիւք յիշեցէք ի Քրիստոս։ Նա և զստրուկ ծառայս նորա Ստեփանոս գրիչ, Վանկայցի։

է

378բ Աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք զսա, զերկրպագողս սուրբ խաչին Քրիստոսի Աստուծոյ զՍտեփաննոս յիշեցէք ի մեղաց թողութիւն*։

524

ՏՐԱՄԱԽԱԻՍՈԻԹԻՒՆ

Երևան 4947

Գրիչ՝ Ներսիսուկ

ա

25բ ԶՅոհաննէս եպիսկոպոս եղբայր թագաւորին Հեթմո։
Ներսէս տրուպ և անարժան**
Սուրբ պատմութեանս սիրով թարգման,
Յորոց սովաւ հոգւով ցնծան,
Հայցեմ ներումն թողութեան։
Զգրիչ սորին խիստ անարժան,
ԶՆերսիսուկս մեղաց պարտական,
Ի ժամ սորին ընթերցման
Մասնիկ միոյ ողորմութեան։

բ

47բ Զգրող սորա զՆերսիսուկ յիշեսջիք ի Տէր։

գ

89ա Արդ, աղաչեմ զընթերցողսդ և զիմաստութեան սիրողսդ իմանալ զխորս իմաստից Աստուծոյ քննութեամբս զսուրբ եպիսկոպոսն և զեղբայր թագաւորին Հայոց զՅոհաննէս՝ ղբարեմիտն և զբարեսէրն և զառիթն թարգմանութեան ըզստացող սորին, մաղթեցէք Քրիստոսի յաստիս խաղաղութեամբ պահել, և ի հանդերձեալն ընդ սրբոց իւրոց երկնից արքայութեանն ընդունել։

Այլ և զփցուն գրիչս աղաչեմ յիշել ի Տէր և զծնաւղսն իմ, և որ յիշէ յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ։ Եւ խոշորութեան գրիս մի մեղադրէք, զի առաջին է գիրս և չէի հմուտ։

դ

132ա Զայս ոչ գտի ըստ կարգի սուրբ աւրէնսդ, այլ ես՝ Ներսէս եդի, զի յայտ լիցի, թէ այլ է քաղաքաց եկեղեցւոց և այլ՝ վանից կարգ Սաղմոսաց, զի այս Սուրբ Պետրոսի կարգն է, որ ի մեծն Հռոմ։

---

* Ձեռագիրն սկսել է Հովհաննէս Արճաեղբայրը և գրել 28 թերթ։ 29—270 էջերը յարունակել է մի այլ գրիչ։ Ստեփանոս Վահկացին 317—383 թերթերն է գրել, միչին մասը՝ 271—316 էջերը գոել է Թորոս գրիչը։

** Առաչին քառատողը՝ «Ներսէս տրուպ...» գաղափար օրինակից է և պատկանում է Ներսէս Լամբրոնացուն։

ե

Գրիչ՝ Առաքել

114ա Ձստացող գրոցս զտէր Յոհաննէս և զծնողսն իւր յիշեցէք ի Քրիստոս, և Առաքելի գրչի մեղաց թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

զ

153բ Այս թուղթս բնաւ ոչ է տեսել զկոկիչն։

է

163 Ձստացաւղ սուրբ աւրինացս՝ զտէր Յոհաննէս յիշեցէք ի Քրիստոս, ընդ նմին և զմեղուցեալ գրիչ Առաքել։

525

ՃԱՇՈՑ
ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

Քյուրտյան, ծուցակ, էջ 416

Գրիչ

ա

746բ Ձաստուածային շնորհազքն լի՝
Ձստացողն այամ մատենի,
Ձորդին վեհին Կոստանդէի,
Ձեղբայր Հեթմոյ քաջ արքայի,
Ձտէր Յոհաննէս անուն բարի,
Նաև զրաբունըն պանծալի,
Աստուածայնոց հետևողի,
Փրկչին մերոյ սուրբ և բարի։
Արդ, աղաչեմ զեղբարսդ յոգի,
Եւ պաղատիմ աղերսալի,
Երկրպագեմ սրբոցդ գնդի՝
Որք հանդիպիք այամ տառի...

275բ Ձստացող սուրբ տառիս՝ զարթուն այցելուն զՅոհաննէս եպիսկոպոս Արքայեղբայր, հանդերձ ծնողիւք իւր, յիշեցէք ի Տէր, վայելող[ք]*։

* Ձեռագրի 157 էջում Հովհաննես Արքաեղբոր չափածո հիշատակարանն է։

526

ԱԻԵՏԱՐԱՆ

երուսաղէմ 2568

Սրբագրիչ՝ Յոճաննէս Արճաեղբայր

320ա Պարոն Վասակ է, արքաեղբայրն Հայոց, ստացող սուրբ Աւետարանիս այս, և աստուածապարգև զաւակք նորա Կոստանդին և Հեթում, զորս ի պարս սիրելեացն իւր ընկալցի Քրիստոս Աստուած հայցմամբ սուրբ ծնողին իւրոյ։

Նաև զուղղող սորա զՅոճաննէս եպիսկոպոս եղբայր սորա և զմերսն յիշեցէք ի Քրիստոս*։

527

ՀԱՄԱՌԱՒՏ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՈՅ ԱՌԱՔԵԼՈՅ ԳԷՈՐԳԵԱՑ ՄԿԵՒՌԱՑԻՈՅ

երևան 4119 (ժԹ դ.)

Հեղինակ՝ Գէորգ Սկեւռացի

ա

2ա Առ խնդրօղն համառօտիս տէր Յոճաննես Արճաեղբայր, եպիսկոպոս նահանգաց աստուածապահ ղրղեկին Մոլևոնի և մասին ինչ Բարձրբերդոյ, եւ նոյն տեսուչ հոչակելի սուրբ ոխսին Գոնեռոյ և առ հանդիպեալսն մատենիս:

Ահա, ո՞վ աստուածասէր հայր իմ և տէր հարկեցուցիչ, խնդիրս քո, և պատկառելի շուք երեսացդ դարձեալ զբաւեաց զիս ահիւ, մինչ զի մոռանալ զիմ խամութիւն տխմարութեանս և ընկենուլ զիս ի գործս, որ առաւել ծանր է քան զիս, քան զի հրամայեցեր ինձ դէմ յանդիման, տալով հանգամանս օրինակի՝ ի լայն և ի հարուստ Մեկնութենէ Գործոց առաքելոցն, հաւասար իմացուածով՝ զսպել զերկարութիւն բանիցն համառօտ կարգաւ։ Զոր ի ձեռն այլոց զօրեղի կամ յոյժ մանաւանդ քոյին իսկ հանճարայեղձ և շատիմայ անձամբ, գեղեցկադիր բանիւ բաւական էիր, լնուլ քեզէն զիմաստասէր փափաքդ քո ի նպաստ գիտնոց վարժողաց, ի կարճել ժամանակիս զկարճն ախորժողաց՝ ըստ ասելոյ ոմանց։ Բայց, արդ, ոչ անգիտանամ զզիջանելդ քո ներգործութիւն սիրոյ գոլ առ իս և յայսմ մասին, որում, թէպէտ հպատակել բռնադատեցայ, սակայն ի թերութիւնս իմ հայելով, զամօթի հարեալ կամ յանդգնելովս իմ առ այս։

Եւ արդ, քանզի, թէպէտ և բազմամանուած, սակայն հարթ և հորդ և միանգամայն կուռ և կոկ էր ճանապարհս, ընդ որ ի քէն ընթանալ հրամայեցայ, մանաւանդ զի պայծառ ջահն և զանմուտ արեգակունն առաջնորդ ինձ ունելով՝ զաստուածուսոյց հանճարեղն զտէր Եփրեմ և

* Գրված է Վասակի նկարի տակ։

զքրիստոսածաւալ աղբիւրն իմաստից զամենահռչակն զՈսկեբերան, զորոց սրբոց երկընթաց ոտիցն բուռն հարեալ ահիւ, նախ՝ անտեսութիւն յանդգնութեանս իմոյ աղերսիւ հայցեմ, և ապա օգնականութիւն տկար զօրութեանս առ ի բաւական լինել ինձ զխորհրդոց և զպայծառափայլ նոցին բանս մեկնութեան Գործոց սուրբ առաքելոցն, զառանձնացեալսն երբեք և զհամաձայնեալսն ուրեք՝ ընդելուզել հիւսամբ իբրև զականս պատուականս, կամ իբրև զանթառամելի զանուշահոտ ծաղիկս բոլորելով կազմել պսակ յուսոյ աստուածասէր գլխոյ խնդրողիդ, ի փառս Աստուծոյ և ի պատիւ սրբոց նորին, և ի հրճուանս աստուածասէր ընթերցողաց, յորոց աննախանձ սիրով հայցեմ աղերսիւ զոչ ինքնայորդոր համարձակիլս իմ յայս չափ անձին[ս] մեղադրութեամբ զսխալանս իմ եղբայրաբարս‖ղիջողացն ըստ իս։ Իսկ զառաւել պասուք ծարաւոյ տարողութեան ընդարձակ մտաց՝ հզօրքն ի ծովածաւալ աղբիւրսն իմաստից դիմեսցեն լնուլ ի բոն[ս]ն ի լայնսն ասեմ Մեկնութիւնս, յորոց և այս՝ այսչափ ծայրաքաղ համառօտեցաւ։ Եւ զդոյզն իմ զաշխատութիւնս թողութիւն մեղաց յԱստծոյ հայցմամբ վարձատրել, և զփոխարէնն կըրկնապատիկ յառատապարգև Տեառնէն ընդունել ամէն։

Բ

3ա Ի Գործոց առաքելոց բուն և ընդարձակ մեկնութեանց սրբոցն տեառն Եփրեմի և երանելոցն Յոհաննու Ոսկեբերանի, այս համառոտ շարահիւսեցաւ, որպէս և տեսցես առընթեր բանիցն յանցն իւր տեղւոջ դրոշմեալ զանուանս սրբոցն, հրամանաւ տեառն Յոհաննէսի աստուածապահ ուխտին Գռնեցոյ առաջնորդի։

528

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

Երևան 3816

Գրիչ՝ Ստեփանոս
Վայր՝ Սկևռա

ա

40ա Ջ[ա]ւրսեղ քահանայ ստացաւղ տառիս, որ և հանգուցեալն է ի Քրիստոս, աղաչեմ յիշատակել ի սուրբ և ի մաքուր աղաւթս ձեր, ընդ նմին և զամենամեղ գրիչս, և որք յիշէք և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։

Բ

72ա Լիալապատեր ջահիցդ շիջեալ հողս և ունայնս Ջաւսեղ և ապէկար գծաւզս Ստեփանոս պաղատիմք յիշման արժանի առնել սիրովն Աստուծոյ, որով և դուք յաւիտեան յիշեսջիք յառատ բարերարութենէն Տեառն։

Գ

85ա Սպանաւղք չարին մեծ գազանի
Եկեալըդ ըզկնի մեր յաշխարհի,

Նետիւ սպասէք յորմէ խոցի,
Նեղեալ գերիս մարմնով յոգի։
Աղաւթիւք ձեր մասն տացի,
Համայնց հոգւոց ու որք զկնի,
Որովք և ձեզ պարգևեսցի
Յարդիս ե յաւրն աներեկի, ամէն։

Դ

91բ Ողորմեսցի, Տէր Աստուած ստացողի տառիս Բարսեղ քահանայի, և ծնողաց իւրոց, և ամենայն եղբարց սուրբ ուխտիս Սկևռայի, և ամենամեղ գրչիս, և որոց զամէն ասեն։

Ե

95բ Մնոտի փառացս արհամարհաղք,
Երկնից բարեացն ժառանգաւղք,
Նոր սուրբ խահից այս ճաշակաւղք,
Նորոգ գինեաւս այս զղմայլաւղք,
Արտասուաք մեզ աւժանդակաւղք,
Մոխրոցս վիք և վերբերաւղք։
Որով և դուք մեր հետևաւղք,
Գրեսջիք յերկինս պսակաւք, ամէն։

Զ

109ա Սրատեսիցդ և կորովաբացդ զաչացս կոյրքս ոգւով Բարսեղ և Ստեփանոս պազատիմք յիշել զմեզ ի բարին Քրիստոս։

Է

128ա ՁԲարսեղ քահանա, որ և հանգուցեալ է, յիշեսջիք սիրով ի բարին Քրիստոս, ընդ նմին և զհոգս Ստեվանոս, և Աստուած միշտ ի բարին զյիշաւղս մեր յիշեսցէ, ամէն։

Ը

169ա Կատարեցաւ առաջին գիրք Յովնանննու սրբոյ Կոստանդինուպաւսի հայրապետի։

Թ

Արդ, որք ընթեռնոյք կամ գաղափար դնելով փարթամանայք ի ճոխ և յանկապուտ մեծութեանցս յաստուածային գերունակ իմաստից, յիշեսջիք ի Քրիստոս զաշխատաւղք սուրբ կտակիս, նախ՝ զսրբազանն Կիւրակոս վարդապետն, որ բազում աշխատութեամբ և ըղձափափագ տենչմամբ յասորոց գրոյ և ի լեզուէ, և ի յունականէն քերթողական արհեստիւ թարգմանեալ ի հայ բարբառ և ի գիր։ Ընդ նմին և զԲարսեղ ստացաւղ տառիս՝ զհանգուցեալն ի Քրիստոս։ Նա և զմեղուցեալ գրո-

զիկս Ստեփանոս և համաւրէն եղբարք սուրբ ուխտիս, և Տէր զձեզ յիշէ, ամէն։

ժ

183ա Աղաւթից ձեր սուրբ արտասուաց
Հանել զգերիս յայս կապանաց,
Ներումն հայցեմ ի բժշկացդ,
Նեխեալ հոգւովս ի չար վէրաց.
Որով և ձեղ պարգև բարեաց,
Յառատագիրն տացի շնորհաց, ամէն։

ժա

195ա Մաքուր և կարծրապինդ քաջացեալ հոգևոր եղբարք, զսալասիրտ և զապաւռումքս՝ զՌաբսեղ և զՍտեփանոս յիշեսջիք աղաւթիւք ի բարին Քրիստոս, որով և դուք յիշեալ լիջիք յառատ բարեբարութենէն նորա։

258բ Զաստուածարեալոցդ հոյսդ աղաչեմ յիշել ի բարին Քրիստոս ըստացող տառիս և զգծաւղ հանդերձ ծնաղաւք մերովք, և նոյն ինքն Տէրն մեր զձեզ յիշէ, ամէն։

ժբ

250ա Սովալլուկ և ախտալի ձեր ծառայակիցքս Ռաբսեղ և Ստեփաննոս պաղատիմք հառաչմամբ յիշել զմեզ ի բարին Քրիստոս...

ժգ

257բ Հայցեմք ի ձէնջ տեարք իմ բարի,
Արտասուեցէք վասն իմ գիտի,
Նետիւք խոցեալ կամք ի տղմի,
Նպաստ լերուք հանել անտի,
Յորմէ և դուք բուժումն ախտի,
Քաւիչն և ձեղ տացէ ձրի,
Երրորդութեանն անճառելի,
Ջփառս երգեսցուք անլռելի*։

---

* Այս կարգի մեծ և փոքր հիշատակագրություններ կան բոլոր գլուխների վերջում։ Ձեռագիրը խիստ քայքայված է, սկզբից, միջից և վերջից թերի։ Սկևռայի հիշատակագրությունը և դրության նամանությունը թույլ է տալիս Ստեփանոսին նույնացնելու Ստեփանոս Սկևռացու հետ։

529

ԱԽԵՏԱՐԱՆ

Երևան 2816

Գրիչ՝ Յոհաննէս
Վայր՝ Կարս

ա

Փառք երից անբաւից, անհասից և անկարից կարելեաց, անբաժանելի միաս[ն]ական Սուրբ Երրորդութեանն;

Փառք Բրկչին և յիշատակ գրչին, աւրհնութիւն Հաւր, աւրհնութիւն Որդ[ոյ], աւրհնու[թիւն] Սուրբ Հոգւոյն, յամենայն արարածոց և յանարժան բերանոյս, որ հասոյց զիս յաւարտումն աստուածախաւս մատենիս,
288բ *զի որպ[էս] ուրախութիւն է||նաւավարի հասանել ի նաւահանգիստ, նոյնպէս եւ գրչին՝ վերջին գծին։ Շնորհիւ և ողորմութեամբ Հաւր, և ներողութեամբ Որդոյ եւ աւգնականութեամբ Սուրբ Հոգւոյն սկսայ եւ կատարեցի զսուրբ Աւետարանս ի թուաբերութեանս Հայոց ի ՉԼԹ (1290), ի մայրաքաղաքս Կարս, ընդ հովանեաւ Սրբոյ Աստուածածնին, ձեռամբ ամենայմեղ և եղկելի գրչի Յոհաննէս իրիցոյ, ի փառս Քրիստոսի։*

Արդ, յոյժ փափագանաւք եւ գրել զսուրբ Աւետարանս Յակոբ քահանա ի զարդ կաթողիկէ էկեղեցոյ, և ի վայելումն մանկանց առագաստի, եւ յիշատակ իւր, և ծնողաց իւրոց՝ Թամարին եւ Պապուկին՝ փոխեցելոյն առ Քրիստոս, եւ հաւի իւրոյ Միխիթարա սրբասէր քահանայի, եւ
288ա *եղբաւր նորին Տաւնկանն, եւ մաւր իւրոյ Մամախաթ||ունին՝ փոխեցելոյն առ Քրիստոս, եւ եղբարց իւրոց՝ Կիրակոս քահանայի եւ Նիկողայոսի, որ երկոտասան ամեայ ի Քրիստոս փոխեցաւ, եւ քերց իւրոց Խաթերուն, եւ փոխեցելոցն առ Քրիստոս Ազգին և Թագոնէ։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք լուսաւորիք ի սմանէ եւ կամ աւրինակէք, յիշեսջիք առաջի զենլոյն Քրիստոսի զՅակոբ երէց, ընդ նմին եւ զկենակից իւր զՄամխանն, ընդ նոսին և ծնողսն իւրեանց եւ զեղբարսն, եւ զքուրսն։*

Ընդ նոսին եւ զիս՝ զամենամեղ եւ զսուտ գրիչ Յոհաննէս երէց, եւ զծնողսն իմ, եւ զեղբայրն, եւ զքուրսն յիշելոյ արժանի արարէք, եւ Քրիստոս Աստուած, որ առատն է ի տուրս՝ յիշողացդ և յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի ի գալստեանն իւրում, և նմա փառք յաւիտեանց։

Յիշեսջիք և զՍամուի հոգեւոր եղբայր մեր, եւ զկենակից իւր զՍեդէք, եւ զծնողսն նոցայ, որ գնշաշտակս հետուն Աւետարանիս։

Բ

288ա Ո՛վ աստուածասէր եղբարք, անմեղադիր լերուք խոշորու[թ]եան գրիս, զի յոյժ շտապով գրեցաւ ի քսան աւր։

530

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7378

Գրիչ՝ Յովհաննէս

ա

Փառք անեղի, անմահի, անհասի, անբաւի, անքննելի, անբաժանելի միասնական Սուրբ Երրորդութեանն, յաւիտեանս յաւիտենից, ամէն։

276բ Ի [լու]սոյ Հաւրէ լուսածին ծնունդ, ի երկուցն էից աղբիւրաբար բղխելումն եռակի անձամբ միացեալ բնութեամբ, ի յերից անդի խոնարհեալ առ մեղ կուսածին մարմնով երևեալ մարդկան, որ յաւիտեանցն աղագաց ծածկապէս առ Հաւր, այլ յադին դրախտին խորհրդով յայտնեալ, զոր նախկի տեսողն առակէ բանիւ, որ ի դալար վայրի անծախապէս հոսեալ քառահոլով շարժմամբ արբուցանէ զերկիր, ի խորհուրդ չորից աւետարանչացն առեալ ոտոգել նոք[ա] զբանական բնութեամբ մշտաբուխ յաւե[ր]խաղաց, [ծա]յրածանին ծիրանէծաւալ [կ]ա[ր]կաջահոս զծ///ղխող ջուր կենդ[անի] ճշմարտախաս///կան անփորձ///ձկանց բանա///համանման///հուր էի///ց մեղաց գանձ///կապէս ճոխացեալ/// և բանալի արասցէ///անն///մի և անգիւտ [մե]ծ մարգարիտ‖գաւղաց վեր-
277ա նոյն, ձգալի///աւոր/// ///եալ բնութեանս։

Խարամանեաց աւձիցն ընդդէմ
Եւ հալածիչ դիւաց գնդին։
Ախտահալած և կոպրաբաց,
Եւ յարուցիչ գոլ մեռելոց,
Կենդանեաց կեանք, մեռելոց յ[ոյ]ս
Ոչ ծն[ի]ցելոց դատաւարակ,
[Ծ]առ հայրական երկինագործ,
Տերևախիտ, [լ]այնասաղարթ և ծաղկաւետ։
Յոգնապտուղ, քաղցրաճաշակ,
Այգի անկու[յ]ծ,
Ոզ[կոյ]զ ա[ռ]ա[տ]
Յանկով պատեալ///
Հնգին հարեալ,
Արեամբ ներկեալ,
Խաչիւ ճմլեալ։
Եսայիասի Աստուած տեսեալ,
Զի մի անապակ յ[եր]կնից հոսեալ,
Սաստիկ [հո]ղմով ի սմա բնակեալ

Եւ յառաքեալսն հանգուցեալ,
[Տ]աշտուք նոցին մատռուակեալ,
Եւ զհեթանոս զմայլեալ։

Սոքա են չորեքկերպեան կենդանիքն, յորումն լեալ հզաւրն ի բարձանց շահատակէ յամուրն կարծեցեալ իշխանին, առնու աւուր զգերեալն ի նմանէ։ Սոքա են չորս հի[մու]նքն, որով շինեցաւ վերըս[տին] կործանեալ խորանն Դաւթի։ Սոքա են [չ]որք հող[մք]ն, որ և շնչելքս
277բ ա[ղ]րախաւս վարդապետութեանն իւրեանց շարժ||եցին գծով կենցաղոյս։ Սոքա են չորք զազանքն, որ ելին իբրև փ||եսայ յառագաստէ, ընթացան ի չորս կողմանս աշխարհի։ Սոքին իսկ են ձիք սեաւք, և ձիք սպիտակք, ձիք և գիսեցուք, է ճաճկնք, և ճարտարք, յորում ելեալ քաշ ղաւրականն զերասանակ վարդապետութեանն իւրոյ ուղղէ առ ամենայն ազգս մարդկան։

Արդ, այսքանեաց և այսպիսի բարութեանցս մեղ առթողի և անուն նորա ղաւետիս կենաց ունի դարդիս և զհանդերձելոյն։

Արդ, ցան[կաց]ող ե[ղե]ալ սմա բարեպաշտ և աստուածասէր ծերունի այրս, որ յորջորջի Ջանղար, ետ գրել զսա յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց, և կենակցի և զաւ[ա]կաց իւրոց, որոց ող[որմ]եսցի Քրիստոս, ամէն։

Եւ արդ, շնորհիւն Աստուծոյ սկսաւ և ողորմութեամբ նորին [կա]տարեցաւ պայծառ և սյանձալի սուրբ և կենսաբեր տ[ի]եզերախաւս վարդա[պետ]ութիւնս տեառնաբանին Աստուծոյ, ձեռամբ փանաք և անպիտան նուաստիս Յովաննէսի, և ծաղկեցաւ և կազմեցաւ [ի]թ[ուա]կա[նու]թեանս Հայոց ՉԼԹ (1290), ի կաթողիկոսութեան տեառն Ստեփանոսի և ի թագաւ[որութեան] Հայոց Հեթմոյ, [ի եպ]իսկոպոսութեան||| մեծի մ|||րի, որ կոչի|||

Արդ, ես|||ծառայ||| [Յովան]էս քահանայ, աղաչեմ զամենեսեան ղընթերցողսդ և զուսումնասէրսդ ղիս կա|||ել|||ն Յիսուս, աղաչել և հայց[ել]||| կենակիցն իւր Թամարն և զաւակսն իւր[եանց]։ Դարձեալ աղաչեմ [զձ]եղ, ո՛վ եղբարք, առ որս արդիւնասցի սուրբ և տիեզերափրկող Աւետարանս, Տէր Յիսուս վայելել տացէ ի դաստիարակութիւն մտաց և ի լուսաւորութիւն հոգւոյ և մարմնոյ, և ի պայծառութիւն մանկանց եկեղեցւոյ, թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ անթիւ յանցանաց իմոց և ծնաւղաց իմոց։ Յիշեսջիք և ղ[դեռ]աբոյս զաւակին ի[մո զՅ]ակովբ
278բ զ[ս]րով խոխողեալն ի Քրիստոս, վասն|||ամիս այս ղոր պատա||հեցաւն ըստ չարին [ո]մանց ի տիոցր, թ[էև] ողորմեսցի Քրիստոս, ընդ նմա և ինձ և ամուսնոյս իմոյ որ [տա]ռապիմք ար[տաս]ուալից ձայնիւ|||չարչարեացս, որ դիպեցաւ ի վերայ մեր։ Ոհ, ղիմ հ[ո]գիս։

Եւ ինքն Քրիստոս, որ մեծն է ողորմութեամբ և կարող է ի ձեռն այլում այլոց ողորմել՝ մեզ և ձեղ, առ հասարակ, ողորմեսցի՝ կարդացողացդ և լսողացդ, և նմա փ[առք] ընդ Հաւր և ընդ [Որդւոյ և ընդ] Սուրբ Հոգւոյն [այժմ և միշտ և յաւիտե]անս յա[ւիտենից], ամէն, [ամ]էն։

Բ

131բ Ջմեղապարտ գծող սորին զՅովաննէս աղաչեմ յիշել ի փրկական սուրբ պատարագին և մեղաց թողութիւն խնդրեցէք ինձ և ծնողացն, և Քրիստոս մեզ և ձեզ առհասարակ ողորմեսցի, ամէն, եւ նմայ փառք յաւիտենից։

Գ

216բ Աղաչեմ զձեզ եղբարք, որք աւգտիք կամ ընդաւրինակէք, յիշեսջիք զանարժան գծող սորայ զՅովաննէս քահանայ, և թողութիւն հայցեցէք անթիւ յանցանաց իմոց, և ծնողաց և ազգականաց իմոց, և որ Աստուած ողորմին ասէ և ոչ ձանձրանա, և նմա ողորմեսցի Քրիստոս ի միւս անգամ գալստեան իւրում, ամէն, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Գրիչ՝ Վարդան

Դ

Ջվարդան միակեց յիշէ ի Տէր։

531

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 5736

Գրիչ՝ Թորոս
Վայր՝ Դրազարկ

310բ Փառք Ձեզակի, եռահիւսակ դաւանութեանն ապենիազին կատարեալ և անսահմանելի, Աստուծոյ Հաւր, Աստուծոյ Որդւոյ, Աստուծոյ Հոգւոյ յաւիտեանս, ամէն։

Շնորհին Տեառն ամենակալի և նորին աւգնականութեամբ աւարտեցաւ եռահրաշ և հոգիազարդ Աւետարանս, զոր էր շաղկապեալ աւե-

---

* Ձեռագիրը խիստ քայքայված է, հիշատակարանը՝ մաշված և պատռված. շատ տառերի քանաքը թափված է և միայն աղոտ հետքերն են նշմարվում, վերծանեցինք մեծ դժվարությամբ։ Ձեռադիրը այսպիսին էր, և «քաղելու եղել էր» գեռ ԺԶ դարում, երբ սկսեց նորոգել Միքայելը։ Ահա հիշատակարանի այդ մասը. «Աստանաւր յանկ ելեալ կատարեցաւ, նորոգեցաւ և կազմեցաւ... սուրբ Աւետարանս ի թվականութեան Հայոց ՌԻՀ (1579) յուլիս ամսոյ ԼԱ (31)... Եւ մեք յիշեմք զՍարգիս հալաճն, որ էր որդի հայր Վարդանին, տեսաւ սուրբ Աւետարանս խիստ փտած էր, քաղելու եղել էր, իր հոգոյն խիղճ ըլուց, կանգնեցաւ և յորդորեց զամենեսեան և... կանչեցան, ժողովք արին սուրբ Աւետարանիս համար։ Վրայ եղան, խարճ արին, ինչ աւր պիտք էր առին և տուին ինձ... Միքայէլիս... և ձեռնարկեցի և կատարեցի, գքաղելոն կազմեցի, զմեռացն կենդանացուցի, այս էր մեր կարն (էջ 280բ)»։ «Յիշեսջիք... Միքայէլ անարժան քահանայս՝ զկազմող և զարդարող սորայ և զՀամեստի ամուսինն իւր իրիցկինն յիշեսջիք ի Տէր, որ շատ աշխատեցաւ սուրբ Աւետարանիս աւալային և նիշանստակ եփելու և գրքիս ձեռք տալու, և ապըրշում աւրբելու, և շրագին պռընկվիտքն կտրելու, և շիրազն խուրթելու, մի ըստ միոջէ տուելու յիշեսջիք...»։ Այնուհետև հիշատակվում են բոլոր նրանք, ովքեր մասնակցել են Աւետարանի նորոգմանը «Աւալային վրայ գիր չի գայ, ան այլ կու գրեմ, հանց գիտենաք»,—ավարտում է Միքայելը (280ա—281բ)։

տարանչացն ըստ բազմերանգ դունոց և ի մի(ի) ոստայն տնկելով հանճար, զոր արուեստակեալ անուշոցաց ծաղկանց իւղ եփեցական կազմութեամբ, որ ըստ հոգւոյն յատկութեամբ խմանի զանազան որակութեամբք գաղափարելով ըստ յոքունց արփիացեալոյն դասակցութեանց, առ ի յեկեղեցւոյ յարմարումն, յասգիւ խաղաղութեամբ գլխոյն պատշաճեալ, ղի յայսմանէ կատարելութիւնն։

Ձորք Աւետարանք ի բազում պատճառէ. չորեքկերպեան կենդանիք՝ մարդ առեւծ, ցուլ, արծիւ, չորք նիւթք աշխարհիս՝ հող, ջուր, հուր, աւդ՝
211ա հակառակք, անհաշտելիք և սիրելիք անքակտելիք չորք-չորք գիր անուան երրորդութեանն՝ Հայր, Որդի, Հոգի, չորք գետք բղխեալք ի դրախտէն՝ Փիսովն, Գիհովն, Տիգրիս, Եւփրատէս, չորս անգիւնս և եղջերուք սեղանոյն, չորք դէմք խաչին, և այլ բազում պատճառս, յորս գաղափարի չորեքեան աւետարանիչքս։ Զի թէպէտ և բազում բանք ի սոսա երեին ներհակք միմեանց, այլ քաջ ճշմարիտք և յոյժ միաբանք միմեանց։

Արդ, դրեաց Մաթէոս ի խնդրոյ հրէից հաւատացեալոցն, որք էին յերուսաղէմ, զկնի Ը (8) ամի համբառնալոյ Փրկչին, ի լեզու Հեբրայեցի, յերուսաղէմ քաղաքի, զոր առեալ Թովմայի քարոզէ Հնդկաց, և Բարթողոմէոս՝ Դելմաստանի և Ամրանայ և ամենայն արևելից։

Իսկ Մարկոս գրէ ի հրամանէ Պետրոսի վխմի, վարդապետին իւրոյ, յԱղեքսանդր քաղաքի, ի լեզու Եգիպտացի, զկնի ԺԱ (11) ամի, և աւետարանէ յԵթովպէ և ի Լիւբիկւա, և լուսաւորէ զարևմուտս։

311բ Իսկ Ղուկաս յառաջագոյն աշակերտ գոլով Գա[ղ]ի[նոս]ի բժըշկապետի, որ և ինքն էր արուեստիւ բժիշկ, յետոյ աշակերտէ Սրբոյն Պաւղոսի, որ և հրամանաւ իսկ նորա գրէ զկնի ԺԸ (18) ամի, ի լեզու Հռոմայեցի, յԱնտիոք քաղաքի, և քարոզէ ի Բիւթանիա և յամենայն Մակեդոնիա։

Իսկ Յովհաննէս որդի Զեբեդեայ, որդի Որոտման, որդի սուրբ կուսին, որ փարեցաւն զսարսափելի պարանոցաւ զանճառ լուսոյն, զվերինն որոտալով Աւետարան, և աւետարանէ զկնի ՄԳ (53) ամի, գրէ յԵփեսոս քաղաք, և լուսաւորէ զամենայն Ասիա։

Արդ, Աւետարան կոչի, որ պատմէ մեզ զեղեալ բարութիւնս, զխաղաղութիւն, որ եղև հրեշտակաց և մարդկան, զքակտումն բռնութեան թըշնամւոյն կենաց մերոց, զաւերումն դժոխոց, զազատութիւն հոգւոց ղընդ աջմէ Ատուծոյ նստեալ բնութեան մարդկութեանս։

Բայց գրեցաւ լուսազարդեալ Աւետարանս ի լուսալրական ժամանակի, սկզբանց արարչութեանն մինչև առ մեզ ՅՉԺԴ (6714), իսկ ի կենա-
312ա րարին դալս տենէն ՌՔՃՂԳ (1293), իսկ ի Խոսրովայն Պարսից սկսեալ մերս թիւ, որ է ՁԼՔ (1290), ի թագաւորութեանս Հայոց բարեպաշտ, աստուածասէր, աստուածապահ, աստուածազարդ թագաւորիս Հայոց Հեթմոյ, և ի հովուապետութեանս տեառն Ստեփանոսի։ Ես Թորոս նուաստ և յոգնամեղս, լոկ անուամբ քահանայ, բայց խորհրդով և գործով խաբեբայ, գրեցի զաստուածահրաշ Աւետարանս ի գերահրաշ ուխտս Դրազարկ, ընդ հովանեաւ սուրբ և փառաւորեալ տիրամայր Աստուածածնիս, և կենսական և աստուածաբնակ Սուրբ Նշանացս, որ է

դիր և ոամբարան թագաւորացն Հայոց և թագուհեացն իւրեանց, և իւրեանց աւրհնեալ զարմին Ռոբիլեանց, յառաջնորդութեանն տէր Թորոսի:

Եւ թէ յոր սակս գրեցի զսա, ասացից փոքրիշատէ: Յիշելով իմ զպատմութիւնս ծերունի հաւրն իմո, զհայրէնի գաւառէն Շատախ կոչեցեալ և զՏարաւնոյ, և զդիրս սուրբ և յառաջրնթաց Կարապետին և Ամլորդ-
312ր ւոյն Յովաննու, հպողին յանհպելի գլ||ուխն Աստուծոյն մերոյ և փրկչին Յիսուսի, եւ ի վաղուց հետէ ցանկալի տեսանել զսուրբ ուխտն և հայրէնի գաւառն իմ, և մինչ ցայս վայր զգալի աչաւք ոչ տեսի, այլ մտաւք յամենայն ժամ: Եւ ածի զբանս իմաստիցն զմտաւ թէ՝ Ջի՞նչ այլ ինչ է իմաստութիւն, բայց խոկումն մահու, և զկնի մահու՝ յիշատակ բարի: Եւ ես ինքնին ձեռաւք իմովք գրեցի զցանկալի սուրբ Աւետարանս, և յարդար ընչից իմոց ետու զսա ոսկի ծաղկովք, ոսկի գլխագրովք, համաբարբառաւք, և չորեսին խոր[ա]նաւք և բազմերանգ գունով, կազմաւք և արծաթի կոճակաւք՝ յարմարեցի ըստ իմ փանաքի և թարմատար կարիս, և ետու զսա ընծայ Սրբոյն Յովաննու Կարապետի, որ է ի գաւառն Տարաւնոյ, յառաջնորդութեանն տէր Յովանիսի գերամաքուր եպիսկոպոսի; Եւ խնդրեցի ի նմանէ և ի վարդապետէն Ստեփաննոսէ մաքուր ոգւոյ, ի Յակոբայ
313ա և ի Կարապետէ, և նոքա յանձն առին յա||ւժար կամաւք, զի աւր յայտ արարասցեն և յամենայն ամի մի աւր զպատարագն ժամարարքն ինձ և ծնողացն արասցեն:

Եւ արդ, աղաչեմ նախ քան զամենայն աղաւթս առնել, զի ղտարակուսեալ և ղսինլքոր ազգս Հայոց ազատեսցէ Աստուած ի դառն ծառայութենէ փարաւոնի, և ի ժանդ, և ի պղծագործ, և յապարասան ազդէն Իսմայէլի, զի բազում անգամ զաշխարհս Հայոց սրով և հրով մաշեցին, և զտաճարս Աստուծոյ արարին հատից և խաշանց փարախ, զոր Տէր Յիսուս սատակեսցէ զնոսա, զոր միով ամաւ յառաջ էառ զհոյակապ և հռչակաւոր քաղաքն Տրէպալիս և տապալեաց ի հիմանց: Եւ երկու ամաւ յառաջ տէրն իմ և խնամողն, և անընդմիջելի սիրով սիրողն և սնուցողն զիմս նուաստութիւն, բարէպաշտ և աստուածասէր թագաւորն Հայոց հանդեաւ ի Քրիստոս՝ ՉԼԷ (1288), յամսեանն փետրուարի Զ (6), յաւուր
313բ շաբաթու: Հայցեցէք յԱստուծոյ նմայ մեղաց թողութիւն,||և խնդրեսցի Տեառնէ Աստուծոյ, զի բարէպաշտ և զաստուածասէր թագաւորին ամենայն Հայոց տացէ ընդ երկայն աւուրս պարագայց ամաւք խաղաղական կենաւք, յարազուարճ բերկրանաւք, զի է սքանչելի իմաստութեամբ, համբակ՝ տիովք, և ծեր՝ խորհրդով, գեղեցիկ հասակաւ և բարի՝ բարուք, տունկ երկնային և երկայն աղաւ[թի]ց պտուղ, սերեալ յամենաւրհնեալ զարմէն Ռոբիլեանց առ ի մխիթարութիւն ազգիս Հայոց զոր պահեսցէ Աստուած ղսա և զվեց եղբարս սորա, զգեղեցիկսն, զոր մի ըստ միոջէ՝ զԹորոս, զՍմբատ, զԿոստանդին, զՍտեփանէ զերկուորեակսն, զԱւշին և զկայտառն զՌաւբէն՝ աստ և ի հանդերձեալն անպայման խնդութեամբ հրճուեսցին: Եւ մի պակասեսցէ թագաւորութիւն ի զարմէ սոցա, մինչև եկեսցէ ամենաթագաւորն Քրիստոս, որոյ իւր է թագաւորութիւնն:

Յիշեսջիք ի Քրիստոս զընթանուր եղբայրութիւնս՝ զեպիսկոպոս,
314ա զրաբունի, զերաժիշտսն, զընն||կերսն իմ և զաշակերտսն՝ զՅուսէփ փա-
կակալ, զմհանձունսն որ յանապատս, զգործաւորս, զՏիմաթ պատուա-
կան քահանայ՝ ղբանտնող քարտիս, և զԳէորգ անյապաղ սպասաւոր։

Եւ ապա յերեսս անկեալ լալագին արտասուաք հայցէմ յընթանուր և ի սուրբ լրութենէդ, զի յընթեռնողն զսա մի մի ծունր կրկնէք լի ու անբիծ հաւատով առաշի աստուածահուպ նշխարացս Յովաննու, մեղաց թողութիւն հայցէք դառնացելոյս մեղաւք, և իմոց ծնաւղացն, և ամենայն զարմից։ Եւ Քրիստոս Աստուած, բարեխաւսութեամբ Սրբոյն Յովաննու Կարապետի և Աթանսգինէ վկայի և Եւթն խոտաճարակացն և ամենայն սրբոց յիշելոցս և յիշողացդ ողորմեսցի, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Ընկալ Սուրբ Կարապետ ի թարմատար, յապիկար, և մեղաւոր, և անարժան ծառայէս գԱւետարանս հրաշալի, որպէս Փրկիչն ամենեցուն գխէրևէշ այրոյն։ Եւ որ չանա գողանալ կամ հանէլ զսա յայն սուրբ ուխտէն, նզովեալ լից[ի] հոգւով և մարմնով։

532

ԱԻԵՏԱՐԱՆ

Մաքսուդյան, Ցուցակ Թովմայ առաքելոյ վանուց, «Արարատ», 1911 թ. էջ 223
Լենինգրադ, էրմիտաժ, V 3—835

Գրիչ՝ Թորոս
Վայր՝ Դրազարկ

290բ Կատարեցաւ սուրբ և գերահրաշ Աւետարանս ի սուրբ ուխտս Դրազարկս, ի թուիս Հայոց ՉԼԹ (1290), ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ, ձեռամբ Թորոսի նուաստ և յոգնամեղ փիլիսոփայի, որոյ Տէր Յիսուս ողորմեսցի։

533

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 2630

Գրիչ՝ Ստեփանոս
Վայր՝ Սկևռա

Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից, ամէն, որ տայ զաւրութիւն յինքն հայեցողաց ի ներհակ եկամտից, պարսպեալ զանձինս և բնաւորական արարչադիրն հետևել սահմանի, որով զբնաւորական շարժումն իմաստապէս մարթէ յաւրինել աստուածային սիրովն ուղերձեալ և սի-
302ա րալիր համբուրիւ զսեպհականն||ողջունել կեանս յար ի գլուխն ըստ իմաստնոյն հայեցմամբ։

Ըստ որում է և այժմու յիշատակեալ քահանայս Թորոս, որ է յաշխարհէ Թագաւորական քաղաքին Կոստանդինուպաւլսի, ի գաւառէն, որ

կոչի Ակոտաւն, ի բերդէն, որ կոչի Շիկաւն: Եւ երիտասարդական հասակին թողեալ զծնաւղս և զազգայինս, լնլով զտէրունական հրամանն, ուսումնասիրութեան փափագամբ պանդրխտեալ յաշխարհս Կիլիկիոյ, շրջելով յանապատս և ի վանորեայս, և առաքինութեան վարուք արժանի լեալ քահան[այ]ութեան աշտիճանի: Եւ ըստ բնաւորական բարեսէր բարուցն՝ մեծաւ ըղձիւ ստացաւղ եղեալ քառավտակ սուրբ Աւետարանիս, յորոյ բղխմանէ սորա կենդանածնեալ նորոգին ամենայն ազգք և ազինք, ի
Ե.302բ վայելումն սրբասէր անձին իւրոյ և ի յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնո||ղաց իւրոց, և եղբարցւ ՚ր և զայս աւանդէ, զի յետ մահուանն իւրոյ, ուր և հանդիպի ըստ ժառանգութեան իւրեանց, մի ոք իշխեսցէ վաճառել զսա, այլ մնասցէ յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց, և թէ ոք ստունգանէ, ընդ բանիւ եղիցի:

Արդ, եղև գրչութիւն սորա ի թուականիս ՉԼԹ (1290), ի հայրապետութեան առաջին ամին տեառն Ստեփանոսի, և յիշխանութեան թագաժառանգ ծիրանածին պարոնին՝ Հեթմոյ, որդւոյ Լեւոնի արքայի, ի սուրբ և ի գերահռչակ ուխտս Սկևռա, որ է առընթեր անմատոյց դղեկիս Լամբրունի, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչիս և կենսակիր Սուրբ Նշանիս և մաւր լուսոյ Աստուածածնի, ձեռամբ ամենամեղ քահանայի Ստեփանոսի:

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք զսա և լուսաւորիք կամ ընդաւրինակէք, յիշեսջիք ի Քրիստոս զյառաջասացեալ պատուական քա-
Ե.303ա հանայն||Թորոս, և ղծնաւղսն իւր, և զեղբարս, և զբնաւ զարմն նոցին: Ընդ նմին և զամենամեղ գրիչս Ստեփանոս և ղծնաւղսն իմ և ղուսուցիչս իմ, և որ ընդունաւղն է աղաւթից՝ Տէր Յիսուս Քրիստոս, յիշելոցս և յիշողաց ողորմեսցի, և ինքն աւրհնեալ եղիցի ընդ Հաւր և ընդ Հոգւոյն Սրբոյ <սրբոյ>, այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

534

ԱԽԵՏԱՐԱՆ

Կյուլեսերյան, Յուցակ Անկիւրիո, էջ 1338—1339

Գրիչ՝ Ստեփանոս
Վայր՝ Սկեւռա

Փառք գոյացուցչին բոլորից, անսկիզբն և անեղ բնութեան միասնական աստուածութեանն՝ հաւր և որդւոյ և սուրբ հոգւոյն, որոյ շնորհաւքն շարժին էակք ամենայն յիւրաքանչիւր ընթացս ըստ կարգի: Յաւէտ եւս ի զգալեացս բանականս այս մարդ պատուեալ հանճարով, որով զբնաւորական շարժումն իմաստապէս մարթ է յաւրինել աստուածային սիրովն ուղերձեալ, և սիրալիր համբուրիւ ղսեպհականըն ողջունել կեանս՝ յար ի գլուխն ըստ իմաստնոյն հայեցմամբ, և ըստ տէրունական հրամանին զպատուականն և զգեղեցիկն խնդրելով մարգարիտ, ըստ որում է տեսանել և ի բազմադիմի յայսպիսեաց իրաց՝ այսինքն յաստուածասէր կամաց սրբասէր անձանց: Յոր՝ պնդագոյն խորհրգեամբ քահանայ ոմն ամէնիմաստ Ստեփանոս, մականուն Սէնեֆցի, զի ըստ բարէյաւժար կամաց

իւրոց, մեծաւ բաղձանաւք ստացաւ զքառավտակ սուրբ Աւետարանս յի-
շատակ մնացական և անշինջ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց, որ միշտ և հանապազ բղխեալ արբուցանէ յաւէտ զմարդկայինս սեռ։

Արդ, գրեցաւ ունաւղս աւետեաց արքայութեանն հանուրց պարգեւաց ի թուականիս Հայոց ՉԼԹ (1290), ի հայրապետութեան առաջին ամին տեառն Ստեփանոսի, և յիշխանութեան բարեպաշտ և քրիստոսասէր թագաժառանգ պարոն Հեթմոյ՝ որդւոյ Լեւոնի, ի սուրբ և ի գերահռչակ ուխտըս Սկեւռայ, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչիս և կենսակիր Սուրբ Նշանիս և մաւր լուսոյ Աստուածածնի, որ է մերձ յանմատոյց դղեակս Լամբրունի, ձեռամբ ամէնամեղ և տրուպ քահանայի Ստեփանոսի:

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք զսա և աւգտիք ի սմանէ ուսմամբ կամ տեսակաւ, կամ գաղափար առնելով, հայցեցէք ի Փրկչէն մերմէ՝ Յիսուսէ Քրիստոսէ, զի ըստ իւրում առատ բարերարութեանն, քաւութիւն և ողորմութիւն շնորհէ ստացողի սորիս՝ յառաջասացեալ քահանային Ստեփանոսի, և ծնողաց իւրեանց, և բնաւ զարմից։ Եւս անպիտան մեղապարտ գրչիս, և իմոց ծնողացն, և ուսուցչաց, և եղբարց սորա։ Եւ որ ընդունաւղն է մաղթանաց և տուաւղն ողորմութեան՝ Տէր Յիսուս, ըստ իւրում բարէրարութեանն բարէխաւսութեամբ Սուրբ Աստուածածնին և ամենայն սրբոց՝ շնորհէ զխաղաղութիւն ամենայն աշխարհի, և յիշողացդ և յիշելոցս ողորմեսցի, և ինքն եղիցի աւրհնեալ Հաւր և Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

535

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 6273, Փիրղալեմեան, Նշխարք, էջ 87—88

Գրիչ՝ Ստեփանոս Գոյներերիցանց
Վայր՝ Արմէնի լեռ

Արդ, գրեցաւ սա ի լռարանում խցկան, ի հիւսիսակողմ թիկունս լերին որ կոչի Արմէն, որ հուպ կայ ելից անմատոյց ամրոցին Լամբրոնի, այն որ երևելի ճոխութեամբ նստի ի գլուխն Տարսոնի, յառաջնում գահաւանդակի ահաւոր լերինն Տարոսի, ի թուականիս Հայոց ՉԼԹ (1290), ի հայրապետութեան տեառն Ստեփանոսի յառաջնում ամի, և թագապահութեան Հայոց խաղաղարար և բարեհամբաւ արքայորդոյն տեառն Հեթմոյ, որդւոյ Լևոնի:

Եւ գրեցաւ յազնիւ և յամենընտիր օրինակէ։ Յիշեսջիք… և զիս զմեղուցեալ գրիչս Ստեփանոս Գոյներերիցանց:

536

ՄԱՇՏՈՑ

Ն. Ջուղա Տեր-Ավետիսյան, Ցուցակ, էջ 518—519

Գրիչ՝ Տիրացու

Գրեցաւ և աւարտեցաւ Քահանայաթաղս ի թվին Հայոց ՉԼԹ (1290), և թագաւորութեան Աղուն ղանին, և ի հայ[րապետութեան] տեառն Սահփանեոսի, ձեռամբ տխմար և անարուեստ գրչի Տիրացուի, ընդ հովանեաւ Սուրբ Կարապետին, ի վայելումն սրբայսնեալ քահանային Շնոհուորին, և յիշատակ ծնողաց իւրոց։

Արդ, ո՛վ պատուական մանգունք սուրբ եկեղեցւոյ, յորժամ կարդայք կամ աւրինակէք իմ բաղում մեղացն թողութիւն խնդրեցէք և ծնողաց իմոց, և Քրիստոս Աստուած ողորմի յիշողացն և յիշեցելոցն, ամէն։

537

ՏՕՆԱՊԱՏՃԱՌ

Երուսաղէմ 1272, Պողարյան, Ցուցակ Դ. էջ 455

Գրիչ՝ Բարսեղ

ա

411բ Ջնուաստ Բարսեղս, որ զայս գրեցի,
Խրատ ամէն մարդոց ի բարի,
Յիշման այրէք դուք զիս արժանի,
Զի բարի Տէրն ինձ ողորմեսցի,
Եւ ծնողացն իմոց յոյժ բարի,
Զյիշողդ յիշէ Տէրն յամենայնի։

Ի թուի] Հայոց ՉԼԹ (1290) գրեցան պիտանի տառս աստուածային, ձեռամբ նուաստ քահանա Բարսղի, ի թագաւորութեան քրիստոսասիրի, և բարեպաշտին Հեթմոյ որդոյ Լևոնի, որոյ Քրիստոս ողորմեսցի, և պահեսցէ զբարի թագաւոր մեր Հեթում հարազատաւք իւր։ Եւ որք աւկտիք ի սմանէ, մեղաց թողութիւն հայցեցէք յաստուծոյ Բարսղի և ծնողաց իմոցն՝ Աստուած յիշողացդ ողորմի։

բ

89ա Զփցուն եւ զախմար գրողս Բարսեղ յիշեցէք աղաւթիւք։

գ

Գրիչ՝ Յոհաննէս

376ա ԶՅոհաննէս քահանա զգրող սորա յիշեցէք։

538

ԱԻԵՏԱՐԱՆ

Ձմմաո 17, Քեշիշյան, Ծուցակ, էջ 33

Գրիչ՝ Խաչատուր
Վայր՝ Ատանա

225բ Շնորհիւ Տեառն սկսա եւ ողորմութեամբն նորին կատարէցի զսուրբ և զկեան[ս]արեր աստուածարանք Աւետարանս ի հռչակաւոր քաղաքիս Ատանայ, ընդ հովանեաւ Սրբոյն Սարգսի զաւրավարին, ի թուին ՉԼԹ (1290), ի թագաւորութեան աստուածապաշտի Թագաւորին Հեթմոյ, եւ յառաջնորդութիւն Ստեփանոսի Հռոմկլաեցուն*:

Ստացաւ զսա բարեպաշտ եւ աստուածասէր Տիկնաց տիկին ի յիշատակ իւր եւ ծնաւղաց իւրոց, եւ Սուրբ Վասլին ետ, ըստ այնմ, որ ասէ, թե Որանի որ ունիցի զաւակ ի Սիոն։

Արդ, որք աւետիք ի սման[է] կարդացմամբ, յիշեսջիք ի Քրիստոս զՏի[կ]նաց տիկին, եւ զԿոստըն[տ]ին երէց, զբաղ[մա]մեղ գրչողս զհա[յա]ւուր, եւ Քրիստոս զձեզ [յիշէ իւր] յարքա[յ]ութեան, ամէն։

* Տպագրված է «Հոռոմաեցուն»։

539

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԷԻՑ ԹՂԹՈՑ

Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 525, «Բազմավէպ», էջ 107—108

Գրիչ՝ Յոճաճէս
Վայր՝ Աղբերց վանք
մականուն Գլաձոր

Ի թուիս ՉԽ (1291) գրեցաւ Մեկնութիւն կաթուղիկէիս, ձեռամբ բազմամեղ եւ սուտանուն կրաւնաւորի Յոճաճիսի *աշակերտի բանի, ի մենաստանս որ կոչի* Աղբերց վանս, *եւ մականուն* Գլաձոր, *ընդ հովանեաւ Սրբոյն Ստեփաննոսի, ի վարժապետութիւնս գիտնական եւ արդիւնական մեծ հռետորի* Յեսաու, *զոր շնորհեսցէ ղսա մեղ Տէր երկայն աւուրս։*

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ մատենի, զթողութիւն խնդրել ի Տեառնէ՝ իմո[ց յ]անցանաց եւ ծնողաց, եւ վասն այլ[։] եւ ընդ նմին իւրն լիցի թո/// Սխալանց գրիս աղաչեմ չլինել մեղադիր, ա[յ]լ ուղղել բարեմտաբար, զի չէի հմուտ գրչութեան արհեստից, եւ ի կարեաց հարկեցա գրել զսա, եւ կարողին ամենայնի փառք, պատիւ, գոհութիւն յաւիտեանս, ամէն։

540

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՑԷՔ ՃԱՌԻՆ ԴԱՎԹԻ ՆԵՐՍԷՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Երևան 6332, Փիրղալեմյան, նշխարք, էջ 31

Գրիչ՝ Եսայի Նչեցի
Վայր՝ [Գլաձոր]

Գրեցաւ Պատճառ և մեկնութիւնս Բարձրացուցէքիս, զոր արարեալ է երիցս երանեալ կաթողիկոսի Հայոց տեառն Ներսէսի, ի խնդրոյ վարդապետին Վարդանայ, *որ կայ ի Հաղբաս ի դանբանի, ի թուիս Հայկազեան տումարի ՉԽ (1291)* ձեռամբ* Եսայեայ *քահանայի և պիտակ անուն*

* *Թվականը «ՋԻ» (1271) է գրված, որ չի կարող լինել։ Այդ ժամանակ Նչեցին դեռ պատանի էր և ոչ վարդապետ։ Նույն հիշատակարանը դանում ենք Անկիւրիոյ Հայերեն ձեռագրատուցակում (տե՛ս թիւ 2 ձեռագիրը, սյուն 34), ուր թվականը «ՋԽ» (1491) է։ Այս էլ ճիշտ չէ։ Առաջին հիշատակարանում թվականի Ջ-ն է անաղարտ պահպանվել և Խ-ն շփոթվել Ի-ի հետ, իսկ երկրորդում, ընդհակառակը, Խ-ն է անաղարտ պահպանվել և Ջ-ն է շփոթվել Ջ-ի հետ։ Թվականը, այսպիսով, եղել է ՉԽ (1291)։*

վարդապետի, աշակերտ մեծ Հռետորի և գիտնական վարդապետին Ներսիսի:

Արդ յիշեցէք ընդ սա և զիս,
Պատահեալքդ այս մատենիս,
Զի մատամբ ծրեցի զսա եղկելիս,
Տկար անձամբ և մեղօք լիս,
Եւ դուք յիշիք յանճառ բարիսն,
Յիշմամբն ղիս անջնջելիս։

541

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 2329

Գրիչ՝

ա

24բ Ո՜վ սուրբ ընթերցողք, յիշեա զեղկելի գծողս ի գերամաքուր աղաւթս ձեր, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ։

բ

Ստացող՝ Անտոն
Վայր՝ [Ծանէ այր]

281ա Ի թուին Ջխ (1291), ի հայրապետութեան տեառն Ստեփանոսի, և ի թագաւորութեան բարեպաշտին Հեթմոյ եղե կատարումն գրոյս, ի դուռըն Սուրբ Լուսաւորչիս գերեզմանին։ Արդ, որք աւգտիք ի սմանէ, ասացէք եթէ Աստուած ողորմի ստացողի գրոյս և ծնողաց իւրոց Սուրբ Լուսաւորչիս բարեխաւսութեամբ, ամէն։

գ

282ա Նուաստ և անարժան սպասաւորս բանի Անտոն, մականուն Գրիգոր կոչեցեալ, ստացա զգիրքս զայս, որ է Քերական և Արուեստ գրադարձի և Համառաւտ կանոնք՝ երկու դիտաւորութեամբ. մի՝ զի ընթերցեալ աւգտեցայց ի սմանէ, վասն որոյ և խոշորագիծ ետու գրել ի ծերութեան ժամանակի, և երկրորդ՝ ղի յիշելոյ պատճառ լիցի մեզ ի մարմնաւոր կենացս։

Արդ, աղաչեմ զբարեմիտ և ղողորմած հարքդ և ղեղբարքդ, որք
աւգտիք ի սմանէ ընթերցմամբ կամ աւրինակ առնելով գրելոյ աղագաւ,
282բ աննախա‖նձ բարուք և բարեմիտ կամաւք, յիշեցէք զմեզ աղաւթիւք
առաջի Աստուծոյ և մեղաց մերոց թողութիւն խնդրեցէք, և ծնողաց մերոց, և եղբարց, և քերց, և ամենայն ազգատոհ[մ]ից՝ կենդանե[աց] և
հանգուցելոց, և մարդասէրն Աստուած, որ առատն է ի տուրս պարգևաց,
ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի և մեղաց
թողութիւն շնորհեսցէ, և ի գէհէնէ հրոյն փրկեսցէ, և երկնից արքայու-

283ա թեանն արժանի արասցէ ընդ ամենայն սուրբս փառատրել զամե||նասուրբ երրորդութիւնն՝ այժմ, և միշտ, յաւիտեանս յաւիտենից, ամէն*։

Գ

223բ Ջճառհամարք կանոնացս ի վերջըն տես, և զստացող գրոցս զԱհարոն սպասաւոր բանի և ծնողսն իւր յիշեա ի Տէր, որ է աւրհնեալ յաւիտեանս։

542

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4080

Գրիչ՝ Յովաննէս

268բ Աւրհնեալ ամենասուրբ երրորդութիւնն յամենայն արարածոց եւ յամենայն սրբոց իւրոց երկնաւորաց եւ երկրաւորաց, ամէն։ Այլ եւ մեք իսկ, որ ըստ մերում կարի սատարեցաք ի գիրքս յայս, ունիմք հաւատ և յոյս ի գթութիւնն Աստուծոյ, եւ յետ նորա յաղաւթս և ի բարէխաւսութիւն ծառայից նորա, առ մեզ դարձուցանել զերեսս ողորմութեանն Քրիս-
269ա տոսի ի վերա կշռելի պարտուց||իմոց անթիւ բիւրուց տաղանդաց։ Քանզի այսու ակնկալութեամբ ընդոստուցաք զմեզ մոռանալով սննդակից եւ ընտանացեալս մեր տկարութիւն մարմնոյ, եւ զբազմազան ցնորս հոգոց և խորհրդոց, վասն անշահաւոր տարաշրջութեանս։

Այլ եւ յազագս թշուառացուցիչ եւ վասն դառնութեան ժամանակիս, զորածին չարիքն մեր յաճախեալ ի վերա մեր, քանզի սակաւ քան զչափ մեղացն մերոց արբոյց մեզ Տէր արտասուս, և նուազ քան զյորդաբուխ ախտից մերոց չրհեղեղս խաղացին առ մեզ վտակք արեան, եւ ըստ գազանական գնացիցն մերոց յագեցան գազանք ի մարմնոց մերոց։ Քանզի շնչեաց բարկութիւն Տեառն ճահճուն արևելեան աւտար և անընդել ազգին, որպէս ասեն Թորգոմեան ցանկ զարմին Հաքարու, եւ հողմով||անաւրենութեանց մերոց ած զնոսա մինչև առ մեզ, ըստ նախատես
269բ մարգարեութեան նախնի հաւրն մերոյ Ներսէսի, զոր լալով նախաձայնեաց զկորուստ հոգևոր երկանց իւրոց, զոր ինչ կրեցաքս յազգէն Նետողաց, զորոց զանուանսն կոչէ սուր և թեթև, զի թերեւս տաթարն «սուր եւ թեթեւ» ասի ըստ լծորդաց փոփոխման, եւ կամ «առ և տարս», որ է Տաթար։ Քանզի հարին անյագագալէս և տարան աներկիղւաբար զորդիսն Սիոնի ի ստրկութիւն գերութեան, եւ զոր ինչ գործեցին ապականութիւն երկրի եւ տապալումն քաղաքաց եւ դղեկաց, և աւէր եկեղեցաց, եւ մահ ազգի ազգի, եւ գերութիւն։ Ու՞ կարեացէ զբովանդակն ընդ գրով արկանել, սակայն եւ զյոլովս տեսաք աչաւք մերովք ի նախաձայնեալ աղե-

---

* Անմիջապես հետո գրված է «Ի թվ. ՉԿՆ (1316 թ.) յամսեանն օգոստոս, որ աւր ԺԸ (18) էր, վճարեաց զմարմնաւոր կեանսս և փոխեցաւ առ Քրիստոս երջանիկ և ճգնաւոր րաբունին Ահարոն... և եղաւ ի լերինն Սեպուհ, ընդ հովանեաւ Սուրբ Լուսաւորչին, մերձ ի՝ Մանէ այր» (հէ 1 բ)։

տից սուրբ նահատակին Ներսէսի: Զեկեղեցիս մեր նսեմացեալ, եւ զսե-
270ա զանս տուրբ կործանեալ, եւ զմատեանս աստուածայինս այրեցեալ, եւ
ընկճեցեալ առ ոտն զսպասն, եւ զքրիստոսական նշանսն անարժանիցն
ձեռամբն շաւշափեալ և նախատեալ և յանարգ պէտս վարեալ զաշխարհս
մեր անապատ, եւ զքաղաքս լեալ բնակութիւն գազանաց: Ազատքն մեր ի
ծառայութիւն իջին, եւ փափուկքն մեր՝ յանըմբերիշի չարչարանս, բար-
ձունքն մեր խոնարհեցան և փառաւորքն մեր յանարգութիւն ընկճեցան,
եւ սնունդքն հովասունք խորշակահար եղեն յարեւու: Կուսանքն մեր աւ-
տարաց եղէն, և երիտասարդքն մեր՝ հովիւք, տղայքն մեր որբք եղեն, և
մայրք նոցա՝ այրիք, եւ որդիք վերնոյ Սիոնին՝ զուգակըշիռք ոսկոյ
զքարի հարան, իբրեւ զանաւթ անպիտան: Ցրուեցաւ հատն Տեառն, ճա-
270բ պաղեցան գառինքն||արատի նորա, եւ վաճառակուր եղեն յազգս հեռա-
ւորս՝ գնեալքն արեամբն Քրիստոսի: Բաժանեցան ծնունդք ի ծնաւղաց,
մեկնեցան հարազատքն ի միմեանց, հեռացան բարեկամքք ի սիրելեաց:
Դարձաւ տաւնն մեր ի սուգ, եւ ուրախութիւնն մեր՝ յարտասուս, կարաւ-
տացաք ողբոցն Երեմիայի և կրեցաք զպատուհաս հնոյն Իսրայէլի, և ոչ
գո թիւ աղաղակի մերում, քանզի չիք համար չարեաց մերոց: Եւ ի վերա
այսր ամենայնի ոչ է ի մեզ զղջումն և ոչ ապաշխարութիւն:

Արդ, ես Յովսննէս այսպիսի դառն ատւրց ծնունդ եւ վշտաբեր ժա-
մանակի, ի Զխ (1291) թուականութեանս Հայոց, ի բռնակալութեան ազ-
գին Նետողաց, և ի թագաւորութեան Հեթմոյ որդոյ Լեւոնի, որդոյ Հեթ-
մոյ, եւ ի մեզ թագաւորող Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ ի վե-
րադիտողութեան Հայոց տեառն Ստեփանոսի, եւ///

543

ԱԽԵՏԱՐԱՆ

Սանչյան, Յուցակ Ամերիկայի, էջ 353—355

Գրիչ՝ Վասիլ
Վայր՝ Սիս

ա

336—337 Փառք եզակի, եռահիպոստաս դասանութեանն, ապէնիազին կատարեալ եւ անսահմանելի Աստուծոյ Հաւր, Աստուծոյ Որդւոյ, Աստուծոյ Հոգւոյ յաւիտեանս, ամէն:

...*Բայց գրեցաւ լուսազարդեալ Աւետարանս ի լուսալրական ժամանակի, սկզբանց արարչութեանն մինչեւ առ մեզ ՅՈՋ (6606), իսկ ի կենարարին գալըստենէն ՌՃՁԳ (1183), իսկ ի Խոսրովայն Պարսից սկսեալ մերս թիւ Զխ (1291): Եւ գրեցաւ սա ի մայրաքաղաքս ի Սիս, ընդ հովանեաւ Սրբոյ Կարապետին, ձեռամբ Վասիլ քահանայ անիմաստ գրչի, ի խնդրոյ Թորոս աբեղայի, ի հայրապետութեանն տէր Ստեփանոսի Հայոց կաթողիկոսի, եւ ի թագաւորութեանն Հեթմոյ, որդւոյ թագաւորին Լեւոնի:

* Մի ընդարձակ հատված բաց ենք թողնում, որը բառացի համապատասխանում է 1290 թ. Թորոսի գրած հիշատակարանին (տե՛ս ատ՝ № ?):

Արդ, աղաչեմ զամենեսեան ոյք հանդիպիք այսմ գրոց, յիշեսջիք ի Տէր զգրող սորա եւ ղստացաւղ սորա՝ զԹորոս աբեղայն, եւ ննջացեալսն իւր, որ ստացաւ զսա յարդար գոյից իւրոց, եւ զհամաւրէն եղբայրութիւնս, զկենդանիս եւ զհանգուցեալս, յորոց աշխատութենէ գրեցաւ սա, եւ ղծնաւղսն մեր, եւ Աստուած, որ մեծն է ողորմութեամբ, յիշողացդ եւ յիշելեացս եւ ամենայն հաւատացելոց ողորմեսցի, եւ նմա փառք յաւիտեանս, ամէն։

Բ

105բ Աղաչեմ յիշել ի բարին զստացող սորա՝ զաբեղայն զԹորոս, եւ զաշխատողս ի սմա՝ զՎասիլ նւաստ քահանայ։

Գ

Լրացնող՝ Ներսէս

337ա Ջմեղապարտ ծառայս Աստուծոյ զՆերսէս յիշել աղաչեմ, որ զկարմիր համարքն գրեցի։

544

ՄԱՏԵՒԱՆ ՈՂԲԵՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ

Կյուլեսերյան, Յուցակ Անկիւրիոյ, էջ 661—662 (1624 թ.)

Գրիչ՝ Մատթէոս

Արդ և ես ամենաթշուառ հոգիս ի գործարան մեղսամակարդ մարմնոյս կապակցեալ, յետինս և քաւիչս և անոպայս ի վարժապետս, ան[ո]ւամբ եւեթ և ոչ արդեամբ և էութեամբ Մատթէոս* վերաճայնեալ, ի շնորհատուրն խմբարանէ, ընդ սրբոյ հօրս և աստուածարեալ հոդիապատում հռետորիս և անյաղթ փիլիսոփայիս, յոքնաթախանձ աղերսիւ մաղթեմ ի հանդիպողաց այսմ յոքնարեղուն, ամենապարար և աննիւզ սեղանոյս, յիշելով ի բարի, խնդրելով ի Տէառնէ զթողութիւն բազմամասնեա յանցանց իմոց։ Մանաւանդ յաղագս հոգիանեղկ և բազմաշնորհ, պատուական և աստուածարեալ ընտրեալ եղբօր մերոյ ըստ հոգոյ Տիրաւուր կոչեցելոյ, որք խրթեւ զկրկին տեսակս գործարանաց լարից երգոց ի մի կամս խորհրդոց ձայնից նաեցեալ և կամ ըստ երկուց աչաց ի մի և ի նոյն տիպ գաղափարի պատկանաբար նկատեալ։ Ըստ այսմ սարասի և մերձակայ ամէներջանիկ եղբայրս ընդ իս ոչ միայն յարակիցք, այլ և միաշունչք և եզախորհուրդք, համագոմարք և զուգահաւանք, և ամենակենցաղական կենաց կցորդակիցք, ի կրկին լեզուաց և ի քառից տեսարանաց և ի նոյնաթիւ լսելեաց, առ միեւնոյն ընթացս խորհրդոց տեսեալք։

Ի դարս և ի ժամանակս յետինս, յորում ամանակի նահանջեալ եզերեցաւ հոլովք և չափք կենցաղոյս արեգակնաին բոպէից, ըստ հայկա-

* Այս և հաջորդ անունները գրված են նախօրոք բաց թողնված տեղերում։

կանս զարմից չորեքտասան յոբելինայ և խ թըւոց (1291), յաշխարհակալութեան ազգին Նետօղաց, որոյ Արղուն անուն ճանաչիւր։ Արդ, ի սոյն ամակի եղեւ գիծ աստուածամուխ տառիս նախաճառեալ եղբօրս, վասն զի առ յոքնակի ծիրս երախտեաց սորա առ մեզ հոգեկան և մարմնական ոչ այլ ինչ ունելով տրիտուր փոխարինի, բայց միայն զայս տառ լուսատր կենդանանորոգ, զոր յոյժ և եռափափագ ըղձիւ ընկալեալ ի ձեռաց մերոց զսակաւ աշխատութիւնս և զփցուն հերկս, իբրեւ զպարգեւս երկնառաքս և անհամեմատս, ոչ ի նիւթ սորա հայելով, այլ ի յարդիւնախնամօղն արարածոց և պարգեւատուն ամենայն հայցօղաց։ Ըստ յուսոյ սորա շնորհեսցէ սմա յամենառատ կամաց իւրոց զհայցուածս սրտի, խաղաղական կենցաղավարութեամբ աշխատասէր լինել ի սմա վաելելով ի յոքնաջան համոց սորա և զկնի ելիցն յաշխարհէս՝ յիշատակի և ողորմութեան։

545

ԱԻԵՏԱՐԱՆ

«Լոյս» 1905 թ. էջ 517

Գրիչ՝ Թորոս Կապնցի Գագիկ
Վայր՝ Սիս

ա

Ո՜վ դասք սուրբ երամի,
Որ էք կարգեալ յեկեղեցի
Եւ հանդիպիք այսմ տառի,
Յորժամ կայցէք ի յատենի,
Բազկատարած առջև թեմի,
Զսա կարդայք պատգամ բարի,
Որ ի Տէառնէ մեզ կու պատմի,
Եւ է բերան Քրիստոսի,
Յիշել հայցեմ զմեզ բարի՝
զԹորոս գրիչս Կապնցի,
Գագիկ անուն կու երկրորդի,
Եւ զԿոստանդին առն բարի,
Երկրորդ անուն Գուրդէզ կոչի։
Ջեռ փափաքմամբ հոգւով իլի,
Շատ ջանք ունի յամէն բարի,
Ետ գրել զսա Սուրբ Պետրոսի,
Իւր հոգւոյն զաւակ բարի
Արձանած ինչ յեկեղեցի։
Ի վայելումն քահանայի,
Որ մականուն Յակոբ կոչի.
Էր խիստ ջանկոտ ու առաքինի,
Քաջ եւ արի յեկեղեցի։
Երբ զսա տեսաւ առն բարի,

Որ ողորմած դէմ աղքատի,
Ջամէն սիրէր ժամատեղի,
Զդին դրոյս զինչ ծախք լինի,
Նա իւր ձեռքաւն վաստակի,
Որ իւր հալալ արդիւնք կոչի,
Ի գալստեանն Քրիստոսի,
Առցէ զբարի պատասխանի
Ի յարարչէն ամենայնի,
Եւ ընդ արդարն դասեսցի,
Կոստանդին եւ Յաւաննիսի
Ինքն եւ իւրքն և զինչ զարմն ունի,
Մտցէն ի հանգիստն Քրիստոսի։
Եւ զգրողիկս անարժանի,
Յետ աղաւթաւք մաքրագունի,
Սուրբ տէրն մեր, որ հայր կոչի,
Ելցէ ընդ առաջ ըստ անառակի,
Եւ զմեղաւք, զոր գործեցի,
Ձեր աղաւթաւք մի յիշեսցի։

Գրեցաւ սա ի... քաղաքս Սիս, ընդ հովանեաւ Սրբոյն Պետրոսի, ի ժամանակս բարեպաշտ... քրիստոնէից, և ի հայրապետութեան տեառն Ստեփանոսի, ի թուին Չխ (1291), ի վայելումն սրբասնեալ քահանայի Յակովբայ: Եւ որք յիշէքդ՝ յիշեալ լիջիք ի Տեառնէ Աստուծոյ մերոյ, որ են աւրհնեալ յաւիտեան։

Բ

Ո՞վ դասք սուրբ երամից, որք հանդիպիք այսմ տառի տեսութեամբ կամ պատմութեամբ քարոզութեան, կամ գաղափար դնել, կամ աւրինակել, դատապարտ և բազմաբիծ, յոգնամեղ բիւրապարտ ոգւոյ Թորոսի՝ գրողի սորա, եւ Կոստանդեա, որ եռ գրել զսա, յիշատակ ոգւոյ իւրոյ, ի վայելումն սուրբ ուխտին փակակալին Քրիստոսի Սրբոյն Պետրոսի, և սպասաւորի սուրբ եկեղեցւոյս սրբամիտ քահանային Յակոբայ, եւ փոխելոյն յաստեացս Յովաննիսի եղբաւրն՝ Կոստանդեա:

546

ՃԱՇՈՑ

Հովակիմյան, Ցուցակ Նիկոմեդիո, էջ 77 (1229 թ.)

Ի թու[ին Հա]յոց ՉԼԹ (1290), ի դեկտեմբերի ԻԵ (25), ի կիւրակի ի յայգ երկուշաբթի, որ էր ծնունդ*, ի կէս գիշեր, աւանդեց Տիրամայրն զոդին, ու ի պատարագին ժամն եդաւ ի հող, որոյ Աստուած յարութիւն կենաց շնորհէ եւ թողութիւն մեղաց, ամէն։

* Մի բառ ջնջված է։

Ու զկնի նոյն ամն, ի թու[ին] Հա[յոց] ՉԽ (1291), մայիսի ԺԷ (17), աւրն ուրբաթ, յառաջ քան ծագել լուսոյն, առաւ քա[ղաքս Ամա]ի* քրիստոնէից։

547

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՏԱՍԱՆ ՄԱՐԳԱՐԷԻՑ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՄԲՈՐՈՆԱՅՈՑ

Երևան 4980

Գրիչ՝ Յոհաննէս

ա

Ջ6ա Ջնեռսես վարդապետ զխնդրող սուրբ կտակիս յիշեցէք ի Տէր և զիս զանարհեստ գրիչ, և դուք յիշել լիջիք։

բ

121բ Ջստացաւղ գրոցս զնեռսէս վարդապետ յիշեսջիք։ Եւ զիս զտառապեալս զՅոհաննէս, որ ի ստոր անգեալ կամ և զառածել, և ակն ունիմ թէ ելանիցեմ ի ժանեաց հինից և ի գրոյ տառապանացս և այս ըստ ձեռոց աղաչիցդ։

գ

153բ Ի թուիս ՉԷ (1291) կատարեցաւ հրամանաւ Նեռսէս վարդապետի, զի որք աւգտիք, յիշեսջիք յաղաւթս, ընդ նմին և զիմ անարժանութիւս, աղաչեմ։

դ

280բ զնեռսէս վարդապետ զփափաքող գրոցս այս յիշեսջիք, այլ և զիմ անարժանութիւնս զՅոհաննէս և սխալանացն ոչ մեղադիր։

548

ԱԻԵՏԱՐԱՆ

Սրվանձտյան, Թորոս Աղբար, Բ, էջ 303

Գրիչ՝ Յոհաննէս
Վայր՝ Սիս

ա

Գրեալ ի լուսնալրական ժամանակի սկզբանց արարչութեան մինչև առ մեզ ՅՂ (6740) ամ, իսկ ի կենարարին գալստենէն ՌՄՂԴ (1293), իսկ Խոսովայն Պարսից մերո թիւ ՉԽ (1291)... ի մայրաքաղաք եւ յաստուածապահ դղեակս որ կոչի Սիս, ձեռամբ Յոհաննիսի քահանայի, ընդ հուանեաւ Սուրբ Նշանիս, ի դառն և ի նեղ աւուրս///

---

* Գրված է «քաղ», լրացնում ենք նաև քաղաքի անունը, քանի որ այդ թվականին Աքան էն վերցրել քրիստոնյաներից։

Արդ, գրեցաւ Աւետարանս աստուածաւէր եւ բարեպաշտ եւ ողորմած եւ հաւատացեալ պարոն Միխայլի, որ ետ գրել զսա ջերմեռանդն սիրով եւ մեծաւ փափականաւք ի յարդար վաստակոց իւրոց, յիշատակ... ի վայելումն հոգևոր որդւոյն իւրոյ Կարապետին, սուրբ և ընտրեալ առաքինասէր քահանային, ի տաճար սուրբ աստուածահայրն Դաւթի, առ ի յիշատակել զինքն և զծնողսն իւր...*

---

* Բերված է նաև հետևյալ հիշատակարանը։

«Սուրբ Աւետարանս կայր գրաւական, նա կու ծախէին վասն դառնութեան ժամանակին, ի Թոդւորի դրամ Բճ (200)։ Նա Սմբատ երեց էառ ու ասաց ծխերուն, թէ կուտամ ես զճ (100) դրամ, ու զճ (100) դուք ձեր հոգուտ տուք, որ մնայ սուրբ Աւետարանս Սուրբ Դաւթայ զէտ, որ էր յառաջն; Եւ յամարութեամբ ամէնաւրհնեալ ծխերուս սրտի տուին զճ (100) դրամ իրենք, ու զճ (100) ես՝ Սմբատ երէցս, ու առաք զԱւետարանս, որ մնա յաւիտեան Սուրբ Դաւթայ...»։

549

ԻԳՆԱՏԻՈՍԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՂՈՒԿԱՍՈՒ

Երևան 1342

Գրիչ՝ Ահարոն–Գրիգոր
Վայր՝ Եգնկայ և Անի

.259բ Ամենասուրբ Երրորդութեանն՝ Հայր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ և մի բնութեան և աստուածութեան, արարչի և նախախնամողի գթնաւ գոյքս փառք և աւրհնութիւն, գոհութիւն և երկրպագութիւն յամենայն եղելոցս, զի նայ է բնութեամբ բարի և ակիզբն և կատարումն ամենայն բարե[ա]ց*, որոյ կամաւք և նախախնամութեամ[բ] սկիզբն եղև գրոցս այս այսմիկ, ի յԵկեղե[ա]գ գաւառն և ի Դարանաղե[ա]ց լեռն, ի յերկնահանդոյն անապատն, որ յանուն Սուրբ Լուսաւորչին Սուրբ Գրիգոր կոչի, որ է տեղի ճգնութեան աղաւթից և փառաբանութեան և հրեշտակակրաւն վարուց նոր[ա] յերկար ժամանակս, այլ և հանգիստ նորին և սուրբ մարմնոյն գերեզման, և բժշկական նշխարաց նորա տեղին անդր է։

Եւ այլ գրեցաւ ի մայրաքաղաքն Եզնկա, բայց ի կատարումն ոչ էլ, զի այլազգիք մահմետականք ասպատակեցին ի գաւառն ի քառասներորդաց պահոցն յերկրորդ շաբաթուն, և բազում քրիստոնէայս՝ եկեղեցականս և աշխարհականս, նահատակեցին, և յանխնա, և անողորմ .260ա սրակոտոր արարին, և զա||յլսն գերի վարեցին։ Եւ սաստիկ և անհնարին ահ և երկեղ, և տագնապ և խռովութիւն եղև բնակչաց քաղաքին։ Եւ որպէս յոլովք ցրուեցան ի քաղաքացեացն ընդ ամենայն կողմանք, նոյնպէս և մեք մազապուրծ եղե[ա]լ բազում տառապանաւք և աշխատութեամբ դիմե[ա]լ յարևելից կողմն, և խնամք ողորմութեանն Աստուծոյ առաշնորդե[ա]լ հասոյց զմեզ յԱնի քաղաքս, և աստ եղև կատարումն գրոցս շնորհաւք և աւգնականութեամբն Աստուծոյ, ի թուականիս Հայոց ՉԻԱ (1292), ի մարերի ժ (10) և ի հոկտեմբեր ԺԳ (13), ձեռամբ մեղապարտ և անարժան վարդապետի Ահարոնի, մականուն Գրիգոր կոչեցե[ա]լ ոչ բովանդակ գիրքս, այլ սակաւ թղթեղն ի վերջն**, որ

* Փակագծերում առնված բոլոր ա-երը գրիչը չի գրել։ Հետագայում սրբագրելիս մի մասը պատվագրել են։ Մենք բաց արինք պատիվները և միօրինակության համար ավելացրինք նաև մյուս տեղերում։

** Ահարոն վարդապետը գրել է 246բ, 261ա թերթերը։ Ձեռագրի գրչի անունը չի պահպանվել։

այբն միագիծ է և այլ նշանագրեր կա, վասն որոյ աղաչեմ ղընթերցոզստ անմեղադիր լինել, զի չհանդիպեցաւ լաւ գրիչ, որ տեղե[ա՛]կ էր արուեստին, որպէս զայլոցն, եւ ես ոչ տեղի ունէի պատշաճաւոր գրելոյ, և ոչ գործիք, այլ և վասն աւրինակին փութաի ի գրելն, թէ գուցէ գնանք աստի և յայլ տեղ աւրինակ չհանդիպիւ։

Եւ է սա աւետարանագլուխ Սրբոյն Ղուկասու, որ զՔրիստոսի Աստուծոյն մերոյ զտնաւրէնութեանն խորհուրդն պատմէ, մեկնե[ա]լ և
260բ բացայայտե[ա]լ սուրբ և հոգէ||լից վարդապետին Իգնաաիոսի, ի խընդրոյ տեառն Գրիգորիսի, Հայոց ազգիս վերադիտողի, որ Վկայասէր կոչի։ Իսկ ես տրուպս և յետին ի սպասաւորս բանի Աճառոն, որ և Գրիգոր, հոգք և փոյթ յանձին կալե[ա]լ, յուսով բարե[ա]ց և հաւատով, ետու գրել զսա խոշորագիծ՝ վասն ծերութեան հասակիս և լուսոյս նուազելոյ, զի դիւրաւ ընթերցեալ մխիթարեցայց աւգտել ի սմանէ։ Եւ նորին սուրբ աւետարանչին Ղուկասու բարեխաւսութեամբ և հանճարեղ և իմաստուն գիտնականին Իգնաաիոսի և ամեն սրբոց աղաչանաք ողորմութիւն գտայց ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ ամենաառատ բարեարութեամբն իւրով, թողութիւն շնորհել բազում և անթիւ յանցանաց մերոց, յորմէ դողամ և սարսիմ ի յահագին և սոսկալի դատաստանէն Աստուծոյ ի տիեզարական հրապարակն, յորմէ փրկութեան և ազատութեան յոյս և ակնկալութիւն զԱստուած ունիմք և զձեզ գթած և սուրբ հարք և եղբարք մեր, որք յետ մեր հանդիպիք այսմ կտակի ընթերցմամբ կամ գաղափար առնելով, մտերմաբար և ցավակցութեամբ յիշել զմեզ ի բարի, և աղաւթիւք յԱստուծոյ ողորմութիւնն խնդրել մեզ և ծնողաց մերոց և վարդա-
261ա պետաց, եղբարց և քե||րց և ամենայն երախտաւորաց մերոց, և ազգատոհմից և կենդանե[ա]ց և ննջեցելոց, և որք ողորմութիւն են արարել մեզ և աւգնել ի ծս.ղք և ի պէտք գրոցս։ Եւ Սարկաւագ քահանային, զաւրինակն շնորհեց, և Գրիգոր ծեր քահանային, որ զմեզ ժողովեր յիւր բնակութիւնն և եկեղեցին, և Սիմէոն միաբեցին Մաւրնգաւեցոյն, որ առ մեզ հայրաբար բազում խնամք և սէր և գութ եցոյց և ողորմութիւն, Աստուած նմա բարեացն և սիրոյն բիւրապատիկ հատուցումն առնէ աստ և ի հանդերձեալն, և Աստուած, որ առատնէ ի տուրս պարգևաց, ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս և ամենայն հաւատացելոց առհասարակ ողորմեսցի ի դժոխոցն, և ի գեհենէ հրոյն փրկեսցէ, և անճառելի բարե[ա]ցն և երկնից արքայութեանն հանգստե[ա]նն և ուրախութե[ա]ն արժանի արասցէ ընդ ամենայն սուրբս իւր, և նմա փառք յաւիտեան։

550

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6292

Գրիչ՝ Մաթէոս վարդապետ
Վայր՝ Վայոց ձոր, Աղաւ անապատ

ա

215ա Փառք եղական, եռաբուն, միակամ, անսկիզբն և անքնին տէրութեանն յաւիտեանս և առյապայ յանսպառ յաւիտեանս, ամէն։ Ջմեղապարտ գծողն և զանկիրթ բանիս ղՄաթէոս վարդապետ յիշէք ի Տէր աղաչեմ։

Յաստուածուստ բնաւորեալ յետ առաջնոյ յստակ և պարզ մտացն, որք են փափաճողք գերունակ բտրոյն և յետ նոցայ խառնուրդ գոլով նոցուց, յստակ և մաքուր միութեամբ, հանդերձ խոնարհագոյն պատճառաւ, որք զկամս նոցայ ստանան և փափաճին բարոյն, նախ գիտելոյ թէ է Աստուած, եւ յետ այսր, ըստ կամացն հետևելոյ, ըստ աւետարանութեան Պաւղոսի, թէ Զինչ են կամքն Աստուծոյ բարին, հաճոյն և կատարեալն։ Զի որպէս ի մուտս բնակութեան դռանն է կարգեալ, և տե-
215բ սութիւն||յաչս և ախորժակքն ի ստամոքսն, նոյնպէս և աստուածագիտութիւն ի բարին և հաճոյ բարին և կատարեալն։ Այսու մտանի յանղուգական բարոյն պատրաստն զոր բնաւորեալ են մարդիկ յարարչէն. գիտել և զգիտելին յանձնիշխան կամաւքն տրոհել ղկայունն յանընդունակէն, յայն սակս երանին և թշուառին։ Բայց մերս տես և հասումն ժամանակիս. աւաղ և եղուկ զասողս, զի թէ Տեառն կատարի, եթէ ոչ առաւելու արդարութիւն ձեր, քան ղդպրացն և ղփարիսեցւոցն ոչ մտանէք յարքայութիւնն երկնից։ Ապայ այժմ գովելի են դպիրքն այն, զի թէպէտ ոչ եղեն հասու, զի քողքն ի վերայ կար, սակայն ընթեռնուին։ Բայց այժմ եկեղեցականք փոխանակ Աւետարանին ընթեռնելոյ՝ տրտունջ և առաքելոյն բամբասք, և գործոցն գործք կորստականք, և կաթողիկեացն՝ ծաղր և շատախոսութիւն, և մարգարէիցն՝ ոչ ոք է ի խնդիր։ Եւ փոխանակ սաղմոսէրգութեան՝ տգեղ բան և դատարկ, և թէ երդեմք սովորաբար և ոչ աստուածայհաճոյ, ըստ ասիցն Պաւղոսի, թէ միտքն անպտուղ է, և այս ևս յո-
216ա լով, քան զսոյն, ըստ այնմ թէ Մին զհազարսն հալածէ, զի ի ճառելս||իմում մին յիշելով հազար հազարն սուզանի։

Արդ, թէ այս չ[ա]փ հեռի եմք ի դպրացն արդարութեանց, զիարդ կարեմք ապրել, և ոչ թէ միայն եկեղեցականքս է այս պատճառ, այլ և յարս և ի կանայս յիշխանս և յռամիկս, ի ծեր և ի տղայ և ամենայն չափայհասակ խնամով ի չարն է, որպէս թէ ամենեքեան խոտորեցան, և թէ խառնակեցան ի հեթանոսս և ուսան զգործս նոցայ։ Եւ այս եղեւ, զի բանք սրբոցն հաստատեցաւ. Գիր ջնջեալն և մարդ չար յետին ժամանակիս։ Եւ արդ, աւաղ և եղուկ զիս, զի թէ բամբասն պարսաւելի է, ապայ ես ղի՞ եղեց, որ զամենայն ընդ բամբասանաւք արկի և ոչ զոք թողի գովելոյն յիւրաքանչիւր սահմանս։ Զի թէպէտ դոն, ոչ երևին, որպէս ի

մութ գիշերի, թէպէտ են աստեղք, այլ անտես են։ Նոյն գունակ և այժմ, որպէս ասի ի գիրս սուրբս. Եթէ ոչ Տեառն թողեալ էր զաւակ և այլն, իսկ Սոդոմ նշան աշխարհի եղև և այժմ այն կատարի, թէ դիւրագոյն լինի Սոդոմայ, քան ազգիս։

Դարձեալ, աւա՛ղ իմոյս կամաց, թէպէտ ի բամբասացն կամեցայ
216բ խրտնուլ, սակայն ի նոյն դարձեայ։ Բայց գուցե աստ||անաւր հասցէ յանկարծակի ողորմութիւն առ ի բար[ձր]ելոյն, և զնսեմացեալքս վերըստին կանգնեսցէ, որպէս տեսնողն վկաեաց յետ չնշայ գրին ոսկիայ կարգն, զի սովոր է զայս առնել ըստ աւետարանութեանն Պատրոսի, թէ Ուր առաւել եղեն մեղքն, ևս առաւել լիցի արդարութիւնն ողորմութեամբն Աստուծոյ։ Վասն որոյ այսմ բարերարի և մարդասիրի, հեզի և քաղցր Տեառն և արարչի զինչ մատուցանեմք տրիտուր, բայց միայն բան։ Արդ, ի հրայգոյ բանաւորացն, որք են անդադար փառաբանիչք Սրբոյ Երրորդութեանն եւ ի ստորնայնոց գոյացութեանցս ի գլխնէն սկսեալ մինչև յոտն, յառաջին մարգէն, մինչ ի վերջին, և ի շնչաւոր կենդանեաց և յանշունչ գոյութեանցս, յերկնաւորաց և երկրաւորացս, աւրհնեալ, գովեալ, փառաւորեալ, երկրպագեալ անեղն և անսկիզբն անվաղճանն և անանցանելին, անշփոթ միաւորութեամբն և անորիշ բաժանմամբն, Հայր և Որդի և Սուրբ Հոգին, ամէն և եղիցի։

Արդ, այսմ շահաւետ, բարի և աստուածային գանձարանիս, որ եղև մինչև ցայժմ, և լինի առ յապայ, մինչ ի սպառումն լուսաւորացս, և բանն լուսաւորէ բիւրապատիկ քան զտեսս, որպէս կայծակնամաքուրն վկայէ, զի ի շահաւետ բարոյն, որ ի սմայ է ամբարեալ ոգոց փրկութիւն, մարմնոյ առողջութիւն, դիւաց հալածումն, մեղաց քաւութիւն, հի-
217ա ւանգաց||ացաքու[մ]ն, (՞) յոյս և ակնկալութիւն յաւուրն ահեղի, և ամենայն աղտից, զոր յաւղն լինի, զոր ի ջուր և ի ցամաք պատահար շարժի, հերքումն և հալածումն ի սմանէ լինի։

Արդ, զայս ամենայն բարիսյբեր աստուածայշունչ տառս տեսեալ սրբայսնեալ քահանայից հաւր Սիսիաճոսի և որդոյ տէր Յուսամի, հանդերձ ամուսնաւք իւրանց, որ կոչին Թամար և Մեծմայր, որք փափաքմամբ և յաւժար կամաւք և մեծաւ յուսով ի նեղ և յանձուկ ժամանակի ստացան զսայ զաւակ ի Սիոն ինքեանց ի վայելումն և յետամնաց ինքեանց և զաւակաց և յապագային բարեխոսութեան պատճառ, վասն ոգոյ փրկութեան և տեսանելոյ զՔրիստոս, և լսելոյ թէ Ծկայք առ իս և ես հանգուցից զձեզ։ Արդ, ամենայգութիւն Աստուած, յորժամ գայ հայրական փառաւքն ի պսակել զսուրբս իւր, ընդ նոսին պսակեսցէ զարժանացեալ քահանայքն զՍիսիաճոս և զտէր Յուսամն՝ հանդերձ ամենայն աղգայնաւք իւրեանց, որք ի վախճան են հասեալ՝ զհան և զհանիկն, զքահանայն Սերոբն և զայլ արեան մերձաւորսն, և որք արդիւնական ընծայիւք ի սմայ են ծախեալ։ Ընդ նոսին զամենէսեան առհասարակ զքահանայսն և զաշխարհականսն, զկին և զտղայսն արժանի արասցէ անթառամ պսակին և անճառելի փառացն, ամէն և եղիցի։

217բ Բայց գրեցաւ ի ձեռաց անարժան||և փցուն յարհեստս, ոչ աւգտեալ յարուեստա[ւ]որէ, այլ մտաց յաւժարութեամբ, որ զխելաց զաւրութիւնս

տանի, զի որպէս ես բարի եղեալ յարարչէն ի չարն միտեցայ, նոյն գուն[ակ] սայ բան աստուածային, բայց ծրեալ անիմաստ, ոչ ի կամաց յաւժարութեանց, այլ ի սիրոյ հարկեալ կատարեցաք զինդիր։

Արդ, աղաչեմ սիրովն Յիսուսի, զի զտառապեալս զՄաթէոս վարդապետս արժանի առնէք ի սրբայփայլ յաղաւթս ձեր, յիշել հանդերձ հոգևոր հարբն իմոյ Պետրոսիւ, և զծնողսն մեր, և ասէք թէ՝ Տէր Յիսուս, ողորմեալ նոցա ի քում գալստեանդ ամէն, և որպէս տայք, և ձեզ եղիցի։

Բայց գրեցաւ ի թվիս Հայկազեան տոմարիս ՋԽԱ (1292) յիշխանութեան բռնաւորաց այլազգէմ և անողորմ ազգի, որ կոչի Թաթար, ի պեղծ ազդէն Քետուրայ, որ զաշխարհ ամենայն վասն մեղաց մերոց ընդգրաւեցին և այնչափ անայգորոյնք են և անգութ, զի եղբայր զեղբայր և հայր ղորդի ի սուր սուսերի սատակեն, իսկ այցելութիւն ի Տեառնէ է գտանել։

Բայց յայս ամի աստուածայաստ բարկութիւն վասն մեղաց մերոց եհաս քրիստոնէից, զի անիծեալ ազգն Մահմետի յարեաւ յՕգիպտոսէ և եկն հնարիւք կալաւ զանառիկն Հռոմկլայն՝ զաթոռն հայրապետական, և զսրբայփայլ կաթողիկոսն զտէր Ստեփաննոս ամենայն սրբութեամբք գերի վարեաց, և զաշխարհն այն աւիրեաց, և զամենայն քրիստոնեայսն
218ա ի սուր և ի գերութիւն մաշեաց, մինչև ցԹէոդ[ո]պաւլիս, զատ ի քաղաք Սնոյն. զաշխարհն ամենայն աւիրեաց։

Բայց գրեցաւ ի գաւառիս, որ կոչի Վայոց ձոր, յանապատիս, որ[կո]չի Աղաւ, ընդ հովանեաւ մաւրս Յիսուսի և Սրբոյն Գէորգայ և այլ սրբոցս, ի քահանայապետութեան նահանգիս տեառն Ստեփաննոսի հեզի և մարդասիրի, և յիշխանութեան որդոցն մեծափառ իշխանաց Պռոշոյ՝ Պապսրիճ և Ամիր-Հասանայ։

Եւ ես Մաթէոս վարդապետ հրամանով և ձեռնտվութեամբ Ամիր-Հասանա շինեցի զտեղիքս միաբանայբնակ վանս, և շինեցի զեկեղեցիքս և զժամատունս։ Բայց յայսմ ամի անվերանալի տրտմութիւն հասաւ, զի իշխանաց իշխանս մեր Ամիր-Հասան մահուամբ փոխեցաւ ի Քրիստոս, և ամենայն աշխարհ ի սուգ և ի տրտմութիւն անկան՝ Հայք և Վիրք, Ափղաղք և Հոռոմք, զի թէպէտ որ իշխանաց իշխան կոչիւր, սակայն ի թագաւորաց անբաժանելի էր, որ յամենեցուն լսելիս հասեալ էր բարի լուր և համբաւ նորայ, որ հեռաւորքն որպէս ի մաւտոյ կոծ և աշխարումն կատարեցին։ Բայց եթող տեղապահ ղորդի իւր, որ կոչի Էաչի, որ ամենայն յաջողութեամբ բարգաւաճեալ էր, քան զհայրն, զոր Տէր Յիսուս պահեսցէ զինք յամայրամս ժամանակաց, յարգոյ և բարգաւաճ փառաւք, ամէն։

Տէր Յիսուս Քրիստոս, յորժամ գաս հայրական փառաւք, ողորմեալ Սիսիանոսի և տէր Յուսամին, և ծնողաց նոցայ՝ ստացողաց աստուա-
218բ ծայշունչ տաճիս, և գծողին և ծնողաց նորայ, ամէն։ Եւ որք յիշէք, յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ ողորմած է, ողորմի ամենայն, հաւատացելոց ամեն, և նմայ փառք, պատիւ, գովութիւն, յաւիտեանս յաւիտենից, ամէն և եղիցի։

Բ

101բ *Զստացող սուրբ Աւետարանիս զսրբասնեալ քահանայսն* Սիսիանոս
հայրն և ըզնորածինն ի քահանայութիւն զտէր Յուսամն *յիշեցէք յա-
ղաւթս։*

Գ

166ա *Ո՛վ պատուական ընթերցող, զստացող սուրբ Աւետարանիս՝ զպա-
տուական քրիստոսակիր քահանայսն զհայրն* Սիսիանոս *և պատանեակն
տէր* Յուսամ *յիշէք ի Տէր։ Ընդ նմին և զանպիտան փցուն գծողն* զՄաթէոս
վարդապետ աղաչեմ, աղաչեմ յիշէք։

551

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 2848

Գրիչ և ծաղկող՝ Մոմիկ
Վայր՝ Նորավանք

ա

*Փառք եռակի, եզակի, միաբուն, միասնական, երեք անձնաւորութեան
և մի տէրութեան՝ Հաւր և Որդոյ և Սուրբ Հոգւոյն, որ արժանի արար
զփցուն և զփանաքի գրիչս հասանել ի վերջին գիծս։*

315բ *Հրամանաւ տեառնի, որ միշտ գոչէ յականջս հասարակաց, թէ
Գանձեցէք զձեզ գանձ անպակաս յերկինս, որ ոչ ցեց ուտէ և ոչ ուտիչ
ապականէ, ստիպեաց զոմն ի դասէ երջանկաց, լուսերամ կրաւնաս-
տանիս քահանա և կրաւնաւոր* Յովանէս *վերձայնեալ, յորդիս եկեղեցոյ,
անդրանիկ ի համակարգսն պայծառ, ի կղերսն նախագահ, իմացեալ
զախցաւորիս, և բուռն հարեալ զմշտնջենաժառանգն, կամեցաւ ստանալ
զաւակ ի Սիովն և ընտանիս յԵրուսաղէմ, այսինքն ի նորս եկեղեցի, և
երանաւէտ շնորհին արժանաւորիլ։ Եւ բարեյորդոր փութով ստիպեաց
զտկարութիւն ապիկար քարտուղարիս* Մոմիկ *կոչեցելոյ, դրոշմել ի քար-
316ա տենի զգիծ և զնկար‖զաստուածեան քառառաջ վտակացն հոսմունս, որք
մշտասահ կայլակաւք կենահրաւէր պայմանաւ զկիպիկոն ձև և դեմետրէի
ոռոգեալ դաշնաւորեցին, և հրեղէն կաթլաւքն լուծին զհիւսսային խըս-
տաշունչ աւդոցն դառնադաժան կարծրութիւնն խավարամած բնութեանս,
և գարնան ընդոստ որոտմամբ հարաւասիւք աւդով սաղարթաւորեալ պըտ-
ղաբերեցին զանտաստանս ոգւոց, այսինքն զաւետապատում մատեանս
չորից աւետարանչացն Մատթէի, Մարկոսի, Ղուկայ և Յոհաննու։
Զոր և իմ խսկ ի սիրոյ բանադրեալ կամեցա լնուլ ըստ կարի զբա-
րեյաւժար կամացն կարիս, յեցեալ յոյսն հասարակաց, զանձն ի գործ
արկի, և եռեալ, յաւդեալ, յարմարեալ, յաւրինեալ, տառատպեալ գծագրե-
316բ ցի‖և բովանդակեցի, յամս աստուածապատիւ և հոգևոր տեառն* Ստե-
փանոսի *Հայոց կաթողիկոսի և աստուածապահ թագաւորին Հայոց* Հեթ-
մոյ *որդոյ* Լևոնի, *յաշխարհակալութեան ընդհանուր աշխարհիս ազգին*

Նետողաց, յիշխանութեան այսմ նահանգի աւրհնելոյն և բարեպաշտին, գեղեցկածաղիկ երիտասարդին և քաջսպահիկ մենամարտին էլիկումին և եղբարց իւրոց, որդւոց ամէնաւրհնեալ պարոնին աթաբակ Տաւսայիենին, ի նահանգիս Սիւնեաց, ի գաւառիս Վայոց ձոր, ի փաբնակ և ի հոյակապ և ի հռչակաւոր մենաստանիս Նորավանս կոչեց[ել]oյ, յարքունապատիւ գահոյս հայրապետութեան, գերափառ և մեծապատիւ, հրաշազան, ամէնիմաստ հզաւր իմաստասիրի և բանիբուն թաբունապե-
317ա տի և արհիական քաւշապե||տի և վերադիտողի տանս Սիւնեաց տեառն տէր Ստեփաննոսի՝ առաջնորդի սուրբ ուխտիս, ընդ հովանեաւ երկնաճեմ և աստուածակերտ քաւարանացս, կարողութեամբ աւագ Սուրբ նշանիս, և աստուածընկալ Սուրբ խաչիս, և այլ բազմագումար սրբոցս, որք անանման գոլով իբրև զարեգակն ջահաւոր փայլեն յաշխարհիս Հայոց։ Ի նոր շրջագայութեանս ՄԲ (209+1084=1293), ի չորեքտասան յոբէլոնիս, ԽԱ թվոց յաւելմամբ (14×50+41=1292), և ի ԽԲ ընտիքտիոնիս վեցիւ աճեցեալ (1292), յեւթնեկ հարիւրիս և ի քառեկ տասնեկիս մխակիւ պսակեալ (1292)։

Եւ արդ, ահայ նախադրեալ հայրս նազելի Յովանէս և եղբայր իւր Թադէոս, ստացան զսա գանձ հոգևոր և փարթամութիւն անկապուտ և անկշիռ, յիշատակ հոգւոյ, և վայելք մարմնոյ, ի պէտս մաքրաբնակ անա-
317բ պատին և ցանկալի մենանոց||ին, ի բնակութեանն իւրեանց Ուռոյfառոյ, որ պատեալ էր և դովեալ ի հին արանց սրբոց, որք և հնատակեր և խոտաբուտ կենաւք հրջտակացան և անդէն հանգեցան ի քարաժայռ ձորակին և յանուշահամ աղբերականն, եւ եդին յարկեղ սուրբ եկեղեցւոյն իւրեանց Սրբոյն Գէորգայ։ Վասն որոյ յերեսս անկեալ մաղթեմ զվայելողսդ և զհանդիպողսդ սուրբ Աւետարանիս, անմոռաց յիշմամբ հայցել ի Տէր զքողութիւն մեղաց, և առնել արժանի աղաւթից և պատարագի զստացողքս սորա զՅովաննէս և զԹադէոս, զի թերևս ի ձեռս ձեր գտցեն զողորմութիւն յաներեկ աւուրն դատաստանի ի Քրիստոսէ Աստուածոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Յիշեսջիք և զբազմերջանիկ քահանայն զԴասապետն, որ ըստ մարմ-
318ա նոյ՝ ազգ և ըստ հոգւոյ հայր և սնուցիչ։ Ընդ նմին և զմայրն իւր զՄամոսկի, նայև զծնաւղս նոցա զՎանիկն և զՄասաուն, եւս առաւել զկիսաւրեայ տիւք փոխեցեալն խեղճ մահամբ զկրտսեր եղբայրն իւրեանց զՅովասաբն, և յոլով կսկիծ և անմխիթար սուգ եթող տեսողաց և ազգայնոց իւրոց։

Այլ և ես տառապեալս Յովանէս և եղբայր իմ Թադեոս, որ ի բազում ամաց փափագէաք այսմ աստուածաշունչ մատենի, և ըստ ժամանակիս պատշաճի հարկեալ զոմն եղբայր սիրելի Մոմիկ անուն, բազմիմաստ և հանճարեղ յարուեստ գրչի և նկարագրութեան, որ և սայ ելից զփափագ և զարփումն սրտից մերոց, որ և Տէր ցիտուս յաւուրն աներեկի հատուսցէ սմա և լցուսցէ զտարփումն ոգւոյ իւրոյ։

318բ Արդ տղաչեմք զամենեսեան, որք հանդի||պիք այսմ մատենի, զվերասացեալ ծնաւղսն մեր և զայլազգայինս մեր՝ զքոյրսն մեր զՄամխան, և զՏաւսախն, և զԲազմոց, և զմիւս Բազմոց, և զհաւրքոյր իմ զՏաճար,

և զհաւրեղրայրն իմ զԴմլիկն, և զամուսին իւր զՈսկի, եւս և զհանիկս մեր զՄամուսկի և զԲախտաւորն, և զմեզ զմեղապարտ ստացողքս Յովանէս և Թաղէոս յիշման արժանի արարէք, և յոյսն արարածոց մեզ յիշեցուցս, և ձեզ յիշողացդ առհասարակ ողորմեացի այժմ և յանվաղճան յաւիտեանս, ամէն։ Այլ և ես թարմատար և անարիս ի սարկաւագս և անարհեստս ի գրիչս Մումիկ զերեսս ի մայր մածուցեալ աղաչեմ սղալանաց և խոշորութեանն անմեղադիր լինել, զի բեկ սրտիւ և թախանձեալ մարմնով գրեցաւ։ Աղաչեմ ևս յիշել զբազմերախտի ուսուցիչն իմ զՅովսսաբ կուսակրոն քահանայ։

Բ

20բ Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, բարեխաւսութեամբ քո սուրբ չարչարանացն և սուրբ կենսաբեր յարութեանդ, ողորմեայ ստացողաց սորայ Յովաննէս քաջաշան և բազմերջանիկ կրաւնաւորի, և հարազատ եղբաւր իւրոյ Թաղէոսի, և ծնողաց իւրեանց, եւ մեղուցեալ ծնողիս, և քեզ փառք յաւիտեանս, ամէն։

Գ

147բ Քրիստոս Աստուած, յոյս արարածոց, զհուսացեալն ի քեզ զԹադէոս եւ զՅովաննէս սրբասնեալ քահանայք յիշեա ողորմութեամբ քո՝ բարեխոսութեամբ ծնողի քո և միջնորդութեամբ ծնողի քո, եւ միջնորդութեամբ ամենայն սրբոց քոց և սիրողաց։ Եւ ինձ անպիտան գծողիս և քեզ ընդ Հօր և ընդ ամենասուրբ Հոգւոյդ փառք, իշխանութիւնն և պատիւ, այժմ և հաւիտեանս, ամէն։

Դ

147ա Մումիկ գրիչս*։

552

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ

Երևան 1363

Գրիչ՝ Յովասաբ

Ա

217ա Փառք անեղին և անծնին Հաւր, և էածին և կուսածին արքային Յիսուսի և համափառ պարգևաբաշխ Սուրբ Հոգւոյն՝ ելողին ի նոցունց էութէնէ յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ի թուիս Հայոց ՉԽԱ (1292) ծրեցաւ Մեկնութիւնս Գործոց, ձեռամբ փցուն և անպիտան, ախմար և գրաւէր, բազմաբիծ և յոքնամեղ Յովասաբի, հրամանաւ և արդեամբք նաղել[ի] և սրբազան, գերափառ և հրաշագեղ, ոգոմեծ րաբունապետին Յեսաեա, յաղագս վաեքման անձին իւր և յիշատ[ակ] ծնողաց իւրոց և հոգևոր ծնողին և աստուածազարդ մեծ վարդապետին Ներսիսի՝ փոխեց[ել]ոյն առ Քրիստոս։ Զի Սուրբ Երրորդութիւնն Աստուած նոր նորոգէ, և արփահրաշ լուսով պսակէ և

* Անունը և հայրորդ բառի «ի» տառը հունարեն է գրել։

դասակից և փառակից արասցէ սուրբ և ուղղադաւան վարդապետացն զսոսա, ի յարկս լուսոյ խնամելով ամենայն հաճոացելոցն բարեխաւսութեամբ, ամէն և եղիցի։

Բ

218ա Տէր Աստուած Քրիստոս Յիսուս, բարեխաւսութեամբ ամենայն սրբոց և սիրողաց քո, ողորմեա ամենայն քրիստոնէից ի քեզ հաւատացելոց, և սրբափայլ ստացողի սորա, և եղկելի ծրողի, և մեր մեծ, առաքինի Մովսիսի, ամէն։

Գ

66բ Զլուսասաղարթ և զաստուածադործ տունկն զամենաբարի, զբազմերջանիկ սուրբ վարդապետն Յեսաի, և բազմաբիծ ծրողն և ծնողս նոցայ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած զձեզ յիշէ*։

Դ

Կոկոզ՝ Տիրացու

218ա ԶՏիրացուս, որ բովանդակ զքարտէզս կոկեցի, յիշեցէք ի բարի։

553

ՎԱՍՆ ՄՈԼՈՐՄԱՆ ԶԱՏԿԻՆ ԲԱՆՔ

Երուսաղեմ 999, Պողարյան, Ցուցակ Գ. էջ 616

Հեղինակ՝
Վայր՝ Կիլիկիա

416 Յայսմ ամի գրութեան տառիս ի գաւառիս Կիլիկիոյ, էր թուականութեանս Հայոց ՉԽԱ (1292), և եկն եհաս ամն մոլորման, յորում գրեալ է թէ յոյնք մոլորին։ Եւ մինչ ակն ունեաք յայլասեռից կրել մաքառումն, ի տանէ բուսաւ թշվառութիւն...

Բ

Խմբագրող

Եւ արդ, յայսմ ամի, որ է թուականութեանս Հայոց ՉԽԱ (1292), բանքս այս փոխեալ եղեւ յառաջին գրոցն յորում գրեցաւ, եւ աստ երկ-

---

* Բազմաթիվ են այս կարգի մանր հիշատակագրությունները։ Ձեռագրի սկզբից պակաս թերթերը ավելացրել են հետագայում, կազմել և մեկ ուրիշ գրչի առաջարկել են լրացնել։ Գրիչն այդ առիթով գրել է «Անմեղադիր լինել աղաչեմ, զի կապած գիրք ոչ է իմ գրեալ և ոչ ուսեալ» (21 բ)։ Իսկ 160-ում այսպիսի դիտողություն է արել. «Գործքս այս Առաքելոց, զոր մեկնեալ և յարմարեալ առաջին սորոցն, իսկ ետին ժողովողն և առ միմէանս գրողն, ոչ գոլով քաջ հռետոր, վասն այսորիկ հատակոտոր. և այլ ընդ այլոյ, և խաւար է միտք լուսաւոր բանիցս և հարկաւոր բանիցն մեկնութիւն ոչ է արարած, և կարօտ է հմտագոյն վարժապետի, որ զբանն բանալ կարէ և զխորինսն և զխորթնածածուկսն լուծանել։

Այլ թէ Գեորգեա մեկնիչին հանդիպիս և նորին լուսաւոր կարգագրութեանն, յայնժամ պայծառանա յիմաստութեամբ հոգիդ, և լուսաւորի շարժումն զգայութեանդ, զի յոյժ է գեղեցկաբան, և ունի կարգ և սահմանս։

բորգեցաւ ըստ պատշաճի պիտոյից, զի զկնի եկեղոցն յայտնի լիցի ստուգիւ։ Եւ զի փոխեալ էր ումն զսա յառաջագոյն եւ պահեալ ի խզողացն, եւ մատոյց առ իս, եւ շնորհքն Աստուծոյ ի բազում կտակս փոխեցաւ յայսմ ամի, բազում յաւելուածաւք եւ արգասիւք աճեցեալ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, եւ նկոյն եղեւ սատանայ։ Եւ արդ վասնզի անձնիշխան է մարդ, եւ իւրաքանչիւր ոք ի կամս իւր հաճեսցի, եւ որք թիւրեսցին յուղղոյն ինքեանք ծանիցեն։ Զի թէ գովելի է գործն զոր առնեն, ապա մեք պատուոյ եւ մեծարանաց էաք արժանի, զի զգովութիւնս ինքեանց արձանացուցաք, եւ եղաք նոցին Ագաթանգեղոս, եւ գրեցաք զգործս նոցա։ Իսկ եթէ նախատանաց արժանի է զոր գործեն, ընդէր յամառին եւ զստութիւն իբրեւ զճշմարտութիւն իրաւացուցանեն։ Այլ նոքա զիւրեանցն գրեցին, զոր ախորժել, իսկ մեք ի բանս սրբոցն յեցեալ, եւ որչափ կար իցէ յաւելցուք ի սոյն շնորհաւքն Քրիստոսին, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն*։

554

ԱՒԵՏԱՐԱՆ

«Արարատ», 1876 թ. էջ 410—414

Գրիչ՝ Շմաւոն
Վայր՝ Խոտակերաց Սուրբ Նշան

ա

Շնորհաւք արարչին էիցս, տիրական տառս յանկեցաւ,
Մատամբ մեղուեալ անձին, որ Շմաւոն անուն կոչեցաւ,
Այս քառավըտակ աղբիւրս, որ յանհուն ծովէն հոսեցաւ,
Որով զմայլեալ սեռս բանական, բերկրեալ խրախացաւ;
Նստեալ ի փահոյս մեծ արքունական, հրճուեալ պանծացաւ,
Ի զարմից խնդրեմ Նորոյս Սիովնի, որ առ մեզ գետքս այս հոսեցաւ
Եթէ հանդիպիք սմին տեսութեան կամ գաղափարաւ,
Առ Տէր պաղատիք վասն իմ, որ սովաւ ձեր Հայր կոչեցաւ։
'Ի ի քոյս վերստին դառնալ ի յադին, ուստ վարատեցաւ,
Երգել հոգևոր նուագ, որ Յիսուսի որդիացաւ,
Տանել հրճուանօք ընդ ձեզ, ի տան Տեառն որ հաստատեցաւ։
Ա՜հ, թէ հանդիպէր բայիս կատարումն, որ գծագրեցաւ,
Բախեալ հրճուանայր անձն իմ փրկութեամբն, որ պարգևեցաւ։
Արդ, աւրհնեալ է Հայր Աստուած, որ սիրով ի մեզ գթացաւ,
Նոյն և բարերար Որդին, որ Փրկիչ մեզ երևեցաւ,
Սրտիւ գոհութիւն Հոգւոյն, որ կրկին ջրով զմեզ ծնաւ։
Անդերձ լուսեղէն ոգեցոյց, եաւթնարփ փառաւք փայլեցաւ,
Յերկինս ճանապարհորդեաց ընդ որ քարոզն մեր ընթացաւ,
Սէրս բերկրեցաւ մարդկան, տեսութեամբն որում ցանկացաւ**։

---

* Սավալանյանի կարծիքով հեղինակը Եսայի Նչեցին է։
** Սկզբնատառերը հոդում են «Շմաւոնի Ի Աւետարանս այսա։

Բ

Փառք ամենասուրբ Երրորդութեան, եռակի անձնաւորութեանն և եզակի տէրութեանն, Հաւր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ, որ ետ զօրութիւն տկարութեան իմոյ հասանել ի վերջին գիծ Աստուածային տառիս, ի թուականութեան Ասքանազեան ազինս ՉԽԱ (1292), ի հայրապետութեան Հայոց տեառն Սահփանոսի, եւ ի թագաւորութեանն Կիլիկեցւոց և Հայոց Հեթմոյ, որդւոյ Լեւոնի քրիստոսասիրի և բարեպաշտի, եւ յիշխանութեան մերոյ նահանգիս մեծ սպարապետացն Պապաֆին և Էշոյ, որդւոյ և թոռին մեծին Պռոշայ, ժառանգք իշխանութեան ամենօրհնեալ ցեղին Խախբակեանց, զոր պահեսցէ զնոսա Տէր Յիսուս Քրիստոս յայսմ կենցաղումս ամրածածուկ աջովն իւրով ի մէջ այլասեռից ազանց՝ իբրև արձան անդրդուելի ի մէջ ծովու, մինչև ի խորին ծերութիւն, յաստեացս յիշխանն անընպատ ուրախութեանցն և երկնից արքայութեանն արժանի արասցէ։

Եւ եղև կատարումն սուրբ Աւետարանիս՝ յայսըմ բազմավրդով և դաժան ժամանակիս, զի լուծ անողորմ և խիստ պահանջողաց էին ծանրացեալ ի վերայ մեր, ոչ ունելով թագաւոր և առաջնորդ քրիստոսադաւան՝ այլ մանաւանդ քրիստոսատեացք և ծարաւի արեանց երկրպագուացն Քրիստոսի։ Այլ և ներող զօրութիւնն Աստուծոյ պահեաց սակաւ իշխանս յազգէս մերմէ, արիք և քաջք ի պատերազմունս և նոքաւք նուաջէր զազգս Հայոց։ Յորոց մի էր ի նոցանէ մեծ սպարապետն տանն Աւագին, որդւոյ Իւանէ մեծ աթաբակին, որ կոչէր անուն նորա Ամիր Հասան, որդի մեծին Պռոշա թագաշուք իշխանին։

Եւ իբրև նորին զօրութեամբն, զոր շնորհեալ էր նմա Աստուած, սակաւ մի հովանացեալ էաք ընդ սաղարթ իշխանութեամբ նորա, եհաս ի վերայ մեր պատուհաս յԱստուծոյ, և բարենշանն մեր Ամիր Հասան՝ կոչեցաւ ի կոչողէն ընդ հասարակաց բնութեանս մերոյ ճանապարհ, եւ եթող կոծ մեծ աշխարհիս մերոյ և զօրաց իւրոց։ Այն որ ի բաղում պատերազմունս արիաբար հանգիստնայր, և քաջապէս զթշնամիք խաչին Քրիստոսի դիաթաւալ յերկիր կործանէր, և քաջ անուն անձին և ազգին ժառանգէր, և պարգևս և պատիւս ի թագաւորացն ընդունէր յազգէն նեստողաց, որ բռնացեալ ունէին զաշխարհս բազումս, տիրեալ ծովէ ի ծով, որոյ յոջորջէր անուանք նոցա՝ Հռոմայոց, և որդւոյ նորին՝ Ապաղա։ Այնպէս սիրեցեալ էր ի նոցանէ վասն արիական քաջութեան և խոհեմութեան իւրոյ, մինչև զինակիր և յառաջադէմ լեալ յամենայն գործս արքունիս։ Եւ յանձնէ իւրեանց բազում անգամ զարդարեցին զնա ոսկեհուռ դիպակաւք և կամար ոսկեղէն ընդելուզեալ ակամբք մարգարտօք՝ կապեալ ի մէջս նորա, և այնպէս շքեղութեամբ ճոխացուցանէին զնա։ Եւ նա յառաջանայր աւրըստօրէ ի գործ քաջութեան, և յամենայն պատերազմունս անուանի լեալ ի համադասան, մինչև վուր համբաւոյն նորա տարածեցաւ ընդ աշխարհս բազումս, որ և եհաս մինչև յաշխարհն Հռոմայեցւոց և Յունաց։

Ալլ և գեղեցիկ հասակ նորա և զանհամեմատ տիպ պատկերի նորա՝ ոչ կարեմ ընդ գրով արկանել։ Նաև զբարբառ բերանոյ նորա և զկորովութիւն բանից նորա՝ ոչ բաւեմ պատմել, զի լի էր աստուածատուր շնորհաւք։ Եւ մինչ հրճուեաք բերկրանաւք, որք էաք ընդ իշխանութեամբ նորա. խրատեաց զմեզ Աստուած, և մինչ չև էր հասեալ ի հասակ ծերութեան՝ փոխեաց զնա յաստեացս բարի խոստովանութեամբ, և եթող զմեզ որք, զոր Տէր Աստուած փոխանակ այսմ կենցաղոյս՝ զանվախչան կեանսն և զանսպառ ուրախութիւնսն շնորհեսցէ նմա, եւ պակասութիւն ժամանակի տացէ որդւոյ նորին էաչոյ և եղբօր նորա Պապաֆիի, և պահեսցէ յամերամ ժամանակս մինչև ի խորին ծերութիւն։

Եւ մինչդեռ յայսմ տրտմութեան վարանեալ կայաք՝ եհաս ի վերայ մեր ևս վեհագոյն սուգ հաւատոյ, մինչև արար մոռացումն սգոյ առաջնոյն, զի զհռչակելի դղեակն, որ կոչի Հռոմայկան կլա՝ որ էր ի վաղուց հետէ կարգեալ աթոռ և տեղի ապաստանի հայրապետացն Հայոց, վասն բազմութեան մեղաց մերոց՝ մատնեալ եղև թագաւորին Եգիպտացւոց։ Եւ իբրև արիւնախանձ գազան յարձակեցաւ ի վերայ հաւտին Քրիստոսի, և զամենեսեան՝ յառնէ մինչև ցկին և ի ծերէ մինչև ցերիտասարդ առ հասարակ՝ յապականութիւն և ի խողխողումն սրոյ մատնեցին, եւ զսրբազանն հայրապետն մեր Ստեփաննոս, հանդերձ սրբազանիւք քահանայիւք և սարկաւագօք, դպրաւք և կղերիկոսօք ի գերութիւն վարեցին, եւ զսպասք սրբութեան արարին խրախան հարճից և մանկանց իւրեանց, զոր տէր Աստուած հատուսցէ նմա փոխարէն, և ինքն լինի վրէժխնդիր ծառայից իւրոց, առցէ զիշխանութիւն նորա և տացէ ազգաց քրիստոնէից, զի մի փքացեալ խրոխտասցէ ի վերայ եկեղեցոյն Աստուծոյ, բարեխոսութեամբ սրբուհոյ Աստուածածնին, և ամենայն սրբոց, եղիցի, եղիցի։

Յայսմ դառն ու դաժան ժամանակիս եղև զրաւ լուսաճէմ տառիս։ Արդ, ո՜վ մանկունք Նոր Սիովնի, մի անյուսութեամբ վարանիք, այլ յուսով ճգնեցարուք և աւուրն ուրախութեան ակն կալչիս։ Զի եմք որպէս ծննդական և ժամանակ է երկաց, և ճչիցեմք առ ցաւսն։ Եւ յորժամ ծնանիցեմք զհոգի փրկութեան՝ ոչ ևս կործանիցեմք, կործանեսցին անօրէնք երկրի։ Յայնժամ յարիցեմք մեռեալքս ի ծառայութենէ նոցա և ի գերեզմանէ նեղութեան, վասն զի ցաւղ ողորմութեան բժշկեսցէ զմեզ, բայց երկիրն ամբարշտաց սատակեսցի ըստ մարգարէին բանի։ Ալլ զի փողն Տարսոնացի այսպես կոչէ ասելով, Յուսով ցնծացէք, Տեառն ծառայեցէք, աղաւթից ստէպ կացէք զի ժամանակ ծառայութեան մերոյ կատարեսցի, քանզի մերձեալ է օր փրկութեան մերոյ, զի արժանի եղիցուք տեսանել զգերողն տաճարի Աստուծոյ մերոյ՝ գերեալք ի մէնջ, և ի միասին հրճուանաւք փառաւորեսցուք զՔրիստոս, որ վրէժխնդիր լինի ծառայից իւրոց, որ է օրհնեալ յաւիտեան։

Եւ գրեցաւ տառս աստուածային ի գաւառիս Շաճապունեաց, ի միաստանիս, որ է մերձ յամենաւրհնեալ և յաստուածապահ գեղաւանն Ոծոպի կոչեցեալ, ընդ հովանաւ սոսկալի և սքանչագործ նշանացս, Խոտակերաց և Խիկարաց, եւ սրբոյ տաճարիս մաւր լուսոյ Սրբոյ Աստուածածնիս, և այլ հանուրց սրբոցս, ձեռամբ յոգնամեղ և փցուն գրչաւորի Շամա-

ուն, առ ի յիշատակ ինձ և ծնողաց և եղբարց իմոց*, ի խրախուճիւն և ի հրճումն մանկանց սորա։ Եւ ըստ կարի իմում զարդարեցի ոսկով և արծաթով, ոսկեգիծ դրուատով և ծաղկերանգ գունով, և պաճուճեցի՝ ներքոյ և արտաքոյ, ընտելուզեալ քարամբք պատուականաւք և լուսափայլ մարգարտօք ըստ աղքութեան** իմում։ Արդ, աղերսիւ ժտեմ, ո՛վ դասք լուսերամից՝ դիմօք մածեալ յերկիր հուպ առ գարշապարս ձեր, որք հանդիպիք վերծանուիքեան սորա և կամ գաղափարի՝ սղալանաց սորա և թէ իցէ անարհեստ ինչ, սիրով հոգւոյն ուղղեսջիք և անմեղադիր լինիցիք, զի այդչափ (է) կարն իմում նուաստուիքեան։ Զի կարի յոյժ վշտացեալ էի հոգւով և ցաւագնոտ անձամբ երկու կողմամբ, հոգւով ասեմ և մարմնով, եւ ի յոլով ամս թէ կարացի հանել յանկ, առաւել քան զմետասան ամ վասն չքաւորուիքեան իմոյ, որ ոչ կարէի պատրաստել զնիւթ սորա, ոչ զոք ունելով աւգնական։

Յորժամ հանդիպիք սմին՝ յիշեսջիք ի Քրիստոս ծնողն իմ՝ զԻսահակ և զՇահէրազատն, և զհարազատն իմ զՈվանէս, որ ի ձեռն սրոյ ելաւ յաշխարհէս յազգէն Նետողաց, զոր Տէր Յիսուս Քրիստոս բարեխօսուիքեամբ ամենայն սրբոց խառնեսցէ զարիւն նորա ընդ արեան մարտիրոսացն և թողցէ զամենայն յանցանս նորա։ Նաև զորդեակն հոգևոր զՈվհաննէս սարկաւագ, սրբոց սարկաւագացն նմանակակից և պսակակից արասցէ, այլև զեղբարսն իմ և քոյրսն և զամենայն արեան մերձաւորսն քիշման արժանի առնիջիք։ Նաև զդաստ եղբայրուիքեան աչամ անապատի՝ զառաջնորդ սորա և զփակակալ, զծերսն և զմանկունսն և զմիաբանեալսն յայսմ քաւարանի։ Մի ձանձրանայք ասելով. Տէր Յիսուս Քրիստոս ողորմեա գրչաւորի սորա Շմաւոնի, և ամենայն վերագրելոց ի սմա, և ամենայն աւգնականաց սորա, եւ թող նոցա, զսղալանս նոցա, միջնորդուիքեամբ մարմնոյ և արեան քո անարիւն զենմանն, և այսմ լուսաւոր և աստուածախօս Աւետարանիս, զի ամենեքեան առ հասարակ արժանացեալ փառաւորեմք զքեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից, ամէն ամէն։

Այլ և զՊատրոս որդեակ և եղբայր, որ և շնորհեաց տեղի ընդ հարկաւ տան իւրոյ՝ առ ի գծագրել և ի նկարել զաստուածային տառս՝ տացէ նմա Տէր ընդ յարկաւ իւրով տեղի անուանի՝ փոխարէն սիրոյն նորա, զոր խոստացաւ սիրողաց իւրոց, որ է աւրհնեալ յաւիտեան։

Գ

Ո՛վ Տէր Յիսուս Քրիստոս, որ կնոջն մեղուցելոյ շնորհեցեր զյանցանս նորա և ոչ դատապարտեցեր, շնորհեա և մեզուցեալ ծառայի քո Շմաւոնի զյանցանս նորա, և մի դատապարտեր զնա յորժամ գաս փա-

---

* Հետագայում ավելացված է «և ինձ Մատթէոս քահանային, որ Աւետարանս գնեցի ՖՌ (3000) գեհան։

** Ծանոթագրված է «գուցէ աղքատութեանն։ Ճիշտ չէ. «ըստ սղմնքեան» նշանակում է «ըստ ունեցվածքի, ինչքի։ Արմատը «աղքատ» «աղքատութիւն», որ նշանակում է ինչք չունեցող, ընչազուրկ։

ռաւք հայրենի, զի արժանասցէ շնորհիւ քո, աւրհնեալ քեզ ընդ Հաւր և ընդ Հոգւոյդ Սրբոյ յաւիտեանս յաւիտենից, ամէն*։

555

ԱԻՏԱՐԱՆ

Երևան 6273 (1279 թ.), Փիրղալեմյան, Նշխարք, էջ 56ա

Ստացող՝ Դաւիթ Տաթևացի

Ի թուին Հայոց ՉԽԱ (1292), ես նուաստ ոգի Դաւիթ վարդապետ Տաթևացի, քեռորդի տէր Սողոմոնի Սիւնեաց եպիսկոպոսի, ստացայ զսուրբ Աւետարանս զայս ի հալալ ընչից իմոց հարիւր դահեկան, ի Շմաւոն գրագրէ, յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողաց և եղբարց իմոց Յովհաննիսի... ես և տէր Սողոմոնի վարդապետի մերոյ և ուսուցչին՝ արհեպիսկոպոսին։

556

ԱԻՏԱՐԱՆ

Քյուրտյան, Հավաքածու 29

Գրիչ՝ Սիմէոն
Վայր՝ Աւճեղ

269ա Արք աստուածային սիրոյն փափագեալ հետեւին, միշտ յարաղուարճ բերկրանաւք խորհին յաւրենս Տեառն ի տուէ և ի գիշերի։ Ըստ նմին աւրինակի, սրբասէր և իմաստուն այրս Փոխանակ միշտ եւ հանապազ բորբոքէր ի սէր սուրբ, և տիեզերաքարող քառատակ սուրբ Աւետարանացս։ Եւ ըստ բնաւոր բարուց բարւոյն, ախորժակ կամաց, մեծաւ տենչմամբ ստացաւ զսա անջնջելի ար /// ի մխիթարութիւն անձին, եւ ի յոյս փրկութեան։ Եւ ես յոգնամեղս եւ փցունս ի գրչաց Սիմէոն նուաստ քահանա, տեսեալ զփափագ եւ զսէր սորին յանձն առեալ, ըստ խմում կարի յանգ հանեալ, կատարեցի զխնդիր սորա շնորհաւք եւ ողորմութեամբ Աստուծոյ ի թուականիս Հայոց ՉԽԱ (1292), ի հայրապետութեան տեառն Սահիմանոսի, եւ ի թագաւորութեան Հեթմոյ, ի մայրաքաղաքս Աւճէշ, ընդ հովանեաւ Սրբոյն Գէորգայ, եւ մաւր լուսոյ Աստուածածնին։

Արդ, աղաչեմ զամենեսեան սիրովն Աստուծոյ զընթերցողսւսդ եւ զլսսւղսդ՝ յիշման արժանի առնել վերոյասացեալ պատուական առնս Փոխանակ՝ ստացաւղդ տառիս եւ զծնաւղսն իւր, եւս առաւել ի ժամ սուրբ եւ ի սոսկալի պատարագին, զի արժանասցին ողորմութեան ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։ Յիշել աղաչեմ եւ զայնոսիկ, որ առիթ են

* Ձեռագիրը պատկանել է Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի ուսուցիչ Յովհաննես Ամդալչին։ Մահից հետո (1870) անցել է նրա ժառանգներին։ Այժմ այն գտնվում է Լենինգրադի էրմիտաժում։

բարեաց մերոց, զի ողորմածն Աստուած ըստ միոյ հարիւրապատիկ հատուսցէ նոցին։

Ընդ նոսին եւ ես՝ ամենամեղս ի դրչաց Սիմէոն, յերեսս անկեալ աղաչեմ յիշել եւ զիմս անարժանութիւն, եւ ծնաւղսն իմ՝ զհանգուցեալսն ի Քրիստոս, և զնախնիս իմ, եւ զայնոսիկ որք սատարեցին եւ աւգնական եղեն ինձ յայս դործ։

557

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6387

Գրիչ՝ Ստեփաննոս
Վայր՝ Արճէշ

ա

Փառք յարուցելոյն ի մեռելոց, որ արժանի արար հասանել յաւար-
264բ տումն աստու ածախաւս հրամանաց, որ կոչէ բարձր քարոզութեա[մբ]
ամենայն տիեզերս և արկեալ սե[ղ]ան հոգևոր առ ի կերակրել զհոգի և զմիտս հաւատացելոց, որ է բժիշկ ողջաց և հիւանդաց, լցուցիչ ծարաւելոց արբուցանել զընթանիւր տիեզերս, և նոբագիւ եկեղեցայց քրիստոնէից, որում երկրպագելով փառաւորեսցի ընդ Հաւր և Հոգւոյն Սըրբոյ, ա[յ]ժմ և ան[ս]պառ յաւիտեանս, ամէն։ Ո՛վ սրբասնեալ եղբայրք և բաշխողք մարմնոյ եւ արեանն Տեառն, զանարժան գրողս, որ չեմ արժան ի տեսանել սուրբ և զսոսկալի աստուածաբարբառ կտակս, աներկեղաբար մերձեցա և ծրագրեցի զսուրբ Աւետարանս ընդ հովանեաւ Սրբոյն Գեորգեայ զաւրավարին։

265ա Գրեցաւ ի մայրաքաղաքիս յԱրճէշ, ձեռամբ||բազմամեղ անարժան գրչի սուտանուն քահանայի որոյ Ստեփաննոս ճանաչի։ Աղաչեմ զամենիսեան սիրովն Աստուծոյ, յիշելոյ արժանի առնել զանարժանս և անմեղադիր լինել խոշորութիւն գրիս, զի ի զբաղում մեղաց և <յան>յանարվեստ գործոյս կուրացել եմ մտաւք, այլ իմ յոյսն ի Քրիստոս է և ի նորին կամարարքդ, զի թողութիւն շնորհել ձեզ իմոյ անարժանութեան, ո՛վ սուրբ եղբայրք, եւ ձեզ տացէ ողորմութիւն յաւուրն յետնումն ուր բանք սպասուին և գործք թագաւորեն, որպէսզի արժանի լիցուք զերծանել մեզ և ննջեցելոց մերոց յահագին տանջանացն, մաղաւթաւք սըրբոց և սիրողաց Քրիստոսի։ Աղաչեմ ձեզ, ո՛վ մանկուք Նոր Սիոնի, յիշեցէք զՍտեփաննոս. և զծնողսն իմ, և եղբայրս իմ, և զՍարգիս քահա-
265բ նայ, և Աստուած զ||[ձեզ] յիշէ, ամէն, ամէն։

Գրեցաւ ի թվին ՋԽԱ (1292), ի ժամանակիս դառն և դժնդակ, որ վասն բազում մեղաց մերոց զաւրացան այլազգիք ի վերա քրիստոնէից և աւար հարին զաթոռ հայրապետութեան մերոյ զՀոռոմ[կլ]այն, վասն մեղաց մերոց։

Բ

Ստացող՝ Խաչէրէս

Եւ ես մեղաւոր եւ [ա]նարժան ծառայս Խաչէրէս կո՛չ[ե]ցեալ ի յիմ իսալալ արդենցն, զոր Աստուած իմ հոգւոյս բաժին էր պատրաստել, զնեցի զսուրբ և զտիեզերաքարող Աւետարանս յիշատակ ինձ, և ծնողաց իմոց՝ Աւտարին և մաւրն իմոյ Խաթունկան՝ տարաժամ ննջեցելոց ի Քրիստոս, և եղբարց իմոց Մարտիրոսին, և զաւակաց իւրոց Պարսեղաճին և զաւակաց իւրոց, քեռն իմոյ Միհնային և զաւակաց իւրոց, և ետու զսուրբ Աւետարանս ի դուռն Սուրբ Ս[արգսի] զ[աւր]ավարին։

Գ

Կազմող՝ Պաւղոս

73բ Քրիստոս Աստուած քո ամէնակեցուց յարութեամբդ ողորմեայ ըստացողի սորայ և գրողին, ամէն։ Խաչէրէսին և ծնողացիւրոց։

Եւ վերջին կազմողս սուրբ Աւետարանիս զՊաւղոս սուտանուն յիշեցէք և Աստուած ողորմի ասէք։

558

ԺՈՂՈՎԱԾՈ

երևան 4211

Գրիչ՝ Մարգարեկ
Վայր՝ Հռոմկլա

ա

Փառք, փառք, փառք քեզ Քրիստոս Աստուած յոյսդ իմ, որ ետուր ինձ զաւրութիւն հասանել ի վերջին գիծ գրոյս, զքէն գո[հա]նամ Տէր։
527բ Որպէս փափաքեն ճանապարհորդք յա[ւթ]ևանս ժամանել և [ցա]նկան նաւավարք ի նաւահանգիստն անկանել, մանաւանդ յորժամ դիպեսցի նաւուն անկանել ի մէջ ալէկոծութեան ծփմանց ջուրց ծով[ուն և] թէ լիցի զերծանել նաւուն ի ցամաք՝ անկանի նաւավարն երեսս առաջի Աստուծոյ և մեծապէս գոհանայ զԱստուծոյ, որ ապրեցոյց զինքն և զորս ի նաւին, հանդերձ նավուն և եհան յանդորր։ Այսպէս եղև և ինձ մեղուցելոյս ի գրել սուրբ մատենիս, զի ձեռն ի գործ արկի գրել ի յապահով աւ[ուր]ս, և յորժամ մխեցայ ի գիրս, յարեան ի վերայ [մ]եր պատերազմունք և խռովութիւնքն ամենայն ուստեք և շուրջ եղեն զմեաք երկունք մահու։

Եւ պաշարեցին զմեզ թշնամիք մեր և նեղէին զմեզ յամենայն կողմանց։ Եւ ոչ ուստեք գոյր ակնկալութիւն փրկութեան, բայց թէ ողորմածէն Աստուծոյ, որ ամենայնի է հնարաւոր և Տէր։ Զի ըստ յաճախելոյ մեղացն մերոց եղաք նախատինք ամենայն ազգաց և այլն կատականաց այլասեռից Հաքարացւոցն ասեմ և Իսմայելացւոցն, և ի դէպ է մեզ ձայնակցել ողբոց երից մանգացն, որ ի Բաբելոնի հնոցն, և ասել. Ոչ գոյ ի ժամանակի յայսմիկ իշխան, մարգարէ և առաջնորդ, զի վասն բազմա-

528ա նալոյ չարեաց մերոց||որ պահէրն ղմեզ, անտես արար և մատնեցաք ի ձեռս թշնամեաց մերոց անաւրինաց խստաց և ապստամբողաց ի ձեռս թագաւորի անաւրինի և չարի, քան զամենայն երկիր։ Զի յայսմ ամի, որ է ՉԽԱ (1292) Հայոց թագաւորութեանս, առեալ եղև յանաստուած Հադարացւոցն աստուածապահ և անառիկ դղեակն Հոռոմկլա, և սուգ անմխիթար տարածեցաւ յընթանուր եկեղեցիս քրիստոնէից, ղի զտաճարքն աստուածաբնակ, որ անդ՝ քակեալ քանդեցին, և զսեղանն սուրբ կործանեցին, և ղբաղում և զերևելի կահ սպասուց սուրբ տաճարացն, ղոր առաջին սուրբ կաթողիկոսքն և բարեպաշտ թագա[ւոր]քն էին շինեալ, առեալ ի պիղծ և ի զազիր ձեռս իւրեանց, պղծեցին։ Եւ առեալ գերի վարեցին զաջ Սուրբ Լուսաւորչին մերո ՈՍրբոյն Գրիգորի և ղՍուրբ Նշան ղՎանկոյ հաւրն խաչն, և այլ սրբութիւնք բազումք, և զսուրբ կաթողիկոսս զընտրեալն ի բազմաց զտէր Ստեփաննոս, և եպիսկոպոսս և քահանայս և սարկ[աւ]ադունս և այլս, կանայս և մանգունս անթիւ[ս] և հեղին բազում արիւն քրիստոնէից, որք էին բազումք յուխտէ եկեղեցոյ՝ եպիսկոպոսք, քահանայք, սարկաւագունք, միայնակեացք և աշխ[ա]րհի երիցանի և աշ[խա]րհականք, արք և կա[նայք] բազումք յոյժ յոյժ, [որք] սրախողող եղեն յանա[ւրին]աց, վասն սուրբ հաւատոյս, որպէս ի հնումն Մակաբայեցիքն, ղոր մեզ անկ է ասել ողբալով ընդ Դաւթի մարգարէին*.

«Աստուած, մտին հեթանոսք ի ժառանգութիւն քո,
պղծեցին զտաճարս սուրբ քո։
Արարին զԵրուսաղէմ որպէս խուղս մրգապահացաց,
արկին զդիակունս ծառայից քոց՝ գէշ թռչնոց երկնից,
և զմարմինս սրբոց քոց գազանաց երկրի։
Հեղին զարիւնս նոցա, որպես զջուր շուրջ զնորս
Երուսաղէմաւ, և ոչ ոք էր, որ թաղէր զնոսա։
Եղաք մեք նախատինք [դր]ացեաց մերոց, ծաղր և այպն կատականաց [ա]յնոցիկ, որ շուրջ էին զմեզ»**։

Եւ դարձեալ յուսով [հ]առաչմամբ ղազաւթից [բու]ս հարկանել և ասել. Լման ասա ղտունքն ի վճար*։

«Մինչև յե՞րբ, Տէր բարկանաս դու իսպառ, բորբոքեսցի որպէս հուր նախանձ քո։ Հեղ զբարկութիւն քո ի վերայ...
Մի յիշեր զմեղս մեր զառ[աջինս]...
Աւգնեա մեզ, Աստուած փրկիչ մեր...
Տէր, փրկեա զմեզ եւ քաւեա...
Մի երբեք ասասցեն ի հ[եթանոսս]...
Այլ յայտնի ինչ լիցի ի վե[րայ]...

---

* Դավթի ՀՀ Սաղմոսն է, «Սաղմոս յԱսափ»։

** Այս վերաբերվում է Սաղմոսի շարունակությանը, որը բերված է միայն տների սկզբնատողերով։

Մտցէ առաջի քո հեծու[թիւն]...
Հատու դրացեաց մերոց է[աւթնապատիկ]...
Մեք ժողովուրդք և [խաշն արաւտի]...»
Եւ այս մինչև ցայս վայր։

Բայց երկիրս Կիլիկեցւոց ի տուէ և ի գիշերի դողայր յահէ գալըստեան անաւրինին։ Եւ արդ, եթէ բաւանդակ ազգս պատմողք լինին՝ չկարեն ղորպէսն ասել ղնեղութեանց ժամանակիս, որ եկն ի վերայ ազգիս Հայոց, այլ սակաւս փոքրս ի շատէն բաւական է իմաստուն վերծանողացդ։

529ա *Արդ, յայսմ վշտաբեր ամի, որ է ՉԽԱ (1292) թուին, մակաքայլողն ստորնայնոյս, և որ ի սմա բերի Սիմէոն հոգելից ծեր և անբիծ քահանայ, յիշելով զբանն մարգարէին, թէ Երանի որ ունիցի զաւակ է Սիոն, և ցանկացեալ Մեկնութեան սուրբ տառիս, որ է Առակքն Սողոմոնի, զոր բացափայլ մեկնեալ է սուրբ և մեծ վարդապետն եկեղեցւոյ տէր Ներսէս եպիսկոպոսն Տարսոնի, զի ի կեանս յայս ընթերցմամբ մխիթարեսցի և ետ ելից իւր աստ՝ լիցի իւր և ծնողաց իւրոց յիշատակ ի դուռն եկեղեցւոյ։*

Եւ արդ, երեսս անկեալ իմ առ ոտս ամենեցուն ձեր, որ պատահէք գրոցս որպէս և իցէ, յիշեցէք սրտի մտաւք սուրբ յաղաւթս ձեր զՍիմեոն, և զծնողսն իւր, և զամենայն համազգիսն իւր՝ զկենդանիս և զվաղճանեալսն։ Նա և զմեղուցեալն զՄարգարեկն, որ աշխատեց[ա]ւ ի գրելն և զննչե[ցեալ]ան իւր յիշես[չիք]։

Յիշ[եսչիք] յաղաւթս ձեր զՊաւղոս և զՄարգարէ ընտրեալ քահանայք, և զննչեցեալսն նոցին, զի և դուք, որք մեզ վ[եր]գրելոցս յաստուածոյ ողորմութիւն խնդրեք, և ձեզ որ յիշեքդ, և մեզ որ յիշիմք ի ձենջ, ողորմեսցի Քրիստոս Աստուած յոյսն մեր յիւր միւս անգամ գալըս[տ]եանն, ամէն, ամէն։

Յիշեցէք և զՎասիլ սարկաւ[ագ] ի Տէր, և ինքն, որ Տերն [է] փառաց Քրիստոս Յիսուս աւրհնեալ է սուրբ հոգւոն յաւիտենից յաւիտեան։ Աղաչեմ չլինել մեղադիր խոշոր[ութեան] և սխալանաց գրոս, զի կար մեր [այժչափ էր]։

Բ

96ա *Ձպատկառելի հայրն իմ ըստ հոգւոյ և զամէներախտաւորն իմ զՍիմէոն քահանայ՝ զստացող գրոցս, և զծնողսն իւր աղաչեմ յիշել ի Տէր և ասել իւրեանց Աստուած ողորմի։ Նաև զախմար գրիչս զՄարգարեկս և զիմսն յիշեցէք նոյնպէս, ո՛ աստուածասէրք ընթերցողք և լսողք, որով և դուք ի նոյն յիշումն ամէն, և որ զամէնն ասէ-ամէն Ռ (1000) ամէն։*

Գ

162ա *Քրիստոս Աստուած մեր, յոյս հաւատացեալոցս քեզ, յանձին Սիմէոն և Մարգարեկս աստ պահել ի մեղաց, և անդ փրկել ի տանջանաց ամէն, նոր ամէն ասէ։*

Պ

197բ Վա՛յ ինձ, զի փորձիմ այժմ և հանապազ յիմոց ցանկութեանցն ձգեալ և պատրեալ։

Տէր Յիսուս, Յիսուս Քրիստոս Աստուած հաւր իմոյ և իմ, աւգ[ն]եա ինձ։

Ե

230ա Յիսուս Քրիստոս ողորմեսցի Սիմէոնի, որ զգիրքս գրել երեսս, և անպիտան գրչին Մարգարէականն, և ընթերցողիս և լսողացդ, և որ խնամով պահէ զգիրքս, և որ ամէն Աստուած ողորմի ասէ և յիշողացդ և յիշեցելոցս ողորմեսցի Տէր Աստուած, որ է աւրհնեալ յաւիտեանս։

Զ

251բ Վա՛յ ինձ, խիստ ի քուն էր աչքս, մեղա Աստուծոյ, դեղադեցի ու վնաս գործեցի։

Է

256բ Կարի վատ գիր էր ու սղալ աւրինակս, ու ես կու վշտանայի։ Մի մեղ գնել, թէ իմս այլ սխալ է, աղաչեմ զքեզ եղբայր։

Ը

310ա Վա, վա, վա ինձ. ընդէ՞ր, զի մեղայ Աստուծոյ։

Ք

321ա Մահն շատ հեշտ էր ինձ, քան զայս գիմիս գրելն։ Մեղա քեզ եղբայր, Թողութիւն արա ինձ։

Ժ

521բ ՁՄաւտիրոս հիւանդատեսն յիշել աղաչեմ, որով և դուք ի նոյնն. եղիցի, եղիցի։

ԺԱ

296ա Որ ոք կազմող գրոցս զՄանվ[էլ] և ծնողսն իւր յիշեցէ, և զԱստուած ողորմին ասէ, Տէր իւր ողորմի*։

ԺԲ

Կազմող՝ Մանվէլ

529ա Ձկազմող գրոցս զՄանվէլ և զծնողսն [աղաչ]եմ [յի]շել, աղաւթս [ձեր]։

---

* Մանր հիշատակագրութիւններ կան նաև 76բ, 169ա, 225բ, 250ա, 308ա, 327ա, 344ա, 357ա, 315բ, 457բ, 492բ էջերում։

559

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6273, Փիրզալեմյան, նշխարք, էջ 56ա

Գրիչ՝ Մխիթարիչ
Վայր՝ Բագուանա վանք

Փառք հոանձնեալ... ի թուականութեանս Հայոց ՋԽԱ (1292) գրեցաւ սուրբ Աւետարանս ի սուրբ ուխտս Բագուանայ, ընդ հովանեաւ Սուրբ Գրիգորիս և յառաջնորդութեան տեղոյս տէր Առաքելիս, որ ստացաւ զսա պատուական միակեցն Սահփանեոս՝ յիւր հալալ վաստակոց, և ետ զսա սուրբ... անապատն, յառաջնորդութեան հայր Յովհաննիսի որ վերստին շինեաց զսուրբ անապատն, զոր հիմնարկեալ էր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն Հայոց, ընդ նոսին և զանպիտան զյետին գծողս զՄխիթարիչս և զհայրն իմ։*

560

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, Պատառիկ 919 (1290 թ.)

Գրիչ՝ Թորոս
Վայր՝ [Առտազ] Թադեոս առաքելի վանք

1ա *Փառք քեզ ստեղծիչդ ամենայնի։ Փառք քեզ մշտընշենաւոր և անըսկիզբն լոյս։ Փառք քեզ ծայրագոյն և անսպառ բարի, յորմէ ամենայն բարի և շնորհ։*

Շնորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի զպանծալի և զփրկաւետ Աւետարանս ես՝ Թորոս, ի սուրբ և ի գերահռչակ ուխտս Դրազարկ, ՋԽ (1291) թուականիս, ի թագաւորութեանս բարեպաշտ և աստուածսէր արքային Հայոց Հեթմոյ, որդւոյ Լևոնի, ի դառն և ի դժնդակ ժամանակիս, որ էր հալածումն քրիստոնէից, զոր յայսմ ամի քանդեալ աւերեցան գեղեցկաշէն քաղաքն Հռոմմայեցւոց ծովեզերայքն Տրապալսոյ և Ամայիոյ, և եկեղեցիք քրիստոնէից եղեն հաւտից և խաշանց փարախ, և զկնի մի ամի (1292) առաւ աստուածարեալ դղեակն Հռոմկլա ի գոռոզէն փարաւոնէ, որ էր աթոռ հայրապետացն Հայոց, և սպասք սրբութեանն գերի վարեցաւ, հանդերձ մեր գլխովն՝ հայրապետաւն, որոյ անուն Սահփանոս: Եւ հասեալ ի քաղաքն Դամասկ ճգնաւորական հանդիսիս փոխեցաւ յաստեացս, և եթող սուգ անմխիթար ազգիս Հայոց։

1բ *Եւ յայնժամ խորհուրդ ի մէջ առեալ||թագաւորն Հայոց Հեթում բոլոր ուխտիւն եկեղեցւոյ և իշխանաւքն հանդերձ, շնորհել բերդ ամուր և եր-*

* Վանքի անունը ջնջված է. Փիրզալեմյանը կարծում է պետք է լինի Կտուց անապատը, կամ Տկուց անապատը՝ Արծկեի մոտ։

կիր առատ Սուրբ Աթոռոյ Լուսաւորչին, առ ի հաստատել վերստին, և առաքեն զիմս նուաստութիւն և զսիրելի և զսննդակից եղբայրն իմ ղպատուելի եպիսկոպոս զտեր Թումաս յաշխարհս Արևելից, առ ի մեծարանս եպիսկոպոսաց և իշխանաց, գալ վերստին նորոգել զաթոռ Սուրբ Լուսաւորչին։ Եւ տեղ հրամայեալ ի թագաւորէն և ի սուրբ ժողովոյն, յառաջագոյն գալ ի դիրս Սուրբ առաքելոյն Թադէոսի, առ գերահռչակ և արժանապատիւ եպիսկոպոսն տէր Տիրացուն, որ էր առաջնորդ սուրբ ուխտիս Թադէոսի առաքելո։ Եւ յայսմ ժամանակի փայլէր իբրև շահ վառեալ ի մէջ գիշերի, որ էր նաւահանգիստ վտանգելոց, քաղցելոց և ծարաւելոց, շնորհաւք սուրբ առաքելոյն։ Եւ ութ ամաւ յառաջ եկեալ սուրբ արքայն Հայոց Լևոն՝ բարի և սնուցող և երախտաւոր տէրն իմ յայս սուրբ ուխտս, և բազում սէր գտեալ արքային Հայոց ի սիրոյ եպիսկոպոսէս տեր Տիրացուէ: Նա և ես նուաստս Թորոս վայելեալ ի սէր սորա և ի///*

561

ԱՒԵՏԱՐԱՆ

Միքայելյան, Ցուցակ էջմիածնի, 194

Գրիչ՝ Գէորգ
Վայր՝ Արմէնի լեռ

ա

Փառք ամենասուրբ Երրորդութեանն և միաստուածութեանն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

309ա Աստուածաւանդ սուրբ Աւետարանս գրեցաւ ի խնդրոյ աստուածապաշտ քահանայի Ոսկէների, զոր ստացաւ ի զարդ և ի փարթամութիւն տաճարին Աստուածոյ Սուրբ Ղազարու, զոր ինքն շինեաց, նաև ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ բարի՝ զկնի վախճանի։

Արդ, ով աստուածասէր ընթերցողք, յիշեսջիք աղաւթիւք ի Քրիստոս Ոսկէներ քահանայ և զծնաղաւսն իւր, և զկանուխ վախճանեալ ամուսինն իւր, եւս և զհաւրեղբայրն իւր և զհաւրեզբաւրկինն, և զամենայն իսկ զազգատոհմնն, զի մարդասէր Քրիստոս քաղցրութեամբ գթասցի ի յիշատակեալսն աստ ի կենդանիսն և ի վախճանեալսն, այլ ի սրտի մտաւք յիշատակաւղսդ, և ինքն աւրհնեալ է և եղիցի յամենից, այժմ և միշտ, և յաւիտեան։

ՉԽԱ (1292) թուականիս գրեցաւ ի փառս Աստուծոյ, ամէն։

բ

98ա Տառապեալս Գէորգ վարդապետ, որ յԱրմէնս լեառն իմով մեղսանեբկ ձեռամբ գրեցի զաստուածաւանդ Աւետարանս, թեպէտ անա-

---

Հիշատակարանը արտագրված է № 482 ձեռագրում (էջ 53բ) 1627 թվականին, և տպագրըված մի շարք անգամ։ Ձեռագիրը գրված է Դրազարկում, բայց այս յիշատակարանը՝ Արտազի Թադէոս առաքեալի վանքում։ Ձեռագիրն այժմ գտնվում է Լենինգրադի էրմիտաժում (V 3—835)։

րուեստ և անարժան էի այսմ ձեռնարկութեան, այլ կանխագոյն յոլով խնամաւք գրաւեալ գմեզ պարտական սիրոյ Ոսկէհեր քահանայ ստացաւ ղսա իմով ձեռամբ, աւգնականութեամբ Խաչատուր վարդապետի, որ ընդ իս, գանձ լինել Սուրբ Ղաղարու յաստուածապահ քաղաքն Ատանա։

562

ԳԱՆՁԱՐԱՆ

Ակինյան, Ցուցակ Նիկոսիայի, էջ 106—108

Գրիչ՝ Սիմէոն
Վայր՝ [Սկեւռա]

ա

56ա Ընդ նմին [յիշեցէք] եւ զմեղաւոր հողս զՍիմէ[ոն], եւ Աստուած զձեզ յիշեսցէ։

բ

62ա Զբարեհամբաւ վարդապետն Գէորգ Սկեւռայցի, որ ոգեաց ղսա, բարի յիշման արժանի արարէք, ո՛վ սուրբ երգեցողք։ Ընդ նմին զմեղաւոր հողս զՍիմէոն, եւ Աստուած զձեզ յիշէ։

գ

105բ Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, ողորմեա ստացողի սորա Բարսեղ գրակապու եւ հաւրեղբաւր իմոյ Թորոս քահանայի, եւ որ զամէնն ասեն։

դ

138բ Զմեղաւոր հողս զՍիմէ[ոն] եւ զծնաւղսն իմ եւ զստացող տառիս զ[Բարսեղ] յիշեցէք ի Տէր...

ե

188ա Գէորգեայ վարդապետի, ի խնդրոյ տէր Սիմէոնի առաջնորդի մեծ ուխտի Սկեւռայի։

զ

Ստացող՝ Բարսեղ

*125ա Ջ[Բարսեղ արեղա [յիշեցէք]**։

---

* Ն. Ակինյանը գրչին նույնացնում է Սկևռայի առաջնորդ Սիմեոն եպիսկոպոսի հետ, և նկատում, որ Սիմեոնը քաշավարժ գրիչ է, գեղեցիկ է բոլորգիրը, շատ հաչող են զարգագրերն ու լուսանցազարդերը։

563

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՉ

Երևան 179

Գրիչ՝ Ստեփանոս Գոյնեբերիցանց

ա

526բ Փառք և գոհութիւն երից անբաւից, անձնաւորական որոշմանց և երկրպագութիւն անճառ հոմանման իսկութեան՝ Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, որ ներեաց անարժանիս և ետ զաւրութիւն տկար և մեղաւք լցեալ անձինս, մեղաւոր հոգւոյս Ստեփանոս Գոյնեբերիցանց, որ թեպէտ և սպասաւորական աշտիճանի վիճակեալ էի, սակայն ամաչեմ կոչել ղիս ի բարձրագունէն, այլ մականունութեամբ Գոյնեբերիցանց: Որ յոյժ տուխելի սիրով անխոտոր և անշեղլի մտաւք, ի յետին ժամանակի իմոյ ցանկացաւղ եղեալ աստուածաւանդ մարգարէական բանից հնոյն, և աստուածայրականին Յիսուսի լուսափառ նոր վարդապետութեանն: Եւ իմոյին երկաւք և բաղում աշխատութեամբ զփափաք տենչանաց սրտիս լցի, և յանգ հանեալ աւարտեցի զԱստուածաշունչ գիրս բովանդակ, և յայլ պիտանացու ե զոյժ հարկաւոր եկեղեցական աւանդութեանս՝ ըստ իմոյ կարողութեանս, խոշորագիծ գրով:

Արդ, աղաչեմ զամենեսեան հանդիպողսդ, որք ուտէք ի կենաց մանանէս մտաւք, և զպասուք ծարաւ հոգւոյն կենդանաբուղխ շրովս աստուածայնով արբուցանէք, յիշեսջիք ի Քրիստոս զհոգևոր հայրն իմ և լուսաւորիչ զԳէորգ վարդապետն և զհամակամ աշակերտ նորին զնաշատուր, յորոց աւրինակաց և զգիրքս գրեցի՝ բազում խնամարկութեամբ ի նոցանէ: Այլ և մեղաւք թաթաւեալ անձին գրչիս՝ մեղաց թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ, նաև մեր ծնողաց և եղբարց և քերց հարազատաց, նաև ուսուցչաց և սընընդակից ընկերաց մերձակայիցս, և յիշեսջիք ի Քրիստոս և զԿոստանդին քահանայ Տարսնացի և զծնաւղն իւր և զհոգևոր մայրն իւր, որ բազում գութ խնամոց ցուցեալ է նոցա յիս: Յիշեսջիք և զԴաւիթ սարկաւագ յորոյ արդեանցն կայ ի նիւթ սորին, յիշեսջիք և զՎաճրամ, որդի Գրիգորայ, որ աւգնեաց ի նիւթ սորին: Եւ Յիսուս Քրիստոս Աստուած բոլորից՝ մեզ մեղուցելոցս՝ և ձեզ խնդրողացդ ի Քրիստոսէ մեղաց թողութիւն և ամենայն հաւատով ննջեցելոցն առհասարակ ողորմեսցի, ամէն, եւ որոյ մտադիւր կամաւք զամէնն ասեն, ամէն:

Աւրհնութիւն, որ կարդայ,
Գովութիւն, որ լսէ,
Փառք տուողին
Եւ յիշատակ գրչիս, ամէն:
Թուականիս ՉԽԱ (1292):

բ

255ա Տարտամս յիմաստս սուրբ գրոց,
Որովք սնայ յարբոնս տխոց,
Ահա կարաւտ սոցին համոց,

Գտայ գերեալ յաւտար հոգոց,
Ուստի հարեալ սրտիս ի խոց,
Եւ տոչորմանս որ կայ յիս բոց,
Զայս սրսկեմ կաթս անձրևոց,
Զձեռահեաս սուրբ գրոց,
Մի թէ գնացիւք այսու գետոց,
Իմ զուվասցի ծարաւս ոգւոց,
Եւ սփոփեսցի յիւրոց ցաւոց,
Սրբեալ տաճար Տեառն աւթանոց։
Այսու յուսով յերկս վաստակոց
Կամի յոքունց մէջ ի հոգոց,
Զի արծարծեալ ճրագիս իմ բոց՝
Մի խրթնասցի յաւտար հողմոց։
Աւրհնութիւն, որ կարդայ,
Գովութիւն, որ լսէ.
Փառք տուողին
Եւ չիշատակ գրչիս, որ մեզ ողորմի բանիւ,
Քրիստոս նմա ողորմի գործով, ամէն։

Ստեփանոս* Գոյներերիցանց մեղաւոր գրիչ։

Կատարեցաւ Մակաբայեցիք հանդերձ այլ հնագրենաւքն ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ի ձեռն իմոյ նուաստիս Ստեփանոսի, ի թուին ՉԽԱ (1292)։

Գ

258ա Զայս ազգ ձևս՝ որպէս է և m վասն պարկեշտութեան արարի, աղաչեմ ներել**։

Դ

578բ Զայսչափ իրքս, որ զկնի Աստուածաշունչ գրոցն յաւելեցի*** իմ տկար մտաւքս յոյժ հարկաւոր համարեցայ։ Աղաչեմ ներել մեզ, որք տեսանէք զթանձրութիւն գրոյս, այլ ողորմութիւն հայցել մեզ ի Քրիստոսէ, զի և դուք ողորմութեան հանդիպեսջիք ի նմանէ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Գրեցաւ ի թուականիս Հայոց ՉԽԱ (1292)։

Ե

555բ Ի Գէորգ վարդապետին աւրինակէն գրեցի զսա****։ Եւ նորա գրեալ էր թէ Մի հեղգութեան համարիր ղոչ յաւելուլն ի տմա զհամբագաւունից ոմանց զնորաձև բանից բարդուածս։

---

* Անունը գրված է ծածկագրով։

** Խոսքը օգտագործված նշանագրի մասին է, որ նշանակում է «աստեղ»։

*** Գրիչը Հին և Նոր կտակարանները ավարտելուց հետո, 528ա—578բ թերթերի վրա արտագրել է և այլ նյութեր, որոնց և ակնարկում է այստեղ։

**** Գրված է Պատարագամատույցի վերջում։ Իսկ մինչ այդ Աղոթամատույցն է, Տոնացույցը և խրատներ։

Ո՛վ սրբազան ընթերցաւղ և Քրիստոսի մարմնոյ և արեանն վայելաւղ, յիշեա զմեղաւոր հողս զՍտեփանոս և զծնաւղսն իմ, և Աստուած զքեզ յիշէ իւր ողորմութեամբն։

564

ԱԽԵՏԱՐԱՆ

Հովակիմյան, Յուցակ, Նիկոմեդիո, էջ 18

Գրիչ՝ Ստեփանոս Գոյնէրեիցացց
Վայր՝ Կիլիկիա

ա

Փառք եւ գոհութիւն համագոյ Սուրբ Երրորդութեանն եւ միաստուածութեանն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ՝ այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտեանից, ամէն։ Զոր աւրինակ ի բազում կարեաց մարդկան բազում են եւ աւրինակք աստուածապաշտութեանն, որովք ընտանենայ մարդ Աստուծոյ եւ շահի զփրկութիւն անձին, յորոց միշտ եւ ստանալն զաստուածային գիրս ի մխիթարութիւն հոգւոց եւ ի խրատ աստուածապաշտութեան։ Ըստ այսմ մասին եւ աստուածասէր քահանայն Հեթում, ի վերայ այլոց վայելչական պարկեշտութեան յաստուածայինս եւ ի մարդկայինս, ստացաւ եւ զայս աստուածաւանդ սուրբ Աւետարանս ի պայծառութիւն սրբոց տաճարին Աստուծոյ, զոր կանդնեաց յանուն Սրբոյն Գէորգեայ, եւ ի մխիթարութիւն աստուածասէր ժողովրդոց, եւ ի հոգեւոր տեսլեանս անձին իւրոյ, եւ ի վայելումն սրբասնունդ որդւոյն իւրոյ Սարգսի նորընծայ քահանայի, եւ նորուն դեռաբոյս եւ նորածին մանկանն Յովճաննիսի, եւ յիշատակ բարի ինքեանց եւ բոլոր տոհմի իւրեանց՝ կենդանեաց եւ հանգուցելոց, զորոց զկեանս ընդ երկար նախախնամեսցէ Քրիստոս, որ Տէրն է կենաց, եւ պայծառ համարձակութեամբ հանդիպեցուսցէ երեսաց իւրոց ի հանդերձեալսն։

Բայց գրեցաւ սա իմով ձեռամբ՝ Ստեփան նուաստ գրչի, մականուն Գոյնէրեիցացց, ի ծերութեան եկեալ ժամանակի, թէպէտ խոշոր գրով, այլ ՚ի ծածաւ հոգաբարձութեամբ յարուեստ եւ յուղղութիւն բանի, ի թուականիս ՉխԱ (1292), յարքայական տէրութեան տանս Կիլիկիոյ՝ Հեթմոյ որդւոյ երկրորդ Լեւոնի թագաւորի, ի նեղ եւ յանձուկ ժամանակի, զոր ոչ կարեմ ճառել զմեծ թշուառութիւնն, որ եհաս աշխարհիս այսմիկ վասն մեղաց մերոց։ Զի ի սոյն ամի առին տաճիկք զՀրուշակաւոր ամուրն Հռոմկլայ, որ ի վաղուց հետէ աթոռն էր կաթողիկոսացն Հայոց։ Եւ գերի վարեցաւ կաթողիկոսն տէր Ստեփանոս, եւ յամենայն կողմանց ծանր նեղութիւն զգուէ զմեզ, հանդերձ աւարառութեամբ, սպանութեամբ, եւ գերութեամբ, եւ սովոյ եւս վտանգ տարակուսի, որոց Տէր Քրիստոս ընդ արձակումն արասցէ։

Այսպիսի աղէտք վտանգից ոչ կարացին խափանել զսէր աստուածասէր քահանայիցն Հեթմոյ եւ Սարգսի առ ի ստանալ զսուրբ գիրսս զայս։ Վասն որոյ մաղթեմք ի վայելողացն ի բոլոր սրտէ հայցել ի Տեառնէ

զհասարակաց բարին, եւ մանաւանդ ստացողաց դրոցս եւ մեղուցեալ գրչին եւ իմոց ծնողաց եւ ուսուցչաց եւ Տէրն հասարակաց ողորմեսցի աստ եւ ի հանդերձեալսն, եւ նմա փառք\յաւիտեանս, ամէն։

Բ

Աղաչեմք զամենեսին ոյք հանդիպիք սմա, յիշեցէք ի բարին Քրիստոս զսուրբ Աւետարանիս կոճկնոյն շնորհաւղն՝ զԱռոյծն, եւ ղորդին իւր զՎասիլն, եւ ղծնողս իւրեանց, եւ որ յիշէ, յիշեալ եղիցի ի Տեառնէ Աստուծոյ մերոյ, ամէն։

565

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԵՈՐԳԵԱ ՍԿԵՒՌԱՑԻՈՅ

Երևան 4825 (1295 թ.)

Հեղինակ՝ Գէորգ Սկեւռացի

ա

1ա Սածուկ միշտ և անյայտ են բանք աւրինացն և մարգարէից, վասն զի առակաւք և աւրինակաւք ծրարեալ ունին յինքեանս զխորհուրդն Քրիստոսի, ըստ ասելոյն Պաւղոսի, թէ Այն ամենայն առակաւք և աւրինակաւք անց ընդ առաջինսն, և գրեցաւ մեզ ի յուսումն, զի գիտասցուք թէ կատարումն աւրինացն և մարգարէիցն Քրիստոս է։ Գրէ և աստուածբնկալն Պետրոս, թէ Ամենայն մարգարէութիւն իւրոց գրոց լուծումն ոչ ունի, այսինքն՝ առ տեղին յայտնի մեկնութիւն խորհրդոյն, այլ մեծաց քրտանց պիտոյանայ, վասն որոյ և Քրիստոս ասաց, թէ Քննեցէք զգիրս։ Պարտ է ապա, զի որ կամիցին զառակաւոր իմաստս մարգարէիցն հաւաստեաւ մեկնել, մեծաւ փութով հայել յաստուածային գիրս, որովք լուսաւորեալ մտաւոր աչաւք ստուգագոյնս կարասցեն հայել, զի մի անյայտ մնասցէ ինչ յաւգտակարացն։

Եւ զի այժմ առաջի կայ մեզ բուռն հարկանել ի մեկնութիւն մարգարէիս Եսայեայ, թեև ոմանք յառաջեցին քան զմեզ գրել զտեսութիւն սորա, այլ ոչ ինչ խափանէ նոցայն և զմերս փոյթ։ Նախ զի բազմացն միականյնութիւն առաւել սերտէ զլսաւղն ի ճշմարտութիւն։ Եւ դարձեալ՝ զի յուսամ ևս յԱստուած և նոր իմն և այլափոխ միտս ի վերայ առաջնոցն գտանել ընդարձակելով Աստծուոյ զտաւիղս մեկնութեանս, զի դրեալ է. Յոյժ անդորր են ինձ պատուիրանք քո։

Եւ յայս տոյս յեցեալ քան զքուն և զխորդալ զքիրտն և զփոյթ ընտրեալ համարձակիմք յառաջիկայս*։

---

* Հաջորդ հիշատակարանից (որը վերաբերվում է Գեորգ Սկեւռացու սույն երկի մի այլ օրինակի) առաջ է կատարված սույն մեկնութիւնը։

566

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԻՆ ԳԷՈՐԳԵԱՅ ՍԿԵՒՌԱՅԻՈՑ

Ալիշան, «Միսուան» էջ 103

Գրիչ՝ Սիմէոն

ա

Ո՛վ երանեալ սուրբ ընթերցօղք, ծառայակիցք և եղբարք իմ ի Քրիստոս, ի տեսանելն զանհեղեղ գրիչս՝ աղաչեմ մի մեղադրէք, զի թէ և գոյր կարողութիւն փոքր մի այլ լաւ գրել, սակայն ոչ կարացի, զի կարի ստիպով յարդորք էի վասն օրինակին, և միայն յաւարտ ելանելոյն էր փոյթն և ոչ արուէստ գրոցն, զի թէ և գիրս յոռի է, բայց օրինակիս ընտրութիւնն մեծարգոյ է, որոյ աշխատողին ի սա Տէրն տերանց վարձս տացէ և ինձ մեղուցելոյս, ամէն։

բ

Ոմն ընթերցուի

Ո՛վ եղբայր Սիմէոն, պիղծ գիր դրեցեր, ապա սիրուն ես թաթխել։ Թուիս ՉԽԱ (1292), դեկտեմբեր ԺԷ (17)։

567

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Գալեմքեարյան, Ցուցակ Միւնիճենի, էջ 8 (1278 թ.)

Քրիստոս Աստուած քո սուրբ ծնաւղին բարեխոսութեամբ ողորմեաց սիր Աւշնին հոգւոյն Պայլոնց, որ ստացաւ զսուրբ Աւետարանս Քրիստոսի, ի մասն հոգւոյն իւրոյ եւ ի յիշատակ իւր, եւ ծնաւղաց իւրոց, եւ որդեկաց իւրոց՝ Թորոսի եւ Վասակայ, եւ երից դստերաց իւրոց, եւ ամուսնոյն իւրոյ Ակացի։ Յերես անգեալ աղաչեմք զհանդիպաւղսդ այսմ սուրբ Աւետարանիս եւ զվայելողսդ՝ մեղաց թողութիւն հայցեցէք յաստուծոյ սիր Աւշնին, վասն զի հանդիպեցաւ կոչումն սորա ի վերուստ ի յՆգիպտոս, ի գալն մեծ խանին Խազանին, եւ իւր ուղեղ յետմնացքն գնեցին զսուրբ Աւետարանս Քրիստոսի ի յիր հոգոյ մասէն՝ ի յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնաւղաց իւրոց, մեղաց թողութիւն հայցեցէք յԱստուծոյ, յորոց ընդ միոյն հարիւրապատիկ Քրիստոս ձեզ հատուսցէ։

Արդ, եղեւ տուրեւառութիւն սուրբ Աւետարանիս ի մեծ թվիս ՉԽԱ (1292), եւ ի թագաւորութեան Լեռնի որդւոյ Թորոսի, եւ ի կրաւնաւորութեան Յոհաննէսի, եւ ի հայրապետութեանն Գրիգորի Հայոց դիտապետի։

568

ԱԻՏԱՐԱՆ

Սրվանձտյան, Թորոս Աղթար, Բ. էջ 136

Վայր՝ Բաղնէկուճ գիւղ

ա

Շնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զգիրս քրիստոսական մատենիս, ի թվական Հայոց ՉԽԱ (1292) ի գահս Կիլիկիոյ. ի գեաւղս որ կոչի այժմ Բաղնէկուճ, մերձ յաստուածապահ քաղաքն Ատանա, ի պարոնաւութեան և ի թագաժառանգ Հայոց Հեթմոյ, եւ ի հայրապետութեան Հայոց տեառն Ստեփաննոսի, քանզի շարժեալ ազգն եգիպտոսի եւ եկեալ բազում զաւրաւք, գերեալ զմեծ և հռչակաւոր գղեակն Հռոոմականի, եւ բազում աւուրս կացեալ ի վերայ նորա բարանեաւք, եւ այլ չար արուեստիւ առեալ զնա, եւ վարեալ ի գերութիւն զսուրբ հայրն Հայոց տէր Ստեփաննոս, եւ զՍուրբ Գրիգորի Լուսաւորչի աջն եւ զՍուրբ նշանն Վանկոյ, եւ զայլ բազում նշխարս սրբոց: Եւ զայլս ի քրիստոնէից զոմանս սպանեալ, զոմանս տարեալ ի գերութիւն, եւ արհաւիրս մեծամեծս գործեաց ի նմա, զոր ոչ ոք կարէ պատմել, զի ահիւ եւ դողալով է հանապազ ի լսելիս մեր շչակ երկիւղի գալստեան նորա, եւ յոյժ ի նեղութիւնս եւ ի տառապանաս է յայսմ ամի ազգս Հայոց՝ ի սով, ի սասանութիւնս, ի ծովու եւ ի ցամաքի:

Աղաչեսցուք զմարդասէրն Աստուած ոչ այնպէս գնալ ի վերայ քրիստոնէից, եւ ներելով որպէս եւ տալոց է, զի յոյժ տարակուսի էին յամենայն տեղիս քրիստոնեայք, մանաւանդ յաշխարհս Կիլիկեցւոց:

բ

Յիշեցէք... զՆորոզէ քահանայն... Զաւրվար միակեց... զմայրն Մարեմթագ...

569

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Սիրմեյան, Ցուցակ Հալէպի, էջ 347

Գրիչ՝ Խաչատուր

Վայր՝ Փերճեր անապատ

ա

367 *Փառք ամենասուրբ երրորդութեան՝ Հաւր և Որդւո և Հոգւոյն Սրբո, որ արժանի արար զանարժանս և զյետին գրիչս ամենայն գրչաց, և զանպիտան և զյետինս ամենայն կրանաւորաց, հասանել յաւարտումն այսմ ցանկալի և ամենիմաստ բանիցս լուսաւոր տուչութեանս: Արդ, ես Յոճաճենէս քահանա, որ անուամբ միայն և գործովք յետս կացեալ ի պատուիրանացն Աստուծոյ յետինս ամենայն քահանա, ցանկացաւղ եղեալ այսմ լուսաւոր բանիցս, ետու սատարել զսա ձեռամբ Խաչատուր գրչի, ի յիշատակ ինձ և ամենայն արեան մերձակայից իմոց:*

Արդ, գրեցաւ սա յամի, ՉԽԱ (1292) թվիս, ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ՝ որգւոյ Լեւոն թագաւորի։ Արդ, յայսմ ամի վասն ծովացեալ մեղաց իմոց եկն բարկութիւն Աստուծոյ ի վերա ազգիս Հայոց և մատնեաց ի գերութիւն ի ձեռս Իսմայէլեան ազգին զաթոռն Սուրբ Գրիգորի և զսրբութիւնսն, հանդերձ ամենայն զարդիւք եկեղեցոյն, և զհայրապետն, որ անուանեալ կոչիւր Ստեփաննոս, և զեպիսկոպոսունս, և զքահանայս, և զսարկաւագունսն, և զզաւրսն, և զժողովուրդն հանդերձ դղեկաւն որ կոչի Հոռոմկլայ, զոմանս սրով մաշեցին, և զայլս բազումս, հանդերձ հայրապետաւն մերոյ և ամենայն սպասիւք եկեղեցոյ, ի ծառայութիւն վարեցին, որպէս ի հնումն ի ձեռն Նաբուգոդոնոսորի ի Բաբելոն, արդ ի նորումս՝ ի ձեռն փարաւոնի ի Յեգիպտոս։ Եւ այս ամենայն եղև բաղում յանցանաց իմոց և անդադրձ գնացից մերոց ոչ ներեաց Աստուած. և արար զմեզ ի նախատինս և ի յամաթ ամենայն ազանց և ազգաց քրիստոնէից։ Մանաւանդ անաւրէն ազգին իսմայելեան ի կոխումն և ի թշվառութիւն և ի նեղութիւն։ Զի թեպէտ մենք մեղաւոր եմք և անհնազանդ, սակայն Աստուած ողորմած է և մարդասէր, և փրկեսցէ ւմեզ ի ձեռաց անաւրինաց։

Արդ, գրեցաւ սայ ի գաւառիս Կիլիկեոյ, ի յանապատիս որ կոչի Փերճեր. ընդ հովանեաւ Սուրբ Սիոնի։ Արդ, աղաչեմ զամենեսեան ոյք լուսաւորիք ի մանէ, յիշեցէք զՅոճաճնէս քահանա ղստացաւղ սորայ։ Ընդ նմին և զՓիլիպոս քահանա, որ զաւրինակն շնորհաց. և զիս զբազմամեղ գրիչս, և զԹումաս քահանայ, որ և նա գծով աշխատեցաւ ի սմայ. ընդ նմին և զամենեսեան որք ձեռնտու եղեն ի սմա, և որ յիշէք, յիշեալ լիցիք յանյիշաչար Տեառնէ մերմէ։

Բ

66 Ո՛վ պատուական եղբայր, մի մեղադրեր վասն սղալութեանս, զի ժամանակ ձմերայնոյ էր. և տեղիս խիստ անհանգիստ և մութն, և ես ցաւագին անձամբ յոյժ և միտք ժխորեալ ի թշվառութեան ժամանակի և վասն առաջիկայ ճանապարհիս։

Գ

Գրիչ՝ Խաչատուր

566 Ո՛վ պատուական եւ սրբասնեալ եղբայր մեր Յոճաճէս ընգալ զսակաւ և զլուսաւոր բանքս և անմոռաց յաղաւթս յիշել աղաչեմ զմեղապարտ և զանարժանս Խաչ[ատուր] գծ[ող]...

Դ

Գրիչ՝ Կարապետ

435 ՉՄովսէս երէցս և զԱճաճիայ դպիրս և զԿարապետս, ով որ կարդաք մեղաց թողութիւն խնդրեցէք յԱստուծոյ, և Աստուած զձեզ յիշէ...։

Ե

579 Ջմեզապարտ գրչիկս յիշեա ի Տէր, ո՛վ սրբազան ընթերցող, զԳրիգոր գրականն յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս և մեզ իւրոց թողութիւն հայցեցէք և ծնողաց իւրոց եւ զարմից իւրոց եւ Աստուած զձեզ յիշէ, որէ աւրհնեալ յաւիտեանս։

570

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՈՅ ԱՌԱՔԵԼՈՅ ԳԷՈՐԳԵԱ ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՅ

Պալյան, Յուցակ Կեսարիո, էջ 56—57

Մտացող՝ Յոհաննէս եզնկայեցի
Վայր՝ Խորին անապատ

Յամի հօβն հարիւրերորդի քառասուներորդի եւ միոյ թուականին Հայկազնեան տումարիս (1292) գրեալ աւարտեցաւ Մեկնութիւնս Գործոց առաքելոցն, զոր համառօտեալ հաւաքեալ էր աշխատասէր եւ արդիւնական վարդապետն Գէորգ։ Եւ ես նուաստ Յոհաննէս եզնկայեցի, քաղց եւ ծարաւի կենաց կերակրոյ եւ անմահական ըմպելոյ գրոց սրբոց իմաստութեան հանճարոյ, զոր յամենայն ժամանակս կենաց իմոց, չքաւորութեամբ եւ աշխատութեամբ ջան եդեալ ստացա զամենայն գիրս Աստուածաշունչ, եւ զմեկնութիւնս նոցունց, ծնունդս մտաց աշխատասէր երկանց հարցն սրբոց եւ վարդապետաց, եւ զամենայն նուրբ գրեանսն, կրկին, եւ երեք, եւ չորսպատիկ։ Այլ եւ զիմաստասիրացն եւ զարուեստաւոր բանախաւսացն, զգիրս իմաստից, որք գտանէին առ մեզ։ Եւ է՛ զոր իմով աշխատութեամբ, բազում ժողովածոյս բանից եւ մտաց եւ ասացուածոց գրեալ ի գիրս հաւաքեցի։ Եւ յամենայն կեանս իմ չարչարանաց եւ վաստակոց տուեալ զանձն իմ, յիմում գաւառին ի չորս եւ հինգ վանս եւ յանապատս շինութիւն արարի, այսպիսի յուսով՝ լինել ինձ տեղի գերեզմանի, եւ գրենացն իմ մնալ անդ յաւգտութիւն այլոց եւ ինձ պատճառս յիշատակի։ Նա ըստ կասկածոտ կրից կենցաղոյս, եւ յոչ կամելոյ զսուրեղաց տեղեաց տիրողաց, ոչ եղեւ ինձ անդորրութիւն ի տեղւոջ։ Այլ եւ յանհանգիստ ծփանաց աշխարհային ծովուս, ի յարուցմանէ ալեաց այլասեռիցն ազանց ի վերայ քրիստոնէից, ոչ պատահեաց ախորժելին, վասն որոյ ՋԽ (1291) թուականիս, դէմ եդեալ բարոյ ակընկալութեամբ, թողեալ լալագին զքաղցրիկ մայրն իմ, զսնուցած եղբայրս եւ զաշակերտեալ քրիստոնէայսն, բարոյ ակնկալութեամբ եկի յերկիրն Հայոց յորում էր յաթոռ թագաւորութեանն Հեթում որդի Լեւոնի արքայի, անդրանիկ ամենայն եղբարցն, եւ ժառանգաւոր թագին, եւ յոյժ սիրող իմաստութեան գրոց, եւ միաբանութեան քրիստոնէից ազգաց. եւ աստ յուսայի գտանել տեղի անդորրութեան, մնացեալ աւուրց սակաւ կենացն իմ վճարման, եւ մնալ գրենացն իմ յիշատակի տեղոջն։ Բայց ղի ըստ աւրինակի ծովու մեծի, անդնդական խորանք ամբոխելոյ, յորում ոչ մնասցէ նաւ, որ ոչ տարաբերեալ ծփի, այսպէս ընդ ամենայն աշխարհ տարածեցաւ նեղութիւն քրիստոսուրաց ազգին։ Եւս առաւել կայր ի տագնապի երկիրս Կիլիկիայ, յանբարեմիտ սուլդանէն Եգիպտոսի, որ եւ

յՉԽ (1291) Թուականիս բռնացաւ նա եւ առ զմեծահռչակ եւ զգեղեցկաշէն քաղաքն Աքա, զոր ունէին ազգ Ֆրէրացն, տունն Դամբլում, եւ Ոսպեթալին, եւ այրմամբ հրոյ եւ տապալմամբ հիմանց, աւերեաց ղղարմանահրաշ շինուածս նորա, եւ սպանմամբ սրոյ եւ գերութեամբ վտարելոյ, ջնջեալ զբնակիչս նորա, յորմէ ահէ ամայի թողեալ բնակչաց ծովեզերեայ քաղաքացն, այլոց փախստեա եղեալ գնացին, եւ այսպէս աւերեցան գեղեցկաշէն քաղաքքն՝ որ առ եզերբ ծովուն։

Իսկ անուն սուլդանին որ զայս գործեաց աղէտ եւ սուգ քրիստոնէից՝ Մէլիք Աշրաֆ, որդին Ալֆէ, եւ առաւել գոռայր, իբրեւ զամպ կարկտածին լցեալ բարկութեամբ կայծակամբ, եւ ահաբեկեալ դողացուցանէր երկիրս Հայոց, եւ նեղէր բազում հարկապահանջութեամբ զթագաւորն Հայոց Հեթում, խնդրելով երկիր եւ գաւառ եւ բերդորայս։ Իսկ ՉԽԱ (1292) Թուականին դիմեաց ի դուրս յերկրէն իւրմէ իբրեւ զառիւծ ի մօրենոյ, անհուն զաւրաւք եւ անթուելի հեծելաւք եւ անհամար հետեւակաւք, իբրեւ զգետ հոսեալ եւ որպէս գծով տարածեալ, յորմէ սարսեալ սասանեցաւ երկիրս Կիլիկիոյ, եւ ի լերինս եւ յամրոցս դիմեալ փախչէին, եւ էին աւուրք հնձոյ ցորենոյ, թողեալ զվաստակս քրտանց եւ զպատճառս կենաց իւրեանց, ի ժողովելոյն ժամանակ որ եւ ողութիւն եղեւ եւ նուաղութիւն հացի, իսկ նա ոչ եկն յերկիրս Հայոց, այլ գնաց պատեաց, պաշարեաց, ողարեաց զՀոռոմկլայն՝ զաթոռ հայրապետութեան Հայոց, եւ բազմաձեռն պատերազմողաւք, եւ մեքենաւոր մարտիւք, եւ կործանիչ բաբանաւք կռուել զաւուրս ԼԵ (35)՝ մինչեւ ջնջեալ սպառեցան մարտիկ զինուորք բերդին եւ ջնջեցան ի քարանցն հարմանէ եւ ի խոցմանէ անձրեւաւրէն նետիցն թանձր բերմանէ, եւ զաւրքն Եգիպտոսի, քարահատաւք արուեստաւորաւք, փորեալ նաղմեցեն զքար բերդին իբրեւ զհող, եւ դիմեալք ի վեր առին զգեղապաճոյճ ամուրն պանծալի, սպանին եւ զմնացեալ զինուորսն բերդին, գերեցին եւ աստուածային սուրբ կտակարանսն, որ ի բազում ամաց ամբարեալ էր ամենայն կաթողիկոսացն եւ թագաւորացն, եւ ամենայն անաւթս սրբութեանց եւ զարդուց եկեղեցւոյն, եւ զխաչսն ոսկեղէն եւ արծաթեղէն, եւ զաւետարանսն ոսկետուփ՝ մանրեալ փշրեցին, եւ զմասունսն նշխարաց առաքելական եւ մարտիրոսական նահատակաց։

Գերեցին եւ զսուրբ կաթողիկոսն եւ զհայրն մեր հոգեւոր զտէր Ստեփաննոս, եպիսկոպոսաւք եւ քահանայիւք եւ անհամար քրիստոնէիւք, եւ եղեւ սուգ մեծ ամենայն Հայոց։ Որ եւ ես նուաստ Յոհաննէս, զայս Բ (2) ամ կայի անհանգիստ, երկմիտ եւ անտեղի, շրջելով պանդխտաբար, միջաբեկ եւ յուսահատեալ յիմ խորհրդոյն, զի թէ անառիկ ամրոցին տիրեցին թշնամիք խաչին, եւ գանձք հոգեւոր աստուածային գրոց ցրուեցան, եւ չարախոհ մտաւք մախայր ընդ երկիրս Հայոց, ո՞ւր գտանիցեմ տեղի անկասկած աղքատութեան իմոյ ստացուածոյ՝ մնալ անտեղափոխ ի նոյն յարակայութեամբ։ Այլ յուսով ողորմութեանն Աստուծոյ թողում զամենայն աշխատութիւնս իմ եկեղեցւոյ մանկաց եւ գրոց ուսումնականաց, զի ուր եւ պատահիցեն, տեսեալ իմոց յիշատակաց, շարժեալ ի գութ գորովոյ մարդասիրապէս յիշեսցեն զմեզ, եւ զծնաւղսն մեր, յողորմութիւնն Քրիստոսի։

Արդ, աղաչեմ զամենեսեան ղսիրոյն Քրիստոսի աւանդապահքդ, որք աւքտիք ի սմանէ ընթերցմամբ կամ գաղափարաւ ողորմութիւն հայցեցէք նուաստ Յոհանիսի, եւ ծնաւղացն իմ եւ եղբարց, եւ սուրբ հաւրն եւ լուսաւորիչ վարդապետին, ղի եւ զձեզ յիշեսցէ անմոռաց գթութեամբ մարդասէրն Քրիստոս, եւ ողորմութեանն իւրոյ արժանի արասցէ։

Կաղմեցաւ ի սուրբ եւ ի մեծափառ անապատն ի Խորին... ձեռամբ սուրբ քահանային///։

571

ԱԻԵՏԱՐԱՆ

Երուսաղեմ 1864, Պողարյան, Ցուցակ Զ, էջ 262—263

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Գռներ

ա

508ա Փառք ամենասուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտեանից, ամէն։

Արդ, գրեցաւ Սուրբ Աւետարանս ի հռչակաւոր եւ յաստուածաբընակ անապատիս Գռներոյս, ի յառաջնորդութիւն տէր Ստեփանոսի, այր հեզի եւ բարեպաշտի եւ մեծ րաբունոյ, եւ ի պարոնութեան նահանգիս Կիլիկեցւոց պարոն Հեթմի, որդւոյ Լեւոն թագաւորի, իմոյ ձեռամբ՝ Գրիգորի մեղաւոր եւ անարժան ծառայի Աստուծոյ, ի վայելս անձին իմոյ եւ ի յիշատակ հոգւոյ իմոյ։

Արդ. յերեսս անգեալ աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք եւ լուսաւորիք ի յաստուածային վարդապետութենէս, յիշեսջիք զանարժանս եւ զլցեալս ամենայն չարութեամբ, եւ զծնաւղսն իմ՝ զհայր եւ զմայր, եւ զեղբայրն իմ՝ զպատուական քահանայն ըզՅոհաննէս, եւ ղորդին իւր, եւ յիշողացդ և յիշեցելոցս ողորմեսցի Քրիստոս Աստուած, եւ նմա փառք յաւիտեանս յաւիտեանից, ամէն։

Արդ, եղեւ զրաւ գըրչութեան սորա ի թուաբերութեանս Հայոց ՉԽԱ, (1292), յամսեանն մարտի, որ աւր ԻԲ (22) էր, եւ նմա փառք յիտեանս, ամէն։

Զկաղմաւղս սուրբ Աւետարանիս զԹորոս քահանայ եւ զծնաւղս իւր եւ զեղբայրս յիշեսջիք ի մեղաց թողութիւն։

բ

251բ Սուրբ աւետարանչիս Մարկոսի բարեխաւսութեամբ Քրիստոս Աստուած ողորմեսցի Գրիգորի մեղաւորի, եւ ծնաւղաց իմոց եւ եղբարց, եւ որ զամէնն ասեն. եւ Քրիստոսի փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

572

ԱԻԵՏԱՐԱՆ

Բարխուդարյան «Արցախ», էջ 153—154

Գրիչ՝
Վայր՝ Դրազարկ

ա

Արդ, գրեցաւ կենսաբեր սուրբ Աւետարանս ձեռա[մբ Յովճ]անիսի... [ի թուականու]թեանս Հայոց, ի տէրութեան Կիլիկեցւոց նահանգին երկրորդ Հեթմոյ բարեպաշտի, ի դառն և յանբարի ժամանակիս, յորում զհայրապետական ամենայն սրբութեամբ և զհայրապետն ժողովրդեամբն կուրուսաք...*

Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի մեծահռչակ սուրբ ուխտս Դրազակ կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածինն։

բ

Յիշեցէք յաղաւթս ձեր զստացող սուրբ Աւետարանիս զմաճուէլ փիլիսոփայն և զսրբազան քահանայն։

---

* Ակնարկում է 1292 թ. Հռոմկլայի ավերումը և կաթողիկոսի դերությունը։ Դնում ենք այդ թվականի տակ։

573

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Տիրայր վրդ., Ցուցակ Օքսֆորդի, էջ 308 (1585 թ.)

Ստացող՝ Հեթում Բ թագաւոր

56 Եւ ես՝ Հեթում, որդի վերոյ անուանեալ ծնաւղացս, որ յետ իւրեանց վախճանին թողին ինձ զայս Սաղմոսարանս ի դաստիարակ յայսմ կենաց և ի յո[յ]ս հ[ա]նդերձելոցն, և իւրենց չուեալ [փոխեցան] աս-տ[ե]ացս...: Որ է իւրեանց փոխման աւուրքն այս.

Ի թվին Հայոց ՉՃՂԲ (1250), ի յունիս ԻԲ (29) սպանին զպարոն Հեթումն տէր Կամբրոնին՝ պապն իմ:

Եւ ի թվին ՉԱ (1252) և ի յունվարի ԻԳ (23), որ էր աւր երեքշաբթի, հանգեաւ ի Քրիստոս բարեպաշտ մայրն իմ Զապել թագուհին*:

Եւ ԷՃԺԲ (1270) հանգեաւ ի Քրիստոս պապն իմ, թագաւորն Հայոց Հեթումն:

Եւ ՉԼԴ (1285), ի յաւգոստոս Թ (9) փոխեցաւ ի Քրիստոս ամենայգովելին հոգով և գեղեցիկն մարմնով մայրն իմ թագուհի Կեռան:

Եւ ի ՉԼԷ (1288), ի փետրվար Զ (6) փոխեցաւ առ ի Քրիստոս բարէպաշտ թագաւորն Հայոց Լեւոն, յորմէ փախեալ էր ի նմանէ ամենայն անչափութեան և մայր էր ամենայն չափից:

Եւ ինձ աւանդեցին ժառանգութեան թագաւորութեանս Հայոց:

Եւ իմ Հեթմոյս տեսեալ զի[մ]ն անարժանութիւն, յառաջ քան զկոչելն զիս, հրաժ[ար]եցի, և զձև թագաւորական փոխեցի ընդ ձև կրաւնաւորական, որ և զՀեթում անուն[ս] Յովանէս վերայփոխեցի: Վասն որոյ աղաչեմ զձեզ, զի զվերոյանուանեալ ծնաւղս իմ յիշել յաղաւթս ձեր՝ սուրբ Քրիստոս, և զիս՝ Հեթումս, յաղաւթս ձեր ոչ մոռանալ, և դուք յիշեալ լիջիք...**

---

* Լուսանցքում «որ է եղիսաբէթ»:

** Սաղմոսարանը գոված է 1268 թ. Հռոմում (տե՛ս Հիշատակարանը): Այս Հիշատակարանը Հեթումը գրել է իր կրոնավորելուց հետո, որը տեղի է ունեցել 1292 թ.:

574

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՅՈՎԱՆՆԷՍԻ ԵՐՋՆԿԱՑՒՈՅ

Երևան 2266 (ԺԷ դ.)

Ադոնց. «Արուեստ Դիոնիսեայ Քերականի», Ս. Պետերբուրգ, 1915 թ., էջ LXXXII—XCI

Հեղինակ՝ Յովաննէս Երզնկացի
Վայր՝ ի լեառն Լուսաւորչին

ա

29բ Նախաղրութիւն բանի, ի ցոյցս պատճառի Հաւաքման մեկնութեան
fէրականին, եւ աղերս խնդրոյ աշխատաւորիս Յոհաննիսի առ սպասա-
ւորդ բանի:

Ճշմարտութեան հաւատոյ բանին ուղիղ դաւանութեան պահողաց և անախտ երկանց ծննդոց՝ դաստիարակ որդւոց հոգեւորաց, քան զմեղու և կաթին քաղցրորակ ճաշակաց և իմաստութեանն ստեամբք սնընդագործացդ ընդ ձեզ և մանկանց ձերոց նորաբոյս և յուսումնատենչ համբակաց նորոյ Սիոնի սրբոյն գերագոյն գրկաց զգուեալ զաւակաց, ագարակին գանձոյ և մարգարտին մեծագնոյ՝ ընդ անցաւոր գոյիս գնո-
30ա *ղաց, որոց ցանկալի ճոխութիւն բանի, քան սոփերականն ո||սկի, և քան զակունս լուսանշոյլս՝ լոյս մտաց և ճրագ ընթացից շաւղաց իմաստութեան ջահ տեսողաց, ընկալարուք զաղերս բանի ի շրթանց և ապա զընծայս կառկառեալ բազկաց, եթէ հաճոյ թուեսցի ձեզ ըմպել շուր ի ստոմանէ կաթի ջրոյ կարաւտացելոյ և կերակրիլ ի նկանակէ հացից քաղցի սեղանոյ անկեալ փշրանաց:*

Հաւանեցուսջէ զձեզ զայս աննախանձութիւն բարուց, և հեզութիւն հոգւոյ և իմաստութեանն քաղցր բաղձանք մի՛ ներհակաբար վարիք ի վարձ քրտանց վաստակաւորի, և մի սիրով տոչորեցելոյ ի գութ ուսումնակացացն ազգի ղանընդունակն գթութեան շնորհիցէք զատելութիւն: Զի թեպէտ ոչ աղբիւր ջրոյ նոր պատառեցաք և ոչ ի կորդ ագարակի սերմանց որայս բարդից հնձեցաք, այլ միայն զխցեալ շրհորս հարց մերոց բացաք և ի նոցունց համբարաց ցորենոյ հաց ի կերակուր գործեալ հասուցաք, բայց ոչ առանց աշխատութեան ուշոյ և խստիւ ըզըս-
30բ *տինս խորհրդոց ճմլելոյ: Եւ այս ոչ ինքնաձեռք||համարձակութեամբ վստահացեալ ի զաւրութիւն և կամ զգիտութեան փառս յանձն անփառունակ ձգելով, այլ հնազանդ հրամայուզ հարանց և եղբարց հարազատաց խնդրոյ եղաք, և ի յորդորմանէ յարակցաց յայս յաւժարեցաք:*

Զի ի պատահելն մեր յերբեմն ժամանակի Զկ (1281) թուին մերոյ գնալ յաստուածային քաղաքն Երուսաղէմ ի տեսութիւն փրկագործ տնաւրէնութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ; Եւ եկաք երկիրն Հայոց ի Կիլիկէ, ի թագաւորութեանն Լեւոնի բարեպաշտի, որ յՌոբինեացն՝ որդի Հեթմոյ աստուածասիրի, Եւ կացաք ժամանակս ինչ առ վերադիտուղն աթոռոյ Սուրբ Լուսաւորչին մերոյ՝ կաթողիկոսն Հայոց տէր Յակոբ, հեղինակն հոգւոց, և հանճարոյ իմաստութեամբ վարժն աստուածաշունչ գրոց, հմուտ և գտաւղ բանից իմաստանոց, աննախանձաբար սիրողն և պատուաւղն ուսումնասիրաց: Որ և հայրն մեր հոգևոր՝ հրամայեաց մեզ

ասել զքերականն դաս իւրոց աշակերտաց, և ախորժելի և հաւանակից
31ա եղեւ։ Վասն որոյ խնդրեաց ի մէնջ պարզութիւն առնել մեկնութեան||նո-
րին, և լնուլ զթերին մնացեալ ի վերլուծական բանից մեկնողացն։ Որ և
աւուրս ինչ մնաց գործն անկատար սակս անպարապ գոլոյ և անանդորդ
ի տեղւոյ։

Եւ ապա շնորհազարդ ոմն ի վարդապետաց եկեղեցւոյ Յովհաննէս
անուն, հեզհոգի և առաքինասէր, կացեալ ժամանակս յոլովս ի պաշտաւն
սպասաւորութեան եկեղեցւոյ ի դուռն Սուրբ Կարապետին, որ ի Տարա-
ւրն, եւ ըստ շնորհի յաջողելոյն Աստուծոյ հասեալ ի վարդապետական
աթոռ՝ ասել դաս և մեկնել զգիրս աստուածաշունչ աշակերտելոցն եկե-
ղեցւոյ մանկանց. նա իսկ թախանձելի թղթով և աղերսական բանիւ
խնդրեաց ի մէնջ զայս իրագործութիւն, իբր յոյժ տեղեակ գոլոյ իւր
լուծողական մեկնութեամբ յայտնեցելոցն և անյայտ և ծածուկ մնացե-
լոցն։

Այլ և որ առ մեզ էին ուսումնակիցք եղբարք փափաքելով փութա-
ցուցանէին զմեզ յայս։ Եւ մեր, զի թեպէտ առձեռն էր պատճառն տկա-
րութիւն մարմնոյ և անբաւականութիւն բանի, և տեղի եւս անպատշաճ
ունողի և կեանս ամբոխականս, վասն նեղութեանցն, որ յաւուրս մերոյ
31բ ժամանակիս, մնայր||անգործ յաւժարութիւն խնդրոյն։

Իսկ շնորհ ողորմութեանն Աստուծոյ գթացեալ ի մեզ, այն որ տայ
թևս աղաւնոյ հոգւոյն արժանաւորաց և յարուցանէ զանկեալ բազմա-
մեայ անդամալոյծն, արձակեաց և զիս ի կապոյ շղթայից երկրաւոր
ցնորից, և ետ դուզնաքեայ անապատ ի հանգիստ և ի գիւտ աւթևանի, և
հասոյց ի լեառն հանգուստեան Սուրբ Լուսաւորչին մերոյ Գրիգորի, յա-
նապատսն որ ընդ հովանեաւ նորին, յորում ի մանկական հասակին էաք
վարժեալ յուսումն դպրութեան յանապատն, որ յանուն Սուրբ Մինասին։

Անդ սկիզբն արարաք եղբարց ոմանց ասել զգիրս աստուածաշունչս
և ի յիշումն ածաք զխնդիրս պատկառելի եղբարցն։ Եւ յԱստուած ապա-
ւինեալ, և ի շնորհս Սուրբ Լուսաւորչին, և եկեղեցեացս սուրբ լերինս, և
յաղաւթս և յոյս խնդրողացն, զայս առաջին պտուղ յանապատի կենաց՝
ընծայեցաք սուրբ եկեղեցւոյ մանկանց։

Բայց ցուցից ձեզ և զայս, զի մի՛ և յաւելորդ և յանպէտս թուիցի
32ա աշխատութիւնս մեր։ Վասն զի||մեծապատիւ իշխանն Մագիստրոս՝ որդի
Վասակայ մարտիրոսի և հայր կաթողիկոսին տեառն Գրիգորիսի, տէր
Վաճրամ կոչեցեալոյ, աշխատել էր ի հաւաքումն Մեկնութեան սորա, և
մինչ առ մերս ժամանակ յայնու վարժէին վարդապետքն մեր ղաշակեր-
տեալսն իւրեանց։

Ապա զի՞նչ հարկ էր այլոց ի մէնջ զայս խնդրողաց, կամ մեր առ
այս ձեռնարկութիւն յաւժարելոյ։ Եւ ասացից. ։նախ՝ զպակասութիւն
առաջնոյն. եւ երկրորդ, զմերն յաւելուած բանից, եւ երրորդ սակաւ ինչ
պատուէր հանճարասիրացդ աւանդեցից։ Զի հմուտն իմաստութեան
Մագիստրոս իշխանն, աշխատեալ ի սմայ և երեք մեկնչաց բանս առ
միմեանս եդեալ՝ զՊաւթի փիլիսոփայի և զՄովսէսի քերթողի, և զմիւս
իմաստնոյ, որոյ ոչ էր գրեալ անունն, արարեալ և ինքն յաւելուած բա-

նից յինքենէ, որոյ տացէ Տէր վարձս աշխատանացն, զի ընդ իշխանական
հոգաբարձութեանն և զայս ընձեռեաց մեզ աւժիտս։ Բայց զբանս մեկնո-
32բ զացն ոչ էր խառնեալ ընդ միմեանս, և ոչ զիւրաքանչիւր մեկնութիւն||
հանդէպ և կշիռ բանին եդեալ։ էին և այլ մեկնիչք, որք ոչ էին հանդիպեալ
նմա։ Եւ բազումք ի մասանց բանին ոչ ունէին ըղմեկնութիւն, և էր՝ զի
կրկին և երեքկին էր եդեալ զերից մեկնչացն։ Եւ կարգ շարադրութեան, թէ
ո՞ր առաջին և ո՞ր երկրորդն՝ ոչ ունէր ըզյարմարութիւն։ Սակս այսորիկ,
որոց ոչ գոյր լուծումն, տարակոյս առնէր մտաց, և որոց կրկին էր՝
ձանձրութիւն ընթերցողին։ Եւ նախադասութիւն և ստորադասութիւն ոչ
ըստ տեղւոյ գոլով աշխատանս էր շարաբանութեան։

Իսկ մեր՝ ժամանակաւ տարեալ հոգք ժողովել ըղՄեկնութիւնս Քե-
րականին, և առաք առանձնակի ղամենեցունց արարեալսն և եդեալ ի
մի գիրք՝ զոր ուսումնասէր պարոնն Յովհաննէս, որդի մեծապատիւ
եպիսկոպոսին մայրաքաղաքին Եզնկայի, գտեալ ուրեք աւրինակս հին և
տուեալ փոխել, յորում էր Դաւթի փիլիսոփային և Մովսիսի քերթողին
և այլ մեկնիչս առանց անուան մեկնողին, էր ի նմա և Բարսղի մեկ-
33ա նիւթիւն. գտայ և յանապատն Դեր||ջնայ, զՀամամայ Արեւելից վարդա-
պետի Մեկնութիւնն, այլ և ի բառագրոցն Ըռըստակիսի՝ յայսսիկ մեկ-
նողաց գրոց, այլ և աստի և անտի լուծումն բանից արարեալ մերոց
իմաստնոց։ Եւ էր զոր յայլ իմաստասիրական գրոց զյարմարն և զդէ
պըն և ըղնմանն բերեալ եդաք ընդ համաղաւրի բանին, և յայսցանէ ամե-
նեցունց արարաք զՄեկնութիւնս զայս։ Եւ էր՝ զի ի զաւրութենէ սոցուն
և շնորհաց ի մերս ծընանէր պիտանութիւն բանի ի միտս։ Եւ զամենայն
մեկնողացն բան կշիռ և հանդէպ բանին եդաք, զկրկին և զերեքկին բա-
նիցն երկարութիւն ի միաւորութիւն խառնեցաք, և որոց ոչ գոյր լուծումն
մասանց բանի, լիով և անթերի գտեալ լցաք զթերութիւն։ Բազում և այլ
դըրունս բանական արուեստի յայլմէ տեղւոյ առ ազգակիցն խառնեալ
յաւելեաք։

էր զի և յարուեստ բանականութեանս անուանց զյոլովս, որ անծա-
նաւթ էր մերում ազգի, որոց հասու եղաք փոքր ի շատէ նշանակելով՝
ծանաւթ մանկանց եկեղեցւոյ արարաք։ Եւ այսպէս, զմերս դիտաւորու-
33բ թիւն աւ||արտեալ, մաւր մեր եկեղեցւոյ սրբոյ ընծայեցաք, և զմանկունս
ուսման ի փոյթ սորին յաւժարամիտս արարաք։

Վասն որոյ պատուիրեմ ձեզ և յոյժ աղաչանաւք հայցեմ, մի՛ անփոյթ
առնէք կրթիլ վարժմամբ փոքու այսու գրովք, զի մեծամեծ և յոլովս է
տուաւղ զաճումն մտաց և բազմաց է սա բանալի իմաստութեան դրանց։
Եւ յոյժ սրտաբեկեալ խոցիմ, յորժամ տեսանեմ զազգըս մեր անփոյթ
արարեալ զիմաստասիրական ուսմանց և ղհմտութենէ արհեստից բա-
նականաց, մինչ զի զհանգամանս անուանց իմաստասիրացն գրոց ան-
տեղեակ գոլով, զորս յայտնեալ են հարք մեր ի գիրս իւրեանց զոր ըն-
թեռնումք, զոր այժմ երկարութիւն համարիմ յիշել զանուանսն, և կամ
զպատճառ հեղգութեան ազգիս;

Այլ միայն զայս պատուիրեմ, մի՛ ոք, որ անտեղեակն է արհեստի
գրչութեան, ձեռնարկեսցէ գրել զսա և տապալել զերկս աշխատութեան

բանասիրացն, այլ ստոյգ և ուղիղ գրչաց տացէ փոխել, զի իւր և այլոց
34ա լիցի պիտանացու։ Եւ մի՛ ոք նեղասպատեալ ձանձրութեամբ թողցէ զսա-
կաւ բանք նախադրութեանս, իբրև զաւելորդ։ Որք փոխէքդ աւրինակաւ,
կամ որք ասէք զսոյն աչակերտաց, իբր յոյլով յաշխատութեան զսա-
կան ոչ տալով բարեմտութեամբ փոխարէն սիրոյ։ Եւ այսոքիկ այսքան։
Այսուհետև ի սկիզբն եկեսցուք առաջիկայ գրոցս, զոր Տէր առաջ-
նորդեսցէ։ ՈՀ զաղքատս ի պատուական գանձէս յիշեա ի Տէր։

Բ

Ի խնդրոյ տեառն Յակոբայ Հայոց կաթողիկոսի և վարդապետաց մերոց եղբարց, արարեալ ճաւաֆումն Քեռականին Մեկնութեան, Յովհաննիսի երզնկացոյ ուսումնականի ի գրոց։

ա

195ա Մնծասքանչ և զարմանահրաշ բանաւոր կենդանի այս մարդ մի և
նոյն կազմած, նոակի տարորոշմամբ զանազանի. միտք գոլով իմանա-
լի, և եռամասնեայ հոգի, և մարմին զգալի. վասն որոյ և բարեացն սո-
րա փարթամութիւն յերիս զանազանի. հոգեկան և մարմնական, և որ շուրջ
զմարմնովն։

Եւ հոգեկանք են իմաստութիւն և հանճար, աստուածային ուսմանցն
գիտութեան, առաքինութիւնք անկեղծ և հաւատք ուղիղ։ Իսկ մարմնա-
կանք են՝ քաջազգայութիւն և առողջութիւն, գեղեցկութիւն և զաւրութիւն։
Իսկ որ շուրջ զմարմնովն՝ իշխանական ճոխութիւն, բարէտոհմութիւն
ազգի, ստացուածոց փարթամութիւն և տոհմնաւոր սիրելիք։

Արդ, որ զկարգ կազմածին իւր տեսանէ, անտի և զիմաստագործ
կարգ արարչութեան Աստուծոյ ծանիցէ, և զվերնոցն ազգակից միտս
195բ սկզբնատպին բարութեամբն կերպարա||նեսցէ։ Իսկ որք զվերինն խոր-
հին ըստ Պողոսի, և ելս ի սրտի դնեն ըստ Դաւթի, և յոտն կան և գնան
աստի ըստ Միքիայ, և աւն յարուցեալ երթիցեն ընդ Յիսուսի, կատարելոյն
բաղձան բարութեան, և զմարմին և զմարմնական բարիսն և շուրջ
զմարմնովն են պանծալիք, յանմարմին հոգւոյն փոխեն յազնուականու-
թիւն, և զմարմնոյն ծանրութիւն հոգիացուցեալ՝ զարարչական ճշմար-
տեն պատկերագործութեան նմանութիւն։

Արդ, վերնական աստուածային բարեացն ի կերպ կազմածին ստու-
գապէս պատկերագրաւեն, բարեպաշտութեան և իմաստութեան տիրա-
պէս տարփաւորն, աստուածասէր թագաւորն Հայոց Հեթում, որդի Լեւոնի
բարեպաշտի, որդւոյ իմաստնոյ արքային Հեթմոյ հաւր և մաւր Ջապելի
սրբոյ թագուհոյ, դստեր առաջին պսակաւորին Լեւոնի, որդւոյ Սեբաս-
նեա, որդւոյ Լեւոնի, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբենի մեծի իշխա-
196ա նին, յերկուց թագաւորական ցեղից սերեալ զարմի, ի||Բագրատունոյն
և յԱրծրունոյն։

---

* Հայորդ մասը Ն. Ադոնցի աշխատութեան մեջ բացակայում է։

Յայսոսիկ թագընդալեաց և յիշխանացն բարձրագահից բողբոջ բարեպաշտութեան բուսեալ, և ծաղիկ գարնանոյ ի ձմեռնացեալ ժամանակիս երևեալ, սաղարթաւոր և բազմոստեան արքայական տնկոյն պտուղ քաղցրաճաշակ համս և ի հոտս հասեալ, հայկական սեռիս և արամեանս ազին, բեկելոց և խոցոտելոց յայլալեզու ազանց, սպեղանի և գեղ դիւրացուցիչ, բարեզարդութեան կարգաց և կրօնից եկեղեցւոյ, և մանկանց նորին դաստիարութեան պայծառացուցիչ, վարժ աստուածային գրոց սըրբոց, և պատուաւոր ուսումնականաց և գիտութեան հմտականաց, բարեգութ առ ամենեսեսեան և խնամածու, յորմէ և ես նուաստ Յոճաննէս Եզնկացի բազում խնամ սիրոյ և առատութիւն գթոյ վայելեցի։

Եւ զի յոյժ գրասէր և ուսումնասէր ունէր բարս բարեմիտ թագաւորն, որ և ի դառն ժամանակիս, յորում աշխարհ ամենայն իբրև զծով անդընտական խորովք խռովեալ և ամբոխեալ ծփէր, և աւազանման որ-
196բ դիքն Աբրահամու, անօրէն ազգն Իսմայէլի և աղախնածին որդիքն||Հագարու, ծանրացեալ ի վայր քարշեալ ծածկէին զաստեղացեալ որդիսն Հաւրն հաւատոյ, վասն պայծառ լուսոյ առաքինութեան ի նոսայ նուաղելոյ, և բռնացեալ նեղէին՝ մաշել սրով և գերութեամբ։

Իսկ բարեսէր թագաւորն Հեթում, իբրև զաստղ նշանաւոր, լուսանշոյլ փայլէր, և զաղքատութիւն եկեղեցւոյ մաւր զարդարեալ ծածկէր, և ոչ դադարէր ի գիրս ստանալոյ և եկեղեցւոյ գանձս յաւելումն առնելոյ։

Վասն որոյ և ես նուաստ Յոճաննէս Եզնկացի, բիւր բարեաց պարտականս, խոհեմամիտ և իմաստութեան պատուղ արքայի ընծայեցի զփոքր զայս գրկունք, որ կոչի Քերական, առ ի քերել և սրբել, պարզել և զտել զամենայն բանախաւսութեանն իրագործութիւն, վեցեակ կատարելութիւն սորին մասամբքն, կատարելագործել զբնաւորութիւն ի վեցերեկի աւուր ստեղծեալ մարդոյն, զվերծանութիւնսն առողանութեանց ընթեռնուլ արուեստիւ, զրուցատրութիւնսն իմաստապէս և ոչ ռամկականացն սովորութեամբ լեզուաց գաւառաց և պատմութեանց ազանց, հա-
197ա մառատ համեղախաւսութեամբ||համեմատութեանցն լծակաւք զբայիցն և զբանիցն ուղղել մէտս կշռոց, զդատումն քննողութեան առնել ի տաղիցն չափողութիւն, և ի ճառիցն ուղղամիտ հարազատութիւն, տեղեկանալ և տառիցն զանազանութեան և բառիցն ի բանսն շինողութեան, վերահասու լինել վանգիցն և փաղառութեանցն փոխայեղութեանց, բանալի ունել բանին զութենեակ մասունս քերթողութեանն, առնուլ զիմաստս անուանցն հասարակաց և մասնականաց, և ընդ նոքումբք անկեալ տեսակացն, ի խոնարհմունս բայիցն յաւղելոյ և շաղկապելոյ, և այլոց մասանցն արուեստիւ անդամոց մարմնոյ։

Արդ, ի յայսմ ժամանակի, որ էր թուականիս Հայկազեան տումարի ՉԽԲ (1293), գրեցաւ գրկունքս, որ և յայսոսիկ աւուրս ժամանակաց բազում եղև աղէտս ողորմանաց, և զգայական սուգ և կսկիծ [ա]սդողական քրիստոնէից ազդի, անաւրէն սուլտան այն Եգիպտոսի. զորս պարտ է յիշել կարճառօտ բանիւ։

Ջի ի ՋԼՀ (1289) թուականին սուլտանն Եգիպտոսի՝ Ալֆի անուն,
197բ առաւ զՏրապալիս՝ ձերեքպարսպեան ամրութեամբ պատեալն||գեզեց-
կաշէն քաղաք, անցեալ զաւրաւքն ընդ մուտս ծովուն, յաւարի առեալ զան-
չափ գանձս, որ ամբարեալ կայր առ փարթամացեալ բնակիչսն, աւե-
րեալ յատակեցին զպարիսպ քաղաքին, և քակեցին զհրաշազարդ եկե-
ղեցիսն։

Իսկ Ջխ (1291) թուին, որդին Ալֆէ մելիք Աշրաֆ անուն, խակամիտ և գազանաբարու, առ զմեծահռչակ և բազմամբոխ քաղաքն զԱֆայ, զոր ունէին ազգ ֆրերացն, տունն Դամբլուն և Ոսպեթալին, անարի և թոյլ գտեալ ազգն արիական առաչի անաւրինացն։ Մատնեցաւ քաղաքն ի պա-
շարումն և առաւ, և սպառեցան սպանմամբ սրոյ և գերութեամբ։ Ջի
սուրբ անաւրինացն՝ զաւազանածին տունկն բանաւորական թաւթափէին
զգլուխսն ի մարմնոց, իբրև զտերևս ծառոց, և այլքն վարեցան ի գերու-
թիւն իբրև զձագս հաւուց ի բունոյ բնակութեանց իւրեանց, և ազնուա-
կանքն և աչխատածինք, ճոխքն և փառաւորք՝ գնացին ի ստրկութիւն, և
198ա մնաց քաղաքն բազմորդի իբրև զմայր սևազգեստ ի վերայ||մանկանցն
իւրոց։

Իսկ ի թուականին ՋխԱ (1292) յաւելաւ ահ և երկեղ, դողումն և սա-
սանութիւն յերկիրն Հայոց և Կիլիկիայ, զի վիշապագլուխն այն, որ առ
զԱմա, դիմեաց ի դարանէ իւրմէ ահագին շրջմամբ և դղորդեղով, ան-
հուն զաւրաւք հեծելազք և հետևակազք, ըստ երեմիայի գուժմանն բաւքի՝
Ել առիւծն ի մաւրոյ իւրմէ՝ սատակել զազգս, խաղաց և ել ի տեղոչէ
իւրմէ առնել զերկիր աւերակ. և քաղաքք քակտեսցին առ ի չգոյէ բնակ-
չաց ի նոսայ, վասն որոյ ասէր. Ի վերայ այդորիկ քրձազգած եղերուք,
կսծեցարուք, ճիչ բարձէք, զի ոչ բարձաւ սրտմտութիւն բարկութեան
իմոյ ի ձէնջ։

Յայսմանէ սարսեալ յերկիրն Կիլիկեցւոց՝ գաղթեցան ի լերինս և
յամրոցս բերդիցն. իսկ նա դիմեալ գնաց ի վերայ հայրապետական
աթոռոյն Հայոց՝ ի Հռոմկլայն. և պատեալ պաշարեաց զնայ բազմաձեռն
պատերազմողօք, բարձրաձիք բաբանօք ծանր քարանց, քարահառ
արուեստականօք և նաղմափոր դարանամտօք, և առ զաստուածաշէն և
զգեղեցկադիր ամրոցն, վասն մեղաց մերոց յաճախութեանցն, և բարեաց
նուազութեանց։ Գերեաց և զսուրբ հայրապետն մեր՝ զկաթողիկոսն տէր
Ստեփաննոս, եպիսկոպոսօք և քահանայիւք և անթիւ քրիստոնէիւք, որ
համեմատ էր ողբոց և աւերմանն Սիոնի և Երուսաղէմի. զի քահանայք և
արք փառաւորք անկան ի սուր, և կանայք պատուականաց՝ [անարգե-
ցան], աստուածաշէն կտակարանք յանօրինաց ձեռաց յափշտակեցան,
առաքելական և մարտիրոսական նշխարք սրբոց խորտակեցան, զարդն
ոսկւոյ և մարգարտեաց և ականց պատուականաց, որ ի վերայ սրբու-
թեանց՝ կողոպտեցան, աչն առաքելապատիւ Սուրբ Լուսաւորչին մերոյ՝
յերկիրն այլազգեաց գերեցաւ, որ ողորմելի էր քան զգերութիւն տապա-
նակին ի հնումն։ Եւ եղև այս ամենայն Հայաստանեայց ողբս և յար-
տասուս, ի հեծումն և ի հառաչումն։

Յայսքան ամս, որ այս ամենայն գայր ի վերայ քրիստոնէից, ի պատուհաս մերոց յանցանացն և անդառնալի մեղացն։ Յար և անհատ եկաւորութեան դային դեսպանքն ի մեծամիտ և յանբարտաւան սուլտանէն առ քրիստոսասէր և առաքինազարդ թագաւորն մեր, սաստիկ սպառնալեօք և ծանր հարկապահանջութեամբ, և անթիւ գանձս յոսկւոյ և արծաթոյ խնդրելով, և այլ բազում [ընչից]։

Իսկ թագաւորն մեր կայր երկայնամտութեամբ, անշարժ և հաստատուն յուսով յԱստուծոյ ապաւինեալ, և յաղաւթս և ի պաղատանս հաշտարարս, և հեղումն արտասուց, և ըստ յուսոյ մարդասէր թագաւորին կայաք և մնայաք մինչև ի թիւս թուականին ՉԽԲ (1293), և վստահանայք յողորմութիւն Աստուծոյ պարգև լինել շինութիւն աշխարհիս, յուսոյ և սիրոյ թագաւորին, որ յԱստուծոյ և ի սուրբս նորա։

Իսկ Աստուած որ ոչ ամաչեցուցանէ զյուսացեալսն իւր, ըստ հայցմանն Դաւթի և երաշխաւորութեան Պօղոսի, և որպէս փորձի ի բովս ոսկի և արծաթ, նոյնպէս ընտրէ զսիրտս Աստուած ըստ Սողոմոնի, հայեցեալ ի համբերատար ժուժկալութիւն թագաւորին մերոյ, և ի նեղու-
198բ թիւնս, զոր կրէր||երկիրս Հայոց, և որ ի ձեռին ունի զսիրտս թագաւորաց, որպէս սահանս ջուրց, և ըստ որ կոյս կամի նայեցուցանել՝ դարձուցանէ զնա։ Եւ որ մինչև ցայս վայր թոյլ եւտ գոռոզաբարու սուլտանին՝ սրտմտական բարկութեամբ իբրև զհոսանս գետոց գոռալ, հեղեղաբար յարձակմամբ գերել և գերփել, և գաղանային ցասմամբ զսպառոմն սպառնալ ըստ Նաբոգոդոնոսորայն ի վերայ Երուսաղէմի, դարձոյց զսահանս տրտմտութեան նորա, և նայեցոյց խոհականին՝ վարել ընտրութեամբ, և գթալ որպէս Կիւրոս առ գերեալսն Յերուսաղէմէ (ի) Բաբելոն։

Զի ի նոյն թուիս ՉԽԲ (1293), ի մուտս յունիս ամսոյ, եկին դեսպանք պատուարք ի սուլտանէն, և բերին աւժիտս մեծագին և պատուական զգեստուց զալաթ և զիլայ անձին թագաւորին, և զեղբօր նորա. բերին և թուղթս երդման զսուլտանին և զմեծամեծ ամիրայից նորա, և հաստատեցին դաշինս սիրոյ և խաղաղութեան ընդ թագաւորն Հեթում, առին և ի նմանէ երդումն հաստատութեան, ընկալան և պատմուճանս
199ա զարդուց ամենայն եկեալքն ի սուլտանէն։ Առաքեաց և||առատամիտ թագաւորն մեր բազում բեռինս արծաթուց և զանազան կտաւս ոսկէնկար մետաքսից, և բազմութիւն ձիոց և ջորոց, և այլ իրս նորագիւտս, աղերս և հարկ սուլտանին։

Եւ եղև այս սիրոյ խաղաղութեան հաստատութիւն՝ խնդութիւն մեծ յերկրիս Հայոց։ Էր և աղերս գթութեան Աստուծոյ ի մեզ բարերարելոյ, յոյս և հաւատ և սէր և ողորմածութիւն թագաւորին։ Զի որ զդառն ջուրն Մեռայի արար ըմպելի անուշահամ հնոյն Իսրայէլի, զդառնութիւն բարւոյ սուլտանին քաղցրացոյց ընդդէմ թագաւորին մերոյ և եկեղեցւոց Քրիստոսի։

Արդ, որք ընթեռնուք զայս բան յիշատակի, և աւգտիք յարուեստական գրոյս իմաստութենէ, յիշեսջիք բարի յիշմամբ զբարեպաշտ թագաւորն Հեթում, հայցել ի Քրիստոսէ զթողութիւն մեղաց, և խնդրել արքա-

ւութիւն անմահական կենաց։ Յիշել ընդ նմին և զբրբասնունդ և զբարեբարու եղբարս նորա, զոր սնուցանէր երկիւղիւ Տեառն, և ուսմամբ իմաստութեան, և զբարիարմատ ծնաւղ քահանայութեան և զաւակացս, զի և դուք գթութեամբ յիշեալ լիջիք յամէնաւրհնեալ յիշումն Աստուծոյ, ամէն, ամէն։

575

ՀԻՄՈՒՆՔ ՀԱՒԱՏՈՅ

Երևան 567 և 2757

Ժողովող՝ **Յոճաննէս Եզնկայեցի**

Նուաստ և տկար ոգի **Յոճաննես Եզնկայեցի** *սպասաւոր բանի և իմաստից գրոց սրբոց ծարաւի, յոլով ժամանակօք և աշխատութեամբ բազմաւ ստացա զերիք գիրքս, որ են Հիմունք հաւատոյ ուղղափառութեան. և թէ զմին մի ի սոցանէ գտանէ ոք, բարեբախտութիւն մեծ և փարթամութիւն անկշիռ համարիմ նմա, մանաւանդ զճաշակ քաղցրութեանն գիտողի, զոր և գտի ես յայլ և յայլ տեղի և ժամանակի, և ստացա զերիս գիրսն։ Ու ի նոցունց դարձեալ ետու գրել, առ միմեանս եղի և արարի մի գիրք. առաջին՝ զԱնանիայի զՀայոց վարդապետի, երկրորդ՝ զԹոռոսովկայ թարգմանչի և զհզօր գիտնականի, երրորդ՝ զՍարկաւագ վարդապետին և մեծ իմաստասիրի զՀաղպատացոյ, և թողում ըստ որում* յետ իմ ժառանգէք յոգնազան բարեաց ճոխութիւն, յամենառատ գանձուց փարթամութիւն։ Աստուածաբանական հանճարով յերկինս թռուցելոց սա թևք զօրաւոր և վերայցուցիչ, յաշխարհիս ծովիկ նաւելոց ղեկք վարիչք և ուղիչք, ի մարտս խմբից հերձուածողականաց զենք սրեալք յաջողակ ձեռաց քաջամարտից, ի խաղաղական ժամու՝ ժողովուց սեղանք երկնաւորք և քաղցրաճաշակ լցեալ կերակրովք, վաճառականաց հանճարոյ** և հմտագոնից՝ մարգարիտ անգիւտ և աշխարհաւ ամենայնիւ գնեալ, աղքատաց անձաց և նիւթականաց անձեռնհասից սա ճոխութիւն երկնաւոր և անհամեմատելի, իմաստութեամբ լուսաւորականաց՝ արփի լուսաբուխ և բազմանշոյլ, անգիտութեան մթով պատելոց՝ ճրագ լուսատու և խաւարափարատ։*

Սա ձեզ յոլով բարեաց բղխմունս աղբերաց և մեզ նիւթ յիշատակի և բարբառ և ձայն առ ձեզ մաղթանաց, զի որք օգտիք և զուարճայք, զողորմելի **Յոճաննէս** *յիշեսջիք, և մեղուցելոյս անձին և վարդապետին իմոյ և ծնօղաց ողորմութիւն ի Քրիստոսէ հայցեսջիք***։*

---

* Ձեռ. № 2757-ում «ու թողում զսոսա»։

** Ձեռ. № 2757-ում «հանգոյն բարւոյս»։

*** Դնում ենք Հովհաննես Երզնկացու տարեթիվ պարունակող վերջին հիշատակարանին առընթեր, 1293-ի թվաշարում։

576

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՏԱՐԱԳԻ ՄՈՎՍԻՍԻ ԵՐՋՆԿԱՅՈՅ

Երուսաղէմ 395 (1331 թ.), Պողարյան, Յուցակ Բ, էջ 322 (1331 թ.)

Հեղինակ՝ Մովսէս Երզնկացի

ա

Ես Մովսէս մեղաւք մեռեալս ոգի՝ ծնունդ վերջին ժամանակի, եւ սպասատր պիտակ բանի, կամեցայ հաւաքումն առնել սրբոցն բանից, որ վասն աղաւթից եւ ժամակարգութեան արարեալ էին յառաջագոյն, եւ զիւրաքանչիւր առանձնակի որոշեալսն յանցնիւր տեղւոջ կարգեալ, այլ եւ բնադատեալ եղէ ի սիրելի եղբաւրէ ոմեմն Թէոդորայ զթողեալսն ի մեծէն Խոսրովու զբանս աղաւթից, յանցնիւր տեղւոջ վերլուծութեամբ դնել։ Եւ իմ թէպէտ եւ հայեցեալ տեսանէի յոյժ անարժան ղիս այսպիսի գործառնութեան՝ եւ լրբութիւն մեծ զայսպիսի իրողութեանց բուռն հարկանել, որ ի վեր է քան զկար եւ զարժանն իմ, սակայն զմտաւ ածի թէ եւ ձագ ագռաւոյ, թէ ընդ արծուոյ եւ ընդ բազէի աւդապարիկ լինիցի, ոչինչ շփոթումն եղիցի, զի ամենեցունց յայտնի երեւի թէ ագռաւն ագռաւ է, սեւաթորմի, զազրալի կենդանի եւ ամենեցունց ատելի, եւ նոյնպէս ագռաւ մնասցէ եւ ծանիցի։ Եւ քան հեղգութեամբ ի հանգիստ յաւժարել, աշխատութիւն յաւէտ է բարի, եւ իւրաքանչիւր ոք զիւր վարձ առցէ։ Եւ թէպէտ եւ կամեցայ հասկաքաղ լինել ի հունձս սրբոցն, եւ ճռաքաղ ի կութս, սակայն փախեայ աշխատութենէ՝ զամենայնսն ոչ կարացեալ քննել, այլ եւ խնայելով ի լսելիս ունկնդրաց, եւ զի մնացեալքն զնոյն զաւրութիւն ունին։ Եւ իմ չմեղադրութիւն պահանջելով յամենեցունց, ներումն խնդրեմ, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս յաւիտեան։

բ

Ի վեց հազարերորդի չորեքհարիւրերորդի, իննսներորդի եւ չորք թուի ելանելոյն Ագամա ի փառակենցաղ դրախտէն, եւ յելթն հարիւր քառասուն եւ երկու թուի հայկականս տումարի (1293), ի դիտապետութեան տեառն Սեվլաննոսի՝ գերելոյն յԵգիպտացւոց, եւ ի թագակալութեան Հեթմոյ որդւոյ Լեւոնի՝ առն բարեպաշտի եւ աստուածասիրի, Մովսէս մեղաւք մեռեալ ոգի կամեցայ հաւաքումն առնել համառաւտաբար մեկնութեանց սրբոյ Պատարագիս, զոր սուրբ հարքն Խոսրով Անձեւացեայ եպիսկոպոս եւ Ներսէս Տարսոնի յառաջագոյն ընդ երկար քննեալ էին, նաեւ զոր յայլոց սրբոց հարց եւս կարացաք բանագտակ՝ լինել՝ յանցնիւր տեղւոջ եդաք առ ի զբաւսանս մանգանց Սիոնի։ Եւ զայս ոչ թէ միայն յանձնէ կամ սիրով խիզախեցաք, այլ յորդորեալ առաւել յիմաստուն րաբունապետէն Յովհաննու, որ եւ ի սոյն ամի փոխեցաւ ի Քրիստոս, որոյ շնորհեսցէ Տէր Աստուած հանգիստ եւ ողորմութիւն։ Արդ, եթէ ոմանք հաճոյ թուեսցի՝ Տեառն շնորհ, եւ թէ ոչ՝ ի բունսն ընթասցի Մեկնութիւն եւ զմեզ անպարսաւս թողցէ, զի ըստ առն եւ զաւրութիւն իւր,

եւ իւրաքանչիւր ոք իւր վարձս առցէ ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ է աւրհնեալ ընդ Հաւր եւ Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

577

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7488

Գրիչ՝ Վարդան
Վայր՝ Վերին Վարագ

ա

Փառք անճառելի Սուրբ Երրորդութեանն՝ Հաւր և Որդւոյն և Հոգւոյն Սրբոյ, այնպիսի փառք, որպէս ինքն կամի և իւրն վայլելէ, որ ոչ լեզուաւ ճառի և ոչ մտաւք իմանի, երկնայնոց ի հրանիւթից կարգապետութեանցն, և ի ստորնայնոցս հողանիւթեայ գոյացութեանցս երկրպագութիւն, և փառք անլռելի ձայնի, այժմ և անդր քան զյաւիտեանս, որ տրամադրեաց զմատունս վերջացելոյ տակաւ ոգոյ Վարդանայ աննմանն մեղապարտի, հասանել ի գիծս վերջին փցնածին կածնաւ, նմա գոհութիւն յամենայնի իմովս ձայնիւ, ամէն։

Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս յամի Ջ-երրորդի Խ-երորդի յերկ-
206բ *րորդի յառաջեալ թու‖ականութեանս Հայոց (1293), յամս վերայդիտողութեան տեառն Ստեփանոսի Հայոց կաթողիկոսի, ի դրան հոյակապ և հռչակաւոր աստուածընկալ Սուրբ Նշանիս Վարագայ, յառաջնորդութեան սուրբ ուխտիս տեառն Պետրոսի վեհիմաստ հուպատի և Կարապետի խոհական գիտնականի, որ ընկալան զտկարութիւնս մեր, որոց տացցէ Տէր Աստուած անվրդով կենաւք կենցաղավարիլ ի կամս իւր, ամէն, ամէն։*

Գրեցաւ ի Վերին վանիս, ի դրան սուրբ և աստուածոնակ Նշանիս, ի յեղբայրութեան պատուական երկնակրաւն ծերունոյս Յակոբայ, և յայլ եղբարցս՝ Յովասափա, Յովսեփա և Մխիթարա, հրամանաւ և ծախիւք աստուածասէր, յոքներգնեան երշանիկ և կուսակրաւն քահանա Ղազարու։*

*Արդ, աղաչեմ լուսերամ հանդիպողդ սմայ տեսութեամբ կամ գաղափար դնելով, մանաւանդ թէ ձեւք զՔրիստոս Աստուած յիշել ողորմութեամբ իւրով և բժութեամբ զստացաղ սուրբ Աւետարանիս** ննջեցեալքն հանդերձ, ի գալստեան աւուրն ահաւորի։ Ու ծնողն իմ զԳորգնայ զհանգուցեալն, և զկենդանին, և զեղբարն։ Ու միայնակեացս Դավիթ, որ զթուղթս կոկեաց, և զԲումայ և զԴրիգոր փոխեալն առ քեզ, և զտապակալ գրողն, և անտես արայ ղանցանս մեր բարեխաւսութեամբ մաւր քո, և քեզ փառք յամենայն բերանոյ, ամէն։*

Ու զառաջնորդ սուրբ ուխտիս՝ զնախկին յիշեցեալն զտէր Պետրոս, որ բաղում բարութեանց առիթ եղև սուրբ ուխտիս, որ էհատ զհարկից

---

* «Եվ կուսակրաւն քահանայ Ղազարու» բառերը հետագայում են գրված։
** Ստացողի անունը գրելու համար տեղ է բաց թողնված։

պահանջումն անաւրինաց, և արար խաղաղութիւն մանկանց նոր Սիոնի, և պայծառութիւն սուրբ եկեղեցեացս, որոյ յիշատակս աւրհնութեամբ եղիցի ի Քրիստոս Յիսուս, ամէն։

Բ

61բ Փառք Սուրբ Երրորդութեանն յամենայն գոյից, ամէն, որ զաւրացոյց զտկարութիւնս իմ հասանել յաւարտումն սուրբ Աւետարանիս Մաթէոսի։ Նոյն Սուրբ Հոգին տացէ այլ սկսանել և կատարել, նմա գոհութիւն։

Ջստացաւղ սուրբ Աւետարանիս ե զգրող սորա և զծնաւղս և զեղբարս յիշեայ Քրիստոս Աստուած ողորմութեամբ քո և գթութեամբ, և թող զյանցանս նոցա ի յահաւոր գալստեան քո, ամէն։ Եւ զընթերցողացդ և զլսողացդ ամէն, ամէն։

Գ

29բ Աւրհնեալ Քրիստոս Աստուած։

Փառք ամենասուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտեանից, ամէն։ Ջստացաւղ և գրող սուրբ Աւետարանիս, և ծնողս նոցա, և զազգատոհմ նոցա, ե զմանուկս Դաւիթ, և զփոխեալն յաստեացս զԹուման, և զԳրիգոր կրաննաւոր, յիշեա Քրիստոս Աստուած ի գալստեան քում, ի յաւուրն համառաւտի զնոսա և զընթերցողս ողորմութեամբ քո։

Դ

160բ Ջստացաւղ սուրբ Աւետարանիս եւ զվարդան փցուն գրիչ յիշեայ Քրիստոս Աստուած և զմանուկս Դաւիթ, որ թուղթս կոկեաց, եւ զընթերցողսդ և զլսողս ողորմութեամբ քո և գթութեամբ ի յահեղ աւուրն ի քո գալստեանդ, ամէն, և թողութիւն արայ բաղում յանցանց մերոց և ծնողաց մերոյ, ամէն, և քեզ փառք Սուրբ Երրորդութիւն յամենայն գոյից... ամէն*։

578

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 6784

Ստացող՝ Թորոս արքայորդի
Վայր՝ Կիլիկիա

313բ Յիշատակարան է

Ի փառս Քրիստոսի Աստուծոյ յուսոյն մերոյ գրեցաւ Աւետարանս սուրբ, որ է պատմութիւն տնաւրէնութեան նորա՝ յիշանելոյն ի Հաւրէ, որ անմեկնելին է ի նմանէ, յաշխարհս հողեղենաց, որ զերկինս և զերկիր լնու, և աւետեաւք հրեշտակին յղացեալ ի Հոգւոյ Սրբոյ և ի Մարիամա կուսէ։ Եւ լռեալ ամս երեսուն, մկրտեալ ի Յորդանան ի Յովաննէ և

* Գիրը թե՛ բնագրում և թե՛ հիշատակարանում «ծ» գործածում է միայն մեծատառի դեպքում, մյուս բոլոր դեպքերում «ծ»-ի փոխարեն գրում է «է»։

յայտնեալ ի Հաւրէ Որդի իւր սիրելի, վկայութեամբ աղաւնակերպ երևմամբ Հոգւոյն Սրբոյ, և ապա ծանուցեալ աշխարհի աստուածագործ զարմանալի նշանաւք և կենդանարար վարդապետութեամբ և ի կատարումն տնաւրէնութեանն խաչաւարան փրկութեան, կամաւոր մահուանն,
314ա թաղմանն, և երեքաւերա յարութեանն մինչև ի համբառնալն առ Հայր և նստեալ ընդ աջմէ նորա։

Վասն որոյ և Աւետարան կոչեցաւ ի Հոգւոյն Սրբոյ անուն գրոցս, զի աւետեաց անչափ բարձրադունից է քարոզութիւն։ Եւ զինչ՞ են աւետիքն զորս յայտնի պարզ բանիւ, և զոր ի սմա թաքուցեալ ի թարգմանչացն ազդեցին մեզ ի ձեռն նորին Հոգւոյն Սրբոյ, որ խօսեցան չորս հոգեկիրքն՝ Մաթէոս, Մարկոս, Ղուկաս և Յոհաննէս, ազդեցին մեզ մեկնողորէն վարդապետութեամբ հարքն սուրբ, որ են վարդապետք եկեղեցւոյ սրբոյ Քրիստոսի։

Զորդւոյն Աստուծոյ մարդանալն, վասն զի ի ձեռն անարատ գառինն պատարագելոյ ի վերայ աստուածաբարձ փայտին աւրհնութեան, պա-
314բ տառեցաւ ձեռագիրն դատա||պարտութեանն նախնոյն մերոյ հաւր։ Բարձան ցաւոց և երկանց ծնունդն առաջնոյն մերոյ մաւր, զի ահա աւազանն առանց ցաւոց ծնանի զորդիս մարմնոյ և մեղաց, հոգևոր որդիս և արդարութեան։ Նա զի և աւերեցան դժոդք ի յևս հզաւրագունին իշանելն և կապել զկարծեցեալ հզաւրն, և յափշտակել զգանձ նորա, այսինքն զմարդկան յուսահատեալ հոգիսն, որով ընկալաք զհանապազ քաւութիւնն արեամբն մշտնջենաւոր և վշտակից և բարեխաւս անմեղ քահայապետին մերոյ աւրըստաւրէ յիշատակաւ կամաւոր մահուանն նորա զպարգևան Աստուծոյ, որ է Հոգին Սուրբ, ի ձեռն որոյ յայտնեցան մեզ
315ա խորհուրդքն Քրիստոսի,||զխոստումն անճառ բարեացն, թէ Ուր եմն եմ, և պաշտաւնեայն իմ եղիցի, և թէ նման նմա լինելոց եմք։

Զայս դիտացեալ ի յուսուցչաց մերոց սրբոց վարդապետաց զբարեպաշտ և զաստուածասէր Թորոս, ի շնորհացն Աստուծոյ որդի արքային Հայոց բարեպաշտին Լևոնի Երկրորդի՝ ի Քրիստոս Աստուած հանգուցելոյ, որ է որդի գնացելոյն առ Աստուած քրիստոսասիրին Հեթմոյ արքայի Առաջնոյ, որ և նա որդի տեառն Կոստանդեայ՝ շինողի երկրիս Կիլիկեցւոց և սեպհականողի զերկիրս զայս Հայկազեան տեռից, որոց ողորմեսցի Քրիստոս և հանգուսցէ զնոսա ընդ սուրբս իւր։ Ստացա զաստուածախաւս Աւետարանս չորեցունց աւետարանչացն, որ ոսկին զաւրինա-
315բ կին ճշմարտութիւն, այսինքն||զքաւութիւ կենդանատեսակացն աթոռոյն անտեղոյն և անաշխատ բնութեանն Աստուծոյ հանգստեան, ըստ տեսլեան հրաշատես մարգարէին Եզեկիէլի կամ ըստ չորից գետոցն պատմութեան Մովսէսի, որ միշտ առագանեն զճշմարիտ դրախտն Աստուծոյ՝ զեկեղեցի սուրբ, բուսուցանել միշտ ի սմա տունկս դանազանս։ Եւ դարձեալ զի չորեքնութեա արարածք հանդերձ թագաւորաւն իւրեանց՝ մարդկային բնութեամբս, ապականեալ ի ձեռն յանցանացն նորոգեալ եղև չորք աւետարանչացն հնչմամբն ընդ չորեքծագեան տիեզերս զբանն կենաց, ի վայելումն ինձ անարժան ծառայիս Քրիստոսի և ծառայից նո-
316ա րա, և շքեղազարդ եռամեա պատանե||կի իմոյ Լեվոնի, որ մնացեալ որբ ի մաւրէն իւրմէ, զի զկնի ծնանելոյն զնա, փոքր ինչ աւուրք կացեալ,

գնաց առ Քրիստոս, որում ողորմեսցի Տէր Աստուած, և յիշատակ ծնողաց մերոց՝ Վանի արքայի ամենայն Հայոց, և դժխոյին իւրոյ Կեռանի, և ամենայն զարմից մերոց։

Վասն որոյ աղաչեմ զամենայն հաւատացեալս Քրիստոսի, որ ոք կարդասցէ և կամ լուիցէ զրանք յիշատակարանիս, խնդրեսցեն մեզ ողորմութիւն յամենողորմածէն Աստուծոյ, և որով աւրինակաւ խնդրէք մեզ յԱստուծոյ, և ձեզ նոյնպէս եղիցի ի Քրիստոսէ։ Գրեցաւ ի թուաբերութեանս Հայկազեան տոմարի ՉԽԲ (1293), ի թագաւորութեանն հարազատ և անդրանիկ եղբաւր մերոյ Հեթմոյ քրիստոսասիրի, և ի հայրապե-
316բ տութեան տեառն Սահիանոսի, որ է ի գերու||թիւն Յեգիպտոս վասն մեղաց մերոց ի Կլայիս առմանէ ի վէր, և կատարեցաւ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

579

ԺՈՂՈՎԱԾՈ

Երևան 5613 (1608 թ.)

Գրիչ՝ Հեթում պատմիչ
Վայր՝ Կոռիկոս[1]

349ա Արդ՝ յայսմ ժամանակի ցաւէր աշխարհ իբրև զծեր և երկնէր որպէս զմայր և ծըփէր որպէս զծով, և առաւել ևս ազգք քրիստոնէից և եկեղեցի Քրիստոսի ամբոխեալ խռովէր իբրև ի հողմոց շնչմանէ յանօրինացն յարուցմանէ. որով և երկիրս Հայոց որ ի նահանգիս Կիլիկոյ, որում տիրէին քրիստոսապսակ թագաւորք սերեալք ի Յոօբիենց զարմէ, և իշխանք գաւառատէրք ի նոցունց աղգակցութենէ, սաստիկ և անհնարին նեղութեամբ վշտանայր Եգիպտական ազդէն, ի գազանամիտ և գոռոզաբարու սուլտանացն, որք տիրէին անդ յաւուրս մերոյ ժամանակաց, որք և մաշեալ սպառեցին և աւերեալ չնչեցին զծովեզերեա աշխարհն յորում բնակեալ էին արիական ազգն Ֆռանգաց։ Զմեծն Անտիոք զզարմանահրաշն և զգեղեցկաշէնն, որ ընդ տէրութեամբ բրնձին, զոր կործանեալ ի հիմանց, աւերեաց Ֆնտուխաար սուլտանն, որ անուանէր Մելիք Տահր, ի թուին ՉԺԷ (1268), յաւուր շաբաթու, ի ծաղկազարդին։ Եւ
349բ զեռապարապեանն Տրապօլիս,||զոր առ Ալֆի սուլտանն Մելիք Մնսուր, ի թուին ՉԼՀ (1289)։ Եւ զփառաւորն Պաղեմիդէ, որ նա ինքն Ափայ, որ էր տուն իշխանութեան Դամփլուն և Ոսպէթալին և այլոց անուանաւոր իշխանաց, շինեալ բարձրագոյն պրճօք և հաստահիմն պարսպօք և գեղեցկայարմար տաճարօք, զոր կործանեալ տապալեաց անօրէն որդին Ալֆէ Մելիք Աշրաֆն, ի թուին ՉԽ (1291) ի մայիս ԺՀ (18)։

Իր և սաստկագոյն քան զայլ գոռոզնն գոռայր, իբրև զամպ կարկրտածին ի վերայ մերոյ աշխարհիս, և ծանրացոյց առաւել սաստկութեամբ զպահանջումն հարկին։ Եւ զեզեբային գաւառն մեր բոլոր սահմանօք ի ձեռն սրիկայից արանց արաբացւոց և թուրքաց գերէր միշտ և աւերէր և անբնակ առնէր։ Եւ ըստ Բաբելացւոց բռնաւորին, ձևացեալ երկնա-

հաս ծառոյն, որ այնքան բարձրացեալ նա՝ մինչ յերկնանմանն Երուսաղէմ քաղաքն Աստուծոյ հասեալ, առ զնա և գերեաց զսպասս սրբութեան տաճարին Աստուծոյ։

Նմանապէս և սա այնքան ներողութեամբն Աստուծոյ և յաճախու-
350ա թեամբ մերոցն մեղաց զօրացեալ,‖մինչ զի առ զաթոռն հայրապետութեանն Հայոց՝ զկայն Հռոմայական, յորում էր և աջ մերոյ Սուրբ Լուսաւորչին, և առաքելական և մարտիրոսական նշխարք, և սրբութիւնք անթիւք և կտակարանք աստուածային գրոց գանձեալ բազմութեամբ, զոր և անհուն զօրօք և բազմաձեռն պատերազմողօք, և նորագործ մեքենայից հնարաւորութեամբ պատեալ պաշարեաց, սղարեալ բաբանօք ի վերուստ և քարափոր ծակամտօք՝ նաղմելով նեղեալ ի ներքուստ, առ զաստուածաշէնն զայն և զհրաշալի դղեակն վայելչագեղ, ի թուին ՉԽԱ (1292) յունիս ԻՐ (28)։ Գերեաց զտէրն և զհայրն մեր հոգևոր, զկաթողիկոսն ամենայն Հայոց զտէր Ստեփաննոս, եպիսկոպոսօք և վարդապետօք, քահանայիւք և անհարմար քրիստոնէիւք, և սպառեալ զազգն քրիստոնէից։ Եւ բնակեցոյց ի հայրապետանոցին և ի գեղեցկապաճոյճ տաճարին զուրացողսն Քրիստոսի։ Եւ եղև այն սուգ մեծ ամենայն եկեղեցեաց, մանաւանդ ազգին Հայոց, որք կրեցին զկսկիծն ողորմելի և զվշտէն աշխարհանաց։

350բ Արդ՝ զի յայսմ ժամանակի այսպիսի նեղութիւնք ժամանեալ հասեալ ումէր զեկեղեցիս Քրիստոսի և զի որպէս ասացաք յառաջ քան զայս, ՉԼՀ (1289) թուին եղև աւերումն Տաւպօլսոյ յԱլֆէ, եւ վասն այսորիկ յաճախեաց ահ և երկեղ ի վերայ ամենայն քաղաքաց ծուխեզերեայց։ Վասն որոյ և ես Հեթում, մտախոհ եղեալ գտանել տեղի ամրոցի և ապաստանի, զգուշանալ յանօրինացն որոյ մերոցն քրիստոնէից, և տենչացեալ ցանկացա գեղեցկագիր այսմ կղզոյս, որ հանդէպ մերոյ աստուածապահ ամրոցիս։ Եւ յարմարեալ շինեցի զսա բազում ծախիւք և մեծ փափագանօք, և վասն բնակչացն մխիթարութեան շինեցի տաճար Աստուծոյ և տուն աղօթից՝ զսուրբ եկեղեցիս, որ ի մէջ գեղեցկաշէն ամրոցի բերդիս։ Յորում և ի պէտս լուսաւորութեան հոգւոց, որպէս ծառն կենաց ի մէջ դրախտին, և Աւետարանս Քրիստոսի պիտոյ էր այսմ դրախտի եկեղեցւոյ, զոր և ետու գրել ի լուսաւորութիւն հոգւոց ի տաճարս այս աղօթողաց և յիշատակ բարեաց ինձ և իմոցն յապագայս ժամանակաց և
351ա փրկութիւն հոգւոյ իմոյ ի հան‖դերձեալ կեանսն յարդարագատ ահեղ աթենին Քրիստոսի և եղև աւարտումն գրութեան սորա ի թուին ՉԽԲ (1293) ի ժամանակի յորում ումէր զաթոռ թագաւորութեան երկրիս Հայոց օրինապահ և առաքինասէր և եկեղեցազարդ պարոնն ամենայն Հայոց Հեթում որդի Լեւոնի բարեպաշտի, որ մխիթարութիւն էր մեզ ի վշտատարեր ժամանակիս, սրբասնունդ եղբարք իւրով։

Արդ՝ ես Հեթում մեղուցեալ ծառա Քրիստոսի, աղաչեմ և աղերսեմ և պաղատիմ սիրովն Քրիստոսի առ սուրբ եկեղեցիդ, յիշել զիս բարեմիտ կամօք, և զսիրելի որդեակն իմ զանդրանիկն Օշին և զԿոստանդին և զԼեւոն, և զքոյր սոցա զԸռիքա, և զամուսին իմ զՋապլուն, և ողորմութիւն հայցել ի Քրիստոսէ մեզ և թողութիւն յանցանաց մեզ և ծնօղաց

մերոց և եղբարց և համայնց զարմից, զի և ձեզ ողորմեսցի ամենառատ պարգևաց տուօղն Աստուած, և նմա փառք յամենայն արարածոց իւրոց։

580

ՄԱՇՏՈՑ

Վենետիկ 326, Մարգիսյան և Սարգսյան, ցուցակ Գ, էջ 108—110

Գրիչ՝ Պարսումոյ
Վայր՝ Հաւհաւ

156բ Փառք փրկչին և յիշատակ մեղուցեալ գրչիս, սկզբանցն արարիչ, եւ կատարած ամենայն յաւիտեանցն փառացն Հաւր ճառագայթ իմաստութիւնն Յիսուս, ըստ աստուածային անհաս գիտութեանն խոնարհել յերկնից ելից զեկեղեցի երկնային գիտութեամբ։ Վասն զի նիւթական եւ մարմնաւոր գիտութեամբ ոչ կարողանային մարդիկ կեցուցանել զանձինս, յայն սակս երևեցաւ լոյսն ճշմարիտ խաւարելոց անձանց եւ աղաձայն արար հովիւն հոգեւոր հաստիս։ Վասն այնորիկ դոհ տուեալ բանաւոր ոչխարացն, առ ի համեմեալ զանհամութիւնս իւրեանց աղիւն կենդանականաւ, եզ զի փակել էին դրունք ողորմութեան ընդդէմ արարածոց, եւ ծածկեալ կային յոլովք եւ յոքունք, մարգարէք, նահապետք, առաքեալք եւ դասք սրբոց հայրապետաց և մարտիրոսաց, ըստ ասելոյն, եթէ Ծադեաց լոյս խաւարելոցս, ուղ[ղ]ել զոտս մեր ի ճանապարհս խաղաղութեան եւ յայտնեցաւ հեթանոսաց լոյս, եւ Իսրայելի փառք կոչէր Սիմէոն, վասն զի այն ի լոյս առել եմ, ծնաւ առանց ցաւոց մանուկն յարգանգէ աւազանին որդիս Սիոնի եւ զաւակ Երուսաղէմի, ոչ ուխտիւ ապականութեամբ, այլ փչմամբ կենդանականաւ եւ հոգով աստուածայնով, յորում եւ ո[ւ]ռճացեալ դասք հաւատացելոց, աճեցին յանհունս եւ յանթիւս, մի զմիմիամբք ելանելով ի գործս բարեաց յոգնապատիւ վաստակոյ՝ մտանեալ ի հանգիստն յաւիտեանից։

Իսկ ես՝ մեղուցեալս եւ մեղաւք լցեալս քան զհամայն որդիս Ադամայ, անպիտանս Պարսումոյ անպիտանս գծի սակաւ գիծս զայս լուսաւոր յաղարկաւոր յաստեացս, սրբոյ քահանայից եւ երշանիկ կրաւնաւորաց եւ թագազլուխ հայրապետաց, ի թուականիս Հայոց ՉԽԲ (1293)։ Արդ, որք ընթեռնոյք եւ կամ ընդաւ[ր]հնակէք՝ յիշման արժանի արարէք զմեղուցեալ գրաւղս եւ հայր իմ եւ զայլ ննշեցեալսն, եւ ո[ր]ք ետուն զաւրինակն զԿիրակոս սուրբասէր քահանայ եւ զիրսն։ Յիշեցէք եւ զեղբարս իմ զՅոհաննէս, եւ զՍիոն, եւ զԿարապետ, եւ զՇահերն, եւ որպէս յիշէք եւ դուք յիշել լիջիք ի Տէր։

Գրեցի զսա ի գեղաքաղաքիս Հաւ[ա]ւ, ընդ հով[ան]եւ Սուրբ Աստուածածնին։ Արդ, որք աւկտիք ի սմանէ՝ զմեղապարտ գրիչս յիշեցէք, եւ զծնաւղսն իմ, եւ զեղբայրս իմ, եւ մեղաց թողութիւն հայցէք, եւ խոշորութեան գրիս մի մեղադ[ր]էք, զի այդ էր իմ ջանն։ Եւ որ յիշէ եւ մեղաց թողութիւն խնդրէ, նա Քրիստոս, որ ամենեցուն արարիչն՝ իւր

առնէ թողութիւն, եւ Քրիստոսի բարերարին եւ մարդասիրին փառք, պատիւ, այժմ և յաւիտեանս, ամէն։

Բ

Կազմող՝ Դաւիթ

168ա Ընդ նմին յիշեցէք յաղաւթս զԴաւիթ կազմող գրոցս, եւ Աստուած զձեղ յիշէ իւր ազատ բարիսն, ամէն։

Գ

2ա ՁԴաւիթ քահանայ յիշեայ յաղաւթս եղբայր Պարսամէն*։

581

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Ակինյան, Յուցակ Նիկոսիո, էջ 81

Վայր՝ Մեծայր

ա

294բ Փառք ամենասուրբ Երրորդութեանն՝ Հաւր եւ Որդւոյ եւ սուրբ Հոգւոյն։ Ի թուականութեանս Հայոց Մեծաց ՁԽԲ (1293), ի թագաւորութեանն Հայոց Հեթմոյ ճգնազգեստի եւ աստուածասիրի, և ի հայրապետութեանն խոստովանող հայրապետին տեառն Սահփանձոսի, որ ըստ մաքրոյն յորովայնէ Երեմիայի՝ վարեցաւ ի գերութիւն զկնի հաւտին, ի յերկիրս Կիլիկեցւոց, մերձ ի մեծ եւ ի հռչակաւոր մայրաքաղաքս Սիս, յաստուածաբնակ ուխտս Մեծայր, առ ոտս ամենաւրհնեալ արարչընգալ Տիրուհոյ եւ Աստուածածնի ///

Բ

313ա Փառք քեզ կոնեայ քող արեգակումն արարիչ կիսագնդի եւ Դեմետրի, ամէն։

582

ԱԻԵՏԱՐԱՆ

Սանչյան, Յուցակ Ամերիկայի, էջ 627—628

Գրիչ՝ Յուսէփ

320բ Փառք Սուրբ Երրորդութեանն, Հաւր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգւոյն. ամէն։ Գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ սուտանուն քահանայիս Յուսէփա, ի խնդիր Կոստանդին քահանայի։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որ ընթեռնուք զսուրբ Աւետ[արանս], ի մեղաց թողութիւն խնդրեցէք ստացողի սորա՝ Կոստանդին քահանայի եւ ծնողաց իւրոց, ընդ նմին եւ

* Գրված է կիսախորանի մեջ։

զեղբայրն իւր, եւ զիս՝ զՅուսէփ, եւ զհանգուցեալ ծնողսն իմ, եւ զկենդանիս, եւ Տէր ձեզ վարձս բարիս տացէ։

Գրեցաւ սուրբ Աւետ[արանս] ի թվականին ՂՃԽՌ (1293)։

Ընդ նոսին եւ զԱբրահամ նաւտարն յիշեցէք, որ բաղում աշխատեցաւ վասն սորա։

583

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ

Երևան 1479

Գրիչ
Վայր՝ Ոհանու վանք

234ա Յիշատակարան սուրբ գրոցս։

Որք աստուածային փառացն են ցանկացեալ և հետևեալ նորին ճանապարհաց առ ի վերին դիտաւորութեանն պայման, զոր խոստացաւ անտուտն Աստուած ամենայն կամարարաց և սիրողաց իւրոց, և պատմողաց ամենասուրբ պատուիրանաց և մարդեղութեան և սքանչելագործութեան և չարչարանաց և մահուան և յարութեան աստուածորդւոյն և վերանալոյն առ հայր, և միւս անգամ գալստեանն և ամենիքեան վասն
234բ յուսոյն,||որ ի նա չարչարեալք և ճգնութեամբ բազմաւ նահատակեալք, ևս առաւել Սուրբ Լուսաւորիչս Հա[յ]աստան աշխարհիս եւ ամենայն քրիստոնէից, և ամենայն սուրբ կուսանաց, որ դիպեցան և ի սուրբ մատեանս շարադասեալք կարգեցան։

Որ և քաջ քարտուղարս Ագաթանգեղոս, հրամանաւ խնդրուածովք սուրբ արքային Տրդատա քաջի և զարւոյն, յանձին կալեալ ոճով պատմեաց մեզ ըստ իւրում հոգեբից իմաստութեանն՝ տուեցելոյ ի շնորհաց պարգևողին՝ ի լուսաւորութիւն հաւատացելոց և ի փառս Քրիստոսի։

Արդ, պատուական հայրապետին տեառն Համազասպ յուսով բարեբարին Աստուծոյ Տեառն Յիսուսի նաեցեալ ի սէր վկային և ի համբերութիւն սուրբ հարցս մերոյ Գրիգորի Լուսաւորչիս, եւ դրեալ զսուրբ մատեանս կոչեցեալ Ագաթանկեղոս, վասն յիշատակի և միջնորդութեանց յաւուր ահ[ա]յոր և մեծ ատենի, անդ ուր բանքն սպառին և գործքն թագաւորեն։ Եւ ընծայեցոյց զսա ի Սուրբ Կարապետն, ի վանս Յոհաննու ի լուսաւորութիւն հաւատացելոց, և ի վարժումն մանկանց եկեղեցւոյ, և ի փառս անմահ բանին Աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեան։

Ի թվին ՉԽՌ (1293)։

584

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՐԱԳԻ

Երևան 4515, Փիրղալեմյան, նշխարք Բ, էջ 54

Գրիչ՝ Յոհաննէս

Ի ՉԽՌ (1293) թուի Հայկականս տումարի, ի դիտապետութեան տեառն Ստեփաննոսի գերելոյն Եգիպտացւոց և ի թագակալութեան Հեր-

մոյ որդւոյ Լեռնի բարեպաշտի և աստուածասիրի... գրեցաւ գիրքս ձեռամբ Յոհաննիսի:

585

ԱԻԵՏԱՐԱՆ

Երուսաղեմ 2612

243 Ի թուականութեանս Հայկազեանս տոմարի ՉԽԲ (1293) աւարտեալ նղև ի սուրբ անապատս Գոնէր, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և Սուրբ Սիոնի և կենսակիր սուրբ նշանացս և այլ համահաւաք սրբոցս՝ ի պիղծ և ի դառն ժամանակիս, զի անիծեալ ազգն Հուգարու վատնեալ նեղէ զազգս քրիստոնէից, և ի յայսմ ամի առաւ մեծ և անարիկ բերդն Կլայն, աթոռ Սրբոյն Գրիգորի և այլ սուրբ հայրապետացն նախնեաց, Սրբոյն Գրիգորի և զայլ համահաւաքեալ սրբոց նշխարանց առ ոտն հարկանէին, և զերջանիկ հայրապետն մեր զտեր Սահակն գերի վարեցին՝ վարդապետօք, եպիսկոպոսօք, քահանայօք, սարկաւագօք, զոմանս տարեալ և զոմանս ի տուր սուսերի մաշեալ վասն բազում մեղաց մերոց:

Էր ի թագաւորութեանս բարեպաշտի Հեթմոյ պարոնի ամենայն Հայոց:

Արդ և դուք, ո՛վ սուրբ մանկունք եկեղեցւոյ... բազկատարած պաղատանաւք հայցելով առ Աստուած յիշեսցիք զստացող սուրբ Աւետարանիս զԳրիգոր կուսակրաւն սարկաւագ ծնողաւք և եղբարբք առաշի Քրիստոսի և յիշողացդ ողորմեսցի:

Եւս առաւել զծիրանածին որդիսն Լեռնի թագաւորի զԱշինն և զԱլինախն և զմայր Քրիստինէն ողորմութեան քում արժանի արայ դասել ընդ սուրբս քո, որ աւգնեցին ի սուրբ Աւետարանս: Եւ ես մեղուցեալ գրիչս Վահրամ հայցեմ ի ձենջ, ո՛վ սուրբ տեարք իմ, մեղաց իմոց և ծնողացն իմ և եղբարց և ընտանեաց և քերց թողութիւն խնդրեցէք ի բոլորից Տեառնէն և ամենայն յիշողացդ ողորմեսցի, և վարդապետացն իմ և ուսուցչացն խնդրել մեղաց թողութիւն և Բասլի փակակալի, որ զաւրինակն երետ:

Եւս առաւել երջանիկ տեառն Յոհաննեսի՝ եղբաւր արքային Հայոց Հեթմոյ, ուսուցչին մերոյ և քահանա ձեռնադրողին թողեք Տէր զյանցանս իւր, ամէն: Եւ խոշորութեան գրոյս մի մեղադրէք, զի դժուարին սառ[ն]ամանիք էր, թանաքն և մատունքն պաղ էր, և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն:

ՁԳրիգոր քահանայ և զՄահեփանոս քահանայ ըղորդողք սուրբ Աւետարանիս յիշեցէք ի Քրիստոս և Աստուած՝ զձեզ, ամէն:

586

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 5647

Գրիչ՝ Վարդան
Վայր՝ Անաւարզա

161բ Փառք և պատիւ և երկրպագութիւն ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօրից կատարեալ անձնաւորութեանցն և միոյ բնութեան, Հաւր և Որդոյ և Սուրբ Հոգւոյն՝ արարչին բնասից և գթով խնամողին նովին եղելոցս, որ պատրեալսն մեղաւք ի բանսարկուէն և ղարտաքսեալն ի դրախտէն զազգ մարդկան, որ զհայրենի պարդևսն վատնեաց և զպատկերնտ իրատիպ աղտեղեաց, գթութեամբ և մարդասիրութեամբ շարժեալ և զգիւտ և զփրկութիւն բնութեանս կամեցեալ առաքեաց զՈրդին իւր միածին, որով եստեղծ զմարդն առաջին, որ առ մարմին ի սուրբ կուսէն և զմեզ մաքրեաց ի հնոյ ախտէն, աւազանի ջուր մեզ շնորհեաց և հրով Հոգւոյն զհոգիս մաքրեաց, զխավարեալքս մեղաւք լուսաւորեաց, և զգլորեալքս վերստին կանգնեաց, զհիւանդացեալքս՝ ողջացոյց և զցաւս վերացոյց, զմոլորեալքս դարձոյց, զմահացեալսն կենդանացոյց, զմեղաւորաց մեղս շնորհեաց, յարքայութիւնն հրաւիրեաց, և զամենայն տուրս բարեաց սուրբ Աւետարանս պարունակեաց։ Սա է կենդանութիւն հոգւոց մերոց և ամենայն հաւատացելոց, սա է հացն կենաց իջեալ յերկնից, որ կեանս
162ա տայ մարդկան, սովաւ ազատեցաք ի մեղացն և ի սատանայէ‖սովաւ լուսաւորեցաք անստուեր լուսաւն, սովաւ ի դժոխոցն զերծաք, սովաւ ի բանդէ և ի կապանաց մահու արձակեցաք, սովաւ զյոյս յարութեան ուսաք և որդիք արքայութեան եղաք, սովաւ զսէր և ողորմութիւն ուսաք, որով աշակերտք Քրիստոսի կոչիմք, և որդիք երկնաւոր Հաւրն յորջորջիմք։ Սովաւ առաքեալքն կրաւնաւորեցան և աթոռակից Որդոյն Աստուծոյ եղան, սովաւ մարտիրոսքն նահատակեցան և անթառամ պսակացն հաղորդեցան։ Սովաւ կուսանքն զարդարեցան և յա[ռ]ագաստն լուսոյ ընդ փեսային երկնաւորի մտան։ Սովաւ հայրապետքն ղուղ[ղ]ափառ հաւատն ուսան և կաթողիկէ եկեղեցոյ աւանդեցին և առաջի Սուրբ Երրորդութեանն ընդ սերովբեան դասեցան։ Սովաւ ճգնաւորք ժուժկալեցին զհրեշտակակրաւն վարս յինքեան բերին։ Սա է հանգիստ աշխատելոց և ճանապարհ մոլորելոց։ Սա է նաւահանգիստ նաւակոծելոց և ապաքինիչ վտանգելոց։ Վասն որոյ աւրհնեմք և փառաւորենք և երկիրպագանեմք շնորհողի մեզ զայս պարգև, որ ոչ ըստ մերում արժանաւորութեան արար մեզ զայս ամենայն, այլ ըստ իւրում անբաւ ողորմութեանն, որով միշտ և հանապազ աւրհնեմք և փառաւորեմք զհամապատիւ և զերկրպագելի անուն Սուրբ Երրորդութեան՝ Հաւր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն այժմ և հանապազ, ամէն։

162բ Նս առաւել վերջացեալս յամենայն‖բարեաց սուտանուն կրա[նա]ւոր և անարժան քահանա և տրուպ սպասաւորաց բանի, որ մեծ է անունըս քան զգործս, վարդապետ Վարդան, գոհութիւն մատուցանեմ ամենակարողին Աստուծոյ, որ ետ կարողութիւն տկարացելոյ բնութեանս

լանկ և յաւարտ հանել զգրութիւն սուրբ և ցանկալի Աւետարանիս։ Նա և աղաչեմք զամենեսեան, որ հանդիպիք սուրբ ե աստուածային Աւետարանիս ի յընթեռնուլ կամ յաւրինակել, անմեղադիր լինել խոշորութեան և սղալանաց գրիս, վասն զի կար մեր այսչափ էր։ Նա և դարձեալ աղաչեմ, զի մեղաց թողութիւն խնդրէք յԱստուծոյ ինձ և իմոցն կենդանեաց և ննջեցելոց, և ամենայն երախտաւորացն և աշխատողացն ի պէտս մեր, և ինքն Աստուած Հայր և Որդի և Սուրբ Հոգին, որ առատն է ի տուրս պարգևաց, զանանցանելի և զանաչառ բարեխն շնորհեսցէ յիշողացդ զմեզ ի բարին, և յիշելոցս և յիշողացդ ողորմեսցի Քրիստոս Աստուած աստ և ի հանդերձելումն, և արժանի արասցէ երանական ձայնին լսելոց, եթէ եկայք աւրհնեալք Հաւր իմոյ, ժառանգեցէք զարքայութիւն, որում փառք և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Գրեցաւ սուրբ Աւետարանս յաստուածապահ դղեակս Անա[ւ]արզոյ, ընդ հովանեաւ հռչակաւոր և ցանկալի պատկերի տիրամաւր Աս-
163ա տուածածին, յառաչնորդութիւն||սրբազան արքեպիսկոպոսին Գրիգորի յոյժ ղորաւոր բանիւ և արդեամբ, ի պէտս սպասաւորութեան սրբոյն եկեղեցոյ, ի պարոնութեան Հայոց քրիստոսասէր Հեթմոյ և յոյժ բարեպաշտին, որդոյ մեծի արքային Լևոնի։

Յայսմ ամի ոչ ոմեր եկեղեցին Հայոց առաջնորդ և հովիւ, որ դարմանէր և սնուցանէր, այլ էին իբրև զոչխարս ցրուեալս, որում ոչ իցէ հովիւ, վասն զի կաթողիկոսն Հայոց մատնեցաւ Իսմայելացոց, ի ձեռն ծովացեալ մեղաց մերոց։ Գրեցաւ ի թուին Հայոց ի ՉԽԲ (1293), ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

587

ԱԽԵՏԱՐԱՆ

Երևան 5784

Գրիչ՝ Ստեփաննոս
Վայր՝ Սկեռայ վանք

ա

354բ Շնորհք և գոհութիւն և փառաւորութիւն, երկրպագութիւն մարդասէր և բարերար Երրորդութեանն և մի աստուածութեանն՝ Հաւր և Որդոյն և Հոգւոյն Սրբոյ յամենայն գոյից, յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Վասն զի ինքն գերազանց բարի գոլով արար զմարդն բարի բնութեամբ, որ թեպէտ ի խաբից չարին սողոսկեալ եղև ի պատուիրանէն Աստուծոյ և սխալեաց յընտրութենէ էապէս բարւոյն, այլ ոչ կորոյս զբաղձեալն բարւոյ, զի և սխալեցն իսկ յոստով բարւոյ էր, որ և այնքան վայելեաց ի գութ արարչին, մինչ զի յոյժ բազում աւրինակաւք առատացաւ լնոյլ զբաղձանս բարւոյն։ Այսու բաղձանաւք զարթուցեալ պատուա-
355ա կան||և անիմաստ քահանայ, ումն վանական սրբասէր ի սուրբ ուխտէն Արբայկաղնւոյ՝ Յոճաննէս անուն, կամեցաւ ստանալ զԱւետարանս սուրբ ի յիշատակ և ի յոյս բարեաց և ի լրումն քրիստոսասէր ըղձից իւ-

րոց։ Այլ մինչ դեռ զմաղաղաթս ևեթ պատրաստեաց, ժամանեաց նմա
վախճան մարմնոյ և գնալոյ առ Աստուած։ Իսկ ըստ հոգւոյ և մարմնոյ
հարազատք նորին և սննդակիցքն համակարգք՝ Ստեփաննոս փիլիսո-
փայ և Գրիգոր քահանայք, խորհուրդ առին լնուլ զառաջարկեալն ի Յո-
հաննէ եղբաւրէ իւրեանց։ Առեալ զնիւթն պատրաստեալ յեղբաւրէն, եկին
ի հռչակաւոր ուխտն Սկևռայ, դի ի ձեռն գրչացն, որ անդ՝ կատարեսցեն
355բ զփափաքն||իւրեանց գրութեամբ սուրբ Աւետարանիս։

Այլ ընդ հասանելն հոցա, յետ սակաւ աւուրց և Ստեփաննոս հետևե-
ցաւ զկնի նախագնացելոյն Յոհաննէսի, և աւանդեաց Գրիգորի չթողուլ
անկատար զըղձալին իւրեանց։ Իսկ ապա Գրիգորոյ թախանձեալ զիմ
անարժանութիւնս զՍտեփաննոսի գրչի, և իմ յանձին կալեալ շնորհաւքն
Աստուծոյ յանկ հանի զսուրբ և զաստուածաւանդ Աւետարանս, ըստ տկար
չափոյ ծերութեանս ղառանցեալ տիոց և պակասեալ ի պատշաճ պիտոյից
այսր արուեստի, այսքան կարացի լնուլ զտենչանս վախճանելոցն ի Քրիս-
տոս Յոհաննիսի և Ստեփանոսի, և կենդանւոյ բարեաց յիշատակաց նո-
ցունց արժանաւոր քահանային Գրիգորի, և հարազատ եղբաւրն նորին
356ա միւս քահանային Գրիգորի և դեռաբոյս որդւոց նո||րա Սաեփաննոսի,
զի լիցի սա յիշատակ բարի և բարեխաւս առ Քրիստոս ննջեցելոցն այ-
նոցիկ և կենդանի զարմից նոցին, մանաւանդ Գրիգորի, որ գրելն ետ
զսա, և հաւրեղբարց նոցին քահանայիցն Թադէոսի և Մեծերիցու, ևս և
բնաւ արեան մերձաւորաց իւրոց։ Եւ ինձ տառապեալ գրչիս Ստեփաննո-
սի և իմոցն յիշատակ բարի։

Արդ, ուր և յաջողեսցէ Տէր աւանդել զսա ի ժառանգութիւն՝ մաղ-
թանք ի ստացողացն և ի գրչէս ընկալեցին ի բարիս յիշատակել ի վե-
րոյ դրեալս ի սմա, զի և ինքեանք արժանասցին յիշել յողորմութիւն
Աստուծոյ, ամէն։

Գրեցաւ ի սուրբ ուխտս Սկևռայ, ընդ հովանեաւ աստուածընկալ
սրբութեանցս, ի մեծ թուիս ՉԽԲ (1293), յորում վարէր զարքայական
256բ տէրութիւնն աշխարհիս Կիլիկեցւոց աստուածա||սէր Հեթում, որդի Լե-
վոնի՝ որդւոյ Հեթմոյ, որոց ժամանեսցէ ագնութիւնն Աստուծոյ, ան-
շէջ մնալ ճրագ ի տանն Ռովբինեանց, ի փառս Աստուծոյ, որ է աւրհնեալ
յաւիտեանս, ամէն։

Նկարիչ՝ Սիոն

278բ Զյետին գծող ցանկիցս և ընկարող սուրբ աւետարանչացն զՍիոն
նւաստ քահանա, աղաչեմ յիշել ի սրբազան աղաւթս ձեր ամենայն վա-
յելողքդ դորա*։ ՌՌ ԺԺ ՆՄ ՅԾ**։

---

* Ինչպես հավաստում է Սիոնը, ինքը նկարել է ավետարանիչների նկարները, նրանց համար ազատ թողած էջերում և գրել ցանկերը։ Իսկ երբ այդ բաց տեղում ցանկն է գրել, ավետարանիչի համար նոր թերթ է ավելացրել։ Խորանները, կիսախորանները, լուսանցազարդերը և զարդագրերը այլ նկարչի գործ են։

** Ծածկագրով գրված է «Սիոն»։

588

ԱԻԵՏԱՐԱՆ

Քոսյան, Յուցակ Արծնեան վարժարանի, էջ 115—116

Գրիչ՝ Աստուածատուր
Վայր՝ Այրիձորու վանք

Ի թուականութեանս... կենսաբեր մարմնաւոր գալստեան Որդոյն Աստուծոյ ՌՄՂԷ (1295) եւ Հայոց թուականին ՉԽԲ (1293), գրեցաւ գերարփիս՝ այս գերագունդ, գերագունակ, գերալուր, եւ գերազանց, գերակատար, գերունակ իմաստիւք հոգւոյն երգեալ զգուեստ երրորդութեանն, որ տա աւետիս աղամաեան տոհմիս, զՀոգւոյն Սրբոյ շնորհաբաշխութիւն ի մեզ բարբառեալ ի բերանս հոգեկիր եւ քրիստոսազգեց արանցն քառաբուխ վտակացան Մաթոսի, Մարկոսի, Ղուկա եւ Յոհաննու, պսակ ի գլուխ ոմնելով զլուսոյ ծաղիկն հաւատոյ Քրիստոսու։

Բայց գրեցաւ սա ձեռամբ տխմար եւ յիմար գրչի Աստուածատուրոյ, *ի խնդրոյ եւ ծախիւք Հայրապետ քահանայի։ Սայ նմանեալ Անաստաս քահանայի եւ յոյժ սիրող պատուիրանին Աստուծոյ, զի յորժամ հրաման անեղին Աստուծոյ հասանէր եւ կոչ լինէր Տիրոհոյն աստի առ հայրն ամենեցուն, ուր ամենայն սուրբքն են ի խաղաղութեան, եւ նա ընդ նոսին նստելով եւ սայ թողեալ զաշխարհ յարեցաւ յանապատն, որ կոչի* Ձորո վանք, *եւ բազում ճգնութիւն կրէր յանձին իւրում. եւ դառն քրտամբ աշխատեալ եւ ստացեալ զգանձս զայս՝ յիշատակ իւր եւ ամենայն ազգային տոհմին իւրոյ, ղոր եւ տացէ Աստուած վայելեալ սմա զսայ, զի ինքն իսկ Հայրապետ ախորժական կամաւք այնքան կարաւտանայր այսմ գանձի, իբրև զմիեղջերն յաղբերս ջուրց։*

Հանգոյն նմին եւ սայ հոգելից եռացմամբ վերաբերեր առ պայծառութիւն գանձիս աստուածայնոյ, զոր և մեր հանգեալ գրեցաք ոչ ըստ արուեստագիտութեան, այլ ըստ կարի։ Որք կարդայք կամ գաղափար առնոյք, աղաչեմ յիշեցէք զստացող սորա զՀայրապետ քահանայ, եւ զհայր եւ զմայր եւ զտիրուհի և զայլս ամենայն։ Եւ ես մեղսամակարթս Աստուածատուր *կրաւնաւոր, վայ ինձ զոր այս երկու անունս <մ>ամաւթ են առնելոյ զիս առաջի Աստուծոյ, զի գործս իմ անունըս ոչ վկայէ, այլ առաջի ձեր անգեալ զերեսս իմ ընդ երկիր քարշել բախմամբ կրծոցս, ղձեռս առ ձեզ կարկառեալ արտասուս կաթեցուցանելով առաջի ձեր սրբութեանդ, զի յիշման արժանի առնէք զիս և ծնաւղսն իմ եւ զեղբայրն իմ, եւ զԴաւիթ կազմողս եւ զիւրսն ամենայն յիշեցէք առ Աստուած, եւ սխալանաց մի մեղադրէք, զի իմ կարն այսչափ էր։*

Գրեցաւ սայ յանապատիս Այրիձորոյ, *ընդ հովանեաւ սրբոցս եւ յառաջնորդութեան* Սահփանոս *վարդապետի, որ է սայ բարի եւ կատարող պատուիրանի աստուածային հրամանի, եւ նմանեալ առաքելոցն սպասաւորի եւ առաջին մարտիրոսի, զոր տացէ Տէր Աստուած ըստ նմին վարձուն, զի յոյժ բարեկամ է բարի գործոց եւ սպասաւոր ամենայնի։*

589

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՏԱՍԱՆ ՄԱՐԳԱՐԷԻՑ

Երևան, 4515 Փարիզալեմյան, նշխարք էջ 53—54,

Գրիչ՝ Շիրինշահ

Փառք փառաւորեալ Սրբոյ երրորդութեանն Հօր՝ և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Գրեցաւ երկոտասան մարգարէականքս ի լաւ և յընդիր օրինակէ, ձեռամբ սուտանուն սարկաւագի Շիրինշահի, ի թուին Հայոց ՉԽԲ (1293)։ Արդ, գրեցաւ ի ս. կ. կայս ընդ հովանեաւ սուրբ խա/// ի դառն և յանբարի ժամանակի։

590

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 2588

Գրիչ՝ Բարսեղ երաժիշտ*
Վայր՝ Դռազարկ

441բ Փառք անճառելի և անքննելի, անպատմելի և անխտանալի, անսկըզբան և անժամանակի, եզականի և ապենիազ փառաց Սուրբ Երրորդութեանն և մի աստուածութեանն յաւիտեան և յաւիտեանից յաւիտեանս, ամէն, ամէն, Ռ (1000)։

Որք հանդիպիք տխմարատանջ դրոյս, զսխալեալն եղբայրաբար
442ա ուղղեցէք և մի թշ||նամասէր մտաւք նախատէք, զի անհմուտ գոլով գրչութեան գրոյ և սրելոյ գրչի, բայց վասն կարեաց գրեցի։

Ես՝ Բարսեղ նուաստ փիլիսոփաս և տրուպս յորդիս եկեղեցոյ, եւ ի կենցաղս աշխարհի մեղաւոր և անսպառ խոստովանող Քրիստոսի, դիւրաշարժս ի մեղս և դժուարաշարժս յարդարութիւն, ապիկարս յոքունց և ախմարս ի գրչաց, փափագելի սրտիւ և ջերմեռանդն սիրով, և ըղձալի յաւժարութեամբ ցանկացող եղէ այսմ աստուածախաւս մատենի, զոր արարեալ է տեառն Ներսէսի հոգելից վարդապետի և տիեզերաց լուսաւորչի, ըստ ասելոյն աստուածահաւրն Դաւթի, թէ Պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց այլովքն հանդերձ։ Ըստ այսմ հրամանի զաշխատ ի բաց եդի, շնորհիւ Տեառն Յիսուսի Քրիստոսի սկսա և նորին ողորմութեամբ յանգ հանեալ աւարտեցի զգիրս սուրբս Պատարագի մեկնութեան ի պէտս մեղուցեալ անձին իմոյ և յիշատակ հոգոյ իմոյ, և ծնաւղաց իմոց, և ի պէտս մանգանց եկեղեցոյ։ Զի եթէ պատահեսցի այր խնդրող սոցին և փափաքէ ըմբռել ի կենսատու աղբերէս յայսմանէ, և կալցէ շնորհս գիտութեան, և դտանիցէ ղսա, հրճուասցի ի վերա սորա, և ուրախութեամբ արկցէ ընդ պարանոցս, և լաւ համարի զսա, քան զականս պատուականս և զմարգարիտս գեղեցիկս, քանզի և է իսկ, զի
242բ սայ է դուռն երկնից,||բանալի արքայութեան, ճանապարհ մոլորելոց, հաց քաղցելոց, աղբեր ծարաւելոց, պարծանք արդարոց, և յոյս հաւա-

---

* Ձեռագիրը և հիշատակարանը գրել է Բարսեղ երաժիշտը՝ 1299 թ. Ձեռագիրը տարվել է Տարոնի Առաքելոց վանք, ուր Թորոսը վերջին երկու թերթը և հիշատակարանը փոխել է, ինքն է գրել և ավելացրել է իր հիշատակարանը (տե՛ս 1299 թվականի տակ)։

տացելսց, և ամենայն ինչ, որ պատուական է չաժէ զսա, զի սովաւ արդարք հաստատեսցին ի գործս բարիս, և մեղաւորք զղջութեամբ զարդարութիւն ընկալցին, և ամենայն ոք, որ փափաքէ ըմբել ի քաղցրահամ և ի կենսատու բաժակէս յայսմանէ, կեցցէ և զկեանսն յաւիտենականս ժառանգէ։

Ըստ որում կարի գրեցի ձեռամբ իմով և աշխատութեամբ, որպէս և հրամանէ Տէր Յիսուս, թէ Գանձեցէք ձեզ գանձս յերկինս, և աստուածային առաքեալն, թէ զանձ հոգևորական ունիմ զքեզ աստուածային բարութիւն, և դարձեալ Տէրն ասէ, թէ Որ արբուսցէ բաժակաւ շուր ցուրտ յանուն աշակերտի, ոչ կորուսցէ զվարձս իւր։ Եւ գրեցի զսա ոչ վասն մարմնաւոր ագահութեան, այլ յիշատակ ինձ և իմոցն և ամենայն հաւատացելոց, որպէս յայտնի է մեզ ամենայն, որ ընդ մահու գրաւել եմք, և անհնար է ումեք ազատել ի մահուանէ, այլև ոչ կարողասցի ոք ի ստացուածոց իւրոց տանել ինչ զկնի ի գերեզմանն, բայց միայն զգործս եթէ բարի և եթէ չար։

Որք հաստատեցի, որ ամենայն ունայն է և աստ մնալոց է, լաւ
443ա համարեցա, որ զկնի փոխման իմոյ յաստեացս, փոխանակ ոսկո‖և այլ գոյից ստացուածք գրեանք գտանին, քան զայլ ինչ, ղի գիրքն եթէ յաւազակաց գողասցի, եթէ յայլազգեաց յափշտակի, եթէ այլ ոք առնու՝ եթէ գնով և եթէ անգին, ընդ որ երթա և շրջադաի, դարձեալ ի վանք և յեկեղեցի ժողովի ընդ ձեռամբ եպիսկոպոսի, քահանաի, սարկաւագի և կրաւնաւորի, և մնասցէ անջինջ յիշատակ։

Եւ եղև զրաւ գրչութեանս յաշխարհիս Կիլիկեայ, ի յանապատս Դրազարկ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Թորոսի և այլ սրբոց։ Արդ, գրեցաւ սա ի թուականիս Հայոց ՋԽԹ (1294), ի հայրապետութեան տեառն Գրիգորի հեղի, և հեղինակի, և իմաստասիրի։

Եւ ի թագաւորութեանն Հեթմոյ բարեպաշտի և աստուածասիրի, և յոյժ հռետորականի և գիտնականի Հին և Նոր կտակարանաց, և ի վերա այսոցիկ առաքինասէր վարիւք կացեալ երիտասարդական հասակին աղաւթիւք, պահաւք, գետնաշխատութեամբ, տքնութեամբ, հսկմամբ և այլ բարուքն ողորմած, աղքատասէր, մարդասէր, անոխակալ, անյիշաչար, քաղցր և հեզ առ ամէնեսեան, որոց և այրաց խնամիչ և դարմանիչ, յիշատակ նորա աւրհնութեամբ։

Եւ եղև սկիզբն գրելոյ սորա յայնմ ամի, յորժամ եկն անաւրէն սուլ-
443բ տանն Եգիպտոսի բազում զաւրաւք և անթիւ հեծելաւք ի վերա‖ա անառիկ դղեկին և հայրապետական աթոռոյն Հռոմկլային, և պաշարեաց զնա բազում պատնիշաւք և բազում հեծելաւք և հետևակաւք, և ըմբաքար կանգնեաց ի նմա թուով երեսուն և հինգ՝ ընդ մեծ և ընդ փոքր, և ծեծէին զպարիսպն բերդին քարիւ և ի ներքս ի բերդն ձգէին քարինս մեծամեծս և փոքունս, և ձգէին նետս ի նոսա և սպանանէին զմարդ և զանասուն։ Եւ էր ի մեծ վտանկի և ի նեղութեան և ի տարակուսի ջաղաքն այն յաւուրէն ազդէն Հագարացոց։ Եւ ոչ ոք մատնէր և ելանէր առ նոսա, զի յամենայն կողմանց պաշարեալ էին զքաղաքն զայն, և ոչ ուստեք հասանէր աւգնական նոցա, այլ միայն առ բարձրեալն Աստուած աղաղա-

կէին, գոչէին, արտասուէին արք և կանայք, ծերք և տղայք, երիտասարդք և կուսանք, թերևս ողորմեսցի մարդասէր Աստուած, և փրկեսցէ ի ձեռաց անաւրինաց։ Եւ ոչ լուաւ նոցա Աստուած, ըստ այնմ, թէ Յորժամ համբառնայցէք զձեռս ձեր ի վեր, դարձուցից զերեսս իմ ի ձենջ, և դարձեալ՝ Ջի՞նչ ատուտ է դալ բողոքել ձեր առ իս, և ինձ ոչ լսել ձեզ։ Եւ այսպէս անբարեկանալին Աստուած, որ յամենայնի գթածն է և ողորմած, վասն բազում մեղաց մերոց և ծովացեալ անաւրինութեանց զոր
414ա գործեաք, էած ի||վերա մեր զգաւազան բարկութեան արդարադատ իրաւանաց իւրոց, և խրատեաց զմեզ հայրական գթովք, և մատնեաց զհոյակապ և զհռչակաւոր զանառիկ դղեակն զԿլայն և զաթոռն հայրապետութեան ի ձեռս անաւրէն գոռոզին և բազմագլուխ վիշապին՝ արքային Եգիպտացոց, և արար սպանումն և գերութիւն մեծ, և աւէր սաստիկ, և զբաղումս ի սուր սուսերի մաշեցին, և ոչ եղև համար ի քիւ գերելոցն և կոտորելոցն։ Եւ ով ոք բավականիցէ պատմել զեկեղեցեաց աւերումն, զսուրբ սեղանոց կործանումն, և զանաւթոց և զսպասուց սրբութեանց տաճարաց Աստուծոյ զափշտակութիւն, զսպանումն քահանայից, զգերութիւն սարկաւագաց, զխայտառականս կուսանաց, զանարգանս ամուսնացելոցն, զի ոչ ակն առնուին յալեաց ծերոց, և ոչ խնայէին ի մանկութիւն երիտասարդաց, և ոչ ողորմեցաւ արդար տղաց, այլ ի սուր, ի մահ, և ի գերութիւն մատնեցան։ Եւ ի վերա այսորիկ հրով այրեցին զքաղաքն, և զհայրապետն մեր զտեր Ստեփանոս, հանդերձ եպիսկոպոսաւք և քահանայիւք, և սարկաւագաւք և բազում ժողովրդովք՝ արամբք և կանամբք և մանկտովք՝ ի գերութիւն վարեցին յաշխարհն Եգիպտացոց։

444բ Արդ, աղաչեմ||զամենեսեանս վասն սիրոյն Քրիստոսի, զի որք աւգտիք ի սմանէ կամ ընդաւրինակեք, վաշխատողս սորա զԲարսեղ նուաստ երաժիշտ և ծնողսն իւր և զազգատոհմն իւր յիշեսջիք ի Քրիստոս։ Եւ խոշորութեանս և սխալանացս որ ի սմա, անմեղադիր լերուք, զի ախմար էի և պակասամիտ, յաւժարութիւն իմ և սէր ստիպեաց զիս սկսանիլ և բազում աշխատութեամբ գրեցի։ Արդ, որպէս և է, սիրով ընկալարուք և թողութիւն մեղաց խնդրեցէք ի Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն։ Որ զմեզ սրտի մտաւք յիշէ, աւրհնի յԱստուծոյ։

Բ

201բ Ո՛վ քրիստոսասէր և սրբազան ընթերցողք յորժամ պատահէք այսմ հոգելից և լուսաւոր վարդապետութեանս սրբոյ առնս Աստուծոյ Ներսիսի, և ընթեռնոյք կամ աւրինակէք, յիշեցէք ի Տէր զյուսակատուր և զքշուառական ծառայս Սրբոյ Ներսիսեանն զԲարսեղ երաժիշտ, զծնողսն իմ զՊապիաւս և զՏիկին, և զքոյրն իմ, և զհամազգիսն, և զամենայն ճշմարիտ հաւատով հանգուցեալսն ի Քրիստոս, և թողութիւն մեղաց հայցեցէք ի յամենառատ Տեառնէն և արժանաւորիլ մեծ շնորհացն զուարթ երեսաւք տեսանել զքաշ սիրելին մեր զՔրիստոս ի միւս անգամ գալստեանն և աջակողմեան դասուն արժանաւորել։ Եւ որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ՝ յիշողացդ և մեզ՝ որք յիշեցիքս պարգևեսցէ գհան-

գիստն յաւիտենական կենացն և զանսպառ ուրախութիւնսն և նմա փառք յաւիտեանս, ամէն։

178ա Ո՛հ, թէ ինչ ի մեծ նեղութիւն կան քրիստոնէք ի սովոյն յայսմ ամի։

Գ

181բ Ո՛հ դառն վշտիս և անբերելի աղետից։, թէ ինչ ի մեծ նեղութիւն կան քրիստոնէք ի սովոյն։

Դ

228բ Առատաբաշխ հոդի Աստուծոյ, ստացողի գրոցս Բասեղ փիլիսոփայի և ծնողաց իւր և եղբարց և ամենեցուն զքեզ ճշմարիտ Աստուած խոստովանողաց, շնորհեա զքո երկնից արքայութիւնդ և քեզ փառք յաւիտեանս, ամէն՛։

Ե

243ա Այսաւր մեծ տրտմութիւն հանդիպեցաւ յանհաւատ և ի շուն մարդոյ։

Զ

251ա Ո՛հ մեծ տրտմութեանս։

Է

273բ Բացէք ղալուիտ։ լսեցէք, լսեցէք, լսեցէք։

Ը

287բ Քրիստոս Աստուած, մաքրեա ի մեղաց զստացող գրոցս զԲասեղ երաժիշտ, և ծնողսն իւր, և զեղբարսն և զամենայն հաւատացեալս, և եղելոցս անեղիդ փառք։

Ք

409ա Ո՛հ ղվատ արհեստս ի գրչաց։

591

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ՆԵՐՍԷՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ

Երևան 1526

Վայր՝ Յովհաննու վանք

Ա

905բ Փառք անհաս վեհի և անկարաւտ հզաւրի, Հաւր անսկզբնականի, Որդւոյ սկզբնակցի, և Հոգւոյ գոյակցի յաւիտենից յաւիտեանս, ամէն։ Կարողութեամբն Աստուծոյ սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զմեծափառ կտակս ի թուաբերութեանս Հայկազեան տոմարիս Չ-երորդի քառասներորդի երրորդի (1294), ի դառն եւ յանցեալ ժամանակիս, յորում ոչ գոյր հանգիստ քրիստոնէից ի հարկապահանջութենէ այլասե-

* Այս կարգի հիշատակություններ կան նաև Ձեռագրի 215բ, 351ա, 399ա և այլ էջերում։

206ա ուրցն։‖[Աղաչեմ զձեզ ովդ]ասք լուսերամից և մանկունք սուրբ եկեղեցւոյ*, որք զուարճանայքդ յայսմ բուրաստանի, որ է համակալոյս եւ ծաղիկ լուսերանգ, բազմախարի և յարափթիթ, ծառ անծայրանալի՝ տունկ և ճուղս ունելով բարձրածայրել, յիշեսջիք զսրբազան եպիսկոպոսն զտէր Համազասպ՝ վերադիտող սուրբ ուխտիս Յովհաննու վանաց, զի ստացաւ զսա զանձ և յիշատակ անջինջ ի մէջ սուրբ կաթուղիկէ եկեղեցոյ և բազմախումբ եղբարցս, զի ևս առաւել զարդարեաց զեկեղեցիս Հին և Նոր կտակարանաւք և այլ բազում շինուածքովք՝ պէսպէս և զանազան։

Արդ, աղերսիւ հայցեմ յամենեցունց ասացէք. Տէր Յիսուս ողորմեա սորա և տուր ի քո լուսեղէն խորանացդ, նաև զի մտցէ և ժառանգեսցէ ընդ քոոց սուրբ և ընտրեալ հայրապետացդ ամենայն ազգայնոց և արեան հարազատաց ողորմեսցի Քրիստոս իւր առատ ողորմութեամբն, ամէն։

Ար[դ]յոք նա ակս մեղաւք, փցուն և փ[ա]նաքի գրիչս յոտս անկեալ աղաչեմ զամենեսեան զընթերցողս և զաւրինակողսդ, որք հանդիպիք այս[մ աստուա]ծային տառիս, յիշես[ջ]իք և զանարժանս յիշման զսուտանուն երէց Քաճանայ, և ոչ ըստ արժանոյն, ասելով. Տէր Աստուած ողորմեա գծողի սորա և տուր նմա ի քո յառատ պարգևացդ, զի թերևս ձերով ողորմութեամբ և աղաւթիւք զերծայց ի վատթարացն դասուց, և արժանացայց հանդիպել երեսացն Աստուծոյ։ Նայ և ամենայն երախտաւորացն և սպասաւորացն, որք ձեռնտու եղեն մեզ և աւժնդակ ի յաշխատութեան գրոցս, ողորմեսցի Քրիստոս Աստուած և տացէ վարձս բարեաց ստէ և ի հանդերձելում, նաև առհասարակ յիշողացդ և յիշելոցս ողորմեսցի Քրիստոս, ամէն։

Մեծաւ աշխատութեամբ գրեցի, առանց աւգնականի, զի Հոգին Սուրբ էհաս աւգնականութիւն և ետ հասուցանել յաւարտ գրոցս։

Բ

906բ Զ Գանձ ||| ա
Մի դա[նդաղ]էք քննել զսա,
Զի ոչ երկիր է սա լոմա,
Ոչ մամոնայ, որ ոչ մնա,
Այլ որ ի հոգւով քննէ զսա,
Երկնից խորանսն բանկէ նա։

Գ

751ա Տէր, Տէր և Աստուած Յիսուս Քրիստոս, ողորմեա ստացաւղի սորայ սրբազան եպիսկոպոսին տէր Համազասպայ՝ վերադիտաւղի սուրբ ուխտիս Յոհաննու վանից, ընդ նմին և եղկելի և զողորմելի գրչի, ամէն**։

---

* Ձեռագրում «եղեղեցոյ»։

** Այս կարգի հիշատակագրություններ կան նաև 17 բ, 29 բ, 521 բ, 877 ա և այլ էջերում։

Պ

Խաւարեցաւ արեգակն ի մէջաւրէի, և ի մեծ վտանգի կա[յ]աք առ հասարակ, զի ոչ գոյր իւազաղութիւն, վասն ծովացեալ մեղաց մերոց։

Ե

196ա Աւաղ դառնութեան աւուրցս, որ հասաք, այլ աչք մեր առ Տէր է.

Զ

Աստանաւր յիշեսջիք ի Քրիստոս զստացաւղ դրոցս զտէր Համազասպ և զեղկելի գծողս։

Է

274բ Զստացաւղ սուրբ և մեծափառ կտակիս զսրբազան եպիսկոպոսն տէր Համազասպ և զիւրսն ամենայն յիշեսջիք ի Քրիստոս, ո՛վ սուրբ վերծանաւղք, ընդ նմին եւ զանարժան գրիչ։

Ը

278բ Ո՛ գեղեցիկ խնձորիս, զոր եբեր եղբայր Մարտիրոս։ Տէր տուր նմա զքո պտուղդ, ամէն։

Թ

354ա Աւա՛ղ աւուրցս դառնութեանց, որ էհաս մեզ, զի ահ պաշարեաց զամենէսեան։

Ժ

635ա Աւա՛ղ դառն աւուրցս, որ դիպաք։ Զերծոյ զմեզ, Քրիստոս, ի նեղչացս։

ԺԱ

700բ Աւա՛ղ, զի աւր քան զաւր յաւելու ահս, և ի զնդանի գրեցաւ մեծ վշտաւք։ Այլ Տեառն ակն ունիմ ողորմութեան բարի առնել։

ԺԲ

749բ Ո՛վ եղբայր, տես զգրեալսս աւրինացն Աստուծոյ և մի վայրապար ծախէր զսակաւ կենսս ընդ անյաւգուտ ուսմանդ, զի անպտուղ ասէ սուրբս և անբանից իմաստ և ոչ մտաւորաց։

592

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4814

Գրիչ՝ Յակոբ
Վայր՝ Արգիլաե

ա

265ր Փառք անեղ բանին Աստուծոյ, երիցն ի միում կատարեալ առանձնաւորութեամբ և միավորեալ ըստ աստուածութեան, եռահրաշ անբաժանելի և անքակ տէրութեանն վաել է փառք։

Գծագրեցաւ վսեմական անբաղդատելի, աստուածունակ, արփիափայլ և գերահրաշ տաճս Նորոյ կտակարանաց, ի թուաբերութեան Հա[յոց] տումարի եւթնհարիւր երրորդի քառասնևերորդի երրորդի (1294) ի գաւառիս Տուրբերունոյ, ի հայրապետութեան տեառն Ներսիսի Հայոց վերադիտողի դեռևս հաստատեալ յաթոռ հայրապետութեան, եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս Արգիլանա տէր Սարգսի, ընդ հովանեաւ կենսունակ Սուրբ Նշանիս Յուսկան որդո և Սուրբ Աստուածածնիս, և այլ
266ա սրբոց եկեղեցացս, ձեռամբ նուաստ և փցնամատն գրչի Յակոբա,‖ի խնդրոյ աստուածասէր և բարէպաշտ առն Խելաւի, և կենակցի իւրո Փոխանտիկնա, և հարազատ զաւակաց իւրեանց Պաւշի և Թումախի, զորս պահեսցէ Տէր Աստուած անսասան մինչև ի խորին ծերութիւն, և յիշատակ առաջի Աստուծոյ, և բարեխաւս յետ աստի կենացս ի Քրիստոս փոխեալ կեանս։ Զի սոքա ստացան զսուրբ Աւետարանս ի հալալ և յարդար ստացվածոց իւրեանց, զոր վայելեալ տացէ Աստուած, ամէն։

Արդ, որք աւգտիք և կամ աւրինակէք ի սմանէ, յիշեցէք ի սուրբ և ի մաքուր աղաւթս ձեր զԽելաւիճ ի Քրիստոս փոխեցեալ, և զՓոխան տիկին, և զաւակս նոցա, և տէր Աստուած ամենեցուն առհասարակ ողորմեսցի յաւուրն ահեղի, և դասեսցէ ընդ սուրբս և ընդ սիրելիս անուան իւրոյ յարքայութեան երկնից, ամէն։

Ես Փոխան տիկինս տվի զիմ Աւետարանս ի սուրբ Թադիոսի ժամա-
266բ տեղս, որ հասարակաց կարդան, ու այլ մարդ չկարէ հուքմ‖արնել։

Հուքմ Ստեփանոսին լինի յիմ շատ յարդեանցն զիրկ է եղել, այլ մարդ դաւի չարնի։

Բ

83բ ԶՅակոբ [ա]նարժան գրիչն և զՄամոց և զՄինա և զԱրեւտիկին յիշեցէք ի Քրիստոս Յիսուս, յաղաչեմ, և Աստուած ղյիշողսդ յիշեսցէ յիւր ողորմութիւնն, ամէն*։

Գ

203բ Յիշեցէք ի Քրիստոս Յիսուս զԽելաւ, և զՓոխան տիկին, և զզաւակսն իւր, և Աստուած զձեզ յիշէ յիւր արքայութիւն, ամէն։

---

* Գրված է մանր նոտրգրով։

Դ

Ո՛վ դասք լուսերամից, յիշեցէք զԽեչաւՓ, և զՓոխանտիկին, և զՊռաւշ, զԹումայ՝ փոխեալն ի Քրիստոս, զի սուրբ Աւետարանս յիշատակ է նոցա ի սուրբ եկեղեցիս Թադէոս առաքելոյս։ Ոչ վաճառի սայ, այլ հանապազ ի տեղոջս կենայ, ուր ևս երթիցէ, այլ ի տեղոջս դարձցի։

Ե

84ա *Ո՛վ մանգունք Նոր Սիոնի,*
Աղաչեցէք զՏէրն ամենի,
Վասն բարեպաշտ և աստուածասէր քրիստոնէի,
Որոյ Պռաւշ անուն կոչի,
Որ ստացաւ փափագանաւք
Զսուրբ Աւետարանս Քրիստոսի,
Յիշատակ իւրն և ծնողին ԽեչաւՓի
Եւ մաւրն իւրոյ դիացուցողի,

Եվ տարաժամ տղայ փոխեցելոյն ի Քրիստոս Թումայի:

*Որք կարդայք և աւգտիք ի յարուէստէ յայսմ տառէս, յիշեցէք զ*Պռաւշ *և զծնողսն իւր ի Քրիստոս, զի անմոռաց յիշատակ կարգեաց և քանդակեալ եւ զսուրբ Աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց, և պարգևեսցէ Քրիստոս զփոխարէնն ի յայսմ աշխարհի և ի հանդերձելումն և պարգևեսցէ զերկնային զպսակն, ամէն։*

Զ

128բ *Քրիստոս Աստուած, ողորմի* ԽեչաւՓին *և ամուսնոյ իւրոյ* Փոխանտիկինա, *և զաւակաց իւրոց* Թումայի՝ *փոխեցելոյն ի Քրիստոս, և պահեսցի յիշատակ նոցայ զ*Պռաւշն, *և զ*Վարդանն *և զաւակն իմ* Ստեփաննոս *և պահեսցէ տէր։ Ամենևին որչափ և շինութիւն լինի ի դեաւղն, որ կոչի* Սուրբ Թադոս *եկեղեցոյն մի ելցէ, ուր և երթայ եկեղեցին գայ և ոչ վաճառի։*

Է

208բ *Ո՛վ եղբայր, որ ընթեռնուս սուրբ զԱւետարանս, անմոռաց հրամայեայ զԱստուած-ողորմին գնողիս սորայ* ԽեչաւՓին *ե* Փոխան տիկնայ, *և զաւակաց իւրոց, և ազգականացն, ամէն, և Քրիստոս զձեզ յիշեսցէ։*

Ը

204ա *Ո՛վ սիրելիք քրիստոսական հրամանացն և հաւատապետք Քրիստոսի հաւտին, յիշեսչիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զ*ԽեչաւՓ *և զ*Փոխանտիկին, *զ*Թումայ՝ *զփոխեալն ի Քրիստոս, և զիշատակս նոցայ զ*Պռաւշ *և* Ստեփաննոս: *Զսուրբ Աւետարանս գնեցին իւրեանց յիշատակ, որ կայցէ յեկեղեցին հասարակաց ի* Սուրբ Թադեոս *և մի ելցէ ի նմանէ։ Եթէ ելցէ, այլ յետս դարձցի, և աւրհնին կատարիչք կամաց մերոց, ամէն։*

Բ

Ստացող՝ Պաւլ

128բ Ես Պաւլոս գնեցի սուրբ Աւետարանս յիշատակ ինձ և ծնողաց իմոց, (և ի) վայելում զաւակի [իմո Սաեփանոսի]։

Ժ

84ա Եւ սուրբ Աւետարանս մուլք է Սաեփանոսին, որ այլ մարդոյ դաւի չելի։ Ու Զրմաւթին յիշատակ է, որ Պաւլին։ Յիշեցէք զիս ըզՊաւլոս. զկենայկիցն իմ. Զրմաւթն, և ղփոխեցէք ի Քրիստոս Թումային։

ԺԱ

Ստացող՝ Սաեփանոս

ՁՍ[աես]փանոս յիշեցէք ի Քրիստոս և զՂիմաթ ու զՄոջան, և Աստուած ողորմի ասացէք նոցայ։

ԺԲ

Նկարիչ՝ Խաչեր

209ա Ձխաչեր նկարիչս յիշեցէք ի Քրիստոս, ընդ նմին և զՊաւլ հաւատարիմ քրիստոնեայ, և ծնողսն իւր, և զեղբայրն իւր՝ զփոխեալն ի Քրիստոս, և Աստուած յիշողացդ ողորմեսցի*։

593

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4878

Գրիչ՝ Յակոբ
Վայր՝ Աւգիլան

Ա

282բ Ի թուիս եւքն հարիւրերորդի քառասներորդի երրորդի (1294), գրեցաւ վեհմական, բաղդատելի, աստուածծունակ և գերապայծառ արփի[ա]հրաշ և ամենագով սուրբ կտակս, ձեռամբ յոգնամեղի և փցնամատն գրչի Յակոբ կրաննաւոր, ի սուրբ անապատս Աւգիլան, ընդ հովանեաւ Սուրբ Նշանիս Յուսական որդոյ և Սուրբ Աստուածածնիս, և այլ եկեղեցեացս, ի խնդրոյ երանեալ և պատուական քահանայի Գեորգէս, որ ստացաւ զսա ի հալալ և յարդար արդեանց ի[ւր]ոց առ ի յիշատակ և ի վայելումն անձին իւրոյ և զաւակաց, և ամուսնո իւրո, և ետ աստի կենաց ելանելո՝ բարի յիշատակ և բարեխաւս առաջի Աստուծոյ իւրն, և

* Ձեռագրի նշված էջերում կան բազմաթիվ այլ հետաքրքիր հիշատակագրություններ հետագա դարերից, դրանք մեծ մասամբ կապված են Մուշ գյուղի հետ, որի Ս. Գէորգ եկեղեցում գտնվում էր Աւետարանը։

ծնողաց իւրոց Խոսրովի և Ոսկո, և եղբաւր իւրո Թումայի ի Քրիստոս փոխեցելո, և ա[մենայն] ազգականաց իւրոց։
Արդ աղաչեմ զամ ///

Բ

81բ Ով սուրբ ընթերցողք սուրբ կտակիս, յորժամ դիպիք վերջագրիս յիշեցէք ի Տէր Յիսուս ՉՅակոբ գրիչս, և զսանամայրսն իմ զՄինա և զԱրեւտիկին, զի կարի յոյժ սիրէին զմեզ ի սէրն Աստուծոյ յամենայն կարողութենէ իւրեանց։ Հատուսցէ նոցա Տէր Աստուած վարձս բարեաց և ձեզ, ամէն։

Գ

216ա Յիշեցէք ի Տէր Յիսուս զՅակոբ և զծնողսն իմ, աղաչեմ, և դուք լիջիք յիշեալ ի Տէր Յիսուս առհասարակ համարէն ննջեցեալովք ձերովք, ամէն։

Դ

220բ Ո՛վ ընտրեալ և պատուական սուրբ ընթերցողդ սուրբ կտակիս, աղաչեմ յորժամ դիպիք վերնագրիս, յիշեցէք ի Տէր Յիսուս Քրիստոսի Թողութիւն մեղաց զՅակոբ գրիչ, և զՄամոց՝ մամն իմ, և զԱրեւտիկին և զՄինա, զի կարի յոյժ սիրէին զմեզ մայրական գթով հոգեւորաւ։ Եւ որք յորս յիշեք, ի նոյն լիցիք և դուք յիշեալ, հանդերձ սիրելեաւք, և կարող է Տէր ամենայնի Թողուլ զամենայն յանցանս ամենեցուն։

594

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7535

Գրիչ՝ Աստուածատուր
Վայր՝ Այրի ձոր-

Ա

Փառք անբաժանելի Սուրբ Երրորդութեանն Հաւր և Որդո և Հոգւոյն Սրբո, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

274բ Ի թուիս ՉԽԳ (1294) գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ մեղապարտի, անարուեստի, ախմարի և փցուն գրչի, ի վանս հրեշտակաբնակ, որ կոչի Այրի ձոր, ընդ հովանեաւ սուրբ նահատակացս եւ աստուածաբնակ խորանացս Սուրբ Յարութիւն և Սուրբ Կարապետ և Սուրբ Լուսաւորիչ, ի առաշնորդութիւն ամէնիմաստ, ամենագով, քաղց[ր] ահաւոց և արդիւնակատար վարդապետի Ստեփաննոս[ի], որ է [ս]ա ի մարմնի [կ]առուցեալ և յանմարմնոցն բերեալ լինքն զվարս։ Եւ նմանեալ ծառային Տեառն անուանակցին իւրո Ստեփաննոսի, զի յորժամ անաւրէնքն քարաձիգ լինէին և նա աղաւթէր և ասէր. Տէր մի համարիր սոցա զայս մեղս։ Եւ սա ըստ նմին աւրինակի, յորժամ թիւնաձիգ լինէին ի սա, և սա աղաւթէ վասն մերո փրկութեան և ասէ. Տէր մի համարիր սոցա զայս մեղս։ Ինքն Քրիստոս որդին Աստուծոյ ամբողջ և անարատ պահէ.

զսա իւրաւքն ամենով, զի յոյժ բարի է և բարէկամ և բարերաբն Աստուած թողցէ [ս]մա զամենայն սխալանք, ամէն։

Եւ ես գծող Աստուածատուր անուն, յերեսս անկեալ աղաչեմ զամենեսեան, որք կարդայք և լուսաւորիք և գաղափար առնոյք, յիշ-
.275ա ման արժանի առնէք զիս և ծնողսն իմ, և զեղբարսն իմ, և Աստուած յիշէ զձեզ։ Եւ զհոգո եղբարս ի[մ] զՎարդան քահանա յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր, զի զթուղթս կոկեց և սպասաւորեաց ինձ անպիտանիս։ Տէր Աստուած, որ կարողն է ամենայնի հատուցէ սմա ընդ միոյն զերեսնաւորն և զվաթսնաւորն և զհարիւրաւորն, ամէն, և յամենայն ժամ տացէ։

Եւ զհոգո հայր իմ զԳրիգոր յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր, և մեղաց թողութիւն խնդրեցէք յԱստուծոյ, որ տա ամենայնի առատապէս և ոչ [նա]խ<ատ>ատէ, եւ Աստուած ողորմի յիշողացդ և յիշեցելոց առհասարակ, ամէն, եւ նմա փառք յաւիտեան, ամէն [և յամենայն] ժամ։

Բ

Գրիչ՝ Յովաննէս

ԶՅովաննէս յիշեսջիք*։

595

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 2496

Գրիչ՝ Կիրակոս

ա

95բ Զերջանիկ ե պատուական Վանականն, և զհոգևոր եղբայրն մեր զԹումաս քահանայ յիշեսջիք յաղաւթս ձեր, ո՜վ սուրբ հարք և եղբարք, որք ընթեռնոյք զգիրս տեառն Ներսէսի և ակտիք ի սմանէ։

Եւ զմեղապարտ գծող սորա զԿիրակոս նուաստ և անիմաստ երէցս յիշիք ի Քրիստոս Աստուած աղաչեմ զամենեսեան։

Բ

.301բ Զստացաւղ և զփափագաւղ այսմ տառիս զՎանական քահանայն և զհոգի եղբայրն մեր զԹումաս յիշեսջիք ի Քրիստոս Աստուած, ամէն։ Եւ զծնաւղսն իւր զհանգուցեալսն ի Քրիստոս, որոց ողորմեսցի Քրիստոս Աստուած և թողութիւն շնորհեսցէ նոցա, ամէն։ Եւ զմեղապարտ ծրող սորա զԿիրակոս երէցս յիշեսջիք ի Տէր Աստուած, և յիշողացդ ողորմեսցի Տէր Աստուած, ամէն։

Գ

.347ա Ըստ նմին և զանարժան գծողս ըզմեղապարտ էրէց ըզԿիրակոս յիշեսջիք ի Տէր, և որ յիշէ, յիշեալ եղիցի։

---

* 273-ում դարձյալ կարմիրով գրված է «Յովաննէս» յիշեա»։ Թվում է աւետարանառաջների ծաղկողն ու գրողն է, որովհետև թանաքը նույնն է։

Քրիստոս Աստուածծ քո սուրբ և երջանիկ հայրապետացն տեառն Գրիգորիսի և տեառն Ներսիսի և ամենայն սրբոց քոց աղաւթիւքն և բարեխաւսութեամբն ողորմեալ քո ճշմարիտ ծառային Թովմաս քահանա-
347բ յի, և ծնաւղացն իւրոց, և ամենայն տոհմից իւրոց ի քում գալստեանդ։||

Դարձեալ աղաչեմ զձեզ հարք և եղբարք, որք ընթերցի զվարս կամ աւրինակէք, աղօթից մասին արժանաւորեցէք զստացող սորա զԹուման քահանայն, որ յոյժ փափագանաւք ստացաւ ըզսայ, որպէսզի աղաւթիւք նոցա ընկալցուք մասն ի յարուքեանն նոցա։

Արդ, աղաչեմ զաւրինակագիծ գրողդ և զընթերցողդ, դի մի ոք մեղադիր լինիցի խոշորուքեանն գրոյս կամ սղալանաց, զի յոյժ փափագանաւք ստիպէր ղիս յաղագս դրելոց սորին, և կար մեր այս չափ էր։ Աղաչեմ յիշման արժանի արարէք զվերոգրեալսն և զծնողսն իւրեանց։ և Քրիստոս Աստուածծ ձեզ ողորմեսցի աստ և ի հանդերձելումն, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

դ

Գրիչ՝ Կոստանդին

217բ Ո՞հ զմեղաւք դատապարտեալս՝ գրող սորա զԿոստանդին աղաչեմ յիշել ի Տէր։

ե

266ա Գրեցաւ սայ ձեռամբ Կոստանդեա նուաստի ի խնդրոյ սրբազան քահանայի Թովմասի։

զ

Ստացող՝ Թուման

Յիշատակարան ցանկութիւն մտաց և փափագ սրտի բազմադիմի աւրինաւկաւք տեսանին բաժանեալ ի վերայ բնութեանս, ումեմն փառաց
366ա և մեծութեան և այլ||ումեմն յաղթութեան և տիրապէս հասանելոյ է կամս սրտի։

Իսկ ես նուաստս և յետինս ի ծառայս ծառայիցն Քրիստոսի Թուման քահանայ, զամենայն ցանկութիւն սրտի և զխորհուրդ մտաց և զյաւժարութիւն կամաց երկրորդ համարեցայ առ այս աստուածային գանձիս ստացումն, և զսա ստացա ինձ յիշատակ անջնջելի և մեծութիւն անկողպտելի, ըստ մարգարէին, որ ասէ. Երանի որ ոմիցին զաւակ ի Սիոն և ընդանեակ տեառն յԵրուսաղէմ։ Եւ իմ վասն այսր յուսոյ եւս գրել զսա բազում աշխատութեամբ և տառապանաւք, այսր և անդր յածմամբ յուզէի զբաղձալիս իմ, վասն զի ոչ համագումար գտի, որպէս տեսանէք ի միասին ժողովեալ, այլ որպէս միոյ մարմնոյ մասունս, բազումս յաւշեալ առ ոմն ձեռք, և առ ոմն ոտք անշատեալք ի միմեանց երկաւրեայ, եռաւրեան ևս աւելի ճանապարհաւք։ Իսկ իմ ի բաց եղեալ զտկարութիւն
366բ մարմնոյս զբոլորն լրմամբ||ստացայ զորս գտի զսուրբ և զերջանիկ հաւրն մերոյ զսրբոյն Ներսէսի կաթողիկոսի զգեղեցկաբան վարդապետութիւնն, որ առ ընդհանուր հայկազունսն, և զքաւղքսն, զոր վասն սիրոյ և միա-

բանութեան, զխնդիրսն և զընդդէմ պատասխանին, և զայլսն, որ վասն բազում և զանազան իրաց ասացեալ է և զհամանմանեաց նորին։ Զի սովաւ զմէդ մառախզապատ մտացս փարատել կարիցեմ, և զալէկոծութիւն փորձանաց կենցաղոյս զանց արարից, և հասից առաջնորդութեամբ սորին ի խաղաղ նաւահանգիստն։ Վասն որոյ և սաստիկ ջերմութիւն սիրոյն, զոր առ նոսա միշտ բորբոքի ի սրտիս, ոչ ինչ դանդաղեցա, այլ կամեցա և ղոտից նոցա բուռն հարկանել, զի թերևս գտից մասն ողորմութեան նոցին բարեխաւսութեամբ, քանզի եմ և ես նոցին դաւանութեանն խոստովանող։ Եւ յաղագս այնորիկ և ձեզ աւրինակողացդ և ընթեցողացդ և լսողացդ զայս բողոքեմ, զի ըզսոցին լուսաբորբոք բանիցն
367ա գիրկս||արկցուկ և հաւատով ընդ սոյնս բևեռեսցուք, և մեզ՝ և ծնողաց մերոց թողութիւն հայցեսուք, ընդ նոսին ջոկադասիլ ընդ աջմէ փեսային Քրիստոսի ընդ աւդիսն, ղի և դուք վայելեսցուք ի նոյն պատիւ ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս։

Գրեցաւ սա ի թուիս ՉԽԳ (1294)։

596

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 10668

Կազմող՝ Գերգ

ա

9ա Աստուած ողորմի կազմողի սորայ Գերգայ և իւր ծնողացն, ամէն։ [Ի] թվականութիւնս Հայոց ՉԽԳ (1294) զպատ[ու]ական քահանէ զԱմենաւագ, որ հալալ վաստակոց իւրոց ըստացաւ սայ յիշատակ իւր և ծնողաց, որք կարդէք ասացէք Աստուած ողորմայ իւր և ծնող[աց] իւրոց, ամէն։

բ

Գնող՝ Ամենաւագ
Վայր՝ Հաւու թառ

17ա Ես անարժան և մեղու[ց]եալ սուտանուն կո[չ]եցեալ Ամենաւագ, ի հ[ալ]ալ արդեանց իմոց գնեցի զսուրբ զԱւետարանս, ի դաւառէն Գառնու, ի վանացն Հաւու Թառու, ի բարեխաւսութիւն ինձ և ծնողաց իմոց՝ հաւր իմու Խա[մ]իլայ և մաւր իմու Շուշա[ն]այ, և ամուսնու իմու Մ[ին]այի*:

Արդ, աղաչեմ զա[մենես]էն վասն սիրոյն Քրիստոսի, ո[ր կա]րդէք յաղաւթս [յ]իշե[ցէք]։

---

* Սույն թերթերը Մատենադարան մուտք են գործել որպես առանձին միավոր։ Այժմ պարզվում է, որ նրանք մասն են կազմել Վեհամոր Աւետարանի։

597

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 6089 (1601 թ.)

Գրիչ՝ Առաքել սրեղա

82բ *Կատարեցաւ գրութիւն տեսութեան Դանիէլի և հրաշագործ մարդարէի թվին Հայոց ՉԽԹ (1294), ձեռամբ սուտանուն սրեղայի Առաքելի, ի պարոնութեանն Հայոց Թորոսի և հայրապետութեանն Գրիգորի աստուածազարդ գիտնականի, Յայսմ ամի եթող Հեթում որդի թագաւորին Լևոնի զպարոնութիւնն, և յանձնեաց եղբօր իւրոյ Թորոսի, և ինքն եղև կրօնաւոր սքանչելի, և միշտ պարապէր ի յաստուածայինսն*։

598

ՄԱՅՐ ՄԱՇՏՈՑ

Երուսաղէմ 2673, Պողարյան, Յուցակ, Ը, էջ 291

Գրիչ՝ Սահփանոս
Վայր՝ Մլի՞ճ

ա

6 *Տէր Աստուած, ողորմեա արքեպիսկոպոսին Տարսոնի տէր Վարդանայ, և ծնողաց իւրոց, և որ ամէն ասէ։*

բ

15 *Աստուած, ողորմեա տեառն Վարդանայ արքեպիսկոպոսին Տարսոնի և սուրբ ուխտին Մլիճոյն, և որ ամէն ասէ։*

գ

59 *Քրիստոս Աստուած, ողորմեա ստացողի գրոցս տեառն Վարդանայ արքեպիսկոպ[ոսին] Տարսոնի, և եղբաւր նորին Թորոսի, և յոյժ տառապեալ գրչիս Սահփան[ոսի], և որ ամէն [ասէ]։*

դ

218 *Յիսո՛ւս, լրումն քահանայապետական, ողորմեա ծառային քո տէր Վարդանայ, և եղբաւր իւրոյ Թորոսի քահանայի, և այնոցիկ որ ամէն ասեն։*

ե

588 *Զաստուածապատիւ արքեպիսկո[պոսն] Տարսոնի զտէր Վարդան, և զեղբայրն իւր զԹորոս փակակալ սրբոյ ուխտիս Մլինոյս, աղաչեմ յիշել ի Տէր։*

---

* «Այս յիշատակութիւնս,— անմիջապես շարունակում է ձեռագրի գրիչը,— պատմօրէն յայլ օրինակաց գտի և գրեցի»։

Գ

Ճ44 Գրեցաւ ՉԽԳ (1294) թվականիս Հայոց։

599

ԱԻՏԱՐԱՆ

Երևան 4515, Փիրղալեմյան, նշխարք էջ 54

Նվիրող՝ Յովճաննէս
Վայր՝ Սալճապատ

Ի թուականութեանս Հայոց ՉԽԳ (1294) ես տէր Յովճաննէս տուի զսուրբ Աւետարանս Սուրբ Կարապետիս Սալճապատայ, յառաջնորդութեան հոգևոր հղբօր մերոյ՝ Յովճաննիսի։

600

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՀԵԹՈՒՄ Բ ԹԱԳԱՒՈՐԻ

Երևան 180

Հեղինակ՝ Հեթում Բ թագաւոր
Գրիչ՝ Սեբաստոս

ա

561բ Որ ծառայեալս եմ բիւր ախտից,
Կապեալ տոռամբ չար շղթայից,
Առ ի մեղաց գոլով տիրեալ
Եւ ներհակաց ներքոյ անկեալ,
Յիս յարձակմունքն անասնական
Իշխեն մտացըս բանական,
Եւ ըստ նեխեալ գերեզմանին,
Բրտով արտաքոյքս իմ պաճուճին։
Հեթում անուամբ լոկ թագաւոր,
Ներքո աղքատ և պարտաւոր,
Քանզի կոչիմ Իշխան Հայոց,
Բայց ես իշխիմ յախտից իմոց։
Հոգոյս ցաւոց գեղ յարակայ՝
Զայն հեծութեան զգիրս այս ստացա,
Ինձ ողբալոյ լինել սատար՝
Ծուլիս՝ խթիչ՝ միշտ անդադար,
Ընդոստուցիչ թմբրեալս ոգւոյ,
Իբրու խրթան հեղգ անասնոյ։
Կամ հեղեղաւ ընկղմելո,
Ճեղի ցամաք զձեռն իւր ձգելոյ՝
Ստացա անկեալս ես չարաչար,
Կամաւք ի սուգ անմխիթար,
Պատճառ սովին՝ զԱստուած յիշել,
Եւ ընդ Դավթի ուրախ լինել։
Սա և յապայս գոլ յիշատակ
Ինձ և իմոցն առ հասարակ,
Եւ ի լինել պատճառ բարեաց
Ձեզ աղաւթիս պարապողաց։
Որոյ գրութիւնս աւարտեցաւ
Մինչ մեր ամացըս թիւ լցաւ,
Նաւքն հարիւր ընդ քառասնի,

Եւ այլ չորից Հայոց թուի (1295)։
Յորում ի սոյն ժամանակի
Պէս-պէս տեսաք գործ յիշելի։
Ջոր ի նախկի սկսեալ սկըզբանց
Համառատեմք ձերոց անձանց։
Մերոյ տոհմիս, որ Հայկազնի
Իշխանութիւնն այն մեծ նախնի
Ի յայլազգեաց ստրկացեալ,
Եւ բուն գաւառն իսպառ քանդեալ՝
Զայն հեղեղէ Ռոբէն զերծեալ,
Որ ի Կագկայն զարմէ սերեալ։
Իբրու զտապանն զայն զՆոյի,
Էբաց զերկիրս այս մեր տոհմի։
Սա զԿոստանդին ծնաւ որդի,
Զհայր Թորոսի և Լէոնի;
Եւ հայր զորդի փոխանորդեալ։
Յետ Կոստանդեա Թորոս տիրեալ։
Ապա Լեւոն պայազատէ,
Այն, որ երէք որդւոք ծաղկէ,
Քանզի Թորոս և Սահֆանէ,
Ընդ Սլեհի ծնան ի նմանէ։
Յետ տիրելոյ միմեանց զկնի,
Մնաւ Սահֆանէ երկու որդի.
ԶՌոբէն երէց, որ նախ տիրեաց,
Ապա զԼևոն, որ յաշորդեաց։
Սա զխափանեալ թագըն նախնի
Նոր նորոգեաց մերոյ ազգի,
[Ո]րպէս Պարոյրն որ դրուատի,
Թագաւորեաց քաջս այս արի։
Զապէլ դշխոյ դուստրը սորա,
Զուգեալ տիրեաց ըզկնի նորա.
Սա արքային Հեթմոյ լծեալ,
ԶԼևոն արքայ հայրն իմ ծնեալ,
Որ վասն ազգիս մեր և երկրի
Զանձն իւր դնելով չոգաւ գերի։
Իսրայէլի զոյգ պատուեցաւ,
Յեգիպտոսէ տերամբ դարձաւ
Ի բազմահոյլ ծփանս ալեաց,
Յորում աշխարհ կայր յայլազգեաց։
Եւ մանաւանդ ի գոռոզէն՝
Յեգիպտացոց բռնաւորէն,
Որ շուրջ ըզմեաւք դրացեաց տիրեալ
Եւ զԱնտիոք մեծն աւերեաց՝
Զբազում ամրոցս ըմբռնելով,

Եւ զքրիստոնեայս կոտորելով։
Որ և յաշխարհ մեր արշաւէր,
Երիցս անգամ զայսգոյն գործէր,
Սակայն պահել հայրն իմ չանաց
Զազգս և զերկիր յիս փոխանցեաց։
Իսկ առին և յաճախեցին
Մեծ արհաւիրք երկիւղագին,
Զի թշնամիքն զաւրացեալ,
Եւ Տրապալեաց նախկին տիրեալ։
Եղեւ խաւար մեզ անհնարին,
Անմխիթար սուգ ցաւագին,
Քանզի առին զքաղաքն Ա.ֆֆա,
Եւ զբոլորն որ ընդ նմա.
Տեսին թէ չէ՝ ոք աւդնական,
Եւ ոչ ինքեանց ինչ ներհական։
Զի յորս էաք մեք ապաստան
Ազգ Նետողացըն հեղգացան։
Զայս առաւել յոխորտացեալ,
Զմեզ որսային գազանացեալ,
Որք զաւրս անթիւ գումարեցին՝
Զնչել զմեզ ամենևին։
Որպէս առիւծ մռընչելով,
Զմեզ յորովայնս համարելով,
Զի այն գթած Տէրն այլ առնէր,
Զազգս և զգաւառս հրաշիւք փրկէր,
Եւ այսորիկ միջնորդ լինէր,
Որ մեր գթած նախահայրն էր։
Գորովաբար* մեզ միշտակցեալ
Գրիգորիոս սուրբն երանեալ,
Որ վասն մեր կրեաց նախկին
Զկիրս տանջանացն և զՎիրապին։
Այժմ ըզմեզաց մեր պատոհաս
Ըզգան խրատուն արժանահաս,
Ի բաց ի մէնջ առ դարձուցեալ,
Յինքն և յաթոռն իւր ընկալեալ,
Հովիւն եղ զանձն ընդ ոչխարաց՝
Մատնեալ զոսկերս իւր նշխարաց,
562ա Քանզի գոռոզն այն խոտորէր
Եւ զդղեակ հաւրն պաղարէր։
[Վ]սեմ զկայն Հռոմայականն՝
Զհայրապետաց մեր նստարան,
Զոր և յիշելն է ողբալի

* Գրված է «գռովորաբար»

Աղէտ, կսկիծ, ճառ դողալի՝
Քանզի տիրեալ ի սուր մաշէր,
Ողորմելի գերիս վարէր,
Սա Արուզարդան նոր կատաղէր,
Քանզի զտաճարն հրդեհէր՝
Ըզհայրապետն սուրբ զրպէր
Ըզսրբութեան կահն զերէր,
Որում և թաթ աղոյն յայտնէր,
Ընդ Բաղտասար զնա տարագրէր՝
Մինչ դեռ հարճիւքն իւրովք լրէր
Պղծել զանաւթսն այն որ սուրբ էր,
Քանզի ըզփոխան էառ յանձին,
Որպէս գերազք տապանակին՝
Եւ այժմ կան դեռ հարուածեսք
Անձամբք յանձինըս բաժանեալ՝
Իսկ մեք շնորհիւ պահեալ եղաք,
Որպէս ճնճղուկք յորսոյ զերծաք,
Չի որոգայթըն փշրեցաւ,
Որով աւրհնեմք ըզգութն անրաւ՝
Պատմեմ և այլ ինչ յիշելի
Ի մերս եղեալ ժամանակի՝
Պատմէլ որդւոց ձեր ըզկնի,
Ի յաւրինակ զգուշալի.
Զքառասուն և մի քուի,
Որ ընդ հաւթեանցն է հաբիւրի (1292),
Եղև ոմանց յամառութիւն՝
Ի սուրբ զատկէն մոլորութիւն՝
Որք և ամաւթ չհամարէին,
Չի ընդ նեստորսն դասէին՝
Եւ յընթանուր եկեղեցւոյ
Պատառէին յախտ հերձուածոյ,
Քանզի զվնաց ապրիէլին,
Որ ճշմարիտ էր աւր զատկին,
Ի բաց թողուլ բաջաղէին,
Չերեք տասան աւր ընտրէին՝
Իսկ մեք զուղիդն դատեցաք,
Լինել ժողով յաւժարեցաք՝
Քննել զգիրս աղաչեցաք,
Եւ զոր ստուգի յանձին կալաք՝
Յայն ժամ եկեալ ի միասին,
Հանուր լրմամբ եկեղեցին
Զաստուածաշունչ գիրս քննեցին,
Զբանս սուրբ հարցն ի մէշ ածին՝
Եւ անդրստին ճշգրտեցաւ

Արդարութիւն խնդրոյն ցուցաւ,
Որով հրաման կանոնեցաւ,
Տանիլ ի վեցն հաւաստեաւ
Քանզի սուրբ դիրքն Մուսիսի
Չորեքտասան աւրընն լուսի,
Տաճն ցուցանէ Հրնոյն զատկի,
Եւ այս բազմաւք անդ հաստատի։
Իսկ Նոր կտակս աստուածայինն,
ԶՅիսուս, ասէ, դալ ի զատկին.
Եւ անդ խաչեալ յայդ ուրբաթին,
Յարեաւ յետ այնմ ի յերրորդին։
Որով թէ աւրըն հին զատկի,
Պատահեցէ կիրակէի,
Զի խաչելոյն աւր հանդիպի,
Փոխի ի միւսն որ ըզկնի։
Ապայ թէ մէջ շաբաթու դա,
Հուպ կիրակէն իւր զատկանայ,
Որպես կանոնն է Նիկիա,
Եւ ամենայն հարց ըստ նորա։
Եւ զայս Կիւրեղ ասէ յայտնի,
Ընդ այլ բազմաց հարցըն խրմբի,
Զի խաչելոյն աւր Քրիստոսի՝
Չորեքտասան դիպաւ լուսնի։
Զայս Դիոնէսիոս պատմէ։
Եւ Եւսեբի քաջ վկայէ,
Եւ միւս Կիւրեղ համաձայնէ.
Ի վեցտասան զյառնելն ասէ։
Չորեքտասանն էր յայտ ամի,
Յաւրն մէծի չորեքշաբթի,
Ուր և Հրէից բոլոր խմբի
Տեւաք առնել ըզտաւն զատկի։
Իսկ կիրակէ նոր ըզկնի
Ութ և տասանց աւր էր լուսնի,
Գնացեալ ազատ յամենայնի,
Աւր յարութեանն էր ստոյգ զատկի,
Զայս իմաստնաւք յոյժ քննեցաք,
Յաստեղաբետսըն քաջ հարցաք,
Յետոյ զլուսինն աչաւք տեսաք,
Թեև գրաւք վաղ հաւաստացաք։
Այլ և Հրէիւք ճշմարտէցաւ,
Զի հինկ շաբաթըն լրացաւ։
Ի շաբաթ մեծ լրումն եղաւ,

Ուղեղ զատիկն տաննեցաւ*։
Յուրում բոլոր ազգք որ ի նոյն,
Միարանեալ եղեն ուղղոյն։
Արդ րղպատմեալըս սակաւուք,
Եղբարք, սիրով ընկալարուք
Եւ զմեզ յիշել մի մոռանայք,
Որք յաղաւթելն քաղցրանայք։
Եւ մտնապանդ զծնողն զիմ
Յիշել, ով տեարք, առ ձեզ ժըտիմ.
Անդ արքայ հաւրն իմ Լևոնի,
Զկեռան դշխոյ մայրն իմ բարի,
Բոլոր նախնեաւք որ ըզկնի,
Հաւքայն զարմիւք ազգատոհմի։
Մաղթեմ հայցել Տեառն Յիսուսի,
Տալ քաւութիւն մերոյն պարտի։
Եւ ձեզ կրկին փոխատրեսցի
Ողորմութիւնն անզրաւելի։
Զի մեզ և ձեզ առատասցի,
Յաւղն վըտակաց նորա շնորհի,
Աւրհնել ըզնա ընդ Հաւրն իւրում,
Եւ ընդ Հոգւոյն իւրո Սրբոյ
Միշտ և յաւետ և յապառնոյ,
Զերիման ի մի բնութեան նոյնում։

Բ

Գրիչ՝ Ստեփանոս

561բ Աւրհնութիւն, որ կարդայ,
Գովութիւն, որ լսէ,
Փառք՝ տուպաւղին,
Եւ յիշատակ գրչիս, ամէն։
Թուակ[անին] ՉԽԴ (1295) գրեցաւ։

Գ

81ա Ով ոք ընթեռնու կամ աւրինակէ զգիրքս զայսն, նա թող յառաջ զնախադրութիւնս գրէ ու ապա զցանկքն, զի յետև շինեցաւ նախադրութիւնս, քան զգրոցս գրելն, նա ես այնոր համար յետև դրի։ Ապա որ գրէ, նա թող զամէն նախադրութիւններն յառաջ գրէ ինչվի յԱւետարանն, ու այնկից ընդ այն թող հայնց գրէ զկաթողիկէիցն ու զԱռաքելքն ընդ ցեղ գրած է, և զիս մեղաւորս զՍտեփանոս յիշեա անմոռաց, զի խիստ աշխատեցայ։

Դ

108բ Ո՛վ պատուելի և սրբասնեալ եղբարք մեր և հարք, ով ոք աւրինակէ զգիրքս զայն, նա թող յառաջ զնախադրութիւնն գրէ ու ապ[ա] զցան-

* Ձեռագրում երկու տող շատ խնամքով ջնջված է։

կըքն։ Զամէն գրուց ի հետ իւր դիր, ապա զնախադրութիւնն յառաջ դիր, քան զգանկն, և զհարաբայիս նախադրութիւնն ի յիւր տեղն դիր զկնի կատարման Դատաւորացս, և զիս յիշեա։

ե

286ա Զստացող սուրբ մատենիս զբարեպաշտ թագաւոր մեր զՀեթում և զծնողսն իւր յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր։ Նա և զիս մեղաւք լցեալ զդրոզ սորա զՍտեփանոս, և ծնողսն իմ և զզարմն։

զ

306ա Զանպիտան գրիչս և զմեղաւք լցեալս զՍտեփանոս աղաչեմ յիշել, տէ։

է

497բ Ով տէր իմ արքայ Հեթում, աղաչեմ յիշեա ի սուրբ աղաւթս քո զմեղաւոր գրող սորա զՍտեփանոս ըղծերացեալս մեղաւք, զի յոյժ աշխատեցայ ի գրելն սորա, մանաւանդ ի ցանկերս կարի՝ խիստ աշխատեցայ։

601

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան 352 (1371 թ.)

Հեթում Բ թագաւոր

1բ Համար ֆռանկին, որ շաբիստր կոչեն, որ ի վերա ամենայն Աստուածաշնչին ճապաղած է, ես Հեթումս, որ և Յովհաննէս կոչիմ, բազում աշխատութեամբ փոխեցի առ ի դիւրաւ գտանելոյ, եթէ բան ինչ իցէ երկոցունց միշի։

Արդ գլուխ ծննդոցն ունի համարս Ծ (50)։ Ուր ֆէ և ռա կա՝ (ֆռ) ֆռանգին է։ Օգնեայ Աստուած իմ։

602

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ ԳԷՈՐԳԵԱՅ ՍԿԵՒՈԱՑԻՈՑ

Երևան 4825

Գրիչ՝ Լևոն

ա

207ա Փառք քեզ տկղրանն և անեղին Հաւր և պատճառին բոլորիցս։

Փառք Որդւոյ անկատարածի և անսկզբան սկսեալ ի Հաւրէ մինչամանակաբար։

Փառք և Հոգւոյն Սրբոյ ելուղին ի Հաւրէ, բղխմամբ անհատաբար, առաւղին Որդւոյ և լցողին զեկեղեցի իւր սուրբ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից, ամէն, ամէն։

Ի թուականութեանս Հայկազ[ե]ան տամարիս ՉԽԴ (1295), ի հայրապետութեան տեառն Գրիգորի, և ի թագաւորութեանն Հայոց Հեթմոյ բարեպաշտի, որ ճշմարտիւ թագատրեաց ի վերայ մարմաչեցուցանաւղ և գունակ-գունակ հեշտակարծ ախտից առաթուր կոխելով, և գրեթէ զամենայն աշխարհական փառս նանիր և ունայն վարկանելով, որպէս և էւ Նա և զանուն թագաւորութեանն ծանր կրեր, և նուիրէր զանձն Աստուծոյ, և յոլով անգամ հրաժարէր ի հայրենական աթոռոյն՝ գնայր յաղքատանալ, զոր հազիւ հազ մեծաչան տենչիւ ոչ կարէին յեզաշրջել զկամն նորա, և զայս դիպուածս Աստուծոյ ի յանձն առնեմք։

Իսկ մինչ յայս էր՝ սիրէր զՔրիստոս և զեկեղեցի նորա, և զընթերցումն սուրբ գրոց։ Սա տեսեալ զՄեկնութիւն համարձակախաւս աստուածատես մարգարէին Եսայեայ, և զի մեծն Եփրեմ կարճ և համառաւտ քաջալորակի բանիւք էր անցեալ ընդ նա, իսկ աստուածաչնորհս Յոհան՝ Ոսկիբերան յորչորջեալ, վասն հոգեչահ վարդապետութեան և առատահոս իմաստիցն, որ ի բերանոյ նորա բղխեալ արբուցանէր զականջս եկեղեցւոյ, և սա՝ ճոխաբար խաւսեցեալ, եւ քաջ ախոյեանն ուղղափառ հաւատոյս սքանչելին Կիւրեղի՝ սակաւ և նա խոսեցեալ։

Արդ, բարգավաճս այս վսեմ Հեթում, ի մտի եդեալ զսոսա ի մի ժողովել՝ զաւակ ի Սիոն զաս իւր և բարի նախնեաց գանձելոյն, խնդրեաց զայս առնել հարկեցուցիչ հրամանաւ ի յերբերջանիկ և ի լուսաբան րաբունապետէս Գէորգեայ, որ ընդ այսու ժամանակ առաքինութեամբ յանձին ներգործութեամբ բնաւին փարթամացեալ, որ այժմ քրտնաջան երկեամբք հրահանգէ զհամբակսս, որ բանի են հետևեալ զյոլովս։ Իսկ սա, որպէս քարոզ ճշմարիտ՝ հնազանդեալ հարկեցուցանաւղ հրամանին։ Եւ զի էր Սարգսի վարդապետի հոգացեալ, առեալ և զայն, և զայլ բանսն սրբոց մեկընչացն՝ համառաւտ զուգեաց առ իրեարս կարճաբանութեամբ եդե[ա]լ, զմըտացն ամբոզջ ունելով զզաւրութիւն, և գրեալ ձեռամբ իւրով, ետ նմա։

207բ Արդ, ես զայս տեսեալ՝ վերջինս ի բնաւիցս, փցնամիտ աչակերտս սորին Գէորգեայ, անարժան քահանայ, պիտակագործ անուանեալ Երեմիայ յորջոր[ջեա]լ, հետևոտն աշխատեալ, երկու անգամ առ թագաւորն իմ երթեալ՝ խնդրեցի զարարեալ աւրինակն։ Եւ վասն սիրոյ նորին ետու գրել զսա Լևոնի դպրի, լաւ և արհեստի գրչի, ի յիշատակ բարի մեղուցեալ հոգւոյս իմոյ Երեմիայի, և ծնողին իմոյ Նանոցի, որ բազումս է աշխատեալ զհետ մեր, և հաւրն իմոյ Կիրակոսի, և քաւրն իմոյ Հէմեճթրւոյ, որ ետ դրամ Խ (40) ի գրող սորին, և Սարգսի քահանայի, որ պատրաստեաց նիւթ սորին։

Արդ, յերեսս անկեալ արտասուալից մաղթանաւք և մեծաւ յուսով աղաչեմք զամենեսեան, որք հանդիպիք այսմ գրոց, թողութիւն մեղաց և հանգիստ հոգւոցս մերոց խնդրեցէք գրողիս Լևոնի և աչխատողի, և հաւրն իմոյ Կոստանդեայ, որ յայսմ ամի հանգեաւ ի Քրիստոս խաղաղութեամբ, որում ողորմեսցի նմա Տէր։ Եւս առաւել աղաչեմ յիշեսջիք ի Քրիստոս զպատուական քահանայն Ստեփանոս գրիչ՝ զհաւրեղբայր իմ, և զհարազատ եղբայրն [ի]մ զՅոհան[նէ]ս քահանայ, և զայլ եղբարսն իմ, և ծնաղսն իմ։

Ա[յլ] Նաև զպատուական քահանայն զԵրեմիայն և ծնաւղսն իւր հանգիստ և ողորմութիւն խնդրեցէք ի գթածէն Աստուծոյ ի Հաւրէ, եւ յողորմածէն Աստուծոյ ի յՈրդւոյ, եւ ի բարեխնամ Աստուծոյ Հոգւոյն, և բարեխաւս ունելով զկայծակնամաքուր և զաստուածաբան մարգարէս զԵսայիս և զմեծն զտէր Եփրեմ, եւ լուսահռչակն զՅոհան, եւ զպայծառն Կիւրեղ, զի և սոքա յետ Աստուծոյ երկրորդաբար յոյս են մեզ և բարեխաւսք մեզ յիշելեացս և ձեզ յիշողացդ զոր մաղթեմ ամենեցուն այսպիսի յուսով զյիշատակս մեր կատարել յիշմամբ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է աւրհնեալ ընդ Հաւր և Սուրբ Հոգւոյն, այժմ և միշտ, յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Եղիցի, եղիցի, ամէն, ամէն։

Բ

97բ Հարանցդ սրբոց և եղբարցդ սիրելեաց աղերս մատուցանեմք, որք ըստ տարազի ինչ հանդիպիք սուրբ գրոցս, թողութիւն մեզաց խնդրեցէք ի յանբաժանելի բաժանեալ Սուրբ Երրորդութենէն Երեմիայի սպասաւորի բանի, և ծնողաց իւրոց Շահոցի և Կիրակոսի և քեռն իւրոյ Հէմեֆաւոյ, եւ գրոցի դպրոցս Լևոնի, և հաւր իմոյ Կոստանդեայ, որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս։ Հանգիստ և ողորմութիւն հայցեցէք նմա, և Տէրն ամենեցուն զձերն թողցէ զյանցանս յիւր միւս անգամ գալուստն, և որոց զամէնն ասեն։

Գ

Ստացող՝ Երեմիա

Զբանիս աշակերտս Երեմիա քահանայ աղաչեմ յիշել ի Տէր աղաւթըս ձեր, ընդ նմին և Աստուած զձեզ պարգևեսցէ, և նմա փառք յաւիտեան։

Դ

Երևելոյս, որ ես տեսայ՝
զաներևոյթսն մոռացա,
Բարունութեան ես ցանկացայ,
զանհասութիւն սորա չտեսայ։
Եսայեա բանին դիպայ՝
և զմեկնութիւնն նորա ստացայ,
Մարդկան ազգի, որ հետ մեր գայ՝
զտարազ բանիցն պերճանայ։
Ի Հայր Աստուած թող մաղթենայ՝
զբանն և զհոգին անբաժան ընդ նայ։
Արքայութեանն, որ առ նա կայ՝
Աւետածիկ զիս խնդրէ նայ։
Յոյժ բաղձալոյն իմ Մանուէլայ՝
զառատ բարիսն Աստուած թող տայ։
Ի դպրութեան գիրն գրի նայ,
և մերաինքն հարակայ։

Բանիս անդէպ, որ ինձ սկսայ,
զհաւր տեղիք ելից ինձ նայ։
Ապենիաղն որ անհնայ
զպէտս հոգւոյ նմա նա տայ;
Ներողութիւն մեղաց մեղ տայ,
ղաւազակին ի մեզ գթայ։
Էին լուսոյ և եռանձնեայ
փառք և պատիւ միշտ յարակայ, ամէն, ամէն, ամէն։
Առ Գէորգեայ դեգերեցայ,
Արմէնուհեանն բաղձացայ,
Ոահ լուսոյ առ դա տեսայ,
Ջուր յորդաբուխ միշտ սա մեզ տա։
Ի յութերրորդ գարուն որ գայ,
Նա իւր առնու միշտ, անխնայ, ամէն*։

603

ԱՒԵՏԱՐԱՆ

Սրուանձտյան, Թորոս Աղրար, Բ., էջ 343—344

Գրիչ՝ Ստեփաննոս։
Վայր՝ Սկետայ։

Գրեցաւ սուրբ քառավտակ Աւետարանս ի թուիս Հայոց ՉԽԴ (1295), ի հայրապետութեան տեառն Գրիգորի, եւ յիշխանութեան Հեթմոյ որդւոյ Լեւոնի, ձեռամբ ամենամեղ քահանայի Ստեփաննոսի, ի սուրբ մենաստանս Սկետայ, ընդ հովանեաւ Սուրբ Փրկիչս, եւ կենսագիր Սուրբ Նշանիս, եւ մաւր լուսոյ Աստուածածնի, որ է առընթեր անմատոյց դղեկիս Կամբրունի։

Արդ, աղաչեմ զամենեսեանդ, որք ընթեռնոյք զսուրբ տառս եւ լուսաւորիք ի սմանէ, յիշեսջիք ի Քրիստոս զտառապեալ եւ զմեղաւոր գծողս, եւս եւ զեղբաւրորդիս իմ զՅովաննէս քահանայ, և զԼետն սարկաւագ, զՅուսեփ պատանի, վասն զի ի խնդրոյ սոցին, ի պակասեալ ամաց եւ ի զառանցեալ տիոց, եւ ի ծերութեան հասակի, շնորհաւք բարեւտրին Աստուծոյ աւարտեցի զսա յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց, եւ ի վայելումն յառաջասացեալ արեան մերձաւորացս... Յիշեցէք զհարազատ եղբայրն իմ զԿոստանդին, որ ի սոյն ամի վախճանեցաւ եւ սուգ անբերելի եթող մեզ...։

---

* Առաջին տառերը հոդում են «Երեմիայի բան էր։ Վերջին վեց տողում եթե երկրորդ և երրորդ տողի տեղերը փոխենք, կստացվի «Առաջին»։

604

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀՆԴԱՄԱՏԵՆԻ ՎԱՐԴԱՆԱ ԱՐԵՒԵԼՑԻՈՅ

Երեան 2604

Գրիչ՝ Աւշին
Վայր՝ Աւմէնի անապատ

ա

186ա Աղաչեմ ընդ նախաչիշատակեալս Վարդան վարդապետ հ[ո]գեւոյ այսր մատենի, զոր ի նա[խ]կնադունիցն մեկնչաց, և զոր [ի շ]նորհաւքն Աստուծոյ յիւրմէ յաւելե[ալ], յիշման բարւոյ արժանաւոր[ն և] զմեծապատիւ արհիեպիսկոպոսն մեծահռչակ սուրբ ուխտին Հաղպատայ զտէր Յոհաննէս, որ զաւրինակս էր սրբագրեալ, և զնոր[ին ձ]եռնասուն զեղբաւրորդին հարազա[տ] Սարգիս քահանայ, որ ի վարձս կրթ[ութեան] բանի է պարապեալ, որ և շնորհեաց իսկ զարինակս, որոց լիցի մասն ողորմութեան գտանել ի Քրիստոսէ յաւուրն վերջնում, ամէն։

186 [Փ]առք և գոհութիւն եռանձ[ն]եայ և մի աստուածութեանն Հաւր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Դարձեալ լիալիր բերանով աւրհնութիւն Աստուծոյ, որ արժանի ա[ր]ար զիմս անմաքրութիւն պիտականուն Երեմիա, հետևել բանի յանապատիս Աւմենի, առ ոտս Գեորգեայ վարդապետի։

Ի թուիս Հայոց ՉԽ (1291) և զկնի Դ (4) ամի լրմանն (1295) ցանկացաւզ եղեալ նախամարգարէին Մովսէսի մարգարէութեանն Մեկ[ն]ութեան, զոր արարեալ է սրբոց հարցն աստուածամերձից, և ի մի ժողովեալ երրորդանիկ վարդապետն Վարդան, և ետու գրել զսա ձեռամբ Աւշնի, ի հայրապետութեանն Հայոց տեառն Գրիգորի [և] ի թագաւորութեանն Հայոց [Հ]եթմոյ բարեպաշտի։

Արդ, երեսս անկեալ աղաչեմ զամ[են]եսեան, որք հանդիպիք այսմ գրոց և աւգտիք կամ աւրինակեք, [վ]ասն սիրոյն Քրիստոսի յիշատակի արժանի արարէք զանարժանս զԵրեմիա և զծնաւղս իմ և զամենայն հաւատացեալս ի Քրիստոս, և յորոց արդ[ա]նց ետու զսա գրել՝ կրկին աղա[չեմ] յիշատակի արժանի առնել և մե[ղա]ց թողութիւն հայցել ի Քրիստոսէ։

[Ն]աև զսուտանուն գրողակս Աւշին և զծնաւղս իմ և իմոցն յիշատակել աղաչեմ, և Աստուած որ առատն է ի տուրս բարեաց, յիշելեացս և յիշողացդ առհասարակ ողորմեացի, ամէն։

բ

Ստացող՝ Երեմիա

162բ ՋԵրեմիայս ի Տէր յիշեցէք աղաչեմ, և զիմսն, ամէն։

Գ

Գրիչ՝ Յովաննէս

Զսակաւ աշխատողս զգծողս զՅովաննէս յիշեց[էք] ի Քրիստոս։ Ի թւին Հայոց ՉԽԴ (1295)*։

605

ԿԱՆՈՆԳԻՐՔ ՀԱՅՈՑ ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ՄԽԻԹԱՐԱՅ ԳՈՇԻ

Երևան 488

Ստացող՝ Վարդան
Գրիչ՝ Կիրակոս

Տ28բ Գոհութիւն քեզ ամենասուրբ Երրորդութիւն յամենայն արարածոց՝ յիմանալեացն և ի նգալեացս, և յիմոյ անարժան բերանոյս, որ ընդոստուցեալ կարողացուցէր զկաշկանդեալ և զպարաւանդեալ տոռամբք անաւրենութեան զշուառ ոգիս ի յոյզ և ի խնդիր ելանել այսմ հ[ո]գեկեցոյց մատենիս։

Փառք անծնին Հաւր՝ ծնիցելոցս ծնրնդեան պատճառի։ Փառք ծնիցելոյն ի նմանէ Որդւոյ՝ գերելոցս ազատութեան պատճառին։ Փառք Հոգւոյն Աստուծոյ՝ մահկանացուացս կենդանութեան պատճառին, ամէն։

Բազում և մեծամեծ են պարգևք բարեբարութեանն Աստուծոյ առ ազգս մարդկան։ Նախ և առաջին ստեղծմանն ի պատկեր իւրոյ բարեբարութեանն և տէր և իշխան, որոց ի վերայ երկրի կացուցանելն, և ապա ողորմութեամբ խնամելն, և աստուածատուր աւրինաւք դաստիարակելն ըստ պիտոյից՝ ի դէպ և ի պատշաճ ժամանակս։ Իսկ ի գալ միածնի Որդւոյն Աստուծոյ յաշխարհ, առեալ մարմին՝ լինի որդի մարդոյ, զի զմարդիկ արասցէ Որդիս Աստուծոյ, և ի ձեռն սուրբ մկրտութեանն Հոգին Սուրբ կենդանագրէ զմարդիկ ժառանգս Աստուծոյ և ժառանգակից Քրիստոսի։ Իսկ սուրբ առաքեալքն աշակերտեալք ի փրկչէն և ընկալեալք զՀոգին Սուրբ մեծահառաչ իջմամբ ի սուրբ վերնատանն, լուսաւորեալ լեզուաւքն հրեղինաւք և եղեալք խորհրդագէտք և խորհրդածուք աստուածային պարգևացն, ի գիտացեալ հոգւովն, թէ գալոց են գայլք յափշտակաւղք, և թէ քակեսցին ոմանք ի հաւատոց, և ըստ իւրաքանչիւր ցանկութեանց կուտեսցեն վարդապետս, և փրկչին առակն, որ յաղագս որոմանց ագարակին։ Դարձեալ ըստ պատշաճի սահմանէին կանոնս և յաւրինէին կարգս քրիստոսաւանդս ընթանրական եկեղեցւոյ, և ինքեանք ընթացան ընդ տիեզերս, և լցին զաշխարհս ամենայն աւետեաւք Աւետարանին, և լցին զերկիր գիտութեամբ Տեառն իբրև [աւ]ուրս բազումս, ըստ մարգարէութեան Եսայեայ այսոցիկ այսպէս եղելոյ։

Իսկ ընդդէմ սոցա զինի սկզբնաչար բանսարկուն կռամոլ թագաւորաւք և չարափառ հերձուածողաւք՝ քայքայել և խախտել զմեծամեծ

---

* Պատռված է։ Հովհաննեսը ձեռագրի վերջի մասի գրիչն է, պայմանականորեն լրացնում թվականը նախորդ հիշատակարանի համապատասխան։

կարգս եկեղեցւոյ։ Իսկ [բարեր]ար և մարդասէր Տէրն մեր և փրկիչն ի
ձեռն աստուածասէր և բարե[պաշտ] թագաւորաց և հոգիագումար
միաբանելոց հարց և [հայրապ]ետաց յուրաքանչիւր ժամանակս, ըստ
պատահման ||| ի ձեռն սուրբ սինհոդոսաց կտրէ ի բաց զչարսն չարու-
թեամբ և ըստ պատահման իւրին յաւրինեն կանոնս ղդուշա ||| առաքե-
129ա լականին։ Զայս աւանդ առեալ հարքն մեր||[հա]ւաքեցին ի մի զաս-
տուածապարգև աւ[ան]դս՝ զկարգս և [ըկանո]ս եկեղեցւոյ հաստցին
առ մեզ, առ որում ժամանակի հանդիպի թիւ թուա[կա]նիս Հայոց ՉԽԴ
(1295), ի հայրապետութեանն տեառն Գրիգորոյ ե ի պարոնութեանն
աստուածասէր և բարեպաշտ պարոնին Հայոց Հեթմոյ:

Արդ, ո՞վ դասք մաք[րա]գունից և ժառանգորդ գերաշխարհիկ կա-
յենից ||| [հո]գեկեցոյց բժշկարանէս աւրհնութեամբ [յի]շ[ատա]կաւ||
յիշեսջիք ||| ղստացաւղ դրոցս զՎարդան, և ըստ հոգւոյ եղբարք իմ
զՎան[ական] և զԳրիգոր, որ ի չքաւոր ողքատութենէ իմմէ բավական
արա[րին] զնիւթ և զծախս, այլ կարծր տաժանմամբ տարաշրջութեամբ
գա[առա]ց անըմբերելի նշդեհութեամբ ի բերմանէ աղցատրիս յայսց
ալեկոծանաց միջի նաւահանգիստ ամենազան հանդիպեալ վսամապետ
մեծ և ըստ հոգւոյ հայրն մեր Գէորգ րաբունի, որ ղտարաբեղում և զվտա-
րանդի կեանս մեր հաւաքել հանգոյց, նախ ըստ մարմնականին մասին,
և ապա՝ առանց նախանձու առատահոս վտակաւք հոգիածաւալ շնոր-
հիւն, լրապէս ուռճացոյց զամաի երկիր բնութեանս մերոյ և առատացոյց
զսովեալ շտեմարանս հոգւոց մերոց առ ի բաւականանալ, և այլոց քաղ-
ցելոց մատակարարել զբանն այսց տրիցտուր առ ի Տեառնէ առձեռնես-
ցի կամալիր և սրտավայել, ըստ երկուց մասանց՝ հոգեկանին և մա[ր]-
մը[ն]ականի։ Առ ի սորայս ազդմանց զարթուցեալ իմոյ հոգւոյս թըմ-
ր[ու]թիւն, հետևեցայ այսմ աստուածաձիր բժշկարանիս, և կարի իմն
առաւել [փա]փականաւք և ջերմեռանդ սրտիւ ետու գրել զսա։

Արդ, աղերս մաղ[թա]նաց առաջի արկանեմ զկնի եկելոցն, և որք
ընդ մեզ դեռևս, որոց անյայտ նախաժամանելն առ Աստուած, եւ քանզի
իմաստնոց է սա պիտանացու [և] գիտնոց է հետևելի, որք աւգիտք ի
սմանէ, մանաւանդ յորժա[մ]յաւետայեղձ բաղձանաւք առնոյք ի զա-
նազան դեղոց զբժշկութիւն [հո]գւոյ և մարմնոյ, և այլոց շնորհէք,
յիշեսջիք ի մաքրափայլ յաղա[ւթս՝ ձեր] զՎարդան, և զերկրորդ վար-
ժապետն իմ զԽաչատուր րաբունի, և ո[րդի] իւր զԱստվածատուր քա-
հանայ, և զմարմանական ծնաւղս իմ զՄին[աս] քահանայ, և զմայրն
իմ զՄեծտիկին՝ զփոխեալն ի Քրիստոս, որոյ ողորմեաց Տէր, և զհ[ա-
րա]զատ եղբարքն իմ զԳաբրիեղ, զՏիրացու, զԱւգեր, ևս [և] զայլ մեր-
ձակայքն։ Ոչ մոռասջիք և զգծաւղ սորին՝ զԿիր[ակոս] ք[ահանայ], և
ծնաւղս իւր, որ բազում աշխատութեամբ ի յանգ հան[եաց] զ[գիրս,
Աստուածո]. ողորմեսցի նոցա և մեր թագաւորն Քրիստոս յահեղ ատ[ե-
129բ նին, ուր ամեն]քն ի մի յարմարին դպրութիւն, և անունադրութիւն |||
ճշմարիտն ում|||իցս փիտութեան յարեսցի ||| [մ]շ[տա]պէս, զի ընդ
ուղղադաւան սուրբ հարցն, և ես անարժան ծ[առ]այս ծառայիցն Աս-
տուծոյ արժանի եղեց հանդիպիլ անձկալոյն իմոյ և ի առ ի նմանէ ընդու-

նել՝ զձիրս պարգևաց կենաց ան[կո]ծից, [որ]ում փառք յաւիտեանս յաւիտենից։ . . .

606

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6290

Ստացող՝ Յուսէփ
Վայր՝ Դրազարկ

ա

Փառք եռահիւսակ դասանուէնեանն ապէնիազին՝ կատարեալ և անսահմանելի Աստուծոյ Հաւր, Աստուծոյ Որդւոյ, Աստուծոյ Հոգւոյ, յաւիտեանս, ամէն։

332բ Շնորհիւ Տեառն ամենակալի և նորին աւգնականութեամբ աւարտեցաւ եռահրաշ||հոգիաշարդ Աւետարանս, զոր էր շաղկապեալ երանեալ աւետարանչացն ըստ բազմերանգ դունաց ի մի ոստայն անկելով հանճար, զոր արուեստակեալ անուշոցաց ծաղկանց իւղափեցական կազմութեամբ, որ ըստ հոգւոյն հատկութեամբ իմանի, զանազան որակութեամբք գաղափարելով ըստ յոքունց արփիացելոյն դասակցութեանց, առ ի եկեղեցւոյ յարմարումն յաւիտ խաղաղութեամբ գլխոյն պատշաճեալ, ղի յայսմանէ կատարելութիւնն։

Զորք աւետարանք ի բազում պատճառէ. չորէքկերպեան կենդանիք՝ մարդ, առիւծ, ցուլ, արծիւ. չորք նիւթք աշխարհէս՝ հող, շուր հուր, աւդ. հակառակ անհաշտելիք, և սիրելիք անքակտելիք. չորք-չորք գիր անուան երրորդութեանն՝ Հայր, Որդի, Հոդի. չորք գետք բխեալ ի դրախտէն՝ Փի-
333ա սովն, Գիհովն, Տիգրիս և Եփրատէս, չորս||անգիւնս և եղջերք սեղանւոյն, չորք դեմք խաչին, և այլ բազում պատճառս, յորս գաղափարի չորեքեան աւետարանիչքս։ Զի թեպէտ և բազում բանք ի սոսա, որ երեին ներհակք միմեանց, այլ քաջ ճշմարիտք և յոյժ միաբանք միմեանց։

Արդ, գրեցաւ Մաթէոս ի խնդրոյ հրէից հաւատացելոցն որք էին յերուսաղէմ, զկնի Ը ամի համբառնալոյ Փրկչին, ի լեզու հեբրայեցի, յերուսադէմ քաղաքի, զոր առեալ Թովմայի քարոզէ Հնակաց, եւ Բարթողիմէոս Դելմասատաճի և Ամբաճայ և ամենայն արևելից։

Իսկ Մարկոս գրէ ի հրամանէ Պետրոսի Վխմի վարդապետին իւրոյ յԱղեքսանդր քաղաքի, ի լեզու եգիպտացի, զկնի ԺԱ ամի, և աւետարանէ յԷթեոպէ և ի Լիւբիկիա, և լուսաւորէ զարևմուտս։

Իսկ Ղուկաս յառաջագոյն աշակերտ գալով Գաղիանոսի բժշկապե-
333բ տի, որ և ինքն||էր արուեստիւ բժիշկ, յետոյ աշակերտի սրբոյն Պաւղոսի, որ և հրամանաւ իսկ նորա գրէ զկնի ԺԸ ամի, ի լեզու հռոմայեցի, յԱնտիոք քաղաքի, և քարոզէ ի Բիւթանիա և յամենայն Մակեդովնիա։

Իսկ Յովաննէս որդի Զերեդեայ, որդի Որոտման, որդի սուրբ կուսին, որ փարեցաւն զսարսափելի պարանոցաւ անմատոյց լուսոյն զվերինն որոտալով աւետէ, աւետարանէ զկնի ՃԳ ամի, գրէ յԵփեսոս քաղաք, և լուսաւորէ զամենայն Ասիա։

Արդ, աւետարան կոչի, որ պատմէ մեզ զեղեալ բարութիւնս, զխաղաղութիւն, զոր եղաւ հրեշտակաց և մարդկան, և քակումն բռնութեան Քշնամտյն կենաց մերոց, զաւերումն դժոխոց, զաղատութիւն հոգւոց, զընդ աշմէ Աստուծոյ նստել բնութեան մարդկութեանս։

...Բայց գրեցաւ լուսազարդեալ Աւետարանն ի լուսալրական ժամա-
334ա նակի ի սկզբ||բանց արարչութեանն մինչև առ մեզ ՅՈՉ (6606), իսկ ի կենարարին գալստենէն ՌՄՂԷ (1297)*, իսկ ի Խոսրովային Պարսից սկսեալ մերս Քիւ ՉԽԴ (1295)։ Եւ գրեցաւ սա յանապատիս Դրազարկ կոչեցեալ։

Արդ, եղև զրաւ կատարման սորա ի Քիւս ՉԽԴ (1295), յորում դեգերել կամք առ դրան սորա, ակն ունելով ամէնաւրհնեալ մարն լուսոյ Աստուածածնին, խնդրել ողորմութիւն մեզ և միեղէն եղբայրութեանս, և ամենայն աշխարհի քագաւորաց քրիստոնէից։ Եւս և բարեպաշտ քագաւորին մերոյ Հեթմոյ, որ ի յարգասիս մանկութեան իւրոյ բարձեալ բերէ ինքեան զամենայն գործս առաքինութեան, նմանեալ քագաւորաց սըրբոց, զոր աչն Աստուծոյ պահեացէ զսայ, և եղբայրս սորա, հանդերձ ամենայն մերձաւորաւք և հնազանդեցելովք իւրովք, ի կամս Աստուծոյ,
334բ ի խաղաղութիւն քահանայապետական||աթոռս, սուրբ և անբիծ հայրապետին տեառն Գրիգորի։ Որ և քահանայապետն մեր Քրիստոս պահեացէ զսա, և զամենայն եպիսկոպոսունս և զվարդապետս, զերիցունս և զսարկաւագունս և զընաւ ուխտս եկեղեցւոյ սրբոյ, անարատ և ուղիղ հաւատով՝ մինչ ի գալուստ անմահ սուրբ քահանայապետին մեր Քրիստոսի յաւգիլ ի գլուխն մեր Քրիստոս, ասելով. Ահաւասիկ ես և մանկունք իմ որ ետուր ինձ Տէր, զոր և լսիցէ երանական ձայնէն Նիստ և դու ընդ ընդրեալ իմոյ հազարապետաց դասուց երկոտասանիցն։

Եւ արդ, ես մեղաւք մեռեալ հոգիս անպիտան և հողս Յոսեփ փիլիսոփայ, եառու գրել զսուրբ Աւետարանս ի յողորմութենէն Աստուծոյ։ Եւ արդ, զՔոյս ի քոց քեզ մատուցանեմ, Տէր իմ Քրիստոս, ընկալ իբրև զխէրևէշ այրոյն, թերևս արժանաւորիլ ամենագոյթ ողորմութեան քո՝
335ա յաւուրն աներեկի, ուր բանքն||սպառին և գործքն թագաւորեն։

Արդ, գրեցաւ զերիք Աւետարանն սուրբ և պատուական հայրըն մեր և վարդապետ Թորոս փիլիսոփայ, որ և գրեացէ Քրիստոս զինքն և զծնաւղըս իւր և գիր յաւիտենական կենացն։ Իսկ զմիւս ևս Աւետարանն, զգլուխն զսուրբ աստուածաբանն Յովհաննէս՝ գրեաց Յոհաննէս գրիչն և հոգի եղբայրն մեր, և զարդարեաց պէս-պէս երանգով և գունով, որ և հանդերձ փրկութեան ընկալցի ի Քրիստոսէ ինքն և ծնաւղքն իւր։

Եւ արդ, աղաչեմք արտատուալից պաղատաւանք, ո՛վ դասք լուսեբամից, յորժամ ընթեռնուք զսուրբ Աւետարանս, կամ այլ ազգ տարազաւ իւիք զինչ և իցէ, ևս առաւել ի ժամ մեղսաքաւիչ սուրբ պատարագին յիշեսջիք զհայրն մեր զպարոն Սարգիս վաճ[առական], զծերացեալն աւետարանական իմաստիւք, անարատ և ուղեղ քաղաքավարութեամբ անցեալ ընդ ծով կենցաղոյս, որ և եկեալ ի սուրբ ուխտս, էհաս աւր

* Գրված է ՌՃՂԲ (1183)։

335բ վախճանի իւր։ Յաւանդեաց զՀոգին ի ձեռս տուողին, և թաղեցաւ առաջի դրան Սրբոյն Թեոդորոսի, ի թվին ՉԽԴ (1294), ի հոկտեմբեր ԻԲ (22), որ և առընթեր սորա կայ թաղեալ առաջնորդ սուրբ ուխտիս տէր Թորոս, որ և հանգիստ և ողորմութիւն չնորհեացէ Քրիստոս սոցա, և ամենայն ննջեցելոց, որ հանգուցեալ են ի սուրբ ուխտս։ Յիշեսջիք ի Տէր և զայժմոյս կենդանիքս, և զառաջնորդն մեր տէր Կոստանդին, զեպիսկոպոսունս, զվարդապետս, զերաժիշտս զԲարսեղ, և զմիոյս Բարսեղն, և զՄանիլ փիլիսոփայն՝ կազմող սորա։ Յիշեսջիք առաջի Քրիստոսի և զայլ եղբայրութիւնս, որ մեզ սիրով հանգուցեալ են, և ինքեան ի խաչ ելեալ են կարեաւք և ցանկութեամբ հանդերձ, հանապազ ուշ եղեալ կռուին ընդ անմարմին Անտիոքա, առ ի զաւրացուցանել զներքին մարդն, որ հանգչի Հոգին Աստուած։

Յիշեսջիք ի Տէր զպապասաւորս և զգործաւորս, և զհոգևոր որգեկն մեր զՍարգիս անբիծ քահանա։ Ապա թե արժանի առնէք յիշատակի զյետնեալս ամենայն բարեաց գործառնութենէ, զմեղաւք մեռեալ հոգիս Յուսէփ, և ծնաւղն, և զեղբայրս մեր զԱկովբ, զհոգևոր եղբայր մեր և զգնացեալսն առ Քրիստոս, զպարոն Սարգիս, զտէր Թորոս, զԲարսեղ, զՊետրոս, և զԿոստանդին, և զայլ ննջեցեալսն, և ձեզ յիշողացդ տացէ Տէր ողորմութիւն յաւուրն աներեկի, և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։

Բ

12բ Դու ստացաւղ քոոյս բանի
Եւ զարդարաւղ աթամ տառի,
Եւ զծառայի քո Սարգսի
Գրեա զանուն ի գիր քո կենդանի։
13ա Որ փոխեցաւ ի Քուականին
Յեւթն հարիւր քառասուն երրորդին (1294)։
Եւ զՅուսեփա փիլիսոփայի,
Զհոգիընկալ հովիւ բարի
Եւ ընդ նմին զՈճան գրչի*։

607

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 181

Գրիչ՝ Յովանէս
Վայր՝ Մլէճ

ա

Փառք անեղին և անմահին, վսեմագունին և մշտնջենաւորին, երեքանձնեա տէրութեան և միաստուածութեանն, յաւիտեանս, ամէն։

---

* Գրված է երկու հանդիպակաց խորանների մեջ. կապույտ խորքի վրա, ոսկեգույն երկաթագրով։

226բ Յեւթն հաւրիւր թուականի
Քառասներրորդ և չորրորդի (1295),
Կատարեցաւ գիրս տառի,
Աստուածաշունչ Սուրբ կտակի։
Յառաջ Փրկչին՝ Տեառն Յիսուսի,
Աւետարանս գլուխ չորրորդի,
Որ ի շնորհացն Քրիստոսի
Պարգեւեցաւ մարդկան ազդի։
Ձորս երկնաչնոց է տեննչալի
Եւ երկրայնոցս սոսկալի,
Եւ առաքելոյն սուրբ Պօղոսի
Արքայութեանն բացողի,
Ընթհանրականն քարոզի
Հեթանոսաց և հրէի
Աստ յարմարեալ և ի կարգի,
Շարամանեալ դրուատեցի։
Եւ զԴործս սրբոց առաքելոցն,
Որ յետ յարութեանն Քրիստոսի
Զքառասուն աւր կատարի,
Մինչև ի տաւնն պենտակոստի։
Զկաթողիկէսն որ զկնի՝
Ի միասին շարադրեցի։
Եւ զբարձրագոչ բանս Եսայեա,
Աստուածաւախս մարգարէի,
Ի միասին կարգեալ եղի,
Ըստ իւրաքանչիւր պատշաճի։
Արդ, գրեցաւ գիծ սուրբ տառի,
Ձեռամբ իմով բազմամեղի
Եւ սուտանուն քահանայի,
Յովաննիսի փոցուն գրչի,
Ի խնդրոյ սրբազանի
Եւ կուսակրաւն քահանայի,
Որոյ անուն Ներսէս կոչի,
Եւ եղբարն իւր Թորոս ասի,
Որ փափաքմամբ իւրոյ սրտի,
Առ յիշատակ իւր բարի
Ստացաւղ եղեալ այս կտակի,
Աստուածաբան սուրբ մատենի։
Արդ, աղաչեմ յամենայնի,
Ձձեզ որ սիրող էք մատենի,
227ա [Եւ է]ք տրդիք Սուրբ Սիոնի,
Եւ ը[նթ]երցող այսմ տառի,
Յիշեսջիք սիրով սրտի,
Եւ աւժընդակ մերձ ի հոգի,
Զհայրն Ներսէս անուն բարի

Եւ զազգայինս Թորոս կոչի՝
Զքահանայն սրբահոգի,
Որք ճգնութիամբ զայս կենցաղի
Սպասաւորեն Տեառն և Փրկչի։
Եւ զծնողսն իւրեանց բարի,
Զհրաժարեալսն առ ի յաւուրի,
Զի թողութիւն նոցա շնորհի
Ի յարարչէն ամենայնի.
Հաւրեղբաւրն իւր ծերունի
Կարապետի քահանայի,
Զնոյն և քեռոյն Խաչակրաւնի
Հայր անուանի միակեցի,
Եւ հանգուցեալ հաւրն իւր Վասլի,
Եւ ննջեցեալ մաւրն՝ Շուշնի,
Այլ և եղբաւրն Զաւրվաւրի
Եւ մաւրքեռի իւր Վաւրդանուշի։
Սուրբ և արհի եպիսկոպոսին
Մլէճ ուխտին առաջնորդի,
Որոյ Վաւրդան անուն կոչի,
Եւ մականուն Հիւսն յորջորջի,
Որ փոխեցաւ ի յայսմ ամի
Առ թագաւորն ամենայնի,
Զի գասեսցին յաջակողմի,
Յաւգեաց. դասուն ըստ Պետրոսի։
Այլ, որ առատն է յամենայնի
Յիշողացտ ողորմեսցի,
Եւ յիշխլոցս քաղցրասցի
Ի յայնմ ատուր աւրն վերջի,
Որ աւրն է մեծ և սոսկալի,
Յորժամ Քրիստոս մեզ երևի,
Զի նմա վայել է փառք՝ այժմ և յաւիտեանս։

Բ

147ա ԶՅովանէս քահանա յիշեսջիք։

Գ

229ա Զեռնտու լեր տկարութեանս իմո՝ ժամանել յաւարտ և քեզ փառք տալ հանապազ։

Դ

230բ Ոհ, ի դառն և՝ի վնասակար աւդոյս, թուխտս կոտորեցաւ և կամիմ հեղձնուլ, այ, վա՜յ։

ե

Կազմող՝ Հայրապետ

227 Յիշեսչիք ի Տէր զկազմող գրոցս զՀայրապետ քահանայ։

608

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՐԱԳԻ

Ն. Ջուղա 478, Տեր-Ավետիսյան, Ցուցակ, էջ 744—746

Գրիչ՝ Ստեփաննոս Յերկայն
Վայր՝ Եկեղեաց և Դարանաղեաց գաւառ

ա

Ի վեց հազարերորդի չորեքհարիւրորդի իննսներորդի և չորք թվի (6494) ելանելոյն Ադամայ ի փառակենցաղ դրախտէն, եւ յետքն հարիւր քառասուն և երկու թվականի Հայկականս տումարի (1293), ի դիտապետութեան տեառն Ստեփաննոսի գերելոյն յՕզիպտաւոց, եւ ի թագակալութեան Հեթմոյ՝ որդոյ Լևոնի, առն բարեպաշտի և աստուածասիրի, Մովսէս մեղաւք մեռեալ ոգի, կամեցայ հաւաքումն առնել համառատարար մեկնութեան սրբոյ պատարագիս, զոր սուրբ հարքն Խոսրով Անձեւացեաց եպիսկոպոսդս և Ներսէս Տարսոնի յառաջադոյն ընդ երկար քննեալ էին, նաև զոր յայլոց սրբոց հարց եւս կարացաք բանագտակ լինել, յանձնիւր տեղւոջ եղաք առ ի զբօսանս մանդաց Սիովնի։ Եւ զայս ոչ թէ միայն յանձէ կամ սիրով խիզախեցաք, այլ յորդորել առաւել իմաստուն բարեւնապետէն Յովճաննու, որ և ի սոյն ամի փոխեցաւ ի Քրիստոս, որոյ շնորհեցէ Տէր Աստուած հանգիստ և ողորմութիւն։ Արդ, եթէ ոմանք հաճոյ թուեսցի՝ Տեառն շնորհ, եւ թէ ոչ՝ ի բոնսն ընթասցի Մեկնութիւն և զմեզ անպարսաւս թողցէ, զի ըստ առն եւ զաւրութիւն իւր եւ իւրաքանչիւր ոք զիւր վարձս առցէ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ և աւրհնեալ ընդ Հաւր եւ Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենից, ամէն*։

Յաստուածապետական առատաձիր պարգևացն յամենեսեան առ ճառաբար տարածանի ըստ զանազան տարազու պարգևացն առատաձիր շնորհ, մանաւանդ առ մարդկայինս բնութիւն, որք են բանականութեամբ բարզաւաճեալ և արքունական պատկերաւ պատուեալ, որոց և շնորհեաց Աստուած ըստ իւրաքանչիւր ժամանակի ըզպատշաճ պիտոյիցն պարգեւս՝ ոմանց խաւսել Հոգւովն Սրբով զբանս շնորհաց աստուածային խմաստիւք, իսկ ոմանց մեկնաւղաւրէն վերլուծութեամբ զնոսին բացայայտել առ ի սուրբ աւսմանս մանկանց եկեղեցւոյ։ Որպէս եւ սրբոց հայրապետացն հանգոյնատիպ առաքելոցն խաւսեցան զբանս աղաւթից եւ պատարագաց ըստ հաճոյիցն Աստուծոյ, հանգոյնատիպ նոցին ի փըր-

* Մինչև այստեղ հեղինակի՝ Մովսէս Երզնկացու հիշատակարանն է։

կութիւն ոգւոյ մարդկան, զի որպէս առաքեալքն եւ մարգարէքն զբանս աստուածաշունչ գրոց, այսպէս եւ հայրապետքն զերգս աղաւթից, զորս ե յառաջիկայս է տեսանել ոչ միայն զառաւել պիտանացու հանապազորդեան երգոցս, այլ եւ զբացայայտութիւն սրբոց լուսաւոր հարցն, զոր ի սմա տեսանեմք, որ եւս առաւել զարթուցանեն զմիստ մեր յաստուածային խոկում հասկողական մտաւք որոճալ զտեսակս բանից։ Նաև որպէս առաւել սարասիւք զառաջի եղեալ տառս տեսանեմք համառատիւ և չահաւետ արգասիւք զարդարել նորագոյն ինչ և սրտից բաղձալի ծաղկաւղ մտաց մանկանց Սիովնի։

Եւ արդ, կին ոմն բարեպաշտաւն և երկիւղած յԱստուածոյ, բաղում արդիւնս առնելով ի սուրբ եկեղեցիս՝ վասն իւր և իւրայոցն ամենից, որ եւ ետ գրել զգիրքս զայս յիշատակ եղբաւր իւրոյ հանգուցելոյ, որոյ անուն Պաւղոս կոչիւր, զորս գրեսցէ Տէր Աստուած ի գիր կենաց յաւիտենից։

Եւ արդ, գրեցաւ սա ի Թուաբերութեան Արեգական տումարիս ՉԽԴ (1295)), ի վերայդիտողութեան տեառն Գրիգորի, և ի թագաւորութեան Հեթմոյ որդւոյ Լևոնի թագաւորի, առն բարեպաշտի եւ աստուածասիրի։ Եւ գրեցաւ ի մէջ երկուց գաւառաց Նկեղեաց և Դարաճաղեաց, եւ հռչակաւոր մենաստանս Սուրբ Գրիգոր կոչեցեալ՝ առ դամբարանի Սրբոյն Լուսաւորչին մերոյ, ձեռամբ Սահփաճոսի՝ ի սրտէ խոցեալ եւ մեղաւք լցեալ քահանայ, մականուն Յերկայն կոչեցեալ, ընդ որում գործակցեալ դեռաբոյս քահանայ մանուկ տիովք, որոյ անուն Յովաճէս Ճանաչիւր, որոց ողորմեսցի Տէր Աստուած, զի բազում սիրով, յուսով և չանիւ գրեցին։

Յիշեսջիք և զվաճառում ծերունին, որ աւդնական եղև նիւթ որակիս, նաև զառաչնորգք և զփակակալ և զամենայն միաբան եղբայրութիւն սուրբ ուխտիս, եւ որք նպաստ եղեն ի կոկ ենթակայիս; Եւ որ առատն է ի տուրս պարգևաց, հանուրց ամենեցուն ողորմեսցի, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ընդրեսես և զՄովսէս յիշեսջիք ի Տէրն եւ ի նոյն լիշիք բարի աւրհնելոյն յաւիտեանս, ամէն։ ի. զ. չ. շ. ի. լ. շ. բ. լ. ց. շ. ց. վ. հ. լ. ք. շ. մ. ժ. վ. մ. բ. զ. լ. ս. չ. ի.

Գիրքս այս սուրբ Գրիգոր Լուսաւորչին գերեզմանին է, որ է ի լերինն Սեպոյ, ի յայրսն Մաճեայ, որ է յ[ր]նկերաց Սրբոց Հռիփսիմեանց, յաղբիւրսն լուսոյ եւ բարեհամ կոչեցելոյ, որ և գրաւեալ ունի ընդ ինքեամբ առ ի պահպանութիւն զերկուս հռչակաւոր գաւառս Նկեղեաց և Դարաճաղեաց կոչեցելոց, ուր և գրեցաւ գիրքս։

Արդ, մի ոք իշխեսցէ հանել զսա ի Սրբոյ Լուսաւորչիս գերեզմանէն՝ յափշտակելով, կամ վաճառելով կամ փոխան տալով կամ գրաւ դնելով կամ ոսմեք շնորհելով։ Զունի ոք իշխանութիւն, ո՛չ առաչնորդ, ո՛չ վերակացու, ո՛չ փակակալ, ո՛չ իշխան։ Եւ ով յամառի կամ ձեռնամուխ լինի, մասն և բաժին զՅուդայի մատնչի և զխաչահանուացն ընկալցի։ Եւ թէ ոք լրբի զգիրս զայս կտրելով կամ եղծանելով՝ կտրեսցի ի կենացն յաւիտենից, եւ թէ ոք դերեալ կամ դողացեալ գտցէ և դարձուսցէ ի տեղի իւր՝ վարձո առցէ յԱստուծոյ։

Փակակալ և սպասաւորք խնամով պահեսցէն, ոչ յարձակս ընգենլով կամ առանց դաստառակի, զի մի դատեսցին ի Տեառնէ։ Կատարիչք պատուիրանիս աւրհնին յԱստուծոյ։ Տէր Աստուած ողորմեա Ներսիսի և Մովսիսի, եւ ծնողաց նոցին եւ զարմից, եւ որք յիշէն սրտի մտաւք զմերս նուաստութիւն եւ նոցա ողորմեա Տէր, ամէն։

Բ

Ջատացաւղ լուսազարդ մատենիս զՊաւղոս յիշեսջիք ի մեղաց թողութիւն։ Ընդ նմին եւ զերջանիկ եւ զհոգելից վարդապետն զՄովսէս եւ ծնաւղսն իւր եւ զիս զտառապեալս եւ զսրտէ խոցեալս զՍտեփաննոս Յերկայն և զծնաւղսն մեր, եւ Աստուած զմեզ յիշէ առատ ողորմութիւն, եւ նմա փառք։

609

ՓԻԼՈՆԻ ԵԲՐԱՅԵՑՒՈՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ.

Փիլոնի Եբրայեցւոյ մնացորդք ի Հայս, Վենետիկ, 1826, էջ 622
Փիլոնի Հեբրայեցւոյ ճառք, Վենետիկ, 1892 թ. էջ 177

ա

Փառք եռակի դիմացն և եզակի բնութեանն յաւիտեանս յաւիտենից։

Մաղթանս աղաչանաց մատուցանեմք վերլուծողաց այսր մատենի մեծ իմաստնոյն Փիլոնի, որք առ ի սմանէ աւգտութիւնս ինչ գտանէք, թողութիւնս յանցանաց հայցեցէք յԱստուծոյ յոքնիմաստ հոետորին, որ կոչի Յոհաննէս րաբունի, և մականուն Ծգնկաւեցի և ամենայն արեան մերձաւորաց իւրոց։

Եւ իմոյ յանցանացն այլ հայցեցէք թողութիւն անարժան գծողիս, պիտականուն քահանայ Վարդան սպասաւոր բանի, և ծնողացն մերոց և ուսուցչացն, և Աստուած զձեզ յիշեսցէ իւր անճառ բարիսն, ամէն։

Բ

Ով սրբասնեալ ընթերցողք, որք աւգտիք յայսմ աստուածաշունչ տառիցս Մեկնութենէ, յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր զսրբասնեալ րաբունապետս մեր զՅովհաննէս, և զանարժան գրիչս Վարդան սպասաւոր բանի և Աստուած զձեզ յիշէ ի իւր անճառ բարիսն։

610

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6087

Գրիչ՝ Խաչատուր

ա

261բ Փառք և գոհաբանութիւն հոանձնեայ [միաս]նութեան յամենայն արարածոց յէից /// [ի թուին Ջ]ԽԴ* (1295) կատարեցաւ Աւ /// խ և քառավտակ աղբերս /// նոյ չորեցունց լուսաւորչացն [Մատ]թէոսի մարդոյ, Մարկոսի առ[եւծ]ոյ, Ղուկասու եղին, Յովհան[նու] արծտյ ի յարբումն և ի դմայլու[թիւն ա]րժանաւորաց լսողաց և ի զովաց[ու]մն մանկանց առագաստի փեսային [զար]դարելոց ընդ նմա, լսելով ճկայք աւր[հնե]ալքն։ Եւ ի վայելումն Յովհաննէս քահանայ /// մեծաւ փափադմամբ և խանդախա[ա] սրտիւ ստացաւ զսա յիշատակ իւր [և ծ]նաւղաց իւրոց Գրիգորոյ, ևս առաւ[ել հա]նգուցեալ մաւր իւրո Մարեմայ
262ա ընդ /// Քրիստոս ամենասուրբ ծննդեամբն‖հանգուսցէ զնա ի դասս ա[րդարոց]։

Եւս առաւել յիշատակ ծեր ք[ահանա]յի և հանգուցեալ ծնողաց նո-ցի[ն Յով]աննէս քահանայի և Առաքելիճ, և այլ բազ[ում] հարազատաց ի Քրիստոս կատարելոց, առհ[աս]արակ, ծերոց և տղայոց, արանց և [կա]նանց, և հանգուցեալ եղբաւրն Սարգս[ի] և նորածաղիկ եղբաւրն Մարտիրոսի, և Քրիստոսի Աստուծոյ փառք յաւիտեանս, ամէն։

Եւ արդ, աղաչեմ զամենիսեան զսուրբ և վեր///անընկալ քահանայսըդ, որք կարդայք և զեկուցանէք լսողաց, և կամ աւրինակ[էք], զսոսա յիշման արժանի առնէք խնդրել[ով] զթողութիւն մեղաց; Ընդ սոցին [և] փց[ուն գր]իչ սուրբ Աւետարանի գե[աչատո՞ւ]‖ղ լիցի Քրիստոս յիւրում [արքայ]ութիւն և եթէ զբազում [մեղաց] մերոց խնդրէք զթողութիւն [հան]դերձ գ /// Տէր ողորմայիւ և /// է սրտից ձերոց թողցէ ձեզ Քրիստոս‖[պա]րգևից բարեաց և նմա [փառք] յաւիտեանս յաւիտենից։

բ

Ես Վստամս, որ ստացա զսայ ի հա[լալ] ընչից մերոց ինձ և կենակցի մերոյ յիշատակ է ի Սուրբ Գրիգոր, որ յիշէ յիշ[ե]ալ լիցի ամէն**։

---

* Միասյուն և փոքրադիր ձեռագիր է, որի թերթերը եղերից այրված են։ Սույն թերթի ծայրը պատռված է, որոշակի երևում են «Խ»-ի երկրորդ կեսը, «Դ»-ն և պատիվը։ ԽԴ-ից առաջ այս դեպքում պետք է Ջ (700) ենթադրել, որովհետև ձեռագրի հնագրական տվյալները այդ են թելադրում։ Հիշատակարանը դնում ենք 1295-ի տակ.

** 70բ էջում գրված է. «Յուսեփ երիցու ծնունդն ի թվ ՉԺԲ (1263), և իւր որդուն Ստեփանոսին Չխ (1291)»։

611

ԱԽԵՏԱՐԱՆ

Երևան 7536

Գրիչ՝ Կարապետ

ա

Ի ծագման բանին Աստուծոյ և ի լնուլ զառածս մարգարէիցն, որով զարգարեալ նորոգեցան տիեզերք ամենայն, որում փառք ընդ Հաւր էակցի և Հոգւոյն փառակցի երրորդական աստուածութեանն յաւիտեանս յաւիտենից, արարչին բնաւից եղականաց երկուց աշխարհաց, անմարմ-
228ա նոց|և մարմնաւորաց, իմանալեացն և զգալեացս յանկէտ յաւիտեանս։ Ի շնորհաց աստուածածին պարգևաց Հոգւոյն Սրբոյ կատարեալ եղև տառս աստուածապատումս և քարոզն աւետաբերս և տիեզերալուրս՝ ձեռամբ մեղապարտ գրչի Կարապետ քահանայի, յիշատակ ինձ և ծնողաց մերոց և ամենայն արեան մերձաւորաց՝ գանձ անկողոպտելի, զաւակ ի Սիոն, և պաշար առ Քրիստոս մտին։

Արդ, ես նուաստս յամենայնի Կարապետ աղաչեմ զամենեսեան, յոմ որ անկցի սա և աւգտեսցի սովաւ, յիշումն բարի և յոյս բարի գանձեսցի սովաւ նմա և իւրացն ամենայնի, և մեզ և մերոցն նմանապէս, ի մեծ պարգևատուողէն Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեանս։ Ամենեցուն մեզ և մերոցն, և որք յիշէնն զմեզ՝ թողութիւն մեղաց և փրկութիւն ոգոց, և ճշմարիտ կենացն ընդ ամենայն սուրբս մասին ժա||(ո)անգութեան բաժին վիճակի ընդունելի լիցին ի համաշխարհական դատաստանին, յաւուր մեծի և ահաւորի, ողորմութիւն յողորմածէն Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեան։

Ի թուիս Հայոց ՋԽԴ (1295) ի վանս*։

բ

Զանպիտան ձևող խորանիս եւ զկազմող յիշեսջիք ի Քրիստոս աղաչեմ**։

612

ՀԱՒԱՔԱԾՈՒ

Վիեննա 364, Տաշյան, Յուցակ, էջ 817

Գրիչ՝ Յովհաննէս

Վայր՝ Խորին աճառպատ

Փառք...։ Գրեցաւ գիրս այս ի Խորին անապատիս ի հռչակաւոր եւ սուրբ ուխտիս, ընդ հովանեաւ մաւրս լուսոյ սրբոհոյ Աստուածածնիս եւ կենսակիր Սուրբ Նշանիս եւ մերոյ Սուրբ Լուսաւորչիս, ձեռամբ յոգ-

---

* Այստեղ վերջանում է գրչությունը, չնայած ամբողջ էջը դատարկ է։

** Գրված է Մարկոսի Աւետարանի կիսախորանի ներքևի մասում։ Այս խորանները նման են համաբարբառի խորաններին, որոնք ավելի շնորհալի վարպետի գործ են։

նամեղիս Յովհաննիսի: Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք, յիշեցէք զբազմամեղ գրիչ, եւ զիմ եղբայրն զՆերսէս քահանայ՝ ծնաւզաւք մերովք եւ զարմիւք՝ կենդանեաւք եւ ննջեցելովք, եւ զմեր վարդապետն զԹորոս քահանայ եւ զԳորգ, եւ զՄաթիրոս կրաւնաւոր եւ /// տրանն զբարի հոգին։ Որ զմեզ յիշէ սրտի մտաւք՝ յիշեալ լիցի յողորմութեանն Աստուծոյ, որում փառք յաւիտեան։

Գրեցաւ ի թվիս ՉԽԴ (1295)։

Արդ աղաչեմ որ զայս գիրս ընթերցի՝

Գրոյս մեղադիր ոչ լիցի,
Զի այլ աղէկ ոչ գիտէի,
Այլ միայն յիշէ ի բարի,
Զի եւ ինքն յիշեսցի։
Եւ որ զայս գիրքս ընդ ձեռամբ ունիցի,
Աղաչեմ զի հանապազ ընթերցի,
Այնչափ տարոյ իւր մեղքն թողցի
Նոյնպէս եւ լսաւղն այամ տառի։

613

ԱՂԱՒԹԱԳԻՐՔ

Երևան 6332, Փիրղալեմյան, Նշխարք էջ 291բ

Ստացող՝ Մարիան դուստր Հեթումի
Լամբրոնի տեառն

291բ Ի թուականութեանս Հայոց ՉԽԴ (1295), ի հայրապետութեան տեառն Գրիգորի եւ ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ՝ որդի Լեւոն արքայի, գրեցաւ Աղաւթագիրքս ձեռամբ Ռուբէնի, հրամանաւ մեղուցեալ ծառայիս Աստուծոյ Մարիունիս: Որ կարդայք կամ աւրինակէք, յիշեսջիք ի մեղսաքաւիչ յաղաւթս ձեր զստացողս սորին զծառայս Աստուծոյ Մարիուն, եւ զծնողս իմ զհանգուցեալ ի Քրիստոս՝ զհայրն իմ զՀեթում, որ է տէր անառիկ դղեկին Լամբրոնի, և զմայրն իմ զԹեֆանաւ, և զքոյրն իմ զթագուհի Հայոց զԿեռան, և զանդրանիկ որդեակն իմ զՄանուէլ, որոց ողորմեսցի Քրիստոս Աստուած մեզ և ի հանդերձելումն, ամէն։

614

ԱՒԵՏԱՐԱՆ

Մարտիրոսյան, Ցուցակ Մշո, էջ 99

Գրիչ՝ Յովսեփ
Վայր՝ Սիս

...Արդ, յանկ ելեալ աւարտեցաւ աստուածախաւս եւ աւետաբեր տառքս Աւետարանիս ի թուաբերութեանս Աբեթական տոհմիս թվին ՉԽԴ

(1295)։ Արդ, աղաչեմք զամենեսեանդ, որք հանդիպիք այս սուրբ Աւետարանիս յիշեսջիք եւ Աստուած ողորմի ասէք Յովսէփ *քահանային, որ գրեաց եւ ծաղկեաց զսա ի* Սիս *քաղաքին, ի թվին Հայոց ՉԽԴ (1295)։*

615

ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ

Տիրայր վրդ., Ցուցակ Օքսֆորդի էջ 121—122

Գրիչ՝ Բանարգէս
Վայր՝ Երեզ անապատ

Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի ղտետրիկս, ի թւիս Հայոց ՉԽԴ (1295), ի յանապատիս Երեզ *կոչեցեալ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Սրբոյն Գրիգորի Հայաստանեաց Լուսաւորչին չարչարանաց տեղին։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւկտիք ի սմանէ կամ տեսութեամբ հանդիպիք, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զիս՝ զմեղաւք սևացեալ ղսուտանուն, որ կոչի* Բանարգէս: *Աղաչեմ զքեզ յիշել ի Տէր* զՎահրամ *զսրբասեր կրանաւորն, զհւր մայրապետն՝ զիրիցկինն, մեղաց թողութիւն խնդրել յԱստուծոյ։ Եւ ինքն որ կարող է յամենայնի, ձեզ թողութիւն շնորհեսցէ։ Եւ պարդեվատուն ամենեցուն շնորհեսցէ պարգևս և ողորմութիւն* Պետրոսի *հայրապետին ծնողացն՝ հաւրն և մաւրն հոգեցն; և ամենայն զարմից նորա՝ մեծի և փոքեր, և միաբանից սուրբ եկեղեցոյս, որ ընդ Յ||ով[ան]եաւ որին հանգուցեալ, ամէն, ամէն, ամէն։*

Բ

Ջմեղապարտ գծողս զԲանարգէս *յիշեսջիք ի Տէր և ձեզ յիշողացդ Աստուած թողութիւն առնէ։*

616

ԱՒԵՏԱՐԱՆ

Կոնիբիր, Ցուցակ Լոնդոնի, էջ 16

Գրիչ՝ Քահանայ
Վայր՝ Թեղենիք

ա

Արդ, ես մեղուցեալ ծառայս Աստուծոյ Քահանայս *և* Շմաւոն, *գրեցաք զսուրբ Աւետարանս յիշատակ մեզ և ծնողաց մերոց և ամենայն երախտաւորաց /// էաք եղբարք հարազատք ըստ մարմնո, ուսեալք և սնեալք ի սուրբ ուխտս* Թեղենիս, *առ ոտս սուրբ և պատուական ծերունի հաւրեղբաւր մերո* Նահապետի, *որ հայրախնամ սիրով և գթով սնոյց և ուսույց զմեզ և բարի ծերութեամբ փոխ եղև ի Քրիստոս...*

Բ

Գրիչ՝ Դափք
Վայր՝ Թեղենիք

Շնորհի Տեառն սկսա և ողորմութեամբ կատարեցի զչորեքվտակեան աստուածախօսմբ մատենիս ի լուսաւորութիւն մանկանց առագաստի Նոր Սիոնի, եւ ի բերկրումն ամենայն հաւատացելոց ի Քրիստոս, ի հերքումն Բելիարի, և ի կանկնումն Նոր ազին Իսրայելի։

Բայց գրեցաւ սա ի թվիս Հայոց ՉԽԴ (1295), ի յաւուրն Նետողաց ազգի, որ բռնացեալ ունէր զամենայն աշխարհս Հայոց և զայլս բազումս, որում չեն բաւական պատմել զդառնութիւն և զաւէրութիւնն աշխարհիս, որ իբրև զծով խռովել մրրկածին աւդով զերեքալեանն բերելով զնմանութիւն, ուր ոչ երկիր, և ոչ քաղաք, և ոչ գեաւղ, և ոչ աւանք, և ոչ հրաշազան վանորեայք զխաղաղութիւն գտեալ…

Այլ և գրեցաւ սա ի յանապատիս Թեղենիք կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ և փառաւորեալ Աստուածածնիս և Սուրբ Կաթողիկէիս և այլ սրբոցս, և բազմահոյլ ճգնաւորաց և միայնակեացս, ձեռամբ… գրչի մեղապարտ Դաւթի որ սկսեալ զսայ ոմն անուն Քաճանայ կոչեցեալ՝ ամենայն իմաստիւք և հանճարով լցեալ և ճգնութեամբ և առաքինութեամբ, եւ յորժամ հասեալ ի միջակ տեղի սորա, ապա ի ժամանել աւրհասն և բառնա ի կենաց թերակատար աւուրքք, և թողեալ անմխիթարելի սուգ։ Այլ և եղբայր սորա պատուական և հոգելից քահանա Շմաւոն անուն կոչեցեալ, հարեալ ի սուգ եղբաւրն անմխիթարութիւն, գտնել զսուրբ Աւետարանս, եւ զսա գրել զոր ոչ ժամանեաց եղբայր սորա, և կատարել ձեռամբ իմոյ անարժան Դաւթի…

Որ և կրկին հայցեմ սիրովն Աստուծոյ խոշորութեան և սղալանաց և այլ պատճառի անմեղադիր լինել և ուղղել սիրելաբար զսխալեալսն…

Գ

Զանպիտան գրիչս աղաչեմ յիշել… և զիս զՇմաւոն զանարժան քահանայ, վասն զի թերակատար էր, զի լմնել տվի բազում ջանիւ և յաւժարութեամբ սրտի, Դաւթի անարժան կրաւնաւորի։

Զի և զՅոճանննէս յիշեսչիք՝ զեղբայրս իմ ի Քրիստոս։

617

ՃԱՌԸՆՏԻՐ

Վենետիկ 200, Սարգիսյան, Ցուցակ Բ, էջ 35

Գոճար տիկինն, Աղվորն, Մայր Խաթունն, Թագուհին, մայր Մարգարիտն ի Խարբերդոյ, միաբանին Սուրբ Գրիգորոյ՝ իրենք և իրենց ամէն ննջեցելքն, և տվին ԻԲ (22) սպ[իտակ]։ Քրիստոս Աստուած Սուրբ Լուսաւորչիս բարէխաւսութեամբ թողու զամենայն յանցանքվին, ամէն։ Թվին ՉԽԴ (1295)։

618

ԱԻԵՏԱՐԱՆ

Քյուրտյան, Հավաքածո, 72

Գրիչ
Վայր՝ Սկևռա

295բ *Գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուին ՋԽԴ (1295) ի դիտապետութեանս Հայկազեան սեռիս տեառն Գրիգորի, եւ ի թագաւորութեան Հեթմոյ բարեպաշտի, ի յերկնահանգետ մենաստանս Սկեւռա, ի խնդրոյ հոգելից եւ գերերջանիկ կուսակրաւն քահանային Կոսաանղա, ի յիշատակ հոգոյ իւրոյ, եւ ծնաւղաց իւրոց՝ հաւր Յովհաննիսի եւ մաւր՝ Վանենէ՝ հանգուցելոցն առ Քրիստոս,... եւ հայրապատ եղբարց իւրոց Վասլի՝ նախաժամանելոյն առ Քրիստոս, որ եւ եռանդն հասակի իսկ էր, եւ միւսում կենդանոյն Գրիգորի, զորս պահեսցէ տէր խաղաղութեամբ յաստիս...**

619

ԱԻԵՏԱՐԱՆ

Դուշակյան, Յուցակ Սերաստիոյ, էջ 21—22

Գրիչ՝ Կարապետ

ա

174 *Ջանսուրբ գծողս զԿարապետ յիշեսջիք։*

բ

Կազմող՝ Յովաննէս

457 *...Տէր Աստուած Իսրայէլի ողորմեա քո ծառայի Յովաննէս քահանայի, կազմողի սուրբ Աւետարանիս, ամէն։ Թվին ՋԽԴ (1295)։*

գ

Կազմող՝ Գրիգոր
Վայր՝ Մելաենի Յամոսի
գիւղ

608 *Փառք ամենասուրբ Երրորդութեան Հաւր և Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ։ Զվերջին կազմողս զԳրիգոր երեցս յիշեցէք յաղաւթս ձեր։ Ի թուին Հայոց ՋԽԴ (1295), ի յերկիրն ի Մելաենի, ի գիւղն Յամոսի, ի դուռն Սուրբ Փրկչին եւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Սարգսին։ Աւետարանս յիշատակ է Պօղոս երիցու եւ Ովհաննէս երիցու, Խաչատուրին, Մատթէոսին, որ տուին կազմել իւրեանց հոգոյն. ամէն։*

** Հ. Քյուրտյանը գրում է, որ կան այլ հիշատակագրություններ, բայց ոչ մեկում գրչի անունը չի հիշված, միայն. «այլ եւ ինձ փանաքի գրչիս»։

620

ՃԱՌՆՏԻՐ

Երևան 6196

235բ Նավ՝ ծառայ Աստուծոյ, դուստր Մխիթ[ա]րա և Շնոֆար տիկնա, գրեաց զինքն միաբան Սուրբ Նշանին, որ յամենայն տարի գայ առաջի Սուրբ Նշանին և բերէ դիւր ընծայն ոչխար, և այլ գի[նչ] Աստուած իր պատբաստէ։

Ի թվ. ՉԽԴ (1295)։

621

ՇԱՐԱԿՆՈՑ

«Հանգէս ամսօրեայ» 1926, էջ 342—343

Վայր՝ Սիս

Թվականն ՉԽԴ (1295), թագաւորութեանս Հայոց Հեթմոյ, որդւոյ արքայի Լեւոնի, ի մայրաքաղաքիս Սիսայ, ի դուռն Սուրբ Նշանիս*։

---

* Ձեռագիրը գրված է 1629 թ. Կ. Պոլսում։ Գրիչ Մխքայելը մեջ է բերել նաև գաղափար օրինակի մասին եղած տեղեկութիւնը. «Գրեցաւ Շարակնոցս ի լաւ և յընտիր աւրինակէ, զի աւրինակն գրեալ էր այսպէս», և ինչպես վերևում։

622

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 5476

Գրիչ՝ Սերուն
Վայր՝ Սուրբ Մարի Բազաբ

ա

Փառք եռանձնեայ տէրութեանն, եռահիւսակ միութեանն Սուրբ Երրորդութեանն, Հաւր և Որդոյ և Սուրբ Հոգւոյն, ամէն։ Յանկ ելեալ աւարտեցան գերադրական և գարունադեղ, հոգիաբուխ և շնորհաբաշխ, աւետաբեր և յաւետալոյս, քառահոսան և քառամանեակ, ճառագայթարձակ
263ա *և աշխարհահռչակ, համաստիւռ և համատարած սուրբ Աւետարանս,‖ որ մարդկաւրէն քարոզէ, առիւծաբար գոչէ, իբրև զգուարակ յեղեզէ, և հտնկոյն արծտյ որոտմամբ սլացեալ վայր բերէ զբանն կենաց։ Եւ ծովանման ծայրալիր ծաւալմամբ ծածկեալ էլից զբնաւս և գերահրաշփայլմամբ զարդարեաց սուրբ զեկեղեցի, և պերճազարդ պճնեալ զաբդարեաց զմանգունս Նոր Սիոնի։ Եւ հրաւիրեաց ի յառագաստ անապական հարսանեացն երկնաւոր փեսային, և շնորհեաց վերստին ծնունդ անախտ, և կերակուր անմահական, կոչելով յորդէգրութիւն Հաւրն երկնաւորի և ժառանգակից իւր արար զհաւատացեալսն իւր Աստուած բանն։ Եւ խոստմանցս այս մուրհակագիրս կացոյց զՄաթէոս, զՄարկոս, զՂուկաս և զՅո-*
263բ *հաննէս, և վկայս ածեալ զառաքեալս և զմարգա‖րէս, և զբազմութիւն մարտիրոսաց, և հաւատարմացոյց զանսուտ խոստումն իւր ամենեցուն, որք յուսան ի նա։*

Եւ արդ, եղև գրութիւն սորա ի թվականութեանս Հայոց ՉԽԸ (1296), յաւուրս բռնակալութեան ազգին Նետողական, յորում ամի թագաւոր երեք փոխեցան յաթոռն իւրեանց՝ Քեղաթուն, Պայխաուն և Ղազանն։ Եւ յաւարտի Աւետարանիս էր սաստկաց[ե]ալ խռովութիւն ի միջի իւրեանց, զիրեարս գիշատէին, և վերջք սորա յայտնի է Աստուծոյ միայն։ Եւ էր յաթոռ Սուրբ Լուսաւորչին սգաստ հովուն տէր Գրիգոր, և յաթոռ թագաւորութեան։ Հայոց սուրբն Հեթում, որում ոչ ոք համեմատ ի թագաւորս, բայց Քրիստոս միայն։ Քանզի յայսմ ամի եկն Հեթում ի Կիլիկիոյ յԱրեվեալս, առ ազգն Նետողաց, և հանդիպեալ Ղազանին, որ էր այր ժանդ,
264ա *և ունէր արբանեակք չարք, իսմաելականք։ Վասն‖զի Տէր ընդ Հեթում, յոյժ սիրեցին դնա և պատուեցին կատաղի ժողովուրդքն։ Եւ վասն զի սպանել էր Ղազանն զՊայխաուն, վասն սպանման հաւր եղբաւրն իւրոյ,*

վասն զի քրիստոնեայ էր Պայիտուն, էտուն վճիռ քակել զեկեղեցիս Քրիստոսի։ Եւ հարճորդի ազգն Իսմայելի յարեան ի վերա, եւ զորաւրինակ ազգն Իսահակա հանեալ ի խաչ Քրիստոս, եւ այլ ևս երկուս չարագործս՝ մի աստի, և մի անտի։ Եւ փանաքի ժողովն Իսմայելի վճարեաց զիւրն աստ, քակէին զեկեղեցիսն, և երկուս այլևս զաղաւթանոցսն հրէից և հեթանոսաց։ Եւ յորժամ տկսան ի բաղում տեղիս՝ քակեցին զեկեղեցիսն և ըմբռնեին զհաւատացեալսն յամենայն ազգաց, վասն որոյ զայսպիսի անցս կրեցին, զի Տէր պատերազմէր ընդ մեր։ Եւ նոքայ յանկար-
264բ ծարէն||յարեան ի վերա միմեանց, հայր՝ զորդի, և եղբայր զեղբայր սրախոխող և դիթաւալ արարեալ եղեն անթիւք և եղիցին, և յառաջակայն բարի եղիցի։

Ապա ի մէջ անցեալ արի և [ար]թուն* թագաւոր Հայոց Հեթումն, և համաւզեաց ի խաղաղութիւն զամղկեալ աշխարհս ամենայն, քրիստոսաբար ազատեաց զեկեղեցիս, և զամենայն ուխտն, զորոյ փոխարէնն Տէր հատուսցէ զտրիճտուր իւրն և իւրայոցն, աստ և հանդերձեալսն, ամէն։

Եւ արդ եղև գրութիւն սուրբ Աւետարանիս ի թվականութեանս Հայկազեան տումարին ՉԽԵ (1296), ի գաւառիս Սաւարադա, ի քաղաքիս, որ կոչի Սուրբ Մարի, շինեալ յանուն սուրբ Ճգնաւորին Մարինոսի, ընդ հովանեաւ Սուրբ Կաթողիկէին, և Սուրբ Ստեփաննոսի, և Սուրբ Դաւթի, և Սուրբ Մարինոսի, ի խնդրոյ ժիր մշակին Յովաննէս քահանային, սպա-
265ա սաւորի սուրբ ուխտին||Մարինոսի, ըստ այնմ, թէ՝ Որանի որ ունիցի զաւակ ի Սիոն, եւս գրել զսա յարդար վաստակոց իւրոց։ Եւ մատուցեալ զքրիստոսածիր նամակս Քրիստոսի ի տաճար Դաւթի, յիշատակ յաւիտեանից իւրն, և բարէմիտ ամուսնոյ իւրոյ Ոսկեճատին։ Վասն զի ոչ գոլով զաւակ ըստ մարմնոյ, ստացան զաւակ զՔրիստոս, ի փրկութիւն հոգոց իւրեանց և ծնողաց իւրեանց, հաւրն Յովաննէս քահանայի՝ Լուսկանճ, և մաւրն Խուզելքոյ, և եղբաւրն իւր Մխիթարչի, և քեռն, և ամենայն արեան մերձաւորաց։

Եւ արդ, ո՛վ աստուածարեալ քահանայք և սպասաւորք սուրբ եկեղեցոյ, որք հանդիպիք սուրբ Աւետարանիս կարդալով կամ գաղափար առնելով, յիշեցէք ի Քրիստոս զստացող սորին զՅովան[ննէս] քահանա, և զամուսինն իւր Ոսկեճատին, և զ[հայրն] իւր զԼուսիկն, և զմայրն իւր
265բ զ[Խուզ]ելքի, և եզ[բա]յրն||իւր զՄխիթարիչն, և զամենայն ազգայինսն։ Եւ դուք յիշողդ յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Եւ արդ, ես Սերուն սուտանուն սկ[ս]ա գրել զսայ փցուն և ախմար գրչով և անարհեստ, ի խնդրոյ Յովաննէս քահանայի, յիշատակ իւրն և ծնողա[ց] իւրոց։ Եւ արդ ես՝ Սերու[նս], յոգնամեղս [և] բազմապարտ[ս] և լցեալս չարին արկածիւք և ունայնս ի բարի արգասեաց, զառամեալս մեղաւք և ամենայն չարիւք, չերեսս անդեալ մոխրաթաւալ դիմաւք և մատնատատան մաղթանաւք աղաչեմ զամենիսիան, որք հան-

* Առաջին երեք տառը քերված է, բայց թ-ն կարդացվում է։

դիպիք մա, զի յաւժար սրաիւ հայցէք ինձ մեղաց թողութիւն, և Քրիստոս Աստուած ձեզ յիշողացդ և մեզ յիշելոցս առհասարակ ողորմեսցի, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Ի թվին ՁԽԵ (1296)։

Բ

202ա Ո՛վ սուրբ ընթերցողք, զՄեռուն սուտանուն և զփցուն գրիչ յիշեցէք ի Քրիստոս, և Աստուած զձեզ յիշէ յիւր արքայութիւնն։

623

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան 177

Գրիչ՝ Մովսէս
Վայր՝ Կիլիկիա

ա

34բ Տէր Աստուած ողորմեա Նեռսէսի քահանայի՝ փոխեցելոյն աո քեզ և եգելոյն ի գերեզմանի, և մեղօք մեռելոյս Մօսէսի, և ամենայն հաւատացելոց*։

Բ

54բ Տէր իմ Յիսուս Քրիստոս, ի խորանի քում սրբութեան հանգո զհոգի Նեռսէսի և Մօսէսի, և ծնողաց նոցա, և ամենայն զարմից, և ամենայն հաւատացելոց, և քեզ փառք յաւիտեանս։

Գ

130ա Ո՛վ եղբարք և ծառայակիցք, որք գայք զկնի մեր և հանդիպիք մերում շարագրութեան, այս ձեզ հայտնի լիցի, զի թէ յանցն իւր տեզտչ ոչ է եղեալ գլխահամար իւրաքանչիւր գրոց, այս է պատճառն, զի ի մերում ժամանակի հնոցն արարած ոչ գտաք գլխահամար աստուածաշընչից գրենաց։ Եւ որ մերն էր րաբունապետէ, է՛ զոր չինքէնէ շարժեալ, և է՛ զոր ի մէնջ թախանձեալ եղև, և զայսոսիկ յորժամ արար՝ ի գրոցս սուղ ինչ կայր զրելոյ, և որ տեղի գտաք, եդաք, ուր ոչ՝ լուր ժողովեցաք առ ի պէտս։

Դ

232բ Յորժամ յաւէտ եղր կալցի
Բանք մատենիս զոր աստ գրեցի,
Յիշեա զգծող այսմ տառի
Տէր իմ Յիսուս Դաւթեան որդի,
Անեղ բանիւ Հօրն մեծի
Եւ դասեցո յաշեաց դասի,

* Ձեռագրի սկզբում ավելացված 3—10 թերթերի վրա գրված են ցանկերը այլ գրով, որն սկսվում է այսպես. «Թէ ոք կամեսցի գրել, յառաջ զնախագրութիւնսս գրեսցէ, և ապա զգլխահամարսն ի սկզբունս ամենայն գրոցս։

Մնողօք, զարմիւք մեր համայնի,
Երգել քեզ փառս անլռելի
Անձայն երգով, որ ոչ լսի,
Այլ իմանալ միշտ ճանաչի*,

Ե

252բ Ողորմեա տէր Ներսէսի քահանայի և անարժան գծողիս, և որ յիշէ սրտի մտօք։

Զ

256ա Մովսէս մեղօք մեռեալ ոգի,
Ձձեզ պաղատիմ ողորմելի,
Որք հանդիպիք այսմըն տառի
Եւ ըզմայլիք սորին բանի,
Յիշման առնել զմեզ արժանի...

Է

274բ Տէր Աստուած, ի քո յահաւոր գալստեանդ հանգիստ և ողորմութիւն պարգեւեա Ներսէսի և Մովսէսի՝ ստացողաց և գծողաց տառիս. և արժանի արա լսել զերանաւետ ձայնն՝ ծնողօք իւրեանց և զարմիւք՝ եթէ ծկայք օրհնեալք Հօր իմոյ։

Ը

288ա Բարերար Տէր, ողորմեա Մօսէսի մեղապարտ գրչի, և ծնողաց իւրոց, և զարմից, և ամենայն հաւատացելոց, և քեզ փառք, ամէն։

Թ

338ա Յորժամ մարսիըն թանձրացի,
Կապարն յաւետ տարածեսցի,
Շնորհեա ծաղկել մեզ ընդ նշի,
Կարմըրագոյն սպիտակ վարդի,
Քոց ծառայիցս անպիտանի՝
Գրիչ Մօսէսի և Ներսէսի,
Մնողաց մերոց ամէն զարմի,
Եւ յիշողաց մեզ ի բարի,
Տացի լինել ի նոյն մասնի։ Ամէն։

Ժ

448ա Ողբերգակ, թէ պարտ լիցի
Յայժմու ժամուս մեզ պիտանի,

---

* Հետագայում մեկն ավելացրել է.
«Բայց այնոցիկ երանի,
Որոյ հոգի անդէն հանգչի։

Մանաւանդ թէ եւս յաւետ,
Քան թէ յանցեալն ե յապառնի։
Զի ընդ մարմնոյ վիշտ վտանգի,
Հոգւոյ յաւէտ տարածեցի,
Եկեղեցիք անփոյթ լինի,
Կարգք և օրենք խափանեցի;
Յառաջնորդաց անփոյթ լինի,
Վըրէժխնդիր ոչ գտանի,
Լիրբն համարձակ անամօթի,
Սաստ յումեքէ ոչ լինիցի;
Ոչ պատուհաս յանդգնողի
Ակնառութիւն հաղթահարէ;
Եւ շողոքորթն առ ինք քարշէ,
Փառամոլքըն տիրեցին,
Ուղիղքն ի յետս ընկրկեցին,
Թիւրեալն՝ յօրէնսըն պատուեցի;
Աւրինապահն արհամարհի,
Տրգէտ յառաջեցին;
Ճշմարտախոհք ծաղր լինին,
Եկեղեցիք նըսեմացին,
Պայծառութիւնըքն չրեցին,
Քահանայք խիղախեցին
Եւ անպատշաճքն գործիցին։
Ժողովուրդք մոլորեցին,
Եւ անտերունչք յար շըջեցին։
Զգիրս օրինաց թէ ոք յիշէ,
Յամենեցունց նախատ կրէ։
Նաքուղարդան զայս ոչ գործէ,
Այլ որ յաւետ է քրիստոնէ։
Իշխանայք թէ յիշեցին,
Բանս ոչ բաւէ, զի պատմեցին,
Այլ որ արար բարձիթողի,
Դարձեալ թէ նոյն ողորմեցի,
Որ է օրհնեալ յամենայնի։ Ամէն։

ծա

555բ Մովսէս մեղաւք մեռեալ ոգի,
Վըշտօք բաղում պատեալ գերի,
Թէ վիշտ անձինըս գրէի,
Յաւետ լինէր անթըւելի։
Զթախիծ սրտիւ թէ յայտնէի
Մարդկան լինէր անբաւելի։
Զի ինձ վայ է յամենայնի,
Վասն իմ գործոց, զոր գործեցի,

Հեղդ և ծոյլ և թոյլ գըտի,
Անապաշխար յամենայնի։
Խոստովանիմ, որք գայք ըզկնի,
Հայցել ժտիմ, թէ լինիցի։
Զի թողութիւն ինձ թէ տացի,
Անձին գերուոյս ողորմելի,
Որ միայն յոյսն է ինձ յենլի՝
Ի մարդասէր Աստուածն որդի։
Ծնողաց իմոց, այլ և զարմի,
Լիցի նոցա մասըն բարի,
Եւ յիշողացդ ամենայնի
Աւանդօղ պատուիրանի
Տէրն է օրհնեալ անլռելի,
Ամէն, ամէն և եղիցի։

ժբ

568բ Ողջունաբեր այրդ բարի.
Որ շրջեցար դու ծիր երկրի,
Երագոտիւք անհեղգալի,
Վասն մարդկան ոգւոց օգտի,
Ի Լիւրիկոյ մինչ յՀռուսուկի,
Քալլեալ յաւետ անձանձրալի,
Վիշտըս յոլով կրեալ ի մարմնի,
Հակառակօք անթըւելի,
Ել բարեխօս դու Մօսէսի
Այսըմըն տառի փցուն գրչի,
Այլ և ծնօղաց մեր և զարմի,
Եւ համօրէն քրիստոնէի;
Եւ որ ասէ մեզ բան բարի,
Այնպէս նմա նոյնըն լիցի,
Կատարօղն հայցուածի
Տէրն է օրհնեալ յամենայնի; Ամէն.

ժգ

418բ Փառաւորէ մարդասէրն Աստուած զհոգի տեառն Ներսէսի կամ[ր]-ռնագոյ, որ ի վերայ ամենայն յաւելուածոց բարեացն, զոր պարգեւաց ազգիս մերում թարգմանութեամբ և մեկնչութեամբ բազմաց տառից՝ և զայս եւս յաւել, շնորհելով մեզ ի միասին զհաւաքումն Աստուածաշնչիցս, նախանձ բարի արկանելով ամենեցուն։ Զի մինչև ցնա ոչ երեւեր թէ լեալ էր յազգիս մերում, և ի մերումս ժամանակի գրեթէ երկուս կամ երիս միայն տեսաք յաւելեալք զկնի նորա։ Եւ տես զտրտմութիւն ազգիս, զի այժմ հարիւր ամ կամ թէ եւս աւելի ի նմանէ մինչ առ մեզ և այսչափ գոն աճեցեալք, որչափ ասացաք։

Եւս առաւել զարդարեսցէ Աստուած զհոգիս սրբոց թարգմանչացն, որք աստուածաբար երախտաւորք են ազգիս Հայոց, որք բազում երկամբք և աշխատութեամբ այսպիսի անկողոպտելի գանձ պարգեւեցին մեզ։

Ընդ որս և զմեզաւք մեռեալս ոգի, որ մեծաւ յուսով և փափագանաք ի սմա վաստակեցի՝ աղքատ կենաւք և տկար մարմնով՝ թափառական յօտար գաւառի, վասն որոյ կաղաչեմ ոչ ձանձրանալ ասել ղՏէր ողորմին, որով և նոյնն ձեզ լիցի և Քրիստոսի փառք յաւիտեանս։

ժդ

361բ ՋԳէորգ փակակալ յիշեսչիք՝ ի Տէր։

ժհ

197ա Անուն մնացորդ ու բանքս կրկնորդ։

ժզ

260ա—268բ Վա՛յ ողորմելւոյս։ Վա՛յ աղքատութեանս։ Վա՛յ կրկին աղքատութեանս։ Վա՛յ եռակի աղքատութեանս։ Վա՛յ քառակի աղքատութեանս։ Այ վա՛յ բազմազան աղքատութեանս և այլ ոչ կարեմ թուել։

ժէ

270ա Ո՛վ եղբայր, չեմ հմուտ արուեստիս՝ թողութիւն արա, այլ կարիսս զիս բռնադատէ յայս հարկս։

ժը

281բ Վա՛յ մեղաւորիս, չարիք ըստ գործոց հասին ինձ;

ժթ

286բ Այ վա՛յ ինձ, վա՛յ, մի թէ չէ՞ վայ։ Այո՛, վայ է։

ի

293ա Վա՛յ անձինս մեղաւորի, զի զարարիչն իմ բարկացուցի, Վա՛յ, վա՛յ, վա՛յ։

իա

293բ Թէ չէր վայ, ես երբ ասեի թէ՝ վայ։ Ապա վայ է. վասն այն ասեմ թէ վա՛յ ինձ, վա՛յ, վա՛յ։

իբ

296բ Մինչև երբ ոչ հրաժարես,
Դու ի յօձէն խարամանէ,
Այլ տաս տեղի որ պատատէ,
Միշտ և յաւետ զքեզ խոցէ։

297բ Արուհստիս չեմ հմուտ, լուր տանջիմ։

իգ

300բ Նմա երանեկ, որ աղբեւր ու ծառ ի դուռն չկայ։

իդ

303բ—304ա Այ վայ, մինչև երբ վայ։ Եւ իսկի երանութեան բնաւ չպատահեցայ։

իե

307բ—308ա Վա՜յ ինձ կուրիս, վա՜յ, աչաւքս և մտաւքս։

իզ

311բ—313ա Վա՜յ ինձ գերւոյս, վա՜յ տառապելոյս և դարձեալ վա՜յ ինձ կորուսելոյս։ Վա՜յ աղքատութեանս իմոյ, վա՜յ։

իէ

331բ—334բ Ինձ է վա՜յ, եռակի տանջիմ։ Նաև քառակի տանջիմ, մանաւանդ ի չափ զգայարանացս բազում վշտօք տանջիմ։

իը

317բ Վա՜յ ինձ, զի երկարացաւ պանդխտութիւնս իմ։ Զի զրկիմ ի հարկաւորէն։

իթ

351բ Այ վա՜յ, կազ իշով մինչև երբ հասից ի տեղի։

լ

360բ—61ա Վիշտ սեռական, վիշտ տեսակական, ոչ ի գետոց ոչ յաւազակաց։

լա

362բ Սեւ, ո՜, աղքատութիւն, մինչև երբ։

լբ

467ա Ով ինձ Աստուածաշունչ մի էր տուեալ,
Գոգչիր գերի էր ազատեալ,
Մանաւանդ թէ եւս առավել։

լգ

469ա Ով գիրք տեսանէ գրած՝ կարծէ դիւրաւ եկեալ յառաջ, ոչ այդպէս՝ գոգցես մահու չափ։

ԼԴ

595բ Եւ արդ եղեւ զրաւ գրչութեան սորա ի գաւառիս Կիլիկա, ի թագաւորութեան Լեւոնի որդոյ Հեթմո թագաւորի։ Գրեցաւ Հայոց թուիս ՋԽ [՞]* որ է աւրհնեալ յԱստուածոյն։

ԼԵ

13բ Ես՝ անարժան Մովսէս զԱստուածաշունչս իմով ձեռամբ գրեալ Դամբարանի Սուրբ Լուսաւորչի նուիրեցի, ի լերինն Սեպուհ, ի Մանէա յայրս։ Եւ թէ ոք ո և իցէ նենգել խորհիցէ յափշտակելով կամ գողանալով, կամ թէ առաջնորդ վաճառեսցէ կամ ոսկէք շնորհեսցէ, կամ ընդ իրիք փոխանակեսցէ՝ դատախազ կայցէ նմա Սուրբ Լուսաւորիչն առաջի Քրիստոսի և աստ մի հասարակեսցէ զաւուրս իւր։

ԼԶ

1ա Պահողն և խնամ տանողն՝ որչափ վանքն շէն կենա՝ աւրհնի յԱստուծոյ և եւթնարփի շնորհաւք Հոգւոյն լցցին, ամէն։

Որ զթուղթս չկտրէ ինչուր մաշի /// աւրհնի ի Տեառնէ, ամէն։

ԼԷ

11բ Ո՛վ եղբարք, գրեալ է իսկ, եթէ այլք վաստակեսցեն և այլք վայելեսցեն։ զՏէր ողորմին մի զլանաք, և դուք ի նոյն լիշիք բարի աւրհնելոյն յաւիտեանս, ամէն։

ԼԸ

12բ Ով եղբարք, շատ աշխատեցայ և սակաւ վայելեցի։

Դուք որ գայք մեր զկնի,
Եւ հանդիպիք այսմ խահի,
Մեզ ասացէք՝ Տէր ողորմի,
Եւ դուք ի նոյն լիշիք բարի,
Միշտ աւրհնեցոյն յաւիտեան,
Ամէն, ամէն և եղիցի։

---

* Այս հիշատակագրությունը գրված է հետագայում, քերված տեղում ԾՔ դարի գրչությամբ։ Հազիվ նշմարվելի թվականը որ կարդացել են «Ո», թյուրիմացության մեջ է գցել բանասերներից շատերին, որոնք ձեռագիրը համարել են մեզ հասած հայերեն ամենահին Աստվածաշունչը։ Հետագա մանրամասն քննությունը հերքել է այդ վարկածը և ժամանակը սահմանել 1270—1292 թվականների միջև ընկած ժամանակահատվածը։ (Այդ մասին տե՛ս Մովսես վարդապետի հոդվածը, «Էջմիածնի հ. 153 ձեռագիրը» վերտառությամբ «Արարատ» 1905, էջ 125—137)։ Սակայն որոշակի երևում է ոչ թե «Ո», այլ «Զ» հարյուրավորը, իսկ տասնավորը միայն կարող է «Խ» լինել, քանի որ ձեռագիրը գրվել է Գևորգ Սկևռացու ցանկերի մի մասը հրատարակելուց, այսինքն 1288 թվականից հետո։ ԶԽ-ն արդեն 1291-թվական է։ Միավորը չի կարգացվում։ Ձեռագրի հիշատակարաններում ներսեսը արդեն մահացած է, վերջին անգամ նրան հանդիպում ենք 1295 թվականին։ Իսկ Գևորգ Սկևռացու կողմից ցանկերի լրիվ ավարտման մասին լուր ունենք 1297 թվականից։ Նշանակում է այս ձեռագիրը գրվել է 1295-ի և 1297-ի միջև։ Ինում ենք 1296-ի տակ։

Որ զգիրքս զաստուածաշունչս և կամ զմեկնիչերն և զնրրերն և զինչ վարդապետական գիրք կա՝ խնայէ դասասաց վարդապետի, փակեալ լիցի նմա դուռն արքայութեանն Աստուծոյ, զի զգրեանքդ վասն դասի ենք դրել ի դուռն Սուրբ Լուսաւորչիդ։ Որ փակէ և չտա, փակեալ լիցի նմա կենացն մուտ, ամէն։

ԼԲ

Որ զաստուածաշունչս և կամ զայլ վարդապետական գրեանք, որ ի Սուրբ Լուսաւորիչս կա, յաղ[ա]գս յաշաղանաց խնայէ, [որ] ի շուրջա-
609բ *կա վանօրեայք[դ]‖դասատուն լինի, եղիցի ընդ անիծիւք իբրև զայն ծառայն, որ թաքոյց զարծաթ Տեառն իւրոյ, և իբրև զայն, որ ինքեանք ոչ մտին, և որ մտանէին՝ չտային թոյլ մտանել, եւ զնոյն անէծս ժառանգեսցէն։*

Ապա որ կարդասցէ խ[նամով պահեսցէ] և այս բաւական է, զի զէնն զինաւորին է։ Եւ կատարողքն եղիցին աւրհնեալ, ամէն։

624

ԺՈՂՈՎԱԾՈ

Երևան 4834

Գրիչ՝ Յակոբ

ա

212ա *Զբազմազան և զարիերջանիկ վարդապետն զպատուեալն ծերութեամբ ի հինաւուրցն աւրհնելոյն զԳրիգորիս՝ զստացաւղ սուրբ մատենից, աշակերտք բանին ճշմարտութեան, յիշեսջիք անմոռաց առաջի զենլոյն Քրիստոսի ի ժամ սոսկալի բաշխմանն, և Աստուած յիշողացդ ողորմեսցի յիւրում գալստեանն, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։*

Եւ զիս զբազմամեղ գծողս Յակոբ։

բ

Այլ գրիչ

Ի բարեաց պատճառէն Յիսուսէ ընտրեալ, բարեպաշտաւն և երկիւղազարդ տիկինն պարոն Ֆռանկին, ստացաւ զտառս հոգէշունչ ի հալալ արդեանց իւրոց, առ ի յիշատակ իւր և բարէսէր ծնաւղաց իւրոց, և ետ զսա ի վարդապետն Գրիգոր։ Եւ նա կարդալով զտառս և ալկտելով ի սմանէ, անմոռաց յիշմամբ և անջինջ յիշատակաւ յիշեսցէ ի մեծաջան և յընդունակ աղաւթս իւր, և Քրիստոս Աստուած, որ առատն է յամենայնի, զիւր անսպառ բարիսն պարգևեսցէ պարոն Ֆռանկին, և իւր բարի և աստուածասէր ամուսնոյն Մեծափկնա, և ամենայն ազգականաց իւրեանց, ամէն։

---

* ԻՀ-ԼԲ հիշատակագրութիւնները գրված են ձեռագրի ընդօրինակութիւնից շատ հետո, բայց գրչի կողմից, ինչպես երևում է ձեռագրից։ Հիշյալ հատվածներում ուղղանկյուն փակագծերի մեջ եղած տառերն ու բառերը ուրիշ թանաքով և գրչությամբ են ավելացված։

Գ

Ստացող՝ Ահարոն
Վայր՝ Եզնկա

213ա Փառք, որ և գործով արդիւնացոյց առ ան‖արժան և մեղապարտ ծառայս իւր Ահարոն մականուն Գրիգոր յորջորջեալ, զգթած և զմարդասէր կամսն իւր և զզաւրացուցիչ աւգնականութիւնն սկիզբն առնել գծագրութեան կտակիս և ի յաւարտն հասանել շնորհաւք նորին, ի թուին Հայկազին տումարի ՉԽԵ (1296), ի մայրաքաղաքիս Եզնկա, ի թագաւորութեան բարեպաշտին Հեթմոյ, և ի հայրապետութեան տէր Գրիգորի, և յառաջնորդութեան քաղաքիս տեառն Ներսիսի:

Արդ, ճշմարիտ և ուղղափառ հաւատն, որ ի Հայր և յՈրդի և ի Սուրբ Հոգին սկիզբն և պատճառ և արմատ է ամենայն բարեաց գործոց և
213բ առաքինութեանց, իսկ բարիքն և‖գովելի գործք առաքինութեանն ի բազում տեսակս և ի մատունս բաժանել որոշի, լստ հատուցման փոխարինին, զոր բանն Աստուած և Տեառն մեր Յիսուս Քրիստոս խոստացաւ ի լուսաբեր և ի կենսունակ Աւետարանին, ի գերակա և յերկնային Հաւրն տանն զաւթևանսն և զհան[գ]իստն յոլովս լինել: Յաղագս այս ճշմարիտ և իսկապէս հանգստեանս և ուրախութեանս, և բարի կայանիցս յուսոյն և անկնկալութեանն, ճշմարիտ հաւատացեալք և երկեղած քրիստոնեայք փոյթ յանծին կալեալ և ամենայն ջանից և աշխատութեանց յաւժարութեամբ և կամաւք զինքեանս տուեալ սկիզբն առնեն հոգևոր և փրկական գործոց, ոմն գովելի և հաճոյական պահոց պնդութեան, զամենայն զգայարանս մարմնոյ և զմասունս հոգոյն ամրացուցանելով ի վնասակար.իրաց, և որ ինչ մի անգամ հոգոյ աւկտակար և շահաւետ
214ա գործէ յաւժարութեամբ և կամաւք շարժելով և գործելով:‖

Իսկ ոմն ճշմարիտ և իսկապէս խոնարհութեամբ հնազանդ լինի Աստուծոյ և պատուիրանաց նորա և գիտուն և առաքինի խրատողաց հարց և եղբարց, և յամենայն չար և վնասակար հպարտութենէ խոյս տալով հրաժարէ: Իսկ այլ ոմն սրբամատոյց աղաւթից հետևելով անզբաղ մտաւք յարաժամ խաւսի ընդ Աստուծոյ, և արիութեամբ ի տուէ և ի գիշերի հսկէ, և զամենայն սատանայական և զգարշելի հեշտութիւն և զդանդաղումն արհամարհէ: Իսկ այլ ոմն ճշմարիտ և հոգևոր տրփմամբ սիրէ զԱստուած յամենայն սրտէ յանձնէ ի զաւրութենէ և ի մտաց ըստ գրեցելումն, և զամենայն պատուիրանս նորա կատարէ, գթած և ի հոմացեղ ընգերս և եղբարս առանց կեղծաւորութեան, և յամենայն վիշտս մարդկան ցաւակցութեամբ կարեկից և աւգնական լինի:

Եւ այլ ոմն յարդարև յիրաւացի ստացուածոց և ի քրտանց, տնանգաց և կարաւտելոց ողորմութիւն առնելով սփոէ և տա աղքատաց, զի‖
214բ արդարութիւն մնասցէ յաւիտեանն: Եւ այլ ոմն եկեղեցի շինէ, յորում պատարագի Քրիստոս, կամ աւտարանոց հոգէտուն, յոր ճանապարհորդք հանգիցեն: Իսկ այլ ոմն զամենայն մարմնական հեշտութիւն և զբաղումն թողե[ա]լ, բազում պանդխտութեամբ և տառապանաւք բարձեալ խաչն Քրիստոսի, որ է չարչարանք մարմնականք, երթայցէ ղհետ

Քրիստոսի ի գերեզման նորին և յայլ տնաւրինական տեղիս, և ի սրբոց վկայարանս և յուխտից տեղիսն, խոստովանի զյանցանս իւր և աշխատութեան արտասուաւք սրբի և արդարանա։ Ու այլ բազում տեսակք և մասունք են բարեաց և հոգևոր գործոց որ յար և նման և ազգակիցք են դրելոցս։

Արդ, յայս բարեաց տեսակացս և ի հոգևոր գործոցս է և գիրք ստանալն։ Զի թէ ոք արուեստի գրչութեանն հմուտ իցէ, ինքն աշխատի և գրէ, և թէ ոչ, նա այլոց տա գրել, և կամ գրած գնէ, զի որք ընթեռնոյն՝ յիշեն աղաւթիւք առաջի Աստուծոյ և ստացողի գրոցն մեղաց թողութիւն խնդրեն։

215ա Այս յուսոյս ակն||կալութեամբ և ես՝ անարժան և դատապարտել և ողորմելի ծառայս Աստուծոյ և սպասաւոր բանի Աճառոն ստացա զմատենս զայս, որ է Սաղմոսն Դաւթի և Երգս երգոցն Սաղովմովնի՝ Մեկնչովն համառատ։ Կա և ի տէր Ներ[սի]սի Մեկնչէն մասնաւոր և դատաստանաց Դանիէլն բնաբանն և համ[առա]ւտ Մեկնիչն, զի աստուածաշունչ և սուրբ գիրքն յորժամ ընթեռնուն և զբանքն գործով կատարեն, կարդացողացն քաղցած և ծարաւած հոգոցն փրկական և կեցուցիչ կերակուր և ընբելի է, աղքատացել և հիվանդ հոգոցն փարթամացուցիչ և բժիշկ է, գլորել և մեռել հոգոցն կանգնիչ և կենդանացուցիչ, կուրացելոցն հոգով լուսաւորիչ, չարչարելոցն հանգուցիչ, տրտմելոցն մխիթարիչ, մերկացելոյն զգեստաւորիչ, աւտարացելոցն և հեռացելոցն յԱստուծոյ և յարքայութենէ նորա ժողովիչ և մերձեցուցիչ, խոնարհե-

215բ լոցն ի մեղս բարձրա||ցուցիչ մանաւանտ թէ գլխաւորապէս է ասելի, գերագոյն Աստուած պետականին սարասիւ, ամենայն հոգևոր և իմանալի կարեաց և պիտոյից լրացուցիչ։

Սակս այսօրիկ ամենայն եկեղեցականաց, որք հրեշտակական կարգս և զաստիճանս են վիճակել, պարտական են յամենայն մարմնական զբաղմանց հրաժարել, և ներկուս կրթութեամբ հանապազ աստուածաշունչ գրոց ընթերցմանց հետևել, որով լուսաւորել մտաւք ի խաւարամած և ի մոլորեցուցիչ պատրանաց կենցաղոյս առ ճշմարիտ լոյսն ի խաղաղ նաւահանգիստն Քրիստոս հասցուք։

Արդ, զոր աւրինակ մարմնաւոր աղքատն և կարաւտեալքն ի փարթամացն ողորմութիւն խնդրեն, նոյնպէս և մեք յամենայն բարեաց գործոց և յառաքինութենէ աղքատ գոլով հոգու և կարաւտ և հիվանդ և քաղց և ծարաւ, բեկել սրտիւ և թաղծել հոգով աղերսալի մաղթանաւք և ժտե-

216ա լով հայցեմ ի ճոխ և||ի փարթամ հարց մերոց և եղբարց, որք հանդիպիք այսմ մատենի ընթերցմամբ կամ գաղափար առնելով յաղագս գծելոյ, քաղցր կամաւք և կարեկցութեամբ, յիշեսջիք զմեղ ի զաւրաւոր և սրբամատոյց աղաւթս ձեր առաջի մարդասիրին Աստուծոյ, մանաւանդ ի ժամս սոսկալի [պա]տարագին փրկական մարմնոյ և արեան բանին աստուծոյ և ամենայն յանցանաց մերոց ներումն և թողութիւն խնդրեցէք և ծնողաց մերոց, և եղբարց, և վարդապետաց, և ազգականաց՝ հոգևորաց և մարմնաւորաց, և որք ողորմութիւն են արարել մեզ և աւգնական եղեալ մարմնական պիտոյիւք, և սրտի մտաւք ասացէք ղԱստուած

ողորմին, և ինքն բարեաւ և ողորմած Աստուածն, որ զամէնեցուն փրկութիւնն և դկեալն կամի, ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս, և ամենայն հաւատացելոց սուհասարակ ողորմեսցի և մեզաց թողութիւն շնորհեսցէ,
216ր և ի դեհէնէ հրոյն և յաններելի տանջ||անաց ղերծուսցէ, և իւր աստուածային և անճառելի բարեացն երկնից արքայութեանն և լուսեղէն խորհրդոցն և անթառամ պսակացն ժառանգորդ և մասնակից արասցէ՝ ընդ ամենայն սուրբս իւր, գոհաբանել, փառաւորել՝ և աւրհնել գհամագոյ և միասնական Սուրբ Երրորդութիւնն, գՀայր և զՈրդի և զամենասուրբ Հոգին, այժմ և յանսպառ կեանսն, յաւիտեանս յաւիտենից, ամէն։

625

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7353

Գրիչ՝ Մխիթար
Վայր՝ Ոռոտան մայրաքաղաք
Աղիտու վանք

ա

304ա Փառք Սուրբ Երրորդութեանն Հաւր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից, ամէն, որ արժանի արար զիս զտկարս և զանարժան գրիչս զՄխիթար քահանայ զձեւս ունելով և ոչ զվարս ստացեալ, այլ լոկ անուամբ։ Արդ, յուսալով յողորմութիւն Աստուծոյ, գծայգրեացի զսուրբ Աւետարանս, որ է աւետսյբեր սուրբ յարութեանն։
304բ Արդ, գրեցաւ սայ ի մայրաքաղաքիս Ոռոտան ի||մենաստանիս, որ կոչի Աղիտու, ընդ հովանև Սուրբ Երրորդութեանս և Սուրբ Յովաննիսի, որ է մկրտիչ Քրիստոսի, ի յաշխարհայկալութեան անաւրէն Խազանին, որ քանտէր սուրբ զեկեղեցիս Աստուծոյ և հալածական առնէր զքահանայսն և ոաւրացուցանէր զազգն Իսմայելի իւր պեղծ ասախովն ի վերայ քրիստոնէից, ի պատրոնութեան այժմ նահանգիս Ելայկումին, և հայրապետութեան տեառն Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի, արհի և հեզի, մարդասիրի։

Արդ, աղաչեմ զամենիսեան վասն սիրոյն Քրիստոսի, որք աւգտիք կամ աւրինակ առնոյք, յիշեցէք ի Քրիստոս զիս, զմեղայպարտ Մխիթար, որ բազում աշխատութեամբ աւարտեցի զսուրբ Աւետարանս։ Ընդ նմին և ի Քրիստոս փոխեցել ծնողքն իմ՝ զհայրն իմ զՊապաք և զմայրն իմ զՄամայխաթունն, և զՍարկաւագ եղբայր իմ, որ փոխեցաւ ի Քրիս-
305ա տոս, և||[զ]քուրն իմ զԱմեանիայ, որ տղայ հասուկաւ փոխեցաւ ի Քրիստոս, և զողորբէրքն* իմ ի Քրիստոս փոխեցեալ զԽոցայղեղ և զՏալիփ, և զեղբերքն իմ զԱմիր-Հասանն և Դաւիթ, և զհոգեւոր հայր ու մայրս իմ Զքադս ու Թութս, որ բազում աշխատութեամբ սպասաւորեցին ինձ, և զփեսէն մեր Սարգիս, եւ զԱռաքել քահանայ, որ զմարմարիոն քարն երեսս

* «Զհորեղբարքն» բառի բարբառային ձևն է։

ինձ, և զվանական քահանայ, որ զքարտեզն կոկեաց, եւ զխաչիկ քահանայ, որ զոսկին երեսս, որ զքարտէզն գնեցի, և զԳրիգոր քահանայ, որ զաւրինակս շնորհեաց և Աստուած զարք[այ]ութիւնն նմայ տայ։ Եւ ով զմնդ[յ]իշման արժանի առնէ, ինքն[յ]իշել եղիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Չինչ մարդ որ զսայ կտրել ջանայ խեռութեամբ ՅԺԸ (318) հայրապետացն նղովել եղիցի ու մասն ու [բաժին] զխաչահ[անուացն լինի]։ ի թուականիս Հայոց գրեցաւ Աւետարանս ՉԽԵ (1296)։

բ

243ա Չվանական քահանայ, որ աշխատեցաւ ի յղորդեալն յիշեցէք ի Քրիստոս, ամէն, ո՛վ պատուական եղբարք։

գ

98ա Չմեղապարտ գծող զՄխիթար յիշեայ ի Տէր։

դ

156բ Չմեղապարտ Մխիթար յիշեայ ի Քրիստոս, ո՛վ պատուական ընթերցող։ Ղուկաս աւետարանիչ ողորմի Մխիթար քահանայի, ամէն։

ե

242բ Անարժան գծողս Մխիթար քահանայ աղաչէր սուրբ աւետարանիչն խնդրել մեղաց թողութիւն ինձ և ծնողաց իմոց ամէն, յահագին աւուրն յորժամ գայ Քրիստոս ընդ ամբս երկնից։

զ

Կազմող՝ Սանուէլ

305բ Չիս զմեայպարտ քահանայս անուամբ կոչեցեալ Սանուէլ՝ կազմող սուրբ Աւետարանիս, և զամուսին իմ զՏիրանց, որ բազում սպասաւորեց, յիշեցէք ի Քրիստոս և լի բերանով մեր մեղացն թողութիւն արարէք.

է

Յանուն Աստուծոյ ես Սարկաւագ քահանայ, որ կազմեցի զսուրբ Աւետարանս ի գաւառիս Աճանոյ ի գիւղս, որ /// չի, ընդ հով[անեաւ] /// իք, զծնողսն իմ զՍանուէլ քահան[ա] և զամուսին իւր զՏիրանց, կարող է Աստուած ի ձեռս այլում ողորմութիւն առնել այլում և Քրիստոս յիշէ զիշատ[ակ], ամէն։

626

ՃԱՇՈՑ

Երևան 1028

Գրիչ՝ Անանիա
Վայր՝ Բարջանջ գիւղ

ա

139ա Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր և Որդո և Հոգոյն Սրբո այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Յամի ԷՉ և Խե (1296) թուականիս գրեցաւ տառս այս ժողովոց և մանկանց ուսումնասիրաց, ձեռամբ Անանիայի անարժան սարկաւագի և փանաքի գրչի, ի գաւառիս Անծտա, ի մեծ աւանի գիւղս, որոյ անուն Բարջանջ ճանաչի, առ դրան Սուրբ Ստեփանոսի, ի ժամս, որ ունի աղգն Իսմաելի զամենայնբնակ, քրիստովնէից խիստ ի նեղի, և այլ նա ինքն Քրիստոս մեզ ողորմի։ Եւ թագաւորութեան Հայոց Հեթումա, և ի հայրապետութեանն տեառն Ստեփանոսի, և ի տեղոյս դեռաբոյս պարոնութեանն Կաւկաթայն, և ի մեզ մեծ թագաւորելոյն Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս։

Արդ, որք կարդայք և լուսաւորիք, զտառապեալս ի բարեաց զմեղուցեալ զԱնանիայս, և զհայրն իմ զԳրիգոր, որ է փոխեալ ի Քրիստոս, և զմայրն իմ զԹանկթագուհի, և զՀարկուորն և զիւր քահանայն զՏալիաւն, որ երկուսն փոխեալ են ի Քրիստոս, և ձեզ յիշողացդ և մեզ յիշելոցս ողորմեսցի Քրիստոս, ամէն, ամէն։

Եւս առաւել զպատուական քահանայն զտէր Դաւիթն, որ է հայր հոգոց և ուսուցիչ ժողովրդոց, եւ զաւագ որդին իւր գԻշխանն, որ է պանծալի սարկաւագ, որ ստացաւ զսա իւր և ծնողաց իւրոց ի յիշատակ քաւութեան մեղաց։

Արդ, որք կարդայք և լուսաւորիք, մեղաց թողութիւն հայցեսջիք Իշխան սարկաւագին և իւր հաւրն Ջաւրվարին, և իւր մաւրն՝ Գոհար խաթունին, և եղբաւրց իւրոց միահամուռ, ամէն։

Եւս առաւել բարի համբաւ և զսրբասնունդ մայր իւր զՏիկնաց տիկինն և զիւր ամենայն ննջեցեալսն, որ են քահանայք և փոխել են ի Քրիստոս յոյս մեր ամենեցուն, և զայլսն զամենիսեան, զմեծ և զփոքր, զորս ոչ կարաց<աց>աք յիմանալ և գրել ի <գրել ի> գրի աստ, յիշեսջիք և աւրհնեսցուք ի մաքրափայլ սուրբ յաղաւթս ձեր և ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս ողորմեսցի Քրիստոս, ամէն*։

բ

Ո՛վ պայծառ [դա]սք քահանայից, անարժանս աղաչեմ յիշել ի Տէր զԱնանիայս, և խոշորութեան գրիս անմեղադիր լինելո, զի գիք սորայ ի տուայ է և ի գիշերոյ, և ատորք էր ի գրելո Մաշդոցս ի կազմելոյ, և ժա-

* Վերջում երկու տող ծածկագիր կա, որն ընթերցել չհաջողվեց. ահա այն «հինակուդրսնահոսքաշասրաաջյնքղկլզղղյլլ ի խնդրասկրսահոսպո սղագիսենագիկրագիէ»։

մանակն էր ձմերայնոյ։ Արդ, որք կարդայք կամ ուսանիք, մեղաց թողու-
176բ թիւն հայցեսջիք||գրի[չի սոր]այ և ստացաւղի սորայ Իշխան սարկաւագին, և ծնողաց իւրոց, որ ստացաւ զայս յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց, և ձէզ յիշողացդ և մեղ յիշեցելոցս ողորմեսցի Քրիստոս, ամէն։

627

ՄԱՇՏՈՑ

Մուրադյան, Ցուցակ Մշո Առաքելոց վանքի, էջ 12—13

Գրիչ՝ Խաչատուր
Վայր՝ Այրի ձոր

Փառք ամենասուրբ Երրորդութեան Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյ Սրբո, երեք անձն եւ ի մի կատարելութիւն, մի տէրութիւն, մի զաւրութիւն, մի իշխանութիւն յաւիտեանս, ամէն, որ եւս կարողութիւն տկարութեանս մերում հասանել ի վերջ գրոցս։

Արդ, գրեցաւ սա յամի թվականութեանս Հայոց ՋԽե (1296), ի գաւառիս Փալբերունոյ, յանապատիս յԱյրի ձորոյ, ձեռամբ յոգնամեղ եւ փցուն գրչի Խաչատուրի, ի խնդրոյ սրբասէր եւ պատուական քահանաի Դաւթի, որ ստացաւ զսա ի յստակ արղեանց իւրոց, յիշատակ իւր եւ ծնաւղաց իւրոց։ Արդ, յորում ամի աւարտեցաւ սա, էր նեղութիւնք եւ հալածանք մեծամեծք յազգէն Նետողաց ի վերա ամենայն քրիստովնէից, եւ այս վասն ծովացեալ մեղաց իմոց եկն ի վերա ամենայն տիեզերաց. ըստ դրեցելումն եթէ Ոչ վասն արդարութեան եւ անբծութեան ձերում առաքեցից զձեզ ի վերա նոցա, այլ վասն մեղաց աղգացն այնոցիկ, եւ եթէ Եղիցի ահ եւ երկիւղ ձեր ի վերա նոցա։

Նոյնպէս դժընդակ էր տեսիլ նոցա եւ ամենայն երկիւղիւ լի զի եթէ ոք նկատէր ի կերպարանս նոցա, սարսէր եւ դողայր, այլ եւ թոչունք եւս սարսէին, որ ընդ անդս ընթանային, եւ գազանք անապատի. միանգամայն եւ ամենայն արարածք սարսէին ի նոցանէ։ Եւ այս էր վասնզի յԱստուծոյ էր տուեալ նոցա, զի մեղաց վրէժ էին։

Բայց ի ժամանակիս յայսմիկ մարդասիրութիւն Աստուծոյ գթացեալ եղեւ յարարածս իւր, ըստ այնմ եթէ՝ Ոչ իսպառ բարկանա Տէր, այլ յարոյց յազգէն յայնմ բարեմիտ եւ խոհեմական եւ խնամածու քրիստովնէից, եւ այնչափ առաւելալ ի խնամածութիւն իւր, մինչ զի յաւելոյր բան եթէ յանբան անասնոց եւ ի թռչնոց եւ այլեւս գահն առ նա յիրաւունս, վասնզի դատաւոր զինքն էր կացուցեալ, զի մի այլ ոք խնամ ոչ տաբցի քրիստովնէից եւ թիւրէ զիրաւունս, այլ այս ոչ յիւրմէն, այլ յառատ բարեաց պարգեւողէն Աստուծոյ, ըստ այնմ եթէ Սիրտ իշխանաց ի ձեռս Աստուծոյ է, եւ այլն։ Այլ էր նա յազգէն Նետողաց, եւ էր չորրորդ բռնակալութեան աթոռոյն, եւ անուն նորա ճանաչիւր Ղազա[ն]ղան։

Արդ, յիշեսջիք զԴաւիթ քահանայ, որ ստացաւ զսա եւ եւս ի վանս Սուրբ Կուսանաց յիշատակ իւր եւ ծնաւղաց իւրոց, ընդ նմին եւ զառաջ-

Նորդ իւր զխաչատուր քահանա, որ եղեւ առիթ գործոյս, եւ զՎարդան քահանայ, որ զթուղթս գեզեաց, եւ ապա զմեղսամակարթ գրիչ, որ բազում տառապանաւք եւ նեղութեամբ շարադրեցի զսա խոշոր գրով, Յիշեսջիք եւ զծնողսն մեր զփոխեցեալ ի Քրիստոս։ Արդ, աղաչեմ զամենեսեան, ղի ամի յամի ընթերցջիք զփշատակարան սուրբ կտակիս ի մեծի աւուր հինգշաբաթին, զկնի ոտնալուային։

628

ՓԻԼՈՆԻ ԵԲՐԱՅԵՑԻՈՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի Հայս, Վենետիկ, 1826 թ., էջ 620—622
Փիլոնի Հեբրաեցւոյ Ճառք, Վենետիկ, 1892 թ., էջ 105, 177

Գրիչ՝ Վասիլ

ա

Փառք, և օրհնութիւն, և երկրպագութիւն Երրորդութեանն սրբոյ՝ Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն, այժմ և հանապազ և յամենայն յաւիտեանս, ամէն։

Յամին եօթնհարիւրորդի քառասներորդի հինգերորդի (1296) թուականիս Հայոց, եղև գրութիւն այսմ տառի, զոր է ոդեալ մեծ իմաստասիրին Փիլոնի միանգամայն է (7) գլխոցն ի միասին եդելոց, հրամանաւ աստուածազարդ և հանճարաշատ թագաւորին Հայոց Հեթմոյ որդւոյ Լևոնի, որդւոյ Հեթմոյ թագաւորացն Հայոց, ի վայելումն և ի մխիթարութիւն մարմնոյ իւրոյ և յիշատակ հոգւոյ։

Արդ այս Հեթում, զկնի մահուան հօր իւրոյ թագաւորին Լևոնի, յաջորդեաց զաթոռ հայրենի և նախնի, այլ ոչ պսակեցաւ թագիւ։ Սակս որոյ ոչ է պատշաճ զանց առնել զպատճառաւն, զի ի մանկական տիոց հետէ վարժեալ կրթութեամբ յաստուածային օրինացն ընթերցումն, որ գիտէ լաւ սնուցանել զի նա անկեալսն, քան զյանձանձումն մարց և դայեկաց, սիրեաց զիմաստութիւն, և սիրեցաւ ի նմանէ։ Վասն որոյ լաւ քան զոսկի և զականս պատուականս համարեալ անձին իւրում, որ և քաղցրացաւ քան զմեղու խորիսխ ի կոկորդս նորա, ուստի բաց և համարձակահայեաց ակամբ ոգւոյ ծանեաւ զխտկապէս և զարդարև բարին։

Եւ այնուհետև սկիզբն արարեալ գործնական առաքինութեան, միշտ աղօթից և ընթերցման գրոց պարապեալ զուարթ և արթուն հայեցածով, մին՝ զի բնութիւն զտովորութիւնն արարեալ, խնամ տանելով և դարմանելով զսուրբսն, որ են դասք աղքատաց և որբոց, պայծառացուցանելով զսուրբ եկեղեցիս Աստուծոյ, և աճեցուցանելով զդասս քահանայից, հանապազ պաշտամամբք համաձայնեալք երկնայնոցն խմբից օրհնութիւնս Աստուծոյ վերառաքէին, և համանգամայն զամենայն տեսակս առաքինութեան յինքն բերելով, զոր տկարանամ ի պատմել զբովանդակն։

Զի ժողովել հրամայեաց հանճարեղ արուեստաւորս յայլ և յայլ աշխարհաց այլալեզու ազանց՝ զաղատացաց դասս. և կանգնեաց չորքանչաթ-

ժան եկեղեցին ի մայրաքաղաքին Մամուեսպիա՝ զարդարեալ ազգի ազգի նկարօք՝ փորուածօք ի քարանց կճէից, յանուն մօր տեառն մերոյ Մարիամու Աստուածածնին, և կարգեաց ի նմա դասս պաշտօնէից ըստ պատշաճի աշտիճանաց։

Որ և հրամայեաց իմոց նուաստութեանս Բասլի, որ երբեմն սարկաւագ, գրել զսոյն զայս տառ/// արգահատութեամբ և վերակացութեամբ սրբասէր քահանային Կոստանդեայ, որ էր քահանայիցն ամենայն երէց ի դրան արքունի։

Բայց ի դէպ է ոչ անտես առնել, զի վերն քան զբնութիւն գործն նորին թագաւորին Հեթմոյ, զի նա ինքն որ արհամարհեաց զմարմին և որ ինչ նորա են պատաղմունք, փափագմամբ և ըղձաւոտ տենչանօք խոկայր միշտ գտանել զերկնաւորն թագաւորութիւն, զներտրամադրեալն արտաբերեաց յաւարտ և յանգ հանելով։ Եւ զի՞նչ այս. կոչեաց զեղբարսն իւր հարազատ, և զայլ ամենայն իշխանսն, վարդապետելով նոցա և հաւանեցուցանելով զամենեսեան ի թագաւորեցուցանել զմի յեղբարցն իւրոց զվայելչագեղն և զիմաստունն Սմբատ, որ ունէր զերրորդն դաս ըստ կարգի եղբարցն, և ինքն առեալ զոյգ ուղեկից զմիւս եղբայրն իւր զպարոն Թորոս, և մտեալ ի նաւ, չուեաց դէպ ուղիղ ի թագաւորական քաղաքն, և անդր ևս յերկրպագութիւն աստուածազարդից նշխարաց և պատկերաց սրբոց։

Իսկ զկնի ոչ սակաւ աւուրց ժողովեցան թագաւորորդիքն և թագաւորազունքն և իշխանքն և միանգամայն աշխարհաժողով բազմութիւն ռամկաց և խառնիճաղանճ մարդկան, ի հոյակապ մայրաքաղաքն Սիս, ի տօնի մեծի սրբոյ աստուածայայտնութեանն։ Իսկ սրբագործ կաթողիկոսն Հայոց տէր Գրիգոր՝ ամենայն եպիսկոպոսօք և համագումար ժողովով և բոլոր ուխտիւ եկեղեցւոյն, և աջով սրբոյ լուսաւորչին մերոյ Գրիգորի և աստուածային աւետարանաւն ձեռս ի վերայ եդեալ աւանդեաց նմա զաշտիճան և զօծումն թագաւորութեան. և համաշխարհական ժողովն պատշաճաւոր խրախութեամբ բարգաւաճեալք ըստ իւրաքանչիւր աշտիճանի։ Զոր պահեսցէ աջ ամենազօրին Աստուծոյ անվրդով և երկայն կենդանութեամբ գնալով զօրութենէ ի զօրութիւն և հերքելով առ ոտս զթշնամիսն խաչին Քրիստոսի։

Բ

Ջստացող տառիս զբարեպաշտ թագաւորն Հայոց Հեթում յիշեսջիք յաղաւթս իմաստախոհ վերծանողք արժանանալ ողորմութեանն Աստուծոյ, զի եւ դուք յիշեսջիք ի Տեառնէ Աստուծոյ մերոյ, եւ զանյարմար գրիչս Վասիլ աղաչեմ արժանի առնել յիշման, որ ի բազում հոգս եւ ի ծուփ տարաբերիմ սակս անբաւ յանցանաց իմոց։

Գրեցաւ ի թուի[ին] ՋԽԸ (1296)։

Գ

Ստացողի տըրա ողորմեսցի Տէր Աստուած եւ անյարմար գրչիս։

629

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԵՔՄՈՅ

Երուսաղէմ 995, (1720 թ.) Պողարյան, Ցուցակ Գ, էջ 597

456 *Ժամանակագրութեանց երեք հարիւր և մեկ ամաց կարճ ի կարճոյ հաւաքեալ ի զանազան Պատմութեանց, հայ, ֆռանկ, եւ ասորի, շարագրեալ պարոն Հեթում տեառն Կոռիկոսայ, և արար զայս բանք, ի թվիսն Հայոց ՀՃԽԵ (1296) եւ յամի մարդեղութեան տեառն ՌՒՃՂԶ (1296)։*

ՉԽԶ 1297

630

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՆՆ ՍԻՍԱԿԱՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՕՐԲԵԼԵԱՆ*

Երևան 6271

Հեղինակ՝ Ստեփանոս Օրբելեան
Վայր՝ Նորավանք

Յիշատակարան դեղեցկավէպ մատենիս

328բ *Սկիզբն և կատարած ամենայնին Աստուած, զի ի նմանէ սկսեալ ի*
նովաւ յառաջացեալ, և ի նոյն կատարի ամենայնն, որպէս ի կարակնա-
կերտ բոլորումն է տեսանել, զի ուստ[ի] սկսաւն՝ ի նոյն յանկեալ միա-
ցաւ, ի ծոց իւր գրաւեալ զբազմաւորական մասոմսն։ Տինա և ի տպա-
ւորումն շնորհին է տեսանել, զի հոսեալ յորդառատ յականակիտ յաղ-
329ա *բեւրէն, անցանէ ընդ բնաւն բաշխելով իւրաքանչիւրոցն զմասն‖աւորն*
ըստ պատշաճին։ Եւ յայնպէս գործեալ յամենեսեան զաւգուտն և զաւգը-
տակարն՝ ինքն նոյն պարզութեամբ միանա ուստի բղխեացն։ Ըստ որում
և ես իսկ, շնորհօք վերնային բարուք ստորնային, ձեւով երկնային, վարուք
եղեռնային, կերպիւ կենաբաշխ, ոգով կենազրաւ, անուամբ քաւչապետ և
բանսարկուին գործապետ, առեալ յաստուածային շնորհացն՝ կամեցաք
սակաւ մի սեղանաւորել, և սկիզբն արարեալ Աստուծով յառաշացաք նո-
վիմք, զոր և․ աւարտեսցուք ի նոյնն։

Արդ, գոհութիւն և փառք ստեղծողին էիցս, անճառին և անհասին,
պարգեւողին առատաբաշխ և խնամող բոլորիցս, աւրհնութիւն, պատիւ
և երկրպագութիւն անբաւ բիւրաւք, անհաս և անվճար ի հրաբուն սեռից
երկնաւորաց, և ի նիւթեղէն տարրականաց երկրածին կենդանեացս, ի
բոլոր եղանակաց և ի բնաւից գոյութեանց արարածոցս, որ կարողացոյց
329բ *զխակակիրթ տհասութիւն խմոյ մտացս և զցաւալից‖տատամսութիւն*
ծովահեղձիկ հոգոյս, տեսանել զաւարտ առարկութեանս, և հասանել ի
կատարումն սկսմանէ, ի դառն աւուրս և ի սողոմածոյց մահաշունչ ժա-
մանակի, յիմում մահն ցանկալ(ի) և երանական, և կեանքն ատելի և
թշուառական, հանապազորդեալ ամենեցունց զցայգն ի ցաւ և զցերեկն ի

* *Այսպիսին է «Պատմութեան» ամբողջական խորագիրը․ «Հանդէս բանից քաղցրավէպ պատմութեանց տանն Սիսական, հրաշահիւս յաւրինուածովք յարմարեալ գյիշատակարանս հնոցն, նուաստ և ապիկար ոգւոյ Ստեփաննոսի Սիւնեաց այցելուի և նախագահ մետրապալտի, որդւոյ մեծափառ իշխանաց իշխանին Տարսաիճին, որ և կոչի սա յիշատակարան մատեանս» (7ր)։ Վեր-ջին «Յիշատակարան» բառը հետագայում դարձրել են «Յիշատակաց»։*

ցնորք, և ակնկալութիւնն ոչ ի բարին, այլ աւր ըստ աւրէ յանհնարին վիշտս և նեղութիւնս։

Եւ արդ՝ ի կամս կարող հղաւրին Աստուծոյ Հաւր, և ի շնորհս գթութեան միածնի Որդոյ նորա Յիսուսի, և յողորմութիւն նախախնամող և ազատիչ Սուրբ Հոգոյն, ես նուաստ և յոգնամեղ ծառա Քրիստոսի Ստեփանոս, և ողորմութեամբ նորին եպիսկոպոս Սիւնեաց երկոտասան գաւառաց, նա և ըստ ներող կամաց նորին՝ նստեալ ի գահ մետրապաւլիտութեան Տանս, տեսաք նուազեալ և ժտեալ զանուն և զյիշատակ առաջնոցն, և յափշտակեալ և կորուսեալ զժառանգութիւնս եկեղեցեացս։ Եւ ի
330ա վաղուց հետէ||ցանկացեալ այսմ նորոգման և վիպագրութեան, և բազում ջանիւ և յոլով աշխատութեամբ յորոնեալ՝ հաւաքեցաք ի հին և ի նոր պատմագրաց Հայոց, նաև յարձանագրութեանց եկեղեցեացս, և ի հնագոյն նամակաց որ կայր պահեալ յամուրս տեղեացն աշխարհախումբ հանդիսարանին Տաթեւոյ, է՛ր ինչ և որ յաւանդութեանց ստուգագէտ արանց, որոմ վկային իրքն և տեղիքն, զհետ մտեալ ամենայն ճշդիւ ըստուգութեանն, ի րաց ձգեալ և զունայնախոյզ զրաբանութիւնն, զի մի տաղտկասցին լսողք, և կաթճաբան վիպասանութեամբ ցուցաք համառաւտիւք զառաւել պիտանին և զճահագոյնն, և գրեցաք զայս քաղցրաբան պատմութիւն, հանդէսք դպրութեանց յիշատակարանաց առաջնոցն, ոչ ընթ[հ]անրական, այլ առանձին Սիսական աշխարհիս, որ կոչի Յիշատակաց մատեան։

Եւ թողաք զսա արձան անջնջելի և յիշատակ գովելի յապա ժամա-
330բ նակաց ի հաստատութիւն սուրբ և երկն||տհանգէտ աթոռոյս Սիւնեաց, և ի պայծառութիւն եկեղեցեացս՝ որ ընդ սորին այցելութեամբս։ Եւ բարձեալ զսա մեղսաներկ բազկաւքս՝ տարեալ ընծայեցաք ի տուն Տեառն, խայրիս խորհրդական և դհամունս նուիրական կաթողիկէ և առաքելական եկեղեցւոյս Տաթեւոյ և ամենայն աստուածաբնակ տաճարաց այսմ իշխանութեան։ Եւ ի գուժ աննկեալ աղաչեմք և յոգնահառաչ ձայնիւ պաղատիմք, ո՛վ գերապանծ և լուսաճեմ առագաստ երկնաւոր փեսային, հայցեաւ յամենայն սրբովք ի գլխոյն քո սխրալի, ընդունել զսա յիւր աստուածային գանձարան, զայս պտուղ շրթանց և ծնունդ հոգոյ, պատարագ հաճելի, և թէ ոչ ընդ պատուականսն՝ սակայն ընդ չքաւորեալսն առ խորանաւն, որք մաղ մատուցանէին, նա և ընդ բաժ մի ցուրտ ջրոյն կամ ընդ երկու լումային։ Եւ շնորհաւորելով զսա եկեղեցոյ իւրում, տացէ մեզ ակն ունել բարեաց և առատաձիր պարգեւին, և թէ ոչ կատարելոյն՝
331ա այլ փշրանացն,||յորմէ շունք կերակրին, ի բանքարս, որ ետուր ցիս, ոչ բնաւին ընդ անբանութեամբ փակեալ խորեցի, այլ սակաւ մի ըստ իմում սակի արկի ի սեղանաւորն, վասն որոյ մի լիցի ինձ լսել, եթէ Ծառա չար և վատ, այլ յաներեակ աւուրն մեծի, ուր բան[ք] սպառին և գործք թագաւորեն, արժանասցուք երանաւէտ ձայնին, եթէ ել, մուտ յուրախութիւն Տեառն, որոմ գոհութիւն և փառք յամենայն եղելոց, այժմ և յանսպառ յափտեանս, ամէն։

Արդ, յարմարեալ այս հանդէսք բանի շարագրեցաւ յաշխարհակալութեան մեծի և ինքնակալ արքայի ղան Ղազանին, որդոյ Աղղունին, ի տի-

րել տիեզերաց ցեղին Նետողաց, ի թագաւորութեանն Վրաց Դաւթի՝ որդոյ Դեմետրէի և Հայոց Հեթմոյ, որդոյ Լևոնի թագաւորի, յիշխանութեան այսմ նահանգի աւրհնելոյն և բարեպաշտին Սիկումին՝ որդոյ Տարսաիեին և եղբարց իւրոց, յամս աստուածապատիւ և հոգևոր տեառն Գրիգորի՝ ինքնագլուխ պատրիարգի, և տեառն Ստեփաննոսի՝ Աղուանից կա-
331բ թողիկոսի,‖ի թվաբերութեան ժամանակ բանին ՌՄՂԹ (1299), և ըստ Հայումս ի ԺԴ յոբելինին և ՀՉ* (1297) համարին, ի ՃՀՉ (186) ոլոմպիադին և չերկրորդ ամին, ի չիսուն ընդիքտիոնին՝ պակասել թվով, իսկ ըստ քսան և ութեակ շրջանի արեգականն միոյ հինգհարիւրեկին և ՄԺԴ (1297) թվին, ի վանս վսեմական և փա[ռա]բնակ ուխտիս Նորավանիկ, ընդ հովանեաւ աստուածաբնակ տաճարացս և աստուածակիր նշանացս, ի նժդեհ և դառնադաժան աւուրս, մինչ կայաք ի մէջ տիեզերահոծ տագնապի, միշտ զգուեալ երեքալեանն դէմակցութեամբ, ակնակառոյց միայն վերին այցելութեան։

Վասն որոյ մայրամած** դիմաւք մաղթեմ զդաւս սրբաղնիցս՝ զի չիշման զմեզ արասչիք արժանի, և ոչ առնէք անտես զանէութիւնս իմ, որ կամ հողացեալ ի կորդացեալ գերեզմանի, այլ առաջի աչաց համարեսչիք գոդ ի վեր քարշեալ զաւրէն մուրողաց շառագունեալ դիմաւք և տվայտել երեսաւք, խնդրել ի ձէնդ փշրանս ողորմութեան, այսինքն
332ա միով նւագիւ երկնաւոր‖զենմանն առնել արժանի։ Եւ թէ սխալանս ինչ կամ թերի գտանէք ի սմա, չաւելուած կամ պակասութիւն, մի ախտաւոր մտաւք պարսաւեսջիք, զի բնութիւն է մարմնոյ գթիլ, և տկարանալ ի բանս և ի գործս, այլ ողջախոհ կամաւք ուղղել և աստուածաբար սիրով ներել մեզ և շնորհել զյանցանսն, և ձեզ ամենեցուն լիցի միոյն բիւրապատիկ գտանել ողորմութիւն յողորմածէն Աստուծոյ՝ կրկին կենաւք։

Բայց պատուէր դնեմ ամենեցուն, որք հանդիպիք սմա, ոչ քեցել ի բանից սորա և կամ այլ ընգակել զյեղանակ կարգին, և կամ ժտել ի սմանէ կամ թուխտ հատանել, կամ վասն նախանձու և նենգութեան և կամ այլ ինչ պատճառի։ Ապա թէ ոք ժպրհի յանդուգն լրբութեամբ՝ չնչեալ նղիցի ի դպրութենէն կենաց և կտրեալ ի կտակէն յաւիտենից, ընդ Յուդային և խաչահանուացն վարձատրեսցի, ընդ ստանալի և ամենայն
332բ չարագործացն դատապարտեսցի։ Եւ որ ոք ընգաւր‖ինակին զսա դիցէ և ընդ այլոցդ զսակաւգիծ յիշատակիս, և առ հասարակ ամենեքեան, մեք և դուք ի միասին գտցուք ողորմութիւն յարարչական սիրոյն Աստուծոյ՝ ի մարմնի և ի գերեզմանի, և յաներկ աւուրն մեծի։ Եւ նմա փառք յամենայն արարածոց, և գոհութիւն ամենայն բանակաց չերկնաւորաց յամերամս ժամանակաց յանվաղճան յաւիտեանս, ամէն։

---

* Գրված «ևՉ»։ «Չ»-ն հետագայում ուղիղի ձեռքով դարձված է «Ը»։

** Մատիտով սկզբի «Մ»-ն դարձրել են «վ»։ Թանաքով և մատիտով բազմաթիվ միջամտութիւններ են կատարված հետագայում։ Հաշվի չենք առել։

631

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՌԱԿԱՑ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ ԵՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԴՈՑ ԵՐԴՈՑՆ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Երևան 2603

Գրիչ՝ Զաքէոս

ա

157բ Զերջանիկ և զհանճարեղ նորընծա սուրբ բարեպաշտին, որդի մեծի իշխանին Տարսայիճին զՍահփանոս, ստացիչ սուրբ գանձարանիս յիշեցէք ի Քրիստոս և զհարազատսն իւր զէլիկում և զՓախրադալայն, և զՁալալն, պահեսցէ Քրիստոս ընդ երկայն աւուրս, ամէն։

Աղաչեմ և ես մեղապարտս և անարժան փցուն ծրիչս Զաքէոս խընդրել թողութիւն մեղաց իմոց։

բ

224ա Զգեղեցիկ ծաղիկն եկեղեցոյ և զքրիստոսապսակ նորընծա սուրբ բարեպաշտին զՍահփանոս յիշեցէք առաջի անաւուրին զենմանն Քրիստոսի և զծնողսն իւր զիշխանաց իշխանն զՏարսայիճն և զմեծահաւատ մայրն իւր զՍուրգիսաքուն ամէն։ Ընդ նմին և զառածեալս մեղաւք զանարժան ծրիչս Զաքէոս և զծնողսն իմ, և զամենայն մերձակայսն, ամէն։

գ

294բ Աստանաւր դարձեալ վերատրեսցի գոհութիւն և փառք յամենայն եղանակաւ բնութեանց, եռիցն և միակ բնութիւն անհատ անշատմանն եւ երրեակ եզակին, որ զիմ աղկաղկ և փանաքի անպատուիրելիս արժանացսյց տեսանել զլրոմն աստուածախաւս և մեղսաքաւիչ լուսաւոր տառիս։

դ

48բ Տէր Աստուած տացէ իմաստութիւն և հանճար նորընծա սուրբ բարեպաշտին, որդո մեծի իշխանին Տարսայիճին Սահփանենոսի, և թողցէ զանցանս մաւր իմոյ, որ և փոխեցաւ ի Քրիստոս։

632

ՏԱԻՆԱՊԱՏՃԱՌ

Երևան 522

Գրիչ՝ Սարգիս
Վայր՝ Նորֆ գեղամաղամ

127բ Փառք [ամենա]սուրբ Եր[րորդու]թեան Հ[աւր] և Որդոյ և Սուրբ Հոգոյն, ամէն։ Գրեցաւ [հ]ին տառս [վ]արդապետական ի գեղէքաղաքս ի Նորֆս, ը[ն]դ հովանեաւ Սուրբ Ստեփաննոսի, աւգնեա Քրիստոս, ձեռամբ Սարգսի կոչեցեալ անարժան քահանայի։

Արդ, աղաչեմ զամենեսեան աղերսահայեց մաղթանաւք, յիշեցէր զմեղապարտ գրող սորա զՍարգիս գրչի, և զհայրն մեր զՄ[առս] և զմարն մեր ղՏգուտիկինն և զմահ[դաս]ի զԴմլոնն, որ բազում աղետիւ աշխատ[եցաւ զ]հետ մեղ։ Թողութիւն հայցէք նմա և զիո[քր]եղբայրն մեր զՅովաննէսն, և զիոք[ր]ահա[սակ] եղբարքս մեր զՓարչիկն, զԿիրակոսն [և], զկենակիցն մեր զՈսկեճատն, և զժառանգ[սն] մեր զՄլխեփկինն, և զեղբայրորդին զՍտեփաննոսն, և զքուրն իւր զՄամասն, [և] զայլ նախնիքս մեր՝ զմե[ծ] և զփոքր, յիշելոյ [արժանի ա]ռնէք, [և] զձեզ և զԹորոս աբեղան, որ զաւրինակն շնորհեց, և զվ[արդա]պետն մերո Մխիթարն, և զհայրն իւր զտէր Վարգանն, և [զմայրն իւր] զԿեռայն, որ ի [Քրիստոս] փոխեց[աւ] յիշելոյ արժանի առնէք։ Կամ կարդա[յք] կամ աւրինակ[էք] գրողի սորա Սարգիս Թողութիւն հայցեցէք, և Քրիստոս ձեզ [Թողու]Թիւն շնորհեսցէ իւրում գայլը[ստեանն], ամէն։

[Գրեցաւ ի] Թուին ի ՉհՉ (1297), ի դառն ժամանակիս Թաթարն, որ է նետողական ազգին։ Ո՛վ սուրբ քահանայք հանապազ աղօթք [ար]արէք, վասն արարածոցն խաղաղութիւն հայցեցէք, և Քրիստոսի [փառք] յաւիտեանս, ամէն։

633

ԽՐԱՏԱԳԻՐՔ

Երևան 5929

Գրիչ՝ Սարգիս
Վայր՝ Նորք

ա

162բ Տէր Աստուած ողորմեա Ծաւեռոյն հոգւոյն ի քո միւս անգամ գալըստեանդ, ամէն։ Ո՛, Դմլեին հոգւոյն, ամ[էն], և գրողի և կարդացողի, և լսողի, և որ զղջայ և ապաշխարէ։

բ

199ա ՉՍարգիս** գրիչ փցուն յիշեսջիք ի Տէր։

գ

164ա Յայս միջոցս Թուղթ կայր պակաս, Թէ շատ Թէ քիչ, յաւրինակն չկայր։

---

* Հիշատակարանը մաշված է, իսկ հետագայում թանաքով արված ոչ ճիշտ միջամտությունը ավելի է դժվարացնում վերծանությունը։

** Այս նույն Սարգիս գրչին և Դմլոճին հանգիպում ենք Նորքում գրված նախորդ ձեռագրում։ Ելնելով վերոհիշյալից և գրչության նմանությունից վայրը նշանակում ենք Նորք և դնում նախորդին առընթեր։

634

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 2838

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Հայոց թառ

ա

Փառք ամենայսուրբ երրորդութեանն, Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

249բ Ի թուականութեանս Հայոց ՉԽԶ (1297)*, ի թագաւորութեանն բարէպաշտ և աստուածասէր թագաւորին Հայոց Հեթմոյ մեծի և յաղթողի, և ի կաթողիկոսութեան Հայոց տեառն Գրիգորի, և յաշխարհակալութեան Ղազան ղւանի, և ի մերոյս նահանգի տէրութեան Խոշաիին և Ջաfարիայի՝ որդոյ նորին, և ի տէրութեան մերոյս սուրբ ուխտիս Հայոց Թառւայ պատոն Բեսուքայիին և Խոյանձայիին**, ի դառն և յանբարի ժամանակի, աւետարանաց սուրբ Աւետարանս ձեռամբ Գրիգորոյ նուաստ և փցուն գրչի, յոգնամեղ և փանաքի եղբաւր ի սուրբ և ի հռչակաւոր և յաստուածաբնակ ուխտիս Հայոց թառ յորջորջելոյ, ընդ հովանեաւ
250ա ||կաթողիկէ եկեղեցոյ Սուրբ Սիոնի և աստուածընկալ Սուրբ Ամենափրկչիս, ի ձեռն սորա բա[զու]մ սքանչելիք և պէս-պէս բժշկու[թիւ]նք կատարին։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ ընդաւրինակելով և կամ ընթերցմամբ վայելելով, յիշեսջիք առաջի զենլոյն վասն միր ամենամաքուր դառինն Քրիստոսի, զստացող պատգամաց տեառն զՔուրթըն, և զամուսին իւր զԱսլեռն, և զծնողս նոցայ զՄենեան և զՏաfաիկինն, և զայլսն ամենայն, որ ստացան զսա իւր յիշատակ և ծ[նո]ղաց իւրոց, որպեսզի յոյսն մեր Քրիստոս շն[որ]հեցէ թողութիւն յանցանաց նոցա։ Վասն որոյ, ես մեղաւոր Գրիգոր գրիչ աղաչեմ յիշել ի Քրիստոս և զիս, և ծնաւղսն իմ, զԱբրահամ ուսուցիչն իմ, և զՄխիթարիչ հայր իմ, և զՄամխաթուն մայր իմ, և զեղբարս, զի բազում աշխատանաւք և ահիւ
250բ գրեցի զսա, և արարէք ողորմութիւն առ իմս աղքատութիւն||և հայցեցէք ի Քրիստոսէ, ո՛վ դասք լուսերամից, մեղուցելոյս թողութիւն գտանել յաւուրն մեծի, և իմոց ծնողացն, որք ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ, և Աստուած, որ առ[ատն] է ի պարգևս ձիրս և անթերի և անկատար յամենայնի, տացէ մասն բարի ամենեցուն՝ յանբաւ և յանչափ մեծութեան գանձուց ողորմութեանն իւրոյ, յիշողացդ և յիշելոցս, և ինքն եղիցի աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն, ամէն։

Ի վերա ամենայնի փոխատուն բարեաց [Քրիստո]ս տացէ վարձս բարեաց դեռաբոյս քահանայի և մեր սիրելի հոգևոր եղբաւր Մխիթարայ, որ աւդնական եղև ի գործ սուրբ Աւետարանիս։

---

* Ճեղակեր է թվականը։ Ամբողջությամբ երևում է միայն առաջին «Ջ» տառը, իսկ «Խ»-ի մի մասը։ Վերջինը միավորն է, նեղքի հորիզոնական դծիկը, «ԶԽ»-ից բացի ուրիշ տառ ենթադրել չի տալիս։

** Մի տող անգրել է թողված։

Բ

187ա ԶԳրիգոր գրիչ՝ անարժան ծառայս ծառայից Աստուծոյ յիշեսջիք աղաչեմ։

Գ

Գրիչ՝ Յովանէս

Զաստուածասերն զՔուրղն և զամուսինն իւր զԱսլերն, որ ստացան զսուրբ Աւետարանս ի հալալ ընչից իւրեանց, յիշեսջիք ի <ի> սուրբ յաղաւթս ձեր, ընդ նմին և զծնողսն սոցա՝ զՄենևան և զՏախտիկինն, և զԱւանշւսնն, և զՍտէփանոս քահանայ, և Սուփիասն, և զԱպուտխաքուն, և զԱմիրն յիշեսջիք առաջի զենլոյն Քրիստոսի և Աստուած զձեզ յիշեսցէ։

Ընդ նմին և զՅովաննէս յիշեսջիք սրտի մտաւք։

Դ

65բ Զստացողքն սուրբ Աւետարանիս զՔուրղն և զամուսինն իւր զԱսլերն յիշեցէք ի Քրիստոս։

635

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 7482

Գրիչ՝ Յովնան
Վայր՝ Եղեգեաց մայրախաղաղ

243բ Փառք Հաւր համագոյ, Որդւոյ պատճառի, Հոգւոյ բարեբար<ար>ի անզրաւ յաւիտեանս, որ արժանի արար զանարժանս հասանել ի գիծ վերջին։ Ի յէութեանէ էացեալ էական բանիւ բարձրելոյն, ասացեալ բան բարոյ ինքնահրաման կամաց լրումն, որով և հրաշք աստուածայինք յարարչութեանս տեսանի երկին բազմազան, իսկ երկիր բուսաբողբոջ աղբերաբուխ գետահետեալք լայնածաւալ մեծ յորդութեանց, ընդ այն հրաշ զարմացմանց սքանչացեալ ամենից մտաւորաց և բանաւորաց կենդանեաց։ Իսկ այսր աղագաւ հոգի ի մտի եդեալ աշխատասէր ջանիւ մեծաշահավաճառ արուեստիւ արտաշնչութեան կարծիք համարձակին ի խնդիր բազմագունեան ականցս, որ և յոլով անգամ ի շահելն զշահութիւն կենաց շահին յանծայրածաւալ ծովէն գետահետեալք յաւետարանական քարոզն, աննուազաբար լրմամբ զչորեքեղերէն տիեզերս լնուն, զոր ընդ
244ա բոլոր շրջանս տարոյն չորից եղանակաց կարգեալ ժամուց և‖<և>ամաց և աւուրց։

Նախ իսկ զիջանելն Թափմամբ ի վեհագոյն փառացն կերպի աստուածութեանն ի մերոմակ կերպ ծառայի ծննդեամբն ի Մարիամու կուսէ, զմկրտելն ի Յորդանան Երրորդութեանն ծանուցմամբ, ձայնիւ դաւանել. Դա է որդի իմ սիրելի։ Եւ զանմտանելիսն ցուցեալ ճանապարհ արքայամուտ դրանն երկնից բանալով և շրջեալն աշխարհի աստուա-

ծահրաշ զաւրութեամբն զսքանչելագործել զհրաշ բժշկութեանց, զմեղս
մեր առեալ և զհիւանդութիւնս մեր եբարձ, ըզգայն յաւաննակաւ յՈրուսա-
ղէմ՝ երրայեցոց մանկանցն հանդերձատարած ոստովքն՝ ըովսաննայն
քարոզէին, զհին աւրինադրութեանցն լցեալ մովսիսաւանդ պատուիրա-
նին. զխաչ բարձրանալն և զամենայն կատարել արել արտաշնչութեամբ,
մարմնով ի գերեզմանի դնիլն, զյառնելն երեքաւրեա անապական մարմ-
նովն, փառաւք ի հայրական փառս մեծութեանն, որ էրն առ Հաւրն և
երևեցաւ մեզ, զգալուստ Հոգոյն Սրբոյ ի դասս առաքելոցն, որով ուրա-
խացան ամենայն արարածք երկնաւետ[ե]աւքն։

Արդ, այսմ երանաւետ ցնծութեան և անվախճան և անզրուական
244բ ուրախութեան||ցանկացող եղեալ աստուածային պատուիրանիս Գրիգոր
քահանայ, որ էր սա ի տանեն Արցախայ, ի մեծ նախագահ տանէն, որ
կոչի Մեծիրեանց աթոռ, և ըստ բերման աւուրցս Յակոբա վանք, և հա-
րազատ հաւրեղբարք սորա ի սուն տեղի հանգուցեալք, սուրբ և երջանիկն
Յովճան և անյաղթ փիլիսոփայն Յակովբ, որ զչափ աւուրց կիսաւրեա
կատարեաց ի Քրիստոս, զոր գրեսցէ սոսա Տէր Աստուած ի գիրն կենդա-
նի, ընդ նմին և զայլ ծերունի հաւրեղբայրսն և զեղբայրսն՝ ըստ մարմ-
նոյ, և զսոսա յիշեսջիք։ Եւ Գրիգոր քահանայ և ամուսինն ի* ամենայն
երկեղիւ զարդարեալ, զամենայն կենցաղս մարմնական ի բաց եդեալ,
որ մեծաւ փափաքանաւք ստացաւ զսա յիշատակ ելից և զաւակ ի Սիովն,
և ընտանի աստուածարնակ քաղաքին Վերինն Երուսաղէմի։

Բայց գրեցաւ աստուածաին մատեանս ի թվականութեան Հայկա-
զեան տումարիս ՉԽԶ (1297), ձեռամբ յոգնամեղ և փցուն գրչի Յովճան-
նու ծառայի Յիսուսի Քրիստոսի, ի գաւառիս Սիսական, ի գերահռչակ
մայրա[քաղա]քիս Եղեգեաց, առ ոտս տիրամաւր Աստուածածնիս և
245 Սուրբ Կաթողիկ[է]իս և փառաւորեալ Սուրբ Նախավկայիս, յառաջ||նոր-
դութիւն երկրորդ Ստեփանոսի լուսաւորիչ Հայաստանեաց Սիւնեաց
աթոռոյս։

Եւ գրեցաւ ի եղեռն և ի դառն ժամանակս, յորում տառապանք և
նեղութիւնք մածեալ ունէր զեղկելի և զաշխարհելի ազգս քրիստոնէից,
զի մարմնապէս աշխատութեամբ չարչարեսցէն և յայսմ պատուհասիւ
խրատէ զմեզ ողորմած բնութիւնն Աստուծոյ, և զանյաղթելի զաւրն Պար-
սից առաքեաց ի վերայ մեր։ Եւ յայսմ ամի զեկեղեցիք ի բազում գաւառս
և ի քաղաքս դառն սուգ առեալ զմահ անձանց ըղձանեաք, և բազումք
թողեալ զմենաստանս և զանապատ խառնճանաչ շրջելով տարադէմ
եղեալ աւտար աշխարհիկ փախստական լինէին, լալով և կոծելով ի մեծէ
մինչև ի փոքունս։ Եւ այս վասն բազմապատիկ չարեաց մերոց, զոր
կրեցաք և ոչ զղջացաք, այլ աւր քան զաւր առաւել յաճախեցաք և եղաք
որդիք բարկութեան և ի բաւանդակ մեղս։

Եւ արդ, ես յետինս կարգաւորաց և առաջինս մեղաւորաց, պատկերս
յանցանաց և փցունս գրչաւորաց յերեսս անկեալ հայցեմ յարժանախումբ
սրբոց դասուէ, զիս և զծնողսն իմ և զերախտաւորսն յիշման արժանի

* Անվան տեղը բաց է թողնված։

արարէք, զի թերևս ողորմութիւն գտից յարդարադատ ատենին, ուր բանքըն սպառին և գործքն թագաւորեն*։

636

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4867

Գրիչ՝ Սիմէոն
Վայր՝ Արճէշ

ա

295բ Փառք քեզ անսահման անուն և անզուգական անձնաւորութիւն Հայր
և Որդի և Հոգի Սուրբ յամենայն արարածոց և ի բնաւից եղականացս,
ամէն։

Որք աստուածային սիրոյն փափագեալ հետևին, միշտ յարազուարճ
բերկրանաւք խորհին յաւրէնս Տեառն ի տուէ և ի գիշերի։ Ըստ նմին աւ-
րինակի և սրբասէր և իմաստուն քահանայն և կրաւնաւ[որ] Յակոբ և
Թովմայ, որ միշտ և հանապազ բորբոքէր ի սէր սուրբ և տիեզերաքա-
րոզ քառավտակ սուրբ Աւետարանացս, և ըստ բնաւոր բարուց բարւոյն
296 ախորժական կամաւք մեծա[ւ] տենչմամբ ստացաւ||զսա անջնջելի ար-
ձան ի մխիթարութիւն անձինն ի յոյս փրկութեան։ Եւ ես յոգնամեղս և
փցունս ի գրչաց Սիմէոն, տեսեալ զփափագ և զսէր սորա, յանձն առեալ
ըստ իմում կարի յանգ հանեալ կատարեցի շնորհաւք և ողորմութեամբն
Քրիստոս Աստուծոյ, ի թուականիս Հայոց ՉԽԶ (1297), ի դառն և ի վըշ-
տաբեր ժամանակի, ի քաղաքիս Արճէշ, ընդ հովանեաւ սուրբ հայրա-
պետիս Յակովբայ։

Արդ, աղաչեմ զամենեսեան սիրովն Աստուծոյ՝ զընթերցաւղսդ և զըր-
սաւղսդ, յիշման արժանի առնել զվերոյ ասացեալ պատուական քահ[ա-
նայ] զՅակոբ՝ ստացաւղ տառիս և ըծնաւղսն, ևս առաւել ի ժամ սուրբ
և սոսկալի պատարագին, զի արժանասցին ողորմութեան ի Քրիստոսէ
Աստուծոյ մերոյ։ Յիշել աղաչէմ և զայնոսիկ, որ մասամբ տըրոց աւգ-
նական եղեն ի գին գրոյս, զի ողորմածն Աստուած ըստ միոյ հարիւրա-
պատիկ հատուսցէ նոցին։ Ընդ նոսին և ես ամենամեղս ի գրչաց Սի-

* Ձեռագիրը այնուհետև ընկնում է Երզնկայի Սնում գյուղի Սիմեոն Ձոռմցի քահանայի ձեռքը։ ԺԴ դարի վերջերին Սարգիս երեցը, հավանաբար Սյունեցի, գրում է. «ըստացա զԱւետարանս ի հալալ արդեանց իմոց վասն եկեղեցոյ իմոյ, տվի Ծ դահեկան։ Ի Սանվել երիցու որդի ի Դաւիթ Շարմազանա որդի տիրացու տաւի արար, թէ Աւետարանս իմ է։ Մին կատարած կապայ և մին եզին կաշի ի Տիրացուն տվի։ Հարիւր և յիսուն դահեկան ի Տաթև յուղարկեցի, որ ոսկեցին ու կազմեցին։ Երկու հարիւր և երեսուն դահեկան տվի, որ կոստղեցին...» (9ա)։ Տաթևում ՊԻԷ (1378) ծաղկեցաւ և կազմեցաւ ձեռամբ զողնեղկելի անձին Գրիգորի սպասաւորի բանին Յիսուսի»։ Նա նկարել է «զպատկեր տնաւրէնութեան Տէրկէին մերոյ Աստուծոյ, և զաւետարանչացն և նորոգել ոսկի ծաղկով և կազմեւով զսուրբ Աւետարանս»։ Աւետման տեսարանում՝ Մարիամի և Գաբրիելի նկարների մեջտեղում, երկու պատուհանի միջև ընկած շրջանակում, երկաթագիր, սպիտակ ներկով գրված է. «Աւետիք Աստուածածնի||Գրիգորի ձեռամբ սպասաւորի||բանի, Յոհաննու Որոտնեցւոյ ա||շակերտի նկարեալ» (248բ)։

մ[էոճ] քահանա, երեսս անկեալ աղաչեմ յիշել և ղիմս անարժանութիւն,
296բ և ծնաւղ||տըն իմ զհանգուցեալ[սն ի Քրիստ]ոս, և դայեսիկ, որ յանձնեցին զինքեանս ի մեզ, յիշել ի Տէր։ Ընդ որս ողորմածն Աստուած յիշողացդ և յիշելոցս ողորմեսցի կրկին կենաւք և երկու աշխարհաւք, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն՝։

Բ

10ա Կարաւտ եմ սատարութեան աղաւթից, արգահատեցէք յիշել զդիւրադրժելի գրիչ առ ներհակս բարոյն Սիմէոն, և հասարակաց պարգևատուն յիշողացդ ողորմեսցի, ամէն**։

637

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԷՍԻ ՄԵՍՐՈՊԱ ՎԱՅՈՑՁՈՐԵՑԻՈՅ

Երևան 5980

Գրիչ՝ Աստուածատուր
Վայր՝ Խառաբաստա վանք

ա

Արդ, որք ընթեռնուք կամ ուրինակէք, յիշեսջիք յարժանաւոր յաղաւթս ձեր զտէր Խաչատուր հանգուցողն մեր, որ եւ զրել զսա ի վայելումն մանգանց եկեղեցոյ։ Գրեցաւ սա ի թուի ՉԽՉ (1297), յաշխարհակալութեանն Ղազանին, յառաջնորդութեան տեղոյս տէր Խաչատրոյ,
123ա ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս Խառաբաստա վանիցս||Որ ոք հանդիպիք սմա կարդացմամբ, յիշեսջիք յաղաւթս ձեր զստացող սորա, և զիս փցուն գրողս զԱստուածատուր կոչեց[եալ], եւ Տէր Յիսուս մեզ և ձեզ առհասարակ ողորմութիւն շնորհեցսէ յիւր անսպառ բարեացն։
Փառք ամենասուրբ երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Բ

113բ Տէր Աստուած, զո սուրբ հայրապետին բարեխոսութեամբ ողորմութիւն շնորհեա տէր Խաչատրոյ, և ծնողաց իւրոց։ Ընդ նմին և գրողի սորա Աստուածատրոյ. և քեզ փառք յամենայն արարածոց յաւիտեանս, ամէն։

---

* Ստացողների անունները, որոնց տեղը բաց էր թողնված, գրվել է հետագայում, ավելի մուգ թանաքով։ Հիմնական հիշատակարանից հետո նույն թանաքով գրված է մի հիշատակագրություն, ուր հիշվում են ծնողսն Յակովքայ ոԳրիգոր և զմայրն՝ ըստ մարմնոյ զՍառա»։

** Գրված է խորանի մեջ, եվսերիոսի թղթի վերջում։

638

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, մանրաժապավեն 499

Գրիչ՝ Ստեփանոս Իրիցուդի
Վայր՝ Սկևռա

Փառք համագոյ և միասնական Սուրբ Երրորդութեանն։

Ի թուաբերութեանս Հայոց ՉԽՉ-ն (1297), ի թագաւորութեանն Կիլիկեցւոյ [նահ]անգիս Սմպատա, և ի դիդապետութեանն Հայոց տեառն Դրիգորի, ի մեծ ժողովարանս Սկետայ, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչի և մաւր իւրոյ Աստուածածնի, և կենսունակ Սուրբ Նշանի, մերձ յանմատոյց դղեակս Լամբրունի աւարտեցաւ աստուածատունկս այս հոգիաբողբոջ, քառավտակ սուրբ Աւետարանս, որ յեդեմական դրախտէն հասեալ առ ի յարբումն ամենայն ծարաւելոյց և ի ճաշակ ամենայն կարաւտելոց, որք հաւատով ճաշակէն։

Արդ, ցանկացող եղեալ այսմ սրբո Աւետարանիս բազմամեղ և անարժան քահանայի Ստեփանոս և մականուն Իրիցուդի, ղի թէպէտ և ոչ էր արժամանակս ձեռնտու այսմ արհեստի ի բազում և ազգազգի վշտաց ի ներքին և յարտաքին թշնամեաց, և ևս թէպէտ և զառանցեալ ախտք և պակասեալ ի զաւրութենէ և ի պատշաճ պիտոյից, այսքան կարացեալ լինուլ զտենչանս իմ։

Արդ, երեսս անկեալ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա, յիշել աղաւթիւք զգրող սորա զ||յառաջասացեալս Ստեփանոս, և զծնաւղսն իմ զՂուկաս քահանա, և զմայրն իմ զԹագեր, և զեղբարսն իմ զԳրիգոր, զՎասիլ, զՀայրապետ և զՈսոստանդին, և զ[քե]ռին իմ զՀայրապետ քահանա, և զամենայն ազգատոհ[մ]ն իմ, նաև զեղբարք սրբո մենաստանիս Սկևռայի, որ եւ այժմ կենդանի, և որ գալոց են զկնի՝ հանդերձ ծնողաւք և ազգականաւք յիշեսչիք ի Քրիստոս, զի յայս սակս ի բաց եղիւ զծերութեան անկարութիւն, զի շահեցայց ի ձէնջ զողորմութիւն և զչնորհս, գի թերև[ս] գտից թողութիւն բազմութեան մեղաց իմոց, և յուսալով ի հայրական և եղբայրական գութս ձեր զյառաջակա հոգս իմ, ձեր սուրբ աղաւթից յանձին արարի, և որ ընդունողն է մաղթանաց և տուողն բարեաց Յիսուս Քրիստոս յիշելոցս և յիշողացս ողորմեսցի, և ինքն եղիցի աւրհնեալ ընդ Հաւր և ընդ Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ, յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Որ զայս յիշատակարան ի յայս գրոցս քերէ կամ ջնջէ և հանէ, ինքն ջնջեալ լիցի ի դպրութենէն կենաց։

639

ԿՈՉՈՒՄՆ ԸՆՏԱՑՈՒԹԵԱՆ ԿԻՒՐՂԻ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑԻՈՑ

Երևան 780

Գրիչ՝ Ստեփանոս Իրիցուդի
Վայր՝ Սկևռա

ա

227բ *Քրիստոս Աստուած, ողորմեա ստացողի սորա* Կոստանդեա *քահանայի և ծնաւղաց իւրոց, և մեղուցեալ գծաւղի* Ստեփանոսի *և ծնաւղաց իւրոց, և ամենայն եղբարց սրբոյ մէնաստանիս* Սկևռայիս *և ծնաւղաց իւրեանց, և որոց զամէնն ասիցեն։*

բ

251ա *Քրիստոս Աստուած, քո անճառ խոնարհութեամբ ողորմեա ստացաւղի տառիս* Կոստանդեա *քահանաի և ծնաւղաց իւրոց, և ամենայն եղբարց սրբոյ մենաստանիս* Սկևռայիս *և ծնաւղաց նոցին, և ամենայն ուղղափառ քրիստոնէից, և շնորհեա ի միւսանգամ փառաւոր գալստեանն քում արժանաւորիլ աշակողմեան քում դասուն, և թէ ոք գերեալ լիցի ի բանսարկուէն, քո ամէնազաւր հրամանաւդ ի ձեռն հրեշտակի և նա կորղեալ լիցի ի բանսարկուէն, որպէս գառն ի բերանոյ գայլոց և խաւնեալ ի գունդս արդարոց։ Ընդ սոցա և ամէնամեղ գրողիս և ծնաւղաց իմոց ողորմեսցի Տէր Աստուած, և որոց զամէնն ասեն։*

գ

350բ *Զսրբազան ընթերցողդ և ղլսաւղդ, աղաչեմ յիշել աղաւթիւք զատաղաւղ սորա զԿոստանդին քահանա և զծնաւղսն իւր և զազգատոհմն, և զիս զանարժան աշխատողս զՍտեփանոս Իրիցուդի, և զծնողսն իմ, և Աստուած զձեզ յիշեսցէ ողորմութեամբ։*

դ

Գրիչ՝ Սմբատ

71ա *Քրիստոս Աստուած քո սուրբ ծնաւղին բարեխաւսութեամբ և ամենայն սրբոց քոց, ողորմեա մեղապարտ ծառայիս քո* Կոստանդեա *քահանայի, և հանգուցեալ աստուածասէր հաւրն իւրոյ* Յովհաննէսի *քահանայի, և բարեպաշտ մաւր իւրոյ* որ ստացաւ զսա յարդար ընչից իւրոց, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հուգւոյ իւրոյ։ Որ արժանաւորէք բարի յիշմամբ զստաղաւղս և զանարժան գրողս* Սմբատ *սուտ քահանայ՝ յիշեալ լիցիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։*

---

* Անվան տեղը՝ բաց է թողնված։

ե

Ձա Գրոցս տերովն հրամանաւն մեծցուցի զգիրս։ Կոստըն*։

640

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7663

Գրիչ՝ Սաեփանոս
Վայր՝ [Սկևռա]

ա

299ա Ջմեղաւք լցեալս և զանպիտան ծառայս Աստուծոյ զՍտեփանոս աղաչեմ յիշել**։

Ծաղկող՝ Գրիգոր [Պիծակ]

բ

382ա Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր և Որդւոյ և Հոգւոյ Սրբոյ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Ստեփանոսի գրչի, ի թուականիս Հայոց ՉՃԽՉ (1297), ի թագաւորութեան Հայոց Սմբատայ և ի հայրապետութեանն տեառն Գրիգորի, ի յիշատակ մեղուցեալ քահանայ Մանուէլի և կողակցի իւրոյ Իշխանաւրէ, և ծնողաց իւրոց և ամենայն զարմից, և ի վայելումն որդւոյ իւրոյ Յովանէս դպրի։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք և ընթեռնոյք զսուրբ Աւետարանս, յիշեսջիք զգրող սորա զՍտեփանոս քահանա, և ծնաւղս իւր,
382բ և զամենայն զարմս||իւր։

Ո՛, զմեղաւք դատապարտեալ ծառայս Աստուծոյ զԳրիգոր քահանա, և զծնաւղսն մեր, և զկողակիցս մեր զՀեղինի, և զորդիսս մեր, զի ոսկով զարդարեցի զսուրբ Աւետարանս այս, առ ի յիշատակ հոգւոց մերոց, եւ որ յիշենն զմեզ, յիշեալ լիցի ի նոյն ողորմածն Աստուած, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

---

* Իսկապես Սմբատ գրիչը 9-րդ թերթից մինչև ժ պրակի վերջը խոշորացրած տառերով է գրել։ Վերջին բառը՝ «Կոստըն» գրված է շուտ տված, և աշից-ձախ դրութեամբ։

** Ձեռագրի գրիչը նույնն է Հեթում Բ-ի համար ընդօրինակված Ասավածաշնչի գրիչ Ստեփանոսի հետ, իսկ Ծաղկող Գրիգորը, որի կողակիցը Հեղինեն է, Պիծակն է, Սարգիս Պիծակի հայրը։

641

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան 6273, Փերղալեմյան, Նչխարք, էջ 60բ, 61ա։

Ստացող՝ Ստեփանոս Գոյնեբերիցանց

Փառք Սուրբ երրորդութեանն յաւիտեանս յաւիտեանից, ամէն։

Մեղաւոր հողս Ստեփան Գոյնեբերիցանց *ցանկացայ ստանալ զԱստուածաշունչ գիրս ըստ կարի այս երկրորդ անգամ, և հակեալ իմ ի ծերութեան և նուազեալ յամենայն զգայարանաց, որպէս գործոյս իսկ երևի, այլ վասն յիշատակի և մխիթարութեան հոգւոյ և մարմնոյ յԱստուած ապաստան եղէ, և նա ետ կարողութիւն և ստացայ առաջին զայս զաստուածատես զաստուածախօս մարգարէին Մովսէսի զհինգ գիրսն, և զՅեսուն և զԴատաւորսն, և զՀռութն յաւել ի սա Եաչատուր վարդապետ վասն յիշատակի հոգւոյ իւրոյ։*

Եւ քանզի լուսաւորիչն հոգւոյ իմոյ մեծ վարդապետն Գէորգ փարթամացոյց զբովանդակ Աստուածաշունչ գիրսս, իրք՝ ի խնդրոյ ուրուք, և իրք՝ յինքն յինքենէ շարժեալ։ Զգլխահամարսն ոչ գիտեմ ով է խնդրել, այլ զնախադրութիւնսն պարոն Հեթում խնդրեաց՝ արքայորդին, և արարեալ զսա զի խնդրողքն բանի ըստ պիտոյից ժամանակին զինչ կամիցին՝ դիւրեաւ գտանիցեն։ Վասն որոյ աղաչեմ զհանդիպողսդ սուրբ մատենիս միամիտ սրտիւ յիշել զվերոյ դրեալքս. առաջին՝ զօրինակին փարթամացուցիչն և շնորհողն մեզ առատապէս զԳէորգ վարդապետն և ծնողսըն իւր, զհոգևոր հայրն իմ, և զԵաչատուր վարդապետն՝ ծնողիւք իւրովք, ևս և զտառապեալ ոգիս զնուաստ գրիչս և զծնողսն իմ, և զուսուցիչսն իմ՝ ի Տէր, և դուք յիշեալ լիշիք յառատ ողորմութիւն Աստուծոյ։

ՉԽՉ (1297) թուին աւարտեցաւ ի փառս Աստուծոյ, ամէն, ի թագաւորութեանս Հայոց Սմբատայ և ի կաթողիկոսութեան տեառն Գրիգորի։

642

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երուսաղեմ 356, Պողարյան, ծուցակ Բ, էջ 258

Գրիչ՝ Ստեփան Գոյնեբերիցանց

ա

204բ *Փառք ամենասուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից, ամէն։*

Բաղձանաւք առ ի Քրիստոս յուսոյն շարժեալ աստուածասէր քահանայ ոմն՝ անուն Ոսկեներ, *եւ ի փարթամութիւն տաճարին Աստուծոյ զոր կանգնեաց յանուն Սրբոյն Ղազարու յաստուածապահ քաղաքն Ատանա, կամեցաւ ստանալ զաստուածաբան գիրս մարգարէին. Եսայեայ։ Եւ առ այս թախանձեալ զմեղսաներկ գրիչս* Ստեփանոսի Գոյնեբերիցանց, *եւ ես թէպէտ վասն ի ծերութիւն հակելոյ եւ նուազութեան աչաց եւ բթու-*

թեան զգայարանաց, որոց առուգութեամբն ի ճահ կատարին արուեստք, եւ զարդարուն յաւրինին ձեւք՝ աղքատացեալ, այլ՝ ոչ կարացի անլուր լինել խնդրողին, խոշոր և մացառոտ գծիւ ձաբրուեցի զսուրբ գիրս զայս, ի վայելս Ոսկեձեռի եւ ի զգուշութիւն անձին ի կեանս, եւ յետ մահու յիշատակ բարեաց, որոց Տէր ժառանգեցուսցէ, որք սպասաւորեն սուրբ տաճարին Սուրբ Ղազարու։ Զորս աղաչեմ զսրբատէր ժառանգաւորդ սուրբ տաճարին եւ սուրբ մատենիս, միամիտ սրտիւ յիշել յաղաւթս ղստացաւղ սորա զՈսկեձեռ քահանայ, եւ զծնաւղս նորին, եւ զամենայն զարմն իւր, եւս եւ զտառապեալ ոգիս զնուաստ գրաւղս, եւ զծնաւղսն եւ զուսուցիչսն իմ ի Տէր, եւ դուք յիշեալ լիջիք յառատ ողորմութիւնն Աստուծոյ։

Գիրքս այս ի թուին ՉԽԶ (1297) աւարտեցաւ ի փառս Աստուծոյ, ի թագաւորութեան Հայկազեան ազդիս Սմբատայ եւ ի կաթողիկոսութեանն տեառն Գրիգորի։

Բ

Գրիչ՝ Պետրոս

Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն, ամէն։

Ի թու[ին] Հայոց ՉԽԶ (1297) ի հայրապետութեան տեառնն Գրիգ[որի], եւ ի սմին ամի աւծութեան թագաւորին Սմբատայ, գրեցաւ աստուածախաւս մատեանս սուրբ Առաքելոյն Պաւղոսի՝ ձեռամբ փցուն գրչի Պետրոսի նուաստ քահանայի, հրամանաւ եւ ծախիւք աստուածասէր քահանային Ոսկեձեռի, ի վայելս իւր եւ ի փարթամութիւն իւրաշէն եկեղեցւոյն Սուրբ Ղազարու, յաստուածապահ քաղաքն Աստաձա, եւ յետ ելիցն իւրոց՝ յիշատակ բարի իւր, [եւ] ծնողաց իւրոց, եւ ամուսնոյն իւրոյ կանուխ վախճանեցելոյ, նաեւ որոց կենդանի եւս են՝ աստուածապաշտ հաւրեղբաւր կնոջ, եւ մայրաբար սնուցչի իւրոյ, եւ հաւրեղբաւրորդւոյն իւրոյ Հեթմոյ։

Արդ, պատահեալքդ սուրբ մատենիս՝ խնդրեսջիք յԱստուծոյ պահպանութիւն ի կեանս Ոսկեձեռի՝ ստացողի գրոցս, եւ հանգիստ յետ աստեացս, եւ ընդ [ն]մին եւ մեղաւոր գրչիս, եւ ձեզ հայցողացդ ի փառս Աստուծոյ, ամէն։

Գ

452բ Այղ եւ որք թելադրաւղք եւ ձեռնտուք եղեն յաւժարամիտ կամաւք դրելոյ գրոցս եւ ուղղելով կամ գլխագրելով նպաստք՝ Գորգ եւ Խաչատուր սպասաւորք բանի, յիշատակի արժանի արասջիք հանդիսեալքդ աստուածայնոյ տառիս, եւ դուք յիշեալ լիջիք յողորմութիւնն Աստուծոյ, ամէն։

643

ՄԻՍԱԿԱՆ ՄԱՏԵԱՆՔ

Երուսաղեմ 265 (1314), Պողարյան, ծուցակ Բ, էջ 61—62։

Գրիչ՝ Գոարգ

242ա Ով պատուական ստացողք և տեսանողք, գիտացիք, ի Գոարգ վարդապետին աւրինա[ւ]կէն դրեցի, եւ նա դրեալ էր ի յիշատակարանէն, թէ՝ Որ ոք յրնթեռնուլն զսա այլափոխ բանիցն պատահեսցէ՝ մի տգիտութեան վարկցի կամ անձնահաճութեան, եւ մի համարձակեսցի յեղաշրջել բան ինչ, զի յաւրինակէ Մեկնութեան տեառն Խոսրովա ուղղեցի՝ որչափ գտի զի նմանէ քննեալն։ Եւ թէ կամիցիս գիտել թէ ոյք են ի նմանէ քննեալքն՝ գտանիցես յանցնիւր տեղւոջ զանունն իւր գրոշմեալ սեւագեղով։

644

ՇԱՐԱԿԱՆ ԵՒ ԽԱՉԳԻՐՔ

Երուսաղեմ 503, Պողարյան, ծուցակ Բ, էջ 504։

Գրիչ

ա

44ա Ջստացող սորս զՍմբատ թագաւոր Հայոց յիշեցէք ի Քրիստոս։

բ

330ա Ո՛վ սրբազան երաժիշտք, որք երգէք, յիշեցէք զՍմբատ արքայ Հայոց։

645

ԲԺՇԿԱՐԱՆ

ԶԻՈՑ ԵՒ ԱՌՀԱՍԱՐԱԿ ԳՐԱՍՏՈՑ

Աճառյան, ծուցակ Թավրիզի, էջ 138

Գրիչ՝ Թորոս fաճաճա
Վայր՝ Սիս

183բ Գիրս այս Բժշկարան է ձիոյ եւ առհասարակ գրաստոյ, յաղագս ղեղոց եւ նշանաց, որ ճանչենան զաղէկն ու պիղծն։

Փառք, պատիւ ու երկրպագութիւն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Արդ, գրեցաւ Բժշկարանս ձիոյ եւ առհասարակ գրաստոյ, որ ճանչենան զաղէկն եւ զպիղծն, հրա[մա]նաւ քրիստոսասէր արքային Հայոց Սմբատայ իմաստնոյ եւ մտախոհի, եւ հանճարաշատին եւ բարեպաշ-

---

* Մինչև այստեղ գրվածը՝ ձեռագրի գրիչ Առեփաննոս Գոյներերիցանցինն է, մյուսը՝ գաղափար օրինակի գրիչ Գորգ վարդապետինը։ Համեմատիր 179 Աստուածաշնչի հիշատակարանի հետ (1292 թ.), որը Գևորգ Սկևռացու Աստուածաշնչից է ընդօրինակված։

տի, որոյ աչն Քրիստոսի Աստուծոյ միշտ հովանասցի նորա՝ փառաց ի փառս բարձրանալ նմայ երկար կենաւք, ամէն։ Եւ ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի թարգմանեցաւ գիրքս այս ի յարապ գրէ ի հայ բառ, որ՛է բժշկարան ձիոյ եւ այլ հասարակ գրաստնոյ, ի բազում իմաստասիրաց եւ ֆիլիսաւֆայից Ճընաց եւ Ապիուսուֆին, եւ Ըռայշիտայ եւ այլ բազում Հընդկաց եւ Պաղտըտայ իմաստասիրաց ասացեալ, որոց զանունքն չենք աստ գրել։

Եւ արդ, ես նուաստ բժիշկս Ֆարայես, հրամանաւ տեառն իմոյ սուրբ արքային, հանձն առի բազում աշխատանօք, եւ թարգմանեցի զսա ղորդ եւ յստակ բառիւ, զի յոյժ հմուտ էի եւ վարժեալ յարուեստս բժըշկութեան ի մեծ Պաղտատ, բազում ամաւք։ Եւ եմ ազգաւ և հաւատով ասորի, աստուածապաշտութեամբ կատարեալ ուղղափառ, եւ աշխատեցայ թարգմանել զբժշկարան եւ զիմաստասիրական դիրքս ի մայրաքաղաքս Սիս։

Արդ, ես՝ Թորոս տրուպ քահանայ, տեսեալ զիս Ֆարաճ բժիշկս այս, եւ յոյժ աղաչեաց զիս, եւ շատ հարկեաց, եւ բազում խոստմունս խոստացաւ ինձ կատարեալ ի սուրբ եւ յրնարեալ արքայէն։ Եւ ես յորժամ լուայ զփափաքումն սուրբ արքային, վասն սորին ես ապա յանձն առի եւ գրեցի ի ս[ե]ան, եւ ապա վերստին նորոգեցի և գրեցի մեծ գիր, ի յարապ գրէ ի հայ բառ՝ ղորդ եւ յստակ ///

646

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Լենինգրադ, Արևելագիտության ինստիտուտ C₂29

Գրիչ՝ Գրիգոր Արևելցի
Վայր՝ Մլիճ

ա

205բ Բարեխաւսութեամբ սուրբ եւ ընտրեալ նահատակացն վասն քո, Քրիստոս Աստուած իմ, ողորմեա ստացողի մատենիս Գրիգոր անարժան աբեղայի եւ ծնաւղաց իւրոց եւ սիրելի եղբարց իմոց Վաճականց վարդապետի և Բարսեղի սրբասնեալ քահանայի։ Ո՞վ եղբայր, յայսմ աւուր անաւրէն ազգքն Հագարու, որ կոչի Ղարամանն, զոր վանեսց[է] եւ կործանեսցէ զնա Տէր Աստուած մեր, եկն այրեաց զսուրբ ուխտն Մլիճի, եւ գերեաց զաշխարհն ամենայն եւ տարաւ, որոց փրկեսցէ զնոսա Տէր Աստուած մեր և զմեզ ի սատանայէ, և զձեզ որք աւգտիք իսմանէ, ամէն, եղիցի։

բ

220ա Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զգիրսս զայսոսիկ՝ յիշատակ ինձ և ծնողաց իմոց։

Արդ, որք ընթեռնոյք կամ աւրինակ առնոյք, յիշեսջիք զԳրիգոր զանարժան աբեղայ ի մաքրափայլ և յարժանաւոր յաղաւթս ձեր, ընդ

նմ[ին] և զերջանիկ վարդապետն զՎանականն, և ղբարերարոյ եղբայրն իմ զՊասիլիոս, և ծնողսն իւրեանց յիշեցէք ի Քրիստոս, և զխոշորութիւն գրոյս թողութիւն շնորհեցէք, զի այսչափ է կար մեր։

Ջուր աւրինակ նաւ խռովեալ փութա ի նաւահանգիստ, նոյնպէս և գրիչն՝ ի վերջին գիծն։

Յայսմ ամսոյ նահատակեցաւ թագորդին պարոն Թորոս և սպանաւ եղբաւրէ իւրմէ, որոց ողորմեսցի Քրիստոս Աստուած և հանգուսցէ յերկնիցն արքայութիւն, և զվերջին մնացեալքն ի խաղաղութիւն պահեսցէ, ամէն։

Գ

341ա Աւրհնեալ է Աստուծոյ անչափ մարդասիրութիւն, որ ներեաց ամենաթշուառի յանդգնութեան, և վայ է ինձ, որ յոյժ պիտանին ինձ ի բաց եմ թողեալ՝ ղխոստովանել մեղացն և զողորմել աղքատին, և զսիրելն զընկերն, և ղոչ բարկանալն տարապարտուց, և զչերմեռանդ արտասուսալ աղաւթքն, և միայն ղգրելոյս զփոյթն ունիմ, և ոչ զգրիս հրամանացն կատարումն, և կարի վտանգիմ ի յաւտարութիւնս և ի պանդխտութիւնս, զի ի գործոյս իսկ երևի, զի խիստ ճարտար կու գրի, թէ աստուած ճանապար[հ] տա, որ երթամ առ իմ ծնողսն։

Այլ վառեալ իմ ի յայս յոյս, թէ որք հանդիպիք գրոյս աղնուի, յիշէք սրտի մտաւք զանարժան աշխատողիկս, որ այսպիսի բաղում տառապանաք վասն տկարութեան և պանդխտութեան և փցուն գրով ձաբռտեցի։ Այլ թեպէտ և է խոշորատէս դիրս, այլ աւրինակն լաւ է, զի ի Գորգ վարդապետին աւրինակէն է, եւ նա յոյժ աշխատեցաւ ի բովանդակ Աստուածաշունչ գիրս և պայծառացոյց նախադրութեամբ և գլխահամարով, զի դիւրաւ գտանիցեն բանի խնդրաւղքն, զինչ կամիցին։

Արդ, աղաչեմ զհանգիպեալսդ, յիշեցէք սրտի մտաւք զԳորգ վարդապետ և Գոյներիցանց՝ զաւրինակիս շնորհաւզս, այլև զիմ անարժանութիւնս զԳրիգոր Աւետլցիս՝ զծնաւղքն իմովք և զամենայն զարմիւք, և որք աշխատեալ են ի յիս ուսմամբ, և Աստուած իւր շնորհէ ողորմութիւն, որ մեզ խնդրէ ողորմութիւն ի Քրիստոսէ, ամէն։

Դ

231ա Աղաչեմ զամենեսեան թողութիւն և դարձ խնդել եղկելոյս և անարժան աբեղայիս Գրիգորի և ստացողի մատենիս, ևս և երշանիկ վարդապետին Վանականին, որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս, որում ողորմեսցի Քրիստոս յիւրում գալստեանն ամէն, և որ զամէնն ասեն։

Յիշեցէք և զսիրելի եղբայրն իմ զՊասիլիոսի ի բարին Յիսուս, և զձեզ Աստուած յիշեսցէ, ամէն։

Ե

47բ Ո՛վ սուրբ ընթերցողք, զստացող գրոցս զԳրիգոր աբեղայ և զգրող, և զծնողսն իմ, և զամենայն զարմ յիշեցէք ի Քրիստոս, և Աստուած զձեզ յիշէ, ամէն։

գ

108բ *Զստացող սորա զ*Գրիգոր *անարժան աբեղա, ըստ զանունս միայն ունիմ աբեղայ և գործով չեմ։*

Ո՜հ, զիս, զմեղաւորս և զծնողսն իմ յիշեք ի Քրիստոս, և Աստուած զձեզ'։

647

ՄԱՇՏՈՑ

Տիսիրան, Ցուցակ Հռոմի, էջ 352

Գրիչ՝ Ստեփանոս
Վայր՝ Մլիճ

ա

75բ *Տէր Աստուած, ողորմեա տեառն* Ստեփանոսի *արքեպիսկոպոսի* Տարսոնի *և ծնողաց իւրոց և ազգատոհմից, եւ սուրբ ուխտին* Մլիճոյն, *և որ ամէն ասէ, և տառապեալ գրչիս, ո, Տէր։*

բ

84ա *Քրիստոս Աստուած, ողորմեա ստացողի գրոցս տեառն* Ստեփանոսի *արքեպիսկոպոսի* Տարսոնի, *և ծնողաց իւրոց պարոն /// և յոյժ տառապեալ ախմար գրչիս* Ստեփանոսի, *և որ ամէն ասէ։*

գ

251բ *Տէր Աստուած ողորմեա ծառայիս քո տեառն* Ստեփանոսի *արքեպիսկոպոսի* Տարսոնի, *և աստուածատուր որդոյ իւրում սիր* Գրիգորի, *և ծնաւղաց իւրոց, ամէն, ամէն։*

648

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 7353 (1296 թ.)

Ստացող՝ Վարդան

2ա *Յանունն Աստուծոյ ես անարժան ծառայս Աստուծոյ* Վարդան *անուամբ քահանայի և վարքս չարագործի, ըստացա զսուրբ Աւետարանս ի հալալ ընչից իմոց յիշատակ ինձ, և ծնողաց իմոց* Սեպաստա *և* Սոփէ, *և հաւր իմոյ* Շարվենա, *և* Ներսիսա, *և* Գերգա, *և* Պապաքա՝ *հաւրեղբարց իմոց, և մաւր իմոյ* Տիրուհէ, *ինձ* Վարդանա, *և* Շաքարա, *և որդոյ իմոյ* Կոստընդիանոսի, *ուսած զՍաղմոսն՝ տղա հասակաւ փոխեցաւ ի Քրիստոս, և ես յետ մնացի լալագին աչաւք, հերենիք որդոց իմոց* Մամիկոնա *և* Աւագին *և* Ջալալխաթուն *դուստր իմ։*

---

* *Այս կարգի հիշատակություններ կան նաև 184ա, 172ա, 216ա էջերում։*

Արդ, ո՛վ սուրբ քահանայք, որք կարդայք, ասասջիք բոլոր սրտիւ, Տէր Աստուած, յորժամ զդատողական աթոռոտ դնես և բազմիս դատաւորտ արդար, սէրոբէքն և քէրոբէքն, հրեշտակք, Սուրբ Խաչն և Սուրբ Աստուածածինն, Սուրբ Ովանէս, Սուրբ Ստեփանոս, սուրբ առաքեալքն և
2բ մարգարէքն, սուրբ իւղաբեր կանայքն||մարտիրոսքն, սուրբ հայրապետքըն, յառաշին քահանայէն մինչև ընդ վերջին քահանայն, և սուրբ Աւետաբանս րարեխաւսիմք առ Քրիստոս, ղի թողցէ զՎարդանա և ծնողեաց իւրոց զմեղքն ամէն, և Քրիստոս զկարդացողացտ թողու զմեղքն, ամէն։

Գրեցաւ ի թվիս ՉԽԶ (1297)։

649

ՃԱՇՈՑ

Երևան 4811

Գրիչ՝ Ստեփանոս

251ա Սորա բարեխոսութեամբ Քրիստոս Աստուած ողորմեա գրաւղի սորա Ստեփանոս հայրպետի և ծնողաց իւրոց Աւտարշահին և երկու եղբարցն իմ՝ Նորհատին և Նորշահին, և մաւր մեր, և պատանեակ Կարապետիս, և միւս Կարապետիս, որ զաւրինակս ետ։ Ընդ նմին և զկազմող գրոցս զԹաղէոս արհղայն, և ղծնաւղսն իւր զԱմիրդատն, և որք աշխատեալ են ի գիրքս։ Քրիստոս Աստուած, յորժամ գայցէս անճառելի փառաւք, այց արա մեղուցեալ ծառայիցս և մեղաց թողութիւն շնորհեա մեղ և որք զմեզ յիշեն սրտի մտաւք, ամէն։

Գրեցաւ Ընթերցուածս ձեռամբ Ստեփանոսի հայրպետի, ընդ հովանեաւ|||* ի թվին ՉԽԶ (1297), ի չար և ի դառն ժամանակիս, ի բռնակալութեանն խազանին, որ բազում եկեղեցիք աւերեցան և բազում հայրապետք և քահանայք և ժողովուրդք ի սուր ս[ուս]երի մաշեցին, և զայլս գերի [տարան], որոց [այ]ց արասցէ Աստուած, տա նոր||| կրկին որ բնաւ չլիշենք զփառն||[ա]մենքս ի միասին տամք գոհութ[իւն], ամէն։

650

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՃԱՌԻՑ

Երևան 640

Գրիչ՝ Հեթում
Վայր՝ Հայելի գիւղ

ա

314բ Աւրհնեալ է Հայր համագոական և միասնական, գովութիւն Որդո միածնի էականի և մըշտընշենաւորի, փառք Հոգոյն Ճշմարտի նորոգողի և աղատողի զիւր արարածս։

---

* Տեղի անունը քերված է, բայց նշմարվում է պատվագրված «Սուրբ»-ը և «Թ»-ի վերին մասը։ Թերևս՝ «Սուրբ Թորոս»։

Դրեցաւ սրբոց Հարանց վարս ի թուականութեանս Հայոց ՉԽԶ (1297), ի թագաւորութեան Սմբատեա, եւ ի հայրապետութեանն տեառն Գրիգորի, ի պարոնութեանն Հեթմոյ, որ յոյժ ցանկացող եղև սիրոյն Քրիստոսի, եւ նման եղև Յոհաննէսի կամաւոր աղքատի, եւ եթող զամենայնն և գնաց ղհետ Յիսուսի։

Գրեցաւ ձեռամբ Հեթումի մեղապարտի և անարժան գծողի, ի գեաւղս
315ա որ կոչի Հայելի.‖ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին։ Արդ, աղաչեմ զամենեսեան, խոշորութեան գրոյս չլինել մեղադիր, զի տխմար էի։ Դարձեալ աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք կամ աւրինակէք, զիս և զծնողսն իմ, և զորդիսն իմ զԳրիգոր և զԹորոս, և զմայր սոցա զհանգուցեալ յիշեսջիք յաղաւթս ձեր։ Եւ որ զմեզ յիշէ, և ինքն աւրհնեալ լիցի ի Քրիստոսէ, և նմա փառք յաւիտեանս ամէն։ Զմեզաւք լցեալս զվասիլ Հայելեկցիս յիշելո արժանի արարէք։

Բ

46բ Ո՛վ սուրբ եղբարք, զմեզաւք ծանրացեալս զՀեթում, և զծնողսն իմ, և զորդւակսն իմ զԳրիգոր և զԹորոս՝ հանդերձ մարբն իւրեանց, յիշեսջիք ի Տէր և թողութիւն հայցեցէք ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ և ձեզ թողութիւն շնորհեսցէ Քրիստոս Աստուած։

Գ

138ա Ով անձն իմ եղկելի,
Զամէն կեցար մեղաւք իւի.
Քեզ կայ պահաց յաւուր մեծի,
Որթն [ան]քուն, հուր գեհենի,
Քեզ դժո[խք]ն է ցանգալի,
Խաւարն անթիւ ժառանգելի,
Զի չես դողծել աւրիկ մի բարի,
Եւ ոչ պահիկ մի արտասուելի*։

Դ

305բ Որք կարդալք կամ աւրինակեք զմեղապարտս Հեթում, և զծնողսն իմ, և զորդեակքն իմ զԳրիգոր և զԹորոս յիշեսջիք ի Տէր աղաչեմ**։

---

* Վերջին տողը և նախավերջին տողի երկու բառերը գրված են լուսանցքում, այլ գրով և թանաքով։

** Այս կարգի հիշատակագրություններ կան նաև 59ա, 64բ, 94ա, 111ա, 121բ, 258բ, 255ա էջերում։

651

ՀԱԻԱՔԱՏՈՑ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱԳՐՈՑ

Երևան 9292

Գրիչ՝ Թորոս
Վայր՝ Խորին և Փերչեր

ա

306ա Շնորհաւք և առատ գթութեամբ մարդասիրին Աստուծոյ Հաւր և Որդւոյ և Հոգւոյ Սրբոյ, այն որ վասն կամելոյ զկեանս ամենեցուն ընդարձակեալ աճեցոյց զաւրինակս և զճանապարհս փրկութեան։ Ըստ այլ և այլ բարոյից հասակաց և արուեստից մարդկան այլ և այլ ձևս և արուեստս փրկականս, բարձրագոյնս և խառնարգահոյս, նրբաշավիղս և անդորրընթացս, յոլովաշանս և թեթևախոնշս, նախապատիս և երկրորդականս, զի ըստ կարի կամ յաւժարութեան այսմ կամ այլում հետեվելով ոք, մի յուսահատ եղեալ ի դժուարութէնէն վերջոտնեալ անհաղորդ մնասցէ փրկական ճանապարհի իմիք, այլ ըստ չափոյ զաւրութեան կամ յաւժարութեան ընդ մի կամ ընդ յոլովս՝ ի ճանապարհաց հետևյալ ժամանեսցէ փրկութեան։

Յայս ամենասառատ գթութիւնս Աստուծոյ հայեցեալ ես՝ մեղուցեալ ծառայս Աստուծոյ Թորոս սոսկ անուամբ քահանայ ի կրաւնաւորական ձևի, քանզի տեսեալ զիս ի բարձրագոյն առաքինութեանցն շաւղաց կասեցեալ՝ զարտուղի գնացիւք, մանաւանդ յաղթեալ ի ծանրութէնէ հողեղէն յարկիս, և ոչ ունելով այլ ինչ տեսակ բարեաց, զմտաւ ածի զի գոնէ այնու աւրինակաւ շահեցայց դոյզն ինչ մասն փրկական, զտխմարու-
306բ թեան և զտկարութեան վհատութիւնս ի բաց եդեալ, ձեռնամուխ եղէ իմ գրութիւն Մեկնութեան Աղաւթնոյս և Պատարագին, զոր մեկնեալ էին սուրբ հարքն մեծն Խոսրով և տէր Ներսէս և այլ սուրբ հարքն, մեծաւ աշխատութեամբ գլխաւորեալ՝ յանկ հանի շնորհաւք Աստուծոյ, ի յիշատակ բարւոյ ինձ և իմոց ծնաւղացն ի Քրիստոս գնացելոց, և եղբարց իմոց, և քեռ, և որոց դեռևս ընդ իս են այսաւր՝ Ներսիսի քահանայի և Ստեփանոսի կրաւնաւորի, և զարմից մերոց, որոց կենդանեացս և նըշնշեցելոցն մերոց աղաւթիւք վայելողացդ լիցի ի շնորհացն Աստուծոյ գրիլ ի կենացն Աստուծոյ մատեանս։ Եւ զայս մեծաւ թախանձանաւք խնդրեմ ի վայելողացդ ի սոյն, որ զմեզ բարւոյ յիշման արժանի արասցէ, զի և ինքն յիշեսցի յոզորմածէն Աստուծոյ, ամէն։

Աղաչեմ յիշեսջիք և զխորնին հայրն՝ Կոստանդին վարդապետ, և զհարազատ եղբայրն իւր զԲարսեղն, և զփակակալն զԳրիգոր, և զսիրեցեալ եղբայրն իմ զԳէորգ, և զայլ առհասարակ եղբարսն՝ գներքինք և զարտաքինք զի ի Խորինն սկսայ և ի Փերներս կատարեցի։ Յիշեցէք զՍտեփանոս կրաւնաւոր՝ զՓերներոյս հայրն, և զեղբաւրորդին իւր զԳրիգոր քահանա, և զսիրեցեալն իմ զՅոհաննէս քահանա։

Կատարեցաւ գիրս ի մեծ թուիս ՉԽԶ (1297), ի բազմաթշուառ ժամանակի, զի ի սոյն ամի սուլտան Մսրայ Լաչին, վասն բազում մեղաց մերոց յոյժ զաւրացեալ զայսու ժամանակաւք և հպարտացեալ՝ առաւել

գոռայ ի վերայ մեր, քան զԱինէքերիմն ի հնումն, յոյժ ծանրացուցեալ զսակ հարկին քան զոր ///*

Բ

101ա Ջսնուցիչն իմ զՀատաւրի և զՎասիլ և զողորմելի գերիս և զեղբարսըն իմ, և զքեռ, ծնողաւք մերովք և զարմիւք յիշեցէք ի բարին Քրիստոս, և Աստուած զձեզ յիշէ, և նմա փառք յաւիտեանս։

Գ

124բ Ջուսուցիչսն իմ զԲարսեղ և զԹորոս, և զողորմելի գերիս, և զեղբարսն իմ, և զքեռ՝ ծնողաւք, յիշեցեք ի Քրիստոս, և Աստուած զձեզ յիշէ։

Դ

151բ ՋԳրիգոր և զամուսին իւր, որ զնիւթս պատրաստեցին, և ողորմելի գերիս, և զեղբարսն իմ զՆերսէս, և զՍտեփանոս, և զքեռ յիշեցէք ի բարին Քրիստոս, և Աստուած զձեզ յիշէ։

Ե

195բ Տէր Յիսուս Քրիստոս Աստուած, ողորմեա մաւր իմոյ, և Խրիձորի և ամուսնոյ իւրոյ, և ողորմելի գերոյս, և եղբայրցն իմոց, և քեռ, և զարմից մերոց, և այնոցիկ, որ յիշեն զմեզ, և քեզ փառք յաւիտեանս։

Զ

221ա Տէր Յիսուս Քրիստոս Աստուած, գթա, ողորմեա Գէորգեա վարդապետին, որ զՔարոզինս և զԱղաւթինս զը(զ)որդէլ է ի Խոսրովէս, և ողորմելի գերոյս, և ծնողաց մերոց, և զարմից մերոց, և այնոցիկ, որ յիշեն զմեզ, և քեզ փառք յաւիտեանս։

Է

219բ Մի աւտար թուխսցի, և մի տագնապիր, եղբայր, ի ճշմարիտ և ի հին աւրինակացն է դրեալ։

Ը

196ա Ո՛վ եղբայր, երբ զմեկնիչն գրես, դու զաղաւթինս այլ գրէ, որ տեսնուն մեկ ի մեկու աւգտին։

Թ

Ետ Դեղ որ զգրոցն եղերքն պնդէ՝ չրգեղ անցոյ ի վերայ ու յարևն դիր, որ խիստ չորանայ։

Ժ

162ա Զերկու Վասիլ և զԹորոս յիշեցէք ի Քրիստոս։

---

* Հաջորդ թերթն ընկած է։

652

ԱԻՆՏԱՐԱՆ

«Ցուցակ ձեռագրաց որ ի Հանդէս ամսօրեայս», էջ 85—86

Գրիչ՝ Հեթում
Վայր՝ Մամուեստիա

Փառք ամենասուրբ Երրորդութեան Հաւր եւ Որդւոյ եւ Սրբոյ Հոգւոյն, այժմ եւ միշտ, յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Շնորհիւ հզաւրին սկսայ եւ ողորմութեամբ նորին գրեցի զսուրբ Աւետարանս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի խնդրոյ աստուածազան եւ սրբասէր ըստ Հոգւոյ հաւր մերոյ եւ ըստ մարմնոյ ուսուցչի մերոյ, պատուական քահանայի Սմբատայ Քաջկոնց, ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնաւղաց իւրոց, եւ ի վայելումն եղբաւր, եւ եղբաւրորդեաց, եւ ամենայն նախնեաց իւրոց, իմոյ ձեռամբ Հեթումի՝ նուաստ եւ անարժան քահանային եւ անպիտան գրչիս։ Ի թուականիս Հայոց մեծաց ի ՉԽԶ (1297)-ն եւ յամսեանն Յունիսի ԺԶ (16)-ն, ի թագաւորութեան Սմբատայ եւ ի հայրապետութեան տեառն մերոյ Գրիգորիսի, ի քաղաքիս Մամուեստիայ, ընդ հովանեաւ Սուրբ Թորոսայ։

Ո՛վ աստուածազան սուրբ հարք եւ պաշտաւնակից իմ ի Քրիստոս Աստուած, որք կարդայք կամ ընդաւրինակէք զաստուածախաւս սուրբ Աւետարանս յերեսս անկեալ աղաչեմ զձեզ եւ արտասուալից պաղատանաւք մաղթեմ, յիշեսջիք զմեզ եւ զծնողսն մեր ի Քրիստոս առաջի սուրբ զենլոյն Յիսուսի, թերեւս ողորմութիւն գտցուք ի Քրիստոսէ Աստուծոյ յիշմամբ եւ ճշմարիտ աղաւթիւք ձերովք։ Եւ որք յիշէք եւ ձեզ ողորմեսցի Քրիստոս Աստուած, եւ նմա փառք, այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս։

653

ԱԻՆՏԱՐԱՆ

«Ցուցակ ձեռագրաց որ ի Հանդէս ամսօրեայս», էջ 86 (1297 թ.)

Գրիչ՝ Սիմաւոն

Կամաւն Աստուծոյ Հաւր կենդանւոյ եւ կարողի յամենայնի եւ միածնի Որդւոյ կենարարի մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ կենդանարար եւ երկրպագելի Հոգւոյն Սրբոյ։

Եւ պարոն Լեւոն Բազուենեանց, ծառայ Աստուծոյ, ցանկացաւղ եղէ այժմ լուսալեղձ եւ կենսագիր կտակիս, զոր յոյժ բաղձանաւք եւ յոգնաշատ մեծաւ աշխատութեամբ ստացայ զսա ի լուսաւորութիւն եւ ի բերկրումն մանկանց եկեղեցւոյ եւ յիշատակ ինձ, եւ ծնաւղաց իմոց, պարոն Բազունէ եւ Լեւվնի, [եւ] ամուսնոյ տիկին Սալլի, եւ ամենայն բնաւ զարմից իմոց՝ կենդանեաց եւ ննջեցելոց, զի վասն այսր պատճառի ես պարոն Լեւոն Բազուենեանց ստացայ զսա ինձ գանձ հոգեւոր անկողոպտելի, ի վայելումն ինձ եւ որդեկաց իմոց։ Արդ, ես վերշին ստացաւղ

սուրբ Աւետարանիս ցանկացաւղ եղեալ սուրբ պատուիրանաց կենարարին Տեառն մերոյ Յիսուսի, մանաւանդ յորդահոս եւ ականակիտ եւ անուշահոտ եւ քաղցրաճաշակ քառակուսեան դետոց յորդախաղաց վտակաց բղխելոց ի յանքննին Ադենայ։ Զոր Հոգին Սուրբ սատար ի բարձանց թելադրեալ խաւսեցաւ չորիւք աւետարանչաւքն՝ Մատթէոսիւ, Մարկոսիւ, Ղուկասիւ եւ Յովհանիւ, արբուցանելով ղչորեսին անկիմանատիեզերս։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա տեսանելով կամ աւգտիք ի սմանէ ինչ, եւ առ հասարակ զամենեսեան ղընթերցաւղն եւ ղլսաւղդ, որք հանդիպիք այսմ տառիս մեղաց թողութիւն հայցեցէք յանցանաց իմոց։ Զի ստացայ ես պարոն Լեւոն Բազուևեանց ի վայելումն անձին իմոյ, եւ որդւոց իմոց Բազուևէ եւ Լեւոնի, եւ ամուսնոյ իմոյ տիկին Սպլի, եւ յիշատակ ինձ եւ իմոցն ամենայնի, զի ի ձեռն արժանաւորն աղաւթից ձերոց ընկալցուք մասն եւ բաժին ընդ սուրբս ամենայն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ յահեղ աւուրն աներեկի, յորժամ բանք սպառին եւ գործք թաղաւորեն։

Եւ արդ ես թափուրս յամենայն գործոց բարեաց եւ անպիտան ծառայս ճշմարիտ ծառայիցն Աստուծոյ Սիմաւոն գրիչս, յերեսս անկեալ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ լուսայեղձ եւ կենսատու սուրբ Աւետարանիս, յիշեսջիք սրտի մտաւք զվերայգրեալսդ զամենեսեան՝ զաստուածասէր իշխանն Լեւոն Բազուևեանց, եւ զդեռաբոյս որդեկան իւր զպարոն Բազուևէ եւ զպարոն Լեւոնի, եւ զբարեպաշտ ամուսինն իւր զտիկին Սպիլ, եւ զամենայն արեան մերձաւորս իւր՝ զկենդանիս եւ զհանգուցեալսն ի Քրիստոս։ Նաեւ անարժանութիւնս արժանի արարէք յիշատակի, որ զսակաւագիր յիշատակարանս գրեցի; Եւ որք զմեզ յիշեն սրտի մտաւք, յիշեսցէ Քրիստոս Աստուած զնոսա իւր առատ ողորմութեամբն, եւ ինքն աւրհնեալ եղիցի յաւիտեանս, ամէն։

654

ԱՒԵՏԱՐԱՆ

Լենինգրադ, Արևելագիտության ինստիտուտ, B—44

Գրիչ՝ Եղբայրիկ
Վայր՝ Անի քաղաք, Ներքին բերդ

ա

166ա *Փառք անսկզբնականին Հաւր և Որդոյ եւ Սրբո Հոգւոյն, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից, ամէն, որ յաջողեաց հասանել մինչեւ ի վերջին դիծն։*

Բնութեան է բաղձեալ բարւոյն, ևական՝ խնդալ ի ծագեալ լուսո, և ամենայն կենդանեաց՝ խնամ տանել կենաց։ Իսկ գագաթն բարոյն և բազմալոյս արեգակն և ճշմարիտ կեանք և կենդանութիւն Աստուած է. Զի չէ ոք բարի, բայց միայն Աստուած, ասաց Տէրն, զի ասաց. Ես եմ լոյս և կեանք աշխարհի. զի նմա ցանկա ամենայն միտք խաւսնոց, և իմանալի ակն կարաւտի և ոչ յագի տեսանելով, և ի կենաց աղբերն փափագէ ամենայն կենդանի ծարաւեալ ըստ Դաւթա. Ծարաւի անձն իմ առ քեզ, Աստուած հզաւր և կենդանի։

Ըստ այսմն փափագանաց Յակովբ *կուսակրաւն քահանայ ծարաւի արդարութեան, այսինքն Քրիստոսի՝ պատկերին Հաւր, որ ոչ միայն զինքն յաղթնելով վասն մեր որում փափագեաւք, այլ հաղորդս գործելով ընքեան՝ զթշուառ եւ զամաչեցեալ բնութեանս մեր իւր անզուգական և աստուածային փառացն մարմին եւ անդամս կազմելով սարսափելի աստուածական գլխոյն, միանգամայն ցուցանելով զանմահական կերակուրն բաղձալի, զոր փայտն կենաց պտղաբերեաց մեզ, որ է պատմութիւն փրկավետ փառացն Աստուծոյ կենսաբեր սուրբ Աւետարանին, զոր ունի յինքեանն պարածածկեալ գիրքս այս աւետեաց, որ կա ի սա ամբարեալ, և է դրախտ իմանալի, ի միջոցին կառուցեալ ունելով զծառն կենաց, քանզի ի տանէ Տեառն ըմբէ ղջուրն զայն, որ խաղաց ի կեանսն յաւիտենականս։*

Արդ, Յակովբս *այս յեռեալ ի սէր սրբութեան, ետ գրեալ զսա վասն յիշատակի հարազատ ըստ մարմնոյ եղբաւր իւրոյ* Ստեփաննոսի *քրիստոսազգեաց և կոյս քահանայի։ Երկոքինաւքս համամայրք և համահայրք, ընդիրք և հաճոյք Աստուծոյ և մարդկան, անփորձք ի ցանկու-*
166բ *թեանց աշխարհի, լի ամենայն առաքինութեամբք, բարե||համբաւեալք ի նահանգիս մեր, մանաւանդ աստուածատիպ նմանութեամբ զարդարեալ*

փոխանալն ի Քրիստոս Ստեփանոս, զնորայն ունելով զքաղաքավարութիւն հեզ, խոնարհ, սուրբ, յստակ, աննենգ, անցասումն, աստուածասէր, նոյնքան և մարդասէր, գթած, ողորմած, ցանկալի հրեշտակաց և մարդկան և իւր ազգային արեանեացն իբր ըզհայր խնամածու ի Քրիստոս, յոյս և ապավեն կենդանեաց և մեռելոց։ Նա առաւել եղբաւր իւր Յակովբա ստեղծիչ բարի և վարդապետ, որ է արժանի ամենայն աստուածական աւրհնութեան, որ և տարաժամ հնչեաց հողմն մահու և խորշակահար արար զծաղիկն ի կոկոնի և կանխաժամ նեղեալ արագահաս ձեռամբ հզաւրին մանկաղն խակակութ և ճռաքաղ արար զվայելչութիւն ողկուզաց նորա՝ զՅակովբա և զքւերն Մեերոյն, խաւար անվերանալի արարեալ և սուգ անմխիթար թողեալ իւրոց հարազատացս։

Արդ, որք պատահիքդ յիշեցէք զամենեսեան յառատաբաշղխ ողորմութիւնն Քրիստոսի զՍտեփանոս և զՅակովբ, զքոյրն ըզՄեերե, զհայրն իւրեանց զԿիրակոս, և զմայր՝ զԵելաւրե, և զտղամանուկ ըզՍարգիս, յոր հանգիցէ Քրիստոս ի հոգիս նոցա, նա և որ կենաւք են յաշխարհիս քւերսրդիք սոցա անդրանիկն Գրիգոր, որ տարաշխարհիկ գնաց, զոր աչն անեղ խնամեսցէ ուր և է, և զմիւս եղբայրն ըզՇահե, որ այժմն զամենոյ ունի խնամակալութիւն, պահեսցէ Տէր Աստուած անարատ անարատապէս յամենայն փորձանաց։

Իսկ ես նուաստ և զանարդիս, ախմարս գիտութեամբ և յոյժ ունայնացեալս ի գործառնութենէ բարեաց, առաջինս մեղաւորաց և վերջինս ի կարգս կրաննաւորաց, ընկեցիկ եղեալ ի գաւիթս Աստուծոյ, և ըստ 167ա շաւղաց նորին ոչ ընթացեալ Յակոբ, ի մայրաքաղաքէս Անոյ, հանդերձ աստուածագութ եղբարբ իմ Ստեփաննոսիւ, ի մանկութենէ վարժեալ ի սուրբ ուխտս Արջևառւծոյ, ի դրունս Սուրբ Աստուածածնին և Սուրբ Գրիգորո, քրիստոսազաւր Սուրբ Նշանիս հովանեաւ տաղաւարեալ և յայսմ տեղւոջ ընկալեալ զաւծումն քահանայութեան՝ պարգեւաւք և ոչ ըստ արժանեաց, եւ քանզի ոչ ունէի այլ ինչ փոխարէն յաստուածակոյս կողմն հատուցանել եղբաւրն իմ Սահեփաննոսի, բայց միայն զկենսունակս զայս Աւետարան, զոր աւանդեցի և ընծայեցի ի բնական տեղիս մեր, ի սուրբ ուխտս Արջևառւծս, ի յիջատակ ինձ, և եղբաւրն իմ, և վերասացեալ հաւր և մաւր, և քւեր, և ամենայն արեան մերձաւորաց իմոց, զոր վերստին յոտս անկեալ աղաչեմ զբարեմիտ եղբարքդ իմ ի Քրիստոս թողութիւն մեղաց մերոց, և ողորմութիւն խնդրել ի Քրիստոսէ յուսոյն մերմէ։

Ընդ ամենեսեան յիշեսջիք և զհոգեւոր եղբայրն մեր զՆերսէս կուսակրաւն քահանայ, որ էր մեր սննդակից և ցաւակից յամենայն իրս։ Նա առաւել աղաչեմ, որ ի տաւնի պենդակոստէին դԱւետարանս տանել ի գերեզմանն եղբաւրն իմ Սահեփաննոսի և նրանի որոմ թողութիւն ասել, և ի պատարագն յիշման արժանի առնել, և Քրիստոս Աստուած յիշողացդ և յիշելոցս ողորմեսցի, և նմա փառք յաւիտեան։

Արդ, գրեցաւ սա ի քաղաքիս Անո, ի բերդս Ներքի կոչեցեալ, ձեռամբ եղբայրիկ աբեղայի, ընդ հովանեաւ Սուրբ Յովաննիսի, յաշխարհակալութեան էլզան Ղազանին, ի թագաւորութեան Հայոց Սմբատա, ի կա-

)

Թողիկոսութեան տեառն Գրիգորի, ի վրաց թագաւորութեան Վաղրանգին, ի պարոնութեան ամիրսպասալար Շահնշահի, և եպիսկոպոսութեան տեառն Յովաննիսի, ի տէրութեան Աւջևաոնո Մագիստրոսենց տէր Յոհաննիսի և Ամիրին՝ որդո Փախրադինին:

Արդ՝ էր ի թիւս Հայոց Ջհէ (1298)։

Բ

Նկարող՝ Եսայատուր

167բ *Եւ դիս, զեղկելի նկարողս Թերևս յամարէք արժանի յիշել ի Տէր և ի Տեառնէ խնդրել Թողութիւն մեղաց, զի բազմադէմ են մեղք իմ, մի Թէ ներեսցէ Տէր, և աղաւեսցէ ի կապից մեղաց, և Քրիստոս Աստուած յիշողդ յիշէ յաւիտենից արքայութիւնն։*

Բայց Գ ժամ առնեն. մին՝ Աւետեցն, մին՝ Տիկնոջն, մին՝ Աւրհային, և Տէր կատարէ զխնդրուածս կատարողաց բանին, ամէն։

Գ

3ա *Ջեսաչատուր նկարողս յիշեայ ի Տէր, աղաչեմ։*

655

ԱՒԵՏԱՐԱՆ

Թուին 6883

Գրիչ՝ Եղբայրիկ

ա

78ա *Գրիչս այս Եղբայրիկ մե[ռե]ալս մեղաւք, յեւթն ամ եւ յուԹ ամիսըն եւԹանասուն եւ երեք փերԹ դիրք դրեց[ի] եւ բազում գրեանս կազմեցի։ Եւ ընկալայ շնորհս ի Քրիստոսէ, ոչ գանձեալ բնաւ յերկրի։ Եւ այս տասն եւ ուԹ Աւետարան, որ գրեցի անշնորհ ձեռաւքս։*

Բ

78ա *Յիշեայ զԵղբայրիկ սուտ գրիչս ի բարի, ո՛վ սուրբ եղբայր։*

Գ

117ա *ԶՅովանէս քահանա եւ զծնաւղս [իւր] և զերախտաւորսն, եւ զԲարթողովմէոս քահանայս, պահող եւ ճգնող, յաղաւԹս յիշեսջիք, ո՛վ սուրբ եղբարք։*

ե դ

118ա *ԶՅովասափ հիւան յիշեայ յարքաւութեան քոմ. Տէր իմ Քրիստոս։*

Ե

195ա զ՚Վասակ բերկրեալ պատանի, որ զծաղկագիրս ելից սուտ դեղաւք, յաղաւթս յիշեսջիք աղաչեմ, ո՛վ սուրբ եղբարք՝ Քրիստոս Աստուած բարեխաւսութեամբ սուրբ մաւր քո եւ Յովհաննու սիրելոյ քո, եւ սրբոց քոց առաքելոցդ և աւետարանչացդ գթայ ի Յովաեէս քահանայ՝ ստացող սուրայ, եւ ի տուն հաւր իւրոյ, եւ յերախտատուրսն նորայ, եւ ի յանձնեալսն եւ ի Բարթողովմէոս ճգնազգեաց քահանայ, եւ ի պատուական եղբայրն իմ Թադէոս քահանայ, եւ Յեղբայրիկ գրիչ խաբեբայ, եւ տուր նոցա զկեանսդ քո յաւիտենից, ամէն։

656

ԱՒԵՏԱՐԱՆ

Ն. Ջուղա 169, Տեր-Ավետիսյան, Յուցակ, էջ 220—221

Գրիչ՝ Եղբայրիկ

Ա

75բ Քրիստոս Աստուած բարէխաւսութեամբ սուրբ աւետարա[ն]չիդ քո Մաթէոսի, ողորմեա ստացողի սորա, եւ թող զյանցանս Գայլանձաղին և զամուանոյ նորա զՍիրեթէ, եւ գթայ մեռեալ եղբայրիկս և ի ծնաւղսն իմ, եւ ի քորան իմ, եւ տուր զքո երկնից բարիսգ այնոցիկ, որք յիշեն մեզ ի բարիւ եւ ողորմեա ննջեցելոցն, որք յանձնեցան ձեզ, եւ քեզ փառք ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյդ, այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Բ

Քրիստոս Աստուած, բարեխաւսութեամբ եւ աղաւթիւք սուրբ աւետարանչին քո Մարկոսի, ողորմութիւն արա Խաչատուր քահանայի, որ տարաժամ առ քեզ կոչեցեր, եւ որք մնացաք ի նորա մայրագութ խնամակալութենէ։ Եւ ինձ դառնացեալ եւ մեղաւք մեռեալ եղբայրկանս եւ ծնաւղաց իմոց, եւ սրբասնեալ եղբարն իմոյ Թադէոսի քահանայի, եւ սիրելի եւ բարէպաշտ քերց իմոց ողորմեա բարեգութ Քրիստոս, եւ երկնից արքայութեան արժանի արա, ամէն*։

* Բ հիշատակագրությունը քաղել ենք Մ. Տեր Մովսիսյանի համահավաք ցուցակից (Աւետարանք, էջ 112)։

657

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երուսաղեմ Պողարյան, Ցուցակ Բ, էջ 559—560

Գրիչ՝ Յովհաննէս

ա

265բ *Փառք անէին, եւ էին, աներեւոյթին եւ տեսանելոյն, անսկզբանն, եւ էից էացուցանողին միաշար, զուգակշիռ, հաւասար միութեան, ի պատիւ եւ ի փառս, ի տէրութիւն եւ ի զաւրութիւն, ի մեծութիւն եւ յանկըրսերութիւն, միաբան, կարկնաձեւ բոլորի միեղէն աստուածութեան, Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն, այժմ եւ միշտ, եւ ամենայն յաւիտեանս, ամէն։*

Ամենայն ոք որ Աստուածայնոյն բաղձան հետեւել, նոքին ի խոր անդաստանս իմաստից մտեալ հրճվին եւ տվելովն նոցա մերձակայից իւրեանց արըստաւրէ ընձեռեն զուրախարարն։ Եւ այնք որ այսմ դիպին ի յեւս գերագոյնն տենչան հասանել, եւ անդր լինելով խորին խորհրդոց լինին խորհրդազգաց, որոց փափագեն լինել տեղեակ եւ անմարմինքն, քանզի ոչ եթէ զխորհուրդ իւրոյ գիտութեան եցոյց անմարմնոցն, այլ ըստ Պաւղոսի եթէ զծածկեալն յազգաց եւ յաւիտեանց յայտնեաց մարդկան բազմապատիկ իմաստութեամբ իւրով, զի յաղթեալ ի մարդասիրութենէ իւրմէ, էառ զմերս, եւ իւրովն զմերս վերնոցն գերագոյն կացոյց։ Եւ այն որում ցանկային հրեշտակք տեսանել աղաւտ ինչ, բարեկամ ասաց իւր զմարդիկ եւ նոցա յայտնեաց եւ արբոյց ի հոգւոյ իւրմէ եւ արբեցելովքն արբոյց տիեզերաց։ Յիշեալ թէ առաջինքն ի մոռացման եղեալ անցին զպատուիրանաւն, վասն այնր զյիմարս աշխարհի, եւ նոքաւք ի գիր դրոշմեաց զամենայն պատվիրանս, հանապազաւր ընթեռնուլ եւ ի միտ առնուլ, զի մի կորիցուք։

բ

36բ *Զստացող բանիս զբազմամեղս* զՅոհաննէս *զաշխատողս գրչիւ ի խոշորագիծս յիշեսջիք ի Քրիստոս, եւ զեղբարսն իմ* զՍտեփանոսի *քահանայի եւ* զՎարդապետ, *որք յայսմ ամի փոխեցան ի Քրիստոս, եւ Տէրն ձեզ ողորմեսցի, ամէն։*

Տէր Աստուած ողորմեայ այնոցիկ, որ աւգ[ա]ական եղեն ի սմա ստուգաբանութեամբ։

գ

Զտառապեալ աշխատողիկս եւ զծնողսն եւ զեղբարսն յիշեսջիք ի Տէր։ Եւ որ զաւ[ր]ինակս ետ ողորմեսցի նմա Տէր։

դ

96բ *Յայցելութեան աւուրն յորժամ նորոգես զարարածս, նորոգեա եւ զիս զմեղաւորս եւ զծնողս եւ զեղբարսն եւ շնորհեա զթողութիւն եւ քեզ փառք։*

Ե

123բ Յիսուս Քրիստոս որդի Աստուծոյ, ի քո ի միւսանգամ գալստեանդ լից Հոգւովդ ղփափագ երիցս երանեալ քահանային Յոհաննիսի եւ ծնողաց իւրոց, վասնզի նա կարեկից եղեւ մեզ եւ տալովդ ղաւրինակ սրբոյ տառիս, եւ յոյժ երկայնմտեաց, վասն զի ես եմ հեղգ ի գիրս եւ յոյժ անարվեստ, եւ եկն ինձ տրտմութիւն սաստիկ, զի մեռաւ ինձ երկու եղբարք, եւ յարեան ի վերա իմ մարդք չարք, եւ խոցեցին զիս հոգւով եւ մարմնով. եւ յայսմ վերա եկն հիւանդութիւն եւ եղէ մերձ ի մահ, եւ էր տեղս աղմուկ եւ ես մտաւք պռոնիկ եւ վայրաշուրջ, եւ խելաւք անկար եւ յետին եւ յոյժ փառասէր եւ հպարտ, եւ յայսմ սղալեցի ի տառս գրով եւ բանիւ զոր տեսանէք։

Եւ արդ, աղաչեմ, որք հանդիպիք սմա թողութիւն շնորհեցէք յանդըգնութեան իմոյ, զի յաղագս կարեց ձեռնամուխ եղէ ի գիրս սուրբս։ Աղաչեմ զձեզ եղբարք յիշեսջիք զեղբայրն իմ զՍտեփաննոս քահանայն եւ զմիւսն զՎարդապետ, որք ի տիս մանգութեան հանգեան, եւ զծնողսն իմ, եւ Տէր ձեզ ողորմեսցի։

Յիշեսջիք եւ զծաղկեալն հոգւով և հերով զյառաջասացեալ քահանայն զՅոհաննէս, որ ետ զաւրինակն, զի լաւ էր եւ անպատճառս յոյժ, եւ Տէր ձեզ ողորմեսցի։

Գ

168ա Տէր Աստուած տացէ ողորմութիւն եւ թողութիւն մեղաց, եւ հանգիստ յարք[այ]ութիւն արդարոց, որ ետ մեզ ղաւրինակ Գործոց Առաքելոց, ղ՞ր եթէ լաւ էր եթէ խոտան, կատարեաց զհայցուածս մեր, երանելի քահանայն ՍՈՐՈԹ*:

658

ՏԱԻՆԱՊԱՏՃԱՌ

Երևան 5561

Գրիչ՝ Գրիգորէս
Վայր՝ Բջնի

ա

175բ Միջակ էր, եղբա՛յր, վասն այն մանր գրեցի** և յոյժ աշխատեցա, զի աչքս խոց էր անբժշկելի վասն իմ մեղացն։ Զհոգոյս կուրութիւնս յայտնեաց Աստուած ի մարմնոյս տեսութիւնս, զի եղեաց նշանակ ամենեցուն։

Զգերապայծայռ վարդապետն Գրիգոր մականուն Բջնեցի*** կոչեցեալ գեղապաճոյճ և բազմահռչակ, որ զաւրինակս շնորհեաց՝ յաղաւթս մաղթեմ յիշել։

---

* Աջից-ձախ կարդացվում է «Թորոս»։
** Տեղի նեղության պատճառով գրիչը մանր շղագրով է գրել, որ մոտ է նաև նոտրգրին։
*** Դնում ենք Բջնեցու մահվան թվականի տակ, որպես վերջին հնարավոր ժամկետ։

Բ

18բ Զստացողս Գրիգորէս յիշել ի բարի մաղթեմ ամենայն հարազատաւք։

Գ

21ա Զամենայնամեղս Գրիգորէս յիշել հայցեմ։

Դ

154ա Զմեղուցեալ գրիչս Գրիգորէս աղաչեմ յիշել, որպէս զայր աղքատ և յամենայն բարեաց թափուր։

Ե

9ա Զատառապեալ Գրիգորէս յիշ[եսջիք]։

Զ

385ա Գրիգորէս մեղապարտս աղաչեմ յիշել ոչ վայրապար։

659

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԷԻՑ ԹՂԹՈՑ

Երևան 1409

Գրիչ՝ Մկրտիչ
Վայր՝ Թեղենիք

ա

Յիշատակարան
329բ Ի Հայկազեանս տոմարի
Յեաւթն հարիւր մերոյս թուի,
Քառասներորդ եաւթներորդի (1298),
Որ և ամաւք շրջագայի
Զմեր Հայկազեան տունս հայրենի,
Որ բռ[ն]ացեալ զսայ ունի
Է բարբարոս և այլազգի,
Որոյ անուն Ղազան կոչի։
Յարքայութեանն Հեթըմոյ,
Որդի Լևոն բարէպաշտի,
Բարեբարոյ և հեզհոգի,
Որ և տիրէ Կիլիկոյի:
Զլուսաւորչին իմ Գրիգորի
Ի գրոյ մեղաց վերածողի,
Զաղտըս մեղաց իմ լուացողի,
Զաթոռն ունի տէր Գրիգորի:
Մկրտիչ անուն և եղկելի,
Սուտ քահանա տարտամ ոգի,
Ժահահոտեալ մեղաւք իլի,

330ա Զոր կամաւորն գործեցի՝
Ի նահանկէ Այրարատի,
Լուսաւորչին մերոյ տեղի,
ՅԱրարատէ Գոշակելի,
Որ յորջորջի նա Թեղենի;
Է ի ստորոտն Արագածի,
Լերին մեծի և անուանի,
Մերձ ի դղեակն է ի Բջնի
Առ սահմանաւքն Կոտայի,
Որոյ եկեալ յայս գաւառի,
Որոյ անուն Վայձոր կոչի,
Հուպ ի շիրիմն Սիւնեցի,
Ի յԱղբեց վանս* մենաստանի,
Յերկրորդ Աթենս պանծալի,
Առ ոտս հաւր մեր Եսայի,
Եւ րաբունեաց վարժապետի,
Հասեալ ի ծայրս իմաստ բանի,
Բարձեալ զխաչն Քրիստոսի,
Եւ հետևեալ նորին շաւղի,
Ի գիշերի և տուընջենի,
Աստուածային բանիւ բերկրի.
Ըստ տէրոմնեանն հրամանի,
Քննէ ըղգիրս մատենի,
Զի առանց այսմ հանճարի,
Կեանս անհնարին ոք ընդունի;
Սկիզբն արարի այսմ տառի,
Կաթողիկեայցս Մեկնչի,
Եւ Յովհաննու Յայտնութենի,
Ու էր ընդ եղբարցս նորին բանի,
Եւ Բարձրացուցէ ճառիս խաչի,
Եւ գեղեցիկ ներբողինի,
Որ ասացած է սա Դաւթի,
Անյաղթելի փիլիսոփայի,
Որ է պարծանք մերոյս սեռի,
Զորս դրոշմել ի քարտիսի,
Մանկանց որդոց նոր Սիոնի,
Որ յուսոմն փափագի;
Աստուածային իմաստ բանի,
Զի յիշատակ անջնջելի,
Ինձ և ծ[նո]ղաց իմ եղբցի;

Նա և <և> սուրբ րաբունապետն իմ Գրիգոր մակյորջորջեալ Բջնեցի, զսնուցիչն իմ և զերախտաւոր, որ էր այր բարեսէր և կատա-

* Ձեռագրում «վասն»

րեալ յիմաստս առաքինութեան, ի տեսականն և ի գործականն, բայց առաւելեալ բանականաւն, որպէս թէ սեռ իսկ ասել գնա բանի, և կամ միտ, վասն որոյ պատուեալ յաստուածուստ և ի մարդկանէ, ի մեծամեծաց և ի փոքունց։ Եւ էր տարփալ աստուածային և հոգևոր գանձուն, որ և ըստ մար[գ]արէին ձայնի, ելս եդ ի մտի, ի հովտէս տրտմութեան
330ր և ի տաժանալից կենցաղոյս, որ և յայսմ ամի փոխ[ի]||առ անձկալին [ի]ւր Քրիստոս, զորս նոյն ինքն բանն Աստուած երկնաին խորանացն արժանի արասցէ, և ընդ սուրբս և ընդ սիրելիս անուանն իւրոյ դասեսցէ պայծառ և զուարթ երեսաւք, և ի դասս սրբոց վարդապետացն ընկալցի, հանդերձ ծնողաւք և հարազատաւք իւրովք, և ամենայն արեան մերձաւորաւք, ամէն և եղիցի։

Այլ և զքեռորդի սորին զտէր Յովհաննէս զարհեպիսկոպոսն Բրջնոյ և զվերատեսուչն Այրարատեան նահանկին, դնեալն սրբութեամբ և զվարժեալն ամենայն առաքինութեամբ, որ է այր հեզ և երկայնամիտ, և զուարթ դիմաւք, որպէս վկայի վասն բառնաբայ, զորս պահեսցէ Քրիստոս Աստուած անսասան և խաղաղական կենաւք, անարատ և անբասիր ի կենցաղոյս պատահմանց մինչ ի խորին ծերութիւնն, ամէն, և յետ յաստեացս վճարման սրբոց հայրապետացն և ընդ ելոցն մասնակից և դասակից արասցէ, եղիցի, եղիցի, որ է արեան մերձաւոր իմ, և խնամածու ըստ հոգոյ և մարմնոյ։

Նաև զեղկելի ծրողս Մկրտիչ սուտանուն աբեղա և սպասաւոր բանի, մեղսամակարդ և ժահահոտեալ մեղաւք, և զհարազատ եղբայրն իմ Յովհաննէս քահանա, և խաչակրաւն և սրբասէր անձն, հանդերձ եղբարբք և ծնողաւք, և ամենայն երախտաւորաւք յիշել ի Տէր։

Արդ, երեսս անկեալ արտասուաթոր դիմաւք աղաչեմ զմերձակայսդ Յիսուսի, զպատահելդ այսմ աստուածաշունչ մատենի, եթէ ընթեռնելով և եթէ յաւրինակելով, զվերագրեալքս ի սմա յիշել ի մեղաց թողութիւն առաջին Տեառն բարի մտաւք, և սխալին և խոշորութէն մի լիցի մեղադրութիւն, այլ սղալն սիրով ուղղեսցի, զի և ձերոյն պատառեսցի կտակ պարտեացն յառատ Տեառնէն, յաւուրն աներեկի։

Բ

Վայր՝ Գլաձոր

261բ Ընդ նմին և զեղկելիս
Վերագծող այսմ տառիս
Ի մենաստանիս Գլաձորիս,
Ընդ հովանեաւ Սուրբ Ստեփանոսիս,
Ջեռամբ անարժանիս Մկրտչիս,
Եւ դերանուն կրաւնաւորիս,
Որ սպասաւոր եմ լեալ բանիս,
Միայն անւամբ ու ոչ ըստ գործիս,
Ընդ խնամաւք վարժապետիս,
Կայծակնամաքուր մեծ հռետորիս,
Անուանակիր մարգարէիս,

Որ յորշորշի իսկ եսպիս:
Յիշել հայցեմ միշտ զեղկելիս,
Եւ զծնաւղսն իմ ի բարիս,
Եւ զրաբունին իմ զ[ը]ղձալի[ս]
Որո անուն Ջուարթուն* կոչիս:
Եւ զպատանիս իմ զՍարդիս,
Որ ընդ իս և սա իսկ պանդխտիս,
Ընդ նմին և զ[ը]ղձալիքս,
262ա Սիրով կա||պեալ առ իմ ոգիս;
Որք են եղբարք ոչ ըստ մարմնիս,
Այլ հոգևորս և ցանկալիս,
Խնամակալուք ստահակիս
Սրտիւ սիրաւղք զիս զանբարիս,
Զի և յիշաւղդ և յիշեցիս,
Ի Քրիստոսէ զանճառ բարիս
Ընկալցուք յաւուրն աներեկի, ամէն և եղիցի**:

660

ԳԻՐՔ ՊԻՏՈՅԻՑ

Երևան 6273, Փիրղալեմյան, Նշխարք, էջ 61բ

Գրիչ՝ Յոհաննէս
Վայր՝ Գլաձոր

Ի թուականիս ՉԽԷ (1298), գրեցաւ սա ի գաւառիս կոչեցեալ Վայոց ձոր, ի վանս Գլաձոր, ընդ հովանեաւ Սուրբ Նախավկային, ի վարժապետութեան Եսայեայ, առն հեզոյ և խաղաղարարի, ձեռամբ յոգնամեղ ծառայիս Յոհաննիսի աշակերտի բանի:

661

ՈՂԲ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼԵԱՆԻ***

Երևան 2079 (1622 թ.)
Ստեփանոս Օրբելեան «Ողբք և հառաչանք...», Կալկաթա, 1846 թ.

176ա Շարժեալ չափուրեամբն բերմամբ Հոմերական առուեստիւ, ի Սեբաստոսէ Սիւնեաց այցելու է, ի խնդրոյ շնորհազարդ վարդապետին Խաչատրոյ Կեչառեցի, ի թվին ՉԽԸ (1298). Տուեմ Մխ (240).

Հեղինակ՝ Ստեփանոս Օրբելյան

---

* Այսինքն՝ «Գրիգոր»:

** Գրված է Յոհաննու Ցայտնութեան Քարոզմանութեան հիշատակարանից հետո:

*** «Ողբի» իսկական վերնագիրն է. «Բան բարառնական ոգէէղ դիմառնաբար ի դիմաց Վաղարշապատու Սուրբ կաթուղիկէին ողբ աւաղականք լցեալք անհուն հեծեծանօք վասն

180ա Յիշատակ բանիս ըստ անուան ոգողին.

Սիւնեդ լուտոյ ի սրկզբանէ
Խորան փառաց կանգնեալ յերկրէ,
180բ Տուն Աստուծոյ կաթուղիկէ
Լուսապսակ հարսն ի յերկնէ
Ահա քեզ ողբ դու հառաչէ
Ըստ արժանոյն ոչպէս պարտ է
Քոյին ծնրնդոքս որ հուսաղեալ է
Նկեղեցօքս, որ հնացեալ է։

Տողեալ տաղիւ չափ յանկական
Ըստ արհեստին Հոմերական,
Սաեփանոսի քշուառական
Ոգւով մեռեալ և անպիտան,
Համակ կենօք որպէս զանբան
Հեղձեալ ի փուշս աշխարհական,
Շնորհաց լքեալ յարփիական
Գործով լցեալ եղերական։

Երկնաքատակ տատրն Սիւնի
Որ անմարմնոցն է սխրալի,
Բոլոր բնաւիցս բաղձալի,
Որպէս զդրախտն Աղենայի։
Կացեալ պարէր բարձր ի դիտի
Գահագլուխ յայտմ աշխարհի,
Նստեալ աթոռ մետրապօլտի
Պռոտօֆրօնգէս Հայոց կոչի։

Փութով մեծաւ ը[ղ]մեզ* հարկեալ
Ի յայս հանդէս բանից մըղեալ,
Բարունապետս հոգւով լցեալ
Անյաղթ հռետորի** շնորհօք ծաղկեալ.
Եւ բանիբուն մեզ ճանաչեալ
Յաղգաց բազմաց գովաբանեալ,
Որ խաչատուր է յորջորջեալ
ՅԱբարատյան տանէն եկեալ։

Արդ, պաղատիմ, ով սուրբ խորան
Նկեղեցօքդ Հայաստան,
Ընկալ զիմ բանքս ողբերգական

աւերման աշխարհիս Հայոց և բնաւին սրսպառելոց Հայրապետութեան և թագաւորութեան հաստատունդ իշխանութեանն։

* Ձեռագրում՝ «ըմեզ»։

** Ձեռագրում՝ «հռետոռ», ուղղում ենք ըստ տպագրի էջ 30։

Որպէս խայրիք նըւիրական՝
Զոր հիւսեցի դիմառնական
Ի դէմըս քո խորհրդական,
Թէպէտ ես գարշ եմ աննըման
Բանքդ ի շնորհաց Հոգւոյն* ծնան։

Նըման այրոյն խերևեշին
Լոմայք բանիս քեղ** ընծային
Կամ չքաւորացն առ խորանին
Որք մազ միայն նմա մատուցին,
Մի անարգել ըստ տեսողին,
Խոզ համարել պատարագին,
Այլ զիմս ընկալ որպէս նոցին,
Յընդոծնարան քոմ խորհրդին։

Ողբովք առ Տէրըն պաղատէ
Վասն աշխարհիս այս մեր հայցէ,
Նուաղեալ ազգիս, որ սպառել է
Նորոգութիւն փութով խնդրէ։
Խաղաղութիւն խորին շնորհէ
Անշարժ, յաւէտ որ չսասանէ,
Ընդ որ և հիքոյս, որ գերեալ է
Մաղթեա չթողուլ ի ձեռանէ։

Սահման սիրոյն արարչական,
Խոր և անհուն անդրնգանման***
Տացէ փրկանս ազգի մարդկան
Ես և ազինս այս Հայկական
181ա Նայ և եղբօր մեր սրբազան
Խնդրող բանքս ներչափական
Ընդ որս և ինձ բաշխէ փշրանս
Ի սեղանայ իւր որպէս շան։
Եւ նմա փառք միշտ յաւիտեան
Այժմ և յաւէտ և անվախճան****։

---

* Ձեռագրում՝ «գոյն»։
** Ձեռագրում չիք «քեզ»։
*** Ձեռագրում «անդրնդամանն»։
**** Տների սկզբնատառերը հոդում են «Մտեփանոս»։

662

ԱԻԵՏԱՐԱՆ

Սրվանձտյան, Թորոս Աղբար, Ր, էջ 298 (1289 թ.)

Գրիչ՝ Վարդան

Ի թվականութեանս Հայկազեան տումարիս Ջհէ (1298), ես նուաստ ծառայս աստուծոյ Հաղիա ստացայ զսուրբ Աւետարանս յիմ հալալ ընչից եւ եղի ոխւ ի Սուրբ Կիրակոս, որ կենայ ի վանքն ինձ յիշատակ եւ ծնողաց իմոց՝ հաւր իմոյ Հայրապետին, եւ մաւրն իմոյ Թամազիզին...

Ես՝ առաջնորդ սուրբ ուխտիս Սաեփանեոս կրաւնաւորս սահմանեցի, որ ամէն տարի համբարձման աւրն պատարագ մի Հաղիային լինի անպատճառ, ու գիրքս ոխվ կենայ ի վանքս. եւ մի [ոք] իշխեսցէ զսա ծախել, գրաւ գնել կամ աւժտել, այլ կացցէ սա ի սուրբ ուխտս յիշատակ աստուածասէր տիկնոջն Հաղիային եւ ծնողաց իւրոց...

Աղաչեմ... յիշել զգծողս Վարդան, որ յետին յիշատակն գրեցի։

663

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 2630 (1290 թ.)

Ոսկերիչ՝ Կոստանդին

283ա *Փառք ամենասուրբ Երրորդութեանն յաւիտեանս, ամէն։*

Ի թուականիս Ջհէ (1298)։ Աստուածային ամենառատ բարերարութեան զլոյս գիտութեան հանապազ ծագէ ի սիրտս հաւատացելոց՝ զհուր սիրոյ իւրոյ բորբոքեալ ի հոգիս; Արդ, աղաչեմ զամենեսեան, ո՛վ պատուական դասք լոյսերամից, յիշեսջիք ի մեղսաքաւիչ, երկնաթռիչ յաղաւթս ձեր, զԿոստանդին, և զամուսին իւր, զԿալի, որ ի նմին ամի փո-

283բ *խեցաւ ի Քրիստոս, զի բազում աշխատութեամբ‖աշխատեցաւ և կոստղեց զԱւետարանս զայս։ Արդ, որք ընթեռնուք, յիշեսջիք յաղաւթս ձեր զԿոստանդին ոսկերիչ և զծնողս իւր, և որ յիշեքդ յիշեալ եղիշիք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, յորում փառք յաւիթեանս, ամէն։*

664

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ ԵՒ ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ

Երևան 6473

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Հայոց թառ

193բ *Գ[ր]եցաւ Աղ[ա]թամատոյցս այս ձեռամբ [Գ]րիգորոյ, ի թվին Ջհէ (1298), [ի] մեծ մենաստանիս Հայոց Թառ, ընդ հովանեա[ւ սուր]բ [Ա]մենափրկիչիս, [ի] խնդրոյ սրբասնուն[ղ] կո[ս]ակրաւն քահա-*

նայի [Ս]արգիս անուն, [ի մե]ծահո[չակ] սուրբ ուխտէն Այրիվանո[ւ], որ ստացաւ զսա յ[իշա]տակ իւրն և աշակեր[տաց ի]ւրոյ Վարդին և Գորգա /// և [այլ] ազգայնոցն և ծնաւղ[աց] իւրոց ///

Արդ, աղաչեմ [զամ]ենեսեան սիրով հոգոյ [յիշես]շիք ի Քրիստոս յառաջաս[ացեալս] Սարգիս և զՎա[րդ] /// այլ ազգայինս, և զԳրիդոր գրիչ և /// սնուցելոյ /// զի իմ բազում /// առ փրկիչն ամենեցուն Քրիստոս, զի աղաւթիւք ձերովք ողորմեսցի աստ դրելոցս, և ձեզ, որ յիշէքդ և նմա փառք յաւիտեանս։

Զհոգևոր եղբայր մեր զՄխիթար նորընծա քահանայ յիշեսջ[իք] յաղաւթից մասամբ, աղաչեմ*։

665

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6333, Բարղամյան, 3ուցակ, էջ 60ա—60բ,

Գրիչ՝ Վարդան
Վայր՝ Բերդաձոր

Արդ, այսմ աստուածախաւս տառիս և աստուածաշունչ կտակիս ցանկացող եղև աստուածասէր և հոգեսէրն տանուտէր Կիրակոս, ի յարդար արդեանց իւրոց ետ գծել զսա և եդ ի դուռն Բերդաձորոյ Սուրբ Աստուածածնի, յիշատակ յաւիտենական հոգոյ իւրոյ, և ծնողաց իւրոց Մուշեղայ և Մանուշակի, և կողակիցն իւրոյ Քնճուշին, և դեռաբոյս որդոյ իւրեանց Սահակայ և Սերոբի,... և ամենայն զարմից իւրեանց՝ կենդանեաց և առ Աստուած փոխեցելոց; Վասն որոյ այսուհետև ոչ մի ազգ[ական], և ոչ ոք աւտար չունին իրաւունս հանելոյ, կամ վաճառելոյ, և կամ գրաւ գանելոյ զսուրբ Աւետարանս ի դրանէ Բերդաձորոյ Սուրբ Աստուածածնիս մինչև յաւիտեան։ Եւ որք զհակառակն առնեն՝ ընդ բանիւ լինիցին, զի աստուածային և մարդկային օրինաց հակառակ գործեն։

Արդ, ես փցունս և ապիկարս և անարգս ի բանասիրաց Վարդան սուտանուն աբեղայս, տեսեալ զսէր և զփափագ պարոն Կիրակոսին, յանձն առի և յանգ հանեալ աւարտեցի սուրբ Աւետարանս ի թուաբերութեանս Հայոց ՉԽԷ (1298) ամին, յաշխարհակալութեան Ղազան խանին և ի մերոյ թագաւորութեանն աստուածասէր և բարեպաշտ Հեթմոյ արքայի, ի յիշատակ բարեմիտ պարոնին Կիրակոսի և ծնողաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորաց։ Վասն որոյ երես անկեալ աղաչեմ զհանդիպողսդ աստուածային տառիս յիշել և զիս՝ զանյիշելիս ի բարեաց, և ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասել մեղսաշաղաղս հոգոյ իմոյ և ծնողաց իմոց, զի թերևս սուրբ աղաւթից ձերոց միշնորդութեամբ ողորմեսցի Աստուած նախ ձեզ և ամենայն հաւատացելոց, ապա ինձ՝ չարագործիս ամէն։

* Նախ քայքայված է։

666

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Քոսյան, «Հայք ի Զմիւռնիա», Բ, էջ 82—83

Գրիչ՝ Յուսէվ
Վայր՝ Ասպիսնկա վանք

Ամենագութ և մարդասէր Տէր, քեզ փառք յամենայն արարածոց յերկնաւորաց և յերկրաւորացս, և յիմոյ առատագունէս յաւիտեանս յաւիտեանից, ամէն։

Չխէ (1298) թուականիս Հայոց գրեցաւ գիրքս, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Յարութեանս, ի գաւառիս Արնիշոյ, յանուանեալ ուխտիս Ասպիսնկա վանք, յառաջնորդութեան տեղւոյս տէր Աբրահամու, հրամանաւ հաւրեղբաւր իմոյ Սարկաւագ կոչեցեալ անուն կրանաւորի։

Ես Յուսէվս գրեցի թերի հասակաւ, վասն պիտոյից, մեծաւ աշխատութեամբ և ջանիւ տկար... յարուեստ եւ ի վարժութենէ, այլ շնորհաւքն Աստուծոյ, որ զաւրացոյցն զիս եւ աշխատութեամբ հաւրեղբաւր իմոյ, որ ի նիւթս սորա աշխատէր։

Արդ, ազաչէմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ, յիշեսջիք յաղաւթս ձեր զաշխատաւորք սորա եւ զհայրն իմ՝ զտարաժամ հանգուցեալն, եւ զայնոսիկ, որք զաւրինակն շնորհեցին, և որք կամակից եղեն մեզ եւ խրատ[ատ]ու։ Եւ Քրիստոս Աստուած, որ առատ է ի տուրս եւ կամք իւր յաւժար ի խնդրելն, յիշողացդ եւ յիշեցելոցս ողորմութիւն շնորհեսցէ, եւ նմա փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

667

ԸՆԴԴԷՄ ԵՐԵՒՈՒԹԱԿԱՆԱՅ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ

Վիեննա 303, (ԺԱ դ.) Տաշեան, Ցուցակ, էջ 730

Գրիչ՝ Գորգ [Սկեւռացի]
Վայր՝ Արմենի լեռ Յովանիսի աճապատ

Ես տրուպս Գորգ, որ ի թիկունս լերինս Արմէնի նստիմ յանապատս Յովանիսի, պատահեցայ աւրինակի գրոցս Յովաննու Աւծնեցւոյն յարկեղս մեծ վանացն Սկեւռայի, եւ խոշոր գրով փոխեցի զսա, եւ ի վերջս աւրինակին կայր գրեալ, թէ Տեառն Գրիգորիսի է գիրքս Հայոց քահանայապետի, եւ այլ ի խոնարհ՝ իւրովք ձեռաւքն գրեալ փոքր յիշատակարանդ, զոր տեսանես, եւ տողուկէս քերած էր, եւ յայտ է թէ բանադրանքն է քերածն, թէ որ այլապէս գաւանէ՝ նզովեալ է։ Արդ, փոխեցի զսա ի յաւգտութիւն պիտանացուած իրաց պէսպէս աւանգից՝ ի զգուշութիւն ինձ, եւ համաշունչ հարկակցի եղբաւր Խուչատրոյ վարդապետի, եւ Աստուածատրոյ, եւ զկնի մեր՝ որոց Տէր յաջողեսցէ։

Գրեցաւ Չխէ (1298) թուիս, ի փառս Աստուծոյ ամէն։

668

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՍՈՒ ԻԳՆԱՏԻՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Երևան 6273, Փիրղալեմյան, նշխարք, էջ 61բ—62ա

Վայր՝ Սիւնիք

Յամի տերութեան աշխարհակալ խանին Ղազանին, որ տիրէր ի ծովէն Պոնդոսի մինչև յԱրևելս՝ ի դետն մեծ Ջաճուն և ըստ ազգաց Ամոյն կոչեցեալ, որ էր թուական Հայոց Չխէ (1298), ի թագաւորութեան Վրաց Դաւթի և Հայոց Հեթմոյ բարեպաշտի և ճգնազգեաց կրօնաւորի, և յիշխանութեան տանս Սիսակայ մեծ պարոն Էլիկումին, որդւոյ Տարսայիճի, և քաշ և օրհղ իշխանացն որդւոցն Պոօշայ՝ Պապաֆին ///։

669

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Սրվանձտյան, Թորոս Աղբար, Բ., էջ 334—335

Գրիչ՝ Յոճաննէս

Փառք...։ Եւ արդ աւարտեցաւ Աւետարանս... ի թուաբերութեանս Յոբելեան տումարիս Չխէ (1298), ի փառս եւ ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյն Գէորգա զաւրավարիս...

Աղաչեմ յիշել զիս՝ զանպիտան եւ զսուտանուն քահանայս Յոճաննէս, որ գծագրեցի ձեռամբ իմով զտառս աստուածային ի յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց Ասեսեաց եւ Թամարի, եւ ննջեցելոց իմոց Մարեմառոյ եւ Մայրտիկնայ, Ասոմի եւ Թումայի, եւ այլ ննջեցելոց... եւ որք զթուղթն շնորհեցին՝ զՓnfr տիկին, որ բազում փափագեցաւ Աւետարանիս տեսչութեան եւ զթուղթն շնորհեց, եւ յիշատակ ստացաւ իւր եւ ծնողաց իւրոց, եւ զՊատրոս կրաննաւոր, եւ զայլ միաբան աշխատաւորքս՝ զՎաճրամ ժամակոչ եւ զծնողսն իւր...

Յիշման արժանի արարէք ի դուռն տաճարիս այս զքահանայքս սորա, եւ միաբան եղբարքս, եւ զվարդապետն իւր զԽաչիկ քահանայ, եւ զծնողսն իւր, եւ զտարաժամ ննջեցեալ գործակ իւր Ջաfարիա, եւ զայլ քահանայքս, որք աշխատեցան եւ հասուցին զմեզ մինչեւ ցայս վայր...։

670

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 6273, Փիրղալեմյան, նշխարք, էջ 61բ

Գրիչ՝ Յոճաննէս

Փառք եզակի... բայց գրեցաւ լուսազարդեալ Աւետարանս ի մերս թիւ Չխէ (1298), ձեռամբ Յոճաննէս անարժան քահանայի, ի խնդրոյ Տիրատուր քահանայի, եւ խոշորութեան և սխալանաց մի մեղադրէք, քան—

զի էր ժամանակ չար և դառն, և տիրեալ էին աշխարհիս ազգն Նետողաց և ազգի-ազգի խառնիճաղանճ Պարսից, Թուրքաց, Իսմայելականաց, եւ եղաք հալածեալք և ատեցեալք յամենեցունց։ Եւ ոչ գոյր յոյս կամ տեղի ապաստանի քրիստոնէից, բայց միայն յոյսն Քրիստոսէ, նա արասցէ իրաւունս ղրկելոց, և դարձուսցէ զգերութիւն և զտառապանս ազգիս մերոյ, և արասցէ այց իւրում ժողովրդեան, և փրկեսցէ ի վտանգից հոգոյ և մարմնոյ։

671

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԻՆ ԳԷՈՐԳԵԱ ՍԿԵՒՐԱՑՒՈՑ

Երևան 4214

Ստացող՝ Վարդան
Վայր՝ Սկևռա և Սիս

ա

223ա ։ Ի թուականութեանս Հայկազնեան տումարիս ՉՃԽԷ (1298), ի հայրապետութեան տեառն Գրիգորի և թագաւորութեան Հայոց Սմբատայ, որ ճշմարտիւ թագաւորեաց ի վերայ մարմաջեցուցանաւղ և գունակ-գունակ հեշտակարծ ախտից առաքուր կոխելով, և գրեթէ զամենայն աշխարհական փառս նանիր և ունայն վարկանելով, որպէս և է։ Նա և զանուն թագաւորութեանն ծանր գրէր և նուիրէր զանձն Աստուծոյ, և յոլով անգամ հրա[մ]ժարէր ի հայրենական աթոռոյն՝ գնայր յաղքատանալ, ղոր հազիւ-հազիւ մեծաջան տենչիւ ոչ կարէին [յեղ]աշրջել զկամսն նորա և զայ[ս դի]պուածս Աստուծոյ ի յանձն առն[եմ]ք։

Իսկ մինչ յայս էր, սիրէր զՔրիստոս և զեկեղեցի նորա և զընթերցումն սուրբ գրոց։ Սա տեսեալ զմեկնութիւն համարձակախաւս աստուածատէս մարգարէին Եսայեայ, եւ զի մեծն Եփրեմ կարճ և համառաւտ քաջոլորակի բանիւք էր անցեալ ընդ նա, իսկ աստուածաշնորհն Յոհաւն, Ոսկիբերան յորջորջեալ, վասն հոգեշահ վարժապետութեան և առատահոս իմաստից՝ որ ի բերանոյ նորա բղխեալ արբուցանէր զականջս եկեղեցւոյ, և սա ճոխաբար խաւսեցեալ, եւ քաջ ախոյանն ուղղափառ հաւատոյս սրբանչելին Կիւրեղի, սակաւն և նա խաւսեցեալ։

Արդ, բարգաւաճս այս վսեմս Հեթում ի մտի եդեալ զոսոսս ի մի ժողովել՝ զաւակ ի Սիոն զսա իւր, և բարի նախնեացն գանձելուն, խնդրեաց զայս առնել հարկեցուցիչ հրամանաւ ի երրերջանիկ և ի լուսաբան րաբունապետէս Գէորգեայ, որ ընդ այսու ժամանակ առաքինութեամբ յանձին ներգործութեամբ բնաւին փարթամացեալ, որ այժմս քրտնաջան երկեամբք հրահանգէ զհամբակսս, որ բանի են հետևեալ զյոլովս։ Իսկ սա, որպէս քարոզ ճշմարիտ հնազանդեալ հարկեցուցանաւղ հրամանին։ Եւ զի էր Սարգիս վարդապետի հոգացեալ, առեալ և զայն և զայլ բանսն

---

* Ձեռագիրն ընդօրինակված է երեմիա գրչի՝ Գեորգ Սկևռացու ինքնագրից կատարված արտագրությունից (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 4825)։ Դրիգորը ընդօրինակել է նաև երեմիայի հիշատակարանը (անհրաժեշտ փոփոխություններով) և բանաստեղծությունը (տե՛ս աստ, նույն թվաշարքում)։

սրբոց Մեկրնչացն. համառաւտ զուգեաց առ իրեարս կարճաբանութեամբ եղեալ և զմտացն ամբողջ ունելով զղաւրութիւն, և դրեալ ձեռամբ իւրով՝ ետ նմա։

223բ Արդ, ես զայս տեսեալ, զվերջինս ի բնաւիցս փցնամխիտ աշակերտս սորին Դէորդեայ՝||անարժան քահանայ Վարդան, բազում աշխատութեամբ և տառապանաւք ետու ի յանկ հանել զայս, զի սկիզբն սորա եղև ի Սկևռայն, և աւարտումն սորա եղև ի Սիս: Երկիցս անգամ խնդրեցի զարարեալ աւրինակն ի Յերեմիա վարդապետէն, և նա անտրտունջ ետ, զոր Քրիստոս տացէ և իւր զառատ բարիքն, զոր խոստացեալ է սիրելեացդ իւրոց, և դրաւղի սորա։

Եւ ես, վասն սիրոյ նորին, ետու գրել զսա Գրիգոր քահանայի լաւ արհեստի գրչի, ի յիշատակ բարի մեղուցեալ հոգւոյս իմոյ Վարդ[ա]նա, և ծնողին իմոյ Մինաս էրեցու, որ բազում աշխատեալ է զհետ մեր, և մաւրն իմոյ Մեծամիկնայ, փոխելոյն առ Քրիստոս, և եղբարցն իմոց, և ազգականացն և ամենայն, որ ինձ աւգտակար են լեալ։

Արդ, երեսս անվհեալ արտասուալից մաղթանաւք և մեծաւ յուսով, աղաչեմք զամենեսեան, որք հանդիպիք այսմ գրոց, թողութիւն մեղաց և հանգիստ հոգւոցս մերոց խնգրեցէք գրաւղիս Գրիգոր քահանայի [և ծնող]աց իմոց, և ձերոցդ, որ յիշէք։ Եւ առաւել և զգրոցս տէրն [Վա]րդան վարդապետն, որ է [եպ]իսկոպոս, և զծնաւղ[ս իւ]ր, հանգիստ և ողորմութիւն խնդրեցէք ի գթ[ա]ծէն Աստուծոյ ի Հաւրէ, և յողորմածէն Աստուծոյ ի յՈրդւոյ, և ի բարեխնամ Սուրբ Հոգւոյն, բարեխաւս ունելով զկայծակնամաքուր և զաստուածաբանն մարգարէս զՆսայիաս, և զմեծն տէր Եփրեմ եւ զլուսոյհուչակն զՅոճեան, եւ զպայծառն Կիւրեղ, զի և սոքա յետ Աստուծոյ երկրորդաբար յոյս են մեզ և բարեխաւք։ Մեզ յիշելեացուս և ձեզ յիշողացդ, զոր մաղթեմ ամենացուն այսպիսի յուսով, զի յիշատակս մեր կատարեալ յիշմամբ ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որ է ապրհնեալ յօիտեան, և յօիտեանս յաւիտեանից ամէն, ամէն, ՃՒՒ ամէն։

Յիշեսիք զեղբայրն մեր զԿոսաանդին աւագ սարկաւագն, և ըստ հոգւոյ միւս այլ եղբայրն մեր զՎասիլ գրագիրն, որ է դեռ դպիր, և որ յիշէ յիշեալ լիցի ինքն յԱստուծոյ, ի Տեառնէ մերմէ։

բ

222բ Ջնուաստ անուն քահանայ Գրիգոր, ո՛վ պատուական վարդապետ և տէր Վարդան յիշեա, և զիմ անդրանիկ որդին զՎասիլն ի սուրբ յաղաւթք, և Քրիստոսի փառք։

672

ՀԱՐՑՈՂԱՅ ԳԻՐՔ ԲԱՐՍՂԻ ԿԵՍԱՐԱՑԻՈՑ

Որուագրիմ 336 Պողարյան, Յուցակ Բ, էջ 221

Գրիչ՝ Սարգիս
Վայր՝ Սաղիկի Նոր վանք
կամ Գայլ վանք

ա

ւծճա Փառք եզակի եւ իւռհիւսակ դաւանութեան, երեքսրբեն տէրութեան Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն, այժմ եւ յաւիտեան։ Նա առաւել յիմոյ անարժանէ աւրհ[ն]եսցի բերանւոյ, որոյ շնորհիւն սկսա եւ կատարեցի, ապրեցուցչին Յիսուսի Քրիստոսի փառք յաւիտեան։ Եւ գրեցի զսա հրամանաւ հոգեւոր հաւր իմոյ Մարկոսի կրաւնաւորի, որ ետ գրել զսա յաւտակար վարուց իւր եւ եղբարց իւրոց։ Եւ գրեցաւ յերկիրս Սաղիկ, յիշխանութիւն Կեռ Լէոնի Ղաւռասա, զոր հաստուն պահեսցէ Տէր ի կամս իւր, ամէն։ Ի վանք որ կոչի Նոր, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, ի թուականիս յաւիտենից ՅՉԻՔ (6722) աւարտեցաւ յերեքշաբթի, այրիլի ԺԵ (15)։ Գրեցաւ ձեռամբ ապիկար սարկաւագի Սարգիսի։ Որ կարդայք յիշման արժանի արարէք, եւ որ զմեզ յիշէ սրտի մտաւք, յիշեալ լիցի ի Տեառնէ։ Փցկութեան գրիս մի մեղադրէք, զի այդքան էր կարողութիւն իմ։

բ

Գրիչ՝ Յոճաննէս

Քրիստոս ողորմեա մեղաւոր գրչի Յոճաննէսի։

գ

Գրիչ՝ Եւթիմ

Աւրհնեալ ես Քրիստոս Ճշմարիտ Աստուած իմ, որ հասուցեր զիս զանակընկալս կենաց ի վերջին գիծս, գոհանամ զքէն խորհրդովք հոգւոյս, եւ փառաւորեմ անձկով սրտիս զփառքդ սրբոց, զի թէպետեւ գրեցաւ սա ձեռամբ աստուածայսէր կրաւնաւորաց Յոճաննիսի, եւ պատուական հաւր մերոյ Մարկոսի հայրապետի, այլ զաւարտումն յիմոյ անար-ժ[ան]էս ընկալաւ յանարժան կրաւնաւորէս Եվտաֆսէս, որ փոխել կոչի Եւթիմ։

Ա<ա>րզ, աղաչեմ զքրիստոսասէր քահանայդ եւ զկրաւնաւորսդ, որ ընթեռնուք եւ լուսաւորիք իմանալով զճգնութիւն սրբոց հարանցն, աղաչեցէք զնոսա բարեխաւսել առ Տէր վասն իմ, եւ դուք իսկ վասն սիրոյ նոցա, աղաչեմ, յիշեցէք զյետին կրաւնաւոր եւ զապիկար քահանայս, եւ ղեղբայրքս միաբան. եւ որ զմեզ յիշէ սրտի մտաւք, եղիցի նմա զնոյն գտանել ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որում փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

դ

287ա Գրեցաւ սա ի թուականիս յաւիտենից՝ ՅՀԻԲ (6722)[1] եւ աւարտեցաւ յամսենն աղաւաստաւս ԺԴ, յաւուր չորեքշաբաթու, յերկիրս Սաղկանս, ի վանքն որ կոչի Նոր, յորջորջեալ Գայլ վանք, մերձ ի գեղն որ կոչի Աղմա, յիշխանութիւն Կեր Լէոնի Ղաւռասայ բարեպաշտ իշխանի, զոր պահեսցէ Տէր յամենայն փորձութեանց։ Անփեշրութեան դրիս մի մեղադրէք, ղի այդքան էր կար մեր։

673

ԱԻԵՏԱՐԱՆ

«Յուցակ ձեռագրաց որ ի Հանդէս ամսօրեայ», էջ 302—303

Գրիչ՝ Յովսեան
Վայր՝ Բերդակ

ա

263ա Փառք անեղ բանին Աստուծոյ, ամէն։ Երից ի միում կատարեալ անձնաւորութեան եւ միաւորեալ ըստ աստուածութեան, եռահրաշ եւ անբաժանելի Սուրբ Երրորդութեանն փառք յաւիտենից յաւիտեանս, ամէն։ Շնորհիւն Աստուծոյ սկսա եւ ողորմութեամբ նորին կատարեցի ղաստուածահոսակ, աղբիւրահոս եւ չորեքվտակեան գետոցն, զոր Մովսէս ասէ յառաջ բխեալ եւ ընդ չորս բաժանեալ, զոր աւետարանեցին մեզ առաքեալքն ծարաւելոցս յարբուցումն ճաշակողացս բանին եւ հոգւոյն...։

Գծագրեցաւ վսեմական, անբաղդատելի, աստուածունակ, արփիափայլ սուրբ կտակս, ի խնդրոյ պատուական քահանայի Յոճանիսայ, զոր վայելել տացէ Տէր Աստուած, զոր կաթոգին տենչմամբ եւ բաղձալի սիրով տենչացեալ աստուածական սուրբ կտակիս, յաղագս լինելոյ նմայ ժառանգ որդիութեան եւ բարի յիշատակ առաջի Աստուծոյ։

Եւ արդ, գրեցաւ սա ի թուաբերութեանս Հայ տումարի յեւթնհարիւրերորդի քառասներորդի եւթներորդի (1298), ձեռամբ անարհեստ եւ եղկելի գրչի Յովսիան նուաստ քահանայի, ի թագաւորութեան աշխարհակալի յազգէն Նեստողաց Ղազան կոչեցելոյ, ի հայրապետութեան տեառն Ջարճարիայի վերադիտողի, եւ ի յառաջնորդութեան տէր Յովհաննիսի սուրբ եւ ընդրեալ եպիսկոպոսի, ի գաւառս Տուրբերուանոյ, ի գեղ Բերդակ, ընդ հովանեաւ Սրբոյ Սարգսի զօրավարի, եւ Սրբոյն Գէորգեա զաւրայվարին եւ սուրբ եւ կենսաբեր Նշանի խաչին Քրիստոսի, որ եւ բարեխաւս իսկ են վասն մեր եւ պահապան հանապազ ի տվէ եւ ի գիշերի.

Արդ, աղաչեմք զամենեսեան, որ ակտիք ի սմանէ կամ աւրինակէք, զպատուական եղբարքս մեր զսուրբ եւ զընտրեալ քահանայքս զՍիմէոն

---

[1] Արարածոց և փրկչական թվականներու տարբերությունը այստեղ 5424 տարի է (Ծ. Ն. Պողարյանի)։

եւ զԿարապետ, զՅովաննէս եւ զՄանուէլ յիշման բարո արժանի համարեսջիք, քանզի յոյժ կամակից էին գործոց մերոց աւդնելով եւ խրատ տալով յաղագս սիրո պատճառի, որ ասէ. Սէր ընդերի իւրում չար ոչ առնէ, լրումն աւրինաց սէր է, եւ զիս զմեղապարտ եւ զանպիտան գրիչս Յովսեան, եւ զծնողսն իմ զՇիրիկ եւ զՀոիփսիմէ, եւ զեղբայրն իմ Յակոբ, եւ զամենայն զազգականսն իմ, եւ զՎաւրդիկ կրաւնաւորն յիշեցէք ի Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ, ամէն։ Եւ զՂարիպշախ եւ զՋաւխարն՝ ղիմոխեցեալսն ի Քրիստոս, ձերովք ննջեցելովքն հանդերձ, յիշեցէք ի Քրիստոս, ամէն, եւ յամենայն ժամու։

Բ

1բ ԶՅովսեան մեղապարտ գրիչ յիշեցէք, ո՛վ սուրբ ընթերցողք, ի ձեր սուրբ մաքրափայլ յաղաւթս եւ Աստուած զձեզ զյիշեցողքս եւ զյիշեցեալքս յիշէ, ամէն։

Գ

75ա Յովսեանի մեղապարտ գրչի մեղաց թողութիւն հայցեցէք ի Տեառնէ Աստուծոյ եւ ձեզ առ հասարակ, ամէն։

Դ

265բ [Փառք Սուրբ Երրորդութեան Հօ]ր [եւ Որդո] եւ Սուրբ Հոգւոյն. այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Յանգ ելալ կատարեցաւ աստուայծամուխ մատեանս այս, ձեռամբ յոգնայմեղ անարուեստ գրչի Յովսեան քահանայիս, որ ի գործս բարեաց յետս կացի։

Ե

263ա ԶՀասան զեղբայրակիցն մեր յիշեցէք ի Քրիստոս, ո՛վ եղբարք, որ զծաղկի թանաքն երեր եւ Աստուած զձեզ յիշէ, ամէն։

Զ

Յիշատակագիր՝ Սիոն

Ես Հայրապետ քահանայս գնեցի զԱւետարանս ի հալալ արդեանց իմոց յիշատակ ինձ, եւ ծնաւղաց իմոց, եւ ամենայն արեան մերձաւորաց իմոց՝ հաւրն իմոյ Խաչկէն, եւ մաւրն իմոյ Տիկնէն, եւ ժառանգաց իմոց Եզեկիէլ քահանայի եւ Յովաննէս քաշ եւ յաղթող եւ արի կրաւնաւորին եւ փիլիսոփային, որ է սնեալ ի յանապատին, եւ զՅակոբ քահանայն՝ զհեզ եւ զգովելին որ ///, զՈւստինայ եւ զամենայն մերձաւորա[ց], զհայրն զՀիզան, եւ զմայրն զԱբմելեզն, եւ զեղբարս նորա, որ փոխեցեալ են առ Քրիստոս։

Ես գրեցի զյիշատակարանս՝ Սիոն անարժան եղբայր սոցա, քաջ եւ արի կրօնաւորաց եղբարց իմոց, որ աստուածային կամաւքն եւ ոգորմութեամբ տացէ վայելել դեռաբոյս զաւակաց իմոց՝ Սիմէոնի եւ Սե-

ռուսի եւ Յոհաննիսի եւ Յակոբի եւ ծնողին սոցայ, եւ իւրոց ամենայն արեան մերձաւորացն եղիցի յիշատակ առ Քրիստոս, ամէն։

674

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՓԻԼՈՆԻ ԵԲՐԱՅԵՑՒՈՅ

Երուսաղեմ 333, Պողարյան, Ցուցակ Բ, էջ 209—210

Գրիչ՝ Վահրամ
Վայր՝ Ամէնի անապատ

390բ Փառք անհասանե[լ]ի, անիմանալի, անպատմելի, անպարունակելի, անվայրապակ միաբուն զաւրութեանն Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն յաւիտեանս յաւիտեանից, ամէն։

Սկսայ մարդասիրութեամբն Աստուծոյ եւ կատարեցի նորին ողորմութեամբն զաստուածազարդ եւ զլուսաւոր տառս զերիցս երանեալ աստուածախաւս եւ աստուածատես մարգարէին Մովսիսի, զդժուարիմաց եւ զթանձրախիտ տեսութիւնսն, զոր ոմանք ի թանձրամտաց թեթեւաբար այլ իմն կարծէին եւ բաջաղէին։ Ջոր քաջհմուտն աւրինաց ճոխն իմաստութեամբ, եւ փարթամն գիտութեամբ մեծն եւ երեւելին Փիլոն տեսեալ զայս՝ եւ վարդապետաւրէն յեղանակաւ, մեկնողաբար յաւրինամբ պայծառ եւ լուսաւոր բանիւք եւ բայիւք, ըստ ճառին եւ ըստ այլաբանութեան, աստուածային հոգւովն փեռեկեաց եւ ուղղեաց ճանապարհ մեկնողութեան մտից յաստուածային գիրս, իբր զկարապետ եւ զնախրնթաց ամենեցուն որք մխեցան ի գործ մեկնութեան։

Այլ եւ զհնոց կարծեցեալ իմաստասիրաց, որք զանձինս առ իմաստուն ունէին ասել՝ Ոչ գոյ նախախնամութիւն, ի դերեւս հանէ գնոցա զանմտութեան կարծիքն։ Նաեւ զհնոց ոմանց զառաքինութիւնս պատմէ մանրամասնաբար մի ըստ միոջէ, ի նախանձ շարժելով զմեզ եւ յուսումն յանձնառութեան, որում Հիւսեայք յորջորջին, մեւս եւս այլ գիրս պատմէ, որում կեանք Իմաստնոց ասի։

Ունակացեալ դպրութեամբ մանրամատոյց մասամբ ջամբեցուցանէ երջանկաջոկ մանկանց, որք բազմախոյզ տենչանաւք առատանան լամպարափայլ յարփիազարդ ճեմարանին, զոր կամեցայ յաւրինել ի սպիտակահովիտ հիւթիս՝ սեաւաթիւր թեւով, ներարհեստիւ ջարամանեալ ի լուսաւորութիւն մտաց եւ ի վարժումն մանկանց առագաստի Վերինն Երուսաղէմի, ըստ զանազան զարդու զարդարեալ, որ է բուրաստան անմահութեան, եւ բուրէ զհոտ կենաց յուսումնասիրաց անձինս։

Որում խանդակաթ փափաքանաւք իբրեւ տեսի՝ անյապաղ փութով շութափութեամբ խոշոր գրով աւարտեցի զցանկալի տառս ես Վահրամ սուտանուն՝ սարկաւագս, ի վայելումն եւ ի մխիթարութիւն հոգւոյ եւ մարմնոյ, ինքնագիր երկաք, ի ծոցն սնուցչի իմոյ աստուածաբնակ տաճարին Աստուածածնի եւ Սուրբ Փրկչի, յանապատիս Ամէնի։ Եւ թէպէտ եւ տկար եւս էի ի գլխոյ, մինչ գրեթէ յոգիս ապաստան եղեալ եւ յոգնեալ,

սակայն ամենակալ ձեռամբն Աստուծոյ աւժընդակեալ՝ Հազիւ Հաղ. տագնապաւ իմն, Հասի յաւարտ ողորմելովն Տեառն, որոյ ի մեղուցեալ անձնէս բիւրապատիկ գոՀութիւն եւ երկրպագութիւն։

Եւ վասն ժամանակիս անՀանգուրժելի վրդովմանցս եւ խուճապ տագնապիս, զոր եՀաս ի վերայ մեր յազգէն Իսմայելացւոց, և յափշտակեաց զյուռթի և զպարարտ մասն երկրիս մերոյ ի թուականիս Հայոց ՉԽԷ (1298), որում եղեւ զրաւ գրոցս, եւ բազումք անկան ի սուր սուսերի, եւ ի գերութիւն, վասն խրատելոյ զմեզ Տեառն, եւ մեք ոչ խրատեալք։ Այլ Հաւատք պակասեալք եւ ամպարշտութիւն ղաւրացեալ, արդարութիւն Հեռացեալ եւ անաւրէնութիւն բազմացեալ, սէր եղծեալ եւ անգթութիւն ծաղկեալ, բարիք գաւսացեալ եւ չար արմատացեալ, Աստուած վաճառեալ եւ ագաՀութիւն թագաւորեալ, եկեղեցիք քակեալք եւ քաՀանայք խողխողեալք, վանորայք ապականեալք եւ միանձունք ցրուեալք, մանկունք գերեալք եւ աղջկունք վաճառեալք ի ձեռաց տնաւրինաց։

Արդ, զորպիսի՞ չարաշշուկ եւ բազմավրդով ծանր աղէտի աւուրս, ես ունայնացեալ եւ յոյժ խաւարաժառանգս եւ պարապնդեալս մեղաւք Վահրամ *սարկաւագս մարթացից ճառել զթշուառութիւնս, զոր Տէր Յիսուս ընդ արձակումն արասցէ։*

Նաեւ առ ապագայսդ Հանդիպաւղս եւ ընթերցաւղս, կամ գաղափարաւղս մաղթանք բարւոյ յիշման արժանաւորել զՀոգեւոր Հայրն իմ եւ զուսուցիչ, որ իբրեւ զՀուր մաքրէ զիմ զմարմնական ախորժակս՝ յաստուածային յորդորելով Հանապազ աննախանձաբար՝ զՍտեփանոս Գոյներերիցանց: *Եւս եւ ղծնաւղսն իմ աղաչեմ արտասուալից Հառաչմամբ յիշել ի մաքրափայլ յաղաւթս ձեր, վասնզի սովոր է ամէնողորմ Աստուած այլում աղաչանաւք այլում ողորմել. զի վասն յիշման աշխատեցայ ի սա։ Եւ որ յիշէ ողորմելով՝ յիշեալ լիցի յանեբեկ աւուրն առաջի Քրիստոսի, ուր բանք սպառին եւ գործք թագաւորեն։*

Եւս եւ զկոկաւղ քարտիսիս զՊետրոս *կրաւնաւոր, եւ* զԿոստանդին *սարկաւագ աղաչեմ յիշել, որ աշխատեցան ի սա։*

675

ԳԻՐՔ ԹՂԹՈՑ

Զմմառ 431, Ակինյան և Ոսկյան, Ցուցակ Բ, էջ 24—26

Գրիչ՝ Թովմաս
Վայր՝ Խորին անապատ*

ա

Շնորհք մեծապէս եւ երկրպագութիւն ամենասուրբն Աստուածն Հոգւոյ ի փառս Հաւր եւ Որդւոյ, ամէն։ Որ անբաժանելի գոլով բազմամասնապէս բաժանէ շնորհս ըստ չափոյ ընդունողաց մեծամեծացն եւ

* *Դրչության վայրը Խորին անապատն ենք Համարում, որովհետև գրիչն ապաստանել էր այդտեղ, ինչպես երևում է 1302 թ. նրա շարադրած Հիշատակարանից (տե՛ս «Թուղթ ընդՀանրական», Կ. Պոլիս, 1825, էջ 229—230)։*

փոքունց, ոչ առ մեծն խնայելով իբր զլացմամբ, եւ ոչ առ նուաստն յաճախ քան զարժանն ի վատնումն զձիրսն տալով, զորս ընդունաւղքն բանականապէս իւրաքանչիւր զիւրն ճանաչէ զչափ։ Յորոց ի բնաւից յոքունց եւ իմս նուաստութիւն, որ եւ փոքու մասին անարժան զոլով՝ Թովմաս անուն, տարաշխարհիկ եղեալ ի հայրենի տեղոյ իմոյ, յերբեմն ի վաղնջուց ամաց հայրապետական աթոռոյ ճոխութեամբ փառաւորեալոյ, ի նշանաւորն ասեմ դղեկէ Հոռոմկլայէն։

Եւ վասն իմոյ մեղացն նախ քան զվեց ամ գրութեան տառիս (1298)* ի ձեռս Տաճկաց մատնեցեալոյ, յորմէ ամաւ և կիսով նախ քան զառնուլն պատահեաց ինձ ելանել և գալ յաշխարհս Կիլիկիոյ, յուսով տեսութեան սուրբ գերեզմանին Քրիստոսի, զոր վարկանիմ թէեւ ոչ ըստ իմոյ առժանեաց, այլ վասն անչափ խնամոցն Տեառն դիպեցաւ այս, ոչ տեսանել ի ժամանակի պաշարման դղեկին զանհանդուրժելի նեղութիւնն որոյ և լուրն պակուցանէ զամենայն լսաւղս։ Ուր եւ բազումք մանաւանդ բնաւքն սննդակիցք իմ եւ ազգայինք ի պէսպէս մահս եւ ի գերութիւն վարեցան մեծ թշուառութեամբ արտաքս քարշեալք ի մայրենի գրկաց պանձալի դղեկին։ Զորոյ յիշատակ երջանկութեանն եւ զայժմու թշուառութեան, որպէս ի դէպ ի հարազատ զաւակի առ սիրելի ծնաւղս ոչ առանց արտասուաց բերեմ։ Վասն զի գերեալ եղև Աղ Սրբոյն Գրիգորի և հռչակաւոր նշանն Վանկոյի, առ ոտն ընկեցեալ նշխարք ոսկերաց սրբոցն վկայիցն, նա եւ աստուածարնակ եւ երկնանման, շքեղաշուք եւ գերապայծառ սուրբ տաճարն զՍրբոյն Գրիգորի ասեմ եւ Տիրամաւրն Սրբուհւոյ Աստուածածնին, եւ յանուն որդւոյ նորա Սուրբ Փրկչին, կոխան եղեւ եւ աւթարան անհաւատիցն։

Այլ եւ զիս անարժանութիւն ի վեր քան զիս պատահեալ շնորհի քահանայութեան եւ ուղիղ դատմամբ յոյժ պակաս գտանելով զիս ի վայելչականացն, գործնականացն ասեմ եւ տեսականաց լաւագոյն մասանց հարկաւորաց այսր աստիճանի, գրեթէ անպատշաճիւք լցեալ եւ մեծապէս ընդ այսր զանձն իմ պարսաւեմ, այլ սուղ ինչ եւ զայս ոչ անմասն ի բարեաց ծանեալ զճանաչելն ղանձին նուաստութիւն։ Եւ թէ չէ իրաւ, գոնէ ի սակաւուց ինչ ձեռնհաս գտելոց մասանց բարեաց պղերգանալ բարձրամիտ խոկմամբ, այլ ըստ չափոյ կարողութեան ժրանալ եւ այսու մտածութեամբ, իբր թէ ի հոգևոր սրաղանս տրուպ անձինս և ի սփոփանս սգապատ ոգւոյս, մանաւանդ վասն առ ի Քրիստոս յուսոյն ձեռնարկեցի ի գրել ղսրբոց հարցն պէսպէս և զանազան թղթոց զգիրս, որք վասն ուղիղ հաւատոյ ի Քրիստոս խոստովանութեան ի զանազան ժամանակս հանդիսացեալք եւ վասն աւգտի զկնի եկելոցն յիշատակ թողեալ։ Որոյ Աստուածասէրն կամաց եւ ես անարժանս եւ տկարս, հետևող եղեալ խոշոր եւ անարուեստ զրով ձաբուտեցի զսուրբ մատեանս հաւաքեալ թղթոցս, յիշատակ բարեաց մնալ մեղաւոր անձին խոշոր գրչիս Թովմայի։ Եւս

* Հռոմկլայի գրավոմը տեղի է ունեցել 1292 թ., գրիչը թվականը գնում է գեպքից վեց տարի հետո, հետևաբար ձեռագրի գրության թվականը 1298-ն է, չնայած լուսանցքում գրված է «այսինքն յամի Տեառն 1299», հավանաբար, այլ գրով։

եւ իմոց ի Քրիստոս հանգուցեալ ծնաւղացն և հաւրեղբարցն՝ սրով խողխողելոց եւ այլոց եւս տոհմակցացն ի վերայ պահպանութեան և զգուշութեան նախայիշեցեալ Կլայիճ և այլոց /// ողբերգելի առման բերդին /// անտ սպանելոց, եւ այլոց գերի վարելոց, եւ բանդի խոստովանութեամբ ի Քրիստոս վճարելոց, եւ ոմանց դեռևս ի բանտի կապելոց: Ցաղագս որոյ յոտս սրբոցդ և իմաստնոց անկեալ, պատահելոցդ ասեմ սուրբ մատենիս եւ աւգտեցելոց ինչ ի խոշոր աշխատութենէս ///

Բ

Ջմեղապարտ գրողս և ստացողս լուսաւոր տառիս զ[illegible]ումաս, և ղծնաւղան իմ յիշեցեք ազաւթիւք ի Քրիստոս աստուած, ո՛վ դասք ուղղափառաց:

Գ

Ջնուաստ գրող սուրբ տառիս և ղյամենայնի մեղաւք լցեալս, զսուտանուն վանից քահանայ ք[illegible]ովմաս, և ղծնաւղան իմ, եւ զամենայն ազգատոհմն իմ յիշեցէք ի Քրիստոս*:

Դ

Ջայլն ի Վարդանայ վարդապետի գիրքն դիա թէ ուզես**:

676

ԺՈՂՈՎԱԾՈ

Երևան 4843 (1296 թ.)

Ստացող և վերջին թեոթերի գրիչ՝ Աճառոն
Վայր՝ Եզնկա

216բ Ի թուին Չխէ (1298), ի յամսեանն հոկտեմբեր ԻՀ (28), յերեքշաբաթի գիշեր, ի չորեքշաբթի լոյս, հանգեցաւ ի Քրիստոս ապաշխարող մայրն մեր Մէնեփկին, որոյ ողորմեսցի Քրիստոս Աստուած և թողցէ զյանցանս
217ա նորա, բարեխաւսութեամբ սրբոյն Աբրահամու արդարոյն և Յո‖հաննու Հոսաւեցոյն և այլ սրբոցն, որոց ի հոկտեմբերի ԻՀ (28) էր յիշատակ, և Սրբոյն Նունէ և Մանէ և այլ սրբոցն, որոց ի ԻԹ (29), որք վասն սիրոյն Քրիստոսի եատուն զմարմինս իւրեանց ի սոսկալի և ի դժնդակ տանջանս և եղեն սիրելիք Աստուծոյ, և ունին համարձակութիւն առ նա բարեխաւսել վասն իւրեանց տաւնաւղացն, ո[րոց մաղ]թանաւք և հայցմամբ Սուրբ Աստուածածնին և աղաչանաւք ամենայն սրբոց փառաւորեալ պայծառացուսցէ Քրիստոս Աստուած զՄէնաիկին ապաշխարող մաւրն

---

* Այս կարգի մանր հիշատակարանները բազմաթիվ են. տե՛ս էջ 38, 65, 920, 100, 115 և այլն:

** Գրված է ս[illegible]վանական վարդապետին ասացեալ բան հաւատոյ ազգիս մերոմ» նյութից հետո:

հոգին, չնչէ զձեռագիր յանցանաց նորա ի գեհէնէ, և հրոյն և յանվախճան տանջանացն փրկեսցէ, և իւր երկնից արքայութեանն և անճառելի բարեացն արժանի արասցէ ընդ ամենայն սուրբս իւր, ի փառաւորել զամենասուրբ երրորդութիւնն, զՀայր և զՈրդի, և զՍուրբ Հոգին, որ է աւրհնեալ և երկրպագեալ յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից, ամէն*։

677

ԱԻԵՏԱՐԱՆ

Հալայան, Վասպուրականի, էջ 125—126

Գրիչ՝ **Մաթէոս**
վայր՝ **Կիւզուց վանք**

Փառք... Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ **Մաթէոսի** սուտանուն կրաւնաւորի, անիմաստ և ախմար գրչի։ Եւ եմ անընդունակ յարուեստ գրչութեան և բազում ցնորիւք պաշարեալ, այլ ըստ կարի մերում, զոր պատգեհաց մեզ մարդասէր Հոգին, արտագրեցի անարժան ձեռաւք իմովք, բազում աշխատութեամբ, ի մեծ թուխս, ի յեղանակ շրջագայութեան արեգական ստորիջիւք՝ երկնաչու ճանապարհաւ յերկնից երկիր, հայելով ըստ արարչութեան, չափեալ ելանելոյն Ագամա ի դրախտէն ՋՈ և Դճ և Ի (6450) ամի՝ ըստ եւթանասնից, ըստ որում մեք վարինք և է ի մարդեղութենէ բանին Աստուծոյ՝ անժամանակ էին և փրկչի Յիսուսի Քրիստոսի, ամս ՌՄՂէ (1298), իսկ ըստ թըւոյ Խոսովային յաբեթեանս տումարի ՉԽԷ (1298)։

Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի **Կիւզուց վանքս**, ընդ հովանեաւ Սուրբ Գրիգորիս, և յառաջնորդութեան հեզահոգի տէր Դաճիէլ կրաւնաւորին, որ և նման է Յովանէս ողորմածին։

678

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան 8179

Գրիչ՝ **Գրիգոր**

ա

141բ Քրիստոս Աստուած, քո Սուրբ Կարապետիս բարեխաւսութեամբ եւ Աթանագինէի եւ սուրբ հայրապետին Գրիգորոյ ողորմեայ իմ մեծ մամին, որ աւ<ել>ելի քան զՃ(100) ամաց էր, փոխեցաւ առ Քրիստոս ի թվին ՉԽԷ (1298)։

բ

163ա ՋՊաւղոս աշակերտ յաղաւթս յիշեսջիք։

---

* Բերթի մյուս էջում, վերևից գրված է. «Թվ[ին] ՉԿԸ (1316), յաւգոստոսի ԺԸ (18) հանգեաւ ի Քրիստոս Ահարոն վարդապետն, յաւուր չորեքշաբաթիի։ Նույն միտքն ունի նաև 58ա էջի հիշատակագրությունը, գրած մեկ ուրիշի ձեռքով։

գ

182ա ՋՅովանէս քահանայ Բհնեռեցի յաղաւթս յիշեսջիք։

դ

240բ Ո՛վ քահանայք աստուածասէրք, յորժամ տաճախմբէք, ղիս զԳրիգոր դաշխատող գրոցս եւ զՅովանէս քահանայ երախտաւոր թխտիս, եւ զհայրն մեր Միքոռն, եւ զմայրն մեր զԹանմամն, եւ զհարազատ եղբարքս մեր զՎարդան եւ զՍարգիս, եւ զհոգևոր եղբայրն մեր զՍուքիաս քահանայ ի յաղաւթս յիշեսջիք, եւ մեղաց թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ։

ե

256ա Տէր Աստուած, քո սուրբ առաքելոցս բարեխաւսութեամբ աւգնեայ եղբարց մերոց Վարդանայ, Սարգսի և Հնդուի, եւ ինձ Գրիգորոյ։

զ

261ա Ջսիրելի մեր զհարազատ եղբայրն զՍարգիս, որ զթուղթս շնորհեաց մեզ, և զՎարդան, ի յաղաւթս յիշեսջիք։

է

276բ Վասն սոցին բարեխաւսութեամբ ողորմեա ինձ՝ անպիտան եւ անբաժան Գրիգորոյս, եւ մեր ծնաւղացն՝ Միքորին եւ Թանմամին, եւ եղբարցն մեր Վարդանայ եւ Սարգսի։

ը

280բ Տէր Յիսուս Քրիստոս Աստուած իմ, բարեխաւսութեամբ քո սիրելի աշակերտիդ ողորմեայ իմ մեծ մամին եւ իմ մաւրն։

թ

307բ Տէր Աստուած, քո սուրբ և փառաւորեալ հրեշտակապետացս բարեխաւսութեամբ չնչեայ զՄիքորին, եւ զԹանմամին, Շուշկանն եւ զմեծ եղբաւրն զՅովանննիսի, եւ զմեծ մամին զյանցանքն, եւ փրկեայ եւ աւգնէ հարազատ եղբարցն Վարդսնայ եւ Սարգսի, եւ ողորմեայ մայրագութ քոյրոջն մեր Տիկնաց աիկնեայ, եւ ինձ մեղաւորիս։

ժ

323ա Քրիստոս Աստուած, Մարկոսի աղաւթիւք ողորմեայ իմ մաւրն Թանմամին։

ժա

327բ Ջքոյրն մեր զՏիկնաց տիկին յիշեայ [ա]ռ Քրիստոս աղաչեմ։

ժբ

344բ Քրիստոս Աստուած, քո սուրբ բարեխաւսութեամբ ողորմեայ իմ քրոջ Տիկնաց տիկնայ, եւ Շուշկանն եւ իւրեանց տղայոցն։

ժգ

352ա Քրիստոս Աստուած որդի Աստուծոյ, բարեխաւսութեամբ Մովսիսի եւ Եղիայի, Պետրոսի, Յոհաննու եւ Յակոբայ, եւ սուրբ եղբարցն, որ ի լերինն Թափաւր, ողորմեա գրողիս գրոցս՝ անպիտանիս Գրիգորոյ, եւ սիրելի եղբարց մերոց Վարդանայ, եւ Սարգսի, եւ Յոհաննէս քահանայի.

679

ԱԻԵՏԱՐԱՆ

Ճանիկյան, Հնութիւնք Ակնայ, էջ 85—86, Սյուրմելյան, Յուցակ Հալէպի, էջ 395

Գրիչ՝ Յոհաննէս

Ողորմեսցի Քրիստոս Աստուած պատուելի եպիսկոպոսին Տէր Սիմէօնի՝ փոխեցելոյն առ Քրիստոս ի թուին Հայոց Ջխէ (1298), և տառապեալ գրչիս Յոհաննէս դպրի, և հաւր իմոյ Կոստանդին քահանայի, և բնաւ ղարմից մերոց, զի ստացաք զսուրբ մատեանս կրկին յիշատակ մեզ և ծնողաց մերոց։ Արդ, աղաչեմք զհամայն պատահողք սորա յիշեսջիք ի սուրբ և ի մաքուր աղօթս ձեր, զի ընդ միոյն հարիւրապատիկ ձեզ պարգեւեսցէ Քրիստոս։

680

ԵԻԱԳՐԻ ՊՈՆՏԱՑԻՈՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Փարիզ 113, Երևան, մանրաժապավեն 877

Գրիչ՝ Շահինշահ

Վայր՝ Եզնկա մայրաքաղաք

ա

11ա Զգծող գրիս զանպիտան անուն զՇահինշահ աղաչեմ յիշեալ լիշիք ի Տէր մեր։

բ

Գրիչ՝ Սարգիս

173բ Ո՛վ եղբարք, որք ընթեռնուք մի մեղադրէք սզալանաց և փցուն գրիս, այլ յաղաւթս յիշեցէք զՍարգիս, որ յետոյ անուանեցաւ, և զԱհարոն սուրբ հայրն մեր զվարդապետն և յիշաւզտ աւրհնեալ։

գ

Ստացող՝ Ահարոն

84բ Փառք և գոհութիւն, շնորհ և աւրհնութիւն, պատիւ և երկրպագութիւն ամենասուրբ երրորդութեանն Հաւր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ երիս անձ-

նատրութեանն և ի մի բնութիւն բոլորեալ աստուածութեան, արարչին և նախախնամողին ամենայն գոյիցս, որ աւգնական եղև սկիզբն առնել գծագրութեան մատենիս և ի վճարն հասանել, որ է իրատք զգուշական միանձանց Նաագրա գիտնական ճգնաւորի ասացեալ, զոր տրուպ սպասաւորս բանի Ահարոն գրել ետու զսա ի թուականիս Հայոց ՋԽԷ (1298), ի մայրաքաղաքիս Եզնկա, առաջնորգութեան տեառն Ներսիսի:

Արդ, աւետելքս ի սմանէ ասացէք թէ Աստուած ողորմի ստացողին և ընթերցողին և լսողին, և ամենայն հաւատացելոց և նմա փառք յաւիտեանս:

681

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 193

Գրիչ՝ Յովսէփ։
Վայր՝ Ասպիսնկա վանի՛

ա

170ա Փառք համապատիւ և միասնական Սուրբ Երրորդութեանն Հաւր Աստուծոյ՝ ծնաւղի միածնի Որդւոյ և արտաքս առաքողի Հոգւոյն Սրբոյ, Որդւոյ Աստուծոյ՝ ծնեալ ի Հաւրէ անճառելի էութեամբ ի վեր քան զբան, նոյն և պատճառ գոլ Հոգւոյն ըստ Հաւրն բնութեան, Հոգւոյն Աստուծոյ՝ բղխումն անհատաբար գոլ ի Հաւրէ և փառակից Որդւոյն միածնի ինքեան միայն գիտելի որոշեալ ի մերոց իմաստից։ Բնութեամբ յաւէտ անանձրպետ գոլ ի միմեանց, որոմ բաժանումն որոշման ոչ է իմանալ, գի մի բնութիւն ասել զերիսն դաւանեմք ըստ առանձնաւորութեանն դիմաց, և զերիսն խոստովանել զմիութիւն բնութեան նոցուն ճանաչեմք յամենայն գոյից արարածոց իւրոց յերկնաւորաց անմահական դասուց, և ի ստորև կացելոցս մարդկան բանական մահկանացուացս, նա և յայնց ոմանց, որ տարորոշ գոլ ի սոցունց յաւիտեանս, ամէն։

Գրեցի և հաստատեալ կառուցի աւժանդակութիւն առեալ ի վերին զաւրութենէն, ի դէմս քարտենի, ըստ իմումս կարութեան զբանս աստուածայնւոյն Սողոմովնի աստուածային հոգւով առլցեալ, ընդ որում և զտառս առածից Երկոտասան սրբոց մարգարէից, որոց անուանք գրեալ ի դպրութիւն կենաց անեղծ պայմանաւ, ընդ նմին շարայարեալ զաւրէն
170բ մաքրութեան ոսկւոյ ընդ պայծառու‖թիւն ականց պատուականաց, կամ ևս հրաշազարդ տեսութեամբ նման արեգական ընդ երկոտասան աստեղաց կենդանակերպաց յերկինս յառելոց, հրամանաւ անեղին Աստուծոյ, որպէս նոքա զերկնայինն լուսաւորեն վայրս, նոյնպէս և սոքա՝ զստորև կացելոց անձինս, ի հրահանգս կրթութեան մանկանց նորոյ Սիովնի և ի զարդ պայծառութեան կաթուղիկէ սուրբ եկեղեցւոյ։

Ի թուականութեան Հայկազեան տոհմիս տոմարիս Չ-երրորդի, քառասներորդ Ը-երրորդի (1299), ես անպիտանս ի մանկունս եկեղեցւոյ Յովսէփ մակադրեալ անուն, գրեցի ըստ իմ կարութեան, և կարգեցի ի դէմս քարտենի, ի գաւառիս Աւճիշոյ կոչեցեալ, յանուանեալ անապատիս Ասպիսնկավանիճ, սխրալի և պայծառ անուամբ շքեղացեալ, ընդ հովանեաւ սրբոյ աստուածաբնակ խորանացս Սրբոյ Յարութեանս, պատուեալ

անուամբ յարութեան փրկչին Յիսուսի, և Սրբոյ Աստուածածնիս աւրհնեալ և միշտ կուսին Մարիամու։

Արդ, հայցեմք ի ճաշակողացդ յայսմ յոքնահամեան սեղանոյ, որք ի պէտս կրթութեան զսոյն ընդունիք, յիշատակի արժանի առնել աղաւթիւք, առ Քրիստոս յոյս անձին իմոյ զտաժանելիս զանազան կրիւք ներհակաց աստուածային կամաց, մանաւանդ զՍարկավագ կրաւնաւոր, որ է հաւրեղբայր մեր, և զեղբայր նորա զԱստուածատուր, և Թովմա քա-
171ա հանա, և զծնողս նորա և զամենայն||ազգականս նորա ըստ արեան, սերելոյ եղբարբք հարազատաւք և ննջ[եցել]ովք ուղիղ դաւանութեամբ ի Քրիստոս կատարելոց։

[Ս]ոքին ևս քան զևս աւժանդակ կենաց մերոց լինելով, ամենայն ուրեք սակս անձանց մերոց հոգացեալք, և էին նոքա երիտասարդ հասակաւ, որ փոխեցան ի Քրիստոս, որպէս զի ընդ միոյն վարձս բարեաց և բազմապատիկս երկնային պագևաւք առլցեալս հատուսցէ նոցին արդար դատաւորն Քրիստոս, յորժամ գայցէ փառաւք Հաւր և Հոգւոյն՝ հանդերձ հրեշտակաւք։ Եւս և յաւէտ զհարազատ հոգևոր վարդապետն մեր զՄխ[իթար], որ զաւրինակն շնորհեաց, շնորհեսցէ նմա զիւր երկնից արքայութիւն։

Բայց գրեցաւ ի սաստիկ և յընտելագոյն աւրինակէ, ի վաղուց հետէ ստուգեալ և ճշմարտեալ ի նոյն պայմանի բայիւք, և բառիւք, և տառիւ անթերի և անսղալ գոլով, զի թէպէտ և յաղագս մերոցս կարեաց ի սոյնս ձեռնարկեցաք, սակայն և առաւել ևս վասն աւրինակի և գաղափար այլոց լինելով սա ըստ յարմարութեան բանիցն։ Զի ամենայն ոք համարձակ ղայս առցէ առ ի յայլս փոխհելոյ առանց երկբայութեան և կաս-
171բ կածանաց, և զմեզ և զծնողսն մեր ի||խ[որոց] սրտէ յիշեսցէ առ բևր բարեաց տուո[ղ] Քրիստոս Յիսուս, յորում յաւէտ փափաքիմք Հոգով նմին [սրբ]ութեան ի Հայր և ի Սուրբ Հոգին, որ է աւրհնեալ և փառաւորեալ ընդ Հաւրէ և Սուրբ Հոգւոյ յերիս յաւիտեանս յամենայն դոյից արարած[ոց] իւրոց յաւիտեանս յաւիտեանից, ամէն, ամէն։

Բ

169բ Յառաջնորդութիւն տևղոյս սրբոյ առն և պատուական հայրապետի տեառն Աբրահամու վերայտեսուչ գոլով հոգւոց և մարմնոց ըստ ամենայնի բաւականացեալ ի Քրիստոս*։

Գ

ՂՋՔ, ՀՁԻ, ՁՈՅ, ԺՃՌ, ԵՇՇ, ԽՆՏ, ԺՃՌ, ԲԻՄ, ԲՄՍ, ԲԻՍ, ԺՃՌ, ԲԻՄ, ԴԽՆ, ՁԿՅ, ԷՀՁ, ԴԽՏ, ՁԿՅ, ԲԻՍ, ԴԽՏ, ՍՇՐ, ԲԻՄ**։ Թէ կարդաս

* Գրիչը մոռացել էր հիշատակել ուխտի առաջնորդ Աբրահամի անունը, այդ պատճառով հիշատակարանին նախորդող էջում առանձին ավելացրել է այդ մասը։

** Ծածկագրով գրված են հենց այդ բառերը. «Թե կարդաս իմաստուն ոմն ես, Միավոր, տասնավոր, հարյուրավոր և հազարավոր թիվ-տառերի փնջերից զեղչված է հենց անհրաժեշտ տառը։ Այսպես, օրինակ, «Ա» գրելու փոխարեն, գրված է «ԺՃՌ»։ Ծածկագրությունը վերծանել է Լ. Խաչիկյանը։

իմաստուն ոմն ես՝ եւ զԱստուածատուր քահանա, որ բազում սատարութեամբ աւգ[նա]կան եղև մերոմս կատարեաց, զի և նա հասցէ անճառ [պ]արգեաց՝ հանդերձ ծնաւղաւք իւրովք, ի Քրիստոս Յիսուս յոյսն ամենայն հաւատացելոց անձանց։

Դ

80բ Տէր Աստուած, ողորմեա ստացողի սորա Սարկաւա[գի] եւ ինձ տխմար գրչի*։

Ե

118բ Մեծի քառասնոց հինգ շաբթին գնացաք յաշխարհ ու գրեցաք զներկոտասանքս։

682

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ ԳԷՈՐԳԵԱ ՍԿԵՒՌԱՑԻՈՅ

Երուսաղէմ 365, Պողարյան, Ցուցակ Բ, էջ 269—270

Գրիչ՝ Վարդան

Ա

159 Զնուաստ գրիչս զՎարդան աղաչեմ յիշել ի Տէր։

Բ

243 Զսպասաւոր բանիս զսրբազան արշիեպիսկոպոսն զտէր Կոստանդին, աղաչեմ յիշել ի Տէր։ Եւ ընդ նմին զնուաստ փցուն գրիչս զՎարդան, եւ յիշելոցդ ողորմեսցի Քրիստոս։

Գ

469 Զստացաւղ սուրբ եւ աստուածային երգարանիս զտէր Կոստանդին արշիեպիսկոպոս աղաչեմ յիշել ի Տէր։ Նաեւ զանպիտան ծառա Տեառն զՎարդան գրիչս յիշեսջիք ի Տէր, քանզի եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոս Յիսուս, ամէն։

Դ

Ստացող՝ Կոստանդին եպիսկոպոս

469 Յամի եւթն հարիւրերորդի քառասներորդի ութերորդի թուականիս Հայոց (1299), ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ բարեպաշտի եւ քրիստոսասիրի, գրեցաւ գիրս յաղքատութենէ անարժան հողոյ եւ ծառաի ձեր Կոստանդեա անարժան եպիսկոպոսի, որ եւ յերես անկեալ աղաչեմ զաստուածասէր ընթերցողսդ յիշել սրտի մտաւք ի Քրիստոս Յիսուս՝ Տէր մեր, եւ ինքն Տէր Քրիստոս մարդասէրն զձեզ յիշեսցէ, եւ նմա փառք յաւիտեանս, ամէն։

---

* Նուինպիսի մի հիշատակագրութիւն կա 160բ, 161ա էջերի ստորին լուսանցքներում։

ե

Նուիրող՝ Կոստանդին եպիսկոպոս Կեսարու

470 *Իմ ի սրտիս սեռնեկի անխզելի կապով միացեալ եւ ոգոյ չափ սիրեցեալ եղբայր ի Քրիստոս եւ սրբոց եկեղեցոյ արդիանաբան վարդապետ Սսաիաս, ի քո Կոստանդէ նվաստ եպիսկոպոսէ Կեսարիու զքրիստոսականն ընկալ զողջոյն Սուրբ Վերնատանն եւ ծանիր, որ զմեկնիչն զոր խոստացար թէ յզարկես ձեր սրբութեան, նա տվի ի տէր Վարդան Մրենու եպիսկոպոսն, որ բերէ առ ձեզ։ Աղաչեմ որ երբ գիրքս առ ձեզ հասանի, նա զձեր բարիոք կենալոյն, զորպէսն եւ զգրոցս, թէ հասաւ առ ձեզ գրեա ի մեզ, եւ ի քո սուրբ աղաւթքն յիշէ զմեզ աղաչեմ, եւ զիմ համաշունչ եղբայրն զտէր Կուսրնգին զեպիսկոպոսն Դրազրկուն, եւ գիրքս անկապ է եւ է տետրեր համարն Ի (20)։ Աստուած վայելել տա ձեզ, ողջ լեր ի Տէր։*

683

ՃԱՇՈՑ

Իրուսաղեմ 454, Պողարյան, Ցուցակ Բ, էջ 429—431

Գրիչ՝ Գրիգոր Ջորուկ
Վայր՝ Սկեւռա

ա

496 *Ընդստացաւղ լուսազարդ մատենի Ընթերցուածոյս զաստուածապատիւ արքեպիսկոպոս եւ զառաջնորդ սուրբ ուխտին Սկեւռայի զտէր Կոստանտին, սրբազան ընթերցաւղք եւ ունկնդիրք մանկունք Նոր Սիովնի, յիշեսջիք ի սուրբ եւ երկնայթռիչ աղաւթս ձեր, պարագայց ամաւք պահելով ի խաղաղութիւն։ Եւ զի Քրիստոս Աստուած հաւատարիմ եւ բարեպաշտ հանգուցեալ ծնաւղն իւր զՎասիլն եւ զԱղուռտիկին, եւ զկրսերագոյն որդեակն իւրեանց Սարգիս՝ զեղբայր տեառն Կոստանտեա, որ արեամբ նահատակեցաւ, յիշեսջիք յամենասուրբ Երրորդութենէն, ի Հաւրէ եւ յՈրդւոյ եւ ի Սուրբ Հոգւոյն, յաւուր սրբոյ պենտակոստէիս, ի կենաց յարութիւն, եւ ի մեղաց թողութիւն։*

Նաեւ զպատուելի եւ հռչակաւոր ծերունին զզարդարեալն ամենայն բարեձեւութեամբ եւ շնորհաւք, զծայրագոյն եւ աստուածայնաբար երախտաւոր քեռի սորին տեառն Կոստանդեայ՝ զՅովհաննէս Կարմիր վանեցի, զհանգուցեալն ի Քրիստոս յիշեսջիք ի Տէր։ Եւ որք յիշէքդ եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Եւ զբազմամեղ գրիչս Գրիգոր Ջորուկ աղաչեմ յիշել ի մեղաց թողութիւն, եւ Աստուած զձեզ։

Բ

Ստացող՝ Կոստանդին եպիսկոպոս

393ա *Փառք երանեալ ամենակալ տէրութեան մի աստուածութեան Հարեւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։*

Որպէս յայտնի է իմաստնոց յարարչէն բարւոյ մարդս ըստ մի եւ կրկին գոլոյն՝ տեսական եւ գործական զաւրութեամբք ի բարիս ճահաւորեալ, ղի մի սուտ գիտութիւն ընկալցի եւ մի չար ինչ գործեսցէ։ Որոյ անդէն իսկ վաղվաղակի վրիպակ դիմեցմամբ վախից ի վախս զառիվայր մղեալ ի բուն խորս չարեաց խրեալ թաւալէր։ Առ որ մարդասէր հաստիչն յերկնից խոնարհեալ, անպատմելի միաւորութեամբ զանկեալն ի տղմին յինքն վերառեալ յառաջին ի փառսն դարձեալ կանդնէր։

Զորոյ զաստուածեղէն զանքննելի աշխարհափրկաւղ մարդեղութիւն յԱստուածն բանի յառաջադէմքն աստուածաբանիցն որպէս ականատեսք եւ սպասաւորք աստուածագործ իրացն վճարման, աւետանամակ արձանագրութեամբ կարգաւ հատուն աշխարհի. զանարատ ծնունդն ի սուրբ կուսէն, զամենահռչակ յայտնումն աստուածութեանն ի Յորդանան, եւ կարգաւ ցկեցուցիչ մահն և ցմեծ յարութիւնն, որով յինքն կրկին կազմեալ զկաւեզէնքս եւ ձողեալ աստուածաբար երկաւորութեամբ Հոգւոյն, արար անաւթս ոսկեղէնս ընդունաւղս աստուածաւութեանն գոլ եւ հաղորդս բարւոյն։

Ուստի առեալ որք յերուսադէմ յաշորդքն նոցին յաւետաբանական ճառիցն, եւ յառաքելաւանդն ատեմ տրւթեանց, զխնկելի յիշատակս երկրպագելի փրկագործութեանն Յիսուսի կարգաւ ի Տաւնանամակ համախմբարանն յընթերցուած անդր համառատեալ, սկսանելով ի Բեթզահէմէ ածեալ հասուցանէ մինչեւ ցվերնատունն, ինչ ինչ ըստ թուոյ, եւ ինչ ինչ բացարձակ, ի շրշանակս տարւոյն զբնաւ բովանդակեալ։ Յորում եւ զԱստուածածնին կուսի եւ զպաշտելի խաչին աշխարհաժողով հանդէս։ Եւ ոչ միայն զայս, այլ եւ ի միշոցս տէրունականաց տաւնից, ուրեք ուրեք, զոմանց ոմանց զաստուածարելոց արանց եւ կանանց սքանչելի նահատակութեամբ զերանելի հանդիսիցն կատարմանց զարժանապատիւ եւ շահաւէտ տաւնախմբութիւնս ի նոյն շարայարեալ։

Ուստի իբրեւ ի նախնի հետեւողաց մեծացն զաւրինակն ընկալեալ զտաւնահաւաք տարւոյ, որք յետ նոցա ընդ յերկարել ժամանակին եւ բազմանալ դասուց վկայիցն ընդ աշխարհս, ըստ պայմանի վկայաբանական նոցին պատմութեան, համազաւր եւ ձայնակից սաղմոսիւք եւ ընթերցուածաւք զիրաւունս տաւնից նոցին կատարմանց յաստուածաբան մատենիցն խմբագրեցին։

Որովք ի ժողովս քրիստոսասիրաց աստուածեղէն տաւնքն պայծառանան եւ վկայասէր տաւնակատարքն մեծապէս խնդութեամբ բերկրին։

Այսոցիկ աստուածաւանդ տաւնից կատարմանց ցուցակի համահաւաք սուրբ ընթերցուածոցս շարագրութեան փափաքաւղս, ես նուաստս յոքունց Կոստանդին, ողորմութեամբն Աստուծոյ երբեմն եպիսկոպոս

Քերսոնի, եւ ըստ դիմաշարժ փոփոխմանց ժամանակի այժմ առաջնորդ աստուածապահ սուրբ ուխտիս Սկեւռայի, ի մխիթարութիւն հոգւոյ ինձ եւ յառաջնորդութիւն պատուոյ ամենասուրբ տանիդ, ստացայ զսուրբ գիրս զայս, սկզբնակեալ ի ձեռն սնրնդակցի եղբաւր Գրիգորի ումեմն գեղեցիկ գրչի, որ եւ ընդ աւարտելն զառաջին եւ զերկրորդ զԳործս առաքելոցն Աւետարանաւն Յովհաննու, անդէն իսկ և ղբստ մարմնոյ կեանս լքեալ մահուամբ չոքաւ առ Աստուած, որոյ ողորմեսցի Քրիստոս։ Իսկ զթերի մնացեալ զերորդ հատոր, ղժամագիրքս ասեմ որ և Ճաշոց կոչի, ի ձեռն այլոց ոմանց ետու աւարտել, ի փառս տաւնեցելոցն Աստուծոյ եւ աստուածայնոցն, եւ ինձ ի կեանս ի սատարութիւն յաստուածայինսն. եւ յետ աստի ելիցն՝ ինձ եւ իմոցն ի բարեխաւսութիւն առ ողորմածն Քրիստոս։

Սղեւ կատարումն գրոցս՝ Հայոց ի մեծ թուիս ՉԽՐ (1299), յարքայութեան Հեթմոյ որդւոյ Լեւոնի, եւ ի հայրապետութեան տեառն Գրիգորի, զորս Տէր պահեսցէ յերկար։

Արդ, աղաչեմ զհանդիպեալսդ սուրբ տառիս յաւէտ, որք յետ մեր վայելէք ի սա հոգեւոր մխիթարութեամբ, սրտի մտաւք յիշել յաղաւթս զիմ նուաստութիւնս զԿոստանդին եպիսկոպոս, եւս եւ զի Քրիստոս հանգուցեալ քեռին իմ Յոհաննէս Կարմիր վանեցի, զսնուցիչ եւ տածիչ իմ եւ զյոյժ երախտաւորն իմ ի հոգեւորս և ի մարմնաւորս։ Մանաւանդ զբարի հոգի քաղցրիկ մայրիկն իմ զԱղուտրափկին, ընդ նմին եւ զհայրն իմ Վասիլ, եւ զարեամբ նահատակեալ եղբայրն իմ Սարգիս եւ զ[սնընդակի՞ց] իմ Գրիգորէս, եւ զյոյժ երախտաւոր մեծ մայրն իմ զՊահր, եւ զմիւս մեծ մայրն զՈսկեցաւղ։ Նոյս եւ զսնընդակից եղբայրուկն իմ եւ զլերդակից որդեակն զՍտեփանոս վանական քահանայ, որ արեամբ կատարեցաւ ի սպասաւորութիւն սրբոյ ուխտիս եւ յիմ, զի մինչեւ ցայր մահուան իւրոյ բաղում խոնշս եւ վաստակս մարմնոյ կրեաց վասն մեր, վասն բարեբարոյ եւ սիրական կամաց իւրոց, որում Տէր հատուսցէ զանսպառ բարիսն։ Եւ յիշելոցս եւ յիշողացդ մեծապէս ողորմեսցի ի մեծ աւուրն յահագին ժամուն, եւ նմա փառք յաւիտեանս, ամէն։

Գ

511ա Զուարճացեալք յիշատակաւ սրբոյ տնաւրէնութեան Տեառն մեծի աստուածայայտնութեանս եւ փրկական սուրբ յարութեան զեղկելի անձն անարժան զԿոստանդին եպիսկոպոս Սկեւռայի, եւ զհեղիկ եւ զսիրելի հոգեւոր եղբայրուկն իմ զՍտեփանոս վանական քահանայն արեամբն իւրով ներկեալ ի սպասաւորութիւն սուրբ ուխտիս աղաչեմ յիշել յայսմ տաւնի եւ Յիտուս Փրկիչն յիշողացս եւ յիշելոցս ողորմեսցի, ամէն։

Դ

521բ Ազատեալք ի գերողէն եւ փրկեալք ի սպանչէն որք ընդ առաքելոցն երկիր պագանէք վերհամբառնալոյն Քրիստոսի զմեղուցեալ անձն եւ զտառապեալ ոգիս զԿոստանդին եպիսկոպոս Սկեւռայիս եւ զձեռասուն

հոգեւոր որդեակն իմ զՍտեփանոս քահանայն, որ իւրով արեամբն նահատակեցաւ ի պէտս իմ, յերեսս անգեալ աղաչեմ սրտի մտաւք յիշել յայսմ տաւնի, զի մենք յիշեալքս եւ դուք յիշողքս առհասարակ սպասեալ գալստեան Քրիստոսի, արժանի լիցուք ընդ առաքելոցն պարել յարքայութեանն Քրիստոսի Աստուծոյ յուսոյն մերոյ։

Ե

Շ 525բ Որք էք լցեալ շնորհաւք Հոգւոյն Սրբոյ, զտարտամ անձն զԿոստանդին եպիսկոպոսի, եւ զՅոհաննէս զերախտաւոր եւ ըզսնուցիչ քեռին իմ, եւ զՍտեփանոս լերդակից հոգեւոր եղբայրուկն իմ, որ ի պէտս սուրբ ուխտիս նահատակեցաւ յանաւրինաց, աղաչեմ յիշել յայսմ տաւնի, զի մեղ եւ ձեզ յիշողացտ եւ յիշելոցս առհասարակ պարգեւեսցի քաւութիւն մեղաց եւ թողութիւն յանցանց, ամէն։

Զ

Շ 530բ Զանդրանիկ եղբարց մերոց եւ զմտերիմ բարեկամաց զսրբոց հրեշտակապետաց տաւնողքս զտան ցնծութեան, աղաչեմ եւ տառապեալ անձն եւ մեղաւք լցեալս Կոստանդին եպիսկոպոս Սկեւռայի, զի միշնորդ լիջիք առ հրեշտակական գունդն աւգնական լինել ինձ մեղուցելոյս, եւ ըստ մարմնոյ հեզիկ հաւրն իմոյ Վասլի, եւ աչաց լոյս հարազատ եղբաւրկանն իմո՝ արեամբ նահատակելոյն Սարգսի, եւ համաշունչ որդեկին իմոյ Ստեփանոս քահանայի, եւ Տէր Յիսուս յիշողացտ եւ յիշելոցս ողորմեսցի և ընդ հրեշտակս զուգաթուեսցէ յերկրին կենդանեաց, ամէն։

684

ԱՒԵՏԱՐԱՆ

Վենետիկ 399, Մարգիսյան, 8ուցակ Ա, էջ 683—684

Գրիչ՝ Խաչատուր
Վայր՝ Պերճեր

ա

Փառք եռակի և եզակի աստուածութեանն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, որ ետ կարողութիւն տկարութեանս իմոյ յանկ հանել զդրութիւն աստուածախաւս սուրբ մատենիս, ամէն։ Յամի Ջ-երրորդի Խ-երրորդի Ը-երրորդի (1299) թուականութեան Հայոց, ի թագաւորութեանն Կիլիկեցւոց նահանգիս Հեթմոյ, եւ ի կաթողիկոսութեան Հայոց տեառն Գրիգորի, գրեցաւ աստուածախաւս սուրբ մատեանս ի հռչակաւոր ուխտս Պերճեր, ընդ հովանեաւ Սուրբ Սիովնի և կենսակիր Սուրբ Նշանիս, ի ստոյգ և յընտիր աւրինակէ, բազում հոգածութեամբ և ջանիւ, ձեռամբ փցուն և ախմար և յետին գրչի Խաչատուր սարկաւագի, ի խնդրոյ աստուածասէր քահանային Սարգսի, որ ցանկացաւղ եղև այսմ լուսահիղձ և կենսակիր աւետեաց Աւետարանիս։ Եւ ստացաւ զսա բազում աշխատութեամբ և ծախիւք՝ ի լուսաւորութիւն մանկանց նորածնելոց նոր Սիոնի,

ի յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց և բնաւին զարմից՝ կենդանեաց և ննջեցելոց։

Արդ, ո՛վ սուրբ հարք և առաքելագոմար դասք քահանայից և սրբազան գունդք սարկաւագաց, յորժամ վայելէք ի քաղցրաճաշակ, եղեմատունկ, աստուածծոռոգ վտակաց, քառառաջեա հոսանաց, կենդանական, աստուածային աւետարանական բանիցս, մանաւանդ յորժամ բառնայք ի վերայ ուսոց՝ ի ժամ սոսկալի պատարագին, յորժամ խաղան ի վերուստ յոգւոյն ձեր իջանելով զաւրք հրեշտակաց և սքաղեալ ահիւ խառնին լնդ ձեզ, յայնժամ նովին սուրբ Աւետարանաւդ և միշնորդական հրաշիւք կենարար սուրբ պատարագին, յիշեսջիք ղստացաւղ սորա զՍարգիս քահանայ, ողորմութիւն գտանել նմա և ծնողաց իւրոց ի Քրիստոսէ յահեզ ատենին ի մեծի ծագմանն յաներեկ աւուրն։ Ընդ նմին աղաչեմ յիշել ի բարին Քրիստոս զԽաչատուր դրիչ գրոյս, նա ի ղծնաւղսն իմ՝ զհանգուցեալսն ի Քրիստոս, ողորմութիւն գտանել յողորմած Տեառնէն ինձ և ծնողաց իմոց։ Եւ որ յիշէ զմեզ սրտի մտաւք, յիշեալ լիցի և ինքն։

Բ

Տէր Յիսուս Քրիստոս Աստուած, ողորմեա ստուցողի սորա Սարգիս քահանայի, և եղբաւր նորին Պաւղոս կրաւնաւորի, և Թորոսի և Դաւթի, և ծնողացն իւրոց։ Ընդ նմին մեղուցեալ ծառայիս աստուծոյ Խաչատրի և ծնողացն իմոց, և, որ զամէնն ասէ և նորա ողորմեսցի. ամէն։ Եւ Պաւղոս քահանայ որ աշխատեցաւ յղղորդել սմա, և Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեան։

685

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՎԱՅ ԻՍԻՔԻՈՍԻ ԵՐԻՑՈՒ

Վիեննա, 216, Տաշյան, Յուցակ, էջ 548

Վայր՝ Ի դղեակս Բարձր

Յամի եւթնհարիւրորդի քառասներորդի ոսթերորդի (1299) ի թուականութեանս Հայոց աւարտեցաւ Մեկնութիւնս երջանիկ Նահատակին Յովբայ յայլեւայլ ժամանակ եւ տեղի, զանազան գրչաւք, ի գաւառիս Կիղիկեցոց, հուպ յանառիկ դղեակս Բարձր կոչեցեալ, ի դառնագոյն ժամանակի, յորում յոյժ զղուիմք յանաւրինաց։ Որք աւգտիք ի սմանէ՝ զերախտաւորս եւ զաշխատեալս ի սմա յիշեսջիք ի Տէր, եւ դուք ի նոյն լիջիք բարի աւրհնելոյն յաւիտեան։ Այլ վասն թերութեան տալիս յայտնի լիցի ընթերցողաց, զի բանքս Իսիքոսի մինչեւ ցայս վայր սպառեցան. եւ թէ այս մինչեւ ցայս վայր միայն եղեւ քննեալ ի նմանէ, եւ թէ ի թարգմանութենէ թերին մնացեալ եղեւ՝ չէ յայտ։ Այլ բովանդակ գրոցն Յովբայ Մեկնութեան թէ ոք փափաքէ, խնդրեսցէ զժողովածոյ մեկնիչն զարարեալ ի վարդապետէն Վանականէ Տաւուշեցւոյ։ Այլ զնաւեկացւոյն Գրիգորի բանսն որ յՈվ է դայն է խաւսեալ, եւ սուղ ինչ Իսիքոսի բանի-

ցըս պրեալ յայլոց ումեքէ՝ մատոյց մեզ ի ձիր շնորհի քահանայ ոմն Կարապետ անուն, եւ մեր զթերին լցեալ՝ ընծայեցաք զկնի եկելոցդ։

686

ԱԻԵՏԱՐԱՆ

Երեան 4515, Փիրղալեմյան, Նչխարք, էջ 57

Գրիչ՝ Վարդան Կիլիկեցի
Վայր՝ Ջորովանք

ա

Այլ և զիս զգրող սմին զՎարդան Կիլիկեցի զվերջին մեղաւորաց հանդերձ ծնողօքն մեր և եղբարբք, ևս առաւել զուսուցիչն իմ տէր Յոհաննէս զեղբայրն արքային Հայոց Հեթմոյ, աղաչեմ խնդրել մեղաց թողութիւն, և որ մեզ հայցէ և ինքն գտցէ։ Էր թվին Հայոց ՉԽԸ (1299), ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ՝ այր բարեպաշտի։

Աւարտեցաւ իմով ձեռամբս յաստուածաբնակ մենաստանիս ի Ջորովանս, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Սուրբ Սիոնի և մերոյին գլխոյ Հայաստանեացս կուսաւորչի և այլ կենսակեր սուրբ նշանացս, և Քրիստոս օրհնեալ յաւիտեանս, ամէն։ Եւ ի հայրապետութեան Հայոց տեառն Գրիգորի երկրորդ Վկայասէրի։

բ

Նվիրող՝ Դաւիթ

Ջսուրբ Աւետարանս Ցորդանանիս տվի ես Դաւիթ վարդապետս, Աստուած շնորհաւոր անէ։ Ով որ հանէ ի վանից...

687

ԱԻԵՏԱՐԱՆ

Երեան 10493

Գրիչ՝ Սերոբ
Վայր՝ Մարմանց գեաղ

271բ *Փառք անեղին Աստուծոյ, Հ[աւ]ր և Որդոյ և Սուրբ Հ[ոգւո]յն յաւիտեանս, ամէն։*

Շնորհիւն Աստուծոյ և կարողութեամբն իւրով կատարեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ կրանաւոր քահանա Կարապետի, ի գաւառիս Մանծկերտոյ, ի գեաղս որ Մարմանց յորջորջի, ի դուռն Սուրբ Աստուածածնի և այլ սուրբ նշանացս, ի թուականութիւնս Հայոց ՉԽԸ (1299), յամսեան արեգ ԻԱ (21)։ Աղաչեմ զձեզ, եղբարք, յո[ր]ժամ համբառնայք զսուրբ զԱւետարանս, յիշէցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զառաջի գրիչն զԿարապետ քահանա, և զծնողսն նորա, և զեղբարս նորա՝

զկենդանիս և զհանգուցեալսն, և զվերջի գրիչս զՍերոբս, որ չէմ արժանի յիշիլ ոչ ի դիրս և ոչ ի քարտէզս, և զծնողսն իմ, և զկենդանիս և զհանկուցեալս, և զեղբարն իմ զՊաւլոնուս սարկաւագ, որ կատարեցաւ ի Վաթ վասն անուանն Քրիստոսի*///։

688

ԱԻԵՏԱՐԱՆ

Սրվանձտյան, Թոռոս Ագրար, Ր, էջ 423

Գրիչ՝ Կարապետ
Վայր՝ Վերին Տիւրիկ գաւառ.

Գրեալ ի թվականիս Հայոց ՁԽՐ (1299), ի թագաւորութեան Հեթմոյ, ի հայրապետութեան Գրիգորի, ի գաւառիս, որ կոչի Վերին Տիւրիկի, յանապատին որ կոչի/// ձեռամբ Կարապետի, ի ծերութեան ժամանակի, ի սակասել լուսոյ աչաց...։

689

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 2588 (1294 թ.)

Գրիչ՝ Թորոս
Վայր՝ Ղազարու վանք

ա

441բ [Զ]ստացող մատենիս զարհիեպիսկոպոսն զտէր Աբրահամ, և ծնաւղսն իւր յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր, աղաչեմ, ո՛վ մանկունք Նոր Սիոնի. յիշեսջիք և զեղկելին զԹորոս, որ զսակաւս նորոգեցի, զի և դուք յիշեալ լիջիք առաջի Աստուծոյ բարեաւ նորին խնամոց, ամէն։

բ

444բ Ես՝ տէր Աբրահամս, տրուպս յորդիս եկեղեցոյ, հարկ եղև գնալ ինձ յերկիրն Կիլիկեոյ, ի տեսութիւն սրբազան կաթողիկոսին տեառն Գրիգորիսի։ Եւ հանդիպեցա այսմ աստուածային տառիս։ Եւ վաղուց հետէ ցանգացող եղէ այսմ աստուածախաւս մատենիս, ստացա զսա գանձ պատուական և յիշատակ հոգոյ և ի վարժումն մանկանց եկեղեցոյ, և
445ա բերի զսա||յաստուածահամճ ոսխոս մեր, ի գաւառս Տարաւնոյ, ի դուռն Սուրբ Առաքելոցս, որ կոչի Ղազարու վանք։ Եւ լցի զոր պակասէր, և ետու կազմել ի թուականութիւնս ՁԽՐ (1299)։

Արդ, աղաչեմ զմանգունս եկեղեցո, ես թարմատարս տէր Աբրահամ, որք հանդիպիք այսմ տառի, մեզաց թողութիւն խնգրեցէք մեզ և

* Ձեռագիրը մինչև 1970 թվականի ամառը գտնվել է Կեսարիայի Սուրբ Աստվածածնի եկեղեցում։ Մատենադարան է բերել Փառեն Մինասյանը։

մերոցն ամենայնի, եւ մի ոք իշխեսցէ հանել զսա ի Սուրբ Առաքելոցս, և որ ոք յանդգնի հանել, պատժի յԱստուծոյ և ի Սուրբ առաքելոցս և ի մէնշ։

Ընդ նմին և զԱռաքել կազմող գրոյս յիշեսջիք յաղաւթս աղաչեմ*։

690

ԱԻԵՏԱՐԱՆ

Սանջյան, Ցուցակ Ամերիկայի, էջ 79

Գրիչ՝ Ստեփանոս

Տէր Աստուած ահաւոր եւ սքանչելագործ, սահման սիրոյ եւ ողորմութեան, Քրիստոս թագաւոր բարձր եւ ահաւոր, Հայր Որդի գթած եւ բարերար, ստեղծիչ մարդկայնոցս եւ գոյացուցիչ անգոյից, բարէբարեխալդ ի հրեշտակաց եւ ի մարդկանէ, եւ աւրհնեալդ յամենայն ստեղծուածոց, եւ յիմմէ անարժան բերանոյս. քեզ ընդ Հայր քոմ ահաւորի եւ ընդ Հոգւոյն Սրբոյ փառք յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից, ամեն։

Ի յամս Հայկազեան թուաբերութեան տումարին, յորում էր թիւ համարոյ թուականին Թորգոմեան տոհմին ՉԽԸ (1299), աւարտագործեալ եղեւ սուրբ եւ կենսատու Աւետարանս Քրիստոսի Յիսուսի Աստծոյն մերոյ, որ ընկալեալ յաստուածալուր վարդապետութենէն երկնաւոր հովուապետին, զոր հրատարակեաց ի լուր ականջաց ամենայն հաւատացելոց. եւ պատուիրեաց սրբոց աւետարանչացն եւ ասէ. Գնացէք, աշակերտեցէք զամենայն հեթանոսս։ Իսկ նոքա՝ յառաջացեալք յանմահարար գետոյն ծաւալմանէ յորից յորդախաղաց վտակաց՝ մատրուակեցին յարրոմն եւ ի զովացումն ծարաւի անձանց, եւ յաւրհնեալ զսա թագ արքայական՝ եդին ի գլուխ երկնային արքաւուհոյն եւ փառազարդ կաթուղիկէ սուրբ եկեղեցոյ, ի վարոմն եւ ի մխիթարութիւն աւրիորդաց նորա, եւ ի պարծանս հանուրց հաւատացելոց եւ ի փառս անմահ թագաւորին. եւ այսպէս դրեցին։

Մաթէոս աւետարանիչն ի կոչմանէ Փրկչին երթեալ զհետ Քրիստոսի, ականատես եղեալ սքանչելեացն Տեառն եւ վարդապետութեան, ընկալեալ զՀոգին Սուրբ ի վերնատանն, յետ ետթն ամի համբառնալոյ Փրկչին մերոյ գրէ զԱւետարանն յԱնդիոք քաղաքի երրաեցւոց բարբառովն, որ բովանդակէ յինքն թիւս ՅՕԵ (355) եւ Աւետարանս գլխաւորս ԿՋ (66)։

Մարկոս աւետարանիչ՝ աշակերտեալ Պետրոսի առաքելոյն եւ հրամանաւ նորա գրեաց զԱւետարանն յԱղեկսանդր քաղաքի, յետ ԺԵ (15) ամի վերանալոյ Տեառն յերկինս, եգիպտացւոց բարբառովն, որ բովանդակէ յինքն թիւս ՄԼԲ (232) եւ Աւետարանս գլխաւոր ՇԲ (52)։

---

* Ձեռագիրը գրված է Դրազարկոմ 1294 թվականին, Բարսեղ գրչի կողմից։ Այս հիշատակագրությունները գրել է ձեռագիրը լրացնող Թորոս գրիչը։

Ղուկաս աւետարանիչ աշակերտեալ առաքելոյն Պաւղոսի ի Հռոմ քաղաքի. յետ Ի (20) ամի համբառնալոյ տեառն յերկինս՝ գրեաց զԱւետարանն հռոմաեցւոց բարբառովն, որ բովանդակէ յինքն թիւս ՅԽԲ (342)՝ եւ Աւետարանս գլխաւորս ՀԲ (72)։

Յովհաննէս աւետարանիչ ականատես եղեալ Փրկչին սքանչելեացն եւ վարդապետութեանն, յետ ՄԲ (52) ամի գրեաց զԱւետարանն յԵփեսոս քաղաքի յունական բարբառովն, որ բովանդակէ յինքն թիւս ՄԼԲ (232) եւ Աւետարանս գլխաւոր ՄՁ (56)։

Զոր իմ անարժանի եւ անպիտան եւ սուտանուն կրանաւորի, որ տեսի զաւրինակս գովելի եւ անսղալ վկայեալ ի բազմաց, եւ ցանկացող եղէ որպէս պատուական մարգարտի, եւ գրեցի զսա իմ անիմաստ եւ տկար մտաւք, ընդ հովանեաւ Սորոյ Աստուածածնիս։ Արդ, աղաչեմ զամենիսեան, որ հանդիպիք սուրբ Աւետարանիս, զմեղապարտ գծողս Ստեփանոս եւ զծնողսն իմ եւ զեղբարսն իմ յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր։ Նա եւ զհոգեւոր եղբարս իմ՝ զՄովսէս կրան[աւ]որ, եւ զծնողսն նորա, եւ զեղբայրսն իւրայաւքն հանդերձ, ամենեւ զհայր վանիցս՝ զՅովհաննէս քահանայ, եւ զայլ կրաւնաւոր եղբայրքս եւ զմիաբանք սուրբ ուխտիս։ Եւ զառաջնորդ գաւառիս՝ զառաքելաշնորհ եւ զպատուական հայրապետս մեր՝ զտէր Մխիթար եւ զծնողս նորայ, որ հայրական գթութեամբն իւրով զաւրինակ պարդեւեաց, եւ է յոյժ երախտաւոր մեզ։ Յիշողացդ եւ յիշեցելոցս ողորմեսցի Քրիստոս Աստուած բարէխաւսութեամբ սուրբ ծնողին իւրոյ, եւ սրբոց հրեշտակապետացն՝ որոյ այս աւր էր յիշատակս, յաւուրն համառատի, եւ նմա փառք։

691

ԱԻԵՏԱՐԱՆ

Ն. Ջուղա 35, Տեր-Ավետիսյան, Յուցակ, էջ 52—54

Գրիչ՝ Աւետիք Իովաճէ
Վայր՝ Տաթև

ա

Փառք Աստուծոյ Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, որ արժանի արար ղիս անպիտանս նուաստ Աւետիք Իովաճէ հասանել յայս, որ տեսա աչօք խմովք զաւարտ սուրբ Աւետարանիս։

Ջոր աւրինակ աշխարհք և գաւառք, ծառայք և իշխեցեալք ի պարտականն ծառայութեանց և ի տահմանեալ հարկիցն սակէ վերջացեալք գոլով, և պակասեալ ի հատուցումն ապստամբ և տարտամ բարուք, և կամ չքաւորութիւն անձիցն հասութեամբ ի սրտմտութիւն շարժիցին զտիարսն և վասն այնորիկ հանոման կրիցեն ի բնակութիւն և յափշտակութիւն ընչից անտես ի նախախնամութենէ, և անպատիւ ի փառաց գոլով, և զայս կրկին տեսութեամբ, ցասմամբ և պատուհասիւ անպիտանութեամբ խստեալք, և կամ ուղղութեան և զգաստութիւն խրատու սիրեցեալք իբրև ղորդիս։ Որում և վասն այսորիկ մեծագոյն և պատուական կարաւտանան ընծայից ի գոյից և ի տանց իւրեանց, շանալով զտացումն և յայսմանէ զչքաւորութեամբն վերջացեալ գաւառաց ի գաւառս և յաշխարհաց յաշխարհ, ընդ ծով և ընդ ցամաք ընթացութեամբ հարկաւոր են գտանել։ Նաև ի ծնունդս ձեռնարկեն ևս դիտաւորութեան զկամս տիրաց շահիլն և զհաշտութիւն բարձրացեալ կամաց իշխողացն, եւ զայս ոչ թարց միշնորդաց հաւատարմաց և պատուականաց համարձակին ինքեամբ վճարել ղիրն, վասն որոյ զմեծարեալսն ի տիրանց առ ունի կիր պատկառելի երեսաւք նոցա և երախտագործութեամբք յեզաշրջելոյ զտրտմութիւն տիրանց և պատուականութեամբ ընծայիցն յառաշինն ելանիցեն ի փառս և ի պատիւ։

Այսպէս և ամենայն մարտիկք հեստաւղք կամաց ստեղծողին ապերախտ գտան առ բարերարն և զրկեցան յանմահական ժառանգութենէ սովալլուկ տառապանաւք և յետին ախքատութեամբ ընդ խուղս ունելով զկեանս. սովով չարութեամբ ծիւրեալ ծնկեցան, ոչ ունելով գործս բարեաց ստանալ այնու զհաշտութիւն կամաց արարչին։ Վասն որոյ վայելչապէս և արդարև պատշաճագոյն կարաւտացան գալստեան բանին և սպասեցին

փրկութիւն նորա, լինել գին հաշտութիւն Հաւր, և ընծայ պատկառելի, սրբութեամբ մարմնոյ և արդարութեամբ հոգւոց երևեալ, աղաչելով զհայր վասն մարմնակցաց իւրոց, յոր գթացեալ զաղաչանս որդւոյ և ի շարչարանս մարմնոյ նորա, շնորհեաց ամենեցուն զյանցանս, զմիջնորմ ցանկոյն քակելով, արար խաղաղութիւն յերկինս և յերկրի արեամբ նորա, և եհան յերկինս նստոյց տնաւրինութեամբ մարմնովն ընդ աջմէ ինքեան առհաւատչեայ և կարապետ լինելով յուսացելոց իւրոց զիր ամենայն իշխանութեանց և պետութեանց հանել ի պատիւ և ի փառս։

Յորոց և ես, մի ոմն ի տրուա՛ծառայից Տեառն Աւետիս Իռվանէ՝ Սիւնեաց եպիսկոպոս, ծնօղաց բարէպաշտաց ծնունդ՝ հաւր Լրպարաի և մաւր Նանայի, որ և ես ամենայն իրօք հետեւող եղէ Տեառն իմոյ կամաց և աներկիւղ և յանդուգն մտաւք ձևոներից եղէ ի բա՛ւ ձեռագոյն և գեր քան զկար ի պատիւ հոգևոր վերատեսութեան Աստուծոյ ժողովրդեան։ Կոչողին զօրութեանն անհաւատ եղեալ և անկարութիւն զաւրութեան իմոյ ապագէտ փառաց սնոտեաց մեծարանօք և հեշտութեան ցանկութեամբ։ Զեղ շնորհացն որ յիս աստէն չարեաւք ծախելով, յլմար կուսութեամբ թմրեալ, զտաղանդ Տեառն թագուցեալ, տարտա՛ռումամբ նախանձոտ հոգւով և չար մտաւք ընդ երկար համարելով զգալուստ Տեառն, հարկանելով զծառայակիցս, ընդ արբեցողս ուտելով և ըմբելով ըստ կրպակաւորացն չարաց ջուր ընդ գինի խառնելով, բժիշկ մեղանչական գտեալ իմ և ողջացուցիչ չարեաց, որ և գտիչ չարեաց եղէ։

Եւ յայսմիկ տառապանաց միջի և ի չարութեանց պաշարմանց յուսահատեալ ի փրկութենէ, ոչ կամէր մխիթարել անձն իմ, վասնորոյ յիշեցի զԱստուած և ուրախ եղէ հոդի առեալ յիշատակաւք տնաւրինական չարչարանաց աստուածորդւոյն, որ պատմի յաստուածային տառս յայս, գիտելով զի ոչ եղբայր և ոչ մարդ կարէ փրկել զիս և ոչ զոյ փրկանք անձին իմոյ, բայց միայն մարմնով չարչարեալն Քրիստոսի, և միջնորդութիւնն ծնօղի բանին, և գումարք խմբից առաքելական գնդին և հանգուտեան յարկս աստուածընկալ ոսկերաց նոցա, որոց անուամբ նոցա է պսակել, ի մախթանս կցորդութեան, ունելով զերջանիկ դասս միեղէն եղբայրութեան հոչակելի տանս և հոյակապ սուրբ ուխտիս Տաթևոյ, զի ակն առեալ ի չարչարանս միածնի և ի բարեխաւսութեան առթողացն աշխարհի և բժշկեսցէ կենարար կրիւք զամենայն կիրս հոգւոյն և մարմնոյ իմոյ չարութեան և ողջացուսցէ զխոցուած վիրաց մեղաց։ Ահա այսու հաւատով, յուսով և սիրով գտի և հնարեցա զընծայս զայս խորհրդական, սակաւ և դոյզն ընչից ծախիւք ստացեալ իրաւամբ ի մամոնայէ անիրաւութեան, միջնորդութեամբ լերինս Աստուծոյ հաճելոյ սրբոյ քաւարանիս և ամենայն ժառանգաւորաց սորա։

Աղաչեմ ղպատահելսդ ընթերցմամբ և աւրինակ առնելով, աննախանձ մտօք և առատ սրտիւ ըստ գովեալ տնտեսին, թողուլ զպարտիս ընդ ձերն Տեառն թողլոյն աղաչիցէք զմարդասէր և քաղցր կամս Աստուծոյ, առաջակաց ձեզ ունելով զտունս Տէրունի, հաճել ի բանաւոր պատարագս և ներում շնորհել ինձ։ Ոչ խոտել զընծայս իմ, որպէս ի հնումն Իսրայէլին, որոյ սպառնայր տեսանողքն՝ արկանել զապաւս ողջակի-

ղացն զերեսաւք մատուցողացն և զպարարակաց զենումն ընդ շանց և խոզից արևանց հեղոյ ընդունել։ Այլ և վասն մեր հոգւոյ և մարմնոյ դասուիարակաց և յաստուածայինս վարժողաց և ըստ մարմնոյ հարց մեր և հաւուց։ Մեծին Սմպատայ Աւուպիլեան, և հարազատաց նորին Տարսյիճին և որդւոյ նորին Նիկոմին, Իվանէ և որդւոյ նորին Լիպարտին, պարկեշտ և բարեպաշտօն զուգակցաց նոցին փոխելոցն ի Քրիստոս, մարց մեր Թամթային և Նանային, եւս և մեծ քահանայապետին և երևելի առաքելական առնն մետրապօլտին Սիւնեաց՝ հօրեղբօրն մեր տեառն Սահեփանոսի տալ սոցա ժառանգութիւն ընդ ամենայն սուրբս և պարակցութիւն ուրախութիւն ի ժողովս երջանկաց հայրապետացն և արդարոցն հանգուցելոց ի դիրկ հանգստեան նահապետին Աբրահամու։

Իսկ զհաւս ի մարմնի գոլով ծնաւղաց իմ հոգւոյ աստուածասէր մեծ իշխանուհւոյն սուրբ կրաւնաւորին մաւրաքեռն իմ Թաճիրին, ամենաւրհնեալ և գեղեցիկ աւրիորդին՝ մօրն իմոյ Վախւախին, եւ հարազատացն իմոց Արևելեայց կողմնակալաց՝ Էաչոյ և Բոյրթէլին, Սմպատա և Իուղտային, Ջեսարին և այլ հարազատացն ընտանեաց մեր և ազգակցաց յերկարիւ բարութեամբք և հոգւոյ և մարմնոյ ի վերայ երկրի, իրաւամբ և արդարութեամբք պայծառացեալք հասարակեսցեն զկեանս իւրեանց ալևորեալ և լի աւուրբք և զկնի փոխման երկրաւոր տաժանման կենցաղոյս, անթառամ պսակաց և անանց հանգստեան արժանի լինել ընդ ամենայն սուրբս Քրիստոսի Յիսուսիւ Տէրամբ մերով, որ է աւրհնեալ յաւիտեանս։

Ի վերայ այսր ամենայնի պատուէր տամք ձեզ զկնի եկելոցդ, մեծաւ զգուշութեամբ պահել զսուրբ Աւետարանս և չհանել զսա ի սուրբ եկեղեցոյս Տաթևոյ նախանձու չարութեամբ կամ գողութեամբ, ագահութեամբ և զինչ և իցէ հնարիւք։ Եւ թէ ոք յանդգնի յորմէ պատուիրեցի և ոչ զգուշանայցէ, այլ զհակառակն խորհիցի և առնիցէ, անբաժ լինիցին այնոքիկ ի փրկութենէն Քրիստոսի մինչև զղշասցին։

Թիվն ՁԽԹ (1300) էր։

Ես նուաստ Աւուպէլ Իովանէ իմով ձեռամբս գրեցի զյիշատակարանս զծովացեալն իմաստիւք աստուածաշունչ տառիւք հընով և նորովք և արտաքին իմաստիցն տեղեկութեամբ զիմն վարժապետ, զհոչակաւորն յամենայն ազգս Հայկազնեաց զմեծ պետն Եսայի, զարժանին ամենայն բարեաց յիշատակի յիշեցէք բարեյիշատակաւ ի Տէր, ո՛վ պատահողք։

Բ

Ստացող՝ Յովհաննէս

29ա Ստացաւղի սուրբ Աւետարանիս արհիական եպիսկոպոսի Տեառն Յովանիսի Արևելեան պռաւտաւնֆռանտէսի, ողորմեայ Քրիստոսի Աստուած ի քում սոսկալի աւետնին, ամէն։

Գ

180ա Տէր Օրպէլ Իովանէ ստացօղ սուրբ Աւետարանիս։

692

ՄԱՇՏՈՑ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԻՍԱՍԱՐԿԱԻԱԴԻ

Երևան 6333, Բարղամյան, 8ուցակ, էջ 10բ, 66ա

Գրիչ՝ Յովճաննէս
Վայր՝ Բասղի անապատ

ա

Այս Տետրակս ցանկալի,
Աստուածային գանձ[illegible] լի,
Գրեալ ձեռամբ անարժանի,
Որ Յովճաննէս անուն կոչի՝
Ի յանապատս Բասղի,
Որ ի լերինս Տաւրոսի,
Մերձ առ դրան Սուրբ Սիովնի
Ընդ հովանեաւ Աստուածածնի
Վարդապետին Տիրացուի
Հզաւր և մեծ գիտնականի,
Եպիսկոպոս Ստեփանոսի,
Հաջորդ փառացն Պետրոսի;
Տէր վայելել տացէ բարի,
Երկար ամաք ժամանակի,
Եւ բարիոք կեալ կենդանի,
Ողորմութեամբն Քրիստոսի.
Մինչև ի կէտ իւր պայմանի,
Որ Աստուծոյ միայն յայտնի՝
Եւ յապագայսն դասեսցի,
Ընդ որդիս լուսոյ առագաստի՝
Ընդ որս և ինձ մասն եղիցի,
Անդատապարտ կալ առաջի,
Աստուածային նորա բեմին*՝

բ

Ստացող՝ Աւետիք Իովանէ

Այս տետրս տէր Ստեփանոսի և տէր Աւետիքի է՝ Որք զկնի պատահիք, յիշեցէք բարի ի յիշատակս զիս, զնուաստ Աւետիք Իովանէ անարժան նպիտակորս Սիւնեաց և զհաւրեղբայրն իմ զՏէր Ստեփանոս**:

---

* Բարղամյանը գրում է, որ մագաղաթյա այս ձեռագիրը ոսկով, լաջվարդով և այլ ընտիր գույներով ճարտարորեն նկարազարդված է, ծաղկած է յուրաքանչյուր էջը։ Սակայն հետագա մի գրիչ տողերի արանքում սև թանաքով խորհրդատետրի պարունակությունն է գրել և խաթարել ձեռագիրը։ Իսկ հիշատակարանի մյուս էջում նկարված է եղել ձեռնադրության տեսարան, մի կանգնած եպիսկոպոսի պատկերով, որի վերևում գրված են եղել «Տիրացու եպիսկոպոսն է» բառերը։

** Հետագա ստացողի հիշատակագրությունն է այս գրված շուրջ 1300-ական թվականներին։ Ձեռագիրը ավելի վազ է գրվել։

693

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 2817

Գրիչ՝ Ստեփաննոս
Վայր՝ Կարին

Փառք ամենասուրբ Երրորդութեան, որ սկիզբն է և կատարած ամենայնի և յամենայնի աւրհնեալն յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Արդ, գրեցաւ գանձարանս այս փարթամացուցիչ հոգւոց և մարմնոց սովաւ.
Տ. 200բ *վարժելոց, ի թուականիս Հայոց ՉԽԹ (1300),‖ի քաղաքիս Կա[ր]նոյ, որ կոչի Թեոդապալիս, ընդ հովանեաւ Սրբոյն [Ս]արգ[սի], Սրբոյն Սահա[կայ] և Սուրբ Աստուածածնիս, ի թագաւորութեան արևելեան աթոռոյն Խազան խանին, բա[րե]պաշտ և խնամարկու ազգիս քրիստոնէից, որ և ի ժամանակիս յայսմիկ զխրոխտանալ և զբորբոքումն ազգաց իսմայէլակա[նա]ց շիջոց, տաճիկ անուանելով, և յարաժամ մտանէր ի դիւաբնակն, որ կոչի մզկիթ, այլ զսէրն և զգութն ունի առ ազգս քրիստոնէից, և ժողովեալ անթիւ բազմութ[իւնս], գնացեալ յաշխարհն Հրեաստան և առել բազում քաղաքաց և խաղաղութեամբ դարձեալ յարևելս։*

Իսկ յայսմ ամի վերստին ժողովեալ զզաւրս [ի]ւր և դիմեալ կամելով յաշխարհն Եգիպտոսի, եթէ Տէր կամեսցի, որոյ Տէր Աստուած շնորհեսցէ նմա երկայն ժամանակ։ Ու ի հայրապետութեան տեառն Գր[իգ]որիսի, և՛ի թագ[աւ]որութեան Հայոց Հե[թ]մոյ, [զի] վասն բազում բա[բու]թեան Միայնակեաց անուանեն, որոյ Տէր Աստուած շնորհեսցէ զնոսայ եկեղեցոյ իւրում սրբոյ ընդ երկայն ուսուա ուղիղ վե-
201ա *րակացութեամբ,‖և մերոյ սրբասնեալ տէր Բաւրսղի։*

Գրեցաւ տառս աստուածապատում եղեմաբու[խ] ք[առա[վ]տակ հոսմամ[բ չ]որք‖ումն, քառանկիւն, քառանիւթ, եւ[ս] տի[եզե]բաբողբոջ հովիտսն, խո[ն]արհատեսակ, և շուշանափայլ, քրքմա[զա]րդեալ անուշահոտութեամբ կենաւք ի կեանսն, ձեռամբ Ստեփաննոսի յոյժ [մե]ղուցեալ և անարհեստ գծողի և անարժան ի կարգս կոչեցելոյ, ի նեղ ժամանակի, զի սաստկացաւ հարկապահանջութիւն ի վերա երկրիս, և եղև սովս սաստիկ, ընդ ամենայն /// արարչին /// ի վերայ մեր ի ///; պատուհա[ս] /// ոց կոր ///։ Արդ աւրհնեալ է փառք Տեառն ի տեղւոջ սրբութեան իւրոյ։

Արդ, ստացաւ զսուրբ տառս աստուածապատում պատուական ծերունին Յոհաննէ և տիկին Սոգիկէ՝ յարդար վաստակոց իւրեանց, զաւակ ի Սիրովն լինել և ընդանի յՕրուսաղէմն վերինն, յիշատակ իւրեանց և
301բ *ծնաւղաց իւրեանց և զաւակացն, կենդանեաց և հանգուցելոցն՝ Հեռիփ[տիկեայ և Վարդեաիկեայ, Բալեաւիճ /// Ներսեսիճ /// Հաճկաճճ, Մայր[տիկեայ, և Լուսյստիկեայ, Մարգրիտիճ, և Վարդկաճճ, Պալճաւիճ, և Սթլկաճճ, Խրճնորոսկէ, Նորոգիսիճ, և Աւետիկեա, Տաճատ[իկ]եայ, Տուճգերոյճ, և Շատարևիճ, Աւջկուճ, Մարեմտիկեայ։*

Քրիստոս Աստուած բարեխաւսութեամբ սրբոցս աւետարանչացս Մաթէոսի, Մարկոսի, Ղուկասու, Յոհաննու [ող]որմայ ամենայն հաւա-[տա]ցելոց՝ կենդանեաց և [հ]նգուցելոց, և որ աստ [վեր]ադրեցաք, գրեսցէ զն[ոսա] ի գիր կենդանութեան, ամէն։ Արդ, աղաչեմ զամենեսեան, ո՛վ պատուական քահանայք և հռետոր գծագիրք, յորժամ կարդայք կամ գաղափարէք, յիշեսջիք ի մշտապաշտաւն յաղաւթս ձեր ղեբախտաւորք սորա, և զիս զբազմամեղ ծրողս ղՍտեփաննոս, և զձեզ Տէր յիշեսցէ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։*

694

ՄԱՆՐՈՒԱՄՈՒՆՔ

Երևան 4320

Գրիչ՝ **Մաթէոս**
Վայր՝ **Սուրբ Գէորգա գիւղ**

Փառք համապատիւ Սուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտեանից, ամէն։

200բ *Աստանաւր եղև կատարումն Տետրակիս ի գաւառիս Եկեղեցի, գեղս որ կոչի Սուրբ Գէորգ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, ձեռամբ մեղապարտ քահանաի Մաթէոսի, ի խնդրո պատուական քահանայի ///*** *Արդ, գրեցաւ սա ի թագաւորութիւն Հեթմոյ, զոր Միակեց կոչեն, ի հայրապետութիւնն տեառն Գրիգորի, ի թիւս Ձխթ (1300), զոր յա[յ]սմ ամի եղև սով սաստիկ ընդ ամենայն աշխարհս, և առաւ Դամասկոս ի*

201ա *խազան խանաւն։ Արդ, աղաչեմ զընթերցողսդ չլինել մեզ‖ադիր խոշորութեան և սղալանաց գրոյս, այլ յիշել զմեղուցեալ գծողս յաղաւթսս ձեր, և որ զմեզ յիշէ բարոյ բանիւ, և ինք յիշեսցի յողորմած բարերար Փրկչէն, ամէն***։*

---

* Ձեռագիրը խիստ քայքայված է և մաշված։

** Անունը քերված է։

*** Այս ձեռագրի նկարագրությանը հանդիպում ենք Գ. Շիրմաղանյանի Ձեռագրերի ցուցակում (Մատենադարան, արխիվ, կաթող. դիվան, թղթ. 228, վավ. 17)։ Ձեռագիրը կոչվում է «ծածամագիրք և Տաղարան», իսկ հիշատակարանը վերաշարադրված է այսպես. «...ի Մխիթար բահանայէ, ի ՁխԹ (1300) թուին, ի գաւառին Եկեղեաց, ի գեղն որ կոչի Սուրբ Գէորգ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի, ի թագաւորութեան Հեթմոյ. որ Միակեց կոչի, ի Հայրապետութեան Տեառն Գրիգորի։ Յայսմ ամի եղև սով սաստիկ ընդ ամենայն աշխարհիս, և առաւ Դամասկոս ի խազան խանէնց։ Տվյալները նույնն են, նույնիսկ հետագա հիշատակարանները նույնն են՝ 1632 թվից։ Տարբերությունը միայն Մխիթար և Մաթէոս գրիչների մեջ է։ Կամ Մխիթարը ստացողն է, որի անունն այժմ քերված է, կամ պարզապես Մաթէոսի անվան փոխարեն Մխիթար են գրել։

695

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 9645

Մարտիրոսյան, Յուցակ Մշո, էջ 100

Գրիչ՝ Յակոբ
Վայր՝ Վարագ

ա

201ա Փառք փառաւորեալ, միաբուն, համակերտող, մշտաշարժ և անշարժ, յաւէտախաղաց և բիւրաճաճանչ լուսոյ Սուրբ Երրորդութեանն այժրմ, և անդր քան զկա, կայանի մտաց պայմանի, անմարմնոց և երկրականաց յաւիտենից յասիտեանս, ամէն։

Յամի Չ-երորդի Խ-երորդի, Թ-երորդի թուաբերութեան Հայկազնեանս սեռի (1300), գրեցաւ սուրբ Աւետարանս ի Վերին մենաստանին, ընդ հովանեաւ հոյակապ և գերահռչակ, տիեզերալոյս և աստուածծունակ Սուրբ Նշանիս Վարագայ, յառաջնորդութեան տեառն Պետրոսի գերապատուելոյ եպիսկոպոսի և երկրորդ վերակացուի՝ յոգնահանճար կրաւնաւորի Կարապետի: Եւ արդ, աղաչեմ զընթերցողսդ և զհանդիպողդ այսմ աստուածային մատենի, յիշել յարժանաւոր յաղաւթս ձեր զստաղաւղ սուրբ Աւետարանիս և զծնողսն իւր, և զամենայն ազգայինս, զՍահակն և զՇնորհոր և զայլ մասնաւոր աւգնողքն ի գին սորա։ Ընդ նմին և զտառագծող սորա, զծնաւղս իւր և եղբարս, և զՅովանէս կրաւնաւոր, որ զքարտս կոկեաց, և զտնտես Յոհաննէս, զՅակոբ և զՄխիթար միակեցունք, եւ Աստուած չիշողացդ և չիշելոցս ողորմեսցի, ամէն։

201բ Արդ, աւարտեցաւ սուրբ Աւետարանս յայսմ ամի, յորում չաղթող և մեծն ի թագաւորս չազգէն Նետողաց Ղազան ղան, որդի Արղունի, որդոյ Աբաղի, որդոյ Հուլաւունի բարէպաշտի, որդոյ Չնգզգ ղանի, յորում փի՛ռ տարածեաց մակագաւիթ կանոնաւ չարևելեան կողմանց և ի լերանց հիւսիսոյ, խրոխտ և բուռն զաւրութեամբ, խիստ և հատու հակառակութեամբ՝ խաղացեալ անթիւ բազմութեամբ, անհամար քաջամարտիկ սպառազէն արի մարդկամբ, յոքնահանճար իմաստութեամբ՝ էշ յերկիրն հարաւոյ Եգիպտացոց, ներքոյ գետոյս մեծի Եփրատայ մինչև ցծովն արևմտից, ի վերայ զարմին Իսմայէլի գարշելի մոլեկանին Մահմետի, և առ յաւարի զբազում քաղաքս և զամուր աւանս բերդից, և և արար արեա[ն] ճապախիքս անթիւ անգելոց դիդապաստ ի դաշտի ոսկերաց պղծոց զազրագործ անաւրինելոց, յորում եղև խնդութեան աւետիք հանրական եկեղեցեաց համաւրէն քրիստոնէից, և սուգ անվերանալի ազգին Մահմետի, յորում վայ և եղուկ կարդան զանձինս և ղորդիս իւրեանց։

Եւ արդ, յայսմ անդորութեան միջոցի, որում ընդոտնեցան թշնամիք եկեղեցւոյ, ձեռն ի գործ արկեալ ամենապիղծ* քահանային տէր Յակոբին, որ առ հասարակ գան ի տունն յայս... աղօթս մատուցանեն Աստու-

* Էջը վերջանում է ամենապ կիսատ բառով։ Հաջորդ թերթը չկա։ Լրացնում ենք Ն. Մարտիրոսյանի, Մուշ քաղաքի և չրջակայքի հայերեն ձեռագրերի ցուցակից, ուր անցած դարում գտնվել է ձեռագիրը (էջ 100)։

ծոյ ի սուրբ յաթոռոյն ի Սուրբ Խաչէն Աղթամարա եւ ի սուրբ աջերոյն եւ աւրհնութիւն ի տեառն Ստեփաննոս կաթողիկոսին եւ յիւր սուրբ աջերոյն եւ յամենայն սրբոց։

բ

62ա Ջստացող սուրբ Աւետարանիս* և ծնողսն իւր, և զՅովաննէս կրաւնաւոր, որ զքարտս կոկեաց յիշեայ Քրիստոս Աստուած ողորմութեամբ քո, և թող զյանցանս ամենեցուն, ղկարդացողացն և զլսողացն, ամէն, եւ քեղ փառք ընդ Հաւր և Սուրբ Հոգոյդ այժմ և միշտ, և յաւիտեան։

Ի թվին ՉԽԹ (1300) գրեցաւ։

գ

97ա Փառք Սուրբ Երրորդութեանն յամենայն արարածոց իւրոց այժմ և յաւիտեան։ Ջստացող սուրբ Աւետարանիս, և ղծնողս իւր, և զեղբարս, և զՅովաննէս կրաւնաւոր, որ զքարտս կոկեաց յիշեայ Քրիստոս Աստուած քո ողորմութեամբդ, և որ կարդան և զմեզ յիշէն բարէմտութեամբ, եւ քեղ փառք յաւիտեանս, ամէն։

դ

97բ Ջստացող սուրբ Աւետարանիս զԽաչիկ քահանայ և զծնողսն իւր և զամենայն ազդայինսն իւր յիշեսջիք ի Քրիստոս աղաչեմ, և Աստուած զյիշողսդ յիշէ, ամէն, եղիցի, եղիցի։

696

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՅ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՅ

Երևան 6558

Գրիչ՝ Վարդան Կիլիկեցի
Վայր՝ Գլաձոր

ա

349բ Ջստացաւղ աստուածային գանձիս զեսայի վարժապետ յիշեշիք յաղաւթս և Աստուած զձեզ։

բ

416 Ջամպս գերագոյն հրաշիւք լուսատու ցաւղ զվարժապետս իմ եսայի ստացաւղ աստուածային իմաստիս, ո՛վ ընթերցաւղք, յիշեցէք յաղաւթս ձեր, և զվարդան նուաստ գրիչ և Աստուած զձեզ յիշէ, ամէն։

գ

509ա Ջաստուածիմաստ և զտիեզերալոյս սուրբ [րա]բունապետն եսայի՝ զստացող զաստուածաշունչ մատենիս, և զծնողսն իւր յիշել աղաչեմ ի Տէր, ո՛վ բարէմիտ ընթերցողք։

* Անվան տեղը բաց է թողնված։

դ

583դ Ո՛վ Տէր իմ Յիսուս, աղաչեմ ղընկղմեալս վերածել ընդ վերադրեալ ոգոյս*։

697

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆՆ ՆՁԵԿԻԷԼԻ

երևան 5906

Գրիչ՝ Գրիգոր

ա

203ա Յամի Չ-երորդի Խ-երորդի Ը-երորդի (1300) Թուականի Հայոց։ Չմեղապարտ Գրիգորի յիշեսչիք ի Քրիստոս։

բ

Երկրորդ գրիչ

411բ Չարժանա[ւոր և ղ]արդիւնակատար վարդա[պե]տն ներսէս յիշել յողորմութիւնն Աստուծոյ, ո՛վ պատուականք, որք հանդիպիք այսմ տառի, ընդ սմին և զեղկելի գրիչս, և խոշորութիւն գրոյդ Թողութիւն, և ձեզ յիշողացդ և մեզ աշխատողացս բարի վարձս, և ննշեցե<ցե>լոցն հանգիստ և ողորմութիւն Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեան, ամէն։

698

ԱԻԵՏԱՐԱՆ

երևան 5476 (1296 թ.)

Մաղկող՝ Չաքար
Վայր՝ Տփխեց

126ա Չաքարիա նկարիչ սուտանուն քահանա Տփխեց յիշեայ աղաչեմ վասն Աստուծոյ։ Ի թվին ՉԽԹ (1300)։ Շտապեցաք ի բազում վշտաց և ի տրտմութեանց, Տէրտէր ավագերից(ու) որդի**։

---

* Ձեռագիրը սկսել է գրել Հովհաննես երզնկացին (Իև պրակ) (էջ 332)։ Այնուհետև շարունակել է Վարդան Կիլիկեցին. Իբ պրակից (333ա-ից) մինչև Իթ պրակի կեսը (էջ 449)։

«Աստից ի վեր Վարդանա Կիլիկեցոյս է գիր», գրված է 333ա էջում։ Տարիներ անց շարունակել և 1302 թ. ավարտել է Մկրտիչ Թեղենացին՝ Թեղենիքում։ Հովհաննեսը և Վարդանն ընդօրինակության աշխատանքն սկսել էին դրանից առաջ, ուստի այս հիշատակարանը դնում ենք 1300-ի թվաշարքում։

** Ձեռագիրը գրվել է Սուրբ-Մարիում և նկարազարդվել չորս տարի անց, նկարների համար թաց թողած տեղերում։

699

ՏԱԻՆԱՅՈՑ

Երուսաղեմ 1946, Պողարյան, ծուցակ Զ, էջ 500

Հեղինակ՝ Գէորգ [Սկեւռացի]

784ա Բազմամեղս Գեորգ, մաշեալ ժամանակի ծնունդ, ՁԽԹ (1300) թուականիս գրեցի զՏաւնացոյցս կանոնական գլխովքս, որ սահմանեն զտաւն ծննդեան եւ զյայտնութեան Տեառն, յորում աւուր և դիպեսցի տաւնել, եւ ըստ նմին եւ ղքառասնաւրեայն նորին։ Իսկ զյիշատակս սըրբոցն՝ զչորեքշաբաթուն ի հինգշաբթի անցուցանել, եւ զուրբաթն ի շաբաթ, զներկայ աւուրն ոչ խափանել, այլ եւ զանցեալ աւուրն ընդ նմին տաւնել. եւ ղքառասնորդաց պահոցն՝ զհինգ աւուրց տաւան՝ ի շաբաթ եւ ի կիւրակէ տաւնել։

Գիտեմ ղի գոն եւ այլ կանոնական հրամանք՝ որ յաւր կատարմանն հրամայեն զյիշատակ սրբոցն։ Այլ քանզի ոմանք ի պատճառս տաւնիցն՝ զտիրաւանդ եւ զառաքելադիր կանոնս պահոցն լուծանեին, զոր եւ ի մեր աւուրս՝ յայտնի եւ համարձակ տեսաք լուծեալ, ստուգեալ գիտացաք՝ թէ վասն այսր պատճառի հարկեցան հարքն սուրբք, յաւուրցս յայսցանէ՝ յառաջիկայսն փոխել զսրբոց տաւնս։

Վարդապետ այսր հնարից ունելով զԱստուած, որ ի պատճառս հրամանի ուտելոյն ի ծառոց դրախտին՝ եւ յաւելորդն եւս յարձակեալ զյանցաւորն մարդ՝ արտաքս հեռացոյց ի ծառոյն կենաց, զի մի եւ նովաւ եւս չարագոյն գայթագղեսցի. եւս եւ զվասն ուտելոյն զընդ մահուամբ գրաւեալն մարդ՝ թեպէտ եւ այսպէս կարող էր պահել զնա անդէն կենդանի, սակայն այլ ազգ հնարեցաւ զանմահանալ նորին Աստուծոյ մարդանալով եւ մեռանելով։

Այսպէս եւ հարքն սուրբք, վասն վերասացեալ լուծմանն, զտաւնս վկայիցն ի պահոցն աւուրց՝ յարձակ աւուրսն փոխեցին, ոչ հեռի, այլ միով աւուրբ, եւ յաղուհացսն՝ հնգիւք եւ ի խոնարհ։ Զի զաւուրս պահոցն՝ սգոյ եւ տրտմութեան հոգասցուք, խոկալով, զի ի հանդիսէ քաջութեան սրբոցն՝ մեղկութեամբ վերջացեալքս՝ մանաւանդ պէտս ունիմք՝ գոնէ յաւուրս յայսոսիկ՝ զհին եւ զնոր մեղուցեալս եւ արտաքուաք քաւեալս՝ աւրինակս զղջման յիշել, զԴաւիթ, զՄանասէ, զպողնիկոն, զմաքսաւորն, զանառակն, եւ զաւազակն. զի եւ ի մերն թախծել սգով, տաւն ուրախութեան լիցի սրբոց եւ հրեշտակաց, եւ այնպէս սգովն քաւեալք՝ եկեսցուք ի տաւնելն։

Զսոյն եւ ի հնումն Աստուած կամեցաւ առ Մովսէսի, զի որոց վասն անսուրբ գոլոյ յոգի մարդոյ՝ ոչ կարեին առնել զղատիկն յառաջնում ամսեանն, հրամայեաց զի զգուշացեալք, եւ սրբեալք արասցեն յերկրորդն։

Նա եւ ի սմին իսկ Տաւնացուցի, վասն պատճառի իրիք՝ սրբոց ոմանց յիշատակքն ի կատարմանն աւրէ՝ յայլ աւուրս փոխեցան։

Ի հին Տաւնացոյցն՝ խառնեալ է զհոռոմ եւ զհայ ամսոցն տաւնսն, եւ զովելի է. այլ աստ՝ վասն յատուկ լինելոյ զանցնիւրսն, ուրոյն ուրոյն եդի. եւ վասն այսր հարկի՝ եւ զխառնախորանս ամսոցդ առընթեր, զի զխառնուրդս տաւնիցն ամսովքն ծանեայց, եւս եւ վասն այլ պիտոյից որ ի գոսին կրի. որ կամիցի՝ կալցի, եւ որ ոչ՝ խառնեալն կազմէ։*

700

ՃԱՌԸՆՏԻՐ

Ներուսաղեմ 368, Պողարյան, Ցուցակ, Բ, էջ 276—277

Գրիչ՝ Սահեփանոս Գոյնեբերիցանց

ա

Փառք ամենասուրբ Երրորդութեան յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ես մեղաւոր հողս Սահեփանոս ցանկացայ աստուածաշունչ գրոց ստանալ՝ եւ կատարեաց Աստուած զփափաքն իմ, եւ գրեցի որպէս հանդիպեցաւ, երեք գիրք ի տուփ մի, եւ այլ շատ, եւ այլ սակաւ, եւ հանդիպեցաւ այս գիրքս վերշոյ բան զամենայնսն։ Եւ զի էի ես կարի յոյժ տկարացեալ յաչաց, եւ տագնապ մեծ ի մահմետականացն, եւ էր գիրքս յոյժ նուրբ՝ կամեցայ ի նոր պատմութեանցս զայսչափ ի հետ գրել. կէս գրոցս հին պատմութիւն, եւ կէս գրոցս նոր։ Աղաչեմ ներել սղալանացս եւ խոշոր ձաբռտանացս, զի յոյժ վշտաւք եւ տառապանաւք գրեցի։ Աղաչեմ ներել եւ թողութիւն խնդրել յանցանաց իմոց ի Քրիստոսէ և ինք ձեզ թողցէ։

Գրեցաւ ի թուի[սի] ՉԽԹ (1300), ի դառն ժամանակիս, քանզի վկամպռունին քաղաքն եւ զայլ շրջաբնակս այրեցին մահմետականքն, եւ մեք մազապուրծ հազիւ հազ կարացաք զերծանել՝ Աստուծոյ աւգնութեամբն, եւ այժմ կամ յերերման եւ ի սասանման, զոր Տէր Յիսուս եւ։ արասցէ բարեխաւսութեամբ սուրբ վկայիցն իւրոց, զի վասն ծովացեալ մեղացն իմոց այս ամենայն գործեցաւ։ Թողութիւն արարէք, եւ Աստուած ձեզ, ամէն։

բ

Աղաչեմ զհանդիպաւղսդ, զի ողորմութիւն խնդրէք ի Քրիստոսէ մեղաւոր գծողիս՝ բարեխաւսութեամբ սրբոց հայրապետացն Գրիգորի եւ Ներսիսի, որ եւ դուք հանդիպեսջիք ողորմութեան։ Ցանկացայ պատմութեանցս ստանալոյ, եւ եմ տկարացեալ յոյժ ի լուսոյ, եւ ահ մահմետա-

---

* 754ա էջում գրչից պահպանվել է հետևյալ հիշատակագրությունը. «Ով սուրբ եղբարք, որ պատահէք սուրբ այս մատ[ե]նիս, գիտացէք զի յերշանիկ վարգ. Գեորգեա ձեռամբ գրելոցն վոխեցի զսա ոչ աւելի եւ ոչ պակաս։ Ծորժամ տեսանէք չրչեալ կամ փոխեալ ինչ բան, մի կարծէք քեւր եւ կամ անձնահաճութիւնս. զի նա ի մեծէն Խոսրովայ աւրինակէն այսպէս կարգեաց զսա։ Եւ յաւարտիլն զմեղաւոր գրողս Յոճանէս յիշեցէք ի թողութիւն անեզր եւ անծայր իմ մեղացն, եւ Տէր Յիսուս Քրիստոս զձերն թողու, ամէն»։

կանացն յոյժ տագնապէ զմեզ, վասն որոյ առաւել ցնցըղտեցի, աղաչեմ ներել մեզ՝ եւ Տէր ձեղ։

Գ

Զբազմամեղ եւ զմացառոտ գծաւղս յիշեսչիք ի Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ, ամէն։

Դ

Զկարաւոս ողորմութեան՝ զանմենամեղ փցուն ձաբղուտաւղս յիշեսչիք ի Քրիստոս, եւ նոյն ինքն զձեզ յիշեսցէ, ամէն։

Ե

Զկարաւոս ողորմութեան զփցուն զրաւղ եւ ստացաւղ տառիս յիշեսչիք ի Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ։

Զ

Զամենամեղ եւ զբազմաթշուառս Ստեփանոս *գրիչ՝ յիշեսչիք ի Տէր, եւ Աստուած զձեզ՝ ամէն։*

701

ՏՕՆԱՅՈՅ

Երուսաղէմ 2505, Պողարյան, Ցուցակ Ը, էջ 182

Ստեփանոս Գոյներիցանց

Եւ նըւաստ գրիչս Ստեփանոս *մականուն* Գոյներիցանց, *ուխ և տասն ամ կացի առ ուոս վարդապետին մեծին* Գէորգեայ Լամբրունացոյ, *և կարի հարուստ լուեալ եմ ի նմանէ, ունիմ և իւր ձեռացն գիր վասն կիրակէս, որ մեր լուսաւորիչն սուրբն յայս կիրակէիս եկեղեցոյ տօն է կարգեալ, Հ. ԳՋ, Այսօր պայծառ, իւր սարաւք. և այս շարականս իւր իսկ արարեալ է, յորժամ եկն Ըոստակէս որդի իւր ի ժողովոյն Նիկիոյ, վասն որոյ և յիշէ՝ կեցոյ զորդի ծառաի քո։*

702

ԽՐԱՏ ՎԱՍՆ ԱՐՈՒԵՍՏ ԴՐՋՈՒԹԵԱՆ ԳԷՈՐԳԵԱՅ ՍԿԵՒՌԱՅՈՅ

Երևան 2371

Հեղինակ՝ Գէորգ Սկեւռացի

132բ *Անպարապ անձամբ ձեռնարկեցի գրել զսա այրս թշուառ և ծաղկաքաղ արարեալ զմասն ինչ ի դրելոցն յԱռիսաակիսէ հռետոր գրչէ, եղի աստ է՛ ինչ՝ զոր լուծեալ ի նմանէ, և է՛ ինչ եղելոցս աստ տակասին տարակուսիւ փակեալ։ Իսկ ի ծանաւթ և երկարեալ նորայն բանից՝ էր ինչ, յորոյ երկայնութենէն զանց արարի, և էր՝ զոր վասն անհաւաստի գոլոյն թողի, և զերրորդն՝ լռեմ։*

703

ԽՐԱՏ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԳԷՈՐԳԵԱՅ ՍԿԵՒՌԱՅԻՈՅ

Երուսաղէմ 1311, Պողարյան, Ցուցակ Դ, էջ 558

Գրիչ՝ Ստեփանոս Գոյներերիցանց

798 *Խրատ գրչութեան, զոր արարեալ էր զսա յառաջագոյն Գէորդեայ վարդապետին, ի խնդրոյ ումեմն*, զորոյ զպակասն ի սմանէ յետոյ իմ ի վարդապետէն խնդրեալ։ Եւ նա կատարեաց զխնդրուածս իմ, եդեալ յառաջ զՄրբստակիսի արարեալն, եւ զթերին ի նմանէ կատարեաց ինք, ինձ նուաստիս Ստեփանոսի Գոյներերիցանց։ Որոց ողորմեսցի Տէր արարողին եւ խնդրողին։*

704

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

*Երուսաղէմ 369, Պողարյան, Ցուցակ Բ, էջ 278***

Գրիչ՝ Կոստանդին

2 *Պանծալի վարդապետ, զնուաստ աշակերտս ձեր Կոստանդին յի-շ[ե]ա՛ի մաքրափայլ յաղաւթս քո, և խոշորութեան գրոցս անմեղադիր լեր։*

---

* *Այդ գրիչը Կոստանդին գրիչն էր, ինչպես վկայում է Գրիգոր Տաթևացին «Գրիգորի աշակերտի Յովհաննու Որոտնեցւոյ լուծումն համառաւտ ի խրատ գրչութեան Գէորգայ վարդապետի, որ նախ խնդրեալ էր ի նմանէ Կոստանդեայ գրչի և ապա Գոյներերիցանց Ստեփաննոսից» (Մատենադարան, ձեռ. № 2526, էջ 137ա)։*

** *Ն. Պողարյանն այս ձեռագրի կապակցությամբ գրել է. «Տեղը, ժամանակը և գրիչը նշանակած ենք հետևողությամբ նախորդ (№. 368) ձեռագրին, որուն առաջին մասը կկազմեր այս երբեմն» (ծ֊բ. Ն. Պողարյանի)։ Ձեռագրի գրիչը Ստեփանոս Գոյներերիցանցն է, բերված հիշատակագրության գրիչ Կոստանդինը՝ հավանաբար Գոյներերիցանցի աշակերտն է։*

705

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Սրևան 1 (1632—1633 թ.)

Գրիչ՝ Սահփառնոս Գոյներ իրիցու որդի

105ա Միշտ եղէ ես սնավատտակ,
Զէտ խելագար, յիմար մշակ,
Յանեմ ցորեան այլոց յատակ,
եւ ինձ որոմն հրոյ ճարակ։
ՁՏեառն հրամանն սոսկալիք,
Պարտ է ունել զամէնն ի միտ[ք]
Թէ մի դատիք, որ չգատիցիք,
Պօմանս ահեղ քստմնելիք։
Ի իմ գիտելով զայս արհաւիրք,
Կամաւ նիւթեմ ես ինձ չարիք,
Սահփառնոս տարտամ ի գործս սրբութեան,
Գոյներ իրիցու որդի դաժան։
Տատանեալ կամ երերմամբ,
Իբր զԿայէն եղբայրսպան
եւ յաւելի քան զնորայն,
Սպանի զհոգիս իմ յաւիտեան։
Փափաքեմ ես սրբութեան,
Փոխան գործեմ ես անարժան,
Աւաղ հազար-հազար բերան,
Էի նման արեգական։
եւ այժմ ահ եմ աննման,
Նեղ է վայրս գանգտման,
Երկար վայրի ցանկամ
Շատ ճառի և պատմութեան։
Որ եմ մտօք անսրբութեան,
Այլ պղծագործ պոռնկութեան,
Գիրս ստացա վանց վարժման,
Այլ կամք չկալայ ունկնդրութեան։
Ունիմ փափաք ես սրբութեան,
եւ յոյժ ցանկամ համեստութեան,
Յար ի մեղանք կամ ի դողման,
Ի իմ զեղ տոռնած ես շան նման։
Նոյն կամ յօտար հոգոց յանկման,
Մեղքն ամրացաւ յիս բնական,
եւ այլ չգիտեմ այսմ սպեղան,
Քան զաւպաշաւն և զմեղայն։

Եւ վերա երեսացս կամ յանկման,
Հանդիպողացդ յանդիման,
Բարունք, տուք մասն ինձ բարութեան,
Լերուք ընդ իմ առ Տէրն հայցման,
Եւ Տէրն տայ ձեզ փոխարէն
Իւր միւս անգամ սուրբ գալստեան։ Ամէն։

706

ԺՈՂՈՎԱԾՈ

Երևան 2607

Գրիչ՝ Թորոս
Վայր՝ Փերճեր

ա

Յիշատակարան։

Շնորհաւք և առատ գթութեամբ մարդասիրին Աստուծոյ և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ, այն որ վասն կամելոյ զկեանս ամենեցուն ընդարձակեալ աճեցոյց զաւրինակս և զճանապարհս փրկութեան ըստ այլևայլ բարո-
243բ յից հասակաց և արուեստից մարդկան, այլ և այլ ձեւս||և արուեստս փրկականս, բարձրագոյնս և խոնարհագոյն, նրբաշաւիղս և անդորրընթացս, յոլովաջանս և թեթևախոնջս, նախապատիւս և երկրորդականս, զի ըստ կարի կամ յաժարութեան այսմ կամ այլում հետևելով ոք, մի յուսահատ եղեալ ի դժուարութենէն, վերշոտնեալ անհաղորդ մնասցէ փրկական ճանապարհի իմիք, այլ ըստ չափոյ զաւրութեան կամ յաժարութեան ընդ մի կամ ընդ յոլովս ի ճանապարհաց հետևեալ ժամանեսցէ փրկութեան։

Յայս ամենառատ գթութիւնս Աստուծոյ հայեցեալ ես մեղուցեալ ծառայս Աստուծոյ Թորոս սուրկ անուամբ քահանայ ի կրաւնաւորական ձևի, քան զի տեսեալ զիս ի բարձրագոյն առաքինութեանցս շաւղաց կասեցեալ զարտուղի գնացիւք, մանաւանդ յաղթեալ ի ծանրութենէ հողեղէն յարկիս, և ոչ ունելով այլ ինչ տեսակ բարեաց, զմտաւ ածի զի գոնէ այնու աւրինակաւ շահեցայց դոյզն ինչ մասն փրկական զտխմարութեան և զտկարութեան վհատութիւնս ի բաց եղեալ, ձեռնամուխ եղէ ի գրութիւն Մեկնութեան Աղաւթնոյս և Պատարագին, զոր մեկնեալ էին սուրբ հարքն մեր՝ մեծն Խոսրով և տէր Ներսէս, և այլ սուրբ հարքն, մեծաւ աշխատութեամբ գչխաւորեալ յանկ հանի շնորհաւքն Աստուծոյ, ի յիշատակ բարւոյ ինձ և իմոյ ծնողացն ի Քրիստոս գնացելոց, և եղբարց իմոյ և քո*, և զարմից, որոց կենդանեացս և ննջեցելոցն մերոց աղաւթիւք վայելողացդ լիցի ի շնորհացն Աստուծոյ գրիչ ի կենացն Աստուծոյ մատեանսն։ Եւ զայս մեծաւ թախանձանաւք խնդրեմ ի վայե-

* Մինչև այստեղ նույնն է Մատենադարանի № 9292 ձեռագրի հետ, որի գրիչը նույն Թորոսն է, իսկ վայրը՝ Փրճերը, ուստի այստեղ էլ վայրը նույնն ենք նշանակում։

լողացդ ի սոյն զմեզ բարւոյ յիշման արժանի արասցէ, ղի և ինքն յիշեսցի յողորմածէն Աստուծոյ, ամէն։

Կատարեցաւ գիրս ի մեծ թուիս ՉԽԹ (1300), ի բաղմաթշուառ ժամանակի, ի հայրապետութեան տեառն Գրիգորի և ի թագաւորութեանն Հայոց Հեթմոյ, աղաչեմ զամենեսեան՝ յիշեցէք զվերոյգրեալքս և զամենայն հաւատացեալս ի Քրիստոս, և որք յիշէք, յիշեալ լիշիք ի Քրիստոսէ։

Յիշեցէք և զԿոստանդին քահանա, որ յղորդելն աւգնեց ինձ։

Բ

27ա Զհալքն իմ, որ զնիւթս պատրաստեցին, և ղողորմելի գերիս ծնաւ [ղ]աւ[ք]մերովք և զարմիւք յիշեցէք, և Աստուած զձեզ յիշէ։

Գ

35բ Զմամբքն իմ և ղողորմելի գերիս՝ ծնողաւք մերովք և զարմիւք յիշեցէք ի բարին Քրիստոս և Աստուած զձեզ յիշէ։

Դ

73ա Զսնուցիչն իմ զՀատաւրի և զերկու Վասիլ և ղողորմելի գերիս՝ ծնողաւք մերովք և զարմիւք յիշեցէք ի Քրիստոս, և Աստուած զձեզ յիշէ։

Ե

91բ Զուսուցիչքն իմ զԲարսեղ և զԹորոս, և ղողորմելի գերիս, ծնողաւք մերովք և զարմիւք յիշեցէք ի բարին Քրիստոս...

Զ

127բ Զերկու Վասիլ և զսնուցիչն իմ Հատաւրի կրաւնաւոր և ղողորմելի գերիս Թորոս ծնողաւք մերովք և զարմիւք յիշեցէք ի Քրիստոս։

Է

139բ Զեղբայրն իմ զՆերսէս քահանա, որ այժմ վախճանեցաւ, եւ ղողորմելի գերիս ծնողաւք մերովք, և եղբարբք, և քեռ յիշեցէք ի բարին Քրիստոս և նմա փառք։

Ը

176բ Տէր Յիսուս Քրիստոս Աստուած, գթայ և ողորմութիւն շնորհեա Գէորգեա վարդապետի, որ զՔարոզնիս և զԱղաւթնիս ղորդել է ի Մեկընչէն մեծին Խոսրովա, և ողոր[մեա] գերոյս Թորոսի և ծնողաց և եղբարց և զարմից և այնոցիկ, որ յիշէն զմեզ։

Ը

354բ Զողորմելի գերիս Թորոս և զԹուման և զԿոստանդին, ծնողաւք և

եղբարբք և քեռք և ամենայն զարմիւք յիշեցէք ի Տէր, և Աստուած զձեզ յիշէ։*

ժ

Գրիչ՝ Թովմա

*395բ Զսրբասէր քահանայն զԹորոս ստացաւղ սուրբ տառիս և ըղծնաւղսն իւր, հանդերձ եղբարբն և քերբ յիշեցէք ի բարին, Քրիստոս։ Ընդ նոսին և զանիմաստ գրողս Թուման և ղծնաւղսն իմ աղաչեմ յիշել ի Տեր, և Աստուած ղձեզ յիշէ, և նմա փառք յաւիտեան**։*

707

ԱԻԵՏԱՐԱՆ

Սյուրմեյան, Ցուցակ Հալէպի, Ա, էջ 84

591բ Ձմեղաւոր կազմաւղ սորա զվաստիկ, որ երբեմն սարկաւագ, յիշեսջիք ի Քրիստոս։ ՉԽԹ (1300)։

---

* «Դիրքս վարազայ է. ձեռ վարձք է տուք ղիս ի քաղաքն ու ի զեղանն, որ կարդան, մի արգիլէք» (120ա)։

«Ով եղբայր, երր զմեկնիչն գրես դու ղաղաւթնիս այլ գրէ, որ տեսնուն մէկ ի մէկու աւղտին» (156բ)։

** «Դեղ որ ղգրոցն եղերքն պնդէ. ջրդեղ անցոյ ի վերայ ու յարևն դիր որ ///[չ]որնայ, և ղողորմելիս յիշէ, և Աստուած քեզ յիշէ (301 բ), գրված է էչերի լուսանցքներում։

708

ԱԻԵՏԱՐԱՆ

Վենետիկ 170, Սարդիսյան, 8ուցակ Ա, էջ 714

Ծաղկող՝ Անանիա
Վայր՝ Մելիտինո վանք

*Ես Անանիայ դպիրս, որ ծաղկեցի զսուրբ Աւետարանս, ի դուռն ի Սուրբ Լուսաւորիչն, ի Մելիտինոյ վանքս։ Եւ առաջին ծաղիկս այս էր, որ ուսայ ի վարդապետէն իմոյ՝ տէր Սիմէովնի արհիեպիսկոպոսի այս ուխտիս. [Աղաչեմ] մի մեղադրէք, զի առաջին ուսումս և ծաղիկս այս էր։ Եւ ծաղկագրերն Աւետարանին գրողն հաներ, ես զքովի ծազկնին եմ հանել, ո՛վ եղբարք, զի կարս մեր այս էր**։*

709

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՍԱՒԱՅ ԳԷՈՐԳԵԱՅ ՍԿԵՒՈԱՑԻՈՅ

Երևան 1209

Գրիչ՝ Անդրեաս

ա

218ա *Աւարտեցաւ քրիստոսահիմն մարգարէաշէն այս տառս սուրբ և աստուածային երգարանս ի վաելումն քրիստոսաբնակ և աստուածային գանձուցն վերակացու և ուղղափառ տեսուչին Վարդան վարդապետի, զի Աստուած վաելել տացէ նմա աղօթիւք։*

Նա և զանպիտան ծառայս զԱնդրեաս գրիչ յիշեսջիք ի Տէր և զծնողսըն իմ։

Խոշորութիւն գրիս և սղալութիւն անմեղադիր լերուք, զի շուտ ու աղեկ ոչ լինի, խիստ շտապեցուցին ու ըշտապով մեր կարս այս էր։

բ

218բ *Բազում են նահապետք, այլ ոչ որպէս զԱբրահամ։ Բազում են մարգարէք, [բ]այց ոչ որպէս զՅովաննէս։ Բազում են առաքեալք, այլ ոչ*

---

* *Մի բառ չի կարդացվում, գուցէ՝ «աղաչեմ»։*
** *Զարդագրերը դրչինն են, լուսանցազարդերը՝ Անանիայինը։*

որպէս զՈրդին Որոտման։ Բազում են մարտիրոսք, այլ ոչ որպէս զՍտեփաննոս։ Բազում են հայրապետք, այլ ոչ որպէս զՍուրբ Գրիգորիոս։ Բազում են մեկնիչք և վարդապետք եկեղեցւոյ, բայց ոչ են որպէս զՄեկնիչս զայս, զոր արարել [է զսրբազան և հոգելից հռետորին Գէորգեայ [րա]բունապետին, բազում փութով եւ աշխատութեամբ ժողովեալ ի բարձրագոյն լերանց, ի լայնատարած դաշտաց, ի գոյներանկ մարգաց, ի ծաղկածին հովտաց, ի զանազան երփնայփայլուն ծաղկոցած հաւաքեալ, կուտեալ, բարդեալ, դիզեալ, ամբարեալ, ի փունճ մի կապեալ ի պէտս վարժից և վարժապետաց, անձանց բանականաց, հոգոց աստուածատենչաց, եկեղեցականաց, մանգանց ուսումնասիրաց, որպէս ականակիր վտակ անձանց ծարաւեաց, եւ որպէս կաթն համեղագոյն [ո]րդի ծնեալ մանգանց, եւ որպէս մեղր բերանոյ կատարեալ արանց, և որպէս բաժակ անուշ ըմբողաց։ Վասն որոյ առ անձուկ սիրոյ սորայ, եւ առ փափաք ծաբաւեալ անձինս և անապատացեալ ի բարեաց հոդոյ իմոյ, բան մի չիշատակ ի վերայ գեղեցկութեան եւ անրաւ քաղցրութեան սորայ խաւսեսցուք։

«Աւա՜ղ զայս անուշ գինիս յապակոյս, չարկամս ի միշի»։

Նախ համառաւտ բանիւ։

Անուշ գինի գեղեցիկ են, համեղագոյն և քաղցրահամ եւ անուշահոտ. բանք սորայ՝ առաւել քան զգինի, եւ քան զամենայն պարարտ և զամոքեալ խորտիկս մարմնականս։ Իսկ յապակո՜յս, այսինքն ի սպիտակափայլ քարտէնիս յղկեալ և փայլուն, առաւել քան զապակի։

Իսկ չարկամս ի միշի։

Առաշին չարկամ սկսըզբնաչար բանսարկուն, մայրն ամենայն չարեաց եւ հակասական ամենայն բարեաց եւ առաւել խափանիչ ուսումնասէր մտաւոր ընթերցողաց, որ մայր է ամենայն բարեաց՝ ի տվէ եւ ի գիշերի պարապեալ ընթերցման աստուածային պատվիրանացն ըստ սըր-
219ա բազանիցն բանից, միշտ խոկալ յաւրէն ///

Եւ երկրորդ չարկամ բնութիւնս հեշտասէր եւ խակամետք մեղս, եւ ի քուն թանձրոսթեան։

Եւ երրորդ չարկա[մ բա]զմայդիմի հոգք է, փորձանք կենցաղոյս, եւ առաւել պատրանք մեծոսթեան, զոր Տէրն փուշ անվանեաց։ Եւ դարձեալ ծուլութիւն եւ հեղգութիւն, զոր վատոսթիւն անվանէ Սողոմոն, ասելով, Մինչև յերբ անգեալ դնիս յորս այս, ով վատ։ Կեմ երբ ի քնոյ այտ ի ղարթիցես։

Վասն որոյ աղաչեմ մի ոք ի պարզամտաց անգոսնեսցէ [զմ]եզ վասն այլատարազ եւ գեղջուկ բնաբանիս, զի [որպէս խ]աւսեր Պաւղոս զիւր քարոզութիւն կաթն անվանէ ասելով Իբրեւ տղաց ի Քրիստոս կաթն ջամբեցի ձեզ։ Եւ Պետրոս յընթհանրական մատենին ասէ. Խաւսուն եւ անխարդախ կաթինն փափակիցէք։ Եւ Տէրն Պետրոսի զերանաւետ վարդապետութիւնն երբեմն ջուր անվանէ եւ երբեմն գին[ի]։ Ջուր՝ յորժամ ասէ. Եթէ ոք ծարաւիցէ, եկեսցէ առ իս եւ արբցէ։ Եւ գինի՝ յորժամ ասէ. Ոչ արկանէն գին[ի] նոր ի տիկս հինս։

Եւ դարձեալ վասն չարչարանացն, զոր բաժակ անվանէ, ասելով առ որդիսն Որոման. զԲաժակն զոր ես ըմբելոց եմ, կարող էք ըմբել։ Եւ զամենայն սիրելիս հրաւիրէ յարբոմն այնմ բաժակի։ Զոր եւ ի սոյն միտս Սողոմոն գ[ր]է, ասելով Իմաստութիւն շինեաց իւր տուն, եւ խառնեաց զգինին եւ պատրաստեաց զսեղան իւր, եւ կոչեաց բարձր ձայնիւ. Ցարբո մեզ՝ ծառայս իւր ասելով Արբէք եւ արբեցարուք եղբարք որդիք իմ։

Զսոյն եւ Պաւղոս պարծի արբեցութեամբ այսմ բաժակի. Ով հանապազ զմահն Յիսուսի ի մարմինս մեր կրեսցուք, եւ աշխար[հս] ի[նձ] ի խաչ ելեալ է, եւ ես աշխարհի։ Զսոյն եւ Դաւիթ պարծի ասելով, Վասն քո մեռանիմք հանապազ։

Ի սոյն միտս եւ Պղատոնիոս գրէ. Իմաստասիրութիւն խոկումն մահու։

Համառաւտ ծանուցի վասն սիրոյ սորին, սակայն յայտնի է սպասաւորացն բանի, որպէս արեգակնն ի մէջ աստեղաց զաւրութիւն բանիս, եւ քեզ, ո՛վ հարազատ իմ, րաբունիտ Վարդան, յոյժ գիտելի, որպէս աւդոյ որ կրեց ինքն զղաւրութիւն ամենայն լուսատրաց երկնից, որպէս եւ դուք արբեալք եւ զմայլեալք աստուածային շնորհիւն ի ձեռն եղեմաբուխ վտակին Եփրատայ, այսինքն կայծակնամաքուր հռետորին և կատարեալ պետիկոսին, ձերային սրբազան վարժապետին, տհնչալոյն [հր]շտակաց եւ մարդկան, եւ պ[ա]ծ[ան]ք ամենայն վարդապետաց [եկեղեց-
219բ ւո՞յ], գերափ[այլ] րաբունապետին Գէորգայ, զինչ խաւսեաց[ու]ք [ար]ժանի անձինն սիրեցելոց ի Տեառն է, որ ի խաւարեալ ժամանակիս յայսմիկ, նայ միայն բաց ունելով զու[ն]կն Հոգոյն, լուաւ զերանաւետ բարբառ փեսային Քրիստոսի, որ միշտ գոչէ բարձր ձայնիւ անապական հարսին եկեղեցոյ իւրոյ ասելով. Որ զիս պ[ահ]եսցէ՝ զկնի իմ եկեսցէ ի չարչարանս, ի վիշտս, ի նեղութիւնս, յ[աշ]խատութիւնս, յարտասուս եւ յերկս քրտանց, զոր նախ ինքն արգա[րեւ] ուսոյց իւրոցն սիրոզաց, վասն որոյ նա լվաւ Աստուած եւ ի վերայ ու[ո]ոյն բարձեալ զխաչ չարչարանացն, միամտաբար զհետ Քրիստոսի ընթացաւ, որով զանկապտելին եգիտ զգանձն, պահեալ նմա յերկինս, եւ զկենցաղականս ամենայն վաճառեալ, զանգին ստացաւ մարգարիտ՝ զՔրիստոս ընդ նեղ և ընդ անձուկ շա[ւ]իղ արքայութեանն ճանապարհորդելով վայելէ ա[յ]ժմ ի գերաշխարհիկ կեանսն։

Քանզի զտվեալն նմայ յԱստուծոյ շնորհեացն տաղանդ, առատապէս բաշխելով բազմացոյց, որով զերանաւետն լսել ձայնն. Ազնիւ ծառայ, բարի և հաւատարիմ, [մ]ուտ յուրախութիւն Տեառն քո, այլ եւ գերակատար առաքինութեամբ հ[աւա]տոյ եւ լուսոյ, սիրով աստուածային տարփմամբ հայեցաւ յա[նի]մանալին, այսինքն ի գիտութիւն Հին և Նոր կտակար[ան]ց հոգոց ակամբ, միշտ զվերինսն խորհելով, բարձրացաւ յանճառելինն աստուածատեսակ մաքրութեամբ ամենայնիւ յԱստուած միացեալ, անգիտացեալ զբնութեանս, մարմնական կիրս վճռեցաց [տաղ]տկալի եւ զմեղսաներ[կ] կենցաղս յաւելեալ առ հարս իւր [նախ]նեաց ի կենդանեացն քաղաք՝ առ բաղձալին իւր Յիսուս, ուրախացաւ խանդակաթ սիրով եղբաւրորդոյն, անդրանկանն ամենայն եղ-

բարց, եւոյծ ղկաւշիկս ոտիցն, զի մաքուր [ոտ]ամբ քայլեսցէ ի վերայ երկրին, յորում երեւի Աստուած։

Ոչ եւս հայէլեաւ աւրինակաւ տեսանէ, այլ դէմ յանդիման յանդիպի Տե[առ]ն Աստուծոյ, եւ մաղթէ վասն ամենեցուն փրկութեան, եմուտ ի ներք /// ագութիւն ուր կարայպետն մեր եմուտ Յիսուս եւ զմ /// սիրեաց։ Ի բաց եդ զմաչկեղէն պատմուճանն, զի ո /// իսի պատմուճանի այնոցիկ, որ շրջին ի դրախտ[տի] եւ Տեառն ի սգեստ, զոր մաքրութեամբ վարուց իւրոց է անկն, եւ /// պաւական առաջի Տեառն մահ նորայ, քանզի /// տեցաւ եւ ճնճղուկն թռեաւ անարատ, եւ ան[կեաւ] ի նետից, կորովածիգ ///։

Գ

Գրիչ՝ Սարգիս

77բ Զնուաստ գրիչ ղՍարգիս աղաչեմ յիշել ի Տէր։

710

ԱԽԾՏԱՐԱՆ

Երևան 6288 (1211 թ.)

Միաբանող՝ Առղութայ՝ Մայլիխա որդի

111բ Յանուն Աստուծոյ ես Առխութայ Մայլիխայ որդի մի[ա]բանեցայ սուրբ Աւետարանիս ու տուի զիմ աղչիկս՝ զԷսաև Մուսէս իրիցոյ, ով խափանէ զատի Աստուծոյ։ Ով կարգէք, լի բերանով ասացէք Աստուած ողորմի Մալիխայ, զա[ւ]րութէն պահեսց[է] ի խորին ծերութենն, ամէն։

711

ԱԽԾՏԱՐԱՆ

Երուսաղեմ 155, Սյուրմելյան, Յուցակ, էջ 337

Վերջին ստացող՝ Աւշին

639ա Զվերջին ստացաւղ սուրբ Աւետարանիս, զոր եւ հալալ արդեանց ստացաւ ղսա, Աւշին մարայջախտ Հայոց, աներորդի բարեպաշտ իշխանաց իշխանին Կոստանդեն տեառն Լամբրոնին թագաւորի Հայոց։

Աղաչեմ զմանկունս մաւր մերոյ, արժանի յիշել եւ ողորմութիւն խնդրել, յորժամ ընթեռնոյք։

712

ՇԱՐԱԿՆՈՑ

Ջմմառ 360, Ակինյան, Ոսկյան, Ցուցակ (Ք), էջ 167

Գրիչ՝ Բարսեղ

Փառք ամենասուրբ Երրորդութեանն եւ մի աստուածութեան։ Աղաչեմ յիշել ի Տէր զեղկելի գրիչ Բարսեղ եւ զեղբայրն իմ Մի–[խ]այլ։

713

ՏԵՍՈՒԹԻՒՆ Ի ՄԱՐԴՈՅՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԻՄԱՅԻՈՅ

Երուսաղէմ 1122 (ԺԷ դ.), Պողարյան, Ցուցակ Դ, էջ 187

Գրիչ՝ Բասիլ

Ընդ նոսին եւ ղյետնեալ ի բոլոր բարեաց գործառնութեանց ղսորին գծօղ ղԲասիլ, որ <որ> բազում ամօք ծառայեցի գրոյն, եւ ի հոգին ոչ ժամանեցի։ Աղաչեմ յիշել ի Տէր ո՛, բարեմիտ պատահողք սմին, նա եւ զաշակերտն իմ զԳրիգոր, եւ որ առատն է յամենայնի՝ յիշողացդ եւ յիշեցելոցս ողորմեսցի։ Եւս եւ զծնողսն իմ և զեղբար[ք]սն ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ աղաչեմ յիշել[ի Տէր] ի մաքրափայլ յաղօթս, զի եւ դուք յիշեալ լիցիք յողորմութիւնն Աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

714

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Վիեննա 382, Տաշյան, Ցուցակ, էջ 834

Գրիչ՝ Գէորգ

ա

Որք տաւնախմբէք զաւր յիշատակի զԱստուածամաւրս, զամենաբարի՝ և զքրիստոսասէր Տիկին Աւիծ եւ զծնաւղս իւր յիշեսջիք ի Քրիստոս։ Ընդ նմին եւ զեղկելիս Գէորգ և զծնաւղսն իմ յիշեսջիք ի Քրիստոս, ամէն։

բ

Զստացաւղ աստուածային բանիցս զտամ Աւիծ երանուհի եւ զծնաւղսն իւր եւ զամենայն ազգատոհմ յիշեսջիք ի Քրիստոս, ընդ նմին և զսակաւ աշխատողս Գէորգ աղաչեմ[*]։

[*] Հ. Տաշյանը ստացողին նույնացնում է Կոստանդին արքայահոր կնոջ հետ։

715

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 265

Գրիչ՝ Գէորգ

ա

1ա *Սուրբ Աւետարանս Դաւթի եպիսկոպոսին է, եւ Յակոբայ:*

բ

59ա—60ա Գէորգ:
Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ողորմեա ստացողին, զՅոհաննէս: Յիշէ զՅակոբ և զԴաւիթ աղաչեմ:*

գ

203ա *Խափր վարդապետին է սուրբ Աւետարանս:*

դ

Դաւթի և Յակոբ եղբարւր է սուրբ Աւետարանս:

716

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4823 (1224 թ.)

Գրիչ՝ Գոհար
Վայր՝ Խորանայշատ

ա

318ա *Յանուն ամենակալին Աստուծոյ, ես Վարդան ու Գոհարս զմեր որդիս Յակոբ Ա (1) ամաց, տուարք Խորանայշատոյ Աստուածածնիս յընձայումն ի ձեռն տէր Յոհ[աննիսի] Տվեցի, որ ոք արտաքսեալ չանայ, ինք եյցէ ի կենաց գրոյս:*

բ

Գրիչ՝ Դոյր միակեց

Կամաւ հզաւրին Աստուծոյ ես՝ Դոյր միակեցս վախուցեալ ի մեղաց իմոց, յոյս ունելով ի սուրբ ուխտս Խորանաշատս, ի հալալ արդեանց իմոց միաբանեցայ ի ձեռն տէր Յոհ[աննէսի] Տվեցի: Աղաչեմ ղձեղ որդիք և սպասաւորք սուրբ ուխտիս, յիշեսջիք յաղաւթս ձեր զմեղուցեալ Դոյրս և ասասցջիք Տէր Աստուած բարեխաւսութեամբ Սուրբ Աստվածածնիս ողորմեա և թողութիւն շնորհեայ ամենայն յանցանաց Դոյրին: Եւ որք յիշէք, յ[իշեալ] յեղիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, ամէն:

---

* *Այս և հետագա հիշատակագրությունները գրված են կարմիր թանաքով: Սա կիսախոշոր նեռքևում է գրված, մյուսները՝ լուսանցքներում:*

717

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 8909

Գրիչ՝ Գրիգոր

ա

121ա ՁՊարապանց Սարգիս և զ[Ս]ուրուխթան և զՂամաթն և զՄանուոյ, դեռայբուսիկ զաւակս զԱլլուզ և զԱմիրջաւարն ի յաղաւթս յիշեցէք, և Աստուած զձեզ յիշէ յիւր արքայութիւն, ամէն։

ՁԳրիգոր փցուն գրողս և զՏէրաէր սուտանուն քահան[ան] այն։

122ա Ձհամասփյուռ սուրբ Աւետարանս, որ է տէզերաց փող և յամենայն քրիստոնէից բժիշկ, գնեց Սարգիս, և ետ ի Սուրբ Յովանէսն յաղագս թողութիւն մեղաց և արևշատութիւն որգոց իւրոց։

Արդ, եթ[է] ոք հեռացուցանէ զԱւետարանս ի դրանէ սուրբ եկեղեցուս և շանայ թագուցանել զյիշատակ Սարգիսին և Սուրուխթանին և հանէ, նայ առցէ զվարձք զՈւդայի և զԿայէնին, ամէն։

բ

77բ Բարեխաւսութիւն սուրբ Մարկոս աւետարանչին թողցէ Աստուած զմեղք Պարապմանց Սարգ[ս]ին, զՍուրուխթանին, և զՂամաթին, և բարէպաշտ Մանուոյին, որ բազում փափաքանաւք ըստացան զսուրբ Աւետարանս և յետուն ի Սուրբ Յովանէս Մկրտիչն, որ է ձեռնայդրող Քրիստոսի։

Ո՛վ սուրբ քահանայք, յաղաւթս ձեր յիշեցէք զՊա[ր]ապանց Սարգիս, և զկուսակրաւն քահան[ա]ն զՏէրտէր, և զփցուն գրիչս, զսուտանուն սարկաւագ, և Աստուած զձեզ յիշէ յիւր յարքայութիւն, ամէն։

718

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6935

Գրիչ՝ Գրիգոր

139ա Վասն անբաւ խոնարհութեանդ և անոխակալ մարդասիրութեանդ քո, Քրիստոս Աստուած մեր, ողորմեա գրողի սորա Գրիգորի մեղապարտ քահանայի և ծնաւղաց իւրոց, ամէն։

719

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՁՈՐԵՔՏԱՍԱՆ ԹՂԹՈՑ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ

Երևան 7431

Գրիչ՝ Գրիգորէս
Վայր՝ Սանահին

ա

18բ Աւաղ զեղկելիս, զի եղբայր մի էր իմ սիրելի եւ փոխեցաւ յայսմ աւուրս ի կենցաղոյս և ինձ անմխիթար սուգ եթող։ Աղաչեմ յիշել առաջի անմահ գառինն և Աստուած զձեզ յիշէ, ամէն։

բ

132ա Ձառաջնորդ սուրբ ուխտիս Սանահնիս զՅովհաննէս հեզ եւ մարդասէր եւ արժանի ամենայն աւրհնութեան զստ||ացող սուրբ կտակիս յաղաթս յիշեսջիք, ո՛վ սուրբ ընթերցողք, եւ զախմար գծողս մի մոռանայք աղաչեմ։

գ

144ա Ձմեղուցեալ գծողս յիշեայ ի Քրիստոս, ո՛վ սուրբ ընթերցող, ամէն, Գրիգորէս։

դ

185ա Ձբազմերանեան եւ զերջանիկ հայրս զՅովհաննէս՝ զստացող սուրբ տառիս, յիշեցէք ի Քրիստոս, ընդ նմին եւ զմեղապարտ Գրիգորէս գրիչս, եւ Աստուած զձեզ յիշէ։

ե

195բ ԶՅովհաննէս ստացող տառիս յիշեցէք, ո՛ սուրբ ընթերցողք, մանաւանդ եւ սակս գծողիս հայցեցէք, աղաչեմ։

զ

226ա Սուտ է. ոչ է Պղատովնի բանդ այդ, այլ քերդողի ուրումն։

է

251բ /// զվարդապետս իմ եւ դուստրիկ, որ աւժանդ[ակ]եաց ինձ բազում ինչ և յորդորեաց զիս գիրս յայս, յիշեցէք ի Քրիստոս, ո՛ սուրբ ընթերցողք, ամէն։

ը

278ա Զպատուական եւ զաստուածայմեծար եւ զընտրեալ սուրբ հայր զՅովհաննէս, ստացող սուրբ տառիս յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս, ո՛վ սրբասէր ընթերցողք, ամէն։ Եւ սակս գծողին հայցեցէք զթողութիւն մեղաց, աղաչեմ։

56—457

Բ

189ա Տեսայ համարս սխալ է, բայց բանս ի հետ ղորդ է, վասն այն չփոխի։

ժ

344 [Ո՛վ սուրբ ըն]քերցողք, յիշեցէք զեղկելիս, զի թանաքս սառոյց էր եւ ձեռս քուցումած, վասն Տեառն մի պախարակէք զխոշոր գ[րի]ս։

ժա

349ա Յիշեալ զպատուական ստացող գրոցս եւ կարգեալ զնա ընդ Պաւղոսի եւ ընդ Պետրոսի։

ժբ

359ա Ո՛հ, ո՛հ տոչորիմ ի սառնամանեացս։

ժգ

361ա Քրիստոս յիշեալ զխաչատուր վարդապետ, որ զշիքիրոնս ետ, ամէն։

ժդ

371ա Զպատուական և զաստուածամեծար եւ զընտրեալ սուրբ զհայրս Յովհաննէս զստացող սուրբ մատենիս, յիշեցէք ի Տէր Յիսուս, ո՛վ սուրբ մակունք եկեղեցւոյ, եւ սակս ամենամեղ գրչիս հայցեցէք թողութիւն ի Քրիստոսէ, եւ Աստուած հասարակաց ողորմեսցի յահեղ աւուրն, ամէն։

ժե

466բ Զերիցս երանեալ սուրբ հայրս մեր Յովհաննէս ստացող Առաքելոյ Համառատիս՝ յիշեա Քրիստոս Աստուած, եւ զմեղապարտ գրիչս Գրիգորէս մասնակից արա։

ժզ

475բ Յայսմ վայրի մեծ վտանգ կայր ինձ հոգով և մարմնով, աղաչեմ անմեղադիր լինել խոշոր գծիցս։

ժէ

549ա Զստացող սուրբ Համառատիս առաքելոցն Պաւղոսի զՅովհաննէս հայր յիշեցէք ի Քրիստոս, ո՛վ սրբասէր ընթերցողք, եւ Քրիստոս պարգեւողն ամենայն [հ]այցուածոց կատարեսցէ զխնդրուածս ձեր, [որ]յանուն նորա հայցեսջիք։ Նա և [ա]մենայնիւն եւ ախմար գրիչս Գրիգորէս յերեսս յերկիր անկեալ աղաչեմ, եւ զիս յիշել ի Տէր Յիսուս և չմեղադրել խոշոր գծիս, զի յայսմ ժամանակի քունն և ճանճն նեղէր զիս մահու չափ։

ժը

562բ Զառաջնորդ սուրբ և մեծահռչակ ուխտիս Սանահնեիս զսուրբ հայրս Յովճաննէս ստացող սուրբ Համառաւտիս առաքելոյն Պաւղոսի յիշեցէք ի Քրիստոս, ո՛վ ընթերցողք մանկունք սուրբ եկեղեցւոյ, եւ ինքն Քրիստոս Յիսուս հատուսցէ գիրս առատս յիշողացդ եւ յիշեցելոցս առհասարակ ի միւսանգամ գալստեանն իւրում, ամէն։

Զտառապեալ գրիչս Գրիգորէս յիշեցէք ի Քրիստոս Յիսուս, ո՛վ սուրբ ընթերցողք, աղաչեմ Տէրամբ հանդերձ։

Փառք փրկչի և յիշատակ գրչի։

ժբ

590ա Ո՜հ, ո՜հ, ճանճս եւ լոյս, եւ քունս եհան զիս ի գրելոյս և աւիրեաց, մի մեղադրէք աղաչեմ։

ի

595բ Վարձայհատոյցն ամենացն աշխատելոց հատուսցէ վարձս բարիս սնուցողին զիս եւ ուսուցչին, զի շատ աշխատեցաւ ի վերայ իմ ի սնուցանելն եւ յուսուցանելն, աղաչեմ յիշել ի բարի զսա, եւ զծնողս իւր, և զեղբարս, ամէն։ Մի ոք չնչեսցէ։

իա

620ա Ո՜հ անիծել ճանճ, խորովեցեր, խորովեցեր։

իբ

624ա Որ զքարտեզս կոկեաց վարձս առցէ ի Քրիստոսէ՝ Սարգիս անուն քահանայ՝ Ռ-Ս (1000—2000) տեառեր կոկեաց //// ·/·////:·/:////:*

իգ

637բ Զառաջնորդ սուրբ եւ հռչակաւոր ուխտիս Սանահնեիս զհայրս սուրբ՝ Յովճաննէս՝ ստացող առաքելական սուրբ մատենիս, յիշեցէք ի Քրիստոս Յիսուս, ո՛վ սուրբ ընթերցողք, եւ Տէրն ամենակալ զձեզ յիշէ, ամէն։

Եւ ես տառապեալ գրիչս աղաչեմ մի մոռանալ զիս ի սուրբ յիշմանէդ, ամէն։

իդ

642ա [Յո]ճաննէս եղբայր հոգեւոր եւ պաշտաւնեայ քո՛, յիշեա Քրիստոս Աստուած, եւ զիս մասնաւորեա զկնի հետիոտից նորա, ամէն։

իե

656բ Ո՜հ խորովեաց լոյս, այ վա՜յ, վայ եհան զոգիս։ Բայց ով կարդայ, մինչէ յիշէ զիս, զի տառապեցայ ի գիրս։

* «Սարգիս»։

իզ

663ա Աւա՜ղ զեղկելիս, զի կարի խիստ եմ ձանձրացեալ, եւ ղգիրսմէ շմացուցեալ, աղաչեմ զՏառնէ մի մեղադրել։

720

ՄԱՇՏՈՑ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Մարտիրոսյան, Ցուցակ Մշո Առաքելոց վանքի, էջ 9—10

Գրիչ՝ Գրիգորիս
Վայր՝ Դրազարկ

ա

Ստացաւղ սուրբ Երգարանիս զարբաւէր արհեպիսկոպոսն զտէր Գրիգորիոս, յիշեսջիք աւրհնութեամբ ի Քրիստոս, որդիք Նոր Սիովնի։ Որք երգէք տովաւ ի նոյն տաճարի հասարակաց մաւրցտ հոգեւորի։ Ընդ նմին եւ անարհետ եւ ապիկար գրչիս Գրիգորիսի՝ թողութիւն մեղաց հայցեսջիք։

Եւ գիրքս զայս եպիսկոպոսն տէր Գրիգոր հրեշտակաբնակ ուխտին Դրագրկուն շնորհեաց։

721

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6388

Գրիչ՝ Գրիգորիս

ա

56բ Հոգի Սուրբ, աղբիւր անսպառ լուսոյ, լուսաւորեալ զըհոգի գծողի սորայ և զհաւրն իմոյ Յոհաննիսի, առ քեզ փոխեցելոյ, եւ ողորմեա մեզ ի գալստեան քում, ամէն։

բ

92բ Զանարժան ծառայս քո մի մոռանար, Տէր Աստուած իմ Յիսուս, բարեխաւսութեամբ սրբո Աւետարանիս ողորմեա Գրիգորիսի գրողի տորա և ընդանեաց իմոց ի գալստեան քում, ամէն։

գ

Տէր Աստուած, յորժամ գաս հայրենի փառաւք ի նորոգել զսուրբս քո, յայնմ աւուր ողորմեա Գրիգորիսի և ամուսնու իմո առ քեզ փոխեցելո, եւ արա յարժանի ի ողորմութեան քում, ամէն։

Դ

Ձփոխեցեալս ի մէնջ ի յամսեն յունվարի, որ աւր ժ (10) մի մոռանայք* աղաչեմ։

722

ԱԻՏԱՐԱՆ

Տիրայր վրդ. Ծուցակ Օքսֆորդի, էջ 902—903

Գրիչ

325ա [Ի լե]րինս Տաւրոսի։ Եւ արդ աղաչեմ զամենայն մանկունս Նորածընեալ Նոր Սիով[ն]ի, որք ընթեռնուք զսա եւ կամ լուեալ լուսաւորիք սովաւ, յիշեսջիք ի Քրիստոս [զ]վերասաց[եալ ստ]ացաւղ սորա զտէր Թորոս, որ ստացաւ զսա ի պէտս սրբոյ եկեղեցւոյս, եւ զծնաւղսն իւր, եւ զամենայն ազգատոհմն, եւս առաւել զհաւրեղբայրն, իւր եւ զուսուցիչ եւ զարդիւնարար վանացս զՎարդան քահանա յիշեսջիք աղաւթիւք։ Ընդ նոսին և զիս զանարժան գծողս եւ զծնաւղսն իմ աղաչեմ [յ]իշել ի Տէր, ե[ւ որ]ք յիշէքդ եւ դուք յիշեալ լիշիք ի Քրիստոս, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն*։

723

ԱԻՏԱՐԱՆ

Երևան 7351

Գրիչ

ա

242բ ...Արդ գրեցաւ եղեմարուխս քառատակ աղբեւրս...** և է յիշատակ բարի առ Աստուած Հայրու[պե]տ քահանայի, հոգեսիրի և հաւատարմի, և յետ աստի կենացս առաջնորդ ի յաւթևանս սրբոց հայրապետացն։ Արդ, աղաչեմ զդասս քահանաից, որք ընթեռնուք կամ գաղափար առնուք, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զսրբասէր քահանայն զՀայրապետ և զծնաւղսն իւր զԳոզ և զՍիսխսաթուն, և զկենցաղակից իւր զԽերխաթուն, և զծնողսն իւր զԱխթամար և զՏիրունց։ Նաև զեղբարսն իւր զԳրիգոր կրօնաւոր և զՎարդապետ, զՓոհրտիկին և զԱւագտիկին, և զաւակսն իւրեանց զԽայոց և զԼիբանուն, զԻշխան տիկին, զՍանգուխ***։

Բ

114ա Քրիստոս անճառ Աստուած, քո սուրբ մարդեղութեամբդ ողորմեա աղախնեացն Աղեկտիկնա, և Նորաիկնա, և Ջեանին, և որոց զմեզ յիշեն ի քեզ։

* Գրված է ստորին լուսանցքում։ Գրիչը նկատի ունի հանգուցյալ հորը և կնոջը։

** Այս ձեռագրի գրչության մասին Տիրայր վարդապետը գրել է. «Սկզբից թերթ է պակասում... «Աւետարանիս գրության ժամանակն անհայտ է սակայն պետք է ենթադրել, որ գրված չլիտի լինի ԺԴ գարում. (այո վերաբերում է թղթյա բաժինին), իսկ մագաղաթյա բաժինը շատ ավելի կանուխ ժամանակի գործ՝ ԺԱ դարի վերջերը և կամ ոչ ուշ քան ԺԲ դարասկիզբը»։

*** Թերթը երկարությամբ պատռված է, իսկ հաջորդ թերթը չկա։

724

ՄԱՇՏՈՑ

Ալիշան, «Սիսուան» էջ 74

Գրիչ
Վայր՝ Մլին։

Եւ հաւատացաք թէ յԱստուծոյ է պարգեւ քո այս, զոր հոգին սուրբ տպաւորեաց ի միտս նոցա*, զի այս պակաս էր ի գրոյ, ի զանուն նորա մի պակասացուցանէք ի գրելեացս, զի վարձս առցուք յԱստուծոյ։

725

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, 2532

Գրիչ։

105բ Զստացաւղ գրոյս՝ զՏիրատուրն յիշեսջիք**։

726

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երուսաղէմ 1273, Պողարյան, Ցուցակ Դ, էջ 457—459

Գրիչ

ա

188 Արդ, աղաչեմ զամենեսեան զընթերցողսդ եւ զունկնդիրսդ, յիշեսջիք ի սուրբ եւ ի մաքրափայլ յաղաւթս ձեր, զմեծապարտ իշխանաց իշխողն զպարոն Վասիլ, հանդերձ աստուածապարգեւ զաւակաւք իւրովք։ Այլ եւ զախմար եւ զտառապեալ գրիչս աղաչեմ յիշել աղաւթիւք, և որք յիշէքդ, յիշեսջիք ի Տէր։

բ

65 Ո՛վ եղբայր, աւրինակս կորած էր, մի մեղա[դրեր]։

գ

84 Խոշորութեան եւ սխալանաց գրիս մի մեղադրեր, աւրինակս վատ էր։

---

* Խոսքը վերաբերում է Տարսոնի արքեպիսկոպոս Ստեփանոսին, որ Մաշտոցում ավելացրել է «Նաւօրհնեաց կանոնը։

** 1ա էջում գրված է. «Սանահնու Սուրբ Աստուածածին վանիցն է, ՌՄԽԶ (1797)»։

727

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 7266

Գրիչ

84ա ԶՍիոն ստացող սուրբ Աւետարանիս յիշեսջիք ի Տէր աղաչեմ, ընդ նմին և զամուսին իւր զԳոհ[ար]ը, զի ողորմեսցի սոցա Քրիստոս յաւուրն մեծի և Համառաւտի, և յիշողքդ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, ամէն։

728

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան 8400

Գրիչ

52բ Զհոգևոր եղբայրն մեր զԱմիրշահն՝ զգդակկարն ծնողօք և եղբարբք և զաւակաւք յիշեցէք ի Քրիստոս։

729

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ

Երևան 4954

Գրիչ

40ա Յիշեցէք ի Քրիստոս զհանգուցեալ մայրն իմ զՄեհրասթին և զքոյրն իմ զԱղուան և Աստուած զձեզ յիշէ։

730

ՆԱՐԵԿ

Երևան 5224

Գրիչ

136 Քրիստոս Աստուած ողորմի ստացողի սուրբ գրոյս Դաւիթ քահանայի և ծնողաց իւրոց և ինձ փցուն գրչակիս, և լսողացդ և կարդացողացդ, ամէն և եղիցի։

731

ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

Երևան 5245

Գրիչ

ա

5ա Ո՛վ Տէր, յիշեա զԳրիգոր, Թորոս, և զ///*

* Քերված է տողի մնացած մասը, և մյուս անունները չեն կարդացվում։

Բ

Նկարիչ

64ա *Ո՞վ Հայր սուրբ, յիշեա զնկարողս պատկերաց քոց ի աստուածահաճո աղաւթս քո**։

732

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Վենետիկ 103, Սարգիսյան, Ցուցակ Ա, էջ 811—812

Գրիչ

Որք մեծութիւն գանձուց բաղձան և միտ տենչանաւք նոցին փափաքեն, ոչ ինչ զաշխատութիւն մարմնոյն զմտաւ ածեն կամ զցրումն ընչից. ըստ այսմ գաղափարութեան սրբասնեալ քահանայն Վարդան *ունկրնգիր եղեալ խրատու փրկչին և աշակերտաց նորին, որ յարաժամ խրատեն զամենեսեան, եթէ Ջքարիս գործել մի ձանձրանայք, սա ըղձալի սիրով ստացաւ զսա յարդար վաստակոց իւրոց ի յիշատակ իւր և ծնողաց իւրոց և եղբարց։*

Արդ, որք հանդիպիք այսմ տառիս, յիշեսջիք զվերջին ստացողս Վարդան *և զծնողսն իմ զ*Թորոս, *և զեղբայրն իմ* զԱնդրեաս *և զամենայն ազգայինս իմ, և Աստուած զձեզ յիշէ, և նմա փառք յաւիտեան։*

733

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 6975 (ԺԱ դ.)

Գրիչ

ա

114բ *Քրիստոս Աստուած ի քո յահաւոր և ի սարսափելի գալըստեա*¦նդ *ողոր[մեա]*¦Կրաւնաւորի *և* <և> *ը[ստ] մարմնոյ մաւր իւրոյ տիկին* Նշկա *և ըստ հոգոյ մաւր իւրոյ տիկին* Տովինարի, *և որ յիշէք, յիշեալ լիցիք առաջի անաչառ դատաւորին, յորժամ բարժանէ Քրիստոս զպսակ զանազան սիրողացն։*

Բ

176բ *Քրիստոս Աստուած, ի քո անհրաժեշտ գալըստեանդ ողորմեա* Պետ-կանն *քաղցրատեսիլ քբ[ի]ստոնէի[ն] և ջնջեա զձեռագիր յանցանս իւրոց այս կենսաբեր Աւետարանիս զօրութեամբ* /// *յիշատակ* /// *և եղբաւրս* /// Վարդան:

---

* *Լուսանցքում նկարված է Գրիգոր Նարեկացին և գլխավերևում գրված է «Գրի[գոր] Նարե[կացի]»։ Ձեռագիրը այրվելու հետևանքով այրվել է նկարի և գրության մի մասը։ Հիշատակարանը գրված է ստորին լուսանցքում։*

734

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 987 (1211 թ.)

Գրիչ

ա

68բ *Ստացաւղի սուրբ Աւետարանիս, տեառն Աստուածատրոյ ողորմեայ Քրիստոս Աստուած ի քում գալստեանն։*

բ

127բ *Յիսուս Քրիստոս լոյս հայրական, լուսաւորեայ զհոգիս ստացաւղի սուրբ Աւետարանիս զտէր Աստուածատրոյ և ծնողաց իւրոյ։*

գ

234ա *Ջստացաւղ սուրբ Աւետարանիս զաստուածապատիւ եպիսկոպոսն, զտէր Աստուածատուր աղաչեմ յիշել աղաւթիւք ի Տէր։*

735

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4645

Գրիչ՝ Պափք
Վայր՝ Իշխանի վանք և Թեղենիս

254բ *Աստանաւր իրաւապէս հատուսցուք փառս սկզբան և որ անսկզբան, եռակի եզական և եռափափաք փառաւորեալ սրբոյ անզուգական երրորդութեանն, Նմայ փառք յաւիտեանս, ամէն։*

Յայսմ անծայրածաւալ ծովէս բաժանեալ վտակք աստուածային քառահոլով ընթերակայք յարբուցումն գեղեցկաշէն բուրաստանին ոռոգելով զտեղնեալսն փրթինազարդ ծաղկանց ի կեանսացուցանել զսըրբասիրաց ան[ձ]ինս։

[Հ]բաշխեաս բողբ[ո]ջոց զարդ դրախտին, երանգս առեալ կարմրերփեան և լուսատեսիլ մարգարտափայլ բեղ[մ]նաւորեալ ծիրանակիր թագաւորականաւ զհոլանս երկնի և ծովու, բերելով զտիպ ըստ գարնանային ծաղկաթագ, գունատեսիլ երփներին բերելով զհոտ անուշոսթեան։ Որպէս վարդն յարիւնակ արեամբ նահատակելոցն, և համասպրամն սպիտակա[զ]գեստ զմարգարտի առեալ զնմանութիւն ի զարդ պայծառութեան կուսանացն, զնոյն և երկնագունակ ծովանմանն նարդոս զազգի մրցմունս նահատակութեան զառաքինեացն բերելով զհանդէս, յորս ընդ
255ա *ոլորտս տիեզերաց||ցնդեալ զհոգ անուշահամ յոգիս մտելոցն ի հարսանիքս երկնաւոր փեսային, զինչ և ծիրանակիրն մանուշ[ակ] զթագաւորական զգեցեալ զգոյն՝ բերեալ զարիւնակ երկնաւոր թագաւորին։*

Յորս և ինքն հայրածին բարունակն գիրկս արկեալ համայգումար
երկոտասան առաքելական գնդի ընդ չորս բաժանեալ, յաղագս քարո-
զութեան չորս անգեան աշխարհիս, երիս-երիս քառանգիւնակ զԾրրոր-
դութիւնն եդեալ պահապան, առաքելով զնոսայ երկուս երկուս, վեցեակ
թվով առ ի մերժեալ, զոր ոմն ապականագիր բանսարկուին, ապա եդեալ
դրուակ և մատանի ի վերա այլոց եւ ութեակ թուոցն զՄաթէոս, զՄար-
կոս, զՂուկաս, զՅոհաննէս, որք քառիւք վտակաւք աւժընդակեալ Հոգ-
ւոյն ազդմամբ, հնչեցուցանեն զփողս աստուածաշունչ ի լսելիս համա-
տարր ընթանուր բնաւիս առաքելական բայիւք։

Մաթէոս զմարգեզութեանն ցուցանելով զկերպ, որպէս վարդս բազ-
մաթերթ կարմրագունակ, անուշահոտ, զմարդկան դաժանութիւնս հոլո-
255բ վէ, բերելով ի քիմս անուշ[ա]հոտ զաստուածաին ան[աւր]‖ենութեան
գիտութիւն։

Ապա և համասպր<մ>ամն Մարկոս թողեալ զներաիցս բազմա-
սեռնութիւնս, առիւծաբար յարձակեալ ի վերա դժողին, կորզեալ եհան
զմեզ ի մեղսաթաւալ որջացեալ մեքենաից դառնութեան նորայ լուսե-
րանգ, մարգարտափայլ, սպիտակազգեստ աւազանին, շնորհաւք [զ]ար-
դարեալ խառնեաց զ[մ]եզ երամս աստուածա[զ]գեստ, [:]ուսեղէն
հրակերպիցն։

Ջինչ և երկնագունակ, ծովանմանն նարդոս զՂուկաս առեալ զկերպ
յաղագս հաւատոյն անքաւութեան, որ ի լերինս և ի դաշ[տ]ս առհասա-
րակ միահաղոյն զհոտ իւր ցնդեալ ընդ բնաւս, առ ի լուսաւորեալ զբո-
լորս իւր առակաւս աստուածաին վտակաւքն, որպէս եզն ամոլաց ի տրո-
հելով արաւրաւ Աւետարանին, առ ի խզեալ զփուշ մեղաց և կակղացու-
ցանել բանիւն կենաց զանձինս սրբասիրաց ի յընդունել զլուծ ապաշ-
[խ]արութեան։

Ո՜վ փունջ մանուշակի ծիրանակիր թագաւորականդ Յովհաննէս, որ
զատեալ բաժանեցար ի յոքունց ընկերացդ, ամփոփեալ ի քեզ զթագա-
256ա ւորն երկնաւոր, որպէս արծիւ սրայթեւ բարձրացեալ ի վեր‖քան զերկի-
նըս, զծնունդն հայրական առանձնակիր ընթադրեալ հնչեցուցեր ի լսելիս
համասեռիցս, ծասկելով զվրիպողին դաժանութիւնն, յորս և դու ճողոպ-
րեցար ի մեղսաթաւալ սայթաքմանէ գնացից նորայ, անաղտ պահելով
զկուսութիւն առագաստն, և հրաւիրեցեր զմեզ լինել քեզ ուղղեկից, հա-
սանել առ միածին Որդին Աստուծոյ, առ որ անձկացեալ եմք ունելով
զքեզ բարեխաւս։

255ա Շնորհիւ Տեառն ակսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զչո-
րեքվտակեան տառս աստուածայխումբ մատեանիս, ի լուսաւորութիւն
մանկանց առագաստի Նոր Սիոնի և ի բերկրումն ամենայն հաւատացե-
լոց ի Քրիստոս, ի հերքումն Բելիարայ և ի կանգնումն նոր ուղին Իս-
րաէզի։

Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի հռչակաւոր վանս Իշխանի վանք,
և աւարտեցաւ ի սուրբ յանապատիս Թեղենիս կոչեցեալ, ընդ հովանեաւ
սուրբ և փառաւորեալ Կաթողիկէիս և մաւրս լուսոյ Աստուածածնիս և
կենսակիր նշանացս և այլ ամենայն սրբոցս, ի ժամանակիս խառնիճա-

ղանչ աղդիս Նետողաց, որ և ամենայն երկիր, իբրև զծով խռովեալ և տատանել ի չաղաշ[ու]նչ ոգոց, անխաղաղ և ան[հանգիստ ալե]կոծու[թեամբ]։

256բ *Եւ ով ոք կարե պատմել զաղետս տարակուսանաց, որ ոչ աշխարհ և ոչ քաղաք, և ոչ ագարակ, և ոչ սրբաչկրաւն վանորայք զխաղաղութիւն գտեալ, այլ համակ ի նեղութիւնս և ի խիստ հարկապահանջողաց աւերեալ լիներ աշխարհս, քանզի ոչ գոյր թագաւոր, և ոչ իշխան, և ոչ այցելու, այլ յամենայն կողմանց խռովութիւն և աղմուկ։ Եւ այս ամէն, որ եկն ի վերայ վասն բազում մեղաց մերոց, զոր և բարձի Աստուած զայս անբաւ նեղութիւնս յազգէս մերմէ և խաղաղացուսցէ զսուրբ եկեղ[եց]իքս պայծառ պաշտաւն[եաւք] և ինքն եղիցի աւրհն[եալ] յաւիտեանս, ամէն։*

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք կարդայք կամ լնգաւրինակէք, յիշեցէք յաղաւթս զստացող սորա, և զծնողսն, և զեղբարս, զամենայն Ննջեցեալսն ի Քրիստոս։ Ընդ նոցին և զիս զանարժան եւ զանպիտան զգբողս Դաւիթ, որ ոչ եմ արժանի յիշելո, այլ ողորմածէն յԱստուծոյ խնդրել զթողութիւն բազում մեղաց իմոց և ծնողաց և ազգականաց, և ամենայն, որ ոք յիշեսցիք զմեղ բոլորով սրտիւ և դուք յիշեալ եղիցիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։*

*Այո, աղաչեմ աղաչելով և աղերս մատուցանեմ առաջի ձեր, զբանք սրբոյ Աւետարանիս, և անմեղադիր լինել խոշորութեան և սխալանաց գրոյս, զի այդ էր կարդողութիւն [մեր]///**։*

Բ

27բ *[Վայ] եւ եղուկ զգործս այսաւրի, որ յանկարծ հանդիպեցաք արենտէր, զմանուկ քահանա Սարգիս վայր տարաւ փայտն զանկակին։ Հազար աղաչեմ յիշել ի Քրիստոս զՍարգիս։*

Գ

188ա *Ո՛վ տէր իմ Յիսուս, յիշեա զանարժան անուն Դաւիթ ի քո յարքայութեանդ։*

---

* Անվան տեղը բաց է թողնված։

** Հաշորդ թերթն ընկած է։ Հիշատակարանից երևում է, որ այն գրված պետո է լինի մոնղոլական արշավանքների սկզբներին։ Ձեռագիրը պատկանել է Վեշտոնից Ս. Հակոբ վանքին, մի քանի անգամ փրկվել և վերադարձվել է վանք. «որ ստացեալ է Աւետարանս ի Ղարս, զոր ի վաղուց ժամանակէ դերեցուցած էր զսուրբ Աւետարանս ի Վէշտոնից ի Թաւրէզ։ Եւ անտի բերեալ ի Ղարս և անդ հանգիպեալ որդին մահդասի Արիչնին և ետ ի հալալ ընչից իւրոց և ազատեաց ի յալաթաց գե[ր]ութիւնէն և բերեալ ի Բազէշ առ հայրն։ [Եւ] հայրն [ու]րախացեալ ոչ եթող ծախէ///Վէշտոնից սուրբ...///գնեցաւ և ազատեցաւ սուրբ Աւետարանս///Ռ և ԼՌ (1583)...»։

736

ԹՈՒՂԹՔ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ, ԴԻՐՔ ՅՈԲԱՅ

Երևան 3604

Գրիչ՝ Դաւիթ

ա

151բ Կատարեցաւ Պաւղոս առաքելին գլուխք ԺԴ, ի փառս Աստուծոյ, ձեռամբ Դաւթի գրչիս։ Աղաչեմ ղքեզ, սուրբ առաքել բանին Աստուծոյ, բարեխաւսեա վասն իմ առ միաւծին բանն Աստուծոյ, թողուլ զմեզս իմ և ղայնոց, որ զմեզ ցաւակցաբար յիշեն աղաւթիւք։

բ

250ա Ջստացաւդ սուրբ գրոցս զտէր Գրիգոր յիշեցէք, ո՛վ եղբ[արք]։

գ

292բ ՋԴաւիթ գրիչս աղաչեմ աղաւթիւք յիշել ի Տէր, ո՛վ դասք ուսում-նասիրաց։

737

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4185

Գրիչ՝ Դանիէլ

294բ Փառք քեզ, փառք քեզ /// ահա /// Սուրբ երրորդութիւն, որ ետուր զաւրութիւն /// տկարութեանս իմոյ Դանիէլ։

738

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 4243 (1266 թ.)

Ստացող՝ Ջամարայ

260ա Ջվերստին ստացող սուրբ աստուածաշունչ գրոցս Ջամարայ վար-դապետս և զեղբաւրորդին իմ զՄկրտիչ սարկաւագն և ծնաւղսն իմ և զամենայն արեան մերձաւորսն իմ։ Այլև զեղբարսն իմ զԱվետիս, զԿա-րապետն, զՅովանէսն և զՄարտիրոսն յիշեցէք ի Տէր՝ կարդացողք և ըն-թերցողք սորա և Աստուած զձեզ յիշէ։

739

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4820

Գրիչ

ա

158բ Արդ, ո՞վ եղբարք, զստացող սորա զՍարգիս քահանա և զծնողսն իւր եւ զաւակսն և զկենակիցն, և զամենայն արեան մերձաւորքն յիշեսջիք ի տուրբ յարժանաւոր յաղաւթս ձեր, և մեղաց թողութիւն հայցեցէք յանցանաց սոցա, և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

բ

Ծաղկող՝ Թորոս

11բ Զանարժան Թորոս յիշեա ի տէր Յիսուս Քրիստոս։

740

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 8303

Գրիչ՝ Թորոս

ա

20բ Աղաչեմ զամենեսեան սիրովն Քրիստոսի յիշել զՍարգիս կրաւնաւոր և զծնաւղսն իւր ի մեղաց թողութիւն, և Աստուած զձեզ յիշեսցէ, և նմա փառ[ք]։

բ

28ա Քրիստոս Աստուած մեր, ողորմեա Սարքսի կրաւնաւորի և Թորոսի մեղաւորի և ծնաւղաց նոցին, ամէն։

գ

Գրողիկ՝ Թորոս սարկաւագ

46ա Զսաացող սորին զՍարգիս կրաւնաւոր և զողորմելի գրողիկս զԹորոս սարկաւագ աղաչեմ յիշել ի Տէր*։

741

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 5611

Գրիչ՝ Թումա

120բ Տէր Յիսուս,
Յորժամ գաս փառաւք քո հայրենի

---

* Ձեռագրի 38—48բ էջերի գրիչն է վերջին հիշատակարանի գրիչ Թորոս սարկավագը։ Ձեռագրի հիմնական մասը գրել է ա և բ հիշատակարաններում հիշված Թորոսը։

Եւ հրեշտակաւքն ամենայնի,
Յայնմ ատուր ահեղ մեծի,
Եւ յանկաշառ քո ատենի,
Ողորմեա մեղուցեալ քո ծառայի,
Թումայի նուաստ գրչի
Եւ անարժան քահանայի, ամէն։
Եւ այլևս աղաչեմ Տէր ողորմեա
Ընտրեալ քահանայի Դաւթի
Եւ ծնողաց իւրոց, ամէն։
Եւ ինձ մեղապարտ գծագրի,
Սուրբ տառիս գրողի,

Ողորմեայ և գթա ի մեղաւորս և յանպիտան ծառայս և թող ինձ զմեղս իմ, և ողորմեա, ամէն, ամէն։

742

ՍԱՆԴՈՒՂՔ ԳԻՐՔ

Երևան 5258

Գրիչ՝ Թումա

ա

222ա *Յիշեսջիք զԱնտոն կրաւնաւոր և զննշեցեալն իւր, և զԴրիգոր կրաւնաւոր և զննջեցեալսն իւ[ր], և զՍարգիս կրաւնաւոր և զննջեցեալսն իւր, և այլ, որք աշխատեցան ի սուրբ գիրքս, և Աստուած զձեզ յիշէ, ամէն։*

բ

135բ *Ո՜հ, ո՜հ զԹումա յիշեսջիք ի Քրիստոս։*

743

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 5547 (Ը-Թ գ.)

Գնող՝ Թումա

ա

149ա *Ես՝ Թումես գնեցի զկես Աւետարանիս յիշատակ ինձ և հաւր իմոյ Կիրակոսի և մա[ւ]ր իմո Թալալիս և տվի Յովանէս քահանայն, որ յի-շ[է] դիս եւ ծնողս իմ, և որք կա[ր]գան Աստուած ողոր[մ]ի ասեն*։

* Թուման ընդհատել է իրենից առաջ գրված բոլորգիր մի հիշատակարան և իրենը գրել «Գնեցի զկես Աւետարանիս» չպետք է հասկանալ, որ ձեռագիրը կիսել և գնել են։ Ամբողջ Աւետարանը նույն գրչի գործն է։ Պարզապես Ավետարանի գնի կեսը վճարել են և նվիրել Հովհաննեսին։

Բ

Նվիրող՝ Գրիգոր
Վայր՝ Կոռ գիւղ

Կամաւ ամեն[ա]կալին [Աստուծոյ] այս ի[մ] գիր ե Գրի[գ]որ քահանայս, որ տվեմ սուրբ Ստ[եփ]անոսի Նախավկային Քրիստոսի ի բարեխաւսութիւն <իմոյ>իմոյ, որք կարդայք ինձ մեղաց թողութիւն խա[յց]եցեք ի Քրիստոսէ, ամէն։*

744

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՄԱԿԵԴՈՆԱՑՒՈՅ

Երևան 3387 (1635 թ.)

Բարառնուիյունների հեղինակ՝ Խաչատուր Կեչառեցի

ա

168ա Փառք քեղ անպար և անպատում արարիչ և հրաշայգործ Աստուած, որ արժանի արարեր զքարմատար և զոգնամեղ և զապիկար և զվատթարանձ Խաչատուր Կեչառեցի հասանիլ մեղսաներկ մատեամբ և տկար մարմնով ի գիծ վերջին արքայական գրոցս աշխարհակալին Աղեքսանդրու։ Առ այս զինչ ունիմ հատուցանել տրիտուր քան թէ քոին լուսեղինաց և բոցեղէն բերանով աւրհնել զքեզ Հայր Աստուած և զրանքս էակից հանդերձ հոգովդ փառակցաւ, նա և յաւժանտակ առեալ զընթացս աւ-
168բ դայկառաց||լուսաւորացդ, որ անբերան շարժմամբ զաւրհնառաք բարեբանութիւն մատուցանեն։

Իսկ ըստորայնոց ազգ կենդանեաց բերան առեալ զմարդ քոին պատկերի երկրպագեն վայելչայբար յայտ արարեալ, թէ չիք այլ Աստուած բայց ի քէն։ Ըստ որում և սուրբս յաւիտենից ընդ իս առեալ զմարգարէից և զառաքելոց, զհայրապետաց և զվարդապետաց և զկայ արեամբ պսակելոցն զպարս և զդասս, աւրհնեմք և զամենայն Սուրբ Երրորդութիւն, այժմ և յաւիտեանս, ամէն։

Բ

174բ Ո՛վ ընթերցողք, յիշման արարէք արժանի զաշխատող սորա||որ քերթողորէն արարի անխոտորնակ, որ ի յընթեռնուլն իմասցիս պլիտիկոսք և քարտուղարք, և ապա գիտասցեն զաշխատանս սորայ։

---

* Գրիգորի հիշատակարանն ավելի հին է, քան Թումայինը, 1284 թ. հիշատակարանում հիշվում է Ստեփանոս Նախավկայի վանքը Կոռ գյուղում։ Այս հիշատակարանն էլ գրվել է այնտեղ, հավանաբար նախորդից հետո։

745

ԱԻՆՏԱՐԱՆ

Երուսաղեմ 1795, Պողարյան, ծուցակ Զ, էջ 145

Գրիչ՝ Խաչատուր

ա

513բ *Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն։ Նեղկայիս եւ յապառնիոյ եւ յանբաւ յաւիտեանս ամէն եւ ամէն, եւ եղիցի, եղիցի։*

Է սայ յիշատակ երկուց արանց եղբարց կուսակրաւն եւ սուրբ քահանայից Սահփանոսի եւ Անդրէասի, որ զսայ ստացան ի հալալ վաստակոց իւրեանց զաւակ ի Սիոն եւ բարեխաւսն աներեկ աւուրն։

Աղաչեմ զամենեսեան, որք լուսաւորիք եւ կամ ընդաւրինակէք, ասասջիք սրտի մտաւք, Քրիստոս ի գալստեան քում ողորմեա Սահփանոսին եւ Անդրէասին եւ ծնողաց նոցա եւ այլ...։

բ

402բ *Ո՛վ սուրբ եւ անարատ գառինք սուրբ փեսային Քրիստոսի, քահանայք քաւութեան եւ երիցունք աննիւրհելիք, զտառապեալս եւ զհանապազահիւանդ անձնս զխաչատուր՝ ծնողիւք մերովք յիշել առաչի բեմբին Քրիստոսի։*

գ

513ա *Զսաճակ փակակալ սուրբ ուխտիս, որ եղեւ մեզ աւդնական պակասորդիս ելից։ Ընդ նմին եւ սմայ ողորմի Քրիստոս ի գալստեանն իւրում եւ ծնողաց սորայ ամէն... Եւ ով զմեզ յիշէ, հարիւրապատիկ առցէ զփոխարէնն։*

դ

492 *Ո՛վ աստուածայսէր եղբարք, որք կարդայք զհանգրստեան Աւետարանս, միաբան ասացէք, Տէր Աստուած ողո[րմ]եա Սահփանոսի ստացողի եւ ծնողաց իւրոց ի քոմ գ[ալստեանդ]։*

746

ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ

Մխիթարայ Գօշի

Ն. Ջուղա 548, Տեր-Ավետիսյան, ծուցակ, էջ 826

Գրիչ՝ Կարապետ

Ո՛վ եղբարք իմ սիրելիք և պանծալի գլուխք մեր, աղաչեմ զձեզ յորժամ նստիջիք ի պանծալի աթոռն դատաւորութեան և առնէք զդատաստան, յիշեսջիք զիս մեղուցեալ գծողս ի մաքրափայլ յաղաւթս ձեր՝ զիս զԿարապետ երէցս, զպաստաւոր կաթողիկէ եկեղեցո, և զծնաւղսն իմ՝ զփոխեցեալն առ Քրիստոս, և յիշողդ աւրհնիմք ի յամենակալէն Աստուծոյ։

747

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 1999

Գրիչ՝ Կարապետ

210 Զանարժանս բարեաց յիշատակի զստուտանուն գրիչս Կարապետ և ղծնողս իմ աղաչեմ յիշել ի Տէր, և Աստուած զձեզ յիշէ։

748

ԳԻՐՔ ՀԱՐՑՈՂԱՑ ԲԱՐՍՂԻ ԿԵՍԱՐԱՑԻՈՑ

Երևան 707

Գրիչ՝ Կիրակոս

17ա Կիրակոս գերեալ մեղօք
Եւ զանկատար հոգիս տիւօք,
Մաղթեմ յիշել սրտի մտօք
Սեռն սիրով բարի կամօք։
ԶՏէր ողորմեայն լի արտասուօք,
Ողորմագին ա[ղաչանքօք]
Ինձ առձայնել ձրի շնորհօք,
Եւ ձեզ լիցի կրկին [կենօք]
Ամէն, և որ զամէն ասէ, ամէն։

749

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Վենետիկ 194, Սարգիսյան, ցուցակ Ա, էջ 814

Գրիչ՝ Կոստլն

Ա

67ա Զստացող գրոցս զԿոստրեդ քահանա և զՏէրպապն յիշեսջիք ի Տէր, որ ստացաւ զսա յարդար ընչից իւրոց։

Բ

188բ Զստացող սորա զԿոսաանդին քահանայ յիշեսջիք ի Տէր, եւ ընդ նմին զծնողսըն նորա։ Եւ զիս զաշխատողս զԿոսարն յիշեսջիք ի Տէր։

750

ՄԱՆՐՈՒՄՈՒՆՔ

Երևան 9337

Գրիչ՝ Կոստանդին

13 Զբազմամեղ գրիչս Կոստանդին եւ զծնաւղսն իմ յիշեսչիք ի Քրիստոս, և մեղաց թողութիւն խնդրեցէք, աղաչեմ։

751

ՃԱՌԸՆՏԻՐ

Վենետիկ 239, Ստրգիսյան, 8ուցակ Բ, էջ 576

Գրիչ՝ Կոստանդեա

6բ Քրիստոս Աստուած, բարեխաւսութեամբ քաջ և բարի հով[ու]ապետին քո Յոհաննիսի Ողորմածի ողորմեա գրողի սորա Կոստանդեա մեղաւորի և Հերում քահանայի ի Քրիստոս հանգուցեալ ծնողաց իւրոց և կարդացողաց և լսողաց։

752

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 4834

Ստացող՝ Կոստանդին տէր Դեղնիարի
Վայր՝ Դեղնիար

Փառք ամենայսուրբ Երրորդութեան, Հաւր և Որդու և Սուրբ Հոգոյն ամէն։

Ո՛վ վարդապետ բարի, որ Քրիստոսին մերոյ և Աստուծոյն աւրինակէք, և բարի վարդապետութեան նորայ ուսուցիչ և ֆիլիսոֆական իմաստութեամբն ընդունարան, և առաքինութեամբն նմանեալ ի աստուածայհաճո հարն մեր ի Սուրբ Անտոն, ո՛վ վարդապետ Անառոն, ի փոքրիկ և յոչինչ մե[ղ]աւորէ որդոյ քո ի Կոստանդին տէր Դեղնիրուն և [մ]ականուն Ըռաբենցի, աղ[ա]չեմ զսրբութիւդ ք[ո] յի[շ]ել զանարժանս, թե[բեւ]ս ձերում աղաչանոք ողորմեսցի մարդասէրն ի[ն]ձ և ծնողաց իմոց։

Կրկին աղաչեմ յիշել և ոչ մատնանալ և Քրիստոս[զձեզ] /// ով հեզ, թէ գրոց սահմանումն ղորդ չէ գրաց, պա[տ]ճառք այն է, որ /// ի մարդ նմանել չեմ և ոչ գիրն իալ գիր, և Քրիստոսի Աստուծոյ մերոյ յաւիտեանս, ամէն*։

* Գրված է շղագրով վերջին թղթի Բ էջի երկայնքին, տեղ-տեղ մաշված է։

753

ԱԻՏԱՐԱՆ

Ն. Ջուղա 161, Տեր-Ավետիսյան, Ցուցակ, էջ 214

Գրիչ՝ Կոսաբեդիճ տէր Կոպիտառայ
Վայր՝ Կոպիտա՞ռ

3բ Աստուածային մայր Քրիստոսի,
Որ բարէխաւս ես աշխարհի,
Բարէխաւսեայ առ քո Որդի,
Վասն անառակ մեղաւորի,
Որ Կոսաբեդիճ անուն կոչի,
Որ եմ ես տէր մեծ դղեկի,
Կոպիտառայ անուն կոչի;
Ջմեղս թողցէ, զոր մեղուցի,
13ա Եւ չտայ փորձել սատանայի;
Տայ կենք որդեցն, որ այժմ ունի՝
Հեթում, Լեւոն, Հալկմու և Գրիգորի:
ՋԱւետարանս որ գրեցի
Ի վայելել դայ ինձ լինի,
Եւ իմ որդեցն, զոր դրեցի,
Դայ է ծախաւք և հրաշալի,
Որ սայ քնաւ իսկի չլինի*:

754

ԱՅՆՈՅԻԿ ՈՐ Ի ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆՆ ԽՆԴՐՈՑ ԵՒ ԼՈՒԾՄԱՆՑ ՓԻԼՈՆԻ ԵԲՐԱՅԵՑՒՈՑ

Երևան 2058

Ստացող՝ Կոստանդիճ

Ջստացող կտակիս զմեղաւք լցեալս զԿոսատանդիճ քահանա և զամուսին իմ և զտարաժամ փոխեալն առ Քրիստոս Աստուած, և զծնող<ող>ս իմ յիշէց[էք ով] մանկունք նոր Սիոնի, և Քրիստոս Աստուած իւր միւս անգամ գալըստեան մեզ և ձեզ ողորմեսցի <իւր միւսանգամ գալուստն> և ամենայն հաւատացեալ ննջեցելոցն ի Քրիստոս Աստուած ամէն, ամէն, որ ամէն ասէ, յիշեա։

Ոհ, ոհ, վայ է, վայ է ինձ, զի խիստ եմ մեղուցեալ, ո՛վ եղբարք իմ։

* Գրված են երկու խորաններէ մեջ (էջ 3բ, 13ա), որոնք այժմ իրար մոտ չեն։

755

ՃԱՌԸՆՏԻՐ

Վենետիկ, 230 Սարգիսյան, ցուցակ Բ, էջ 486

Գրիչ՝ Կոստանդին

ա

11ա Աղաչեմ զձեզ հաւատացեալ սուրբ քահանայք և ժողովուրդք, խընդրեցէք յԱստուծոյ մեղաց թողութիւն տրուպ և անպիտան ծառաիս՝ գրողի տըրա Կոստանդեայ, և ծնողաց իմոց Վասիլ քահանայի (և Հեթում քահանայի)*, և Ստեփաննոս քահանայի, և մաւրն իմոյ Թևանօի, և քուեր իմոյ սպասաւորի՝ Անգացի:

Բ

53ա Հայր երկնաւոր, Որդիտ ստեղծիչ, Հոգիտ մխիթարիչ՝ ծրրորդութիւն և մի աստուածութիւն, որ գթացար ի նախահայրն Ադամ, և թողեր զյանցանս նորա, թող զիմ զսղալանս և զյանցանս Կոստանդա՝ գրողի սորա մեղապարտի, և ծնողաց իմոց՝ Վասլի քահանայի (և Հեթում քահանայի), և Ստեփաննոս քահանայի, և մաւր իմոյ և ամուսնոյ Թևանօից**, և սպասաւոր քաւր իմոյ Անգացի, և ամենայն ժողովրդեանդ ողորմե[ս]ցի Աստուած, և կարդացողի, և որ մեզ ողորմի ասէ ու մեղաց թողութիւն խնդրէ, Աստուած իր [մեղաց] թողութիւն այնէ։

756

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Վենետիկ 192, Սարգիսյան, ցուցակ Ա, էջ 804

ա

49բ Ջստացաւզ գրոցս զՀեթում վարդապետ յիշեսջիք ի Տէր։

Բ

96ա Ջբարեհամբաւեալ վարդապետն զՀեթում զստացաւդ գրոցս յիշեցէք ի Տէր։

757

ԱԻԵՏԱՐԱՆ

Սրվանձտյան, «Թորոս Աղբարա», Ա. էջ 57

Ստացող՝ Հեթում Պլուզ

ա

Քրիստոս Աստուած քո սուրբ և հրաշալի կենսաբեր յարութեամբ ողորմեա սուտանուն քահանայիս Հեթում Պլուզ երիցուս, զի քան զա-

---

* Գրված է այստեղ և այլուր՝ գունաթափ թանաքով, իրեն համարում է նաև «ստացող գրոյս (80ա...), իրեն կոչում է նաև «Պլուզ երէց»։

** Գրչի մայրը և ամուսինը Թևանօ անունն են կրում, դրա համար հոգնակի թվով է գրել «Թևանօիցս»։

մենայն սպասաւորս քո ես միայն լիրբ և անհնազանդ եղայ աստուածային օրինաց քոց և ողորմութիւնն քո...։

Բ

Քրիստոս Աստուած մեր, որ վասն անբաւ մարդասիրութեանդ քո խոնարհեցար ի հայրական ծոցոյ և առեր մարմին ի Սրբուհւոյ Աստուածածնէն Մարիամայ և զմահ խաչի յանձն առեր և պատուական արեամբդ քո զմեզ զամենեսեան ի ձեռաց մեղսասէր իշխանին ազատեցեր, ազատեա և զբազմամեղ անարժան ծառայս քո զՀեթում Կուսանցոց ի ծովացեալ մեղաց իմոց, զի դու ես ողորմած գթած Տէր մեր, որ յամենայնի կարող ես թողուլ զմեղս յանցաւորաց, և քեզ ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյդ վայել է փառք և պատիւ յաւիտեանս, ամէն։

Գ

Գրիչ՝ Տիրատուր

Մատթէոս մարգ վասն այն ցուցաւ,
Զի մարդկութիւն Տեառն սկսաւ,
ՅԱբրահամէ պատմել կարգաւ,
Եւ զորս արար մինչև յարեաւ։
Սուրբդ Մատթէ նախ մաքսաւոր,
Եւ ի յետոյ աւետաւոր,
Յիշեա առ քո Տէր երկնաւոր,
Զհս Տիրատուր յոյժ մեղաւոր,

Դ

Մատթէոս զիւրն Աւետարան,
Գրեաց լեզուվն եբրայեցեան,
Ցեօթներորդ յետոյ ամեան,
Զարշարանացն փրկչական,
Յերուսաղէմ զառաջին բան.
Եւ է իրս ինչ որ ի քաղդեան,
Նոյն ի Պարթեւն և ի Քուշան,
Առ ի նմանէ քարոզեցան.
Իսկ ի Պարթեւք և ի Գողթան
Միանգամայն կատարեցան։
Ապա յետոյ թարգմանեցան
Յեբրայեցւոցն ի յունական,
Ի փառս անեղծ ատտուածութեան
Երից անձանց մի տէրութեան։

Ե

Ո՛վ սուրբ Ղուկաս բժիշկ մարմնոյ
Նախ՝ և յետոյ եղեր հոգւոյ,

Ջիմս Տիրատուոյ մեղք՝ Տեառն քո
Մաղթեա մաքրել սեռիւն իմոյ։
Այլ թէ զՂուկաս եղն էր գրեցին,
Ջի որպէս նա հերկէ զգետին,
Կրկին անխոնջ վասն պտղին,
Նոյնպէս երկար է բանք նըմին։

Գ

Արդ և Ղուկաս սքանչելի
ՋԱւետարան իւր ցանկալի,
Յետ ութ ու տասն անցեալ ամի
Ջարչարանացըն Քրիստոսի
ՅԱնտիոքոմ քաղաք մեծի
Գրեաց լեզուվ ս[տ]ոյգ ասորի,
Իսկ որք ասեն ըզՂուկայի
Աւետարան յունով լեզուի,
Ապա զիա՞րդ, յայտմն վայրի
Յոյժ մեզադիր վասն այս լինի.
Մեծն Եպիփան երանելի,
Ջթարգմանելով ումեք մարթի
Լեզուվ առ այլ և ստոյգ գտցի։
Եւ զի ինքն իսկ ի յասորի
Լեզուէն մեկնեաց ջանիւ մեծի
ՋԱւետարան իւր անթերի
Ի յունարէն Հելլենացի,
Որպէս և գրեալ կայ այսպիսի
Ի պատմութիւն սուրբ հարցն յայտնի,
Զոր և պատմէ եկեղեցի
Յիւր պատմութիւն անկծածկելի.
Եւ Հաւր տացուք փառք անմահի,
Որդւով Հոգւոյն անլռելի։

Է

Իսկ զՅօհաննեայ այսպես ասին,
Թէ յետ յիսուն և մի ամին
Վերանալոյ Տեառն յերկրին;
Մինչ քարոզէր զգործս բանին,
Ի Պեմեարիաճոսէին
Հռովմայեցւոց թագաւորին։
Արտասահման եղեալ նորին
Ա ի Պատմոս կոչեալ կղզին,
Երեքտասան ամ անդ ինքնին,
Վասն Աստուծոյ եկաց բանին,

Մինչև յաւուրս Ներոնին,
Որ յետ նորա էր արքային։
Ապա հանեալ արձակեցին,
Եւ անտի դարձեալ նորին
Ի յաշխարհէ Ասիային,
Եւ ընակեցաւ ի քաղաքին
Ի յեփեսոս, և անդստին
ԶԱւետարանն իւր խնդրեցին։
Եւ նա գրեաց լեզուվ յունին,
Որ է բարբառ Հելլենացին,
Եւ առաջնորդ եկաց նոցին
ՅԱսիացւոց եկեղեցին,
Զորս ղկնի արձակմանին
Եկաց ևս ամրս տասնեկին։
Այլ թէ ո՞րքան յետոյ Փրկչին
Զարշարանացն ամս ի մարմին
Եկաց այլս ևս Ե այս ոքին՞
Եօթանասուն և հնգեսին։
Եւ ի յետոյ քան զընաւին
Սուրբ առաքեալսն ամենեսին,
Նա փոխեցաւ յերկինս վերին,
Յանանց հանգիստ և երկնային։
Այլ ի յառաջ մինչ կենդանին
Էր և խնդրեաց իսկ զերեսին
Աւետարանսն և փոխՔ բերին
Յինքն՝ անդանաւր ուր և կային։
Զնախնկի դրեալն զՄատԹէին
Յերուսաղէմ սկծեալ մուծին,
ՅԱղէքսանդրէ զՄարկոսին,
ՅԱնտիոքայ ըզՂուկային
Եւ միացոյց որպէս գրեցին.
Նախ զՄատԹէ, Մարկոս զկնին,
Ապա զՂուկայն զՅետ միջին
Եւ յետ նոցա զիւրըն վերջին,
Ի փառս Հաւր անսկզբանին
Եւ ի յՈրդւոյ ծնունդ նմին
Եւ Սուրբ Հոգւոյ բղխման նորին,
Երիս անձանց կամացն ի մին,
Որում որք եմք հանուր մարմին,
Երգեմք զփառս ի միասին։

Ը

Աստուածարան սուրբ Յովաննէս,
Զիս Տիրասուր մեղաւք պէսպէս,

Խնդրեա մաքրել յախտոյ տղմէս՝
Քում Տեառն որ է ի քերովբէս։
Իսկ զՅօհաննէս՝ արծուանրման,
Թռեաւ մտաւք անհասական,
Առ ի պատմել բանիւ մարդկան
Զսնեաւն էիցս հանրական։
Աղաչեմ զեղկելի գրիչս զՏիրատուր
Յիշել ի Տէր Աստուած։

758

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7659 (ԺԱ դար)

Ստացող՝ Համայ դուստր Մամիկոնի
Վայր՝ Բարձրաքաշ ուխտ

126բ *Փառք անմահին Աստուծոյ և անմահ բնութեանն և կամակցութեան Սուրբ Հոգւոն, որ ետ յաւժարութիւն հոգոյ հանճարի։*

Արդ, ես ծառայ Քրիստոսի և աղախին անպիտան Համայս՝ դուստր Մամիկոնին, *որ ոչ դուստր ունէի և ոչ որդի, յիշեցի զիմ մահին աւրն և զահեղ դատաստանն Քրիստոսի և արարի ինձ յիշատակ արձան և գնեցի ի հալալ արդենց իմոց զսուրբ և զհոգելից և զաստուածային տառս՝ զսուրբ զԱւետարանս, և տվի Բարձրաքաշիս սուրբ ուխտին և սքանչելագործ Սուրբ Գրիգորին, և ի ձ[ե]ռն սուրբ և աստուածայնման հայրապետին տէր Վահանայ, և սուրբ ընդրել միայբանիցն, յառաջնորդութեան սուրբ ուխտին տէր Վահանայ, և միայբանքս խոստացան ի տարին Բ (2) աւր պատարագել զՔրիստոսի յիմ անունս։*

Արդ, որք հանդիպիք սուրբ Աւետարանիս տեսանելով կամ երկրպագելով, ասացէք բոլոր սրտիւ Աստուած ողորմի Համային, ամէն, և Աստուած յիշողացդ ողորմեսցի, ամէն։

Արդ, ով զայս սուրբ Աւետարանս ի Սուրբ Գրիգորացն հանէ, կամ խլելով, կամ տանելով, կամ էլ ցեղու զիմ յիշատակն խափանէ, առաջի Աստուծոյ իմ մեղացն պարտ[ակ]ան է։

759

ԱԻԵՏԱՐԱՆ

«Բազմավէպ», 1970 թ., էջ 169

Գնող՝ Հայրական երէց

Անուամբն յԱստուծոյ ամենակալին, ես Հայրական երէցս գնեցի զսուրբ Աւետարանս Սեւադայ որդոյ Վախտանգէ, ի հալալ արդեանց իմոց, յիշատակ ինձ եւ որդոյն իմոյ Մարգար քահանայի եւ այլ ամե-

նայն արեան ազգականացն իմ, ով որ կարդայք կամ աւրինակէք յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր, եւ Աստուած զձեզ յիշէ իւր միւս անգամ գալստեան, ամէն։

760

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՄՈՒԷԼԻ ԱՆԵՑԻՈՑ

Երևան 1897

Գրիչ՝ Հայրապետ

ա

92բ Յիշեցէք մեռեալս Հայրապետս, որ շարադրեցի զսոսա ի շահ և ի յաւգուտ մանկանց եկեղեցւոյ, յիշեսջիք ի Տէր, ո՛վ արժանաւոր ընթերցողք, և ծնաւղսն իմ, և զեղբարսն, և Աստուած զձեզ և մեզ առհասարակ ողորմեսցի, ամէն։

բ

107բ Չբազմամեղ անձն իմ Հայրապետիս և զեղբարց իմոց Կարապետին և զԽաչատրին յիշեայ, ո՛վ սլատուական վերծանող եղբայր ի Քրիստոս, զի ողորմեսցի քեզ և մեզ։

գ

183ա Հայրապետ վարդապետ և մեղապարտ գրիչ յիշեսջիք ի Քրիստոս, ո՛վ աստուածասէր ընթերցող ուսմամբ։

761

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱԻԵՏԱՐԱՆԱՑ

Երևան 6903

Գրիչ՝ Ղուկաս

258բ Չտրուպ Ղուկաս յիշէ ի Տէր և անմեղադիր լեր։

762

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Սանջյան, Յուցակ Ամերիկայի, էջ 234 (1237 թ.)

Նվիրող՝ Մարծպան

/// ու Մարծպանս, Մամիկոն զղ /// տվաք Նիկայfառա Աստուածածին /// որ էս որ առաջ եւ ելմէջում (՞) մարի /// իք զէս եկեղեցիս ընդ խորանի /// ին արարեալ մեք զէս խոստացաք /// ու զՆիկայfառայ Աստուածծինն ետ իւր հողովն թարխան արարաք և տվ[աք], զսպասաւորք եկեղեցոյս Դ (4) աւր ժամ զո /// ին Ա (1) աւրն հաւրն մերոյ Հասանայ եւ /// [հաւրեղբաւր մերոյ Սեւադէի եւ Բ (2) աւրն մաւր մերոյ Մամախաթու[նին]։

Արդ, թէ իմոց կամ յաւտարաց կամ էլ ազդեց զէս դիրս խափանել ջանայ ու զէս եկեղեցիս եւ ընդ հարկիւ անել ջանա, մեր ազգի ու տակի մեղաց տէր եղիցի, մասն և բաժին ընդունեսցի, եւ ընդ Արիոսիցն առցէ։

Գրեցաւ դիրս ի թվ///

763

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 2735

Գրիչ՝ Մարտիրոս

ա

98ա ՃՄարտիրոս բանի սպ[աս]աւոր աղաչեմ յիշել ի Տէր։

բ

[Ճստ]աց[ա]ւղ սուրբ Աւետարանիս Յովանննէս քահանայ յիշեսջիք ի Քրիստոս, ո՛վ դասք սրբազանից։

764

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՃՈՐԻՑ ԱՒԵՏԱՐԱՆՃԱՑ

Երևան 5448

Գրիչ՝ Մարտիրոս

ա

138ա Ճստացաւղ աստուածախաւս տառիս զերջանիկ վարդապետն Մովսէս և ղծնաւղսն իւր յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, նա և գրիչս։

բ

296բ Տէր Աստուած ողորմեա ստացողի սորա և գրողի և այլ աշխատաւորաց ի սմա։

գ

Գրիչ՝ Սարկիս

Սիրեցեալ քո և ընդրեալ մաքուր դասուդ բարեխաւսութեամբ Քրիստոս Աստուած ողորմեա յոգնամեղ և բազմավտանկ հոգւոյ ստացողաց գրոցս* և ծնաւղաց և զեղբարց իւրեանց և գրողիս սորա Մարտիրոս քահանայի և Սարկսի սակաւ գրողիս և ընթերցողաց և լսողաց բանիս, ջնջեա զձեռագիր յանցանաց նոցա և գրեա զանուանս նոցա ի գիր կեն-

* Ստացողի անվան տեղը բաց է թողնված։ Ձեռագրի գրիչը անունը չի հայտնում։ Երկրորդ հիշատակագրության գրիչ Սարկիսը, որ միայն մի քանի թերթ է գրել, իր հիշատակարանում (գ) հիշում է այն ձեռագրի գրչի՝ Մարտիրոսի անունը, և իրեն համարում սակաւ գրող։ Նա բաց է թողել ստացողի անունը, այնինչ գլխավոր գրիչը հիշում է «ստացող Մովսէս վարդապետին» 347ր էջից, ուրիշ գրիչ է շարունակել։

նացն անվախճանից, և որք ցաւակցաբար հովդւով սրտի մտաւք ամէն ասէն, աւրհնեա ղնոսա հոգով և մարմնով, ամէն։

765

ԺՈՂՈՎԱԾՈ

Երևան 715

Գրիչ՝ Մարտիրոս
Վայր՝ Պաւղոսի անապատ

ա

79բ Ո՛վ ընթերցողք և լսողք, որք կերակրիք յաստուածային սեղանոյս հոգով և մարմնով, յիշեցէք զեղկելի ոգիս զՄարտիրոս սուտանուն քահանաի ղգրողի սորա, և մեղաց թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ ինձ և ծնողաց իմոց, և ամենայն հաւատացելոց և իմոցն ամենայնի։

Եւս առաւել աղաչեմ յիշել ի Տէր զպատուական հայրն իմ և զուսուցիչն զՍտեփաննոս պատուելի քահանայն, և զՄաթէոս սրբասնեալ աբեղայն, որ զաւրինակս երետ, և որ յիշէ յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

բ

84բ Ո՛վ սուրբ ընթերցողք, յիշեցէք զգրող սորայ ի Քրիստոս։

Արդ գրեցօ և կատարեցաւ յաւուր մե[ծ]ի ծնընդեան Տեառն մերոյ ի յանապատիս, որ կոչի Սուրբ Պաւղոս, ընդ հովանեաւ Սրբոյն Գրիգորի և այլ կենսակիր սուրբ նշանաց, ձեռամբ մեղապարտ և անարժան գրչի Մարտիրոսի, և ոչ վասն արծաթոյ կամ այլ ինչից, այլ ի յիշատակ հոգոյ իմոյ և իմ[ոց] ամենայնի, որոմ ուլի*, նա յիշեսցէ ի Քրիստոս զմեզ և Աստուած զձեզ յիշողացդ ողորմեսցի, ամէն։

766

ԱԽԵՏԱՐԱՆ

Երևան 4856

Գրիչ՝ Մելքիսէդեկ

60բ Զյոհաննէս և զծնօղսն իւր յիշեցէք ի Քրիստոս և զիս, և զմեղուցեալ գրիչ զՄելքիսէդեկ և զիսն, և Քրիստոս զձեզ յիշէ, որպէս դուք զմեզ, ամէն։

* Հավանարար «ւլինի» բառի բարբառային ձևն է («ըլի», «ուլի»)։

767

ՄԱՆՐՈՒՄՈՒՆՔ

Երևան 760

Գրիչ՝ Մեսրոբ

Ո՛վ սուրբ ընթերցողք, որք աւգտիք ի սմանէ, յիշեսջիք ի Տէր զեղկելի ծրողս զՄեսրոբ, և զիմ վարդապետն զԿոստանդին անյաղթ գրիչ։

768

ՏԱՒՆԱՊԱՏՃԱՌ

Երևան 2021

Գրիչ՝ Մխիթար

ա

30ա *Եւ ամենամեղ և բաղմեղկելի Մխիթարայ ազատումն արասցէ Քրիստոս յասացելոց նեղութեանցդ բարեխաւսութեամբ սրբոց առ[աքել]ոցն։*

բ

62ա *Զմխիթար յիշէ։*

գ

68բ *Զամենամեղ գծողս զՄխիթար յիշման արժանի առնէք, աղաչեմ զընթերցողսդ։*

դ

ՀՑբ *Յիշեա զանարժան գծողս Մխիթար աղաչեմ։*

ե

147բ *Զանմեղադրէ, զի ափշե[ա]լք էին ի տրտմութենէն*։*

գ

182բ *Ո՛վ աստուածասէր ընթերցողք, յորժամ հանդիպիք այսմ գրոյ՝ ղհոգևոր մայրն մեր զԹանկնազն յաղաւթս յիշէք, զի յորժամ խաւթացաք մերձ ի մահ, բաղում աշխատութիւն և երախտիք և մայրական գութ եցոյց առ մեզ, զոր հատուսցէ նմա [Քրիստու Աստուա]ծ, որ վարձահատոն է ամենեցուն՝ աստի և ի հանդերձեալն։ /// աւաբարի և հաւատարիմ, զի հիւանդ և /// իս մուտ յուրախութիւն Տեառն քո, ամէն։*

*Գրեցաւ///ՈՀԴ (1184) մայիս ԺՀ (18)***։

---

* Մի բառ բաց է թողել, այդ առթիվ է գրում։

** Թվականը գրված է այլ գրչությամբ, հետագայում և ճիշտ չէ, որովհետև Մխիթարի ձեռքով գրված մասում գտնվում է ավասն Տարեմտին Վանական վարդապետի ասացեալ նյութը, որը գրվել է 1184 թ. տասնամյակներ հետո։

է

Գրիչ՝ Յովճաննէս

101ա Զամենամեղ և զյոքնեղկելիս Յովաննէս յիշեա ի Քրիստոս, աղաչեմ։

769

ՎԱՐԴԱՆԻ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ

Երևան 1180

Գրիչ՝ Մխիթար

ա

163բ Եւ ընդ նոսին պսակաւորեալ զերանաւետն լսելով ղձայն ի պսակողէն, ըստ իմաստուն կուսանացն բերկրեսցի յարազուարճ ցնծութեամբ ստացող մատենիս, գործնական և արդիւնական ի յառագաստ սուրբ եկեղեցու Բաւսեղ իւրովքն ծնաւղաք և հարազատաք, ամէն։ Եւ զանարժան գրիչս մերաովքն հանդերձ յիշեցէք ի Քրիստոս և վասն սիրոյն Քրիստոսի մի մեղադրէք սխ[ալ]անացս և խոշորութեան։

բ

102ա Զյոլովիմաստն զԴաւիթ, սպասաւոր բանի ընկալ Տէր։
Զփծուն գրիչ Մխիթար աղաչեմ յիշեա ի Տէր։

գ

112բ Աղաչե[մ] Մխիթար գրիչս յիշել ի Քրիստոս և զԴավթի վաելել տա։

դ

Ուղղող՝ Ստեփաննոս

192բ /// ի յղորդելն զՍտեփաննոս վարդապետս յիշեցէք, ամէն։
115բ Զստացող աստուածահին գանձուցս զԲաւսեղ սպասաւոր բանին և զծնողս իւր յիշեսջիք ի Տէր Յիսուս, ընդմին և զախմար գրիչս Մխիթար։

770

ՍԱՀՄԱՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԴԱՒԹԻ ԱՆՅԱՂԹԻ

Երևան 1746

Գրիչ՝ Մխիթար

ա

117ա Վարժ ու կիրթքդ յիմաստս բարեպաշտութեան զՄխիթար դպիր սուտանուն գրիչ, ի սուրբ աղաւթս յիշեա ի Քրիստոս աղաչեմ, աղաչեմ, աղերսեմ։

բ

173ա Բարի պարոն, զգեստ գծող տառիս հանապաղ աղաչեմ ի Քրիստոս բարոյ յիշման արժանի առնել։

գ

Ո՛վ աստուածասէր իշխան պարոն Յովհաննէս, անմեղադիր լեր սղալանացս, գի աւրինակն կարի սղալ էր, և ես՝ ախմար։

771

ԳԻՐՔ ՊԱՏՃԱՌԱՅ ԳՐԻԳՈՐԻ ՈՐԴՒՈՅ ԱԲԱՍԱՅ

Երևան 1879

Գրիչ՝ Մովսէս

ա

229ա Ողորմեա Աստուած Մովսէսի անպիտան գրողի և իւր ծնողացն։

բ

281բ Տէր Աստուած ողորմեա ստացողի սորա Գեւսամ վարդապետին, և ծնողաց իւրոց և յիշողացդ ամէն*։

գ

Հետագա նվիրողներ

3ա Պատճառ լայն և նուրբ գրեա[ն]ց առեալ ի հարցն սրբոց և ի վարդապետաց, և ի մի հաւաքել մեծ րաբունապետին Գրիգորի որդոյ Աբասայ։

Քրիստոս Աստուած Մեսիայ և Մանուիելն շնորհաւորացէ զսայ վարդապետի Խաչատրոյ։

դ

11ա Ջխաչատուր վարդապետ յիշեայ, ո՛վ Տէր իմ**։

ե

Ջխաչատուր վարդապետ Կեչառվեցի, ստացող սուրբ տառիս յաղաւթս յիշեա։

---

* Այսպիսի մի հիշատակագրություն կա 9 բ էջում... զարգագիր «Ա»-ի մեջ գրված, որտեղ «Խաչատուր» անունը չնչվում է։

** Գրված է զարգագիր «Ց» տառի մեջ. հետագա նվիրողների ձեռքով։

Գրիգոր Արասի որդի վարդապետը ապրել և ստեղծագործել է ԺԴ դարի սկզբին, Խաչատուր Կեչառեցին՝ նույն դարավերջին և հաջորդ դարասկզբին։ Մովսես գրիչը ընդօրինակել է հավանաբար ԺԴ դարի երկրորդ կեսին, որից հետո ստացել է Խաչատուր Կեչառեցին։

772

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՁԱՒԻՑ

Երևան 5453

Գրիչ՝ Մովսէս

ա

5ճա *Ո՛վ ճգնազգեաց և աշխատասէր դասք լուսերամից և ժառանգորդք Վերին Սիոնի, որք հանդիպիք այժմ մատենի զՄովսէս սուտանուն գրիչ և ստացաւղ սորին աղաչեմ յիշել ի Տէր, նաև ծնաւղսն իմ և զայլ նըն-շէցեալսն, և Աստուած ձեզ տացէ վարձս բարեաց, և նմա փառք յաւի-տեանս, ամէն։*

բ

176բ *Տէր Աստուած թողութիւն մեղաց շնորհեա ստացողաց գըրոցս Ներ-սէսի և Մովսէսի և Մաւտիրոսի, որ զթուղթս կոկեաց, և որ յիշէ յի-շե[ա]լ լիցի։*

773

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 381

Գրիչ՝ Յակոբ

296բ *Փառք անեղ բանին Աստուծոյ ամէն։*

Ընդունի ի միում կատարեալ առանձնաւրութեանն և միաւորեալ ըստ աստուածութեանն եռահրաշ և անբաժանելի Սուրբ Երրորդութեանն փառք ի գոից բնաւից յիմանալեացն և ի զգայնոցս յամենայն ժամ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Գծադրեցաւ վսեմական, անբաղդատելի, աստուածունակ, արգա-սաւոր և արփիափայլ սուրբ կտակս ձեռամբ յոգնամեղի և փցնամատին գրչի Յակոբ կրաւնաւորի, ի խնդրոյ երիցս երանեալ սուրբ և պատուա-կան ընդրեալ քահանայ։///

774

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՄԵԿՆՈՒԹԵԱՆՑ

Երուսաղէմ 347, Պողարյան, Ցուցակ Բ, էջ 242

Գրիչ՝ Ակովբոս

ա

69բ *Ո՛վ աստուածասէր և պատուական վարդապետք եկեղեցւոյ, զԱկով-բոս ծառայ Տեառն յաղաւթս յիշեցէք, զի կարի շատ աշխատեցաւ, զի ի տղայութեան ժամն գրեցի։*

բ

Գրիչ՝ Վարդան

84բ *Ո՛վ պատուական եղբարք, զՎարդան յաղաւթս յիշեցէք, ոյք ընթեռ-նոյք, զի կարի ջանիւ և աշխատութեամբ ծրեցի։*

Գ

Նվիրող՝ Կարապետ
Վայր՝ Երուսաղէմ

:ա Ես՝ Կարապետ վարդապետս տվի զիմ գրքունքս Սուրբ Փրկչիս որ է Սուրբ քաղաքն Երուսաղէմ, Սուրբ Փրկիչս տեղիք չարշարանաց Քրիստոսի Աստուծոյ յուսոյն մերոյ...

775

ՅԱՅՄԱԽՈՐՔ

Լալայան, Ցուցակ Վասպուրականի 917 (անտիպ)

Գրիչ՝ Յովասափ

ա

Ազատեա ի մեղաց զգրիչն Յովասափ եւ քեղ փառք։

բ

Զաշխարհալոյս վարդապետն եւ զիմաստախոհ հայրապետն տէր Սարգիս եւ զծնաւղսն իւր Վաճրամ և զՆարգինս յիշեցէք ի Քրիստոս, եւ զեղկելի ծրողս, եւ Աստուած զձեզ յիշէ։

776

ԱԽԵՏԱՐԱՆ

Երևան 10110 (Ք. դար.)

Կազմող՝ Ով(ս)եփ

122բ Զվերչին կազմողս զՈվ(ս)եփ յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր աղաչեմ։ Որք աւետարանիչքս բերանեն՝ Աստուծոյ զմխիթարիչ /// քեն հոգով և մարմ[ն]ով։

777

ՃԱՌՆՏԻՐ

Երևան 1522

Գրիչ՝ Յոճաննէս
Վայր՝ Յոճանու վանք

ա

14ա ԶՈւրբէն զստացող գրոցս եւ զՅոճաննէս գրիչ յիշեսջիք յաղաւթս եւ ողջ լերուք ի Տէր։

բ

46բ Զստացող գրոցս զՈվրբէն աստուածասէր քահանայ եւ զգծողս Յոճաննէս յիշեսջիք ի Տէր։

գ

52բ Զաշխատողքս յիշեսջիք։

դ

191ա Զստացող դրոցս զՌովբէնն սրբազան քահանայ եւ զմեղ[ա]պարտ գրիչ զՅոհաննէնս յիշե[ս]ջիք աղաչեմ ի սուրբ յաղաւթս, եւ Տէր գձեղ յիշեսցէ, ամէն։

ե

208բ Բաղում ողորմած, ողորմեա Ռուբենայ քահանայի՝ ստացողի, եւ մեղապարտ գրչի, եղբաւր իմոյ Սուքիասի քահանայի, եւ քեղ փառք յաւիտեանս, ամէն։

զ

272բ ԶՌուբէն կուսակրաւն քահանա, որ ետ գրել ի հալալ արդեանց, սակս յիշատակի հոգւոց իւրոյ, յիշեսջիք ի Տէր։ Ընդ նմին՝ ղշունս։

է

296 ԶՌուբէն կուսակրաւն քահանայ, որ ըստացաւ զկտակս զայս յիշեսջիք ի Տէր։ Եւս և զանարժանս յորդիս Ագամա զմեղաւոր շունս։

ը

305ա Եւ ես մեղացեալ եւ անարժանս ի կրաւնաւորս Ռուբէն, որ և տրուպ ամենայն եղբարցս, որք կան ընդ հովանեաւ Սուրբ Կարապետիս ի վանս Յոհաննու, յիշել հայցեմ, որք կարդայք։ Եւս և զչետին գրիչս զմեղաւորս։

թ

340բ Զմեղաւոր շունս յիշեա։

ժ

389ա Զստացող սորին զՀռուբէն քահանայ յիշեսջիք եւ զծնողսն իւր։ Ընդ նմին և զմեղաւոր ջունս։

ժա

404բ Զհռուբէն ստացող սորին ի յիշես ի Տէր, եւս և զլի գործովքս անաւրենութեան։

ժբ

504ա Ամէնողորմած Աստուած քոց սրբոց բարեխաւսութեամբ ողորմեա Ռուվբէնի քահանայի՝ ստացողի գրոցս, ընդ նմին եւ յոքնամեղ գրչի Յոհաննիսի, եւ եղբաւր իմոց Սուքիասու Նորոգ վարդապետի ասացէք ամէն։

ժգ

539ա Կարի շտապով գրեցի, զի ղաւրինակն խլէին զՅովանիսի խոյլինց։

ժդ

543ա Ա՛յ վայ, ի քիթս ածին աւրինակիս տէրքս։

ժե

567բ Բազում նեղութիւն կրեցի ես Յոհաննէս նուաստ գրիչ ի Սուրբ Գրիգորիս, ոչ մարմնոյ վաստակ կամ նեղութիւն, այլ մտաց և խորհրդոց, յաղագս աւրինակի այսց ճառից, քան զի եղբայր ոմն կաթարոս, որոյ անուն Խոյլենց Յովաննէս ճանաչի, որոյ իւրն էր աւրինակ՝ մեծ գիրք, ոչ տայր ի գաղափար, կարծեմ վասն նախանձու և յորժամ վանքս և հայրն ետ, նա զչարեալ, գայր յափշտակել, իսկ ես ողոքանաւք խնգրէի։ Հազիւ կարացի գրել իբրև Ը (8) ճառ, և ապա խլեաց և տարաւ և Բ տետրն անգիր մնաց, իսկ իմ տարակուսեալ յԱստուած ապաւինեցի, յանկարծ պատահեցաւ գիրք մի տանջացուցակ*։

778

ՃԱՌԸՆՏԻՐ

Երևան 4371

Գրիչ՝ Յովաննէս

ա

168ա Աղաչեմ զձեզ ընթերցողք և լսողք առհասարակ, թողութիւն շնորհեցէք ի Քրիստոսէ գրողի սորա Յովաննէս իրիցուս և Գոհարազգին, որ ի թուղթս աւգնեց և Աստուած զձեզ յիշէ յիւր յարքայութիւն, ամէն։

բ

186ա Աղաչեմ զձեզ, ո՛վ ընթերցողք և լսողք, զանպիտան գրիչս զՈվաննէս և զԳոխարազին, որ աւգնական եղև գրոցս, յիշեցիք ի Քրիստոս և Աստուած զձեզ յիշէ։

գ

265ա ՋՅովաննէս գրիչ և զՍարգիսն, որ մասն երեսս գիրգս, յիշեցէք ի Քրիստոս և Աստուած զձեզ յիշէ։

դ

214ա Եւ զաշխատող գրոցս զՅովաննէս երեցս և զԳոխարազին որ աւգնեց ի թուխթս, յիշեցէք ի Քրիստոս...

---

* Այստեղ վերջանում է ձեռագիրը, հաջորդ թերթը ձաքարիա քանաքեռցու՝ ճառընտրի նորոգման հիշատակարանն է (էջ 568—569) և նրա իսկ կազմած ցանկը (էջ 570)։ Ըստ ճառընտրի նախավերջին նյութը «ԶՀ-Յոհաննէս պատմագիրն» է վերնագրված, որ բացակայում է։ Հովհաննես գրիչը, հավանաբար իրեն հանդիպած Տօնացուցակից լրացրել է Գրիգոր Սքանչելագործին նվիրված ճառի երկու տետրը և գրել Հովհաննես պատմագրի, այսինքն Դրասխանակերացու երկից ինչ-որ հատվածն։

ե

224բ ԶՍարգիսն, որ թուխթս աւգնեց, յիշեցէք ի Քրիստոս և զՅովաննէս գրիչ, որ գրեցի բաղում փափագանաւք, և Աստուած զձեղ յիշէ իւր արքայութեան, ամէն։

զ

275ա Ու զԼուսեր, որ աւգնեց ի թուխտս և զՅովաննէս գրիչս յիշեցէք ի Քրիստոս, և Աստուած զձեղ յիշէ։

է

288ա Աւա՛խ, ճանճս կու լափէ, քունս կու նեղէ, բանքս ղիս կու մաշէ։

ը

297ա Աւա՛խ, տաւթս կու նեղէ, ճանճ և լուս կա ու լափէ, ապայ բանքս կու մխիթարեն։

թ

304բ Զմեղապարտ գրիչ զՅովաննէս քահանայ յիշեցէք ի Քրիստոս և զծնողսըն իմ՝ զՊապերն ու զՄամատիկիկն՝ ըզփոխհատլքն ի Քրիստոս, և Աստուած յիշողաց ողորմեսցի յաւրն ահագին։

ժ

Զմեղապարտ գրիչս և զՇնոխվորն, որ ի թուխտս աւգնեց, յիշեցէք ի Քրիստոս։

ժա

Զփցուն գրիչ Յովաննէս քահանս և զՈւմեկն, որ աւգնեց ի թուխթս, յիշեցեք ի Քրխատոս։

ժբ

Աւա՛խ, ճանճս կու լափէ, լուերս կու կծեն յաւթս և քունս կու նեղէ, Ղազարոս կու մխիթարէ*։

779

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

Երուսաղեմ 460, Պողարյան, Ցուցակ Բ, էջ 439—440

Գրիչ՝ Յովհաննէս

ա

Կատարեցաւ առաջին գիրք Յովհաննու սրբոյ, Կոստանդինուպաւղսի հայրապետի։

Արդ, որք ընթեռնոյք կամ գաղափար գնելով փարթամանայք ի ճոխ և յանկապուտ մեծութեանցս, յաստուածային գերոնսակ իմաստից, յիշեսջիք ի Քրիստոս զաշխատաւղք սուրբ կտակիս, նախ զսրբազանն Կիւրակոս վարդապետ, որ բազում աշխատութեամբ եւ ըղձափափաք տենչմամբ՝ յասորւոց գրոյ եւ լեզուէ եւ ի յունականէն, քերթողական արհեստիւ թարգմանեալ ի հայ բարբառ եւ գիր։ Ընդ նմին եւ զաստուա-

* Բազմաթիվ են այս կտոգի հիշատակագրությունները։

ծարեալ եւ գեղեցկանուն հարսն իմ ըստ հոգւոյ, զտէր Կոստանդին կաթողիկոս, եւ զԳրիգորէս վարդապետ իմ եւ Ստեփանոս, եւ զաղբերն իմաստից Դաւիթ, եւ զայլ աշխատողսն յիս եւ կրթաւղք, եւ զուսումնակից եղբարսն, եւ զըստ մարմնոյ սպասաւորսն եւ երախտաւորսն, զի բեւր բարիս համայնքն հանգստիւ դացեն ի Քրիստոսէ Աստուծոյ, ամէն։ Յիշել աղաչեմ կրկին թախանձմամբ եւ զանարժանս, զբծաւորս, զխարեալս ի խղճէ, զբեւր չարս, եւ զպարտաւորս Յոհաննէս՝ գրաւղ եւ ստացաւղ սորա, եւ արտասուաթոր կսկծմամբ, ողբովք լացէք զեղկելիս, եւ թողութիւն յԱստուծոյ խնդրեցէք անեղրական եւ կամաւք մեղուցելոյս, եւ Աստուածն բնաւից՝ ձեր միջնորդելովն՝ որպէս հաւատամ, փրկիմ ի տանջանացն զոր ակն ունիմ, եւ Տէր ձեզ շնորհէ։

Բ

Սպանաւղք* չարին մեծ գաղանի,
Եկեալք զկնի մեր յաշխարհի,
Նետիւք սպանէք յորմէ խոցի,
Նեղեալ դեւրիս մարմնով յոգի։
Աղաւթիւք ձեր մասն տացի,
Համայնց հոգւոց նախ որք զկնի,
Որով եւ ձեզ պարդեւեսցի,
Յարդիս եւ յաւրն աներեկի։

Գ

Սնոտի փառացս արհամարհաւղք,
Երկնից բարեացն ժառանգաւղք,
Նոր սուրբ խահից այս ճաշակաւղք,
Նորոգ գինեաւս այս ղմայլաւղք։
Արտասուաւք ինձ աւժընդակաւղք,
Հողոյս ձեր լիք եւ վերբերաւղք,
Որով եւ դուք մեր հետեւաւղք,
Յերկինս գրեսջիք գնոյն վայելաւղք։

Դ

Պարու պատուական ուշմագունիցդ պաղատիմ յիշել զՅոհաննէս գրիչ մերովքն ի Քրիստոս Յիսուս։

Ե

Աստուածարելոցդ եղբարց, վայելողացդ ղսա եւ աւգտողաց, պաղատիմ մեղաւոս Յոհաննէս գրիչ, թողութիւն մեղաց ի Քրիստոսէ խնդրեցէք ինձ եւ մաւրն իմ Միքայի, եւ Տէր ձեզ տայ։

---

* «Այս և հաշորդ ոտանավորներու տողասկզբի տառերը կձևացնեն գրչի անունը՝ Յոհաննես, վարեն վեր կարդալով» (Ծ. Ն. Պողարյանի)։

գ

Զանբերս ի բարիս, եւ զպտղեղս ի չարիս, զմեղաւոր հողս ձեր Յոհաննէս ստացաւղ եւ գրաւղ, յիշեսչիք ի Քրիստոս թողութեամբ սխալմանց, եւ Աստուած ձեզ տացէ։

է

Արատատէր եւ բծկան ծառայակից հողս Յոհաննէս վեհիդ աստուածամերձից պաղատիմ, ի բարի յիշմանց ձեր մի տարագրէք զեղկելիս, այլ գթով յանդուրս մարդասիրապէս գթալ, եւ բեւր պարտուց իմ թողութիւն ողորմութեան խնդրել, որ եւ ձեզ տացի ի Քրիստոսէ։

780

ԱԻՏԱՐԱՆ

Երևան 5317

Գրիչ՝ Յովհաննէս Առհիշեցի
Վայր՝ Ասպիսնակ

ա

289բ Փառք ամենասուրբ Երրորդութեանն ամէն։
Շնորհիւ Տեառն և ողորմութեամբն Աստուծոյ սկսա և կատարեցի զսուրբ Աւետարանս զայս Հաւր Աստուծոյ՝ ծնաւղի միածնի Որդւոյ և արտաքս առաքողի Հոգւոյն Սրբոյն, Որդւոյ Աստուծոյ՝ ծննալ ի Հաւրէ անճառելի էութեամբ ի վեր քան զբան, նոյն պատճառ գոլ Հոգւոյն ըստ Հաւրն բնութեան, Հոգւոյն Աստուծոյ՝ բխումն անհատաբար գոլ ի Հաւրէ և փառակից Որգւոյն միածնի ինքեան միայն գիտելի, որոշեալ ի միմեանց մերոց իմաստից, բնութեամբ յաւետ անանջրպետ գոլ ի միմեանց, յորում բաժանումն որոշման ոչ է դտանել, իսկ ըստ անձնաւորութեան նոցին, ըստ դիմաց տարորոշ գոլով յերերացոր և հասարակաթիւնն դիմացն ոչ է իմանալ, դի մի բնութիւն ասել՝ զերիսն դաւանեմք ըստ անձնաւորու ///

բ

100բ ///Յովհաննիսի Աւետարանիս առնէ, զհատուցումն ի Սուրբ Յովաննիսա առնու և յիր սուրբ Աւետարանէս, ամէն։

գ

87բ Գանձք կենաց Որդի<ւդի> միածին, գանձիդ ծածկելոյ գտող ղիս արասցես զսուտանուն աբեղա զՅոհաննէս և զԱւետիս կրաւնաւոր, որ փափագանաք և ջերմեռանդ սիրով և յուսով և հաւատով ակն ունելով
88ա ողորմութեան Աստուծոյ և ի սուրբ||Աւետարանիս գրելէս յորդորէր զմեզ աւրըստաւրէ, որով ընդ աջեացն ընկալացի զվիճակ տնական կենացն ընդ որոց իմաստուն կուսանացն դրեալ ի գիր կենդանի վերին դպրութեան, և զիս և ծնողքն իմ, ամէն, ամէն։

դ

267բ Աստուած ողորմի Յոհաննէս աբեղայի Ասպիսրնկավանցոյ, որ զԱւետ[արա]նս գրեցի* անպակաս գանձ հոգոյ իմոյ, որ կարգա և ի խորոց սրտէ յիշէ։

ե

269ա Ես Յոհաննէս Աբնիշեցի
Որ իմ ձեռաւքս գրեցի
Զաստուածային բանս ի քարտի
Յիշատակ յետ ժամ[անակի]

զ

18բ /// [որ ո]ք կարդա և զԱւետիս հոգևոր, որ աւրըստաւրէ մխիթարէր ղիս հոգեւոր և հայրական գթութեամբ։

781

ԱԻԵՏԱՐԱՆ

երևան 265

Գրիչ՝ Յոհաննէ՞ս

ա

1ա Սուրբ Աւետարանս Դաւթի եպիսկոպոսին է, եւ Յակոբայ։

բ

59ա Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ողորմեա ստացողին Գէորգա։ զՅոհաննէս յիշէ, զՅակոբ և զԴաւիթ աղաչեմ։

գ

203ա Դաւիթ վարդապետին է սուրբ Աւետարանս։

դ

204բ Դաւթի և Յակոբ եղբաւր է սուրբ Աւետարանս**։

---

* Ձեռագիրը հետագայում նվիրվում է «ի դրունս Սուրբ Գրիգոր Նարեկացոյս և ի սուրբ գերեզմանիս, և ի Սուրբ Սանդխտոյս այն դառն ժամանակ, որ զամէն խոտ ու բանջար կերանձս։ Նվիրող տեր Զաքարէն և տնտես Ղարիպիկը նվիրում են նաև մի Տարէգիրք և մի Գանձատետր։

** Միասյուն գրություն ունի. էջի որ մասում վերջանում է մի Աւետարանը, նույն տեղից սկսվում է մյուսը։

782

ՃԱՌԸՆՏԻՐ

Երևան, Պատարիկ 1230 (ԺԲ դ.)

զՅոճաննէս *վարդապետ և զծնօղս իւր յիշեսջ ի Քրիստոս։*

783ա

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 2812

Գրիչ՝ Յոճաննէս

70բ *Սուրբ Աւետարան Քրիստոսի, քո զաւրութեամբդ զաւրացո զիս և տուր ինձ կարողութիւն տկարիս և ծովացեալ մեղաւորիս* Յովաննիսիս *գծողի սորա և աւգնական լեր։ Սուրբ Աւետարան, լեր ինձ յոյս և հաստոյ զիս ի յաւարտումն յորդահոս աղբիւրացս սուրբ աւետարանչացս և ողորմեա ինձ և յիշողաց մերոց, ամէն։*

783

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ

Երևան 5365

Գրիչ՝ Յովաննէս

218ա *Աղաչեմ զընթերցողսդ և զլսողսդ, յիշել յաղաւթս ձեր* զՅովաննէս *գծող և զհայրն իմ* զՄոմեղէն, *և Աստուած զձեզ յիշէ, ամէն։*

784

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 5549

Գրիչ՝ Յովանէս
Վայր՝ Առապատ

205բ *Աստանաւր յանդ ելեալ աւարտեցաւ լուսափայլ է շնորհածիր գերարփիս այս, գերալուր սուրբ Աւետարանս, ի յանապատիս, որ կոչի* Առ[ա]պատ, *ընդ հովանեաւ Սրբոյ Գէորգա զաւրաւարիս, ձե[ռամ]բ անարհեստ և [թ]արմատ[ա]ր գրչի* Յովանիսի *և սուտանուն կրաւնաւորի///*

785

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆՉԻՆ

Երևան 5938

Գրիչ՝ Յոճանէս

ա

226բ *Քրիստոս Աստուած, քո սուրբ առաքելոցն երկոտասանիցն և եթանասնից և սուրբ հսկող վարդապետին* Գրիգորի *և ամենայն սրբոց բարե-*

խաւսութեամբ ողորմեա Թոմային, և ծնողաց իւրոց, և գծողի սորա Յոհաննիսի, և կարդացողիս և լսողացս ամենեցուն, և քեղ փառք յաւիտեանս, ամէն։

Բ

188բ *Ջտառապեալ ծրողս Յոհաննէս յիշեցեք ի Տէր։*

786

ՏԱԻՆԱՊԱՏՃԱՌ

Երևան 5862

Ստացող՝ Յովաննէս Կարբեցի
Վայր՝ Կարբի՞

ա

141բ *Ջ*Յովանէս վարդապետ Կարբեցի և զեղբայրն իմ զՍուփիաս յետին ստացողք բանիս, յաղաւթիւք յիշեցէք և Աստուած զձեզ յիշէ։

բ

281բ *Ջ*Յովանէս յետին ստացող սորին և Սուփիաս եղբայր մեր յիշեցէք ի Քրիստոս և դուք յիշեալ [լիջիք]։

գ

Կազմող

Ընդ նոսին և զեղկելի կաղ[մ]ող սորին։

787

ԱԻԵՏԱՐԱՆ

Վենետիկ 185, Սարգիսյան, Ցուցակ, Ա, էջ 772

Գրիչ՝ Յուսէփ

*Ջ*Յուսէփ նուաստ ծառայ՝ ամենայն ծառայից Աստուծոյ աղաչեմ յիշել ի Տէր, և Աստուած ձեզ պարգեւես[ց]է ընդ միոյ՝ ճ (100)։

788

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 315

Մաղկող՝ Ուսէփիկ

220ա [Սեփա՞]նոսիկայ* *Աստուած ողորմեայ։*

---

* Գրված Յովհաննու Աւետարանի խորանում։ Ավետարանչի նկարի փոխարեն հետագա վերանորոգողը դրել է Մարիամ Աստուածածնի նկարը։ Ավետարանիչի նկարում, որ այժմ չկա,

Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, յիշէ զվադն զՈւսէփիկ մի[ւ]ս անդամ գալըստեանդ ի կենս աւիտենից, ամայն, եղեսցի։

789

ՃԱՇՈՑ

Երևան 940

Գրիչ՝ Ներսէս

ա

156բ *Քրիստոս Աստուած բարեխաւսութեամբ սրբոյն Յովաննու Մկրտչին ողորմեա բաղմ[ամ]եղ գրողիս* Ներսիսի, *և քեռոյն իմոյ* Յովաննիսի, *և* Սարգիս *աբեղի* Նարեկացոյ, *որ զթուղթս կոկեց, և ծնողաց իւրոց, և որ ղամէնն ասեն։*

բ

95ա *Ջստացաւղ և զաշխատաւղ լուսազարդ մատենիս զՆերսէս յիշեսչիք, և զծնողսն իմ, և զքեռին իմ* Յովաննէս, *և Աստուած զձեզ յիշէ։*

գ

6ա Ներսէսս *ծաւկաւղ խորանիս, ծառայ Քրիստոսի Աստուծոյ է*։*

դ

5բ *Յերեսս անկեալ աղաչեմ մեղաւոր հողս* Ներսէս՝ *զառաջնորդ անապատիս, որ ի տարին մէկ աւր զիս յիշատակէք ի պատարագն և Աստուած զձեզ յիշէ, ամէն**։*

ե

206բ *Ո՛վ եղբարք, ի թղթիս գինն ոչ եպիսկոպոս աւգնեց և ոչ հայրապետ, և ոչ այլ ոք եղբարցս, որ բացյայտով էի գրել և արձակ-արձակ և դրադարձով, մեղայ Աստուծոյ***։*

Հավանաբար գրված է եղել առաջին բառի ոկիզբը՝ [Ստեփան]նոսիկայ ու Ուսէփիքը ծաղկողն է։

* *Գրված է խորանի մեջ։*

** *Գրված է թերթի մաքուր էջի վրա, հավանաբար գրությունից ջատ հետո, երբ իր գրած և սեփական ձեռագիրը նվիրել է անապատին և պատարագ է կամենում։*

*** *Գրչը իսկապես գրել է ոչ «արձակ-արձակ», առանց բառանջատման և առանց կանոնավոր տողադարձի։*

790

ԱՆԴՐԷԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Վիեննա 351, Տաշյան, Ցուցակ, էջ 804

Ստացող՝ Ներսէս վարդապետ
Վայր՝ Վանկայ բերդ

Ես Ներսէս վարդապետս փափաքէի Տեսլեան Մեկնչի եւ ոչ կարէ[ի] գտանել բազում, այժմ գտա ի մէջ գրեանց թագաւորաց, որ կայր ի Վանկայն, ի գահն Կիլիկոյ, եւ առի հալալ արդեանց իմոց եւ եդի յիշատակ ի վանքն Սուրբ Կարապետու։ Ով ոք գողանա եւ կամ ծախէ մասն Յուդայի եւ պատիժն Կայենի առցէ։

791

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7583

Գրիչ՝ Ներսէս

77ա Ներսիսի գրչի անպիտանի և վատթարի Յիսուս Քրիստոս ողորմեացի, ամէն։

792

ԳԻՐՔ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ

Երևան, Պատառիկ 828 (1230 թ.)

Ստացող՝ Նասրադին Թավրիզեցի

ա

1բ Կամաւ ամէնակալին Աստուծոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ես Նասրադինս, Շիրին սարկաւագի որդիս Թաւրիզեցի, տեսայ զընթերձուածս ի ձեռն այլազգեաց, առի և տվի յեկեղեցին։

Արդ, ով կարդայք, մեղուցեալ ծառայս Քրիստոսի յիշեսցիք ի Քրիստոս, և զրկենակիցն իմ զՈվսումելիք և զվերայփոխեալ ի Քրիստոս զաւակն իմ զՍադադին և զծնողս իմ։

բ

Հետ. ստացող՝ Սաեփան դպակկար

1ա Եւ արդ, ես՝ մեղացեալ ծառայս Աստուծոյ Սաեփան գտակկարս, ստացա զկտակս ղայս սուրբ՝ յիշատակ ինձ և կենակցին իմ Մամախաթունին, և հաւր իմ Աւաարշահին և մաւր իմ Սիրմասթէ, և այլ ամենայն ազգականաց իմոց՝ կենդանեաց և փոխեցելոցն ի Քրիստոս։ Եւ ետու զդին դորա ի հալալ յարդեանց, յընչից և յաշխատանաց իմոց՝ ըստ Տեառն հրամանին, եթէ վաճառ ///

793

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7739 (1001 թ.)

Նորոգող՝ Նոռհատ

ա

63բ *Քրիստոս Աստուած, քո սու[ր]բ Աւետարանիս բարեխաւսութեամբ եւ սուրբ աւետարանչացն և սուրբ առաքելոցն, յիշայ զՆոռհատ քահանայ և զծնողսն իւր և զկենայկիցն իւր, և ողորմայ ամենիցուն, առհասարակ ամենայն աղ[գ]ականեքն, որ ի իւր հալալ արդեցն նորոգեց զսուրբ Աւետարանս յիշատակ իւր, Քրիստոս վայելել տացէ բազում ժամ[ան]ակ։*

Ո՛վ պատուական քահանայք, որք կարդայք կամ աւրինակէք, կամ գին[չ] և իցէ, զՆոռհատ քահանայ յիշեցէք, եւ մեղաց թողութիւն խընդրեցէք, եւ որպէս յիշէք այնպէս և Քրիստոս զձեզ յիշէ, և Քրիստոսի փառք յաւիտենս, ամէն։

բ

Տէր Աստուած ողորմայ Յովանիսի մեղապարտի և ծնողաց իւր, և կենայկցի իւրոյ, ամէն, և որ ողորմութիւն հայցէ, ողորմութեան գտանէ յԱստուծոյ։

794

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 10359 (1201 թ.)

91ա Նահապետին հայրական Աւետարան է, իւրեանց նախնեացն է մնացէր, ոչ ոք հրաման չունի, քանի որ կենդանի՝ իւր ձեռն, յետոյ իւր որդոյն է, ազգաց ազգս մնացէր։

309բ Քուրչի Նահապետին հայրական Աւետարան է, իւրեանց նախնեացն մնացեր, ոչ ոք հրաման չունի՝ քանի որ կենդանի է իւր ձեռն է, յետոյ՝ իւր որդոց յազգաց յազգս։

100 Փառք ամենասուրբ Երրորդութեան Հար եւ Որդո և Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս, ամէն։ Ես Ոաղաս, իմ կողակից Մարի զայս Աւետարանս ի Մարտիրայ ///

795

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 5241

Գրիչ՝ Պաւղոս

357ա *Զստացաւղ սուրբ Աւետարանիս զԳրիգոր և զՎարդան հանգուցեալ, աղաչեմ յիշել ի Տէր, ընդ նմին և զՊաւղոս գրիչ և զծնաւղսն իմ հայր և մայր, և եղբարբք հանդերձ, և Քրիստոսի փառք։*

796

ՏԱԻՆԱՊԱՏՃԱՌ

Ն. Ջուղա 418, Տեր-Ավետիսյան, Ցուցակ, էջ 630

Գրիչ՝ Պետրոս

ա

205ա Ջմեղապարտ գրիչ զՊետրոս դպիր աղաչեմ յիշել ի Տէր։

բ

51բ Ո՛վ սուրբ ընթերցողք, յիշեցէք յաղօթս ձեր զԹորոս կրօնաւորն, որ փափաղանօք ետ գրել, և զմեղապարտ գծողս յիշեցէք ի Քրիստոս և Աստուած զձեզ յիշէ, ամէն։

797

ՇԱՐԱԿԱՆ

Տեր-Ավետիսյան, Ցուցակ Նախավկայի վանքի, էջ 123

Գրիչ՝ Պաւղոս

138բ ԶՊաւղոս գրիչս, և զծնաւղսն իմ, և զքաջ քարտուղարն զԳառնիշն յիշեցէք ի Քրիստոս, և Աստուած զձեզ յիշէ, ամէն։

798

ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ

Երևան 556

Գրիչ՝ Պետրոս
Վայր՝ Այաս

ա

21ա Զստացող Նամատսիս զսրբասնեալ փիրիսկոպոսն զտէր Սէք յիշեցէք ի բարի;

բ

63ա Աղաչեմ զձեզ, ո՛վ սուրբ ընթերցողք, որք ընթեռնուք և ուգտիք կամ ուրինակէք, մեղաց թողութիւն խնդրեցէք յԱստուծոյ տէր Սէքին ստացողի Նամատսիս։

գ

73բ Սրբասնեալ և մաքրակենց[աղ] ամենիմաստուն և պատուական փիրիսկոպոսին Այասու տէր Սեքի՝ ստացաւղի սուրբ և ուրինադիր Նամատսիս ողորմեացի տէր Յիսուս Քրիստոս և թողեէ զպարտիս նորայ։ Հնդ նմին ողորմեացի Տէր Աստուած ծնողաց նորին և եղբաւր իւրոյ Սիոնի քահանայի։

Հնդ նմին և մեղուցեալ գրչին Պետրոսի ողորմեացի Քրիստոս Աստուած, ամէն։

799

ԱԻԵՏԱՐԱՆ

Վեննեփիկ 92, Սարգիսյան, ցուցակ Ա, էջ 416—417

Ստացող՝ Պետրոս

Ես Պետրոս քահանայ, որ պարգևեցի զսուրբ Աւետարանս, զոր ստացայ ի հալալ արդեանց իմոց, և ետու ի գեղն իմ Զաւսոն, զի կացցէ յեկեղեցին ի Սուրբ Քրիստափոր, և ընթերցցի միշտ ի սուրբ եկեղեցին, և մի ոք իշխեսցէ հանել զսա անտի, զի մի տարագիր ելցէ և ինքն ի յաւիտենական կենացն. այլ խնամով պահեսցեն քահանայք, որք կայցեն անդ։

800

ՇԱՐԱԿԱՆ

Երևան 2414

Գրիչ՝ Պետրոսիկ

204բ Ձմեղապարտ դրչիկ Պետրոսիկ սարկաւագս յիշեա ի Քրիստոս և Աստուած ///

801

ՈՍԿԵՓՈՐԻԿ

Վեննեփիկ 268, Սարգիսյան, ցուցակ Բ, էջ 882

Գրիչ՝ Ռշտակէս

ա

Ձ[Ռշտակէս անարժանս աղաչեմ յիշել ի Տէր։

բ

Գրիչ՝ Սեփաննոս

Ծուիցն անբաւիցն՝ բնակցութեանցն փառք յիմէ յանարժան բերանոյս ի Սեփաննոսէ։

գ

Գրիչ՝ Յոհաննէս

Ո՛վ արքա իմ և տէր, բարուն բարի և իմաստուն, համայն ցանկալի Կիրակոս։ Ձսակաւ գծեալս ընկալ ի մէնջ, և զքո աղքատս հոգով Յոհաննէս մի մոռանայր ի մաքրափայլ յաղօթս քո, իսկ գրոյս անմեղադիր [լեր], զի կար իմ այսչափ էր։

802

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՍՈՒ ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼՒՈՅ

Երևան 2609 (1184 թ.)

Ստացող և կազմող՝ Սանակ Վարդապետ
Վայր՝ Բալուա քաղաք

ա

243ա Ես նուաստ ծառայս Յիսուսի Քրիստոսի Սանակ վարդապետ յոյժ փափագանաւք սիրով Հոգւոյն առի զսուրբ գիրքս զայս զՄեկնիչս Ղուկասու Աւետարանին, և եդի ի միասին զՄայթէոսի Մ[եկն]ինչն, զոր գնեալ էի, և ձեռաւք իմովք կազմեցի յոյժ սիրով, և եդի ինձ և իմ սիրելեացն լինել յիշատակ բարի, ակն ունելով առ Քրիստոս տալ մեզ զերկնից արքայութիւնն և զմեղաց թողութիւն, ի ձեռն բարեխաւսութեան սուրբ գրոցս, ամէն։

Արդ, ոչ գին կայ այս գրոցս և ոչ ծախ, այլ որ վարդապետ լինի յիմ ազգէ և կամ ի յայս քաղաքէ, ի Բալուայ, նայ ժառանգէ զգիրքս զայս Աստուծով։

Տէր Յիսուս Քրիստոս, ողորմեցի Յակոբ երիցու Հոգւոյն, որ երետ զՂուկասու Մեկնիչն և գին ոչ էառ, այլ կամեցաւ իւր յիշատակ լինել առ մեզ, մեղաց թողութիւն և զերկնից արքայութիւնն շնորհեսցէ նմայ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, ամէն։

803

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՑ ԵՐԳՈՑՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԵՒԵԼՑՒՈՅ

Երևան 5452

Գրիչ՝ Սարգիս

ա

Արդ, ցանկացող եղեալ այս Հոգելից իրի, երիցս երանեալ բարի անուն և անդրանիկ վարդապետն Մխիթար, և ետ գրել զսայ անարժան և մեղսայմակարթ անձին և փցուն գրչի Սարգսի, զոր և յիշեսցէ զսայ Քրիստոս Աստուած ընդ սուրբս իւր, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

բ

316ա Զարժանի յիշատակաց զգերահոչակ և բարերջանիկ վսեմախոհ բաբունին Մխիթար՝ զստացող տառիս յիշեսջիք ի Տէր Յիսուս, որք հանդիպիք սուրբ մատենիս։ Եւ թէ յիշէք զփցուն գրիչ զՍարգիս բարի կամաւք յաղաւթս ձեր։

գ

Գրիչ՝ Յովհաննէս

118բ Յերեսս անկեալ ա[ղա]չեմ անարժան գրիչս Յովանէս սպասաւոր բանի ի վանից Վանականին յիշել ի բարի*։

---

* 177 թերթից սկսած Հովհաննես գրչի գործն է։

դ

Կազմող՝ Յոհան

65բ Աղաչեմ յիշել զանարժան կազմողս զՅոճան և զծնաւղսն իմ, և զՅովանէս աշակերտ իմ իւրայ[ն]աւքն հանդերձ, և Աստուած զձեզ յիշէ։

804

ՏԱԻՆԱՊԱՏՃԱՌ

Երևան 5862

Գրիչ՝ Սարգիս

ա

12ա եւ Տարսաիճին ողորմութիւն և ծնողաց իւր։

բ

49ա Ջեղբարան զՏարսաիճն և զԹաղ[ադին]։

գ

170բ Ընդ նմին և զհարազատն իմ Տարսաիճն՝ արեամբ կատարեալ։

դ

181բ Ջտառապեալ ոգի Սարգիս յիշեցէք, ո՛վ սուրբ միաբանք։

ե

188ա Որոց բարութեանց արժանի արասցէ զՏարսաիճն։

զ

227ա եւ Սարգսի, և ծնողաց իւրոց և եղբարց ողորմութիւն։

է

310բ եւ զանարհեստ գրիչս Սարգիս յիշեա վասն Աստուծոյ։

805

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 4166

Գրիչ՝ Սարգիս

ա

13բ Սորա բարեխաւսութեամբ Քրիստոս Աստուած ողորմեա զԹաղադինն, սրբոց մասնակից արա։

Բ

17բ Եւ Սարգիս մեղաց թողութիւն և ծնողիս։

Գ

35ա Զփոխելն ի Քրիստոս զԹադադին՝ արեամբ ներկել, յիշէ։

Դ

104բ Փառք և պատիւ ի նմանէ ողորմութիւն և քաւութիւն տառապեալ ոգոյս Սարգսի, ամէն։
զՅովաննէս յետին սպաս[աւ]որ յիշեցէք։

Ե

205բ Ջտառապեալ ոգի Սարդիս աղաչեմ յիշել ի Տէր, ո՞վ սուրբ վարդապետք եկեղեցոյ, և զտարաժամ գնացեալ եղբայրն իմ ի Քրիստոս՝ զԹաղիադինն։

Զ

216բ Բանք հաւատոյ Վանականին՝ իմ հոգևոր հաւրն Վարդանա քաղեալ յիշատակ նմա։
Զեղկելի գրիչս յիշել աղաչեմ զեղբայր։

Է

217ա Եւ Յիսուսի Աստուծոյ իմոյ փառք և ողորմութիւն ի նմանէ Սարգիս և հարազատն իւրոյ Թաղադինն, ամէն։

Ը

254բ ՋՍարդիս գրող և ղստացաւղ յիշեցէք յաղաւթս։ Քրիստոս Աստուած երկնից արքայութեան արաւ զՆլթի և զԹադ[ադին]։

Թ

257 Եւ զՍարդիս յիշեա, և զծնողսն իւր՝ զՍիմեոն և զՆլթի, և Աստուած զձեզ յիշէ, ամէն։

Ժ

Գրիչ՝ Յոհաննէս

288ա Ջտառապեալ Յոհաննէս յիշեա և մի մեղադրել։

806

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6202 (909 թ.)

Ստացող՝ Սարգիս

ա

208բ *Սրդ, ես՝ յամենայնի նուաստս տէր* Սարգիս, *ստացայ սուրբ Աւետարանս անչինչ յիշատակ ինձ և իմ ծնաւղացն։ Որք ընթեռնոյք, յիշեցէք ի Քրիստոս։*

Սուրբ խաչի վանից էր։

բ

Սուրբ խաչի վանից է սուրբ Աւետարանս, մի ոք իշխեսցէ հեռացուցանել ի Սուրբ Խաչէս, ղի մի ինքն յողորմութենէ Աստուծոյ հեռասցի։

*Սուրբ Խաչիս է։ [Սուրբ] Խաչիս է, Աստուծոյ վկայութեամբն Սուրբ Խաչիս է**։

807

ԽՐԱՏԳԻՐՔ

Երևան 5929

Գրիչ՝ Սարգիս

199ա *Ջ*Սարգիս գրիչ փցուն յիշեսջիք ի Տէր։

808

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Գրիչ՝ Սարգիս

Երևան 725

300ա *Ջրիւր քանքարաց պարտականս և զտառապեալս, զմեղաւք լցեալ գծաւղակս զ*Սարգիս *սուտանուն քահանա, աղաչեմ յիշել ի սուրբ յաղօթս ձեր։*

809

ԱԻԵՏԱՐԱՆ ՄԼՔԷ ԹԱԳՈՒՀԻՈՅ

Վեներիկ 86, Սարգիսյան, ծուցակ Ա, էջ 390, Մանրանկարչութիւն, Ա., էջ 21 (862 թ.)

Կազմող՝ Սիմեոն
Վայր՝ Վարագ

ա

360բ *Շնորհօք ամենակալ մեծանուն բարերարին Աստուծոյ, եւ բանիւ բանին Աստուծոյ, եւ* Աւագապիկին *յոգնամեղ աղախին Աստուծոյ եւ*

* *Այո Սարգիսը, հավանաբար, ուխտի առաջնորդն է և ձեռագիրը ստացել է Ստեփանոս Տիրացուի մահից հետո (1202 թ.)։ Ձեռագիրը պատկանում էր Վանի Ս. Խաչի վանքին 1161-թվից։ Սարգիսը այն ստացել է վանքից և թողել վանքին, որի համար վճարել է։*

Տեառն Յիսուսի Քրիստոսի ծառայ, միարանեցայ ի հոչակաւոր եւ ի մեծ սուրբ ուխտի Վարագ, եւ ետու վերստին նորոգել զսուրբ Աւետարանս ի յարդար արդեանց իմոց, կազմութեամբ եւ կողափակ, նկարակերպ արծաթապատ զարդիւք զարդարեալ, յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց՝ պարոն Մանիլա եւ զո[ւ]գակցի իւրոյ։ Եւ արդ աղաչեմ զձեզ Տերամբ, ո՛վ դասք լուսերամից, որք լուսաւորիք յաստուածունակ տէրունեան ճառիցս և հանդիպիք այս սուղ ինչ գաղափարութեանց, լի սրտիւ ասասջիք. Տէր Յիսուս ողորմեա քաղցրութեամբ քով վերոյգրեալ անուանցս, եւ Քրիստոս Աստուած յիշողացդ եւ յիշելոցս ողորմեսցի կրկին կենաւք եւ երկրորդ աշխարհաւք, որ է աւրհնեալ յամենայնի յաւիտեանս։

Տինա եւ զթարմատար կազմող, սուտանուն սպասաւոր բանի Սի-մ[էոն] աղաչեմ յիշել ի Տէր։

Բ

138ա Աստուածարեալ եւ յոքներանեան մանկունք մաւր Սրբոյ Սիոնի, որք հանդիպիք տմա տեսութեամբ եւ լուսաւորիք ի սուրբ պատուիրանացս, յիշել զերախտիս աստուածութեանն իւրոյ, եւ զսէր կատարմանն զոր ճշմարիտ եւ Աստուածն բան Յիսուս Քրիստոս եցոյց ի մեզ, առնել եւ ուսուցանել ղսքանչելիք զաւրութեան նորա եւ զհրամանն պատուիրանաց նորա։ Աղաչեմ ի նոյն յարժանախոհմբ դասուէ յիշելի Տէր զԱւագ տիկին աղախին Տեառն, եւ զծնողս նորին, որ վերստին նորոգել ետ զսուրբ Աւետարանս կազմութեամբ եւ կողափակ արծաթապատ, նկարակերպ զարդիւք։

Գ

223ա ՋԱւագտիկին աղախին Քրիստոսի եւ զծնողսն նորին յիշեսջիք ի մաքուր յաղօթս ձեր, որ նորոգեաց զսուրբ Աւետարանս կազմութեամբ արծաթապատ նկարակերպ զարդիւք*։

810

ՄԱՆՐՈՒՄՈՒՆՔ

Ծրուսաղեմ 2492, Պողարյան, Յուցակ Ը, էջ 168

Գրիչ՝ Սողոմոն
Վայր՝ Նզնկա

ա

Արդ, աղաչեմ զամենեսեան, ո՛վ մանկունք առաքաստի երկնատուր փեսային, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՍահեփանոս կրաւնատուր, իմաստուն, հեղ և դիւրայհաւան և հանդարտ, և վարժեալ ամենայն իմաստութեամբ հոգւոյ և մարմնոյ, և փիլիսոփայական արուեստից վերահասու, քննութեան, և քաղցր ձայնից։ Ընդ նոսին յիշեսջիք զԽաչ երէց, և զՍարգիս երէց, և զԳրիգոր կրաւնատուր, և յիշաւդ աւրհնիք յԱստուծոյ և յիւր ընտրեալ սրբոցն։

* Սույնը կրկնում է նաև 329 բ և 462 բ էջերում։

Զգծող սորա զՍողոմոն սուտանուն քահանայ և զծնաւղսն իմ զՀեթում, և զմայրն իմ զՍուրաք, և զվարդապետն իմ զՅովաննէս քահանայ յիշեսջիք։

Գրեցաւ ի մայրաքաղաքս Յեզնկաս, ընդ հովանեաւ սուրբ աթոռոյն, և Կաթուղիկէին, որ է մայր մեր հոգւոյ։ Անմեղադիր լերուք, զի խիստ տկար և անզաւր մարմնով գրեցի, և ի վատ ժամանակի։

Բ

195 Զգրիչս սորա, որ եհաս ի զրաւ սորա, յիշեսջիք ի բարի, ո՛վ մանկունք առագաստի։ Ըստ նոսին զՍտեփաննոս կրաւնաւոր, որ շատ յեմեց գիրքս, նա սրտոտեցաւ, որ իրաւ էր։

Գ

Ստացող՝ Ստեփաննոս

Ես նուաստ Ստեփաննոս ստացա զաստուածայփառ կտակս, որ կոչի Երգ շարականաց, ի նեղ և յանձուկ աւուրցս, յորում դառնութիւն իսմայէլական ազգին սփռեալ կայր ընդ ամենայն աշխարհ։

Արդ, գրեցաւ և յարմարեցաւ աստուածային բուրաստանս, որ և յինքն ամբարեալ ունի բազում անուշահոտութեան լցեալ ծաղիկս զանազան դունոց և երանկոց, զաստուածայխաւսութիւն առաքելոց և մարգարէից, զոր և ծաւդեցին մեզ սուրբ վարդապետք եկեղեցւոյ, ըստ նմանութեան գորովալիր մանկասէր մայրց, զերկուս վտակս, եռայհիւսմամբ կարկաչահոս ձայնիւ ոռոգեցին յոլորտս եկեղեցւոյ՝ զաւրէն երգուց լուսաւորաց, յարբուցումն ոգոց ծարաւելոց, և ի լուսաւորութիւն խաւարեալ և մթացեալ անձանց մարդկան, ի վարժումն աստուածասիրաց անձանց, որ և զմարդիկ երկնաթռիչս առնէ, յերկրաքարշ թնդմանց, մարմնական կենցաղոյս վերայկանկնեսցէ, առ բարձր վիմին հաստատնոյ վերաթռիչս առնելով, տարեալ հասուսցէ ի վերին քաղաքն Երուսաղէմ, որ է մայր մեր ամենեցուն սուրբ եկեղեցի Աստուծոյ մերձ կացուցանէ. զոր աւրինակ ճարտար և անաւսրագոյն թևոյն, որ զգեղեցիկս յինքն ագամիտ աստուածասէր և պատուական ճարտարապետի, և նորընծայ քահանայի, կոչեցեալ անուն Սողոմոնի, զսայ առնել արժանի յիշատակի, և ըստ համաւրէն իւր ցեղի։ Ես Ստեփաննոս կրաւնաւոր ստացայ զսա յիշատակ ինձ և ամենայն ազգատոհմի, փոխեցելոցն յաստեացս և մնացելոցն աստ։

Արդ, յիշեսջիք զվերատեսուչն մեր զհոգևոր քահանայապետն և զուսուցիչն իմ զտէր Անեփս, և զփոխեցեալն առ Քրիստոս զտէր Գրիգոր, զհայրապատս նոցին զՍահակ երէց, և զեպաչանուն փիլիսոփայ, նաև զսնուցիչն իմ զԱզատաթազունի, և զեաթունմամն, և ըստ մարմնոյ ծնաւղքն իմ զՏղատիկին և զՍիմէովն, և զքոյրն իմ Վայլոց, և զհոգևոր քոյրն իմ զԱսուտայ խաթուն, և զպարոն Մեթարն, և զեաթուն մայրն, զՏիկնաց, և զբարի շառաւիղ զՔոյրմելիք, զՄանուկն և զԱւաք պարոնն ոսկերիչ, որ աւժանդակ եղեն ի գիրս յայս, և ետուն զարծաթ գրոցս,

յիշեսջիք շառաւեղաւք և ծնաւղաւք։ Յիշեսջիք զԱլէքս, և զեղբայրն իւր զվիան, և զհայրն իւրեանց Աղբարիկ, զփեսան իմ զՎարդիկ, և զքոյրն իմ Մամաաիկին, և զորդին իւր զՔարիմն և զՇատաւեն։

811

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7635

Գրիչ՝ Սոսթենէս

5բ Ջմեղապարտ եւ զանարժան գրիչ Սոսթենէս յիշեսցիք ի Տէր*։

812ա

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 5709

Գրիչ՝ Ստեփաննոս

ա

210ա Փառք ամենասուրբ Երրորդութեանն յերկնայնոց և յերկրայնոց և ի սանդարամետականաց և յիմոյն անարժան բերանոյս, յաւիտեանս յաւիտենից, ամէն։

212բ Յաղագս այսորիկ և ես տառապեալս հոգով Ստեփան կոչեցեալս ցանկացայ սրբոյ առաքելոյս Պաւղոսի, որպէսզի և պատուիրանաց Աստուծոյ լուսաւորութիւն պիտոյ էր...||յաղագս այսորիկ ցանկացող եղէ վշտացեալս ի մեղաց իբրև պարգև լուսոյ և կենաց և փրկութեան առիթ, և գծագրեցի ձեռամբ իմով ի ստոյգ և յ[ը]նտիր աւրինակէ։

Բ

Ստացող՝ Ներսէս

Արդ, ես նուաստ անուն և տկար ոգի Ներսէս կրաւնաւոր, յոյժ սրտի մտաւք ցանգացող եղէ այսմ լուսերանգ, հոգիանորոգ, վարդափթիթ, անուշահոտ բուրաստանի, և սրտի մտաւք փափաքեցա և ետու գրել զտառս աստուածաշունչ պատգամս Եսայիա մարգարէի, և աստուածաբան քարոզութեանն Պաւղոսի առաքելոյն և ետու գրել զսա կենդանի
214ա կտակ յիշատակ բարի||հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց և ամենայն արեան մերձաւորաց։

* Գրված է համաբարբառի խորանի ստորին գերանի վրա։ Սոսթենեսը, ինչպես երևում է, խորանների գծողն է համաբարբառի գրիչը և ձեռագրի ծաղկողը, որից ձեռագրում պահպանվել են ավետարանների գունավոր նկարազարդ սկզբնաթերթերը և լուսանցազարդերը։ Համաբարբառի խորանները գունազարդ չեն։

812

ՃԱՌԸՆՏԻՐ

Երևան 866

Գրիչ՝ Ստեփաննոս
Վայր՝ Փոս անապատ

ա

159ա Կատարեցաւ կարգ ճառիդ մեծի շաբաթուն մատնութեան Տեառն և չարչարանաց, զոր կրեաց կամաւ վասն մեր։ Եւ դուք, ո՛վ մանկունք եկեղեցոյ և դասք պաշտաւնէից մաւր մերոյ Սիոնի, լսողք և ընթերցողք աստուածաշունչ և հոգեշահ ճառիցս, որ ի սմա կան արձանացեալ, յորժամ կերակրիք յայս հոգևոր սեղանոյ, յիշեսջիք աղաւթիւք զԹադէոսն և զՅովաննէս հանդերձ քերբ և մարբ մերովք։ Բարի յիշատակի արժանի լիցի Թորոս, որ աւգնական եղև ի գիրս։

Այլ և զմեղապարտ գրողս յիշել աղաչեմ, զի և ես վասն այսր յուսոյ առի զայսքան աշխատութիւն յանձն իմ։ Եւ Աստուած, որ առատն է ի տուրս բարեաց, յիշեացս և յիշողացդ տացէ զողորմութիւն իւր Դամանոսի և Կոստանեանայ, և նմա փառք և զաւրութիւն յաւիտեանս, ամէն։

բ

6բ Զանիմաստ գծող սորա աղաչեմ յիշել ի Տէր և զծնողսն իմ զԹադէոս քահանայն և զմայրն իմ Թամար, և զեղբայրն իմ Յովաննէս։ Տէր ողորմեսցի նոցա և վարձս բարեաց պարգևեսցէ ի գալստեան իւրում և նմա փառք յաւիտեանս, ամէն։

գ

24բ Կուսածին ծնունդ, որ վասն փրկութեան աշխարհի խոնարհեցար ի բարձանց, ողորմեա ստացողի սորա Թորոսի և ծնողաց իւրոց Թադէոսի և մաւրն Թամարի և եղբաւրն Յովանիսի՝ հանդերձ քերբ փոխեցելոցն ի Քրիստոս։ Ընդ նմին և մեղապարտ գրողս աղաչեմ յիշել ի Տէր և Աստուած զձեզ չիշէ, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

դ

84բ Այս Պատմութիւն գիւտ նշխարաց Լուսաւորչին մերոյ, որ է այսմ աւուր յիշատակի վասն սակաւաբանութեան իբր յետընկեցիկ իմն գոլով, վասն որոյ յարմարեալ միացուցի ի սա զայս բան ներբողի, առեալ հատակոտոր ի դրելոց։ Եւ դուք լսողք և ընթերցողք, յիշատակի արժանի արարէք զտառապեալ անձն Ստեփաննոսի գրչի։ Յիշեսջիք իւր, և զտացող սորա զԹորոս, և զծնողս իւր, և զեղբայր Յովաննէս՝ հանդերձ քերբ փոխեցելոցն ի Քրիստոս։ Արդ, Սրբոյ Լուսաւորչիս աղաւթիւք և ամենայն սուրբ հայրապետացն, Քրիստոս յիշեսցէ զհոգիս նոցա և զձերդ արքայութեան իւրո և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Ե

182ա ...եւ յարութիւն կենաց պարգեւեսցէ Թադէոսի և Յովանիսի, Դամանոսի և Կոստանդնի, այլն բազմամեղ գրչի և որք զամէնն ասէն, ամէն։

Գ

192բ Որդի Աստուծոյ, որ իջմամբ քո երկիր զանկեալ բնութիւնս մարդկան յարուցեր, և որ յերկրի անարժանք յերկինս վեր համբարձեցեր, և ի հայրական փառսն մերձ կացուցեր ի միւս անգամ գալստեան քո ի դատաստան յարութիւնն կենաց պարգեւեաց Թադէոսի, Յովանիսի, և մարն իմոյ Թամարի, և բազմամեղ գրչի, և ամենայն եղբայրութեան սուրբ ոսխտիս Փոսոյ, և այնոցիկ, որ զԱստուած ողորմին խնդրեն մեզ, ամէն։

813

ՃԱՌԸՆՏԻՐ-ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Ակինյան, Ծուցակ Նիկոսիայի, էջ 27

Գրիչ՝ Սահփանոս
Վայր՝ Սիլծի

Ա

15բ Ողորմեսցի Քրիստոս Աստուած ստացողի տառիս Մշկոցի եւ ծնողաց իւրոց, եւ ամենամեղ գրչիս Սահփանոսի եւ ծնողացն իմոց, եւ ընթերցողացդ եւ լսողաց, ամէն։

Բ

60ա ...եւ անիմաստ գրչիս Սահփանոսի եւ եղբաւրորդւոյ իմոյ Հանէսի՝ կոկոզի Քղիս...

Գ

181բ Ամենառատ եւ բարերար Տէրն... ողորմութիւն շնորհեսցէ ստացողի տառիս Մշկոցի եւ ծնողաց իւրոց. ընդ սոցին եւ այլ քահանայից եւ տանուտերաց առհասարակ՝ մեծի եւ փոքու, երեւելի գեղջն Սիլծի, եւ մեզապարտ գրչիս, ամէն։

814

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երեան 4165 (1270 թ.)

Ստացող՝ Սահփանոս

148բ Արդ, ես վերջին ստացաւղ սրբոյ աստուածաջունչ տառիս՝ նուաստ ոգիս Սահփանոս աբեղայս, որ և մականուն Հայրուկ կոչիմ, աղաչեմ զամենեսին, որք հանդիպիք աստուածաբան տառիս, յիշեսջիք յաղաւթս ձեր զմեղաւորս Սահփանոս և ծնաւղս իմ, զհանգուցեալ հայրն իմ զՊարոնակն, և զմայրն իմ, և զեղբարսն իմ՝ զկենդանիս և զհանգուցեալսն, զՄարգարէն, և զՍիրուն, զՎասիլն, զՄեծամնունն, զՀայրապետն և զԱս-

տուածատուր, որդեական իւրեանց և զամենայն ազգատոհմն մեր, և մեղաց թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ, և Աստուած յիշելոցդ և յիշողացդ ողորմեցի, և նմա փառք յաւիտեան։

815

ՃԱՌԸՆՏԻՐ

Երուսաղեմ 787, Պողարյան, ծուցակ Գ, էջ 237

Ստացող՝ **Սահփանոս**

ա

Տէր Աստուած, բարեխաւսութեամբ Սուրբ Հայրապետացն **Յովճաննու Ոսկեբերանի** *եւ* **Գրիգորի Վկայասերի** *ողորմեա* **Սահփանոսի** *և ծնաւղաց իւրոց ամէն։*

Բ

*Ձստացաւղ գրոցս զ***Սահփանոս** *պատուական քահանայ յիշեցէք ի Տէր։*

816

ՃԱՌԸՆՏԻՐ

Վենետիկ 206, Սարգիսյան, ծուցակ Բ, էջ 166

Գրիչ՝ **Սահփանոս**

Տէր Աստուած, ողորմի ստացողի սորա **Զաքարիա** *քահանայի, ամէն։ Եւ զգծողս զ***Սահփանոս**։

817

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6519 (1231 թ.)

Ստացող՝ **Սահփանոս**

391բ *Արդ, աղաչեմ զամենեսեան, յիշման արժանի արարէք զիս զ***Սահփանոս** *էրէց, որ ստացայ զսայ յարդար վաստակոց իմոց յիշատակ ինձ, և ծնաւղաց իմիոց՝ ըզհանգուցեալն առ Քրիստոս զ***Գէորգ** *քահանայ, եւ Քրիստոսի մարդասէրի փառք յաւիտեանս, ամէն։*

818

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 9422

Գրիչ՝ Սուքիաս

19ա *Ջսակաւ աշխատողս զՍուքիաս, որ համարագրեցի ճապ[ա]ղ ցանկով և յառաշնացանկով, զի յոյժ ծերացեալ էի, յիշեցեք ի Քրիստոս**։*

819

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՃԱՌԻՑ

Ջմմառ 516, Ակինյան, Ոսկյան, Ցուցակ (Բ), էջ 120

Գրիչ՝ Սուքիաս

Յարութեամբ քով, Տէ՛ր, նորոգեա զհոգի ստացողի պատուական գանձիս Աստուածատրոյ, *եւ ծնօղաց իւր եւ եղբարց, ընդ նո[սին] եւ զնուաստ գրչի* Սուքի[աս]։

820

ՈՍԿԵՓՈՐԻԿ

Վենետիկ, 266, Սարգիսյան, Ցուցակ Բ, էջ 868

Գրիչ՝ Վասիլ

*Եւ արդ, աղաչեմ զամենիսեան որք ասկտիք ի սմանէ և կամ աւրինակէք, յիշեսցիք զ*Վասիլ *սարկաւագ* Ասանցի՝ *զախմար և զառաջին գրիչ, և Քրիստոս զձեզ յիշեսցէ։*

** Մատենադարանի չքեղորեն ծաղկված Ավետարաններից մեկն է, որի համեմատական տախտակները դրել է ծերունի Սուքիասը։ Հիմնական հիշատակարանը չկա, բայց կան հետագա հիշատակագրություններ. դրանցից առաջինը 1368 թ. Մչեցի Դավիթ երեցինն է, իսկ մյուսը՝ ձեռագիրը վերանորոգելու մասին է. բերում ենք վերջինիս կարևոր տեղերը. «...ի դառնութենէ ժամանակիս, որ այլազգիքն կու նեղացնէին... և եդեալ զսուրբ Աւետարան[ն]երս ի դարան [Սուրբ] Կարապետին և անփոյթ արարին, զի գլխաւոր ոչ կայր, և անցօ ժամանակ մի... և որժամ բացին, տեսին դի փդեալ էր թէ գիրք էր, ու թէ Աստուածաշունչ, ու թէ Աւետարան, և կայր, որ ի կարդալ չէր դալ, անփոփեցին ի հողն։ Ջոր լուեալ երկիւղեած և գրասէր ծառայն Աստուծոյ՝ Սիմէոն սարկաւագն, տրտմեալ յոյժ և փափաքանաւք ետ բերել ի Համիթ, և զամէնեսեան կրկին նորոգեաց, այն որ ձեռն հասաւ. և կրկին դարձոյց ի տաճար Սուրբ Կարապետին...*

...Վերըստին նորոգեցաւ սուրբ աւետարանս ի մայրաքաղաքս Համիթ... ի թուականին հայոց Ռ և ԻԳ (1574) ի յառաջնորդութեան քաջ րաբունապետին մերոյ տէր Յոհաննէս վարժապետին... և զի նա եղև պատճառ, որ նորոգեցան սուրբ Աւետարան[ն]երն, և ինձ անյարմար և սուտանուն Տրիկ կազմողիս անմեղադիր լերուք, զի խիստ չարչարեցա հետ աւլաին և նեղացուցի զպատուական Սիմէոնն։ Ինձ վա՜ սաէք և Ռ (1000) երանի տվէք նորան, որ զայս անցեալ և խաւարեալ գրիանքն ի լոյս եբեր՝ քանզի յորժամ քակեցի զսուրբ Աւետարանս հիւանդացայ մինչև ի մահ, և յորժամ ողջացա այլ ոչ յիշխէի մերձենալ ի սա, զի կարծէի թէ ի սոցանէ էր իմ հիւանդութիւնն, զի անարժան էի, և լրբութեամբ մերձեցա, և այս պատուական Սիմէոնն տարաւ զիս ի դատուր, հազիւ հաւանեցոյց զիս՝ զօր բռնութեամբ և զօր աւելի դրամ տալովն։ Վա՜յ ինձ եղկելոյս և ողորմելոյս, կու պարծենամ, ինձ փառք կու համարիմ, զի անմիտքն յանարժանս իւր բարձրացուցանէ զանձնս» (էջ 247ր—248ա)։

Ջմեղապարտ և զսակաւ աշխատողս զՎասիլ յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր, փցուն գրոյս մի մեղադրէք, զի շուտով գրեցի, և Աստուած ձեզ ողորմեսցի, ամէն։

821

ՏԱԻՆԱՊԱՏՃԱՌ

Երևան 5443

Գրիչ՝ Վարդան

64բ Ջփանաքիմաստ և զփցուն գրիչս Վարդան յիշել ի բարի մաղթեմ։ Նա եւ զպատուելի զծնաւղսն իմ՝ զհայր իմ զՍարգիս վարդապետ եւ զմայր իմ զԹագուհի, եւ զաշխատատուր աներն իմ զպատուելի քահանայն զՍերուանն, որ զհարկաւոր զպէտսն իմ հոգայր։ Զի թերեւս ողորմութիւն գտցուք յիշատղդ և յիշեցեալքս ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

822

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 194 (1207 թ.)

Գրիչ՝ Տիմոթ
Վայր՝ Հաղբատ

257բ Եւ ես մեղս[աթաւա]լ ծառայս Աստուծոյ Տիմոթս ի յել[ս դար]ոյս էտու ընծայ Սուրբ Կա[թուղ]իկէ[ս Հ]աղբատայ զՁորեքտասան թու[ղ-թըս] սրբոյ առաքելոյն Պաւղոսի, և զաստուածաբանութիւն մեծին
258ա Եսահայ, յիշատակ ինձ և իմոցն, որք աշ‖խատեալ են ի սայս եւ այս է իմ խնդ[իր]ս, որ անշորթելի մնայ ի սուրբ յարկեղս և Գ (3) դիրք այլ եմ տվեալ։ Եւ որ հանել ջանայ զսայ ի Սուրբ Նշանէս, յամաթ լիցի առաջի Աստուծոյ և զրկեալ յողորմութենէն Քրիստոսի, [ա]մէն։

823

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 4612

Գրիչ՝ Տիրաւագ

Ջեղկեզի Տիրաւագ յիշել ի բարի աղաչեմ։

824

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Երևան 7539

Գրիչ՝ Տիրապետ

ա

23ա Քրիստոս որ զխոստովանողսն քո սքանչելագործս արարեր ի վերա երկ[ր]ի, կանկնեա և զիս զմեղապարտ ստացող զԳրիգոր, և զհայրն իմ զՊողոս քահանա, և զգրիչս զՏիրապետս, և զծնօղս։

բ

30ա Սոցին աղաչանաւք ողորմեա Քրիստոս Աստուած ստացողաց սորա, և նուաստ գրչի Տիրապետի, և ծնաւղացն իմ Սէրոբէ քահանայի և Մինատիկնա։

գ

156ա ...եւ լուսաւորեա լուսով քոին զստացող գրիչս զՏիրապետս և ///

825

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 6058

Գրիչ՝ Տղապարոն

ա

124բ Աստուած վախելեալ տացէ յերկար ժամանակաւ զգիրքս զայս ստացաւզի իւր մեծազդոյն և սրբասիրին, և ըստ մարմնոյ հաւրեղբար իմոյ Իլարիոնի, որ է ուսուցիչ և խրատիչ և վարդապետ, ախմար գրչիկս վարժեալ ի սմա իմաստութեամբ և հոգևոր ուրախութեամբ, որ է խնդութիւն յափտենից, առ ի յիշատակ իւր և բարի ծնաւղաց և զարմից Քրիստոս զնացելոց, և զմնացեալսն նորա խախաղութեամբ և բարի և անարատ կենաւք պահեսցէ Քրիստոս ի կամս իւր։

125ա Եւ ետ աստի փոխելոյս երկն||ից արքայութեանն և անմահ ժառանգութեանն արժանաւորեսցէ, ամէն։ Այլ և զիս զտառապեալս և զունայնս յամենայն բարեաց, աղաչեմ յիշել յաղաւթս, ընթերցողք, եւ զբարի ծնողս իմ զաստուածասէրսն զպարոն Սահփաճոսն, և տիկին մայրն իմ զՊածան, և զեղբայր իմ զՄեծպարոն, զի այց արայսցէս Տէր՝ յաւր երեւելոյ իւրոյ և յաստի կենաց հոգով և մարմնով անփորձ պահեսցէ Տէր, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին մաւրն իւրո, ամէն։

Ամենայն բարոյ Քրիստոս սկիզբն և կատար։

բ

35ա Ջստացող անհաս իմաստից աստուածայնո, զբարի շառաւեղն ի լաւ արմատոց զՏպապարոնն՝ զգրող աստուածահաս իմաստից բարի յիշատակի արժանի համ[ար]ե[ցէք]։

Գ

96ա Տղասպարոյն ղվերոգրելսն ի միտ առ։

826

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7734

108բ Տէր մեր Յիսուս Քրիստոս, ի քո ահաւոր և ի միուս անգամ գալըստենդ ողորմայ Վալին հոգոյն և իր ծնողաց՝ Հարսանցին և Սբանտին, զի աւդնական եղեն սպ[իտակ] Զ (6)։

827

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4804 (1018 թ.)

81բ Իսկ որ ընթելնոյք և կարդայք, զՎահրամ յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս, և յիշողա յիշեալ եղեսջիք ի Տէր։ Աւր մի ժամ ի տարին, քանի Սարգիս ապրի՝ Վահր[ա]մայ։

828

ՀԱՅԵՐԷՆ ԹՂԹԵԱՅ ՀՆԱԳՈՅՆ ՄԱՏԵԱՆ

(ԺՈՂՈՎԱԾՈՒ)

Երևան 2679 (981 թ.)

162ա Տէր Յիսուս Քրիստոս միածին որդի Աստուծոյ, ողորմեայ Կատային, Շռուանշահին և Գրիգորոյ, և իւրոցն ամենայնի՝ կենդանեաց և մեռելոց, ասասցուք ամենիքեն Տէր ողորմե, կեցո, Տէր, Տէր ողորմեա, Տէր ողորմեայ*։

* Գրված է սյունակի մեջ վերից վար։

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

829

Յ Ա Յ Ս Մ Ա Ի Ձ Ի Ր Ք

Երևան 1501

Նվիրող՝ Աւետիս

(Մագաղաթյա Աւետարանի պահպանակ Թ-ժ դ.)

Յանուն Աստուծո, ես Աւետիս, որ եւտու զիմ Աւետարանս իմ հոգոյս յիշատակ տէր Դաւթի եպիսկոպոսին, որ առնե աղաւթք և յիշե զիս անմոռաց։

Ես տէր Դաւիթ, որ առի զԱւետարանս Ը (8) դ[ա]հ[եկ]ան և մեկ չինա, և այլ առնեմ աղաւթս /// և սուրբ Աւետարանիս /// կարդացել /// զԱւետիսն, զիւր ծնողսն։

Եւ ես Աւետիս, որ տուեալ եմ եպիսկոպոս[ին] Ը (8) դ[ա]հ[եկան] և չինատ մեկ /// իմ հոդոյս /// իշխանութիւն ոչ յիմ ազդէ և այլոքիկ /// կամ խաւսն /// ոչ /// և /// զարս /// մերոց /// Թվական[ին] Հայոց ՉՃԴ (1255)։

830

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Անթիլիաս 223, Դանիելյան, ծուցակ, էջ 545

Գրիչ՝ Թեոֆիլէ ծադ
Վայր՝ Սաղիկի ժղլիկ աճապատ

ա

58բ *Ահա Պաւլէ վասն խիստ եւ փաղտում փափաքմանն քո բազում աշխատութեամբ կատարեցի զառաջին գլուխ սուրբ Աւետարանիս, ամիս յուլիս Գ (3) սկիզբն եւ ի ԺԶ (16) վճարեցի. յիշեա ի Տէր։*

Բ

97բ Ահա Պավլէ վասն ցանգութեան քո կուրացել աչաւք եւ պակասել խելաւք գրեցի եւ զմիւս այլ գլուխս յուլիս Իէ (27)։

Գ

108բ Եղաւ կէս Աւետարանիս ի փառս Քրիստոսի յամսեանն յուլիս ԼԱ (31)։

Դ

162ա Զբազմամեղ Թեօֆիլէ՝ անփեղ գրիչ եւ զծնողսն եւ զեղբարսն եւ զզաւակսն իմ յիշեցէք ի Տէր. եւ որ յիշէ, յիշեալ լիցի ի Տէր, ամին։

Ե

162ա Զբազմամեղ Թեօֆիլէ՝ ամփեղ գրիչ եւ զծնողսն եւ զեղբարսն եւ զաժբ (15). յիշեա ի Տէր։

Զ

211բ—2բ. 252ա Փառք... Որպէս աւտարն որ տեսանէ յաւտարութիւն յիւր գաւառն, նոյնպէս գրողն փափաքի յորժամ զգրոցն տեսանէ զվերջ եւ զվճարն կատարէ։

Յարազուարճ, երկնահլու, մշտազուարթ, աստուածազան ներկատուն բանիցս ի փոքու մատենիս եզե չանացող գծել մեղապարտ գրիչս Թեօֆիլէ սուտանուն կրօնաւոր, վասն փափաքանաց եւ խնդրոյ զաւակի իմոյ
212բ Պավլէի քահանայ կրօնաւորի...||Որում փափաքեալ ուղղափառ քահանայ կրօնաւոր պապա Պաւլէ զաւակ իմ ըստ մարմնոյ, խնդրեց զսա անկեղծ գրիւ ի քարտիզի յեղեալ. իսկ ես վասն աղերսոյ եւ վասն խնդրոյ նորին եւ փափաքանաց, տկարացել, ծերացել, չար կենաւք պակասել յուժոյ եւ ի լուսոյ եւ ի խելաց, յաւժարութիւն միայն կալել գրեցի զինչ կարցի, աւգնականութեամբ եւ կամեցողութեամբ եւ աղաւթիւք եղբաւր իմոյ ըստ մարմնոյ եւ հայր հոգւոյ մեծ ճգնաւորի՝ սուրբ քահանայ կրօնաւոր պապա Նիկալա։

Վասն խոշորութեան եւ անփեղ գրիս եւ նուաստ եւ մեղապարտ եւ անարժան սուտանուն կրօնաւորի Թեօֆիլի ծադոյ եւ ծնողաց եւ եղբարց եւ զաւակաց իմոց աղաչեմ զամենիսեան առ ոմ եւ հանդիպի սա ոզորմութիւն հայցել ի Քրիստոսէ, եւ որք հայցէք զողորմութիւն վասն մեր. եւ ձեզ եղիցի զնոյն գտանեալ ի Քրիստոսե, որում վայելէ փառք յաւիտեանս, ամէն։

Գրեցաւ լուսազարդ սուրբ Աւետարանս յերկիրս Սաղիկ, ի յանապատիս կոչեցեալ Ծղլիկ, ընդ հովանեւ սուրբ եւ մեծ անապատաւոր ճգնաւորի սուրբ Օնոֆրիու, ընդ իշխանութեամբ քրիստոսասէր եւ բարեպաշտ պարոնի մերոյ շահնշահ Վասիլիու Ղաւրասա, զոր Քրիստոս Աստուած

խաղաղութեամբ անփորձ պահեսցէ հանդերձ քրիստոսապսակ ամուսնոյ եւ աստուածատուր զաւակաց իւրոց եւ եղբարց, ամէն։

Գրեցաւ ի թվականութեան ՅՀԶԴ (1276), ամիս սեպտեմբերի, աւր առաջին աւարտեցաւ, զոր սկիզբն արարիչէ սորա յուլիս Գ (3) եւ աստ վճարեցաւ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ ե աւրհնեալ յաւիտեան։

Գրեցաւ սա Պաւլէի զաւակի իմոյ, այլ որ ոչ ունի իշխանութիւն, նորա է։

Յիշեցեք ի Տէր զհոգեւոր եղբայրն մեր սուրբ քահանայ կրօնաւոր՝ պապա Մեսոֆան, որ եղեւ աւդնական եւ զարդարեց զսա իւր գլխագրեր հանդերձ ծաղկամբք եւ կապել զարդարեց, Աստուած զինք զարդարէ եւ զծնողսն իւր, ամէն։

Յիշեցեք ի Տէր եւ զհոգեւոր քոյրն մեր զԹումախի հաւատաւոր, որ շնորհեց զգին բանաքիս. Աստուած ողորմի իր հոգոյն. ամէն[1]։

831

ԱԻԵՏԱՐԱՆ

Անթիլիաս 156, Դանիելյան, ծուցակ, էջ 452

Գրիչ՝ Յոհաննէս դպիր

156ա *Ողորմեսցի Քրիստոս Աստուած պատուելի եպիսկոպոսին տէր Սիմէոնի փոխեցելոյն առ Քրիստոս, ի թվիս Հայոց ՉԽԷ (1288) եւ տառապեալ գրչիս Յոհաննէս դպրի, եւ հաւր իմո Կոստանդին քահանայի, եւ բնաւ զարից մերոց, զի ստացաք զսուրբ մատեանս կրկին յիշատակ մեզ եւ ծնողաց մերոց։*

Արդ աղաչեմ զհամայն պատահողք սորա, յիշեսջիք ի սուրբ եւ ի մաքուր աղաւթս ձեր, զի ընդ միոյ հարիւրապատիկ ձեզ պարգեւեսցէ Քրիստոս Աստուած։

832

ԱԻԵՏԱՐԱՆ

Անթիլիաս 210 (1663), Դանիելյան, ծուցակ, էջ 525

Վայր՝ Ատանա

122ա *Դարձեալ օրինակն սուրբ Աւետարանիս ՉԽԱ (1292) թվական էր գրեալ, յուլիսի ԻԱ (21), ի քաղաքն Ատանա, ամէն։*

---

1 Ձեռագիրը հետագայում երկու անգամ կազմվել է. 1478 թ. Պողոսի, 1502 թ.՝ Սարգիս վարդապետի ձեռքով։

ՅԱՆԿԵՐ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԻՐՆԵՐԻ, ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ, ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ

Ց Ա Ն Կ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Նախ ներկայացնում ենք ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մ. Մաշտոցի անվան Հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարանի ձեռագրական հավաքածուները։

Նշում ենք ձեռագրական միավորի հերթական համարը, իսկ դիմացը՝ նրանից քաղված հիշատակարանների ժողովածուի մեջ զբաղեցրած համարը։

Նույն կարգով բերում ենք խոշոր հավաքածուները (Երուսաղեմ, Վենետիկ, Վիեննա, Նոր Ջուղա), իսկ մյուս աղբյուրները՝ ըստ ձեռագրատուցակների և մենագրությունների հեղինակների այբբենական հաջորդականության, որոնց կից միայն նշանակում ենք նրանցից քաղված հիշատակարանների ժողովածուի մեջ զբաղեցրած համարը։

Բոլոր ցանկերը կազմել են գիտաշխատողներ Կ. Ա. Մաթևոսյանը և Ա. Հ. Ղազարոսյանը, որոնց հայտնում ենք մեր շնորհակալությունը։

1. ԵՐԵՎԱՆ, ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ա. ձեռագիր

1—705
7—39
49—434
142—300
155— 58
177—623
178—225
179—563
180—600
181—607
193—681
194— 24,
—32, 822
195—463
196—476
197—492
199—325
208—384
218—174
234—242
—298
265—715
—781
275— 81
284—340
285— 86
287—295
315—788
341—269
345—307
352—601
355—420
378— 57
—258
381—773
416—407
437—456
469—250
—319
470—491
472—116
487—271
488—605
522—632
556—798
567—575
579—380
—404
638— 42
640—650
695— 91
707—748
715—765
751—393
759—396
760—767
780—639
822—469
823—279
866—812
909—493
912—173
928—136

940—789
947— 53
— 78
979—474
987— 37
—734
995—391
1013—110
1028—626
1094—321
—512
1097—412
1112—209
1119—312
1335—484
1180—769
1204—130
—141
1209—709
1216—437
1283—203
1315—522
1316—497
1320— 41
1324—427
1327—339
1328—392
1342—549
1363—552
1382— 72
1409—659
1418—414
—497
1422—457
1479—583
1481—254
1500—436
1501—829
1519—134
1522—777
1525— 4
1526—466
—591
1530—506
1531—510
1563—442
1647—233
1716—379
1746—770
1747—180
1879—771
1888— 27
1897—760
1902—511
1903—318
1912— 82
1978—445
1999—749
2021—768
2058—754
2079—661
2101— 97
2266—574
2273—214
2329—416
—541
2371—702
2414—800
2453—470
2496—595
2510—255
2532—725
2588—590
2588—689
2603—631
2604—256
—604
2607—706
2609—449
—802
2629—395
2630—533
—663
2679—104
—828
2735—763
2743—137
2746—421
2756—166
2784—167
2812—782
2814—317
2816—529
2817—693
2838—634
2848—551
2877— 69
—289
3033—211
3082—287
3213—428
3276— 55
3387—744
3459—218
3528—179
3604—736
3611—292
3710—523
3779—109
3793— 5
3816—538
3893—216
3929—361
3932—372
3935—373
4011—480
4037—210
4066—439
4080—542
4086—320
—354
4096—413
4119—527
4160—146
4165—308
4166—805
—814
4185—737
4207—462
4211—558
4214—671
4243—282
—738
4301—197
4320—694
4309— 66
4528—192
4612—823
4645—735
4804—827
4810—498
4811—649
4814—592
4820—739
4823—101
—159
—716
4825—565
—602
4834—274
—513
—624
—752
4843—676
4851—499
4856—766
4867—636
4871—778
4878—593
4883—296
4891—305

60—487

4947—524
4954—729
4965—278
4980—547
5076—212
5135—481
5147—447
5197—411
5224—730
5241—795
5245—731
5247—488
5254—417
5258—742
5317—780
5365—783
5443—821
5448—764
5452—803
5453—772
5458—275
5476—622
—698
5518—324
5525—477
5528— 64
5537—105
5547—465
—743
5549—784
5554— 35
5555—441
5559—350
5560—468
5561—658
5563—394
5595—403
5611—741
5613—579
5647—586
5661—257
5669—409
5709—811
5736—531
5757—575
5784—587
5862—786
—804
5906—697
5915—432
5929—633
—807
5938—785
5979— 79
5980—637
6058—825
6087—660
6089—597
6106—229
6169—115
6196—108
—620
6202—149
—217
—806
6271—630
6288— 34
— 94
—710
6290—606
6292—550
6362—315
6387—557
6388—721
6473—664
6512— 56
6519—132
—817
6558—696
6661—226
6764—440
6784—678
6845—495
6883—659
6903—761
6935—718
6975—733
7266—727
7347—182
7351—723
7353—625
—648
7378—530
7431—719
7452—322
7463—219
7482—635
7488—577
7530—824
7534—367
—381
7535—594
7536—611
7570— 46
7574—164
7583—791
7629— 18
7635—202
7635—811
7644—369
7651—331
7659—758
7663—640
7690—201
--264
7700—156
7729— 9
7734— 74
--826
7739—161
--213
--793
8139— 48
8179—678
8303—740
8321—215
8400—728
8590—267
8906—165
8909—717
9027—483
9292—482
--651
9319—111
9337—750
9365—170
9422—818
9483—514
9509—273
9645—695
9649—136
9663— 21
9859— 44
9871—135
10062—329
10099—342
10110—976
10337—461
10359— 1
—206
—794
10434— 11
10450—235
10480—475
10493—687
10509— 19
10554—245
10668—596
10675—293
10684—433
10686—207

0687—386 10688—129 10773—419

բ. պահպանակ

748— 36 1501—151 1813— 68
784— 36 1797— 68

գ. պատառիկ

828—124 1230—808
828—792 1454—275
907— 40 1886— 31
919—560

Դ. Հավաքածո

4515, 6273 և 6332 համարի ձեռագրերը Ղ. Փիրղալեմյանի «Նշխարք պատմութեան Հայոց» վիշտակարանների անտիպ ժողովածուներն են, իսկ 6333-ը՝ Հ. Իարղամյանի ձեռագրաց անտիպ ցուցակը։ Դրանցից համապատասխանաբար քաղել ենք հետևյալ հիշատակարանները.

4515—313, 388, 398, 584, 589, 599, 686.

6273—60, 193, 200, 270, 281, 358, 360, 389, 408, 486, 487, 535, 555, 559, 641, 660, 668, 670.

6332—613, 540

6333—422, 423, 494, 665, 692

ե. Մանրաժապավեն (դրսի)*

453—177, 876—191, 877—680, 925—224, 999—638
1016—131

Զ. Անտիպ ձեռագրացուցակ

1. Տեր-Ավետիսյան Ս. Ցեռագիրք նախավկայի վանուց Դարաղամբի Ս. Ստեփանոսի որ ի ոստն, Մատենադարան, Անտիպ ձեռագրերի, № 132, 797

2. Տեր-Մովսիսյան, Համահավաք ծուցակ հայերեն ձեռագրաց, Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակներ, № 133, Աւետարաճ—63, 385, 410, 656

2. ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՆԵՐ

ա. Երուսաղեմ, Սրբոց Հակոբյանց մատենադարան Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց։

Երուսաղեմ Հ. Ա. 1966, հ. Բ, 1967, հ. Դ, 1968 հ. Դ, 1969, հ. Ե, 1971, հ. Զ, 1972, հ. Է, 1974, հ. Ը, 1977, հ. Թ, 1979 թ.թ.։

* Հավաքածոն կազմվել է Երևանից դուրս գտնվող հայերեն ձեռագրերի մանրաժապավեններից, որոնք պահվում են Մատենադարանի ձեռագրատանը։

32—323
—343
—344
75—302
87—346
89—347
94— 52
97—188
—453
265—643
304—444
306—336
326— 10
332—400
333—674
334— 17
336—672
347—774
352—335
353—364
354— 65
— 90
356—642
365—682
368—700
369—704
417— 49
454—683
458—228
460—779
503—644
514—280
559— 6
662—161
741—316
773—187
787—815
788—291
895—576
898—332
936— 42
960—345
972— 8
995—629
998—234
999—553
1122—713
1272—537
1273—726
1288—349
1295—113
1311—703
1350—451
1365—189
—190
1406—501
1426—143
1605— 91
1654—333
1681—472
1692—405
1709—490
1758—426
1795—745
1796—489
1801—153
1818—125
1864—571
1925—303
1946—699
1955—355
1956—272
1958—277
1999— 33
2027—276
2341—397
2419—516
2492—810
2505—701
2526— 30
2563—330
2568—526
2594—374
2612—585
2654—460
2660—261
—306
2673—598
3098—467
3257— 50
3273— 12
3274— 2
3290—517
3349— 3
3392—415

Ա. Սիիրմեյան, Ճ. Ա, *Վենետիկ, 1948 թ. 155—711։*

թ. Վենետիկ, Ս. Ղազար, Մխիթարեան մատենադարան

Բ. Սարգիսյան, *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Վենետիկ, հ. Ա, 1914, հ. Բ, 1924 թ.թ.*, Բ. Սարգիսյան, Գ. Սարգիսյան, *հ. Գ, 1966 թ.։*

5—448
17—241
22— 7
23—365
40—471
86— 28
—809
87—152
88— 20
89—142
90—222
92—799
93— 13
94— 94
95—376
99—150
100—237
103—732
111—304
122—117
129—120
136— 67
137— 45
150—438
151—268
152—301
153—208
170—708
185—787
192—756
194—749
200—103
—231
—617
204— 54
206—816
207—503
212—326
221—230
230—755
237—311
239—751
266—820
268—366
—801

323— 59
325— 85
326—580
399—684
570— 29

գ. Վիեննա, Միխիթարեան Մատենադարան

Հ. Տաշյան, *Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895* Հ. Ոսկյան. *Հ. Բ, 1963*, Օ. Սեմուլյան, *Հ. Գ, 1983 թ.թ.*։

5— 98
53—169
88— 91
166—204
216—685
218— 92
245—521
247—430
261—504
273—390
280— 47
303—667
316—508
331—473
351—790
364—612
382—714
571—455
833—145
1470— 22
1880—429
2129—452
2286—338

դ. Նոր Ջուղա, *Ամենափրկիչ վանքի Մատենադարան* Ս. Տեր-Ավետիսյան, *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, Հ. Ա, Վիեննա, 1970 թ.*։

25— 62
26— 70
27— 61
29— 80
29—123
30—259
31—288
32—387
33—418
34—458
35—691
156—148
161—753
169—656
207—505
264—382
320—536
393—370
418—796
478—608
548—746

ե. Լենինգրադ. *Արևելագիտության ինստիտուտ.—644, 654*
Սալտիկով Շչեգրինի անվան գրադարան.—263
Զ. Ֆյուրյան, *Հավաքածո.—15, 77, 327, 556, 618*

3. ՁԵՌԱԳՐԱՑՈՒՑԱԿՆԵՐ

ա. Ակինյան Ն. և Ոսկյան Հ. *Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի Մատենադարանին, Վիեննա, 1971 թ.—181, 290, 675, 712, 819*

բ. Ակինյան Ն., *Ցուցակ հայերէն ձեռագրաց Հռոմի հայոց հիւրանոցի ի Ս. Վլաս եւ Լեռնյան հայ վարժարանի, Վիեննա, 1961 թ.—121, 163, 402*

գ. Ակինյան Ն., *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոռիայի ի Կիպրոս, Վիեննա, 1861 թ.—567, 813, 581*։

դ. Անասյան Հ., *Ցուցակ հայերէն ձեռագրաց Թավրիզի, Վիեննա, 1910 թ.—645*։

ե. Assfalg J. Molitor J., Armenische Handschriften, Wiesbaden, 1962.—102

զ. Գալեմքեարյան Գ., *Ցուցակ հայերէն ձեռագրաց Արքունի Մատենադարանին ի Միւնխէն, Վիեննա, 1892 թ.—399, 450, 509, 567*։

է. Գուշակյան Թ., *Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի վանաց ի Սեբաստիա, Վիեննա, 1961 թ.—76, 341, 619*։

ը. Թաճիեյան Ա., *Ցուցակ հայերեն ձեռագրաց Անթիլիասի, Անթիլիաս, 1984 թ.—830, 831, 832*։

թ. Լալայան Ե., *Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, պրակ Ա, Թիֆլիս, 1915 Բ.— 158, 677, 775։*

ժ. *Conybaare M.* A catalogue of the armenian manuscripts in the Britsh museum, *Լոնդոն 1913 Բ.—26, 357, 424, 431, 435, 446, 416*

ժա. Կյուլեսերյան Բ., *Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց և շրջակայից, Անթիլիաս, 1957 Բ.—43, 168, 227, 238, 246, 378, 507, 534, 544։*

ժբ. Կյուլեսերյան Բ., *Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային Մատենադարանի Հայոց, Անթիլիաս, 1961 Բ.—16, 220։*

ժգ. Հովսեփյան Ս., *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոմեդիոյ և շրջակայից, Վենետիկ, 1969 Բ.—114, 264, 443, 520, 546։*

ժդ. Ղազիկյան Ա., *Համառօտ ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ, հրատարակեց Հ. Քյուրդյան, Վենետիկ, 1969 Բ.—95։*

ժե. Մխիթարյան Մ., *Նկարագրութիւն և յիշատակարանք ձեռագրաց ս. Թովմայ առաքելոյ վանուց..., «Արարատ», 1911, 1914, 1915. ԲԲ.—532։*

ժզ. Միքայելյան Ն., *Ցուցակ Մայր Աթոռ էջմիածնի նոր ստացված ձեռագրերի, «էջմիածին», 1960—1984 ԲԲ.—126, 353, 406, 561։*

ժէ. Մուրադյան Ս., Մարտիրոսյան Ն., *Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջակայից, Երուսաղեմ, 1967 Բ.—194, 232, 236, 243, 248, 334, 377, 478, 614, 627, 695, 720։*

ժը. Ոսկյան Հ., *Ցուցակ ձեռագրաց որ ի «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1976 Բ.—75, 309, 652, 653, 673։*

ժթ. Պալյան Տ., *Ցուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի և Ս. Դանիէլի ի Կեսարիա, Վիեննա, 1963 Բ.—14, 23, 356, 570։*

ի. *Sanjian A.* A. catalogue of medieval armenian manuscripts in the United States *Լոս-Անջելոս-Լոնդոն, 1976 Բ.—87, 99, 155, 157, 240, 260, 266, 283, 352, 375, 543, 582, 699, 762*

իա. Սյուրմեյան Ա., *Ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն մանկունք եկեղեցւոյ և մասնաւորաց, Երուսաղէմ, 1935 Բ.—133, 223, 244, 368, 371, 464, 485, 569, 707։*

իբ. Տիրայր վարդապետ, General catalogue of the armenian monuscripts in the Bodleiom Library at Oxford, *Մատենադարան, արխիվ, ԲդԲ. 119—122, 299, 337, 502, 573—615, 722*

իգ. *Jissarant E,* Codices armeni Bybilo thecae vaticane, Borgiani, *Հռոմ 1927 Բ.— 112, 359, 496, 647*

իդ. Քեչիշյան Մ., *Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964 Բ.—106, 176, 518, 519, 538։*

իե. Քյուրդյան Հ., *Համառօտ ցուցակ հայերէն գրչագիրներու Քիւրդեան հաւաքածոյի ի Ուիչիգա, Բանբեր Մատենադարանի, № 10, 1971 Բ.—89, 122, 525։*

իզ. Քոսյան Հ., *Ցուցակ հայերէն ձեռագրաց Արծնեան վարժարանի ի Կարին, Վիեննա, 1962 Բ.—588, 144։*

4. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

ա. Ակինյան Ն., *Սիմէոն Պղնձահանեցի և իւր թարգմանութիւնները, Վիեննա, 1951 Բ.—199.*

բ. Ալիշան Ղ., *Հայապատում, Վենետիկ, 1901 Բ.—328, 359։*

գ. Ալիշան Ղ., *Սիսուան, Վենետիկ, 1885 թ.—566, 724։*

դ. Բարխուդարյան Մ., *Արցախ, Բագու, 1895 թ.—342, 572։*

ե. Զուրբճանալյան Գ., *Հայկական թարգմանութիւնք նախնեաց, Վենետիկ, 1889 թ.—38, 249։*

զ. Զարբճանալյան Գ., *Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897 թ.—314։*

է. Հովսեփյան Գ. *Ցիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951 թ.—51, 73, 84, 93, 127, 128, 131, 138, 139, 140, 147, 160, 162, 171, 172, 183, 195, 199, 205։*

ը. Ճանիկյան Հ., *Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895 թ.—253, 297, 679։*

թ. Միխայէլ Ասորի, *Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1871 թ.—198։*

ժ. Der Nersessian S. Armenian manuscripts in the freer Gallery of art *Վաշինգտոն, 1963 թ.—220*

ժա. Der Nersessian S. The chester beatty library. A. catalogue of the armenian manuscripts, *Դուբլին, 1938 թ.—265*

ժբ. Սմբատյան Մ., *Նկարագիր ս. Կարապետի վանից Երնշակայ և շրշակայից նորա, Տըփխիս, 1904 թ.—351, 383։*

ժգ. Սոփերք Հայկականք *ժդ., Վենետիկ, 1853—1861 թթ.—175։*

ժդ. Սրվանձտյան Գ., *Թորոս Աղբար մ. Բ, կ. Պոլիս 1884 թ.—83, 100, 154, 178, 184, 186, 196, 221, 247, 310, 401, 425, 515, 548, 568, 603, 662, 669, 688, 757։*

ժե. Քոսյան Հ., *Հայք ի Զմիւռնիա և ի շրշակայս, Վիեննա, 1899 թ.—666։*

ժզ. Փիլոն Սբրայեցի, *Մնացորդք ի Հայս, Վենետիկ, 1826 թ.—609, 628։*

ժէ. «Ասրարատ», *Վաղարշապատ, 1905, 1876 թթ.—262, 554։*

ժը. «Բազմավէպ», *Վենետիկ, 1887, 1968, 1970 թթ.—71, 348, 539, 759։*

ժթ. «Լույս», *Կ. Պոլիս, 1905, 1906 թթ.—500, 545։*

ի. «Լումայ», *Տփխիս, 1902 թ.—215։*

իա. «Հանդէս ամսօրեայ», *Վիեննա, 1908, 1922, 1926 թթ.—107, 454, 621։*

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ազգ.—ազգական
Աւ.—Աւետարան
եղբ.—եղբայր
եպիս.—եպիսկոպոս
կազմ.—կազմող
կր.—կրոնաւոր
մրն.—միաբան
վրդ.—վարդապետ
սրկ.—սարկաւագ
քհ.—քահանա

Աբաս—հայր Գրիգորի վրդի 114
—եպս. Խծկոնքի 194, 195
—սևագեաց իշխան, հայր Կուկի 140
—Նկարիչ Անիում 448
Աբգամէհ—որդի Մկրտիչ քհ-ի և Կիրա խաթունի 137
Արել—գրիչ Այրիվանքում 1217-ին օր. Աւ. 104, 106
Աբմելեգ—մայր Ուստինայի 835
Աբրահամ—առաջն. Մշո Առաքելոց վանքի 47
—եզր. ստաց. Ովասափի 65
—մեկը Մշո Տօնավանի փրկագնողներից 46
—կազմող Հոռոմոսի վանքից 69, 72
—եզր. ստ. Դաւիթ եպս-ի 175
—մրն ընծայեաց վանքի 462
—գրիչ, 1281-ին Հազբատում օր. ժող. 522
—մրն Առեղս վանքի 613
—առաջն. Ասպիսընկավանքի 525, 829, 845
—ստաց. Կիպրոսում գրված 608
—Նաւասար 721
—արքեպս. Տարոնի 853
Ագաթանգեղոս 721
Ագրիանոս 143
Ազատ Թագուհի—ուսուցիչ Ստեփան փիլի. 931
Ազատ տիկին—օգնեց Գրիգոր գրչին 164
Ազարիա—եպս. Տմարծալի 57
Ազգեր—քոյր Գրիգոր գրչի 164
Ազգի—դուստր Ըսպայհանի և Կատայի 357
Ազգիկ—մայր ստ. Վարդանի և Սարգսի 165
Ազիզ—մայր Թորոսի՝ եղբոր որդի Կոստ. կթի 284
—քոյր Թորոս Արևելցու 313, 314
—քոյր Թորոս վրդի 529
—մայր Կիրակոս եպսի 593
—քոյր Պապակի 652
Ազիզմելիք—մայր Յովհաննիսի 143
Ախթամար—մայր Տերխաթունի 884
Աթանաս Աղեկսանդրացի 28, 64, 345
—մեկը Մշո Տօնականը փրկագնողներից 47
—հոգևոր եղբայր Սարգիս գրչի 140
—մրն Կապոսի վանքի 165
Աթաբակ Իվան—որդի Հասան Ջալալ Դաւլի 311, 312
Ալագին—բոծոր, սպանող Աստուածատուր Բաբերդացու 45
—հայր Խայթաղին սուլթանի 208
Ալեքսանդր Մակեդոնացի 231, 894
Ալեքսի—պատրոն 1220-ին նորոգեց մի Աւ. 121
—1270-ին մահացաւ Երզնկայում 376
—հայր Սարգիս գրչի 494, 496, 499
—հայր Վարգան գրչի 576
—933
Ալիծ—տիկին Ճոֆրէ 298
—դուստր Պետրէ գրչի 569
—օրինակ շնորհող 608
Ալինախ—որդի Լևոն Թագի 722
Ալղուշ—որդի Գրիգոր գրչի 879
Ալֆի—սուլթան Եգիպտոսի 628, 710
Ականց—քոյր Աւիծ տիկնոջ 125
—կին Ստեփանոսի՝ որդու Գրիգոր կթի եղբոր 284
—մայր պարոն Լևոնի 288
—արքայադուստր 343
—տիկին Աւշին մարաջախցի 441, 697
—քոյր Կոստանդին գրչի 900
Ահարոն—կազմել է տալիս մի ձեռ. 255

—հարազատ Ալէքսի 495
—մականուն Դրիգոր վրդ. Երզնկայի, գրիչ և ստացող 635, 663, 664, 671, 672, 781, 782, 842, 843, 899
Ահմատ-խան 550
Աղան—հետագա ստացող 470
Ապրարիկ—հայր Լիան և Ալէքս եղբայրների 932
Աղբեր—եղբայր ստ. Ովասափի 65
Աղիկանան—մըն Հայոց հանգստարանի 369
Աղեկ տիկին—մայր ստացող Մխիթարի 210
Ալպուշա—պարոն հայր Վահրամի Երգևանքցու 263
Ադուի խաթուն—ստացող 303
—հարազատ Քրգի 796
—մայր Բարսեղի 449
—886
Ադուր 768
Ադուր տիկին—մայր Սկևռացի առաջն. Կոստանդնի 847, 849
Ամրակում—առաջ. Աւագ վանքի 12, 13
Ամենիայ—քոյր Մխիթար գրչի 783
Ամենաւագ—1294 թ. գնեց Աւ. 740
Ամէնատէր—հայր ստ. Բարսեղի 449
Ամիր—հարազատ Քրգի 796
—որդի Փախրագինի 817
Ամիրգատ—հայր Թագէոսի կազմողի 809
Ամիրլաւար 879
Ամիրոց 602
Ամիր Հասան—որդի Պռոշի 675, 681
—եղբայր Մխիթար քհի 783
Ամիր Շահ 886
Ամիր Սարդիս—հայր Խաւռաւսի 178
Ամիրտար—ստացող 303
Ամոյն 830
Այտտա—հայր Պետրէ գրչի 509
Անանիա Շիրակացի 712
—կաթողիկոս—հակաթոռ ի Կեսարիա 12, 35, 75, 139
—գրիչ 1296 օր. ճաշ. 785
—դպիր ծաղկող 699, 873
Աննաստաս—մըն. Զորոյ վանքի 726
Անգրեաս—քհ. 1208, փրկեց Աւ. 61
—Զաւրավար գրչի հարազատ 382
—եղբայր Յովհաննէս գրչի 412, 413
—գրիչ օր. մեկնողն 873
—եղբայր Վարդան քհի 887
—895
Անդրհեր—դուստր ստացող Խայտերի 121
Անիգա—տիկին Սմբատ պարոնի 118
Աննա—դուստր Լամբրոնի տեր Կոստանգնի 330
Աննոց—մայր Ստեփանոսի 144
Անտոն—գրիչ գաղափար օրինակի 126
—եղբայր Ներսէս գրչի 173
—եղբայր Թորոս Ռոսլինի 284
—կրօնաւոր 893
Ապաղա խան 435, 438, 461, 495, 514, 567, 681, 862
Ապիուսուֆ—փիլիսոփա 806
Ապլ—կին Լևոն Բաղունեանցի 813, 814
Ապլխարիպ—իշխան 434, 435
Ապլմսհ—գրիչ 1248 օր. Աւ. 243
Ապուլքարամ—որդի Կիր Վասիլի 602
Ապստամբ—հարազատ ստացող Խաչատուրի 105, 106
Առաքել—վրդ. Աւագ վանքի 19
—գրիչ Եղիվանքում, օր. Աւ. 36
—եպս. Խարբերդի 116
—գրիչ Հաղբատում 58, 59
—եղբայր Սահակ Անեցու 69, 70, 71
—Անեցի Քարգմանեց 1222-ին Երազահան 131
—1230 ստ. Հին կտակ 168, 169
—գրիչ 1237-ին օր. Աւ. 201, 202
—որդի Պետրոս Կատանացի գրչի 242
—հարազատ Տիրադ եպս-ի 393
—Հնազանդենց, հռչակաւոր կազմարար 297, 301, 313, 316, 319, 332, 361, 366, 368, 407, 410, 446, 460, 486
—տնտես Խորին անապատի 409
—Քուղբ նվիրող 436
—որդի Հայրապետ գրչի 484
—վրդ. առաջնորդ Դեղձուտի վանքի 495, 508
—վրդ. 1283, Անավարզայ ստ. ժող. 536
—հոգևոր հայր Վարդան գրչի 557
—գրիչ 1289-ին օր. ժող. 635, 646
—առաջն. Բագուանա ուխտի 690
—աբեղա, 1294 թ. օր. ժող. 741
—հարազատ Յոհաննէս քհի 764
—քհ. Մարմար նվիրեց 783
—կազմող Եղիազար վանքում 854
Առեստ—քհ. հայր Վասիլ գրչի 145
Առիւծ—մուտրախի Աստուածատուր Բաբերդացու 29
—իշխան 8
—հայր Վասիլ գրչի 696
Առաք—եղբայր ստ. Աղուք Խաթունի 303
Ասիլ—մայր Յովհաննէս գրչի 286
Ասլան—հայր Վարդան վրդի 557
Ասլեր—կին քրգի 795, 796
Աստուա խաթուն—հոգևոր քոյր Ստեփան փեչի Տախցի 931
Աստուածատուր—պաշտոն Բաբերդացի, 1200—1262 թ. ստացավ Մշո Տօնականը, հայերեն ամենամեծ ձեռագիրը 27, 32, 44, 45
—գրիչ եղբայր Ղազար գրչի 19, 20, 146, 148, 152, 153

—եղբ Կոստանտ վրդի 16, 18
—վրդ. ուսուցիչ Յոհաննէս Ալնոցցի գրչի 35
—պարոն Խլաթեցի Մշո Տօն. փրկող 47
—1209 թ. ստ. Հաւատարմաւար 65
—առաչն. Մեծքար անապատի 88
—1222 ստ. մի Աւ. 129
—1223 ստ. մի Աւ. 135, 136
—աշակ Վարդան վրդի 146, 621
—Հայր Մանուէլի 197
—գրիչ 1239 օր. ժողղ. 208, 210
—հայր Սերաստիայի սր. Լուսաւորչի 142, 209, 281
—եղբ Բարսեղ գրչի 408, 409
—1271-ին ստ. մի Աւ. 410
—եղբ. Երեմիա քհի 535
—1283 ստ. Յոհ. յայտն. 540
—հայր Գրիգոր վրդի 545
—գրիչ Հաղարծինում օր. մի Աւ. 559
—1288-ին ստ. մի Աստուածաշունչ 616, 617
—գրիչ Այրիձորում օր. երկու Աւ. 726, 738,
—հոգևոր որդի Խաչատուր բարունու 755
—գրիչ 1297—Խառարաստավանքում օր. մի Պատմագիրք 799
—մբն. Արմենի Յոհանա վանքի 829
—եղբ. Սարկաւագ ստացողի 845—846
—ստացող 936
Ատան—իշխան, խնամակալ Զապէլի 586
Ատոմ—մբն Սանահնի 186
—քհ. Քուղբ կոկող 148, 149
—գրիչ 1273 օր. Աւ. 437, 438
—Ձգնաւոր 438
—հայր Յոհաննէս գրչի 392
—505.
Ատոմ—հարազատ Յոհաննէս գրչի 830
Արևիկ—եղբայր Վարդան գրչի 37
—մբն Հայոց հանգստարանի 369
Արևգոյն—Քոռ Վահրամ Համուսեցւոյ 81
—Հայր Վահրամ իշխանի 115
Արևքագուհի—հարս Պետրոս կատենացի գրչի 242
Արևշահ—եղբայր Յովհաննէս գրչի 340
Արևտիկին—քոյր Պետրոս գրչի 191
—հարազատ Յակոբ գրչի 734, 735
—հարազատ ստացող Յոհանի 860
Արղու խաթուն—դուստր Գրիգոր պատրոնի, 193
—Մայր Ստեփանոս րաբունու 793
Արիստակես Լաստիվերցի 707
Արիստակէս—հայր Աւագ վանքի 19
—րաբունապետ 272
—գրիչ 1276-ին օր. ժամագիրք 467
—Հոգևոր որդի Գէորգ Համբրոնացւոյ 86
—Հռետոր 867, 868
Արիստոտել 231
Արծրունի 548, 708
Արձան 480
Արղութքա—որդի Մալիքի 878
Արղուն խան 556, 571, 597, 599, 600, 614, 636, 660, 667, 691, 862
Արշակունիք 437, 568
Արշուկ—որդի Գրիգոր պատրոնի 193
—հարազատ Յոհան ստացողի 860
Արտավաս—խապաղ—Մշո Տօնականի փրկողներից 47
Արքա—օգնող 153
Արքա 817
Արքայտիկին—քոյր ստացող Դաւթի 453
Աւադ—որդի Իվանեի 183, 681
—գրիչ 1286 օր. մի Աւ. 593
—որդի Վարդանի 808
Աւագ պարոն 229, 561, 931
Աւագտէր—1277-ին ստ. ժող. 473
Աւագ տիկին—մայր ստացող Մարկոսի 474—476
—դուստր պարոն Մանիլա 929, 930
—884
Աւանշահ—հարազատ քուրդի 796
Աւեր—մբն Երզնկայի Լուսաւորչի վանքի 426
—մբն Առեղս վանքի 613
Աւետաց—Աստուածատուր Բաբերդացու եղբայրը օգնում էր Մշո Տօնականը գրելուն 14, 27—30
—գրիչ 1205-ին օր. Համբրոնացու մատենագրութիւնը 53
—1249-ին Աւ. նվիրեց Հոռոմոսի վանքին 251
—մբն Հայոց Հանգստարանի 369
—հայր Յոհաննէս գրչի 830
—817
Աւետիս—փիլիսոփա Մշո Առաքելոց միաբան 46, 47, 218
—մագաղաթ պատրաստող 164
—1242 թ. ստ. մի Աւ. 224
—մբն Խորին անապատի 266
—գրիչ գլխագրեց մի Աստվածաշունչ 407
—գրիչ 1272 Կեռան Քագուհու համար գրեց մի Աւ. 415, 416, 418, 419
—քեռի Դաւիթ ստացողի 454
—գրիչ 1280 գրում է մի ժողով 508
—մբն Մշկավանքի 518
—եղբայր Զաքարիայի 881
—ստացող 917, 918, 931
Աւետիք—մբն Եզիվանքի 36
—մբն Ակների վանքի 432
—հյուսն 209
Աւետուր—որդի ստ. պարոն Մխիթարին 210
Աւիծ—շառաւիղ Շուշան Քագուհու 81, 125

—քոյր Ներսէսի 294
Աւշին—որդի Վահրամի Համասցւոյ 818
—սրբագրիչ 413
—որդի Լեւոն Բ թագավորի 342, 419, 441, 443, 515, 656, 722
—հայոց մարաջախտ 363, 439, 440, 441, 446, 876
—որդի ճոճիրէ 298
—որդի պարոն Թաւտորէի 443, 449
—գրիչ օր. մեկնուրիւն 713
—պայլոնց ստ. մի Աւ. 697
—հարազատ Սարվանգի քարի տեր Կոստանդնի 482
Աւտարշահ—հայր Ներսէսի գրչի 294
—հայր Ստեփան հայրապետի 809
—հայր Ստեփան Գռավկալի 922
Նւտատ—հայր Խաչերեսի 686
Աւրպէլ Իվանէ—Սյունյաց եպսկ. 856—858
Աքիտոտել—հռչակված հին զորական 434

Բարկէն—հետագա ստացող 144
Բագի—մայր Յովհաննէս գրչի 636
Բագրատունիք 548, 708
Բազմոց քոյր—Յոհաննես ստացողի 677
—մյուս քոյր Յովհաննէսի 677
Բաղունի—որդի Լեւոն Բազունեանցի 813, 814
Բախտաւոր—մայր Տրդատ գրչի 318
—ազգական Յովանէս ստացողի 678
Բախտես 75
Բակ-իշխան—նախապանց ստ. Վաննէի 182
Բակուլ—ամուսին Գրիգոր 74
—իշխան 585
—եղբ. պարոն Սմբատի 486
Բազգատ խաթուն—քոյր Աղուէ խաթունի 303
Բանարգէս—գրիչ օր. մի Ման 767
—գրիչ 22, 23
—եղբ. Նորաւգէսի 136
—երեց, որդի Կարապետ երեցի 61, 62
—126, 127
Բարդուղիմէոս—դասակից ստ. Ներսէսի 53
—արքեպիս 498
—հայր Մշակավանքի 519
—ճգնաւոր 817, 819
Բարէմանուկ—հայր Խաչատուրի 267
Բարոսխոս 258
Բարսեղ Կեսարացի 55, 57, 404, 405, 409
Բարսեղ—միայն Աւագվանքում 16, 27, 28
—գրիչ Հոռմկլայում, օր. Աստուածաշունչ 24, 25
—առաջնորդ Նղիվանքի 36
—վայելող Անդրեասանց ուխտում 37
—Սսեցի, թարգմանիչ 38
—Մշո Տանականի փրկողներից 46
—քհ. վարժիչ տախտակաւ 53
—վրդ. Սկևռացի 53
—ազգ. Վարդան ստացողի 60
—մբն. Հառիճա վանքի 66
—ստացող Սեբաստիայում 74, 75,
—գրիչ 1212 օր. Գէորգ կազի մեկն 79
—գրիչ 1215 օր. Գիրք պարապմանց 93
—քհ. ստացող 101
—գրիչ որդի Գրիգոր քհ-ի օր. Յաճախապատում 101—103
—գրիչ 1219 օր. մի Աւ. 115
—հայր Նորաւգէս գրչի 132
—գրիչ 1230 օր. Աւ. 171, 205, 206
—Արքաեղբայր 201, 221, 222, 245, 343, 358, 384—389, 459, 728—731, 758
—ստացող 239
—մագաղաթ հայթայթող 251
—գրիչ 1252 օր. Աւ. 265, 266
—հայր Տրդատ գրչի 319
—կաթողիկոս Աղթամարի 266
—Նորադող Աւ.-ի 319
—մբն. Ակների վանքի 304
—առաջն Մաշկևորի 331
—գրիչ Ականց անապ. 355—356, 428, 448
—գրիչ 1270 օր. Ճառընտիր 385, 393, 396, 408, 409
—գրիչ օր. Աւ. 410, 462, 463, 472
—ստացող 448
—հայր Գրիգոր վրդի 458
—գրիչ Մշակավանքում 459, 510, 517
—գրիչ Խորին անապատում օր. մի ժող. 499
—ստացող Հաղբատեցի 520, 522
—գրիչ Դրա օր. մի Աւ. 528
—Սկևռայում օր. մի Աստվածաշունչ 543, 552
—Մեկնիչ 640, 648—650
—գրիչ սր. Տօնապատ. 660, 692
—փակակալ 722
—եղբայր Գրիգոր Արևելցու 806, 807, 811
Բեսսուբա—մբն. Հայոց Թառի 795
Բլնիկ—ստացող գաղափար օրինակի 126
Բռնաւոր—ստացող մի Աւ.-ի 193—195
—մբն. Հաղբատի 123
Բուխտայ իշխան 858
Բոյրքել իշխան 858
Բուշխ—առաջնորդ Թատրաց 245

Գագիկ Թագաւոր Բագրատունյաց 296, 568, 582, 744
Գալիկո—հարազատ Աստուածատուր Բաբերդացու 29
—հայր ստացող Մխիթարի 210
Գամոյնիկ—առաջ. Աւագ վանքի 30
Գայլաձագ—1298 ստ. Աւետ 818
Գայլեր—հայր Ընձեր նկարչի 255
Գառնիկ—հայր Ալեքսի 495

Գառնիշ—քաշ քարտուղար 924
Գերգ—փառաշ, հայր Գրիգորի 199, 200
—հայր Մխիթար Գոշի 436
—հորեղբ. Վարգանի 808
Գերսամ—մրն որ. կաթողիկեի 197, 198
—վրգ. 910
Գէնի—հանիկ Մխիթար Գոշի 436
Գէորգ—գրիչ հայր հանգուցեալ Յոհաննիսի, որի ձեռագիրը ավարտեց 20, 21, 22
—եղբ. Անգրեասի, փրկողի 61
—վրաց թագաւոր 71, 140
—մրն Հաւուց թառի 84
—հանգուց. եղբ. Գրիգոր եպսի 85
—որդի Մքեհի 88
—քհ. նորագեց ս. Բեդրէհեմի տաճարը 93, 94
—Քարգմանիչ 1219 թ. 118
—հայր ստաց. Ստեփանոսի 183
—գրիչ 1232, օր. ժամագ. 184
—հայր Հաւուց թառի 191
—եղբ. Ստեփան Համշինցու 218
—եղբորորդի Կոստանտին կաթողիկոսի 235, 269, 284
—առաջն. Անգրեասաց ուխտի 239
—եղբորորդի Ստեփանոս եպսի 241
—Սկևռաց կամ Լամբրոնացի, մատենագիր 349, 350, 398, 542, 547, 647, 692—697, 700, 749—753, 804, 805, 807, 809, 829, 831, 846, 867, 868, 871, 873, 875
—Որդի Սիմէոն գրչի 477
—գրիչ Պակուրիատոնի որդի օր. ժող. 508
—նվիրատու 564
—սպասավոր Դրազարկի 657
—գրիչ 1292, օր. մի Աւ. 691
—կազմող 1294 թ. 740
—ստացող 1294 թ. 736
—փակակալ 777
—վրդ. եղբայր Թորոս գրչի 811, 812
—գրիչ օր. մի Աւ. 877, 878
—ստացող 918
Գինէպետ—միայնակեաց 148
Գիշ—հայր Յովհաննես ավագերեցի 143
Գուդիկ—մրն Ս. Աստուածածնի 108
Գուրիկ—ազգ. Յովհաննես գրչի 35
Գոհար—մորաքրոյր Գրիգոր գրչի 164
—քոյր Թէոդոսի 209
—մայր Սարդիս գրչի 495
—մայր Հուսէի 594
—մայր իշխան սարկաւագի 781
—հիշատակարանի գրիչ 836, 878
Գոհարագիզ—քուրադուստր Դագիկի 108
—գրչի օգնող 914
Գոշ—հայր Հայրապետ քահանայի 884
Գորգ—մրն Եղիվարդի 86
—օրինակ շնորհող 67
—որդի Ստեփանոսի 267
—մրն. Գոների 487
—առաջն. Երզնկայի Լուսաւորչի վանքի 426
—աշակերտ 611
—գրիչ 1289—օր. մի Աւ. 637
—աշակերտ Սարդիս Այրիվանեցու 828
Գուղիկ—եղբ. Բարսեղ վրդի 521
Գրեր—եղբ. Յովսեփ գրչի 471, 578
Գրիգոր Լուսաւորիչ 41, 90, 101, 122, 160, 213, 254, 304, 364, 440, 443, 446, 551, 555, 567, 569, 607, 620, 699, 706, 721, 745, 821, 838
—Աստուածաբան 55, 64, 249, 332, 404, 405, 457, 503
—Նիւսացի 57, 154, 332, 333, 402, 404, 604, 877
—Նարեկացի 249, 338, 595—597, 666, 851
—Վկայասէր 207, 236, 431, 672
—աղա, կաթողիկոս 24, 25, 40, 216, 421
—մրն Աւագ վանքի 30
—մրն Եղիվարդի 36
—Սսեցի Քարգմանիչ 38
—դպիր 1204 օր. Մեկն 39, 40
—վրդ. Սկևռացի 53, 213, 254, 484
—գրիչ Տոմարզայում 57
—գրիչ 1207 օր. Աւ. 60
—նվիրող 73
—մրն Ջարևհանի ուխտի 74
—մրն Սեբաստիո վանքի 75
—դիտապետ Սեբաստիայի 75
—վրդ. Սաղմոսավանքը նորոգեց 82
—գրիչ 1214, օր. Մաշտոց 85, 86
—եպսկ. 1214, ստ. մի Աւ. 85
—վրդ. Լուսաւորչի լեռան 86—87
—Արևելքի կազմող 93
—Սկևռացի գրիչ 1216 թ. գրեց մի Աւ. 99, 110, 111
—սարկաւագ, շարունակեց նախորդի Աւ. 99, 100, 110, 111
—գրիչ Տարոնում օր. Աւ. 101
—հայր Բարսեղ գրչի 102
—ստացող 1217 թ. 108
—վրդ. որդի Աբասա առաջ. Հառիճի 114, 910
—Մուրղանեցի նշ. գրիչ 116, 163, 296, 399, 400
—եպս. վերադիտող. տանն Փնաղմա 117
—կազմող 121, 122
—փրկիզ 122
—գրիչ 1221, օր. Աւ. 125, 126
—գրիչ օր. Աւ. 128, 129
—գրիչ 1223, օր. Աւ. 138
—գրիչ 1255, օր. Աւ. 143
—կտաւագործ, 147, 148
—վրդ. սրբագրիչ 153, 154

—ուսուցիչ Հուսիկ գրչի 159
—գրիչ որդի Խաչատուրի օր. Աւ. 163, 164
—գրիչ 1230, մի. ճաշոց 165, 166
—ք՛. փակակալ ստ. Հին կտակ. 169
—Մագիստրոս, վերագիտող Անւո 179
—վրդ մբն. Հաւուց Թառի 19
—պարոն, որդի Դաւթի Շոթոռկանց 193
—հայր Խծկոնքի վանքի 195
—ստացող 1237—Աւ. 199, 200
—գրիչ 1236 թ. Աւ. 200, 201
—մբն. Սանդուլ անապատի 204, 205
—գրիչ Սսեցի, 1238, օր. Աւ. 203—205
—եպս. Սեբաստիայի 208
—Կոստանդին կթ-ի դրան սարկաւագ 214
—գրիչ 1239 թ. օր. Շնորհալու գործերը 217
—որդի Հասանա և Դուխի, ձեռ. նվիրեց Խատայի վանքին 228, 229
—կազսեցի. մբն. Հռոմի Հայոց տան 224, 368
—գրիչ և խմբագիր 233, 234
—ստացող 241
—եպս. Խաչենցի 258
—ստացող 261
—աշ. Վանական վրդի 263
—գրիչ 1252 օր. ժող. 263, 264
—եղբ. Կոստանտին կթ-ի 235, 269
—Սանահնեցի 365
—Կիլիկեցի մբն Հայոց տան 369
—Արեմտացի մբն Հայոց տան 369
—Ուձնացի մբն Հայոց տան 369
—որդի Երզնկայի Պարոն Յովհաննէսի 376
—Կոզեռն—գաղափար օրինակի 278
—գրիչ Մաշկուորի օր. Աւ. 378, 381
—գրիչ 1255, օր. ժող. 280
—մբն. Անդրեասանց վանքի 380
—Վգիկ օր. ճաշոց 281
—հայր Ակների վանքի 304
—Թուղթ կոկող 305
—փակակալ Սանահնի 308
—վրդ. Սանահնի 308—309, 507, 880—882
—վրդ. Բշնեցի 350—354, 402, 424, 532—534, 600, 824
—ծաղկող 407
—կազմող 425
—գրիչ 427—430
—եպիսկ. Այրարատյան նահանգի 350—354, 475, 555
—որդի Աւշին մարավախցի 442
—վրդ. 1275. օր. Փիլոնի Հնգեմատյանը 418
—Փակակալ Սազմոսավանքի 478
—կազմող 497
—րաբունի 509
—եղբ. Ներսես լամրրոնացու 507
—գրիչ օր. Աւ. 518
—Ներկարար հայր Գրիգոր գրչի 516
—առաջն. Անաւարզայի 536, 576, 739
—վրդ. գրիչ. 1283, 544, 545
—գրիչ Սալխոնոյում 545, 546
—Պիծակ 1286, նկարազար. Նոր կտակարան 591, 802
—Տաուշեցի օր. Մեկն. 599
—Բ վկայասեր կթ. 603
—գրիչ օր. մեկնութիւն 1289 թ., 634, 638
—քզ. Աննեցի 672
—գրիչ Գաներում օր. Աւ. 702
—գրիչ Հայոց թառում. օր. մի Աւ. 795, 796, 827, 828
—Արևելացի, օր. Աստուածաշունչ 806—808
—որդի Հեթում գրչի 810
—ք՛. օր. Մեկն. 1298-ին 832
—Ջորուկ օր. մի ճաշոց 847—849
—գրիչ օր. Մեկն. 864

Դալար—Մշո Տօնականի փրկագնող 46
Դամանոս 933, 934
Դանիէլ—ք՛. 1254. ստ. Յաճախ. 274, 275
—ք՛. առաջնորդ Կտուց անապատի 840
Դասապետ—մբն սբ կաթողիկէի 197, 198, 677
Դաւիր—իշխան Շիրանշահեանց 426
Դաւիթ Անհաղթ—փիլիսոփա 226, 258, 406, 707
Դաւիթ—մբն Աւագ վանքի 29
—եղբ. Աստուածատուր Բարերդացու 29, 30
—մբն Նղի վանքի 36
—հայր Պետրոսի 56
—կաթողիկոս Ախթամարի 75
—սակաւակեաց կաթողիկոս Արքագաղնում 80
—առաջնորդ Տոսրովակերտի 106
—որդի ստացող Սարգսի 110, 111
—հայր ստացող Վարդանի 117
—ընկերակից ստ. Վահրամի 140
—Նվիրատու 144
—եղբ. Վարդան վրդի 147
—եպս. 1231, ստ. Դատաստանագիրք 174, 175
—զրեհագործ 187
—Շոթոռկանց 193
—որդի Մխիթարի և Եւհրատեսի 255
—որդի Յուսիբա 267
—դարբին 267
Դեմլիկ—հորեղբ. Յովհաննէս ք՛. 678
Դիոնեսիոս Արիսպագացի մատենագիր—52, 249, 411, 603, 742
Դիմիտրի—թագ. վրաց 531, 633, 791
Դմլուճ—մահգասի, նորքեցի (Երևան) 794
Դշխու—քոյր Նորաւէս գրչի 132, 133
Դոյր—գրիչ 878
Դուխ—նվիրատուի մայր 228
—վրդ. Լուծմունքի ստացող 406

—Բշնեցի, օր. Ագաթանգեղոս 304—306
—որդի Յովհաննէսի, ոտ. մի Աւ. 319
—եպս. Նսեպա 336
—Գերկեցի հորեղբայր Բարսեղ գրչի 335, 336
—Քարգմանիչ 402
—ստացող 453—455
—Ղաղարու վանից 458
—ստացող 467
—ուսուցիչ Սկեռայում 483, 486
—Ականցի 484
—1280. ստ. մի Աւ. 498
—վրդ. Քորայրեցի, մատենագիր 517, 518
—վրգ. ուսուցիչ Բարսեղի 522
—պարոն 557
—օրինակ չնորհող 557
—գրիչ Թեզենացի 600, 768
—մրն. Առեղս վանքի 613
—վրդ. Տաթևացի 1292, ստ. Աւ. 684
—Վարագա վանքից 714, 715
—կազմող 720, 726
—ստ. Մաշտոց 786
—Քագաւոր վրաց որդի Դիմիտրի 792, 830
—վրդ. Նվիրող 852
—(զանազան) 198, 241, 252, 350, 409, 544, 555, 620, 693, 783, 851, 878, 886, 888, 891, 893, 909, 915, 918

Նզեկիէլ—գրիչ 1285 թ. օր. Պահոց գիրք 577
—ժառանգորդ Հայրապետ քհ-ի 835
Նլքի—մայր Սարգիս գրչի 928
—մայր Մարկոս ստացողի 474—478
—ամուսին Հասանա որդի Ուղին 426
Նլիկում—Էլիկում—որդի Տարսայիճի 677, 792, 793, 830, 858
Նլիա—եղբ. Պօվրոսի 461
Նհաննա—Քագաւոր Աւարուց, որ է Հնդիկս 83
Նղբայրիկ—առաջ. Բեխենց վանքի 69, 72, 74
—Ծնող Մկրտիչի 478
—գրիչ Քարայատակում 513
—գրիչ Անիում 815—818
Նղիա—Հայր Պետրոս գրչի 56, 135
—մրն Հայոց Քառի 84
Նղիազար—վրդ. Աւագ վանքի 151
—մրն. Հայոց տան 368
Նղիշէ—պատմիչ 307—309
Նղիսէ—հայր Զարեհանի 73
Նմէն—ամուսին Խաչերի 116
Նմենիկ—ամուսին Խաչտերի 121
Նպիփան Կիպրացի 258, 345, 902
Նպիփան—եղբայր Կոստանտին եպս. 116
Նոաքէոս 245
Նսայի—եպկ. Մշո Առաքելոց վանքի 45—47
Նսայի Նչեցի—րաբունապետ 497, 519, 529, 552—556, 603, 604, 662, 677, 678, 822, 824, 847, 858, 863
Նսայի, Էսայի—որդի Թէոդոսի 209
Նւատաքսես (Նւթիմ)—գրիչ 833
Երիանոս—առաջ. Խորին անապատի 408, 409
Հրեմիա—առաջ. Ագդոց վանքի 365
—քահ. ստացող 534, 535
—աշակերտ Գէորգ Սկևռացու 750, 751, 832
Հրկայն—քհ. 137
Հրոյց—քհ. Այտաձորի 357
Նւագր—պոնտացի մատենգիր 258, 484, 503, 553, 634, 842
Նւսեբիոս Կեսարացի—մատենագիր 285, 386, 747
Նփրեմ Ասորի—մատենագիր 28, 64, 147, 258, 308, 345, 365, 518, 634, 647, 750, 831
—կազմող 473

Զարեհ, Զապէլ, Զասրիլ—Քագուհի, դուստր Լևոն Բ-ի 204, 233, 235, 250, 255, 265, 373, 569, 570, 572, 586, 704, 708, 744
Զարիկ—քոյր Ստեփանոս Բաբերդացւոյ 264
Զախար—գրիչ 1257 թ. Մխքայելի հեր օր. Աստուածաչունչ 290, 291
Զակքէոս—գրիչ 1289 թ. օր. Նոր կտակարան 620, 621
—գրիչ 1297 թ. Ստ. Օրբելյանի համար օր. Մեկնութիւն 793
Զապլուն—կին Հեթում պատմիչի 718
—դուստր Հեթում Քագաւորի 321
Զարհա—քոյր Սահակ Անեցու 69
Զարհամշահ—հայր Վարդան քհ-ի 620
Զաքարիա ամիր սպասալար 21, 39, 45, 71, 79, 105, 178, 182, 228, 283
—կաթողիկոս Հայոց 38
—602
—որդի Խոջա պարոնի 795
—որդի Խաչիկ քհ-ի 830
—գրիչ Տփխենց օր. Աւ. 864
—վրդ. ԺԳԴ 891
—ստացող 935
Զաւրավար—որդի Վարդանի 22, 23
—Սևաստոս 25
—Ոսկեգործ, ստացող 40, 41
—քհ. ուղղող 279
—գրիչ 1255, օր. Աւ. 297, 298, 382
—Հոգևոր հայր Գրիգոր գրիչ 413
—698
—Հայր Իլիան սարկ-ի 785
Զիաք—հոգև. հայր Մխիթար գրչի 783
Զինգեղ քհ. 862
Զմրուխտ խաթուն—կին Խաւտաւի 179, 180
Զուարթուն Բշնեցի, տե՛ս Գրիգոր Բշնեցի
Զուլուխաթուն—մայր Վահրամ գրչի—493

Զուքիաս—գրիչ օր. Սաղմ. 81
Էաշոյ—որդի Ամիր Հասանի 596, 597, 675, 858
Էլիկում, տե՛ս Ելիկում
Էմմանուիլ—որդի Պեռպեռանկէնի 584, 588
Էսայի, տե՛ս Եսայի

Ըմրաղ—մայր Նորոգող Ալեքսի 121
Ընձեր—Նաղաշ, որդի Գայլէի, 255, 535

Թագուհի—54
—մայր Վախթանգ իշխանի համար Նոր կտակ. գյուղ գրչի 95
—մայր ստացող Վարդանի 116, 117
—մայր Գրիգոր վրդ. 545
—քոյր Պապուկի 652
—մայր Վարդան գրչի 937
—(զանազան) 613, 768
Թագեր—մայր գրիչ Ստեփանոս իրիցորդու 800
Թագվոր—որդի Պովրոսի 461
Թադէոս—եղբայր Սիոն գրչի 67
—ստացող 83
—գրիչ օր. Ճառընտիր 141
—գրիչ օր. Նարեկ 155, 156
—ստացող 226
—Վահկացի 254
—Թեղինացի 352, 353
—հայր Ստեփանոս կազմողի 414
—հայր Դրազարկի վանքի 429
—հայր Մկրտիչ Կարբեցու 478
—եղբայր Յոհաննէսի 677, 678
—գրիչ 690, 692
—հօրեղբայր Գրիգոր քհ-ի 725
—կազմող 809
—եղբայր, եղբայրիկ գրչի 818
—Հայր Թորոսի 933, 934
—(զանազան) 513, 564
Թաղադին—927, 928
Թաճեր—իշխանուհի ստացող 596, 597
—մորեղբայր Իվանէ Օրբելյանի 858
Թաճմամ—մայր Գրիգոր գրչի 841
Թամամզին—մայր Հագիայի 827
Թամար—թագուհի վրաց 39, 140, 183
—մայր Ներսես գրչի 167
—մայր Տակոբի 652
—մայր Յոհաննիսի 653, 830
—կին Սիսիանոսի 674
Թամթա—իշխանուհի 856
Թամթախաթուն—հարս Սարգիս գրչի 495, 496
Թայիկ—ամուսին Խաւռասի 179
Թանկազիզ—կին Ահարոնի 255
Թանկեր—քոյր Գրիգոր գրչի 164
Թանկթագուհի—մայր Անանիա գրչի 785
Թանկնազ 908
Թատաւրէ—մայր Ստեփանի 264
—թագաւոր 209, 416
Թեոդոս—հայր Ներսես անապատի 67
—փակակալ 297
—որդի Կոստանդնի 373
—հայր Կոստանդնի 373
—քհ. ստացող 208—210
—փեսա Վարդանի 165
—մրն Սեբաստիայի Լուսաւորչի վանքի 209
—փակակալ Մաշկևորի 331
Թետալիա—եպսկ. 589
Թերան Անեցի—նվիրատու 237
Թեֆանո—մայր ստ. Յոհանիսի 184
—քոյր Յոհաննէս Արքաեղբօր 323, 343, 592
—կին Սմբատ Գունդստապլի 363
—կին Թորոսի 373
—դուստր Աւշին Մարաջախտի 441, 629
—մայր Կատարին գրչի 900
—կին Կոստանտին գրչի 900
Թէոփիլէ—մրն. Ուռիթելի վանքի 86
Թէոփիստէ—թարգմանիչ Լուսաւորչի ներբողի 431
Թիրքեշ—աբեղա մրն. Մոզնու վանքի 436
Թխիկ—մրն. Ջարեհանի ուխտի 74
Թութ—մայր Մխիթարի 783
Թութեր—քոյր Յովհաննիսի 535
Թուխեր 225
Թուրան—մրն Ջարեհանի ուխտի 74
Թումա, Թովմա—սրկ. 177
—գրիչ 217
—մարաջախտ Անտիոքում 327
—Մեծոփեցի պատմիչ 403
—մրն. Առաքելոց վանքի 459
—վրդ. ստացող 598, 599, 600, 615, 616, 798
—Անտիոքցի 584
—եպիսկոպոս Արևելից աշխարհի 691
—մրն. Վարագա վանքի 714—715
—որդի Խելաւքի 734—736
—եղբայր Գէորգի 737
—ստացող 738, 739
—գրիչ 837, 839, 841, 872
—Հօրեղբ. Յովհաննէսի 845
—(զանազան) 892, 893, 920
Թորոս—եղբ. Ստեփանոսի 13
—մրն. Աւագ վանքի 19, 30
—մրն. Եղիվանքի 36
—հայր Եղիվանքի 36
—երաժիշտ 54
—հայր Ակների վանքի 90, 91
—Վահկացի—գրիչ և նկարիչ 84, 85, 422, 423, 539, 540, 544
—Գորգացի 107
—խապազ մրն. սբ. Աստուածածնի 109
—գրիչ 174, 175, 215, 224
—մրն. Անապատիկ վանքի 190
—Սսեցի 198

—մրն. Սեբաստիայի Լուսաւորչի վանքի 209
—եղբորորդի Կոստանդին կաթողիկոսի 235, 241, 249, 250, 269, 284, 285, 296, 315, 318, 320, 325, 326, 330, 339, 359, 360, 361
—որդի Հեթում թագաւորի 238, 245, 249, 250, 292, 315, 320, 322, 342, 343, 362, 364, 411, 417, 471, 569, 586, 587
Յորոս Ռուսին 265, 271, 283, 284, 301, 302, 314, 315, 317, 318, 329, 330, 334, 335, 359, 361
Յորոս—մրն. Մաշկևորի 297
—դրիչ 298
—մրն. Ակների թուղթ կոկող 304
—գրիչ 313, 314
—վրդ. Հռոմի Հայոց տան 314, 368
—գրիչ դոների 322
—գրիչ, հորեղբայր Ստ. Սկևռացու 324
—ստացող 337, 338
—նվիրող 344
—գրիչ 367
—ստացող 396
—դրիչ 422, 423
—եղբորորդի Առաքել Հնազանդեցի 446
—մրն. Սկևռացի 455
—որդի պարոն Կոստանդին դրչի 459
—վրդ. ստացող 529
—գրիչ 540
—որդի Լևոնի 568, 583, 584
—որդի Կոստանդին իշխանի 568, 582, 583
—դրիչ 607, 657, 658
—գրիչ Հռոմում Ստ. Հաւք. 618
—Հուսամատ. ստացող 625—627
—գրիչ 1286 630, 654, 655, 657
—առաջնորդ 656
—Ռուբինյան 656
—ստացող 665, 666
—կապանցի գրիչ 667, 668
—որդի Աւշին պայլի 697
—Հայր Լևոն Գ-ի 698
—գրիչ 699
—կազմող 702
—որդի Լևոն Բ թագաւորի 715, 716, 741, 744, 788, 807, 810
—փակակալ 741
—փիլիսոփա Դրաղարկցի 757, 758
—ստացող 759, 760
—ուսուցիչ Յովհաննէսի 766
—գրիչ 811, 812
—նորոգող 853
—գրիչ և ստացող 870—872
—դրիչ 892
—ծաղկող 892
—(զանազան) 98, 126, 127, 139, 159, 373, 382, 447, 470, 613, 639, 692, 744, 758, 794, 851, 884, 886, 887, 924, 933, 938

Իգնատիոս—վրդ. մեկնիչ 40, 421, 589, 671, 672, 830
—Հարազ. Պետրոս դրչի 56
—գրիչ և նկարիչ Հռոմոսում 83, 84, 120, 178, 179, 192, 193, 195, 200, 448
—վարժապետ Հաղրատում 112
—եզր. Ստեփանոսի 136
—փեսա Վարդանի 165
—գրիչ 1275 թ. 457
Ինոցունց—Իննոկենտիոս 77
Իշխան—որդի Վահրամ իշխանի 114
—որդի Դաւթի 785
—որդի Զաւրվարի, ստացող 785, 786
—884
—երեց 930
Իշխանաւորէ—մայր Սարգսի 111
—կին Մանուելի 802
Իշոխ—թարգմանիչ 245
Իպատոս—եղբայր Սահակ Անեցու 69—71
Իսիկ—Սկևռացի 156
Իսիքիոս—երեց 851
Իսպէս—նվիրող 122
Իսրայէլ—Եաչենցի եպսկ. 258
Իրիցայ—կին Սիմէոն քհ-ի 180
Իւանէ—եզր. Զաքարէի 45, 79, 83, 112, 140, 154, 178, 182, 228, 263
—հայր Շմաւոնի 683
—որդի Տարսայիճի 858
Լաշա—թագ. վրաց 85
Լևոն—իշխան 88
—Բ. թագաւոր Հայոց 12, 18, 26, 39, 40, 60, 71, 76, 77, 80, 81, 85, 86, 88, 90, 91, 92, 96, 101, 102, 103, 107, 111, 115, 125, 166, 220, 238, 241, 244, 255, 315, 318, 442, 468, 471, 584, 586, 590, 708, 744
—Գ. թագաւոր Հայոց 204, 213, 235, 238, 245, 249, 250, 265, 269, 292, 315, 317, 318, 320, 322, 328, 329, 335, 339, 342, 343, 359, 360, 362, 364, 366, 374, 380, 381, 384, 393, 396, 397, 407, 410, 411, 415, 416, 420, 422, 425, 434, 438, 442, 445, 447, 452, 453, 461, 464, 470, 471, 482, 488, 491, 498, 507, 511, 515, 523, 526, 527, 529, 531, 537, 539, 548, 550, 556, 561, 564, 566, 568, 573, 576, 579, 581, 586, 588, 596, 597, 600, 607, 609, 616, 628, 630, 638, 639, 641, 658, 660, 665, 676, 681
—Բագունեանց 813, 814
—որդի Լևոնի Բագունեանց 813, 814

—մարաջախտ հայոց 323, 343
—պարոն, որդի Լիկոսի 288
—տէր Մոլևոնի 434, 435
—Քոռ Կեռան Քագուհու 445, 716
—հարազատ Հեթում իշխանաց իշխանի 470
—որդի Հեթում պատմիչի 718
—որդի Կոստանտի 587, 592, 744
—դպիր 749, 752
—որդի Կոստանտին կոպիտառց գրչի 999
Լիան 933
Լիբանան 884
Լիկոս պարոն 288
Լիպարիտ Օրբելյան 579, 857, 858
Լույս—եղր. Սմրատի 97, 98
Լույստիկին 860
Լուսաբեր 457, 458
Լուսեր—գրիչ 497, 915
Լուսիկ 168, 772

Խաթերուն—քուր Պապուկի 652
Խալաւ խան և սուլթան 131
Խաթունմամ 931
Խաթունիկ—կենակից Վարդագելի 106
—մայր Խաչերեսի 686
Խոշքակ—հայր Ջաղոո 182
Խամիլայ 740
Խայաթադին սուլթան 208
Խայտեր 29, 121
Խայեղբայր 17
—հայր Աւետեացի 259
Խաչակրաւն—քեռի Ներսէսի 760
Խաչանէս 14
Խաչանուն—հայր Վասիլի 145
—փիլիսոփա 931
Խաչատուր—հայր Գէորգ գրչի 21
—մրն. Եղվարդի 36
—Նախագաղափարի գրիչ 36
—փիլիսոփա 46
—փրկող 46
—վրդ. Սանահնեցի 55, 186, 881
—56
—մրն. Բեխենցի 72
—գործակից 73
—քհ. 75
—աշխարհական 75
—գրիչ 93
—ստ. 105, 106
—132
—տնտես 148, 149
—գրիչ 164
—ուսուցիչ 164
—հայր Վասակի 177
—հոգոց տանցի 224
—գրիչ 239, 267
—հայր Մայրենի 373
—մրն. Խորին անապատի 409
—ստ. 468, 469
—վրդ. Կարփեցու 478
—մրն Մշկավանքի 578
—գրիչ Կիպրոսում 608
—ստացող 616, 618, 692, 693, 829
—աշակերտ Կարապետի 611
—Քուղթ կոկող 621
—գրիչ, 661, 764
—րաբունի 755, 803, 807, 825
—խառաբաստեցի 786, 787, 799
—ծաղկող Անիում 817
—գրիչ Փերճերում 850, 851
—Կեչառեցի 894, 910
—գրիչ 885
—(զանազան) 413, 486, 487, 769, 784, 818, 835, 863, 905
Խաչեր 116
մրն. Հռոմի հայոց տան 369
—450
—ծաղկող 736
Խաչէվարդ—հայր Սմմաէլի 33
Խաչերես—198
—686
Խաչիկ—դանշանցի 47
—181
—267
—խլաթեցի 462
—601
—681, 682
—առաշն. ս. Գէորգի 830
Խաչուկ—167
Խաւտաւս—իշխանաց իշխան, որդի Ամիր-Սարգսի 178, 180
Խափլան—611
Խելաք—մայր Կոստանդնի 373
—ստ. 734, 735
—մայր Յակոբի 816
Խերիքնազ 860
Խերխաթուն 884
Խզդրպաշ 57
Խընծորոսկի 860
Խիկար քհ. ստ. 513
Խլիճ Ապան-սուլթան 584
Խնձոր—տիրուհի 22
Խոյանձ—հայոց Քաոցի 795
Խոշաք 795
Խուզելթոյ 772
Խուճլուխաթուն 179
Խոսրովիկ—Քարգմանիչ 712, 713
Խոսրով—Անձացի եպս. 761, 811, 812, 870, 871

—հայր Գէորգի 737
—քհ. 805
Խոսրովշահ 85
Խոսրովանուշ 267
Խորազմշահ 160, 166
Խորէն 382
Խորիշահ 94, 95
Խոցատեղ 491
—պարոն խլաթեցի 47
—783

Մաղիկ—մայր 208
—որդի 209
Մաղկանց—մայր 620
Մամիկ—տանուտեր 47
Մամուկ 678
—մայր Դասապետի 677
Մաո—հայր Սարգսի 794
Մերուն—քհ. 118
Միծմայր—քուր Ստեփանոսի 264
Մովինար—կին կրոնաւորի 887
—ստ. 379
—որդի Սիոնի 836
—գրիչ 771, 773
—937

Կալամատի—քուր Հէթում և Թագաւորի 201
—գունդես ճաֆու—մագաղաթ նվիրող 323, 343
Կալի—կին Հոսկերլի 827
Կախաբ—հոգե. եղբ. Տիրացու գրչի 395
Կանանց—քուր Վարգանի 165
Կատա—մայր Սահակ Անեցու 69, 71
—ամուսին Ըսպահանի 357
—939
Կարապետ—վրդ. 19
—քահ. 36
—մբն Ծղիվանքի 36
—գրիչ 59, 60
—ստ. 61, 62
—հոգ. եղբ. Գրիգոր եպիս-ի 85
—գրիչ 89
—ստ. 102, 103
—աշակերտ Սիքենոսի 106
—գրիչ 149
—գրիչ 167
—որդի Սարգսի 167
—հիշատակագիր 174
—ստ. 186
—Սանահնի աշակերտ 186
—մբն. Հռոմկլա 251
—մբն. Ակների 305
—հարազատ Առաքել Հնազանդենցի 332, 361, 366, 410, 460, 486
—որի Թորոսի ստ. 447
—կազմող 450
—ուսուցիչ 472
—մբն. Կեղիի 487
—գրիչ 547
—գրիչ 699
—գիտնական 714
—գրիչ 766, 769
—լրացնող 852
—գրիչ 852, 853
—գրիչ Տիւրկցի 853
—վերակացու Վարագա 862
—գրիչ 895, 897
—վրդ. 912
—(զանազան) 100, 286, 621, 670, 686, 699, 719, 760, 809, 835, 891, 895, 897, 905
Կեռան—Թագուհի 318, 329, 335, 339, 360, 396, 415, 416, 418, 419, 420, 539, 570, 573, 704, 717, 748, 766
—Տիկին ճոֆրէ 289
—քուր Աւշին մարաշախտի 441
—մայր Մխիթար վրդ-ի 794
Կեո—Լէոն Ղաւոսաս—իշխան 833, 834
Կիր Կոստանտին 421
Կիր Վասիլ—ստ. 602
Կեռազո 190
Կիրակոս—փակակալ 46
Կեռակ—իշխան 101
Կէրիոյն—մբն Հազրատի 124
Կիրախաթուն 137
Կիրակոս—փակակալ 46
—ստ. 86
—փիլիսոփա 113, 124, 252
—ձեռագիր գնող 214
—գրիչ 234, 235, 240, 241—242
—ուսուցիչ Վասիլի 249
—գրիչ 250, 251
—բաբերդացի 263
—կրտ. 267
—Դանձակերի—խմբ. Յայսմաւուրք 263, 332, 399, 400, 403, 925
—գրիչ 295, 296, 297
—ուսուցիչ Ստեփանոսի 300
—գրիչ 330
—գրիչ 331
—գրիչ 362
—մբն—Հայոց տան 369
—գրիչ 424, 425
—մբն Սկևռայի 483
—գրիչ կեղեցի 523
—գրիչ 738, 754, 755
—գրիչ 897
—վրդ—ԺԴ դար 815

—րաբունի—935
—(զանազան) 90, 118, 198, 214, 303, 576, 652, 719, 750, 751, 794, 893, 916, 928
Կիւրեղ—հայրապետ 473, 747, 750, 801, 831, 832
—որդի Ահարոնի 255
Կիւրոս—թագաւոր պարսից 246
Կողեոն—գաղափար օքնակի գրիչ 117
—մականուն Գրիգոր գրչի 272
Կոզմա—գրիչ 13, 33, 53, 54, 115, 118
—ստ. 37
Կոգնայ 629
Կոկաքաչն—պարոն 785
Կոկ—ամուսին Վանենի 140
Կոստանտին վրդ. Աւագ վանքի 16, 19
—որդի Վարդանի 22
—եղբ. Աստուածատրի 29, 30
—մրն. Նիվարդի 36
—ստ. 60
—առաջն—Այդեկի 80
—որդի Վահրամա Համուստացւոյ 81
—ստ. 85
—որդի Ռուբէն իշխանի 88
—եղբ. Սմբատ Ստեփանոսի 97, 98
—հայր Յովհաննէս կաթ.-ի 99
—գունդստապլ 101
—որի հեթում Սեաստոսի 101
—հպխս. Ռապնա 116, 117
—թագաւորհայր 116, 117, 120, 166, 175, 190, 198, 201, 206, 221, 229, 239, 244, 256, 280, 297, 298, 315, 318, 322, 323, 328, 329, 343, 362, 363, 389, 397, 410, 416, 510, 570, 572, 586, 589, 592, 599, 638, 640, 643, 644, 646
—կաթողիկոս 130, 133, 139, 144, 156, 158, 169, 170, 175, 177, 183, 186, 190, 201, 204, 208, 213, 214, 221, 229, 234, 235, 236, 238, 244, 248, 250, 254, 256, 260, 265, 267, 269, 271, 274, 278, 283, 286, 288, 292, 295, 298, 301, 303, 315, 317, 320, 322, 324, 325, 327, 329, 331, 333, 340, 342, 351, 355, 359, 360, 424, 607, 608, 625, 630, 637, 639
—գրիչ 127
—հայր Աւագ վանքի 141, 142
—ստ. 144
—գրիչ, վրդ. 156
—գրիչ 169
—ուռհաւեցի գրիչ 204, 296
—իշխանաց իշխան Համբրոնի 254, 329, 331, 418, 441, 446, 876
—գրիչ 277, 278
—ծաղկող 279
—ստ. 290
—որդի ճուֆրէ 993
—նկարիչ 323, 464
—փեսա Հեթումի 330
—ծերունի մրն Թորին անապ. 394, 409
—ստ. 358
—որդի Գոմդստապլի 363
—գրիչ 363, 364
—մրն Հայոց տան 369
—սրտիկ մրն Հայոց տան 369
—կաղմող 372
—հոխիսիմեանցի գրիչ 372, 373
—մրն Փոխընդա վանքի 382
—գրիչ 406
—գրիչ 407
—շինող Թորին անապի 409
—թուղթ կոկող 427, 429
—մեծ իշխան, որդի Աւշին մտրաչախի 439, 441, 442
—գրիչ 439, 440
—գրիչ 445, 446
—գրիչ 454
—պարոն, հայր Թորոս գրչի 459
—ուսուցիչ Պետրոսի 472
—իշխան Սարվանդի քարի 481, 482
—գրիչ 492
—գրիչ 527, 528
—գրիչ 536
—Թուղաք, գրիչ 561, 562
—գրիչ 562
—իշխան 568
—որդի Լևոն Գ-ի 335, 571
—վրդ. 576
—ավդցի, գրիչ 590, 591
—հիշատակագիր 598
—որդի Հեթում պատմիչի 718
—գրիչ 738
—թագաւոր, որդի Ռուբենի 708, 744
—հայր Լևոն գրչի 750, 751
—առաջն. Դրազարկի 758, 847
—գրիչ 769
—որդի Վասակ արքաեզրոր 647
—մրն. Ատանայի 661
—գրիչ 667, 668
—քհ. Տարսոնացի 693
—ստ. 801, 803
—վրդ. Թորին անապատի 811
—ոսկերիչ 827
—հայր Յովհաննէս գրչի 842
—առաջն. Սկեւռայի 847, 850
—գրիչ 868
—տէր Դեղընքարի 898
—տէր Կոպիտառա 899

—գրիչ 397
—գրիչ 898
—գրիչ 900
—գրիչ 908
—(զանազան) 13, 173, 198, 242, 255, 267, 288, 293, 364, 382, 449, 450, 455, 462, 483, 486, 536, 541, 542, 563, 643, 720, 752, 758, 800, 832, 837, 871, 897, 899, 933, 934
Կոստանց—պարոն 639
Կորկոտակ—մբն. Աւագ վանքի 29
Կուլասար—քհ. 887
Կրանաւոր 887

Հադիա—ստ. որդի Հայրապետի 827
Հազարգեղ—մայր Խոցատեզի 191
—հարաւ. Բարսեղ վրդի 521
Հազրպետ—որդի Աստուատրի 135, 136
Հալկում—որդի գրիչ Կոստանտին Կոպիտարցու 895
Համազասպ—եպս. հայր Սանահնի 185, 307, 309
—առաջն. Օհանավանքի 475, 512, 594, 610, 611, 632, 634, 721, 732, 733
—եղբայր Գրիգոր գրչի 101
—մբն. Գնգեվտնքի 636
Համայ—դուստր Մամիկոնի, Դսեղում 904
Համամ Արևելցի—վրդ. մատենագիր 707
Համաս—մայր 379
Հայկաւոր—կին Տալիաւ քհի 785
Հայոց—ստ. ամուսին պարոն Միմկորի 210, 211
Հայրական—երէց. գնեց մի Աւ. 904
Հայրապետ—փրկագնող 46
—գրիչ Սեբաստիայում 74, 75
—եղբ. Անթեասի, փրկագնող 61
—ստ. 83
—ստ. 198
—որդի Խաչիկի 266
—ստ. 280, 281
—մբն. Ակների 304, 305
—ստ. Սկեւռայում 324
—շինող Խորին անապատի 409
—վրդ. առաջ. Ղազարու վանքի 458
—գրիչ 483, 484
—առաջն. Սիսականի 524
—աշակերտ Մշակավանքի 518
—րաբունի Գնտեվանքում 556
—ստ. մբն. Զորոյ վանքի 226
—կազմող 761
—գրիչ 835
—փրկող 835
—գրիչ 905
—(զանազան) 132, 252, 264, 800, 827, 834, 884
Հայք—Որմէն—դուստր Վարդան քհի 860
Հանես—եղբ. Սիոն գրչի 67
—ստ. 239
—քեռի Ներսէս գրչի 294
Հաբոն—որդի Ալէքսիանոս ստ. 496
Հատաւր—կին Սարդիս ստ. 111
—սնուցիչ 812
—սնուցիչ 871
Հասան—հայր Վախթանգ իշխանի 94
—որդի Վախթանգ իշխանի 134
—հայր Գրիգոր իշխանի 228, 229
—Ջալալ Դաւլ 311, 312
—եղբ. ստ. Բարսեղի 449
—որդի Պռոշ իշխանի 594
—մբն. Բերդակի 835
Հասընբեր—որդի Հասնա Ուզին որդու 426
Հասնա—որդի Ուզին 426
Հարան—սուլքան Մսրա 588
Հարսանց—մայր Վալիի 939
Հեթում—սեբաստոս 25, 101, 418
—եղբ. ճոճրէ 298
—որդի Գունդստաբլի 363
—որդի Աւշին մարաշախտի 439, 441
եղբ. Ներսէս Լամբրոնցու 52, 254, 583
—իշխանաց իշխան 537, 609
—որդի Սիմոնկլայի տիրոջ 469, 470
—պատմիչ 717, 718, 798
—Հեղի, պապ Աւշին մարաշախտի 441
—պարոն 561, 810
Ա թագաւոր 100, 156, 166, 169, 170, 175, 177, 186, 190, 198, 201, 204, 208, 213, 214, 220, 221, 229, 232, 236, 238, 240, 242, 244, 248, 250, 254, 256, 265, 267, 269, 276, 278, 283, 286, 288, 292, 295, 299, 301, 303, 315, 317, 318, 320, 322, 324, 325, 327, 328, 331, 333, 335, 337, 340, 343, 350, 355, 359, 360, 362, 364, 366, 374, 380, 383, 384, 386, 389, 391, 392, 394, 409, 411, 416, 417, 420, 434, 440, 442, 455, 470, 471, 483, 485, 488, 507, 510, 515, 537, 547, 550, 569, 570, 576, 586, 588, 590, 592, 594, 600, 603, 605, 641, 643, 644, 647, 665, 803
Բ թագաւոր—335, 359, 360, 396, 415, 416, 524, 537, 571, 581, 617, 626, 628, 637, 639, 641, 653, 655, 657, 661, 663, 665, 681, 684
—որդի Կոստանդին գրչի 899
—վրդ. 157
մբն. Անդրեասանց ուխտի 380
—գրիչ 488
—Պլուզ, երէց 900, 901
—գրիչ 809, 810
—գրիչ 813

—ստ. 695
—վրդ. 900
—(զանազան) 904, 931, 998
Հնթումյաններ 569, 570
Հեղի Թարգմանիչ 76, 77
Հևղի Հնթում տե՛ս Հնթում Հեղի
Հեղինի—մայր Գրիգորի 802
Հեմնքալու 751
Հերիքէ—հանդերձիկ տվող 139
Հիզան 835
Հիպայ 409
—գրիչ 471, 472
Հիպոլիտ—հայրապետ 365, 536
Հնդու—եզր. Գրիգորի 841
Հոռոմխաթուն—ստ. 509
Հոռոմտիկին—քուր Սահակ Աննցու 69
—հարազատ Հայրապետի 198
Հռիփսիմեա—մայր Աստուածատուր բարերդացու 28—30
—քուր Հնթում Թագաւորի 100, 101, 322, 343, 373, 592
—մայր Մարգարէ վրդի 378
—կենակից Գրիգորի 396
—մայր Շիրինկի 835
Հուլաու—խան 301, 319, 439, 507, 572, 681, 862
Հուսէն—փրկող 594
Ցուսիկ—րաբունի 557
—հայր Աստուածատուր գրչի 559
—հորեղբայր Յովանիսի 639
Հոմերոս 607
Հրաչէ 568

Ղազան, խազան—խան 697, 771, 783, 786, 791, 795, 799, 809, 816, 821, 828, 830, 834, 860, 862
Ղազար—վրդ. գրիչ 17—20, 86, 141, 142, 146, 149, 152, 153
—տանուտէր Հառիճո 114
—եզր. Գրիգոր եպիս-ի 117
—գրիչ 433
Ղևոնդ—հոգևոր եզր. 621
—պատմիչ 634
Ղիաթերդին Քեյ խոսրով 145
Ղիամաթ 736
Ղուբլա 461, 614
Ղուկաս—մբն. Եղիվարդի 36
—մբն. Զարեվհանի 73
—գրիչ 457
—հայր Ստեփանոսի 800
—գրիչ 905
—(զանազան) 274, 432, 488, 552, 714, 835, 879

Ճարակ—գրիչ 126
Ճարի—տէր Արցախի 435
Ճաֆան 592
Ճընայ—փիլիսոփա 806
Ճոնի 46
Ճոսլին—կազմող 256
Ճոֆրէ 81
—իշխանաց իշխան—298
—տէր Սարուանդուքարի 329, 441
—Ճուան—նոտար 218
—որդի Հնթում Թագաւորի 320
—Քոռ Հնթում Թագաւորի 412

Մագիստրոս—Գրիգոր-իշխան, մատենագիր 706
—վերադիտող Անուոյ 679
Մագուլէ—հայր Հուսէի 594
Մաքէոս—գրիչ Սանահինում 173, 174
—գրիչ, աշակերտ 186
—եկեղեցացի, ստ. 239
—գրիչ, Մլիճեցի 550, 552, 621
—րաբունի 578, 579
—գրիչ 666
—վրդ. գրիչ 603, 676
—գրիչ 840
—գրիչ 861
—(զանազան) 274, 769, 907
Մալիք—հայր Արշուրալի 876
Մակար—եզր. Մելքիսէթ եպիսկ. 260
—հոգ. եզր. Թորոս Արևելցու 313
Մաղաքիա—հիշատակագիր 242
—գրիչ 431
Մամախաթուն—մայր Մխիթար գրչի 436, 783
—մայր Վարդան վրդի 557
—քոյր Հուսէի 594
—մայր Պապուկի 652
—մայր Գրիգոր գրչի 795
—մայր Յովհաննես գրչի 535, 915
—կենակից գդակկարի 922
Մամատիկին 905, 932
Մամաս—քոյր Ստեփանոսի 795
Մամասքին—մբն. Զարևհանի 74
Մամիկոն—որդի Վարդանի 809
—հայր Համայի 904
—Մամիկոնյան 805
Մամոց—տատ Յակոբ գրչի 734, 737
Մամռքեր—ամուսին Աւետիքի 809
Մամփրէ—վրդ. 87
Մամքան—մայր Մկրտիչ գրչի 187
—ամուսին Հասան Ջալալ Դոլի 311, 312
—կին Յակոբ երէցի 652
—քոյր Յովհաննէսի 677
Մայրխաթուն 768
Մայրտիկին—մայրեր էրեմիայի 535

—ազգ. Յովհաննէսի 830, 860
Մանանա 22
Մանաս—մրն. Գեակա վանքի 400
Մանիլա—հայր Աւագտիկնոջ 930
Մանկտախան 301, 311
Մանուկ 831
Մանկկ—պատրոն 108
Մանուէլ—եպս. առաջն. պարւասանի 64
—սիր. գունդստապլ. 126
—վանահայր Ամասիայում 169
—որդի Աստուածատրի 197
—հայր Թորոս Արևելցու 313, 314
—գրիչ 355
—երաժիշտ 432
[illegible] 482, 689
—փիլիսոփա 484, 703, 758
—որդի Մարիամ արքայադստեր 766, 768
—(զանազան) 408, 802, 835
Մանուշակ—մայր Կիրակոսի 828
Մանսել—գունդստապլ 327
Մանտալէ 582
Մաշտոց—կաթողիկոս Հայոց 96
Մառենի—կին Պետրէ գրչի 509
—հարազատ Պետրոսի 207
Մասլին—զորավար 81
Մաստոմ—մայր Սամոսկու 677
Մարգարէ—միայնակեաց 30
—կազմող 65, 66
—գրիչ, ծաղկող 68, 70, 72
—գրիչ 108
—որդի Խաչատուրի 116
—գրիչ 130
—մրն. Սանահնի 186
—գրիչ 309, 310
—գրիչ 368, 370
—վրդ. 377, 378
—մրն. Հոռոմկլայի 688
—(զանազան) 904, 934
Մարգարեկ—գրիչ 686, 688, 689
Մարգարիտ—ազգ. Խաչատուր գրչի 93
—հոգևոր մայր Վասիլի 177
—քույր Երեմիայի 535
—մայր Վարդանի 576
—613, 768, 860
Մարեմթագ 592, 688
Մարեմտիկին 534, 830, 860
Մարի—կողակից Ոսկանի 823
Մարիամ 535, 559
—մայր Կոստանդի 22
—քույր Աղութխաթունի 303
—արքաքույր 343
—մայր Պետրոսի 364
—կողակից Լուսաբերի 458
—հոգևոր քույր 559
Մարիանէ—մայր Ներսէսի 132
Մարիսա—որդի Սպայանի 357
Մարիուն—դուստր Հեթում թագ-ի 320, 325, 412, 766
Մարկոս—մրն. Հաւուց թառի 84
—գրիչ 160, 161
—մրն. Սանահնի 186
—արքեպս. Սուրբմարեցի 206
—վերակացու 854
—ստ. 474, 477
—մետրոպոլիտ 582
Մարծպան—Մամիկոնեան 905
Մարտիրոս—միայնակեաց 16, 17
—գրիչ 123
—ստ. 139
—ստ. 381, 382
—ծաղկող 438
—գրիչ 538
—վրդ. 543
—մրն. Խորին անապատի 466
—գրիչ 906
—գրիչ 907
—թուղթ կոկող 911
—(զանազան) 136, 189, 209, 331, 518, 543, 686, 689, 764, 783, 791, 806, 823
Մար Իգնատիէ—պատրիարք Ասորւոց 245
Մեթար—պարոն 931
Մելէքըլեռէ—սուլթան 85, 166
Մելիք Աշրաֆ—սուլթան 86, 701, 717
Մէլիք—մայր Վասիլի 177
—հոգևոր մայր Գրիգորի 516
Մելիք Մանսուր—սուլթան 718
Մելիքշահ 137
Մելիքտիկին 794
Մելտէ—վրաց տիկին 108
—որդի Մկրտչի 137
—եղբ. Գիշի 143
—հայր Ցակոբոսի 512
—գրիչ 907
Մեհեան 795, 796
Մեհրասթին 886
Մեծանուն 934
Մեծերէց 725
Մեծմայր 674
Մեծպարոն 938
Մեծտիկին—կենակից կիր Վասիլի 602
—մայր Վարդանի 755, 832
Մելիսան 635
Մէնտիկին—մայր Ահարոնի 839
Մեսրոպ—Վայոցձորցի, պատմիչ 799
—քհ. թուղթ կոկող 142
—վրդ. Սով դղյակում մենաստան շինեց 242

—գրիչ 908
Միթար—Գազկանց 165
—հայր Գրիգոր գրչի 841
Միխայէլ—ոսկերիչ 23
—եղբայր կաթողիկոսի 24, 25
—եպս. Անտիոքի 158, 159, 170, 175
—պատրիարք Ասորւոց, մատենագր. 161, 162, 244, 427, 430, 431
—գրիչ 276, 277, 290, 291, 292
—(զանազան) 38, 218, 427, 637, 877
Մկրտիչ—մրն. Հաղպատի 123
—ստացող 137
—եպս. ծաղկող 138, 821, 822
—գրիչ 478
—սրկ. 891
Միհրան 480
Մինա—իրիցկին 209
—(զանազան) 734, 737, 741, 816, 916
Մինատիկին—մայր Տիրապետի 938
Մինաս—բարունապետ 404, 406
Մինաս—առաջ. Սկևռայի 617
—քեռի Խաչերեսի 686
—հայր Վարգանի 755, 832
Մլեհ—Լևոն թագ. հորեղբորորդի 88
—հաջորդ Ստեֆանէի 568
—իշխան 583—585
—որդի Լևոն Ա-ի 744
Մլքե—դուստր Թորոսի 284
Մխիթար Գոշ 183, 184, 206, 532, 754
—առաջն. Ալնոց վանքի 35
—Քորայրեցի մատենագիր 68, 72, 249
—վրդ. Հաւուց թառի 84
—գրիչ 122, 123
—թարգմանիչ 131
—հիշատակագիր 185
—աշակերտ | Սանահանում 181
—գրիչ 196
—պարոն ստ. 210, 211
—հայրապետ 282
—հայր Ակների վանքի 292
—առաջ. Սկևռայի 324
—գրիչ 374, 376
—Այրիվանեցի 403, 530, 531, 532, 594, 595, 926
—գրիչ 435, 437
—ուսուցիչ 449
—վրդ. Կարփեցի 478, 479
—մրն. Գոմերի 487
—թուղթ կոկող 518
—ստ. 601
—կազմող }612, 613
—մրն. Վերին Վարագի 714
—գրիչ 783, 784
—ուսուցիչ Սարգսի 794
—մրն. Հաւուց թառի 795
—գրիչ 908
—գրիչ 909
—(զանազան) 13, 16, 134, 137, 392, 429, 536, 557, 559, 608, 652, 828, 862
Մխիթարիչ—գրիչ 21, 22
—որդի Ալեքսի 121
—գրիչ 340, 399
—գրիչ Բագնւանա՞վ. 690
—(զանազան) 222, 485, 496, 772, 795
Մոլան—մեծ Մայր Գրիգորի 201
Մշկոց—ստ. 934
Մոմիկ—նկարիչ, գրիչ, 552, 676, 678
Մովսէս—քերթող 258, 706, 707
—ստ. 36
—աստուածաբան 249
Գանձակեցի 258
—գրիչ 376, 377
—ուսուցիչ Հայրապետի 484
—ստ. 499
—բեմբական 528
—Երզնկացի 761
—գրիչ 762, 763
—ստ. 679
—գրիչ 910, 911
—(զանազան) 115, 699, 855, 876
Մոշան 736
Մսրա Լաչին սուլթան 811
Մրտեր 382
Մուլուք 395
Մունաթ 961
Մուշեղ 828
Մուսիկ 613

Յակովբ, Յակովբոս—մրն. Աւագ վանքի 19, 27
—կազմող 22
—եպիսկ. փրկագնող 46
—գրիչ, Հաղբատում 68, 69, 75
—փակակալ 84
—գրիչ և նկարիչ 97
—աշակերտ Սանահնում 186
—գրիչ 186
—բարոնի 300
—եպս. Վարագի 303
—մրն. Հռոմի Հայոց տան 313
—եղբ. Թորոս Արևելցու 313, 314
—ուսուցիչ Երզնկացու 340
—ուսումնակից Գէորգ Սկևռացու 351
—գրիչ Երզնկայում 375, 376
—գրիչ 392, 447
—առաջն. Մեծքար անապատի 425, 443
—դպիր, գրիչ 447

—պարոն ստ. 359, 364, 366, 368, 380, 381, 391, 392, 393, 397, 406, 407, 410, 416, 420, 422, 425, 434, 435, 438, 440, 445, 446, 447, 450, 452, 453, 455, 459, 463, 464, 470, 475, 482, 484, 485, 486, 487, 492
—դրիչ 403, 467
—գրիչ 472
—կաթողիկոս Հայոց 498, 507, 511, 512, 518, 523, 524, 526, 529, 530, 537, 539, 550, 551, 557, 564, 576, 594, 596, 597
—գրիչ 643
—մրն. կարսի սր. Աստուածածնի 657
—մրն. Տարոնի սբ. Կարապետի 656
—մրն. Վարագի 714, 862
—գրիչ Արգիլանցի 734, 737
—գրիչ 780
—փիլիսոփա 797
—ստ. 798
—ստ. 815, 816
—մրն. Բերգակի 835
—գրիչ 841
—(զանագան) 160, 219, 271, 274, 496, 653, 667, 668, 758, 835, 836, 878, 918, 926
Յովհաննէս—Ոսկեբերան 25, 113, 307, 309, 519, 610, 633, 648, 649, 750, 751
Գառնեցի 258, 259
Յովհաննէս—ծաղկող 14
—գրիչ 14, 18
—վրդ. ծեր 2ա 29, 30
—գրիչ, որդի Գէորգի 20, 22
—եղբայր Աստուածատուր Բաբերգացու 9, 30
—գրիչ Ալնոցցի 35
—ստ. 36
—գրիչ 37
—արքեպիսկ. 38
—կաթողիկոս 39, 60, 75, 83, 88, 90, 92, 96, 98, 99, 101, 102, 107, 111, 115, 116, 128, 134, 140, 491
—Դանչանցի 45
—Միչնաղբիւրցի 45, 48
—փիլիսոփա 43
—դասակից Ներսէսի 53
—առաջն. և օգնական 54
—գրիչ 55
—Տիկնազդի վրդ. 56
—Հազբատի հայր 59, 71, 117, 173, 310, 313, 345
—առաջն. Սեբաստիայի 74, 75
—հիշատակագիր 70, 72
—Նկարիչ 75
—Նկարիչ 76
—գրիչ Հռոմկլայեցի 84, 85
—հետ ստացող 87
—գրիչ 92, 93, 98
—գրիչ Հաոիճեցի 113, 114
—ծաղկող 115
—կազմող 127
—գրիչ 130
—գրիչ 133
—քուղթ կոկող 136
—հայր Ստեփանոսի 137
—գրիչ Բարերգացի 137, 138
—որդի Գիչի 143
—առաջն. Աւագ վանքի 151, 152, 154
—գրիչ 166
—գրիչ, որդի Վարդանի 173, 274
—հայրապետ Աղուանից 183
—եպսկ. ստ. 184, 274, 275
—գրիչ Հռոմկլայի 190
—հայր Հաւուց թառի 191
—առաջն. Հաւքախաղացի 198
—ստ. 215
—ստ. որդի Ռատին 215, 216
—ազգ. Գրիգոր գրչի 201
—ծաղկող 219
—ստ. 220
—գրիչ 221
—մրն. Հռոմի Հայոց տան 224
—կազմող 255
—գրիչ 269, 270
—գրիչ 273
—արքաեղբայր 278, 279, 321—323, 341—344, 384—390, 410, 412, 484, 485, 510, 511, 562, 563, 588, 593, 595, 596, 603, 605, 606, 638, 642, 644, 647, 722
—գրիչ 278
—գրիչ, որդի Կարապետի 286
—գրիչ, որդի Ներսէսի 288, 292, 293
—գրիչ, որդի Գրիգորի 298
—եղբ. Թորոս Արևելցու 313, 317
—գրիչ, որդի Շիրինի 339, 340, 834, 835
—ուսուցիչ Յովհաննէս Երզնկացու 340
—գրիչ 358
—հայր Կոստանտին Հոիփսիմեացու 373
—պարոն, որդի Սարգիս եպսի 376, 377, 426, 507, 910
—գրիչ, որդի Ատոմի 392
—գոմրձեցի 397
—քուղթ կոկող 392
—գրիչ 403
—Քարգմանիչ 403
—գրիչ 404, 406
—գրիչ 411
—գրիչ 412
—գրիչ 421
—գրիչ 419, 430, 438

—գրիչ 452
—գրիչ 466, 467
—գրիչ 483
—գրիչ 485
—գրիչ Երզնկացի 507, 560, 602, 700, 702, 705, 709, 712
—գրիչ 514
—առաջն. Սիսական տան 51
—Մշեցի 518
—առաջն. Հաղբատի 518, 753
—գրիչ 521
—գրիչ 523, 524
—գրիչ 534, 535
—Հայր Թորոս Վահկացու 541
—գրիչ 547
—գրիչ Թանատէ վանրի 557
—եղբ. Վարդան վրդ-ի 557
—Նորոգող 565
—Բշնեցի 660
—գրիչ 634—636
—գրիչ 651
—գրիչ Կարսեցի 652, 654
—առաջ. Տարոնի 656, 834
—գրիչ 660
—գրիչ 664, 665
—գրիչ 669
—ստ. 676, 678
—Դաւիթ Տաթևացու Հայր 684
—առաջ. Բագուանու վանքի 690
—գրիչ 698, 699
—գրիչ Դրազարկի 703
—րաբունապետ 723, 761, 763
—գրիչ 721, 727
—Արքակաղնեցի 724, 725
—գրիչ Մլիճեցի 758, 760
—գրիչ 762, 765, 766
—կազմող 769
—գրիչ Հաւուց թառի 796
—գրիչ 796, 797
—եպսկ. առաջն. Անիի 817
—գրիչ 819, 820
—գրիչ 830, 833
—քհ. գրիչ 834
—փիլիսոփա 835
—Կարմիր վանեցի 847, 850
—գրիչ, որդի Կոստանտնի 847
—Բքնեցի 841
—Թուղթ կոկող 862, 863
—Հայր Սանահնի 880, 882
—միջնորդ 898
—գրիչ 913, 914
—Խոյլենց 913, 914
—գրիչ որդի Մինայի 915, 918
—գրիչ, Արքիշեցի 917, 919
—գրիչ վրդ. 919
—գրիչ, որդի Մամեղենի 919
—գրիչ 925
—գրիչ Վանականի վանքի 926
—կազմող 927
—վրդ. 936
—(զանազան) 21, 22, 32, 56, 77, 93, 100, 103, 110, 115, 120, 131, 135, 139, 142. 147, 159, 166, 173, 176, 181, 183, 191, 207, 226, 229, 252, 259, 266, 267, 269, 270, 273, 274, 294, 304, 311, 337, 338, 350, 368, 381, 387, 392, 395, 396, 405, 406, 438, 447, 454, 457, 461, 474, 478, 488, 510, 529, 539, 547, 577, 601, 611, 613, 614, 621, 668, 683, 685, 687, 703, 712, 719, 738, 750, 757, 764, 768, 769, 770, 794, 797, 801, 802, 811, 817, 823, 824, 829, 830, 835, 841, 855, 860, 862, 878, 883, 891, 906, 909, 918, 920, 921, 928, 933, 934

Շովասափ—սա. 65
—փիլիսոփա 164
—կազմող 183
—Նկարիչ 435
—վրդ. Գետկեցի 436
—եղբ. Դասապետի 677
—ուսուցիչ Մամիկի 678
—մբն. Վարագի 714
—գրիչ 912
—հյուսն. 817
Ցորդանան—852
Ցորդոտ—պապ Դաւթի 454
Ցունան—հաղբատցի 58, 59, 66
Ցուղապ—պարոն, ստրատելատ 187
Ցասամ—որդի Սիսիանոսի, ստ. 674, 676
Ցուսեփ 67
—արքեպս. Անտիոքի 98
—մբն. Կապոսի վ. 169
—վրդ. 175
—կազմող 186
—աշ. Իգնատիոսի 193, 200
—երաժշտապետ 222
—գրիչ 253
—քհ. Նյութ չնորհող 287
—ստ. 297
—գրիչ 298, 299
—գրիչ 471
—գրիչ Կեսարացի 527, 528
—փակակալ 657
—մբն. Վարագա վ. 714
—գրիչ 720, 721
—փիլիսոփա
—գրիչ Սսեցի 766, 767

—գրիչ Ասպիսընկցի 826, 844
—կազմող 912
—գրիչ 920
—(զանազան) 100, 107, 319, 483, 826, 627, 757, 800
Ցուսիկ—վրդ. Աւագ վ. 19
—փիլիսոփա 42, 46, 267
—մրն. Կապոսի 165
—պգաշ… սբ. Կարապետի 225
—պարտիզպան 241
—գրիչ 256, 257
Նարուգոզոնոսոր 246, 342
Նգզ—դուստր Մխիթարի 770
Նաթան—Ասկուռայի տէր 583
Նահան—սըկ. 589
Նահապ—առաջն. Թեղենիքի 767
Նահապետ—Նորոգես գրչի եղբայր 132
—հայր Հուսիկ գրչի 471
—տէր Աւ-ի 923
—եղբ. Գրիգորի 559
Նանա—իշխանուհի 857, 858
Նասէր—դուստր Խայտերի 121
Նասրադին—որդի Շիրին Թաւրիզեցու 168, 922
Նասրիկ—ամուսին Կոստանդնի 255
Նարգին—մայր Սարգիս վրդի 912
Նացուալ—Նվիրող 197
Նաւասարդ—եղբայր Ստ. Աղութխաթունի 303
Ներոն 903
Ներուաս 143
Ներսէս—մեծ կաթողիկոս Հայոց 40, 233, 245—247, 319, 432, 567, 734
—Շնորհալի 24, 40, 130, 217, 220, 236, 345, 463, 466, 607, 662
—Լամբրոնացի 23, 26, 48, 51, 53, 280, 418, 419, 423, 440, 441, 507, 532, 566, 569, 571, 589, 594, 669, 688, 728, 731, 738, 739, 761, 776, 782, 793, 811, 863, 866, 870
—գրիչ 17
—Մշո Ճառընտիր հիշատակագիր 42, 46
—փրկագնող 46
—քեռորդի Ներսէս Լամբրոնացու 48, 53
—հայր Սեբաստիայի վանքի 75
—աշակերտ Հաւուց թառի 84
—վրդ. 93
—քորեպիսկոպոս, օրինակ տվող 101
—գրիչ Աւագ վ. օր Ճառընտիր 146—148, 152
—գրիչ 167, 172, 173
—ստ. մի Աւ. 205
—գրիչ 238, 239
—Աղուանից կաթողիկոս 263, 311
—հայր Յոհաննէս գրչի 288, 293
—գրիչ օր. Աստուածաշունչ 294
—մրն. Ակների 304, 306
—ստ. մի ժողովածու 358
—վրդ. Մշեցի, րաբունապետ Աղբերց վանքի 366, 402, 403, 458, 494, 497, 517, 518, 519, 550—554, 634, 663, 678
—Երզնկացի պարոն 376, 625, 637, 781, 843, 864
—մրն. Հայոց տան 369
—գրիչ 391
—հայր Բարսեղ դոչի 409
—գրիչ 490, 491
—գրիչ 525
—Նահատակ 664, 665
—լրացնող գրիչ 666
—ստ. 669
—ստ. 759
—գրիչ 762, 763
—ստ. 773, 774
—քհ. եղբայր Թորոս գրչի 811, 812, 871
—գրիչ 921
—վրդ. ստ. 922
—ստ. 932
—(զանազան) 35, 36, 262, 382, 453, 467, 645, 766, 808, 860, 911
Ներսիսակ—գրիչ 1288, օր. Տրամախաւսութիւն 645
Նիկիֆօռ—հովանաւոր 38
Նիկաւլ—հօրեղբայր Յովհան գրչի 222
—հայր Թորոսի 625—627
Նիկողայոս 652
Նոնոփար—ամուսին Մարտիրոսի 210
Նորատին—սուլթան Հալեպի 58
Նորահատ—եղբ. Ստեփանոս հայրապետի 809
—Նորոգող 923
Նորշահ—809
Նորաւգէս—գրիչ 132
—կազմող 463
—ստ. 466, 467
—ստ. 490, 491
—(զանազան) 637, 697, 860
Նորտիկին 884
Նորսես—ստ. 115
—հայր անապատի 67
Նսոր—խալիֆա 299
Նուեր 491
Նուսրաթխաթուն 602
Նուշ—տիրուհի 22
Նուրանսթ 164
Նրշիս—մայր Պետրոս գրչի 191

Շահ—եղբորորդի Յակոբ քհի 816
Շահանդուխտ—մայր Գրիգոր ստ. 199
—գրիչ 575

—ոդի Կեռանի 441
—կին Կոստանդնի 486
Շահէր—եղբ. Սարգիս քհի 69
—եղբ. Պարսամայ գրչի 719
—հայր նկարչի 76
Շահնշահ—որդի Զաքարիա սպասալարի 105, 112, 173, 817
—եղբ. Յոհաննէս գրչի 340
—դերձակ 602
—635
—գրիչ Երզնկայում 842
Շահոց—մայր երեմիայի 750, 751
Շահրալատ—մայր Շմաւոն գրչի 683
Շամամ—կին ստ. Տոնիկի 297
Շամեր—ազգ. Սարգիս գրչի 302
Շաղթի—քոյր Վարգանի 620
Շապուհ—պարսից արքա 182
—Բագրատունի 634
Շատարև—ազգ. Յոհան ստ.-ի 860
—932
Շարաղար—քոյր Պետրոս գրչի 191
Շարուհիկ 258
Շարվեն—հայր Վարդանի 808
Շաքար—տիրուհի 22
—կին Վարգանի 808
Շերան—թարգմանիչ 131
Շերանիկ—մրն. Անիի Բեխենց վ-ի 69
Շերիկ—հայր Յովսեան գրչի 340, 835
Շիրին—թաւրիզեցի, փրկագնող 168
Շիրինշահ—դրիչ 727
Շմաւոն—գրիչ 492, 680, 683, 684
—գրիչ Թեզենիքում 767, 768
Շմոն—Ասորի, թարգմանիչ 236
Շնաւոր տիկին—612
Շնորհուոր—քհ.—ստ. 660
Շնոֆոր—կին Մխիթարի 771
—մայր Ներսէս գրչի 297
—(զանազան) 862, 915
Շոթոռկանց Դաւիթ 193
Շրուանշահ 939
Շուշան—թագուհի 81, 125
—մայր Կոստանդինե կաթողիկոսի 269, 284
—մայր Պետրոսի 135
—դուստր Թորոսի 284
—մայր Ամենաւագի 740
—մայր Ներսէսի 760
Շուշանխաթուն—մայր Գրիգոր գրչի 516
Շուշկան—քոյր Գրիգոր գրչի 841, 842

Ոաղաս—ստ. 923
Ոմեծ—հայր 560
—հորեղբորորդի Կարապետի 612
—գրիչ Երզնկայում 622, 627

Ոսկեհատ—մայր Վահան գրչի 597
—կին Յովհաննէսի 772
—կին Սարգսի 794
Ոսկեհեր—քհ. Ատանայի վանքի շինող 691, 692
—ստ. 803, 804
Ոսկեցաւղ—մեծ մայր Կոստանդին Սկևռացու 849
Ոսկի—կին Դեմլիկի 678
Ոսկետիկին—կենակից Մանիլի 108
Ոսկո—մայր Գրիգորի 737
Որմէն—տիրուհի (տե՛ս Արմեն) 22, 23
Ովրեստէս (տե՛ս Առեստ) 145
Որոգինես 258, 332

Չեսար—858
Չինգիզխան—438

Պալիան—Հեթում Ա-ի դստեր—Ֆիմիի որդի 320, 412
Պալհաւ—ազգ. Յոհան ստ. 860
Պահլաւունիներ—25, 439, 568
Պահր—մեծ մայր Կոստանդնի 849
Պահրիկ—մայր Դաւթի 458
Պազտին—թագ. Բյուզանդիայի 40
—իշխան—ստ. 80, 125
Պայծառ—Տոմարծեցի 59
—քուլր Նորոգես գրչի 132, 133
—մայր Տզապարոն գրչի 938
Պայիտուն—թագ. 771, 772
Պապանուն—հայր Պարոնի 452
Պապա Սիմեոն—Ուռհայեցի 118
Պապաք—Պռոշի որդի, իշխան 557, 596, 675, 681, 682, 830
—հայր Յակոբ գրչի 652
—հայր Մխիթար գրչի 783
—հորեղբայր Վաթգանի 808
Պապեր—հայր Յոհաննէս գրչի 915
Պապիաս 256, 276
—հայր Բարսեղ երաժշտի 730
Պապիկ—եղբ. Անդրեասի 382
—հայր Մարկոսի 474—476
Պալալակ—գրիչ 275
Պապքան—զարդարող 75
Պարգև—ստ. 491
Պարոն—որդի Պապանուի 452
Պարոնակ—հայր ստ. Ստեփանոսի 934
Պարոնլուս—եղբ. Սերոբ գրչի 853
Պարոնշահ—եղբ. Ներսէս գրչի 491
—որդի Մարտիրոսի 686
Պարսամայ—գրիչ 719—720
Պարոյր 568, 744
Պաքուտա—հայր Գէորգի 508
Պելե—եղբ. Համազասպի 185
Պեռպեռաւժէ—կայսր 583

Պետրոս—գրիչ 55, 56
—ստ. 79
—կազմող 79, 226
—ստ. 88
—գրիչ 90, 91
—առաչն. Հառիճա 114
—գրիչ որդի Ծղիչի և Շուշանի 135, 136
—առաչն. Աւագ վանքի 151, 152
—գրիչ Հաւուց Քառի 191, 192
—թեր—ստ. 226
—գրիչ 242
—գրնչուհի նվիրող 267
—Աղեքսանգրի պատրիարք 309
—ծաղկող Ականցի 355
—ստ. 363, 364
—մբն. Հռոմի Հայոց տան 369
—առաչն. Խորին անապատի 409
—ստացող 472
—ստ. 493
—եղբ. Ստեփանոս գրչի 529
—եղբ. Մխիթար ք՚-ի 536
—թուղթ կոկող 837
—առաչն. Վանականի վանքի 538
—մբն. Գնդեվանքի 557
—ստ. 578
—գրիչ Երզնկայի 636, 767
—առաչն. Վարագա սբ. Նշանի 714, 862
—մբն. Դրաղարկի 718
—գրիչ 924
—նվիրող 925
—գրիչ 925
—(զանազան) 107, 117, 142, 169, 241, 255, 299, 393, 636, 675, 924
Պետիկ—Հորեղբայր Վարդան վրդի 550
Պետկա 887
Պետուկ—Մշեցի, Հռոմում 224
Պետրէ—գրիչ, Կիպրոսում 509, 598
Պիտրոս—մայր Հովհաննես Արքաեղբոր 322, 343
Պիհռոն 226
Պախդեայ 308, 310
Պեմոնդ—բրինձ Անտիոքի 327
Պլատոն 880
Պլուխտար—բռնաւոր 342
Պատրոս—Մշո Տօնականի փրկագնող 46
—առաչն. Հաւուց Քառի 83
—վրդ. մբն. Տեկորի 194, 195
—մբն. Սանգուլ անապատի 204
—ազգն Առաքել Հնազանտենցի 297, 301, 316, 319, 332, 361, 366, 407, 410, 446, 460, 486
—եպսկ. Անդրեասանց ուխտի 325
—ստ. 425
—գրիչ 431, 432
—գրիչ 469, 470
—գրիչ 469, 470
—գրիչ 497, 498
—փակակալ 499
—եպս. առաչն. Սբ. Փրկիչ վանքի 516
—գրիչ Արքակաղնում 563, 564
—կազմող 686
—ստացող Եկեղեաց դաւառում 762, 763
—երէց Յամոս գիւղի 768
—աշակերտ 840
—գրիչ 923
—գրիչ 924
—(զանազան) 36, 156, 206, 207, 369, 683, 688, 851
Պատրոսուկ—գրիչ 275
Պովրոսմելիք—ստ. 461
Պռաւշ իշխան 366, 596, 675, 830
—որդի Ըսպայհանի 357
—որդի Խելաւքի 734—736
Պսակ (Ստեփանոս) Հայր Ակաց անապատի 428
Պրոկլ—Դիադոխոս 248

Չալալ-Դալ—իշխան 187, 258, 357, 493, 560, 607
Ջալալ—հարազատ Ստ. Օրբելեանի 973
Ջալալատդին 415
Ջալալխաթուն 808
Ջանդար—ստ. 653
Ջանխաթուն—մայր Աթոռի 303
Ջանցլեր—գրիչ 238
Ջաջուռ—Հայր Վանենի 140, 182, 183
Ջաւինան—մբն. Բերգակի Ս. Սարդսի 835
Ջհան 884

Ռամ—կին Աստուածատրի ստ. 135
Ռամանոս—գրիչ 1276 461
Ռամլ Կալամաոի 592
Ռայշիգ—փիլիսոփա 806
Ռատ—Հայր Յոհաննիսի 215
Ռեմգին—Անտիոքի բրինձ 77
Ռիքա—դուստր Հեթում Ա թագ. 321, 330
—դուստր Հեթում պատմիչի 718
Ռիհանա—մայր Յակոբի 512
Ռիմանոս—Հայր Սահակ Անեցու 69, 71
Ռոբին—Անտիոքի բրինձ 76
—կազմող 91
—եղբ. Թորոս գրչի 313, 314, 529
—որդի Կեռան Քագուհու 418, 419
Ռուբեն Ա 548, 568, 585, 744
—եղբ. Լևոն Գ-ի 571, 656, 707
—իշխան 88
—եղբ. Ստեփանոսի 107
—գրիչ 609, 766

—պարոն 631
—ստացող 912, 913
Ռուբինևանք 80, 99, 238, 315, 318, 320, 411, 440, 442, 485, 576, 630, 640, 656, 705, 717, 725
Ռստակէս—մրն. Աւագ վանքի 30
—փիլիսոփա 42, 46
—որդի Թէոդոսի 208—210
—դրիչ, որդի Վարգեմոր 211, 212
—ստացող 216
—կազմող 392
Սաադ—եղբայր Վահրամ իշխանի 140
Սադատ—որդի Նասրեդինի, փրկագնող 168
Սադուն—Արծրունի իշխան 183, 184, 366, 435, 495
Սալահատ—սուլթան 628
—Պարթև, կաթողիկոս Հայոց 567
Սահակ Անեցի ստ. 68, 71
—հորեղբ. Մարտիրոս գրչի 123
—մրն Խորին անապատի 266
—եզր. Մարգարէ վրդի 378
Ասորի գրիչ 449, 451
—փակակալ Գնդեվանքի 557, 895
—օրինակ շնորհող 557
—վրդ. կազմ. 826
—(զանազան) 602, 608, 609, 828, 831, 862
Սամուէլ գրիչ Ընկուզեկում 32
—երաժշտապետ 254
—առաջն. Կապոսի 280
—կազմող 784
—հոգեղբ. Յովհաննէս գրչի 651
Սանդուխտ—մայր Պէտրոսի 570
Սասնա անդրանիկ որդի Խառւսի 179
—որդի Հասան Ուղին 426
Շնորհալի 625, 627, 750
Սարդիս առաջն. Աւագ վ. 12, 13, 16, 29, 30
—պատկերագրիչ 18
—փիլիսոփա—փրկագնող 42, 46
—փրկագնող 61
—մրն. Հառիճի 66
—հոգեհայր Սիմոն գրչի 67
—մրն. Հաղբատի 69, 71, 123
—պարոն 75
—սպարապետ, հայր Զաքարիայի 105
—նկարիչ 106
—ստ. 110, 111
—որդի Վահրամ իշխանի 114
—ներկարար 122
—հորեղբայր Ստեփանոս Աղթամարցու 136, 137
—գրիչ 140, 141
—հայր Վանաց 160
—օրինակ շնորհող 167
—գրիչ 175, 176
—հռետոր 183
—եղբ. Յտեփանոս Կեչառեցու 185, 186
—հայր Խոցաղեղի 191
—հայր Խծկոնքի 194
—փրկագնող 203
—գրիչ 213, 214
—Մարմաշինեցի առաջն. Հայոց տան 217, 218
—գրիչ Հռոմկլայում 259, 260
—Պիծակ—ծաղկող 278, 282, 532, 758
—ուսուցիչ Առաքել Հնազանդենցի 287, 301, 316, 319, 332, 361, 366, 407, 410, 446, 460, 480
—մրն. Ակների 305
—մրն. Հաղբատի 310
—արհեպս. Երզնկայի 340, 376, 377, 392, 426, 449
—ումնակից Յովհ. գրչի 340
—առաջն. Թեղենիքի 352
—Սուրբ մարեցի մրն. Հայոց տուն 369
—Խառաբաստեցի 402
—գրիչ 403, 423, 424
—գրիչ 553, 557
—արհեպս. Սիւնիքի 557, 579, 596
—մրն. Մշկավանքի 518
—Շալուէ, բարունի 607, 631
—վրդ. ուսուցիչ Աբրահամի 608
—գրիչ Առեզսի 613, 614
—գրիչ Յովհաննու վանքի 634
—գրիչ 639, 640
—առաջն. Արգիլանի 794
—հոգաորդի Յուսեփ փիլիսոփայի 758
—հայր Յուսեփ փիլիսոփայի 758
—գրիչ Նորքում 793, 794
—պատանի Թեղենացի 824
—գրիչ Այրիվանեցի 828, 830
—գրիչ 833
—գրիչ Երզնկացի 842
—գրիչ 876
—վրդ. 912
—Նարեկացի, քեռի Ներսես գրչի 921
—գրիչ 926, 927, 929
—(զանազան) 65, 95, 112, 134, 143, 159, 165, 197, 198, 255, 303, 383, 422, 425, 464, 471, 472, 494, 507, 514, 535, 557, 611, 612, 613, 636, 685, 695, 764, 784, 816, 841, 842, 847, 849, 851, 879, 890, 892, 893, 900, 912, 914, 919, 930, 937, 939
Սարկաւագ—մրն. Սանահնի 180
—գրիչ 358
—կազմող 784
—ստ. 829
—ստ. 845, 846
Սափիրա—մայր Յովհ. գրչի 340
Սէֆ—օրինակ շնորհող 413

—եղբ. Յուսեփ գրչի 471, 528
—փիրեպիսկոպոս Այասի 824
Սեդեթ—կին Սամուխի 652
Սերոբ—կազմող 183
—գրիչ 852, 853
—(զանազան) 674, 829, 938
Սեւադա—որդի Գրիգոր իշխանի 229
—հայր Վախթանգի 904, 905
Սէմ—եղբ. Ստեփանոս եպս.-ի 241
Սթալիկ—մրն. Ջարեւհան ուխտի 73
Սթլեր Արճիշեցի—հոգամայր Աստուծարանի 197
—ազգ. Յոհան ստ.—ի 860
Սիմավոն—եղբ. Սիոն գրչի 67
—եղբ.. Պետրոս գրչի 91
—ծաղկող 120
—գրիչ 813, 814
Սիմոն—մրն. Աւագ վանքի 16
—մրն. Բեխենց վանքի 72, 73
—մրն. Ջարեւհանի 73
—գրակապ 132
—թարգմանիչ 154, 248
—հայր Ներսէս գրչի 167
—առաջն. Բագնայրի 179
—մրն. Անապատիկ վանքի 190
—գրիչ Հաւուց թառոմ 19
—մրն. Սանահնի 186
—Կողբացի 211
—ստ. 224
—եպսկ. Հռոմկլայեցի 235
—որդի Բարսեղ գրչի 266
—արքեպիս. Մալաթիայի 272, 873
—փակակալ Ակների 304, 305
—Սիր, Անտիոքի ջունդստաբլ 327
—առաջն. Անդրեասանց ուխտի 380
—կազմող 383
—մրն. Գետկա վանքի 400
—առաջն. Սկեռայի վանքի 420, 433, 435, 492, 692, 697, 842
—գրիչ, Արճիշեցի 408, 469, 598, 684, 685, 798, 799
—գրիչ 474, 476, 554
—գրիչ Մուղնեցի 512, 578, 579
—սա. 688. 689
—մրն. Բիրդակի 834
—կազմող 929, 930
—(զանազան) 130, 274, 275, 486, 835, 928, 931, 936
Սիոն—գրիչ Նորաշնեցի 67
—օրինակ ստացող 267
—եպսկ. Արքակաղնի 344, 391
—օգնող նյութի 382
—մրն. Ականց անապատի 429
—որդի Մկրտիչ Կարբեցու 478
—Սեբաստացի գրիչ 546
—Նկարիչ 725
—(զանազան) 719, 835
Սիսիանոս—ստ. 674, 676
Սիսխաթուն—մայր Հայրապետի 884
Սիրեթէ—կին Գայլածագի 818
Սիրուն—կոշկար 369
—834
Սիր Պաղտին 184
Սիր Պարոն 109
Սիր Ճոֆրէ 243
Սիր Մասթէ—մայր Ստեփանի 922
Սիքենոս—շարայարող—կազմող 106, 107
Սմբատ—(Ստեփանոս) սա. 97, 98
—պարոն 118
—127, 128
—Գունդստաբլ Հայոց 201, 216, 229, 232, 238, 244, 279, 298, 327, 328, 343, 361, 363, 456, 592, 629
—որդի Ճոֆրէ 298
—Օրբելյան 366, 436, 526, 858
—որդի Կեռանի 418, 441, 571, 788
—պարոն 482, 486
—պարոն 639
—Ռուբինյան 99 656
—գրիչ 801
—Քաշկոնց 813
—(զանազան) 193, 330, 808, 839
Սողոմոն—հայր Մաքենոցաց վանքի 27, 43
—եպս. Սիւնեաց 684
—գրիչ 930, 931
Սոսթենէս—մրն. Հառիճո 114
—քհ. 146
—ծաղկող 154
—գրիչ 251
—հայր Վարդանի 265
—հայր Ստեփանի 218
—գրիչ, որդի Ստեփանի 251, 252
—բաբունի 397, 515, 539, 540
Սոփիա—մայր Վասիլ գրչի 145
—մայր Վարգանի 808
Սպահան—ամուսին Կատայի 357
Սպահանիկ—եղբ. Սպահանի 357
Սպիլ—քույր Հեթում Ա-ի 973
—դուստր Կեսառի 320, 419
Ստեփանոս—հայր Լեոն թագաւորի 39, 85, 88, 99, 107
—սրբագրող 13, 14
—գրիչ 14
—ծաղկող 31
—Դանչանցի 45
—փրկագնող 46
—ճոնի, փրկագնող 46

—եպսկ. փրկագնող 46
—կազմող 42, 46, 47
—մրճ. Ջարեհանի 72
—Վահրամի քոռ Արևգուն 85
—գրի, 95, 96
—հիշատակագիր 98
—գրիչ 89
—սա. 99, 100
—ստ. 103
—գրիչ 112
—որգի եպյտերի 121
—ստ. 131
—աղքամարցի 136, 137
—վրդ. 140, 141
—պարոն, աղգ. Վարգան վրգ.-ի 148
—առաջն. ճեւագ վանքի 151, 152
—փակակալ 159
—գրիչ 161
—գրակապ, փրկագնող 168
—փրկագնող 168
—գրիչ 170
—ստ. 174
—հիշատակագիր 176
—գրիչ Գետկեցի 181, 183
—կճչառեցի 185
—Ստեֆ. Անապատիկ վանքի 189
—եպսկ. 190
—ստ. 202
—գրիչ հունարենի 206, 207
—Նորընծա քհ. Սեբաստիայի 209
—գրիչ Կ. պոլսեցի 217
—գրիչ 216
—Համշինեցի 218, 219
—Մշո Դազարի վանից 224
—գրիչ 229, 230
—Նվիրատու 234
—որդի Թորոսի 235, 241, 249, 251, 269
—եպս. Հռոմկլայի 240, 242
—հայր Սոսթենես գրչի 252
—գրիչ 254
—ապրշմագործ 255
—Սյունեցի 258, 365
—գրիչ 259
—արհեպիս. Մելիտինոյ 260
—աշակերտ Վանական Բաբերդացու 263, 264
—վրդ. ստ. 268
—հայր Վարդան գրչի 274
—Դրան եպիսկ. Հռոմկլայի 274
—րաբունի 277, 278
—աշակերտ Սարգսի 183
—գինւոր Դրան թագաւորի 284
—մրն. Մաշկևորի 297
—ռալիս Միայոնեցի 297
—գրիչ Ամասիայի 298
—Թարգմանիչ 299
—գրիչ Մեծքարի 300
—գրիչ 310, 311
—մրն. Հռոմի Հայոց տան 313, 368
—գրիչ Սկեւռացի 323, 324
—տնտես Մաշկևորի 331
—Վահկացի գրիչ 341, 344, 442, 444, 453, 455, 515, 571, 644, 645
—Խլաթեցի, մրն. Հայոց տան 369
—մայր Մարգարէ վրդ.-ի 378
—ստ. 380
—գրիչ 381, 382
—գրիչ 390, 391
—գրիչ 402
—հոգևոր եղբ. Յովհաննես գրչի 404, 405
—հիմնարկող Տորին անապատի 409
—գրիչ 411
—կազմողի որդի 414
—Իրիցորդի գրիչ 419, 420, 800, 801
—Սկեւռացի գրիչ 420, 433, 439, 455, 465, 481, 483, 537, 581, 616, 618, 637, 648, 650, 724, 725, 802, 808
—կազմող 421
—Հայր Ականց անապատի 427—432
—կթ. Աղվանից 435, 792
—սրբագրիչ 449, 450
—կթ. Աղքամարի 465
—աշակերտ Ռիմանոսի 462
—գրիչ 486
—489, 490
—օրինակ շնորհող 508
—կազմող 525
—սան. 528, 529
—ստ. 538
—հայր Թորոս Վահկացու 539, 542
—Աղբերցվանեցի 553, 556
—Այրիվանեցի 532
—եպս. 564
—արքեպս. առաջ. Արքակաղնի 564
—Իշխան 568
—օրինակ շնորհող 576
—գրիչ 577
—գրիչ Տարսոնացի 579
—գաղափարի օրինակի գրիչ 592
—կաթողիկոս Հայոց 599, 615, 653, 655, 658, 661, 665, 668, 675, 676, 681, 682, 684, 687
—մեկնիչ 603
—գրիչ 613, 614
—Գոյներերիցանց, գրիչ 617, 659, 693, 695, 803, 807, 837, 866, 868
—կաղզուանցի գրիչ 628, 629

—մըն Տարոնի 656
—սնեֆցի գրիչ 657, 659
—Օրբելյան, մետրոպոլիտ 675, 677, 783, 793, 797, 822, 824, 825, 858, 859
—Արճիշեցի գրիչ 685
—Այրիծորեցի, առաջն. 726, 737, 790, 791
—որդի Պողոս 734, 736
—գրիչ 741
—գրիչ 743, 750, 752
—Երկայն, գրիչ 761, 763
—մըն. Հաւուց թառի 796
—առաջն. Փերճերի 811
—առաջն. Տարսոնի 808
—առաջն. Սկիրակոսի 827
—մըն. Սկեւռայի 854, 855
—գրիչ 860, 861
—վրդ. ուղղոդի 909
—ուսուցիչ 907
—դպակկար 922
—գրիչ 932
—փիլիսոփա 931
—(զանագան) 14, 19, 36, 87, 102, 103, 105, 106, 111, 112, 144, 169, 175, 183, 222, 255, 267, 274, 281, 297, 412, 454, 483, 484, 493, 499, 523, 536, 543, 576, 578, 597, 613, 615, 616, 636, 690, 722, 725, 794, 812, 815, 816, 819, 820, 895, 900, 915, 925, 933, 934, 935, 938
Մաճֆանէ—որդի Լեոն Ա-ի 583, 585, 708
—եղբայր Լեոն Գ-ի 656
—պարոն 639
Մտեֆանի—մայր Աւչին մարաջախտի 439, 441
Մրապիոն—փրկագնող 46
Մուլթան—մըն. Զարևհանի 74
Մուրթ—մայր Սողոմոն գրչի 93
Մուրուխթան 879
Մուքիաս—կազմող 60
—քհ. 120
—ծաղկող 538, 837
—ազգ. Քրդի 796
—հոգևոր եղբ. Գրիգորի 84
—եղբ. Ռուբենի 813
—եղբ. Յովհաննէսի 920
—կազմող Ճապաղջանկի 936
Վազգեն Ա—կաթողիկոս ամենայն Հայոց 365
Վայի—որդի Հարսանցի 939
Վախտանգ—որդի Հասանա 94, 95
—հայր Հասանի 94, 134
—պատրոն 492, 560
—Քագաւոր 817
—որդի Ումեկի 493
—որդի Սևորդի 904
Վահան—Միհրանա 480
—գրիչ Դրազարկի 597, 598
—904
Վահանագիր—գրչի օգնական 135
Վահանոր—քոյր Ստեփանի 97, 98
Վահրամ—որդի Համասացւոյ 81
—Համասացի 81, 434, 435
—իշխան, որդի Արևգունի 115
—118
—ինքնակալ Ռանա 140
—140, 141
—164
—ազգ. Սեբաստոս եպս.-ի 241
—հայր Կոստանտին կաթողիկոսի 244, 269, 284, 302, 315, 325
—իշխան 258
—որդի Աղպուղայի 263
—ստ. 268
—մըն. Ակներու 306
—բարունեաց բարուն 397, 457, 515, 579
—օրինակ շնորհող 508
—վրդ. Այրարատյան գաւառի 555
—գրիչ 722
—մըն. Երգնկայի վանքի ՍՀ. 762, 767
—ժամկոչ սբ. Գէորգի 830
—գրիչ Արմենի անապատի 836, 837
—հայր Սարգիս վրդի 912
—իշխան 114
—(զանազան) 458, 693, 706, 939
Վանական—կազմող 73
—վարդապետ, մատենագիր 136, 137, 140, 203, 258, 280
—մըն. Հռոմի հանգստարանի 217, 218, 219, 437, 851, 928
—Արարատյան աթոռի վերադիտող 350
—որդի Երոյց քհ.—ի 357
—հայր Գրիգորի 555
—ստ. 738
—հոգևոր եղբ. 755
—թուղթ կոկող 784
—եղբայր Գրիգոր Արևելցու 806, 807
Վանենէ—մայր Կոստանդին քհ.-ի 769
Վանենի—դուստր Զաքռո 140, 182, 183
—քոյր Կոստանդին կաթողիկոսի 284, 315
Վանիկ—հայր Ծամոսկու 677
Վանին—որդի Խաչերի 116
Վաշաւուր—կազմ. 106
Վաչէ—իշխան 82
—Ա. Վաղուտյան 82
Վառ—Առաքել Անեցու մականունը 131
Վասակ Սյունի 182
—որդի Խաւտաւսի 179
—198
—հայր Կոստանդնի 485

—տէր Ճանճո բերդի 562
—որդի Կոստանդնի 592, 593
—պարոն 602
—արքաեղբայր 323, 343, 647
—որդի Աւշին Պալլի 697
—իշխան Պահլաւունի 706
—ծագկող 818
—եղբ. Շնորհալու 24
—հյուրատես 47
—գրիչ Ապլաստացի 76
—օրինակ շնորհող 86
Վասիլ—րաբունի 145
—գրիչ, որդի Խաչատուրի 177
—իշխան 184
—օրինակ շնորհող 209
—222
—գրիչ Ուռհայեցի 249, 338, 339
—մբն. Համիդի 249
—հայր Քրիստոսատուրի 281
—Կողեոն մրն. Հայոց տան 314, 369
—գրիչ 467
—ծագկող 486
—եղբ. Վարդան գրչի 576
—արք. Սսի 592
—նորոգող 605
—որդի Առույծի 696
—գրիչ 787, 788
—եղբ. Թորոս գրչի 812
—Հայր Սկևռայի առաջն.-ի 847—850
—գրիչ Սսցի 665, 666
—մբն. Փերճերի 871
—կաղմող 872
—իշխան 885
—մբն. Հռոմկլայի 688
—Հեթում—հայր Կոստանգին գրչի 900
—(ղանազան) 382, 543, 769, 800, 810, 812, 832, 934, 936
Վասլուկ 102
Վասուս—հայր. Աստուածատուր Բաբերդացու 28—32
Վավախ—իշխանուհի 858
Վարդ 13
—եղբայր Բարերդացու 29
—պարոն, Քուղք կոկող 164
—հայր Թեոդոսի 208—210
—ազգ. Խաչուկի 167
—գրիչ Հաղբատի 69, 71
—պարոն, Սմբատի եղբորորդի 87, 88
—մանուկ 208
—հայր Գրիգորի 546
—635
—աշակերտ Սարգսի 828
—հաՃուն—մայր Կարապետի 547
—Մանկոնյան 182
Վարդան—մրն. Աւագ վանքի 14
—վրդ. Աւագ վանքի 19
—կազմող 22
—Կարնեցի գրիչ 27—32, 44
—գրիչ Դրտզարկից 36, 37
—փրկող 46
—ստ. 60
—առաջն. Ասորեմայր անապատի 61, 62
—Այգեկցի, մատենագիր 63, 64, 80, 188, 226, 227
—փակակալ 73
—ստ. 89
—գրիչ 94
—եպս. առաջն. Անտիոքում 98
—գրիչ 103
—գրիչ 120
—Արևելցի, մատենագիր 230, 236, 243, 245, 258, 307—310, 325, 332, 333, 344—352, 365, 368, 394, 398, 401—403, 418, 424, 522, 532—534, 560, 571, 599, 631, 634, 662, 753, 793, 839, 928
—ծաղկող 141
—սպասաւոր 142
—վրդ. ստ. 146—149, 160
—Հայր Ծսուանց վանքի 159
—Իշոխցի 162, 165
—մբն. Անապատիկ վանքի 190
—փակակալ 284
—գրիչ 291
—կազմող 196, 249
—ստ. 199, 200
—Խաչենցի, Հռոմում 216, 224
—վրդ. ս. Կարապետի 224
—գրիչ 224
—Քուղք կոկող 239
—փակակալ Հռոմկլայում 260, 261
—գրիչ 274
—սրբագրիչ 279
—երաժիշտ 292
—Ուռհայեցի, գրիչ 296
—Վարագոյի 303
—վրդ. Ակների 304
—մրն. Հռոմի Հայոց տան 313, 369
—գնող 341
—եղբայր Գրիգոր Բշնեցու 350
—Փոնավառ 369
—ստ. 369, 372
—Հոգեցվանեցի 402
—ստ. 421
—փակակալ Ականցի 427—429, 432, 433, 484
—գրիչ 457, 493
—մբն. Քարատնիսի 514

—վրդ. Գնդեվանքի 556—557
—վրդ. Այրարատյան դաւ. 555
—ստ. 574—576
—գրիչ 577—578
—Բարձրբերդցի 588—590
—Կիլիկեցի 603, 604, 608, 852, 863
—Կողբեցի 620, 621
—Քուղբ կոկող 635
—գրիչ 654
—գրիչ 714—715
—արքեպս. Տարսոնի 741
—ստ. 754—755
—արքեպս. Մլիճեի վանքի 760
—գրիչ 703
—Քուղբ կոկող 787
—գրիչ 827—828
—գրիչ 846, 847
—րաբունի 873, 874
—գրիչ 836, 837
—(զանազան) 98, 110, 111, 117, 121, 140, 169, 173, 190, 256, 409, 413, 546, 611, 613, 735, 794, 808, 809, 832, 841, 842, 878, 884, 887, 923
Վարդագէլ—ազգ. Խալատուրի 105, 106
Վարդայչատ—հայր Գրիգորի 74
Վարդանուշ—մորաքուր Թորոսի 760
Վարդապետ—Դանչանցի 45
—եղ. Հովհաննէս արքեպսի 123
—հայր Յովհաննէս գրչի 535
—եղբ. Խերխաթունի 884
—եղբ. Յովհաննես քհ.-ի 819, 820
Վարդեմայր—Կողբացի ստ. 211—213
Վարդեր—քհ. 23
Վարգերես—մբն. Հառիճի 114
—ազգ. Հայրեպատի 198
Վարգէքուփ—ազգ. Հովհաննես գրչի 35
Վարդետիկին—ազգ. Յոհանի 860
—139
Վարդիկ—պարոն, խլաթեցի 47
—մբն. Հաւուց թառի 84
—մբն. Բերդակի 835
—ազգ. Յոհանի 860
—932
Վարգոց—մայր Ստեփանոս գրչի 189
Վարքեր—օգնող Թերան Աննեցու 237
Վարքմանուկ—պարտիզպան 409
Վայլոց—քոյր փիլիսոփայի 931
Վարոս—մբն. Զարեվհանի 73
Վզիկ 281
Վստամ 764
Վրացտիկին—Մելտէ—մբն. 108
Վրքանէս 75
—առաջն. Վարաժնունիքի 106, 209
—220
Տալիթա—քոյր նորաւուէս գրչի 132
—մայր Կոստանդնի 144, 315
—կին Գրիգորի 284, 315
Տալիաւ—մբն. Բարչանչի 785
Տալիթ—խաթուն, հորաքոյր Կիրակոս եպսի 523
Տալինի—հորեզբայր Մխիթար Գոչի 783
Տաճատ—հորաքուր Յովհաննեսի 677
Տամ Ակաց—քոյր Յովհաննիսի 184
Տամ Աւիծ—Հեթում Ա թագաւորի կին 363
Տարսայիճ Օրբելյան—Սիւնեաց իշխան 514, 677, 792, 793, 830, 855, 927
Ջաքտիկին—մայր Քուրդի 795, 796
Տէր Հուսիկ—նահատակ 207
Տէրպապ—քեռի Ներսէս գրչի 294
—ստացող 897
Տէրտէր—մբն. Մողնու սբ. Գեորգի 512
—աւագերէց 864
—879
Տիմաւթ—գրիչ 126, 937
—Քուղբ կոկող 148, 149
—վրդ. մեկնիչ 308
—մբն. Դրազարկի 657
Տիկինաւիծ 877
Տիկինմայր 135
Տիկին—մայր Բարսեղ երաժշտի 730
Տիկնաց—քոյր Վարգանի 169
—կին Թորոս Սսեցւոյ 198
—մայր Հայրապետի 267, 835
—դուստր Հեթում Ա թագաւորի 321
—մայր Յոհաննիսի 392
—կին Յովհաննիսի 535
—ստացող 661
—մայր Իշխանի 786
—քոյր Գրիգոր գրչի 841, 842
—931
Տիկներէս 93
Տիկնոջ 8
Տիմանչ Տիկղատ—պապի պատվիրակ 236
Տիրամայր—դուստր Ըսպայհանի 357
—668
Տիրանց—քոյր Նորաւգեսի 132
—ամուսին Գրիգորի 559
—կին Սամուէլի 784
—մայր Խերխաթունի 884
Տիրապետ գրիչ 938
Տիրատուր—փրկագնող 46
—Կողբացի, կազմող 210, 211
—ուսուցիչ Սոսքենէսի 252
—մբն. Հայոց տան 369
—առաջն. Սաղմոսավանքի 478, 479
—առաջն. Արքակաղնի 498

—Հայր Երեմիայի 535
—ստացող 666
—ստացող 830
—885
—գրիչ 901—904
Տիրաւագ—գրիչ 937
Տիրացու—հոգևոր եղբ. Կողմա գրչի 54
—գիտնական 33, 34
—Բեխենց վանեցի գրիչ 72
—Հայր Մկրտչի 137
—գրիչ 180
—առաշն. Ակների 239
—գրիչ 346—348
—եպս. ուսուցիչ 393
—գրիչ 394, 395
—եպսկ. Խորին անապատի 409
—ծաղկող 458
—մբն. Ընծայեցց վանքի 462
—դիտապետ 621
—գրիչ 660
—Քուղք կոկող 679
—եպսկ. առաշն. Թադէի վանքի 691
—եղբ. Վարգանի 755
—վրդ. Տարսոնի 859
Տիրիկ—գրիչ Հորս գիւղից 579
Տիրուհի—հարս 242
—կողակից ծաղկող Տիրացուի 458
—մայր Վարգանի 808
Տղա Ստեփանոս—կաթողիկոս Աղթամարի 468, 674
Տղա տիկին—ամուսին բռնաւորի 193, 194
—մայր Սարգսի 794
—մայր Ստեփանոսի 935
Տղապարոն—որդի Ստեփանոսի 938
Տանտկան—եղբ. Պապուկի 652
—աղգ. Յոհաննիսի 860
Տոնիկ 297
Տանտտիկին 462
Տաւուս—մայր Թորոս Արևելցու 313, 314
Տատախ—քոյր Յովանէսի 677
Տունգեր—աղգ. Յոհանի 860
Տուրք—ստացող 149—153
Տրգատ—Քագաւոր 721
—319
Ցաւղեր—մայր Թորոս Վահկացու 542
Ուղի—հայր Հասանա 426
Ուղիկ—փրկագնող 47
Ուլումելիք—ամուսին Նասրադինի 168, 922
Ոամեկ—հայր Վախտանգի 493
Ոաեփիկ—ծաղկող 920, 921
Ոալուբէկ 272
Ոատինա 835
Ուքան—պարոն 75
Փախրագաւլայն—հայր Ստեփանոսի 793, 817
Փառացտիկին—քոյր Դաւթի 453
Փարչիկ—եղբ. Սարգսի 794
Փարուանա—իշխան 435
Փեռ Տրանգիլ—Անտիոքի իշխան 327
Փթուք—օժանդակող 559
Փիլիպպ—Քագաւոր 76, 130, 133, 139, 343
—աշակերտ—Վարդան վրդի 146—149
—գրիչ 280
—երաժիշտ 298
—ուսուցիչ 478
—եպսկ. 523
—592
—օրինակ շնորհող 699
Փիլոն Եբրայեցի—մատենագիր 258, 458, 459, 763, 787, 836
Փոխանակ—ստ. 684
Փոխանտիկին—կին Եհելւքի 734, 735
Փոքր Եաչեր—մբն Հայոց տան 369
Փոքր տիկին—Քուղք շնորհող 830
—884

Քահանա—որդի Յուսիբա 267
—գրիչ 732, 767
Քահանայպետ—որդի Դանիէլի 515
Քայքայուղ—սուլթան 585, 586
Քարիմ 932
Քարիմատ—իշխան 560
Քարձ—Թորոս Վահկացու մականունը 422
Քեղաթուն—Քագաւոր 771
Քելկուրատ—սուլթան 145
Քերովբէ—մբն Ակների 432
—ստ. 469
Քնքուշ—կին Կիրակոսի 828
Քոյրաղատ—մայր Բարեմանուկի 268
Քոյրմելիք 931
Քրիստինէ—կին Լևոն Քագաւորի 722
Քուրդ—Տփխիսի ամիրա 184
—իշխան 206, 352, 366
—ստ. 795, 796
Քրիստափոր—հայր Ավասափի 65
—մբն Հարիճի 114
Քրիստոսատուր—որդի Վասլի 281
—մբն. Աւագ վանքի 28
—գրիչ 77
—վրդ. 22
—255

Ֆարայճ—բժիշկ—Քարմանիչ 806
Ֆիմի—դուստր Հեթում Ա Քագաւորի 320, 321, 411, 412
Ֆնգուխտար—սուլթան 717
Ֆոանկ—հայր Ներսէս գրչի 49
—ստ. 780, 781
Ֆրիտոն 225

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ադրիանու *ծով* 243
Ազատ *գետ* 106
Ալիշ *գետ* 245
Ալանք 85
Ալնոցի *վանք* 35
Ալֆ—701, 717, 718
Ախշար, *որ և* Նիկոպոլիս 136
Ակների *կամ* Ականց *անապատ* 90, 91, 118, 238, 239, 292, 355, 356, 416, 427, 432, 483, 484
Ակոռաւն *գաւ.* 658
Ակսագոմեր *լեռ* 67
Աղաւ *անապատ, Վայոց ձորում* 673, 675
Աղբերց *վանք, Վայոց ձորում* 550, 551, 553, 662, 822
Աղեկսանդրիա *քաղաք* 273, 756, 854, 903
Աղքսումար 136, 468, 863
Աղիտու *վանք, Որոտանում* 783
Աղջոց *վանք* 365
Աղուանք, *նահանգ, աշխարհ* 85, 137, 183, 263, 228, 311, 435
Աճանան 784
Ամասիա 167, 298
Ամբերդ 82
Ամիթ 936
Ամրան 756
Այգեկ 80, 227
Այտաձոր 357, 726
Այտուց 115
Այրարատեան, Սարարադեան *գաւառ, նահանգ* 140, 196, 305, 350, 474, 475, 722
Այրիձոր, *Քաշբերունիքում* 737, 786
Այրիվանք 104, 106, 530, 531, 594, 828
Անարզաբա, Անավարզա 536, 574, 576, 723, 724
Անդրեասանց *վանք* 37, 325, 339, 378, 380
Անդուլ *անապատ* 325, 326
Անի *քաղաք* 65, 69, 71, 72, 131, 134, 179, 193, 196, 198, 671, 675, 815, 816
Անձիաու *գաւ.* 785
Անձիտու *գաւ* 785
Անտիոք 77, 96, 98, 103, 107, 126, 158, 159, 162, 170, 175, 233, 245, 273, 327, 359, 452, 717, 744, 756, 758, 854, 902, 903
Առանի Պաղին *գաւ.* 77
Առաքելոց *կամ* Ղազարու *վանք* 42, 45, 46, 47, 458, 489, 497, 853
Առեղս *գիւղ* 613, 614
Առոյծ մարգ *գիւղ* 138, 139
Ասայելի *վանք* 635, 636
Ասիա 350, 756, 903
Ասորեմայր *անապատ* 61
Ասորիք 85, 96, 145, 161, 162, 245
Ասպիսքենկա *վանք* 525, 829, 844, 917, 918
Ատանա 229, 561, 661, 691, 699, 803, 804, 936, 941
Արարատ 822, 823, 825
Արագած 822
Արագածոտն 82, 122
Արևելից *աշխարհ* 43, 313, 691
Արգիյան 734, 736
Արծկեի *վանք* 45
Արճէշ 197, 462, 599, 615, 684, 685, 798, 829, 844
Արմէն *լեռ, անապատ* 659, 691, 753, 829, 836
Արշուառին 70, 71, 197, 816, 817
Արտազ *գաւառ* 690
Արտամետ 144
Արցախ 182, 797
Արքակաղին *վանք* 80, 120, 298, 344, 379, 390, 431, 563, 564, 726
Աւագ *վանք* 12, 27, 145, 149, 151, 153, 160
Աքայիա *քաղաք* 111, 669, 690, 701, 710, 717, 745

Բաբելոն 246, 322, 364, 386, 711
Բայբերդ *դղեակ* 480
Բաբերդ *քաղաք, գաւառ* 44, 137, 264
Բալու *քաղաք* 926
Բագնայրի *վանք* 178, 179, 180, 487
Բագուանա *վանք* 215, 690
Բաղդատ *քաղաք* 299, 806
Բաղնեկունք *գիւղ* 698
Բարձրաքաշ *վանք, Դսեղում* 904
Բարձրբերդ 243, 322, 341, 380, 397, 851
Բարշանշ *գիւղ* 115, 116, 785
Բարսղի *անապատ* 859

Բեդղեհեմ 72
Բեթանիա 308, 310, 756
Բեխենց *վանք, Անիամ* 69, 72, 74
Բերդակ *Տուրուբերանում* 834
Բերդաձոր 828
Բիւզանդիոն *քաղաք* 40
Բոլորաձոր *վանք* 202
Բոյլաց *աշխարհ՝ ուր է Լանկուպարտք* 77
Բջնի 305, 350, 424, 532, 820, 822
Բքներեց 841

Գայլ *վանք* 833, 834
Գանձակ 180, 183, 313
Գանձասարի *վանք* 94, 199
Գառնի 105, 720
Գարդմանի *գաւառ* 136
Գեղագունեաց *ծով* 43
Գետկավանք 181, 183, 206, 313, 314, 374, 399, 400, 435, 436; 495
Գերմաղբիւր *վանք* 438
Գլակա *վանք* 380
Գլաձորի *վանք* 603, 604, 662, 823, 824, 863
Գնդեվանք 556, 557
Գոների *վանք* 241, 321, 322, 484, 486, 510, 702, 723
Գրիգոր Լուսաւորիչի *լեռ, անապատ, գերեզման* 15, 18, 86, 87, 141, 151, 153, 392, 474, 705, 706

Դամասկոս 85, 322, 690, 861
Դանչան *գիւղ, Խլաթի մոտ* 45, 46
Դարանաղեաց *գաւ., լեռ* 12, 15, 18, 151, 671, 761, 762
Դաւթա *վանք* 32, 670
Դելմաստան 756
Դեղձանոն՝ *անապատ* 106
Դեղձուտի *վանք* 494, 508
Դեղնաքար 898
Դերջան 704
Դրազարկ 36, 37, 107, 213, 214, 221, 245, 254, 407, 429, 445, 459, 529, 597, 654, 655, 656, 690, 703, 728, 729, 756, 757, 883, 847
Եգիպտոս 85, 319, 342, 343, 355, 359, 447, 452, 675, 682, 684, 698, 701, 709, 710, 713, 717, 729, 730, 744, 761, 860, 862
Եդեսիա 85, 118, 175, 204, 296
Ելայկում *նահանգ* 783
Եկեղեաց *գաւառ* 165, 237, 340, 377, 426, 761, 762, 771, 861
Եղեգեաց *մայրաքաղաք* 796, 797
Եղիազարու *վանք տե՛ս* Առաքելոց վանք
Եղիվանք *անապատ, Կամախում* 36
Եղիշէի *վանք, Արցախում* 426
Եմաան *լեռ* 245
Երաշխաւորի *վանք, Ղրիմում* 456
Երասխ *գետ* 106
Երզևանք *գաւառ* 263
Երզնկա, Եզրնկա, Երեզ 339, 340, 377, 392, 425, 426, 507, 602, 622, 636, 671, 700, 705, 707, 708, 712, 713, 718, 766, 839, 842, 843
Երկայն Մաւրուի *անապատ* 276, 290
Երուսաղէմ 40, 80, 85, 92, 119, 159, 227, 246, 305, 308, 310, 319, 329, 341, 366, 361, 402, 705, 710, 711, 756, 803, 812, 844
Եւրոպա 368
Եփեսոս 273, 756, 855, 903
Եփրատ *գետ* 205, 421, 875
Եփրատ կլա *(Հռոմկլա՞)* 216

Զարեւնանի *ուխտ* 72, 73, 74
Զառների *քարայր, Հաղբատի մոտ* 89
Զաւառն *գեղ* 925
Զիմառա *գիւղաքաղաք* 448

Էթուզիա 333, 756
Էջմիածին 192, 824

Ընծայեաց *վանք* 461
Ընկուզեք *վանք* 32
Ըռուարկի *վանք* 776

Թագտրի *վանք* 135
Թանաաի *վանք* 595, 596
Թառական 495, 496
Թարգմանչաց *վանք, Արցախում* 180
Թաւրէժ, Թաւրիզ 168, 311
Թեղենեաց *անապատ* 349, 352, 600, 767, 768, 821, 823, 888, 889
Թէոդոպոլիս *տե՛ս* Կարին
Թէոդորոսի *վանք* 635
Թորգոմա *նահանգ* 136
Թորոս, *որ* Կիլիկիա *կոչի* 77
Թուրքեստան 145, 246

Ժանի *անապատ* 523, 524
Ժղլիկ *անապատ, Սաղիկում* 940

Իկոնիա, Կաւնիա, Կանու *քաղաք* .85, 229, 233
Իշխանի *վանք* 888, 889
Իշոխ *գիւղ, Եկեղեաց գաւառում* 165
Իտալիա 368

Լամբրոն 52, 56, 102, 111, 156, 186, 190, 254, 323, 329, 350, 418, 439, 446, 455, 483, 658, 669, 700, 704, 752, 766, 800, 863, 866, 876
Լանկուպսրաք, *որ է* Բոյլաց *աշխարհ* 77
Լատէ 154, 181
Լիբիացոց *ծով* 85
Լիմ *անապատիկ* 189
Լիսոնկա 395, 397
Լիւրիկէ 756, 776

Խաղայի *վանք* 228, 229
Խաղտեաց *գաւառ* 35, 480
Խաչենա *երկիր* 40, 99, 216, 258
Խառաբաստա *վանք* 799
Խարբերդ 53, 768
Խարծի *անապատ* 149
Խափսանաբերդ 182
Խամ *քաղաք* 135, 136
Խլաթ 45, 47, 85, 160, 166, 462, 853
Խծկոնք 194
Խոտակերաց Ս. Նշան 680, 682
Խոսրովակերտ 106
Խորանաշատ 136, 137, 140, 263, 280, 878
Խորին *անապատ* 215, 265, 266, 398, 408, 499, 700, 702, 765, 811, 837
Խորասան 131
Խորվիրապ 346, 347, 349, 351, 365, 402, 745
Խուրս *գիւղ, Խարբերդում* 264

Ծամընդաւ *լեռ, Անտիոքի մոտ* 158
Ծառատկո *անապատ* 472, 473
Ծարքար *Մաղասաբերդի* 131
Ծիծեռնաբոյն *անապատ* 397
Ծիծռանքար *անապատ՝ Առանի Պաղին* 77
Ծով *դղեակ* 242
Ծովի վրա՝ *նավում* 76
Ծոփաց *գաւառ* 61, 85
Ծրին (կաւա՞ր)նիս *անապատ* 19

Կալիֆորնիա 192
Կամախի *գաւառ* 36
Կամբիկ *անապատ* 619
Կայենո *աշխարհ* 182, 184, 206
Կան *գիւղ* 534, 535
Կապադովկիա 81, 229, 488, 489
Կապան *դղեակ, Կիլիկիայում* 101, 303, 667
Կապոսի *վանք* 141, 165, 242, 281, 392
Կարբի 478, 920
Կարին, *Թեոդոպոլիս* 35, 44, 85, 163, 164, 675, 860
Կարս 682
Կեղի 523

Կեչսափս 185, 824, 894, 910
Կեսառոսաց 178
Կեսարիա 12, 81, 85, 145, 225, 426, 452, 471, 488, 489, 527, 833, 847
Կըռնկեց *վանք* 144
Կիզուց *վանք* 840
Կիլիկիա 18, 39, 80, 81, 107, 111, 124, 129, 143, 168, 177, 186, 187, 198, 201, 220, 221, 233, 238, 239, 243, 278, 286, 288, 292, 295, 303, 318, 320, 322, 331, 334, 335, 338, 342, 348, 350, 351, 355, 356, 359, 371, 372, 374, 381, 393, 396, 410, 432, 455, 456, 463, 465, 482, 492, 658, 679, 681, 688, 695, 698, 701, 703, 705, 710, 715, 717, 720, 725, 729, 773, 789, 800, 821, 838, 850, 853, 922
Կիպրոս կղզի 166, 323, 343, 508, 509, 608
Կիւրիսոյ *երկիր, Կիլիկիայում* 80
Կոկիսոն 303
Կողբա *վանք* 211, 212, 620
Կոպիտառ *դղեակ* 899
Կոռ *դետուր* 564, 894
Կոռիկոս 245, 717, 789
Կոտայք 822
Կուքի 467
Կոստանդնուպոլիս 40, 80, 85, 217, 657, 915

Հալեպ 297, 301
Հաղբատ 58, 59, 66, 68, 71, 74, 78, 89, 112, 122, 124, 226, 259, 310, 332, 333, 345, 349, 520, 521, 622, 712, 753, 937
Համշէն 218
Համոս 81, 434
Հայակիլիկիա 158
Հայաստան 145, 316, 318, 415, 417, 443, 710, 721, 825
Հայելի *գեաւղ* 809, 810
Հայոց *աշխարհ, երկիր Հայոց Մեծաց* 81, 102, 103, 115, 154, 178, 228, 341
Հայոց *տուն, Հռոմում* 314, 350
Հանգստարան Հայոց, *Հռոմում* 216, 218, 368, 369
Հառիճավանք 65, 113, 114
Հացեկաց *գիւղ* 286
Հաւարծին 559
Հաճնաւ *գիւղաքաղաք* 719
Հաւուց թառ 83, 191, 740, 795, 827
Հաւքախաղաց *վանք, Խաչենում* 199
Հնդկաստան 85, 246, 756
Հոռոմոսի *վանք* 72, 84, 178, 179, 251
Հոգետուն Հայոց, *տե՛ս Հայոց տուն*
Հոռոմոց *աշխարհ* 85, 268, 731
Հորս *գեաւղ* 579
Հռոմա *Ոսպեթալ Հայոց* 156

Հռոմ *քաղաք* 155, 216, 218, 219, 224, 273, 274, 305, 313, 314, 365, 367, 368, 369, 618, 824, 855
Հռոմկլա, Կլա Հռոմական 24, 39, 40, 85, 174, 175, 190, 205, 217, 221, 236, 240, 242, 244, 249, 250, 260, 269, 274, 283, 296, 301, 314, 317, 334, 335, 336, 369, 661, 675, 682, 686, 687, 690, 695, 698, 701, 710, 711, 717, 718, 722, 723, 730, 745, 838, 839
Հունաստան 145, 681
Հրազդան *գետ* 106
Հրեաստան 860

Ձնյուղի *գյուղ* 514, 515
Ձորոյ *բերդ անապատ* 254
Ձորոգ *վանք* 852
Ձվքստան 144

Ղաճուն *գետ* 454
Ղաննո *բերդ, Կիլիկիայում* 475
Ճկեր *գավառ ծովեզրյա* 59, 60, 95, 96
Ճոխատի *վանք* 256, 257

Մալաթիա, Մելիտենէ 40, 145, 272, 769, 873
Մակեդոնիա 756
Մանկանաբերդ 184
Մաղասաբերդ 131
Մամեստիա, Մսիս 281, 286, 362, 447, 813
Մամիկոնաբերդ 495
Մանէ այր 15, 18, 601, 663, 762, 779
Մանիուն 317
Մանոտ *գավառ, Կիլիկիայում* 38
Մաշկևորի ուխտ 296, 297, 331, 378, 380, 445, 492
Մարի 343, 362, 417
Մարբնդունի 672
Մարմանց *գյուղ* 852
Մարմաշէն 217
Մաքենոտենից *ուխտ* 43
Մելիսու *նահ., որ* Նիկոպոլիս 136
Մեծայր *ուխտ* 720
Մեծիրանց *ուխտ* 797
Մեծ կողմանք, *Արցախում* 134
Մեծքար *անապատ* 300, 422
Մընձոր մարզ *գավառ* 138, 139
Միայնուն 297
Միջագետք 175, 186, 398
Միջնաղբերք Մուշի 45
Մլինո *վանք*, Աւագ Մլեն 169, 403, 741, 758, 760, 807, 808, 885
Մոլևան 434, 435
Մոկունք *գիւղ* 46
Մշակավանք 635, 636, 517, 518
Մրեն 47
Մոդան 203
Մուղնու *վանք* 474, 476, 512
Մունտաս 317
Մուշ 46, 47, 224
Մուշեղկա *գիւղ, Ակսագոմեում* 67
Մքսր 351, 433, 461

Յամոսի *գյուղ* 769
Յայտնի *տաճար* 298
Յուձ *գյուղ* 139
Յարուխի *երկիր* 131
Յեուանց, Յիզվանց, Յիսուանց *վանք Անտիրքի մոտ* 98, 158, 162, 170, 175
Յոհանավանք *Արարագածոտնում* 122, 610, 611, 632, 634, 721, 731, 732, 912, 913
Յոհանանց *վանք* 525, 526
Յովան *ագարակ, Լամբրայի մոտ* 186
Յորդանան 16, 796, 848

Նարեկա *վանք* 918
Նեղոսի *վանք* 424
Ներքին *բերդ Անիի* 816
Նիկոպոլիս 136
Նիկտէ 867
Նորսեսի *անապատ, Մուշեղկայի մոտ* 67
Նորք *գյուղաքաղաք* 793, 794
Նսեպին 336

Շահապոնք 682
Շապղթան *գավ. Ուռհայի մոտ* 86
Շասախ 656
Շիկայքար *գյուղ* 905
Շիկան *բերդ* 658
Շիրակ 82
Շիրակավան 131

Ոծոպի 682
Ոտնկա *վանք* 638, 639
Ովկիանոս 85
Ոստան 266
Որմի *մայրաքաղաք* 438
Որոտան 783

Չարեքա *կողմ* 140

Պազար 437, 438
Պաղեստին 92
Պաղրաս 158

Պայաս *ծկեր գավառում* 95, 96
Պապեռոն *դղեակ* 232, 298, 327, 362
Պատմոս *կղզի* 377, 902
Պարիս 55
Պարխարի *լեռներ* 326
Պարսից *աշխարհ* 175, 228, 246
Պարւասան 63, 64
Պեհեսնի 317, 435
Պղնձահանք, *վանք Հայոց* 248
Պոնտոս 830, 842

Ջկրաշէն *թաղ. Բաբերդում* 480
Ջիհուն *գետ* 830

Ռուհաբ *քաղաք* 933
Ռանա *տուն (Առանատուն)* 140
Ռապնա *երկիր* 116
Ռեյսին *քաղաք (ԱՄՆ)* 59
Ռուբար *դաշտ* 106

Սափիտո *քաղ.* 320
Սալ *գիւղ Տարոնում* 298
Սալեռնո *Իտալիա* 545
Սաղկի նոր վանք 833, 834, 940
Սաղմոսավանք 349, 359, 478
Սանահին 55, 114, 173, 185, 186, 307, 308, 365, 880, 882
Սամոսատ 175
Սանդուլ *անապատ* 203
Սանթա *Մարի* 216
Սարվանդիքար *դղյակ* 329, 379, 441
Սեբաստիա, *Սեւաստ* 44, 74, 75, 85, 132, 208, 209, 636, 637
Սելեւկիա 166
Սեպուհ լեռ 12, 762, 769
Սեւորդեաց երկիր 186
Սիկի 317
Սիմա *գեաւղ՝ Կամախի* 36
Սիմոնկլա 469, 470
Սինեական *լեռ* 64
Սինոպ 85
Սիս 25, 26, 38, 88, 133, 154, 188, 200, 201, 233, 236, 238, 335, 336, 343, 351, 362, 372, 392, 434, 439, 440, 447, 461, 462, 463, 464, 472, 515, 547, 548, 607, 665. 667, 668, 669, 720, 766, 767, 770, 778, 788, 805, 806, 831, 832
Սիսական 131, 790, 791, 797, 830
Սիւնիք 677, 683, 691, 797, 823, 825, 830, 857, 859
Սիսաղան *բերդ, Խաչենում* 199

Սկևռա 49, 53, 55, 56, 99, 101, 102, 110, 111, 156, 253, 323, 420, 433, 435, 455, 482, 483, 537, 542, 581, 648, 649, 657, 658, 659, 692, 696, 724, 725, 752, 769, 800, 802, 829, 831, 832, 847, 849, 865, 867
Սկութիա 245
Սմբատակլա 232
Սպանիա 111, 402
Սպլենձահան *վանք, Լոռիում* 154
Սատալիա *քաղ.* 172—173
Ստիլծի *գիւղ* 934
Սուրբ Գէորգ *գեաւղ* 861
Սուրբ Խաչ *Ոստանի* 33, 226
Սուրբ Մարիա 191, 206, 771

Վանկա *բերդ* 381, 422, 423, 922
Վայոց ձոր *գաւառ* 202, 595, 596, 673, 675, 677, 822, 824
Վանական վարդապետի *վանք* 263, 538, 926
Վանդրր *անապատ* 497, 499
Վանկունք *անապատ* 404, 407
Վարագա *վանք* 61, 303, 714, 929, 930, 962
Վարաժնունիք 106
Վասպուրական 33, 461
Վրաց *սինոռ* 85
Վերին Տիրիկ *գաւ.* 853

Տաթեւի *վանք* 684, 791, 856, 858
Տարոնի *գաւառ* 264, 286, 625, 853
Տարսոն 23, 60. 99, 101, 111, 125, 143, 169, 186, 298, 323, 337, 397, 423, 483, 659, 688, 693, 713, 741, 761, 808
Տաւուշ 203, 851
Տաւրոս *լեռ* 186, 298, 324, 350, 455, 483, 659, 859
Տըլուք *գաւառ* 80
Տիկոր 194
Տիրոչ *գեաւղ* 590, 591
Տփխիս 85, 184, 203, 864
Տուրուբերան 734, 834
Տվեց *գաւառ* 879
Տրէպաւլիս 656, 690, 710, 717, 718, 745

Ցախոտն *գաւ. գիւղ անապատ* 292, 356, 463, 628

Ուռիթէլ *գիւղ, Ուռհայի նահանգ* 85, 86
Ուռհայ, *տե՛ս* Եդեսիա
Ուռհայի *նահանգ* 86
Ուռոյքար 677

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Քաջբերունիք 786
Քարայատակ 513
Քարատնիս 514
Քեսուն 118, 849
Քոյրայր (*Քորայր*) 68

Փերներ 698, 699, 811, 850, 870
Փերուժ 488

Փնազմնա *աշխարհ* 117
Փոխնդա *վանք* 381
Փոս *անապատ* 129, 462, 463, 933, 934
Փոստնաեանգ 492
Փուրընդայի *վանք, Սեբաստիայում* 75

Ֆլորենցիա 184
Ֆոնուս 605

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ

Ամպարշաւություն 167
Ամրոցի շինարարություն 719
Անապատի հիմնում 691
Անիշխանություն 891
Անմխաբանություն 125
Անօրէնություն 776, 838
Աշխարհաժողով 789
Ապստամբություն 701, 704, 845, 857
Ասպատակություն 101, 672, 798, 861
Ավերմունք 119, 125, 160, 166, 167, 175, 691, 702, 711, 718, 745, 769
Արեգակի խավարում 734
Արհեստավորներ 702
Արշավանք, պատերազմ 35, 39, 40, 81, 111, 119, 145, 160, 166, 187, 193, 228, 289, 461, 462, 500, 509, 511, 524, 525, 528, 570, 572, 575, 582—586, 588, 628, 656, 664, 671, 682, 690, 701, 710, 718, 729, 837

Բաբան 699, 702, 711, 719
Բազե 714
Բաղարշ 17
Բամբասանք 674, 675
Բանսարկու 802
Բանտարկություն 840
Բժիշկ 757, 807, 858, 901
Բռնություն 329, 550, 597, 769, 838
Բրինձ-պրինց 718

Գայլ 802
Գառ 717, 802, 881
Գերեվարություն 110, 155, 319, 343, 447, 453, 523, 569, 584, 676, 683, 691, 696, 699, 700, 702, 712, 718, 721, 723, 731, 802, 810, 838, 840
Գերությունից ազատում 582, 602
Գինի 858, 875
Գրաստ 806, 807
Գրչության արվեստ 31, 37, 101, 103, 115, 132, 136, 142, 146, 148, 164, 196, 299, 304, 366, 663, 670, 673, 679, 684, 689, 690, 695, 698, 700, 723, 725, 731, 733, 734, 740, 750, 761, 767, 774, 778, 780, 781, 782, 786, 795, 805, 811, 824, 830, 831, 834, 835, 843, 862, 865, 867, 869, 874, 882, 884, 886, 891

Դահեկան 685
Դարբին 267
Դգակկար 887
Դեսպանություն 712, 772
Դղյակի վաճառք 584
Դոն (հաց) 146

Եկեղեցու ալիրում 119, 125, 167, 628, 711, 773, 783, 810, 838
Եկեղեցական ժողով 393
Եկեղեցու շինարարություն 582, 676, 719, 732, 805
Եղեռն 789
Եղջերու 757
Երաժիշտ 731, 759, 806
Երկրաշարժ 166, 169, 462

Ջաւրաժողով 101
Ջրհեղեղ 187

Ընծա 543, 564, 591, 592, 598, 602, 616, 712

Թագաւորների հաշորդականություն 568, 582, 772
Թագավորական օրհնության հանգիս, օծում 393, 789, 805

Դարգմանություն 778, 807
Դարխան 905
Դշվառություն 696, 700, 769
Դուղք, քարտեզ, նամակ 37, 136, 142, 146, 148, 164, 299, 304, 366, 621, 635, 646, 715, 716, 721, 739, 785, 863, 864, 883, 911, 922, 941

Ժուժկալություն 712

Խալաթ 712
Խապազ 106, 109
Խնամակալություն 819
Խոովություն 687, 772, 891

Մածկագիր 605, 726, 763, 846, 883

Կանանց անարգում 711—731
Կոկոն 817
Կոշիկ 877
Կօշկար 369
Կորդ ամայի 706
Կոտորած 101, 155, 187, 192, 193, 194, 196, 198, 206
Կտակ 732
Կտաւագործ 147

Հալածանք 471
Հաւատափոխություն 167
Հափշտակություն 167
Հարկ 857
Հարկապահանջություն 329, 702, 712, 718, 732, 812, 861, 891
Հացի սղություն 35, 155, 702
Հացպան 4, 305
Հեղեղ 744
Հեծյալ 702, 730
Հետևակ 702, 730
Հերձվածողական խումբ 713
Հյուան 209
Հրկիզում 731, 867

Ձեռագրի գնում 685, 688, 736, 737, 741, 751, 836, 880, 904
Ձեռագրերի կողոպուտ 592, 594, 702, 719

Ճոպաքաղ 714, 817

Մագաղաթ 164, 251, 322
Մահ 155, 676, 705, 714, 735, 759, 762, 788, 798, 805, 809, 821, 831, 885, 891
Մարզպան 305, 404
Մեքենա մարտի 702
Մուտքախի 29
Մսախուրձախուցես 178

Նահատակություն 571, 851
Նազմափոր 702, 711
Նավ 713
Նաւտար 491, 722
Նավահանգիստ 718, 756, 808
Նվաճում 39, 40, 96, 103, 166, 193, 670, 688, 699, 702, 711, 723
Նվիրատվություն 678, 722, 735, 771, 853, 880

Ոսկերիչ 23, 40
Ոսկի 712, 785

Ջուխակար 305, 306, 491

Պաշարում 198, 586, 711, 730, 746, 838
Պաստեղ 146
Պողպատ շինող 299
Պարտիզպան 409
Պրօտօնֆռանտես 859

Ջարդ 746
Ջաբիստր 750
Ջորի 712

Ռմբաքար 730

Սառնամանիք 882
Սպանություն 199, 340, 343, 528, 582, 587, 633, 684, 702, 705, 711, 712, 731, 773, 776
Սրբավայրենի պղծում 688, 702, 711, 719 776, 863

Տնտես 305

Ցորենի հունձ 702, 706, 870

Փոմպան 204, 305

Քարահատ մեքենա 702, 711
Քարափոր ծակմտօք 719

Օդապարիկ 714
Օտար տիրապետություն 550, 597, 665, 666, 676—682, 746, 769, 832, 839

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայերեն ձեռագրերի հիշատակարանների ժողովածուները 5
Հիշատակարաններ 12
Հավելված 940
Ցանկեր 943
Օգտագործված աղբյուրների 944
Անձնանունների 952
Տեղանունների 980
Առարկայական 986

ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

ԺԳ ԴԱՐ

Հրատ. խմբագիր Ա. Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Գեղ. խմբագիր Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Տեխ. խմբագիր Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Սրբագրիչ Է. Ա. ՍՈՒԽԻԿՅԱՆ

ИБ 278

Հանձնված է շարվածքի 22. 04. 1982 թ.։ Ստորագրված է տպագրության 3. 12. 1984 թ.։ ՎՏ 04337։ Չափը 70×108¹/₁₆։ Թուղթ № 1։ Տառատեսակ «գրքի սովորական», բարձր տպագրություն։ Պայմ. 86,8 մամ., 86,8 ներկ. մ., տպագր. 62,0 մամուլ։ Հրատ.-հաշվարկ. 61,1 մամուլ։ Տպաքանակ 1000։ Հրատ. № 6125։ Պատվեր 487։ Գինը 9 ռ. 70 կոպ.։

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ։
Издательство АН АрмССР. 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24։
Типография Издательства АН АрмССР, 375019. Ереаан, пр. Маршала Баграмяна, 24.

«ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»՝ ՄԱՏԵՆԱՇԱՐՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (1401—1450 թթ.), կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955

ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ

ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ (1451—1480 թթ.), կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ (1481—1500 թթ.). կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԻՐՔ ՏԱՍՆՅՈՐՍԵՐՈՐԴ

Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601—1620 թթ.) հատոր Ա, կազմեցին՝ Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան, 1974

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԻՐՔ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621—1640 թթ.), հատոր Բ, կազմեցին՝ Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան, 1978

ԳԻՐՔ ՏԱՍՆՅՈՒԹԵՐՈՐԴ

Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641—1660 թթ.) հատոր Գ, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1984

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԳԻՐՔ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց՝ Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984